

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵՍԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

2014 թ.

Հատր VI

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

2014 թվական

Հատոր VI

ԵՐԵՎԱՆ
ԵԱՀԿ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ԵՎ
ՀՀ ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
2015

ՀՏԴ 347.992
ԳՄԴ 67.404
Հ 247

Սույն տպագրությունը հնարավոր է դարձել իրականացնել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ: Սույն ձեռնարկի մեջ ամփոփված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի տեսակետներին:



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒՐԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Կազմեցին՝

Արմեն Հովհաննիսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Անի Դանիելյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի ավագ օգնական

Հ 247 Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով
որոշումների ժողովածու/Կազմ՝ Ա. Հովհաննիսյան, Ա. Դանիելյան. – Եր.
2015, Հ. 6910/ - 906 էջ:

ՀՏԴ 347. 992
ԳՄԴ 67.404

ISBN 978-92-9235-108-3

Գիրքը վաճառքի ենթակա չէ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....	V
Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների առարկայական դասակարգում.....	VII
Աղբյուրների ցանկ թիվ 1. ՀՀ Սահմանադրության դրույթներ.....	XXIII
Աղբյուրների ցանկ թիվ 2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ.....	XXIV
Աղբյուրների ցանկ թիվ 3. ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ.....	XXVIII
Աղբյուրների ցանկ թիվ 4. ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտեր.....	XXIX
1. Ս.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0053/01/12.....	1
2. Է.Մարգարյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0045/01/13.....	11
3. Վ.Կոթոլյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ-0039/15/13.....	19
4. Ա.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ՇԳ-0244/06/13.....	31
5. Վ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, Ս-930/05.....	43
6. Վ.Եղիազարյանի վերաբերյալ որոշում, ՇԳ-0012/11/13.....	55
7. Ս.Մարգարյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ-0138/06/13.....	70
8. Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ-0125/11/13.....	80
9. Ս.Ղամբարյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵՇԳ-0055/01/11.....	93
10. Հ.Պարանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ-0132/01/13.....	133
11. Գ.Մինասյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-0029/01/13.....	145
12. Մ.Սարուխանյանի վերաբերյալ որոշում, ՄԳ-0185/01/13.....	176
13. Ն.Չաքմազյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ-0060/01/13.....	192
14. Ա.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ՏԳ-0071/01/13.....	205
15. Տ.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ-0121/01/12.....	243
16. Ս.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԳԳ-5/0014/01/13.....	266
17. Գ.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ-0102/01/12.....	282
18. Կ.Ստեփանյանի և Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ՏԳ-2/0030/01/13.....	296
19. Ս.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ-0189/01/12.....	311
20. Ա.Մակարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ-0182/11/13.....	333
21. Ռ.Նիսիանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ-0118/11/13.....	342
22. Ա.Հունանյանի վերաբերյալ որոշում, ԱԲԱԳ-0059/06/13.....	364
23. Ժ.Սեֆիլյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-07/13.....	373
24. Ս.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ-0089/01/12.....	397

25. Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0096/01/13.....	408
26. Կ.Հարությունյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0223/07/14.....	421
27. Էդ.Ջաքարյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0002/01/13.....	438
28. Ա.Ջալոյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ4/0004/11/13.....	458
29. Կ.Վխկրյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0097/01/13.....	471
30. Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0204/01/13.....	484
31. Ռ.Ախայանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0199/11/13.....	497
32. Ա.Դիլանյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0021/06/14.....	508
33. Ա.Շահբազյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0143/01/13.....	520
34. Վ.Մանասյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0144/01/13	533
35. Վ.Ազարիաշվիլու վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0087/01/12.....	544
36. Ա.Շաքարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0163/01/13.....	555
37. Վ.Շահինյանի վերաբերյալ որոշում, ԳԳ/0038/01/13.....	566
38. Վ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ4/0044/01/13.....	579
39. Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0252/01/13.....	589
40. Մ.Հաջիպողոսյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ4/0003/01/14.....	624
41. Գ.Ոսկանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0119/01/13.....	637
42. Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՍԳ3/0080/01/12.....	651
43. Գ.Խնուսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0030/01/12.....	661
44. Ա.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0178/01/12.....	678
45. Գ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0056/06/14.....	693
46. Գ.Կլեկչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0005/11/14.....	707
47. Ս.Բալյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0059/15/13.....	717
48. Էդ.Աղամյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0048/01/14.....	727
49. Գ.Սիմիդյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0122/01/13.....	741
50. «Էքսպերտ Լաբորատորիա» ՍՊԸ վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0031/11/14....	758
51. Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԵՄԳ/0027/01/14.....	768
52. Ս.Մխիթարյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0051/01/11.....	785
53. Վ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0161/01/13.....	795
54. Վ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԱՐԳ/0038/01/13.....	806
55. Բ.Միսակյանի վերաբերյալ որոշում, ՇԳ2/0007/15/13.....	819
56. Գ.Վարոսյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0005/11/14.....	833
57. Ռ.Բալասանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0199/01/13.....	848



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒՐԲԵԿ ԳԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
2014 ԹՎԱԿԱՆ**

ՆԱԽԱԲԱՆ

2005 թվականին կատարված սահմանադրական բարեփոխումներից հետո ստանձնելով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառնությունը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է ձևավորում քրեական արդարադատության տարբեր ոլորտներում ծագող խնդրահարույց հարցերի վերաբերյալ:

Այլևս իրողություն է, որ քրեական պալատի կայացրած որոշումները լուրջ դերակատարություն ունեն քրեական արդարադատության ոլորտում իրավունքի գերակայությունն ապահովելու, վստահելի, կանխատեսելի և թափանցիկ արդարադատություն ձևավորելու, այդ համատեքստում մարդու իրավունքները և ազատությունները երաշխավորելու գործում: Վերջիններով էլ պայմանավորված է այդ որոշումներն ինչպես իրավաբանական հանրությանը, այնպես էլ հասարակության լայն շրջանակներին հասու դարձնելու կարևորությունն ու հրատապությունը: Այս խնդրի լուծմանն է ուղղված ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ամենամյա ժողովածուների հրատարակման ձևավորված ավանդույթը:

Սույն ժողովածուն ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների վեցերորդ հատորն է և ընդգրկում է 2014 թվականին ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված բոլոր որոշումները, որոնք թվով 57-ն են: Դրանք վերաբերում են ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական չափանիշների հիման վրա նախադեպային դիրքորոշումներ է ձևավորել այնպիսի իրավական հարցերի վերաբերյալ ինչպիսիք են կաշառք ստանալու, վաշխառության հանցակազմերի մեկնաբանումը, հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվի հասկացությունը, քրեաիրական և քաղաքացիաիրավական կառուցակարգերի հարաբերակցությունը և այդ համատեքստում «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» հասկացության բովանդակությունը, դատական մեկնաբանման շրջանակները, մինչդեռատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը և այլն: Տարվա լավագույն որոշում ճանաչված Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատելիս ապա-

ցույցների բավարարության գնահատման հարցին՝ սահմանելով հստակ չափանիշներ, որոնց պահպանման դեպքում միայն անձը կարող է մեղավոր ճանաչվել: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը ներպետական դատական պրակտիկայում ներդրել է «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը՝ որպես քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս ապացույցների բավարարության շեմ:

Հատորյակում ներառված են նաև կոնկրետ գործերով վճռաբեկ դատարանի դատավորների հատուկ կարծիքները, ինչը միտված է Վճռաբեկ դատարանի գործունեության թափանցիկությունը բարձրացնելուն:

Ժողովածուի կիրառական արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դրանում սահմանված է որշումների առարկայական դասակարգման գործիք, որում առանձին ներկայացվում է, թե կոնկրետ որոշումը որ իրավադրույթի մեկնաբանությանն է վերաբերում: Ավելին, դրանում, ինչպես և նախորդ հատորներում սահմանված են յուրաքանչյուր որոշման առարկայական մյուս բնութագրիչները, որոնք վերաբերում են ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում վկայակոչված և կիրառված ՀՀ Սահմանադրության դրույթներին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներին, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներին, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներին:

Ժողովածուն ներառում է նաև լազերային սկավառակ, որի վրա նույնությամբ ձայնագրված են գրքում ներառված դատական ակտերը, ինչը ևս հնարավորություն է տալիս հեշտացնել ժողովածուից օգտվողների աշխատանքը:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածուի սույն հատորը հնարավոր է դարձել հրատարակել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ մեր երկարատև և արդյունավետ գործակցության շնորհիվ:

Գ.Ձ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

*ՀՀ վճռաբեկ դատարանի
քրեական պալատի նախագահ,
իրավագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ վաստակավոր իրավաբան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԳԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

Նյութական իրավունքի վերաբերյալ որոշումներ

**Ն-I Մեկնաբանվող իրավադրույթ՝ օրինականության սկզբունքը
(ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդված)**

Ն-I-1 Գ.Սիմիդյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0122/01/13
(49², նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-1, Ն-XXVII-1)..... 741

**Ն-II Մեկնաբանվող իրավադրույթ՝ կրկին անգամ դատապարտելու
անթույլատրելիությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդված)**

Ն-II-1 Գ.Ոսկանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0119/01/13
(41, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VII-1)..... 637
Ն-II-2 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՍԳ-3/0080/01/12
(42, նույն որոշումը տե՛ս նաև Գ³-VI-1)..... 651

**Ն-III Մեկնաբանվող իրավադրույթներ՝ պատժի արդարացիությունը, պատիժ
նշանակելու ընդհանուր սկզբունքները, (ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ,
61-րդ հոդվածներ)**

Ն-III-1 Հ.Պարանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0132/01/13
(10, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVI-1)..... 133
Ն-III-2 Ն.Չաքմազյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0060/01/13
(13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XII-1, Ն-XVI-2)..... 192
Ն-III-3 Ա.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0071/01/13
(14, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIV-1, Գ- XXXVIII -2)..... 205
Ն-III-4 Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0096/01/13
(25, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-3, Ն-XXXIII-1)..... 408
Ն-III-5 Կ.Վխկրյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0097/01/13
(29, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVIII-1, Ն-XXIX-1)..... 471
Ն-III-6 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0204/01/13
(30, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XII-2, Ն-XVI-4, Գ-XIV-3)..... 484
Ն-III-7 Ա.Շահբազյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0143/01/13
(33, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XX-1)..... 520
Ն-III-8 Վ.Մանասյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0144/01/13 (34)..... 533
Ն-III-9 Ա.Շաքարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0163/01/13

1 Սույն դասակարգման մեջ նյութական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչվում են «Ն» տառով:

2 Որոշման հերթական համարը:

3 Սույն դասակարգման մեջ դատավարական իրավունքի վերաբերյալ որոշումները վկայակոչվում են «Գ» տառով:

(36, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-1, Ն-XIV-2, Ն-XIX-1).....	555
Ն-III-10 Վ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ4/0044/01/13	
(38, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIX-2, Գ-XLI-2).....	579
Ն-III-11 Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0252/01/13	
(39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-5, Ն-XXXI-1, Գ-V-2, Գ-IX-1, Գ-XIV-4, Գ-XV-1, Գ-XVI-2, Գ- XXXIII-4, Գ-XXXIV-1, Գ-XXXV-1).....	589
Ն-III-12 Էդ.Ադամյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0048/01/14	
(48, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XII-3, Ն-XXIII-1).....	727
Ն-III-13 Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԵՄԳ/0027/01/14	
(51, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVI-6, Ն-XXVI-2, Գ-IV-1, Գ-XXXIII-5).....	768

Ն-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում (ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդված)

Ն-IV-1 Մ.Սարուխանյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0185/01/13	
(12, նույն որոշումը տե՛ս նաև Ն-V-1, Ն-XXXVI-1, Ն-XXXVII-1).....	176

Ն-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական օրենքի հետադարձ ուժը (ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդված)

Ն-V-1 Մ.Սարուխանյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0185/01/13	
(12, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1, Ն-XXXVI-1, Ն-XXXVII-1).....	176

Ն-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս անձի դատապարտվելու իրավական հետևանքները (ՀՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդված)

Ն-VI-1 Վ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0161/01/13	
(53, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XIII-1, Գ-XLVIII-1).....	795

Ն-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործությունների համակցությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդված)

Ն-VII-1 Գ.Ոսկանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0119/01/13	
(41, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-1).....	637

Ն-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործությունների ռեցիդիվը (ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդված)

Ն-VIII-1 Ա.Շաքարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0163/01/13	
(36, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-9, Ն-XIV-2, Ն-XIX-1).....	555
Ն-VIII-2 Ս.Բալյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0059/15/13	
(47, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVIII-5).....	717

Ն-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղսունակությունը

(ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդված)

Ն-IX-1 Ս.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԳԳ-5/0014/01/13
(16, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVIII-3, Գ-XXXIII-2, Գ-XLVII-1)..... 266

Ն-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցափորձը

(ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդված)

Ն-X-1 Վ.Ազարիաշվիլու վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0087/01/12
(35, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XI-1, Գ-XLI-1)..... 544

Ն-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործության

նախապատրաստությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդված)

Ն-XI-1 Վ.Ազարիաշվիլու վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0087/01/12
(35, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-1, Գ-XLI-1)..... 544

Ն-XII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատասխանատվությունը և պատիժը

մեղմացնող հանգամանքներ (ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդված)

Ն-XII-1 Ն.Չաքմազյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0060/01/13
(13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-2, Ն-XVI-2)..... 192

Ն-XII-2 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0204/01/13
(30, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-6, Ն-XVI-4, Գ-XIV-3)..... 484

Ն-XII-3 Էդ.Ադամյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0048/01/14
(48, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-12, Ն-XXIII-1)..... 727

Ն-XIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժ նշանակելը հանցանքների

համակցությամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդված)

Ն-XIII-1 Վ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0161/01/13
(53, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Գ-XLVIII-1)..... 795

Ն-XIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժ նշանակելը հանցագործությունների

ոնցիդիվի դեպքում (ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդված)

Ն-XIV-1 Ա.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0071/01/13
(14, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-3, Գ- XXXVIII -2)..... 205

Ն-XIV-2 Ա.Շաքարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0163/01/13
(36, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-9, Ն-VIII-1, Ն-XIX-1)..... 555

Ն-XV Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատժի ժամկետները հաշվարկելը և

պատիժը հաշվակցելը (ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդված)

Ն-XV-1 Վ.Շահինյանի վերաբերյալ որոշում, ԳԳ/0038/01/13
(37, նույն որոշումը տե՛ս նաև Գ-I-1, Գ-XIX-1)..... 566

**Ն-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը
(ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդված)**

Ն-XXVI-1 Հ.Պարանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0132/01/13 (10, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-1).....	133
Ն-XXVI-2 Ն.Չաքմազյանի վերաբերյալ որոշում, ԵԱՆԳ/0060/01/13 (13, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-2, Ն-XII-1).....	192
Ն-XXVI-3 Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0096/01/13 (25, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-4, Ն-XXXIII-1).....	408
Ն-XXVI-4 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0204/01/13 (30, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-6, Ն-XII-2, Գ-XIV-3).....	484
Ն-XXVI-5 Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0252/01/13 (39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-11, Ն-XXXI-1, Գ-V-2, Գ-IX-1, Գ-XIV-4, Գ-XV-1, Գ-XVI-2, Գ-XXXIII-4, Գ-XXXIV-1, Գ-XXXV-1).....	589
Ն-XXVI-6 Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԵՄԳ/0027/01/14 (51, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-13, Ն-XXVI-2, Գ-IV-1, Գ- XXXIII-5).....	768

**Ն-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական պատասխանատվությունից
ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (ՀՀ քրեական
օրենսգրքի 75-րդ հոդված)**

Ն-XXVII-1 Ս.Ղամբարյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0055/01/11 (9, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXX-1, Գ-XI-2).....	93
--	----

**Ն-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ համաներումը
(ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդված)**

Ն-XXVIII-1 Վ.Կոթոլյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0039/15/13 (3, նույն որոշումը տե՛ս նաև Գ-II-1, Գ-XLVI-1).....	19
Ն-XXVIII-2 Գ.Մինասյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0029/01/13 (11, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XI-3, Գ-XXXVI-1, Գ-XXXVII-1, Գ-XXXVIII-1).....	145
Ն-XXVIII-3 Ս.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԳԳ-5/0014/01/13 (16, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-1, Գ-XXXIII-2, Գ-XLVII-1).....	266
Ն-XXVIII-4 Մ.Հաջիպողոսյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ-4/0003/01/14 (40, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XI-6, Գ-XXXVIII-3).....	624
Ն-XXVIII-5 Ս.Բալյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0059/15/13 (47, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VIII-2)	717

**Ն-XXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատվածությունը
(ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդված)**

Ն-XXIX-1 Ա.Շաքարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0163/01/13 (36, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-9, Ն-VIII-1, Ն-XIV-2).....	555
--	-----

Ն-XXIX-2 Վ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ-4/0044/01/13 (38, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-10, Գ-XLI-2).....	579
Ն-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված)	
Ն-XX-1 Ա.Շահաբազյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0143/01/13 (33, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-7).....	520
Ն-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը (ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդված)	
Ն-XXI-1 Վ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ/0038/01/13 (54, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXXIV-1).....	806
Ն-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ավազակությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդված)	
Ն-XXII-1 Գ.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ/0102/01/12 (17, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXIII-3).....	282
Ն-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գողությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդված)	
Ն-XXIII-1 Էդ.Աղամյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0048/01/14 (48, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-12 , Ն-XII-3).....	727
Ն-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ խարդախությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված)	
Ն-XXIV-1 Ռ.Բալասանյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0199/01/13 (57).....	848
Ն-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ վաշխառությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդված)	
Ն-XXV S.Սարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0121/01/12 (15, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIII-1, Գ-XXVI-1, Գ-XXI-1).....	243
Ն-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը (ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդված)	
Ն-XXVI-1 Գ.Սիմիոյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0122/01/13 (49, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Ն-XXVII-1).....	741
Ն-XXVI-2 Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԵՄԳ/0027/01/14 (51, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-13, Ն-XVI-6, Գ-IV-1, Գ-XXXIII-5).....	768

Ն-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելը կամ շորթելը (ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդված)	
Ն-XXVII-1 Դ.Սիմիդյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0122/01/13 (49, նույն որոշումը տե՛ս նաև Ն-I-1, Ն-XXVI-1).....	741
Ն-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդված)	
Ն-XXVIII-1 Կ.Վլխկրյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0097/01/13 (29, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-5, Ն-XXIX-1).....	471
Ն-XXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդված)	
Ն-XXIX-1 Կ.Վլխկրյանի վերաբերյալ որոշում, ՇԴ/0097/01/13 (29, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-5, Ն-XXVIII-1).....	471
Ն-XXX Մեկնաբանվող իրավադրույթ՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդված)	
Ն-XXX-1 Ս.Ղամբարյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵՇԴ/0055/01/11 (9, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVII-1, Դ-XI-2).....	93
Ն-XXXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառությունն առանց դրանք իրացնելու նպատակի (ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդված)	
Ն-XXXI-1 Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0252/01/13 (39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-11, Ն-XVI-5, Դ-V-2, Դ-IX-1, Դ-XIV-4, Դ-XV-1, Դ-XVI-2, Դ- XXXIII-4, Դ-XXXIV-1, Դ-XXXV-1)	589
Ն-XXXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կաշառք ստանալը (ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդված)	
Ն-XXXII-1 Էդ.Զաքարյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0002/01/13 (27).....	438
Ն-XXXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ կաշառք տալը (ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդված)	
Ն-XXXIII-1 Ա.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0096/01/13 (25, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-4, Ն-XVI-3).....	408

Ն-XXXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը (ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդված)
Ն-XXXIV-1 Վ.Գևորգյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ/0038/01/13
(54, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXI-1)..... 806

Ն-XXXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ գորահավաքներից խուսափելը (ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդված)
Ն-XXXV-1 Ս.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ԿԳ-1/0053/01/12 (1)..... 1
Ն-XXXV-1 Ս.Մխիթարյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0051/01/11 (52)..... 785

Ն-XXXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը (ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդված)
Ն-XXXV-1 Մ.Սարուխանյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0185/01/13
(12, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1, Ն-V-1, Ն-XXXV-1)..... 176

Ն-XXXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդված)
Ն-XXXVI-1 Մ.Սարուխանյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0185/01/13
(12, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IV-1, Ն-V-1, Ն-XXXV-1)..... 176

Գ-ատավարական իրավունքի վերաբերյալ որոշումներ

Գ-I Մեկնաբանվող իրավադրույթներ՝ արգելանքի վերցնելը և անազատության մեջ պահելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 36-րդ և 38-րդ կետեր)

Գ-I-1 Վ.Շահինյանի վերաբերյալ որոշում, ԳԳ/0038/01/13
(37, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV-1, Գ-XIX-1)..... 566

Գ-II Մեկնաբանվող իրավադրույթ՝ օրինականության սկզբունքը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդված)

Գ-II-1 Վ.Կոթոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0039/15/13
(3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVIII-1, Գ-XLVI-1)..... 19

Գ-III Մեկնաբանվող իրավադրույթ՝ հավասարությունը օրենքի և դատարանի առջև (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդված)

Գ-III-1 Ա.Հունանյանի վերաբերյալ որոշում, ԱԲԱԳ/0059/06/13
(22, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXIX-2)..... 364

Գ-III-2 Ռ.Ալսայանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0199/11/13
(31, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIV-2, Գ-XXV-3)..... 497

Գ-III-3 Գ.Խնուսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0030/01/12
(43, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VI-2, Գ-VII-1, Գ-XI-7, Գ-XII-1, Գ-XLII-1)..... 661

Գ-III-4 Բ.Միսակյանի վերաբերյալ որոշում, ՇԳ2/0007/15/13
(55, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XLVI-2)..... 819

Գ-III-5 Գ.Վարոսյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0005/11/14
(56, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XI-9, Գ-XXIV-3, Գ-XXV-4, Գ-XXX-2)..... 833

Գ-IV Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործի արդարացի քննությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված)

Գ-IV-1 Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԵՄԳ/0027/01/14 (51, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-13, Ն-XVI-6, Ն-XXVI-2, Գ- XXXIII-5)..... 768

Գ-V Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղության կանխավարկածը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդված)

Գ-V-1 Վ.Եղիազարյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0012/11/13
(6, նույն որոշումը տե՛ս նաև Գ-X-1, Գ-XI-1, Գ-XXIV-1, Գ-XXV-1)..... 55

Գ-V-2 Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0252/01/13
(39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-11, Ն-XVI-5, Ն-XXXI-1, Գ-IX-1, Գ-XIV-4, Գ-XV-1, Գ-XVI-2, Գ- XXXIII-4, Գ-XXXIV-1, Գ-XXXV-1)..... 589

Գ-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ կրկին անգամ դատվելու անթույլատրելիությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդված)

Գ-VI-1 Ա.Հակոբյանի վերաբերյալ որոշում, ՄԳ-3/0080/01/12
(42, նույն որոշումը տե՛ս նաև Ն-II-2)..... 651

Գ-VI-2 Գ.Խնուսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0030/01/12
(43, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-3, Գ-VII-1, Գ-XI-7, Գ-XII-1, Գ-XLII-1)..... 661

Գ-VII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական սխալներից տուժածների իրավունքների վերականգնումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդված)

Գ-VII-1 Գ.Խնուսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0030/01/12
(43, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-3, Գ-VI-2, Գ-XI-7, Գ-XII-1, Գ-XLII-1)..... 661

Գ-VIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ մրցակցությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդված)

Գ-VIII-1 Ա.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0178/01/12
(44, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXII-3, Գ-XLIII-2) 678

Գ-IX Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների գնահատումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդված)

Գ-IX-1 Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0252/01/13
(39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-11, Ն-XVI-5, Ն-XXXI-1, Գ-V-2, Գ-XIV-4, Գ-XV-1, Գ-XVI-2, Գ- XXXIII-4, Գ-XXXIV-1, Գ-XXXV-1)..... 589

Գ-X Մեկնաբանվող իրավադրույթ՝ մասնավոր կարգով իրականացվող քրեական հետապնդում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ և 183-րդ հոդվածներ)

Գ-X-1 Վ.Եղիազարյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0012/11/13 (6, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-1, Գ-XI-1, Գ-XXIV-1, Գ-XXV-1)..... 55

Գ-X-2 Ա.Մակարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0182/11/13
(20, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XI-5)..... 333

Գ-X-3 Գ.Կլեյչյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0005/11/14
(46, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XI-8)..... 707

Գ-XI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդված)

Գ-XI-1 Վ.Եղիազարյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0012/11/13
(6, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-1, Գ-X-1, Գ-XXIV-1, Գ-XXV-1)..... 55

Գ-Ճ-2 Ս.Ղամբարյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0055/01/11 (9, նույն որոշումը տե՛ս նաև Ն-Ճ-1, Ն-Ճ-3).....	93
Գ-Ճ-3 Գ.Մինասյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0029/01/13 (11, նույն որոշումը տե՛ս նաև Ն-Ճ-2, Գ-Ճ-1, Գ-Ճ-2, Գ-Ճ-3).....	145
Գ-Ճ-4 Կ.Ստեփանյանի և Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում, ՏԳ-2/0030/01/13 (18, նույն որոշումը տե՛ս նաև Գ-Ճ-1, Գ-Ճ-2).....	296
Գ-Ճ-5 Ա.Մակարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0182/11/13 (20, նույն որոշումը տե՛ս նաև Գ-Ճ-2).....	333
Գ-Ճ-6 Մ.Հաջիպողոսյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ/0003/01/14 (40, նույն որոշումը տե՛ս նաև Ն-Ճ-4, Գ-Ճ-3).....	624
Գ-Ճ-7 Գ.Խնուսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0030/01/12 (43, նույն որոշումը տե՛ս նաև Գ-Ճ-3, Գ-Ճ-2, Գ-Ճ-1, Գ-Ճ-4, Գ-Ճ-5).....	661
Գ-Ճ-8 Գ.Կլեյզյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0005/11/14 (46, նույն որոշումը տե՛ս նաև Գ-Ճ-3).....	707
Գ-Ճ-9 Գ.Վարոսյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0005/11/14 (56, նույն որոշումը տե՛ս նաև Գ-Ճ-5, Գ-Ճ-3, Գ-Ճ-4, Գ-Ճ-2).....	833

**Գ-Ճ Մեկնաբանվող իրավադրույթ՝ արդարացվածը (ՀՀ քրեական
դատավարության օրենսգրքի 66-րդ հոդված)**

Գ-Ճ-1 Գ.Խնուսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0030/01/12 (43, նույն որոշումը տե՛ս նաև Գ-Ճ-3, Գ-Ճ-2, Գ-Ճ-1, Գ-Ճ-4, Գ-Ճ-5).....	661
--	-----

**Գ-Ճ Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների հասկացությունը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդված)**

Գ-Ճ-1 Տ.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0121/01/12 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-Ճ-5, Գ-Ճ-1, Գ-Ճ-2).....	243
---	-----

**Գ-Ճ Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների թույլատրելիությունը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդված)**

Գ-Ճ-1 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0189/01/12 (19, նույն որոշումը տե՛ս նաև Գ-Ճ-1, Գ-Ճ-2).....	311
Գ-Ճ-2 Ժ.Սեֆիլյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-07/13 (23, նույն որոշումը տե՛ս նաև Գ-Ճ-1, Գ-Ճ-2).....	373
Գ-Ճ-3 Ա.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ՍԳ/0204/01/13 (30, նույն որոշումը տե՛ս նաև Ն-Ճ-6, Ն-Ճ-2, Ն-Ճ-4).....	484
Գ-Ճ-4 Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0252/01/13 (39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-Ճ-11, Ն-Ճ-5, Ն-Ճ-1, Գ-Ճ-2, Գ-Ճ-1, Գ-Ճ-2, Գ-Ճ-3, Գ-Ճ-4, Գ-Ճ-5, Գ-Ճ-6, Գ-Ճ-7, Գ-Ճ-8, Գ-Ճ-9).....	589

**Գ-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացուցման ենթակա հանգամանքները
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդված)**

Գ-XXV-1 Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0252/01/13 (39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-11, Ն-XXVI-5, Ն-XXXI-1, Գ-V-2, Գ-IX-1, Գ-XIV-4, Գ-XXVI-2, Գ- XXXIII-4, Գ-XXXIV-1, Գ-XXXV-1)..... 589

**Գ-VI Մեկնաբանվող իրավադրույթ՝ ապացույցների գնահատումը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդված)**

Գ-XXVI-1 Տ.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0121/01/12 (15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV, Գ-XIII-1, Գ-XXI-1)..... 243

Գ-XXVI-2 Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0252/01/13 (39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-11, Ն-XXVI-5, Ն-XXXI-1, Գ-V-2, Գ-IX-1, Գ-XIV-4, Գ-XXV-1, Գ- XXXIII-4, Գ-XXIV-1, Գ-XXXV-1)..... 589

**Գ-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ գրավը որպես կալանավորման
այլընտրանքային միջոց (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի
134-րդ և 137-րդ հոդվածներ)**

Գ-XXVII-1 Ա.Գիլանյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0021/06/14 (32, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVIII-3)..... 508

**Գ- XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ խափանման միջոց կիրառելու հիմքերը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդված)**

Գ-XXVIII-1 Ա.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0244/06/1 (4, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XX-1)..... 31

Գ-XXVIII-2 Ս.Մարգարյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0138/06/13 (7, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XX-2)..... 70

Գ-XXVIII-3 Ա.Գիլանյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0021/06/14 (32, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVII-1)..... 508

Գ-XXVIII-4 Գ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0056/06/14 (45, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XX-3)..... 693

**Գ-XIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ կալանքի տակ պահելու ժամկետը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդված)**

Գ-XIX-1 Վ.Շահինյանի վերաբերյալ որոշում, ԳԳ/0038/01/13 (37, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV-1, Գ-I-1)..... 566

**Գ-XX Մեկնաբանվող իրավադրույթ՝ գրավը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդված)**

Գ-XX-1 Ա.Կարապետյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0244/06/13 (4, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVIII-1)..... 31

Գ-XX-2 Ս.Մարգարյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0138/06/13 (7, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVIII-2).....	70
Գ-XX-3 Գ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0056/06/14 (45, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXVI).....	693

Գ-XXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քաղաքացիական հայցի հարուցումը և հայցադիմում ընդունելուց հրաժարվելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-159-րդ հոդվածներ)

Գ-XXI-1 Տ.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշում, ԵՇԳ/0121/01/12(15, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXV, Գ-XXIII-1, Գ-XXVI-1).....	243
--	-----

Գ-XXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ ծառայողական և առևտրային գաղտնիքի ստացումը և պահպանումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդված)

Գ-XXII-1 Կ.Հարությունյանի և մյուսների վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0223/07/14 (26, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXIX-1).....	421
---	-----

Գ-XXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործ հարուցելու առիթները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդված)

Գ-XXIII-1 Ռ.Նիսալյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0118/11/13 (21, նույն որոշումը տե՛ս նաև Գ-I-1).....	342
--	-----

Գ-XXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդված)

Գ-XXIV-1 Վ.Եղիազարյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0012/11/13 (6, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-1, Գ-X-1, Գ-XI-1, Գ-XXV-1).....	55
Գ-XXIV-2 Ռ.Ախալյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0199/11/13 (31, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-2, Գ-XXV-3).....	497
Գ-XXIV-3 Գ.Վարդանյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0005/11/14 (56, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-5, Գ-XI-9, Գ-XXV-4, Գ-XXX-2).....	833

Գ-XXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի հարուցումը մերժելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդված)

Գ-XXV-1 Վ.Եղիազարյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0012/11/13 (6, նույն որոշումը տե՛ս նաև Գ-V-1, Գ-X-1, Գ-XI-1, Գ-XXIV-1).....	55
Գ-XXV-2 Ա.Ջալոյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ4/0004/11/13 (28, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXX-1).....	458
Գ-XXV-3 Ռ.Ախալյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0199/11/13 (31, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-2, Գ-XXIV-2).....	497

Գ-XXV-4 Գ.Վարոսյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0005/11/14
(56, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-5, Գ-XI-9, Գ-XXIV-3, Գ-XXX-2)..... 833

Գ-XXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման ժամկետները և կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածներ)

Գ-XXVI-1 Ա.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0125/11/13 (8)..... 80

Գ-XXVI-2 «Էքսպերտ Լաբորատորիա» ՍՊԸ վերաբերյալ որոշում,
ԵԱԲԳ/0031/11/14 (50)..... 758

Գ-XXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ առերեսում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդված)

Գ-XXVII-1 Ս.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0189/01/12
(19, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIV-1, Գ-XXVIII-1)..... 311

Գ-XXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ փորձաքննությունը նշանակելը և կատարելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ, 245-րդ, 248-րդ և 251-րդ հոդվածներ)

Գ-XXVIII-1 Ս.Հարությունյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԳ/0189/01/12
(19, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIV-1, Գ-XXVII-1)..... 311

Գ-XXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդված)

Գ-XXIX-1 Կ.Հարությունյանի և մյուսների վերաբերյալ որոշում,
ԵԿԳ/0223/07/14 (26, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXII-1)..... 421

Գ-XXX Մեկնաբանվող իրավադրույթ՝ հետագա դատական վերահսկողությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդված)

Գ-XXX-1 Ա.Ջալոյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ4/0004/11/13
(28, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXV-2)..... 458

Գ-XXX-2 Գ.Վարոսյանի վերաբերյալ որոշում, ՇԳ/0005/11/14
(56, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-5, Գ-XI-9, Գ-XXIV-3, Գ-XXV-4)..... 833

Գ-XXXI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդված)

Գ-XXXI-1 Կ.Ստեփանյանի և Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում,
ՏԳ2/0030/01/13 (18, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XI-4, Գ-XXXII-1)..... 296

Գ-XXXI-2 Ս.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ/0089/01/12
(24, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXII-2, Գ-XLIII-1)..... 397

**Գ-XXXII Մեկնաբանվող իրավադրույթ՝ արդարացման դատավճիռը
(ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդված)**

Գ-XXXII-1 Կ.Ստեփանյանի և Մ.Հովհաննիսյանի վերաբերյալ որոշում,
ՏԳԶ/0030/01/13 (18, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XI-4, Գ-XXXI-1)..... 296

Գ-XXXII-2 Ս.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ/0089/01/12 (24,
նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXI-2, Գ-XLIII-1)..... 397

Գ-XXXII-3 Ա.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0178/01/12
(44, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VIII-1, Գ-XLIII-2)..... 678

**Գ-XXXIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի օրինականությունը,
հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը (ՀՀ քրեական
դատավարության օրենսգրքի 358-րդ հոդված)**

Գ-XXXIII-1 Է.Մարգարյանի վերաբերյալ որոշում, ՍԳ3/0045/01/13
(2, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XL-1)..... 11

Գ-XXXIII-2 Ս.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԳԳ5/0014/01/13
(16, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-1, Ն-XVIII-3, Գ-XLVII-1)..... 266

Գ-XXXIII-3 Գ.Գասպարյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ/0102/01/12
(17, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXII-1)..... 282

Գ- XXXIII-4 Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի վերաբերյալ որոշում,
ԵԿԳ/0252/01/13 (39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-11, Ն-XVI-5, Ն-XXXI-1,
Գ-V-2, Գ-IX-1, Գ-XIV-4, Գ-XV-1, Գ-XVI-2, Գ-XXXIV-1, Գ-XXXV-1)..... 589

Գ-XXXIII-5 Գ.Գալստյանի վերաբերյալ որոշում, ԵՄԳ/0027/01/14
(51, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-13, Ն-XVI-6, Ն-XXVI-2, Գ-IV-1)..... 768

**Գ-XXXIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ մեղադրական դատավճիռը (ՀՀ
քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդված)**

Գ-XXXIV-1 Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի վերաբերյալ որոշում,
ԵԿԳ/0252/01/13 (39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-11, Ն-XVI-5, Ն-XXXI-1,
Գ-V-2, Գ-IX-1, Գ-XIV-4, Գ-XV-1, Գ-XVI-2, Գ- XXXIII-4, Գ-XXXV-1)..... 589

**Գ-XXXV Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատավճռի նկարագրական-
պատճառաբանական մասը (ՀՀ քրեական դատավարության
օրենսգրքի 371-րդ հոդված)**

Գ-XXXV-1 Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0252/01/13
(39, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-11, Ն-XVI-5, Ն-XXXI-1, Գ-V-2, Գ-IX-1,
Գ-XIV-4, Գ-XV-1, Գ-XVI-2, Գ- XXXIII-4, Գ-XXXIV-1)..... 589

Գ-XXXVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ արագացված կարգի կիրառման հիմքերը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ հոդված)	
Գ-XXXVI-1 Գ.Մինասյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0029/01/13 (11, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVIII-2, Գ-XI-3, Գ-XXXVII-1, Գ-XXXVIII-1)	145
Գ-XXXVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական քննության արագացված կարգով անցկացնելու միջնորդություն ներկայացնելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375²-րդ հոդված)	
Գ-XXXVII-1 Գ.Մինասյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0029/01/13 (11, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVIII-2, Գ-XI-3, Գ-XXXVI-1, Գ-XXXVIII-1)	145
Գ-XXXVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ արագացված կարգով դատական քննություն անցկացնելու և դատավճիռ կայացնելու կարգը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդված)	
Գ-XXXVIII-1 Գ.Մինասյանի վերաբերյալ որոշում, ԿԳ/0029/01/13 (11, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVIII-2, Գ-XI-3, Գ-XXXVI-1, Գ-XXXVII-1).....	145
Գ- XXXVIII -2 Ա.Պողոսյանի վերաբերյալ որոշում, ՏԳ/0071/01/13 (14, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-3, Ն-XIV-1).....	205
Գ-XXXVIII-3 Մ.Հաջիպողոսյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ4/0003/01/14 (40, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XXVIII-4, Գ-XI-6).....	624
Գ-XXXIX Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ բողոքարկման ժամկետը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդված)	
Գ-XXXIX-1 Վ.Գրիգորյանի վերաբերյալ որոշում, Ս-930/05 (5).....	43
Գ-XXXIX-2 Ա.Հունանյանի վերաբերյալ որոշում, ԱՐԱԳ/0059/06/13 (22, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-1).....	364
Գ-XL Մեկնաբանվող իրավադրույթ՝ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտ կայացնելը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդված)	
Գ-XL-1 Է.Մարգարյանի վերաբերյալ որոշում, ՍԳ3/0045/01/13 (2, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXIII-1).....	11
Գ-XLI Մեկնաբանվող իրավադրույթ՝ վճռաբեկ դատարանում գործի քննության սահմանները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդված)	
Գ-XLI-1 Վ.Ազարիաշվիլու վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0087/01/12 (35, նույն որոշումը տե՛ս նաև Ն-X-1, Ն-XI-1).....	544
Գ-XLI-2 Վ.Քոչարյանի վերաբերյալ որոշում, ԱՎԳ4/0044/01/13 (38, նույն որոշումը տե՛ս նաև Ն-III-10, Ն-XIX-2).....	579

Գ-XLII Մեկնաբանվող իրավադրույթ՝ վճռաբեկ դատարանի լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդված)	
Գ-XLII-1 Գ.Խնուսյանի վերաբերյալ որոշում, ԵԷԳ/0030/01/12 (43, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-3, Գ-VI-2, Գ-VII-1, Գ-XI-7, Գ-XII-1).....	661
Գ-XLIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ Արդարացման դատավճռի բեկանումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդված)	
Գ-XLIII-1 Ս.Խաչատրյանի վերաբերյալ որոշում, ԱԲԳ/0089/01/12 (24, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XXXI-2, Գ-XXXII-2).....	397
Գ-XLIII-2 Ա.Աբրահամյանի վերաբերյալ որոշում, ԼԳ/0178/01/12 (44, նույն որոշումը տե՛ս նաև Գ-VIII-1, Գ-XXXII-3).....	678
Գ-XLIV Մեկնաբանվող իրավադրույթ՝ գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետևանքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդված)	
Գ-XLIV-1 Ժ.Մեֆիլյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-07/13 (23, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIV-2, Գ-XLV-1).....	373
Գ-XLV Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտերի վերանայումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁹-րդ հոդված)	
Գ-XLV-1 Ժ.Մեֆիլյանի վերաբերյալ որոշում, ՎԲ-07/13 (23, նույն որոշումը տե՛ս նաև Գ-XIV-2, Գ-XLIV-1).....	373
Գ-XLVI Մեկնաբանվող իրավադրույթ՝ դատական ակտի անհստակությունների կամ կասկածների լուծումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդված)	
Գ-XLVI-1 Վ.Կոթոյանի վերաբերյալ որոշում, ԵԿԳ/0039/15/13 (3, նույն որոշումը տե՛ս նաև Ն-XVIII-1, Գ-II-1).....	19
Գ-XLVII Մեկնաբանվող իրավադրույթ՝ անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 450-451-րդ, 456-րդ, 460-461-րդ, 464-րդ հոդվածներ)	
Գ-XLVII-1 Ս.Ստեփանյանի վերաբերյալ որոշում, ԳԳ5/0014/01/13 (16, նույն որոշումը տե՛ս նաև Ն-IX-1, Ն-XVIII-3, Գ-XXXIII-2).....	266
Գ-XLVIII Մեկնաբանվող իրավադրույթ՝ օտարերկրյա պետությունների դատավճիռների ճանաչումը Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499⁸-րդ հոդված)	
Գ-XLVIII-1 Վ.Ավետիսյանի վերաբերյալ որոշում, ԵԱԶԳ/0161/01/13 (53, նույն որոշումը տե՛ս նաև Ն-VI-1, Ն-XIII-1).....	795
Գ-XLVIII-2 Բ.Միսակյանի վերաբերյալ որոշում, ՇԳ2/0007/15/13 (55, նույն որոշումը տե՛ս նաև Գ-III-4).....	819

Աղբյուրների ցանկ թիվ 1
ՀՀ Սահմանադրության դրույթներ

1. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդված (3),
2. ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդված (21)
3. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդված (4), (7), (32), (37)
4. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդված (3),
5. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդված (17), (18), (22), (44), (51), (57)
6. ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդված (6)
7. ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդված (12), (42), (43), (49)
8. ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդված (26),
9. ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդված (23)
10. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդված (22), (31), (43), (55), (56)

Աղբյուրների ցանկ թիվ 2
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. *Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի*
1968 թվականի հունիսի 27 (45)
2. *Մաթզներթերն ընդդեմ Ավստրիայի*
1969 թվականի նոյեմբերի 10 (45)
3. *Սրոզմուլլերն ընդդեմ Ավստրիայի*
1969 թվականի նոյեմբերի 10 (45)
4. *Ջենդն ընդդեմ Ավստրիայի*
Հանձնաժողովի 1978 թվականի հոկտեմբերի 12 գեկույց (57)
5. *Ունյերպերպրինգերն ընդդեմ Ավստրիայի*
1986 թվականի նոյեմբերի 24 (19)
6. *Բարբերա Մեսսեգուեն և Ջեբարդոն ընդդեմ Իսպանիայի*
1988 թվականի դեկտեմբերի 6 (39)
7. *Բրիկմոնյուն ընդդեմ Բելգիայի*
1989 թվականի հուլիսի 7 (17)
8. *Լեթելլիերն ընդդեմ Ֆրանսիայի*
1991 թվականի հունիսի 26 (45)
9. *Կոկկինասկիսն ընդդեմ Հունաստանի*
1993 թվականի մայիսի 25 (14), (49)
10. *Վան դե Հարթն ընդդեմ Նիդեռլանդների*
1994 թվականի ապրիլի 19 (19)
11. *Ռուիզ Տորիջան ընդդեմ Իսպանիայի*
1994 թվականի դեկտեմբերի 9 (19)
12. *Մքքանը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության*
1995 թվականի սեպտեմբերի 27 (21)
13. *Ս.Ռ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*
1995 թվականի նոյեմբերի 22 (49)
14. *Ս.Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*
1995 թվականի նոյեմբերի 22 (49)
15. *Կանարոնին ընդդեմ Ֆրանսիայի*
1996 թվականի նոյեմբերի 15 (49)
16. *Հեյն ընդդեմ Ֆինլանդիայի*
1997 թվականի դեկտեմբերի 19 (19)
17. *Սելջուկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի*
1998 թվականի ապրիլի 24 (23)

<i>18. Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի</i>	
1998 թվականի հուլիսի 27	(21)
<i>19. Էրզհն ընդդեմ Թուրքիայի</i>	
1998 թվականի հուլիսի 28	(21)
<i>20. Յաշան ընդդեմ Թուրքիայի</i>	
1998 թվականի սեպտեմբերի 2	(21)
<i>21. Ասսենովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի</i>	
1998 թվականի հոկտեմբերի 28	(21)
<i>22. Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության</i>	
1998 թվականի հոկտեմբերի 28	(21)
<i>23. Տանրիկուլուն ընդդեմ Թուրքիայի</i>	
1999 թվականի հուլիսի 8	(21)
<i>24. Բրունարեսկուն ընդդեմ Ռումինիայի</i>	
1999 թվականի հոկտեմբերի 28	(57)
<i>25. Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության</i>	
2000 թվականի մայիսի 12	(23)
<i>26. Սկոցցարին և Ջունյանն ընդդեմ Իսրայիլայի</i>	
2000 թվականի հուլիսի 13	(23)
<i>27. Գյուլն ընդդեմ Թուրքիայի</i>	
2000 թվականի դեկտեմբերի 14	(21)
<i>28. Հյու Ջորդանն ընդդեմ Միացյալ Թագավորության</i>	
2001 թվականի մայիսի 4	(21)
<i>29. Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (թիվ 1)</i>	
2001 թվականի հուլիսի 17	(19)
<i>30. Իլիջկովն ընդդեմ Բուլղարիայի</i>	
2001 թվականի հուլիսի 26	(45)
<i>31. Փի.Ջի.-ն և Ջեի.Էյջ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության</i>	
2001 թվականի սեպտեմբերի 25	(23)
<i>32. Է.Կ.-ն ընդդեմ Թուրքիայի</i>	
2002 թվականի փետրվարի 7	(49)
<i>33. Ջանոսեվիչն ընդդեմ Շվեդիայի</i>	
2002 թվականի հուլիսի 23	(39)
<i>34. Ջիզարելան ընդդեմ Իսրայիլայի</i>	
2002 թվականի հոկտեմբերի 3-ի որոշում	(43)
<i>35. Հուլկի Գյունեչն ընդդեմ Թուրքիայի</i>	
2003 թվականի հունիսի 19	(19)
<i>36. Ջենսլն ընդդեմ Թուրքիայի</i>	
2003 թվականի հոկտեմբերի 23	(23)

37. <i>Սումոզյին ընդդեմ Իտալիայի</i>	
2004 թվականի մայիսի 18	(23)
38. <i>Ֆալկներն ընդդեմ Ավստրիայի</i>	
2004 թվականի սեպտեմբերի 30-ի որոշում	(43)
39. <i>Պանչենկոն ընդդեմ Ռուսաստանի</i>	
2005 թվականի փետրվարի 8	(45)
40. <i>Օսալան ընդդեմ Թուրքիայի</i>	
2005 թվականի մայիսի 12	(23)
41. <i>Մեյլենն ընդդեմ Թուրքիայի</i>	
2005 թվականի հոկտեմբերի 11	(23)
42. <i>Բրասսին ընդդեմ Իտալիայի</i>	
2005 թվականի հոկտեմբերի 13	(23)
43. <i>Նաչովան և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի</i>	
2005 թվականի հունիսի 6	(21)
44. <i>Միխենվն ընդդեմ Ռուսաստանի</i>	
2006 թվականի հունվարի 26	(21)
45. <i>Սքավուցո-Հագերր և մյուսներն ընդդեմ Շվեյցարիայի</i>	
2006 թվականի փետրվարի 7	(21)
46. <i>Աչորն ընդդեմ Ֆրանսիայի</i>	
2006 թվականի մարտի 29	(49)
47. <i>Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի</i>	
2006 թվականի հունիսի 1	(45)
48. <i>Սոկուրենկոն և Ստրիգունն ընդդեմ Ուկրաինայի</i>	
2006 թվականի հունիսի 20	(57)
49. <i>Պեսսինոն ընդդեմ Ֆրանսիայի</i>	
2006 թվականի հոկտեմբերի 10-ի	(49)
50. <i>Գոսսան ընդդեմ Լեհաստանի</i>	
2007 թվականի հունվարի 9	(19)
51. <i>Ռամասահայր և մյուսներն ընդդեմ Նիդերլանդների</i>	
2007 թվականի մայիսի 15	(21)
52. <i>Ռադչիկովն ընդդեմ Ռուսաստանի</i>	
2007 թվականի մայիսի 24	(23)
53. <i>Վելսերր և բիկոս բեյրեյիզունգեն ՋիԷմԲիԷյջ-ն ընդդեմ Ավստրիայի</i>	
2007 թվականի հոկտեմբերի 16	(26)
54. <i>Նիկոլովան և Վելիչկովան ընդդեմ Բուլղարիայի</i>	
2008 թվականի մարտի 20	(43)

<i>55. Քսերաժն ընդդեմ Ալքանիայի</i>	
2008 թվականի հունիսի 29	(23)
<i>56. Բալսիտե-Լիդեիկյենեն ընդդեմ Լիտվայի</i>	
2008 թվականի նոյեմբերի 4	(19)
<i>57. Կատրա և մյուսներն ընդդեմ Ուկրաինայի</i>	
2008 թվականի դեկտեմբերի 18	(21)
<i>58. Չոլոտուլիսենն ընդդեմ Ռուսաստանի</i>	
2009 թվականի փետրվարի 9	(43)
<i>59. Էսաթ Բայրամն ընդդեմ Թուրքիայի</i>	
2009 թվականի մայիսի 26	(21)
<i>60. Չական ընդդեմ Ալքանիայի</i>	
2009 թվականի դեկտեմբերի 8	(19)
<i>61. Հարոթյունյանն ընդդեմ Հայաստանի</i>	
2010 թվականի հունիսի 15	(21)
<i>62. Բաննիկովան ընդդեմ Ռուսաստանի</i>	
2010 թվականի նոյեմբերի 4	(51)
<i>63. Սրերդեցը և մյուսներն ընդդեմ Գերմանիայի</i>	
2011 թվականի մարտի 22	(49)
<i>64. Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի</i>	
2012 թվականի ապրիլի 10	(23)
<i>65. Ռոբատինն ընդդեմ Ավստրիայի</i>	
2012 թվականի հունիսի 3	(26)
<i>66. Նադան ընդդեմ Շվեյցարիայի</i>	
2012 թվականի սեպտեմբերի 12	(26)
<i>67. Վիրաքյանն ընդդեմ Հայաստանի</i>	
2012 թվականի հոկտեմբերի 2	(6)
<i>68. Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի</i>	
2012 թվականի հոկտեմբերի 2	(23)
<i>69. Այ.Էս.-ն ընդդեմ Գերմանիայի</i>	
2014 թվականի հունիսի 5	(26)

Աղբյուրների ցանկ թիվ 3
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ

1. ՍԳՈ-844, 2009 թվականի դեկտեմբերի 7 (8)
2. ՍԳՈ-871, 2010 թվականի մարտի 30 (43)
3. ՍԳՈ-931, 2010 թվականի դեկտեմբերի 28 (11), (14)
4. ՍԳՈ-1052, 2012 թվականի հոկտեմբերի 16 (5), (22)
5. ՍԳՈ-1099, 2013 թվականի մայիսի 31 (23)
6. ՍԳՈ-1124, 2013 թվականի նոյեմբերի 19 (27)
7. ՍԳՈ-1143, 2014 թվականի ապրիլի 8 (43)

Աղբյուրների ցանկ թիվ 4
ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտեր

1. *Ա.Սերոբյանի գործով*
2007 մարտի 30-ի թիվ ՎԲ-46/07 որոշում (44), (57)
2. *Պ.Բայրամյանի գործով*
2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 որոշում (30)
3. *Է.Կարապետյանի գործով*
2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշում (21)
4. *Թ.Տեր-Պրիգորյանի գործով*
2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-192/07 որոշում (25), (30)
5. *Ա.Ճուղուրյանի գործով*
2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշում (4), (7)
6. *Ս.Այվազյանի վերաբերյալ գործով* 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-17/08 որոշում (15), (22), (31), (55)
7. *Ա.Ավետիսյանի գործով*
2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԲ/0022/06/08 որոշում (4), (7), (45)
8. *Ն.Միսակյանի գործով*
2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԳ-1/0003/11/08 որոշում (56)
9. *Վ.Ալիխանյանի գործով*
2009 թվականի հունիսի 2-ի թիվ ՀՅԲԲԳ/0046/01/08 որոշում (54)
10. *Գ.Մադաթյանի վերաբերյալ գործով*
2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵԸԳ/0029/01/08 որոշում (7), (10), (13), (25), (33), (39), (51)
11. *Ա.Սարգսյանի գործով* 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵԲԲԳ/0295/01/08 որոշում (19)
12. *Գ.Միքայելյանի գործով*
2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԳԳ/0085/06/09 որոշում (32)
13. *Գ.Հովհաննիսյանի գործով* 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԳ/0078/01/09 որոշում (25), (30)
14. *Լ.Չարյանի գործով* 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԳ/0081/11/09 որոշում (8)
15. *Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի գործով*
2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԲԲԳ/0632/01/08 որոշում (15), (39)

16. *Ֆ.Գալստյանի գործով*
2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 (2), (16), (39), (51)
17. *Ա.Օհանյանի գործով*
2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԱԶԴ/0001/11/10 որոշում (8),
18. *Խ.Ղազարյանի գործով*
2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԷԴ/0138/01/09 որոշում (13)
19. *Հ.Աթոյանի գործով*
2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԱԴԴ/0014/11/09 որոշում (8),
20. *Հ.Հակոբյանի գործով*
2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԱԶԴ/0128/01/09 որոշում (17)
21. *Ա.Սահակյանի գործով*
2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԴ1/0003/01/10 որոշում (29)
22. *Էդ.Ներսիսյանի գործով*
2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԷԴ/0124/01/09 որոշում (53)
23. *Կ.Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ*
2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԶԴԴ/0063/01/08 որոշում (41)
24. *Ա.Պապյանի գործով*
2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 որոշում (57)
25. *Է.Եղինյանի գործով*
2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԼԴ/0008/11/10 որոշում (8),
26. *Լ.Ավետիսյանի գործով*
2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշում (57)
27. *Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի գործով*
2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0209/01/10 որոշում (11)
28. *Վ.Գևորգյանի գործով*
2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշում (32)
29. *Ե.Մելքոնյանի գործով*
2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵՇԴ/0090/01/10 որոշում (12), (14), (49)
30. *Ա.Ավետիսյանի գործով*
2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԱՆԴ/0091/01/09 որոշում (48)

31. *Հ.Հարությունյանի գործով*
2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշում (28)
32. *Ա.Ղարիբյանի գործով*
2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԿԴ/0008/06/11 որոշում (5)
33. *Ա.Սաղաթեյանի գործով*
2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշում (9)
34. *Հ.Սահակյանի գործով*
2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0212/01/10 որոշում (19)
35. *Վ.Ավետիսյանի գործով*
2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴ3/0013/01/11,
որոշում (11), (12), (14), (40), (47), (49)
36. *Ա.Բարայանի և Ս.Թումանյանի գործով*
2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11
որոշում (6), (18), (39), (44)
37. *Ա.Բաղդասարյանի գործով*
2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0168/01/10 որոշում (33)
38. *Ն.Սարգսյանի գործով*
2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշում (33), (48)
39. *Ս.Սաքանյանի գործով*
2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշում (15), (39)
40. *Գ.Ղազարյանի վերաբերյալ*
2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱԲԴ/0121/01/11 որոշում (16)
41. *Լ.Բարայանի գործով*
2012 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0093/11/11 որոշում (22), (31), (43)
42. *Ա.Առուստամյանի գործով*
2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՏԴ/0145/01/11 որոշում (11)
43. *Գ.Բարայանի գործով*
2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԴ1/0043/01/11 որոշում (41), (42), (43)
44. *Ք.Պետրոսյանի գործով*
2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/0102/01/11 որոշում (15)
45. *«Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի գործով*
2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/1133/07/11 որոշում (5)
46. *Ս.Հովհաննիսյանի գործով*
2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՍԴ/0204/01/11 որոշում (9), (12)

47. Վ.Մաթևոսյանի գործով
2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵՇԴ/0037/01/11 որոշում (57)
48. Է.Ասատրյանի գործով
2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11 որոշում (29)
49. Հ.Մակարյանի գործով
2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԳ-3/0019/01/11 որոշում (43), (44)
50. Ս.Թադևոսյանի գործով
2012 թվականի նոյեմբերի 1-ին թիվ ԿԳ-3/0006/01/12 որոշում (14)
51. Ս.Սարգսյանի գործով
2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԳ/0109/01/12 որոշում (10), (13), (36)
52. Գ.Ալիխանյանի գործով
2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԱԶԴ/0138/06/12 որոշում (4), (7)
53. Հ.Հովհաննիսյանի գործով
2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԷԴ/0063/13/12 որոշում (3)
54. Տ.Հովհաննիսյանի գործով
2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0066/11/12 որոշում (5), (22)
55. Ա.Արծրունու գործով
2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԷԴ/0126/13/11 որոշում (41)
56. Գ.Փահլևանյանի գործով
2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԼԴ/0224/01/11 որոշում (3)
57. Ս.Անտոնյանի գործով
2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշում (21)
58. Վ.Պողոսյանի գործով
2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ-1/0062/06/12 որոշում (7), (32), (37), (45)
59. Գ.Հովսեփյանի գործով
2013 թվականի ապրիլի 18-ի թիվ ԵԷԴ/0033/15/09 որոշում (55)
60. Մ.Հակոբյանի վերաբերյալ
2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0168/01/12 որոշում (39)
61. Ա.Առաքելյանի գործով
2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱՆԴ/0122/01/12 որոշում (29)
62. Ա.Բաղդասարյանի գործով
2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԶԴ/0009/11/13 որոշում (18), (43)
63. Ա.Մուրադխանյանի գործով
2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՎԲ/01/13 որոշում (23)
64. Գ.Սարգսյանի վերաբերյալ
2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0015/07/13 որոշում (26)

65. *Գ.Ղամբարյանի և սյուսների գործով*
 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԿԳ/0087/01/12 որոշում (35)
66. *Ս.Աղայանյանի գործով*
 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԳ/0082/01/12 որոշում (36), (38), (48)
67. *Գ.Խնուսյանի գործով*
 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԳ/0030/01/12 որոշում (2), (16), (44)
68. *Գ.Ղևոնդյանի գործով*
 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ
 ԵԿԳ/0044/11/13 որոշում (6), (21), (8), (31), (56)
69. *Վ.Բեգյանի գործով*
 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԳ/0018/01/13 որոշում (25)
70. *Վ.Գալոյանի գործով*
 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԳ/0008/15/13 որոշում (12)
71. *Ա.Մինոնյանի գործով*
 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ
 ԵԿԳ/0055/11/13 որոշում (15), (22), (31), (55), (56)
72. *Գ.Վիրաբյանի գործով*
 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ/05/13 որոշում (23)
73. *Վ.Մանասյանի գործով*
 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԳ-3/0080/01/12 որոշում (42)
74. *Է.Մարգարյանի գործով*
 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՍԳ-3/0045/01/13 որոշում (16)
75. *Ա.Գրիգորյանի գործով*
 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԿԳ/0125/11/13 որոշումը (28), (50)
76. *Ս.Աբրահամյանի գործով*
 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԿԳ-1/0053/01/12 որոշում (52)
77. *Ս.Մարգարյանի գործով*
 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԷԳ/0138/06/13 որոշում (45)
78. *Վ.Եղիազարյանի գործով*
 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՇԳ/0012/11/13 որոշում (20), (46)
79. *Ա.Մակարյանի գործով*
 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԳ/0182/11/13 որոշում (46)

80. *Գ.Մինասյանի գործով*
2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԿԴ/0029/01/13 որոշում (14), (40)
81. *Կ.Ստեփանյանի և Մ.Հովհաննիսյանի գործով*
2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՏԴ-2/0030/01/13 որոշում (24), (44)
82. *Ա.Շահբազյանի գործով*
2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13 որոշում (34), (37)
83. *Ա.Շաքարյանի գործով*
2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԴ/0163/01/13 որոշում (38), (48)
84. *Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի գործով*
2014 թվականի հոկտեմբերի 31-ի ԵԿԴ/0252/01/13 որոշում (51)

1.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԿԴ-1/0053/01/12

ԿԴ-1/0053/01/12

Նախագահող դատավոր՝ Մ.Ռեհանյան
Դատավորներ՝ Լ.Թադևոսյան
Մ.Արղամանյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ*

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

*քարտուղարությամբ՝
մասնակցությամբ պաշտպան*

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ե.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ

2014 թվականի մարտի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Սամվել Սամվելի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի մայիսի 17-ի որոշման դեմ ամբաստանյալ Ս.Աբրահամյանի պաշտպաններ Լ.Մարգարյանի և Շ.Բրեյդիի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2012 թվականի օգոստոսի 15-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի քննչական բաժանմունքում հարուցվել է թիվ 20116712 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2012 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ Սամվել Աբրահամյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով:

2012 թվականի օգոստոսի 31-ին Ս.Աբրահամյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 29-ի դատավճռով Սամվել Աբրահամյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Ամբաստանյալ Ս.Աբրահամյանի պաշտպաններ Լ.Մարգարյանի և Շ.Բրեյդիի վերաբնդիչ բողոքի քննության արդյունքում Վերաբնդիչ դատարանը 2013 թվականի մայիսի 17-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 29-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաբնդիչ դատարանի 2013 թվականի մայիսի 17-ի որոշման դեմ ամբաստանյալ Ս.Աբրահամյանի պաշտպաններ Լ.Մարգարյանի և Շ.Բրեյդիի վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ վերադարձվել է, և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու ժամկետ է սահմանվել:

Ամբաստանյալ Ս.Աբրահամյանի պաշտպաններ Լ.Մարգարյանը և Շ.Բրեյդին կրկին վճռաբեկ բողոք են ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ս.Աբրահամյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա 2010 թվականի մայիսի 10-ին անցել է կցագրում Կոտայքի տարածքային զինկոմիսարիատում և նախագորակոչային բժշկական հանձնաժողովի կողմից ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար: 2012 թվականի փետրվարի 15-ին Ս.Աբրահամյանն անցել է գորակոչային հանձնաժողով, որտեղ նախագորակոչային բժշկական հանձնաժողովը վերջինիս ճանաչել է պիտանի զինվորական ծառայության համար: 2012 թվականի մայիսի 18-ին Ս.Աբրահամյանը ներկայացրել է դիմում՝ ուղղված ՀՀ ՊՆ Կոտայքի մարզի տարածքային զինվորական կոմիսարին այն մասին, որ ինքը հանդիսանում է Եհովայի վկա աղանդավորական կազմակերպության անդամ և ըստ հավատքի՝ իր խիղճը դաստիարակել է Աստվածաշնչի սկզբունքների համաձայն, այն է՝ չպետք է զենք կրի և վարժվի պատերազմի ու հրաժարվել է ծառայել ՀՀ զինված ուժերում, ինչպես նաև հրաժարվել է 2003 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված այլընտրանքային ծառայությունից» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 68):

6. 2013 թվականի մայիսի 2-ին ընդունված ՀՕ-31-Ն և ՀՕ-32-Ն ՀՀ օրենքներով փոփոխություններ և լրացումներ են կատարվել համապատասխանաբար «Այլընտրանքային ծառայության մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքներում:

7. 2013 թվականի հուլիսի 23-ին ամբաստանյալ Ս.Աբրահամյանն այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել Արովյան քաղաքի զինվորական կոմիսարիատ (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 264):

8. Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի «Պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին» թիվ 1-Ա որոշմամբ Ս.Աբրահամյանի դիմումը բավարարվել է, նա այլընտրանքային աշխատանքային ծառայության է նշանակվել «Սևանի հանրապետական հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ում որպես բակի հավաքարար (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 289):

3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոք բերած անձինք նշել են, որ սույն գործով ամբաստանյալ Ս.Աբրահամյանը Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 29-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով: 2013 թվականի հունիսի 8-ին ուժի մեջ է մտել «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2013 թվականի մայիսի 2-ին ընդունված օրենքը: Վերջինիս հիման վրա ստեղծվել է այլընտրանքային աշխատանքային ծառայություն, որի նկատմամբ նույն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ չի կարող սահմանվել զինվորական վերահսկողություն:

Բողոքի հեղինակները նշել են, որ Ս.Աբրահամյանը 2013 թվականի հուլիսի 23-ին այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել, որն այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ բավարարվել է:

Բողոքի հեղինակները, վկայակոչելով «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ մասը, գտել են, որ Ս.Աբրահամյանի վերաբերյալ դատավճիռը ենթակա է վերանայման, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճման:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակները խնդրել են բեկանել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի մայիսի 17-ի որոշումը, քրեական գործը կարճել, քրեական հե-

տապնդումը դադարեցնել և Ս.Աբրահամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնել:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. «Այլընտրանքային ծառայության մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքներում 2013 թվականի մայիսի 2-ին ընդունված ՀՕ-31-Ն և ՀՕ-32-Ն ՀՀ օրենքներով կատարված փոփոխությունների և լրացումների պայմաններում Ս.Աբրահամյանի նկատմամբ կիրառելի՞ է արդյոք «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 13-րդ մասը:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորավարժանքից խուսափելու համար՝ այդ ծառայությունից ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում:

Մեջբերված քրեաիրավական դրույթի վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքում այն ամրագրված է բլանկետային դիսպոզիցիայի միջոցով: Այսպես՝ անձը ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորավարժանքից խուսափելու համար քրեական պատասխանատվության ենթակա է միայն այն դեպքում, երբ բացակայում են նրան ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից ազատելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերը: Բլանկետային դիսպոզիցիայի առկայությունը նշանակում է, որ անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը պայմանավորված է զինվորական կամ այլընտրանքային ծառայության զորակոչի, վարժական հավաքի կամ զորավարժանքի հիմքերը, կարգը և պայմանները սահմանող համապատասխան իրավական ակտերում ամրագրված նորմերի բովանդակությամբ և ծավալով: Բլանկետային դիսպոզիցիաների վերոնշյալ առանձնահատկությամբ է բացատրվում քրեաիրավական նորմի և համապատասխան օրենսդրական և (կամ) ենթաօրենսդրական ակտում ամրագրված դրույթի միջև առկա կապն այն առումով, որ համապատասխան օրենքում և (կամ) ենթաօրենսդրական ակտում կատարված բովանդակային փոփոխություններն ազդում են քրեաիրավական նորմի բովանդակության և դրանով արգելված արարքների ծավալի ու շրջանակի վրա: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը պարզելու նպատակով անհրաժեշտ է դիմել «Զինապարտության մասին» և «Այլընտ-

րանքային ծառայության մասին» ՀՀ օրենքներում ամրագրված դրույթներից և դրանց վերլուծության հիման վրա պարզել, թե կոնկրետ դեպքում առկա՞ են արդյոք ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից ազատելու համապատասխան հիմք(եր)ը և, հետևաբար, կոնկրետ անձի արարքում առկա՞ են արդյոք զինվորական ծառայությունից կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու հատկանիշները:

13. «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝

«1. (...) այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում:

2. Այլընտրանքային ծառայության տեսակներն են՝

(...)

բ) այլընտրանքային աշխատանքային՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայություն:

(...)»:

2013 թվականի մայիսի 2-ին ընդունված և նույն թվականի հունիսի 8-ին ուժի մեջ մտած «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով փոփոխության է ենթարկվել «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը և շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«(...)

Այլընտրանքային աշխատանքային ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է ընդհանրապես զինվորական ծառայություն անցնելը:

(...)»:

Նույն օրենքի 3-րդ հոդվածով փոփոխության է ենթարկվել «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ի մասը և շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Այլընտրանքային ծառայության ուղարկվում է այն քաղաքացին, որը մինչև հերթական գորակոչին նախորդող փետրվարի 1-ը կամ օգոստոսի 1-ը սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին դիմել է այն տարածքային զինվորական կոմիսարիատ, որտեղ նա հաշվառված է, և որի այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովը (այսուհետ՝ հանրապետական հանձնաժողով) որոշել է ուղարկել այլընտրանքային ծառայության: (...)»:

Նույն օրենքի 13-րդ հոդվածով փոփոխության է ենթարկվել «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը և շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«(...) 2. Այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացումը կազմակերպում և վերահսկում է (են) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (մարմինները):

3. Այլընտրանքային աշխատանքային ծառայության նկատմամբ չի կարող սահմանվել զինվորական վերահսկողություն:

4. Այլընտրանքային աշխատանքային ծառայողները ծառայությունն անցնում են այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպություններում:

(...)»:

2013 թվականի մայիսի 2-ին ընդունված և նույն թվականի հունիսի 8-ին ուժի մեջ մտած ««Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-31-Ն օրենքի վերոշարադրյալ դրույթների վերլուծությունից երևում է, որ դրանով էական փոփոխության են ենթարկվել այլընտրանքային աշխատանքային ծառայության բովանդակությունը, այլընտրանքային աշխատանքային ծառայության անցնելու հիմքերը, կարգն ու պայմանները:

14. ««Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-31-Ն օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում, մասնավորապես՝

ա) իրավական երաշխիքներ են սահմանվել առ այն, որ աշխատանքային ծառայությունը պարտադիր զինվորական ծառայության իրական այլընտրանք է, աշխատանքային բնույթ ունի, որևէ կերպ չի առնչվում զինվորական ծառայության հետ և իրականացվում է զինվորական վերահսկողությունից դուրս:

բ) հստակեցվել են այլընտրանքային ծառայության անցնելու հիմքերը: Այս կապակցությամբ սահմանվել է, որ այլընտրանքային աշխատանքային ծառայության կարող է անցնել ՀՀ այն քաղաքացին, ում կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է ընդհանրապես զինվորական ծառայություն անցնելը:

գ) ամրագրվել է, որ աշխատանքային ծառայությունն ազատ է ցանկացած զինվորական կառույցի վերահսկողությունից:

դ) փոփոխությունների են ենթարկվել այլ ընտրանքային աշխատանքային ծառայության անցնելու կարգը և այլընտրանքային աշխատանքային ծառայողների իրավունքներն ու պարտականությունները: Այս կապակցությամբ ամրագրվել է, որ այլընտրանքային աշխատանքային ծառայողի համար պետք է սահմանվեն աշխատանքային նույնպիսի պայմաններ, ինչ սահմանված են նույն բնույթի աշխատանքներ կատարող պայմանագրային կամ հաստիքային աշխատողների համար, աշխատանքային ծառայողին այսուհետ պետք է տրվի ամենամսյա ողջամիտ դրամական բավարարում (մինչև երեսուն հազար դրամի չափով), արձակուրդ (տարեկան 10 օրացույցային օր տևողությամբ), իսկ աշխատաժամանակի տևողությունը չի կարող 48 ժամից ավել կամ պակաս լինել:

15. «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-31-Ն օրենքով կատարված փոփոխությունների (տե՛ս սույն որոշման 13-14-րդ կետերը) և ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված բլանկետային դիսպոզիցիայի առանձնահատկությունների (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը) համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2013 թվականի մայիսի 2-ին ընդունված և նույն թվականի հունիսի 8-ին ուժի մեջ մտած ՀՕ-31-Ն օրենքով «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարվել են բովանդակային բնույթի այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցրել են քրեախրավական նորմի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակության և դրանով արգելված արարքների ծավալի ու շրջանակի փոփոխության: Արդյունքում տեղի է ունեցել արարքի մասնակի ապաքրեականացում այն անձանց մասով, ովքեր մինչ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելը մեղադրվել կամ դատապարտվել են կրոնական հանոգմունքների հիմքով զինվորական և այլընտրանքային ծառայությունից հրաժարվելու համար:

16. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի մայիսի 2-ի ՀՕ-32-Ն ՀՀ օրենքով լրացումներ են կատարվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-529-Ն ՀՀ օրենքում: Նշված փոփոխությունների արդյունքում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-529-Ն օրենքի 3-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 13-րդ մասով. «Կարճել դատարանների, նախաքննության և հետաքննության մարմինների վարությամբ գտնվող քրեական գործերը և դադարեցնել քրեական հետապնդումն այն անձանց նկատմամբ, որոնք կասկածվում կամ մեղադրվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ, 327.1-րդ, 327.2-րդ, 327.3-րդ և 327.4-րդ հոդվածներով նախատեսված արարքների կատարման համար, եթե այդ անձինք մինչև 2013 թվականի օգոստոսի 1-ը դիմում են ներկայացրել այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ, և «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիազորված մարմինը որոշում է կայացրել նրանց այլընտրանքային ծառայության ուղարկելու մասին»:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի մայիսի 2-ի ՀՕ-32-Ն ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի («Անցումային դրույթներ») համաձայն՝ «1. Սույն օրենքի 1-ին հոդվածով «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածում լրաց-

վող 12-րդ և 13-րդ մասերը տարածվում են այն անձանց վրա, որոնք մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կատարել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ, 327.1-ին, 327.2-րդ, 327.3-րդ և 327.4-րդ հոդվածներով նախատեսված արարքները կամ դրանց կատարման համար դատապարտվել են»:

Մեջբերված իրավադրույթների համակարգային վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 327-327.4-րդ հոդվածներով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունն օրենսդիրը կապել է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության հետ, այն է՝

ա) ՀՀ քրեական օրենսգրքի 327-327.4-րդ հոդվածներով արգելված արարքները կատարվել են մինչև «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի մայիսի 2-ի ՀՕ-32-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը.

բ) ՀՀ քրեական օրենսգրքի 327-327.4-րդ հոդվածներով արգելված արարքների կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անձինք մինչև 2013 թվականի օգոստոսի 1-ը դիմում են ներկայացրել այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ.

գ) լիազոր մարմինը որոշում է կայացրել վերոնշյալ անձանց այլընտրանքային ծառայության ուղարկելու մասին:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 29-ի դատավճռով Ս.Աբրահամյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 6 (վեց) ամիս ժամկետով (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի մայիսի 17-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

2013 թվականի մայիսի 2-ի ՀՕ-31-Ն և ՀՕ-32-Ն ՀՀ օրենքներով համապատասխանաբար «Այլընտրանքային ծառայության մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարվելուց հետո՝ 2013 թվականի հուլիսի 23-ին, ամբաստանյալ Ս.Աբրահամյանն այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել Աբովյան քաղաքի զինվորական կոմիսարիատ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի «Պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին» թիվ 1-Ա որոշմամբ Ս.Աբրահամյանի դիմումը բավարարվել է, նա այլընտրանքային

աշխատանքային ծառայության է նշանակվել «Սևանի հանրապետական հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ում որպես բակի հավաքարար (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

18. Սույն որոշման 12-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ս.Աբրահամյանը ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվել է կրոնական համոզմունքների պատճառով և՛ զինվորական, և՛ այլընտրանքային ծառայությունից խուսափելու համար: Նշված արարքը կատարվել է մինչև «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի մայիսի 2-ի ՀՕ-32-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը: Ս.Աբրահամյանն «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով մինչև 2013 թվականի օգոստոսի 1-ը դիմում է ներկայացրել այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ, որը բավարարվել է, և լիազոր մարմինը որոշում է կայացրել նրան այլընտրանքային ծառայության ուղարկելու մասին: Այսինքն՝ սույն գործով պահպանված են «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված պայմանները (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Այլընտրանքային ծառայության մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքներում 2013 թվականի մայիսի 2-ին ընդունված ՀՕ-31-Ն և ՀՕ-32-Ն ՀՀ օրենքներով կատարված փոփոխությունների և լրացումների պայմաններում Ս.Աբրահամյանի նկատմամբ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 13-րդ մասը կիրառելի է:

19. Հիմք ընդունելով սույն որոշման 11-18-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Սամվել Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 29-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի մայիսի 17-ի որոշումը պետք է բեկանել, քրեական գործի վարույթը կարճել և Ս.Աբրահամյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Սամվել Սամվելի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունվարի 29-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի մայիսի 17-ի որոշումը բեկանել, քրեական գործի վարույթը կարճել և Սամվել Սամվելի Աբրահամյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դարավորներ՝*

*սրորագրություն
սրորագրություններ*

2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ՄԳ-3/0045/01/13
Նախագահող դատավոր՝ Մ.Արղամյան
Դատավորներ՝ Ե.Գարբինյան, Կ.Ղազարյան

ՄԳ-3/0045/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ մասնակցությամբ տուժող	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ Գ.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

2014 թվականի մարտի 28-ին

ք.Երևանում

ղմբաց դատական նիստում, քննության առնելով Էրիկ Վալերիկի Մարգարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի նոյեմբերի 12-ի որոշման դեմ տուժող Գայանե Բարսեղյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2011 թվականի սեպտեմբերի 26-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 91006811 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2013 թվականի մարտի 18-ի որոշմամբ Էրիկ Վալերիկի Մարգարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2013 թվականի ապրիլի 25-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի օգոստոսի 13-ի դատավճռով Է.Մարգարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: Տուժող Գ.Բարսեղյանի քաղաքացիական հայցը քավարարվել է մասնակիորեն, ամբաստանյալ Է.Մարգարյանից հօգուտ տուժող Գ.Բարսեղյանի բռնագանձվել է 130.000 (հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում, իսկ մնացած մասով քաղաքացիական հայցը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. Ամբաստանյալ Է.Մարգարյանի և նրա պաշտպան Ա.Գրիգորյանի վերաբնիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի նոյեմբերի 12-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի օգոստոսի 13-ի դատավճիռը թողել է անփոփոխ: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) 1-ին կետի 3-րդ ենթակետի հիման վրա՝ Է.Մարգարյանն ազատվել է նշանակված պատժի կրումից:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 12-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել տուժող Գ.Բարսեղյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հունվարի 24-ի որոշմամբ տուժող Գ.Բարսեղյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակից՝ ամբաստանյալ Է.Մարգարյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել է տուժող Գ.Բարսեղյանի վճռաբեկ բողոքը:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Է.Մարգարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա հանդիսանալով ՊԲ 59703 զորամասի նյութական ապահովման վաշտի վարորդ, կոչումով շարքային, 2011 թվականի հուլիս-օգոստոսին գնացել է ԼՂՀ Ասկերանի շրջանի Բերքաձոր գյուղի բնակչուհի Գայանե Շուրայի Բարսեղյանի տուն, որտեղ կենցաղային հարցերով առաջացած վիճարանության ընթացքում, հանկարծակի ծագած չկոնկրետացված դիտավորությամբ ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել Գայանե Բարսեղյանի մարմնի տարբեր մասերին, որի հետևանքով Գայանե Բարսեղյանին պատճառվել է փայծաղի սուբկապսուլյար վնասվածք, իսկ հետագայում Գայանե Բարսեղյանի փայծաղը հեռացվել է, այսինքն Էրիկ Մարգարյանի գործողությունների հետևանքով Գայանե Բարսեղյանի առողջությանը՝ փայծաղի սուբ-

կապտույյար վնասվածքի և օրգանի կորստի ձևով, պատճառվել է կյանքի համար վտանգավոր ծանր վնաս» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 168):

6. Տուժող Գ.Բարսեղյանը ներկայացրել է վերաքննիչ բողոքի պատասխան՝ խնդրելով ամբաստանյալ Է.Մարգարյանի նկատմամբ չկիրառել Համաներման ակտի դրույթները և նրան չազատել պատժի կրումից, քանի որ չի հարթվել հանցագործությամբ իրեն պատճառած վնասը և առկա է վեճ հատուցման ենթակա վնասի շուրջ, որի կապակցությամբ քաղաքացիական դատավարության կարգով ներկայացվել է քաղաքացիական հայց (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 251-252)

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը, քննության առնելով պաշտպանության կողմի միջնորդությունն ամբաստանյալ Էրիկ Մարգարյանի նկատմամբ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը կիրառելու մասին, հանգում է այն հետևության, որ այն պետք է բավարարել (...):

Մյուսիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճռի կայացումից հետո Էրիկ Մարգարյանը հատուցել է դատավճռով բավարարված քաղաքացիական հայցը՝ 130.000 ՀՀ դրամը, ինչի վերաբերյալ համապատասխան բանկային փաստաթղթերը ներկայացվեցին վերաքննիչ դատարան, և ամբաստանյալի նկատմամբ համաներման վերոհիշյալ որոշման չկիրառման հիմքեր առկա չեն» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 267-268):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս թույլ է տվել Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետի խախտում: Մասնավորապես, որպես ապացույց գնահատելով պաշտպանության կողմի ներկայացրած համապատասխան բանկային փաստաթուղթը՝ Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ Է.Մարգարյանը հատուցել է հանցագործությամբ պատճառված վնասը: Արդյունքում դատարանը գտել է, որ Է.Մարգարյանի նկատմամբ կիրառելի են Համաներման ակտի համապատասխան դրույթները, մինչդեռ հանցագործությամբ պատճառված վնասը ոչ միայն հատուցված չէ, այլև առկա է քաղաքացիական վեճ, որի վերաբերյալ ԼԳՀ ընդհանուր իրավասության դատարանում հարուցված է համապատասխան քաղաքացիական գործ՝ դատավճռով չբռնագանձված՝ 700.000 ՀՀ դրամի մասով:

9. Ուստի, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի օգոստոսի 13-ի դատավճռին:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարան ներկայացված վերաքննիչ բողոքի պատասխանի փաստարկները քննարկելու անհրաժեշտության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հարցով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. պատճառաբանված է արդյոք Վերաքննիչ դատարանի դատական ակտն այն պայմաններում, երբ վերջինս պատշաճ գնահատման չի ենթարկել Համաներման ակտի կիրառելիության վերաբերյալ տուժող Գ.Բարսեղյանի՝ վերաքննիչ բողոքի պատասխանում ներկայացված փաստարկները:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Դատական ակտի պատճառաբանվածության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ֆ.Գալստյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

(...) Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:

(...) Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում՝ ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպատճառաբանվածությունը կամ ոչ բավարար պատճառաբանվածությունը դիտել [է] «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշ-

խավորված՝ անձի արդար դատական քննության իրավունքի խախտում (տե՛ս *Սալովն ընդդեմ Ուկրաինայի (Salov v. Ukraine)* 06.09.2005 թվականի որոշումը, գանգատ թիվ 65518/01, *Բոլդեան ընդդեմ Ռումինիայի (Boldea v. Romania)* 15.02.2007 թվականի որոշումը, գանգատ թիվ 19997/02, *Գրադինարն ընդդեմ Մոլդովայի (Gradinar v. Moldova)* 08.04.2008 թվականի որոշումը, գանգատ թիվ 7170/02)» (տե՛ս Ֆրունզիկ Գալստյանի գործով Վճարելի դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը):

Վերահաստատելով *Ֆ. Գալստյանի* գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը *Գ. Խնուսյանի* գործով որոշման մեջ արձանագրել է, որ «(...) հաշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ Վճարելի դատարանը փաստում է, որ քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է: (...)» (տե՛ս Գևորգ Խնուսյանի գործով Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0030/01/12 որոշման 14-րդ կետը):

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտը կայացնում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով սույն հոդվածում շարադրված պահանջները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի և համապատասխանաբար նաև *Ֆ. Գալստյանի* և *Գ. Խնուսյանի* գործերով կայացված որոշումների համատեքստում մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ դատական ակտի պատճառաբանվածության չափանիշը վերաբերելի է նաև վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտերին: Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում դատական ակտ կայացնելիս վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե ինչու է եկել այս կամ այն հետևության, և որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս:

Վճարելի դատարանն ընդգծում է, որ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի պատճառաբանվածության վերոնշյալ պահանջների պահպանման պարագայում միայն վճարելի դատարանը հնարավորություն կունենա ստուգել կայացված դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռով Է.Մարգարյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 տարի ժամկետով այն բանի համար, որ տուժող Գ.Բարսեղյանի տանը, կենցաղային հարցերով առաջացած վիճաբանության ընթացքում, հանկարծակի ծագած չկոնկրետացված դիտավորությամբ ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել տուժողի մարմնի տարբեր մասերին, որի հետևանքով վերջինիս պատճառով է փայծաղի սուրկապսուլյար վնասվածք, իսկ հետագայում տուժողի փայծաղը հեռացվել է: Արդյունքում Գ.Բար-

սեղյանի առողջությամբ պատճառվել է կյանքի համար վտանգավոր, ծանր վնաս: Միաժամանակ, Առաջին ատյանի դատարանը տուժող Գ.Բարսեղյանի քաղաքացիական հայցը բավարարել է մասնակիորեն, ամբաստանյալ Է.Մարգարյանից հոգուտ տուժող Գ.Բարսեղյանի բռնագանձվել է 130.000 (հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում, իսկ մնացած մասով քաղաքացիական հայցը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 2-րդ և 5-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք են բերել ամբաստանյալ Է.Մարգարյանը և նրա պաշտպան Ա.Գրիգորյանը: Տուժող Գ.Բարսեղյանը ներկայացրել է վերաքննիչ բողոքի պատասխան՝ խնդրելով ամբաստանյալ Է.Մարգարյանի նկատմամբ Համաներման ակտը չկիրառել և նրան չազատել պատժի կրումից, քանի որ նա չի հարթել հանցագործությամբ իրեն պատճառած վնասը և առկա է վեճհանցագործությամբ պատճառված և հատուցման ենթակա վնասի շուրջ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը բավարարել է ամբաստանյալ Է.Մարգարյանի նկատմամբ Համաներման ակտը կիրառելու վերաբերյալ պաշտպանության կողմի միջնորդությունն այն պատճառաբանությամբ, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի կայացումից հետո Էրիկ Մարգարյանը հատուցել է դատավճռով բավարարված քաղաքացիական հայցը՝ 130.000 ՀՀ դրամը, ինչի վերաբերյալ համապատասխան բանկային փաստաթղթերը ներկայացվել են Վերաքննիչ դատարան (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը): Վերաքննիչ դատարանի դատական ակտի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Է.Մարգարյանի նկատմամբ Համաներման ակտը կիրառելու թույլատրելիության վերաբերյալ իր եզրահանգումը պատճառաբանելիս Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել և որևէ գնահատական չի տվել տուժողի կողմից վերաքննիչ բողոքի պատասխանում շարադրված այն փաստարկին, որ հանցագործությամբ պատճառված վնասը ոչ միայն հատուցված չէ, այլև առկա է քաղաքացիական վեճ, որի վերաբերյալ ԼԳՀ ընդհանուր իրավասության դատարանում հարուցված է համապատասխան քաղաքացիական գործ՝ դատավճռով չբռնագանձված՝ 700.000 ՀՀ դրամի մասով:

15. Սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 14-րդ կետում մեջբերված և վերլուծված հանգամանքները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ դատական ակտի պատճառաբանվածության չափանիշի իմաստով Վերաքննիչ դատարանն Է.Մարգարյանի նկատմամբ Համաներման ակտը կիրառելու վերաբերյալ իր հետևությունը շարադրելիս պարտավոր էր պատճառաբանել, թե

ա) որ իրավանորմերով է ղեկավարվել Է.Մարգարյանի նկատմամբ Համաներման ակտը կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս: Վճարելի դատարանն ընդգծում է, որ Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետի իմաստով Համաներման ակտի կիրառման նախապայմաններից մեկը ենթադրյալ հանցագործությամբ պատճառված և հատուցման ենթակա վնասի չափի կա-

պակցությամբ տուժողի և ենթադրյալ հանցանք կատարած անձի միջև վեճի բացակայությունն է:

բ) ինչ փաստական տվյալների գնահատման արդյունքում է եզրահանգել, որ Է.Մարգարյանի նկատմամբ կիրառելի է Համաներման ակտը: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում որևէ գնահատական չի տվել տուժողի և հանցանք կատարած անձի միջև քաղաքացիաիրավական վեճի առկայության հարցին, մինչդեռ տուժող Գ.Բարսեղյանի վերաքննիչ բողոքի պատասխանում փաստարկվել է, որ առկա է վեճ հանցագործությամբ պատճառված և հատուցման ենթակա վնասի չափի կապակցությամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի դատական ակտը պատճառաբանված չէ և այս առումով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտում:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...):»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշման նախորդ կետում արձանագրված խախտումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով հիմք է Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար:

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի պատճառաբանվածության պահանջների խախտման պարագայում Վճռաբեկ դատարանը զրկված է Վերաքննիչ դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելու հնարավորությունից, ուստի Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետի խախտման վերաբերյալ բողոքաբերի փաստարկին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը) հնարավոր է անդրադառնալ դատական ակտի պատճառաբանվածության մասով սույն որոշման 15-րդ կետում արձանագրված խախտումը վերացնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Էրիկ Վալերիկի Մարգարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

Դատավորներ՝

ստորագրություն

ստորագրություններ

3.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԵԿԴ/0039/15/13
Նախագահող դատավոր՝ Ա.Դանիելյան

ԵԿԴ/0039/15/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍՏՏԻՍՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատապարտյալ	Վ.ԿՈԹՈԼՅԱՆԻ

2014 թվականի մարտի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի դեկտեմբերի 13-ի որոշման դեմ դատապարտյալ Վլադիմիր Մաթևոսի Կոթոլյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2012 թվականի դեկտեմբերի 13-ի դատավճռով Վլադիմիր Մաթևոսի Կոթոլյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 5-րդ կետերով և դատապարտվել է ազատազրկման՝ 5 (հինգ) տարի ժամկետով: Վճռվել է նաև «Հայաստանի Հանրապետության

անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) 8-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա՝ Վ.Կոթոյանի պատժաչափի չկրած մասը կրճատել մեկ երրորդով:

Վ.Կոթոյանի պաշտպաններ Վ.Գևորգյանի և Կ.Քամայանի, ինչպես նաև մեղադրող Ա.Նադոյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2013 թվականի մարտի 5-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ բողոքելով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի դատավճիռը:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի մայիսի 15-ի որոշմամբ Վ.Կոթոյանի պաշտպան Ա.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

2. 2013 թվականի հունիսի 6-ին ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի պետ Ն.Զաքարյանը դիմում է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով մեկնաբանել Վ.Կոթոյանի վերաբերյալ նույն դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի դատավճռի անհատակությունը և հստակեցնել, թե «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման որ դրույթն է ենթակա կիրառման դատապարտյալ Վ.Կոթոյանի նկատմամբ:

Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի հունիսի 7-ին որոշել է Վ.Կոթոյանի վերաբերյալ նույն դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի դատավճռի եզրափակիչ մասում ավելացնել հետևյալ պարբերությունը. «Դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո Վլադիմիր Մաթևոսի Կոթոյանի նկատմամբ կիրառել «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի թիվ ԱԺՈ-277-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետը և նրան ազատել պատժից»:

ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ա.Նադոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 7-ի որոշումը և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

3. Նոր քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի սեպտեմբերի 18-ին որոշում է կայացրել ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի պետ Ն.Զաքարյանի դիմումն անհիմն լինելու պատճառաբանությամբ մերժելու մասին:

4. Դատապարտյալ Վ.Կոթոյանի պաշտպան Ա.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի

դեկտեմբերի 13-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը:

5. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Վ.Կոթոյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ դատապարտյալ Վ.Կոթոյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Վ.Կոթոյանի պաշտպան Ա.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին Վճռաբեկ դատարանի 2013 թվականի մայիսի 15-ի որոշման համաձայն՝ «Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ ամբաստանյալ Վ.Կոթոյանին «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի կիրառմամբ պատժի կրումից ազատելու վերաբերյալ փաստարկին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետը կիրառելու իրավասությամբ օժտված են քրեակատարողական հիմնարկների պետերը և ոչ թե դատարանները: Հետևաբար Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի կիրառելիության հարցը պետք է լուծվի համապատասխան քրեակատարողական հիմնարկի պետի կողմից՝ նույն ակտի 13-րդ կետի 4-րդ ենթակետով ամրագրված իրավագործության սահմաններում (*mutatis mutandis* տե՛ս Հովհաննես Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԷԴ/0063/13/12 որոշումը)»:

7. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 18-ի որոշման համաձայն՝ «(...) 2012 թվականի դեկտեմբերի 13-ին կայացված և ուժի մեջ մտած դատավճռում դատարանն անդրադարձել է Վ.Կոթոյանի նկատմամբ համաներման ակտի կիրառման հարցին և որոշել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի թիվ ԱԺՈՒ-277-Ն որոշման 8-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ Վլադիմիր Մաթևոսի Կոթոյանի պատժաչափի չկրած մասը կրճատել մեկ երրորդով:

Հետևաբար ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի պետ Ն.Չաքարյանի դիմումը վերաբերում է համաներման ակտի կիրառման հետ կապված սխալին:

Վերլուծելով վերոհիշյալ փաստերը, իրավադրույթները և ԼԴ/0224/01/11 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի փետրվարի 15-ի որոշումը, հաշվի առնելով, որ համաներման ակտի կիրառման հետ կապված

սխալը հանդիսանում է անձի նկատմամբ պատիժ նշանակելիս թույլ տրված դատական սխալ՝ դատարանը գտնում է, որ ԵԿԳ/0040/01/10 քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռի ի կատար ածման փուլում դատապարտայալ Վ.Կոթոյանի նկատմամբ համաներման ակտի կիրառման վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն դատարանը չունի, ուստի այդ առումով անհատակությունը մեկնաբանվել և լուծվել չի կարող» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 67):

8. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի որոշման համաձայն՝ «(...) ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը դատավճռի անհատակությունը մեկնաբանելու մասին դիմումը մերժելու հարցում հանգել է ճիշտ եզրակացության, հետևաբար վիճարկվող դատական ակտը բեկանելու և փոփոխելու հիմքեր չկան» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 145):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 16-րդ հոդվածների, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի դատավճռով իր նկատմամբ պետք է կիրառվեր Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետը, և ինքը պետք է ազատվեր նշանակված պատժից, մինչդեռ դատարանը կիրառել է Համաներման ակտի 8-րդ կետի 3-րդ ենթակետը և իր պատժաչափի չկրած մասը կրճատել մեկ երրորդով: Իր հերթին, Վճռաբեկ դատարանը, 2013 թվականի մայիսի 15-ի որոշմամբ վերադարձնելով իր պաշտպանի վճռաբեկ բողոքը, արձանագրել է, որ Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի կիրառելիության հարցը պետք է լուծվի համապատասխան քրեակատարողական հիմնարկի պետի կողմից՝ նույն ակտի 13-րդ կետի 4-րդ ենթակետով ամրագրված իրավագործության սահմաններում:

Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը եզրահանգել է, որ իր նկատմամբ պետք է կիրառվի Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետը, մինչդեռ թե՛ Առաջին ատյանի դատարանը, թե՛ Վերաքննիչ դատարանը, քննության առնելով Համաներման ակտի կիրառման ենթակա դրույթի վերաբերյալ անհատակությունը մեկնաբանելու մասին քրեակատարողական հիմնարկի պետի դիմումը և համապատասխանաբար, պաշտպան Ա.Գրիգորյանի վերաքննիչ բողոքը, կայացրել են անհիմն որոշումներ՝ նշելով, որ սույն գործի շրջանակներում անհատակության հետ կապված որևէ խնդիր առկա չէ:

10. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը քննարկման առարկա չի դարձրել իր նկատմամբ «Հայաստանի Հանրապետության

անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի կիրառելիության հարցը:

11. Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի որոշումը և հստակեցնել, որ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի և «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա՝ ինքը ենթակա է պատժից ազատման:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավճիռը կամ այլ դատական ակտն ի կատար ածելու ընթացքում ծագած կասկածները և անհստակությունները լուծելու՝ դատարանի իրավասության (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդված) սահմանների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նշված հարցով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ են արդյոք Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի դատավճռի անհստակությունը մեկնաբանելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի պետի դիմումը մերժելու մասին ստորադաս դատարանների որոշումները:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի համաձայն՝ «Դատավճիռ կամ այլ դատական որոշում կայացրած դատարանն իրավունք ունի լուծել դրա ի կատար ածման ընթացքում ծագած կասկածները և անհստակությունները, մասնավորապես՝

1) հստակ որոշել հաշվարկվող պատժի չափը, եթե դատարանի դատավճռում այն սահմանված չէ.

(...)

3) լուծել խափանման միջոցների, դատական ծախսերը վերաբաշխելու և իրեղեն ապացույցների ճակատագրի հարցը, եթե այն լուծված չի եղել կամ լուծված է եղել ոչ հստակ.

4) մեկնաբանել իր որոշումների անհստակությունները»:

Մեջբերված նյութա-դատավարական դրույթները Վճռաբեկ դատարանը համադրված վերլուծության է ենթարկել *Գ. Փահլևանյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի] վերլուծությունից երևում է, որ այն սահմանում է դատավճռի կամ դատական այլ որոշման ի կատար ածման փուլում դատարանի լուծմանը ենթակա հարցերի հետևյալ շրջանակը՝

ա) պատժի չափի հստակեցում,

բ) խափանման միջոցների հետ կապված հարցեր,

գ) դատական ծախսերի վերաբաշխում,

դ) իրեղեն ապացույցների տնօրինում,

ե) որոշման մեջ առկա անհստակությունների պարզաբանում:

Վերոնշյալ հարցերի լուծումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի իմաստով, հանդիսանում է դատավճռի կամ դատական այլ որոշման ի կատար ածման փուլում ծագած կասկածների և անհստակությունների լուծում:

(...) անհստակությունների լուծման դատարանի իրավասությունը ներառում է այն հարցերի լուծումը, որոնք կապված չեն անձի մեղքի կամ նրա նկատմամբ նշանակված պատժի հետ: Այլ խոսքով՝ անձի մեղքի և (կամ) պատժի հետ կապված հարցերը ենթակա են լուծման բացառապես գործի դատական քննության փուլում, իսկ գործի քննության այլ փուլերում դրանց անդրադարձը հակասում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի որոշակիության սկզբունքին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղքի և (կամ) պատժի հետ կապված հարցերը դուրս են անհստակությունների լուծման դատարանի իրավասության շրջանակներից և պետք է իրականացվեն ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված՝ դատական ակտի բողոքարկման ընթացակարգով:

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ համաներման ակտի հիման վրա պատժից ազատելու, դատվածությունը մարելու և պատժաչափը կրճատելու դեպքերը չեն հանդիսանում անձի պատժի հետ կապված հարցի լուծում:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ դեպքում, երբ գործի դատական քննության ընթացքում դատարանն անձի նկատմամբ չի կիրառում համաներման ակտը և դատավճիռն օրինական ուժի մեջ է մտնում նախատեսված համաներման չկիրառմամբ, դատարանն իրավասու է մեկնաբանել իր որոշման մեջ առկա անհստակությունը և դատավճռի կամ դատական այլ

որոշման ի կատար ածման փուլում կայացնել անձի նկատմամբ համաներման ակտի կիրառման մասին որոշում:

Վերոգրյալի հետ նեկտեղ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատական ակտի կատարման փուլում համաներման ակտի կիրառումը հնարավոր է այն դեպքում, երբ դատարանը գործի դատական քննության ընթացքում ընդհանրապես չի անդրադարձել համաներման ակտի կիրառման հարցին: Ինչ վերաբերում է այն դեպքին, երբ գործի դատական քննության փուլում դատարանը անդրադառնում է անձի նկատմամբ համաներման ակտի կիրառման հարցին և սխալ է թույլ տալիս, օրինակ՝ քննարկում է համաներման կիրառման հարցը և չի կիրառում կիրառման ենթակա համաներման ակտը կամ սխալ է կիրառում այն, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համաներման ակտի կիրառման հետ կապված վերոնշյալ սխալները հանդիսանում են անձի նկատմամբ պատիժ նշանակելիս թույլ տրված դատական սխալներ, որոնք պետք է ուղղվեն ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված՝ դատական ակտի բողոքարկման ընթացակարգով» (տե՛ս Գայանե Նորիկի Փահլևանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԼԳ/0224/01/11 որոշման 11-12-րդ, 14-15-րդ կետերը):

15. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Պետական (...) մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենսգիրքը և մյուս օրենքները»:

«Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման 13-րդ կետը նախատեսում է՝

«Սույն որոշման կատարումը վերապահել՝

1) դատարաններին՝

ա. այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը գտնվում են դատարաններում, սակայն մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը չեն քննվել, կամ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը քննվել են, բայց դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել,

բ. այն անձանց նկատմամբ, որոնց հանդեպ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, կամ պատժի կրումը հետաձգվել է (...).

4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությամբ-

յան քրեակատարողական հիմնարկների պետերին՝ այն անձանց նկատմամբ, որոնք պատիժը կրում են քրեակատարողական հիմնարկներում (...))»:

Մեջբերված սահմանադրական և քրեադատավարական դրույթների համատեքստում մեկնաբանելով Համաներման ակտի 13-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը Հ. Հովհաննիսյանի գործով որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) ելնելով անձի իրավական կարգավիճակից (կասկածյալ, մեղադրյալ, ամբաստանյալ, դատապարտյալ)՝ [Համաներման ակտի 13-րդ կետը] հստակ սահմանում է Համաներման ակտի կիրառման իրավասություն ունեցող մարմինները:

Համաներման ակտի 13-րդ կետի իմաստով՝ դատարանների իրավասությանն է վերապահված այն անձանց նկատմամբ Համաներման կիրառումը, ում վերաբերյալ գործերը գտնվում են դատարաններում և դեռևս չեն քննվել կամ քննվել են, սակայն դատական ակտերն օրինական ուժի մեջ չեն մտել, ինչպես նաև այն անձանց նկատմամբ, ում հանդեպ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, կամ պատժի կրումը հետաձգվել է: Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց նկատմամբ համաներման կիրառման իրավասությունը վերապահված է համապատասխան հիմնարկի պետերին» (տե՛ս Հովհաննես Ներսեսի Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԷԴ/0063/13/12 որոշման 20-րդ կետը):

16. Սույն որոշման 14-րդ կետում մեջբերված իրավադրույթների, ինչպես նաև սույն որոշման 15-րդ կետում մեջբերված՝ Գ. Փահլևանյանի և Հ. Հովհաննիսյանի գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր կողմից նախկինում ձևավորված դիրքորոշումն այն մասին, որ անձի մեղքի և (կամ) պատժի հետ կապված հարցերը ենթակա են լուծման բացառապես գործի դատական քննության փուլում, իսկ անհստակությունների լուծման իրավասության շրջանակներում դատարանի կողմից դրանց անդրադառնալը հակասում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի որոշակիության սկզբունքին:

Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ համաներման ակտի հիման վրա պատժից ազատելու, դատվածությունը մարելու և պատժաչափը կրճատելու դեպքերը չեն հանդիսանում անձի մեղքի կամ պատժի հետ կապված հարցի լուծում: Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածով սահմանված՝ դատավճռի ի կատար ածման փուլում ծագած անհստակությունների լուծման իր իրավասության սահմաններում դատարանը կարող է կիրառել համաներման ակտի այս կամ այն դրույթը, եթե գործի դատական քննության ընթացքում ընդհանրապես չի անդրադարձել համաներման ակտի կիրառման հարցին: Ընդ որում, այս փուլում դատարանն իրավասու է իր կողմից նախկինում կայացված դատական ակտի անհստակությունը պարզաբանել և կիրառել համաներման ակտի այս կամ այն դրույթը բացառապես այն դեպքում, եթե այն կիրառելու իրավասությունը տվյալ համաներման ակտով վերապահված է դատարանին:

Այն դեպքում, երբ համաներման ակտի կոնկրետ դրույթը կիրառելու իրավասությունը վերապահված է քրեակատարողական հիմնարկի պետին, դատավճիռ կամ այլ դատական որոշում կայացրած դատարանն իրավունք չունի դրա ի կատար ածման ընթացքում ծագած կասկածների և անհատակությունների լուծման իր իրավագործության սահմաններում կիրառել համաներման ակտի տվյալ դրույթը կամ նշված իրավասությամբ օժտված մարմնին (պաշտոնատար անձին) պարզաբանել խնդրո առարկա դրույթի կիրառման անհրաժեշտությունը: Համաներման ակտի այս կամ այն դրույթի կիրառման իրավասություն ունեցող մարմինների շրջանակը հստակ սահմանվում է հենց այս ակտով, ուստի նշված շրջանակի համար սահմանված կանոններից շեղումները կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման:

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ գործի դատական քննության փուլում դատարանը քննարկել է համաներման ակտի կիրառման հարցը և որոշում է կայացրել համաներման ակտի՝ կիրառման ենթակա նորմը չկիրառելու մասին կամ սխալ է կիրառել այն, ապա համաներման ակտի կիրառման հետ կապված վերոնշյալ սխալները հանդիսանում են անձի նկատմամբ պատիժ նշանակելիս թույլ տրված դատական սխալներ, որոնք պետք է ուղղվեն ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված՝ դատական ակտի բողոքարկման ընթացակարգով: Դրա հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ դատավճիռ կայացնելիս դատարանը կիրառում է համաներման ակտի որևէ դրույթ, սակայն դատական ակտն ի կատար ածելու փուլում առաջանում է դատապարտյալի նկատմամբ համաներման ակտի առավել բարենպաստ դրույթի կիրառման խնդիր (օրինակ՝ դատարանը գործի դատական քննության ընթացքում համաներման ակտի հիման վրա անձի նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը կրճատում է, իսկ դատական ակտն ի կատար ածելու փուլում առաջանում են համաներման ակտի հիման վրա անձին պատժից ազատելու հիմքեր կամ ընդունվում է նոր համաներման ակտ, որի դրույթներն առավել բարենպաստ են և կիրառելի են անձի նկատմամբ), ապա այդ դրույթ(ներ)ի կիրառելիության հարցը պետք է լուծի համապատասխան քրեակատարողական հիմնարկի պետը՝ համաներման ակտով ամրագրված իրավագործության սահմաններում, այլ ոչ թե դատարանը՝ դատավճռի անհատակությունը լուծելով:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ իր վերոշարադրյալ դիրքորոշումը չի սահմանափակում անձի դատական պաշտպանության իրավունքը, քանի որ համաներման ակտի այս կամ այն դրույթը կիրառելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի պետի որոշման իրավաչափությունը շահագրգիռ անձի կողմից կարող է վիճարկվել դատական կարգով (ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդված):

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի դատավճռով Վ.Կոթոյանի նկատմամբ կիրառվել է Համաներման ակտի 8-րդ կետի 3-րդ ենթակետը և նրա նկատմամբ նշանակված պատժաչափի չկրած մասը կրճատվել

է մեկ երրորդով: Պաշտպանների և մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի դատավճռի օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Վերաքննիչ դատարանն այն թողել է օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 1-ին կետը): Վ.Կոթոյանի պաշտպան Ա.Գրիգորյանի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում Վճռաբեկ դատարանը 2013 թվականի մայիսի 15-ին որոշում է կայացրել բողոքը վերադարձնելու մասին՝ արձանագրելով, որ Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետը կիրառելու իրավասությամբ օժտված են քրեակատարողական հիմնարկների պետերը և ոչ թե դատարանները: Հետևաբար Համաներման ակտի 4-րդ կետի 1-ին ենթակետի կիրառելիության հարցը պետք է լուծվի համապատասխան քրեակատարողական հիմնարկի պետի կողմից՝ նույն ակտի 13-րդ կետի 4-րդ ենթակետով ամրագրված իրավագործության սահմաններում (տե՛ս սույն որոշման 1-ին և 6-րդ կետերը):

2013 թվականի հունիսի 6-ին ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի պետ Ն.Ջաքարյանը դիմում է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով մեկնաբանել Վ.Կոթոյանի վերաբերյալ նույն դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի դատավճռի անհստակությունը: Ի պատասխան նշված դիմումի՝ Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի հունիսի 7-ին որոշել է Վ.Կոթոյանի վերաբերյալ նույն դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի դատավճռի եզրափակիչ մասում ավելացնել հետևյալ պարբերությունը. «Դատավճռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո Վլադիմիր Մաթևոսի Կոթոյանի նկատմամբ կիրառել «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի թիվ ԱԺՌ-277-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետը և նրան ազատել պատժից»: ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Ա.Նադոյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 7-ի որոշումը և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Նոր քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի սեպտեմբերի 18-ին որոշում է կայացրել ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի պետ Ն.Ջաքարյանի դիմումն անհիմն լինելու պատճառաբանությամբ մերժելու մասին (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

Դատապարտյալ Վ.Կոթոյանի պաշտպան Ա.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը (տե՛ս սույն որոշման 4-րդ և 8-րդ կետերը):

Վերոշարադրյալ փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը դատավճռի անհստակությունը լուծելու մասին 2013 թվականի հունիսի 7-ի որոշմամբ, դուրս գալով իր լիազորությունների շրջանակից, Համաներման ակտի նույն դրույթի կիրառման կապակցությամբ պարզաբանում է տվել: Նշված հանգամանքը հիմք է հանդիսացել Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 7-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու համար: Նոր քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը կայացրել է դատավճռի անհստակությունը լուծելու մասին դիմումը մերժելու վերաբերյալ որոշում:

19. Սույն որոշման 14-17-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով սույն որոշման 18-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատապարտյալ Վ.Կոթոյանի նկատմամբ Համաներման ակտի կոնկրետ դրույթի կիրառման իրավասությունը համապատասխան քրեակատարողական հիմնարկին վերապահված լինելու պարագայում այն պետք է կիրառվի քրեակատարողական հիմնարկի և ոչ թե դատարանի կողմից: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի դատավճռի անհստակությունը մեկնաբանելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի պետի դիմումը մերժելու մասին ստորադաս դատարանների որոշումները հիմնավոր են:

20. Հիմք ընդունելով սույն որոշման 14-19-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի որոշումն օրինական, հիմնավորված ու պատճառաբանված է, այն բեկանելու և փոփոխելու հիմքեր չկան: Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

21. Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից բարձրացված այն հարցին, որ Վերաքննիչ դատարանը քննարկման առարկա չի դարձրել իր նկատմամբ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի կիրառելիության հարցը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի դատավճռի անհստակությունը մեկնաբանելու վերաբերյալ դիմումի կապակցությամբ կայացված որոշման վերանայման ընթացքում իրավասու չէր անդրադառնալ դատապարտյալի նկատմամբ այլ համաներման ակտի կոկրետ դրույթի կիրառելիությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Դատապարտյալ Վլադիմիր Մաթևոսի Կոթոյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

4.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ՇԴ/0244/06/13
Նախագահող դատավոր՝ Ե.Գարբինյան

ՇԴ/0244/06/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Մ.ԱՎԱԳԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան	Վ.ԾԱՌՈՒԿՅԱՆԻ

2014 թվականի մարտի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի նոյեմբերի 27-ի որոշման դեմ մեղադրյալ Արամ Ռոբերտի Կարապետյանի պաշտպան Վ.Ծառուկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի օգոստոսի 29-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 30104613 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ Արամ Ռոբերտի Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ Ա.Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

2. 2013 թվականի հոկտեմբերի 23-ին մեղադրյալ Ա.Կարապետյանի պաշտպան Վ.Ծառուկյանը միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով Ա.Կարապետյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինել գրավով:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Կարապետյանի պաշտպան Վ.Ծառուկյանի միջնորդությունը մերժվել է:

3. Մեղադրյալ Ա.Կարապետյանի պաշտպան Վ.Ծառուկյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 27-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրյալ Ա.Կարապետյանի պաշտպան Վ.Ծառուկյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ա.Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա, հանդես գալով «Մայնիգ Ստոռն» սահմանափակ պատասխանատվության ընկերության գնորդ, 2013 թվականի հունվարի 15-ին առուվաճառքի թիվ 1 պայմանագրով Գյումրի քաղաքի բնակիչ՝ Հովհաննես Վլադիմիրի Բաղդասարյանից 8.000.000 ՀՀ դրամով գնել է ՍՄՌ-028Ա տեսակի քար կտրող մեքենա՝ պայմանագրում արժեքը նշելով 2.600.000 ՀՀ դրամ: Արամ Կարապետյանը պարտավորվել է կանխիկ 5.400.000 ՀՀ դրամ վճարելուց հետո Ախուրյան գյուղից տեղափոխել վերը նշված մեքենան, իսկ մնացած 2.600.000 ՀՀ դրամը փոխանցել հետագայում: Սակայն Արամ Կարապետյանը խաբեությամբ, Հովհաննես Բաղդասարյանի վստահությունը չարաշահելով, առանց քար կտրող մեքենայի արժեքը վճարելու և ընկերությանը հանձնելու, այն 800.000 ՀՀ դրամով տեղում վաճառել է Արագածոտնի մարզի Փարպի գյուղի բնակիչ՝ Արմենակ Ռազմասերի Սիմոնյանին՝ Հովհաննես Բաղդասարյանին պատճառելով 7.800.000 ՀՀ դրամի առանձնապես խոշոր չափի նյութական վնաս» (տե՛ս նյութեր, թերթ 44):

6. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 6-ի որոշման համաձայն՝ «[Կալանքը գրավով փոխարինելու վերաբերյալ] միջնորդության

հարցը լուծելիս դատարանը հաշվի է առնում այն, որ [որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու մասին] որոշմամբ արդեն իսկ լուծել է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրության պայմաններից մեկի՝ հիմնավոր կասկածի հարցը, որին դատարանն այլևս չի անդրադառնում:

(...):

Դատարանը գտնում է, որ քրեական գործով ձեռք բերված փաստական հանգամանքները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալ Արամ Ռոբերտի Կարապետյանի գործողություններում առկա են՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135 հոդվածով սահմանված խափանման միջոցի ընտրության հիմքերից հետևյալը՝ կարող է թաքցվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով, կատարել քրեական օրենքով չբույլատրված արարք, խուսափել քրեական պատասխանատվությունից:

Նշված հանգամանքը միջնորդության դատաքննության ժամանակ հաստատեց քրեական վարույթն իրականացնող մարմնի ներկայացուցիչը՝ հայտնելով, որ մեղադրյալ Ա.Կարապետյանը նախաքննության ընթացքում փորձել է խուսափել, մի քանի կանչից հետո միայն նոր ներկայացել քրեական վարույթն իրականացնող մարմին: Բացի այդ, նրա կողմից նոր հանցավոր արարք կատարելու փաստով հաղորդում է ստացվել: Այդ փաստով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ և կատարվում է նախաքննություն, (...):

Այսպիսով, նկատի ունենալով, որ առկա է մեղադրյալի կողմից գործով ճշմարտությունը բացահայտելու ընթացքին միջամտելու և նախաքննությունից թաքցնելու իրական վտանգ, դատարանը գտնում է, որ (...) կալանավորումը զրավով փոխարինելու միջնորդությունը պետք է մերժել, (...)» (տե՛ս նյութեր, թերթ 24):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով գործի նյութերը, փաստական հանգամանքները, գտնում է, որ սույն քրեական գործի շրջանակներում առկա է հիմնավոր կասկած առ այն, որ մեղադրյալ Արամ Կարապետյանն առնչություն ունի իրեն վերագրվող հանցավոր արարքների հետ:

Իսկ ինչ վերաբերում է ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի միջնորդության դատաքննության ժամանակ քրեական վարույթ իրականացնող մարմնի ներկայացուցչի մեջբերմանն այն մասին, որ մեղադրյալ Ա.Կարապետյանը փորձել է խուսափել վարույթն իրականացնող մարմնից, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ներկայացված նյութերում առկա չէ վերոնշյալ փաստը հաստատող որևէ ապացույց: Ուստիև այդ հիմնավորումը չի կարող դրվել որոշման հիմքում:

(...)

Մեղադրյալ Արամ Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 118-րդ հոդվածով, որից հետևելով Վերաքննիչ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Արամ Կարապետյանին վերագրվող հանցավոր արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը նույնպես սույն քրեական գործի շրջանակներում ունեն էական նշանակություն նրա հետագա վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում:

Նկատի ունենալով վերը շարադրվածը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սովյալ դեպքում բարձր է մեղադրյալի կողմից ազատության մեջ գտնվելու պայմաններում քննությունից թաքնվելու, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, այդ ձևով մինչդատական վարությամբ գործի քննությանը խոչընդոտելու, քրեական օրենքով արգելված արարք կատարելու հավանականությունը:

Ինչ վերաբերում է վերաքննիչ բողոքի այն պատճառարանություններին, որ մեղադրյալ Ա.Կարապետյանն ընտանիքի միակ կերակրողն է, ունի երեք երեխա, որից երկուսն անչափահաս են, ունի մշտական բնակության վայր, բնութագրվում է դրականորեն, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրանք դատավարության այս փուլում չեն կարող հիմք հանդիսանալ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու համար» (տե՛ս նյութեր, թերթ 56):

8. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի «Նոր Նորք 1/7» համատիրության թիվ 351 տեղեկանքի համաձայն՝ Ա.Կարապետյանը փաստացի բնակվում է Նոր Նորքի 1-ին զանգվածում, Նանսենի 20 շենքի 37-րդ բնակարանում (տե՛ս նյութեր, թերթ 5):

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի «Նոր Նորք 1/7» համատիրության տեղեկանքի համաձայն՝ Ա.Կարապետյանի խնամքի տակ են գտնվում մայրը՝ Գրիգորյան Իվետա (1937թ.), կինը՝ Կոստանյան Լուսինե (1975թ.), դուստրը՝ Ամիրյան Իռեն (1994թ.), տղաները՝ Կարապետյան Ռոբերտ (1999թ.) և Կարապետյան Միքայել (2007թ.) (տե՛ս նյութեր, թերթ 7):

9. Հ.Բաղդասարյանի կողմից տրված ստացականի համաձայն՝ Հ.Բաղդասարյանը ստացել է կտրող մեքենայի (...) շարժիչները (...) և նմանատիպ մեքենա: Հետևաբար, Ա.Կարապետյանից գույքային և դրամական որևէ պահանջ չունի (տե՛ս նյութեր, թերթ 4):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի պահանջների խախտում այն առումով, որ Ա.Կարապետյանին կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու մասին որոշում կայացնելիս չի վկայակոչել

նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված որևէ հիմք:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավի կիրառումը կարող է ճանաչվել անթույլատրելի միայն այն դեպքում, երբ պարզված չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր, կամ փորձել է թաքնվել վարույթ իրականացնող մարմնից, մինչդեռ սույն գործով նման փաստեր բացակայում են: Ավելին, Վերաքննիչ դատարանը գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելով, հաշվի չի առել մի շարք հանգամանքներ, մասնավորապես այն, որ Ա.Կարապետյանը բնութագրվում է դրական, նրա խնամքին են գտնում 76 ամյա մայրը, 3 երեխաները, որոնցից երկուսն անչափահաս են և նա հանդիսանում է ընտանիքի միակ կերակրողը:

11. Անդրադառնալով Ա.Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքին՝ բողոք բերող անձը նշել է, որ այն Ա.Կարապետյանին չի վերաբերում, քանի որ նրա նկատմամբ է բռնություն կիրառվել և այդ գործով Ա.Կարապետյանը հանդիսանում է տուժող: Ուստի, նման պայմաններում Ա.Կարապետյանի մեղադրանքում և, համապատասխանաբար, կալանքի վերաբերյալ որոշման մեջ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի մատնանշումն անհիմն է:

12. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ու փոփոխել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը և մեղադրյալ Ա.Կարապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոխարինել գրավով:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավոր են արդյոք Ա.Կարապետյանին գրավի կիրառմամբ կալանքից ազատելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

14. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝
«1. Դատարանը (...) խափանման միջոց կարող [է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

(...)

3. Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝

1) վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը.

2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը.

3) տարիքը և առողջական վիճակը.

4) սեռը.

5) զբաղմունքի տեսակը.

6) ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը.

7) գույքային դրությունը.

8) բնակության մշտական վայրի առկայությունը.

9) այլ էական հանգամանքներ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գրավը (...) հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի դեպոզիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: Դատարանի թույլտվությամբ որպես գրավ կարող է ընդունվել անշարժ գույքը:

2. Դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայտնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից:

(...):»:

Մեջբերված իրավադրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Ա Ճուղուրյանի*, *Ա Ավերիսյանի*, *Դ Ալիխանյանի* և մի շարք այլ գործերով կայացված որոշումներում, որտեղ հետևողականորեն ամրապնդել և զարգացրել է քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները:

15. *Ա Ճուղուրյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինակաչափային ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

(...)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ» (տե՛ս Արամ Մեյրյանի *Ճուղուրյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը):

Ա Ավերիսյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, մարդու այլ հիմնական իրավունքների հետ մեկտեղ, ՀՀ Սահմանադրությամբ ճանաչվում է անօտարելի և բարձրագույն արժեք (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված): Ուստի մարդու այդ հիմնական իրավունքի սահմանափակման իրավաչափության երաշխիքները կանոնակարգող իրավադրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է ելնել մարդու իրավունքները հարգելու, մարդու իրավունքների սահմանափակման միջոցով հիմնական իրավունքը բովանդակագրելու անթույլատրելիության սկզբունքներից:

(...)

[Դ]ատական ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջը պահպանած լինելու համար բավարար չէր օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքը, այլ անհրաժեշտ էր կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ դատարանի հետևությունները հիմնավորել գործի փաստական տվյալներով:

Ընդ որում անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս, ինչպես նաև կալանքի ժամկետը երկարացնելիս պետք է հաստատ-

վի հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռություն, և որը պետք է բխի անձի՝ ազատությունից զրկելու հետ կապված կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակների միջև համամասնության ողջամիտ հարաբերակցության անհրաժեշտությունից:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է «մասնավորապես» բառը, որն արտահայտում է կալանքից զրավով ազատելու կոնկրետ դրսևորումների հատուկ ամրագրման և ոչ թե կալանքից զրավով ազատելու իրավական հիմքերի սպառնիչ թվարկման նշանակություն: Մեղադրյալի անձը հայտնի չլինելը, մշտական բնակության վայր չունենալը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձը կալանքից զրավով ազատելու կոնկրետ դրսևորումներ են, որոնք թվարկված են ոչ սպառնիչ:

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գրավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համատեքստում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը» (տե՛ս Ասլան Հովհաննեսի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-իքիվ ԱՎԳ/0022/06/08 որոշման 18-րդ, 22-րդ և 36-րդ կետերը):

Դ. Ալիխանյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը զրավով փոխարինելու թույլատրելիության կամ անթույլատրելիության վերաբերյալ իր եզրահանգումները դատարանը պետք է հիմնավորի գործի նյութերում առկա փաստական տվյալներով: Այլ խոսքով՝ անհրաժեշտ է կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ կալանքը զրավով փոխարինելը մերժելու մասին դատարանի հետևությունները հիմնավորել գործի փաստական տվյալներով և ոչ թե բավարարվել ՀՀ քրեադատավարական օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքով:

(...) անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կարող է ընտրվել կալանավորման պայմանի, այն է՝ հանցագործություն կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության դեպքում: Այլ խոսքով՝ եթե առկա չէ հիմնավոր կասկած այն մասին, որ անձը հանցանք է կատարել, նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց չի կարող կիրառվել, հետևաբար՝ չի կարող քննարկման առարկա դառնալ նաև գրավի՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի կիրառման թույլատրելիության հարցը: Հետևաբար, հանցագործություն կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածը չի կարող հիմք հանդիսանալ անձին կալանքից զրավով ազատ արձակելն անթույլատրելի ճանաչելու համար» (տե՛ս Դավիթ Գրիգորի Ալիխանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի քիվ ԵԱԲԴ/0138/06/12 որոշման 13-րդ և 16-րդ կետերը):

16. Վճռաբեկ դատարանը վերահաստատում է սույն որոշման նախորդ կետում մեջբերված և, համապատասխանաբար, *Ա Ճուղուրյանի, Ա Ավետիսյանի, Դ Ալիխանյանի* գործերով որոշումներում արտահայտված դիրքորոշումներն առ այն, որ կալանքը գրավով փոխարինելու թույլատրելիության կամ անթույլատրելիության վերաբերյալ իր եզրահանգումները դատարանը պետք է հիմնավորի գործի նյութերում առկա տվյալներով:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց գրավ կիրառելու թույլատրելիության հարցի քննության արդյունքում որոշում կայացնելիս դատարանները պետք է հիմնվեն միայն այն տվյալների վրա, որոնք բխում են դատարանում հետազոտված նյութերից, հետևաբար ցանկացած այլ, գործի նյութերից չբխող տվյալների հիման վրա գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելը հանդիսանում է անձի ազատության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակում: Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց գրավ կիրառելու թույլատրելիության հարցը քննարկելիս դատարանները պետք է ղեկավարվեն նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի առնեն նշված հոդվածով թվարկված հանգամանքները:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ Ա.Կարապետյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Ա.Կարապետյանն ունի մշտական բնակության վայր և նրա խնամքի տակ են գտնվում մայրը, կինը և երեք երեխաները, որոնցից երկուսն անչափահաս են (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Ա.Կարապետյանի նկատմամբ գրավ կիրառելու միջոցորոշումն Առաջին ատյանի դատարանը մերժել է՝ պատճառաբանելով, որ.

ա) առկա են տվյալներ այն մասին, որ մեղադրյալի գործողություններում առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված մի շարք հիմքեր, մասնավորապես՝ Ա.Կարապետյանը կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, խուսափել քրեական պատասխանատվությունից, ինչը հիմնավորվում է նրանով, որ մեղադրյալը մի քանի կանչից հետո միայն ներկայացել է քրեական վարույթն իրականացնող մարմին և նրա կողմից նոր հանցավոր

արարք կատարելու փաստով հաղորդում է ստացվել, հարուցվել է քրեական գործ և կատարվում է նախաքննություն (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել Առաջին աստիճանի դատարանի դատական ակտը՝ պատճառաբանելով, որ.

ա) առկա է հիմնավոր կասկած առ այն, որ մեղադրյալ Ա.Կարապետյանն առնչություն ունի իրեն վերագրվող հանցավոր արարքների հետ:

բ) Ա.Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 118-րդ հոդվածով: Նշված արարքների հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանն էական նշանակություն ունեն նրա հետագա վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ բարձր է մեղադրյալի կողմից ազատության մեջ գտնվելու պայմաններում քննությունից թաքնվելու, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, այդ ձևով մինչդատական վարություն գործի քննությանը խոչընդոտելու, քրեական օրենքով արգելված արարք կատարելու հավանականությունը:

Անդրադառնալով այն հանգամանքին, որ Ա.Կարապետյանը փորձել է խուսափել վարույթն իրականացնող մարմնից՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ նյութերում առկա չէ վերոնշյալ փաստը հաստատող որևէ ապացույց, ուստի այդ հիմնավորումը չի կարող դրվել որոշման հիմքում: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Ա.Կարապետյանն ընտանիքի միակ կերակրողն է, ունի երեք երեխա, որից երկուսն անչափահաս են, ունի մշտական բնակության վայր, բնութագրվում է դրական, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ դրանք դատավարության այս փուլում չեն կարող հիմք հանդիսանալ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու համար (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

18. Սույն որոշման 14-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Ա.Կարապետյանի նկատմամբ կալանքը գրավով փոխարինելու վերաբերյալ վերաքննիչ բողոքը մերժելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել մի շարք խախտումներ, մասնավորապես՝

ա) գրավի կիրառումն անթույլատրելի է ճանաչել հիմք ընդունելով այն հանգամանքը, որ առկա է հիմնավոր կասկած այն մասին, որ Ա.Կարապետյանը կատարել է իրեն վերագրվող հանցանքը, մինչդեռ հանցագործություն կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածը չի կարող հիմք հանդիսանալ անձին կալանքից գրավով ազատ արձակելն անթույլատրելի ճանաչելու համար (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը):

բ) գրավի կիրառումն անթույլատրելի է ճանաչել այն պատճառաբանությամբ, որ Ա.Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 118-րդ հոդվածով, և նշված արարքների հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանն էա-

կան նշանակություն ունեն նրա հետագա վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անուշադրության է մատնել այն հանգամանքը, որ սույն գործի նյութերում առկա չէ որևէ տվյալ այն մասին, որ Ա.Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն հիմնավորմանը, որ մեղադրյալ Ա.Կարապետյանի ընտանիքի միակ կերակրողն լինելը, երեք երեխա ունենալը, որից երկուսն անչափահաս են, մշտական բնակության վայր ունենալը, դրականորեն բնութագրվելը դատավարության տվյալ փուլում չեն կարող հիմք հանդիսանալ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը գրավով փոխարինելու համար (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից: Նշված հոդվածի իմաստով՝ խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս ի թիվս այլոց հաշվի են առնվում մեղադրյալի անձը, խնամարկյալների և բնակության մշտական վայրի առկայությունը: Մինչդեռ սույն գործով նշված հանգամանքների առկայության պայմաններում, ինչպես նաև այն պայմաններում, երբ մեղադրյալ Ա.Կարապետյանը վերականգնել է Հ.Բաղդասարյանին պատճառված վնասը, Վերաքննիչ դատարանը, առանց որևէ հիմնավորման, նշել է, որ դրանք չեն կարող հիմք հանդիսանալ Ա.Կարապետյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու համար:

19. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Կարապետյանին գրավի կիրառմամբ կալանքից ազատելու անթույլատրելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն: Այս առումով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական օրենքի էական խախտումներ, մասնավորապես խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 143-րդ հոդվածների պահանջները, ինչն ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և հանգեցրել չհիմնավորված որոշման կայացմանը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է նաև, որ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը հակասում է *Ա.Շուղորյանի*, *Ա.Ավերիսյանի*, *Դ.Այիխանյանի* գործերով Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում կայացված որոշումներին:

20. Սույն որոշման նախորդ կետում նշված հանգամանքները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են հանդիսանում, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա մեղադրյալ Արամ Կարապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Արամ Ռոբերտի Կարապետյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

5.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

Մ-930/05

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Գործ թիվ Մ-930/05

Նախագահող դատավոր՝ Լ.Թադևոսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2014 թվականի մարտի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի դեկտեմբերի 26-ի որոշման դեմ Վահե Միշայի Գրիգորյանի պաշտպան Մ.Շուշանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2005 թվականի հունիսի 10-ին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62203805 քրեական գործը:

2005 թվականի հունիսի 14-ին նախաքննության մարմինը միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով թույլատրել կատարել խուզարկություն «Հայ-ներարտբանկ» փակ բաժնետիրական ընկերությունում՝ «Ռայթ իրավաբանա-

կան խումբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հաշվարկային և տարադրամային հաշիվներով կատարված գործարքների և գործառնական կողմերի վերաբերյալ բանկային փաստաթղթերն առգրավելու համար:

Առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հունիսի 14-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի միջնորդությունը, և թույլատրվել է կատարել խուզարկություն «Հայներարտբանկ» ՓԲԸ-ում՝ «Ռայթ իրավաբանական խումբ» ՍՊԸ-ի հաշվարկային և տարադրամային հաշիվներով կատարված գործարքների և գործառնական կողմերի վերաբերյալ բանկային փաստաթղթերն առգրավելու համար:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննիչ Ս.Համբարձումյանի 2013 թվականի սեպտեմբերի 6-ի որոշմամբ թիվ 62203805 քրեական գործի մասը կարճվել է, Վահե Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդումը՝ դադարեցվել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով:

2. 2013 թվականի դեկտեմբերի 13-ին Վ.Գրիգորյանի պաշտպան Մ.Շուշանյանը բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարան՝ խնդրելով ճանաչել իր պաշտպանյալի իրավունքների խախտումը և վերացնել խուզարկություն կատարելու, բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկություններ պարունակող փաստաթղթեր առգրավելու թույլտվություն տալու մասին Առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հունիսի 14-ի որոշումը:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ պաշտպան Մ.Շուշանյանի վերաքննիչ բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

3. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Վ.Գրիգորյանի պաշտպան Մ.Շուշանյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ պաշտպան Մ.Շուշանյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

4. 2013 թվականի դեկտեմբերի 23-ին Վերաքննիչ դատարանը գրությամբ դիմել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱԱԾ) քննչական վարչության պետի տեղակալին՝ խնդրելով հայտնել, թե «(...) Վահե Միշայի Գրիգորյանի նկատմամբ թիվ 62203805 քրեական գործի մասը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ 06.09.2013թ. որոշումը երբ է ուղարկվել Վ.Գրիգորյանին կամ նրա պաշտպաններին, երբ են վերջիններս դիմել քրեական գործի նյութերին ծանոթանալու համար, երբ է նրանց հնարավորություն ընձեռվել ծանոթանալու քրեական գործի նյութերին, և երբ [են] քրեական գործի նյութերը տրամադրվել՝ ծանոթանալու համար (...)» (տե՛ս նյութեր, թերթ 26):

5. 2013 թվականի դեկտեմբերի 24-ի գրությամբ ՀՀ ԱԱԾ քննչական վարչության պետը Վերաքննիչ դատարանին հայտնել է, որ «(...) 19.09.2013թ. թիվ 8/2767 գրությամբ (փոստով առաքվել է 20.09.2013թ.-ին) Վահե Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 06.09.2013թ. որոշման օրինակն ուղարկվել է վերջինիս պաշտպան (...) Տիգրան Աթանեսյանին,

25.09.2013թ.-ին ստացվել է Վահե Գրիգորյանի մեկ այլ պաշտպան Մուշեղ Շուշանյանի գրությունը, ըստ որի խնդրվել է տրամադրել թիվ 62203805 քրեական գործի բոլոր նյութերի լուսապատճենները,

27.09.2013թ.-ի թիվ 8/2878 գրությամբ (փոստով առաքվել է 28.09.2013թ.-ին) Մուշեղ Շուշանյանին պարզաբանվել է, որ թիվ 62203805 քրեական գործի վարույթը 06.09.2013թ.-ին կասեցվել է` ՀՀ քր. դատ. օր-ի 31 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, (...) ուստի քրեական գործի բոլոր նյութերի լուսապատճենները իրեն տրամադրվել չեն կարող, և նա (...) կարող է իր համար նախընտրելի աշխատանքային ժամերին (...) ծանոթանալ կասեցված քրեական գործում առկա այն նյութերի հետ և ստանալ դրանց լուսապատճենները, որոնք վերաբերում են Վահե Գրիգորյանին, ամրագրված են 06.09.2013թ. որոշման մեջ և հիմք են հանդիսացել նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու համար, սակայն փաստաբանը և Վահե Գրիգորյանը հեռախոսազանգերի միջոցով պնդել են, որ իրենց անհրաժեշտ են քրեական գործի բոլոր նյութերը և մինչև 03.12.2013թ. չեն ներկայացել ՀՀ ԱԱԾ ԶՎՎ Վահե Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու համար հիմք հանդիսացած, քրեական գործում առկա փաստաթղթերի լուսապատճենները ստանալու համար:

03.12.2013թ. արձանագրությամբ Մուշեղ Շուշանյանին հանձնվել են Վահե Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու համար հիմք հանդիսացած քրեական գործում առկա փաստաթղթերի լուսապատճենները» (տե՛ս նյութեր, թերթ 28-29):

6. Պաշտպան Մ.Շուշանյանն Առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հունիսի 14-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել փոստի միջոցով: Վերաքննիչ բողոքի ծրարի վրա առկա է փոստային ծառայության դրոշմակնիքը, որի համաձայն` ծրարը փոստային ծառայությունում մուտք է եղել 2013 թվականի դեկտեմբերի 13-ին (տե՛ս նյութեր, թերթ 25):

7. Պաշտպան Մ.Շուշանյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն` «(...) Տվյալ դեպքում, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 2005թ. հունիսի 14-ի որոշման դեմ պաշտպան Մ.Շուշանյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարան մուտք է եղել 2013թ. դեկտեմբերի 17-ին (համաձայն ծրարի վրա առկա կնիքի բողոքաբերի կողմից այն փոստին է հանձնվել (...) 2013թ. դեկտեմբերի 13-ին), այն դեպքում, երբ Վ.Գրիգորյանի մասով հ.62203805 քրեական գործի վարույթը կարճվել է 2013թ. սեպտեմբերի 06-ին, ինչի մասին, համաձայն ներկայացված նյութերի,

2013թ. սեպտեմբերի 19-ի գրությամբ տեղեկացվել են նաև Վ.Գրիգորյանն ու վերջինիս պաշտպան Տ.Աթանեսյանը (...), իսկ վարույթն իրականացնող մարմնին ներկայանալու և քրեական գործի նյութերին՝ այդ թվում վիճարկվող որոշմանը ծանոթանալու իրական հնարավորությունը բողոքաբերի համար ծագել է դեռևս 2013թ. սեպտեմբերի 25-ից, երբ համաձայն ներկայացված նյութերի՝ վերջինիս հնարավորություն է վերապահվել ծանոթանալու Վ.Գրիգորյանի վերաբերյալ քրեական գործի նյութերին՝ այդ թվում վիճարկվող որոշմանը, ինչից հետևում է, որ վարույթն իրականացնող մարմինը դրսևորել է անհրաժեշտ ու բավարար ջանասիրություն գործի նյութերին, այդ թվում՝ վիճարկվող որոշմանը պաշտպանության կողմին ծանոթացնելու համար, որն իր այդ իրավունքն իրացրել է միայն 2013թ. դեկտեմբերի 03-ին՝ ինքն իրեն գրկելով գործն ըստ էության չլուծող դատական ակտը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածով ամրագրված ժամկետում վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունից, հետևաբար ներկայացված վերաքննիչ բողոքը ժամկետանց է, ինչն էլ ինքնին բավարար հիմք է, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի կարգով, այն առանց քննության թողնելու համար» (տե՛ս նյութեր, թերթ 55-58):

3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը նշել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, ինչի արդյունքում թույլ է տվել Վ.Գրիգորյանի դատական պաշտպանության իրավունքի խախտում:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները չեն բխում գործով ձեռք բերված նյութերից և չեն համապատասխանում իրականությանը: Համաձայնելով ՀՀ ԱԱԾ քննչական վարչության պետի գրության մեջ առկա այն պնդմանը, որ պաշտպանության կողմին հնարավորություն է տրվել «ծանոթանալ կասեցված քրեական գործում առկա այն նյութերի հետ և ստանալ դրանց լուսապատճենները, որոնք վերաբերում են Վահե Գրիգորյանին, ամրագրված են 06.09.2013թ. որոշման մեջ և հիմք են հանդիսացել նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու համար»՝ բողոքաբերն ընդգծել է, որ Առաջին ատյանի դատարանի վիճարկվող որոշումը ոչ միայն ամրագրված չէ քրեական գործի վարույթի մասը կարճելու մասին որոշման մեջ, այլև հիմք չի հանդիսացել Վ.Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու համար:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ պաշտպանության կողմը գրկված է եղել խուզարկություն կատարելու, բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկություններ պարունակող փաստաթղթեր առգրավելու

բույլավորություն տալու մասին Առաջին ատյանի դատարանի որոշմանը ծանոթանալու և դրա պատճենն ստանալու հնարավորությունից: Այս կապակցությամբ քննիչի անգործությունը պաշտպանության կողմը բողոքարկել է ՀՀ գլխավոր դատախազին, իսկ այնուհետև՝ դատարան: Ի վերջո, 2013 թվականի դեկտեմբերի 3-ին մինչդատական վարույթն իրականացնող մարմինը պաշտպանության կողմին տրամադրել է քրեական գործում առկա նյութերի մի մասը, այդ թվում՝ Առաջին ատյանի դատարանի վիճարկվող որոշումը, որի դեմ օրենքով սահմանված 10-օրյա ժամկետում ներկայացվել է վերաքննիչ բողոք:

9. Բողոքաբերը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է լաված լինելու իրենց իրավունքն այն իմաստով, որ հնարավորություն չի ընձեռել դիրքորոշում ներկայացնել ձեռք բերված փաստաթղթերի և տեղեկությունների վերաբերյալ: Մասնավորապես, պաշտպանության կողմին հասանելի չի դարձվել ՀՀ ԱԱԾ քննչական վարչության պետի՝ դատարանին ուղղված գրությունը, որպիսի պայմաններում պաշտպանության կողմը զրկված է եղել նշված գրության մեջ արձանագրված փաստական տվյալների կապակցությամբ իր պարզաբանումները ներկայացնելու հնարավորությունից և որպես հետևանք՝ Վերաքննիչ դատարանն անհիմն որոշում է կայացրել բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ առանց քննության թողնելու մասին:

10. Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ վերաքննիչ բողոքի քննության անհնարիությունը հանգեցրել է Վ.Գրիգորյանի՝ ՀՀ Սահմանադրության 21-րդ, 23-րդ հոդվածներով, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 8-րդ հոդվածներով սահմանված իրավունքների խախտմանը: Այս կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի վիճարկվող որոշմամբ տեղի է ունեցել անհամաչափ միջամտություն Վ.Գրիգորյանի անձնական և մասնագիտական կյանքին, բացի այդ, դատարանն իր որոշման մեջ օգտագործել է այնպիսի ձևակերպումներ, որոնք խախտել են Վ.Գրիգորյանի անմեղության կանխավարկածը:

11. Հիմք ընդունելով վերոշարադրյալ հիմնավորումները՝ բողոքի հեղինակը խնդրել է ճանաչել Վ.Գրիգորյանի իրավունքների խախտումները և բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի համատեքստում անձին դատական պաշտպանության արդյունավետ միջոց տրամադրելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. պաշտպանի վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ առանց քննության թողնելով՝ Վերաքննիչ դատարանն անհամաչափորեն սահմանափակել^օ է արդյոք Վ.Գրիգորյանի դատական պաշտպանության իրավունքը:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում [է] առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:

Մեջբերված քրեադատավարական դրույթը Վճռաբեկ դատարանը ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի ՍԳՌ-1052 որոշման լույսի ներքո մեկնաբանել է *Տ.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Անձի կողմից դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացման, մասնավորապես՝ իր շահերին առնչվող դատական ակտի դեմ հիմնավոր բողոք բերելու համար անհրաժեշտ է, որ անձն իր ձեռքի տակ ունենա վիճարկվող դատական ակտը: Մինչդեռ, դատական ակտը հրապարակելուց հետո մինչև շահագրգիռ անձի կողմից այն փաստացի ստանալն օբյեկտիվորեն անցնում է որոշակի ժամանակահատված, ինչը կարող է անձի կամքից անկախ հանգամանքներում հանգեցնել սահմանված ժամկետից ուշ կամ ակնհայտ անհիմն, օրենսդրության պահանջներին չհամապատասխանող բողոքի ներկայացմանը:

Հետևաբար, (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում առկա՝ «հրապարակման պահից» բառակապակցությունը պետք է մեկնաբանվի որպես դատական ակտն ստանալու պահը, և ժամկետների հաշվարկման ելակետ պետք է համարել որոշումը շահագրգիռ անձին հանձնելու պահը» (տե՛ս Տիգրան Վարազդատի Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԳ/0066/11/12 որոշման 23-րդ կետը):

15. Վերահաստատելով և զարգացնելով *Տ.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն կիրառելի է նաև մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակներում կայացված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման նկատմամբ: Այսինքն մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակներում կայացված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը վերաքննության կարգով բողոքարկելու անձի իրավունքը ծագում է այն պահին, երբ նրան փաստացի հասու է դառնում նշված դատական ակտը:

16. Սույն որոշման նախորդ կետում նշված՝ «փաստացի հասու է դառնում» ձևակերպումը նշանակում է, որ անձը փաստացի ստացել է մինչդատական

վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակներում կայացված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտը կամ փաստացի ծանոթացել է դրան:

«Փաստացի հասու է դառնում» ձևակերպումը ենթադրում է նաև, որ անձը չի խուսափել գործն ըստ էության չլուծող դատական ակտն ստանալուց կամ վարույթն իրականացնող մարմինն ինքը չի խոչընդոտել անձի կողմից նշված դատական ակտն ստանալուն կամ դրան ծանոթանալուն: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակներում կայացված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտն ստանալուց կամ դրան ծանոթանալուց խուսափումն առկա չէ այն դեպքում, երբ շահագրգիռ անձն օրյեկտիվ (հարգելի) պատճառներով (օրինակ՝ հիվանդությունը, բնակության վայրից բացակայությունը, անհաղթահարելի ուժի առկայությունը և այլն) մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակներում կայացված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտը փաստացի ստանում է կամ դրան փաստացի ծանոթանում է դրա իրական հնարավորության առաջացումից ողջամիտ ժամանակահատված հետո: Նման դեպքերում մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակներում կայացված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտի բողոքարկման ժամկետի սկիզբ պետք է դիտել նշված ակտն անձի կողմից փաստացի ստանալու կամ դրան փաստացի ծանոթանալու պահը:

17. Մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակներում կայացված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի «փաստացի հասու դառնալու» պահը կարող է տարբեր լինել: Մասնավորապես, անձը մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակներում կայացված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտի վերաբերյալ կարող է տեղեկացվել կամ կոնկրետ քննչական գործողությունը (օրինակ՝ խուզարկությունը) կատարելիս, նախաքննությունն ավարտելիս (օրինակ՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկման և այլ դեպքերում), գործը դատարան ուղարկելիս և այլն: Ասվածը նշանակում է, որ վերոնշյալ դատական ակտի բողոքարկման ժամկետի սկիզբ պետք է դիտել՝

ա) նշված ակտն անձի կողմից փաստացի ստանալու կամ դրան փաստացի ծանոթանալու պահը (օրինակ՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկման և այլ դեպքերում):

բ) դատարանի որոշմամբ թույլատրված կոնկրետ քննչական գործողությունը, օրինակ՝ խուզարկությունն սկսելու պահը, եթե խուզարկությունը կատարելու ժամանակ անձը պաշտոնապես ծանուցվում է կատարվող քննչական գործողության հիմքի վերաբերյալ (խուզարկություն կատարելու միջնորդության վերաբերյալ որոշման բողոքարկման՝ օրենքով նախատեսված ժամկետի

սկզբի մասին *mutatis mutandis* տե՛ս «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԳ/1133/07/11 որոշման 13-16-րդ կետերը):

18. Քննարկվող իրավիճակում հնարավոր է նաև, որ անձն անբարեխղճորեն է օգտվում գործի նյութերին ծանոթանալու իր իրավունքից (օրինակ՝ առանց հարգելի պատճառների հրաժարվում է ներկայանալ վարույթն իրականացնող մարմին, ստանալ գործի նյութերի պատճենները): Այս պարագայում դատարանի որոշման բողոքարկման ժամկետի մեկնարկը նշված ակտն անձի կողմից փաստացի ստանալու պահից հաշվելու դեպքում չի ապահովվի դատական պաշտպանության հիմնարար իրավական արժեքին հակակշռող հանրային շահի կենսագործումը, և դատական ակտի վերադատության կարգով բողոքարկման համար կսահմանվի անորոշ ժամկետ: Հետևաբար, նման դեպքերում դատական ակտի բողոքարկման ժամկետը պետք է հոսի այն պահից, երբ անձն օբյեկտիվորեն կարող էր ծանոթանալ իր շահերին առնչվող դատական ակտին:

19. Ամփոփելով սույն որոշման 15-18-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակներում կայացված և անձի հիմնարար իրավունքներն ու ազատությունները սահմանափակող օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների իրականացումը թույլատրող դատական ակտերը վերաքննության կարգով բողոքարկելու ժամկետը հաշվարկելիս դատարանները պետք է պատշաճ գնահատման ենթարկեն հետևյալ հանգամանքները, այն է՝

ա) երբ է անձը փաստացի ստացել դատական ակտը կամ ծանոթացել դրան,

բ) արդյոք անձը խուսափել է դատական ակտն ստանալուց կամ դրան ծանոթանալուց, այդ թվում՝ առանց օբյեկտիվ (հարգելի) պատճառների չի ներկայացել վարույթն իրականացնող մարմին, հրաժարվել է ստանալ գործի նյութերի պատճենները, անբարեխղճորեն է օգտվել գործի նյութերին ծանոթանալու իր իրավունքից և այլն,

գ) արդյոք վարույթն իրականացնող մարմինը խոչընդոտել է դատական ակտն ստանալու կամ դրան ծանոթանալու անձի իրավունքի իրացմանը:

Վերոնշյալ հանգամանքների գնահատման արդյունքում դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է պարզի, թե երբ է փաստացի ծագել վիճարկվող որոշմանը ծանոթանալու անձի իրավունքը և արդյոք վերջինս ողջամիտ ժամկետում ծանոթացել է այդ դատական ակտին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ յուրաքանչյուր դեպքում, երբ դատական ակտին ծանոթանալու հնարավորության առաջացման և փաստացի ծանոթացման միջև առկա ժամանակային խզումն առերևույթ թվում է ոչ ողջամիտ, անձի դատական պաշտպանության իրավունքի անհամաչափ սահմանափակումից խուսափելու նպատակով դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի ժամանակային նման խզման պատճառները:

20. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ դատարանը հաստատված կհամարի, որ անձն անբարեխղճորեն է օգտվել քրեական գործի նյութերին, այդ թվում՝ վիճարկվող դատական ակտին ծանոթանալու իր իրավունքից, ապա իրավասու է ըստ էության չքննարկել ներկայացված բողոքը և այն թողնել առանց քննության: Մինչդեռ այն դեպքերում, երբ կհաստատվի, որ գործի նյութերին ծանոթանալու իրավունքի առաջացման և այդ իրավունքի փաստացի իրացման միջև առկա ժամանակային խզումը պայմանավորված է օբյեկտիվ (հարգելի) պատճառներով, և բողոքը ներկայացվել է ակտը ստանալու պահից սահմանված ժամկետում, դատարանը պարտավոր է ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում դատական ստուգման ենթարկել վիճարկվող որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է հրապարակվել նշված դատական ակտը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նկարագրված կարգավորման պայմաններում կապահովվի մի կողմից իրավական պաշտպանություն հայցող անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատական քննության իրավունքների արդյունավետ իրականացումը, մյուս կողմից՝ արդարադատության պատշաճ իրականացումը և համապատասխանությունն իրավական որոշակիության սկզբունքին:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ պաշտպանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ իր որոշումը Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է նրանով, որ քրեական գործի նյութերին, այդ թվում՝ Առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հունիսի 14-ի որոշմանը ծանոթանալու իրական հնարավորությունը բողոքաբերի համար ծագել է դեռևս 2013 թվականի սեպտեմբերի 25-ից, մինչդեռ պաշտպանն իր իրավունքն իրացրել է միայն 2013 թվականի դեկտեմբերի 3-ին՝ ինքն իրեն գրկելով գործն ըստ էության չլուծող դատական ակտը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածով սահմանված ժամկետում վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունից (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

Իր որոշման հիմքում Վերաքննիչ դատարանը դրել է նաև ՀՀ ԱԱԾ քննչական վարչության պետի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի գրությունը, որտեղ ներկայացված է, թե քրեական գործի մասը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2013 թվականի սեպտեմբերի 6-ի որոշումը երբ է ուղարկվել Վ.Գրիգորյանի պաշտպանին, երբ է նրանց հնարավորություն ընձեռվել ծանոթանալու քրեական գործի նյութերին, և երբ են տրամադրվել քրեական գործի նյութերը (տե՛ս սույն որոշման 4-5-րդ կետերը):

22. Սույն որոշման 14-20-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով 21-րդ կետում շարադրված և վերլուծված փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պաշտպանի վերաքննիչ բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ առանց քննության թողնելով՝ Վերաքննիչ դատարանը անհամաչափորեն սահմանափակել է Վ.Գրիգորյանի դատական պաշտպանության իրավունքը: Մասնավորապես՝

ա) Վերաքննիչ դատարանը, մերժելով պաշտպան Մ.Շուշանյանի բողոքը, չի փորձել պարզել, թե ինչն էր պատճառը, որ նախաքննության մարմինը պաշտպանության կողմին դեռևս 2013 թվականի սեպտեմբերի 25-ին առաջարկել էր ծանոթանալ գործի նյութերի մի մասին, սակայն պաշտպանն իր այդ իրավունքն իրացրել է 2013 թվականի դեկտեմբերի 3-ին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հանգամանքի պարզումն անհրաժեշտ էր հասկանալու համար, թե երբ է անձը փաստացի ծանոթացել բողոքարկվող դատական ակտին, արդյոք նա չի խուսափել նշված դատական ակտին ծանոթանալուց կամ վարույթն իրականացող մարմինն ինքը չի խոչընդոտել դատական ակտին ծանոթանալու անձի իրավունքի իրացմանը (տե՛ս սույն որոշման 19-րդ կետը): Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ պաշտպանն իր վճռաբեկ բողոքում փաստարկել է, որ ի սկզբանե զրկված են եղել գործի բողոք նյութերին, այդ թվում՝ խուզարկություն կատարելու, բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկություններ պարունակող փաստաթղթեր առգրավելու թույլտվություն տալու մասին Առաջին ատյանի դատարանի որոշմանը ծանոթանալու հնարավորությունից, որպիսի պայմաններում պաշտպանության կողմը դիմել է իրավական պաշտպանության միջոցների, մասնավորապես, քննիչի անգործությունը բողոքարկել է գլխավոր դատախազին, իսկ այնուհետև նաև՝ դատարան: Ի վերջո, 2013 թվականի դեկտեմբերի 3-ին մինչդատական վարույթն իրականացնող մարմինն իրենց տրամադրել է քրեական գործում առկա նյութերի մի մասը, այդ թվում՝ Առաջին ատյանի դատարանի վիճարկվող որոշումը, որի դեմ օրենքով սահմանված 10-օրյա ժամկետում ներկայացվել է վերաքննիչ բողոք (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

բ) Վերաքննիչ դատարանը ՀՀ ԱԱԾ քննչական վարչության պետի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի գրությունը հասանելի չի դարձրել պաշտպանության կողմին, ինչի արդյունքում վերջիններս զրկվել են գրության մեջ արձանագրված փաստական տվյալների վերաբերյալ իրենց պարզաբանումները ներկայացնելու հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պաշտպանության կողմին նման հնարավորություն ընձեռելու դեպքում Վերաքննիչ դատարանը հնարավորություն կունենար պարզելու, թե առկա են արդյոք բողոքարկված դատական ակտին անձի կողմից ուշ ծանոթանալու հարգելի (օբյեկտիվ) պատճառներ: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ՀՀ ԱԱԾ քննչական վարչության պետի վերոնշյալ գրությունը պաշտպանության կողմին չտրամադրելով՝ Վերաքննիչ դատարանը խախտել է մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքները, ինչի արդյունքում թույլ է տվել արդար դատական քննության իրավունքի խախտում (այս մասին տե՛ս, ի թիվս այլոց, Ամալյա Մերժիկի Ղարիբյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԿԳ/0008/06/11 որոշման 22-րդ կետը):

23. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Գրիգորյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի ընդունելիության հարցը լուծելիս Վերաքննիչ դատարանը պաշտպանության կողմին հնարավորութ-

յուն չի տվել իր դիրքորոշումն արտահայտել քրեական հետապնդման մարմնի ներկայացրած տեղեկությունների և փաստերի վերաբերյալ, ինչի հետևանքով չի անդրադարձել և գնահատական չի տվել պաշտպանության կողմի համար՝ Առաջին ատյանի դատարանի վիճարկվող որոշմանը ծանոթանալու հնարավորության առաջացման և փաստացի ծանոթացման միջև առկա ժամանակային խզման պատճառներին: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը բացառապես ձևական նկատառումներով Վ.Գրիգորյանի պաշտպան Մ.Շուշանյանի վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ անհամաչափորեն սահմանափակելով Վ.Գրիգորյանի դատական պաշտպանության իրավունքը:

24. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: (...)»:

Վերոնշյալ հանգամանքը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

25. Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ սույն որոշման մեջ արձանագրված խախտումների առկայության պայմաններում հնարավոր չէ քննության առնել Առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հունիսի 14-ի որոշմամբ Վ.Գրիգորյանի անձնական կյանքի անձեռնմխելիության և անմեղության կանխավարկածի իրավունքների ենթադրաբար տեղի ունեցած խախտումների վերաբերյալ բողոքաբերի փաստարկները (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Ուստի, սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն այդ հարցին չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վահե Միշայի Գրիգորյանի պաշտպան Մ.Շուշանյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

6.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ՇԳ/0012/11/13
Նախագահող դատավոր՝ Ե.Գարբինյան

ՇԳ/0012/11/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ	
դիմողի ներկայացուցիչ	Ա.ԶԱԲԱՐՅԱՆԻ

2014 թվականի մարտի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի նոյեմբերի 20-ի որոշման դեմ դատախազ Հ.Հակոբյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի հոկտեմբերի 9-ին Շիրակի մարզի Նոր Կյանք գյուղի բնակիչ Մարգար Բազարյանը ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի բաժին հաղորդում է ներկայացրել այն մասին, որ նույն օրն իրեն ծեծի է ենթարկել նույն գյուղի բնակիչ Վահագն Եղիազարյանը:

2011 թվականի հոկտեմբերի 18-ին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի բաժնի հետաքննության խմբի ավագ տեսուչ Ա.Իգիթյանի որոշմամբ Մ.Բազարյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ Մ.Բազարյանի և Վ.Եղիազարյանի հաշտության պատճառաբանությամբ:

2013 թվականի ապրիլի 6-ին Վ.Եղիազարյանը բողոք է ներկայացրել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) խնդրելով վերացնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2011 թվականի հոկտեմբերի 18-ի որոշումը և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնել իր նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ դիմող Վ.Եղիազարյանի բողոքը մերժվել է՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

Դիմող Վ.Եղիազարյանի ներկայացուցիչ Ա.Զաքարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի հունիսի 7-ին որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 22-ի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու մասին:

Նոր քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի օգոստոսի 6-ին որոշում է կայացրել Վ.Եղիազարյանի բողոքը բավարարելու մասին: Առաջին ատյանի դատարանը վերացրել է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2011 թվականի հոկտեմբերի 18-ի որոշումը և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել է քննության արդյունքով ձեռք բերված փաստական հանգամանքներին տալ պատշաճ իրավական գնահատական:

2. 2013 թվականի օգոստոսի 13-ին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Արթիկի բաժնի հետաքննության խմբի ավագ տեսուչ Ա.Իգիթյանը որոշում է կայացրել Մ.Ղազարյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու և Վ.Եղիազարյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ տուժողի բողոքի բացակայության պատճառաբանությամբ:

Վերոգրյալ որոշման դեմ Առաջին ատյանի դատարան բողոք է ներկայացրել Վ.Եղիազարյանի ներկայացուցիչ Ա.Զաքարյանը: Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմամբ դիմողի ներկայացուցիչ Ա.Զաքարյանի բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. Նույն անձի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի նոյեմբերի 20-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը՝ բեկանելու մասին: Վերաքննիչ դատարանը վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել է վերացնել Վ.Եղիազարյանի իրավունքների և ազատությունների խախտումը:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 20-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազ Հ.Հակոբյանը:

Վճռաբեկ դատարանը 2014 թվականի հունվարի 24-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

2014 թվականի մարտի 3-ին Վ.Եղիազարյանի ներկայացուցիչ Ա.Ջաքարյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել դատախազ Հ.Հակոբյանի վճռաբեկ բողոքը և Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 20-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Քրեական գործի հարուցման հարցը լուծելու փուլում Մ.Ղազարյանը բացատրություն է տվել այն մասին, որ «(...) [Վ.Եղիազարյանն] իջավ ավտոմեքենայից ու հարվածեց բռունցքով դեմքիս, ես վայր ընկա, որից հետո նա ոտքով հարվածեց ինձ: Այդ պահին վրա եկավ կինս՝ Կարինեն և դիտողություն արեց այդ երիտասարդին, սակայն վերջինս ոչինչ չպատասխանեց, հրեց կնոջս, նստեց ավտոմեքենան ու հեռացավ, ես զգացի, որ դեմքս վնասված է, կինս օգնեց, գնացինք տուն և զանգահարեցինք շտապօգնություն, ինձ տեղափոխեցին շտապօգնության ավտոմեքենայով Արթիկի հիվանդանոց (...)» (տե՛ս հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութեր, թերթ 11):

Կարինե Կարապետյանը բացատրություն է տվել այն մասին, որ «(...) ես տեսա, թե ինչպես այդ երիտասարդը հարվածեց ամուսնուս, նա վայր ընկավ, որից հետո այդ տղան հարվածեց ոտքով: Ես վիրավորեցի վերջինիս ամուսնուս հարվածելու համար, որից հետո նա ինձ ոչինչ չասաց, նստեց ավտոմեքենան ու հեռացավ (...)» (տե՛ս հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութեր, թերթ 19):

6. 2011 թվականի հոկտեմբերի 17-ին Մ.Ղազարյանը հետևյալ բովանդակությամբ դիմում է ներկայացրել ոստիկանության Արթիկի բաժնի պետին «(...) խնդրում եմ նախապատրաստված նյութերը մերժել, քանի որ ես հաշտվել եմ Վահագն Լյովայի Եղիազարյանի հետ ինձ հարվածելու ու ֆիզիկական ցավ պատճառելու կապակցությամբ, ես չեմ ցանկանում որպեսզի նա պատժվի, քանի որ ես որևէ բողոք կամ պահանջ չունեմ» (տե՛ս հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութեր, թերթ 21):

2011 թվականի հոկտեմբերի 17-ին Վ.Եղիազարյանը հետևյալ բովանդակությամբ բացատրություն է տվել «(...) ես և Մարգար Ղազարյանը հաշտվել ենք իրեն ֆիզիկական ցավ պատճառելու կապակցությամբ, ես չեմ առարկում, որպեսզի իմ վերաբերյալ նախապատրաստված նյութերը մերժվեն, քանի որ մենք ընդհանուր հայտարարի ենք եկել և հաշտվել» (տե՛ս հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութեր, թերթ 24):

7. Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2013 թվականի օգոստոսի 13-ի որոշումը պատճառաբանված է հետևյալ կերպ. «(...) նախապատրաստված նյութերով ձեռք բերված փաստացի հանգամանքներով հիմնավորվել է, որ Վահագն Լյովայի Եղիազարյանի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ:

(...) [Ն]շված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, իսկ Մարգար Արշալույսի Ղազարյանը, Կարինե Ֆելիքսի Կարապետյանը և Վահագն Լյովայի Եղիազարյանը լրացուցիչ բացատրություններ են տվել, Մարգար Ղազարյանը 2011 թվականի հոկտեմբերի 17-ին դիմում է ներկայացրել ոստիկանության Արթիկի բաժին, որ ինքը հաշտվել է Վահագն Լյովայի Եղիազարյանի հետ, նրա դեմ բողոք, նրանից որևէ պահանջ չունի և չի ցանկանում, որպեսզի վերջինս ենթարկվի քրեական պատասխանատվության: Վահագն Եղիազարյանն էլ իր լրացուցիչ բացատրությամբ չի առարկել, որպեսզի իր վերաբերյալ ոստիկանության Արթիկի բաժնում նախապատրաստված նյութերը մերժվեն» (տե՛ս հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութեր, թերթ 56):

8. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման համաձայն՝ «(...) [Ն]ախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է, և քրեական հետապնդում չի իրականացվել, քանի որ Մարգար Ղազարյանը, Կարինե Կարապետյանը լրացուցիչ բացատրություններ են տվել, որ հաշտվել են Վահագն Եղիազարյանի հետ և չեն ցանկանում, որ նա ենթարկվի քրեական պատասխանատվության, որը հիմք է հանդիսացել հետաքննիչի կողմից նման որոշում կայացնելու համար: Նշված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա:

Բացի այդ, նյութերի նախապատրաստման ընթացքում՝ 2011 թվականի հոկտեմբերի 17-ին Վահագն Եղիազարյանը լրացուցիչ բացատրությամբ հայտնել է, որ Մարգար Ղազարյանին ֆիզիկական ցավ պատճառելու համար զոջացել է և չի առարկում, որ նախապատրաստված նյութերը մերժվեն, քանի որ ինքը հաշտվել է վերջինիս հետ: Հետևաբար նա գիտակցել է, որ իր նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվելու է տուժող Մարգար Ղազարյանի հետ հաշտվելու հիմքով և ոչ թե հանցակազմի բացակայության պատճառով: Այն դեպքում, որ նյութերում առկա է նաև Մարգար Ղազարյանին մեկից ավելի հարվածներ հասցնելու հանգամանքը:

[Հ]ետաքննիչը Մարգար Ղազարյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով իր լիազորությունների շրջանակում կայացրել է համապատասխան որոշում, որով չեն խախտվել Վ.Եղիազարյանի իրավունքներն ու ազատությունները: Ուստի հետաքննիչ Ա.Իզիթյանի կողմից 2013 թվականի օգոստոսի 13-ին կայացրած որոշումն օրինական է և այն վերացնելու հիմքեր չկան» (տե՛ս Վ.Եղիազարյանի ներկայացուցչի բողոքի հիման վրա հարուցված դատական վարույթի նյութեր, թերթ 47-48):

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) սույն գործով քրեական հետապնդման մարմինը պետք է գործեր «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի իրավադրույթների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից տրված իրավական մեկնաբանությունների համատեքստում և ապա-

հովեր դիմողի իրավունքը՝ իրեն ընձեռել «Կոնվենցիայի» իմաստով ներկայացված մեղադրանքից պաշտպանվելու բոլոր հնարավորությունները, ներառյալ՝ դիմողի իրավունքը՝ իր նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել հանցակազմի բացակայության հիմքով, պահանջի շուրջ բազմակողմանի քննություն կատարելու և դրա արդյունքներով համապատասխան եզրահանգման գալու՝ քրեական հետապնդման մարմնի պարտականությունը, որը վերջինս չի կատարել:

(...) [Բ]րեական հետապնդման մարմինը պարտավոր էր ավելի բազմակողմանի քննություն կատարել՝ պարզելու՝ պարունակում է դիմողի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը, թե՛ ոչ: Դրա համար պետք է մանրակրկիտ քննության առնել նախապատրաստված նյութերը, անդադառնար ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմին, վերլուծել այն, համադրել նյութերի նախապատրաստմամբ ձեռք բերված տվյալների հետ և արդյունքներով գար համապատասխան եզրահանգման:

(...) [Ն]յութերի նախապատրաստման ընթացքում տված բացատրությունների մեջ Վ.Եղիազարյանի կողմից Մարգար Ղազարյանի դեմքին բռունցքով հարվածելու, վերջինիս վայր ընկնելու, այնուհետև՝ Վ.Եղիազարյանի կողմից Մ.Ղազարյանին ոտքով հարվածելու վերաբերյալ իրենց բացատրությունների մեջ նշել են միայն Մարգար Ղազարյանը և նրա կինը՝ Կարինե Կարապետյանը (ինչը բնական և հասկանալի է, քանի որ վերջիններս շահագրգռված են գործի ելքով), իր բացատրություններում Վ.Եղիազարյանը նշել է միայն իր կողմից Մարգար Ղազարյանին բռունցքով մեկ անգամ հարվածելու վերաբերյալ» (տե՛ս նյութեր, թերթ 80-87):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոք բերած անձը փաստարկել է, որ դիմողի ներկայացուցչի բողոքը մերժելու մասին Առաջին աստիանի դատարանի որոշումն օրինական է և հիմնավորված, իսկ Վ.Եղիազարյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու պարտականություն սահմանելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, դրանով թույլ է տրվել դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ նյութերի նախապատրաստության արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներով անհերքելիորեն հաստատվել է Վ.Եղիազարյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշների առկայության փաստը: Մ.Ղազարյանի, Կ.Կարապետյանի, ինչպես նաև Վ.Եղիազարյանի կողմից նյութերի նախապատրաստության ընթացքում տված բացատրությունները հիմք ընդունելով՝ բողոքաբերն ամբողջությամբ հաստատված է համարել այն հանգամանքը, որ Վ.Եղիազարյանը, դուրս գա-

լով ավտոմեքենայից, հարվածել է Մ.Ղազարյանի դեմքին, որից հետո վայր ընկած Մ.Ղազարյանին հարվածել է նաև ոտքով: Ըստ բողոք բերած անձի, նշված գործողություններին վարույթն իրականացնող մարմնի կողմից տրված իրավական գնահատականը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված դիսպոզիցիայի պահանջներին և բխում է Վճռաբեկ դատարանի *Արևիկ և Ծովինար Սահակյանների* գործով որոշման քովանդակությունից:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ անհիմն են Վերաքննիչ դատարանի փաստարկներն առ այն, որ սույն գործով կատարվել է թերի քննություն և լիարժեքորեն չեն քննարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները, ինչպես նաև, որ Վ.Եղիազարյանի գործողություններում առկա չեն քննարկվող հանցագործության հատկանիշները՝ պայմանավորված օբյեկտիվ կողմի բացակայությամբ:

11. Բողոքի հեղինակը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերը, կարծիք է հայտնել, որ օրենսդիրը նշված իրավադրույթներով նախատեսել է գործի լուծման ավելի վաղ փուլ՝ դրանով իսկ մի կողմից օպտիմալ դարձնելով քրեական հետապնդում իրականացնող մարմինների գործունեությունը, մյուս կողմից՝ դատավարության մասնակիցներին հնարավորություն ընձեռելով որոշ հանրավտանգ արարքների մասով առավել կարճ ժամանակահատվածում հասնել գործի նախապատվելի լուծման: Այս պարագայում անհրաժեշտ է քննարկել դատավարական այն միջոցները, որոնք ապահովում են կողմերի իրավունքների լիարժեք ապահովումը:

Ըստ բողոք բերած անձի, տվյալ դեպքում, Վ.Եղիազարյանը, ունենալով օրենքով ընձեռված բոլոր հնարավորությունները, ոչ միայն չի բողոքարկել վարույթն իրականացնող մարմնի գործողությունները, այլև դիմում է ներկայացրել խնդրելով իր նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել, քանի որ ինքը հաշտվել է սուժողի հետ:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 20-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմանը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմողի (սուժողի) բողոքի բացակայության հիմքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ) քրեական գործի հարուցումը մերժելիս կամ քրեական հետապնդումը դադարեցնելիս ենթադրյալ հանցանք

կատարած անձի դիրքորոշումը հաշվի առնելու անհրաժեշտության, ինչպես նաև նշված հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշման դատական ստուգման սահմանների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված է արդյոք Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ դիմողի բողոքի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելով վարույթն իրականացնող մարմինը խախտել է Վ.Եղիազարյանի իրավունքներն ու ազատությունները:

1. Դիմողի (տուժողի) բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելիս կամ քրեական հետապնդումը դադարեցնելիս ենթադրյալ հանցանք կատարած անձի դիրքորոշումը հաշվի առնելը

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն՝ «1. Կատարված հանցագործության ծանրությունից և բնույթից ելնելով՝ քրեական դատավարությունում հետապնդումն իրականացվում է հանրային և մասնավոր կարգով:

2. Մասնավոր հետապնդման գործեր են համարվում սույն օրենսգրքի 183 հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (...) 118-րդ հոդվածով (...) նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: (...)»:

Մեջբերված դրույթների համադրված վերլուծությունից երևում է, որ քրեադատավարական օրենսդրությունը, հանրային նվազ վտանգավորության հանգամանքով պայմանավորված առանձնացնում և հստակ սահմանում է մասնավոր հետապնդման գործերի շրջանակը, որոնց համար նախատեսում է քննության առանձնահատուկ դատավարական կարգ: Մասնավոր հետապնդման գործերը կարող են հարուցվել բացառապես տուժողի բողոքի հիման վրա և

ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է քրեական գործի հարուցումը բացառող և արդեն իսկ հարուցված քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու անվերապահ հիմք, այն է՝ եթե օրենքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի (տուժողի) բողոքը:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քրեադատավարական օրենքը չի պարտավորեցնում վարույթն իրականացնող մարմնին քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելիս հաշվի առնել ենթադրյալ հանցանք կատարած անձի կարծիքը, այդ թվում՝ ստանալ նրա համաձայնությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով նրա նկատմամբ վարույթ չհարուցելու կամ հարուցված վարույթը կարճելու կապակցությամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասը քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրում միայն վաղեմության ժամկետներն անցնելու և համաներման ակտ ընդունվելու հիմքով, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով:

16. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործության մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան: (...)»:

ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *Վիրսթյանն ընդդեմ Հայաստանի* գործով կրկնելով անմեղության կանխավարկածի սկզբունքի վերաբերյալ նախկինում ձևավորած իրավական մոտեցումները, շեշտել է, որ «(...) 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված անմեղության կանխավարկածը արդար քրեական դատավարության այն բաղադրիչներից մեկն է, որը պահանջվում է 6-րդ հոդվածի 1-ին կետով (...): Այն կխախտվի, եթե քրեական իրավախախտման մեջ մեղադրվող անձի վերաբերյալ պետական պաշտոնյայի ցուցմունքում կարծիք արտահայտվի այն մասին, որ նա մեղավոր է, նախքան դա ապացուցված կլինի օրենքի համաձայն (...):»

Բացի դրանից, հայտարարությունն այն մասին, որ անձին պարզապես կասկածում են հանցագործություն կատարելու մեջ պետք է հստակորեն տարբերակվի այն բացահայտ արված հայտարարությունից, որ անհատը, թեպետ դեռ չի կայացվել վերջնական մեղադրական եզրակացություն, կատարել է տվյալ հանցագործությունը (...): Վերջինով խախտվում է անմեղության կանխավարկածի դրույթը, մինչդեռ առաջին տեսակի հայտարարությունը Դատարանի կողմից քննված զանազան իրավիճակներում համարվել է անառարկելի (...): Այն հարցը, թե արդյոք պետական պաշտոնյայի կողմից արված հայտարարությամբ խախտվել է անմեղության կանխավարկածի սկզբունքը, պետք է որոշվի այն կոնկրետ հանգամանքների համատեքստում, որոնց պայմանում արվել է վիճարկվող հայտարարությունը (...):» (տե՛ս *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետեր 185-186):

Անմեղության կանխավարկածի սկզբունքն ամրագրող կոնվենցիոն, սահմանադրական և քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Ա.Բարսայանի և Ս.Թումանյանի* գործով որոշման մեջ (տե՛ս Արմեն Բարսայանի և Սուրեն Թումանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 14-րդ կետը):

17. Սույն որոշման նախորդ կետում շարադրված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո մեկնաբանելով մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի դադարեցման կարգը (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված քրեական գործի հարուցումը մերժելու, ինչպես նաև հարուցված քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքն ինքնին ենթադրում է, որ մեղսագրվող արարքի կատարումն անվիճելի փաստ է: Այս հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու համար ընդամենը պետք է, որ վարույթն իրականացնող մարմինը քննությամբ ձեռք բերված (փաստական) տվյալների հիման վրա հաստատված համարի, որ անձը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք է կատարել, և միևնույն ժամանակ բացակայում է դիմողի (տուժողի) բողոքը: Նման իրավակարգավորումը թույլ չի տալիս անձին դատական պաշտպանության իրավունքի ուժով վիճարկել իրեն քրեական պատասխանատվության կանչելու փաստը, իր դեմ առաջադրված կասկածների, մեղադրանքի օրինականությունն ու հիմնավորվածությունը, չի նախատեսում անձի իրավունքների վերականգնման կարգ այն պայմաններում, երբ նրա մեղքը դեռ ապացուցված չէ:

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով քրեական գործի հարուցումը մերժելիս կամ քրեական հետապնդումը դադարեցնելիս ենթադրյալ հանցանք կատարած անձի կարծիքը հաշվի առնելու, այդ թվում՝ նրա համաձայնությունը ստանա-

լու օրենսդրական պահանջի բացակայությունը հանդիսանում է անմեղության կանխավարկածի սկզբունքի և արդար դատաքննության իրավունքի խախտում: Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրության նման կարգավորման պայմաններում չի ապահովվում անձի իրավունքը դատական կարգով վիճարկելու այն դատավարական փաստաթղթի օրինականությունն ու հիմնավորվածությունը, որում, փաստորեն, քննարկվում է ենթադրյալ հանցանքի մեջ իր մեղավորության հարցը:

18. Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է հաշվի առնել ենթադրյալ հանցանք կատարած անձի դիրքորոշումը: Այն դեպքում, երբ մասնավոր հետապնդման գործերով անձն առարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով վարույթի դադարեցման դեմ, անկախ դիմողի (տուժողի) բողոքի բացակայության հանգամանքից, գործի վարույթը պետք է շարունակվի սովորական կարգով՝ հնարավորություն տալով ենթադրյալ հանցանք կատարած անձին արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի առջև ապացուցել իր անմեղությունը:

II. Գիմողի (տուժողի) բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշման դատարանի սարուզման սահմանները

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

2. Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) քրեական գործ հարուցելու մասին.
- 2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին.

3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

(...) 5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

Մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռարեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Գ. Ղևոնդյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) [Զ]րեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության ընթացքում դատարանը վերահսկողություն չի իրականացնում նախնական քննության ընթացքի նկատմամբ: Դատարանը չի միջամտում քրեական դատավարության ընթացքին, չի անդրադառնում բողոքարկվող որոշման կայացման համար հիմք հանդիսացած քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությանը կամ նպատակահարմարությանը: Այս հարցերը գտնվում են նյութերի նախապատրաստությունն իրականացնող մարմինների բացառիկ լիազորությունների սահմաններում, իսկ քրեական գործի հարուցման հարցը լուծելու համար անհրաժեշտ տվյալների լրիվությունն ապահովելու նպատակով հետաքննության մարմնին կամ քննիչին ղեկավար ցուցումներ և հանձնարարություններ կարող է տալ միայն դատախազը:

(...) [Մ]ինչդատական վարույթի նկատմամբ հետագա վերահսկողության շրջանակներում դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, դատարանը պետք է պարզի, թե հաղորդման մեջ նշված հանգամանքների կապակցությամբ իրականացված նախնական ստուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները բավարար են արդյոք հավաստելու, որ քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը բացակայում են: Բացի այդ, դատարանի խնդիրն է պարզել, թե քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) կողմից նյութական և դատավարական օրենսդրության պահանջները չպահպանելու հետևանքով խախտվել են արդյոք անձի իրավունքները և ազատությունները:

Ի թիվս այլոց, պարզաբանման ենթակա են հետևյալ հարցերը՝

1) պահպանվե՞լ է արդյոք հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով նախատեսված կարգը,

2) առկա՞ են արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված օրինական հիմքերը,

3) պահպանվել են արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված պահանջները: (...)» (տե՛ս Գագիկ Ղևոնդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշման 16-րդ և 18-րդ կետերը):

20. Վերահաստատելով և զարգացնելով *Գ. Ղևոնդյանի* գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դիմողի (տուժողի) բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում ստուգման ենթարկելիս՝ դատարանի խնդիրն է ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում պարզել, թե վարույթն իրականացնող մարմինն արդյոք ստուգման է ենթարկել և հաշվի է առել այն հանգամանքները, որոնք կարող էին ազդել քրեական գործի հարուցման հարցը լուծելու վրա կամ հանգեցնել անձի իրավունքների և ազատությունների խախտմանը: Դիմողի (տուժողի) բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելիս դատարանը պետք է պարզի նաև, թե հաշվի առնվել է արդյոք ենթադրյալ հանցանք կատարած անձի դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դիմողի (տուժողի) բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում ստուգման ենթարկելիս դատարանն իրավասու չէ իրավական գնահատական տալ գործում առկա նյութերին, կարծիք հայտնել անձի մեղավորության, գործում առկա (փաստական) տվյալների թույլատրելիության կամ անթույլատրելիության վերաբերյալ: Քրեական գործի հարուցման հարցը լուծելու փուլում ձեռք բերված (փաստական) տվյալներին դատարանի կողմից տրված իրավական գնահատականները, նախնական քննության մարմիններին հասցեագրված «քողարկված» ցուցումները, ուղղորդումները դուրս են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության տրամաբանությունից:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նյութերի նախապատրաստության փուլում վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ տուժողի բողոքի բացակայության պատճառաբանությամբ: Նշված որոշումը պատճառաբանելիս վարույթն իրականացնող մարմինը նշել է, որ ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորված է Վ.Եղիազարյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշների առկայությունը, սակայն Մ.Ղազարյանը Վ.Եղիազարյանի դեմ բողոք չունի և չի ցանկանում, որպեսզի վերջինս ենթարկվի քրեական պատասխանատվության: Վ.Եղիազարյանն էլ իր բացատրությամբ չի առարկել, որպեսզի իր վերաբերյալ ոստիկանության Արթիկի բաժնում նախապատրաստված նյութերով քրեական

գործի հարուցումը մերժվի (տե՛ս սույն որոշման 2-րդ և 5-7-րդ կետերը):

Վ.Եղիազարյանի ներկայացուցիչ Ա.Զաքարյանի բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ վարույթն իրականացնող մարմինը Մ.Ղազարյանի հարողման հիման վրա նախապատրաստված նյութերով իր լիազորությունների շրջանակում կայացրել է համապատասխան որոշում, որով չեն խախտվել Վ.Եղիազարյանի իրավունքներն ու ազատությունները: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի հոկտեմբերի 3-ին որոշում է կայացրել Վ.Եղիազարյանի ներկայացուցիչ Ա.Զաքարյանի բողոքը մերժելու մասին (տե՛ս սույն որոշման 2-րդ և 8-րդ կետերը):

Նույն անձի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Վ.Եղիազարյանի իրավունքների և ազատությունների խախտում, քանի որ քրեական հետապնդման մարմինը պետք է գործեր «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի իրավադրույթների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից տրված իրավական մեկնաբանությունների համատեքստում և ապահովեր դիմողի իրավունքը՝ իրեն ընձեռել «Կոնվենցիայի» իմաստով ներկայացված մեղադրանքից պաշտպանվելու բոլոր հնարավորությունները, ներառյալ՝ դիմողի իրավունքը՝ իր նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել հանցակազմի բացակայության հիմքով, պահանջի շուրջ բազմակողմանի քննություն կատարելու և դրա արդյունքներով համապատասխան եզրահանգման գալու՝ քրեական հետապնդման մարմնի պարտականությունը, որը վերջինս չի կատարել: Վարույթն իրականացնող մարմինը բազմակողմանի և ամբողջական քննություն չի կատարել պարզելու, թե Վ.Եղիազարյանի արարքը պարունակում է արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը, թե՛ ոչ: Այս առումով Վերաքննիչ դատարանը կասկածի տակ է դրել Մ.Ղազարյանի և նրա կնոջ՝ Կ.Կարապետյանի բացատրություններում առկա փաստական տվյալների արժանահավատությունը՝ շեշտելով, որ «վերջիններս շահագրգռված են գործի ելքով» (տե՛ս սույն որոշման 3-րդ և 9-րդ կետերը):

22. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-20-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

ա) Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործով դիմողի բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժվել է ենթադրյալ հանցանք կատարած անձի՝ Վ.Եղիազարյանի համաձայնության պայմաններում, ինչը նշանակում է, որ քրեական գործի հարուցումը մերժելիս Վ.Եղիազարյանի իրավունքների և ազատությունների խախտում թույլ չի տրվել (տե՛ս սույն որոշման 17-19-րդ կետերը):

բ) քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունը և հիմնավորվածությունն ստուգելիս Վերաքննիչ դատարանը դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից և անդրադարձել է հարցերի այնպիսի շրջանակի, որոնք գտնվում են բացառապես նախնական քննության մարմնի իրավասության ներքո:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրինական և հիմնավորված չէ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ վարույթն իրականացնող մարմինը դիմողի բողոքի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելով, խախտել է Վ.Եղիազարյանի իրավունքներն ու ազատությունները:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...):»:

Վերաքննիչ դատարանը, Վ.Եղիազարյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու պարտավորություն սահմանելով, դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իր իրավասության սահմաններից՝ թույլ տալով ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքի խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարույթն իրականացնող մարմինը նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի էական խախտումներ թույլ չի տվել, հետևաբար նշված որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել: Դիմող Վահագն Լյովայի Եղիազարյանի ներկայացուցիչ Ա.Զաքարյանի վերաքննիչ բողոքը բավարարելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի նոյեմբերի 20-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

7.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԵԷԴ/0138/06/13
Նախագահող դատավոր՝ Լ.Թադևոսյան

ԵԷԴ/0138/06/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈԴՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ մասնակցությամբ մեղադրյալ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ Ս.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ
պաշտպան դատախազ	Ե.ՎԱՐՈՍՅԱՆԻ Վ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

2014 թվականի մարտի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Սամվել Գազիկի Մարգարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի դեկտեմբերի 2-ի որոշման դեմ դատախազ Վ.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի նոյեմբերի 18-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնում հարուցվել է թիվ 12804113 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի և 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկադիշներով:

2013 թվականի նոյեմբերի 19-ին Սամվել Մարգարյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի 2013 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ Ս. Մարգարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2013 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ Ս.Մարգարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով: Նույն որոշմամբ բավարարվել է Ս.Մարգարյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու մասին պաշտպանի միջնորդությունը, գրավի չափ է սահմանվել 700.000 ՀՀ դրամը:

3. Դատախազ Վ.Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի դեկտեմբերի 2-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 22-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 2-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազ Վ.Հովհաննիսյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հունվարի 24-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

2014 թվականի փետրվարի 27-ին մեղադրյալի պաշտպան Ե.Վարոսյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել 2013 թվականի դեկտեմբերի 2-ի որոշման դեմ դատախազ Վ.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ս.Մարգարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա գործով չպարզված ժամանակ և հանգամանքներում ապօրինի կերպով ձեռք է բերել և իր մոտ պահել հրազեն հանդիսացող «Բրաունինգ» տեսակի ատրճանակ և ռազմամթերք հանդիսացող փամփուշտներ: 2013 թվականի նոյեմբերի 18-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Արցախի փողոցի 18ա շենքի դիմաց գտնվող փակ գրուցարանում Ս.Մարգարյանը վիճել է Արմեն Միերի Սահակյանի հետ, որի ընթացքում խուլիգանական դրդումներով, վերջինիս մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ, իր անձի առավելությունն ընդգծելու համար վերոհիշյալ հրազենով երկու անգամ կրակոց է արձակել Ա.Սահակյանի ուղղությամբ և աջ սրունքի, ձախ ազդրի շրջանների պատռված հրազենային վերքերի՝ ուղեկցված աջ նրբուղքի տեղաշարժված պոկումային կտրվածքի ձևով վերջինիս առողջությանը պատճառել է միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով» (տե՛ս նյութեր, թերթ 23-24):

6. Մեղադրյալ Ս.Մարգարյանի նկատմամբ կիրառված կալանավորումը գրավով փոխարինելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) գործի փաստական հանգամանքներից երևում է, որ մեղադրյալ Սամվել Մարգարյանը կամովին ներկայացել է ոստիկանության բաժին և ներկայացրել է հանցագործության գործիք հանդիսացող հրազենը՝ ատրճանակը, նա ցույց է տվել դեպքի վայրը և ըստ քննիչի հայտարարության՝ համագործակցել է քննության հետ (...):

Դատաքննությանը պարզվել է նաև, որ մեղադրյալ Սամվել Մարգարյանը նախկինում դատված չի եղել, նրա անձը վարկաբեկող տվյալներ քննչական մարմինը քննությանը ձեռք չի բերել:

Դատարանը սույն միջնորդությունը քննարկելիս նկատի է ունենում նաև այն հանգամանքը, որ մեղադրյալին մեղաագրվել են միջին ծանրության հանցագործություններ (...):» (տե՛ս նյութեր, թերթ 39-43):

7. Վերաքննիչ դատարանի դատական ակտի համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, մեղադրյալ Ս. Մարգարյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու հարցում հանգել է ճիշտ եզրակացության (...):

Վերաքննիչ դատարանը նման հետևության է հանգում՝ հաշվի առնելով ինչպես (...) վերագրվող արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը, այնպես էլ այն հանգամանքը, որ մեղադրյալ Սամվել Մարգարյանը կամովին ներկայացել է ոստիկանության բաժին, ներկայացրել հանցագործության գործիք հանդիսացող հրազենը՝ ատրճանակը, մատնացույց արել դեպքի վայրը, ինչպես նաև հաշվի առնելով [Ս.Մարգարյանի] անձին առնչվող տվյալները՝ նախկինում դատապարտված և արատավորված չլինելը, որպիսի հանգամանքները, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, իրենց համակցության մեջ էականորեն նվազեցնում են մեղադրյալի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և գործի քննությանն ու քրեական դատավարության խնդիրների իրագործմանը խոչընդոտելու հավանականությունը (...):» (տե՛ս նյութեր, թերթ 87-105):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 143-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը թեև իր դատական ակտում ամրագրել է, որ հաշվի է առնում մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, ինչպես նաև նրա անձը բնութագրող մի շարք հանգամանքներ, սակայն իրականում անտեսել է դրանք և գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելիս հաշվի չի առել, որ՝

ա) մնալով ազատության մեջ՝ Ս.Մարգարյանը կարող է խոչընդոտել մինչ-դատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ ապօրինաբար հակազդելով գործով ճշմարտությանը բացահայտելու ընթացքին, և անօրինական ազդեցություն գործադրել դատավարությանը մասնակցող անձանց՝ հատկապես տուժողի նկատմամբ:

բ) Ս.Մարգարյանը մեղադրվում է այնպիսի հանցագործության մեջ, որի համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված է մինչև հինգ տարի ժամկետով ազատազրկում, ինչը բարձրացնում է նրա՝ քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու հավանականությունը:

Ս.Մարգարյանի՝ գործի քննությանը խոչընդոտելու հավանականության վերաբերյալ իր պնդումը հիմնավորելիս բողոքաբերը վկայակոչել է վերջինիս առաջադրված մեղադրանքի փաստական հանգամանքները, մասնավորապես այն, որ նա, խուլիզանական դրդումներով մարդաշատ վայրում հանդուգն վարքագիծ դրսևորելով, տուժողին մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ, իր անձի առավելությունն ընդգծելու նպատակով հրազենով երկու անգամ կրակոց է արձակել և տուժողի առողջությանը միջին ծանրության վնաս է պատճառել:

Ս.Մարգարյանի՝ քրեական պատասխանատվությունից ու պատժից խուսափելու հավանականության վերաբերյալ իր պնդումը հիմնավորելիս բողոքաբերն անդրադարձել է մեղսագրվող հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին և նշել, որ դրանք պետք է դիտարկվեն մեղսագրվող արարքի սանկցիայով սահմանված պատժի տեսակի և չափի համատեքստում: Հետևաբար, եթե դատարանը միջնորդությունը քննարկելիս հաշվի է առել Ս.Մարգարյանին մեղսագրվող արարքի համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված սանկցիայի չափը, ապա պետք է հաշվի առնեն նաև այն, որ կոնկրետ արարքի համար սահմանվող պատժի տեսակն ու չափը պայմանավորված են դրա հանրային վտանգավորության աստիճանով ու բնույթով:

Բացի այդ, բողոքաբերը փաստարկել է, որ անհիմն է նաև ստորադաս դատարանի հետևությունն այն մասին, որ Ս.Մարգարյանը համագործակցել է քննության հետ: Այս կապակցությամբ բողոքի հեղինակը նշել է, որ Ս.Մարգարյանի մասնակցությամբ կատարված քննչական փորձարարության ժամանակ նրա կողմից մատնացույց արված շինությունում կրակոցի մասին վկայող հետքեր, այդ թվում՝ պարկուճներ չեն հայտարերվել, ինչպես նաև Ս.Մարգարյանը ոստիկանության բաժին է ներկայացել ու դեպքի առթիվ ցուցմունքներ է տվել այն բանից հետո, երբ տուժողն իր ցուցմունքում նշել է, որ վերջինս իրեն անզուշտությամբ մարմնական վնասվածքներ է պատճառել: Բողոքաբերը որպես ոչ արժանահավատ է գնահատել նաև ատրճանակը գտնելու վերաբերյալ մեղադրյալի ցուցմունքը:

9. Վերոնշյալ հանգամանքների գնահատման արդյունքում բողոք բերած անձը եզրակացրել է, որ դրանք վկայում են Ս.Մարգարյանի անձի հասարակական վտանգավորության մասին և օրյեկտիվորեն բացառում են նրա

նկատմամբ գրավի կիրառման հնարավորությունը, ուստի խնդրել է մեղադրյալին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու մասով Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումը բեկանել և Ս.Մարգարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանավորումը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանքը գրավով փոխարինելու հարցը լուծելիս անձին մեղսագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը պատշաճ գնահատման ենթարկելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավոր՞ են արդյոք Ս.Մարգարյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ շարադրված հետևությունները:

12. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձեռքբերված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը (...) խափանման միջոց կարող է կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հինք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

- 1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.
- 2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմն-

նի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝

«1. Գրավը (...) հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի ղեկավարից կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով: Դատարանի թույլտվությամբ որպես գրավ կարող է ընդունվել անշարժ գույքը:

2. Դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայտնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից:

(...)»:

Մեջբերված իրավադրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Ա Ճուղուրյանի*, *Ա Ավետիսյանի*, *Գ Ալիխանյանի* գործերով կայացված որոշումներում, որտեղ հետևողականորեն ամրապնդել և զարգացրել է քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները (տե՛ս *mutatis mutandis* Արամ Սեյրանի Ճուղուրյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը, Ասլան Հովհաննեսի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԳ/0022/06/08 որոշման 18-րդ, 22-րդ և 36-րդ կետերը և Գավիթ Ալիխանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԱԶԳ/0138/06/12 որոշման 13-րդ կետը):

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի [է] առնվում վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը»:

Մեջբերված քրեադատավարական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Վ Պողոսյանի* գործով որոշման մեջ և իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը թեև չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի

տեսակն ընտրելիս, ինչպես նաև գրավի թույլատրելիության հարցը լուծելիս: Մեղաազրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից քաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նույնանման իրավական դիրքորոշում բազմիցս իր նախադեպային նշանակության վճիռներում հայտնել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ի թիվս այլոց տես *Mamedova v. Russia*, 2006 թվականի հունիսի 1-ի վճիռը, գանգատ թիվ 7064/05, կետ 74, *Panchenko v. Russia* 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 45100/98, կետ 102, *Ilijkov v. Bulgaria*, 2001 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 33977/96, կետ 81): (...))»(տե՛ս Վահագն Հակոբի Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԳ-1/0062/06/12 որոշման 13-րդ կետը):

Արաքի հանրային վտանգավորության «բնույթ» և «աստիճան» հասկացությունները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Գ. Մաղաթյանի* գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «Արաքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արաքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արաքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը:

(...) Արաքի հանրային վտանգավորության բնույթի որոշման հարցում Վճռաբեկ դատարանը կարևորում է խախտված քրեաիրավական նորմով պաշտպանվող հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը: (...)» (տե՛ս Գարուշ Նորիկի Մաղաթյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ-0029/01/08 որոշման 14-15-րդ կետերը):

14. Համադրելով Վ. Պողոսյանի և Գ. Մաղաթյանի գործով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրավի թույլատրելիության հարցի լուծման ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կե-

տով սահմանված՝ մեղադրյալին վերագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը գնահատելիս դատարանը պետք է գործով ներկայացված տվյալների հիման վրա պարզի մեղադրյալին վերագրվող հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, իսկ հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը: Այլ խոսքով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքների կատարման հավանակալությունը գնահատելիս և, հետևաբար, դրա հիման վրա մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելիս դատարանը, ի թիվս այլոց, պետք է պատշաճ գնահատման ենթարկի մեղսագրվող արարքի կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը բնութագրող այլ հանգամանքները:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոնշյալ հանգամանքներն էական նշանակություն ունեն մեղադրյալի անձի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար: Ուստի, առանց դրանք գործի նյութերից բխող մյուս տվյալների հետ համադրված վերլուծության և գնահատման ենթարկելու հնարավոր չէ հիմնավորված ենթադրություն անել մեղադրյալի հետագա վարքագծի վերաբերյալ, հետևաբար հնարավոր չէ մաս օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում կայացնել անձի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Մարգարյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու մասին պաշտպանի միջնորդությունը բավարարելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 22-ի որոշման վերանայման արդյունքում Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ է թողել վերոնշյալ որոշումը՝ պատճառաբանելով, որ՝

ա) Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Ս.Մարգարյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու հարցում հանգել է ճիշտ եզրակացության: Այս առումով Վերաքննիչ դատարանը համաձայնվել է Ս.Մարգարյանի նկատմամբ կալանքը գրավով փոխարինելու թույլատրելիությունը հիմնավորող՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտում շարադրված այն հանգամանքների հետ, որ Ս.Մարգարյանը կամովին ներկայացել է ոստիկանության բաժին, ներկայացրել է հանցագործության գործիք հանդիսացող հրազենը, ցույց է տվել դեպքի վայրը, համագործակցել է քննության հետ, նախկինում դատված չի եղել, և նրան մեղսագրվել են միջին ծանրության հանցագործություններ (տե՛ս սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերը):

բ) Ս.Մարգարյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի է՝ հաշվի առնելով նրան վերագրվող արարքների բնույթն ու վտանգավորության աստիճանը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ Ս.Մարգարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով նեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ապօրինի կերպով ձեռք է բերել և իր մոտ պահել հրազեն հանդիսացող «Բրաունինգ» տեսակի ատրճանակ և ռազմամթերք հանդիսացող փամփուշտներ, որը գործադրել է Արմեն Մեդրի Սահակյանի հետ վիճաբանության ընթացքում, մասնավորապես՝ իր անձի առավելությունն ընդգծելու նպատակով, խուլիգանական դրդումներով երկու անգամ կրակոց է արձակել Ա.Սահակյանի ուղղությամբ՝ վերջինիս առողջությանը պատճառելով միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

16. Սույն որոշման 12-14-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 15-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ս.Մարգարյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ շարադրված հետևությունները հիմնավոր չեն: Մասնավորապես, Ս.Մարգարյանի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել՝

ա) մեղսագրվող արարքի կատարման եղանակը, մասնավորապես այն, որ Ս.Մարգարյանը, մարդաշատ վայրում հանդուգն վարքագիծ դրսևորելով, իր անձի առավելությունն ընդգծելու նպատակով հրազենով երկու անգամ կրակոց է արձակել,

բ) հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, այն, որ Ս.Մարգարյանի ենթադրյալ գործողությունների արդյունքում տուժողի առողջությանը միջին ծանրության վնաս է պատճառվել:

Վերը նշված հանգամանքները պատշաճ գնահատման չենթարկելու հետևանքով Վերաքննիչ դատարանը գրկված է եղել Ս.Մարգարյանի անձի մասին ճիշտ պատկերացում կազմելու և նրա հետագա վարքագծի վերաբերյալ հիմնավորված ենթադրություն անելու հնարավորությունից, որպիսի պայմաններում գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում կայացնել հնարավոր չէ:

17. Հիմք ընդունելով սույն որոշման 12-16-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ս.Մարգարյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր չէ, դրա արդյունքում թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 143-րդ հոդվածների էական խախտումներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների իմաստով հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

18. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով գրավի թույլատրելիության վերաբերյալ իր դատողությունները Վե-

րաքննիչ դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, հիմնավորել է նրանով, որ Ս.Մարգարյանը համագործակցել է քննության հետ, մասնավորապես, կամուփին ներկայացել է ոստիկանության բաժին, ներկայացրել հանցագործության գործիք հանդիսացող հրազենը, մատնացույց արել ղեպքի վայրը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը): Մինչդեռ դատախազն իր վճռարեկ բողոքում պնդում է, որ Ս.Մարգարյանը ոչ միայն չի համագործակցել, այլ ընդհակառակը՝ խոչընդոտել է գործի քննությանը: Այս կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ մեղադրյալը ոստիկանության բաժին է ներկայացել ու ղեպքի առթիվ ցուցմունքներ է տվել այն բանից հետո, երբ տուժողն իր ցուցմունքում հայտնել է, որ Սամվել Մարգարյանն իրեն

անգոյություն ունեցող մարմնական վնասվածքներ է պատճառել, քննչական փորձարարության ժամանակ նրա կողմից մատնացույց արված շինությունում կրակոցի մասին վկայող հետքեր, այդ թվում՝ պարկուճներ չեն հայտաբերվել, իսկ ատրճանակը գտնելու մասին նրա ցուցմունքներն արժանահավատ չեն (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վճռարեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Ս.Մարգարյանի նկատմամբ գրավի թույլատրելիության հարցը լուծելիս Վերաքննիչ դատարանը՝ նրան մեղսագրված արարքների հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը բնութագրող հանգամանքները գնահատելուց բացի, պետք է քննության առարկա դարձնի նաև դատախազի վերոգրյալ փաստարկները, քանի որ դրանց պարզաբանումն էական նշանակություն կարող է ունենալ մեղադրյալի հետագա վարքագծի կապակցությամբ հիմնավորված ենթադրություն կատարելու առումով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռարեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Սամվել Գագիկի Մարգարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 2-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

8.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԵԿԳ/0125/11/13
Նախագահող դատավոր՝ Գ.Ավետիսյան

ԵԿԳ/0125/11/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ դատախազ

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ա.ԴԱՎԹՅԱՆԻ

2014 թվականի մարտի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի նոյեմբերի 7-ի որոշման դեմ դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Ա.Արամյանի 2013 թվականի մայիսի 29-ի որոշմամբ Արմեն Գրիգորյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է, և ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով Ռ.Գալոյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու, իսկ Վ.Կասպարովայի նկատմամբ՝ մահվան պատճառաբանություններով:

2013 թվականի հուլիսի 3-ին Ա.Գրիգորյանը քննիչի որոշումը բողոքարկել է վերադաս դատախազին: Դատախազը գրությամբ պատասխանել է, որ բողոքարկերի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բողոքարկման ժամկետը, հետևաբար բողոքի կապակցությամբ որոշում չի կայացրել:

2. 2013 թվականի օգոստոսի 12-ին Ա.Գրիգորյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Ա.Արամյանի 2013 թվականի մայիսի 29-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ Ա.Գրիգորյանի բողոքը ճանաչել է հիմնավորված և վերացրել է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Ա.Արամյանի 2013 թվականի մայիսի 29-ի որոշումը:

3. Դատախազ Ս.Խաչատրյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի նոյեմբերի 7-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 17-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 7-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազ Ա.Դավթյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հունվարի 14-ի որոշմամբ դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման ժամկետների կապակցությամբ մեջբերել է Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԳԳ/0014/11/09 գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը և եզրակացրել, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը դատախազին ենթակա է բողոքարկման ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված 7-օրյա, այլ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետում (տե՛ս քրեական գործ, 1-ին հատոր, թերթ 83-84):

6. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) վերադաս դատախազը պարտավոր էր ղեկավարվել ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի ԵԱԳԳ/0014/11/09 քրեական գործով 2010 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներով, իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ, 7-րդ մասերի պահանջներով:

Գիմող Ա.Գրիգորյանի բողոքը դատախազը պետք է քննարկեր՝ ղեկավարվելով ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի, այլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով՝ նկատի ունենալով, որ վերոհիշյալ իրավական ակտերի մեկնաբանությունները հավասարապես վերաբերում են ոչ միայն դատարանին, այլև դատախազին: Վերջինս պարտավոր էր պատշաճ ընթացակարգով՝ ըստ էության քննության առնել Ա.Գրիգորյանի բողոքը, որը չի կատարել: Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում վերոհիշյալ հարցի կապակցությամբ Առաջին ատյանի դատարանի հետևությունները և ոչ իրավաչափ՝ վերաքննիչ բողոքի պատճառաբանությունները (...):» (տե՛ս քրեական գործ, 2-րդ հատոր, թերթ 74-76):

3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

7. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ, Ա.Գրիգորյանի բողոքն ըստ էության քննելով՝ Առաջին ատյանի դատարանը դուրս է եկել իր իրավասության սահմաններից:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ Ա.Գրիգորյանի կողմից չի պահպանվել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և դատախազական հսկողության շրջանակներում քննիչի որոշումը բողոքարկելու դատավարական կարգը: Մասնավորապես, Ա.Գրիգորյանը քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշումը 7-օրյա ժամկետում չի բողոքարկել դատախազին, ինչը վերոնշյալ որոշումը դատարան բողոքարկելու պարտադիր նախապայման է:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը պետք է մերժեր քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշման դեմ Ա.Գրիգորյանի բողոքը:

8. Անդրադառնալով սույն գործով ստորադաս դատարանների կողմից վկայակոչված՝ Հ.Աթոյանի գործով Վճարելի դատարանի 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԱԳԳ/0014/11/09 որոշմանը՝ բողոք բերած անձը փաստարկել է, որ նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները վերաբերում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածներով սահմանված՝ միևնույն որոշման դատական բողոքարկման տարբեր ժամկետներին: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման յոթօրյա ժամկետ, որը վերաբերում է և՛ դատախազին, և՛ դատարանին, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված է բողոքարկման մեկամսյա ժամկետ, որը վերաբերում է միայն դատարանին:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն ստանալու պահից 7-օրյա ժամ-

կետում կարող է բողոքարկվել վերադաս դատախազին, այնուհետև մեկամսյա ժամկետում՝ դատարան:

9. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ սույն գործով ստորադաս դատարանները, վերացնելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը, քրեական հետապնդման մարմնի համար սահմանել են քրեական գործ հարուցելու պարտականություն՝ անտեսելով այն հանգամանքը, որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված քրեական գործի վարույթը բացառող հանգամանք, այն է՝ անցել են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, իսկ վաղեմության ժամկետներն անցած լինելու պայմաններում քրեական գործ հարուցելը կամ քրեական հետապնդում իրականացնելը քրեադատավարական օրենքի էական խախտումներ են:

10. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 17-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 7-ի որոշումները:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառնության իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում բողոքարկելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածներով սահմանված դատավարական ժամկետների և կարգի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում բողոքարկելիս Ա.Գրիգորյանը պահպանե՞լ է արդյոք վերոնշյալ որոշման բողոքարկման դատավարական ժամկետներն ու կարգը:

1. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման դատավարական ժամկետները

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով որոշման պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում»:

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանը համադրված վերլուծության է ենթարկել Հ. Աթոյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «(...) դրանցում առկա է ուղղակի հակասություն. առաջին դրույթը սահմանում է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման բողոքարկման յոթնօրյա ժամկետ, իսկ երկրորդը՝ մեկամսյա:

(...)

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված կոլիզիոն կանոնի կիրառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննության առարկա հարաբերությունների նկատմամբ պետք է գործի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կանոնը՝ որպես ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտ:

(...) [Վերոշարադրյալ] իրավական դիրքորոշումը բխում է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կոլիզիոն կանոնից, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բողոքարկման մեկամսյա ժամկետը քաղաքացիների համար ավելի նախընտրելի է, քան 185-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված յոթնօրյա ժամկետը» (տե՛ս Հայաստանի Միշայի Աթոյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԱԳԳ/0014/11/09 որոշման 27-29-րդ կետերը):

14. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և Հ. Աթոյանի գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը դատախազին և դատարան բողոքարկելու միասնական ժամկետ՝ յոթ օր: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասում օրենսդիրն ամրագրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը դատարան բողոքարկելու այլ՝ մեկամսյա ժամկետ: Այլ խոսքով՝ Հ. Աթոյանի գործով որոշման մեջ արձանագրված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասում և 290-րդ հոդվածի 3-րդ մասում առկա հակասությունը վերաբերում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը դատարան և ոչ թե դատախազին բողոքարկելու ժամկետներին: Ուստի, զարգացնելով Հ. Աթոյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության շրջանակներում բողոքարկելու առումով ՀՀ քրեադատավարական օրենքը հստակ 7-օրյա ժամկետ

է սահմանում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մաս):

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը վերաբերում է բացառապես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հարցերին և, հետևաբար, սահմանում է դրա շրջանակներում մինչդատական վարույթն իրականացնող մարմինների ակտերի դատական վերանայման կարգն ու ժամկետները: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով կարգավորվում են հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դատական բողոքարկման ընթացակարգը, ժամկետները և բողոքարկման արդյունքում ընդունվող որոշումների տեսակները: Հետևաբար, համապատասխան որոշումների և գործողությունների օրինականության նկատմամբ դատախազական հսկողության կառուցակարգերը, այդ թվում՝ բողոք բերելու կարգը, ժամկետները և կայացվող որոշումների տեսակները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգավորման շրջանակներից դուրս են գտնվում և յուրաքանչյուր դեպքում կարգավորվում են առանձին նորմերով (օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով, 263-րդ հոդվածի 1-ին մասով, 267-րդ հոդվածի 3-րդ մասով և այլն):

15. Սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության շրջանակներում բողոքարկելիս կիրառելի է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 7-օրյա և ոչ թե 290-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 1-ամսյա ժամկետը: Այլ խոսքով՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումը վերադաս դատախազին ենթակա է բողոքարկման ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված 1-ամսյա ժամկետում, այլ նույն օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված 7-օրյա ժամկետում:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության ինստիտուտները, հանդիսանալով մինչդատական վարույթի ընթացքում անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված կառուցակարգեր, այնուամենայնիվ միմյանցից տարբերվում են մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների և որոշումների օրինականության ստուգման ընթացակարգերով և ժամկետներով: Մասնավորապես, դատախազը, հսկողական գործառույթներ իրականացնելով, նպատակ է հետապնդում կանխել, վերհանել և վերացնել վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ տրված

սխալները, մինչդեռ դատարանի վերահսկողական գործունեության հիմնական նպատակը իրավապաշտպան գործառույթի իրականացումն է: Նշված գործառույթային առանձնահատկություններն էլ հենց պայմանավորում են հսկողության և վերահսկողության ընթացակարգերի տարբերությունը, այդ թվում նաև՝ ժամկետների առումով (մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և դատախազական հսկողության ինստիտուտների առանձնահատկությունների մասին *mutatis mutandis* տե՛ս Լաուրա Գարեգինի Չարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 որոշման 13-րդ կետը):

II. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման դատավարական կարգը

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝

«4. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա վերադաս դատախազը այն ստանալու պահից 7 օրվա ընթացքում վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար այն ուղարկում է քննիչին կամ հաստատում է քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը:

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավորված չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

Վերոշարադրյալ քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանի կողմից վերլուծության են ենթարկվել *Ա Օհանյանի* և *Է. Եղինյանի* գործերով կայացված որոշումներում: Մասնավորապես, *Ա Օհանյանի* գործով որոշման մեջ արձանագրվել է, որ «(...) դատարանը, տալով օրենքի կամայական մեկնաբանություն, գտել է որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը պահանջում է նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու որոշումը նախ բողոքարկել դատախազին, ապա դատարան: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը նման պահանջ չի բովանդակում» (տե՛ս Ալբերտ Օհանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԱԶԴ/0001/11/10 որոշման 25-րդ կետը):

Է. Եղիևյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) օրենքով նախատեսված դեպքերում դատարանը լիազորված է քննել և լուծել քննիչի որոշումների և գործողությունների դեմ բողոքները, սակայն դատական պաշտպանության իրավունքի ծագման համար անհրաժեշտ է, որպեսզի բավարարվի օրենքով սահմանված «...եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից» պայմանը: Ընդ որում, նշված որոշումների և գործողությունների դեմ բողոքները կարող են ներկայացվել դատարան, եթե տեղեկություն է ստացվել դատախազի կողմից բողոքը մերժելու մասին, կամ եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել» (տե՛ս Էրիկ Իգորի Եղիևյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ Լ.Գ./0008/11/10 որոշման 19-րդ կետը):

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և, համապատասխանաբար, *Ա. Օհանյանի* և *Է. Եղիևյանի* գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 290-րդ հոդվածները քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում բողոքարկելու տարբեր ընթացակարգեր են նախատեսում: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը չի բովանդակում պահանջ այն մասին, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը մինչև դատական կարգով բողոքարկելը պետք է բողոքարկվի դատախազին: Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինական և հիմնավորված չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել դատախազին բողոքարկվելու և ներկայացված բողոքին վերջինիս կողմից բավարարում չտրվելու դեպքում միայն: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասն այս ընթացակարգի առումով որևէ բացառություն չի նախատեսում:

18. Ուստի, վերանայելով և զարգացնելով *Ա. Օհանյանի* և *Է. Եղիևյանի* գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը, սահմանելով հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դատական բողոքարկման կարգը, ի թիվս դատարան դիմելու այլ պայմանների, իրավաչափորեն ներառում է նաև իրավունքների պաշտպանության արտադատական միջոցն սպառելու պայման: Մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականությունը վիճարկելու տվյալ կարգը՝ որպես ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրացման միջոց, հստակ սահմանված է օրենքով, որևէ բացառություն չի նախատեսում և նպատակ է հետապնդում քրեական դատավարության մասնակիցների և շահագրգիռ այլ անձանց համար առա-

վել արդյունավետ ձևով ապահովել դատական պաշտպանության իրավունքի անխափան իրականացումը:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումը հիմնված է *Է. Եղինյանի* գործով որոշմամբ արտահայտված այն մտտեցման վրա, որ «(...) դատական պաշտպանության իրավունքի իրացումը պետք է լինի իրական, այլ ոչ թե պատրանքային, այսինքն՝ անձն իր իրավունքների և ազատությունների, օրինական շահերի ենթադրյալ խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների շրջանակներում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա: Ընդ որում, դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է բացառապես ձևական բնույթ ունենան, որպեսզի դիմողը հնարավորություն ունենա իրացնել Սահմանադրությամբ ամրագրված՝ հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները: Բացի այդ, դատարանի մատչելիության սահմանափակումը պետք է օրինական նպատակ հետապնդի, և գործադրված միջոցի (այսինքն՝ սահմանափակման) և սահմանափակմամբ հետապնդված նպատակի միջև պետք է առկա լինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (տե՛ս Էրիկ Իգորի Եղինյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԼԳ/0008/11/10 որոշման 17-րդ կետը):

19. *Է. Եղինյանի* գործով արտահայտված վերոշարադրյալ դիրքորոշման համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանի մատչելիության իրավունքի՝ սույն որոշման 18-րդ կետում ամրագրված սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ, գործադրված միջոցի և սահմանափակմամբ հետապնդված նպատակի միջև առկա է համաչափության ողջամիտ հարաբերակցություն: Մասնավորապես, մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունը դատական վերահսկողության հետ միասնական նպատակ է հետապնդում, այն է՝ ապահովել անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պաշտպանությունը, ինչպես նաև վերականգնել անձանց խախտված իրավունքները և ազատությունները: Ընդ որում, մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների և որոշումների օրինականության ստուգման դատավարական կարգերի առանձնահատկություններով պայմանավորված՝ դատախազական հսկողությունը դատական վերահսկողության համեմատ երբեմն առավել արագ և արդյունավետ կերպով կարող է հասնել իր առջև դրված նպատակների իրագործմանը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ որպես մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կառուցակարգի գործադրման նախապայման դատախազական հսկողության սահմանումը

պայմանավորված է անձի իրավունքների և ազատությունների անօրինական կամ անհամաչափ սահմանափակումները հնարավորինս կարճ ժամանակահատվածում և արդյունավետ վերացնելու օրենսդրի կամքով: Բացի այդ, մինչդատական վարույթի օրինականության երաշխավորմանն ուղղված հսկողական և վերահսկողական տվյալ միջոցների զուգակցումը հետապնդում է մեկ այլ իրավաչափ նպատակ. անձանց շահերի քրեաիրավական պաշտպանությունն իրականացնելով արտադատական կառուցակարգի գործադրմամբ՝ հնարավորինս սահմանափակել դատական գործիքակազմի ներգրավումը և գերծ մնալ ավելորդ հանրային-իրավական միջոցների վատնումից:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը չի բովանդակում պահանջ առ այն, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչև դատական կարգով բողոքարկելը պետք է բողոքարկվի դատախազին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ նորմի բովանդակության բացահայտման համար անհրաժեշտ է հաշվի առնել քրեական դատավարության օրենսգրքի կոնկրետ գլխում կարգավորվող հասարակական հարաբերությունների ուղղվածությունը: Այսպես՝ «Քրեական գործ հարուցելը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխով (որտեղ զետեղված է 185-րդ հոդվածը) կարգավորվում է քրեական գործ հարուցելու դատավարական կարգը և առավելապես ուղղված է քրեական գործ հարուցելու պարտականություն ունեցող սուբյեկտներին՝ հետաքննության մարմնին, քննիչին և դատախազին, մինչդեռ «Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ» վերտառությամբ 39-րդ գլխով կարգավորվում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրականացման դատավարական կարգը, որի իրականացման միակ սուբյեկտը դատարանն է: Հենց այս գլխում էլ զետեղված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը, որն առանց բացառության նախատեսում է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինական և հիմնավորված չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել դատախազին բողոքարկվելու և ներկայացված բողոքին վերջինիս կողմից բավարարում չտրվելու դեպքում միայն: Իր հերթին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ «քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով»:

20. Վերոնշյալ հարցի կապակցությամբ դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը: Մասնավորապես, 2009 թվականի դեկտեմբերի 7-ին կայացված թիվ ՍԴՈ-844 որոշման 8-րդ կետում ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «(...) Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով, մասնավորապես՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665 և ՍԴՈ-690, բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, կարևորելով անձի իրավունքների

արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ միաժամանակ կարևորել է միջազգային պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում: Այդ կարգը, ի թիվս դատարան դիմելու այլ պայմանների (այդ թվում՝ ձևական) կարող է իրավաչափորեն ներառել նաև օրենքով սահմանված՝ իրավունքների պաշտպանության արտադատարանական միջոցն սպառելու պայման (...):»:

21. Հիմք ընդունելով սույն որոշման 18-20-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը չի կարող հանդիսանալ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա, եթե քրեական դատավարության մասնակցի կամ այլ շահագրգիռ անձի կողմից չի պահպանվել նշված որոշումը վիճարկելու արտադատական (տվյալ դեպքում՝ դատախազին բողոքարկելու) կարգը:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Ա.Արամյանի քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2013 թվականի մայիսի 29-ի որոշումը դիմող Ա.Գրիգորյանի կողմից 2013 թվականի հուլիսի 3-ին բողոքարկվել է դատախազին: Դատախազ Ա.Գրիգորյանը բողոքը չի քննարկել՝ պատճառաբանելով, որ վերջինս չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բողոքարկման 7-օրյա ժամկետը (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Դիմող Ա.Գրիգորյանը 2013 թվականի օգոստոսի 12-ին բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարան: Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ Ա.Գրիգորյանի բողոքը ճանաչել է հիմնավորված, նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Ա.Արամյանի 2013 թվականի մայիսի 29-ի որոշումը վերացրել է՝ ի թիվս այլնի պատճառաբանելով, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը դատախազին ենթակա է բողոքարկման ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված 7-օրյա, այլ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված՝ մեկամսյա ժամկետում (տե՛ս սույն որոշման 2-րդ և 5-րդ կետերը):

Դատախազի բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը դիրքորոշում է հայտնել առ այն, որ դատախազը պարտավոր էր ըստ էության քննության առնել Ա.Գրիգորյանի բողոքը՝ ղեկավարվելով ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասի, այլ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով: Արդյունքում վերաքննիչ

բողոքը մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ (տե՛ս սույն որոշման 3-րդ և 6-րդ կետերը):

23. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-20-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում բողոքարկելիս Ա.Գրիգորյանը չի պահպանել վերոնշյալ որոշման բողոքարկման դատավարական ժամկետներն ու կարգը: Այս կապակցությամբ Վճարելի դատարանն ընդգծում է, որ սույն գործով ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել Հ.Աթոյանի գործով որոշման մեջ Վճարելի դատարանի կողմից ձևավորված դիրքորոշումը (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը) և արդյունքում հանգել են սխալ եզրակացության այն մասին, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը ենթակա է դատախազին բողոքարկման ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված յոթնօրյա, այլ նույն օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետում: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը դիմող Ա.Գրիգորյանի բողոքը քննության է առել՝ անտեսելով այն հանգամանքը, որ վերջինիս կողմից չի պահպանվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման դատավարական կարգը, մասնավորապես՝ վիճարկվող որոշումը սահմանված կարգով չի բողոքարկվել դատախազին: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իր լիազորությունների շրջանակից: Իր հերթին Վերաքննիչ դատարանը, անտեսելով Առաջին ատյանի դատարանի կողմից մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իր լիազորությունների շրջանակից դուրս գալու հանգամանքը, նշված որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ մերժելով դրա դեմ դատախազի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը: Արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրության 5-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածներով սահմանված օրինականության սկզբունքը:

24. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վերոնշյալը Վճարելի դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և դիմող Ա.Գրիգորյանի բողոքը մերժել:

25. Մինևույն ժամանակ, նկատի ունենալով, որ ստորադաս դատարաններն իրավասու չէին իրականացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի ըստ էության քննություն այն պայմաններում, երբ չի պահպանվել տվյալ որոշման՝ դատախազին բողոքարկելու քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգը, Վճռաբեկ դատարանը հնարավոր չի համարում անդրադառնալ վճռաբեկ բողոքի հեղինակի կողմից բարձրացված մյուս հարցին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 17-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի նոյեմբերի 7-ի որոշումը բեկանել և դիմող Ա.Գրիգորյանի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

9.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ԵՇԳ/0055/01/11
Նախագահող դատավոր՝ Մ.Արղամանյան
Դատավորներ՝ Գ.Մելիք-Սարգսյան
Հ.Տեր-Աղամյան

ԵՇԳ/0055/01/11

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍՍՏԲՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ մասնակցությամբ պաշտպաններ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ Գ.ՊԱՊՈՅԱՆԻ Կ.ՔԱՄԱԼՅԱՆԻ

2014 թվականի մարտի 28-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշման դեմ ամբաստանյալներ Սիրաժ Գաբրիելի Դամբարյանի և Արմեն Վլադիմիրի Բաղդասարյանի պաշտպան Վ.Գրիգորյանի, ամբաստանյալներ Արա Գեորգիի Ռոստոմյանի, Հակոբ Գերեմիկի Համբարձումյանի և Սամվել Համբարձումի Սկրտումյանի պաշտպան Կ.Քամալյանի, ամբաստանյալ Աղվան Վանիկի Վարդանյանի պաշտպան Ա.Մուխսիկարոյանի, ամբաստանյալ Աշոտ Հովհաննեսի Առաքելյանի պաշտպան Գ.Պապոյանի, ամբաստանյալ Արմեն Պողոսի Լեպեջյանի և նրա պաշտպան Գ.Սարգսյանի, ամբաստանյալ Սամվել Սերգեյի Խաչատրյանի և նրա պաշտպան Ա.Մուխսիկարոյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2010 թվականի հունիսի 5-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի (այսուհետ նաև՝ ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ) քննության վարչության 3-րդ բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 69104810 քրեական գործը՝ Աղվան Վարդանյանի, Աշոտ Մելիքյանի և Հակոբ Համբարձումյանի կողմից նախնական համաձայնությամբ, իրացման նպատակով առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց ձեռք բերելու և պահելու փաստի առթիվ:

2010 թվականի հունիսի 15-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննության վարչության 3-րդ բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 69105010 քրեական գործը՝ Աշոտ Առաքելյանի կողմից իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց ձեռք բերելու և պահելու փաստի առթիվ, և միացվել է թիվ 69104810 քրեական գործին:

Նախաքննության մարմնի 2011 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ Սամվել Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով:

2011 թվականի ապրիլի 27-ի որոշումներով Սիրաժ Ղամբարյանը և Սամվել Մկրտումյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով:

2011 թվականի ապրիլի 27-ի որոշումներով Արմեն Բաղդասարյանը, Հակոբ Համբարձումյանը, Արա Ռոստոմյանը, Արմեն Լեպեջյանը, իսկ 2011 թվականի ապրիլի 28-ի որոշումներով Աղվան Վարդանյանը և Աշոտ Առաքելյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով:

2011 թվականի մայիսի 18-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճռով՝

1) Ս.Ղամբարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազա-

տազրկման՝ 7 (յոթ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ պատիժները լրիվ գումարելու միջոցով, Ս. Ղամբարյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2) Ա.Բաղդասարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման՝ 9 (ինը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Բաղդասարյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3) Ս.Մկրտումյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման՝ 7 (յոթ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ պատիժները լրիվ գումարելու միջոցով, Ս.Մկրտումյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 (յոթ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

4) Հ.Համբարձումյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման՝ 9 (ինը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Հ.Համբարձումյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար)

ՀՀ դրամի չափով: Նշանակված պատժի ժամկետի մեջ հաշվակցվել է նախնական կալանքի տակ գտնվելու ժամկետը, և նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 9 (ինը) տարի 11 (տասնմեկ) ամիս 26 (քսանվեց) օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Հ.Համբարձումյանի նկատմամբ պատժի կրման ընթացքում սահմանվել է նյարդահոգեբույժի հսկողություն:

5) Ա.Ռոստոմյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման՝ 7 (յոթ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Ռոստոմյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 8 (ութ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

6) Ա.Վարդանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման՝ 9 (ինը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Վարդանյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

7) Ա.Առաքելյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման՝ 9 (ինը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ա.Առաքելյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագ-

րավման, և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

8) Ա.Լեպեջյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման՝ 9 (ինը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն զումարելու միջոցով, Ա.Լեպեջյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

9) Ս.Խաչատրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման՝ 10 (տասը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման՝ 8 (ութ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն զումարելու միջոցով, Ս.Խաչատրյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 12 (տասներկու) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, և տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3. Ամբաստանյալներ Ս.Ղամբարյանի, Ա.Բաղդասարյանի և նրանց պաշտպան Վ.Գրիգորյանի, ամբաստանյալներ Ա.Ռոստոմյանի, Հ.Համբարձումյանի, Ս.Սկրտումյանի պաշտպան Կ.Քամայանի, ամբաստանյալ Ս.Խաչատրյանի պաշտպան Վ.Նիկողոսյանի, ամբաստանյալ Ա.Լեպեջյանի պաշտպան Գ.Սարգսյանի, ամբաստանյալ Ա.Վարդանյանի պաշտպան Վ.Խաչատրյանի, ամբաստանյալ Ա.Առաքելյանի պաշտպան Գ.Պապոյանի վերաբնիչ բողոքների հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ ամբաստանյալ Հ.Համբարձումյանի պաշտպան Կ.Քամայանի վերաքննիչ բողոքը քակարարել է մասնակիորեն:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճիռը Հ.Համբարձումյանի նկատմամբ նշանակված պատժի մասով փոփոխվել է: Հ.Համբարձումյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 266-րդ հոդվածի 4-րդ մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նա դատապարտվել է ազատազրկման՝ 8 (ութ) տարի ժամ-

կետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով՝ տուգանքի՝ 100.000 ՀՀ դրամի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Հ.Համբարձումյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 9 (ինը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և տուգանք՝ 100.000 ՀՀ դրամի չափով: Նշանակված պատիժի ժամկետի մեջ հաշվակցվել է նրա նախնական կալանքի տակ գտնվելու ժամկետը, և Հ.Համբարձումյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 8 (ութ) տարի 11 (տասնմեկ) ամիս 26 (քսանվեց) օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և տուգանք՝ 100.000 ՀՀ դրամի չափով: Հ.Համբարձումյանի նկատմամբ պատիժի կրման ընթացքում սահմանվել է նյարդահոգեբույժի հսկողություն:

Մյուս ամբաստանյալների մասով ներկայացված վերաքննիչ բողոքները մերժվել են, և նրանց վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճիռը թողնվել է անփոփոխ:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշման դեմ վճարելի բողոքներ են բերել ամբաստանյալներ Ս.Ղամբարյանի, Ա.Բաղդասարյանի պաշտպան Վ.Գրիգորյանը, ամբաստանյալներ Ա.Ռոստոմյանի, Հ.Համբարձումյանի, Ս.Սկրտումյանի պաշտպան Կ.Քամայանը, ամբաստանյալ Ա.Վարդանյանի պաշտպան Ա.Մուխսիկարոյանը, ամբաստանյալ Ա.Առաքելյանի պաշտպան Գ.Պապոյանը, ամբաստանյալ Ա.Լեպեջյանը և նրա պաշտպան Գ.Սարդարյանը, ամբաստանյալ Ս.Խաչատրյանը և նրա պաշտպան Ա.Մուխսիկարոյանը և նախկին պաշտպան Վ.Նիկողոսյանը:

2014 թվականի մարտի 7-ի որոշմամբ Վճարելի դատարանն ամբաստանյալներ Ս.Ղամբարյանի և Ա.Բաղդասարյանի պաշտպան Վ.Գրիգորյանի, ամբաստանյալներ Ա.Ռոստոմյանի, Հ.Համբարձումյանի և Ս.Սկրտումյանի պաշտպան Կ.Քամայանի, ամբաստանյալ Ա.Վարդանյանի պաշտպան Ա.Մուխսիկարոյանի, ամբաստանյալ Ա.Առաքելյանի պաշտպան Գ.Պապոյանի, ամբաստանյալ Ա.Լեպեջյանի և նրա պաշտպան Գ.Սարդարյանի, ամբաստանյալ Ս.Խաչատրյանի և նրա պաշտպան Ա.Մուխսիկարոյանի վճարելի բողոքներն ընդունել է վարույթ, իսկ ամբաստանյալ Ս.Խաչատրյանի նախկին պաշտպան Վ.Նիկողոսյանի վճարելի բողոքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն թողել է առանց քննության:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքների պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի կողմից ամբաստանյալներ Ս.Ղամբարյանին, Ա.Բաղդասարյանին, Ա.Ռոստոմյանին, Հ.Համբարձումյանին, Ս.Սկր-

տումյանին, Ա.Վարդանյանին, Ա.Առաքելյանին, Ա.Լեպեջյանին, Ս.Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ՝

5.1. Մ.Ղամբարյանը, աշխատելով Երևան քաղաքի Արցախի 4-րդ նրբանցք 10ա հասցեում գտնվող «Քիմտեխ գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունում որպես լաբորատորիայի վարիչ, իրացման նպատակով առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց ապօրինի պատրաստելու շուրջ նախնական համաձայնության է եկել նույն ընկերության տնօրեն Ս.Խաչատրյանի, փորձարարական արտադրության պետ Ա.Ռոստոմյանի և ընկերության չգրանցված աշխատակից Ա.Լեպեջյանի հետ և 2007 թվականի դեկտեմբերին ընկերության օժանդակ մասնաշենքում Ա.Ռոստոմյանի և Ա.Լեպեջյանի հետ ապօրինի պատրաստել «ամֆետամին» տեսակի թմրամիջոց պատրաստելու պրեկուրսոր հանդիսացող «1-ֆենիլ-2-պրոպանոն» (կետոն, մեթիլբենզիլկետոն): Ստացված նյութը խառնելով մեթանոլ սպիրտի հետ, ակտիվացնելով նիկել ռենեյի կատալիզատորով՝ հարստացրել են ամոնյակի, իսկ ապա ջրածնի գազով, որից հետո ստացված ռեակցիոն խառնուրդը կատալիզատորից անջատելու, ապա մեթանոլը թորելու եղանակով ապօրինի պատրաստել են առանձնապես խոշոր չափի՝ մոտ 180 կգ «ամֆետամին» տեսակի թմրամիջոց՝ հիմքի տեսքով:

Մ.Ղամբարյանի նկատմամբ 2011 թվականի մարտի 25-ին խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

Նախաքննության և դատաքննության ընթացքում Մ.Ղամբարյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ի թերթ 266-268, հատոր 5-ի թերթ 200-203, հատոր 6-ի թերթ 7-9, 71, 259, հատոր 12-ի թերթ 49-50, հատոր 14-ի թերթ 127-128):

5.2. Ա.Բաղդասարյանը Աշոտ Մելիքյանի կողմից հրավիրված քիմիկոս Ս.Սկրտումյանի և բանվորական աշխատանքներ կատարելու համար ներգրավված այլ աշխատակիցների հետ 2009 թվականի հոկտեմբերից մինչև 2010 թվականի հունիսի 5-ն ընկած ժամանակահատվածում՝ ապօրինի պատրաստել են պրեկուրսոր հանդիսացող՝ շուրջ 800 կգ 95 տոկոսանոց մաքրությամբ «մեթիլբենզիլկետոն», որից 80 կգ-ը (1 կգ-ը 400 ԱՄՆ դոլարով վաճառելով) ապօրինի իրացրել է Ա.Ռոստոմյանին, իսկ 515 կգ-ը վաճառելով՝ ապօրինի իրացրել է քննությամբ չպարզված այլ անձանց:

2010 թվականի մայիսին Ա.Բաղդասարյանը Ա.Մելիքյանից ապօրինի ձեռք է բերել կետոնից պատրաստված թմրամիջոցի՝ առանձնապես խոշոր չափից մոտ 5 գրամ «ամֆետամին» աղի նմուշ: Այնուհետև, 2010 թվականի մայիսի 19-ին Երևան քաղաքի Նոյ թաղամասում Ա.Բաղդասարյանը Հ.Համբարձումյանին է տվել իրացվելիք թմրամիջոցի նմուշը գնորդ Ա.Վարդանյանին փոխանցելու համար, սակայն հանցագործությունն ավարտին չի հասցվել, այսինքն՝ առանձնապես խոշոր չափի՝ 15 կգ «ամֆետամին» տեսակի թմրամիջոց չի իրացվել հանցավորների կամքից անկախ հանգամանքներում, քանի որ 2010 թվականի մայիսի 21-ին Երևան քաղաքի Սախարովի հրապարակում տեղի ունեցած հանդիպման ընթացքում գնորդ Ա.Վարդանյանը, պայմանա-

վորվածության համաձայն, Ա.Մելիքյանին և Հ.Համբարձումյանին չի վճարել իրացվելիք բնրամիջոցի արժեքը կազմող 22.500 ԱՄՆ դոլար գումարը:

2010 թվականի մայիսի վերջերին Ա.Բաղդասարյանը Ա.Ռոստոմյանի հետ «Բարոնի» ՍՊԸ-ում արտադրված կետոնից տարբեր խմբաքանակներով՝ 150 կգ, փոխադրել է իր մոտ, որը Ա.Ռոստոմյանի հետ միասին խառնել է մեթամոլ սպիրտի հետ, ակտիվացրել նիկել ռենեյի կատալիզատորով, ապա այդ ամենը հարստացրել ամոնյակի, իսկ այնուհետև ջրածնի գազով և ստացել առավել քիչ տոկոսային հարաբերությամբ առանձնապես խոշոր չափի՝ ընդհանուր 21 կգ 433,677 գրամ «ամֆետամինի» պարունակությամբ հիմք: Չբավարարվելով ստացված արդյունքից՝ Ա.Բաղդասարյանը, 2010 թվականի հունիսի 4-ի լույս 5-ի գիշերը «ամֆետամինի» հիմքի վերը նշված ռեակցիոն խառնուրդից թորման եղանակով ավելի բարձր տոկոսային բաղադրությամբ «ամֆետամինի» հիմք ստանալու նպատակով նախնական համաձայնության է եկել Հ.Համբարձումյանի, Ա.Մելիքյանի, իսկ ապա Ս.Սկրտումյանի հետ, և վերջիններիս կողմից լաբորատորիա տեղափոխած սաքավորումներով թորելու եղանակով ռեակցիոն խառնուրդի մի մասից ապօրինի պատրաստել են առանձնապես խոշոր չափի՝ 6 կգ 392 գրամ «ամֆետամինի» պարունակությամբ հիմք: Թմրամիջոցի ընդհանուր՝ 21 կգ 433,677 գրամ քանակությունը 2010 թվականի հունիսի 5-ին հայտնաբերվել և առգրավվել է նշված լաբորատորիայի զննության ժամանակ:

Ա.Բաղդասարյանը ձերբակալվել է 2010 թվականի հունիսի 5-ին:

Նախաքննության ընթացքում Ա.Բաղդասարյանն առաջադրված մեղադրանքներում իրեն մեղավոր է ճանաչել, սակայն դատաքննության ժամանակ հայտարարել է, որ անմեղ է (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ի թերթ 141-143, 171, հատոր 4-ի թերթ 35-38, 118-125, հատոր 5-ի թերթ 78-79, 178-179, հատոր 6-ի թերթ 58, 135, 189, 224-225, 239, հատոր 12-ի թերթ 49-50, հատոր 14-ի թերթ 127-128):

5.3. Ս.Սկրտումյանը Հ.Համբարձումյանի, Ա.Մելիքյանի և բանվորական աշխատանքներ կատարելու համար ներգրավված այլ աշխատակիցների հետ 2009 թվականի հոկտեմբերից մինչև 2010 թվականի հունիսի 5-ն ընկած ժամանակահատվածում Ա.Բաղդասարյանի միջոցներով ձեռք բերված համապատասխան նյութերով ապօրինի պատրաստել են պրեկուրսոր հանդիսացող՝ շուրջ 800 կգ 95 տոկոսանոց մաքրությամբ մեթիլբենզիլետոն:

2010 թվականի հունիսի 4-ին Ս.Սկրտումյանը Ա.Բաղդասարյանի հետ գնացել է վերջինիս և Ա.Ռոստոմյանի կողմից Կոտայքի մարզի Առինջ գյուղի Տանձանոց 3 փողոցի թիվ 12 կիսակառույց տան հողամասում կառուցած «ամֆետամինի» պատրաստման լաբորատորիա, որտեղ Ա.Բաղդասարյանի հետ միասին հունիսի 4-ի լույս 5-ի գիշերը թորելու եղանակով կրկին ապօրինի պատրաստել են առանձնապես խոշոր չափի՝ 6 կգ 392 գրամ «ամֆետամինի» պարունակությամբ հիմք, որը 2010 թվականի հունիսի 5-ին հայտնաբերվել և առգրավվել է նշված լաբորատորիայի զննության ժամանակ:

Ս.Սկրտումյանի նկատմամբ 2011 թվականի մարտի 24-ին խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

Ս.Սկրտումյանը նախաքննության ժամանակ տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ և առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչել, իսկ դատաքննության ընթացքում իր մեղքն ընդունել է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ի թերթ 202-206, հատոր 3-ի թերթ 241-243, հատոր 4-ի թերթ 75-76, հատոր 5-ի թերթ 91, 285-287, հատոր 6-ի թերթ 67, 245-246, հատոր 12-ի թերթ 49-50, հատոր 14-ի թերթ 127-128):

5.4. Հ.Համբարձումյանը Ա.Մելիքյանի գլխավորությամբ սարքավորումները մոնտաժելուց հետո վերջինիս կողմից հրավիրված քիմիկոս Ս.Սկրտումյանի և բանվորական աշխատանքներ կատարելու համար ներգրավված այլ աշխատակիցների հետ միասին 2009 թվականի հոկտեմբերից մինչև 2010 թվականի հունիսի 5-ն ընկած ժամանակահատվածում Ա.Բաղդասարյանի միջոցներով առանց պատշաճ հաշվառման ձեռք բերված համապատասխան նյութերով ապօրինի պատրաստել են պրեկուրսոր հանդիսացող՝ շուրջ 800 կգ 95 տոկոսանոց մաքրությամբ մեթիլբենզիլկետոն, որի ապօրինի իրացումները կատարել են Ա.Բաղդասարյանը, Ա.Մելիքյանը:

2010 թվականի մայիսի 19-ին Հ.Համբարձումյանը գնորդ Ա.Վարդանյանին փոխանցելու նպատակով Երևան քաղաքի Նոյ թաղամասում Ա.Բաղդասարյանից ապօրինի ձեռք է բերել իրացվելիք թմրամիջոցի առանձնապես խոշոր չափի՝ մոտ 5 գրամ «ամֆետամին» աղի մուշը, որից հետո նույն օրը Ա.Մելիքյանի և Ա.Վարդանյանի հետ ունեցած պայմանավորվածության համաձայն Երևան քաղաքի Բագրատունյաց 70/22 հասցեում գտնվող շենքի մոտ այն ապօրինի իրացրել է Ա.Վարդանյանին: 2010 թվականի մայիսի 21-ին Երևան քաղաքի Սախարովի հրապարակում Հ.Համբարձումյանը և Ա.Մելիքյանը իրացվելիք թմրամիջոցի ամբողջ գումարն Ա.Վարդանյանից ստանալու համար հանդիպել են նրան, սակայն հանցագործությունն ավարտին չեն հասցրել, այսինքն՝ առանձնապես խոշոր չափի՝ 15 կգ «ամֆետամին» տեսակի թմրամիջոց չեն պատրաստել և չեն իրացրել՝ իրենց կամքից անկախ հանգամանքներով, քանի որ տեղի ունեցած հանդիպման ընթացքում գնորդ Ա.Վարդանյանը, պայմանավորվածության համաձայն, Ա.Մելիքյանին և Հ.Համբարձումյանին չի վճարել իրացվելիք թմրամիջոցի արժեքը կազմող 22.500 ԱՄՆ դոլար գումարը:

2010 թվականի հունիսի 4-ին Ա.Բաղդասարյանի, Ա.Մելիքյանի, այնուհետև Ս.Սկրտումյանի հետ իրենց կողմից լաբորատորիա տեղափոխած սարքավորումներով թորելու եղանակով ապօրինի պատրաստել են առանձնապես խոշոր չափի՝ 6 կգ 392 գրամ «ամֆետամինի» պարունակությամբ հիմք, որը 2010 թվականի հունիսի 5-ին հայտնաբերվել և առգրավվել է լաբորատորիայի գնմության ժամանակ:

Հ.Համբարձումյանն արգելանքի է վերցվել 2010 թվականի հունիսի 5-ին:

Նախաքննության ընթացքում Հ.Համբարձումյանն իրեն մեղավոր է ճանաչել և տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ, իսկ դատաքննության ժամանակ իրեն մեղավոր չի ճանաչել (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ի թերթ 134-136, 179-180, հատոր 3-ի թերթ 203-206, հատոր 4-ի թերթ 101, 158-159, հատոր 5-ի թերթ 104-105, 175, հատոր 6-ի թերթ 252, հատոր 12-ի թերթ 49-50, հատոր 14-ի թերթ 127-128):

5.5. Ա.Ռոստոմյանը, աշխատելով Երևան քաղաքի Արցախի 4-րդ նրբանցք 10ա հասցեում գտնվող «Զինտելս գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունում որպես փորձարարական արտադրության պետ, իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց ապօրինի պատրաստելու շուրջ նախնական համաձայնության է եկել նույն ընկերության տնօրեն Ս.Խաչատրյանի, լաբորատորիայի վարիչ Ս.Ղամբարյանի և ընկերության չգրանցված աշխատակից Ա.Լեպեջյանի հետ և հավելյալ վարձատրություն ստանալու պայմանով 2007 թվականի դեկտեմբեր ամսին Ս.Ղամբարյանի և Ա.Լեպեջյանի հետ ապօրինի պատրաստել են «ամֆետամին» տեսակի թմրամիջոց պատրաստելու պրեկուրսոր հանդիսացող «1-ֆենիլ-2-պրոպանոն» (կետոն, մեթիլբենզիլկետոն): Ստացված նյութը մեթանոլ սպիրտի հետ խառնելով, նիկել ռենեյի կատալիզատորով ակտիվացնելով հարստացրել են ամոնյակի, այնուհետև ջրածնի գազով, որից հետո ստացված ռեակցիոն խառնուրդը կատալիզատորից անջատելու, ապա մեթանոլը թորելու եղանակով ապօրինի պատրաստել են առանձնապես խոշոր չափի՝ մոտ 180 կգ «ամֆետամին» տեսակի թմրամիջոց՝ հիմքի տեսքով:

2009 թվականի վերջերին Ա.Ռոստոմյանը, տեղեկանալով Ա.Բաղդասարյանից կողմից «ամֆետամին» տեսակի թմրամիջոցի պատրաստման պրեկուրսոր հանդիսացող «1-ֆենիլ-2-պրոպանոն» (կետոն, մեթիլբենզիլկետոն) վաճառելու մտադրության մասին, այն գնելու առաջարկությամբ դիմել է Ա.Լեպեջյանին և նրա համաձայնությունը ստանալուց հետո, պայմանավորվածության համաձայն, Երևան քաղաքի Պարոնյան 1 հասցեում գտնվող շենքի մոտ երկու դեպքով չափազանց փոքր օրերին, կրկին Ա.Բաղդասարյանից մեկ կգ-ը 400 ԱՄՆ դոլարով գնելու եղանակով ապօրինի ձեռք է բերել ընդհանուր՝ մոտ 80 կգ «կետոն», որը նույն տեղում մեկ կգ-ը 450 ԱՄՆ դոլարով կրկին ապօրինի իրացրել է Ա.Լեպեջյանին:

2010 թվականի գարնանը Ա.Ռոստոմյանը իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց պատրաստելու համար Ա.Բաղդասարյանի կողմից վարձակալած Երևան քաղաքի Կ.Ուլենցու 66ա շենքի 67 բնակարանում, Ա.Մելիքյանի կողմից Ա.Բաղդասարյանին տրված ռեակցիոն խառնուրդն աղաթթվով վերամշակելով, փորձել է կրկին ապօրինի պատրաստել «ամֆետամին» տեսակի թմրամիջոցի աղ, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չեն հասցրել, քանի որ ռեակցիոն խառնուրդն իրականում Ա.Մելիքյանի կողմից ձևացված է եղել և իր մեջ «ամֆետամին» չի պարունակել:

Ա.Ռոստոմյանը իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց պատրաստելու համար Ա.Բաղդասարյանի հետ 2010 թվականի մայիսին Կոտայքի մարզի Առինջ գյուղում վարձակալել է կիսակառույց տուն, որի հողամասում կառուցել են լաբորատորիա, անհրաժեշտ սարքավորումներով կահավորել այն, որտեղ մայիսի վերջերին Ա.Բաղդասարյանի հետ վերջինիս կողմից «Բարոնի գիտաարտադրական ընկերություն» ՍՊԸ-ում արտադրված և տարբեր խմբաքանակներով լաբորատորիա ապօրինի փոխադրված 150 կգ «կետոնից» ստացել են առավել քիչ տոկոսային հարաբերությամբ առանձնապես խոշոր չափի՝ ընդհանուր 21 կգ 433,677 գրամ «ամֆետամինի» պարունակությամբ հիմք: Թմրամիջոցի հիշյալ քանակությունը 2010 թվականի հունիսի 5-ին հայտնաբերվել և առգրավվել է նշված լաբորատորիայի զննության ժամանակ:

Ա.Ռոստոմյանի նկատմամբ 2011 թվականի մարտի 25-ին խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

Նախաքննության ժամանակ տված ցուցմունքներում Ա.Ռոստոմյանն իրեն մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով, իսկ դատաքննության ժամանակ ընդունել իր մեղքը մեղսագրվող հանցանքներում և հրաժարվել է ցուցմունքներ տալուց (տես քրեական գործ, հատոր 3-ի թերթ 77-81, հատոր 4-ի թերթ 90-92, 148-149, հատոր 6-ի թերթ 49-53, 63, 144, 198, 265, հատոր 12-ի թերթ 49-50, հատոր 14-ի թերթ 127-128):

5.6. Ա.Վարդանյանը 2008 թվականի սկզբներին հետագայում ապօրինի իրացնելու նպատակով որպես իրացվելիք պրեկուրսորի նմուշ Ա.Առաքելյանից անհատույց, ապօրինի ձեռք է բերել 14 լիտր «քացախաթթվի անհիդրիդ», որը պահել է Երևան քաղաքի Հարավ-Արևմտյան Բ-2 քաղամասի 93 շենքի թիվ 35 չբնակեցված բնակարանում, որտեղից էլ 2010 թվականի հունիսի 8-ին կամուրջի մերկայացրել է:

2010 թվականի սկզբներին Ա.Վարդանյանը, «ամֆետամինի» պատրաստման պրեկուրսոր հանդիսացող «1-ֆենիլ-2-պրոպանոնի» (կետոն, մեթիլբենզիլկետոն) ապօրինի ձեռք բերելու և այն Ա.Լեպեջյանին իրացնելու շուրջ նախնական համաձայնության գալով Ա.Առաքելյանի հետ, նույն ժամանակահատվածում Ա.Մելիքյանից մեկ կգ-ը 270 ԱՄՆ դոլարով, տարբեր չափաբաժիններով, մաս-մաս ապօրինի ձեռք են բերել 75 կգ «կետոն», որից 55 կգ-ը մեկ կգ-ը 400 ԱՄՆ դոլարով վաճառելով, Երևան քաղաքի Բագրատունյաց 14 շենքի մոտ կրկին ապօրինի իրացրել են Ա.Լեպեջյանին, իսկ մնացած 20 կգ-ը Ա.Մելիքյանի պահանջով ոչնչացրել են:

Ա.Վարդանյանը 2010 թվականի մայիսի 10-ին որպես հետագայում իրացվելիք թմրամիջոցի նմուշ Ա.Մելիքյանից անհատույց, իրացման նպատակով ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափի՝ 5,7 գրամ «ամֆետամինի» աղ, որը նույն օրը Երևան քաղաքի Ներսիսյան փողոցում կրկին ապօրինի իրացրել է Ա.Մանուչարյանին, որպեսզի հետագայում նրան իրացնի նշված թմրամիջոցից առանձնապես խոշոր չափով՝ 15 կգ՝ մեկ կգ-ը 2200 ԱՄՆ դոլարով:

2010 թվականի մայիսին Ա.Վարդանյանը գործով դեռևս չպարզված ունի Մաջիթին առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց իրացնելու նպատակով նախնական համաձայնության է եկել Ա.Առաքելյանի հետ և 2010 թվականի մայիսի 19-ին Երևան քաղաքի Բագրատունյաց 70/22 հասցեում գտնվող շենքի մոտ հանդիպել է Ա.Մելիքյանի կողմից ուղարկված Հ.Համբարձումյանին, ումից կրկին իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել իրացվելիք թմրամիջոցից առանձնապես խոշոր չափի՝ մոտ 5 գրամ «ամֆետամինի» աղի նմուշ, որն Անգլիական այգում Ա.Առաքելյանի հետ ցույց են տվել ունի Մաջիթին: Սակայն իրենց կամքից անկախ հանգամանքով հանցագործությունը՝ Ա.Առաքելյանի հետ նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց իրացնելը, չեն կարողացել հասցնել ավարտին, քանի որ Մաջիթը հայտնել է, որ իր ուզածն այդ թմրամիջոցը չէ, ինչից հետո նմուշը թափել են այգու աղբարկղերից մեկի մեջ:

Ա.Մանուչարյանի հետ սկսած թմրամիջոցի իրացման գործարքն ավարտին հասցնելու համար Ա.Վարդանյանը 2010 թվականի մայիսի 21-ին, պայմանավորվածության համաձայն, Երևան քաղաքի Սախարովի հրապարակում հանդիպել է Ա.Մելիքյանի և Հ.Համբարձումյանի հետ, որոնց հայտնել է, որ 15 կգ «ամֆետամինի» գնորդը պատրաստ է դրա դիմաց պահանջվող գումարը՝ 1 կգ-ի դիմաց 1.500 ԱՄՆ դոլարը, վճարել թմրամիջոցը ստանալուց հետո, ինչին Ա.Մելիքյանը առարկել է, և Ա.Վարդանյանն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել հանցագործությունը՝ առանձնապես խոշոր չափի՝ 15 կգ «ամֆետամին» տեսակի թմրամիջոցի իրացումը, հասցնել ավարտին:

Ա.Մանուչարյանին խոստացած 15 կգ «ամֆետամին» տեսակի թմրամիջոցը հայթայթելու համար Ա.Վարդանյանը նույն օրը դիմել է Ա.Առաքելյանին: Ա.Առաքելյանը Երևան քաղաքի Արեշ թաղամասում «Քիմտելս Գ-ՀԻ» ՓԲԸ տնօրեն Ս.Խաչատրյանից և Ա.Լեպեջյանից որպես իրացվելիք թմրամիջոցի նմուշ ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափի՝ 31,7084 գրամ «ամֆետամին» և նույն պահին հանձնել է Ա.Վարդանյանին: Սակայն Երևան քաղաքի Դավիթ Բեկ փողոցում գործող «Մարմարի աշխարհ» խանութի մոտ իրացվելիք թմրամիջոցի նմուշը՝ առանձնապես խոշոր չափի՝ 31,7 գրամ «ամֆետամինի» քանակությունը, Ա.Մանուչարյանին կրկին իրացնելուց հետո հանցագործությունը՝ Ա.Առաքելյանի հետ նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափի՝ 15 կգ «ամֆետամին» տեսակի թմրամիջոց իրացնելը, իրենց կամքից անկախ հանգամանքներով չեն կարողացել հասցնել ավարտին, քանի որ Ա.Առաքելյանը հասկացել է, որ գտնվում են իրավապահ մարմինների տեսադաշտում:

Ա.Վարդանյանն արգելանքի է վերցվել 2010 թվականի հունիսի 5-ին:

Նախաքննության և դատաքննության ժամանակ տված ցուցմունքներում Ա.Վարդանյանն իրեն մեղավոր չի ճանաչել (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ի թերթ 124-127, 175, 218-221, հատոր 3-ի թերթ 245-246, հատոր 5-ի թերթ 176-177, հատոր 6-ի թերթ 280-282, հատոր 12-ի թերթ 49-50, հատոր 14-ի թերթ 127-128):

5.7. Ա.Առաքելյանը 2008 թվականի սկզբներին Իրանի Իսլամական Հանրապետությունից սահմանված կարգով Հայաստան է ներկրել թմրամիջոցների պատրաստման պրեկուրսոր հանդիսացող՝ 9.520 կգ «քացախաթթվի անհիդրիդ», որից հետագայում ապօրինի իրացնելու նպատակով որպես իրացվելիք պրեկուրսորի նմուշ մոտ 14 լիտր ապօրինի իրացրել է Ա.Վարդանյանին: «Քացախաթթվի անհիդրիդի» վերը նշված քանակությունը 2010 թվականի հունիսի 8-ին Ա.Վարդանյանը կանոնի ներկայացրել է Երևան քաղաքի Հարավ-Արևմտյան Բ-2 թաղամասի 93 շենքի թիվ 35 չբնակեցված բնակարանից:

2010 թվականի ապրիլ ամսին Ա.Առաքելյանը, առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց և «էֆեդրին» տեսակի հոգեմետ նյութ իրացնելու շուրջ նախնական համաձայնության գալով «Քիմտեխ գիտահետազոտական ընկերություն» ՓԲԸ-ի տնօրեն Ս.Խաչատրյանի և Ա.Լեպեջյանի հետ, ընկերության օժանդակ մասնաշենքում նախապես այդ նպատակով տեղադրված հաբավորման սարքավորումներով Ա.Լեպեջյանի կողմից պատրաստած առանձնապես խոշոր չափի՝ 1 կգ 500 գրամ «ամֆետամին» տեսակի թմրամիջոցի և նույն քանակության հոգեմետ նյութ հանդիսացող՝ չպարզված հանգամանքներում ձեռք բերված «էֆեդրինի», ինչպես նաև այլ նյութերի օգտագործմամբ, դրանց հաբավորմամբ ապօրինի պատրաստել են առանձնապես խոշոր չափերի՝ մոտ 52 կգ՝ ընդհանուր մոտ 150.000 «կապտագուն» դեղահատեր, որոնք քննությանը չպարզված հանգամանքներում Ս.Խաչատրյանն ու Ա.Լեպեջյանը իրացրել են արտերկրացիներ ոմն Խալոյին և Գային:

2010 թվականի սկզբներին Ա.Առաքելյանը, Ա.Լեպեջյանից տեղեկանալով «ամֆետամինի» ելանյութի՝ պրեկուրսոր հանդիսացող «1-ֆենիլ-2-պրոպանոն» (կետոն, մեթիլբենզիլկետոն) ձեռք բերելու մտադրության, նաև այն մասին, որ դրա արտադրությանը «Բարոնի» ՍՊԸ-ում զբաղվում է Ա.Մելիքյանը, ապօրինի «կետոն» ձեռք բերելու և իրացնելու շուրջ նախնական համաձայնության է եկել Ա.Վարդանյանի հետ և նույն ժամանակահատվածում նրա միջոցով Ա.Մելիքյանից մեկ կգ-ը 270 ԱՄՆ դոլարով գնելով՝ ապօրինի ձեռք են բերել մոտ 75 կգ «կետոն», որից 55 կգ-ը՝ մեկ կգ-ը 400 ԱՄՆ դոլարով, Երևան քաղաքի Բագրատունյաց 14 շենքի մոտ կրկին իրացրել են Ա.Լեպեջյանին, իսկ մնացած 20 կգ-ը Ա.Մելիքյանի պահանջով Ա.Վարդանյանը թափել է:

Այնուհետև, 2010 թվականի մայիսին Ա.Առաքելյանը գործով դեռևս չպարզված նույն Մաջիթին առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց իրացնելու շուրջ նախնական համաձայնության է եկել Ա.Վարդանյանի հետ: Վերջինս իրացվելիք թմրամիջոցի նմուշը ձեռք բերելու և գնորդ Մաջիթին ցույց տալու համար դիմել է Ա.Մելիքյանին: 2010 թվականի մայիսի 19-ին Ա.Վարդանյանը Երևան քաղաքի Բագրատունյաց 70/22 հասցեում գտնվող շենքի մոտ հանդիպել է Ա.Մելիքյանի կողմից ուղարկված Հ.Համբարձումյանին, ումից կրկին իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել իրացվելիք թմրամիջոցի առանձնապես խոշոր չափի՝ մոտ 5 գրամ «ամֆետամինի» արդի նմուշը, որը Անգլիական այգում Ա.Առաքելյանի հետ միասին ցույց են տվել ոմն Մաջիթին: Սակայն իրենց կամքից անկախ հանգամանքով հանցա-

գործությունը՝ Ա.Վարդանյանի հետ նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց իրացնելը, չեն կարողացել ավարտին հասցնել, քանի որ Մաջիթը հայտնել է, որ իր ուզածն այդ թմրամիջոցը չէ, ինչից հետո նմուշը թափել են այգու աղբարկղներից մեկի մեջ:

2010 թվականի մայիսի 21-ին Ա.Առաքելյանը, 15 կգ «ամֆետամին» տեսակի թմրամիջոց իրացնելու շուրջ նախնական համաձայնության գալով Ա.Վարդանյանի հետ, պայմանավորվել է այն ձեռք բերել «Քիմտեխ գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ից: Ա.Առաքելյանը Երևան քաղաքի Արեշ քաղաձառում «Քիմտեխ ԳՀԻ» ՓԲԸ տնօրեն Ս.Խաչատրյանից և Ա.Լեպեջյանից որպես իրացվելիք թմրամիջոցի նմուշ, ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափի՝ 31,7084 գրամ «ամֆետամին», որը գնորդ Ա.Մանուչարյանին իրացնելու համար նույն պահին հանձնել է Ա.Վարդանյանին: Վերջինիս կողմից Երևան քաղաքի Դավիթ Բեկ փողոցում գործող «Մարմարի աշխարհ» խանութի մոտ իրացվելիք թմրամիջոցի նմուշը՝ առանձնապես խոշոր չափի՝ 31,7 գրամ «ամֆետամինի» քանակությունը, Ա.Մանուչարյանին կրկին իրացնելուց հետո հանցագործությունը՝ Ա.Վարդանյանի հետ նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափի՝ 15 կգ «ամֆետամին» տեսակի թմրամիջոց իրացնելը, իրենց կամքից անկախ հանգամանքներով չեն կարողացել հասցնել ավարտին, քանի որ Ա.Առաքելյանը հասկացել է, որ գտնվում են իրավապահ մարմինների տեսադաշտում:

Ա.Առաքելյանի նկատմամբ 2010 թվականի հունիսի 15-ին խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

Ա.Առաքելյանը նախաքննության ժամանակ իրեն մեղավոր է ճանաչել մեղսագրվող արարքներում, սակայն դատաքննության ընթացքում մեղքը չի ընդունել (տես քրեական գործ, հատոր 1-ի թերթ 295-301, հատոր 4-ի թերթ 247-250, 280-282, հատոր 5-ի թերթ 13-14, 211, հատոր 6-ի թերթ 101, 170, 274-275, հատոր 12-ի թերթ 49-50, հատոր 14-ի թերթ 127-128):

5.8. Ա.Լեպեջյանը, աշխատելով «Քիմտեխ գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ում, 2007 թվականի վերջերին «ամֆետամինի» ելանյութի՝ պրեկուրսոր հանդիսացող կետոնի և դրանից իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց պատրաստելու շուրջ նախնական համաձայնության է եկել ընկերության տնօրեն Ս.Խաչատրյանի, լաբորատորիայի վարիչ Ս.Ղամբարյանի և փորձարարական արտադրության պետ Ա.Ռոստոմյանի հետ, և 2007 թվականի դեկտեմբերից մինչև 2008 թվականի հուլիսի 14-ն ընկած ժամանակահատվածում Ս.Ղամբարյանի և Ա.Ռոստոմյանի հետ միասին ընկերության օժանդակ մասնաշենքում ապօրինի պատրաստել են «ամֆետամինի» պատրաստման համար պրեկուրսոր հանդիսացող «1-ֆենիլ-2-պրոպանոն» (կետոն, մեթիլբենզիլկետոն), որն էլ մեթանոլ սպիրտի հետ խառնելով, նիկել ռենեյի կատալիզատորով ակտիվացնելով, ապա այդ ամենը ամոնյակի, իսկ այնուհետև ջրածնի գազով հարստացնելուց հետո, ստացված ռեակցիոն խառնուրդը կատալիզատորից անջատելու և մեթանոլը թորելու եղանակով ապօրինի պատրաստել են առանձնապես խոշոր չափի՝ 180 կգ «ամֆետամին» տեսակի թմրամիջոցի հիմք:

2008 թվականի գարնանը Ա.Ռոստոմյանի և Ս.Ղամբարյանի հեռանալուց հետո Ա.Լեպեջյանը, տնօրեն Ս.Խաչատրյանի հետ ունեցած նախնական պայմանավորվածության համաձայն, շարունակել է ընկերություն ներկրված նատրիումական աղերի մնացած քանակությունից նույն եղանակով պատրաստել պրեկուրսոր, իսկ դրանից՝ առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց, որոնք իրացրել են քննությամբ չպարզված անձանց:

Ա.Լեպեջյանը ընկերությունում իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց պատրաստելու վերաբերյալ Ս.Խաչատրյանի հետ ունեցած նախնական համաձայնությամբ 2009 թվականի վերջերին Երևան քաղաքի Պարոնյան 1 շենքի մոտ Ա.Ռոստոմյանից մեկ կգ-ը 450 ԱՄՆ դոլարով ապօրինի ձեռք է բերել պրեկուրսոր հանդիսացող, ընդհանուր՝ մոտ 80 կգ կետոն, որն ընկերություն փոխադրելուց հետո նույն եղանակով պատրաստել են առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց և քննությամբ չպարզված հանգամանքներում կրկին ապօրինի իրացրել են անհայտ անձանց:

Դրանից հետո, Ա.Լեպեջյանը ընկերությունում՝ իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց պատրաստելու վերաբերյալ Ս.Խաչատրյանի հետ նախնական համաձայնությամբ 2010 թվականի սկզբներին Երևան քաղաքի Բագրատունյաց 14 շենքի մոտ Ա.Վարդանյանից և Ա.Առաքելյանից մեկ կգ-ը 400 ԱՄՆ դոլարով ապօրինի ձեռք է բերել Ա.Սելիքյանի կողմից «Բարոնի» ՍՊԸ-ում արտադրված և Ա.Վարդանյանին իրացրած պրեկուրսոր հանդիսացող, ընդհանուր՝ մոտ 55 կգ կետոն, որն ընկերություն փոխադրելուց հետո նույն եղանակով պատրաստել են առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց և քննությամբ չպարզված հանգամանքներում կրկին ապօրինի իրացրել են անհայտ անձանց:

2010 թվականի ապրիլին Ա.Լեպեջյանը, իրացման նպատակով «ամֆետամին» տեսակի թմրամիջոցի և հոգեմետ նյութ հանդիսացող «էֆեդրինի» պարունակությամբ «կապտագոն» անվամբ հայտնի դեղահատերի առանձնապես խոշոր չափերի քանակություն պատրաստելու և արտերկրացիներ՝ քննությամբ դեռևս չպարզված ոմն Խալոյին, Դային և Մաջիթին իրացնելու շուրջ նախնական համաձայնության գալով Ս.Խաչատրյանի և Ա.Առաքելյանին հետ, ընկերության օժանդակ մասնաշենքում նախապես այդ նպատակով տեղադրված հաբավորման սարքավորումներով, իր կողմից նախապես պատրաստած առանձնապես խոշոր չափի՝ 1 կգ 500 գրամ «ամֆետամին» տեսակի թմրամիջոցի և նույն քանակության հոգեմետ նյութ հանդիսացող՝ չպարզված հանգամանքներում ձեռք բերված «էֆեդրինի», ինչպես նաև այլ նյութերի օգտագործմամբ, դրանց հաբավորմամբ, ապօրինի պատրաստել են առանձնապես խոշոր չափերի՝ մոտ 52 կգ՝ ընդհանուր մոտ 150.000 «կապտագոն» դեղահատեր, որոնք քննությամբ չպարզված հանգամանքներում Ս.Խաչատրյանի հետ միասին իրացրել են վերը նշված անձանց:

2010 թվականի մայիսի 21-ին Ա.Լեպեջյանը, երբ Ա.Առաքելյանը 15 կգ «ամֆետամին» տեսակի թմրամիջոց ձեռք բերելու համար դիմել է Ս.Խաչատր-

յանին, նույն օրը վերջինիս հանձնարարությամբ որպես իրացվելիք թմրամիջոցի մնուշ Երևան քաղաքի Արեշ թաղամասում Ա.Առաքելյանին կրկին ապօրինի իրացրել է «Քիմտեխ գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲ ընկերությունում պատրաստված առանձնապես խոշոր չափի՝ 31,7084 գրամ «ամֆետամին» տեսակի թմրամիջոց:

Բացի այդ, Ա.Լեպեջյանը իրացնելու նպատակով «ամֆետամին» տեսակի թմրամիջոց պատրաստելու վերաբերյալ Ս.Խաչատրյանի հետ նախնական համաձայնությամբ մինչև 2010 թվականի հունիսի 15-ը ընկերությունում տարբեր խմբաքանակներով պատրաստել և քննությամբ չպարզված անձանց իրացրել են առանձնապես խոշոր չափերի «ամֆետամին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ տարբեր տեսակի դեղահատեր, որոնց մնուշներից հայտնաբերվել և առգրավվել են «Քիմտեխ ԳՀԻ» ՓԲ ընկերության օժանդակ մասնաշենքում կատարված զննությամբ:

Ա.Լեպեջյանը վարույթն իրականացնող մարմին է ներկայացել 2010 թվականի հոկտեմբերի 12-ին:

Նախաքննության ժամանակ իր մեղավորության կամ անմեղության վերաբերյալ Ա.Լեպեջյանը դիրքորոշում չի հայտնել, իսկ դատաքննության ընթացքում մեղքն ընդունել է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով (տե՛ս քրեական գործ, հատոր 3-ի թերթ 168-169, հատոր 6-ի թերթ 136-140, 233, հատոր 12-ի թերթ 49-50, հատոր 14-ի թերթ 127-128):

5.9. Ս.Խաչատրյանը, հանդիսանալով Երևան քաղաքի Արցախի 4-րդ նրբանցք 10ա հասցեում գործող «Քիմտեխ գիտահետազոտական ընկերություն» ՓԲԸ տնօրենների խորհրդի անդամ, 2005 թվականին իրացման նպատակով առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց ապօրինի պատրաստելու նպատակով խորհրդի նախագահ Արամայիս Մարտիրոսյանի միջոցով Ռուսաստանի Դաշնությունից հրավիրված, գործով չպարզված երկու քիմիկոսներին տրամադրել է ընկերության օժանդակ մասնաշենքը և իր կողմից ապօրինի ձեռք բերված՝ «ամֆետամինի» պատրաստման համար պրեկուրսոր հանդիսացող՝ չպարզված քանակության «1-ֆենիլ-2-պրոպանոնը» (կետոն, մեթիլբենզիլկետոն): Ընկերության աշխատակից Ա.Ռոստոմյանին «ամֆետամինի» պատրաստման եղանակն ուսուցանելու համար Ս.Խաչատրյանը նրան ներգրավել է ինչպես քիմիկոսների կողմից օժանդակ մասնաշենքում համապատասխան սարքավորումների մոնտաժմանը, այնպես էլ վերջիններիս կողմից պրեկուրսոր հանդիսացող՝ չպարզված քանակության «1-ֆենիլ-2-պրոպանոնից» առանձնապես խոշոր չափի՝ շուրջ 60 կգ «ամֆետամին» տեսակի թմրամիջոցի աղի ապօրինի պատրաստմանը, որից հետո նշված քանակության թմրամիջոցը չպարզված հանգամանքներում ապօրինի իրացրել է:

Այնուհետև, Ա.Ռոստոմյանից տեղեկանալով, որ վերջինս, օժանդակ մասնաշենքում մնացած պրեկուրսոր հանդիսացող մոտ 200 գրամ կետոնը նույն եղանակով վերամշակելով, կարողացել է ինքնուրույն պատրաստել «ամֆետամինի» հիմք, իրացնելու նպատակով նշված թմրամիջոցի արտադրություն

կազմակերպելու համար 2007 թվականի գարնանը Ա.Առաքելյանի, Ա.Մելիքյանի և Ա.Վարդանյանի միջոցով փորձել է ընկերությունում կազմակերպել «ամֆետամինի» ելանյութի՝ պրեկուրսոր հանդիսացող կետոնի արտադրություն, սակայն իր կամքից անկախ հանգամանքնով հանցագործությունն ավարտին չի կարողացել հասցնել, քանի որ պրեկուրսորի ստացման աշխատանքների ժամանակ ընթացող քիմիական ռեակցիան չի ստացվել՝ աշխատակցի կողմից թյուրիմացաբար այլ քիմիական նյութ ավելացվելու պատճառով:

Շարունակելով իրականացնել հանցավոր մտադրությունը՝ Ս.Խաչատրյանը 2007 թվականի դեկտեմբերից մինչև 2008 թվականի հուլիսի 14-ն ընկած ժամանակահատվածում ընկերություն է ներկրել «ամֆետամինի» ելանյութի՝ պրեկուրսոր հանդիսացող կետոնի և դրանից իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց պատրաստելու համար անհրաժեշտ՝ ընդհանուր 5.631 կգ լվացող միջոց հանդիսացող նատրիումական աղ: Ա.Լեպեջյանը Ս.Ղամբարյանի և Ա.Ռոստոմյանի հետ միասին ընկերության օժանդակ մասնաշենքում նատրիումական աղերից ջրի և կաուստիկ սոդայի հետ խառնելու եղանակով ապօրինի պատրաստել են «ամֆետամինի» պատրաստման համար պրեկուրսոր հանդիսացող «1-ֆենիլ-2-պրոպանոն» (կետոն, մեթիլբենզիլկետոն), այնուհետև ապօրինի պատրաստել են առանձնապես խոշոր չափի՝ 180 կգ «ամֆետամին» տեսակի թմրամիջոցի հիմք:

2008 թվականի գարնանը Ա.Ռոստոմյանի և Ս.Ղամբարյանի հեռանալուց հետո, Ա.Լեպեջյանը տնօրեն Ս.Խաչատրյանի հետ ունեցած նախնական պայմանավորվածության համաձայն շարունակել է ընկերություն ներկրված նատրիումական աղերի մնացած քանակությունից նույն եղանակով պատրաստել պրեկուրսոր, իսկ դրանից՝ առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց, որոնք իրացրել են քննությանը չպարզված անձանց:

Բացի դրանից, Ս.Խաչատրյանը ընկերությունում իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց պատրաստելու համար Ա.Լեպեջյանի միջոցով 2009 թվականի վերջերին Երևան քաղաքի Պարոնյան 1 շենքի մոտ Ա.Ռոստոմյանից մեկ կգ-ը 450 ԱՄՆ դոլարով ապօրինի ձեռք է բերել պրեկուրսոր հանդիսացող, ընդհանուր՝ մոտ 80 կգ կետոն, որն ընկերություն փոխադրելուց հետո նույն եղանակով պատրաստել են առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց և քննությանը չպարզված հանգամանքներում կրկին ապօրինի իրացրել են անհայտ անձանց:

Ս.Խաչատրյանը 2010 թվականի սկզբներին Ա.Լեպեջյանի միջոցով Երևան քաղաքի Բագրատունյաց 14 շենքի մոտ Ա.Վարդանյանից և Ա.Առաքելյանից մեկ կգ-ը 400 ԱՄՆ դոլարով ապօրինի ձեռք է բերել Ա.Մելիքյանի կողմից «Բարոնի» ՍՊ ընկերությունում արտադրված և Ա.Վարդանյանին իրացրած պրեկուրսոր հանդիսացող, ընդհանուր՝ մոտ 55 կգ կետոն, որն ընկերություն փոխադրելուց հետո նույն եղանակով պատրաստել են առանձնապես խոշոր

չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց և քննությանը չպարզված հանգամանքներում կրկին անգամ ապօրինի իրացրել են անհայտ անձանց:

2010 թվականի ապրիլին առանձնապես խոշոր չափի «ամֆետամին» տեսակի թմրամիջոց և «էֆեդրին» տեսակի հոգեմետ նյութ իրացնելու շուրջ նախնական համաձայնության գալով Ա.Առաքելյանի և Ա.Լեպեջյանի հետ, ընկերության օժանդակ մասնաշենքում նախապես այդ նպատակով տեղադրված հաբավորման սարքավորումներով, Ա.Լեպեջյանի կողմից նախապես պատրաստած առանձնապես խոշոր չափի՝ 1 կգ 500 գրամ «ամֆետամին» տեսակի թմրամիջոցի և նույն քանակության հոգեմետ նյութ հանդիսացող՝ չպարզված հանգամանքներում ձեռք բերված «էֆեդրինի», ինչպես նաև այլ նյութերի օգտագործմամբ, դրանց հաբավորմամբ, ապօրինի պատրաստել են առանձնապես խոշոր չափերի՝ մոտ 52 կգ՝ ընդհանուր մոտ 150.000 «կապտագոն» դեղահատեր, որոնք քննությանը չպարզված հանգամանքներում Ս.Խաչատրյանն ու Ա.Լեպեջյանը իրացրել են քննությանը չպարզված ոմն Խալոյին և Գային:

Դրանից բացի, 2010 թվականի մայիսի 21-ին Ա.Առաքելյանից տեղեկանալով 15 կգ «ամֆետամին» տեսակի թմրամիջոց ձեռք բերելու վերջինիս մտադրության մասին նույն օրը Ա.Լեպեջյանի միջոցով որպես իրացվելիք թմրամիջոցի մմուշ Երևան քաղաքի Արեշ թաղամասում Ա.Առաքելյանին կրկին ապօրինի իրացրել է «Քիմտելի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲ ընկերությունում պատրաստված առանձնապես խոշոր չափի՝ 31,7084 գրամ «ամֆետամին» տեսակի թմրամիջոց:

Ս.Խաչատրյանը Ա.Լեպեջյանի հետ նախնական համաձայնությանը մինչև 2010 թվականի հունիսի 15-ը ընկերությունում տարբեր խմբաքանակներով պատրաստել և քննությանը չպարզված անձանց իրացրել են առանձնապես խոշոր չափերի «ամֆետամին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ տարբեր տեսակի դեղահատեր, որոնց մմուշներից հայտնաբերվել և առգրավվել են «Քիմտելի ԳՀԻ» ՓԲ ընկերության օժանդակ մասնաշենքում կատարված զննությամբ:

Ս.Խաչատրյանը ձեռքակալվել է 2010 թվականի հունիսի 15-ին:

Նախաքննության ժամանակ Ս.Խաչատրյանն իրեն մեղավոր չի ճանաչել և հրաժարվել է ցուցմունք տալուց: Դատաքննության ժամանակ տված ցուցմունքներում Ս.Խաչատրյանն իրեն մեղավոր չի ճանաչել (տե՛ս քրեական գործ, հատոր 12-ի թերթ 49-50, հատոր 14-ի թերթ 127-128):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Հետազոտելով և վերլուծելով գործով ձեռք բերված և դատաքննությանը հետազոտված (...) ապացույցները՝ դատարանը հաստատված է համարում Սիրաժ Ղամբարյանի և Սամվել Սկրտումյանի կողմից իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերի «ամֆետամին» տեսակի թմրամիջոցն ապօրինի պատրաստելու, ինչպես նաև դրա համար պրեկուրսոր հանդիսացող կետոնն ապօրինի պատրաստելու փաստը:

Դատարանը հաստատված է համարում նաև Արմեն Բաղդասարյանի, Հակոբ Համբարձումյանի, Արա Ռոստոմյանի, Աղվան Վարդանյանի, Աշոտ Առա-

քելյանի, Արմեն Լեպեջյանի և Սամվել Խաչատրյանի կողմից իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերի «ամֆետամին» տեսակի թմրամիջոցն ապօրինի պատրաստելու, իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերի «ամֆետամին» տեսակի թմրամիջոցն ապօրինի պատրաստելու փորձ կատարելու, ինչպես նաև «ամֆետամին» տեսակի թմրամիջոցի համար պրեկուրսոր հանդիսացող կետոնն ապօրինի պատրաստելու փաստերը:

Նախաքննության մարմնի կողմից ամբաստանյալների կատարած արարքները որակված են ճիշտ, Սիրաժ Ղամբարյանի և Սամվել Մկրտումյանի կատարած արարքները համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետին և 266-րդ հոդվածի 4-րդ մասին, իսկ Արմեն Բաղդասարյանի, Հակոբ Համբարձումյանի, Արա Ռոստոմյանի, Ադվան Վարդանյանի, Աշոտ Առաքելյանի, Արմեն Լեպեջյանի և Սամվել Խաչատրյանի կատարած արարքները՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետին, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետին և 266-րդ հոդվածի 4-րդ մասին, և ամբաստանյալները պետք է պատիժ կրեն կատարած հանցագործությունների համար (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 12-ի թերթ 51-75):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) ընդհանուր իրավասության դատարանի կողմից պահպանվել են ՀՀ Սահմանադրության, ՀՀ քրեադատավարական օրենսդրության, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի մախադեպային որոշումների պահանջները:

Այսպիսով, դատաքննությամբ և գործով ձեռք բերված ապացույցներով վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալներ Սիրաժ Ղամբարյանի և Սամվել Մկրտումյանի կատարած արարքները համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետին և 266-րդ հոդվածի 4-րդ մասին, իսկ Արմեն Բաղդասարյանի, Հակոբ Համբարձումյանի, Արա Ռոստոմյանի, Ադվան Վարդանյանի, Աշոտ Առաքելյանի, Արմեն Լեպեջյանի և Սամվել Խաչատրյանի կատարած արարքները՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետին, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետին և 266-րդ հոդվածի 4-րդ մասին, իսկ նրանց և պաշտպանների կողմից բերված պատճառաբանությունները հերքվում են գործի փաստական տվյալների վերոշարադրյալ ամբողջությամբ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 15-ի թերթ 88):

3. Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Ամբաստանյալներ Ս.Ղամբարյանի և Ա.Բաղդասարյանի պաշտպան Վ.Գրիգորյանի պնդմամբ սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերը կայացվել են նյութական և դատավարական իրավունքի նոր-

մերի խախտումներով: Մասնավորապես, դատարանները Ս.Ղամբարյանի մեղքը հիմնավորող ապացույցների շարքում դրել են նրա նախաքննական և դատաքննական ցուցմունքները, Ա.Ռոստոմյանի նախաքննական ցուցմունքները, Ա. Լեպեջյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքները և արդյունքում անհիմն եզրակացություն են արել նրանց արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի առկայության վերաբերյալ: Ըստ պաշտպանի՝ Ս.Ղամբարյանի և Ա.Բաղդասարյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի առկայությունը չի բխում վերոնշյալ անձանց ցուցմունքների բովանդակությունից, իսկ ամբաստանյալ Ա.Բաղդասարյանի մեղադրանքի հիմքում դրված նրա նախաքննական ցուցմունքները, փորձաքննությունների եզրակացությունները, խուզարկության արձանագրությունները և այլն, արժանահավատ չեն և չեն վկայում Ա.Բաղդասարյանի կողմից «ամֆետամին» տեսակի բժրամիջոց ստանալու մտադրության մասին:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ սույն գործով ստորադաս դատարանները անհիմն կերպով Ս.Ղամբարյանի և Ա.Բաղդասարյանի նկատմամբ չեն կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 365-րդ հոդվածի 2-րդ մասը, որոնք պարտավոր էին կիրառել: Ուստի, խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, Ս.Ղամբարյանի և Ա.Բաղդասարյանի մասով Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը բեկանել և իր պաշտպանյալների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել:

9. Ամբաստանյալ Ս.Սկրտումյանի պաշտպան Կ.Ջամայանի պնդմամբ սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերը կայացվել են նյութական և դատավարական իրավունքի նորմերի հիմնարար խախտումներով և պետք է բեկանվեն:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները պատշաճ գնահատման չեն ենթարկվել, մասնավորապես դատարանները գործով ճշմարտությունը բացահայտելու նպատակով կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն չեն նշանակել այն դեպքում, երբ գործով նշանակված փորձաքննությունները եղել են թերի և մակերեսային: Արդյունքում կայացվել են անօրինական և անարդար դատական ակտեր:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ ամբաստանյալ Ս.Սկրտումյանի նկատմամբ նշանակված խիստ պատիժը չի բխում պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներից: Այս կապակցությամբ բողոքաբերն ընդգծել է, որ դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ իր պաշտպանյալն անկեղծորեն զոջում է կատարվածի համար, տվել է ճշմարիտ ցուցմունքներ և ակտիվորեն աջակցել քննությանը, նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, զբաղվում է հանրօգուտ գործունեությամբ, ծառայել է բանակում, ու-

նի բարձրագույն կրթություն, պաշտպանել է գիտական թեզ և աշխատել որպես ավագ գիտաշխատող:

Վերոգրյալի հիման վրա պաշտպան Կ.Քամայանը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը, գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության, Ս.Մկրտումյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել կամ նրա նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ կամ 64-րդ հոդվածը:

10. Ամբաստանյալ Հ.Համբարձումյանի պաշտպան Կ.Քամայանի պնդմամբ սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերը կայացվել են նյութական և դատավարական իրավունքի նորմերի հիմնարար խախտումներով և պետք է բեկանվեն:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները պատշաճ գնահատման չեն ենթարկվել, մասնավորապես իր պաշտպանյալի հոգեկան առողջության վիճակի բացահայտման համար Առաջին ատյանի դատարանը դատահոգեբուժական փորձաքննություն չի նշանակել, իսկ Վերաքննիչ դատարանը կրկնակի ստացիոնար փորձաքննություն նշանակելու վերաբերյալ իր միջնորդությունն անհիմն և ապօրինաբար մերժել է՝ բավարարվելով նշանակված ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությամբ, որի արդյունքում ամբաստանյալը ճանաչվել է սահմանափակ մեղսունակ: Արդյունքում կայացվել են անօրինական և անարդար դատական ակտեր:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ ամբաստանյալ Հ.Համբարձումյանի նկատմամբ նշանակված խիստ պատիժը չի բխում պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներից: Այս կապակցությամբ բողոքաբերն ընդգծել է, որ դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ իր պաշտպանյալը նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, զբաղվում է հանրօգուտ գործունեությամբ, ծառայել է բանակում, ներկայացել է մեղայականով, տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ և ակտիվորեն աջակցել հանցագործության բացահայտմանը:

Վերոգրյալի հիման վրա պաշտպան Կ.Քամայանը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը, գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով Հ.Համբարձումյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել կամ նրա նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ կամ 64-րդ հոդվածը:

11. Ամբաստանյալ Ա.Ռոստոմյանի պաշտպան Կ.Քամայանի պնդմամբ սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերը կայացվել են նյութական և դատավարական իրավունքի նորմերի հիմնարար խախտումներով և պետք է բեկանվեն:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները պատշաճ գնահատման չեն

ենթարկվել, մասնավորապես կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն չի նշանակվել այն դեպքում, երբ գործով նշանակված փորձաքննությունները եղել են թերի և մակերեսային: Ըստ բողոք բերած անձի՝ վերոնշյալ փորձաքննությունների նշանակման դեպքում կհիմնավորվեր իր պաշտպանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքների անհիմն լինելը:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ Ա.Ռ-ոստոմյանի նկատմամբ նշանակված խիստ պատիժը չի բխում պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներից: Այս կապակցությամբ բողոքաբերն ընդգծել է, որ իր պաշտպանյալը նախկինում դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, զբաղվել է հանրօգուտ գործունեությամբ, ծառայել է բանակում, ունի բարձրագույն կրթություն, երկար տարիներ աշխատել է ոստիկանության համակարգում և արժանացել կոչումների ու պարգևների, ներկայացել է մեղայականով, տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ, որով ակտիվորեն աջակցել է հանցագործության բացահայտմանը: Բացի այդ, ամբաստանյալը տառապում է նյարդային հիվանդությամբ, 1-ին խմբի հաշմանդամ է և ունի մշտական խնամքի ու հոգածության կարիք:

Վերոգրյալի հիման վրա պաշտպանը խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ամբաստանյալ Ա.Ռ-ոստոմյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել, նրա նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ կամ 64-րդ հոդվածը կամ պարզաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման հարցը:

12. Ամբաստանյալ Ա.Վարդանյանի պաշտպան Ա.Մուխսիկարոյանի պնդմամբ սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերը կայացվել են նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով, որոնք ազդել են կամ կարող են ազդել գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ գործով չի պարզվել, թե ով է Արտակ Մանուչարյանը, ինչու է մեղադրողը հրաժարվել նրա նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց այն պայմաններում, երբ վերջինս հանդիսացել է թմրամիջոց ձեռք բերող: Արդյունքում բողոքաբերը կարծիք է հայտնել, որ նրա հետ կապված գործողություններն ու ցուցմունքները պետք է համարել ոչ արժանահավատ: Այս կապակցությամբ բողոք բերած անձը վկայակոչել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 25-րդ, 105-րդ, 127-րդ, 342-րդ, 345-րդ, 358-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-107/07, 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵԿԴ/0014/01/09, 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԶԴԴ/0632/01/08

գործերով կայացված որոշումները և եզրահանգել է, որ դրանք սույն գործով կայացված դատական ակտը բեկանելու և նոր քննության ուղարկելու հիմք են:

Բողոքի հեղինակը նշել է նաև, որ իր պաշտպանյալից ցուցմունքները կորզվել են ծեծի և սպառնալիքի ազդեցությամբ, ինչպես նաև Ա.Վարդանյանի նախորդ պաշտպանը եղել է իրավապահ մարմինների գործակալ և իր վստահորդի շահերը պաշտպանելու փոխարեն աջակցել է քննիչի ապօրինի գործողություններին:

Վերոգրյալի հիման վրա պաշտպանը խնդրել է ամբողջությամբ բավարարել վճռաբեկ բողոքը, բեկանել վիճարկվող դատական ակտը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

13. Ամբաստանյալ Ա.Առաքելյանի պաշտպան Գ.Պապոյանի պնդմամբ սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերը կայացվել են ՀՀ Սահմանադրության, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 365-րդ հոդվածի 2-րդ մասի, 397-րդ, 398-րդ հոդվածների և ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 62-րդ հոդվածների պահանջների խախտմամբ:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում չկայացնելով, թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, քանի որ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցել են:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով Ա.Առաքելյանին առաջադրված մեղադրանքներում նրա մեղքը բացառող հանգամանքների առկայության պայմաններում նրան չի արդարացրել և չփարատված կասկածները մեկնաբանել է ի վնաս նրա՝ արդյունքում խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ և 360-րդ հոդվածներով սահմանված դատական ակտին ներկայացվող պահանջները:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը և Ա.Առաքելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով արդարացնել, իսկ 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել և գործի վարույթը կարճել քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու պատճառաբանությամբ կամ գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

14. Ամբաստանյալ Ա.Լեպեջյանի և նրա պաշտպան Գ.Սարգսյանի պնդմամբ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական և դատա-

վարական իրավունքի նորմերի խախտումներով: Մասնավորապես, դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ, 18-րդ, 61-րդ, 266-րդ հոդվածների և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 18-րդ, 23-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի, 25-րդ, 102-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 114-րդ, 115-րդ հոդվածի 3-րդ մասի, 121-րդ, 127-րդ, 347-րդ, 358-րդ և 360-րդ հոդվածների պահանջները, չի կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 242-րդ և 366-րդ հոդվածները, որոնք պարտավոր էր կիրառել:

Բողոք բերած անձինք նշել են, որ Վերաքննիչ դատարանը մեղադրանքի հիմքում դրել է Ա.Լեպեջյանի ինքնախոստովանական ցուցմունքները՝ հաշվի չառնելով վերջինիս հայտարարությունն այն մասին, որ նախաքննության ժամանակ իր տված ցուցմունքները ճիշտ չեն: Բողոքաբերների կարծիքով՝ մեղադրանքի հիմքում չէին կարող դրվել նաև խուզարկությունների, զննումների, առգրավումների արձանագրությունները և իրեղեն ապացույցները դատարանում զննելու արձանագրությունը, քանի որ վերոնշյալ բոլոր քննչական գործողությունները կատարվել են առանց ընթերակաների մասնակցության: Բացի այդ, գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման համար քննչական փորձարարություն նշանակելու միջնորդության վերաբերյալ դատարանն ընդհանրապես որոշում չի կայացրել:

Բողոքի հեղինակները փաստարկել են նաև, որ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը և Ա.Լեպեջյանի նկատմամբ կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը և 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը, հիմնվել է ենթադրությունների վրա, քանի որ ամբաստանյալի մեղքը հիմնավորող ապացույցները գործում բացակայում են:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերները խնդրել են Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով Ա.Լեպեջյանին արդարացնել, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով դատական ակտը թողնել անփոփոխ, նրան ազատ արձակել կամ գործն ուղարկել նոր քննության:

15. Ամբաստանյալ Ս.Խաչատրյանի պաշտպան Ա.Մուխսիկարոյանի պնդմամբ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի մի շարք խախտումներ: Մասնավորապես, խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 127-րդ, 391-րդ, 392-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածները, չեն կիրառվել 2011 և 2013 թվականներին ընդունված համաձայնեման ակտերը:

Բողոք բերած անձը կարծիք է հայտնել, որ այն պայմաններում, երբ հայտնի չէ, թե ում են իրացվել թմրանյութերը, դրանց իրացման փաստը չի կարելի ապացուցված համարել, մինչդեռ ստորադաս դատարանները նման կերպ են վարվել:

Բողոքարեւի պնդմամբ Վերաքննիչ դատարանում ինքը ճառով հանդես չի եկել, իսկ իր պաշտպանյալին վերջին խոսքի իրավունք չի տրվել, Վերաքննիչ դատարանն ապօրինաբար մերժել է փորձաքննություն նշանակելու վերաբերյալ ներկայացված պահանջը, որևէ միջոցներ չի ձեռնարկել գործով չպարզված վկաներ՝ քիմիկոս գիտնականներին, Գայիին, Խալոյին և Մաջիթին հայտնաբերելու և առերես հարցաքննելու ուղղությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոքարեւը խնդրել է ամբողջությամբ բավարարել վճռաբեկ բողոքը, բեկանել վիճարկվող դատական ակտը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, Ս.Խաչատրյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը փոխել գրավով և նրան ազատ արձակել:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

16. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրորներ ապօրինի պատրաստելու, վերանշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու, առաքելու կամ դրանք ապօրինի իրացնելու համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի հաշվարկման կարգի, ինչպես նաև քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը վճռաբեկության փուլում դադարեցնելու ընթացակարգի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

17. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրորներ ապօրինի պատրաստելու, վերանշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու, առաքելու կամ դրանք ապօրինի իրացնելու համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով ամբաստանյալների նկատմամբ քրեական հետապնդումը սույն գործով ենթակա՞ է արդյոք դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

1. ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի հաշվարկման կարգը.

18. ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատագրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատագրկման հետ կապ չունեցող պատիժ, (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...):

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: Տևող հանցագործության դեպքում վաղեմության ժամկետը հաշվարկվում է արարքը դադարելու, իսկ շարունակվող հանցագործության դեպքում՝ վերջին արարքը կատարելու պահից:

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից:

(...):»:

Մեջբերված իրավադրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *ԱՍադաթեյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) քրեական օրենսդրությամբ, կապված արարքի բնույթից և հանրության համար վտանգավորության աստիճանից, նախատեսված են քրեական պատասխանատվության ենթարկելու տարբեր ժամկետներ, որոնց անցնելու դեպքում կատարված արարքը կորցնում է իր վտանգավորությունը, և անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից: (...)» (տե՛ս Անահիտ Հայկի Սադաթեյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ Գ-Դ-5/0022/01/10 որոշման 24-րդ կետը):

19. Մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-323-Ն օրենքի ընդունումը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրված էր հետևյալ բովանդակությամբ՝ «Թմրամիջոցներ կամ հոգեմեղմամբներ նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրորներ ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ դրանք ապօրինի իրացնելը՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը երկուհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով»:

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-323-Ն օրենքի ընդունումից հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրսորներ ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ դրանք ապօրինի իրացնելը՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով»:

Մեջբերված քրեաիրավական նորմերի վերլուծությունից երևում է, որ ինչպես մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-323-Ն օրենքի ընդունումը գործող, այնպես էլ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-323-Ն օրենքի ընդունումից հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասում նկարագրված արարքը դիտավորյալ հանցագործություն է, որի համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ, ուստի այն ինչպես մինչև ՀՀ քրեական օրենսգրքում վերոնշյալ փոփոխությունների կատարումը, այնպես էլ դրանից հետո հանդիսանում է ոչ մեծ ծանրության հանցագործություն (ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մաս):

20. Համադրելով սույն որոշման 18-19-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-323-Ն օրենքի ընդունումը գործող, այնպես էլ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-323-Ն օրենքի ընդունումից հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե այդ հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահն անցել է երկու տարի:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով ամբաստանյալների նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու հարցի լուծման համար էական նշանակություն ունի վերոնշյալ հոդվածով նրանց մեղսագրված արարքն ավարտված համարելու պահի որոշումը:

21. Հանցագործության ավարտման պահը, պայմանավորված հանցագործության բնույթով (տևող կամ շարունակվող), որոշվում է տարբեր կերպ: Մասնավորապես, տևող հանցագործությունները դրսևորվում են հանրորեն վտանգավոր գործողության կամ անգործության՝ տևական ժամանակահատվածում անընդմեջ իրականացմամբ, զուգորդվում են օրենքով հանցավորի վրա դրված

պարտականությունների տևականորեն չկատարմամբ և ավարտված են համարվում արարքի դադարման պահից, որը կարող է պայմանավորված լինել ինչպես հանցավորի գործողություններով (օրինակ՝ մեղայականով ներկայացնելով), այնպես էլ նրանից անկախ հանգամանքներով (օրինակ՝ իրավապահ մարմինների միջամտությամբ և այլն):

Շարունակվող հանցագործությունները բաղկացած են մեկից ավելի նույնական արարքներից, որոնցից յուրաքանչյուրը թեկուզև ինքնուրույն հանցակազմ է պարունակում, բայց ընդգրկված են միասնական դիտավորության մեջ, հետապնդում են մեկ ընդհանուր նպատակ, հետևաբար դիտվում են իբրև մեկ հանցագործություն, որն ավարտված է համարվում հանցավորի դիտավորությամբ ընդգրկված վերջին արարքի կատարման պահից: Շարունակվող հանցագործության դեպքում անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցավորի միասնական դիտավորության մեջ ընդգրկված արարքներից վերջինի կատարման պահից (ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 2-րդ մաս): Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ շարունակվող հանցագործության պարագայում անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից (ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մաս):

Այսպես՝ նոր կատարված հանցագործությունն ընդհատում է նախկին հանցագործության վաղեմության ժամկետի ընթացքը հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

1. նախկին հանցագործությունն ավարտվել է և օրենքով դրա համար սահմանված վաղեմության ժամկետը դեռևս չի անցել,
2. նոր կատարվածը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն է:

Վաղեմության ժամկետի ընդհատվելու դեպքում նախորդ հանցանքի համար ընթացող ժամկետը չեղյալ է համարվում, և հաշվարկը վերսկսվում է նոր հանցագործության ավարտման պահից: Այլ կերպ ասած՝ նոր հանցանքի կատարմամբ նախկին հանցագործության համար նախատեսված վաղեմության ժամկետը չի վերանում, իսկ ինչպես նոր հանցանքի, այնպես էլ նախկին հանցանքի համար օրենքով սահմանված վաղեմության ժամկետները սկսվում են հաշվարկվել նոր հանցանքի ավարտման պահից՝ յուրաքանչյուր հանցագործության համար ինքնուրույն:

Վերոնշյալ դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ վաղեմության ժամկետը կապված է կոնկրետ հանցագործության հետ և կրում է ինքնուրույն բնույթ: Այդ պատճառով, եթե անձը միաժամանակ կատարում է երկու կամ

ավելի հանցագործություն, դրանցից յուրաքանչյուրի համար վաղեմության ժամկետը պետք է հաշվարկվի առանձին: Հետևաբար, հանցագործություններից մեկի համար վաղեմության ժամկետի ավարտի դեպքում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից այդ հանցագործության համար, սակայն մյուսների համար, որոնց վաղեմության ժամկետները չեն անցել, անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ընդհանուր կարգով:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալներ Ս.Ղամբարյանը, Ա.Բաղդասարյանը, Ս.Սկրտումյանը, Հ.Համբարձումյանը, Ա.Ռոստոմյանը, Ա.Վարդանյանը, Ա.Առաքելյանը, Ա.Լեպեջյանը և Ս.Խաչատրյանը 2007-ից 2010 թվականների ընթացքում նախնական համաձայնությամբ, գործելով միասնական դիտավորությամբ, թմրամիջոց պատրաստելու նպատակով ապօրինի պատրաստել, ձեռք են բերել, պահել, փոխադրել, ինչպես նաև ապօրինի իրացրել են պրեկուրսորներ, այսինքն՝ կատարել են մեկ միասնական շարունակվող հանցագործություն, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով: Մասնավորապես, Ս.Ղամբարյանը 2007 թվականի դեկտեմբերից 2008 թվականի գարունն ընկած ժամանակահատվածում Ս.Խաչատրյանի, Ա.Ռոստոմյանի և Ա.Լեպեջյանի հետ նախնական համաձայնությամբ ապօրինի պատրաստել է պրեկուրսոր հանդիսացող «կետոն» և «մեթիլբենզիլկետոն» (տե՛ս սույն որոշման 5.1.-րդ կետը):

Ա.Բաղդասարյանը 2009 թվականի հոկտեմբերից 2010 թվականի հունիսի 5-ն ընկած ժամանակահատվածում Ս.Սկրտումյանի, Հ.Համբարձումյանի հետ նախնական համաձայնությամբ ապօրինի պատրաստել է 800 կգ պրեկուրսոր հանդիսացող «մեթիլբենզիլկետոն», որից 80 կգ-ն իրացրել է Ա.Ռոստոմյանին, իսկ ևս 515 կգ-ը՝ գործով չպարզված անձանց: 2010 թվականի գարնանը պատրաստել են 10 կգ «կետոն», իսկ 2010 թվականի մայիսին Ա.Ռոստոմյանի հետ նախնական համաձայնությամբ տարբեր խմբաքանակներով իր մոտ է փոխադրել 150 կգ «կետոն»: Այսինքն՝ Ա.Բաղդասարյանը միասնական դիտավորությամբ ապօրինի պատրաստել, իրացրել, փոխադրել է պրեկուրսորներ (տե՛ս սույն որոշման 5.2.-րդ կետը):

Ս.Սկրտումյանը և Հ.Համբարձումյանը 2009 թվականի հոկտեմբերից 2010 թվականի հունիսի 5-ն ընկած ժամանակահատվածում Ա.Բաղդասարյանի հետ նախնական համաձայնությամբ ապօրինի պատրաստել են 800 կգ պրեկուրսոր հանդիսացող «մեթիլբենզիլկետոն» (տե՛ս սույն որոշման 5.3.-5.4.-րդ կետերը):

Ա.Ռոստոմյանը 2007 թվականի դեկտեմբերից 2008 թվականի գարունն ընկած ժամանակահատվածում Ս.Խաչատրյանի, Ս.Ղամբարյանի և Ա.Լեպեջյանի հետ նախնական համաձայնությամբ պատրաստել է պրեկուրսոր հանդիսացող «կետոն» և «մեթիլբենզիլկետոն»: 2009 թվականի վերջերին Ա.Բաղդասարյանից ձեռք է բերել 80 կգ «կետոն», այնուհետև նույն տեղում իրացրել է Ա.Լեպեջյանին: 2010 թվականի մայիսին Ա.Բաղդասարյանի հետ տարբեր խմբաքանակներով փոխադրել է 150 կգ «կետոն»: Այսինքն՝ Ա. Ռոս-

տոմյանը միասնական դիտավորությամբ ապօրինի պատրաստել, ձեռք է բերել, իրացրել, փոխադրել է պրեկուրսորներ (տե՛ս սույն որոշման 5.5.-րդ կետը):

Ա.Վարդանյանը 2008 թվականի սկզբներին Ա.Առաքելյանից ապօրինի ձեռք է բերել պրեկուրսոր հանդիսացող 14 լիտր քանակությամբ «քացախաթթվի անհիդրիդ», որը պահել է բնակարանում և 2010 թվականի հունիսի 8-ին կամովին ներկայացրել է: 2010 թվականի սկզբներին Ա.Մելիքյանից տարբեր չափաբաժիններով մաս-մաս ձեռք է բերել 75 կգ «կետոն», որից 55 կգ-ը իրացրել է, իսկ մնացածը՝ ոչնչացրել: Այսինքն՝ Ա.Վարդանյանը միասնական դիտավորությամբ ապօրինի ձեռք է բերել, պահել և իրացրել է պրեկուրսորներ (տե՛ս սույն որոշման 5.6.-րդ կետը):

Ա.Առաքելյանը 2008 թվականի սկզբներին Իրանից Հայաստան է ներկրել պրեկուրսոր՝ 9520 կգ «քացախաթթվի անհիդրիդ», որից որպես մուշ 14 լիտր ապօրինի իրացրել է Ա.Վարդանյանին: 2010 թվականի սկզբներին Ա.Վարդանյանի հետ ապօրինի ձեռք են բերել 75 կգ «կետոն», որից 55 կգ-ն իրացրել են, իսկ մնացածը՝ ոչնչացրել: Այսինքն՝ Ա.Առաքելյանը միասնական դիտավորությամբ ապօրինի ձեռք է բերել և իրացրել պրեկուրսորներ (տե՛ս սույն որոշման 5.7.-րդ կետը):

Ա.Լեպեջյանը 2007 թվականի դեկտեմբերից 2008 թվականի հուլիսի 14-ն ընկած ժամանակահատվածում Ս.Ղամբարյանի և Ա.Ռոստոմյանի հետ միասին ապօրինի պատրաստել են պրեկուրսոր հանդիսացող «կետոն», «մեթիլբենզիլկետոն»: 2008 թվականի գարնանը Ա.Լեպեջյանը Ս.Խաչատրյանի հետ նախնական համաձայնությամբ շարունակել է ապօրինի պատրաստել պրեկուրսոր, որոնք իրացրել են քննությամբ չպարզված անձանց: 2009 թվականի վերջերին Ա.Ռոստոմյանից ապօրինի ձեռք է բերել պրեկուրսոր հանդիսացող 80 կգ «կետոն», որը փոխադրվել է ընկերություն: 2010 թվականի սկզբներին Ա.Վարդանյանից և Ա.Առաքելյանից ապօրինի ձեռք է բերել 55 կգ «կետոն», որը դարձյալ տեղափոխել է ընկերություն: Այսինքն՝ Ա.Լեպեջյանը միասնական դիտավորությամբ ապօրինի պատրաստել, ձեռք է բերել, իրացրել և փոխադրել է պրեկուրսորներ (տե՛ս սույն որոշման 5.8.-րդ կետը):

Ս.Խաչատրյանը 2005 թվականին ապօրինի ձեռք է բերել պրեկուրսոր հանդիսացող «կետոն», «մեթիլբենզիլկետոն»: 2007 թվականի դեկտեմբերից 2008 թվականի հուլիսի 14-ն ընկած ժամանակահատվածում Ա.Լեպեջյանի, Ս.Ղամբարյանի և Ա.Ռոստոմյանի հետ ապօրինի պատրաստել են պրեկուրսոր հանդիսացող «կետոն», «մեթիլբենզիլկետոն»: 2008 թվականի գարնանը Ա.Լեպեջյանի հետ նախնական համաձայնությամբ շարունակել են պատրաստել պրեկուրսոր: 2009 թվականի վերջերին Ս.Խաչատրյանը Ա.Լեպեջյանի հետ նախնական համաձայնությամբ, նրա միջոցով Ա.Ռոստոմյանից ապօրինի ձեռք է բերել 80 կգ «կետոն», որը փոխադրվել է ընկերություն: 2010 թվականի սկզբներին Ս.Խաչատրյանը Ա.Լեպեջյանի հետ նախնական համաձայնությամբ, նրա միջոցով Ա.Վարդանյանից և Ա.Առաքելյանից ապօրինի ձեռք է բերել 55 կգ «կետոն», որը դարձյալ տեղափոխել է ընկերություն: Այսինքն՝

Ա.Ռոստոմյանը միասնական դիտավորությամբ ապօրինի պատրաստել, ձեռք է բերել, փոխադրել է պրեկուրսորներ (տե՛ս սույն որոշման 5.9.-րդ կետը):

23. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 21-րդ կետում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է.

ա) Ս.Ղամբարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքներից վերջինն ավարտվել է 2008 թվականի գարնանը, որից հետո նա նոր հանցագործություն չի կատարել, այսինքն՝ վաղեմության ժամկետների ընդհատում տեղի չի ունեցել: Հետևաբար, այդ պահից սկսվել է վաղեմության ընթացքը: Նա որպես մեղադրյալ ներգրավվել է 2011 թվականի ապրիլի 27-ին՝ հանցանքն ավարտված համարվելու օրվանից մոտ 3 տարի անց: Հետևաբար, Ս.Ղամբարյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցել են:

բ) Ա.Բաղդասարյանի հանցավոր գործունեությունը խափանվել է 2010 թվականի հունիսի 5-ին: Դրանից հետո Ա.Բաղդասարյանը նոր հանցանք չի կատարել, հետևաբար այդ պահից էլ սկսվել է վաղեմության ժամկետների ընթացքը: Առաջին ատյանի դատարանի դատավճիռը կայացվել է 2013 թվականի հունիսի 18-ին՝ հանցանքն ավարտված համարվելու օրվանից մոտ 3 տարի անց: Հետևաբար, Ա.Բաղդասարյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցել են:

գ) Ս.Մկրտումյանի և Հ.Համբարձումյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքներից վերջինը խափանվել է 2010 թվականի հունիսի 5-ին: Դրանից հետո նրանք նոր հանցանք չեն կատարել, հետևաբար այդ պահից էլ սկսվել է վաղեմության ժամկետների ընթացքը: Ուստի, Ս.Մկրտումյանին և Հ.Համբարձումյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցել են:

դ) Ա.Ռոստոմյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքներից վերջինն ավարտվել է 2010 թվականի մայիսին: Դրանից հետո, սակայն, 2010 թվականի մայիսին Ա.Ռոստոմյանը նոր հանցանք է կատարել՝ Ա.Բաղդասարյանի հետ ապօրինի պատրաստել է առանձնապես խոշոր չափի թմրամիջոց, այսինքն՝ նախկին հանցագործության վաղեմության ժամկետներն ընդհատվել են: Հետևաբար, նոր հանցագործության ավարտման պահից էլ վերսկսվել է վաղեմության ժամկետների ընթացքը: Հետևաբար, Ա.Ռոստոմյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցել են:

ե) Ա.Վարդանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքը դադարել է 2010 թվականի հունիսի 8-ին, որից հետո նա նոր հանցանք չի կատարել: Հետևաբար, Ա.Վարդանյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցել են:

զ) Ա.Առաքելյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքներից վերջինն ավարտվել է 2010 թվականի սկզբներին,

իսկ 2010 թվականի մայիսի 21-ին նա փորձել է ապօրինի առանձնապես խոշոր չափի թմրամիջոց իրացնել, որն իր կամքից անկախ հանգամանքներում չի կարողացել ավարտին հասցնել, այսինքն՝ վաղեմության ընթացքն ընդհատվել է: Հետևաբար, նոր կատարված հանցանքն ավարտված համարվելու պահից՝ մայիսի 21-ից, վերսկսվել է նախկին հանցագործության վաղեմության ժամկետների ընթացքը: Հետևաբար, Ա.Առաքելյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցել են:

է) Ա.Լեպեշյանի՝ 266-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքներից վերջինն ավարտվել է 2010 թվականի սկզբներին, իսկ 2010 թվականի հունիսի 15-ին կատարել է նոր հանցանք՝ պատրաստել և իրացրել է թմրամիջոց, ուստի այդ հանցագործության ավարտման պահից էլ վերսկսվել է նախորդ հանցագործության վաղեմության ժամկետների ընթացքը: Հետևաբար, Ա.Լեպեշյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցել են:

ը) Ս.Խաչատրյանի՝ 266-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արարքներից վերջինն ավարտվել է 2010 թվականի սկզբներին, իսկ 2010 թվականի հունիսի 15-ին կատարել է նոր հանցանք՝ պատրաստել և իրացրել է թմրամիջոց, հետևաբար այդ հանցագործության ավարտման պահից էլ վերսկսվել է նախորդ հանցագործության վաղեմության ժամկետների ընթացքը: Հետևաբար, Ս.Խաչատրյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները նույնպես անցել են:

Վերոնշյալ ա)-ը) ենթակետերում շարադրված և վերլուծված հանգամանքների առկայության պարագայում սակայն ո՛չ Առաջին ատյանի դատարանը, ո՛չ Վերաքննիչ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով սույն գործով ամբաստանյալների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցին չեն անդրադարձել (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը):

II. Քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով անչի նկատմամբ քրեական հետապնդումը վճարելիության փուլում դադարեցնելու ընթացակարգը.

24. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

Մեջբերված իրավադրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ա Սադաթեյյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը և քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

Միևնույն ժամանակ քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով: Ինչպես երևում է նշված արգելքը սահմանող իրավանորմի վերլուծությունից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի կիրառման համար ենթադրյալ իրավախախտում կատարած անձի համաձայնությունն անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ քրեական գործն արդեն իսկ հարուցված է, և անձը ներգրավվել է որպես մեղադրյալ, այսինքն՝ նրա նկատմամբ սկսվել է քրեական հետապնդում: (...)» (տես Անահիտ Հայկի Սադաթեյյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ Գ-Գ-5/0022/01/10 որոշման 24-րդ կետը):

Վերահաստատելով *Ա Սադաթեյյանի* գործով կայացված որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար մեղադրյալի համաձայնության առկայությունը բխում է անմեղության կանխավարկածի սկզբունքից և անձի արդար դատաքննության, մասնավորապես օրենքով սահմանված կարգով իր մեղավորության հարցը համապատասխան դատական ատյաններում վիճարկելու իրավունքից: Հետևաբար, այն դեպքում, երբ անձը համաձայն չէ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու հետ, նրան պետք է հնարավորություն ընձեռվի դատական քննության միջոցով հասնել իր անմեղության ապացուցման: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում:

25. Չարգացնելով *Ա Սադաթեյյանի* գործով կայացված որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Մասնավորապես, դատարանը պետք է պարզի, թե արդյոք ամբաստանյալը համաձայն է, որ նրա

նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով: Անձի համաձայնությունն ստանալու դեպքում դատարանը պարտավոր է դադարեցնել նրա նկատմամբ քրեական հետապնդումը, իսկ համաձայնության բացակայության դեպքում պետք է դատական քննությունը շարունակի ընդհանուր կարգով, սակայն դատավճիռ կայացնելիս՝ դադարեցնի անձի նկատմամբ քրեական հետապնդումը:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ այն դեպքում, երբ առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 6-րդ մասի պահանջները, քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու դեպքում ընդհանուր կարգով շարունակում են դատական քննությունը և դատական ակտ են կայացնում՝ առանց անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու, ապա Վճռաբեկ դատարանը պարտավոր է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով դադարեցնել անձի նկատմամբ քրեական հետապնդումը: Նշված հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ անձն արդեն իրացրել է օրենքով սահմանված կարգով իր մեղավորության հարցը համապատասխան դատական ատյաններում վիճարկելու իր իրավունքը: Այլ խոսքով՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում, որ անձն արդեն հնարավորություն ունեցել է ինչպես առաջին ատյանի դատարանում, այնպես էլ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում (վերջին դեպքում՝ վճռաբեկ բողոք բերելու միջոցով) վիճարկել իրեն առաջադրված մեղադրանքը, հետևաբար պարտավոր չէ անձից լրացուցիչ ճշտել, թե նա չի առարկում արդյոք, որ իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

26. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով ամբաստանյալների մեղավորության վերաբերյալ հանգելով ճիշտ հետևության (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը), միևնույն ժամանակ հաշվի չեն առել այն հանգամանքը, որ ամբաստանյալներին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով մեղսագրված արարքները հանդիսացել են շարունակվող հանցագործություն, որի համար ամբաստանյալներին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն ավարտվել է վերջին արարքը կատարելու պահից երկու տարի հետո, այսինքն՝ այն ժամանակ, երբ գործը գտնվել է դատական քննության փուլում վաղեմության ժամկետներն անցած են եղել (տե՛ս սույն որոշման 23-րդ կետը): Արդյուն-

քում, ստորադաս դատարանները, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 6-րդ մասի պահանջները, քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու դեպքում ընդհանուր կարգով շարունակել են սույն գործի դատական քննությունը և դատական ակտ են կայացրել՝ առանց ամբաստանյալների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու:

27. Սույն որոշման նախորդ կետում առկա եզրահանգումը վերլուծելով սույն որոշման 18-21-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրսորներ ապօրինի պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու, առաքելու կամ դրանք ապօրինի իրացնելու համար պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով ամբաստանյալների նկատմամբ քրեական հետապնդումը սույն գործով ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով: ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով ամբաստանյալների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ վերջիններս արդեն հնարավորություն ունեցել են ինչպես առաջին ատյանի դատարանում, այնպես էլ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում (վերջին դեպքում՝ վճռաբեկ բողոք բերելու միջոցով) վիճարկել իրենց առաջադրված մեղադրանքը (տե՛ս սույն որոշման 25-րդ կետը):

Վերոգրյալից բացի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Գատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝ 1) գործով վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման համար հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը չի կարճել վարույթը կամ չի դադարեցրել հետապնդումը. (...)»:

Նշված քրեադատավարական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ս. Հովհաննիսյանի* գործով կայացված որոշման մեջ՝ արձանագրելով, որ «(...) վարույթի կարճման հիմքերի առկայության դեպքում քրեական գործով դատական քննություն չիրականացնելու կանոնը պետք է մեկնաբանվի քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի իրավական նշանակությանը համապատասխան. այն չպետք է հիմք հանդիսանա առերևույթ կամայականության համար: Այսինքն՝ այս կանոնը պետք է կիրառվի միայն այն ժամանակ, երբ վարույթն իրականացնող դատարանը գործը վարույթ ընդունելիս չգիտեր և չէր կարող իմանալ, որ առկա են քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքեր: Հակառակ դեպքում Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտը ՀՀ քրեական դատավարության օրենսգր-

քի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիման վրա ենթակա է անվերապահ բեկանման՝ անկախ այն հանգամանքից, թե ով և ինչ հիմքով է վերաքննիչ բողոք ներկայացրել: Այլ խոսքով՝ գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի առկայության պայմաններում վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտի անվերապահ բեկանումը քրեադատավարական օրենքի իմպերատիվ պահանջ է (անվերապահ բեկանման հիմքերի մասին տե՛ս *mutatis mutandis* Մխիթար Էլոյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հունիսի 13-ի թիվ ԵԿԳ/0211/01/10 որոշումը)» (տե՛ս Սրապիոն Ազատի Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՍԳ/0204/01/11 որոշման 32-րդ կետը):

28. Սույն որոշման 18-27-րդ կետերում շարադրված վերլուծությունը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի հիման վրա ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանել և փոփոխել, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:

29. Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ամբաստանյալներին մեղսագրվող արարքների հիմնավորված չլինելու վերաբերյալ բողոքաբերների փաստարկներին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները, պատշաճ իրավական ընթացակարգերի շրջանակներում իրականացնելով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց, այդ թվում՝ ամբաստանյալների ցուցմունքները իրենց անմեղության վերաբերյալ գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, հանգել են ճիշտ հետևության, որ ամբաստանյալներ Ս.Ղամբարյանի, Ա.Բաղդասարյանի, Ս.Մկրտումյանի, Հ.Համբարձումյանի, Ա.Ռոստոմյանի, Ա.Վարդանյանի, Ա.Առաքելյանի, Ա.Լեպեջյանի և Ս.Խաչատրյանի կատարած հանցանքներն ապացուցված, և նրանց մեղավորությունը հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Մասնավորապես, նրանց մեղքը հաստատված է, իսկ բողոքաբերների պատճառաբանությունները հերքված են վկաներ Արտակ Գրիգորյանի, Գագիկ Հովհաննիսյանի, Վարուժան Մելքոնյանի, Գարիկ Ասրյանի, Սաշիկ Թովմասյանի, Արամ Հակոբյանի, Արման Մարգարյանի, Քամալ Հատյանի, Կարա-

պետ Կարապետյանի և այլոց ցուցմունքներով, ամբաստանյալների մասնակի խոստովանական ցուցմունքներով, դատաքիմիական փորձաքննությունների եզրակացություններով, զննության, խուզարկության, առգրավման արձանագրություններով, դատարանում հետազոտված իրեղեն ապացույցներով (տե՛ս քրեական գործ, հատոր 15-ի թերթ 45-82):

Հետևաբար, ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքները հիմնավորված չլինելու վերաբերյալ բողոքաբերների փաստարկները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում, ուստի հիմք չեն կարող հանդիսանալ ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու, ամբաստանյալներին արդարացնելու կամ գործը նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ամբաստանյալներ Սիրաժ Գաբրիելի Ղամբարյանի և Արմեն Վլադիմիրի Բաղդասարյանի պաշտպան Վ.Գրիգորյանի, ամբաստանյալներ Արա Գեորգիի Ռոստոմյանի, Հակոբ Գերենիկի Համբարձումյանի և Սամվել Համբարձումի Սկրտումյանի պաշտպան Կ.Քամալյանի, ամբաստանյալ Աղվան Վանիկի Վարդանյանի պաշտպան Ա.Մուխսիկարոյանի, ամբաստանյալ Աշոտ Հովհաննեսի Առաքելյանի պաշտպան Գ.Պապոյանի, ամբաստանյալ Արմեն Պողոսի Լեպեջյանի և նրա պաշտպան Գ.Սարդարյանի, ամբաստանյալ Սամվել Սերգեյի Խաչատրյանի և նրա պաշտպան Ա.Մուխսիկարոյանի վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն:

2. Սիրաժ Գաբրիելի Ղամբարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ՝ թողնելով կրելու ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ 7 (յոթ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումը՝ առանց գույքի բռնագրավման:

3. Արմեն Վլադիմիրի Բաղդասարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մա-

սի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ՝ թողնելով կրելու ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանցանքների համակցությամբ նշանակված 10 (տասը) տարի ժամկետով ազատազրկումը՝ առանց գույքի բռնագրավման:

4. Մամվել Համբարձումի Մկրտումյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ՝ թողնելով կրելու ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ 7 (յոթ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով ազատազրկումը՝ առանց գույքի բռնագրավման:

5. Արա Գեորգիի Ռոստոմյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ՝ թողնելով կրելու ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանցանքների համակցությամբ նշանակված 8 (ութ) տարի ժամկետով ազատազրկումը՝ առանց գույքի բռնագրավման:

6. Աղվան Վանիկի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ՝ թողնելով կրելու

ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանցանքների համակցությամբ նշանակված 10 (տասը) տարի ժամկետով ազատազրկումը՝ առանց գույքի բռնագրավման:

7. Աշոտ Հովհաննեսի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ՝ թողնելով կրելու ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանցանքների համակցությամբ նշանակված 10 (տասը) տարի ժամկետով ազատազրկումը՝ առանց գույքի բռնագրավման:

8. Արմեն Պողոսի Լեպեջյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ՝ թողնելով կրելու ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանցանքների համակցությամբ նշանակված 10 (տասը) տարի ժամկետով ազատազրկումը՝ առանց գույքի բռնագրավման:

9. Սամվել Մերգեյի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ՝ թողնելով կրելու ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանցանքների համակցությամբ նշանակված 12 (տասներկու) տարի ժամկետով ազատազրկումը՝ առանց գույքի բռնագրավման:

10. Հակոբ Գերենիկի Համբարձումյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ

մասի 2-րդ կետով և 266-րդ հոդվածի 4-րդ մասով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը բեկանել և փոփոխել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառարանությամբ՝ թողնելով կրելու ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանցանքների համակցությամբ նշանակված 8 (ութ) տարի 11 (տասնմեկ) ամիս 26 (քսանվեց) օր ժամկետով ազատազրկումը՝ առանց գույքի բռնագրավման:

11. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը մնացած մասով թողնել անփոփոխ:

12. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

սրորագրություն

Դատավորներ՝

սրորագրություններ

10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԳԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵԷԳ/0132/01/13

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԵԷԳ/0132/01/13
Նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան
Գատավորներ՝ Ա.Դանիելյան
Լ.Թադևոսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ մեղադրող	Ա.ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Հրանտ Արայի Պարան-
յանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վե-
րաքննիչ դատարան) 2013 թվականի դեկտեմբերի 28-ի որոշման դեմ մեղադ-
րող Ա.Գասպարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2013 թվականի նոյեմբերի 11-ի դատավճռով Հրանտ Արայի Պարանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 4 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա որոշվել է Հ.Պարանյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան՝ 2 տարի ժամկետով՝ նրա վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դնելով գորամասի հրամանատարության վրա, իսկ գորացրվելուց հետո՝ ազատությունից գրկելու հետ չկապված պատիժների իրականացման համապատասխան ծառայության վրա: Ամբաստանյալ Հ.Պարանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ հրամանատարության հսկողությանը հանձնելը, թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի՝ օրինական ուժի մեջ մտնելը:

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 11-ի դատավճռի դեմ մեղադրողի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

3. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի որոշման դեմ Երևանի կայագործի զինվորական դատախազության ավագ դատախազ, գործով մեղադրող Ա.Գասպարյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 10-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Հ.Պարանյանի պաշտպան Հ.Իսրայելյանը՝ խնդրելով մեղադրողի վճռաբեկ բողոքը մերժել, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնել օրինական ուժի մեջ:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4. Նախաքննության մարմինը Հ.Պարանյանին մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ նա. «(...) 14.08.2013թ. ժամը 06:30-ի սահմաններում, վերկացից հետո իրեն վար է զգացել, չի իջել մարմնամարզության և պառկել է մահճակալին: Այդ ժամանակ վաշտի հերթապահ, կրտսեր սերժանտ Արսեն Ավագյանը դիմել է Հ.Պարանյանին և ասել, որ իջնի և միանա շարքին: Հ.Պարանյանը պատասխանել է, որ իրեն չասի, թե ինքն ինչ անի, որից հետո Ա.Ավագյանը ևս մեկ անգամ պարտադրել է, որ իջնի և միանա շարքին: Հ.Պարանյանը, իջնելով շարահրապարակ, մասնակցել է մարմնամարզությանը, այնուհետև ժամը 07:30-ի սահմաններում Պարանյանը մտել է ՀՏՄ լսարան և վերը նշված հարցի շուրջ վիճաբանության մեջ է մտել Ա.Ավագյանի հետ, որի

ժամանակ Հ. Պարանյանը զինվորական ծառայության պարականոնությունները կատարելու կապակցությամբ բռնություն է գործադրել ՀՀ ՁՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 32-րդ և 34-րդ հոդվածների համաչափ ծառայության և զինվորական կոչման բերումով իր նկատմամբ պետ հանդիսացող վաշտի հերթապահ, կրտսեր սերժանտ Ա.Ավագյանի նկատմամբ՝ բռնացրով հարված հասցրել վերջինիս դեմքին՝ պարճառելով թեթև աստիճանի ծանրության մարմնական վնասվածք» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 84-87):

5. Դատաբժշկական փորձագետի թիվ 1413/հ եզրակացության համաձայն՝ «Զադ. Ա.Ավագյանի մարմնական վնասվածքները՝ զույգ սրտոքին կոպերի շրջանների արյունազեղումների, քթակրերի տեղաշարժված կոտրվածքի ձևով, հասցվել են բութ, կոշտ, սահմանափակ մակերես ունեցող առարկայով հնարավոր է նշված ժամկետում և հանգամանքում, որոնք առաջացրել են առողջության թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով, (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 46-47):

Ա.Ավագյանի հիվանդության պատմության համաձայն՝ դեպքից հետո Ա.Ավագյանն ուղեգրվել է զինվորական հոսպիտալ, որտեղ տասներեք օր ստացել է բուժօգնություն, այն է՝ անցել է համապատասխան հետազոտություններ, իսկ մարմնական վնասվածքի հետևանք հանդիսացող այտուցները նվազելուց հետո նրա քթակրերի տեղաշարժը ուղղվել է, և քիթը ֆիքսվել է գիպսե վիրակապով (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 46-57):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «Դատարանն արագացված կարգով իրականացված դատական քննության ընթացքում ուսումնասիրելով ամբաստանյալի անչը բնութագրող տվյալները, պարասիսանարվությունը և պարիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հաշվի առնելով առաջադրված մեղադրանքի հետ ամբաստանյալ Հ. Պարանյանի համաչափ լինելու փաստը, գտնում է, որ ամբաստանյալ Հ. Պարանյանը կատարել է հանցանք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 358 հոդվածի 3 մասի 3-րդ կետով և նշված հոդվածով պետք է ենթարկվի պարասիսանարվության:

Պարժի տեսակ և չափ նշանակելիս, դատարանը հաշվի է առնում կատարված հանցագործության բնույթն ու հանրության համար վրանգավորության աստիճանը, ամբաստանյալի անչը, այն, որ ամբաստանյալ Հ. Պարանյանը նախկինում արարավորված և դատապարտված չի եղել, երիտասարդ է, անկեղծորեն զղջացել է կատարած արարքի համար, ժամկետային զինծառայությանը մնացել է 6 ամիս ժամկետ, գորամասի հրամանատարության կողմից բնութագրվում է դրականորեն, ֆիզկապես վատառողջ է, տառապում է ողնաշարային հիվանդությամբ, որի կապակցությամբ ՀՀ ՊՆ 26.02.2010թվ. թիվ. 175-Ն հրամանի 26-րդ հոդվածի «Դ» կետի համաչափ, սահմանափակումներով է պիտանի ճանաչվել զինվորական ծառայության համար, հաշտվել է տուժող Ա.Ավագյանի հետ, վերջինս դատարանում որևէ բողոք կամ այլ պահանջ չներկայացրեց հայրենի, որ տեղի ունեցածը բյուրիմացություն է եղել, ներկայումս հաշտվել է ամբաստանյալի հետ, (...) մտերիմ ընկերներ

են և խնդրեց դատարանին նրան չենթարկել քրեական պատասխանատվության և պարծի: Ամբաստանյալ Հ. Պարանյանի համար պատասխանատվությունը մեղմացնող և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ դատարանը դատաքննությանը չհայտնաբերեց:

Միաժամանակ, հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, ամբաստանյալ Հ. Պարանյանի անչք բնութագրող փվյալները, նրա փարիքը, փուժողի բողոքի բացակայությունը, պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ժամկետային զինծառայությանը մնացած 6 ամսվա ժամկետը, զորամասի հրամանատարության կողմից դրականորեն բնութագրվելը, ինչպես նաև ամբաստանյալ Հ. Պարանյանի առողջական վիճակը, որի կապակցությամբ վերջինս սահմանափակումներով է պիտանի ճանաչվել զինվորական ծառայության համար, դատաքննության ընթացքում ամբաստանյալի պարզաձ վարքագիծը, դատարանը հանգում է հետևության, որ ամբաստանյալ Հրանտ Արայի Պարանյանի ուղղվելը հնարավոր է առանց նրան հասարակությունից մեկուսացնելու, առանց պարիժը կրելու: (...)»(տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 143-144):

7. Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանի եզրահանգումները հիմնավոր են, բխում են ինչպես գործող օրենսդրության պահանջներից, այնպես էլ գործի փաստական հանգամանքներից ու տվյալներից: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 32-38):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Հ. Պարանյանի նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ մեղմ է, Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում: Մասնավորապես՝ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 48-րդ և 70-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, առանց հաշվի առնելու, որ Հ. Պարանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը կխաթարի ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով նախատեսված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատիժ նպատակները, որպես Հ. Պարանյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է դիտել հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, նրա անձը, ինչպես նաև այն, որ նա նախկինում

դատապարտված չի եղել, երիտասարդ է, անկեղծորեն զղջացել է կատարածի համար, զորամասի հրամանատարության կողմից բնութագրվում է դրական, ֆիզիկապես վատառողջ է՝ տառապում է ողնաշարային հիվանդությամբ, որի կապակցությամբ սահմանափակումներով է պիտանի ճանաչվել զինվորական ծառայության համար, հաշտվել է տուժողի հետ, վերջինս դատարանում որևէ բողոք կամ պահանջ չի ներկայացրել և խնդրել է Հ.Պարանյանին չենթարկել քրեական պատասխանատվության ու պատժի:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ Հ.Պարանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անհրաժեշտության վերաբերյալ իր եզրահանգումները Վերաքննիչ դատարանը հիմնավորել է Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով՝ առանց հաշվի առնելու, որ «ամբաստանյալ Հ.Պարանյանի կատարած արարքը դասվում է ծանր հանցագործությունների շարքին, բացի այդ վերջինիս կատարած արարքը կարող է համատարած բնույթ կրել ՀՀ զինված ուժերում»:

9. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է Հ.Պարանյանի նկատմամբ նշանակված պատժի մասով Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նոր քննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի համատեքստում հանցագործության կատարման հանգամանքների գնահատման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Հ.Պարանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս ստորադաս դատարաններն անձին մեղաազրվող հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի համատեքստում պատշաճ գնահատման ենթարկել¹ են արդյոք Հ.Պարանյանի հանցանքի կատարման հանգամանքները:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կա-

րող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

(...)»:

Մեջբերված քրեաիրավական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել թիվ ՎԲ-50/07, ՎԲ-139/07, ՎԲ-195/07, ՎԲ-192/07, ՎԲ-201/07, ՎԲ-01/08, ԵԿԳ/0034/01/08, ԱՎԳ-2/0059/01/08, ՀՅԲԲԳ-3/0109/01/08, ԵԲԲԳ/0571/01/08, ԱՎԳ/0100/01/08, ԱՐԳ/0117/01/08, ԱՐԱԳ/0050/01/08, ԵԱԲԳ/0078/01/09, ԼԳ-2/0019/01/09, ՍԳ/0226/01/09, ԵԱԲԳ/0120/01/09, ԵԷԳ/0138/01/09, ԳԳ-1/0003/01/10, ՍԳ/0085/01/10, ԵԿԳ/0126/01/10, ԵԱՆԳ/0091/01/09, ԵԷԳ/0201/01/11, ԵԱԳԳ-0034/01/12, ԼԳ/0093/01/12, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում:

Վերոնշյալ որոշումներում Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունը, որ ամբաստանյալի ուղղումը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու: Գատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքի ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, սակայն դատարանը, կոնկրետ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատման հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը, անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պարտավոր է հաշվի առնել՝

ա) հանցավորի անձը բնութագրող տվյալները,

բ) պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և (կամ) ծանրացնող հանգամանքները,

գ) հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը,

դ) հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները,

ե) հանցանք կատարած անձի մեղքի ձևը,

զ) հանցանք կատարած անձի կողմից հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը և այլն:

13. Սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծությունից երևում է, որ անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը, ի թիվս այլոց, պետք է հաշվի առնի ինչպես անձին մեղսագրվող հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, այնպես էլ այդ հանցագործության կատարման հանգամանքները:

Հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Գ. Մաղաթյանի* գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «Արաբքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արաբքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (տե՛ս Գարուշ Նորիկի Մաղաթյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

Ինչ վերաբերում է հանցագործության կատարման հանգամանքներին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք յուրաքանչյուր քրեական գործով պետք է գնահատման ենթարկվեն հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի համատեքստում: Գնահատման արդյունքում դատարանը պետք է պարզի հանցավոր վարքագծի դրսևորմանը նախորդող և ուղեկցող հանգամանքները, հանցավոր վարքագծի դրսևորման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և այլն:

14. ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 1-ին հոդվածի համաձայն. «Ձորամասում զինծառայողների ամենօրյա կյանքն ու գործունեությունն իրականացվում է ներքին ծառայության պահանջներին համապատասխան:

Ներքին ծառայությունը նախատեսված է գորամասի ներքին կարգուկանոնի և զինվորական կարգապահության պահպանման համար, որոնք ապահովում են նրա մշտական մարտական պատրաստականությունը, անձնակազմի ուսուցումը, առօրյա կյանքում նրանց կողմից այլ խնդիրների կազմակերպված կատարումը և զինծառայողների առողջության պահպանումը: (...):»:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ձինծառայողը պարտավոր է.

(...)

- խստորեն պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ու օրենքները, կատարել զինվորական կանոնադրությունների պահանջները,

(...)

- (...) հարգել [ընկերներից] յուրաքանչյուրի պատիվն ու արժանապատվությունը, իր և ուրիշ զինծառայողների նկատմամբ թույլ չտալ կոպտություն և ծաղրածանակ, (...)»:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 31-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Հրամանի քննարկումն անթույլատրելի է, իսկ չենթարկվելը կամ հրամանը չկատարելը համարվում է զինվորական հանցագործություն»:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 32-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

Պետն իրավունք ունի ենթակային հրամաններ տալ և պահանջել դրանց կատարումը: Պետը ենթակայի համար պիտի լինի պատվի և զսպվածության օրինակ և չպիտի թույլ տա ո՛չ տնավարություն, ո՛չ էլ կանխատրամադրվածություն: Ենթակայի մարդկային արժանապատվությունը ստորացնող գործողությունների համար պետը պատասխանատվություն է կրում:

Ենթական պարտավոր է անվերապահորեն կատարել պետի հրամանները: Հրամանը կատարելով՝ նա կարող է բողոքել, եթե կարծում է, թե իր նկատմամբ ճիշտ չեն վարվել»:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 41-րդ հոդվածի համաձայն՝ «**Հրամանատարի (պետի) հրամանը պետք է կատարվի անվերապահորեն, ճշտորեն և նշված ժամկետում: Զինծառայողը, ստանալով հրամանը, պատասխանում է «Լսում եմ» և հետո կատարում այն: (...)**»:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի վերոշարադրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ զինծառայողները, զինվորական պետերը (հրամանատարները) պարտավոր են միմյանց և ենթակաների նկատմամբ հարգանք դրսևորել, պահպանել նրանց անձնական արժանապատվությունը և զինվորական քաղաքավարության կանոնները: Այս համատեքստում ենթական պարտավոր է անվերապահորեն, ճշտորեն և նշված ժամկետում կատարել պետի հրամանները:

«ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Հրամանատարական ուղղահայացի և միանձնյա ղեկավարման ասպահովման պայմաններն են հրամանատարի (պետի) հրաման արձակելու իրավունքը և ենթակա զինծառայողի անառարկելիորեն ենթարկվելու պարտականությունը»:

«ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կարգապահական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ են համարվում՝

1) հակաիրավական վարքագիծը շարունակելը, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց պահանջին.

(...):»:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հանգամանքներում կատարված կարգապահական իրավախախտումները համարվում են կոպիտ կարգապահական խախտումներ»:

15. ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի, ինչպես նաև «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի վերոշարադրյալ դրույթները վերլուծելով սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված նախադեպային իրավունքի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի քննարկման ժամանակ դատարանը, հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի համատեքստում, պետք է պատշաճ գնահատման ենթարկի հանցագործության կատարման հանգամանքները, մասնավորապես՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կատարման ժամանակ հանցավոր վարքագծի դրսևորմանը նախորդող և ուղեկցող հանգամանքները, հանցավոր վարքագծի դրսևորման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և այլն:

16. Սույն գործի նյութերից երևում է, որ շարքային Հ.Պարանյանն իր նկատմամբ պետ հանդիսացող կրտսեր սերժանտ Ա.Ավագյանի՝ վերկացից հետո մարմնամարզության իջնելու օրինական պահանջին չի ենթարկվել և պատասխանել է, որ նա չասի, թե ինքն ինչ անի: Պետի կողմից նույն պահանջը երկրորդ անգամ հնչեցնելուց հետո Հ.Պարանյանն իջել է շարահրապարակ, սակայն քիչ անց սկսել է վիճաբանել պետի հետ: Վիճաբանության ընթացքում Հ.Պարանյանը բռունցքով հարված է հասցրել իր նկատմամբ պետ հանդիսացող վաշտի հերթապահ, կրտսեր սերժանտ Ա.Ավագյանի դեմքին՝ պատճառելով զույգ ստորին կոպերի շրջանների արյունազեղումների, քթոսկրերի տեղաշարժված կոտրվածքի ձևով վնասվածք: Դեպքից հետո Ա.Ավագյանն ուղեգրվել է զինվորական հոսպիտալ, որտեղ տասներեք օր ստացել է բուժօգնություն, այն է՝ անցել է համապատասխան հետազոտություններ, իսկ մարմնական վնասվածքի հետևանք հանդիսացող այտուցները նվազելուց հետո նրա քթոսկրերի տեղաշարժը ուղղվել է, և քիթը ֆիքսվել է գիպսե վիրակապով (տե՛ս սույն որոշման 4-5-րդ կետերը):

17. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետերում մեջբերված և վերլուծված՝ ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի, ինչպես նաև «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի համապատասխան դրույթների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Պարանյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիր-

րառելու վերաբերյալ որոշում կայացնելիս ստորադաս դատարաններն անձին մեղսագրվող հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի համատեքստում պատշաճ գնահատման չեն ենթարկել Հ.Պարանյանի կողմից կատարված՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությանը նախորդող և ուղեկցող մի շարք հանգամանքներ: Մասնավորապես, Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները հաշվի չեն առել այն, որ Հ.Պարանյանը, շարահրապարակ իջնելու պարտականությունը չկատարելով հանդերձ, չի ենթարկվել շարահրապարակ իջնելու վերաբերյալ իր պեղծի օրինական կարգադրությանը՝ պատասխանելով, որ «իրեն չասի, քե ինքն ինչ անի»: Պեղծի կողմից նույն պահանջը երկրորդ անգամ հնչեցնելուց հետո Հ.Պարանյանն իջել է շարահրապարակ, սակայն քիչ անց սկսել է վիճաբանել պեղծի հետ: Վեճի ընթացքում Հ.Պարանյանը, խախտելով ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի, ինչպես նաև «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը), զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ բռնություն է գործադրել ՀՀ ՉՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 32-րդ և 34-րդ հոդվածների համաչափ ծառայության և զինվորական կոչման քերուժով իր նկատմամբ պեղծի հանդիսացող վաշտի հերթապահ, կրտսեր սերժանտ Ա.Ավագյանի նկատմամբ: Բռնության արդյունքում Ա.Ավագյանին զույգ պորթին կոպերի շրջանների արյունազեղումների, քթուկների տեղաշարժված կոպրվածքի ձևով վնասվածք է պատճառվել: Գեպքից հետո Ա.Ավագյանն ուղեգրվել է զինվորական հոսպիտալ, որտեղ փասներեք օր սրացել է բուժօգնություն, այն է՝ անցել է համապատասխան հերթադրություններ, իսկ մարմնական վնասվածքի հետևանք հանդիսացող այրուցները նվազելուց հետո նրա քթուկների տեղաշարժը ուղղվել է, և քիթը ֆիքսվել է գիպսե վիրակապով:

Բացի այդ, Հ.Պարանյանի կողմից պեղծի հետ վիճաբանությունն սկսելը հանդիսացել է «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքով արգելված վարքագծի շարունակություն, որը կարգապահական կոպիտ խախտում է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հանգամանքները վկայում են ինչպես հանցավորի, այնպես էլ նրա կատարած արարքի բարձր հանրային վրանգավորության մասին, և նման պայմաններում Հ.Պարանյանի նկատմամբ նշանակած պարտիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերում առկա եզրահանգումները չեն կարող գնահատվել որպես հիմնավորված և պատճառաբանված:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Հ.Պարանյանին մեղսագրվող հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի համատեքստում՝ որպես հանցավորի և նրա արարքի բարձր հանրային վտանգավորության մասին վկայող հանգամանք գնահատման է ենթակա նաև

այն, որ Հ.Պարանյանին մեղսագրվող արարքը դասվում է ծանր հանցագործությունների թվին:

18. Հիմք ընդունելով սույն որոշման 12-17-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը՝ Հ.Պարանյանի նկատմամբ նշանակած ազատագրկման ձևով պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չկիրառելով, իսկ Վերաքննիչ դատարանը՝ ստորադաս դատարանի դատական ակտը օրինական ուժի մեջ թողնելով՝ թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերի՝ 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող անօրինական և չիմնավորված որոշման կայացմանը:

19. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հ.Պարանյանի՝ առանց պատիժը կրելու ուղղվելու հնարավորության վերաբերյալ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների եզրահանգումները, ի թիվս այլոց, հիմնված են «դատաքննության ընթացքում ամբաստանյալի պատշաճ վարքագծի» գնահատման վրա (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը): Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բոլորը պարտավոր են դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորել»: Այլ խոսքով՝ դատարանում պատշաճ վարքագիծ դրսևորելը և դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունքը դատավարությանը մասնակցող անձի պարտականությունն է, այն չի կարող գնահատվել որպես անձը բնութագրող հանգամանք և, հետևաբար, չի կարող հաշվի առնվել նշանակված պատժի կրման անհրաժեշտության հարցը լուծելիս:

20. Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն պնդմանը, թե Հ.Պարանյանի նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ մեղմ է (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Ս.Սարգսյանի* գործով Վճռաբեկ դատարանի որոշման համաձայն՝ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ դատավճռով նշանակված պատժի անհամապատասխանությունը կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին, որպես դատական ակտը բեկանելու կամ փոփոխելու հիմք՝ անկախ նրանից, թե նշանակված պատիժն անարդարացի է՝ ակնհայտ խիստ է, թե ակնհայտ մեղմ, պայմանավորված է կիրառվող հոդվածի սանկցիայում նախատեսված պատժատեսակով և պատժաչափով, և այն չի կարող տարածվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության կամ չկիրառելիության վրա:

(...) պատիժը մեղմացնելը և պատիժը պայմանականորեն չկիրառելը երկու առանձին, ինքնուրույն քրեաիրավական ինստիտուտներ են, որոնց կիրա-

ռունը տարբեր հետևանքներ է առաջացնում: Մասնավորապես, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի նկատմամբ նշանակված պատիժն ի կատար չի ածվում, իսկ պատժի մեղմացման դեպքում փոփոխվում են ի կատար ածվող պատժի ժամկետները կամ հենց պատժատեսակը» (տե՛ս Սերոբ Ֆրունզիկի Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԳ-/0109/01/12 որոշման 45-46-րդ կետերը):

21. Սույն որոշման 18-րդ կետում արձանագրված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Հրանտ Արայի Պարանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

11.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԿԴ/0029/01/13
Նախագահող դատավոր՝ Ե.Դարբինյան
Դատավորներ՝ Գ.Ավետիսյան
Ս.Չիչոյան

ԿԴ/0029/01/13

ՀՀ վճռարեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռարեկ դատարան)

նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍՍՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ մասնակցությամբ ամբաստանյալ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ Ա.ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գագիկ Հայկի Մինասյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի փետրվարի 4-ի որոշման դեմ մեղադրող Գ.Խանգադյանի վճռարեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի հունիսի 15-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնում Գարիկ Մաթևոսյանի առողջությանը ղիտավորությամբ ծանր վնաս պատճառելու փաստի առթիվ հարուցվել է թիվ 49106413 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նշված հանցանքը կատարելու կասկածանքով նույն օրը ձերբակալվել է Գագիկ Մինասյանը:

2013 թվականի հունիսի 18-ի որոշմամբ Գ.Մինասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2013 թվականի հունիսի 18-ի որոշմամբ բավարարվել է Գ.Մինասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին քննիչի միջնորդությունը, և կալանավորումը փոխարինվել է գրավով՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Նախաքննության մարմնի 2013 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ Գ.Մինասյանի կողմից տուժողներ Վ.Մաթևոսյանի և Գ.Հակոբյանի առողջությանը դիտավորությամբ թեթև վնաս պատճառելու փաստով Գ.Մինասյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է տուժողների հետ հաշտվելու հիմքով:

2013 թվականի հոկտեմբերի 4-ին Գ.Մինասյանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան:

2. Առաջին ատյանի դատարանը, դատական քննության արագացված կարգով քննելով գործը, 2013 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ Գ.Մինասյանի նկատմամբ կիրառել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) 5-րդ կետի 3-րդ ենթակետը, Գ.Մինասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցրել է:

3. Մեղադրող Գ.Խանգաղյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2014 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի փետրվարի 4-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել մեղադրող Գ.Խանգաղյանը:

Վճարելի դատարանի 2014 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ մեղադրող Գ.Խանգաղյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճարելի բողոքի պատասխան չի ստացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Գ.Մինասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «*նա 14.06.2013թ.՝ ժա-*

մը 23.00-ի սահմաններում, Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասում գրնվող՝ «Հրազդանի ԲԿ» ՓԲԸ-ի ծննդատան և ինֆեկցիոն բաժանմունքների դիմաց առկա հարվածում, իր և Վալեր Արամայիսի Մաթևոսյանի նորածին երեխաների վերաբերյալ առաջացած խոսակցության, ապա վերանձած վիճաբանության ժամանակ, գրնվելով ոգելից խմիչքի ազդեցության տակ, նշված հարվածում կայանված իր մեքենայի շարժիչի ծածկոցի վրայից վերցրել է խոհանոցային դանակը և դրանով հարվածներ հասցրել ներկաներին, որի հետևանքով Գարիկ Արամայիսի Մաթևոսյանի առողջությանը դիտավորությանը պատճառել է ծանր վնաս» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 135, 261-267):

6. Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 14-ի որոշման համաձայն՝ «Ամբաստանյալ Գ.Մինասյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, որի սանկցիան նախատեսում է պատիժ՝ ազատազրկում՝ երեքից յոթ տարի ժամկետով:

Փաստորեն, ամբաստանյալ Գ.Մինասյանի նկատմամբ արագացված կարգով դատական քննության արդյունքում նշանակվող պատիժը չի կարող գերազանցել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առավել խիստ պատիժ՝ 7 տարի ժամկետով ազատազրկման երկու երրորդը, որը կազմում է 4 տարի 8 ամիս:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013թ. հոկտեմբերի 3-ի որոշման 5-րդ կետի 3-րդ ենթակետի՝ «քրեական հետապնդում չհարուցել և քրեական հետապնդում չիրականացնել, ինչպես նաև կարճել մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը կատարած հանցագործությունների վերաբերյալ (...) դատարանների վարույթում գրնվող քրեական գործերը (...), որոնցով սույն որոշման 2-րդ կետի 1-6-րդ ենթակետերում թվարկված անչինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան հինգ տարի ժամկետով ազատազրկում (...)»:

Ամբաստանյալ Գ.Մինասյանը մեղադրվում է մինչև 2013թ. սեպտեմբերի 1-ը կատարած՝ (2013թ. հունիսի 14-ին) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելու մեջ, որի համար նախատեսված առավել խիստ պատիժի երկու երրորդը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը:

Համաներման ակտի 2-րդ կետի 4-րդ ենթակետում թվարկված անչինք են՝ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անչինք:

Ըստ գործում առկա նյութերի՝ ամբաստանյալ Գ.Մինասյանը խնամքին ունի մինչև երեք տարեկան երկու երեխաներ՝ Արմեն Գագիկի Մինասյան, ծնված 11.08.2011թ. և Արեն Գագիկի Մինասյան, ծնված 14.06.2013թ.:

(...)

Հիմք ընդունելով վերը շարադրվածը և նկատի ունենալով, որ ամբաստանյալ Գ. Մինասյանի նկատմամբ համաներման որոշման կիրառման սահմանափակումները գործի նյութերում բացակայում են, դատարանը գրնում է, որ ամբաստանյալ Գ. Մինասյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, քրեական գործի վարույթը պետք է կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 82-86):

7. Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ Առաջին ատյանի դատարանը կիրառել է այն նորմը, որը ենթակա է եղել կիրառման և անդրադառնալով վերաքննիչ բողոքում տեղ գտած այն փաստարկին, որ Գ. Մինասյանի նկատմամբ Համաներում հայտարարելու մասին որոշումը կիրառելիս Առաջին ատյանի դատարանը պետք է հիմք ընդուներ վերջինիս մեղսագրվող հանցագործության համար ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված պատժի առավելագույն չափը (յոթ տարի ժամկետով ազատազրկումը)՝ առանց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառման՝ արձանագրել է. «(...) [այդ փաստարկը] անհիմն է, քանի որ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013թ. հոկտեմբերի 3-ի որոշման 18-րդ կետը հստակ սահմանում է, որ՝

«Սույն որոշումը կիրառվում է արարքի հանցավորությունը վերացնող, պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո»:

Բացի այդ (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այլ օրենքներում պարունակվող քրեական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն քրեական դատավարության օրենսգրքին, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված վարույթի կարգը պարտադիր է դատարանների և դատավարության մասնակիցների համար: Այսինքն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կիրառման առումով նշված օրենքը մյուս օրենքների, այդ թվում նաև ՀՀ քրեական օրենսգրքի նկատմամբ ունի առավել բարձր իրավաբանական ուժ, որովհետև կոնկրետ դեպքում սահմանում է արագացված դատաքննության դեպքում անձի նկատմամբ պարիժի նշանակման արտոնյալ պայմանները՝ դրա առավելագույն պարիժափի սահմանը: Վերաքննիչ դատարանն օրենքների իր մեկնաբանությունը հիմնավորում է նաև իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջներով՝ համաձայն որի հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերի՝ տվյալ դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի հակասության դեպքում պետք է կիրառվի ֆիզիկական անձ՝ ամբաստանյալ Գ. Մինասյանի համար նախընտրելի իրավական ակտ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածը» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 123-127):

3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքաբերի պնդմամբ սույն գործով դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի մի շարք նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում օրենսդիրը տարբերակում է կատարված հանցագործության համար նախատեսված սանկցիան և նշանակվող պատիժը՝ օգտագործելով «կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատիժ» արտահայտությունը: Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված սանկցիան և արագացված կարգի կիրառմամբ նշանակվող պատիժը չեն նույնանում: Այս կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ եթե արագացված կարգի կիրառմամբ նշանակվող առավելագույն պատժի սահմանագիծը դիտարկվի որպես հանրորեն վտանգավոր արարքի՝ օրենքով նախատեսված սանկցիա, ապա կստացվի, որ Գ.Մինասյանին մեղսագրվող արարքը, ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, դասվում է ոչ թե ծանր, այլ միջին ծանրության հանցագործությունների շարքին: Ավելին, որոշ դեպքերում ձևական բնույթ կերպի մաս օրենսդրի այն սահմանափակումը, որ դատական քննության արագացված կարգ կարող է կիրառվել, եթե անձը մեղադրվում է այնպիսի հանցանք կատարելու մեջ, որի համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 (տասը) տարի ժամկետով ազատազրկումը: Օրինակ այն իրավիճակում, երբ ամբաստանյալը կատարել է այնպիսի հանցանք, որի համար ազատազրկման ձևով նախատեսված պատիժը գերազանցում է տասը տարին, սակայն արագացված կարգի կիրառմամբ սանկցիան նվազում և դառնում է 10 (տասը) տարուց պակաս, ապա այդ պարագայում ևս հնարավոր կլինի իրականացնել դատական քննության արագացված կարգ, քանի որ ամբաստանյալին մեղսագրվող արարքի համար նախատեսված պատիժը նվազում է, և նրա նկատմամբ չի կարող նշանակվել ազատազրկման ձևով պատիժ՝ 10 (տասը) տարուց ավելի ժամանակով:

Վերոգրյալից բողոք բերած անձը հետևություն է արել այն մասին, որ սույն գործով դատարանների ձևավորած մոտեցումը ոչ թե համակարգային, այլ իրավիճակային լուծում է, որով խախտվում է նաև իրավական որոշակիության և օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքները, քանի որ նմանդեպքերում քրեական գործի վարույթի կարճման իրավասություն կունենա բացառապես առաջին ատյանի դատարանն այն պայմաններում, երբ օրենսդիրը վարույթն իրականացնող բոլոր մարմիններին հավասարապես տվել է համաներման կիրառմամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն:

Անդրադառնալով օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքին՝ բողոքաբերը փաստարկել է, որ միայն արագացված կարգի կիրառման արդ-

յունքում քրեական հետապնդման դադարեցման դեպքում ստացվում է, որ այն անձինք, ում նկատմամբ չի կիրառվել դատական քննության արագացված կարգ, կհայտնվեն անհավասար վիճակում՝ ի համեմատ նման միջնորդություն ներկայացրած անձանց: Ընդ որում, դա կարող է պայմանավորված լինել նաև այլ անձանց (դատախազ, տուժող) կամքով, ինչպես նաև դատարանի դիրքորոշմամբ, երբ դատարանը գտնի, որ անձը չի գիտակցում արագացված կարգի էությունը կամ իր կամքով չի ներկայացնում միջնորդությունը և այլն:

9. Բողոքաբերն անհամաձայնություն է արտահայտել դատական քննության արագացված կարգը բարելավող օրենք դիտարկելու վերաբերյալ հետևության հետ՝ նշելով, որ օրենքը կարելի է բարելավող համարել, եթե մինչ այդ նմանատիպ հարաբերություններն այլ ձև են կարգավորվել կամ այդ հարաբերությունը շարունակվում է նույն կերպ կարգավորվել, սակայն տվյալ պարագայում նոր օրենքի ընդունումը կամ օրենքի փոփոխությունն այլ կերպ բարելավում է անձի վիճակը: Բովանդակային մեկնաբանության ենթարկելով Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետը՝ բողոքաբերը փաստարկել է, որ օրենսդիրը դրանում ընդգրկել է այն դեպքը, երբ անձը կասկածվում է համապատասխան արարքի կատարման մեջ կամ առկա են իրական հիմքեր համապատասխան արարքի կատարման համար նրան մեղադրանք առաջադրելու համար, ինչպես նաև այն դեպքը, երբ անձին արդեն իսկ մեղադրանք է առաջադրվել այնպիսի հանցագործության հատկանիշներով, որոնց համար նախատեսված պատիժը չի գերազանցում 5 (հինգ) տարի ժամկետով ազատազրկումը:

Վերոգրյալից բողոք բերած անձը հետևություն է արել այն մասին, որ նախաքննության ընթացքում արդեն իսկ պարզ է դառնում արարքը (հետևաբար նաև՝ սանկցիան), որով անձը կարող է մեղադրվել կամ մեղադրվում է: Այսինքն, օրենսդիրը սանկցիայի իմաստով ի նկատի ունի այն, ինչն ի սկզբանե նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով: Հակառակ պարագայում օրենսդիրը «նախատեսված» բառի փոխարեն կօգտագործեր «կարող է նշանակվել» կամ «կարող է նախատեսվել» արտահայտությունը: Ի վերջո, արարքի պատժելիությունը որոշվում է միայն ՀՀ քրեական օրենսգրքով:

10. Բողոքաբերն անհամաձայնություն է արտահայտել նաև դատարանների այն եզրահանգման հետ, որի համաձայն՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի հիման վրա սույն գործով պետք է կիրառվի անձի՝ Գ.Մինասյանի համար նախընտրելի իրավական նորմը, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածը: Նշված անհամաձայնությունը բողոքի հեղինակը հիմնավորել է նրանով, որ հակասություն կարող է դիտարկվել այն, երբ հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերը հակասական, տարբերակված մոտեցում են դրսևորում միևնույն հարցի շուրջ: Մինչդեռ քրեական իրավունքի և քրեական դատավարության փոխադարձ կապը պայմանավորված է ձևի և բովանդակության հարաբերակցությամբ, և տվյալ պարագայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատական քննության արագացված կարգն ապահովում է ՀՀ

քրեական օրենսգրքի հատուկ մասի հողվածով նախատեսված սանկցիայի կիրառումը:

11. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ իր հիմնավորումներում բողոք բերած անձն ընդգծել է օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտությունը՝ վկայակոչելով կայացված այլ դատական ակտեր, որոնց համաձայն՝ արագացված դատական քննության արդյունքում Համաներման ակտի համապատասխան դրույթների կիրառմամբ ոչ թե կարճվել է քրեական գործով վարույթը, այլ ամբաստանյալներն ազատվել են նշանակված պատժից:

12. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 14-ի և Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 4-ի որոշումներն ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է, որը պայմանավորված է գործը դատական քննության արագացված կարգով քննելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի և Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառման կապակցությամբ ոչ միատեսակ դատական պրակտիկայի առկայությամբ (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը): Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնաց գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. գործը դատական քննության արագացված կարգով քննելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ պատիժ նշանակելու կանոնները կիրառելու պայմաններում Գ.Մինասյանի նկատմամբ տարածվու՞մ է արդյոք Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետը:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե ընդունվել է համաներման ակտ»:

Համաներման ակտի կիրառման առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Վ.Ավետիսյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «(...) Համաներման ակտի կիրառումը հնարավոր է դարձնելու ցանկացած փուլում: Ընդ որում, համաներման կիրառման սահմանափակումները նախարեսված են համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պետք է պահպանվեն համաներման ակտում նախարեսված այն կանոնները, որոնք սահմանում են անչանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներումը կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անչինք ինչ չափով պետք է օգտվեն համաներումից՝ պետք է ազատվեն քրեական պարտավանդությունից կամ պարտից, կամ կարող է մեղմացվել պարտիժը, կամ վերացվել դատվածությունը: Այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախարեսված համաներման չկիրառումը կամ նախարեսվածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության, առաջացնել օրենքի ոչ միարեսակ կիրառություն» (տե՛ս Վարուժան Գագիկի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԳ-3/0013/01/11 որոշման 16-րդ կետը):

16. Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ «Քրեական հետապնդում չհարուցել և քրեական հետապնդում չիրականացնել, ինչպես նաև կարճել մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը կատարած հանցագործությունների վերաբերյալ (...) դատարանների վարույթում գտնվող քրեական գործերը, (...) որոնցով՝ սույն որոշման 2-րդ կետի 1-6-րդ ենթակետերում թվարկված անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան հինգ տարի ժամկետով ազատազրկում»:

Համաներման ակտի 18-րդ կետի համաձայն՝ «Սույն որոշումը կիրառվում է արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո»:

Համաներման ակտի վերոշարադրյալ դրույթները վերլուծության ենթարկելով Վ.Ավետիսյանի գործով որոշման մեջ ձևավորված դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համաներման ակտի 18-րդ կետն անհրաժեշտ է մեկնաբանել տառացի՝ անվերապահորեն պահպանելով դրանում նախատեսված կանոնն այն մասին, որ անձի նկատմամբ Համաներման ակտի կիրառումը, ի թիվս այլ պայմանների, հնարավոր է անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո:

17. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի

միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը:

Մինչև դատաքննությունն սկսելը մեղադրողը դատարանի առաջարկությամբ կարող է իր դիրքորոշումը փոխել, թեպետ արագացված կարգ կիրառելու դեմ առարկել է մեղադրական եզրակացությունում:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքում դատարանը կիրառում է դատական քննության արագացված կարգ, եթե՝

1) ամբաստանյալը գիտակցում է իր կողմից ներկայացված միջնորդության բնույթը և հետևանքները, և

2) միջնորդությունը ներկայացված է կամավոր, և

3) պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո, եթե ամբաստանյալն ունի այդպիսին:

3. Դատարանը, գտնելով, որ ամբաստանյալի կողմից միջնորդություն ներկայացնելիս չեն պահպանվել սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված պայմանները, որոշում է ընդունում ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու մասին:

Դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է նաև, եթե պարզում է, որ ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ: (...) Ամբաստանյալի կամ մեղադրյալի անմեղսունակության առնչությամբ հիմնավոր կասկածների առկայության դեպքում դատարանը մերժում է արագացված կարգ կիրառելու միջնորդությունը՝ անցնելով ընդհանուր կարգով գործի քննությանը:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.2-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ամբաստանյալը (մեղադրյալը) դատական քննության արագացված կարգով անցկացնելու միջնորդություն կարող է ներկայացնել քրեական գործը դատարան ուղարկելու պահից մինչև դատաքննությունն սկսվելը:

2. Ներկայացված միջնորդությունը դատարանում պետք է հաստատվի պաշտպանի ներկայությամբ և նրա հետ խորհրդակցելուց հետո: Այն դեպքում, երբ ամբաստանյալը (մեղադրյալը) ներկայացրել է արագացված կարգ կիրառելու միջնորդություն և չունի պաշտպան, ապա դատարանը պարտավոր է ամբաստանյալին ապահովել պաշտպանով: Եթե ամբաստանյալին հնարավոր չէ անհապաղ ապահովել պաշտպանով, ապա դատարանը պաշտպանի մասնակցությունն ապահովելու նպատակով դատական նիստը հետաձգում է: Եթե ամբաստանյալը հրաժարվում է պաշտպան ունենալուց, ապա դատարանը արագացված կարգ կիրառելու միջնորդությունը մերժում է՝ անցնելով ընդհանուր կարգով գործի քննությանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

3. Գատավորը հարցեր է տալիս ամբաստանյալին համոզվելու համար՝ պարզ է արդյոք նրան առաջադրված մեղադրանքը, համաձայն է արդյոք նա մեղադրանքի հետ, պնդում է արդյոք արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին միջնորդությունը, արդյոք միջնորդությունը ներկայացվել է կամավոր, մինչև միջնորդությունը ներկայացնելը արդյոք խորհրդակցել է պաշտպանի հետ (եթե ամբաստանյալն ունի այդպիսին), գիտակցում է արդյոք արագացված կարգով դատական քննություն անցկացնելու հետևանքները:

4. Հարցերի արդյունքում դատարանը, համոզվելով, որ առկա են սույն օրենսգրքի 375.1 հոդվածով նախատեսված պայմանները, որոշում է կայացնում արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին: Հակառակ դեպքում դատական քննությունն իրականացվում է ընդհանուր կարգով:

(...)

6. Գատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա առավել մեղմ պատիժը:

(...):»:

Վերոշարադրյալ քրեադատավարական նորմերով սահմանված՝ դատական քննության արագացված կարգ կիրառելու հիմքերն ու պայմանները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Շ. Ամիրխանյանի և Գ. Ֆարմանյանի, ինչպես նաև Ա. Առուստամյանի գործերով կայացված որոշումներում (տե՛ս *mutatis mutandis* Շողակաթ Ժուլվերնի Ամիրխանյանի և Գ. առնիկ Մարտինի Ֆարմանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0209/01/10 և Անդրանիկ Գարիկի Առուստամյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՏԳ/0145/01/11 որոշումները):

18. ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԳ-Ռ-931 որոշման համաձայն՝

«(...) Արագացված կարգով դատական քննությունը քրեական դատավարության ձև է, որն օրենքով սահմանված կարգով միտված է գործն առավել մեղմ ժամկետում և պարզեցված կանոններով լուծելուն: Այս ինստիտուտի առանցքում «գործարքն» է քրեական դատավարության երկու կողմերի՝ մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև, որի շրջանակներում մեղադրյալը համաձայնում է առաջադրված մեղադրանքին, ինչի դիմաց նրա համար երաշխավորվում է պարժի այնպիսի չափ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պարժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պարժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պարժից՝ ապա առավել մեղմ պարժի, ինչպես նաև ամբաստանյալն ազատվում է ՀՀ

Քրեական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի 2-8-րդ կետերով նախատեսված դատական ծախսերից: Համաչայնելով արագացված դատաքննությանը՝ ամբաստանյալը նաև կամուփին հրաժարվում է մի շարք սահմանադրաիրավական երաշխիքներից, այն է՝ անմեղության կանխավարկածի սկզբունք, գործի հրապարակային քննության և այլ իրավունքներ: Մյուս կողմից՝ մեղադրողը հրաժարվում է մեղադրանքը պաշտպանելու իր գործառույթը լրիվ ծավալով իրականացնելուց՝ դրանով հնարավորություն ստանալով փնտրել իր միջոցները, ինչպես նաև մեղադրյալին (ամբաստանյալին) խրախուսել համագործակցելու քրեական հետապնդման մարմինների հետ» (տե՛ս Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ՄԴՈ-931 որոշման 6-րդ, 8-րդ և 11-րդ կետերը):

19. Սույն որոշման 17-18-րդ կետերում վկայակոչված՝ Վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական քննության արագացված կարգը գործող օրենսդրական կարգավորման պայմաններում կիրառվում է օրենսդրորեն սահմանված և դատական պրակտիկայում մշակված հստակ պայմանների առկայության պարագայում: Այդ պայմանների վերլուծությունը ցույց է տալիս, որ դատավարական այս կառուցակարգի նախադրյալներից մեկը համապատասխան սուբյեկտների (դատախազ, տուժող) կամարտահայտություն է: Բացի այդ, դատական քննության արագացված կարգի կիրառումը կախված է դրա համար անհրաժեշտ պայմանների առկայության մասին դատարանի տված իրավական գնահատականից, և ըստ այդմ, առանձին պայմանների գնահատման հարցում ենթադրում է որոշակի հայեցողություն դրսևորելու հնարավորություն (լուսքը, մասնավորապես, վերաբերում է դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը հարկադրաբար ներկայացնելու կամ միջնորդության բնույթն ու հետևանքները չգիտակցելու պայմաններին): Նշված հայեցողությունը, սակայն, բացարձակ բնույթ չի կրում, և դրա հնարավոր դրսևորման շրջանակները հստակ կանխորոշված են օրենքով (օրինակ՝ դատարանը մերժում է դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին միջնորդությունը, երբ առկա են հիմնավոր կասկածներ մեղադրյալի անմեղսունակության առնչությամբ, կամ ամբաստանյալը հրաժարվում է պաշտպան ունենալուց և այլն): Այլ կերպ՝ դատական քննության արագացված կարգի կիրառման, ինչպես նաև համապատասխան միջնորդության մերժման հիմքերն ու պայմանները հստակ սահմանված են օրենքով, և դրանց առկայության կամ բացակայության իրավական գնահատականը կախված չէ դատարանի սուբյեկտիվ դատորություններից: Փաստորեն, համապատասխան պայմանների առկայության պարագայում դատարանի կողմից դատական քննության արագացված կարգի

կիրառումն օրենսդրի պարտադիր պահանջն է, իսկ դատավարական այս մեխանիզմի գործադրման **անխուսափելի արդյունքը մեղադրական դատավճիռ կայացնելու դեպքում այնպիսի պատիժ նշանակելն է, որը չի կարող գերազանցել անչին մեղսագրվող հանցագործության համար նախատեսված առավել խիստ պարզի երկու երրորդը, կամ եթե այն փոքր է փվյալ հանցագործության համար օրենքով նախատեսված առավել մեղմ պատժից, սպա՝ առավել մեղմ պատժի:**

20. Հինք ընդունելով սույն որոշման 16-րդ կետում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի նկատմամբ Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառելիության հարցը լուծելիս անհրաժեշտ է պարզել, թե առկա չէ արդյոք արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք, որը ենթակա է կիրառման նախքան Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառումը: Անձի վիճակն այլ կերպ բարելավող է այն օրենքը, որը քրեական պատասխանատվության և պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու կարգի ու պայմանների հետ կապված առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում հանցանք կատարած անձի համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի իմաստով դատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը: Այլ խոսքով՝ արագացված դատական քննության արդյունքում անձի նկատմամբ նշանակվող պատժի առավելագույն ժամկետը ավելի մեղմ է, քան ընդհանուր կարգով գործի քննության արդյունքում նշանակվող պատիժը, ինչը նշանակում է, որ արագացված դատական քննության արդյունքում կիրառվող պատժի նշանակման կանոնները, ի համեմատ ընդհանուր կարգով գործի քննության արդյունքում կիրառվող պատժի նշանակման կանոնների, առավել նպաստավոր պայմաններ են ստեղծում հանցանք կատարած անձի համար:

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արագացված դատական քննության արդյունքում պատիժ նշանակելու կարգը Համաներման ակտի 18-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք:

21. Սույն որոշման նախորդ կետում առկա եզրահանգման լույսի ներքո գնահատելով բողոքաբերի փաստարկներն առ այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրված նորմը չի կարող դիտարկվել որպես բարելավող օրենք Համաներման ակտի 18-րդ կետի իմաստով (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոք բերած անձը տարածական է մեկնաբանում Համաներման ակտի 18-րդ կետում ամրագրված կարգավորումը՝ փորձելով նույնացնել այն ՀՀ

քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասում առկա կարգավորման հետ: Մինչդեռ Համաներման ակտի 18-րդ կետն անհրաժեշտ է մեկնաբանել տառացի (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը): Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի վերնագրից, այնպես էլ այդ հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմից ակնհայտ է, որ այն վերաբերում է քրեական օրենքի հետադարձության խնդրին: Այսպես, նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց (...) վրա (...)»: Մինչդեռ, Համաներման ակտի վերոհիշյալ կետը սահմանում է միայն, որ Համաներման ակտը կիրառվում է արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո: Այսինքն՝ Համաներման ակտի 18-րդ կետում, ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի վերը հիշատակված 13-րդ հոդվածի 1-ին մասի, չկա որևէ մատնանշում նոր ընդունված կամ փոփոխված օրենքը համապատասխան արարք կատարած անձանց վրա տարածելու կանոնի մասին: Բացի այդ, հետադարձ ուժի կանոնն արդեն իսկ կարգավորված է ՀՀ քրեական օրենսգրքում, կրում է համապարտադիր բնույթ, և այդ կանոնը գործելու է անկախ Համաներման ակտում նախատեսված լինելու հանգամանքից: Այսինքն՝ Համաներման ակտի 18-րդ կետը ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի վերաբառադրությունը չէ: Եվ վերոնշյալ նորմերի համեմատական վերլուծությունից բխում է, որ Համաներման ակտում խոսքը ոչ թե բացառապես նոր ընդունված կամ փոփոխված, այլև հանցանք կատարած անձի վիճակը բարելավող նաև գործող օրենքը կիրառելու մասին է: Իսկ դատական քննության արագացված կարգի դատավարական ինստիտուտը, մասնավորապես այս դեպքում պատժի նշանակման առանձնահատկությունները կանոնակարգող նորմերը միանշանակ բարելավում են անձի վիճակը, քանի որ դրանց կիրառման արդյունքում էապես կրճատվում է անձի կատարած համապատասխան արարքի համար նախատեսված պատժաչափը:

22. Սույն որոշման 20-րդ կետում առկա եզրահանգման լույսի ներքո գնահատելով բողոքարերի փաստարկներն առ այն, որ սույն գործով քննարկվող խնդրի առնչությամբ ստորադաս դատարանների ձևավորած դիրքորոշումը հակասում է իրավական որոշակիության և օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքներին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ անձին մեղսագրվում է այնպիսի հանցագործություն, որի համար օրենքով նախատեսված պատիժն ի սկզբանե չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը, վարույթն իրականացնող մարմինն իրավասու է Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ քրեական գործով վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել: Իսկ ինչ վերաբերում է դատական քննության արագացված կար-

զի կիրառման արդյունքում Համաներման ակտի վերը հիշտակված դրույթի կիրառմանը, ապա դա նշված որոշման գործողության տակ ընկնելու լրացուցիչ հնարավորություն է այն անձանց համար, ովքեր ներկայացրել են դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին միջնորդություն, որը համապատասխան հիմքերի և պայմանների առկայության շնորհիվ բավարարվել է, և ինչի արդյունքում օրենքի իմպերատիվ դրույթի ուժով վերջիններիս վերագրվող հանցագործության համար օրենքով նախատեսված պատժի վերին սահմանը երկու երրորդով կրճատվելու արդյունքում իջեցվել է՝ բավարարելով հինգ տարի ժամկետով ազատազրկումը չգերազանցելու չափանիշին կամ պատժի վերին սահման է դարձել տվյալ հանցագործության համար օրենքով նախատեսված առավել մեղմ պատիժը, որը դարձյալ չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը: Իսկ Համաներման ակտի քննարկվող դրույթի բովանդակային մեկնաբանությունը նշված լրացուցիչ երաշխիքն անձին ընձեռելու որևէ արգելք չի պարունակում: Եվ օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքին չի հակասում այն իրավիճակը, երբ համապատասխան հիմքերի և պայմանների բացակայության արդյունքում մերժվում է դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին միջնորդությունը, ինչի արդյունքում անհնար է դառնում նաև Համաներման ակտի կիրառումը, քանի որ որպես օրենքով նախատեսված պատիժ շարունակում է մնալ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված պատիժը: Ընդ որում, Համաներման ակտի քննարկվող դրույթը կարող է կիրառելի չլինել անգամ դատական քննության արագացված կարգը կիրառելու արդյունքում, երբ օրենքով համապատասխան ենթադրյալ հանցագործության համար նախատեսված առավելագույն պատժի երկու երրորդը գերազանցի հինգ տարի ժամկետով ազատազրկումը:

23. Սույն որոշման 20-րդ կետում առկա եզրահանգման հիման վրա Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում բողոքաբերի այն փաստարկի հետ, որ դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում նշանակվող առավելագույն պատժաչափը որպես օրենքով նախատեսված պատիժ դիտարկելը կարող է խախտել հանցագործությունների ընդունված դասակարգումը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Հանցագործությունների դասակարգման կանոնի համաձայն (ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդված)՝ հիմք է ընդունվում ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան նորմի սանկցիայով նախատեսված պատժատեսակն ու պատժաչափը: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում անձի նկատմամբ նշանակվող պատժաչափի փոփոխությունը որևէ կերպ անդրադառնում է անձին մեղսագրվող հանցագործության ծանրության աստիճանի վրա:

24. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արագացված դատաքննության օրենսդրական կանոնակարգման տրամաբանությունից չի բխում նաև բողոքաբերի մտավախությունն օրենքով նախատեսված այն սահմանափակման հնարավոր ձևական բնույթի մասին, համաձայն որի՝ դատական քննության

արագացված կարգ կարող է կիրառվել միայն այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Օրենքով նախատեսված այդ սահմանափակումը դատական քննության արագացված կարգի կիրառման պայմաններից մեկն է, որը, ինչպես հստակ սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասում, որոշվում է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան նորմի սանկցիայով, և այն մեկնաբանությունը, որ իբրև ելակետ պետք է ընդունել այն պատիժը, որը կարող է նշանակվել առավել խիստ պատժի երկու երրորդով կրճատման արդյունքում, օրենսդրական հիմքեր չունի: ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան նորմի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդով կրճատումը քննարկվող պայմանի, ի թիվս այլոց, առկայության պարագայում դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքն է:

25. Ինչ վերաբերում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի միջև առկա հակասության և ըստ այդմ «Իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքով նախատեսված կոլիզիոն նորմերը կիրառելու մասին դիքթորոշման հետ բողոք բերած անձի անհամաձայնությանը (տե՛ս սույն որոշման 7-րդ և 10-րդ կետերը), ապա Վճռաբեկ դատարանը համաձայն է բողոքաբերի այս փաստարկի հետ և գտնում է, որ տվյալ դեպքում նման հակասությունը ոչ միայն բացակայում է, այլ ակնհայտ է ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի կապն այն առումով, որ դատական քննության արագացված կարգը կանոնակարգող դատավարական իրավունքի նորմերը պարունակում են հղումներ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերին: Այսպես, դատական քննության արագացված կարգ կիրառելու պայմաններից մեկը, ինչպես արդեն նշվել է, անձին այնպիսի հանցագործության մեղսագրումն է, որի համար օրենքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 (տասը) տարի ժամկետով ազատազրկումը, իսկ այս պայմանը բնականաբար որոշվելու է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան դրույթների հիման վրա, կամ արագացված դատական քննության արդյունքում երկու երրորդով կրճատվում է հենց ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատիժը:

26. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանում դատական քննության արագացված կարգը կիրառվել է օրենքով հստակ սահմանված հիմքերի և պայմանների առկայության պարագայում: Օրենքով սահմանված դատավարական կարգի պահպանմամբ դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում Առաջին ատյանի դատարանը, ղեկավարվելով Գ.Մինասյանին մեղսագրվող հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի, այն է՝ 7 (յոթ) տարի ժամկետով ազատազրկման երկու երրորդը որպես առավելագույն պատիժ նշանակելու օրենսդրական պահանջով, հաշվարկել է, որ այս կանոնի կիրառ-

ման արդյունքում տվյալ հանցագործության համար օրենքով նախատեսված առավել խիստ պատիժ է դառնում 4 (չորս) տարի 8 (ութ) ամիս ժամկետով ազատազրկումը (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2014 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ: Համաձայնվելով Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ առկա պատճառաբանությունների հետ՝ Վերաքննիչ դատարանը վկայակոչել է Համաներման ակտի 18-րդ կետը, որը հստակ սահմանում է, որ նշված ակտը կիրառվում է արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

27. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-20-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը դատական քննության արագացված կարգով քննելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ պատիժ նշանակելու կանոնները կիրառելու պայմաններում Գ.Մինասյանի նկատմամբ տարածվում է Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետը: Հետևաբար, միանգամայն իրավաչափ է Համաներման ակտի քննարկվող դրույթի կիրառմամբ Գ.Մինասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործով վարույթը կարճելը և վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելը:

28. Հիմք ընդունելով սույն որոշման 14-27-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հիմնավորված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դատական սխալի՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտման առկայությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Ներկայացված վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված, պատճառաբանված է և համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին: Հետևաբար, վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 4-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանությունները:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Գագիկ Հայկի Մինասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 14-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի փետրվարի 4-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՈՍԲԵԿ ԳԱՏԱՐԱՆ
ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

ԳԱՏԱՎՈՐ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

Ամբաստանյալ Գագիկ Հայկի Մինասյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) 2014 թվականի մայիսի 31-ի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի հունիսի 15-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնում Գարիկ Մաթևոսյանի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու փաստի առթիվ հարուցվել է թիվ 49106413 քրեական գործը:

2013 թվականի հունիսի 18-ին Գագիկ Մինասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի 2013 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ Վ.Մաթևոսյանի և Գ.Հակոբյանի առողջությանը դիտավորությամբ թեթև վնաս պատճառելու փաստով Գ.Մինասյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ տուժողների հետ հաշտվելու հիմքով:

2. Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան), դատական քննության արագացված կարգով քննելով գործը, 2013 թվականի նոյեմբերի 14-ի որոշմամբ Գ.Մինասյանի նկատմամբ կիրառել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) 5-րդ կետի 3-րդ ենթակետը, Գ.Մինասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցրել է:

3. Մեղադրող Գ.Խանգաղյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 4-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել մեղադրող Գ.Խանգադյանը, որը Վճարելի դատարանի 2014 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի որոշմամբ վճարելի բողոքը մերժվել է, Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 4-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճարելի դատարանի պատճառաբանությունները:

2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Գ.Մինասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա 14.06.2013թ.՝ ժամը 23.00-ի սահմաններում, Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասում գտնվող՝ «Հրազդանի ԲԿ» ՓԲԸ-ի ծննդատան և ինֆեկցիոն բաժանմունքների դիմաց առկա հատվածում, իր և Վալեր Արամայիսի Մաթևոսյանի նորածին երեխաների վերաբերյալ առաջացած խոսակցության, ապա վերաճած վիճաբանության ժամանակ, գտնվելով ոգելից խմիչքի ազդեցության տակ, նշված հատվածում կայանված իր մեքենայի շարժիչի ծածկոցի վրայից վերցրել է խոհանոցային դանակը և դրանով հարվածներ հասցրել ներկաներին, որի հետևանքով Գարիկ Արամայիսի Մաթևոսյանի առողջությանը դիտավորությանը պատճառել է ծանր վնաս» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 135, 261-267):

6. Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը պատճառաբանված է հետևյալ կերպ. «Ամբաստանյալ Գ.Մինասյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, որի սանկցիան նախատեսում է պատիժ՝ ազատազրկում՝ երեքից յոթ տարի ժամկետով:

Փաստորեն, ամբաստանյալ Գ.Մինասյանի նկատմամբ արագացված կարգով դատական քննության արդյունքում նշանակվող պատիժը չի կարող գերազանցել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առավել խիստ պատժի՝ 7 տարի ժամկետով ազատազրկման երկու երրորդը, որը կազմում է 4 տարի 8 ամիս:

(...)

Ամբաստանյալ Գ.Մինասյանը մեղադրվում է մինչև 2013թ. սեպտեմբերի 1-ը կատարած՝ (2013թ. հունիսի 14-ին) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելու մեջ, որի համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը:

Համաներման ակտի 2-րդ կետի 4-րդ ենթակետում թվարկված անձինք են՝ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձինք:

Ըստ գործում առկա նյութերի՝ ամբաստանյալ Գ.Մինասյանը խնամքին ունի մինչև երեք տարեկան երկու երեխա՝ Արմեն Գազիկի Մինասյան՝ ծնված 11.08.2011թ., և Արեն Գազիկի Մինասյան՝ ծնված 14.06.2013թ.:

(...)

Հիմք ընդունելով վերը շարադրվածը և նկատի ունենալով, որ ամբաստանյալ Գ.Մինասյանի նկատմամբ համաներման որոշման կիրառման սահմանափակումները գործի նյութերում բացակայում են, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գ.Մինասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը պետք է կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 82-86):

7. Վերաքննիչ դատարանը, ըստ էության համաձայնելով Առաջին ատյանի դատարանի փաստարկների հետ, իր դատական ակտում արձանագրել է, որ դատախազի պնդումը, թե Գ.Մինասյանի նկատմամբ Համաներման ակտի կիրառելիությունը որոշելիս պետք է հիմք ընդունվեր մեղսագրվող հանցագործության համար քրեական օրենքով սահմանված պատժի առավելագույն չափը (յոթ տարի ժամկետով ազատազրկումը)՝ առանց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառման, անհիմն է, քանի որ Համաներման ակտի 18-րդ կետը հստակ սահմանում է, որ տվյալ որոշումը կիրառվում է արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 123-127):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

8. Սեղադրողն իր վճռաբեկ բողոքում փաստարկել է, որ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված սանկցիան և դատական քննության արագացված կարգի կիրառմամբ նշանակվող պատիժը չեն կարող նույնականացվել: Հակառակ դեպքում, եթե արագացված կարգի կիրառմամբ նշանակվող առավելագույն պատժի սահմանագիծը դիտարկվի որպես հանրորեն վտանգավոր արարքի օրենքով նախատեսված սանկցիա, ապա կստացվի, որ Գ.Մինասյանին մեղսագրվում է ոչ թե ծանր, այլ միջին ծանրության հանցագործություն:

Ըստ բողոքաբերի՝ սույն գործով դատարանների ձևավորած մոտեցումը խախտում է իրավական որոշակիության և օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքները, քանի որ նմանդեպքերում քրեական գործի վարույթի կարճման իրավասություն կունենա բացառապես առաջին ատյանի դատարանը: Բացի այդ, անձինք, ում նկատմամբ չի կիրառվել դատական քննության արագացված կարգ, կհայտնվեն անհավասար վիճակում՝ ի համեմատ մյան միջնորդություն ներկայացրած անձանց:

9. Բողոքաբերն անհամաձայնություն է արտահայտել մասնադատական քննության արագացված կարգը բարելավող օրենք դիտարկելու վերաբերյալ հետևության հետ՝ նշելով, որ օրենքը կարելի է բարելավող համարել, եթե մինչ այդ նմանատիպ հարաբերություններն այլ ձև են կարգավորվել, կամ այդ հարաբերությունը շարունակվում է նույն կերպ կարգավորվել, սակայն տվյալ պարագայում նոր օրենքի ընդունումը կամ օրենքի փոփոխությունն այլ կերպ բարելավում է անձի վիճակը: Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետն

ընդգրկում է այն դեպքը, երբ անձը կասկածվում է համապատասխան արարքի կատարման մեջ, կամ առկա են իրական հիմքեր համապատասխան արարքի կատարման համար նրան մեղադրանք առաջադրելու համար, ինչպես նաև այն դեպքը, երբ անձին արդեն իսկ մեղադրանք է առաջադրվել այնպիսի հանցագործության հատկանիշներով, որոնց համար նախատեսված պատիժը չի գերազանցում 5 տարի ժամկետով ազատազրկումը:

10. Բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ստյանի դատարան՝ նոր քննության:

4. Գատավոր Ա. Պողոսյանի իրավական դիրքորոշումը.

11. Ուսումնասիրելով ստորադաս դատարանների դատական ակտերի դեմ մեղադրողի վճռաբեկ բողոքը, ծանոթանալով ներկայացված նյութերին և վճռաբեկ բողոքը մերժելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի փաստարկներին և հիմնավորումներին՝ համաձայն չեմ Գ.Մինասյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի որոշման պատճառաբանական մասի առանձին դրույթների և եզրափակիչ մասի հետ ներքոշարադրյալ պատճառաբանություններով:

12. Վճռաբեկ դատարանը հիշատակված որոշման մեջ արձանագրել է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է, որը պայմանավորված է գործը դատական քննության արագացված կարգով քննելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի և Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառման կապակցությամբ ոչ միատեսակ դատական պրակտիկայի առկայությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. գործը դատական քննության արագացված կարգով քննելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ պատիժ նշանակելու կանոնները կիրառելու պայմաններում Գ.Մինասյանի նկատմամբ տարածվու^մ է արդյոք Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետը:

ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք նախադեպային որոշումների լույսի ներքո համադրված վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը, 375.1-375.3-րդ հոդվածները, ինչպես նաև Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետը և 18-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ՝

ա) արագացված դատական քննության արդյունքում անձի նկատմամբ նշանակվող պատժի առավելագույն ժամկետը ավելի մեղմ է, քան ընդհանուր կարգով գործի քննության արդյունքում նշանակվող պատիժը, ինչը նշանա-

կում է, որ արագացված դատական քննության արդյունքում կիրառվող պատժի նշանակման կանոնները, ի համեմատ ընդհանուր կարգով գործի քննության արդյունքում կիրառվող պատժի նշանակման կանոնների, առավել նպաստավոր պայմաններ են ստեղծում հանցանք կատարած անձի համար:

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արագացված դատական քննության արդյունքում պատիժ նշանակելու կարգը Համաներման ակտի 18-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք:

բ) Բոլոր այն դեպքերում, երբ անձին մեղսագրվում է այնպիսի հանցագործություն, որի համար օրենքով նախատեսված պատիժն ի սկզբանե չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը, վարույթն իրականացնող մարմինն իրավասու է Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ քրեական գործով վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել: Իսկ ինչ վերաբերում է դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում Համաներման ակտի հիշատակված դրույթի կիրառմանը, ապա դա նշված որոշման գործողության տակ ընկնելու լրացուցիչ հնարավորություն է այն անձանց համար, ովքեր ներկայացրել են դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին միջնորդություն, որը համապատասխան հիմքերի և պայմանների առկայության շնորհիվ բավարարվել է, և ինչի արդյունքում օրենքի իմպերատիվ դրույթի ուժով վերջիններիս վերագրվող հանցագործության համար օրենքով նախատեսված պատժի վերին սահմանը երկու երրորդով կրճատվելու արդյունքում իջեցվել է՝ բավարարելով հինգ տարի ժամկետով ազատազրկումը չգերազանցելու չափանիշին, կամ պատժի վերին սահման է դարձել տվյալ հանցագործության համար օրենքով նախատեսված առավել մեղմ պատիժը, որը դարձյալ չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը: Իսկ Համաներման ակտի քննարկվող դրույթի բովանդակային մեկնաբանությունը նշված լրացուցիչ երաշխիքն անձին ընձեռելու որևէ արգելք չի պարունակում:

Արդյունքում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործը դատական քննության արագացված կարգով քննելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ պատիժ նշանակելու կանոնները կիրառելու պայմաններում Գ.Մինասյանի նկատմամբ տարածվում է Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետը: Հետևաբար, միանգամայն իրավաչափ է Համաներման ակտի քննարկվող դրույթի կիրառմամբ Գ.Մինասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործով վարույթը կարճելը և վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելը (տե՛ս որոշման 12-22-րդ և 27-րդ կետերը):

13. Ընդհանրացնելով Վճռաբեկ դատարանի մեջբերված իրավական դիրքորոշումները և եզրահանգումը՝ հարկ են համարում նշել, որ դրանց վերաբերյալ ունեն վերապահումներ:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով

կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտ-
յալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես
էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի
մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-
րդ կետի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հե-
տապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույ-
քը ենթակա է կարճման, եթե ընդունվել է համաներման ակտ»:

Մեջբերված իրավանդությունների համադրված վերլուծությունից հետևում է, որ
համաներումն օրենսդիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից ընդուն-
վող մարդասիրական բնույթ ունեցող այն պետաիրավական նորմատիվ ակտն
է, որով հնարավոր է դառնում հանցանք կատարած անձին ազատել քրեա-
կան պատասխանատվությունից կամ պատժից, մեղմացնել պատիժը կամ
վերացնել դատվածությունը: Համաներումն անհատապես չորոշված անձանց
չրջանակի նկատմամբ ընդունվող արտադատական ակտ է, որի կիրառման
օրենսդրական հիմքերը նախատեսված չեն: Համաներում հայտարարելու
անհրաժեշտության հարցը, ինչպես նաև հանցանք կատարած անձանց շրջա-
նակը, որոնց նկատմամբ համաներումը կիրառելի է և այն, թե անձինք ինչ չա-
փով պետք է օգտվեն համաներումից, թողնված է պետական իշխանության
բարձրագույն օրենսդիր մարմնի հայեցողությանը:

Այսպիսով, համաներումը՝ որպես պետաիրավական ակտ, օժտված է
հետևյալ հատկանիշներով՝

ա) այն նորմատիվ բնույթ ունի, այսինքն տարածվում է անհատապես չո-
րոշված անձանց շրջանակի վրա:

բ) Համաներման նախաձեռնությունը բխում է պետական իշխանության
բարձրագույն մարմիններից:

գ) Համաներման ակտն ունի համապարտադիր բնույթ ինչպես իրավակի-
րառ մարմինների, այնպես էլ այն անձանց համար, որոնց վրա դրա գործո-
ղությունը տարածվում է (բացառություն են կազմում այն դեպքերը, երբ հա-
մաներման ակտ ընդունված լինելու հիմքով քրեական հետապնդումը պետք է
դադարեցվի: Այս դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ
հոդվածի 6-րդ մասի իմաստով անհրաժեշտ է մեղադրյալի համաձայնություն-
ը):

դ) Համաներումը միայն նորմատիվ հիմք է ստեղծում դրա ներգործության
տակ ընկնող անձանց քրեական պատասխանատվությունից կամ պատժից
ազատելու, պատիժը մեղմացնելու կամ դատվածությունը վերացնելու համար:
Կոնկրետ անձի նկատմամբ համաներման ակտի այս կամ այն դրույթի կիրա-
ռությունն ապահովվում է անհատական ակտով՝ քրեական գործի հարուցու-
մը մերժելու մասին որոշմամբ, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին
որոշմամբ, մեղադրական դատավճռով՝ պատժից ազատելով և այլն:

ե) Համաներման կիրառումը հնարավոր է քրեական դատավարության
ցանկացած փուլում, իսկ դրա կիրառման սահմանափակումները, որպես կա-

նոն, նախատեսված են համաներման ակտով: Մասնավորապես, համաներման ակտով է սահմանվում անձանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներումը կիրառելի չէ, ինչպես նաև այն, թե հանցանք կատարած անձինք ինչ չափով պետք է օգտվեն համաներումից՝ պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից կամ պատժից, կամ պետք է մեղմացվի պատիժը, կամ վերացվի դատվածությունը:

14. Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ չնայած համաներման կիրառելիության սահմանները որոշվում են հենց համաներման ակտով, այդուհանդերձ, դա չի նշանակում, որ օրենսդիր իշխանությունն օժտված է համաներում հայտարարելու բացարձակ հայեցողությամբ: Համաներման ակտով նախատեսված ներգործության միջոցները չպետք է այնպիսին լինեն կամ այնպես մեկնաբանվեն և կիրառվեն, որ խաթարեն քրեաիրավական և քրեադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն ստեղծեն քրեաիրավական շրջանառության մեջ: Այդ իսկ պատճառով ցանկացած համաներում իր հիմքում ունի որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կատարված հանցագործության կամ դատվածության քրեաիրավական հետևանքներն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեզոքացվում են:

ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված համաներման ակտերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց հիմքում դրված պայմանները բազմազան են: Սակայն, դրանց հիմնական բնութագրիչ գծերը հիմք ընդունելով՝ կարելի է առանձնացնել համաներման կիրառման հետևյալ պայմանները.

ա) հանցագործության սուբյեկտի հատուկ հատկանիշները (առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամները, 60 տարին լրացած անձինք, հանցագործությունը մինչև 18 տարին լրանալը կատարած անձինք, ՀՀ կամ ԼՂՀ պաշտպանության համար մղված մարտական գործողությունների մասնակիցները և այլն),

բ) հանցագործության բնույթը (կատարված հանցագործության անզգույշ կամ դիտավորյալ լինելու հանգամանքը, դրանց համար օրենքով նախատեսված պատժի որոշակի առավելագույն ժամկետը, սպառիչ ցանկով թվարկված այն հանցագործությունները, որոնք կատարած անձանց նկատմամբ համաներումը չի տարածվում, և այլն),

գ) դատապարտման հանգամանքները (առաջին անգամ դատապարտված լինելը, որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված լինելը, ազատազրկման հետ չկապված պատժի դատապարտված լինելը, պատիժը պայմանականորեն չկիրառված լինելը և այլն),

դ) այլ հատկանիշներ (անձի նկատմամբ նախկինում համաներում կամ ներում կիրառված չլինելը, նշանակված պատժի որոշակի մասը դատապարտյալի կողմից կրած լինելը, հանցագործությամբ պատճառված գույքային վնասը հատուցված լինելը և այլն):

Համաներման կիրառման վերոգրյալ պայմանները յուրաքանչյուր համաներման ակտով սահմանվում են ինքնուրույն և իրավակիրառ մարմինների կողմից պետք է պահպանվեն անվերապահորեն, քանի որ դրանցով են պայմանավորված այն քրեաիրավական հետևանքները, որոնք պետք է առաջանան կոնկրետ հանցանք կատարած անձի համար: Մասնավորապես, նշված հանգամանքներով է պայմանավորված այն, թե արդյոք տվյալ համաներման ակտը կիրառելի է հանցանք կատարած անձի նկատմամբ և ինչ չափով վերջինս պետք է օգտվի դրանից՝ քրեական հետապնդումը դադարեցվի, պատժից ազատվի, պատժի չկրած մասը կրճատվի, դատվածությունը մարվի և այլն:

15. Անդրադառնալով սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացրած իրավական հարցին՝ պետք է արձանագրել, որ Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետը նախատեսում է. «Քրեական հետապնդում չհարուցել և քրեական հետապնդում չիրականացնել, ինչպես նաև կարճել մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը կատարած հանցագործությունների վերաբերյալ (...) դատարանների վարույթում գտնվող քրեական գործերը, (...), որոնցով սույն որոշման 2-րդ կետի 1-6-րդ ենթակետերում թվարկված անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան հինգ տարի ժամկետով ազատազրկում»:

Սույն հատուկ կարծիքի 13-14-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո դիտարկելով Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետը՝ փաստենք, որ դրանով օրենսդիրը նախատեսել է համաներման ամենաբարենպաստ քրեաիրավական հետևանքը (քրեական հետապնդում չհարուցել և քրեական հետապնդում չիրականացնել) կիրառել մի շարք պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, այն է՝

- ✓ հանցանքը կատարվել է մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը (այլ հատկանիշ),
- ✓ Համաներման ակտի 2-րդ կետի 1-6-րդ ենթակետերում թվարկված անձինք (հանցագործության սուբյեկտի հատուկ հատկանիշներ),
- ✓ կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան հինգ տարի ժամկետով ազատազրկում (հանցագործության բնույթ):

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ տվյալ դեպքում առկա են միայն վերը թվարկված պայմաններից առաջին երկուսը: Մասնավորապես, Գ.Մինասյանը մեղադրվում է 2013 թվականի հունիսի 14-ին կատարված հանցագործության համար և ունի մինչև երեք տարեկան երկու երեխա: Մինչդեռ երրորդ պայմանը բացակայում է. Գ.Մինասյանին վերագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք, իսկ տվյալ հոդվածի սանկցիան պատիժ է նախատեսում ազատազրկման ձևով՝ երեքից յոթ տարի ժամկետով: Այլ խոսքով՝ Գ.Մինասյանին վերագրվող հանցագործությունն իր բնույթով ավելի ծանր է, քան այն,

որն օրենսդրի կողմից նախատեսվել է Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետով:

16. Այս պայմաններում անտեղի է ստորադաս դատարանների և Վճռաբեկ դատարանի մեծամասնության դիրքորոշումն այն մասին, որ դատական քննության արագացված կարգի կիրառման պայմաններում Գ.Սինասյանի նկատմամբ ցանկացած դեպքում չի կարող 4 տարի 8 ամիս ժամկետով ազատազրկումից ավելի խիստ պատիժ նշանակվել:

Արագացված կարգով դատական քննությունը քրեական դատավարության ձև է, որի հիմնական նպատակն է սեղմ ժամկետներում և պարզեցված կարգով լուծել գործի ելքը: Այս ինստիտուտի առանցքում «գործարքն» է մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև, որի շրջանակներում մեղադրյալը համաձայնում է առաջադրված մեղադրանքին, և դրա դիմաց նրա համար երաշխավորվում է օրենքով նախատեսված մի շարք բարենպաստ հետևանքներ, այդ թվում՝ պատժի այնպիսի չափ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ՍԳՈ-931 որոշումը, Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0209/01/10 որոշումը, Ա.Առուստամյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՏԳ/0145/01/11 որոշումը):

Դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում հանցավորի նկատմամբ մեղմ պատիժ նշանակելը որևէ կերպ չի փոխում կատարված հանցագործության բնույթը, հետևաբար այս հանգամանքն ինքնին չի կարող հանդիսանալ համաներման կիրառման պայման: Այդ իսկ պատճառով Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետում խոսվում է այն հանցագործությունների մասին, որոնց համար «նախատեսված է» առավելագույնը հինգ տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ, այլ ոչ թե՝ «կարող է նշանակվել» այդպիսի պատիժ: Տվյալ դեպքում «նախատեսված է» եզրույթը պետք է հասկանալ որպես քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված պատիժ, ինչի հիման վրա հանցագործությունները դասակարգվում են ըստ բնույթի, այլ ոչ թե այն պատիժը, որը նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի կիրառման արդյունքում կարող է նշանակել դատարանը:

17. Անընդունելի են համարում նաև Վճռաբեկ դատարանի մեծամասնության դիրքորոշումն առ այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արագացված դատական քննության արդյունքում պատիժ նշանակելու կարգը Համաներման ակտի 18-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք:

Համաներման ակտի 18-րդ հոդվածում ամրագրված է, որ «Սույն որոշումը կիրառվում է արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո»:

Համաձայնելով սույն գործով Վճռաբեկ դատարանի որոշման մեջ առկա այն դիրքորոշման հետ, որ անձի վիճակն այլ կերպ բարելավող է այն օրենքը, որը քրեական պատասխանատվության և պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու կարգի ու պայմանների հետ կապված առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում հանցանք կատարած անձի համար՝ հարկ է նշել, որ արագացված դատական քննության արդյունքում պատիժ նշանակելու կարգը նախատեսված է քրեադատավարական օրենքով:

ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեախրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով»:

Օրինականության սկզբունքը սահմանող վերոգրյալ քրեախրավական դրույթից ուղղակիորեն բխում է, որ արարքի հանցավորության, դրա պատժելիության և քրեախրավական հետևանքների, այդ թվում՝ պատիժ նշանակելու, պատժի մեղմացման և դրա հետ կապված այլ հարցերի լուծումը գտնվում է բացառապես քրեական օրենսգրքի կարգավորման տիրույթում: Հետևաբար, քրեադատավարական օրենքով արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք սկզբունքորեն չի կարող նախատեսվել:

Բացի այդ, նույնիսկ եթե պայմանականորեն ընդունենք, որ քրեադատավարական օրենսգիրքը կարող է բովանդակել քրեական պատասխանատվության և պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու կարգի ու պայմանների հետ կապված իրավակարգավորումներ, ապա այս դեպքում ևս արագացված դատական քննության արդյունքում պատիժ նշանակելու կարգը չի կարող համարվել անձի վիճակը բարելավող, քանի որ այն ընդհանրապես հանցանք կատարած անձի համար երաշխավորում է ընդհանուր կարգով գործի քննության արդյունքում հնարավոր նշանակվելիք պատժից ավելի մեղմ պատժաչափ: Անձի վիճակն այլ կերպ բարելավող կարող է լինել միայն այնպիսի օրենքը, որը նույն պայմաններում գտնվող անձի համար նախկինում սահմանված քրեախրավական հետևանքների համեմատ առավել նպաստավոր իրավիճակ է ստեղծում: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը քննարկվող որոշման մեջ արձանագրել է, որ արագացված դատական քննության արդյունքում կիրառվող պատժի նշանակման կանոնները, ի համեմատ ընդհանուր կարգով գործի քննության արդյունքում կիրառվող պատժի նշանակման կանոնների, առավել նպաստավոր պայմաններ են ստեղծում: Այսինքն՝ տվյալ դեպքում շեշտվել են երկու տարբեր իրավիճակներ՝ արագացված դատական քննություն և ընդհանուր կարգով դատական քննություն, որոնց պայմաններում գործում են բացարձակապես տարբեր իրավակարգավորումներ:

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արագացված դատական քննության արդյունքում

պատիժ նշանակելու կարգը Համաներման ակտի 18-րդ հոդվածի իմաստով անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք չի հանդիսանում:

18. Քրեական և քրեադատավարական օրենսգրքերը բովանդակում են մի շարք դրույթներ, որոնք կախված դատավարության ձևից, հանցավորի անձնական հատկանիշներից (տարիք, սեռ և այլն), հանցագործության ընդհատման պահից և մի շարք այլ հանգամանքներից՝ տարբեր հետևանքներ են առաջացնում ենթադրյալ հանցանք կատարած անձանց համար:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ազատագրվումն անչափահասների նկատմամբ նշանակվում է՝

1) ոչ մեծ ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, իսկ միջին ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը երեք տարի ժամկետով,

2) միևնույն տասնվեց տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը յոթ տարի ժամկետով,

3) տասնվեցից միևնույն տասնութ տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը տասը տարի ժամկետով»:

Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից ձևավորված իրավական դիրքորոշման պայմաններում ստացվում է, որ անչափահասների կատարած ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ քրեական հետապնդումը (համապատասխան արգելքների բացակայության դեպքում) համաներման ակտի կիրառմամբ անվերապահորեն ենթակա է դադարեցման, անկախ նրանից, թե ինչպիսի պատիժ է նախատեսում տվյալ հանցագործության համար հոդվածի սանկցիան: Մինչդեռ անչափահաս լինելը հանցագործության սուբյեկտի հատուկ հատկանիշ է, որն օրենսդրի կողմից արդեն իսկ հաշվի է առնվել Համաներման ակտի 2-րդ կետի 3-րդ ենթակետում, և միևնույն 18 տարին լրանալը հանցագործություն կատարած անձանց համար սահմանվել է համաներման կիրառման առավել բարենպաստ հետևանքներ: Ստացվում է, որ հանցանք կատարած անձի անչափահաս լինելու հանգամանքը հաշվի է առնվում երկու անգամ՝ որպես հանցագործության սուբյեկտի հատուկ հատկանիշ և որպես նրա կատարած հանցագործության բնույթ, ինչն անընդունելի է:

Նույնանման իրավիճակ է առաջանում նաև այն դեպքում, երբ հանցագործությունն ընդհատվում է նախապատրաստության կամ հանցավորձի փուլում: Չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու կանոնները սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածը նախատեսում է, որ հանցագործության նախապատրաստության համար ազատագրվման ձևով պատիժը չի կարող գերազանցել համապատասխան հոդվածով նախատեսված առավելագույն ժամկետի կեսը, իսկ հանցավորձի դեպքում՝ առավելագույն ժամկետի երեք քառորդը:

Հետևաբար, եթե հանցավոր արարքն ընդհատվել է նախապատրաստության կամ հանցավորձի փուլում, և քրեական օրենքի իմպերատիվ նորմի ուժով

հանցագործության համար նախատեսված պատժի վերին սահմանը ենթակա է կրճատման և կարող է բավարարել Համաներման ակտով նախատեսված ժամկետով ազատագրվումը չգերազանցելու չափանիշին, ապա քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը՝ կարճման: Այդպիսի իրավիճակ կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ անձին վերագրվում է մի քանի հանցագործություն, որոնցից մեկը կամ մի քանիսն ընդհատվել են նախապատրաստության կամ հանցափորձի փուլում: Համաներման ակտի 6-րդ կետը նախատեսում է, որ քրեական հետապնդումը կարող է դադարեցվել նաև հանցագործությունների համակցության դեպքում, երբ մեղազգրվող արարքների համար նախատեսված առավելագույն պատիժների հանրագումարը չի գերազանցում երեք կամ հինգ տարի ժամկետով ազատագրվման հանրագումարը:

Իրավակիրառ պրակտիկան ավելի կարող է խճճվել, եթե անչափահասին մեղազգրվի հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի փուլում ընդհատված արարք (արարքներ): Նման իրավիճակը կարող է հանգեցնել նրան, որ ծանր կամ նույնիսկ առանձնապես ծանր հանցագործության վերաբերյալ քրեական գործի վարույթը համաներման ակտի ուժով ենթակա լինի կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման, եթե տվյալ հանցագործության համար համաներման կիրառման այլ արգելքներ չլինեն:

Ընդ որում, եթե դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում Համաներման ակտի քննարկվող դրույթի կիրառման իրավասություն ունի միայն դատարանը, քանի որ արագացված կարգի կիրառման հիմքերի և պայմանների ամկայությունը որոշվում է առաջին ատյանի դատարանում, ապա նկարագրված մյուս իրավիճակներում քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու պարտավորությունը կրում է նաև մինչդատական վարույթն իրականացնող մարմինը:

Բացի այդ, Համաներման ակտի 5-րդ կետի 1-ին ենթակետը նախատեսում է. «Քրեական հետապնդում չհարուցել և քրեական հետապնդում չիրականացնել, ինչպես նաև կարճել մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը կատարած հանցագործությունների վերաբերյալ (...) քրեական գործերը (...), որոնցով անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է միայն ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ»:

ՀՀ քրեական օրենսգրքում բազմաթիվ են այն հոդվածները, որոնցով նախատեսված են միայն տուգանքի և կալանքի ձևով պատիժներ (117-118-րդ հոդվածներ, 120-րդ հոդվածի 1-ին մաս, 122-րդ հոդվածի 1-ին մաս, 124-րդ հոդվածի 1-ին մաս և այլն): Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ «Կալանքը չի նշանակվում դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չըրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ»:

Հետևաբար, նշված կատեգորիայի անձանց նկատմամբ կարող է նշանակվել միայն ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ, այն է՝ տուգանք,

ուստի նրանց նկատմամբ քրեական հետապնդումը Համաներման ակտի 5-րդ կետի 1-ին ենթակետի ուժով ենթակա է դադարեցման: Մինչդեռ, միայն ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ նախատեսող հանցագործությունների վրա տարածելով Համաներման ակտի տվյալ դրույթի ուժը՝ օրենսդիրը նկատի է ունեցել հանցագործությունների նվազ վտագավորությունը (հանցագործության բնույթը), իսկ դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած կամ հղի կին կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձ լինելը հանցագործության սուբյեկտի հատուկ հատկանիշ է, որը կատարված հանցագործության բնույթի վրա որևէ կերպ ազդել չի կարող և նույն Համաներման ակտի 2-րդ կետով արդեն իսկ հաշվի է առնված:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կողմից ձևավորած իրավական դիրքորոշման պայմաններում անորոշություն կարող է առաջանալ նաև հենց Համաներման ակտի տարբեր դրույթների կիրառելիության հարցը որոշելիս:

19. Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ սույն կարծիքի 18-րդ կետում նկարագրված իրավիճակները, կախված գործի կոնկրետ փաստական տվյալների առանձնահատկություններից, կարող են լինել բազմազան, և դրանք բոլորը կանխատեսել և վերլուծել հնարավոր չէ: Միանշանակ է այն, որ Գ.Մինասյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի որոշման մեջ Համաներման ակտի պայմաններին տրված մեկնաբանությունը կարող է անորոշություն ստեղծել իրավակիրառական պրակտիկայում, հանգեցնել անկանխատեսելի հետևանքների:

Հետևաբար, սույն հատուկ կարծիքում շարադրված վերլուծության արդյունքում գտնում են, որ գործը դատական քննության արագացված կարգով քննելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ պատիժ նշանակելու կանոնները կիրառելու պայմաններում Գ.Մինասյանի նկատմամբ Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետը կիրառման ենթակա չէ: Ուստի, Առաջին ատյանի դատարանը Համաներման ակտի քննարկվող դրույթի կիրառմամբ Գ.Մինասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը պետք է ոչ թե դադարեցներ, այլ կայացներ մեղադրական դատավճիռ, Գ.Մինասյանի նկատմամբ նշանակելու ազատագրկման ձևով համապատասխան պատիժ և Համաներման ակտի 2-րդ կետի 4-րդ ենթակետի կիրառմամբ՝ ազատել պատժի կրումից:

Այս պայմաններում գտնում են, որ գործով մեղադրողի վճռաբեկ բողոքը պետք է բավարարվեր, ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանվեր և գործն ուղարկվեր Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ, 361¹-րդ, 415-րդ, 419-րդ և 422-րդ հոդվածներով, չհամաձայնվելով դատավորների մեծամասնության հետ՝ մնում են հատուկ կարծիքի՝

Մեղադրողի վճարելի բողոքը պետք է բավարարվեր: Գագիկ Հայկի Մինասյանի վերաբերյալ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 14-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի փետրվարի 4-ի որոշումը բեկանվել, գործն ուղարկվել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

Դատավոր՝

ստորագրություն

12.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ՄԳ/0185/01/13
Նախագահող դատավոր՝ Կ.Դազարյան
Դատավորներ՝ Գ.Մելիք-Սարգսյան
Հ.Տեր-Աղամյան

ՄԳ/0185/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ մեղադրող	Ա.ԱՂԱՍԱՐՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Մխիթար Ալիկի Սարուխանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշման դեմ թիվ 1 կայագրի զինվորական դատախազության ավագ դատախազ Ա.Աղասարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ ՀՀ ՊՆ) առաջին կայագրային քննչական բաժնի կողմից 2013 թվականի հունիսի 14-ին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասի և 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90956413 քրեական գործը:

2013 թվականի օգոստոսի 6-ին Մխիթար Սարուխանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով, 112-րդ

հողվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին:

2. 2013 թվականի օգոստոսի 13-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 1-ի դատավճռով արագացված դատական քննության կարգի կիրառմամբ Մ.Սարուխանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով, 112-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով Մ.Սարուխանյանը դատապարտվել է ազատազրկման՝ 6 ամիս ժամկետով, 112-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման՝ 3 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ Մ.Սարուխանյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 տարի 6 ամիս ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալ Մ.Սարուխանյանը՝ խնդրելով բեկանել և փոփոխել վերոնշյալ դատավճիռը և իր նկատմամբ նշանակված պատիժը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա, պայմանականորեն չկիրառել:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 1-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով բեկանվել է, և այդ հոդվածով առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Մ.Սարուխանյանն արդարացվել է:

Կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը, և Մ.Սարուխանյանն ազատվել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նշանակված պատժից:

5. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշման դեմ մեղադրող Ա.Աղասարյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 7-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Մ.Սարուխանյանի պաշտպան Մ.Ալավերդյանը՝ նշելով, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական ու հիմնավորված է, իսկ Ա.Աղասարյանի վճռաբեկ բողոքն անհիմն է, հետևաբար ենթակա է մերժման:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Ամբաստանյալ Մ.Սարուխանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով և 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՊԲ 34153 զորամասի 4-րդ հրաձգային գումարտակի 10-րդ վաշտի 1-ին դասակի հրամանատար, կոչումով լեյ-

տեմանտ, զինվորական ծառայության պարտականությունների կատարման հետ չկապված, այն է՝ նույն վաշտի ականանետային դասակի ականանետորդ, պայմանագրային զինծառայող շարքային Արամ Բաբայանի կողմից իրեն պատկանող լապտերը չվերադարձնելու և այն ջարդելու կապակցությամբ 2013 թվականի մայիսի 26-ին 10-րդ վաշտի հրամանատարական դիտակետի գետնատնակում վիճարանության մեջ է մտել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող շարքային Ա.Բաբայանի հետ և ինքնահաստատվելու, վրեժխնդրության շարժառիթով փայտով հարվածել է վերջինիս գլխին՝ առողջությանը դիտավորությամբ պատճառելով ծանր մարմնական վնաս (տե՛ս քրեական գործ, հատոր 1, քերթ 98):

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «Ամբաստանյալ Միխիթար Ալիկի Սարուխանյանի արարքների որակումը ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով, 112-րդ հոդվածի 1-ին մասով ճիշդ է, որով էլ նա ենթակա է պարասխանարվության և պարժի: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, քերթ 44-45):

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) ամբաստանյալ Միխիթար Սարուխանյանի նկատմամբ Դատարանի 2013 թվականի նոյեմբերի 1-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 1-ին մասով պետք է քննենել հետևյալ պարճառարանությամբ:

2013 թվականի ապրիլի 30-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը (...):

Նշված օրենքը պաշտոնապես հրապարակվել է 2013 թվականի մայիսի 29-ին և ուժի մեջ մտել 2013 թվականի հունիսի 8-ին:

2013 թվականի օգոստոսի 6-ին Միխիթար Սարուխանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ (...):

(...) Ամբաստանյալ Միխիթար Սարուխանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 1-ին մասով իրեն մեղսագրված արարքը կատարել է 2013 թվականի մայիսի 26-ին՝ մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի ապրիլի 30-ի օրենքի պաշտոնական հրապարակումը և ուժի մեջ մտնելը:

(...) Վերոգրյալի հիման վրա՝ Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Միխիթար Սարուխանյանի արարքի հանցավորությունը և պարժելիությունը արարքի կատարման պահին գործող քրեական օրենսգրքով նախատեսված չի եղել:

(...) Վերաքննիչ դատարանը, (...) հայրնաբերելով ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, այն է՝ ամբաստանյալի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը, հանգում է այն հետևության, որ պետք է ճանաչել և հռչակել հանցանքի կատարման մեջ վերջինիս անմեղությունը այն մեղադ-

րանքով, որով նա ներգրավվել է որպես մեղադրյալ» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, քերթ 7-9):

3. Վճարելի բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի պնդմամբ Վերաքննիչ դատարանի դատական ակտը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով:

10. Նյութական իրավունքի նորմերի խախտման կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ Մխիթար Սարուխանյանը, հանդիսանալով պետ, պաշտոնատար անձ, կոչումով՝ լեյտենանտ, բռնություն է գործադրել իր ստորադասի՝ շարքային Արամ Բաբայանի նկատմամբ: Մասնավորապես, Մ.Սարուխանյանը գետնատնակում փայտով հարվածել է Ա.Բաբայանի գլխին՝ վերջինիս առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս, այսինքն՝ կատարել է հանցավոր արարք՝ ուղղված զինվորական ծառայության կարգի և անձի կյանքի ու առողջության դեմ: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, սխալ մեկնաբանելով քրեաիրավական նորմը, զինվորական ծառայության պարտականությունների կատարման հետ չկապված հանցավոր արարքները զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների շարքին չի դասել:

Բողոք բերած անձի կարծիքով՝ վերոնշյալ մոտեցումն անթույլատրելի է, քանի որ տվյալ դեպքում Մ.Սարուխանյանը դուրս է եկել իր լիազորությունների սահմաններից և, կատարելով իշխանագանցություն, բռնություն է գործադրել առաջնագծում մարտական հերթապահություն իրականացնող շարքային Ա.Բաբայանի նկատմամբ, բացի այդ, Մ.Սարուխանյանի արարքի հետևանքով Ա.Բաբայանի առողջությանը դիտավորությամբ պատճառվել է կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածք: Հետևաբար, Մ.Սարուխանյանի արարքը պետք է որակվեր հանցագործությունների համակցությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով և 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Վերոգրյալի հետ մեկտեղ, սակայն, բողոք բերած անձը նշել է, որ հանցանքը կատարելու ժամանակ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված էր պատիժ՝ ազատազրկում երկուսից հինգ տարի ժամկետով, իսկ 2013 թվականի հունիսի 8-ին ուժի մեջ մտած՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքից հետո ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով պատիժ է սահմանվել զինվորական ծառայության մեջ սահմանափակում՝ մեկից երկու տարի ժամկետով, կամ կալանք՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահել՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկում՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ 2013 թվականի հունիսի 8-ին ուժի մեջ մտած «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով ոչ թե սահմանվել է արարքի հանցավորությունը, այլ պետի կողմից ստորադասին ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը, որը կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ, հանվել է ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասից և նախատեսվել է այլ հոդվածով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով: Ուստի, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան ակնհայտ մեղմ է, քան հանցանքը կատարելու ժամանակ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան, բողոքաբերը գտնում է, որ Մ.Մարությանյանի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով և 112-րդ հոդվածի 1-ին մասով:

11. Դատավարական իրավունքի նորմերի խախտման կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից սույն գործը քննվել է արագացված դատական քննության կարգով: Առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ ամբաստանյալը վերաքննիչ բողոք է բերել՝ խնդրելով ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով և 112-րդ հոդվածի 1-ին մասով իր նկատմամբ նշանակել ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ: Վերաքննիչ դատարանը գործը քննել է վճռաբեկության կարգով և փաստորեն, առանց ապացույցների հետազոտման, կայացրել է արդարացման դատական ակտ:

Վերոնշյալ հանգամանքը, ըստ բողոքաբերի, վկայում է այն մասին, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները և, դուրս գալով իր լիազորությունների շրջանակից, գործել է ոչ թե որպես առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման իրավասությամբ օժտված դատարան, այլ որպես առաջին ատյանի դատարան: Այս կապակցությամբ բողոք բերած անձը վկայակոչել է Արման Վլադիմիրի Կարախանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի թիվ ԵԶՐԳ /0569/01/08 որոշումը:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ դուրս գալով իր լիազորությունների շրջանակից՝ Վերաքննիչ դատարանը խախտել է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, քանի որ չի գործել որպես «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»: Այս կապակցությամբ բողոքաբերը վկայակոչել է Սոկուրենկոն և Ստրիգունն ընդդեմ Ուկրաինայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2006 թվականի հուլիսի 20-ի վճիռը, զանգատներ թիվ 29458/04 և 29456/04:

12. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը և օրինա-

կան ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 1-ի դատավճռին:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով («Ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը») և ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով («Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը») նախատեսված հանցակազմերի մեկնաբանման և դրանց հարաբերակցության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալ Մ.Սարուխանյանին մեղսագրված արարքը պարունակո՞ւմ է արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշները, և ենթակա՞ է արդյոք այն որակման ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով:

15. Մինչև 2013 թվականի ապրիլի 30-ի՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքի ընդունումը, գործող ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն էր նախատեսում պետի կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելու, իշխանազանցության կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելու, ինչպես նաև իշխանության անգործության համար, եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, և եթե դրանք էական վնաս են պատճառել (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող գումարը կամ դրա արժեքը):

2013 թվականի ապրիլի 30-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում պետի (հրամանատարի) կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելու, իշխանազանցության կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելու, ինչպես նաև իշխանության անգործության համար, եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահա-

գրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, և եթե դրանք էական վնաս են պատճառել:

Մեջբերված քրեաիրավական նորմերի վերլուծությունից երևում է, որ և՛ մինչև 2013 թվականի ապրիլի 30-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքի ընդունումը, և՛ դրանից հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասը երկօբյեկտ հանցագործություն է. հիմնական օբյեկտը պետերի, զինվորական պաշտոնատար անձանց և այլ զինծառայողների միջև առաջացող հասարակական հարաբերություններն են, որոնք կապված են զինվորական ծառայության հետ: Որպես լրացուցիչ օբյեկտ կարող են հանդես գալ սեփականության հարաբերությունները, անձի իրավունքներն ու օրինական շահերը, զինծառայողների առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը:

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված երկօբյեկտ հանցակազմների առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ս. Հովհաննիսյանի* գործով որոշմամբ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) *հանցակազմի հիմնական օբյեկտին վնաս հասցնելը հնարավոր է լրացուցիչ օբյեկտին, Կոնկրետ դեպքում՝ Կոնկրետ առողջությանը, պատիվն ու արժանապատվությանը վնաս հասցնելու միջոցով: Դրա հետ մեկտեղ պետք է նկատի ունենալ, որ Կոնկրետ առողջությանը, պատիվն ու արժանապատվությանը վնաս հասցնելը ինքնին չի նշանակում, որ հանցավորի արարքն ուղղված է եղել հիմնական օբյեկտի՝ զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ: Կոնկրետ դեպքում արարքը կարող է ուղղված լինել անձի առողջության, նրա պատիվն ու արժանապատվության դեմ՝ որպես հանցագործության հիմնական օբյեկտի: (...)*» (տես Սրապիոն Ազատի Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՍԴ-0204/01/11 որոշման 15-րդ կետը):

16. Ինչպես մինչև 2013 թվականի ապրիլի 30-ի՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքի ընդունումը, այնպես էլ դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասի հիմնական օբյեկտը պետերի (հրամանատարների), զինվորական պաշտոնատար անձանց և ենթակայության տակ գտնվող զինծառայողների միջև առաջացող հարաբերություններն են՝ որպես զինվորական ծառայության կարգի տարատեսակ: Զինվորական ծառայությունը ՀՀ զինված ուժերում և այլ գործերում իրականացվող պետական գործունեության հատուկ տեսակ է, որի իրականացման սահմանված կարգի դեմ ուղղված քրեորեն պատժելի արարքներն ընդգրկված են ՀՀ քրեական օրենսգրքի «Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ» բաժնում և համանուն գլխում: Մույն հանցագործությունները բնութագրվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ առանձնահատուկ հատկանիշներով: Մասնավորապես, բոլոր զինվորական հանցագործությունների համար ընդհանուր հանդիսացող օբյեկտն օրենքներով, զինվորական կանոնադրություններով, կանոն-

նագործերով, պետերի հրամաններով սահմանված զինվորական ծառայության կարգն է: Հետևաբար, արարքը զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների թվին դասելու համար նախ և առաջ պետք է փաստել, որ այն ոսնձգում է զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ՝ որպես հանցագործության հիմնական օբյեկտի:

Չինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների առանձնահատկությունների կապակցությամբ Վճարելի դատարանը Ս. Հովհաննիսյանի գործով որոշման մեջ ընդգծել է, որ «(...) զինվորական ծառայության մեջ ընդգրկված լինելու փաստն ինքնին հիմք չէ արձանագրելու, որ զինծառայողը յուրաքանչյուր պահի զինվորական ծառայության կոնկրետ պարտականություններ է կատարում: (...) ծառայության մեջ գրնվելու ժամանակաշրջանում զինծառայողները գրնվում են ոչ միայն զինվորական ծառայական հարաբերությունների, այլ զինվորական օրենսդրության նորմերով չկարգավորվող այլ (անչնական, քաղաքացիաիրավական, ընտանեկան և այլն) իրավահարաբերությունների մեջ:

(...) գործումսի տարածքում կատարված ոչ բոլոր արարքներն են համարվում զինվորական հանցագործություն, հետևաբար յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է զինվորական հանցագործությունը հստակ սահմանազատել ՀՀ քրեական օրենսգրքով արգելված այլ արարքներից, ինչպես նաև կարգապահական պարտախանարվության հիմք հանդիսացող զանցանքներից: Այլ խոսքով՝ զինվորական կանոնագրքերով սահմանված՝ զինծառայողների փոխհարաբերությունների վարքագծի կանոնների խախտումն ինքնին չի նշանակում, որ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքն անպայման պետք է որակվի որպես զինվորական հանցագործություն, այն կարող է որակվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի այն նորմով, որը պարտախանարվություն է սահմանում զինվորական գործունեության հետ չկապված արարքի համար, կամ որակվել որպես կարգապահական խախտում և հանգեցնել կարգապահական պարտախանարվության: (...)» (տե՛ս Սրայիոն Ազատի Հովհաննիսյանի գործով Վճարելի դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՍԳ/0204/01/11 որոշման 19-րդ և 21-րդ կետերը):

17. Ինչպես մինչև 2013 թվականի ապրիլի 30-ի՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքի ընդունումը, այնպես էլ դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմն օբյեկտիվ կողմից դրսևորվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ.

ա) իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը,

բ) իշխանագանցություն կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը,

գ) իշխանության անգործությունը:

Քննարկվող հանցակազմի առկայության պարտադիր պայման է վերը նշված արարքների արդյունքում էական վնասի առաջացումը և պատճառական կապն այդ արարքների և առաջացած վնասի միջև: Քննարկվող հանցա-

կազմի իմաստով էական վնաս են համարվում պետությանը, կազմակերպություններին կամ քաղաքացիներին պատճառված նյութական վնասը և այլն:

18. Ինչպես մինչև 2013 թվականի ապրիլի 30-ի՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքի ընդունումը, այնպես էլ դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ: Հանցակազմի պարտադիր հատկանիշ են հանցագործության շարժառիթները՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունը կամ խմբային շահերը: Այսպես՝ արարքը սույն հոդվածով որակելու համար հանցավորը պետք է գիտակցի, որ հոդվածի դիսպոզիցիայում թվարկված արարքների կատարմամբ խախտում է համապատասխան զինվորական ակտերով իր վրա դրված պարտականությունները, վնաս է պատճառում զինվորական ծառայության սահմանված կարգին և ցանկանում է վերոնշյալ արարքների կատարումը: Միաժամանակ, իր գործողությունների (անգործության) հետևանքների նկատմամբ հանցավորի վերաբերմունքը կարող է դրսևորվել ինչպես ուղղակի և անուղղակի դիտավորությամբ, այնպես էլ անգոյությունով: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը *Ս. Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ ընդգծել է, որ «(...) *զինծառայողի կողմից կատարված յուրաքանչյուր հակահրավակական արարք կարող է ունենալ մեկից ավելի շարժառիթներ և նպատակներ, որոնցից մեկը գերակայում է մյուսների նկատմամբ: Ուստի յուրաքանչյուր դեպքում արարքի ճիշտ քրեահրավակական որակման համար կարևոր նշանակություն ունի գերակա շարժառիթի և նպատակի պարզումը: Այլ խոսքով՝ այն դեպքում, երբ գործով ձեռք բերված ապացույցների բավարար ամբողջությամբ կհիմնավորվի, որ զինծառայողի գերակա շարժառիթը և նպատակը կապված են եղել զինծառայողների միջև փոխհարաբերությունների սահմանված կարգը խախտելու հետ, արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով: Մինչդեռ այն դեպքում, երբ գերակա շարժառիթը զինծառայողների միջև փոխհարաբերությունների սահմանված կարգը խախտելու հետ կապված չի եղել և պայմանավորված է եղել անձնական կամ այլ բնույթի մոտիվացիայով, և արարքն ուղղված չի եղել զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ, ապա այն ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի այն նորմով, որը պարասպասարկություն է սահմանում զինվորական գործունեության հետ չկապված արարքի համար» (տե՛ս Սրապիոն Ազատի Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՍԳ/0204/01/11 որոշման 20-րդ կետը):*

19. Սույն որոշման 15-18-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ զինվորական ծառայության պարտականությունների կատարման հանգամանքն էական նշանակություն ունի արարքը որպես զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործություն որակելու հարցում: Մասնավորապես, այն դեպքում, երբ զինվորական ծառայության պարտականություններ կատարող զինծառայողը հակաիրավական արարք է կատարում, նա թույլ է տալիս նաև զինվորական կանո-

նագործերով ամրագրված վարքագծի կանոնների խախտում, ինչի արդյունքում վտանգվում է զինվորական ծառայության սահմանված կարգը: Բացի այդ, նշված դեպքում հանցավորը զիտակցում է, որ իր գործողություններով նախ և առաջ խախտում է զինվորական ծառայության հարաբերությունները և ցանկանում կամ գիտակցաբար թույլ է տալիս դա: Այլ խոսքով՝ նրա մոտ առկա դիտավորությունն ուղղված է զինվորական ծառայության սահմանված կարգը խախտելուն:

Չինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված անձնական կամ այլ շարժառիթներով իրականացվող հանրորեն վտանգավոր արարքները մինչև օրենքում կատարված փոփոխությունները զինվորական հանցագործություն չեն համարվել: Այդ մասին է վկայում, մասնավորապես, 2013 թվականի ապրիլի 30-ի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքը, որով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ, 358.1-րդ, 360-րդ հոդվածները), որոնց դիսպոզիցիաներում առկա է «*եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ*» ձևակերպումը: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքում հստակ ամրագրված է, որ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված արարքները որպես զինվորական հանցագործություն որակելու համար անհրաժեշտ է որպեսզի համապատասխան հոդվածի դիսպոզիցիայում հստակ նշում արված լինի այն մասին, որ արարքը ենթակա է որակման որպես զինվորական հանցագործություն նաև այն դեպքում, երբ կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ:

20. Սույն որոշման նախորդ կետում շարադրված եզրահանգման լույսի ներքո մեկնաբանելով ինչպես մինչև 2013 թվականի ապրիլի 30-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքի ընդունումը, այնպես էլ դրանից հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով բացառապես այն դեպքում, երբ այն կապված է զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հակառակ մոտեցման, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի այնպիսի մեկնաբանության պարագայում, որի պայմաններում արարքը ենթակա է որակման քննարկվող հոդվածով նաև այն դեպքում, երբ կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը), հանդիսանում է անալոգիայի կիրառում: Վճռաբեկ դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ քրեական օրենքը չպետք է տարածական մեկնաբանության ենթարկվի և արարքի հանցավորությունն ու պատժելիությունն իրավական որոշակիության չափանիշին բավարարող եղանակով պետք է նախատեսված լինի գործող օրենքով (օրինականության սկզբունքի և քրեական օրենքն անա-

լրօգիայով կիրառելու արգելքի մասին *mutatis mutandis* տե՛ս Վարուժան Գազի-կի Ավետիսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-իքիվ ՍԳ-3/0013/01/11 և Երվանդ Ռաֆիկի Մելքոնյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 11-ի քիվ ԵՇԳ/0090/01/10 որոշումները):

21. 2013 թվականի ապրիլի 30-ի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքի 9-րդ հոդվածով լրացված ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում գորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում ստորադասին (ենթակային) ծեծելու կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի համար՝ ստորադասի (ենթակայի) կամ նրա մերձավորի նկատմամբ, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոնշյալ հոդվածով արգելված արարքների կատարումը պետք է կապված չլինի զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ:

22. ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել:

Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ: (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն սույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում:

Հետադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ խստացնող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին»:

Մեջբերված իրավադրությունները, ինչպես նաև արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն

այլ կերպ վատթարացնող օրենքի հետադարձ ուժի արգելքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներ (օրինակ՝ G. v France, զանգատ թիվ 15312/89, 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռ, կետ 24, C.R. v. The United Kingdom, զանգատ թիվ 20190/92, 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռ, կետ 32 և S.W. v. The United Kingdom, զանգատ թիվ 20166/92, 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռ, կետ 34 և այլն) Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել Վ. Գալոյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության և քրեական օրենքի հետադարձ ուժի կառուցակարգերը ճիշտ կիրառելու համար ելակետային նշանակություն ունի հանցավոր արարքի կատարման պահը: (...) Հերևաբար իրավասու մարմինը հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական օրենքի այս կամ այն նորմի կիրառելիության հարցը լուծելիս պետք է ղեկավարվի հանցավոր արարքի (գործողության կամ անգործության) փաստացի կատարման պահի և քրեական օրենքի ուժի մեջ մտնելու պահի համադրմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է իրականացվում վարույթը և վարույթն իրականացնելու պահին կիրառման ենթակա օրենքը գործում է, թե ոչ: Նշված կանոնը՝ որպես կամայական մեղադրման, դատապարտման և պարժման դեմ ուղղված արդյունավետ երաշխիք, «չկա հանցագործություն և պարիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (*nullum crimen, nulla poena sine lege*) սկզբունքի անկյունաքարն է, և դրանից ցանկացած շեղում, բացառությամբ քրեական օրենքի հետադարձ ուժի կանոնի, կհանգեցնի (...) միջազգային և ներպետական իրավանորմների պահանջների խախտման: (...)» (տե՛ս Վաղարշակ Էդիկի Գալոյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0008/15/13 որոշման 17-րդ կետը):

23. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված վերլուծության համատեքստում գնահատելով սույն որոշման 21-րդ կետում շարադրված եզրահանգումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև 2013 թվականի ապրիլի 30-ի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքի ընդունումը պետի կողմից ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրա սպառնալիքը (տե՛ս սույն որոշման 17-րդ կետը), որը կապված չէր զինվորական ծառայության պարտականություններ կատարելու հետ, ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով պատժելի չէր և չէր հանդիսանում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն: Հետևաբար, 2013 թվականի ապրիլի 30-ի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքում լրացված 358.1-րդ հոդվածը, որը պատասխանատվություն է նախատեսում պետի կողմից ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու կամ դրա սպառնալիքի համար, որը կապված չէ զինվորական ծառայության պարտականությունների կատարման հետ (տե՛ս սույն որոշման 21-րդ կետը), հանդիսանում է արար-

քի հանցավորությունը սահմանող օրենք: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասը քրեականացում նախատեսող նորմ է, քանի որ դրանով օրենսդիրը սահմանել է այնպիսի դիսպոզիտիվ հատկանիշ («եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ»), որի պարագայում փոփոխության են ենթարկվել հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, և նախկինում զինվորական հանցագործություն չհամարվող արարքները վեր են ածվել զինվորական հանցագործության:

24. Հինք ընդունելով սույն որոշման 15-23-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածով որակելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ եթե վերոնշյալ արարքները կապված չեն զինվորական ծառայության պարտականություններ կատարելու հետ, ապա հանդիսանում են զինվորական հանցագործություն և կարող է որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով միայն 2013 թվականի ապրիլի 30-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելու պահից, այսինքն՝ 2013 թվականի հունիսի 8-ից:

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ տուժող Ա.Բաբայանի նկատմամբ բռնությունը կատարվել է հետևյալ հանգամանքներում՝

ա) Մ.Սարուխանյանը, լինելով դասակի հրամանատար, կոչումով լեյտենանտ, զինվորական ծառայության պարտականություններ կատարելու հետ չկապված ստորադաս հանդիսացող շարքային Ա.Բաբայանի գլխին հարվածել է փայտով,

բ) արարքը կատարվել է վրեժխնդրության շարժառիթով, այն է՝ տուժողի կողմից իրեն պատկանող լապտերը չվերադարձնելու և այն ջարդելու կապակցությամբ,

գ) արարքը կատարվել է դիտակետի գետնատնակում՝ ակնատես զինծառայողների բացակայությամբ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը դատական քննության արագացված կարգի կիրառմամբ ամբաստանյալ Մ.Սարուխանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով, 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 3 տարի 6 ամիս ժամկետով (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 1-ին մասով բեկանելու և ամբաստանյալ Մ.Սարուխանյանին այդ մասով արդարացնելու վերաբերյալ: Վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունը՝ Վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրակացության, որ Մ.Սարուխանյանը

ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 1-ին մասով իրեն մեղսագրված արարքը կատարել է 2013 թվականի մայիսի 26-ին՝ մինչև 2013 թվականի ապրիլի 30-ի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքն ուժի մեջ մտնելը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

26. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-24-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

ա) Մ.Սարուխանյանին մեղսագրված արարքը չի պարունակում մինչև 2013 թվականի ապրիլի 30-ի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշները:

Մասնավորապես, արարքի կատարումը պայմանավորված չի եղել զինվորական ծառայության պարտականությունների կատարման հետ, դրա հետևանքով չի խախտվել տվյալ կամ մեկ այլ ստորաբաժանման ներքին կարգուկանոնը, չի խանգարվել անձնակազմի հանգիստը, դիտակետի գետնատնակում առաջացած վիճաբանության ընթացքում ամբաստանյալն ուղղակի դիտավորություն չի ունեցել և չի ցանկացել ռոնձգել զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ կամ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորել զինվորական հանրության նկատմամբ: Այլ խոսքով՝ ամբաստանյալը տուժողի նկատմամբ բռնությունը կիրառել է անձնական հողի վրա՝ վրեժխնդրության շարժառիթով, ուստի զինվորական հանցակազմի վերոնշված հատկանիշների բացակայության պայմաններում չի կարող որակվել արարքը կատարելու պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով:

բ) 2013 թվականի ապրիլի 30-ի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքը՝ դրա 9-րդ հոդվածով ՀՀ քրեական օրենսգրքում 358.1-րդ հոդված լրացվելու առումով չի հանդիսանում ամբաստանյալ Մ.Սարուխանյանի վիճակը բարելավող օրենք, քանի որ իր բնույթով ամբաստանյալին մեղսագրված արարքի քրեականացում նախատեսող օրենք է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Մ.Սարուխանյանին մեղսագրված արարքը չի պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշները :

27. Հիմք ընդունելով սույն որոշման 15-26-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մ.Սարուխանյանի կողմից հանցանքը կատարելու պահի դրությամբ դեռևս ուժի մեջ չէին մտել 2013 թվականի ապրիլի 30-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-34-Ն օրենքով նախատեսված փոփոխությունները: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը, պահպանելով քրեական օրենքի հետադարձության կանոնի վերաբերյալ ՀՀ քրեական

օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված պահանջները, Մ.Սարուխանյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության վերաբերյալ հանգել է ճիշտ հետևության՝ միաժամանակ նրա արարքը որակելով միայն ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն են բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ ամբաստանյալի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներ (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանը, դուրս գալով վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, քննության է առել և բավարարել այնպիսի պահանջ, որը դատարանին ներկայացված չի եղել (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս գալու հարցին անդրադարձել է *Ս. Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ և իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) վարույթի կարճման հիմքերի առկայության դեպքում քրեական գործով դատարկանքնություն չիրականացնելու կանոնը պետք է մեկնաբանվի քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի իրավական նշանակությանը համապատասխան. այն չպետք է հիմք հանդիսանա առերևույթ կամայականության համար: Այսինքն՝ այս կանոնը պետք է կիրառվի միայն այն ժամանակ, երբ վարույթն իրականացնող դատարանը գործը վարույթ ընդունելիս չգիտեր և չէր կարող իմանալ, որ առկա են քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքեր: Հակառակ դեպքում, Առաջին արյանի դատարանի կողմից կայացված դատարկանքնական ակտը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիման վրա ենթակա է անվերապահ բեկանման՝ անկախ այն հանգամանքից, թե ով և ինչ հիմքով է վերաքննիչ բողոք ներկայացրել: Այլ խոսքով՝ գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի առկայության պայմաններում վերաքննիչ դատարանի կողմից առաջին արյանի դատարանի դատարկանքնական ակտի անվերապահ բեկանումը քրեադատավարական օրենքի իմպերատիվ պահանջ է (...)» (տե՛ս Սրապիոն Ազատի Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՍԳ/0204/01/11 որոշման 32-րդ կետը):

Վերը մեջբերված՝ *Ս. Հովհաննիսյանի* գործով ձևավորված իրավական դիրքորոշման հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս գալու վերաբերյալ բողոքաբերի փաստարկներն անհիմն են:

28. Հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը

սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ չի տվել դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է հիմք հանդիսանալ վճռաբեկ բողոքը բավարարելու համար: Հետևաբար, վճռաբեկ բողոքում նշված հիմքով նյութական օրենքի էական խախտում թույլ չի տրվել, այդ առումով Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, լիովին համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին, ուստի նույն օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Մխիթար Ալիկի Սարուխանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

13.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ԵԱՆԴ/0060/01/13
Նախագահող դատավոր՝ Գ.Ավետիսյան
Դատավորներ՝ Ե.Դարբինյան
Ս.Չիչոյան

ԵԱՆԴ/0060/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ
մեղադրող պաշտպան

Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
Ա.ԳԱՍՊԱՐՅԱՆԻ
Ռ.ՍԱՖԱՐՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Նիկոլայ Հրաչիկի Չաքմազյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հունվարի 13-ի որոշման դեմ Երևանի կայագործի զինվորական դատախազության ավագ դատախազ Ա.Գասպարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. Երևանի կայագործի զինվորական դատախազության ավագ դատախազ Ա.Գասպարյանի 2013 թվականի հունիսի 24-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 90211013 քրեական գործը:

2013 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ Նիկոլայ Չաքմազյանը ներգ-

րավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Արման Բեգլարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով:

2. 2013 թվականի օգոստոսի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ Ա.Բեգլարյանի նկատմամբ կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետը, ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով նրա նկատմամբ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել, և քրեական հետապնդումը դադարեցվել է:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 22-ի դատավճռով, արագացված դատական քննության կարգի կիրառմամբ Ն.Չաքմազյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել կարգապահական գումարտակում պահելու՝ 1 տարի ժամկետով: Նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված կարգով պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել Երևանի կայազորի զինվորական դատախազության ավագ դատախազ Ա.Գասպարյանը՝ խնդրելով պատժի մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 22-ի դատավճիռը, այն է՝ Ն.Չաքմազյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտել կարգապահական գումարտակում պահելու՝ մեկ տարի ժամկետով՝ առանց ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման և փոխել խափանման միջոցը՝ կիրառելով կալանավորում:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 13-ի որոշմամբ մեղադրողի վերաքննիչ բողոքը մերժվել է, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 22-ի դատավճիռը՝ թողնել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 13-ի որոշման դեմ Երևանի կայազորի զինվորական դատախազության ավագ դատախազ Ա.Գասպարյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 18-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Ամբաստանյալ Ն.Չաքմազյանը ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտվել է այն բանի համար, որ հանդիսանալով ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ ՀՀ ՊՆ) 24236 զորամասի կուրսանտ, 2013 թվականի հուլիսի 13-ին՝ ժամը 23.00-ի սահմաններում, շարքից ուշանալու կապակցությամբ վիճաբանել է ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 34-րդ հոդվածի կարգով իր նկատմամբ պետ հանդիսացող, նույն զորամասի կուրսանտ, կրտսեր սերժանտ Ա.Բեզլարյանի հետ, ով դիտողություն է արել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող կուրսանտ Ն.Չաքմազյանին և անպարկեշտ ձևով ստորացրել նրա պատիվն ու արժանապատվությունը՝ մեկ անգամ հարվածելով վերջինիս ոտքին: Առաջացած քաշքշուկի ժամանակ Ն.Չաքմազյանը, խախտելով ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ հոդվածով սահմանված՝ համաժառայողի պատիվն ու արժանապատվությունը հարգելու, նրան ծաղրածանակի չենթարկելու, միմյանց նկատմամբ բռնություն չգործադրելու կանոնները, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ բռնություն է գործադրել Ա.Բեզլարյանի նկատմամբ, այն է՝ մեկ անգամ ձեռքով հարվածել է վերջինիս աջ աչքի շրջանին՝ առողջությամբ պատճառելով թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 83-85):

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «Դատարանն ամբաստանյալ Ն.Չաքմազյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ է դիտում այն, որ նա իրեն լիովին մեղավոր է ճանաչել, անկեղծորեն զոջացել է կատարածի համար, զորամասի հրամանատարության կողմից բնութագրվում է դրական:

Դատարանն ամբաստանյալ Ն.Չաքմազյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չի արձանագրում:

Հաշվի առնելով ամբաստանյալ Ն.Չաքմազյանի կողմից կատարած հանցավոր արարքի հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, նրա անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը դատարանը հանգում է հետևության, որ նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված առավել մեղմ՝ կարգապահական գումարտակում պահել պատժատեսակի նշանակումը բավարար է նրան ուղղելու, նոր հանցանքի կատարումը կանխելու և սոցիալական արդարությունը վերականգնելու համար:

Միաժամանակ հաշվի առնելով ամբաստանյալ Ն.Չաքմազյանի անձը դրական բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող

հանգամանքների բացակայությունը՝ դատարանը հանգում է հետևության, որ նրա ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 47):

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրվող ամբաստանյալ Ն.Չաքմազյանի նկատմամբ պատժի տեսակն ու չափը որոշելիս Առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, ըստ էության բազմակողմանի ստուգման ու օբյեկտիվ գնահատության է ենթարկել նաև մեղադրողի վերաքննիչ բողոքում մատնանշված բոլոր հանգամանքները, այդ թվում ամբաստանյալ Ն.Չաքմազյանի կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը և հետևանքները, անձը բնութագրող տվյալները, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, մասնավորապես այն, որ նա իրեն լիովին մեղավոր է ճանաչել, անկեղծորեն զղջացել՝ կատարածի համար, գորամասի հրամանատարության կողմից բնութագրվում է դրական, ինչպես նաև ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը և հանգել է հետևության, որ Ն.Չաքմազյանի ուղղվելը հնարավոր է առանց հասարակությունից մեկուսացնելու, ու վերջինիս նկատմամբ նշանակելով կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ՝ հիմնավոր կերպով գտել է, որ ամբաստանյալը նշանակված պատիժը չպետք է կրի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ մեկ տարի ժամկետով:

(...) Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունում նաև ՀՀ ՊՆ 24236 գործառնասի դասակի հրամանատար Հ.Ավագյանի հայտարարությունը, (որի ղեկավարությամբ ռազմական ինստիտուտում սովորում է ամբաստանյալ Ն.Չաքմազյանը) որ բացի նշված միջադեպից՝ սովորելու ամբողջ ընթացքում, նաև դեպքից հետո Ն.Չաքմազյանը դրսևորում է պատշաճ վարքագիծ, սովորում է գերազանց առաջադիմությամբ և ուսումը ավարտելուց հետո կարող է դառնալ Հայկական բանակի առաջատար սպա» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 118-119):

3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի պնդմամբ Ն.Չաքմազյանի նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ մեղմ է, և Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 22-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում: Մասնավորապես՝ դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 48-րդ և 70-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, առանց հաշվի առնելու, որ Ն.Չաքմազյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը կխաթարի ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով նախատեսված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակները, որպես Ն.Չաքմազյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է դիտել հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, նրա անձը, ինչպես նաև այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, երիտասարդ է, անկեղծորեն զղջացել է կատարածի համար, գորամասի հրամանատարության կողմից բնութագրվում է դրական, հաշտվել է տուժողի հետ, և վերջինս դատարանում որևէ բողոք կամ պահանջ չի ներկայացրել:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ Ն.Չաքմազյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անհրաժեշտության վերաբերյալ իր եզրահանգումները Վերաքննիչ դատարանը հիմնավորել է Վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով՝ առանց Ն.Չաքմազյանին մեղազրկող արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը հաշվի առնելու:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է Ն.Չաքմազյանի նկատմամբ նշանակված պատժի մասով Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 13-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նոր քննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս տուժողի վարքագծի հակաօրինականության կամ հակաբարոյականության (ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ) գնահատման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Ն.Չաքմազյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս ստորադաս դատարաններն անձին մեղազրկող հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների համատեքստում պատշաճ գնահատման ենթարկել⁶ են արդյոք տուժողի վարքագիծը:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

(...)»:

Մեջբերված քրեաիրավական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել թիվ ՎԲ-50/07, ՎԲ-139/07, ՎԲ-195/07, ՎԲ-192/07, ՎԲ-201/07, ՎԲ-01/08, ԵԿԳ/0034/01/08, ԱՎԳ-2/0059/01/08, ՀՅԶԲԳ-3/0109/01/08, ԵԶԲԳ/0571/01/08, ԱՎԳ/0100/01/08, ԱՐԳ/0117/01/08, ԱՐԱԳ/0050/01/08, ԵԱԶԳ/0078/01/09, ԼԳ-2/0019/01/09, ՍԳ/0226/01/09, ԵԱԶԳ/0120/01/09, ԵԷԳ/0138/01/09, ԳԳ-1/0003/01/10, ՍԳ/0085/01/10, ԵԿԳ/0126/01/10, ԵԱՆԳ/0091/01/09, ԵԷԳ/0201/01/11, ԵԱԳ-Գ/0034/01/12, ԼԳ/0093/01/12, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում:

Վերոնշյալ որոշումներում Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունը, որ ամբաստանյալի ուղղումը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված՝ ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, սակայն դատարանը, կոնկրետ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատման հիման վրա դեկլարավելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը, անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պարտավոր է հաշվի առնել՝

ա) հանցավորի անձը բնութագրող տվյալները,

բ) պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և (կամ) ծանրացնող հանգամանքները,

գ) հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը,

դ) հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները,

ե) հանցանք կատարած անձի մեղքի ձևը,

զ) հանցանք կատարած անձի կողմից հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը և այլն:

14. Սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծությունից երևում է, որ անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը, ի թիվս այլոց, պետք է հաշվի առնի ինչպես անձին մեղսագրվող հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, այնպես էլ նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և (կամ) ծանրացնող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Գ. Մաղաթյանի* գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (տե՛ս Գարուշ Նորիկի Մաղաթյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

Ինչ վերաբերում է պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և (կամ) ծանրացնող հանգամանքներին, ապա դրանք պատշաճ գնահատման ենթարկելու պահանջն ամրագրված է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասում:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ «Պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք [է]՝ (...)

տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը (...):»:

Մեջբերված քրեաիրավական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Խ. Ղազարյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) տուժողի վարքագծի հակաօրինականությունը չի սահմանափակվում միայն հանցագործության կատարումով: Այն իր մեջ ներառում է նաև այլ գործողություններ, որոնք արգելվում են իրավունքի այլ ճյուղերով, օրինակ՝ վարչական, աշխատանքային, քաղաքացիաիրավական օրենսդրությամբ: Հակաօրինական վարքագիծը կարող է արտահայտվել

ծեծի, խոշտանգման, ծանր վիրավորանքի, մարդկային արժանապատվության նվաստացման ձևով: Այն կարող է դրսևորվել նաև պաշտոնական դիրքը չարաշահելու, շանտաժի և այլ գործողությունների ձևով, որոնք չեն հանդիսանում բռնություն, ծաղրանք, ծանր վիրավորանք, սակայն կրում են հակաօրինական բնույթ:

Ինչ վերաբերում է տուժողի վարքագծի հակաբարոյականությանը, ապա այն գնահատելու համար անհրաժեշտ է ելնել հասարակության մեջ համընդհանուր ճանաչում գտած բարոյական և էթիկական կանոնների դիրքերից, այնպիսի կատեգորիաների մասին պատկերացումներից, ինչպիսիք են արդարությունը, պատիվը, բարին ու չարը և այլն: Հակաբարոյական վարքագծի դրսևորումներից է խաբեությունը, դավաճանությունը, խարդավանքը, պահպանության վստահված փողերը վատնելը, բամբասանքներ տարածելը, ամուսնական դավաճանությունը և այլն: (...)» (տե՛ս Խաչիկ Հովասափի Ղազարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԷԴ/0138/01/09 որոշման 16-րդ կետը):

16. Սույն որոշման 13-14-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և դրա վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը անձին մեղսագրվող հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների համատեքստում պետք է պատշաճ գնահատման ենթարկի նաև հանցանքի կատարումից առաջ և դրա ընթացքում տուժողի դրսևորած վարքագիծը: Նշված հանգամանքի գնահատումը կարևոր է հանցավորի և տուժողի վարքագծի հնարավոր փոխապայմանավորվածությունը և հանցավոր վարքագծի մեխանիզմում տուժողի դերակատարությունը պարզելու համար:

17. ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Ձորամատու գինձառայողների ամենօրյա կյանքն ու գործունեությունն իրականացվում է ներքին ծառայության պահանջներին համապատասխան:

Ներքին ծառայությունը նախատեսված է գորամասի ներքին կարգուկանոնի և զինվորական կարգապահության պահպանման համար, որոնք ապահովում են նրա մշտական մարտական պատրաստականությունը, անձնակազմի ուսուցումը, առօրյա կյանքում նրանց կողմից այլ խնդիրների կազմակերպված կատարումը և զինձառայողների առողջության պահպանումը (...)»:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Ձինձառայողը պարտավոր է.

(...)

- խստորեն պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ու օրենքները, կատարել զինվորական կանոնադրությունների պահանջները,

(...)

- (...) հարգել [ընկերներից] յուրաքանչյուրի պատիվն ու արժանապատվությունը, իր և ուրիշ զինծառայողների նկատմամբ թույլ չտալ կոպտություն և ծաղրուծանակ, (...)»:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ «(...)

Պետն իրավունք ունի ենթակային հրամաններ տալ և պահանջել դրանց կատարումը: Պետը ենթակայի համար պիտի լինի պատվի և զսպվածության օրինակ և չպիտի թույլ տա ո՛չ տնավարություն, ո՛չ էլ կանխատրամադրվածություն: Ենթակայի մարդկային արժանապատվությունը ստորացնող գործողությունների համար պետը պատասխանատվություն է կրում:

(...):

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 76-րդ հոդվածի համաձայն՝ «Հրամանատարը (պետը) պարտավոր է պետության մեջ և զինված ուժերում լուծվող խնդիրների հիման վրա մշտապես դաստիարակել ենթականերին՝

(...)

- նրբազգացություն և ուշադրություն ցուցաբերել ենթակաների նկատմամբ, փոխհարաբերությունների մեջ թույլ չտալ անտակտություն և կոպտություն, բարձր պահանջկոտությունն ու սկզբունքայնությունը համատեղել նրանց անձնական արժանապատվության հարգման հետ, (...)»:

«ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Զինվորական կարգապահությունը պարտավորեցնում է յուրաքանչյուր զինծառայողի՝

1) հավատարիմ լինել զինվորական երդմանը, խստորեն պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջները.

(...)

5) պահպանել զինծառայողների միջև կանոնադրային փոխհարաբերությունները, ամրապնդել զորային ընկերականությունը.

(...)

7) թույլ չտալ զինծառայողի պատիվն արատավորող արարք»:

«ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենքի, զինված ուժերի ներքին, կայազորային ու պահակային ծառայությունների կանոնագրքերի, շարային և մարտական կանոնադրությունների, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների պահանջների կատարումն ապահովելիս հրամանատարը (պետը) պետք է մշտապես դրական օրինակ ծառայի ենթակա անձնակազմին, բարձրացնի վերջիններիս մեջ պատվի և զինվորական պարտքի գիտակցումը, խրախուսի արժանիներին ու պատասխանատվության ենթարկի զինվորական կարգապահությունը խախտողներին»:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի, ինչպես նաև «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի վերոշարադրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ զինվորական ծառայության կարգի պահպանումը, որի միջոցով ապահովվում է ՀՀ զինված ուժերի մշտական մարտական պատրաստականությունը, բոլոր զինծառայողների, հատկապես պետերի (հրամանատարների) պարտականությունն է: Զինծառայողները, զինվորական պետերը (հրամանատարները) պարտավոր են միմյանց և ենթակաների նկատմամբ հարգանք դրսևորել, պահպանել նրանց անձնական արժանապատվությունը և զինվորական քաղաքավարության կանոնները: Պետերի (հրամանատարների) կողմից զինվորական բարձր կարգապահության ապահովմանն ուղղված գործունեությունը պետք է իրականացվի ենթականերին, այդ թվում իրավախախտում թույլ տված զինծառայողներին համոզելու և հարկադրելու միջոցառումների խելամիտ և ճիշտ համադրությամբ:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի, ինչպես նաև «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի դրույթների վերլուծությունը համադրելով սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված նախադեպային իրավունքի վերլուծության հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի քննարկման ժամանակ դատարանը հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների համատեքստում պետք է պատշաճ գնահատման ենթարկի տուժող զինծառայողի վարքագիծը:

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Բեգլարյանը 2013 թվականի հուլիսի 13-ին՝ ժամը 23.00-ի սահմաններում, շարքից ուշանալու կապակցությամբ դիտողություն է արել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող կուրսանտ Ն.Չաքմազյանին և անպարկեշտ ձևով ստորացրել նրա պատիվն ու արժանապատվությունը՝ մեկ անգամ հարվածելով վերջինիս ոտքին: Առաջացած քաշքշուկի ժամանակ Ն.Չաքմազյանը մեկ անգամ ձեռքով հարվածել է իր նկատմամբ պետ հանդիսացող Ա.Բեգլարյանի աջ աչքի շրջանին՝ առողջությանը պատճառելով թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք: Ա.Բեգլարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ Ն.Չաքմազյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը Ն.Չաքմազյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ իրենց որոշումներում նշել են, որ հաշվի են առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը և ծանրացնող հանգամանք-

ների բացակայությունը, հանցագործության` հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը և այլն (տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը): Դրա հետ մեկտեղ, սակայն, սույն գործով դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել Ն.Չաքմազյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող այնպիսի հանգամանքի առկայությունը, ինչպիսին տուժողի վարքագծի հակաօրինականությունն ու հակաբարոյականությունն է:

19. Մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված և վերլուծված` ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի, ինչպես նաև «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի համապատասխան դրույթների լույսի ներքո` Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ն.Չաքմազյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս ստորադաս դատարաններն անձին մեղսագրվող հանցագործության` հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների համատեքստում պատշաճ գնահատման չեն ենթարկել տուժողի վարքագիծը: Մասնավորապես, Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները թեև ամբաստանյալի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցում հանգել են ճիշտ հետևության, այնուամենայնիվ հաշվի չեն առել այն հանգամանքը, որ Ն.Չաքմազյանի կողմից տուժողին հարվածելը պայմանավորված է եղել տուժողի հակաօրինական վարքագծով: Մասնավորապես, տուժողը, ով հանդիսացել է Ն.Չաքմազյանի պետը, դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից և, խախտելով ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի, ինչպես նաև «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ (տե՛ս սույն որոշման 17-րդ կետը), անպարկեշտ ձևով ստորացրել է Ն.Չաքմազյանի պատիվն ու արժանապատվությունը, բռնություն է գործադրել նրա նկատմամբ: Վերոնշյալ գործողությունների կապակցությամբ սույն գործով տուժողին ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել, հետագայում նրա նկատմամբ կիրառվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետը, և նրա նկատմամբ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է ոչ արդարացնող («ոչ ռեաբիլիտացիոն») հիմքով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հանգամանքը Ն.Չաքմազյանին մեղսագրվող հանցագործության` հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների համատեքստում ենթակա է գնահատման որպես նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք, որը վկայում է ինչպես հանցավորի, այնպես էլ նրա կատարած արարքի նվազ

հանրային վտանգավորության մասին, և սույն գործով Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից նշված այլ հանգամանքների հետ մեկտեղ (տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը) պետք է դիտվի Ն.Չաքմազյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք:

Վճարելի դատարանը գտնում է նաև, որ Ն.Չաքմազյանին մեղսագրվող հանցագործության` հանրության համար վտանգավորության աստիճանի ու բնույթի համատեքստում որպես հանցավորի և նրա արարքի նվազ հանրային վտանգավորության մասին վկայող հանգամանք գնահատման է ենթակա նաև այն, որ Ն.Չաքմազյանին մեղսագրվող արարքը դասվում է միջին ծանրության հանցագործությունների թվին:

20. Հիմք ընդունելով սույն որոշման 13-19-րդ կետերում շարադրված վերլուծությունը` Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս նյութական իրավունքի խախտում թույլ չի տվել, որը կարող է հիմք հանդիսանալ վճարելի բողոքը բավարարելու համար: Այս առումով Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին: Հետևաբար, անհիմն է բողոքաբերի փաստարկն այն մասին, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն պնդմանը, թե Ն.Չաքմազյանի նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ մեղմ է (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), ապա Վճարելի դատարանն արձանագրում է, որ Ս.Սարգսյանի գործով Վճարելի դատարանի որոշման համաձայն` «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ դատավճռով նշանակված պատժի անհամապատասխանությունը կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին` որպես դատական ակտը բեկանելու կամ փոփոխելու հիմք` անկախ նրանից, թե նշանակված պատիժն անարդարացի է` ակնհայտ խիստ է, թե ակնհայտ մեղմ, պայմանավորված է կիրառվող հոդվածի սանկցիայում նախատեսված պատժատեսակով և պատժաչափով, և այն չի կարող տարածվել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության կամ չկիրառելիության վրա:

(...) պատիժը մեղմացնելը և պատիժը պայմանականորեն չկիրառելը երկու առանձին, ինքնուրույն քրեաիրավականինստիտուտներ են, որոնց կիրառումը տարբեր հետևանքներ է առաջացնում: Մասնավորապես, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի նկատմամբ նշանակված պատիժն ի կատար չի ածվում, իսկ պատժի մեղմացման դեպքում փոփոխվում են ի կատար ածվող պատժի ժամկետները կամ հենց պատժատեսակը» (տե՛ս Սերոբ Ֆրունզիկի Սարգսյանի գործով Վճարելի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0109/01/12 որոշման 45-46-րդ կետերը):

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ վճարելի բողոքը պետք է մերժել` դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ` հիմք ընդու-

նելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Նիկոլայ Հրաչիկի Չաքմազյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հունվարի 13-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

սրորագրություն

Դատավորներ՝

սրորագրություններ

14.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ՏԳ/0071/01/13
Նախագահող դատավոր՝ Գ.Ավետիսյան
Դատավորներ՝ Ե.Դարբինյան
Ս.Չիչոյան

ՏԳ/0071/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Մ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՄԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈԴՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ	Ա.ԹԱՄԱԶՅԱՆԻ
պաշտպան	Մ.ԹՈՎԱՍՏԱՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Ալեք Գազիկի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի հունվարի 17-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի հուլիսի 28-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Տավուշի մարզի քննչական բաժնի Դիլիջանի քննչական բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 36102413 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2013 թվականի օգոստոսի 2-ի որոշմամբ Ալեք Պողոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

2. 2013 թվականի սեպտեմբերի 25-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 8-ի դատավճռով՝ արագացված դատական քննության կարգի կիրառմամբ, Ա. Պողոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ վեց տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա. Պողոսյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հունվարի 17-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 8-ի դատավճիռը պատժի մասով փոփոխելու վերաբերյալ: Ամբաստանյալ Ա. Պողոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 4 (չորս) ամիս ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 17-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Թամազյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Ա. Պողոսյանի պաշտպան Մ. Թովմասյանը՝ նշելով, որ վճռաբեկ բողոքն անհիմն է, վարույթ ընդունելու հիմքեր չկան, հետևաբար այն ենթակա է վերադարձման:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Ա. Պողոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2013 թվականի հուլիսի 18-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, ակոհողային խմիչքներ օգտագործած վիճակում, գողություն կատարելու դիտավորությամբ բաց պատուհանից ապօրինի կերպով մուտք է գործել Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 139 հասցեում գտնվող նույն քաղաքի բնակչուհի Ջուլիետա Սադաթեյանին պատկանող առանձնատուն և այնտեղից գաղտնի հափշտակել է մանկական մեկ ոսկյա թևնոց և մեկ գույգ կոշիկ՝ պատճառելով զգալի չափի՝ 9.200 ՀՀ դրամի նյութական վնաս (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 100-101):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Պատրիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ոչ միայն կարարված հանցագործության բնույթը և հասարակական վրանգավորության աստիճանը, այլև ամբաստանյալի անչք բնութագրող հանգամանքները՝ այն, որ իրեն լիովին մեղավոր է ճանաչում, զղջում է կարարածի համար:

Գործով ամբաստանյալի պատրասխանարվությունը և պատրիժը մեղմացնող հանգամանք չենք չի բերվել: Իսկ որպես պատրասխանարվությունը և պատրիժը ծանրացնող հանգամանք՝ դատարանը հաշվի է առնում հանցանքը կատարելու ռեցիդիվը (...):

Միաժամանակ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալի արարքում առկա է հանցագործությունների առանձնապես վրանգավոր ռեցիդիվ, այսինքն՝ սույն գործով դիտարկվող հանցագործության համար դատարարվում է ազատազրկման, իսկ նախկինում երեք անգամ ազատազրկման է դատապարտվել միջին ծանրության և ծանր հանցագործությունների համար, որպիսի պարագայում ամբաստանյալի նկարմամբ պետք է նշանակել պատրիժ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1 հոդվածի կիրառմամբ, համաչայն որի՝ հանցագործությունների առանձնապես վրանգավոր ռեցիդիվի համար նշանակված պատրիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի հարույկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատրիժ երեք քառորդից (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 170-171):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կիրառման առումով նշված օրենքը մյուս օրենքների, այդ թվում նաև ՀՀ քրեական օրենսգրքի նկարմամբ ունի առավել բարձր իրավաբանական ուժ, որովհետև կոնկրետ դեպքում սահմանում է արագացված դատաքննության դեպքում անչի նկարմամբ պատրիժ նշանակման արտոնյալ պայմանները՝ դրա առավելագույն պատժաչափի սահմանը: Վերաքննիչ դատարանն օրենքների իր մեկնաբանությանը հիմնվում է նաև իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջներով՝ համաչայն որի հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերի՝ տվյալ դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում գերեզմանված 67.1-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի հակասության դեպքում պետք է կիրառվի ֆիզիկական անչ՝ ամբաստանյալ Ա.Պողոսյանի համար նախընտրելի իրավական ակտ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածը (...):

Արագացված կարգով դատական քննության պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով կատարված հանցագործության համար ամբաստանյալ Ա.Պողոսյանի նկարմամբ նշանակման ենթակա առավելագույն պատրիժը չի կարող գերազանցել հինգ տարի չորս ամիս ժամկետով ազատազրկում պատրիժը (8 x 2 : 3= հինգ տարի չորս ամիս) (...):

(...) Թեև ՀՀ քրեական օրենսգրքի 67.1 հոդվածը գերեզմանված է ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում, և առանձնապես վրանգավոր ռեցիդիվի համար պատրիժ նշանակելու պարտադիր սկզբունքը ՀՀ քրեական օրենսգրքի հարույկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատրիժ երեք քառորդից ոչ պակաս լինելն է, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ ամբաստանյալ Ա.Պողոսյանի նկարմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1 հոդվածով պատրիժ սահմանելիս պետք է դեկավարվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի պահանջները:

րով՝ նկատի ունենալով, որ նշված օրենքով օրենսդիրը առավել բարենպաստ պատժաչափ է նախատեսում դատական քննության արագացված կարգ կիրառելու դեպքում: Ամբաստանյալ Ա.Պողոսյանի կողմից արագացված կարգով դատաքննություն կատարելու համաձայնություն տալու, մեղադրված արարքը ընդունելու դեպքում՝ օրենսդիրը պատժաչափի նշանակման հարցում առավել արտոնյալ պայմաններ է նախատեսել: Նման մեկնաբանություն անելով՝ Վերաքննիչ դատարանը ղեկավարվում է նաև անչի իրավունքների պաշտպանության մասին հիմնադրույթներով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 48-49):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակի պնդմամբ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտում:

9. Դատավարական իրավունքի խախտման կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ ամբաստանյալը վերաքննիչ բողոքով նպատակ է ունեցել վիճարկելու ոչ թե պատիժ նշանակելու՝ օրենքով սահմանված կանոնների կիրառման ճշտությունը, այլ խնդրել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակել՝ հաշվի առնելով իր առողջական խնդիրները: Հետևաբար, վերաքննիչ բողոքի բնույթն ու էությունը բոլորովին այլ է եղել, և Վերաքննիչ դատարանը պետք է քններ և լուծեր ոչ թե պատիժ նշանակելու կանոնների ճիշտ կամ սխալ կիրառության հարցը, այլ այն, թե առկա էին արդյոք բացառիկ հանգամանքներ, որոնք կարող էին էականորեն նվազեցնել հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը:

10. Նյութական իրավունքի խախտման առկայությունը հիմնավորելու նպատակով բողոքաբերը վերլուծության է ենթարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասը և ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածը՝ արդյունքում եզրահանգելով, որ վերոնշյալ նորմերի միջև որևէ հակասություն առկա չէ, ինչպես նշել է Վերաքննիչ դատարանը:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասը թույլ է տալիս արագացված դատաքննության արդյունքում նշանակել առավել խիստ պատժի երկու երրորդից խիստ պատժի այն դեպքում, երբ առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից, որի դեպքում նշանակվում է առավել մեղմ պատժի:

ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասի՝ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի կանոններով պատիժ նշանակելու դեպքում սույն հան-

ցագործության համար առավել մեղմ պատիժ հանդիսանում է 6 տարի ժամկետով ազատազրկումը: Արագացված դատաքննության կանոններով պատիժ նշանակելու դեպքում պատժի ժամկետը ստացվում է 5 տարի 4 ամիս, որն օրենքով նախատեսված նվազագույն չափից ավելի մեղմ է, հետևաբար պետք նշանակվի առավել մեղմ պատիժը՝ ազատազրկում 6 տարի ժամկետով: Բողոքարեքը միաժամանակ ընդգծել է, որ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոններն իմպերատիվ բնույթ ունեն, և օրենսդիրը դրանցից որևէ բացառություն չի նախատեսել՝ հաշվի առնելով ռեցիդիվային հանցավորության հանրային վտանգավորությունը, դրա դեմ պայքարի անհրաժեշտությունն ու կարևորությունը: Այս կապակցությամբ բողոքի հեղինակը փաստարկել է, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնին նախապատվություն տալու վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաև Վճռաբեկ դատարանը *Ս.Թադևոսյանի* գործով որոշման մեջ:

Ընդգծելով, որ թեև սույն և *Ս.Թադևոսյանի* գործերի փաստերը չեն նույնանում, սակայն էական հատկանիշներով մման են միմյանց: Այսպես՝ երկու դեպքում էլ առկա է իրավական խնդիր՝ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնների և մի դեպքում՝ չավարտված հանցագործությունների, մյուս դեպքում՝ արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների միջև, որի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել՝ նշելով, որ եթե առկա է հանցագործությունների ռեցիդիվ, ապա պատիժ նշանակելու ընդհանուր կանոնները կիրառելի չեն, և պետք է կիրառվեն հատուկ ռեցիդիվային հանցավորության համար նախատեսված պատիժ նշանակելու կանոնները:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 17-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 8-ի դատավճռին:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոններ սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի և արագացված դատաքննության արդյունքում պատիժ նշանակելու կանոններ սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի հարաբերակցության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13.Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք Վերաքննիչ դատարանի եզրակացությունն այն մասին, որ ամբաստանյալ Ա.Պողոսյանի նկատմամբ պետք է պատիժ նշանակել՝ ղեկավարվելով արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնները սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով այն դեպքում, երբ ամբաստանյալի արարքում առկա է առանձնապես վտանգավոր ռեցիդիվ:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված հանցագործությունների քանակը, բնույթը և ծանրությունը, այն հանգամանքները, որոնց հետևանքով նախկին պատիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար, ինչպես նաև նոր հանցագործության բնույթը, ծանրությունը և հետևանքները:

2. Հանցագործությունների ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի կեսից:

Հանցագործությունների վտանգավոր ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի երկու երրորդից:

Հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի երեք քառորդից»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Դատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է սովյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա առավել մեղմ պատիժը»:

Մեջբերված իրավադրույթների համեմատական վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի հանցագործությունների ռեցիդիվի, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դատական քննության արագացված կարգ կիրառելու պարագայում նախատեսում են պատիժ նշանակելու տարբեր կանոններ, որոնցից յուրաքանչյուրի կիրառումն անձի համար տարբեր իրավական հետևանքներ է առաջացնում:

Այսպես՝ ռեցիդիվի պարագայում, կախված դրա տեսակից, նախատեսվում է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի նվազագույն չափի պարտադիր խստացում (ռեցիդիվի դեպքում նշանակված պատիժը չի կարող պակաս լինել առավելագույն պատժի կեսից,

վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ 2/3-ից, առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ 3/4-ից), իսկ արագացված դատաքննության դեպքում՝ կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի պարտադիր մեղմացում (նշանակված պատիժը չի կարող գերազանցել առավել խիստ պատժի 2/3-ը): Այլ խոսքով, ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում առկա են միևնույն հարաբերությունը կարգավորող երկու հատուկ նորմեր, որոնք նախատեսում են պատիժ նշանակելու տարբեր ընթացակարգ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի միջև առկա է մրցակցություն, իսկ գործող օրենսդրական կարգավորումներից պարզ չէ, թե դրանցից որն է ենթակա կիրառման և ինչ կարգով: Այսինքն՝ նույն հարցի վերաբերյալ առկա են երկու իրարամերժ, հակասող կանոններ:

ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի միջև հակասության առկայության վերաբերյալ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասում առկա՝ «*սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված պատիժ*» և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում առկա՝ «*կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատիժ*» ձևակերպումները ենթադրում են, որ կատարված հանցագործության համար նախատեսված պատիժ հասկացությունը պետք է մեկնաբանել որպես քրեական օրենսգրքի **հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում որոշվող օրենքով սահմանված պատիժ**, իսկ խնդրո առարկա ձևակերպումների այնպիսի մեկնաբանումը, որի պայմաններում «կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատիժը» որոշվում է արդեն իսկ ռեցիդիվի կանոնների կիրառմամբ որոշված պատժաչափի սահմաններում, անթույլատրելի է:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումը հիմնված է *Գ.Մինասյանի* գործով որոշման մեջ ձևավորված այն դիրքորոշման վրա, որի համաձայն՝ «*(...)ակնհայտ է ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի կապն այն առումով, որ դատական քննության արագացված կարգը կանոնակարգող դատավարական իրավունքի նորմերը պարունակում են հղումներ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերին: Այսպես, դատական քննության արագացված կարգ կիրառելու պայմաններից մեկը, ինչպես արդեն նշվել է, անչիև այնպիսի հանցագործության մեղսագրումն է, որի համար օրենքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 (տասը) տարի ժամկետով ազատազրկումը, իսկ այս պայմանը բնականաբար որոշվելու է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան դրույթների հիման վրա, կամ արագացված դատական քննության արդյունքում երկու երրորդով կրճատվում է հենց ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատիժը (...)*» (տե՛ս Գ-ագիկ Հայկի

Մինասյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԿԳ/0029/01/13 որոշման 25-րդ կետերը):

15. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու վերաբերյալ մրցակցող նորմերի կիրառման կարգի և միմյանց հետ հարաբերակցության վերաբերյալ հատուկ (կոլիզիոն) կանոնները բացակայում են, ինչն իրավակիրառ պրակտիկայում դրանց կիրառման կարգի և հաջորդականության վերաբերյալ բազմաթիվ տարակարծությունների տեղիք է տալիս. մասնավորապես վիճելի է՝ կարո՞ղ են արդյոք վերոնշյալ նորմերը միաժամանակ կիրառվել, եթե այո, ապա ո՞րն ունի առավելություն և ո՞րն է ենթակա սկզբում կիրառման, եթե ոչ՝ ո՞ր նորմին պետք է նախապատվությունը տրվի:

Սույն որոշման 14-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում կիրառման կարգն ամրագրող համապատասխան կանոնի բացակայության պայմաններում վերոնշյալ նորմերի միջև առկա հակասությունը գործող օրենսդրության շրջանակներում ենթակա է լուծման ընդհանուր կոլիզիոն նորմերի կիրառմամբ:

16. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Միևնույն մարմնի նոր ընդունած իրավական ակտը չպետք է հակասի նախկինում ընդունված և ուժի մեջ մտած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին: Միևնույն մարմնի ընդունած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը, (...)»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածը գործում է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի փետրվարի 21-ին ընդունված ՀՀ ՀՕ-93-Ն օրենքի խմբագրությամբ, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածը՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված ՀՀ ՀՕ-143-Ն օրենքի խմբագրությամբ: Այսինքն՝ արագացված դատական քննության կարգ նախատեսող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9¹-րդ բաժինն ավելի վաղ է ուժի մեջ մտել, քան հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոններ նախատեսող 67.1-րդ հոդվածը:

Վերոշարադրյալ եզրահանգումը գնահատելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետք է գործի ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտը՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի փետրվարի 21-ին ընդուն-

ված ՀՀ ՀՕ-93-Ն օրենքով լրացված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածը:

17. Բացի այդ, սույն որոշման 16-րդ կետում շարադրված եզրահանգումը բխում է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կանոնից, որի համաձայն՝ «Հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում (...) ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը»:

Վերոնշյալ կողմից նորմի շրջանակներում գնահատելով հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արագացված դատաքննության պարագայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված պատիժ նշանակելու կարգը հանցանք կատարած անձանց համար ավելի նախընտրելի է ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով նախատեսված կարգի համեմատությամբ, քանի որ օրենսդիրն ամբաստանյալի կողմից արագացված դատաքննություն կատարելուն համաձայնություն տալու և մեղսագրված արարքն ընդունելու պարագայում առանց որևէ սահմանափակումների պատժաչափի նշանակման հարցում արտոնյալ պայմաններ է նախատեսել (արագացված դատաքննության էության ու նշանակության վերաբերյալ *mutatis mutandis* տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԳՌ-931 որոշումը):

Մինչդեռ անձի արարքում հանցագործությունների ռեցիդիվի առկայության դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի սանկցիայի շրջանակներում անձի նկատմամբ ավելի խիստ պատիժ նշանակելու կանոններ:

18. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների հստակ կիրառության վերաբերյալ իրավական կարգավորման բացակայությունը և իրավակիրառ պրակտիկայում առաջացող անորոշություններն ու տարակարծությունները հակասում են ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքի պահանջներին, որոնցից բխում է, որ անձի նկատմամբ պատժի նշանակման կարգը և չափը իրավական որոշակիության չափանիշներին բավարարող եղանակով պետք է սահմանված լինեն հստակ, մատչելի և կանխատեսելի օրենքով: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն սահմանել է. «(...) պետությունը ոչ միայն պետք է պահպանի և կիրառի իր կողմից ընդունված օրենքները, այլև պետք է երաշխավորի դրանց իրավական և գործնական կիրառության պայմանները: Այն պետք է ապահովի ոչ միայն օրենքի առկայությունը, այլև օրենքի գերակայության գաղափարին

համահունչ որակը՝ հստակությունը, մատչելիությունը և կանխատեսելիությունը (...)» (տե՛ս The Council of Europe and the Rule of Law-An Overview. CM Documents, CM (2008)170, էջեր 8-9):

Սույն հարցի կապակցությամբ նման դիրքորոշում է արտահայտել Վճռաբեկ դատարանը Վ.Ավերիսյանի գործով որոշման մեջ՝ արձանագրելով, որ«(...) անչին հանցագործություն (հանցագործություններ) կատարելու մեջ մեղավոր ճանաչելու և այդ հանցագործության (հանցագործությունների) համար պատիժ նշանակելու միակ հիմքն է կատարման պահին նրա արարքն օրենքով հանցագործություն համարվելը և այդ հանցագործության համար պատիժ նախատեսված լինելը: Ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի այլ կերպ, քան օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, կարգով և չափով: Անչը չի կարող ենթարկվել պատասխանատվության այնպիսի արարքի համար, որն իրավական որոշակիության չափանիշին բավարարող եղանակով նախատեսված չէ գործող օրենքով (...):

(...) «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում արացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն փարբ: Այն բացարձակ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հերևարար նշված սկզբունքից որևէ շեղում անթույլատրելի է» (տե՛ս Վարուժան Գազիկի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԳ-3/0013/01/11 որոշման 13-րդ կետը):

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի հարաբերակցության իրավական կարգավորման անորոշությունը և դրանց միջև առկա հակասությունը պետք է լուծվի հօգուտ անձի նկատմամբ պատիժ նշանակելու բարենպաստ պայմաններ նախատեսող նորմի, ինչը բխում է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով սահմանված մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար դրույթներից:

19. Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկներին, որ Վճռաբեկ դատարանը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնին նախապատվություն տալու վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել Ս.Թադևոսյանի վերաբերյալ թիվ ԿԳ-3/0006/01/12 գործով կայացված որոշմամբ (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկայակոչված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) [ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 4¹-րդ մասի] դրույթները սահմանում են (...), որ հանցագործությունների ռեցիդիվի առկայությունը բացառում է չափարկված հանցագործության համար պատիժ նշանակելու ընդհանուր կանոնների կիրառմամբ պատիժ նշանակելը: Հանցագործությունների ռեցիդիվի առկայության դեպքում պատիժ

տրիժը նշանակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 67¹-րդ հոդվածի կանոններով՝ անկախ նրանից, թե հանցագործությունը, որի կատարման մեջ անչը մեղավոր է ճանաչվել, ավարտված է, թե ոչ: Այլ խոսքով՝ չավարտված հանցագործությունների համար պատիժ նշանակելու կանոնները չեն կիրառվում, եթե առկա է հանցագործությունների ռեցիդիվի որևէ տեսակ» (տե՛ս Սահակ Ռաֆիկի Թադևոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԿԴՅ3/0006/01/12 որոշման 14-րդ կետը):

Սույն որոշման վերլուծությունը վկայում է, որ *Ս.Թադևոսյանի* գործով արտահայտված իրավական դիրքորոշումը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 4¹-րդ մասով սահմանված՝ հանցագործությունների ռեցիդիվի առկայության դեպքում չավարտված հանցագործությունների համար պատիժ նշանակելու կանոնները չկիրառելու վերաբերյալ օրենսդրական արգելքից: Այսինքն՝ օրենքը հստակ կարգավորել է վերոնշյալ երկու հոդվածների հարաբերակցության հարցը և նախապատվությունը տվել հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով սահմանված կանոններին, ինչն էլ Վճռաբեկ դատարանն արձանագրել է իր որոշման մեջ: Մինչդեռ, հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կարգ սահմանող նորմերում նման կարգավորում առկա չէ:

Բողոքաբերի այն փաստարկների կապակցությամբ, որ սույն երկու գործերով առկա է միևնույն իրավական խնդիրը՝ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնների և մի դեպքում՝ չավարտված հանցագործությունների, մյուս դեպքում՝ արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների միջև, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև իրավական խնդիրը նույնն է այն առումով, որ երկու դեպքում էլ պատիժ նշանակելու վերաբերյալ առկա են երկու հատուկ նորմեր (մեկը հանցավորի համար բարենպաստ, իսկ մյուսը՝ ոչ), այնուամենայնիվ տարբերությունն էական է և սկզբունքային, քանի որ առաջին դեպքում օրենսդիրը հստակ լուծել է, թե այդ նորմերից որն է ենթակա կիրառման, իսկ որը՝ ոչ:

20. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի կողմից առաջարկված կարգավորումը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը) խնդրահարույց է այն առումով, որ այն, ըստ էության, անալոգիա կիրառելու առաջարկություն է: Մինչդեռ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտավորություն կամ պատասխանատվություն, (...)»:

Անալոգիայի կիրառման արգելքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է իր մի շարք նախադեպային որոշումներում՝ սահմանելով, որ քրեական օրենքը չի կարող տարածական մեկնաբանվել և կիրառվել անալոգիայով (օրինականության սկզբունքի և քրեական օրենքն անալոգիայով կիրառելու արգելքի

մասին *mutatis mutandis* տե՛ս Վարուժան Գագիկի Ավետիսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԳ-3/0013/01/11 և Երվանդ Ռաֆիկի Մելքոնյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵՇԳ-0090/01/10 որոշումները):

ՀՀ քրեական օրենսգիրքը 65-րդ և 67.1-րդ հոդվածների կիրառման առումով անձի վիճակը վատթարացնող կարգավորում է սահմանել, հետևաբար այդ պատճառով ևս այն չի կարող տարածվել 67.1-րդ հոդվածի և 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի վրա, ինչն համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված այն դիրքորոշմանը, ըստ որի՝ քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի տարածական մեկնաբանության ենթարկվի, այսինքն՝ կիրառվի անալոգիայով (տե՛ս *Kokkinakis v. Greece* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1993 թվականի մայիսի 25-ի վճիռը, զանգատ թիվ 14307/88, կետ 52):

21. Վերոգրյալից բացի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների համատեղ կիրառումը՝ պայմանավորված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում առկա կարգավորմամբ, ըստ որի՝ «(...) եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա [դատարանը նշանակում է] առավել մեղմ պատիժը», գրեթե բոլոր դեպքերում հանգեցնում է բացարձակ որոշակի սանկցիայի, ինչը հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի, 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների պահնաջներին և դրանց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին (տես, Վճռաբեկ դատարանի թիվ ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ՎԲ-145/07, ՎԲ-63/07, ՎԲ-142/07, ՎԲ-55/07, ՎԲ-25/08, ԵՇԳ-0023/01/08, ԵԿԳ-0146/01/08, ԵԱԶԳ-0078/01/09, ԵԱԶԳ-0164/01/09, ԵԿԳ-0042/01/11, ԼԳ-0287/01/11, ՍԳ-0109/01/12, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումները): Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների համատեղ կիրառման դեպքում վերջնական պատիժը միշտ առավել մեղմից փոքր է ստացվում, և դատարանը կարող է նշանակել միայն առավել մեղմ պատիժը:

Այլ խոսքով՝ հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների համատեղ կիրառումը բացառում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների կիրառման հնարավորությունը, և դատարանը գրկվում է կոնկրետ դեպքում կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորությունը, հանցավորի անձը, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները գնահատելու և անձի նկատմամբ արդարացի պատիժ նշանակելու հնարավորությունից: Բացի այդ, բացառվում է վերադաս դատական ատյանի կողմից

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքի կիրառման հնարավորությունը, որի համաձայն՝ դատական ակտը բեկանվում կամ փոփոխվում է, եթե նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը կամ ամբաստանյալի անձին:

Հետևաբար, գործի քննության արագացված կարգի կիրառման պայմաններում հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների միաժամանակյա կիրառությունն անթույլատրելի է:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ա.Պողոսյանը դատվածություն ունի նախկինում երեք անգամ դիտավորությամբ կատարված միջին ծանրության և ծանր հանցագործությունների համար և սույն գործով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով դատապարտվել է ազատազրկման (սույն հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ազատազրկում՝ 4-8 տարի ժամկետով): Այսինքն՝ նրա արարքում առկա են առանձնապես վտանգավոր ռեցիդիվի հատկանիշներ (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 148-149):

Առաջին ատյանի դատարանն արագացված դատաքննության պայմաններում Ա.Պողոսյանի նկատմամբ պատիժ է նշանակել 6 տարի ժամկետով ազատազրկում՝ ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը պատժի մասով փոփոխել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը և ղեկավարվելով արագացված դատաքննության պայմաններում պատիժ նշանակելու կանոններով՝ Ա.Պողոսյանի նկատմամբ պատիժ է նշանակել հինգ տարի չորս ամիս ժամկետով ազատազրկում ($8 \times 2 : 3 =$ հինգ տարի չորս ամիս) (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

23. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-21-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված պատիժ նշանակելու հատուկ կանոնների միջև առկա է հակասություն, որը ենթակա է լուծման հօգուտ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու իրավանորմների միջև որևէ հակասություն առկա չէ և դրանք կարող են միաժամանակ կիրառվել, անհիմն են (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

24. Սույն որոշման 14-23-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր է Վերաքննիչ դատարանի եզրակացությունն այն մասին, որ ամբաստանյալ Ա.Պողոսյանը

յանի նկատմամբ պետք է պատիժ նշանակել՝ ղեկավարվելով արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնները սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով այն դեպքում, երբ ամբաստանյալի արարքում առկա է առանձնապես վտանգավոր ռեցիդիվ: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս նյութական և դատավարական իրավունքի խախտում թույլ չի տվել, որը կարող է հիմք հանդիսանալ վճռաբեկ բողոքը բավարարելու համար: Այս առումով Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին:

25. Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկներին, որ Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք նույնպես անհիմն են (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Այսպես՝ ամբաստանյալ Ա.Պողոսյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել իր նկատմամբ նշանակված պատժի կապակցությամբ՝ նշելով, որ այն չափազանց ծանր է, և խնդրել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակել: Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների շրջանակներում վերանայելով ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժի արդարության հարցերը, եզրահանգել է, որ Ա.Պողոսյանի նկատմամբ պատժաչափը սխալ է որոշվել. օրենքը սխալ մեկնաբանելով՝ դատարանն անձի վիճակը վատթարացրել է: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայել է ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը և իրավացիորեն եզրահանգել, որ Առաջին ատյանի դատարանը պատիժ նշանակելիս սխալ է կիրառել օրենքը:

26. Հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ չի տվել դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է հիմք հանդիսանալ վճռաբեկ բողոքը բավարարելու համար: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, լիովին համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին, ուստի նույն օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Ալեք Գագիկի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հունվարի 17-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

ԳԱՏԱՎՈՐ ՀԱՍՏՏՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

Ծանոթանալով Ալեք Գագիկի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հունվարի 17-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքին, գործի նյութերին և սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2014 թվականի մայիսի 31-ի որոշմանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարանի Որոշում)՝ սույն հատուկ կարծիքով հայտնում եմ իմ անհամաձայնությունը հիշյալ որոշման ինչպես եզրափակիչ մասի, այնպես էլ պատճառաբանական մասում առկա որոշ եզրահանգումների հետ:

Վճռաբեկ դատարանի Որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը հիմնված է ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ հանցագործությունների ռեցիդիվի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ դատական քննության արագացված կարգ կիրառելու դեպքում պատիժ նշանակելու կանոնների միջև հակասության, դրանց կիրառման կարգի հստակ օրենսդրական կանոնակարգման բացակայության, ինչպես նաև դրանց համատեղ կիրառելիության անթույլատրելիության մասին եզրահանգումների վրա: Եվ ըստ այդմ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված՝ համապատասխան կոլիզիոն նորմերի վկայակոչմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այս կանոնների միջև հակասությունը պետք է լուծվի հօգուտ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի՝ որպես առավել վաղ ընդունված և անձի համար առավել բարենպաստ իրավական նորմի:

Սակայն, սույն հատուկ կարծիքով հայտնում եմ իմ անհամաձայնությունը պատիժ նշանակելու վերոհիշյալ կանոնների միջև հակասության և դրանց համատեղ կիրառելիության կարգի վերաբերյալ օրենսդրական կարգավորման բացակայության մասին եզրահանգումներին, ինչը հիմնավորելու համար ցանկանում եմ ներկայացնել հետևյալ փաստարկները:

Ցանկացած քրեաիրավական նորմ պետք է դիտարկել քրեական իրավունքի ամբողջական համակարգում՝ որպես դրա բաղկացուցիչ մաս: Անգամ կոնկրետ հանցակազմի հատկանիշները ճիշտ սահմանելու և ըմբռնելու համար անհրաժեշտ է լինում վերլուծել ոչ միայն ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան նորմը, այլև բացահայատել դրա կապը ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի նորմերի հետ: Օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի նորմերում (դիսպոզիցիաներում), որպես կանոն, ոչինչ չի ասվում հանցագործության սուբյեկտի, սուբյեկտիվ կողմի, հանցափորձի, հանցագործության նախապատրաստության մասին և այլն: Դիսպոզիցիայում բացակայող այս հատկանիշները, սակայն, հստակ սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասում և պարտադիր կիրառելիություն ունեն:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Հանցագործությունների ռեցիդիվի համար նշանակված պարիժը չի կարող*

պակաս լինել սույն օրենսգրքի Հարուկ մասի համապարասխան հողվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պարժի կեսից:

Հանցագործությունների վրանգավոր ռեցիդիվի համար նշանակված պարժի չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հարուկ մասի համապարասխան հողվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պարժի երկու երրորդից:

Հանցագործությունների առանձնապես վրանգավոր ռեցիդիվի համար նշանակված պարժի չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հարուկ մասի համապարասխան հողվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պարժի երեք քառորդից»:

Այս նորմի բովանդակությունից ակնհայտ է դրա սերտ կապը ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի նորմերի հետ: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հողվածի 2-րդ մասում տեղ գտած կանոնները կիրառվում են հանցագործությունների ռեցիդիվի դեպքում Հատուկ մասի քրեաիրավական նորմի պարտադիր տարրերից մեկը՝ սանկցիանորոշելու համար: Ընդհանուր մասում ամրագրված այս կանոններն ընդհանուր բնույթի օրենսդրական պահանջներ են և ռեցիդիվի առկայության դեպքում տարածվում են դիտավորյալ հանցագործության համար քրեական պատասխանատվություն նախատեսող՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան բոլոր նորմերի վրա:

Վկայակոչված հողվածի բովանդակությունից հետևում է, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում օրենքով նախատեսված առավելագույն պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հողվածի սանկցիայի վերին սահմանն է, իսկ օրենքով նախատեսված առավել մեղմ պատիժը որոշվում է առավելագույն պատժի, կախված հանցագործությունների ռեցիդիվի տեսակից, մեկ երկրորդի, երկու երրորդի կամ երեք քառորդի հաշվարկմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հողվածի 6-րդ մասի համաձայն. «Դատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պարիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պարժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պարժի երկու երրորդը փոքր է րվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պարժից՝ ապա առավել մեղմ պարիժը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հողվածի 6-րդ մասի օրենսդրական ձևակերպումից երևում է, որ դրանում ամրագրված կանոնի կիրառման հիմք է ծառայում քրեական օրենքով նախատեսված պատիժը: Մասնավորապես, դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում պատիժ նշանակելու կանոնները կիրառելիս որպես ուղեցույց պետք է ընդունել համապատասխան հանցագործության համար օրենքով նախատեսված պատժի առավելագույն և նվազագույն սահմանները: Ընդ որում, օրենքով նախատեսված պատիժ ասելով՝ պետք է հասկանալ ոչ միայն ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հողվածի սանկցիայով նախատեսված, այլև

այն պատիժը, որը ստացվում է Ընդհանուր մասով նախատեսված՝ պատիժ նշանակելու պարտադիր կանոնների կիրառման արդյունքում: Վերոհիշյալ դիտարկումը, ըստ իս, հիմնավորվում է նաև նրանով, որ ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասում առկա *«սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված պատիժ»* արտահայտությանը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում օրենսդիրը տվել է *«կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատիժ»* ձևակերպումը: Հետևաբար ընդունելի չէ նաև Վճռաբեկ դատարանի Որոշման 14-րդ կետում վերոհիշյալ ձևակերպումների վկայակոչմամբ արված այն եզրահանգումը, որ. *«(...) կատարված հանցագործության համար նախատեսված պատիժ հասկացությունը պետք է մեկնաբանել որպես քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում որոշվող օրենքով սահմանված պատիժ»*: Առկա ձևակերպումները հստակ վկայում են, որ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնները կիրառվում են ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի նկատմամբ, իսկ դատական քննության արագացված կարգ կիրառելու դեպքում համապատասխան կանոնները կիրառվում են **օրենքով նախատեսված պատժի** նկատմամբ: Ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանի Որոշման մեջ վկայակոչված՝ Վճռաբեկ դատարանի՝ Գ.Մինասյանի վերաբերյալ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԿԳ/0029/01/13 որոշման 25-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշմանն այն մասին, որ դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում երկու երրորդով կրճատվելու է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատիժը, ապա համապատասխան եզրահանգումն արվել է կոնկրետ գործի փաստական հանգամանքների շրջանակում, և դրանով պայմանավորված՝ քննարկման առարկա չի դարձվել և հատուկ չի ընդգծվել, որ առանձին դեպքերում հանցագործության համար նախատեսված պատիժը որոշելու համար անհրաժեշտ է լինում կիրառել Ընդհանուր մասի համապատասխան դրույթները (ինչպես, օրինակ, արվում է հանցագործության նախապատրաստության, հանցափորձի դեպքում պատիժ նշանակելիս): Բացի այդ, Գ.Մինասյանի վերաբերյալ որոշման մեջ համապատասխան իրավական դիրքորոշումն արտահայտվել է ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերի միջև կապի առկայությունը և հակասության բացակայությունը հիմնավորելու նպատակով:

Գտնում են, որ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կանոնների միջև հակասության մասին հնարավոր կլինեի խոսել այն պարագայում, եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում բացակայեր հստակ կանոնն առ այն, որ **եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա պետք է նշանակվի առավել մեղմ պատիժը**:

Նման օրենսդրական արգելքի նախատեսումը կոչված է բացառելու դատական քննության արագացված կարգ կիրառելու արդյունքում օրենքով նախատեսված առավել մեղմ պատժից ավելի մեղմ պատժի նշանակումը: Վերը հիշատակված օրենսդրական արգելքի առկայությունը վկայում է դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում պատիժ նշանակելու կանոնների վերաբերյալ օրենսդրի հստակ մոտեցման առկայության մասին: Հանցագործությունների ռեցիդիվի և դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում պատիժ նշանակելու օրենսդրական կարգավորման առումով առկա են իրավական որոշակիության չափանիշներին բավարարող հստակ, մատչելի և կանխատեսելի կանոններ: Հանցագործությունների ռեցիդիվի առկայության պարագայում գործը դատական քննության արագացված կարգով քննելու արդյունքում պատիժ նշանակելիս ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասի, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնների կիրառման հաջորդականությունը բխում է գործող օրենսդրական կարգավորումից: Դա համաչափ օրենսդրական լուծում է, որը հնարավորություն է տալիս հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս հաշվի առնել արարքի հանրային վտանգավորության բարձր աստիճանը: Մյուս կողմից՝ չի անտեսվում նաև դատական քննության արագացված կարգի ինստիտուտի դերն ու նշանակությունը: Մասնավորապես, կոնկրետ դեպքում պետության հետ այս գործարքը կնքած անձի համար բարենպաստ արդյունքը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում հնարավոր ամենամեղմ պատժի նշանակումն է: Հետևաբար, անհամաձայնության տեղիք է տալիս Վճռաբեկ դատարանի որոշման 14-րդ կետում արձանագրված այն հետևությունը, որ «ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի միջև առկա է մրցակցություն, իսկ գործող օրենսդրական կարգավորումներից պարզ չէ, թե դրանցից որն է ենթակա կիրառման և ինչ կարգով: Այսինքն՝ նույն հարցի վերաբերյալ առկա են երկու իրարամերժ, հակասող կանոններ»: Նշված կանոնների միջև մրցակցության առկայության, դրանց կիրառման հաջորդականության հստակ օրենսդրական կարգավորման բացակայության և ըստ այդմ հատուկ կոլիզիոն նորմերի ընդունման անհրաժեշտության մասին հետևություններ առկա են նաև Վճռաբեկ դատարանի Որոշման 15-16-րդ, 18-19-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումներում, որոնց հետ նույնպես չեն կարող համաձայնվել:

Նույն կերպ, անհամաձայնության տեղիք է տալիս նաև Վճռաբեկ դատարանի Որոշման 18-րդ կետում արտահայտված այն դիրքորոշումը, որ. «հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների հարակ կիրառության վերաբերյալ իրավական կարգավորման բացակայությունը և իրավակիրառ պրակտիկայում առաջացող անորոշություններնու փարակարծությունները հակասում են ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքի պահանջներին, որոնցից բխում է, որ անչի նկատմամբ պատժի նշանակման կար-

գը և չափը իրավական որոշակիության չափանիշներին քաղաքարոշ եղանակով պետք է սահմանված լինեն հարակ, մարչելի և կանխարեսելի օրենքով (...): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի հարաբերակցության իրավական կարգավորման անորոշությունը և դրանց միջև առկա հակասությունը պետք է լուծվի հոգուր անչի նկարմամբ պարիժ նշանակելու քարենպաստ պայմաններ նախարեսող նորմի, ինչը քիտում է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական սկզբերով սահմանված մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար դրույթներին»:

Այսպիսով, գործը դատական քննության արագացված կարգով քննելիս պատիժ նշանակելու կանոնները կիրառելու համար նախ և առաջ պետք է որոշել օրենքով նախատեսված պատիժը: Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Պողոսյանին մեղսագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով (սանկցիան նախատեսում է ազատազրկում՝ չորսից ութ տարի ժամկետով) նախատեսված հանցավոր արարք և առկա է առանձնապես վտանգավոր ռեցիդիվ: Հետևաբար, Ա.Պողոսյանին մեղսագրվող արարքի համար նախատեսված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված համապատասխան կանոնի կիրառմամբ (նշանակվող պատիժը չի կարող պակաս լինել հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի երեք քառորդից) վեցից ութ տարի ժամկետով ազատազրկումն է: Այսպիսով, կոնկրետ դեպքում օրենքով նախատեսված պատիժը, որի շրջանակներում դատարանը պետք է որոշեր Ա.Պողոսյանի նկատմամբ նշանակվելիք կոնկրետ պատժաչափը, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված և հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու իմպերատիվ կանոնների կիրառման արդյունքում ստացված 6-8 (վեցից ութ) տարի ժամկետով ազատազրկումն է, որի նկատմամբ և պետք է կիրառվեն արագացված դատական քննության կարգի համար նախատեսված պատժի նշանակման կանոնները: Իսկ այդ կանոնների համաձայն՝ մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանը նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը (տվյալ դեպքում՝ հինգ տարի չորս ամիս ժամկետով ազատազրկումը) այն պարտադիր և հստակ բացառությամբ, որ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա պետք է նշանակվի առավել մեղմ պատիժը, որը տվյալ դեպքում 6 (վեց) տարի ժամկետով ազատազրկումն է:

Համաձայն չեմ Վճռաբեկ դատարանի Որոշման 21-րդ կետում տեղ գտած այն փաստարկին, որ ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների համատեղ կիրառումը, պայմանավորված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում առկա կարգավորմամբ, որը հանգեցնում է բացարձակ որոշակի սանկցիայի, հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված արդարության

և պատասխանատվության անհատականացման սկզբունքի, 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների պահանջներին և դրանց վերաբերյալ Վճարելի դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին: Այդ առումով հարկ է նշել, որ բացարձակ որոշակի սանկցիայի խնդիր առաջանում է արագացված դատական քննության կարգ կիրառելու բազմաթիվ այլ դեպքերում, երբ, օրինակ, անձն արագացված դատական քննության կարգի կիրառմամբ մեղավոր է ճանաչվում ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 3-րդ մասով, 132-րդ հոդվածի 1-3-րդ մասերով, 275-րդ հոդվածի 2.2-րդ մասով, 299-րդ հոդվածով, 300-րդ և այլն: Նման իրավիճակ պրակտիկայում հանդիպում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման արդյունքում, երբ, օրինակ, անձը մեղավոր է ճանաչվում հասարակ սպանության, ծանրացնող հանգամանքներում դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, ավազակության, ինչպես նաև կողոպուտի, գողության, խարդախության, յուրացման կամ վատնման որոշ որակյալ հանցակազմների նախապատրաստության մեջ (ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդված և 104-րդ հոդվածի 1-ին մաս, 112-րդ հոդվածի 2-րդ մաս, 175-րդ հոդված, 176-178-րդ հոդվածների 3-րդ մասեր): Նման դեպքերում դարձյալ նշանակվում է համապատասխան սանկցիայով նախատեսված առավել մեղմ պատիժը կամ դրանից ավելի մեղմ կոնկրետ պատժաչափ: Կարծում են, որ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված՝ պատիժ նշանակելու սկզբունքների և դրանց վերաբերյալ Վճարելի դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի խախտում տեղի չի ունենում, քանի որ անձի համար ստեղծվում է առավել բարենպաստ վիճակ և նշանակվում է հնարավոր առավել մեղմ պատիժը, ուստի վկայակոչված փաստարկը չի կարող դիտարկվել որպես ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կանոնների համատեղ կիրառելիության անբույլատրելիության հիմնավորում:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը պատիժ նշանակելու այս կանոնների համատեղ կիրառմամբ Ա.Պողոսյանի նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, ամբաստանյալի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը, իրավական դիրքորոշում արտահայտելով այս կանոնների միջև հակասության առկայության մասին, համապատասխան կոլիզիոն կանոնների վկայակոչմամբ գտել է, որ պետք է կիրառվեն միայն դատական քննության արագացված կարգ կիրառելու դեպքում պատիժ նշանակելու կանոնները: Արդյունքում Վերաքննիչ դատարանը բեկանել է առաջին ատյանի դատարանի դատական ակտը և Ա.Պողոսյանի նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 4 (չորս) ամիս ժամկետով:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 361¹-րդ, 415-րդ, 419-րդ և 422-րդ հոդվածներով՝ գտնում են, որ Ալեք Գազիկի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատա-

րանի 2014 թվականի հունվարի 17-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը պետք է բավարարվեր, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հունվարի 17-ի որոշումը պետք է բեկանվեր և օրինական ուժ տրվեր Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 8-ի դատավճռին:

ԴԱՏԱՎՈՐ՝

ստորագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ԴԱՏԱՎՈՐ Ա.ՊՈԳՈՍՅԱՆ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

Ամբաստանյալ Ալեք Գագիկի Պողոսյանի գործով ՀՀ վճարելի դատարանի քրեական պալատի (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) 2014 թվականի մայիսի 31-ի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի հուլիսի 28-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Տավուշի մարզի քննչական բաժնի Դիլիջանի քննչական բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 36102413 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2013 թվականի օգոստոսի 2-ի որոշմամբ Ալեք Պողոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

2013 թվականի սեպտեմբերի 25-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 8-ի դատավճռով՝ արագացված դատական քննության կարգի կիրառմամբ, Ա.Պողոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 6 տարի ժամկետով:

3. Ամբաստանյալի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հունվարի 17-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 8-ի դատավճռի պատճի մասով փոփոխելու վերաբերյալ: Ամբաստանյալ Ա.Պողոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 տարի 4 ամիս ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 17-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը, որը Վճռաբեկ դատարանի 2014 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ վարույթ է ընդունվել:

Վճարելի դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի որոշմամբ վճարելի բողոքը մերժվել է, Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 17-ի որոշումը բողոքով է օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճարելի դատարանի պատճառաբանությունները:

2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Պողոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2013 թվականի հուլիսի 18-ին՝ ժամը 15-ի սահմաններում, ակոհուլային խմիչքներ օգտագործած վիճակում, գողություն կատարելու դիտավորությամբ բաց պատուհանից ապօրինի մուտք է գործել Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 139 հասցեում գտնվող նույն քաղաքի բնակչուհի Ջուլիետա Սաղաթելյանին պատկանող առանձնատուն և այնտեղից գաղտնի հափշտակել է մանկական մեկ ոսկյա թևոց և մեկ գույգ կոշիկ՝ պատճառելով զգալի չափի՝ 9.200 ՀՀ դրամի նյութական վնաս (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 100-101):

6. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Միաժամանակ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալի արարքում առկա է հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվ, այսինքն՝ սույն գործով դիտավորյալ հանցագործության համար դատապարտվում է ազատազրկման, իսկ նախկինում երեք անգամ ազատազրկման է դատապարտվել միջին ծանրության և ծանր հանցագործությունների համար, որպիսի պարագայում ամբաստանյալի նկատմամբ պետք է նշանակել պատիժ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1 հոդվածի կիրառմամբ, համաձայն որի՝ հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի երեք քառորդից (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 170-171):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կիրառման առումով նշված օրենքը մյուս օրենքների, այդ թվում նաև ՀՀ քրեական օրենսգրքի նկատմամբ ունի առավել բարձր իրավաբանական ուժ, որովհետև կոնկրետ դեպքում սահմանում է արագացված դատաքննության դեպքում անձի նկատմամբ պատժի նշանակման արտոնյալ պայմանները՝ դրա առավելագույն պատժաչափի սահմանը: Վերաքննիչ դատարանն օրենքների իր մեկնաբանությանը հիմնվում է նաև իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջներով համաձայն որի՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերի՝ տվյալ դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում զետեղված 67.1-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի հակասության դեպքում պետք է կիրառվի ֆիզիկական անձ՝ ամբաստանյալ Ա.Պողոսյանի համար նախընտրելի իրավական ակտ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածը (...):

Արագացված կարգով դատական քննության պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով կատարած հանցագործության համար ամբաստանյալ Ա.Պողոսյանի նկատմամբ նշանակման ենթակա առավելագույն պատիժը չի կարող գերազանցել հինգ տարի չորս ամիս ժամկետով ազատազրկում պատիժը (8 x 2 : 3=հինգ տարի չորս ամիս) (...):

(...) Թեև ՀՀ քրեական օրենսգրքի 67.1 հոդվածը գետեղված է ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում, և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի համար պատիժ նշանակելու պարտադիր սկզբունքը ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատիժ երեք քառորդից ոչ պակաս լինելն է, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Պողոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1 հոդվածով պատիժ սահմանելիս պետք է ղեկավարվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի պահանջներով՝ նկատի ունենալով, որ նշված օրենքով օրենսդիրը առավել բարենպաստ պատժաչափ է նախատեսում դատական քննության արագացված կարգ կիրառելու դեպքում: Ամբաստանյալ Ա.Պողոսյանի կողմից արագացված կարգով դատաքննություն կատարելու համաձայնություն տալու, մեղսագրված արարքը ընդունելու դեպքում օրենսդիրը պատժաչափի նշանակման հարցում առավել արտոնյալ պայմաններ է նախատեսել: Նման մեկնաբանություն անելով՝ Վերաքննիչ դատարանը ղեկավարվում է նաև անձի իրավունքների պաշտպանության մասին հիմնադրույթներով (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 48-49):

3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ:

Դատավարական իրավունքի խախտման կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը: Ամբաստանյալը վերաքննիչ բողոքով նպատակ է ունեցել վիճարկելու ոչ թե պատիժ նշանակելու՝ օրենքով սահմանված կանոնների կիրառման ճշտությունը, այլ խնդրել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակել՝ հաշվի առնելով իր առողջական խնդիրները: Հետևաբար, վերաքննիչ բողոքի բնույթն ու էությունը բոլորովին այլ է եղել, և Վերաքննիչ դատարանը պետք է քններ և լուծեր ոչ թե պատիժ նշանակելու կանոնների ճիշտ կամ սխալ կիրառության հարցը, այլ այն, թե առկա էին արդյոք բացառիկ հանգամանքներ, որոնք կարող էին էականորեն նվազեցնել հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը:

9. Նյութական իրավունքի խախտման առկայությունը հիմնավորելու նպատակով բողոքաբերը վերլուծության է ենթարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասը և ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածը՝ արդյունքում եզրահանգելով, որ վերոնշյալ նորմերի միջև որևէ հակասություն առկա չէ:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասը թույլ է տալիս արագացված դատաքննության արդյունքում նշանակել առավել խիստ պատժի երկու երրորդից խիստ պատիժ այն դեպքում, երբ առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից:

ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասի՝ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի կանոններով պատիժ նշանակելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցագործության համար առավել մեղմ պատիժ է հանդիսանում 6 տարի ժամկետով ազատազրկումը: Արագացված դատաքննության կանոններով պատիժ նշանակելու դեպքում պատժի ժամկետը ստացվում է 5 տարի 4 ամիս, որն օրենքով նախատեսված նվազագույն չափից ավելի մեղմ է, հետևաբար պետք նշանակվի առավել մեղմ պատիժը՝ ազատազրկում 6 տարի ժամկետով: Բողոքաբերը միաժամանակ ընդգծել է, որ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոններն իմպերատիվ բնույթ ունեն, և օրենսդիրը դրանցից որևէ բացառություն չի նախատեսել՝ հաշվի առնելով ռեցիդիվային հանցավորության հանրային վտանգավորությունը, դրա դեմ պայքարի անհրաժեշտությունն ու կարևորությունը:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 17-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 8-ի դատավճիռին:

4. Գատավոր Ա.Պողոսյանի իրավական դիրքորոշումը.

11. Ուսումնասիրելով Վերաքննիչ դատարանի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը, ծանոթանալով քրեական գործի նյութերին և վճռաբեկ բողոքը մերժելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի փաստարկներին և հիմնավորումներին՝ համաձայն չեմ Ա.Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի որոշման պատճառաբանական մասի առանձին դրույթների և եզրափակիչ մասի հետ ներքոնշարադրյալ պատճառաբանություններով:

12. Վճռաբեկ դատարանը հիշատակված որոշման մեջ արձանագրել է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Վճռաբեկ դատարանը գտել է, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոններ սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի և արագացված դատաքննության արդյունքում պատիժ նշանակելու կանոններ սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի հարաբերակցության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր՞ է արդյոք Վերաքննիչ դատարանի եզրակացությունն այն մասին, որ ամբաստանյալ Ա.Պողոսյանի նկատմամբ պետք է պատիժ նշանակել՝ ղեկավարվելով արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնները սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով այն դեպքում, երբ ամբաստանյալի արարքում առկա է առանձնապես վտանգավոր ռեցիդիվ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք նախատեպային որոշումների լույսի ներքո համադրված վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածները, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ՝

ա) ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի միջև առկա է մրցակցություն, իսկ գործող օրենսդրական կարգավորումներից պարզ չէ, թե դրանցից որն է ենթակա կիրառման և ինչ կարգով: Այսինքն՝ նույն հարցի վերաբերյալ առկա են երկու իրարամերժ, հակասող կանոններ:

Հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու վերաբերյալ մրցակցող նորմերի կիրառման կարգի և միմյանց հետ հարաբերակցության վերաբերյալ հատուկ (կոլիզիոն) կանոնները բացակայում են, ինչն իրավակիրառ պրակտիկայում դրանց կիրառման կարգի և հաջորդականության վերաբերյալ բազմաթիվ տարակարծությունների տեղիք է տալիս: ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում կիրառման կարգն ամրագրող համապատասխան կանոնի բացակայության պայմաններում վերոնշյալ նորմերի միջև առկա հակասությունը գործող օրենսդրության շրջանակներում ենթակա է լուծման ընդհանուր կոլիզիոն նորմերի կիրառմամբ:

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածը գործում է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի փետրվարի 21-ին ընդունված ՀՀ ՀՕ-93-Ն օրենքի խմբագրությամբ, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածը՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված ՀՀ ՀՕ-143-Ն օրենքի խմբագրությամբ: Այսինքն՝ արագացված դատական քննության կարգ նախատեսող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9¹-րդ բաժինն ավելի վաղ է ուժի մեջ մտել, քան հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոններ նախատեսող 67.1-րդ հոդվածը: Հետևաբար, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համատեքստում պետք է գործի ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտը՝ «ՀՀ քրեական դատա-

վարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի փետրվարի 21-ին ընդունված ՀՀ ՀՕ-93-Ն օրենքով լրացված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածը:

Բացի այդ, արագացված դատաքննության պարագայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված պատիժ նշանակելու կարգը հանցանք կատարած անձանց համար ավելի նախընտրելի է ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով նախատեսված կարգի համեմատությամբ, քանի որ օրենսդիրն ամբաստանյալի կողմից արագացված դատաքննություն կատարելուն համաձայնություն տալու և մեղսագրված արարքն ընդունելու պարագայում առանց որևէ սահմանափակումների պատժաչափի նշանակման հարցում արտոնյալ պայմաններ է նախատեսել: Մինչդեռ անձի արարքում հանցագործությունների ռեցիդիվի առկայության դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի սանկցիայի շրջանակներում անձի նկատմամբ ավելի խիստ պատիժ նշանակելու կանոններ: Հետևաբար, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի համատեքստում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի հարաբերակցության իրավական կարգավորման անորոշությունը և դրանց միջև առկա հակասությունը պետք է լուծվի հօգուտ անձի նկատմամբ պատիժ նշանակելու բարենպաստ պայմաններ նախատեսող նորմի, ինչը բխում է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով սահմանված մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար դրույթներից:

Արդյունքում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ հիմնավոր է Վերաքննիչ դատարանի եզրակացությունն այն մասին, որ ամբաստանյալ Ա.Պողոսյանի նկատմամբ պետք է պատիժ նշանակել՝ ղեկավարվելով արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնները սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով այն դեպքում, երբ ամբաստանյալի արարքում առկա է առանձնապես վտանգավոր ռեցիդիվ:

Վճռաբեկ դատարանը հիմնագուրկ է համարել մաս բողոքարեի փաստարկն այն մասին, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը շեշտել է, որ ամբաստանյալը վերաքննիչ բողոք է ներկայացրել իր նկատմամբ նշանկված պատժի կապակցությամբ՝ նշելով, որ այն չափազանց ծանր է, և խնդրել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակել: Վերաքննիչ դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների շրջանակներում վերանայելով ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժի արդարության հարցերը, եզրահանգել է, որ Ա.Պողոսյանի նկատմամբ պատժաչափը սխալ է որոշվել. օրենքը սխալ մեկնաբանելով՝ դատարանն անձի վիճակը վատթարացրել է: Այսինքն՝ Վերաքննիչ

դատարանը բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայել է ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը (տես որոշման 12-24-րդ և 25-րդ կետերը):

13. Ընդհանրացնելով մեջբերված իրավական դիրքորոշումները և եզրահանգումները՝ նախևառաջ հարկ են համարում նշել, որ ամբողջությամբ համաձայն են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման բացակայության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի մեծամասնության դիրքորոշման հետ: Այս կապակցությամբ գտնում են, որ Վճռաբեկ դատարանի եզրահանգումն այն մասին, որ Վերաքննիչ դատարանը գործի քննությունն իրականացրել է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, ամբողջությամբ իրավաչափ է, իսկ բողոքաբերի փաստարկներն անհիմն են և չեն բխում գործի փաստական տվյալներից:

Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի մեծամասնության դիրքորոշմանն առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի միջև առկա է հակասություն, և այդ հակասությունը պետք է լուծվի հօգուտ արագացված դատաքննության պայմաններում պատիժ նշանակելու կանոնները սահմանող նորմի՝ հարկ են համարում նշել, որ դրա վերաբերյալ ունեն վերապահումներ:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված հանցագործությունների քանակը, բնույթը և ծանրությունը, այն հանգամանքները, որոնց հետևանքով նախկին պատիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար, ինչպես նաև նոր հանցագործության բնույթը, ծանրությունը և հետևանքները:

2. Հանցագործությունների ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի կեսից:

Հանցագործությունների վտանգավոր ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի երկու երրորդից:

Հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի երեք քառորդից»:

Մեջբերված քրեաիրավական նորմերը սահմանում են հանցագործությունների բազմակիության տեսակներից մեկի՝ հանցագործությունների ռեցիդիվի

բնորոշումը, ինչպես նաև բազմակիության տվյալ տեսակի դեպքում պատիժ սահմանելու առանձնահատկությունները: Մեկից ավելի հանցագործությունների դեպքում հաճախ պետությանը, հասարակությանը կամ դրա առանձին անդամներին ավելի մեծ նյութական, ֆիզիկական և բարոյական վնաս է հասցվում, իսկ միևնույն անձի բազմակի հանցավոր գործունեությունը վկայում է նրա զիտակցության մեջ կայուն և խորը հանցավոր հայացքների, սովորությունների, ձգտումների, հաճախ հստակ արտահայտված հակահասարակական դիրքորոշման արմատավորման մասին: Բացի այդ, անձի հանցավոր վարքագծի պարբերականությունը բացասաբար է անդրադառնում որոշ քաղաքացիների և հատկապես երիտասարդության հոգեբանության վրա՝ նրանց մոտ առաջ բերելով հանցագործություններ գործելու և անպատիժ մնալու, հասարակության հաշվին ապրելու քյուր պատկերացումներ՝ դրանով իսկ նպաստելով բնակչության քրեականացմանը:

Հարկ է նշել նաև, որ հանցագործությունների բազմակիությունը բավականին տարածված երևույթ է, որին հաճախ առնչվում է իրավակիրառ պրակտիկան: Ռեցիդիվային հանցագործությունների ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է «առաջատար դիրքերից» մեկն Անկախ Պետությունների Համագործակցության անդամ երկրների շարքում: Միջին հաշվով ռեցիդիվային հանցավորության մակարդակը կազմում է ընդհանուր հանցագործությունների քառորդ մասը՝ զիջելով միայն Բելոռուսիայի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության համանման ցուցանիշներին (տե՛ս, Հանցավորության վիճակն ԱՊՀ անդամ-պետությունների տարածքում 2004-2010 թվականներին, /Վիճակագրական ժողովածու, ՌԴ ՆԳՆ/, 2011թ., թերթ 15-16):

Վերագրյալ հանգամանքներով պայմանավորված՝ օրենսդիրը նախատեսել է, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից բացի, պետք է ղեկավարվել նաև հատուկ դրույթներով, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով: Հիշատակված քրեաիրավական նորմը նախատեսում է ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու այնպիսի կարգ, որով խստացվում է համապատասխան հողվածի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժը: Փաստորեն, օրենքով սահմանվում է այնպիսի պատիժ, որից ցածր հանցագործությունների ռեցիդիվի տվյալ տարատեսակի դեպքում դատարանն իրավասու չէ նշանակել:

Ընդ որում, հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասում խոսք է գնում ոչ թե կոնկրետ հանցագործության համար նախատեսված առավելագույն պատժի, այլ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հողվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի որոշակի մասից ռեցիդիվի տարատեսակով պայմանավորված պակաս պատիժ նշանակելու անթույլատրելիության մասին: Այլ խոսքով՝ հանցագործությունների ռեցիդիվի առկայությունը չեզոքացնում է օրենքով նախատեսված բոլոր այն դրույթները, որոնք տարբեր հանգամանքներից ելնելով՝

պատժի նշանակման առումով առավել բարենպաստ հետևանքներ են առաջացնում ենթադրյալ հանցանք կատարած անձանց համար: Մասնավորապես, եթե անձի հանցավոր արարքն ընդհատվել է հանցավորձի կամ հանցագործության նախապատրաստության փուլում, սակայն նրա արարքում առկա է ռեցիդիվ, ապա դատարանը, անտեսելով չավարտված հանցագործությունների համար պատիժ նշանակելու կանոնները, տվյալ անձի նկատմամբ պատիժ պետք է նշանակի ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով նախատեսված կանոնների կիրառմամբ:

Քննարկված իրավիճակը հստակ օրենսդրական կարգավորում է ստացել և ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 4.1-րդ մասում ամրագրվել է, որ չավարտված հանցագործությունների համար պատիժ նշանակելու նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված կանոնները չեն կիրառվում հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս (տե՛ս Սահակ Ռաֆիկի Թադևոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ին թիվ ԿԳ-3/0006/01/12 որոշման 14-րդ կետը):

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Դատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա առավել մեղմ պատիժը»:

Մեջբերված քրեադատավարական նորմը սահմանում է դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում պատիժ նշանակելու կարգը: Արագացված կարգով դատական քննությունը քրեական դատավարության ձև է, որի հիմնական նպատակն է սեղմ ժամկետներում և պարզեցված կարգով լուծել գործի ելքը: Այս ինստիտուտի առանցքում «գործարքն» է մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև, որի շրջանակներում մեղադրյալը համաձայնում է առաջադրված մեղադրանքին, և դրա դիմաց նրա համար երաշխավորվում է օրենքով նախատեսված մի շարք բարենպաստ հետևանքներ, այդ թվում՝ պատժի այնպիսի չափ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա առավել մեղմ պատիժը (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ՍԳՌ-931 որոշումը, Շ.Ամիրխանյանի և Գ.Ֆարմանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0209/01/10 որոշումը, Ա.Առուստամյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՏԳ/0145/01/11 որոշումը):

Ընդ որում, ի տարբերություն հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնները սահմանող քրեաիրավական նորմի՝ ՀՀ քրեա-

կան դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում խոսք է գնում ոչ թե հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի, այլ կատարված հանցագործության համար նախատեսված պատժի մասին: Զննարկվող քրեադատավարական նորմը բովանդակում է պահանջ առ այն, որ դատական քննության արագացված կարգի արդյունքում նշանակվելիք պատիժը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից, ապա պետք է նշանակվի առավել մեղմ պատիժը: Տվյալ դեպքում «կատարված հանցագործության համար նախատեսված պատիժ» եզրույթը «հոդվածի սանկցիայով նախատեսված պատիժ» եզրույթի հետ նույնականացնելու ոչ իրավական և ոչ էլ լեզվաբանական հիմքեր չկան:

Բանը նրանումն է, որ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասը բովանդակում է մի շարք դրույթներ, որոնք, կախված հանցավորի անձնական հատկանիշներից, հանցագործության ընդհատման պահից և մի շարք այլ հանգամանքներից տարբեր իրավական հետևանքներ են առաջացնում, և կատարված հանցագործության, համար օրենքով նախատեսված պատժի վերին սահմանն է մեղմացվում կամ ստորին սահմանն է խստացվում: Որպես այդպիսիք կարելի է նշել ինչպես չավարտված հանցագործությունների համար, անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու կանոնները, այնպես էլ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ սահմանելու կանոնները:

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում պատահականորեն չեն օգտագործվել «կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի» և «տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից» եզրույթները: Այս առումով հարկ են համարում ընդգծել, որ արագացված դատաքննության արդյունքում պատիժ նշանակելու կարգի մնան մեկնաբանությունը և կիրառությունը որպես կայուն դատական պրակտիկա գործում է չավարտված հանցագործությունների դեպքում պատիժ սահմանելիս: Մասնավորապես, բոլոր այն դեպքերում, երբ արարքն ընդհատվել է հանցավորձի կամ հանցագործության նախապատրաստության փուլում, դատարանները արագացված դատաքննության կարգ կիրառելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կանոնը կիրառում են ոչ թե հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի վերին սահմանը հիմք ընդունելով, այլ չավարտված հանցագործությունների համար պատիժ նշանակելու կանոնները կիրառելուց, և պատժի վերին սահմանը համապատասխանաբար երեք քառորդով կամ կեսով կրճատելուց հետո:

Վերոգրյալ հիմնավորումների պայմաններում անընդունելի են համարում Վճռաբեկ դատարանի մեծամասնության դիրքորոշումն այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում առկա՝ «կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ

պատիժ» ձևակերպումը պետք է մեկնաբանել որպես քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում որոշվող օրենքով սահմանված պատիժ (տե՛ս որոշման 14-րդ կետը): Քննարկվող քրեադատավարական նորմի նման մեկնաբանության արդյունքում ոչ միայն փոխվում է օրենսդրի կամքը, այլև իմաստագրվում է դատական քննության արագացված կարգը, մասնավորապես, չավարտված հանցագործությունների դեպքում: Օրենքի նման մեկնաբանության դեպքում ստացվում է, որ չավարտված հանցագործությունների համար պատիժ նշանակելու կարգը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածն արդեն իսկ երաշխավորում է անձի համար առավել մեղմ պատիժ, քան դատական քննության արագացված կարգի պայմաններում պատիժ նշանակելու կանոնները, հետևաբար ամբաստանյալը որևէ կերպ շահագրգռված չէ «գործարքի» գնալ մեղադրանքի կողմի հետ:

15. Սույն հատուկ կարծիքի 13-րդ և 14-րդ կետերում մեջբերված իրավա-նորմերը և վերլուծությունը համադրելով՝ գտնում են, որ հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնները սահմանող դրույթների միջև որևէ հակասություն (կոլիզիա) առկա չէ: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի մեծամասնության դիտարկումն այն մասին, որ հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու վերաբերյալ մրցակցող նորմերի կիրառման կարգի և միմյանց հետ հարաբերակցության վերաբերյալ հատուկ (կոլիզիոն) կանոնները բացակայում են (տե՛ս որոշման 15-րդ կետը), վկայում է ոչ թե օրենսդրական բացթողնման մասին, այլ այն բանի հիմնավորումն է, որ ի սկզբանե օրենսդիրը քննարկվող երկու դրույթների միջև որևէ հակասություն (կոլիզիա) չի տեսել: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասը պետք է մեկնաբանվեն և կիրառվեն միաժամանակ:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 2-րդ մասը, ռեցիդիվի տարատեսակով պայմանավորված, սահմանում է տվյալ հանցագործության համար նախատեսված պատժի ստորին սահմանը, որից ավելի մեղմ պատիժ դատարանն իրավասու չէ նշանակել: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասը նախատեսում է, որ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից, ապա դատարանը պետք է նշանակի առավել մեղմ պատիժը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ հանցագործությունների ռեցիդիվի առկայության պայմաններում կիրառվում է դատական քննության արագացված կարգ և կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար ռեցիդիվի կանոններով որոշված առավել մեղմ պատժից, իսկ այդպիսի իրավիճակ կարող է առաջանալ միայն առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայության դեպքում, ապա դատարանը պարտավոր է նշանակել այդ առավել մեղմ պատիժը:

Այլ խոսքով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասում օգտագործված՝ «տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատիժ» ձևակերպումը պետք է հասկանալ ոչ թե որպես հոդվածի սանկցիայով նախատեսված առավել մեղմ պատիժ, այլ որպես քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի համապատասխան դրույթների, տվյալ դեպքում՝ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնների կիրառման արդյունքում ձևավորվող պատիժ:

Ինչ վերաբերում է այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանի մեծամասնության կողմից արտահայտած այն դիրքորոշմանը, որ հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների համատեղ կիրառությունը գրեթե բոլոր դեպքերում հանգեցնում է բացարձակ որոշակի սանկցիայի, որպիսի պայմաններում բացառվում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների կիրառման հնարավորությունը, և դատարանը զրկվում է կոնկրետ դեպքում կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորությունը, հանցավորի անձը, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները գնահատելու և անձի նկատմամբ արդարացի պատիժ նշանակելու հնարավորությունից (տե՛ս որոշման 21-րդ կետը), ապա գտնում են, որ այս փաստարկը չի կարող հիմք հանդիսանալ պատիժ նշանակելու քննարկվող երկու կանոնների միաժամանակյա կիրառությունն անբույլատրելի ճանաչելու համար: Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում, հաշվի առնելով կատարված հանցագործությունների քանակը, բնույթը և ծանրությունը, ինչպես նաև այն, որ նախկին պատիժը բավարար չի եղել հանցավորի ուղղման համար, օրենսդիրը սահմանել է հոդվածի սանկցիայի այն ստորին շեմը, որից ավելի մեղմ պատիժ նույնիսկ գործն ընդհանուր կարգով քննելու դեպքում դատարանը չի կարող նշանակել, և կարող է նշանակել միայն դրանից ավելի խիստ պատիժ: Իսկ արագացված դատական քննության ինստիտուտի գործադրման պայմաններում հանցավորի համար երաշխավորվում է ռեցիդիվի առկայության պայմաններում հնարավոր առավել մեղմ պատիժը, ինչը որևէ կերպ չի խախտում անձի իրավունքները:

Բացի այդ, ինչպես արդեն նշվեց, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասը նախատեսում է, որ եթե հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից, ապա պետք է նշանակվի առավել մեղմ պատիժը: ՀՀ քրեական օրենսգրքում բազմաթիվ են այն հոդվածները, որոնցով նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է սանկցիայով նախատեսված առավել մեղմ պատժից: Հետևաբար, բոլոր այդ հոդվածներով արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս դատարանը պետք է նշանակի բացարձակ որոշակի պատիժ, ինչը սակայն որևէ կերպ չի հակասում ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի, նույն օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների պա-

հանջներին և դրանց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքին:

16. Վերոգրյալով հանդերձ՝ հարկ են համարում անդրադառնալ Վճռաբեկ դատարանի մեծամասնության կողմից «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ընդհանուր կոլիզիոն նորմերի կիրառման իրավաչափությանը (տե՛ս որոշման 16-18-րդ կետերը): Նույնիսկ եթե պայմանականորեն ընդունենք, որ հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնները սահմանող դրույթների միջև առկա է հակասություն (կոլիզիա), ապա գտնում են, որ կիրառման նախապատվությունը պետք է տրվի ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասին, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածին:

Այսպես՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Օրենքները կարող են ընդունվել օրենսգրքերի տեսքով: Օրենսգիրքն իրավունքի համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող բոլոր կամ հիմնական նորմերը համակարգված և կանոնակարգված ձևով շարադրված օրենքն է»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և սույն օրենքով սահմանված՝ առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերի գերակայության սկզբունքի հիման վրա»:

Մեջբերված նորմերի համադրված վերլուծությունից ակնհայտ է, որ օրենսգիրքը՝ որպես իրավունքի համասեռ հասարակական հարաբերությունները կարգավորող նորմերի ամբողջություն, իր կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում ունի ավելի բարձր իրավաբանական ուժ, քան մյուս օրենքները (օրենսգրքերը): Այլ խոսքով՝ ցանկացած օրենսգրքի կարգավորման առարկայի ոլորտում որևէ այլ օրենք չի կարող հակասել օրենսգրքին, իսկ այդպիսի հակասության դեպքում, առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերի գերակայության սկզբունքի հիման վրա, նախապատվությունը պետք է տրվի օրենսգրքի դրույթներին:

Հետևաբար, քրեական և քրեադատավարական օրենսգրքերի միջև հակասություն արձանագրելու դեպքում որևէ նորմի կիրառման նախապատվություն տալու համար նախևառաջ պետք է պարզել, թե այդ դրույթները որ օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում են գտնվում:

17. ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «(...) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքն ամրագրում է քրեական պատասխանատվության հիմքն ու քրեական օրենսդրության սկզբունքները, որոշում, թե հանրության համար վտանգավոր որ արարքներն են համարվում

հանցագործություն, և սահմանում է պատժի տեսակներ ու քրեախրավական ներգործության այլ միջոցներ՝ դրանք կատարելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեախրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով»:

Մեջբերված քրեախրավական դրույթների վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ արարքի հանցավորության, դրա պատժելիության և քրեախրավական հետևանքների, այդ թվում՝ պատիժ նշանակելու, պատժի մեղմացման, խստացման և դրա հետ կապված այլ հարցերի լուծումը գտնվում է բացառապես քրեական օրենսգրքի կարգավորման տիրույթում: Հետևաբար, հանցանքի պատժելիությունը և քրեախրավական այլ հետևանքները սահմանող օրենք այլ իրավական ակտով սկզբունքորեն չի կարող նախատեսվել: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծությունից բխում է, որ այն քրեադատավարական օրենսդրության խնդիրներն ապահովելու համար սահմանում է դատարանների, հետաքննության, նախաքննության և դատախազության մարմինների, ինչպես նաև դատավարության մասնակիցների համար պարտադիր քրեադատավարական վարույթի կարգը: Հետևաբար, քրեադատավարական օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում չի գտնվում արարքի հանցավորության, դրա պատժելիության կամ քրեախրավական այլ հետևանքների սահմանումը:

Վերոգրյալ վերլուծության լույսի ներքո գնահատելով ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածի 6-րդ մասը՝ պետք է արձանագրել, որ դրանք երկուսն էլ բովանդակում են պատիժ նշանակելու կանոններ՝ պայմանավորված, համապատասխանաբար, հանցագործությունների բազմակիության հանգամանքով և դատավարության ձևով: Ուստի, եթե նույնիսկ պայմանականորեն ընդունենք, որ դրանց միջև առկա է հակասություն, ապա կիրառման նախապատվությունը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ուժով պետք է տրվի հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնները սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի դրույթներին, քանի որ արագացված դատական քննության պայմաններում պատիժ նշանակելու կանոնները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, իսկ արարքի պատժելիության հետ կապված հարցերի լուծումը գտնվում է բացառապես քրեական օրենսգրքի կարգավորման տիրույթում, և այդ առումով քրեական օրենսգիրքն ունի ավելի բարձր իրավաբանական ուժ:

Հետևաբար, գտնում են, որ իրավաչափ չէ նաև Վճռաբեկ դատարանի մեծամասնության դիրքորոշումն այն մասին, որ հակասության (կոլիզիայի) պայմաններում նախապատվությունը պետք է տալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.3-րդ հոդվածին, քանի որ այն ավելի վաղ է ընդունվել և նախատեսում է անձի նկատմամբ պատիժ նշանակելու առավել բարենպաստ պայմաններ:

18. Նյութական և դատավարական օրենսդրության նորմերի նման մեկնաբանությունն ու կիրառությունն ամբողջությամբ չեզոքացնում է հանցագործությունների բազմակիության տեսակներից մեկի՝ հանրային բարձր վտանգավորությամբ օժտված ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարի համար անհրաժեշտ ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի կարգավորումները, և անձինք, որոնց արարքում առկա է ռեցիդիվ, առաջին իսկ հնարավորության դեպքում կմիջնորդեն կիրառել դատական քննության արագացված կարգ՝ նշված քրեաիրավական նորմով սահմանված խիստ պատժից խուսափելու համար: Հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների նման մեկնաբանության դեպքում որևէ բան չի խոչընդոտում դատարանին հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայության պայմաններում հանցավորի նկատմամբ նշանակել հոդվածի սանկցիայով նախատեսված առավել մեղմ պատիժը:

Մյուս կողմից սակայն, քննարկվող դրույթների նման մեկնաբանությունը կարող է հանգեցնել նրան, որ մեղադրանքի կողմը, զուտ այն հանգամանքից ելնելով, որ անձի արարքում առկա է հանցագործությունների ռեցիդիվ, կառարկի դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ, ինչը նույնպես անթույլատրելի է:

19. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ արձանագրենք, որ Առաջին ատյանի դատարանը դատական քննության արագացված կարգի կիրառմամբ Ա.Պողոսյանի նկատմամբ 2013 թվականի նոյեմբերի 8-ին կայացրել է մեղադրական դատավճիռ: Ա.Պողոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 6 տարի ժամկետով: Առաջին ատյանի դատարանն իր կողմից նշանակված պատիժը պատճառաբանել է նրանով, որ ամբաստանյալ Ա.Պողոսյանի արարքում առկա է հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվ, որպիսի պայմաններում նրա նկատմամբ պատիժ պետք է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի կիրառմամբ (տե՛ս սույն հատուկ կարծիքի 2-րդ և 6-րդ կետերը):

Ամբաստանյալի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հունվարի 17-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 8-ի դատավճիռը պատժի մասով փոփոխելու վերաբերյալ: Ամբաստանյալ Ա.Պողոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 5 տարի 4 ամիս ժամկետով: Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է նրանով, որ արագացված կարգով դատական քննության պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով կատարված հանցագործության համար ամբաստանյալ Ա.Պողոսյանի նկատմամբ նշանակման ենթակա առավելագույն պատիժը չի կարող գերա-

զանցել 5 տարի 4 ամիս ժամկետով ազատազրկումը (տե՛ս սույն հատուկ կարծիքի 3-րդ և 7-րդ կետերը):

20. Սույն հատուկ կարծիքի 13-18-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ գտնում եմ, որ Վերաքննիչ դատարանի եզրակացությունն այն մասին, որարագացված կարգով դատական քննության պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով կատարված հանցագործության համար ամբաստանյալ Ա.Պողոսյանի նկատմամբ նշանակման ենթակա առավելագույն պատիժը չի կարող գերազանցել 5 տարի 4 ամիս ժամկետով ազատազրկումը, հիմնավոր չէ: Վերաքննիչ դատարանը, պատժի մասով փոփոխելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ, 361¹-րդ, 415-րդ, 419-րդ և 422-րդ հոդվածներով, չհամաձայնվելով դատավորների մեծամասնության հետ՝ մնում եմ հատուկ կարծիքի՝

Դատախազի վճռաբեկ բողոքը պետք է բավարարվեր: Ամբաստանյալ Ալեք Գազիկի Պողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հունվարի 17-ի որոշումը բեկանվեր և օրինական ուժ տրվեր Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 8-ի դատավճիռին:

Դատավոր՝

ստորագրություն

15.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԵՇԳ/0121/01/12
Նախագահող դատավոր՝ Հ.Տեր-Ադամյան
Դատավորներ՝ Կ.Ղազարյան
Գ.Մելիք-Մարգարյան

ԵՇԳ/0121/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան	Ա.ԱԼՎԱՆԳՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Տիգրան Վրեժի Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի հունվարի 14-ի որոշման դեմ ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանի պաշտպան Ա.Ալվանդյանի և տուժող Ա.Մկրտչյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Բ Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

1. 2011 թվականի փետրվարի 16-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 16105311 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ թիվ 16105311 քրեական գործից անջատվել է վաշխառությամբ զբաղվելու մասը, որն առանձնացվել է առանձին վարույթում՝ շնորհելով թիվ 62209111 համարը:

Նախաքննության մարմնի 2012 թվականի հոկտեմբերի 15-ի որոշմամբ Տիգրան Վրեժի Մարտիրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2012 թվականի նոյեմբերի 1-ին Տ.Մարտիրոսյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2012 թվականի նոյեմբերի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճռով Տ.Մարտիրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) 1-ին կետի 1-ին ենթակետի հիման վրա՝ Տ.Մարտիրոսյանն ազատվել է պատժի կրումից:

Տուժող Ա.Սկրտչյանի քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության՝ վերջինիս իրավունք վերապահելով քաղաքացիական դատավարության կարգով դիմել դատարան:

3. Ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանի պաշտպան Ա.Ալվանդյանի և տուժող Ա.Սկրտչյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հունվարի 14-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 21-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանի պաշտպան Ա.Ալվանդյանը և տուժող Ա.Սկրտչյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 19-ի որոշմամբ ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանի պաշտպան Ա.Ալվանդյանի և տուժող Ա.Սկրտչյանի վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ:

Տուժող Ա.Սկրտչյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանի պաշտպան Ա.Ալվանդյանի բողոքը վերադարձնել, իսկ տուժողներ Ա.Թոխյանը, Է.Դուլյանը դիմում են ներկայացրել՝ խնդրելով հաշվի առնել այն, որ Տ.Մարտիրոսյանի բողոքարկումների հետևանքով իրենք վերջնական որոշում չեն ստանում:

2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «2009թ. սկզբերին Կոուժող Անահիդա Ժորժիկի Դոխոյանն իր մտերիմներ, Կոուժողներ Անահիդ Թոխյանի և Էռնեստ Դուլյանի հետ միասին որոշել են պարտքով գումար վերցնել: Այդ նպատակով Անահիդա Դոխոյանը դիմել է ամբաստանյալ Տիգրան Մարտիրոսյանին՝ պարտքով 40.000 ԱՄՆ դոլար փրամադրելու խնդրանքով: Ամբաստանյալ Տիգրան Մարտիրոսյանը համաձայնել է նշել է, որ ինքը պարտքով գումարը փրամադրում է ամսական 5 փոկոս փոկոսադրույքով և բացի այդ, որպես գումարի հետ վերադարձման երաշխիք պետք է գումարին համարժեք անշարժ գույք ձևակերպել իր անվամբ: Զանի որ Անահիդա Դոխոյանն իր անունով անշարժ գույք չի ունեցել, որոշել են Տիգրան Մարտիրոսյանի անվամբ գրանցել Անահիդ Թոխյանին և Էռնեստ Դուլյանին պարկանող, Երևանի Նոր Նորք համայնքի Նորքի 1-ին մ/շ թիվ 40 շենքի (Նանսենի 21/1 շենքի) թիվ 16 բնակարանը: 2009թ. մարտի 12-ին Անահիդ Թոխյանի, Էռնեստ Դուլյանի և Տիգրան Մարտիրոսյանի միջև կնքվել է բնակարանի առուվաճառքի պայմանագիր, որից հետո Տիգրան Մարտիրոսյանը Երևանի Արաբկիր վարչական շրջանում Անահիդա Դոխոյանին է փվել 36.000 ԱՄՆ դոլար գումար՝ միանգամից վերցնելով 40.000 ԱՄՆ դոլարի երկու ամսվա փոկոսագումարը՝ 4.000 ԱՄՆ դոլար: Հետագա ամիսների ընթացքում՝ մինչև 2009թ. հոկտեմբեր ամիսը, Տիգրան Մարտիրոսյանն իր փված 40.000 ԱՄՆ դոլար գումարի դիմաց Անահիդա Դոխոյանից որպես փոկոսագումար սրացել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային 12 փոկոս փարեկան հաշվարկային դրույքի կրկնապարհիկը գերազանցող փոկոսադրույքով՝ ամսական 5 փոկոսով ևս 10.000 ԱՄՆ դոլար փոկոսագումար՝ ընդհանուր սրանալով 5.180.000 ՀՀ դրամին համարժեք 14.000 ԱՄՆ դոլար փոկոսագումար:

Բացի դրանից, ամբաստանյալ Տիգրան Մարտիրոսյանը ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային 12, այս 13 փոկոս փարեկան հաշվարկային դրույքի կրկնապարհիկը գերազանցող փոկոսադրույքով՝ ամսական 4 փոկոսով, 2009 թվականի հունիսի 10-ին Երևանի Արաբկիր վարչական շրջանում Կոուժող Արմեն Միշայի Մկրտչյանին է փրամադրել 10.000 ԱՄՆ դոլար, իսկ հունիսի 11-ին՝ 30.000 ԱՄՆ դոլար: Որպես գումարի վերադարձման երաշխիք՝ 2009թ. հունիսի 11-ին ձևականորեն կնքված առուվաճառքի պայմանագրով Տիգրան Մարտիրոսյանի անվամբ գրանցվել է Կոտայքի մարզի Արագյուղ գյուղի 3-րդ փողոցի թիվ 42 հասցեում գրանվող, Կոուժող Արմեն Մկրտչյանի կնոջը՝ Նատալյա Ավագյանին պարկանող սեփական փունը: Նույն փոկոսադրույքով ամբաստանյալ Տիգրան Մարտիրոսյանը Կոուժող Արմեն Մկրտչյանին է փրամադրել ևս 10.000 ԱՄՆ դոլար պարտքով գումար, իսկ որպես գումարի վերադարձման երաշխիք՝ 2009թ. հունիսի 10-ին ձևականորեն կնքված անշարժ գույքի հիպոթեքի պայմանագրով Տիգրան Մարտիրոսյանի

անվամբ գրավադրվել է Արուսյան քաղաքի Երևանյան փողոցի թիվ 5 հասցեում գրանվող «Գեղարվեստագործ» ԱԿ-ին պարկանոց շինությունը: Ամբաստանյալ Տիգրան Մարտիրոսյանն իր տված ընդհանուր՝ 50.000 ԱՄՆ դոլար գումարի դիմաց մինչև 2010 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում տուժող Արմեն Մկրտչյանից որպես տոկոսագումար ստացել է ընդհանուր՝ 7.584.500 ՀՀ դրամին համարժեք 19.700 ԱՄՆ դոլար գումար:

Բացի այդ, ամբաստանյալ Տիգրան Մարտիրոսյանը ՀՀ կենտրոնական բանկի սահմանված բանկային 12, ապա 13 տոկոս տարեկան հաշվարկային դրույքի կրկնապարհիլը գերազանցող տոկոսադրույքով՝ ամսական 4.17 տոկոսով, 2009 թվականի հունիսի 10-ին տուժող Լատուրա Խաչատրյանի Սարգսյանին է տրամադրել 22.200.000 ՀՀ դրամին համարժեք 60.000 ԱՄՆ դոլար պարտքով գումար, իսկ որպես գումարի վերադարձման երաշխիք՝ ձեռնարկներն կնքված անշարժ գույքի հիպոթեքի (գրավի) պայմանագրով Տիգրան Մարտիրոսյանի անվամբ գրավադրվել է Լատուրա Սարգսյանին պարկանոց, Երևան քաղաքի Գր.Լուսավորիչ փողոցի 3-րդ շենքի թիվ 34 բնակարանը: Ամբաստանյալ Տիգրան Մարտիրոսյանն իր տված 60.000 ԱՄՆ դոլար գումարի դիմաց մինչև 2011 թվականի մարտն ընկած ժամանակահատվածում տուժող Լատուրա Սարգսյանից որպես տոկոսագումար ստացել է ընդհանուր՝ 18.250.000 ՀՀ դրամին համարժեք 50.000 ԱՄՆ դոլար գումար:

Բացի այդ, ամբաստանյալ Տիգրան Մարտիրոսյանը ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային 13 տոկոս տարեկան հաշվարկային դրույքի կրկնապարհիլը գերազանցող տոկոսադրույքով՝ ամսական 5 տոկոսով, 2010 թվականի մարտի 9-ին և 12-ին Շենգավիթ վարչական շրջանում Սուրեն Ֆապոյի Սադոկին է տրամադրել 11.700.000 ՀՀ դրամին համարժեք 30.000 ԱՄՆ դոլար պարտքով գումար, իսկ որպես գումարի վերադարձման երաշխիք՝ ձեռնարկներն կնքված անշարժ գույքի հիպոթեքի (գրավի) պայմանագրով Տիգրան Մարտիրոսյանի անվամբ գրավադրվել է Սուրեն Սադոկին պարկանոց Երևան քաղաքի Շիրակի փողոցի թիվ 70 շենքի թիվ 54 հասցեում գրանվող տարածքը: Ամբաստանյալ Տիգրան Մարտիրոսյանն իր տված 30.000 ԱՄՆ դոլար գումարի դիմաց մինչև 2011 մարտն ընկած ժամանակահատվածում Սուրեն Սադոկից որպես որպես տոկոսագումար ստացել է ընդհանուր՝ 6.570.000 ՀՀ դրամին համարժեք 18.000 ԱՄՆ դոլար գումար» (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 62-63):

6. Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանին մեղավոր է ճանաչել և դատապարտել ազատազրկման՝ հիմք ընդունելով տուժողներ Անահիտ Դոխոյանի, Էռնեստ Դույանի, Անահիտ Թոխայանի, Արմեն Մկրտչյանի, Լատուրա Սարգսյանի, Սուրեն Սադոկի, վկաներ Նատալյա Ավագյանի, Հայկ Մանուկյանի, Փարվիզ Նոսրաթիալամդարիի ցուցմունքները, տուժող Անահիտ Դոխոյանի և Տիգրան Մարտիրոսյանի, տուժող Արմեն Մկրտչյանի և Տիգրան Մարտիրոսյանի, տուժող Լատուրա Սարգսյանի և Տիգրան Մարտիրոսյանի, տուժող Սուրեն Սադոկի և Տիգրան Մարտիրոսյանի առերես հարցաքննության արձանագրությունները և ՀՀ կենտրոնական բանկի 2012

քվականի մարտի 24-ի թիվ 15.3-06/000546Վ2 գրությունը (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 62-66):

7. Տուժող Ա.Սկրտչյանի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացրած հայցադիմումի (այսուհետ նաև՝ Հայցադիմում) ներածական մասում որպես տուժող նշված են Արմեն Միշայի Սկրտչյանի տվյալները, քրեական գործի համարը, որպես ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանի տվյալները:

Հայցադիմումի եզրափակիչ մասի համաձայն՝ «1. Թիվ ԵՇԿ/0121/01/12 (...) քրեական գործով փուժող Արմեն Միշայի Սկրտչյանիս անառնել քաղաքացիական հայցվոր,

2. Մեղադրյալ Տիգրան Վրեժի Մարտիրոսյանից հոգուր փուժող Արմեն Միշայի Սկրտչյանիս բռնագործությունը պարճառուված վնասը՝ 19.700 (...) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 91, 98):

8. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «Զննարկելով քաղաքացիական հայցի և գույքային վնասի հարուցման հարցերը՝ դատարանը գրնում է, որ փուժող և քաղաքացիական հայցվոր Արմեն Սկրտչյանի քաղաքացիական հայցը պետք է թողնել առանց քննության հետևյալ պարճառաբանությամբ.

(...)

Սույն քրեական գործով փուժող Արմեն Սկրտչյանի կողմից ներկայացված վերոհիշյալ հայցադիմումում նշված չէ, թե ով է հանդիսանում հայցվորը, ով է պարճախանողը: Հետևաբար Արմեն Սկրտչյանի կողմից ներկայացված հայցադիմումը պետք է թողնել առանց քննության, ինչն արգելք չի հանդիսանում հայցը հետագայում քաղաքացիական դատավարության կարգով հարուցելու համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 66):

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով փուժող Արմեն Սկրտչյանի կողմից ներկայացված հայցադիմումը, փաստում է, որ դրանում համապարճախան նշումներ չկան այն մասին, թե ով է հանդիսանում հայցվորը, ով՝ պարճախանողը: (...) Հետևաբար, նշվածից բխում է, որ առաջին ատյանի դատարանի եզրահանգումներն այն մասին, որ Արմեն Սկրտչյանի կողմից ներկայացված հայցադիմումը պետք է թողնել առանց քննության, ինչն արգելք չի հանդիսանում ներկայացված քաղաքացիական հայցը քաղաքացիական դատավարության կարգով հարուցելու համար, օրինական է և հիմնավոր (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 121-122):

3. Վճարելի բողոքներ և հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճարելի բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանի պաշտպան Ա.Ալվանդյանը գտնում է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական նորմերի խախտումներ:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը վկայակոչել է Ք Պեղրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի կողմից 2012 թվականի հունիսի 8-ին կայացված թիվ ԵԿԳ/0102/01/11 որոշումը, որտեղ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի ուժով տոկոսի չափի խախտմամբ կնքված փոխառության պայմանագիրը համարվում է վիճահարույց գործարք, ուստի ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը հնարավորություն է տալիս կողմերին նման գործարքը վիճարկել դատական կարգով և պահանջել կիրառել անվավերության հետևանքներ:

Ըստ բողոքաբերի՝ ամբաստանյալի և ենթադրյալ տուժողների միջև ըստ էության ծավալվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 15-րդ և 46-րդ գլուխներով նախատեսված՝ գրավի փոխառության պայմանագրերով սահմանված իրավահարաբերություններ, որոնք ենթակա են կարգավորման քաղաքացիական դատավարության կարգով: Կողմերը փոխառության պայմանագրերը կնքելուց հետո շուրջ երեք տարի այդ պայմանագրերն օրենքով սահմանված կարգով չեն վիճարկել, իսկ Ս.Մարտիրոսյանի կողմից դատարան դիմելուց հետո հակընդդեմ պահանջ չեն ներկայացրել: Բացի այդ, փոխառության պայմանագրերը կնքվել են տուժողների նախաձեռնությամբ, և նրանց կամքին հակառակ որևէ գործողություն չի կատարվել: Վերոգրյալից բողոք բերած անձը հետևություն է արել այն մասին, որ սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերը հակասում են Ք Պեղրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի կողմից 2012 թվականի հունիսի 8-ին կայացված թիվ ԵԿԳ/0102/01/11 որոշմանը:

Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Ս.Մարտիրոսյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմը, քանի որ Ս.Մարտիրոսյանի և տուժողների միջև առկա են եղել քաղաքացիաիրավական հարաբերություններ, գործով ձեռք չի բերվել որևէ ապացույց՝ պայմանագիր, ստացական և այլ, որով կհիմնավորվեր Ս.Մարտիրոսյանի կողմից վերոհիշյալ հոդվածով նախատեսված արարքի կատարումը: Մինչդեռ ստորադաս դատարանները, Ս.Մարտիրոսյանի նկատմամբ կայացնելով մեղադրական դատական ակտեր, դրանց հիմքում դրել են միայն գործի ելքով շահագրգռված ենթադրյալ տուժողների հարազատներ հանդիսացող անձանց և տուժողների հակասական ցուցմունքները: Ընդ որում, վկաները դատաքննության ընթացքում նշել են, որ ոչ տոկոս տալն են տեսել, ոչ էլ վերցնելը: Ս.Մարտիրոսյանի կողմից պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալու վերաբերյալ, բացառությամբ շահագրգիռ անձանց՝ տուժողների ցուցմունքներից, որևէ ապացույց, այդ թվում՝ ստացական, պայմանագիր առկա չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 14-ի որոշումը, ճանաչել և հռչակել Ս.Մարտիրոսյանի անմեղությունը և նրան արդարացնել հանցակազ-

մի բացակայության պատճառաբանությամբ:

11. Տուժող Ա.Սկրտչյանը փաստարկել է, որ ստորադաս դատարանները քաղաքացիական հայցի մասով կայացրել են չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտեր: Այս կապակցությամբ բողոքաբերը փաստարկել է, որ Տ.Մարտիրոսյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով կատարված հանցագործություններով անմիջականորեն գույքային վնաս է պատճառվել իրեն: Բողոք բերած անձը հավելել է, որ սույն քրեական գործի վարույթին զուգահեռ Տ.Մարտիրոսյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Աջափնյակ և Գավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան իրենից 20.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ բռնագանձելու պահանջով, որի հիմքում դրվել է Ա.Սկրտչյանի կողմից 2009 թվականի հունիսի 10-ին գրված 20.000 ԱՄՆ դոլար պարտքով վերցնելու ստացականը: Երևան քաղաքի Աջափնյակ և Գավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը բավարարել է Տ.Մարտիրոսյանի պահանջը, մինչդեռ ստորադաս դատարաններն իր քաղաքացիական հայցը թողնել են առանց քննության այն պատճառաբանությամբ, որ հայցադիմումում նշված չէ, թե ով է հանդիսանում հայցվոր և պատասխանող: Այս կապակցությամբ բողոքաբերը շեշտել է, որ դատարանները հաշվի չեն առել, որ քրեական գործի շրջանակներում հարուցված քաղաքացիական հայցը ներկայացվում է բացառապես ամբաստանյալի դեմ, իսկ հայց ներկայացնելու իրավունքը պատականում է տուժողին, բացի այդ, հայցադիմումի եզրափակիչ մասում հստակ նշվել են թե՛ հայցվորի և թե՛ պատասխանողի ինքնությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է քաղաքացիական հայցի մասով բեկանել և փոփոխել ստորադաս դատարանի դատական ակտը և տուժող Ա.Սկրտչյանի քաղաքացիական հայցը բավարարել, այն է՝ ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանից հօգուտ տուժող Ա.Սկրտչյանի բռնագանձել հանցագործությամբ պատճառաված վնասը՝ 19.700 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պաշտպան Ա.Ալվանդյանի կողմից փաստարկված՝ Տ.Մարտիրոսյանի արարքում վաշխառության հանցակազմի բացակայության առումով առկա է առերևույթ հակասություն սույն գործով Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտերի և Վճռաբեկ դատարանի՝ *Քննարկի Պետրոսյանի* գործով կայացված որոշման միջև (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերոնշյալ դատական ակտերի միջև առկա հակասություններին և նախկինում ընդունված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումների հիման վրա արտահայտել մոտեցումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ տուժողի ցուցմունքի՝ որպես ապացույցի գնահատման, ինչպես նաև քրեական գործերով քաղաքացիական հայցին ներկայացվող ձևական պահանջների և դրանց չպահպանման իրավական հետևանքների կապակցությամբ (տե՛ս սույն որոշման 10-րդ և 11-րդ կետերը) առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

1. Սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերի հակասությունը Զ Պետրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշմանը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. սույն գործով կիրառման ենթակա՞ էին արդյոք Զ Պետրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումները, և հետևաբար, առկա՞ է արդյոք հակասություն սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերի և Զ Պետրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշման միջև:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի համաձայն՝ «1. Վաշխառությունը պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալ[ն է], ինչպես նաև անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնառու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը (...):

2. Նույն արարքը՝

(...)

2) որը կատարվել է որպես արհեստ,

(...):»:

Վաշխառության հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մաս) Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Զ Պետրոսյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Օբյեկտիվ կողմից վաշխառության հանցակազմը նկարագրված է հետևյալ երկրնորենի արարքների միջոցով՝

1) պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշներով որոշվող գույքի համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը,

2) անձի հետ՝ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնառու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվում է մյուս կողմը» (տե՛ս Քննարկի Նորիկի Պետրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/0102/01/11 որոշման 13-րդ կետը):

15. *Զ Պետրոսյանի* գործով ձևավորված իրավական դիրքորոշման լույսի ներքո մեկնաբանելով վաշխառությունը որպես արհեստ կատարելու հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վաշխառությունը որպես արհեստ կատարելու հանցակազմն առկա է այն դեպքում, երբ անձը ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով արգելված վաշխառությամբ զբաղվում է պարբերաբար, և դա հանդիսանում է նրա եկամտի աղբյուրը: Այլ խոսքով՝ վաշխառությունը որպես արհեստ կատարելն առկա է, երբ անձը,

ա) պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշներով որոշվող գույքի համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ է ստացել, կամ

բ) անձի հետ՝ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք է կատարել,

գ) (ա) կամ (բ) ենթակետերում նկարագրված գործողությունները կատարել է պարբերաբար, ինչի արդյունքում իր համար եկամտի աղբյուր է ձևավորել:

16. *Զ Պետրոսյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել նաև այն մասին, որ «(...) [Մ]ասնավոր հետապնդման գործ հանդիսացող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի առկայության դեպքում քրեական և քաղաքացիական վարույթների միջև ընդհանրություն կատարելու հնարավորության կապակցությամբ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վաշխառությունը փոխառության պայմանագրի էական պայմաններից մեկի (տոկոսի չափի) խախտմամբ կնքված գործարք է (...), ուստի վերջինիս կապակցությամբ քրեական և քաղաքացիական վարույթների միջև ընդհանրություն կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ պայմանագրային իրավունքից (մասնավոր իրավունքից) բխող վեճերի պարագայում հանրային շահն էսպես ավելի փոքր է, քան մասնավոր շահը: Ուստի հանրային-իրավական գործիքակազմի ներգրավումը պետք է տեղի ունենա միայն այն դեպքում, երբ բարձր ու համարժեք ապացուցողական չափանիշով հիմնավորվում է, որ տվյալ կոնկրետ դեպքում առկա է շոշափելիորեն ավելի մեծ հանրային շահ:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումը հիմնված է նաև այն հանգամանքի վրա, որ որպես տոկոսի չափի խախտմամբ փոխառության պայմանագրի կնքման նախաձեռնող շարք դեպքերում հանդես է գալիս վաշխառության ենթադրյալ տուժողը, ով հետագայում, փաստորեն, հնարավորություն է ստանում չարաշահելու իր իրավունքը, եթե հայտնվում է անբարենպաստ դրության մեջ, օրինակ՝ չի կարողանում կամ չի ցանկանում կատարել սրանձնած պարտավորությունները» (տես Քնարիկ Նորիկի Պետրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԳ/0102/01/11 որոշման 19-րդ կետը):

Մեջբերված դիրքորոշումից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի առկայության դեպքում քրեական և քաղաքացիական վարույթների միջև ընտրություն կատարելու հնարավորության կապակցությամբ հանրային-իրավական գործիքակազմի ներգրավումը պետք է տեղի ունենա միայն այն դեպքում, երբ բարձր ու համարժեք ապացուցողական չափանիշով հիմնավորվում է, որ տվյալ կոնկրետ դեպքում առկա է շոշափելիորեն ավելի մեծ հանրային շահ: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոնշյալ դիրքորոշումը վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վաշխառության հանցակազմին, քանի որ`

ա) ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վաշխառության հանցակազմի վերաբերյալ քրեական գործ կարող է հարուցվել բացառապես տուժողի բողոքի հիման վրա (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով` մասնավոր մեղադրանքի գործ է),

բ) ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վաշխառության հանցակազմը, ըստ էության, բխում է պայմանագրային իրավահարաբերություններից, իսկ պայմանագրային իրավունքից (մասնավոր իրավունքից) բխող վեճերի պարագայում հանրային շահն էապես ավելի փոքր է, քան մասնավոր շահը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վաշխառության հանցակազմի վերաբերյալ գործով շոշափելիորեն ավելի մեծ հանրային շահի առկայության հարցի գնահատումն ուղղակիորեն կապված է կոնկրետ գործի հանգամանքներից:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը Տ.Մարտիրոսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտել ազատազրկման` 3 (երեք) տարի ժամկետով (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը): Ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանի պաշտպան Ա.Ալվանդյանի և տուժող Ա.Սկրտչյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքները` օրինական ուժի մեջ քողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը (տե՛ս սույն որոշման 3-րդ կետը):

18. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-16-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո` Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ` ա) Տ.Մարտիրոսյանին մեղաազրված արարքը, ի տարբերություն *Ք. Պեպրոսյանի* գործով ամբաստանյալին մեղաազրված արարքի, որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, այն է` վաշխառությունը որպես արհեստ կատարելը, բ) Տ.Մարտիրոսյանին մեղաազրված արարքը, ի տարբերություն *Ք. Պեպրոսյանի* գործով ամբաստանյալին մեղաազրված արարքի, հանդիսանում է հանրային հետապնդման գործ (հարուցվում և քննվում է տուժողի կամահայտնությունից

անկախ), գ) Տ.Մարտիրոսյանին մեղսագրված արարքը, ի տարբերություն *Զ Պեղրոսյանի* գործով ամբաստանյալին մեղսագրված արարքի, բնութագրվում է բարձր հանրային վտանգավորության աստիճանով, դ) Տ.Մարտիրոսյանին մեղսագրված արարքը, ի տարբերություն *Զ Պեղրոսյանի* գործով ամբաստանյալին մեղսագրված արարքի, առավել մեծ հանրային շահ է շոշափում, քանի որ դրա հետևանքով ավելի մեծ չափով է խախտվում պետության ֆինանսական գործունեությունը, վաշխառուն ստանում է ավելի մեծ ծավալի չհաշվառված եկամուտ, ինչպես նաև ավելի մեծ նյութական վնաս է պատճառում քաղաքացիներին և իրավաբանական անձանց, քան վաշխառության հասարակ հանցակազմի առկայության դեպքում:

19. *Ս.Սիմոնյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշման կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է ղեկավարվի *Ս.Այվազյանի* գործով որոշման 26-րդ կետում ամրագրված չափանիշներով, քանի որ դրանք վերաբերելի են ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, այնպես էլ վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշումների կիրառելիության հարցի լուծման շրջանակներին» (տե՛ս Անահիտ Սիմոնյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԳ/0055/11/13 որոշման 15-րդ կետը):

Ս.Այվազյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը՝ եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջ-

վում է փաստական հանգամանքերի առավել մեծ ընդհանրություն» (տե՛ս Սեյրան Այվազյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-17/08 որոշման 26-րդ կետը):

20. Սույն որոշման 19-րդ կետում մեջբերված չափանիշների համատեքստում գնահատելով սույն որոշման 18-րդ կետում շարադրված եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Զ Պեպրոսյանի* գործով կայացված դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող դրույթը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասը, իր բնույթով առավել կոնկրետ է, և դրա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքերի առավել մեծ ընդհանրություն: Մինչդեռ սույն որոշման 18-րդ կետում շարադրված եզրահանգումներից երևում է, որ սույն և *Զ Պեպրոսյանի* գործով կայացված դատական ակտերով հաստատված փաստական հանգամանքների ընդհանրությունը փոքր է:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Զ Պեպրոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումները սույն գործով կիրառման ենթակա չէին և հետևաբար, սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերի և *Զ Պեպրոսյանի* գործով Վճռաբեկ դատարանի որոշման միջև հակասություն առկա չէ:

II. Ապացույցների գնահատումը.

21. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. սույն գործում առկա ապացույցներով, մասնավորապես՝ տուժողի և վկաների ցուցմունքներով հաստատվո՞ւմ է արդյոք ամբաստանյալ Ս.Մարտիրոսյանի արարքում վաշխառությունը որպես արհեստ կատարելի հանցակազմի առկայությունը:

22. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ որպես ապացույց թույլատրվում են՝ կասկածյալի ցուցմունքները, մեղադրյալի ցուցմունքները, տուժողի ցուցմունքները, վկայի ցուցմունքները, տվյալ գործի մեղադրանքի հետ առնչվող՝ մեկ այլ քրեական գործով կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի ցուցմունքները, դատապարտյալի ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը, իրեղեն ապացույցները, քննչական և դատական գործողությունների արձանագրությունները, այլ փաստաթղթերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝
«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճարելի դատարանը վերլուծել է *Մ. Հովհաննիսյանի* և *Ա. Մարտիրոսյանի*, ինչպես նաև *Ս. Սաքսանյանի* գործերով կայացված որոշումներում:

Մասնավորապես, *Մ. Հովհաննիսյանի* և *Ա. Մարտիրոսյանի* գործով որոշման մեջ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) [Ը]րեադատավարական օրենքով ապացույցներին և ապացուցման գործընթացին ներկայացվող պահանջները հետևյալն են.

ա) ապացույցները պետք է պարունակեն ոչ թե գնահատողական դատողություններ, կարծիքներ, այլ կոնկրետ փաստական տվյալներ որոշակի գործողությունների, իրադարձությունների վերաբերյալ,

բ) այդ փաստական տվյալները պետք է ձեռք բերվեն օրենքով նշված աղբյուրներից և վերաբերեն կոնկրետ տվյալ գործին և ապացուցման առարկային,

գ) ապացույցները պետք է ձեռք բերվեն, ամրագրվեն և օգտագործվեն քրեադատավարական օրենքով սահմանված կարգով:

Նշված պահանջների պահպանման հետ է անմիջականորեն կապված ապացույցների թույլատրելիության և վերաբերելիության հարցի լուծումը, որն իր հերթին կազմում է ապացույցների գնահատման բաղկացուցիչ մասը:

(...) Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, իրենից ներկայացնում է մտավոր, տրամաբանական գործունեություն, որի արդյունքում եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին» (տե՛ս Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի գործով Վճարելի դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԶԲԴ/0632/01/08 որոշման 13-14-րդ կետերը):

Ս. Սաքսանյանի գործով որոշման մեջ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում, (...) [ն]շված հանգամանքներն իրենց ամբողջության մեջ կազմում են ապացուցման առարկան, որն օրենքում ձևակերպված է ընդհանուր տեսքով և կիրառելի է բոլոր տեսակի հանցագործությունների համար: Դրա հետ մեկտեղ, սակայն, Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ապացուցման առարկայի՝ օրենքում ամրագրված տիպական թվարկումը յուրաքանչյուր գործով ճշգրտվում և լրացվում է հանցագործության քրեաիրավական որակմանը համապատասխան: Սա նշանակում է, որ կա-

տարված իրադարձությունը (ինչպես ամբողջությամբ, այնպես էլ նրա յուրաքանչյուր հանգամանքը առանձին վերցված) յուրաքանչյուր դեպքում պետք է հետազոտել՝ հաշվի առնելով քրեական օրենքով նախատեսված կոնկրետ հանցակազմի հատկանիշները:

(...) [Ա]պացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշում, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը:

(...)

Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծության հիման վրա արձանագրում է ապացույցների բավարարությունը որոշելու հետևյալ ընդհանուր չափանիշները՝

1) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունք,

2) դատավարական որոշումների հիմնավորվածություն և պատճառաբանվածություն,

3) անմեղության կանխավարկած:

(...)

[Ն]երքին համոզմունքը վարույթն իրականացնող մարմնի համոզմունքն է այն մասին, որ առկա ապացույցները բավարար են գործի ճիշտ լուծման համար անհրաժեշտ հանգամանքները բացահայտված դիտելու համար:

[Ա]պացույցների բավարարությունը չի կարող որոշվել թվաբանական ցուցանիշով, այդ պատճառով ՀՀ քրեադատավարական օրենքն օգտագործում է «ապացույցների համակցություն» հասկացությունը: Ակնհայտ է, որ ապացույցները բավարար չեն, եթե՝

1) գործում բացակայում է որևէ ապացույց գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզման համար,

2) եղած ապացույցը թույլ չի տալիս պարզել այդ հանգամանքը անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ,

3) այդ հանգամանքի ապացուցվածությունը կասկած է հարուցում» (տե՛ս Սիրակ Սաքանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԳ/0058/01/10 որոշման 14-15-րդ և 17-րդ կետերը):

23. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2009 թվականի մարտ ամսին տուժող Ա.Գոխյանին է տվել 36.000 ԱՄՆ դոլար գումար՝ միանգամից վերցնելով 40.000 ԱՄՆ դոլարի երկու ամսվա տոկոսագումարը՝ 4.000 ԱՄՆ դոլարը, և մինչև 2009թ. հոկտեմբեր ամիսն իր տված 40.000 ԱՄՆ դոլար գումարի դիմաց Ա.Գոխյանից որպես տոկոսագումար ստացել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային 12 տոկոս տարեկան հաշվարկային դրույթի կրկնապատիկը գերազանցող տոկոսադրույքով՝ ամսական 5 տոկոսով

ևս 10.000 ԱՄՆ դոլար տոկոսագումար՝ ընդհանուր ստանալով 5.180.000 ՀՀ դրամին համարժեք 14.000 ԱՄՆ դոլար տոկոսագումար:

Բացի այդ, ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանը ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային 12, ապա 13 տոկոս տարեկան հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող տոկոսադրույքով՝ ամսական 4 տոկոսով, 2009 թվականի հունիս-հուլիս ամիսներին տուժող Ա.Սկրտչյանին է տրամադրել 10.000 ԱՄՆ դոլար, ապա՝ 30.000 ԱՄՆ դոլար, որից հետո ևս 10.000 ԱՄՆ դոլար պարտքով գումար, որի արդյունքում ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանն իր տված ընդհանուր՝ 50.000 ԱՄՆ դոլար գումարի դիմաց մինչև 2010 թվականի մայիս ամիսն ընկած ժամանակահատվածը տուժող Ա.Սկրտչյանից որպես տոկոսագումար ստացել է ընդհանուր՝ 7.584.500 ՀՀ դրամին համարժեք 19.700 ԱՄՆ դոլար գումար:

Բացի այդ, ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանը ՀՀ կենտրոնական բանկի սահմանված բանկային 12, ապա 13 տոկոս տարեկան հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող տոկոսադրույքով՝ ամսական 4.17 տոկոսով, 2009 թվականի հունիս 10-ին տուժող Լ.Սարգսյանին է տրամադրել 22.200.000 ՀՀ դրամին համարժեք 60.000 ԱՄՆ դոլար պարտքով գումար, որի արդյունքում մինչև 2011 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածը ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանը տուժող Լ.Սարգսյանից որպես տոկոսագումար ստացել է ընդհանուր՝ 18.250.000 ՀՀ դրամին համարժեք 50.000 ԱՄՆ դոլար գումար:

Բացի այդ, ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանը ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային 13 տոկոս տարեկան հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող տոկոսադրույքով՝ ամսական 5 տոկոսով, 2010 թվականի մարտի 9-ին և 12-ին տուժող Ս.Սաղոկին է տրամադրել 11.700.000 ՀՀ դրամին համարժեք 30.000 ԱՄՆ դոլար պարտքով գումար, որի արդյունքում մինչև 2011 մարտ ամիսն ընկած ժամանակահատվածը, տուժող Ս.Սաղոկից որպես որպես տոկոսագումար ստացել է ընդհանուր՝ 6.570.000 ՀՀ դրամին համարժեք 18.000 ԱՄՆ դոլար գումար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանին մեղավոր է ճանաչել և դատապարտել ազատազրկման՝ հիմք ընդունելով տուժողներ Անաիդա Դոխտյանի, Էռնեստ Դուլյանի, Անահիտ Թոխայանի, Արմեն Սկրտչյանի, Լաուրա Սարգսյանի, Սուրեն Սաղոկի, վկաներ Նատալյա Ավագյանի, Հայկ Մանուկյանի, Փարվիզ Նոսրաթիալամդարիի ցուցմունքները, տուժող Անաիդա Դոխտյանի և Տիգրան Մարտիրոսյանի, տուժող Արմեն Սկրտչյանի և Տիգրան Մարտիրոսյանի, տուժող Լաուրա Սարգսյանի և Տիգրան Մարտիրոսյանի, տուժող Սուրեն Սաղոկի և Տիգրան Մարտիրոսյանի առերես հարցաքննության արձանագրությունները և ՀՀ կենտրոնական բանկի 2012 թվականի մարտի 24-ի թիվ 15.3-06/000546Վ2 գրությունը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

24. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-րդ կետում շարադրված և 22-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի

դատարանն արձանագրում է, որ սույն գործով ամբաստանյալ Ս.Մարտիրոսյանի արարքում վաշխառությունը որպես արհեստ կատարելու (ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ) հանցակազմի առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորվում են հետևյալ հանգամանքներով՝

ա) ամբաստանյալ Ս.Մարտիրոսյանը տուժողներ Ս.Սադրևին, Լ.Սարգսյանին, Ա.Սկրտչյանին, Ա.Թոխյանին պարտք տված դրամի համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ է ստացել,

բ) նախորդ ենթակետում նկարագրված գործողությունները Ս.Մարտիրոսյանը կատարել է պարբերաբար, ինչի արդյունքում իր համար եկամտի աղբյուր է ձևավորել:

25. Անդրադառնալով բողոք բերած անձի այն փաստարկներին, որ Ս.Մարտիրոսյանի կողմից պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալու վերաբերյալ, բացառությամբ շահագրգիռ անձանց՝ տուժողների ցուցմունքներից, որևէ ապացույց, այդ թվում՝ ստացական, պայմանագիր առկա չէ (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

ա) տուժողի ցուցմունքն օրենքով նախատեսված ապացույցի տեսակ է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ),

բ) տուժողի համար օրենքով սահմանված է իրեն հայտնի ամեն ինչ պատմելու պարտականություն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդված, 206-րդ հոդվածի 4-րդ մաս),

գ) հարցաքննությունից առաջ տուժողը նախագրուշացվում է ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդված, 206-րդ հոդվածի 4-րդ մաս, 343-րդ հոդված, 339-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ):

Տուժողն այն անձն է, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է կամ այդ արարքը կատարելն ավարտվելու դեպքում կարող էր պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մաս): Նա քրեական դատավարությանը մասնակցում է որպես մեղադրանքի կողմի սուբյեկտ և գործով օժտված է սեփական շահերով, որոնց ապահովման համար սահմանված են տուժողի մի շարք դատավարական իրավունքներ և պարտականություններ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդված), որոնցից է նաև ցուցմունք տալու իրավունքը և պարտականությունը:

Հետևաբար տուժողի ցուցմունքն իր բնույթով ոչ միայն ապացույցի ինքնուրույն տեսակ է, այլև վերջինիս իրավունքների և շահերի պաշտպանության միջոց: Ընդ որում, վերջին հանգամանքն ինքնին չի նսեմացնում տուժողի ցուց-

մունքի՝ որպես ապացույցի հատկանիշները (ապացուցողական ուժ, հավաստիություն): Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի ուղղակի պահանջը, որի համաձայն՝ «(...) Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

Վերոգրյալով պայմանավորված՝ օրենսդիրը, տուժողի ցուցմունքը նախատեսելով որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, հաշվի առնելով դրա անձնային բնույթի ապացույց լինելու հատկանիշը, նախատեսել է նաև դրա հավաստիությունն ապահովելու լրացուցիչ երաշխիք (տես սույն կետի (գ) ենթակետը):

26. Բողոքաբերի փաստարկներից երևում է նաև, որ բողոք բերած անձը, տուժողների ցուցմունքներն անթույլատրելի կամ ոչ հավաստի լինելու վերաբերյալ որևէ այլ հիմնավորում չի ներկայացրել՝ բացի նրանց շահագրգիռ լինելու վերաբերյալ փաստարկի (տես սույն որոշման 10-րդ կետը): Մինչդեռ տուժողներ Անաիդա Դոխոյանի, Էռնեստ Դուլյանի, Անահիտ Թոխայանի, Արմեն Սկրտչյանի, Լաուրա Մարգսյանի, Սուրեն Մադոնի ցուցմունքները բովանդակում են փաստական տվյալներ Տ.Մարտիրոսյանի կողմից պարտք տրված դրամի համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տուկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տուկոսներ ստանալու, դրա պարբերականության և տևականության, արդյունքում այդ գործողությունների հետևանքով Տ.Մարտիրոսյանի համար եկամտի լրացուցիչ աղբյուր գոյանալու վերաբերյալ: Ամբաստանյալի կողմից վկայակոչված գործողության կատարման պարբերականության մասին է վկայում նաև տուժողների բազմաթիվությունը, ինչպես նաև նրանց մի մասի՝ մյուսների և նրանց կողմից տրված գումարների հետ կապ չունենալը: Բացի այդ, տուժողներ Անաիդա Դոխոյանը, Արմեն Սկրտչյանը, Լաուրա Մարգսյանը, Սուրեն Մադոնն իրենց ցուցմունքները պնդել են նաև ամբաստանյալ Տիգրան Մարտիրոսյանի հետ առերես հարցաքննության ժամանակ:

27. Ինչ վերաբերում է տուժողների հարազատներ հանդիսացող վկաների շահագրգռվածության վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկաների կողմից տրված ցուցմունքները նույնպես տեղեկություններ են պարունակում գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին: Մասնավորապես, վկաները ցուցմունք տալիս նշել են իրենց կողմից հայտնված տվյալների ստացման աղբյուրը (համապատասխան տուժողները) (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մաս), հետևաբար նրանց կողմից տրված ցուցմունքները՝ որպես անանցյալ ապացույցներ, գործում առկա մնացած ապացույցների հետ համակցությամբ կարող են օգտագործվել ապացուցման առարկան կազմող հանգամանքները հաստատված համարելու համար:

28. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուժողների և նրանց հարազատներ հանդիսացող վկաների ցուցմունքները յուրաքանչյուր դեպքում պետք է դատարանի կողմից պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում գնահատման ենթարկվեն գործում առկա բոլոր ապացույցների հետ համակցությամբ: Հետևաբար, սույն գործով ստորադաս դատարանները պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանի վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության: Տ.Մարտիրոսյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղսագրված արարքում հաստատվում է, իսկ բողոքաբերի պատճառաբանությունները հերքվում են տուժողներ Ա.Դոխտյանի, Է.Դուլյանի, Ա.Թոխայանի, Ա.Սկրտչյանի, Լ.Սարգսյանի, Ս.Սաղոնի, վկաներ Ն.Ավագյանի, Հ.Մանուկյանի, Փ.Նոսրաբխիլամդարիի ցուցմունքներով, ինչպես նաև տուժող Անահիդա Դոխտյանի և Տիգրան Մարտիրոսյանի, տուժող Արմեն Սկրտչյանի և Տիգրան Մարտիրոսյանի, տուժող Լաուրա Մարգսյանի և Տիգրան Մարտիրոսյանի, տուժող Սուրեն Սաղոնի և Տիգրան Մարտիրոսյանի առերես հարցաքննության արձանագրություններով և ՀՀ կենտրոնական բանկի 2012 թվականի մարտի 24-ի թիվ 15.3-06/000546Վ2 գրությամբ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Այսպիսով, ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանի կատարած հանցանքն ապացուցված և նրա մեղավորությունը հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, այդ առումով ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ բողոքաբերի փաստարկները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում, հետևաբար հիմք չեն կարող հանդիսանալ այդ մասով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

III. Քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցն առանց քննության թողնելը.

29. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք տուժող Ա.Սկրտչյանի քաղաքացիական հայցն առանց քննության թողնելը՝ դրանում հայցվորի և պատասխանողի վերաբերյալ տվյալներ նշված չլինելու (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մաս) հիմնավորմամբ:

30. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական

օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառվել է քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնաս:

2. Քաղաքացիական հայցվոր ճանաչելու մասին որոշումն ընդունում են հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է սույն օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել յուրաքանչյուր պահի՝ սկսած քրեական գործի հարուցումից մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ:

2. Քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար:

3. Հայցադիմումում նշվում է, թե որ քրեական գործով, ով, ում, ինչի հիման վրա և ինչ չափով է հարուցում քաղաքացիական հայց, ինչպես նաև պետք է բովանդակի խնդրանք՝ վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի և գույքի բռնագանձման մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է հրաժարվել հայցադիմումն ընդունելուց, եթե այն չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 367-րդ հոդվածի համաձայն՝ «Դատավճիռ կայացնելիս դատարանը, ելնելով քաղաքացիական հայցի հիմքերի ու չափի ապացուցված լինելու հանգամանքից, հարուցված հայցը բավարարում է լրիվ կամ մասնակիորեն, կամ մերժում է դրա բավարարումը, կամ այն թողնում է առանց քննության»:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2006 թվականի հունիսի 13-ի «Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի քննության դատական պրակտիկայի մասին» թիվ 100 որոշման 3-րդ կետի համաձայն՝ «Քաղաքացիական հայցը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին չհամապատասխանելու դեպքում դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի համաձայն կայացնում է որոշում՝ հայցադիմումն ընդունելուց հրաժարվելու մասին»:

Մեջբերված իրավական նորմերի, ինչպես նաև ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2006 թվականի հունիսի 13-ի թիվ 100 որոշման վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական դատավարությունում քաղաքացիական հայցի հարուցման հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Վերջինս նախատեսում է քաղաքացիական հայցի

օբյեկտիվ դրսևորման՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող ձևական պահանջները: Մասնավորապես, հայցադիմումում նշվում է.

- ա) որ քրեական գործով (քրեական գործի նույնականացման տվյալները),
- բ) ով (քաղաքացիական հայցվորի վերաբերյալ տվյալներ),
- գ) ում դեմ (քաղաքացիական պատասխանողի վերաբերյալ տվյալներ),
- դ) ինչի հիման վրա (հայցի հիմքը),
- ե) ինչ չափով է (բռնագանձման ենթակա գումարի չափը)

քաղաքացիական հայց հարուցում, ինչպես նաև նշվում է վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի և գույքի (հայցի առարկան) բռնագանձման խնդրանքը:

31. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված է նաև հայցադիմումի՝ նույն օրենսգրքով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հետևանքը, այն է՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից այն ընդունելուց հրաժարվելը: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների տրամաբանությունից հետևում է, որ վարույթն իրականացնող մարմինը, ստանալով հայցադիմումը, իրավասու է կայացնել հայցադիմումն ընդունելուց հրաժարվելու (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդված) կամ քաղաքացիական հայցվոր ճանաչելու մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդված) որոշում: Իսկ դատավճռով դատարանը, ելնելով քաղաքացիական հայցի հիմքերի ու չափի ապացուցված լինելու հանգամանքից, հարուցված հայցը բավարարում է լրիվ կամ մասնակիորեն կամ մերժում է դրա բավարարումը կամ այն թողնում է առանց քննության:

Այլ կերպ՝ դատավճռով դատարանը քննարկում է քաղաքացիական հայցի հիմքերի և չափի հիմնավորվածության հարցերը (հայցն ըստ էության) և դրա արդյունքում կայացնում համապատասխան որոշում, այդ թվում՝ հայցն առանց քննության թողնելու մասին: Դատավճռով չեն կարող քննարկման առարկա դարձվել հայցադիմումի ձևական պահանջների պահպանվածության հարցերը, ավելին, դրանք չեն կարող հանգեցնել հայցն առանց քննության թողնելուն, քանի որ այդ հարցերը քննարկման առարկա են դառնում դատավարության ավելի վաղ փուլերում և միայն դրական արդյունքի դեպքում է քաղաքացիական հայցի քննությունն անցնում ըստ էության քննության և լուծման փուլ: Ավելին, ձևական պահանջները պահպանված չլինելը կարող է հանգեցնել վարույթն իրականացնող մարմնի կողմից հայցադիմումն ընդունելուց հրաժարվելուն, այլ ոչ թե այն առանց քննության թողնելուն:

Վճարելի դատարանի վերոշարադրյալ եզրահանգումը հիմնված է նաև անձի արդար դատաքննության իրավունքի ապահովման պահանջի վրա: Չնայած քաղաքացիական հայցն առանց քննության թողնելիս անձը չի գրկվում քաղաքացիական դատավարության կարգով իր իրավունքները պաշտանելու հնարավորությունից, սակայն միևնույն ժամանակ պետությունը պարտավորված է ապահովել ողջամիտ ժամկետում անձի արդար դատաքննության իրավունքը և այս առումով իրավասու չէ ձևական նակատառումներով հրաժար-

վել արդարադատություն իրականացնելուց: Վերջին դեպքում չի ապահովվի արդարացի հավասարակշռությունը անձի արդար դատաքննության իրավունքի և դրա սահմանափակումների միջև, ինչն էլ կհմասատագրվի այդ իրավունքի բուն էությունը:

32. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ տուժող Ա.Սկրտչյանի կողմից Առաջին ատյանի դատարան ներկայացրած հայցադիմումի (այսուհետ նաև՝ Հայցադիմում) ներածական մասում որպես տուժող նշված է Արմեն Միշայի Սկրտչյանի տվյալները, քրեական գործի համարը, որպես ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանի տվյալները:

Հայցադիմումի եզրափակիչ մասի համաձայն՝ «1. Թիվ ԵՇԳ/0121/01/12 (...) քրեական գործով տուժող Արմեն Միշայի Սկրտչյանիս ճանաչել քաղաքացիական հայցվոր, 2. Մեղադրյալ Տիգրան Վրեժի Մարտիրոսյանից հոգուտ տուժող Արմեն Միշայի Սկրտչյանիս բռնագանձել հանցագործությանը պատճառված վնասը՝ 19.700 (...) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով» (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը տուժող Ա.Սկրտչյանի քաղաքացիական հայցը թողել է առանց քննության այն պատճառաբանությամբ, որ տուժող Ա.Սկրտչյանի կողմից ներկայացված հայցադիմումում նշված չէ, թե ով է հայցվորը և պատասխանողը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի օրինականությունը և հիմնավորվածությունը, փաստել է, որ օրինական և հիմնավոր են տուժող Ա.Սկրտչյանի կողմից ներկայացված հայցադիմումն առանց քննության թողնելու մասին Առաջին ատյանի դատարանի եզրահանգումները (տե՛ս սույն որոշման 8-րդ կետ):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ ներկայացված հայցադիմումում Ա.Սկրտչյանը նշել է, թե ով է հայցվորը և ով պատասխանողը: Ավելին, պահանջել է իրեն ճանաչել քաղաքացիական հայցվոր և ամբաստանյալ Տ.Մարտիրոսյանից բռնագանձել իրեն պատճառված վնասը: Նշվածից առավել քան ակնհայտ է, որ Ա.Սկրտչյանի կողմից ներկայացված հայցադիմումում պահպանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջն այն մասին, որ հայցադիմումում պետք է նշվեն՝ ով ում դեմ է ներկայացրել հայցը: Հետևաբար ստորադաս դատարանների պատճառաբանությունն այն մասին, որ Ա.Սկրտչյանը հայցադիմումում չի նշել թե ով է հայցվորը և ով պատասխանողը, չի հիմնավորվում գործի նյութերով: Հետևաբար, տուժող Ա.Սկրտչյանի քաղաքացիական հայցն առանց քննության թողնելը դրանում հայցվորի և պատասխանողի վերաբերյալ տվյալներ նշված չլինելու (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մաս) հիմնավորմամբ իրավաչափ չէ:

33. Վերոգրյալի հետ մեկտեղ, սակայն, Վճարելի դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու մասով ստորադաս դատարանները կայացրել են ըստ էության ճիշտ որոշում, քանի որ սույն

գործով առկա են ներկայացված քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու այլ հիմքեր:

Մասնավորապես, առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որով Ա.Սկրտչյանից հօգուտ ամբաստանյալի բռնագանձվել է 20 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ իր կողմից 2009 թվականի հունիսի 10-ին գրված 20.000 ԱՄՆ դոլար պարտքով վերցնելու ստացականի հիման վրա (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը): Այս կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ՝

- ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով արգելված վաշխառության տարատեսակն ըստ էության ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված փոխառության պայմանագրի էական պայմաններից մեկի (տոկոսի չափի) խախտմամբ կնքված գործարք է,
- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի ուժով տոկոսի չափի խախտմամբ կնքված փոխառության պայմանագիրը համարվում է վիճահարույց գործարք,
- ըստ բողոք բերած անձի փաստարկների՝ առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որով այդ գործարքի հիման վրա իրենից հօգուտ ամբաստանյալի բռնագանձվել է գումար:

Հետևաբար, ելնելով իրավական որոշակիության սկզբունքից, ինչպես նաև տուժող Ա.Սկրտչյանի հայցի լրիվ և բազմակողմանի քննությունն ապահովելու անհրաժեշտությունից՝ Ա.Սկրտչյանի կողմից ներկայացված հայցը պետք է քննարկման առարկա դարձվի ոչ թե քրեական դատավարության, այլ քաղաքացիական դատավարության շրջանակներում Ա.Սկրտչյանի կողմից օրենքով սահմանված կարգով դիմելու դեպքում:

34. Հիմք ընդունելով սույն որոշման 14-28-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Տ.Մարտիրոսյանի արարքի որակման մասով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 21-ի, Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 14-ի դատական ակտերն օրինական, հիմնավորված ու պատճառաբանված են, դրանք բեկանելու և փոփոխելու հիմքեր չկան, իսկ քաղաքացիական հայցի մասով դրանք պետք է թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները (տե՛ս սույն որոշման 30-33-րդ կետերը): Ուստի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ վճարելի բողոքները պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճարելի դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները մերժել: Ամբաստանյալ Տիգրան Վրեժի Մարտիրոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հունվարի 14-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

16.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԳԴ-5/0014/01/13
Նախագահող դատավոր՝ Կ.Ղազարյան
Դատավորներ՝ Հ.Տեր-Աղամյան
Գ.Մելիք-Սարգսյան

ԳԴ-5/0014/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան	Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սերգեյ Վահեի Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի փետրվարի 3-ի որոշման դեմ ամբաստանյալ Ս.Ստեփանյանի պաշտպան Գ.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի մարտի 16-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 50101113 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2013 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ Սերգեյ Վահեի Ստեփանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, 34-183-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

Նախաքննության մարմնի 2013 թվականի մայիսի 30-ի որոշմամբ Ս.Ստեփանյանի նկատմամբ հարուցվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ:

2013 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ Ս.Ստեփանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

2013 թվականի հուլիսի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ Ս.Ստեփանյանն ազատվել է քրեական պատասխանատվությունից ու պատժից, և նրա նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հատուկ տիպի հոգեբուժական հիվանդանոցում հարկադիր բուժում:

3. Ամբաստանյալ Ս.Ստեփանյանի պաշտպան Գ.Հարությունյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 11-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 3-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ս.Ստեփանյանի պաշտպան Գ.Հարությունյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ ամբաստանյալ Ս.Ստեփանյանի պաշտպան Գ.Հարությունյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Ս.Ստեփանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «2013թ. մարտի 16-ին՝ ժամը 09.00-ի սահմաններում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Գազարին քաղամասում վիճաբանության է բռնվել նույն քաղամասի բնակիչ Արթավազդ Ղազարյանի հետ, որի ժամանակ դանակով դիրավորությամբ հարվածներ է հասցրել Արթավազդ Ղազարյանի աջ կրծքավանդակի առաջային երեսին, չախ կրծքավանդակի կեսին և չախ բազկի վերին երրորդի շրջանին՝ նրա առողջությանը պատճառելով ծանր վնաս՝ կյանքին վրանգ սպառնացող:

Բացի այդ, դեպքի վայրից փախուստի դիմելուց անմիջապես հետո Սերգեյ Սյրեփանյանը, նախնական համաչայնության գալով Վիզեն Հունանյանի հետ, Գեղամավան-Գազարին ավրոճանապարհին դանակի գործադրման սպառնալիքով հարկադրաբար կանգնեցրել է և Վ.Հունանյանի հետ նստել է

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավան գյուղի բնակիչ Ռազմիկ Սարուխանի Զիրոյանի վարած «Գագ 3129» մակնիշի 17 L O 136 պերհամարանիշի ավտոմեքենան՝ փորձելով առանց հափշտակելու նպատակի տիրանալ դրան» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 246):

6. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) դատարանը գրնում է, որ Վիզեն Հունանյանի կողմից դանակը Ռազմիկ Զիրոյանի վրա պահելու և դրա գործադրման սպառնալիքով ավտոմեքենան վարելու պահանջ ներկայացնելու դիտարկությունը դուրս է մյուս հանցակցի՝ Սերգեյ Սյրեփանյանի հետ նրա նախնական համաձայնության շրջանակից, այսինքն՝ կատարվել է հանցակցի սահմանազանում:

(...)

Դատարանը (...) գրնում է, որ Սերգեյ Սյրեփանյանը կատարել է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 34-183-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարք, այլ ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարք:

(...)

Դատարանը, հետազոտելով ներկայացված ապացույցները, ապացուցված համարեց, որ Սերգեյ Սյրեփանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանրորեն վրանգավոր արարքը կատարել է անմեղսունակության վիճակում, հերևարար նրան պետք է ազատել քրեական պատասխանատվությունից և պարժից» (տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 248):

7. Անբաստանյալ Ս.Ստեփանյանի պաշտպան Գ.Հարությունյանի վերաբնիչ բողոքի համաձայն՝ «(...) տուժող Ռազմիկ Զիրոյանի, վկաներ Սիրուշ Գրիգորյանի, Մարգիս Ղազարյանի, Նվեր Մկրտչյանի և Էմմա Իսրայելյանի ցուցմունքները, որոնք սույն գործով որպես ապացույց են վկայակոչվել մեղադրանքի կողմից կազմված եզրափակիչ որոշմամբ, ձեռք են բերվել տվյալ քննչական գործողության՝ վկայի (տուժողի) հարցաքննության կատարման կարգի էական խախտմամբ, ուստի ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջների համաձայն՝ դատարանը չէր կարող դրանք օգտագործել և պարտավոր էր դրանք ճանաչել որպես ապացույց չթույլատրվող նյութ, (...):

(...) անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու բոլոր արձանագրությունները ձեռք են բերվել այդ քննչական գործողության համար օրենքով նախատեսված կատարման կարգի էական և կոպիտ խախտմամբ, ուստի (...) չեն կարող ճանաչվել որպես թույլատրելի ապացույցներ:

(...) դատաքննությունն իրականացվել է առանց պատշաճ ձևակերպված մեղադրանքի: (...) Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր մեղադրողի միջնորդության հիման վրա փոփոխել Ս.Ստեփանյանի մեղադրանքը, քանի որ նման դեպքում դատարանը, փաստորեն հանդես գալով մեղադրանքի կողմում, ինքնուրույն ձևակերպել է նոր մեղադրանք՝ դրանով իսկ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի խախտում:

(...)

Դատարանը հաստատված է համարել, որ Սերգեյ Ստեփանյանը կատարել է արարքն անմեղսունակության վիճակում, այսինքն՝ նա ենթադրյալ հանցագործության սուբյեկտ չի հանդիսանցել, հետևաբար հանցակցության մասին խոսք անգամ չի կարող լինել ու այս առումով ևս նախնական համաձայնության խմբի կազմում արարքը կատարելով վերատրակելը ևս սխալ է: Այս դեպքում էլ այն պետք է որակվեր ՀՀ քրեական օրենսգրքի 183 հոդվածի 1-ին մասով: Փաստորեն դատարանը այս մասով թույլ է տվել նյութական իրավունքի կոպիտ խախտում:

(...)

Ըստ բողոքաբերի՝ Սերգեյ Ստեփանյանի նկատմամբ կիրառելի է 03.10.2013թ. Համաներման ակտի 2-րդ կետի 1-ին ենթակետը, 3-րդ և 5-րդ կետերը, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան նախատեսում է ազատազրկման ձևով պատիժ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, Սերգեյ Ստեփանյանը 2-րդ խմբի հաշմանդամ է և համաներման կիրառմանը խոչընդոտող հանգամանքներ չկան» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 8-27):

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 100 հոդվածի 1-ին մասի պահանջից ելնելով՝ դատարանը, իրավացիորեն Սերգեյ Ստեփանյանին ազատելով ՀՀ քրեական օրենսգրքի 183 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված քրեական պատասխանատվությունից ու պարժից, նրա նկատմամբ կիրառել է հարկադիր բուժում՝ հարուկ տիպի հոգեբուժական հիվանդանոցում:

Ինչ վերաբերում է բողոքաբերի փաստարկներին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 183 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքի կատարման մեջ Սերգեյ Ստեփանյանի անմեղությունը ճանաչելու կամ արարքը ՀՀ՝ քրեական օրենսգրքի 183 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետից 183 հոդվածի 1-ին մասով վերադրակելու և քրեական գործի վարույթը կարճելու, ինչպես նաև Համաներման ակտը կիրառելու վերաբերյալ, սպա դրանք անհիմն են, քանի որ 03.10.2013թ. Համաներման ակտի 5-րդ կետի համաչափ՝ քրեական հետապնդում չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարելի իրականացնել, ինչպես նաև կարճվում են մինչև 01.09.2013թ. կատարած հանցագործությունների վերաբերյալ (...) քրեական գործերը, (...) Անմեղսունակության վիճակում հանրորեն վրանգավոր արարք կատարելու դեպքերում արարքում քաջակալում է հանցակազմը, ուստի և քրեական պատասխանատվության հիմքը, իսկ նշված անչինք փաստորեն հանցանք չեն կատարում ու ենթակա չեն քրեական պատասխանատվության և պարժի, այդ անչանց նկատմամբ կարող են նշանակվել միայն բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, հետևաբար 03.10.2013թ. Համաներման ակտը նրա նկատմամբ կիրառելի չէ:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Սերգեյ Ստեփանյանի կողմից հանրորեն վրանգավոր արարք կատարելու փաստը հաստատվել է պատշաճ

իրավական ընթացակարգի շրջանակում դատաքննությանը հետագուրված ապացույցներով, և վերաքննիչ բողոքում մատնանշված հանգամանքներն իրենց համակցությամբ արդեն իսկ հաշվի են առնվել Դատարանի կողմից, (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 85-86):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոք բերած անձը նշել է, որ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի մի շարք խախտումներ:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ խախտվել են ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և 206-րդ հոդվածի 4-րդ մասը այն առումով, որ անձանց որպես տուժող և վկա հարցաքննելիս նախաքննական մարմինը նրանց չի տեղեկացրել, թե որ գործով են նրանք կանչվել հարցաքննության, չի պարզել մեղադրյալների հետ նրանց փոխհարաբերությունները: Բացի այդ, Ս.Ստեփանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 34-183-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով մեղադրանք առաջադրելուց, ինչպես նաև անմեղսունակության վիճակում օրենքով արգելված արարք կատարած անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ հարուցելուց հետո տուժողը և վկաները չեն հարցաքննվել և մեղադրանքի հիմքում դրված են եղել նրանց այն ցուցմունքները, որոնք տրվել են քրեական գործի հարուցման փուլում:

Բողոքաբերը նշել է նաև, որ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի պահանջներն այն առումով, որ սույն գործով մինչ լուսանկարով ճանաչման ներկայացնելը տուժողը և վկան չեն հարցաքննվել այն անձանց արտաքին տեսքի, նշանների և այն հանգամանքների մասին, որոնցում տեսել են այդ անձանց:

10. Բողոքաբերի պնդմամբ սույն գործով նախաքննական մարմինը, 2013 թվականի հուլիսի 10-ի որոշմամբ կարճելով քրեական գործի մի մասը, նոր մեղադրանքի առկայության պայմաններում չի կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-204-րդ և 456-րդ հոդվածների պահանջները՝ թույլ տալով պաշտպանության իրավունքի խախտում:

Առաջին ատյանի դատարանն էլ, իր հերթին, Ս.Ստեփանյանին մեղսագրվող արարքը վերաորակելիս թույլ է տվել մի շարք խախտումներ, մասնավորապես՝

ա) դատախազի բանավոր միջնորդության հիման վրա փոփոխել է Ս.Ստեփանյանի մեղադրանքը՝ նրան մեղսագրվող արարքը վերաորակելով ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

բ) պատշաճ գնահատման չի ենթարկել այն հանգամանքը, որ Ս.Ստեփանյանին և Վ.Հունանյանին առաջադրվել է միևնույն մեղադրանքը՝ առանց

հստակեցնելու ենթադրյալ հանցավոր արարքին նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթն ու աստիճանը: Նրանց առաջադրված մեղադրանքի ձևակերպումից չի երևում, թե յուրաքանչյուրին մեղսագրված արարքն ինչպես է դրսևորվել և ինչու է արտահայտվել, այսինքն՝ մեղադրանքները հստակեցված չեն, այս առումով վարույթն իրականացնող մարմինները սահմանափակվել են հանցակազմի ընդհանրական նկարագրությամբ, ինչը հանգեցրել է պաշտպանության իրավունքի խախտման:

11. Բողոք բերած անձը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտի նկարագրական-պատճառաբանական մասում բացարձակապես չի վերլուծել և ստուգել ապացույցների թույլատրելիության, մեղադրանքի փոփոխության, նյութական իրավունքի և այլ խախտումների վերաբերյալ վերաքննիչ բողոքում արված եզրահանգումները, այսինքն՝ կայացրել է չպատճառաբանված դատական ակտ:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Վերաքննիչ դատարանում գործերի քննության պարտադիր մասնակիցներից է ամբաստանյալը, որը ներկայացրել է բողոքը, կամ որի շահերի պաշտպանության համար բողոք է ներկայացրել պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը, մինչդեռ Վերաքննիչ դատարանում սույն գործի քննությունն իրականացվել է առանց Ս.Ստեփանյանի մասնակցության:

12. Անդրադառնալով Ս.Ստեփանյանի նկատմամբ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) կիրառելու անհրաժեշտությանը՝ բողոքաբերը նշել է, որ չնայած դեռևս մինչդատական վարույթում հարուցվում է անմեղսունակության վիճակում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու վարույթ, սակայն քանի դեռ դատարանը վերջնական դատական ակտով այլ հարցերի հետ միաժամանակ հաստատված չի համարել, որ անձն արարքը կատարել է անմեղսունակության վիճակում, վերջինս դեռևս հանդես է գալիս մեղադրյալի կարգավիճակում, ուստի Համաներման ակտը կիրառելի է նաև այդպիսի գործերով: Ընդ որում, որևէ նշանակություն չունի, թե այդ պահին քննվողը քրեական գործ է, նյութ, թե՛ անմեղսունակ անձի նկատմամբ հարուցված վարույթ: Ըստ բողոք բերած անձի, քանի դեռ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված չէ, որ անձն արարքը կատարել է անմեղսունակության վիճակում, դատարանը գործ ունի «մեղսունակ մեղադրյալի» հետ, ում նկատմամբ պետք է կիրառվի Համաներման ակտը:

13. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 11-ի և այդ որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 3-ի որոշումները, փոփոխել դրանք և

կայացնել գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ, որով մեղսագրվող արարքի կատարման մեջ ճանաչել և հռչակել Ս.Ստեփանյանի անմեղությունը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի կողմից փաստարկված Վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանվածության (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը) առումով առկա է առերևույթ հակասություն սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտի և Վճռաբեկ դատարանի՝ *Էրիկ Մարգարյանի* գործով կայացված որոշման միջև: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերոնշյալ դատական ակտերի միջև առկա հակասություններին և նախկինում ընդունված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումների հիման վրա արտահայտել մոտեցումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ բողոքաբերի փաստարկները (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը) փոխկապակցված են ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 206-րդ հոդվածի 4-րդ մասի խախտման վերաբերյալ փաստարկների հետ (տե՛ս սույն որոշման 9-10-րդ կետերը): Ուստի Վճռաբեկ դատարանն առաջին հերթին քննության է առնում Վերաքննիչ դատարանի դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ բողոքաբերի փաստարկը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի կողմից փաստարկված՝ անմեղսունակության վիճակում քրեական օրենսգրքով չբույլատրված արարք կատարած անձի նկատմամբ Համայնքային ակտի կիրառման կապակցությամբ (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը) առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

1. Վերաքննիչ դատարանի դատական ակտի պատճառաբանվածությունը.

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի կողմից քննության առնվող առաջին իրավական հարցը հետևյալն է. պատճառաբանված է արդյոք Վերաքննիչ դատարանի դատական ակտն այն պայմաններում, երբ վերջինս պատշաճ գնահատման չի ենթարկել Ս.Ստեփանյանի պաշտպանի վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկները:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Գատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված:

Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտը կայացնում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով սույն հոդվածում շարադրված պահանջները»:

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Ֆ. Գալստյանի*, *Գ.Խնուսյանի*, *Գ. Ղազարյանի*, ինչպես նաև *Է. Մարգարյանի* գործերով կայացված որոշումներում: Մասնավորապես, *Ֆ. Գալստյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է դեկլարվել մնան որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

(...) Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:

(...) Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում՝ ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպատճառաբանվածությունը կամ ոչ բավարար պատճառաբանվածությունը դիտել [է] «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի արդար դատական քննության իրավունքի խախտում (տե՛ս *Սալովն ընդդեմ Ուկրաինայի (Salov v. Ukraine)* 06.09.2005 թվականի որոշումը, գանգատ թիվ 65518/01, *Բոլդեան ընդդեմ Ռումինիայի (Boldea v. Romania)* 15.02.2007 թվականի որոշումը, գանգատ թիվ 19997/02, *Գրադինարն ընդդեմ Մոլդովայի (Gradinar v. Moldova)* 08.04.2008 թվականի որոշումը, գանգատ թիվ 7170/02)» (տե՛ս Ֆրունզիկ Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը):

Գ. Խնուսյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) հաշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն

անընդունելի է: (...)» (տե՛ս Գևորգ Խնուսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԳ/0030/01/12 որոշման 14-րդ կետը):

Գ.Ղազարյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «[Ա]ռաջին ատյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտի՝ դատավճռի կառուցվածքին և բովանդակությանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ներկայացվող պահանջները վերաբերելի են նաև վերադաս դատական ատյանի՝ վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտին: Այլ կերպ՝ վերաքննիչ դատարանի դատական ակտերը ևս պետք է կազմված լինեն ներածական, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից, որոնց ներկայացվում են նույն բովանդակային պահանջները, ինչ դատավճռին:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դատական ակտի կառուցվածքին և բովանդակությանը որոշակի պահանջներ ներկայացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատական ակտը պետք է ամբողջական տեղեկություն պարունակի քննված գործի վերաբերյալ, ինչպես նաև ներառի դատարանի կողմից լուծման ենթակա բոլոր հարցերի պատասխանները: Բացի այդ, դատական ակտի տարբեր կառուցվածքային մասերում (ներածական, նկարագրական-պատճառաբանական, եզրափակիչ) արտացոլված տեղեկությունը պետք է ներքին միասնություն և տրամաբանական կապ ունենա, (...) հակառակ պարագայում, դատարանի դատական ակտն անօրինական է» (տե՛ս Գեղամ Միսակի Ղազարյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱԲԳ/0121/01/11 որոշման 19-20-րդ կետերը):

Է.Մարգարյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) դատական ակտի պատճառաբանվածության չափանիշը վերաբերելի է նաև վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտերին: Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում դատական ակտ կայացնելիս վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե ինչու է եկել այս կամ այն հետևության և որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս:

(...) վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի պատճառաբանվածության վերոնշյալ պահանջների պահպանման պարագայում միայն վճռաբեկ դատարանը հնարավորություն կունենա ստուգել կայացված դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը» (տե՛ս Էրիկ Մարգարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՍԳ-3/0045/01/13 որոշման 13-րդ կետը):

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ պաշտպան Գ.Հարությունյանը վերաքննիչ բողոքում վիճարկել է իր պաշտպանյալի արարքի որակման հարցը՝ պնդելով, որ Ս.Ստեփանյանն իրեն մեղսագրվող արարքը կատարել է անմեղսունակության վիճակում, հետևաբար նրա արարքը չէր կարող որակվել որպես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, տուժող Ռ.Ջիրոյանի, վկաներ Ս.Գրիգորյանի, Ս.Ղազարյանի,

Ն.Սկրտչյանի և Է.Իսրայելյանի ցուցմունքները, անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու բոլոր արձանագրությունները պետք է ճանաչվեն որպես անթույլատրելի ապացույցներ, քանի որ ձեռք են բերվել տվյալ քննչական գործողության կատարման կարգի էական խախտմամբ, դատաքննությունն իրականացվել է առանց պատշաճ ձևակերպված մեղադրանքի, բացի այդ, Առաջին ատյանի դատարանը մեղադրողի միջնորդության հիման վրա փոփոխել է Ս.Ստեփանյանի մեղադրանքը՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի պահանջը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, իր որոշման «Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը» բաժնում մանրամասն շարադրել է պաշտպանի վերաքննիչ բողոքում շարադրված փաստարկները, սակայն դատական ակտի պատճառաբանական մասում այն քննարկման առարկա չի դարձրել և միայն արձանագրել է դրանց անհիմն լինելը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

18. Սույն որոշման 16-րդ կետում մեջբերված և համապատասխանաբար նաև՝ *Ֆ. Գալստյանի, Գ. Խնուսյանի, Գ. Ղազարյանի, Է. Մարգարյանի* գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումների համատեքստում գնահատելով սույն որոշման 17-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի պատճառաբանվածության չափանիշի իմաստով Վերաքննիչ դատարանը պարտավոր էր՝

ա) քննարկման առարկա դարձնել ապացույցների թույլատրելիության, Ս.Ստեփանյանին առաջադրված մեղադրանքի փոփոխության, Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված նյութական իրավունքի խախտումների վերաբերյալ վերաքննիչ բողոքում շարադրված փաստարկները և արդյունքում պատճառաբանված որոշում կայացնել այն մասին, թե որ իրավանորմերով ղեկավարվելու արդյունքում և ինչ հանգամանքների հիման վրա է եկել այս կամ այն հետևության:

բ) պատճառաբանել իր որոշման «Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը» բաժնում շարադրված՝ Ս.Ստեփանյանի արարքի որակման վերաբերյալ բողոքաբերի փաստարկի (տե՛ս սույն որոշման 7-րդ, 8-րդ և 17-րդ կետերը) հետ իր անհամաձայնությունը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր է փաստարկված պատճառաբանել իր անհամաձայնությունը Ս.Ստեփանյանի պաշտպանի վերաքննիչ բողոքում առկա այն դատողության հետ, որ Ս.Ստեփանյանն իրեն մեղսագրվող արարքը կատարել է անմեղսունակության վիճակում, հետևաբար նրա արարքը չէր կարող որակվել որպես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված:

19. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի դատական ակտը պատճառաբանված չէ, և այս

առումով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտում:

20. Սույն որոշման 18-րդ կետում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 206-րդ հոդվածի 4-րդ մասի խախտման վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 9-10-րդ կետերը) հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման 19-րդ կետում արձանագրված խախտումը վերացնելուց հետո:

II. Անմեղսունակության վիճակում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձի նկատմամբ Համաներման ակտի կիրառումը

21. Սույն գործով Վճռաբեկ դատարանի կողմից քննության առնվող երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Ս.Ստեփանյանի նկատմամբ կիրառելի՞ է արդյոք Համաներման ակտն այն դեպքում, երբ նրա նկատմամբ իրականացվել է ոչ թե քրեական հետապնդում, այլ բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու վարույթ:

22. ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը»:

ՀՀ քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, ով հանրության համար վտանգավոր արարք կատարելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում, այսինքն՝ քրոնիկ հոգեկան հիվանդության, հոգեկան զործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակի հետևանքով չէր կարող գիտակցել իր գործողության (անգործության) վտանգավորությունը կամ ղեկավարել դա:

2. Հանրության համար վտանգավոր արարքն անմեղսունակության վիճակում կատարած անձի նկատմամբ դատարանը կարող է նշանակել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ:

(...)»:

Մեջբերված քրեաիրավական դրույթների համակարգային վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համաներման ակտը կիրառելի է հանցանք կատարած, քրեական պատասխանատվության ենթա-

կա, մեղսունակ անձի նկատմամբ: Մինչդեռ անմեղսունակ անձի կողմից կատարված արարքը չի կարող որակվել որպես հանցագործություն, և, հետևաբար, նա չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության:

Անձի մեղսունակության խնդրին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հ. Շուքուրյանի գործով որոշման մեջ և իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) անչի մեղսունակությունն օրենսդիրը կապում է նրա կողմից իր գործողության (անգործության) փաստացի բնույթն ու նշանակությունը, դրա վրանգավորությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու ունակության հետ: (...)» (տես Հարություն Ապրեզգարի Շուքուրյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մայիսի 4-ի թիվ ԵՔԲԴ/0350/01/08 որոշման 18-րդ կետը):

23. Անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթը կարգավորված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխում առկա իրավադրույթներով:

Անմեղսունակության վիճակում քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի կարգով որպես մեղադրյալ չի ներգրավվում, քանի որ ներգրավելու հիմքը նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունն է: Բացի այդ, նրան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի կարգով մեղադրանք չի առաջադրվում: Նման պայմաններում քննիչը, դատախազը որոշում են կայացնում բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթ հարուցելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխում գետեղված 450-րդ հոդվածի համաձայն՝

«1. Բժշկական բնույթի հարկադրական միջոցները դատարանը կիրառում է այն անձանց նկատմամբ, ովքեր քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարել են անմեղսունակ վիճակում, եթե այդ անձինք շարունակում են վտանգավոր լինել հասարակության համար:

2. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին գործերով վարույթի կարգը որոշվում է սույն օրենսգրքի ընդհանուր կանոններով և սույն գլխի հոդվածներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 451-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քննիչը, դատախազը որոշում են կայացնում բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ հարուցելու մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 456-րդ հոդվածի համաձայն՝ «Անձը, որի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, օգտվում է մեղադրյալի բոլոր իրավունքներից: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 460-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Հավաքված ապացույցները գործով վարույթն ավարտելու համար բավարար համարելու դեպքում քննիչը կայացնում է (...) բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար գործը դատարան ուղարկելու մասին [որոշում]»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 461-րդ հոդվածի համաձայն՝ «Ավարտված վարույթի նյութերը բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար գործը դատարան ուղարկելու մասին քննիչի որոշման հետ հանձնվում են դատախազին, որ[ը] (...) հաստատում է քննիչի որոշումը և գործն ուղարկում է դատարան (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 464-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անձի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարքն անմեղսունակության վիճակում կատարելը և անմեղսունակության վիճակում կատարելը և անմեղսունակության վիճակում կատարելը դատարանը որոշում է կայացնում անձին քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու ու նրա նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին»:

Մեջբերված իրավադրույթների համակարգային վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

ա) անմեղսունակ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության. նախաքննության մարմնի որոշմամբ՝ նրա նկատմամբ հարուցվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ և ոչ թե քրեական հետապնդում: Նշված վարույթի ընթացքում, սակայն, քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձինք, չհանդիսանալով մեղադրյալ, օգտվում են մեղադրյալի իրավունքներից:

բ) քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ գործով որոշում կայացնելիս դատարանը պարզում է, թե վերոնշյալ անձի կողմից կատարվել է արդյոք հանրորեն վտանգավոր արարք և արդյոք այն կատարվել է անմեղսունակության վիճակում: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ դատարանը քննության է առնում անմեղսունակ անձի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարք և ոչ թե հանցագործություն կատարված լինելու հարցը:

գ) նախորդ ենթակետում նշված գործի քննության արդյունքում ապացուցված համարելով, որ անձի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարվել է անմեղսունակության վիճակում՝ դատարանն անձին չի ենթարկում քրեական պատասխանատվության և պատժի, այլ որոշում է կայացնում նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու մասին, եթե այդ անձը շարունակում է վտանգավոր լինել հասարակության համար և կարիք ունի իր նկատմամբ այդպիսի միջոցի կիրառման:

24. Սույն որոշման 22-23-րդ կետերում շարադրված վերլուծության համադրման արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անմեղսունակ անձանց նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածը և դրա հիման վրա ընդունված Համաներման ակտը կիրառելի չէ հետևյալ պատճառաբանությամբ՝

ա) Համաներման ակտը կիրառելի է մեղսունակ անձի նկատմամբ, մինչդեռ բժշկական բնույթի հարկադրական միջոցների ենթարկվում է անմեղսունակ անձը:

բ) Համաներման ակտը կիրառելի է քրեական պատասխանատվության ենթակա անձի նկատմամբ, մինչդեռ անմեղսունակության վիճակում քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության:

գ) Համաներման ակտի հիման վրա հանցանք կատարած անձը կամ դատապարտյալը լրիվ կամ մասնակի ազատվում են քրեական պատասխանատվությունից և պատժից, մինչդեռ անմեղսունակ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության և պատժի, այլ նրա նկատմամբ կարող են նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բժշկական բնույթի հարկադրական միջոցներ, որոնք պատժի տեսակ չեն (տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածը):

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ս.Ստեփանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, 34-183-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով այն բանի համար, որ նախնական համաձայնության գալով Վիզեն Հունանյանի հետ՝ Գեղամավան-Գագարին ավտոճանապարհին դանակի գործադրման սպառնալիքով հարկադրաբար կանգնեցրել է և Վ.Հունանյանի հետ նստել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավան գյուղի բնակիչ Ռ.Զիրոյանի վարած «Գագ 3129» մակնիշի 17 ԼՕ 136 պետհամարանիշի ավտոմեքենան՝ փորձելով առանց հափշտակելու նպատակի տիրանալ դրան:

Հետագայում նախաքննության մարմնի որոշմամբ Ս.Ստեփանյանի նկատմամբ հարուցվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով (տե՛ս սույն որոշման 1-ին և 5-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ ապացուցված է համարվել, որ Ս.Ստեփանյանը ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարքը կատարել է անմեղսունակության վիճակում: Արդյունքում Ս.Ստեփանյանն ազատվել է քրեական պատասխանատվությունից ու պատժից, և նրա նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի որոշումը (տե՛ս սույն որոշման 3-րդ և 8-րդ կետերը):

26. Սույն որոշման 25-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 22-25-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ՝

ա) Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել, որ Ս.Ստեփանյանը քրեական օրենսգրքով արգելված արարքը կատարել է անմեղսունակ վիճակում:

բ) Ս.Ստեփանյանի նկատմամբ իրականացվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու վարույթ, որի արդյունքում Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել նրան քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատելու և նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու մասին:

27. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստարկների հետ համադրելով սույն որոշման 24-րդ կետի (դ) ենթակետում առկա եզրահանգումն այն մասին, որ Համաներման ակտը չի նախատեսում անձին բժշկական բնույթի հարկադրական միջոցներից լրիվ կամ մասնակի ազատելու հնարավորություն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ս.Ստեփանյանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոց կիրառելու վարույթ և ոչ թե քրեական հետապնդում իրականացված լինելու պայմաններում նրան նկատմամբ Համաներման ակտը կիրառելի չէ:

Վերոշարադրյալ եզրահանգումների համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է բողոքաբերի փաստարկն այն մասին, թե «*քանի դեռ դատարանը վերջնական դատական ակտով այլ հարցերի հետ միաժամանակ հաստատված չի համարել, որ անձն արարքը կատարել է անմեղսունակության վիճակում, վերջինս դեռևս հանդես է գալիս մեղադրյալի կարգավիճակում, ուստի Համաներման ակտը կիրառելի է նաև այդպիսի գործերով: Ընդ որում, որևէ նշանակություն չունի, թե այդ պահին քննվողը քրեական գործ է, նյութ, թե՛ անմեղսունակ անձի նկատմամբ հարուցված վարույթ: Ըստ բողոք բերած անձի՝ քանի դեռ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված չէ, որ անձն արարքը կատարել է անմեղսունակության վիճակում, դատարանը գործ ունի «մեղսունակ մեղադրյալի» հետ, ում նկատմամբ պետք է կիրառվի Համաներման ակտը» (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը): Հետևաբար, այս առումով հիմնավորված չէ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դատական սխալի՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտման առկայությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:*

28. Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի պատճառաբանվածության մասով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի խախտում (տե՛ս սույն որոշման 19-րդ կետը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթ-

ների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»։ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի խախտումն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու հիմք է։

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Սերգեյ Վահեի Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի փետրվարի 3-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

Դատավորներ՝

ստորագրություն

ստորագրություններ

17.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԱՎԴ/0102/01/12
Նախագահող դատավոր՝ Ա.Գանիելյան
Դատավորներ՝ Ա.Խաչատրյան
Լ.Թադևոսյան

ԱԲԴ/0102/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ	Ա.ԱՂԱԲԵԿՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գուրգեն Իշխանի Գասպարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի փետրվարի 17-ի որոշման դեմ ամբաստանյալ Գ.Գասպարյանի պաշտպան Ե.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2009 թվականի նոյեմբերի 3-ին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով հարուցվել է թիվ 57118109 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2010 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ Գուրգեն Իշխանի Գասպարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

2012 թվականի մայիսի 19-ին Գ. Գասպարյանը հայտնաբերվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

2012 թվականի օգոստոսի 23-ին Գ. Գասպարյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով:

2012 թվականի օգոստոսի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի օգոստոսի 22-ի դատավճռով Գ. Գասպարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և դատապարտվել է ազատազրկման՝ 10 (տասը) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. Ամբաստանյալ Գ. Գասպարյանի պաշտպան Ե. Սարգսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ բողոքելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի օգոստոսի 22-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 17-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Գ. Գասպարյանի պաշտպան Ե. Սարգսյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ ամբաստանյալ Գ. Գասպարյանի պաշտպան Ե. Սարգսյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Գ. Գասպարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «2009 թվականի նոյեմբերի 2-ին Մանուկ Մանուկյանի առաջարկով ավագակալին հարչակում կատարելու և ուրիշի գույքը հաիշտակելու

նպատակով նախնական համաշայնության է եկել Արսեն Գրիգորյանի, Ռոմեն Բարսեղյանի և Անուշավան Սահակյանի հետ: Գուրգեն Գասպարյանն իր «Ռենո» մակնիշի 14 US 644 ս/հ ավտոմեքենայով Արագածավան գյուղից Արսեն Գրիգորյանի և Անուշավան Սահակյանի հետ ուղևորվել է դեպի Արարենի գյուղի կողմ, որտեղ նույն թվականի նոյեմբերի 3-ին՝ ժամը 01.00-ի սահմաններում, Գուրգեն Գասպարյանի կանչով իրենց է միացել Ռոմեն Բարսեղյանը: Այդպեղից ավտոմեքենան վարել է Ռոմեն Բարսեղյանը և նշված անչանցով Արմավիր-Էջմիածին ավտոճանապարհով հասել են Էջմիածին քաղաքի Սվերդլով փողոցի 46ա տան մոտ: Այդպեղ իրենց է միացել Մանուկ Մանուկյանը, որտեղից նշված մեքենայով գնացել են Էջմիածին քաղաքի «Զվարթնոց» թաղամասում գրավող կամրջի մոտ: Ռոմեն Բարսեղյանը մնացել է ավտոմեքենայի մեջ, իսկ Գուրգեն Գասպարյանը, Մանուկ Մանուկյանը, Արսեն Գրիգորյանը և Անուշավան Սահակյանը, դուրս գալով մեքենայից, դանակով և Գուրգեն Գասպարյանի 9 մմ տրամաչափի «ATMAGA-2004-LIGHT» տեսակի զազային ատրճանակով զինված, Մանուկ Մանուկյանի կողմից նախապես բերած դիմակներով դիմակավորված, գնացել են Էջմիածին քաղաքի «Զվարթնոց» թաղամասի Մ.Մաշտոց փողոցի թիվ 32 հասցեում գրավող տան մոտ: Այնուհետև, նշված տան պարիսպի վրայով անցել են բակ, որքով հարվածել, բացել տան մուտքի դուռը և սպորիկի մուտք գործել բնակարան: Նրանք տանը քնած ամուսիններ Փոքրոք Աջամի Նավոյանի և Մոսկով Սարրիի Ռավոյանի ձեռքերն ու ոտքերը կապել են կաշուն ժապավենով, վերջիններիս կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով, հարվածներ են հասցրել նրանց մարմնի տարբեր մասերին, որի հետևանքով Մոսկով Ռավոյանի առողջությանը պատճառել են ծանր վնաս, պահանջել են տանը եղած ողջ գումարն ու ոսկյա զարդերը, հակառակ դեպքում սպառնացել են սպանել նրան ու այրել տունը: Տանը գրվելով միայն խոշոր չափերի 908.000 ՀՀ դրամին համարժեք 1.600 եվրո, 10.000 ՀՀ դրամ գումար, 1 հար 25.000 ՀՀ դրամ արժողությամբ «Մամուլնո» տեսակի բջջային հեռախոս՝ հափշտակել են դրանք ու դիմել փախուստի» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 286):

6. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի օգոստոսի 22-ի դատավճռի համաձայն՝ «(...) Ամբաստանյալ Գ. Գասպարյանի կողմից կատարված հանցավոր արարքը և նրա մեղավորությունն իրեն մեղաազրված հանցագործությունը կատարելու մեջ հիմնավորվել, իսկ նրա պատճառաբանությունները հերքվել են քրեական գործով ձեռք բերված և դատական քննությամբ հետազոտված ներքոհիշյալ ապացույցներով. [տուժող Մոսկով Սարրիի Ռավոյանի նախաքննության և դատաքննության ընթացքում տրված ցուցմունքներով, տուժող Փոքրոք Աջամի Նավոյանի նախաքննության և դատաքննության ընթացքում տրված ցուցմունքներով, Ռ. Բարսեղյանի ցուցմունքներով, Ռ. Բարսեղյանի և Ա. Գրիգորյանի միջև կատարված առերես հարցաքննության արձանագրությամբ, քննչական փորձարարություն կատարելու մասին արձանագրությամբ, բնակարանի խուզարկության արձանագրությամբ, դատարժկա-

կան փորձաքննության թիվ 129/հ, 243 եզրակացություններով, դատաչգաբանական փորձաքննության թիվ 989 եզրակացությամբ, հեռախոսագանգների վերծանումների զննության արձանագրություններով, դեպքի վայրի զննության արձանագրությամբ, որպես հանցագործության գործիք ծառայած Գ. Գասպարյանի 9-մմ տրամաչափի «ATMAGA-2004-LIGHT» տեսակի թիվ 8209 զազային արբճանակով, որը ձանաչվել է իրեղեն ապացույց և կցվել քրեական գործին, Գ. Գասպարյանի «Ռենո» մակնիշի 14 US 644 հ/հ ավտոմեքենայով, որը ձանաչվել է իրեղեն ապացույց]»:

Դատավճռի բովանդակությունից հետևում է, որ տուժողներ Մ.Ռավոյանը և Փ.Նավոյանը դատաքննության ժամանակ ցուցմունք են տվել, որով պնդել են նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 287-289):

7. Առաջին ատյանի դատարանի դատական նիստի ձայնային արձանագրությունից պարզ է դառնում, որ դատարանը չի հետազոտել տուժողների նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները (տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչները պարունակող ծրարը, քրեական գործի 5-րդ հատոր, թերթ 284):

Առաջին ատյանի դատարանի դատական նիստի արձանագրությունից հետևում է, որ դատարանն իրեղեն ապացույցների զննություն չի իրականացրել (տե՛ս դատական նիստի ձայնային արձանագրության լազերային կրիչները պարունակող ծրարը, քրեական գործի 5-րդ հատոր, թերթ 284):

8. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 17-ի որոշման համաձայն՝ «(...) վերլուծելով գործի փաստական փյույակները, գնահատելով յուրաքանչյուր ապացույց, այնպես էլ դրանք իրենց համակցությամբ, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Գուրգեն Իշխանի Գասպարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով մեղադրված արարքը որակված է ճիշտ և նա պետք է քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվի» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 151):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը գտնում է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ Սահմանադրության 19-րդ, 21-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 18-րդ, 23-րդ հոդվածներով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի, անմեղության կանխավարկածի և մրցակցության սկզբունքների խախտում:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու, իր վկաներին դատարան

կանչելու և հավասարության պայմաններում հարցաքննելու Գ.Գասպարյանի կոնվենցիոն իրավունքն ապահովելու նպատակով պաշտպանության կողմը 2012 թվականի նոյեմբերի 22-ի դատական նիստի ժամանակ միջնորդել է դատակոչի ենթակա անձանց ցանկը լրացնել և դատարանում հարցաքննել վկաներ Ա.Կակոյանին, Հ.Սերոբյանին, Յ.Նիկոյանին, Հ.Կակոյանին, Կ.Հարությունյանին, դատապարտյալներ Մ.Մանուկյանին, Ռ.Բարսեղյանին, Ա.Գրիգորյանին, ինչպես նաև պահանջել և հետազոտել Գ.Գասպարյանի հեռախոսահամարի ելքային և մուտքային հեռախոսազանգերի վերծանումները 2009 թվականի հոկտեմբերի 1-ից նոյեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածի համար և նույն ժամանակահատվածում նրա հեռախոսահամարը սպասարկած ալեհավաքների տվյալները: Մինչդեռ, Առաջին ատյանի դատարանը պաշտպանության կողմի միջնորդությունն անհիմն բավարարել է մասնակիորեն՝ միայն այն մասով, որով մեղադրողը չէր առարկել, իսկ մյուս մասերով մերժել է:

Վերոգրյալից բողոքաբերը եզրահանգել է, որ պաշտպանության կողմի միջնորդությունը մասնակիորեն մերժելով՝ Առաջին ատյանի դատարանը չի կատարել ամբաստանյալին արդարացնող ապացույցների առկայության մասին պաշտպանության կողմի հայտարարությունները ստուգելու իր պարտականությունը՝ դրանով իսկ խախտելով Գ.Գասպարյանի արդար դատաքննության իրավունքը:

10. Բողոքաբերը նշել է նաև, որ Առաջին ատյանի դատարանը, կանխակալ վերաբերմունք դրսևորելով, անարժանահավատ է գնահատել պաշտպանության կողմի միջնորդությամբ դատարանում հարցաքննված և Գ.Գասպարյանի այլուրեքությունն ու անմեղությունը հաստատող վկաներ Ա.Կակոյանի, Վ.Եղիազարյանի ցուցմունքները, ինչպես նաև վկաներ Հ.Կակոյանի, Հ.Սերոբյանի, Յ.Նիկոյանի, Լ.Սարգսյանի, դատապարտյալ Ռ.Բարսեղյանի՝ դատաքննության ընթացքում տրված ցուցմունքները: Բացի այդ, Առաջին ատյանի դատարանը դատական ակտի հիմքում դրել է դատարանում չհետազոտված ապացույցներ, այն է՝ տուժողներ Փ.Նավոյանի, Մ.Ռավոյանի նախաքննական ցուցմունքները, իրեղեն ապացույց ճանաչված «ATMAGA-2004-LIGHT» տեսակի թիվ 8209 գազային ատրճանակը և «Ռ-ենո» մակնիշի 14 US 644 պետհամարանիշի ավտոմեքենան:

11. Ի հիմնավորումն անմեղության կանխավարկածի խախտման վերաբերյալ իր փաստարկի՝ բողոքաբերը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, այնուհետև շեշտել է, որ Առաջին ատյանի դատարանը՝ նույն դատավորի նախագահությամբ, դեռևս 2011 թվականի ապրիլի 18-ին Ռ.Բարսեղյանի և Ա.Գրիգորյանի վերաբերյալ կայացված մեղադրական դատավճռով հաստատված է համարել այն հանգամանքը, որ Գ.Գասպարյանը կատարել է իրեն մեղսագրվող ավագակային հարձակումը: Նկատի ունենալով, որ Առաջին ատյանի դատարանի նմանօրինակ վարքագիծն անկողմնակալության և անաչառության առումով վստա-

հույսը չէր ներշնչում ամբաստանյալին և դատական նիստին ներկա օրյեկտիվ դիտորդներին, պաշտպանության կողմը ինքնաբացարկի միջնորդություն է ներկայացրել նիստը նախագահող դատավորին, որն առանց պատճառաբանության, անհիմն մերժվել է: Բողոքի հեղինակը փաստարկել է նաև, որ գործի քննության ընթացքում Վերաքննիչ դատարանի կայացրած որոշումները նույնպես օրինաչափ կասկածներ էին առաջացնում այն մասին, որ դատավորները Գ.Գասպարյանի նկատմամբ ունեն կանխակալ վերաբերմունք, նրանց անաչառությունը տեսանելի չէր: Ուստի, գործի արդարացի քննության շահերից ելնելով՝ պաշտպանության կողմը Վերաքննիչ դատարանի ամբողջ կազմին ինքնաբացարկի միջնորդություն է ներկայացրել, որը նույնպես անհիմն մերժվել է:

12. Շարադրելով և վերլուծելով սույն գործի ապացույցները, ինչպես նաև մեջբերելով ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները՝ բողոքաբերը եզրահանգել է, որ Գ.Գասպարյանին անհիմն, առանց ապացույցների բավարար համակցության, մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, ինչի արդյունքում նրա նկատմամբ կայացվել են չհիմնավորված, անօրինական և չպատճառաբանված մեղադրական դատական ակտեր:

Ըստ բողոքաբերի՝ խախտվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջները: Մասնավորապես՝ ստորադաս դատարանները պետք է անթույլատրելի ճանաչեին Ռ.Բարսեղյանի նախաքննական ցուցմունքները, քանի որ դրանք տրվել են սպառնալիքի, ճնշումների և բռնության ազդեցության տակ, մինչդեռ թե՛ ընդհանուր իրավասության դատարանը, և թե՛ վերաքննիչ դատարանն այդ ցուցմունքները դրել են Գ.Գասպարյանի մեղադրական դատական ակտի հիմքում՝ անարժանահավատ ճանաչելով Ռ.Բարսեղյանի դատաքննության ընթացքում տրված ցուցմունքները:

Բողոք բերած անձը, վերլուծելով և գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները և դատավճռի հիմքում դրված ապացույցները, եզրահանգել է, որ ավագակալին հարձակման ժամանակ տուժող Մ.Ռավոյանի առողջությանը ծանր վնաս պատճառելն ընդգրկված չի եղել հանցակիցներից յուրաքանչյուրի դիտավորության մեջ: Վկայակոչելով *Ա Միքայելյանի և Ա Վաղարշակյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԱԶԳ/0174/01/11 գործով որոշման իրավական դիրքորոշումները՝ բողոքաբերը կարծիք է հայտնել, որ տվյալ դեպքում տեղի է ունեցել հանցակիցների քանակական սահմանազանցում (էքսցես), հետևաբար Գ.Գասպարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված ավագակալության որակյալ հատկանիշը (առողջությանը ծանր վնաս պատճառելը) Գ.Գասպարյանին չպետք է վերագրվեր: Ստորադաս դատարաններն առանց որևէ ապացույցի Գ.Գասպարյանին վերագրել են ավագակալության նշված որակյալ հատկանիշը այն պայմաններում, որ նույնիսկ առաջադրված

մեղադրանքում նշված չէ, որ նա տուժողներից որևէ մեկին հարվածել է կամ նրանց առողջությանը պատճառել է որևէ վնաս:

Բացի այդ, Գ.Գ.ասպարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով մեղադրանք առաջադրելիս նախաքննության մարմինը չի հստակեցրել Գ.Գ.ասպարյանի, ինչպես նաև նրա հանցակիցներից յուրաքանչյուրի կատարած արարքը, հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության աստիճանը և բնույթը:

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 17-ի որոշումը կամ գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

1. Դատաքննության ընթացքում չհետազոտված ապացույցները դատավճարի հիմքում դնելու իրավաչափությունը

14. Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով նախևառաջ պետք է պատասխանել բողոքաբերի բարձրացրած հետևյալ իրավական հարցին. Առաջին ատյանի դատարանն իրավասու² էր արդյոք դատավճարի հիմքում դնել տուժողների նախաքննության ընթացքում տված ցուցմունքները, ինչպես նաև իրեն նաև ապացույց ճանաչված գազային ատրճանակն ու ավտոմեքենան այն պայմաններում, երբ դրանք դատաքննության ընթացքում չեն հետազոտվել:

15. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի (...) իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ (...) իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

Մեջբերված նորմերը Վճարելի դատարանը վերլուծության է ենթարկել ՀՀ *Հակոբյանի* գործով որոշման մեջ՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «ՀՀ Սահմանադրության իմաստով «հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ (...) իր գործի (...) քննության իրավունքը» և Կոնվենցիայի իմաստով «արդարացի (...) դատաքննության իրավունքը», *inter alia*, ենթադրում է, որ դատավարության յուրաքանչյուր մասնակից պետք է հնարավորություն ունենա ծանոթանալ դատավարական հակառակորդի ներկայացրած ցանկացած ապացույցի և, դատարանի դիրքորոշման վրա ազդելու ակնկալիքով, իր վերաբերմունքը հայտնել դրա առնչությամբ: Վճարելի դատարանի այս իրավական դիրքորոշումը

քիում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապարասիան նախադեպային իրավունքից (տե՛ս *Լոբո Մաչադոն ընդդեմ Պորտուգալիայի (Lobo Machado v. Portugal)* գործով Պալատի 1996թ. փետրվարի 20-ի վճիռը, զանգար թիվ 15764/89, կետ 31, Կ.Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի (*K.S. v. Finland*) գործով Մեծ Պալատի 2001թ. մայիսի 31-ի վճիռը, զանգար թիվ 29346/95, կետ 21, Վալստոնն ընդդեմ Նորվեգիայի (*Walston (no. 1) v. Norway*) գործով Պալատի 2003թ. հունիսի 3-ի վճիռը, զանգար թիվ 37372/97, կետ 56):

ՀՀ Սահմանադրության իմաստով «իր գործի հրապարակային քննության իրավունքը» և Կոնվենցիայի իմաստով «հրապարակային դատաքննության իրավունքը», *inter alia*, ենթադրում է, որ, որպես կանոն, ապացույցների հետազոտումը պետք է իրականացվի հրապարակային դատաքննության պայմաններում: Դա ապահովում է արդարադատության իրականացման նկատմամբ հասարակության վերահսկողությունը, ինչը կարևոր հանրային արժեք է: Վճռաբեկ դատարանի այս իրավական դիրքորոշումը քիում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապարասիան նախադեպային իրավունքից (տե՛ս *Աքսենն ընդդեմ Գերմանիայի (Axen v. Germany)* գործով Պալատի 1983թ. դեկտեմբերի 8-ի վճիռը, զանգար թիվ 8273/78, կետ 25, *Դիեննե ընդդեմ Ֆրանսիայի (Diennet v. France)* գործով Պալատի 1995թ. սեպտեմբերի 26-ի վճիռը, զանգար թիվ 18160/91, կետ 33, *Հումատովն ընդդեմ Ադրբեյջանի (Hummatov v. Azerbaijan)* գործով Պալատի 2007թ. նոյեմբերի 29-ի վճիռը, զանգարներ թիվ 9852/03 և 13413/04, կետ 140):(...):» (տե՛ս Հարություն Արշավիրի Հակոբյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵԱԲԳ/0128/01/09 որոշման 18-րդ կետը):

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում որպես ամբաստանյալ Գ.Գասպարյանի մեղադրանքը հիմնավորող ապացույցներ է վկայակոչել տուժողներ Մ.Ռավոյանի և Փ.Նավոյանի նախաքննության ընթացքում տված ցուցմունքները, ինչպես նաև իրեղեն ապացույցներ ճանաչված «ATMAGA-2004-LIGHT» տեսակի թիվ 8209 գազային ատրճանակը և «Ռենո» մակնիշի 14 ՍՏ 644 պետհամարանիշի ավտոմեքենան (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Մինչդեռ, տուժողների նախաքննական ցուցմունքները դատաքննության ընթացքում չեն հրապարակվել, իսկ վերոգրյալ իրեղեն ապացույցները չեն զննվել (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռի հիմքում է դրել այնպիսի ապացույցներ, որոնք հրապարակային դատաքննության ժամանակ չեն հետազոտվել, և որոնց վերաբերյալ պաշտպանության կողմին հնարավորություն չի տրվել արտահայտելու իր դիրքորոշումը:

17. Սույն որոշման 15-րդ կետում և համապատասխանաբար Հ.Հակոբյանի գործով որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական

տվյալները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր դատավճռի հիմքում դնել տուժողների նախաքննության ընթացքում տված ցուցմունքները, ինչպես նաև իրեղեն ապացույցներ ճանաչված ատրճանակն ու ավտոմեքենան այն պայմաններում, երբ դրանք դատաքննության ընթացքում չեն հետազոտվել:

Տուժողներ Մ.Ռավոյանի և Փ.Նավոյանի նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները, ինչպես նաև իրեղեն ապացույցներ ճանաչված «ATMAGA-2004-LIGHT» տեսակի թիվ 8209 գազային ատրճանակը և «Ռենո» մակնիշի 14 US 644 պետհամարանիշի ավտոմեքենան վկայակոչելով որպես ամբաստանյալ Գ.Գասպարյանի մեղադրանքը հիմնավորող ապացույցներ՝ Առաջին ատյանի դատարանը թույլ է տվել քրեադատավարական իրավունքի խախտում, մասնավորապես խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 342-343-րդ և 348-րդ հոդվածների պահանջները: Ուստի, նշված ապացույցները պետք է հանել Գ.Գասպարյանի մեղադրանքը հիմնավորող ապացույցների զանգվածից:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «Գատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա (...):»:

Շարադրված դրույթի վերլուծությունից հետևում է, որ դատարանի դատավճիռը չի կարող հիմնավորված համարվել, եթե դրա նկարագրական-պատճառաբանական մասում բովանդակվող հետևությունները էապես հիմնված են դատաքննության ժամանակ չհետազոտված ապացույցների վրա:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Գ.Գասպարյանի մեղավորության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունները էապես հիմնված չեն դատարանում չհետազոտված և, հետևաբար, անթույլատրելի ապացույց հանդիսացող՝ տուժողներ Մ.Ռավոյանի և Փ.Նավոյանի նախաքննական ցուցմունքների, ինչպես նաև իրեղեն ապացույցներ ճանաչված գազային ատրճանակի և ավտոմեքենայի վրա:

Գատավճռի բովանդակությունից հետևում է, որ տուժողներ Մ.Ռավոյանը և Փ.Նավոյանը դատաքննության ժամանակ հարցաքննվել են և պնդել են նախաքննության ընթացքում տված ցուցմունքները (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Այլ կերպ՝ տուժողների նախաքննական ցուցմունքները ամբաստանյալ Գ.Գասպարյանի մեղավորության հարցում եզրահանգման գալու համար որևէ նշանակություն չեն ունեցել: Ինչ վերաբերում է իրեղեն ապացույցներ ճանաչված գազային ատրճանակին և ավտոմեքենային, ապա հանցագործության փաստը և դրա կատարման մեջ ամբաստանյալի մեղավորությունը հաստատող ապացույցների զանգվածում դրանց կշիռն աննշան է, Գ.Գասպարյանի ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքը հիմնավորված է բազմաթիվ այլ թույլատրելի և վերաբերելի ապացույցներով (տե՛ս սույն որոշման 20-րդ կետը):

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված, սույն որոշման 17-րդ կետում արձանագրված քրեադատավարական օրենքի խախտումը չի կարող հիմք հանդիսանալ Գ.Գասպարյանի վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

II. Բողոքաբերի բարձրացրած մյուս հարցերը

20. Քրեական գործի նյութերի ուսումնասիրությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման ենթարկելով գործով ձեռք բերված ապացույցները (տուժողներ Մ.Ռավոյանի և Փ.Նավոյանի դատաքննության ընթացքում տրված ցուցմունքները, դատապարտյալ Ռ.Բարսեղյանի ցուցմունքները, Ռ.Բարսեղյանի և Ա.Գրիգորյանի միջև կատարված առերես հարցաքննության արձանագրությունը, քննչական փորձաքննություն կատարելու մասին արձանագրությունը, բնակարանի խուզարկության արձանագրությունը, դատաբժշկական փորձագետների թիվ 129/հ, 243 եզրակացությունները, դատաձգաբանական փորձագետի թիվ 989 եզրակացությունը, հեռախոսագանգերի վերծանումների զննության արձանագրությունները, դեպքի վայրի զննության արձանագրությունը), դրանք իրենց համակցության մեջ գնահատելով՝ հանգել են հիմնավոր հետևության, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ Գ.Գասպարյանի մեղավորությունը հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված և հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները գործով ձեռք բերված վերոգրյալ ապացույցները հետազոտել են՝ պահպանելով քրեական դատավարության օրենսդրության պահանջները, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի հիման վրա՝ գնահատել են թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից: Հետևաբար, Գ.Գասպարյանին մեղսագրվող արարքն ապացուցված համարելու մասին վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ գործի փաստական հանգամանքների մասին դատարանների հետևությունները հետազոտված ապացույցներին չհամապատասխանելու և մեղադրանքը հիմնավորված չլինելու, ինչպես նաև դատական ակտերի պատճառաբանված չլինելու վերաբերյալ բողոքի փաստարկները (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը) գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում:

21. Վճռաբեկ դատարանը հիմնագուրկ և գործի փաստական տվյալներից չբխող է համարում նաև բողոքաբերի պնդումն այն մասին, որ ավագակային հարձակման ժամանակ տուժող Մ.Ռավոյանի առողջությանը ծանր վնաս պատճառելն ընդգրկված չի եղել հանցակիցներից յուրաքանչյուրի դիտավո-

րության մեջ, հետևաբար տեղի է ունեցել հանցակցի սահմանազանցում (էքսցես) (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը): ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը, որպես ավագակության առանձնապես ծանրացնող հանգամանք, նախատեսում է առողջությանը ծանր վնաս պատճառելը: Տվյալ նորմի ձևակերպումից հետևում է, որ քննարկվող ծանրացնող հանգամանքն առկա է միայն այն դեպքում, երբ տուժողի առողջությանը փաստացի պատճառվել է ծանր վնաս: Սուբյեկտիվ կողմից հանցավորը (հանցակիցները) ուղղակի դիտավորությամբ նպատակ է հետապնդում հափշտակել ուրիշի գույքը և այդ նպատակով հարձակում է գործում, իսկ առողջությանը ծանր վնաս պատճառելուն կարող է վերաբերել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ:

Գործի նյութերով հաստատված է, որ Գ.Գասպարյանը, Ա.Գրիգորյանը, Ռ.Բարսեղյանը և Ա.Սահակյանը, նախնական համաձայնության գալով, ուրիշի գույքը հափշտակելու նպատակով ավագակային հարձակում են գործել: Հարձակման ժամանակ տուժողներ Փ.Նավոյանի և Մ.Ռավոյանի կյանքի ու առողջության համար վտանգավոր բռնություն է գործադրվել, որի հետևանքով Մ.Ռավոյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս: Այս պայմաններում բողոքաբերի փաստարկն այն մասին, որ Գ.Գասպարյանին մեղսագրված չէ, որ նա տուժողներից որևէ մեկի առողջությանը վնաս է պատճառել, չի կարող հիմք հանդիսանալ հաստատված համարելու, որ Մ.Ռավոյանի առողջությանը ծանր վնաս պատճառելն ընդգրկված չի եղել Գ.Գասպարյանի դիտավորության մեջ, հետևաբար հանցակցի սահմանազանցման (էքսցեսի) մասին խոսք լինել չի կարող: Այս առումով նույնպես Վճարելի դատարանը հիմնավոր է համարում ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ Գ.Գասպարյանի արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցակազմի հատկանիշները:

22. Ամբաստանյալ Գ.Գասպարյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպման ուսումնասիրությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը համապատասխան դատավարական փաստաթղթերում հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից բացի, մանրամասնորեն նշել է արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների նկարագրությունը: Գ.Գասպարյանին մեղսագրվող հանցակցությամբ կատարված արարքը որակելիս հաշվի է առնվել, որ տեղի է ունեցել հանցավոր արարք, որի կատարմանը մասնակցել են երկու և ավելի անձինք, ովքեր գործել են համատեղ, դիտավորյալ և կատարել են դիտավորյալ հանցագործություն: Իրավախախտման փաստը կոնկրետացվել է յուրաքանչյուր հանցակցի մասով, իսկ դրա հանգամանքները անհատականացվել են՝ հաշվի առնելով անձնական պատասխա-

նատվության, ըստ մեղքի պատասխանատվության և արդարության, պատասխանատվության անհատականացման սկզբունքները:

Հետևաբար, անհիմն է բողոքաբերի փաստարկն այն մասին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով մեղադրանք առաջադրելիս նախաքննության մարմինը չի հստակեցվել Գ.Գասպարյանի, ինչպես նաև նրա հանցակիցներից յուրաքանչյուրի կատարած արարքը, հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության աստիճանը և բնույթը (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

23. Անդրադառնալով բողոքաբերի փաստարկին, որ ընդհանուր իրավատության դատարանն անհիմն մերժել է պաշտպանության կողմի միջնորդությունները դատարան հրավիրել և հարցաքննել վկաների, որոնց ցուցմունքներն էական նշանակություն կունենային առաջադրված մեղադրանքը հերքելու և Գ.Գասպարյանի անմեղությունը հաստատելու համար (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի իմաստով, որպես ընդհանուր կանոն, ներպետական դատարանների հայեցողությանն է թողնվում այն հարցի գնահատումը, թե արդյոք անհրաժեշտ է հրավիրել վկաներ, թե ոչ, և չի պահանջվում ամբաստանյալի կողմից հանդես եկող յուրաքանչյուր վկայի հրավիրումը և հարցաքննությունը (տե՛ս Բրիկմոնտն ընդդեմ Բելգիայի (Bricmont v Belgium) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 10857/84, կետ 89):

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դատարանը, ապահովելով արդար դատաքննության իրավունքը և քրեական դատավարության մրցակցության սկզբունքը, պաշտպանության կողմի հարուցած միջնորդությունները քննարկել է և կայացրել մի շարք վկաների դատարան հրավիրելու մասին որոշումներ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նյութերում բացակայում է որևէ փաստական տվյալ այն մասին, որ դատարանը, մասնակիորեն բավարարելով պաշտպանության կողմի միջնորդությունները, գործել է կամայականորեն:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի խախտման մասին բողոքի փաստարկներն անհիմն են:

24. Բողոք բերած անձը նշել է նաև, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը, չբավարարելով պաշտպանության կողմի միջնորդությունները՝ ինքնաբացարկ ընդունելու մասին, Գ.Գասպարյանին զրկել են անկախ ու անաչառ դատարանի կողմից արդարացի դատաքննության իրավունքից (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Մինչդեռ, քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ դատական քննության ընթացքում պաշտպանության կողմի տարբեր հիմքերով և հիմնավորումներով ներկայացրած ինքնաբացարկի միջնորդությունները ստորադաս դատարանների դատավորները քննության են առել գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ և կայացրել համապատասխան որոշումներ, որոնք հիմնավորված և պատճառաբանված են: Գատակյան քննության ընթացքում ի վնաս որևէ կողմի որոշումներ կայացնելը չի կարող բավարար հիմք հանդիսանալ հանգելու այն միանշանակ եզրահանգման, որ գործի քննությունն անցկացվել է ոչ անաչառ և կողմնակալ դատարանի կողմից, գործի արդարացի դատաքննության իրավունքի խախտմամբ:

Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ դատարանը խախտել է Գ.Գասպարյանի անմեղության կանխավարկածի իրավունքը (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), ապա այն նույնպես անհիմն է, քանի որ Առաջին ատյանի դատարանը դեռևս 2011 թվականի ապրիլի 18-ին Ռ.Բարսեղյանի և Ա.Գրիգորյանի վերաբերյալ կայացված մեղադրական դատավճռով հաստատված է համարել ոչ թե Գ.Գասպարյանին վերագրվող արարքը, այլ այն, որ Ռ.Բարսեղյանը և Ա.Գրիգորյանը խմբի կազմում կատարել են ավազակային հարձակում: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հանգամանքն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ հաստատված համարելու, որ Առաջին ատյանի դատարանը Գ.Գասպարյանի վերաբերյալ գործի քննության ժամանակ եղել է կողմնակալ:

25. Հիմք ընդունելով վերոգրյալ դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված է, նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ բողոքաբերի փաստարկներն իրենց հաստատումը քրեական գործի նյութերում չեն գտնում, ուստի վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց բավարարման, իսկ Վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Գուրգեն Իշխանի Գասպարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի փետրվարի 17-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

18.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ՏԴ-2/0030/01/13
Նախագահող դատավոր՝ Ս.Չիչոյան
Դատավորներ՝ Ե.Դարբինյան
Գ.Ավետիսյան

ՏԴ-2/0030/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Կարեն Արարատի Ստեփանյանի և Մկրտիչ Աշոտի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի փետրվարի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի փետրվարի 1-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Տավուշի մարզի քննչական բաժնի Դիլիջանի քննչական բաժանմունքում հարուցվել է թիվ 36101313 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2013 թվականի փետրվարի 13-ի որոշմամբ Կարեն Ստեփանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Կ.Ստեփանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2013 թվականի փետրվարի 14-ին Սկրտիչ Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Մ.Հովհաննիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2013 թվականի հուլիսի 9-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի դատավճռով Կ.Ստեփանյանը և Մ.Հովհաննիսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքներում արդարացվել են՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի փետրվարի 25-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը:

Վճռաբեկ դատարանը 2014 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Կ.Ստեփանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2012 թվականի հոկտեմբերի 7-ի լույս 8-ի գիշերը՝ ժամը 2-ի սահմաններում, Տավուշի մարզի Հաղարծին գյուղի հարակից անտառամասում՝ «ՈՒԱԶ» մակնիշի ավտոմեքենայում, անչափահաս Մարինե Բեգլարյանի կամքին հակա-

ռակ, դանակի ցուցադրմամբ և դրանով վերջինիս սպանելու, բռնություն գործադրելու սպառնալիքով նրա հետ ունեցել է սեռական հարաբերություն (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 126):

Մ.Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2012 թվականի նոյեմբերի կեսին՝ գիշերը ժամը 2-ի սահմաններում, Տավուշի մարզի Հաղարծին գյուղում՝ «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի ավտոմեքենայում, անչափահաս Մարինե Բեգլարյանի կամքին հակառակ, դանակի ցուցադրմամբ և դրանով վերջինիս սպանելու, բռնություն գործադրելու սպառնալիքով նրա հետ ունեցել է սեռական հարաբերություն (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 138):

6. Առաջին ատյանի դատարանում դատական վիճարանությունների փուլում մեղադրողն իր ճառում հայտնել է. «(...) *Քրեական գործի դատաքննության ընթացքում դատարանում հայտնաբերվեցին քրեական հետապնդումը բացառող բազմաթիվ հանգամանքներ: Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 9-րդ կետով՝ ես հրաժարվում եմ Կարեն Արարատի Սյրեփանյանին և Մկրտիչ Աշոտի Հովհաննիսյանին առաջադրված մեղադրանքից և նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց (...)*» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, դատական նիստի արձանագրման համառոտագրում և լազերային սկավառակ, թերթ 224-225 և 226):

7. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի դատավճռի համաձայն՝ «(...) *Դատաքննությանը չեռք բերված բավարար ապացույցների հիման վրա հերքվեց հանցագործության դեպքը, որի պարձառով մեղադրողը հրաժարվեց մեղադրանքից՝ հայտարարելով քրեական հետապնդումը դադարեցնելու իր դիրքորոշման մասին:*

(...) Վերլուծելով դատաքննությանը չեռք բերված ապացույցները և հիմք ընդունելով մեղադրանքից հրաժարվելու մասին մեղադրողի դիրքորոշումը՝ դատարանը գրավ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 138 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում Կարեն Արարատի Սյրեփանյանին և Մկրտիչ Աշոտի Հովհաննիսյանին պետք է արդարացնել՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 227-228):

8. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 25-ի որոշման համաձայն՝ «(...) *Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն քրեական գործով արդարացման դատավճիռ կայացնելու համար առկա են եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով նախատեսված հիմքերը, ուստի Առաջին ատյանի դատարանը ցանկացած դեպքում պարտավոր էր կայացնել արդարացման դատավճիռ:*

Անդրադառնալով վերաքննիչ բողոքի այն պարձառարանությանը, որ Դատարանը չպետք է ղեկավարվեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասով, այլ պետք է ղեկավարվեր ՀՀ քրեական

դատարավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասով՝ կարճեր քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը, վերաքննիչ դատարանն արչանազարում է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝

«Հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը»:

(...)

Վերը նշված հանգամանքների վերլուծությամբ վերաքննիչ դատարանը փաստում է, որ Առաջին ասրյանի դատարանը քրեական գործի քննության ընթացքում դատավարական իրավունքի նորմերի խախտումներ թույլ չի տվել, այդ առումով դատավճիռն օրինական է, հիմնավորված ու պարանառարանված, ուստի վերաքննիչ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 292-296):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ գործի քննության ընթացքում ստորադաս դատարանները թույլ են տվել դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես, խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին, 7-րդ, 23-րդ, 24-րդ, 35-րդ, 66-րդ, 306-րդ, 353-354-րդ, 366-րդ, 398-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ մեղադրողի կողմից մեղադրանքից ամբողջ ծավալով հրաժարվելու հայտարարությունը դատարանի համար քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է, ինչը բացառում է վարույթը շարունակելը և դատավճիռ կայացնելը: Դատավճիռ կայացնելու համար դատարանը պետք է սպառի դատական քննության՝ օրենքով նախատեսված բոլոր փուլերը, այսինքն՝ քրեական գործը պետք է անցնի դատական քննության կառուցվածքային մասերով, հակառակ դեպքում բացակայում են դատավճիռ կայացնելու պարտադիր նախադրյալները, իսկ այդ պայմաններում կայացված դատավճիռն անվերապահորեն ենթակա է բեկանման: Դատական քննության առարկան դատախազի կողմից դատարան ներկայացված և պաշտպանվող մեղադրանքի օրինականությունը, հիմնավորվածությունն ու ապացուցվածությունը ստուգելն է, իսկ այն դեպքում, երբ դատախազը հրաժարվում է մեղադրանքից, դատական քննությունը դառնում է առարկայագուրկ, ինչից հետևում է, որ դատարանը չի կարող վարույթը շարունակել և հարկադրված է քրեական հետապնդումը դադարեցնել:

Վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերը և 306-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերը՝ բողոքի հեղինակը գտել է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը, նկատի ունենալով, որ մեղադրողը հրաժարվել է մեղադրանքից, պարտավոր էր կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը, սակայն, անտեսելով վերոնշյալ դրույթների պահանջները, կայացրել է արդարացման դատավճիռ, ինչը հանգեցրել է ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենսդրությամբ երաշխավորված օրինականության և մրցակցության սկզբունքների խախտման:

10. Անդրադառնալով ստորադաս դատարանների կողմից կիրառված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասին՝ բողոքաբերը կարծիք է հայտնել, որ նշված հոդվածի դրույթները վերաբերում են միայն մեղադրանքից մի ծավալով հրաժարվելու դեպքերին: Սի մասով մեղադրանքից հրաժարվելը մյուս մասով դատավարությունը շարունակելու խոչընդոտ չի հանդիսանում, ուստի դատարանը սպառում է դատավճիռ կայացնելու պատշաճ ընթացակարգը և կայացնում է մեղադրական դատավճիռ, որը մասամբ համարվում է արդարացման:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի դատավճիռը, Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 25-ի որոշումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու պատճառաբանությամբ կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրողի՝ ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մաս) և մեղադրանքից հրաժարվելու (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 306-րդ հոդվածի 3-րդ մաս) լիազորությունների բնութագրի և իրավական հետևանքների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. մեղադրողի կողմից դատական վիճաբանությունների փուլում մեղադրանքից հրաժարվելու պայմաններում Առաջին ատյանի դատարանը Կ.Ստեփանյանի և Մ.Հովհաննիսյանի նկատմամբ պարտավոր էր կա-

յացնել արդարացման դատավճի՞ռ, թե քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում:

1. Մեղադրողի՝ ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու և մեղադրանքից հրաժարվելու լիազորությունների բնութագիրը

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Մեղադրողը, դատարանում հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, պարտավոր է հայտարարել ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 306-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Դատախազը պարտավոր է հրաժարվել մեղադրանքից, եթե իր հանդգնմամբ այն չի հաստատվել դատական քննության ընթացքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի և 306-րդ հոդվածի 3-րդ մասի համադրված վերլուծությունից երևում է, որ դատարանում քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ հայտնաբերելու դեպքում մեղադրողն օժտված է հետևյալ լիազորություններով՝

ա) հայտարարել ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին,

բ) հրաժարվել մեղադրանքից:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *ԱԲաղդասարյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ նշված հիմքերը դասակարգվում են երկու խմբի՝

ա) քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու «արդարացնող» («ռեաբիլիտացիոն») հիմքեր, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով:

բ) քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու «ոչ արդարացնող» («ոչ ռեաբիլիտացիոն») հիմքեր, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերով: (...)» (տե՛ս Արմեն Պավլուշի Բաղդասարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԶԳ/0009/11/13 որոշման 16-րդ կետը):

Վերոշարադրյալ դիրքորոշման լույսի ներքո մեկնաբանելով մեղադրողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ և 306-րդ հոդվածի 3-րդ մասերում ամրագրված լիազորությունները (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին

հայտարարել» և «մեղադրանքից հրաժարվել» ինստիտուտները տարբերվում են մի շարք առանձնահատկություններով: Մասնավորապես՝

1) Մեղադրողը, դատարանում հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող «ոչ արդարացնող» («ոչ ռեաբիլիտացիոն») հիմքեր (օրինակ՝ անցել են վաղեմության ժամկետները, ընդունվել է համաներման ակտ և այլն), շարունակում է պնդել հանցագործության առկայության և ամբաստանյալի կողմից այն կատարելու փաստի մասին: Նշված դեպքում, սակայն, դատախազը հայտարարում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին, քանի որ վերոնշյալ օբյեկտիվ հանգամանքների առկայությունը բացառում է քրեական հետապնդումը շարունակելու հնարավորությունը:

2) Մեղադրողը, դատարանում հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող «արդարացնող» («ռեաբիլիտացիոն») հիմքեր, հրաժարվում է մեղադրանքից: Մասնավորապես, մեղադրողը հրաժարվում է մեղադրանքից, եթե դատական քննության ընթացքում հետազոտված փաստական տվյալների գնահատման արդյունքում պարզում է, որ բացակայում են հանցադեպը, հանցակազմը, կամ վնաս պատճառած արարքն օրենքով համարվում է իրավաչափ կամ կատարված հանցագործությանը կասկածյալի, կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չէ, և սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

16. Սույն որոշման նախորդ կետի (1) ենթակետում շարադրված վերլուծության համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին դատախազի հայտարարությունը քրեական գործի վարույթը բացառող անվերապահ հանգամանք չէ: Նման իրավիճակում դատարանը պետք է պարզի ինչպես դատախազի հայտարարության հիմքում ընկած՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքի իրական լինելու փաստը, այնպես էլ դատավարության մյուս սուբյեկտների դիրքորոշումը: Մասնավորապես, այն դեպքում, երբ մեղադրողը վաղեմության ժամկետներն անցնելու կամ համաներման ակտ ընդունվելու հիմքով հայտարարում է քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին, դատարանը պարտավոր է պարզել ամբաստանյալի դիրքորոշումը, որն այս պարագայում վճռորոշ նշանակություն ունի, քանի որ վերջինս կարող է առարկել նշված հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ և պահանջել շարունակել դատավարությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մաս):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին մեղադրողի հայտարարությունը, անկախ նրանից, թե դատական քննության որ փուլում է այն արվել, հիմք է դատարանի կողմից քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հարցի քննարկման հա-

մար: Քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին դատախազի հայտարարությունն ինքնին քրեական գործի հետագա վարույթը բացառող հանգամանք չէ, և դատարանի կողմից պետք է քննության առնվի միջնորդությունների հարուցման և լուծման կարգը սահմանող քրեադատավարական նորմերի կիրառմամբ: Այլ խոսքով՝ նման հայտարարության դեպքում դատարանը պետք է պարզի դատախազի պատճառաբանություններում մատնանշված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերով նախատեսված քրեական հետապնդումը բացառող համապատասխան հանգամանքի իրական լինելու, ինչպես նաև նշված հիմքով գործի վարույթն ավարտելուն խոչընդոտող դատավարական արգելքների բացակայության փաստը (մեղադրյալի առարկություն, հատուցման ենթակա վնասի կապակցությամբ վեճի առկայություն և այլն), ինչի արդյունքում որոշում կայացնի քրեական հետապնդումը դադարեցնելու մասին կամ մերժի դատախազի միջնորդությունը:

Ինչ վերաբերում է մեղադրանքից հրաժարվելուն, ապա համապատասխան հիմքերի առկայության դեպքում (տե՛ս սույն որոշման նախորդ կետի (2) ենթակետը) դատախազի՝ որպես պետության անունից քրեական հետապնդում իրականացնող անձի դիրքորոշումը պարտադիր է դատավարության մյուս սուբյեկտների, այդ թվում՝ դատարանի համար: Մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ դատախազի կամահայտնությունը հավասարազոր է մեղադրանքի (մեղավորության մասին վեճի) բացակայության, որպիսի պայմաններում քրեական դատավարությունը չի կարող շարունակվել, և դատարանը պարտավոր է ավարտել գործի վարույթն արդարացման հիմքով:

17. Հիմք ընդունելով սույն որոշման 15-16-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հայտարարելու և մեղադրանքից հրաժարվելու մասին դատախազի լիազորությունները միմյանցից էականորեն տարբերվում են, այդ եզրույթները նույնացնելու ինչպես լեզվաբանական, այնպես էլ քրեադատավարական հիմքեր առկա չեն: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես մեղադրանքի, այնպես էլ դրա պաշտպանության ծավալների վերաբերյալ մեղադրողի՝ որպես պետության անունից քրեական հետապնդում իրականացնող անձի դիրքորոշումը պետաիշխանական ակտ է, որը պարտադիր է դատավարության մյուս սուբյեկտների համար: Այլ խոսքով՝ եթե դատարանում հետազոտված փաստական տվյալների գնահատման արդյունքում մեղադրողը հրաժարվում է մեղադրանքից, ապա դատական քննությունը չի կարող շարունակվել, և դատարանը պետք է ավարտի գործի վարույթն արդարացման հիմքով՝ անկախ նրանից, թե համաձայն է մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ դատախազի հայտարարության հիմքում ընկած դատողությունների հետ, կամ դրա դեմ առարկում են դատավարության այլ մասնակիցները, թե ոչ:

Մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ դատախազի հայտարարությունը պետք է լինի պատճառաբանված: Այս կապակցությամբ Վճռաբեկ

դատարանն ընդգծում է, որ անթույլատրելի է կամայական հայեցողությամբ մեղադրանքից հրաժարվելը, և չնայած այն հանգամանքին, որ դատախազը պետության քրեական քաղաքականությունն իրականացնող և դրա համար պատասխանատու պաշտոնատար անձ է, որին վերապահված է քրեական մեղադրանքը տնօրինելու իրավասություն (տե՛ս *mutatis mutandis* Արմեն Ջիվանի Բաբայանի և Սուրեն Ռ-ազմիկի Թումանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 19-րդ և 21-րդ կետերը), այդուհանդերձ, դա չի նշանակում, որ վերջինս բոլոր դեպքերում օժտված է մեղադրանքից հրաժարվելու բացարձակ հայեցողությամբ: Բացի այդ, մեղադրանքից հրաժարվելու պատճառաբանվածության պահանջն անհրաժեշտ նախապայման է կայացվելիք դատական ակտի հիմքում համապատասխան արդարացման հիմքի հստակ նախանշման համար: Հետևաբար, մեղադրանքից հրաժարվելը պետք է լինի պատճառաբանված, ինչը նշանակում է, որ դատախազը պետք է ներկայացնի դատական քննության ընթացքում ի հայտ եկած այն հանգամանքները, որոնցով իր համոզմամբ հաստատվում է ամբաստանյալի անմեղությունը, ինչպես նաև այն, թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով կամ 2-րդ մասով նախատեսված հատկապես որ հիմքով է հրաժարվում մեղադրանքից:

18. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 3-րդ մասը դատախազին իրավասություն է վերապահում քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել նաև գործը դատարան ուղարկելուց հետո, բայց մինչև դատական նիստում գործի քննությունն սկսելը: Այն դեպքում, երբ դատախազը չի օգտվում իր այս իրավունքից, ապա դատական նիստում գործի քննությունն սկսելուց հետո մեղադրանքից կարող է հրաժարվել միայն այն դեպքում, եթե հետագուոված ապացույցների կամ այլ փաստերի (օրինակ՝ արարքն ապաքրեականացվել է) գնահատման արդյունքում եզրահանգում է, որ առկա են օրենքով նախատեսված հրաժարման հիմքերը: Վերոգրյալն ուղղակիորեն բխում է մեղադրանքից հրաժարվելու մեղադրողի իրավասությունը սահմանող նորմի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 306-րդ հոդվածի 3-րդ մասի օրենսդրական ձևակերպումից, որը նախատեսում է, որ դատախազը պարտավոր է հրաժարվել մեղադրանքից, եթե իր համոզմամբ այն չի հաստատվել դատական քննության ընթացքում:

II. Մեղադրողի՝ անբասարանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու և մեղադրանքից հրաժարվելու լիազորությունների իրավական հետևանքները

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 306-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Մեղադրանքից դատախազի հրաժարվելու դեպքում դատարանը կարճում է քրեական գործով վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը, (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը մեղադրանքի այդ մասով կայացնում է արդարացնող դատավճիռ»:

Մեջբերված քրեադատավարական նորմերի վերլուծությունից երևում է, որ դատախազի՝ մեղադրանքից հրաժարվելու լիազորության իրավական հետևանքների ամրագրման առումով քրեադատավարական օրենսդրության նորմերը միանշանակ չեն: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 306-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ մեղադրանքից դատախազի հրաժարվելու դեպքում դատարանը կարճում է քրեական գործով վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը, իսկ նույն օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասը պարտավորեցնում է դատարանին մեղադրանքի այդ մասով կայացնել արդարացնող դատավճիռ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիշատակված քրեադատավարական դրույթների անհստակությունը պետք է լուծել դատական քննության փուլի առջև դրված խնդիրների և դատավճռի՝ որպես արդարադատության իրականացման կարևորագույն ակտի նշանակության լույսի ներքո:

20. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի (...) իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ «[Դ]ատավճիռ[ը] դատական նիստում կայացված առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանի որոշումներ[ն են] ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության, նրա նկատմամբ պատիժ կիրառելու կամ չկիրառելու և այլ հարցերով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արդարացման դատավճիռը ճանաչում և հռչակում է հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի անմեղությունը՝ այն մեղադրանքով, որով նա ներգրավվել է որպես մեղադրյալ»:

Ա.Բարսյանի և Ս.Թումանյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) քրեական դատավարության փուլային համակարգում հիմնական և վճռորոշ փուլը դատական քննությունն է: Դատական քննության փուլում են հետազոտվում

մեղադրանքի հիմքում դրված ապացույցները, և ըստ էության այդ փուլում են պատասխան տրվում քրեական գործի հիմնական՝ ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցին:

Դատական քննությունը՝ որպես քրեական դատավարության կենտրոնական փուլ, իրենից ներկայացնում է դատավարական (դատական) գործողությունների կատարման և որոշումների կայացման բարդ համակարգ, որոնք իրականացվում են քրեադատավարական օրենքով ամրագրված իրավական կանոններին համապատասխան: Նշված կանոններն իրենց ամբողջության մեջ կազմում են դատական քննության ընդհանուր պայմանները և պարտադիր են դատական քննության ողջ ընթացքում: Վերոնշյալ պայմանների նախատեսումը նպատակ է հետապնդում ապահովել քրեական դատավարության բոլոր սկզբունքների կենսագործումը՝ դրանով իսկ հասնելով արդար դատական քննության հիմնարար արժեքի անխափան իրագործմանը» (տե՛ս Արմեն Զիվանի Բաբայանի և Սուրեն Ռ-ազմիկի Թումանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ-0044/01/11 որոշման 12-րդ կետը):

21. Վերահաստատելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված և, համապատասխանաբար, *Ա.Բաբայանի* և *Ս.Թումանյանի* գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական քննության միջոցով դատարանն իրականացնում է արդարադատություն, որը նրա բացառիկ սահմանադրական իրավագործությունն է: Հետևաբար, դատական քննությունն արդարադատության իրականացման յուրահատուկ դատավարական ձև է, որի առարկան իրավական վեճն է պետության (տուժողի) և ամբաստանյալի միջև: Դատական քննությունը միտված է վերոնշյալ վեճի, ինչպես նաև դատական քննության խնդիրների լուծմանը և ավարտվում է դատավճռի կայացմամբ: Ընդ որում, դատավճիռ կայացնելով՝ դատարանը լուծում է ոչ միայն բուն դատական քննության առջև ծառայած անմիջական խնդիրները, այլև քրեական դատավարության և արդարադատության այլ խնդիրներ (կանխարգելիչ, դաստիարակչական և այլն):

Դատավճիռն արդարադատության իրականացման հիմնական ակտն է, որն իրենից ներկայացնում է կոնկրետ իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի նորմի կիրառում: Սակայն ի տարբերություն իրավակիրառման մյուս ակտերի, միայն դատավճռով է հնարավոր ամբաստանյալին մեղավոր ճանաչել և նրա նկատմամբ սահմանել պատիժ: Մյուս կողմից, եթե դատաքննության արդյունքում չի հաստատվում ամբաստանյալի մեղավորությունը, ապա դատարանը պարտավոր է կայացնել արդարացման դատավճիռ՝ ճանաչելով և հռչակելով հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի անմեղությունը՝ այն մեղադրանքով, որով նա ներգրավվել է որպես մեղադրյալ: Այլ խոսքով՝ արդարացման դատավճիռը ոչ այլ ինչ է, քան դատավարական գործունեության արդյունք, որով դատարանը փաստում է անձին ներկայացված մեղադրանքի անհիմն լինելը:

22. Արդարացման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դատարանի իրավասությունը, անշուշտ, անհրաժեշտ քրեադատավարական ինստիտուտ է, որը հնարավորություն է տալիս զերծ մնալ քրեական գործերն անտեղի դատաքննության փուլ տեղափոխելուց: Մինչդեռ, նշված հիմքով քրեական հետապնդման դադարեցումն արդեն իսկ սկսված դատաքննության պայմաններում, երբ հանցագործության փաստական հանգամանքները պարզելու նպատակով ուսումնասիրվում են ապացույցներ, արդարացված չէ և կարող է հանգեցնել ամբաստանյալի դատավարական երաշխիքների չեզոքացմանն ի համեմատ այն իրավիճակի, երբ նրա նկատմամբ կայացվեր արդարացման դատավճիռ: Խոսքը վերաբերում է օրինական ուժի մեջ մտած դատավճռի (այդ թվում՝ արդարացման) նախադատելի նշանակությանը, ինչը ենթադրում է, որ դատարանի կողմից գործով հաստատված փաստերի մասին դատավճռում արված եզրահանգումները պարտադիր են նույն հանգամանքների առնչությամբ քաղաքացիական կամ վարչական դատավարության կարգով գործեր քննող դատարանների և իրավակիրառ այլ մարմինների համար: Ավելին՝ քրեադատավարական օրենսդրությամբ առանձնակի կարգավորում է ստացել քաղաքացիական հայցով դատավճռի նշանակության խնդիրը, ըստ որի՝ նույն քաղաքացիական հայցով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը, որով հայցը մերժվել է, բացառում է քաղաքացիական հայցի հարուցումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մաս): Մինչդեռ, քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը նման հատկանիշներով օժտված չէ:

Վերոգրյալից բացի, միայն արդարացման դատավճիռը կարող է ամբողջապես ռեաբիլիտացնել ամբաստանյալին հասարակության աչքերում: Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, թեկուզև արդարացնող հիմքով, հասարակության մոտ կարող է նույնացվել անձի մեղքի «ապացուցված չլինելու» հետ, մինչդեռ դատական նիստում կայացված արդարացման դատավճիռը դատարանի հետևությունն է ամբաստանյալի անմեղության և ներկայացված մեղադրանքի հիմնագուրկ լինելու վերաբերյալ: Ուստի, Վճարելի դատարանը գտնում է, որ գործի դատաքննությունն սկսելուց հետո դատարանն ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցի լուծումը կարող է տալ բացառապես դատավճռով:

23. Ինչպես նշվել է սույն որոշման 15-րդ կետում, մեղադրանքից հրաժարվել դատախազը կարող է միայն այն դեպքում, երբ դատարանում հետազոտված փաստական տվյալների գնահատման արդյունքում գալիս է համոզման, որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով կամ 2-րդ մասով նախատեսված որևէ հիմք: Ընդ որում, քրեադատավարական օրենսդրությունը չի սահմանափակում մեղադրանքից հրաժարվելու դատախազի իրավասությունը դատական քննության փուլով, և մեղադրողը կարող է հրաժարվել մեղադրանքից ինչպես դատաքննությունն

սկսելուց հետո, այնպես էլ նախքան այդ (նման իրավիճակ հնարավոր է այն դեպքում, երբ, օրինակ՝ տեղի է ունեցել արարքի ապաքրեականացում):

Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կախված այն հանգամանքից, թե դատական քննության հատկապես որ փուլում է դատախազին արտահայտում մեղադրանքից հրաժարվելու իր կամահայտնությունը, դրա իրավական հետևանքները պետք է տարբեր լինեն: Մասնավորապես,

ա) այն դեպքում, երբ դատախազը մեղադրանքից հրաժարվում է նախքան դատաքննությունն սկսելը, դատարանը պետք է կայացնի քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում: Վճռաբեկ դատարանի վերոգրյալ դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատավճիռը՝ որպես դատավարական գործունեության արդյունք, չի կարող կայացվել դատական նիստի նախապատրաստական փուլում:

բ) այն դեպքում, երբ դատախազը մեղադրանքից հրաժարվում է դատաքննությունն սկսելուց հետո, դատարանը պետք է կայացնի արդարացման դատավճիռ, քանի որ դրա կայացումը հնարավոր է բացառապես քրեական գործն ըստ էության քննելու արդյունքում, իսկ գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում դատարանում քրեական գործի ըստ էության քննությունն սկսվում է դատաքննության փուլով:

24. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործով մեղադրանքը պաշտպանող դատախազի կողմից նախքան դատաքննությունը սկսելը մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը, սահմանափակվելով մեղադրանքից հրաժարվելու պատճառարանությունների հետազոտմամբ և դրա վերաբերյալ դատավարության այլ շահագրգիռ սուբյեկտների դիրքորոշումն ունկնդրելով, պետք է որոշում կայացնի քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 306-րդ հոդվածի 4-րդ մասով:

Այն դեպքում, երբ դատախազը մեղադրանքից հրաժարվելու մասին իր կամահայտնությունն արտահայտում է դատաքննությունն սկսելուց հետո, դատարանը պարտավոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով տվյալ դատական նիստում կայացնել արդարացման դատավճիռ:

Այս առումով Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում բողոքարեքի այն դիրքորոշման հետ, որ դատավճիռ կայացնելու համար դատարանը պետք է սպառի օրենքով նախատեսված դատական քննության բոլոր փուլերը, իսկ մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ դատախազի հայտարարությունը բացառում է գործի վարույթը շարունակելը, հետևաբար նաև դատավճիռ կայացնելը (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Դատաքննությունն իր ամբողջության մեջ դատավարական (դատական) գործողությունների կատարման և որոշումների կայացման բարդ համակարգ է, որն իրականացվում է քրեադատավարական օրենքով ամրագրված իրավական կանոններին համապատասխան՝ նպատակ ունենալով պարզել ամբաս-

տանյալին առաջադրված մեղադրանքի հիմնավորվածությունը: Այն դեպքում, երբ դատաքննության ընթացքում ի հայտ են գալիս ամբաստանյալի անմեղության մասին վկայող անհերքելի հանգամանքներ, որպիսին է նաև դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելը, դատական քննության հետագա փուլերը դառնում են առարկայազուրկ, հետևաբար դատարանը պետք է ավարտի գործի քննությունը՝ կայացնելով արդարացման դատավճիռ: Այլ խոսքով՝ արդարացման դատավճիռ կայացնելու համար դատարանը պարտավոր չէ սպառել օրենքով նախատեսված դատական քննության բոլոր փուլերը, ինչն ուղղակիորեն բխում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ մասի այն պահանջից, որ «Դատարանը պարտավոր է սույն օրենսգրքի 35-րդ հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում տվյալ դատական նիստում կայացնել արդարացման դատավճիռ»:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասը վերաբերում է բացառապես մեղադրանքից մի մասով հրաժարվելու դեպքերին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված քրեադատավարական նորմը չի նախատեսում, որ դատարանը կարող է արդարացման դատավճիռ կայացնել բացառապես այն դեպքում, երբ դատախազը մասնակիորեն է հրաժարվում մեղադրանքից, այլ ամբազրում է, որ դատախազի մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը մեղադրանքի այդ մասով կայացնում է արդարացման դատավճիռ: Այս դեպքում «մեղադրանքի այդ մասով» ձևակերպումը պետք է հասկանալ որպես ամբաստանյալին վերագրվող այն հանցավոր արարքը, որը դատախազի կարծիքով չի հաստատվել դատական քննության ընթացքում, որը կարող է լինել ինչպես ամբողջ մեղադրանքը, այնպես էլ դրա մի մասը:

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմնի կողմից Կ.Ստեփանյանին և Մ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով մեղադրանքներ են առաջադրվել այն բանի համար, որ նրանք անչափահաս Մ.Բեզլարյանի կամքին հակառակ, դանակի ցուցադրմամբ և դրանով վերջինիս սպանելու, բռնություն գործադրելու սպառնալիքով նրա հետ ունեցել են սեռական հարաբերություն (տե՛ս սույն որոշման 1-ին և 5-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանում՝ դատական վիճաբանությունների փուլում, մեղադրողը, հայտարարել է, որ քրեական գործի դատաքննության ընթացքում ի հայտ են եկել քրեական հետապնդումը բացառող բազմաթիվ հանգամանքներ, և հրաժարվել է Կ.Ստեփանյանին և Մ.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքներից (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով մեղադրանքից հրաժարվելու մասին մեղադրողի դիրքորոշումը, 2013 թվականի դեկտեմբերի 25-ին կայացրել է դատավճիռ, որով Կ.Ստեփանյանը և Մ.Հովհաննիսյանը ՀՀ քրեական

օրենսգրքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքներում արդարացվել են՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ դատարանն արդարացման դատավճիռ կայացնելով դատավարական իրավունքի նորմերի խախտումներ թույլ չի տվել, 2014 թվականի փետրվարի 25-ին որոշում է կայացրել դատախազի բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին (տե՛ս սույն որոշման 3-րդ և 8-րդ կետերը):

26. Սույն որոշման 25-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-23-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրողի կողմից դատական վիճաբանությունների փուլում մեղադրանքից հրաժարվելու պայմաններում Առաջին ատյանի դատարանը Կ.Ստեփանյանի և Մ.Հովհաննիսյանի նկատմամբ պարտավոր էր կայացնել արդարացման դատավճիռ և ոչ թե քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում:

Հետևաբար, ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական են և հիմնավորված, դրանցով քրեադատավարական օրենսդրության պահանջների խախտումներ թույլ չեն տրվել, հետևաբար բողոքը պետք է թողնել առանց բավարարման, իսկ Վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Կարեն Արարատի Ստեփանյանի և Սլյուտի Աշոտի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի փետրվարի 25-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

19.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ԵԱԶԳ/0189/01/12
Նախագահող դատավոր՝ Ա.Պետրոսյան
Դատավորներ՝ Ս.Համբարձումյան
Մ.Պետրոսյան

ԵԱԶԳ/0189/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
պաշտպան	Ս.ԶԱՂԻՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սարիբեկ Վարազդատի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հունվարի 24-ի որոշման դեմ ամբաստանյալ Ս.Հարությունյանի պաշտպան Ս.Զաղինյանի, մեղադրող Գ.Կարապետյանի և տուժողի իրավահաջորդ Մ.Կարապետյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2012 թվականի ապրիլի 19-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 14110012 քրեական գործը՝ Սարիբեկ Հարությունյանի

կողմից Ժորա Կարապետյանի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու փաստի առթիվ:

Նախաքննության մարմնի 2012 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ Ս.Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով: Նույն օրը Ս.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2012 թվականի դեկտեմբերի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 8-ի դատավճռով Ս.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 7 (յոթ) տարի ժամկետով: Նշանակված պատժի սկիզբը հաշվվել է 2012 թվականի ապրիլի 27-ից, իսկ Ս.Հարությունյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Նույն օրն Առաջին ատյանի դատարանը կայացրել է լրացուցիչ որոշում՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի ուշադրությունը հրավիրելով քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում թույլ տրված խախտումների և բացթողումների վրա՝ դրանք վերացնելու և հետագայում նման խախտումներ թույլ չտալու նպատակով համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

3. Պաշտպանների վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հունվարի 24-ին որոշում է կայացրել բողոքները բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 8-ի դատավճիռը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 24-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Ս.Հարությունյանի պաշտպան Ս. Ջաղինյանը, մեղադրող Գ.Կարապետյանը և տուժողի իրավահաջորդ Մ.Կարապետյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ս.Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2012 թվականի ապրիլի 17-ին՝ ժամը 24-ի սահմաններում, Երևան քաղա-

քի Արաբկիր 19 փողոցի 14 տան դիմացի հատվածում թղթախաղի ժամանակ խաղաքարտեր դասավորելու պատճառով առաջացած վիճաբանության ժամանակ Ժորա Կարապետյանի առողջությանը ծանր մարմնական վնասվածք հասցնելու դիտավորությամբ ձեռքով հարվածներ է հասցրել և ծեծի ենթարկել նրան՝ պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ, որոնք արտահայտվել են վերին շրթունքի աջ կեսի շրջանում արյունազեղման և սալջարդ վերքի, աջ ականջախեցու աղեղի վերին երրորդի շրջանում քերծվածքի, ձախ քունքա-կողմնային շրջանում՝ գլխի մաշկի տակ արյունազեղման, ձախ քունքամկանի արյունազեղման, գանգի թաղի՝ փակ քունքոսկրի և կողմնոսկրերի կոտրվածքների, ձախ քունքային շրջանում վերկարծրենային արյունահավաքի, գլխուղեղի կիսագնդերի և ուղեղիկի սուբարախորհիդալ բազմաթիվ խոշորօջախային և տարածուն արյունազեղումների, ուղեղի փորոքներում հեղուկ արյան ձևով, որոնք առաջացրել են գլխուղեղի կարևորագույն ֆունկցիաների խանգարում՝ գլխուղեղային փակ, բութ վնասվածք՝ անզգուշությամբ առաջացնելով Ժ.Կարապետյանի մահը (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 299):

6. Նախաքննության մարմնի «Դատաբժշկական կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին» 2012 թվականի օգոստոսի 15-ի որոշման համաձայն՝ «(...) *քննիչ Ա.Վարդանյան, (...) որոշեցի [թ]իվ 14110012 քրեական գործով նշանակել կրկնակի դատաբժշկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ ԴԲԳԳ Կենտրոնի փորձագետներին (...)*» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 248-249) :

7. Նախաքննության մարմնի «Փորձաքննություն նշանակելու որոշմանը ծանոթացնելու մասին» 2012 թվականի օգոստոսի 21-ի արձանագրության համաձայն՝ «*Ես՝ Արաբկիրի քննչական բաժնի քննիչ (...) Ա.Ս.Վարդանյան (...)* կրկնակի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը ծանոթացրեցի մեղադրյալ Սարիբեկ Վարազդարի Հարությունյանին և միաժամանակ պարզաբանեցի, որ համաձայն ՀՀ քրեական դատախազության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործով փորձաքննություն նշանակելիս և կատարելիս նա իրավունք ունի (...):

Որոշմանը ծանոթանալուց հետո մեղադրյալ Ս.Հարությունյանը հայտարարեց. պաշտպան Ս.Ջաղինյանը լիազորված է իմ փոխարեն հարուցելու միջնորդություններ և հանդես գալու իմ անունից, հարցաքննելու և հարցեր ուղղելու փորձագետներին և մասնակցելու անհրաժեշտության դեպքում կատարվող փորձաքննություններին կամ հայտնելու բացարկներ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 32):

8. Դատաբժշկական փորձագետների 2012 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 155/հձ եզրակացության համաձայն՝ «(...) *Դատաբժշկական փորձագիտական հանձնաժողով[ը], հետևյալ կազմով, նախագահ Գ.Կ.Հարությունյան՝ ԴԲԳԳԿ-ի կազմերոջ բաժնի վարիչ, բ.գ.թ., դոց., (...), անդամներ՝ Ս.Ա.Եղունյան՝ ԱՆ գլխավոր նյարդավիրաբույժ, «Էրեբունի» ԲԿ-ի նյարդավիրաբու-*

ժուրյան կլինիկայի ղեկավար, ք.գ.դ., պրոֆ. և գործով զեկուցող Ի.Ֆ.Մելքոնյան՝ ԴԲԳԳԿ-ի փորձագետ, թիվ 14110012 քր. գործի նյութերով կատարվել է փորձաքննություն ժորա Միսակի Կարապետյանի մահվան փաստի վերաբերյալ: Փորձագետի իրավունքները և պարտականությունները, որոնք նախատեսված են քր. դատ. օր. 85-րդ հոդվածով, բացատրված են: Ակնհայտ կեղծ եզրակացություն տալու պարտասխանարվության մասին, որը նախատեսված է քր. օր. 338-րդ հոդվածով, նախազգուշացված են: Փորձագետ(ներ)՝ [սարդարություններ]» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 162):

2012 թվականի նոյեմբերի 13-ին կրկնակի դատաբժշկական փորձաքննության թիվ 155/հձ եզրակացությանը ծանոթացել են մեղադրյալ Ս.Հարությունյանը և նրա պաշտպան Ս.Ջաղինյանը (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 192):

9. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 6-ի դատական նիստում փորձագետ Գ.Հարությունյանն իր ցուցմունքում նշել է. «(...) [իմ ձեռքի տակ է եղել] քրեական գործը, (...) քրեական գործը մանրամասն կարդացել եմ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, դատական նիստի արձանագրման համառոտագրում և լազերային սկավառակ, թերթ 74-77):

10. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Առաջադրված մեղադրանքի բովանդակությունից երևում է, որ Ս.Հարությունյանը ձեռքով մեկից ավելի վնասվածքներ է հասցրել Ժ.Կարապետյանին: Այսինքն Ս.Հարությունյանին վերագրվել է մեկից ավելի վնասվածքների պարճառման մեղադրանք:

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Ս.Հարությունյանը մեկից ավելի վնասվածքներ է հասցրել Ժ.Կարապետյանին: Այսինքն՝ որպես մեղադրյալ ներգրավելու որոշման, այնուհետև մեղադրական եզրակացության մեջ զերեղված այն ձևակերպումը, որ Սարիբեկ Հարությունյանը «... ժորա Միսակի Կարապետյանի առողջությանը ծանր մարմնական վնասվածքներ հասցնելու դիրավորությամբ ձեռքով հարվածներ է հասցրել և ծեծի ենթարկել նրան...», որևէ ապացույցով հաստատված չէ:

(...) Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, քանի որ ամբաստանյալ Ս.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել նախաքննության մարմնի կողմից մեղաազրված արարքում, այն է՝ Ժ.Կարապետյանի առողջությանը ծանր մարմնական վնասվածքներ հասցնելու համար, ինչի վերաբերյալ գործում առկա չէ որևէ ապացույց, այսինքն՝ նրա մեղավորության մասին Առաջին ատյանի դատարանի հետևությունը հիմնված է լոկ ենթադրության վրա:

(...) ՀՀ ԱՆ ԴՓԳԿ-ի կողմից 29.09.2012թ. տրվել է թիվ 155/հձ եզրակացությունը: Սույն փորձաքննության կատարմանը մասնակցել է ԱՆ գլխավոր նյարդավիրաբույժ, «Էրեբունի» ԲԿ նյարդավիրաբուժության կլինիկայի ղեկավար, ք.գ.դ. պրոֆեսոր Մ. Ա. Եղունյանը: Փորձագիտական հիմնարկում կատարվել է ոչ թե կրկնակի, այլ հանձնաժողովային փորձաքննություն:

(...) [Թ]իվ 155/հչ եզրակացությունից երևում է, որ փորձաքննությանը մասնակցել է Կոլյալ փորձագիտական հիմնարկի փորձագետ չհանդիսացող մեկ այլ անձ, ով ընդհանրապես փորձագետ չի հանդիսանում, քննիչի կողմից որպես փորձագետ չի նշանակվել և չի նախագուշակվել եզրակացություն փայլուց հրաժարվելու, խուսափելու կամ ակնհայտ կեղծ եզրակացություն փայլու համար սահմանված պարամետրերի վրայից մասին:

(...) [Վ]երոնշյալ փորձաքննությունը կարարվել է ՀՀ քրեական դատարանի օրենսգրքի 248-րդ հոդվածով սահմանված կարգի էական խախտմամբ, քանի որ դրան մասնակցել է Կոլյալ փորձագիտական հիմնարկի փորձագետ չհանդիսացող մեկ այլ անձ, ով նաև փորձագետ չի հանդիսանում:

Բացի այդ, խախտվել է ՀՀ քրեական դատարանի օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ փորձագետին բացարկ հայտնելու մեղադրյալի իրավունքը:

(...) [Գ]ործի նյութերում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ քրեական գործի նյութերը փրամադրվել են փորձագիտական հանձնաժողովին և այնուհետև հետ են վերադարձվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը հանգում է այն համոզման, որ ՀՀ ԱՆ ԴՓԳԿ-ի կողմից 29.09.2012թ. փրկված թիվ 155/հչ եզրակացությունը պետք է համարել որպես ապացույց չթույլատրվող նյութ:

(...) Վերաքննիչ դատարանը գրկում է, որ Սարիբեկ Հարությունյանի և Չավեն Մելքոնյանի առերես հարցաքննության արձանագրությունը որպես անթույլատրելի ապացույց ճանաչելու մասին Առաջին արյանի դատարանի հերևություններն անհիմն են հերևյալ պարճառարանությանը:

(...) [Թ]եև բառի բուն իմաստով վերը նշված անչանց ցուցմունքների միջև առկա չի եղել էական հակասություն, սակայն Վերաքննիչ դատարանը կարևորում է այն փաստը, որ սույն գործի նախաքննության ընթացքում Ս.Հարությունյանը հանդիսացել է մեղադրյալ, և ՀՀ քրեական դատարանի օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ ենթակետի համաչայն՝ նա իրավունք ուներ հարցաքննվել իր դեմ վկայած անչանց հետ, իսկ Ս.Հարությունյանի և Չ.Մելքոնյանի միջև կարարված առերեսումը եղել է միակ հնարավորությունը, երբ Ս.Հարությունյանը հարցաքննվել է իր դեմ վկայած անչի՝ Չավեն Մելքոնյանի հետ, քանի որ վերջինիս դատարանության ընթացքում հնարավոր չի եղել հարցաքննել՝ մահանալու պարճառով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը գրկում է, որ Սարիբեկ Հարությունյանի և Չավեն Մելքոնյանի առերես հարցաքննությունը կարարվել է ՀՀ քրեական դատարանի օրենսգրքի սահմանված պահանջների պահպանմամբ, և այն պետք է համարել թույլատրելի ապացույց:

Առաջին արյանի դատարանը դատարանում մեջբերել է գործով միակ ականարես Չավեն Մելքոնյանի ցուցմունքը, ըստ որի՝ վերջինս տեսել է, թե ինչպես Ս.Հարությունյանը բռունցքով ուժգին հարված է հասցրել Ժ.Կարապետյանի գլխի շախ հարվածին՝ ականջի մոտ:

(...) Ինչպես բացատրությամբ, այնպես էլ իր բոլոր վեց ցուցմունքներում նա երբևէ չի հայտնել, որ «... տեսել է, թե ինչպես Ս.Հարությունյանը բռունցքով ուժգին հարված է հասցրել Ժ.Կարապետյանի գլխի շախ հարվածին՝ ականջի մոտ...»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Ս.Հարությունյանի կողմից Ժ.Կարապետյանի գլխի շախ հարվածին բռունցքով հարված հասցնելու մասին Առաջին արյանի դատավճռում, Չ.Մելքոնյանի ցուցմունքներում զերեղված ձևակերպումը նույնպես ենթադրություն է, ինչը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի/Անմեղության կանխավարկածը/ պահանջների խախտմանը: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 70-98):

3. Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջները

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքո-հիշյալ հիմնավորումներով.

11. Մեղադրող Գ.Կարապետյանն իր վճռաբեկ բողոքում փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են և չեն բխում քրեական գործում առկա ապացույցներից: Մասնավորապես, քրեական գործի նյութերից չբխող և անհիմն են.

ա) Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ գործում առկա չէ որևէ ապացույց Ս.Հարությունյանի կողմից Ժ.Կարապետյանին մեկից ավելի վնասվածքներ հասցնելու վերաբերյալ:

Ըստ բողոքաբերի՝ նախաքննությամբ և դատաքննությամբ հիմնավորվել է, որ գործով վկա Չ.Մելքոնյանն իր տնից դուրս է եկել՝ արդեն իսկ սկսված վիճաբանության ձայներ լսելով, և ականատես է եղել Ս.Հարությունյանի կողմից Ժ.Կարապետյանին հասցված վերջին հարվածին, և որ Ժ.Կարապետյանի մարմնի վրա մինչև Ս.Հարությունյանի հետ առանձնաճանալն ընդհանրապես մարմնական վնասվածքներ չեն եղել, առանձնաճանալուց հետո նրանց որևէ մեկը չի մոտեցել, իսկ Չ.Մելքոնյանի՝ վիճաբանությանն ականատես լինելու պահին Ս.Հարությունյանը և Ժ.Կարապետյանը եղել են միայնակ:

բ) Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ Չ.Մելքոնյանի ցուցմունքներում զետեղված՝ Ս.Հարությունյանի կողմից Ժ.Կարապետյանի գլխի ձախ հատվածին բռունցքով հարված հասցնելու վերաբերյալ ձևակերպումը ենթադրություն է:

Բողոքաբերի կարծիքով՝ թեև Չ.Մելքոնյանի ցուցմունքներում տառացի նման արտահայտություն առկա չէ, բայց վերոնշյալ հանգամանքը հիմնավորվում է տարբեր ժամանակահատվածներում վկայի կողմից տրված ցուցմունքներով:

գ) Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ փորձագիտական հիմնարկում կատարվել է ոչ թե կրկնակի, այլ հանձնաժողովային փորձաքննություն:

Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 245-րդ հոդվածի դրույթները՝ բողոքաբերը նշել է, որ բարդ կամ կրկնակի փորձաքննությունները կարող են կատարվել միանձնյա կամ մույն մասնագիտությամբ փորձագետների հանձնաժողովի կողմից:

դ) Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ դատաբժշկական փորձաքննության թիվ 155/հձ եզրակացությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ուժով պետք է համարել անթույլատրելի ապացույց, նախ այն պատճառով, որ փորձաքննությանը մասնակցել է տվյալ փորձագիտական հիմնարկի փորձագետ չհանդիսացող մեկ այլ անձ, ինչն ըստ ստորադաս դատարանի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 248-րդ հոդվածով սահմանված կարգի խախտում է, ինչպես նաև այն հիմնավորմամբ, որ քրեական գործի նյութերը փորձագիտական հանձնաժողովին տրամադրելու կապակցությամբ գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց:

Բողոքաբերի համոզմամբ կրկնակի հանձնաժողովային փորձաքննությունների կարգի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 248-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը բաց է, քանի որ հաշվի չեն առնվում այն դեպքերը, երբ փորձագիտական հիմնարկում համապատասխան նեղ մասնագետի բացակայության պայմաններում փորձագետ է հրավիրվում այլ հիմնարկից, ինչպես նաև կարգավորված չէ հրավիրված մասնագետին քննիչի կողմից իրավունքների և պարտականությունների պարզաբանման անհրաժեշտության հարցը: Նկարագրված իրավիճակում պետք է ղեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին մասի այն կարգավորմամբ, որի համաձայն՝ փորձագետը նշանակվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը համապատասխան՝ փորձագիտական հաստատության ղեկավարի կողմից: Վերջինս էլ փորձագետին ծանոթացնում է իր իրավունքներին և պարտականություններին ու նախազգուշացնում կեղծ եզրակացություն տալու համար օրենքով նախատեսված պատասխանատվության մասին:

Բողոքի հեղինակը կարծիք է հայտնել նաև, որ Վերաքննիչ դատարանը ճիշտ եզրահանգման է եկել այն առումով, որ Ս.Հարությունյանի և Չ.Մելքոնյանի առերես հարցաքննությունը կատարվել է քրեադատավարական օրենսդրության պահանջների պահպանմամբ, հետևաբար այն պետք է համարել թույլատրելի ապացույց:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ մեղադրողը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 24-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 8-ի դատավճռին՝ Ս. Հարությունյանի և Չ.Մելքոնյանի առերեսման արձանագրությունը ճանաչելով որպես թույլատրելի ապացույց:

13. Տուժողի իրավահաջորդ Մ.Կարապետյանն իր վճռաբեկ բողոքում նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի դատարանի դատա-

կան ակտի բեկանումը դուրս է որևէ տրամաբանությունից, քանի որ այդ դատավճռով ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը՝ ազատագրելու մ 7 տարի ժամկետով, բավականին մեղմ է, և դատական ակտը պետք է առնվազն թողնվեր անվիտիոյս:

Բողոքաբերը փաստարկել է նաև, որ խախտվել են իր իրավունքները, քանի որ նա, հանդիսանալով տուժողի իրավահաջորդ, Վերաքննիչ դատարանի կողմից չի ծանուցվել և ներկա չի գտնվել դատական նիստերին՝ գրկված լինելով իր տեսակետը և առարկությունները ներկայացնելու հնարավորությունից:

14. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տուժողի իրավահաջորդը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 24-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 8-ի դատավճռին:

15. Պաշտպան Ս.Ջաղինյանն իր վճռաբեկ բողոքում նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի, 398-րդ հոդվածի պահանջների խախտումներ:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից և գնահատման է ենթարկել Առաջին ատյանի դատարանի կողմից որպես անթույլատրելի ապացույց ճանաչված՝ Ս.Հարությունյանի և Ջ.Մելքոնայնի առերես հարցաքննության արձանագրությունը, որը չի վիճարկվել ներկայացված վերաքննիչ բողոքում:

Բացի այդ, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է իր կողմից փաստարկված խախտումները՝ կապված Ս.Հարությունյանի դատավարական իրավունքների ոտնահարման, նախնական քննության մարմինների անօրինական գործողությունների և անգործության, դատարանի կողմից պաշտպանության կողմի միջնորդությունների անհիմն մերժման հետ, և անդրադարձել է միայն դրանցից մեկին՝ դատաբժշկական փորձաքննության եզրակացության վիճարկմանը՝ փաստելով, որ այն հիմնավոր է:

16. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ պաշտպանը խնդրել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 24-ի որոշումը և բեկանված մասով գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապացույց ձեռք բերելիս թույլ տրված քրեադատավարական խախտումների հետևանքների, ինչպես նաև առերես հարցաքննությունը որպես անձի հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքի ապահովման միջոց դիտարկելու հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

1. Դատարժեղական կրկնակի փորձաքննության եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելը.

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նախ անդրադառնալ մեղադրողի բարձրացրած իրավական այն հարցին, թե հիմնավորվա՞ծ են արդյոք թիվ 155/հձ կրկնակի դատարժեղական փորձաքննության եզրակացությունն անթույլատրելի ապացույց ճանաչելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝

(...)

5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ.

(...):

2. Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների գրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա»:

Ապացույցների թույլատրելիության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *ԱՍարգյսյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) որպես քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները պարզելու միջոց կարող են օգտագործվել միայն այնպիսի ապացույցներ, որոնք չենք են բերվել, ամրագրվել և գործին կցվել են քրեադատավարական օրենքով սահմանված և թույլատրելի համարվող կարգով: Ապացույցների չեղարկման և ամրագրման թույլատրելիությունը կարգավորող նորմերից հետևում է, որ որպես ապացույց չեն կարող օգտագործվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ չենք բերված փաստական տվյալները, հարկապես եթե դրանք իրենց հերթին հանգեցրել են դատավարության մասնակիցների իրավունքների էական խախտման, ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա: (...)» (տե՛ս

Արմեն Սեյրանի Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵՔԲԳ/0295/01/08 որոշման 15-րդ կետը):

20. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված օրենսդրական դրույթները վերլուծելով *Ա.Սարգսյանի* գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցների ձեռքբերման գործընթացում էական չեն կարող համարվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի այն խախտումները, որոնցով չեն սահմանափակվել դատավարության մասնակիցների՝ օրենքով երաշխավորված իրավունքները կամ այդ իրավունքներից նրանք չեն զրկվել, ինչպես նաև այն խախտումները, որոնք ստացված փաստական տվյալների հավաստիության վրա չեն ազդել կամ չէին կարող ազդել: Այլ խոսքով՝ քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման ժամանակ թույլ տրված քրեադատավարական օրենսդրության խախտումները պետք է գնահատվեն՝ ելնելով դրանց բնույթից, ծանրությունից և վերոնշյալ գործողությունների արդյունքում ստացված ապացուցողական նյութի որակի և հավաստիության վրա դրանց ազդեցության աստիճանից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապացույցն անթույլատրելի ճանաչելը՝ որպես իրավական հետևանք, պետք է տեղի ունենա միայն քրեադատավարական օրենսդրության էական խախտման առկայության պարագայում: Հակառակ դեպքում ապացույցների թույլատրելիության հարցին կցուցաբերվի ձևական մոտեցում, ինչն էլ կհանգեցնի ապացուցողական նյութի անտեղի կորստի:

21. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Փորձագետը քրեական գործով շահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձաքննություն նշանակելու մասին որոշման համապատասխան՝ նշանակում է փորձագիտական հաստատության ղեկավարը՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում իր հատուկ գիտելիքներն օգտագործելով գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացություն տալու համար: Փորձագետը կարող է նշանակվել դատավարության մասնակցի առաջարկած անձանցից»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 245-րդ հոդվածի համաձայն՝

«1. Բարդ կամ կրկնակի փորձաքննությունները կարող են կատարվել միանձնյա կամ նույն մասնագիտությամբ փորձագետների հանձնաժողովի կողմից: Կողմի պահանջով փորձագետների հանձնաժողովի կազմում կարող է ընդգրկվել իր կողմից հրավիրված փորձագետը (...):

2. Հանձնաժողովային փորձաքննություն կատարելու մասին որոշումը պարտադիր է փորձագիտական հիմնարկի ղեկավարի համար: Եթե փորձաքննության կատարումը հանձնարարված է փորձագիտական հիմնարկին՝ առանց հանձնաժողովային փորձաքննության պահանջի, ապա նրա ղեկավարն իրավասու է կազմակերպել հանձնաժողովային փորձաքննության կատարումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 248-րդ հոդվածի համաձայն՝
«1. Զննիչը փորձաքննություն նշանակելու մասին իր կայացրած որոշումը, հետազոտման օբյեկտը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև քրեական գործն ուղարկում է փորձագիտական հիմնարկի ղեկավարին: Փորձաքննության կատարմանը մասնակցում է այն փորձագետը, որը նշված է որոշման մեջ: Եթե որոշման մեջ կոնկրետ փորձագետ նշված չէ, ապա փորձագիտական հիմնարկի ղեկավարը պետք է որոշի, թե տվյալ փորձագիտական հիմնարկի որ փորձագետն է կատարելու փորձաքննությունը:

2. Փորձագիտական հիմնարկի ղեկավարը փորձագետին ծանոթացնում է սույն օրենսգրքի 85 հոդվածով նախատեսված նրա իրավունքներին ու պարտականություններին, նախազգուշացնում է եզրակացություն տալուց հրաժարվելու, խուսափելու կամ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին, կազմակերպում է փորձաքննության կատարումը, սակայն իրավունք չունի փորձագետին տալ ցուցումներ, որոնք կանխորոշում են հետազոտությունների ընթացքը և հետևությունների բովանդակությունը:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կրկնակի փորձաքննությունը կատարվում է, երբ փորձագետի եզրակացությունը հիմնավորված չէ կամ կասկած է հարուցում, կամ ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվել է ոչ հավաստի կամ խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները: Կրկնակի փորձաքննության կատարումը հանձնարարվում է ուրիշ փորձագետի: Կրկնակի փորձաքննություն նշանակելիս փորձագետի առջև կարող է դրվել նախկին հետազոտությունների ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության հարցը: Կրկնակի փորձաքննություն կատարելու մասին որոշման մեջ պետք է նշվեն նախկին փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնվելու շարժառիթները: (...)»:

Մեջբերված քրեադատավարական նորմերի համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փորձագետը նշանակվում է վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձագիտական հաստատության ղեկավարի կողմից՝ վարույթն իրականացնող մարմնի կայացրած որոշման մեջ նշված անձանցից, իսկ այդպիսիք նշված չլինելու դեպքում՝ տվյալ փորձագիտական հիմնարկի փորձագետներից: Ինչ վերաբերում է կրկնակի փորձաքննություններին, ապա դրանք կարող են կատարվել այն դեպքերում, երբ սկզբնական եզրակացությունը հիմնավորված չէ, կասկած է հարուցում, ոչ հավաստի են ճանաչվել դրա համար հիմք հանդիսացող սպացույցները, ինչպես նաև երբ խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները: Ընդ որում, կրկնակի փորձաքննություն կատարելու որոշման մեջ պետք է նշվեն սկզբնական փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնվելու շարժառիթները, իսկ դրա կատարումը պետք է հանձնա-

րարվի այլ փորձագետի: Բացի այդ, կրկնակի փորձաքննությունները կարող են կատարվել հանձնաժողովի կողմից, որի կազմակերպման իրավասությամբ, անգամ հանձնաժողովային փորձաքննության ուղղակի պահանջի բացակայության դեպքում, օժտված է փորձագիտական հիմնարկի ղեկավարը: Վերջինս էլ փորձագետին, իսկ հանձնաժողովային փորձաքննության կատարման դեպքում՝ փորձագետներին ծանոթացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված իրավունքներին ու պարտականություններին, նախազգուշացնում է եզրակացություն տալուց հրաժարվելու, խուսափելու կամ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին:

22. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2012 թվականի օգոստոսի 15-ին վարույթն իրականացնող մարմնի կողմից նշանակվել է կրկնակի դատաբժշկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի (այսուհետ նաև՝ ՀՀ ԱՆ ԴԲԳԳԿ) փորձագետներին: Ընդ որում, կրկնակի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ չեն նշվել այն անձինք, որոնք պետք է իրականացնեն տվյալ փորձաքննությունը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Կրկնակի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը վարույթն իրականացնող մարմինը ծանոթացրել է մեղադրյալ Ս.Հարությունյանին և պարզաբանել նրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները: Որոշմանը ծանոթանալուց հետո մեղադրյալ Ս.Հարությունյանը հայտարարել է, որ լիազորում է պաշտպան Ս.Ջաղինյանին մասնակցել տվյալ փորձաքննությանը, անհրաժեշտության դեպքում հարցեր ուղղել փորձագետներին, հայտնել բացարկներ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Կրկնակի դատաբժշկական փորձաքննության արդյունքում դատաբժշկական հանձնաժողովը՝ մասնակցությամբ ՀՀ ԱՆ ԴԲԳԳԿ-ի փորձագետներ Գ.Հարությունյանի, Ի.Մելքոնյանի և ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր նյարդավիրաբույժ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի նյարդավիրաբուժության կլինիկայի ղեկավար Մ.Եղունյանի, 2012 թվականի սեպտեմբերի 29-ին կայացրել է Ժ.Կարապետյանի մահվան փաստի վերաբերյալ թիվ 155/հձ եզրակացությունը. միաժամանակ վերոնշյալ փորձագետները ստորագրությամբ հաստատել են, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված իրենց իրավունքներն ու պարտականությունները պարզաբանված են, ինչպես նաև իրենք նախազգուշացված են ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար նախատեսված պատասխանատվության մասին:

Կրկնակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությանը ծանոթացվել են մեղադրյալ Ս.Հարությունյանը և նրա պաշտպան Ս.Ջաղինյանը, ովքեր փորձագետներին բացարկ հայտնելու վերաբերյալ որևէ դիրքորոշում չեն հայտնել (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը թիվ 155/հձ եզրակացությունը ճանաչել է անթույլատրելի ապացույց հետևյալ հիմնավորմամբ.

ա) փորձաքննությունը կատարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 248-րդ հոդվածով սահմանված կարգի էական խախտմամբ, քանի որ դրան մասնակցել է տվյալ փորձագիտական հիմնարկի փորձագետ չհանդիսացող մեկ այլ անձ, ով ընդհանրապես փորձագետ չի հանդիսանում, քննիչի կողմից որպես փորձագետ չի նշանակվել և չի նախագրուշացվել եզրակացություն տալուց հրաժարվելու, խուսափելու կամ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին,

բ) խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ փորձագետին բացարկ հայտնելու մեղադրյալի իրավունքը,

գ) գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ քրեական գործի նյութերը տրամադրվել են փորձագիտական հանձնաժողովին և այնուհետև հետ են վերադարձվել,

դ) քննիչի կողմից նշանակվել է կրկնակի փորձաքննություն, մինչդեռ փորձագիտական հիմնարկում կատարվել է հանձնաժողովային փորձաքննություն (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

23. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները վերլուծելով սույն որոշման 19-21-րդ կետերում շարադրված օրենսդրական դրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով կրկնակի դատաբժշկական փորձաքննությունը կատարվել է ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր նյարդավիրաբույժ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի նյարդավիրաբուժության կլինիկայի ղեկավար, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Եղունյանի մասնակցությամբ, ով վարույթն իրականացնող մարմնի որոշման մեջ նշված փորձագիտական հիմնարկի՝ ՀՀ ԱՆ ԴԲԳԳԿ-ի փորձագետ չի հանդիսացել, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 248-րդ հոդվածի պահանջների խախտում է: Միաժամանակ Վճարելի դատարանը գտնում է, որ վերոնշյալ խախտումը չի կարող համարվել էական, քանի որ դա իր հերթին չի հանգեցրել դատավարության մասնակիցների՝ օրենքով երաշխավորված իրավունքների սահմանափակման կամ այդ իրավունքներից զրկելուն կամ որևէ այլ կերպ չի ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա: Մ.Եղունյանը փորձագետ է նշանակվել փորձագիտական հիմնարկի ղեկավարի կողմից, նրան պարզաբանվել են իր իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նա տեղեկացվել է ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին:

Նախաքննության մարմինը կրկնակի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ չի նշել այն անձանց, որոնք պետք է իրականացնեն փորձաքննությունը: Տվյալ որոշմանը ծանոթացվել է Ս.Հարությունյանը, ով հայտարարել է, որ լիազորում է իր պաշտպանին մասնակցել փորձաքննությանը, անհրաժեշտության դեպքում հարցեր տալ փորձագետներին, հայտնել բացարկներ: Այնուհետև, վարույթն իրականացնող մարմինը պաշտպանի

ներկայությամբ ծանոթացրել է Ս.Հարությունյանին կրկնակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությանը: Այսինքն՝ պաշտպանության կողմը, Մ.Եղունյանին բացարկ հայտնելու իրական հնարավորություն ունենալով, չի օգտվել իր իրավունքից, հետևաբար անհիմն են Վերաքննիչ դատարանի պնդումներն այն մասին, որ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ փորձագետին բացարկ հայտնելու մեղադրյալի իրավունքը:

Քրեական գործի նյութերը փորձագիտական հանձնաժողովին տրամադրված չլինելու հետ կապված Վերաքննիչ դատարանի դատողությունները նույնպես հիմնազուրկ են և հերքվում են քրեական գործում առկա փաստական տվյալներով, մասնավորապես, քննության առարկա փորձագիտական եզրակացության մեջ առկա ձևակերպմամբ առ այն, որ «թիվ 14110012 քրեական գործի նյութերով կատարվել է փորձաքննություն Ժ. Կարասպետյանի մահվան փաստի վերաբերյալ», ինչպես նաև Առաջին ատյանի դատարանում փորձագետ Գ.Հարությունյանի տված ցուցմունքով այն մասին, որ նա ձեռքի տակ ունեցել է քրեական գործը, դրան մանրամասն ծանոթացել է (տե՛ս սույն որոշման 8-9-րդ կետերը):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դատողություններն այն մասին, որ դատաբժշկական փորձագետների եզրակացությունն անթույլատրելի ապացույց է, քանի որ կատարվել է ոչ թե կրկնակի, այլ հանձնաժողովային փորձաքննություն, անհիմն են և չեն բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 245-րդ հոդվածի տրամաբանությունից: Մասնավորապես, նշված հոդվածից բխում է, որ կրկնակի փորձաքննությունները, անգամ հանձնաժողովային փորձաքննության ուղղակի պահանջի բացակայության դեպքում, կարող են կատարվել հանձնաժողովի կողմից, որի կազմակերպման իրավասությամբ օժտված է փորձագիտական հիմնարկի ղեկավարը, ինչն էլ տվյալ դեպքում իրականացվել է:

24. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հանգամանքը, որ սույն գործով կրկնակի դատաբժշկական փորձաքննությունը կատարվել է Մ.Եղունյանի մասնակցությամբ, ով վարույթն իրականացնող մարմնի որոշման մեջ նշված փորձագիտական հիմնարկի փորձագետ չի հանդիսացել, դատավարական գործողության կատարման կարգի էական խախտում չի հանդիսանում, քանի որ չի հանգեցրել դատավարության մասնակիցների՝ օրենքով երաշխավորված իրավունքների սահմանափակման կամ այդ իրավունքներից զրկելուն կամ որևէ այլ կերպ չի ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

Հետևաբար, թիվ 155/հձ կրկնակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը որպես անթույլատրելի ապացույց ճանաչելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնազուրկ են և չեն բխում գործի նյութերից:

II. Առերևանս իրավաչափությունն այն պայմաններում, երբ մեղադրյալը (կասկածյալը) հրաժարվում է ցուցմունք տալուց.

25. Սույն գործով մեղադրողի կողմից բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. իրավաստ՞ի է արդյոք նախաքննության մարմինն առերես հարցաքննություն կատարել վկայի և մեղադրյալի (կասկածյալի) միջև այն պայմաններում, երբ վերջինս, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, հրաժարվում է ցուցմունք տալուց:

26. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչ-յուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները. (...),

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, կիրառելով և մեկնաբանելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3 (դ) ենթակետը, եկել է այն ընդհանուր հետևության, որ եթե մեղադրյալին դատավարության որևէ փուլում հնարավորություն չի տրվել հարցեր ուղղելու իր դեմ ցուցմունք տված անձին, ապա նա զրկվում է արդար դատաքննության իրավունքից (տե՛ս Ունտերպերտինգերն ընդդեմ Ավստրիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 9120/80, 31-33-րդ կետեր): Անձի դատապարտումը չի կարող ամբողջապես կամ վճռական չափով հիմնվել այնպիսի անձի հայտնած տվյալների վրա, որին հարցեր ուղղելու համարժեք հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել (տե՛ս Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (թիվ 1) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2001 թվականի հուլիսի 17-ի վճիռը, գանգատներ թիվ 29900/96 և այլն, 65-րդ կետ):

Ունտերպերտինգերի և Սադակի գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները ոչ թե կոնկրետ գործի փաստերով պայմանավորված դատողություններ են, այլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն նախադեպային պրակտիկայի արտահայտություն, որոնք բազմիցս վերահաստատվել ու կիրառվել են (տե՛ս Հուլկի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003 թվականի հունիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 28490/95, 53-54-րդ կետեր, Գոսսան ընդդեմ Լեհաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի հունվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 47986/99, 54-55-րդ կետեր, Բալսիտե-Լիդեիկյենեն ընդդեմ Լիտվայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 72596/01, 86-րդ կետ, Չական ընդդեմ Ալբանիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 44023/02, 102-րդ կետ, և այլն):

Հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու իրավաչափության հար-

ցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հ.Սահակյանի գործով որոշման մեջ (տե՛ս *mutatis mutandis* Համայակ Ջալիկոյի Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԳ/0212/01/10 որոշման 22-24-րդ կետերը):

27. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունում արդար դատաքննության հիմնարար իրավական արժեքի բաղադրատարրերից է պաշտպանության կողմի իրավունքը հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) ենթարկել մեղադրական բովանդակությամբ ցուցմունք տված վկաներին: Ընդ որում, նշված իրավունքի իրացման համար անհրաժեշտ է, որպեսզի պաշտպանության կողմին արվի մեղադրյալի դեմ հանդես եկած անձանց ցուցմունքները վարույթի որևէ փուլում վիճարկելու, նրան հարցաքննելու համարժեք և պատշաճ հնարավորություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդհանուր առմամբ բովանդակում է պաշտպանության կողմի հակընդդեմ հարցման իրավունքը նաև նախաքննության փուլում կենսագործելու համար անհրաժեշտ իրավական մեխանիզմներ: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քննիչն իրավունք ունի կատարել նախօրոք հարցաքննված երկու այն անձանց առերեսում, որոնց ցուցմունքներում էական հակասություններ կան: Քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի և մեկ այլ անձի ցուցմունքներում»:

Մեջբերված քրեադատավարական նորմի, ինչպես նաև առերես հարցաքննության անցկացման կարգը սահմանող այլ դրույթների համադրված վերլուծությունից ակնհայտ է, որ առերեսումը քննչական գործողություն է, որի առաջնային նպատակը ապացույց ձեռք բերելն է այն պայմաններում, երբ առկա են էական հակասություններ երկու անձանց ցուցմունքների միջև: Մյուս կողմից, սակայն, առերեսումը նախաքննության փուլում միակ դատավարական միջոցն է, որի օգնությամբ վարույթն իրականացնող մարմինը կարող է հնարավորություն տալ անձին վիճարկել իր դեմ արված ցուցմունքները՝ դրանով իսկ ապահովելով պաշտպանության կողմի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3 (դ) ենթակետով երաշխավորված իրավունքը: Այլ խոսքով՝ առերես հարցաքննությունն իրականացվում է ոչ միայն գործով ճշմարտությունը բացահայտելու նպատակով, այլև հանդիսանում է նախաքննության փուլում մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման միջոց: Հետևաբար, անթույլատրելի է առերես հարցաքննության հնարավորությունը բացառել միայն այն պատճառով, որ կասկածյալը կամ մեղադրյալը, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, հրաժարվում է ցուցմունք տալ:

28. Հիմք ընդունելով սույն որոշման 27-րդ կետում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առերես հարցաքննության

անցկացման կարգը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս հարկ է նկատի ունենալ, որ դրանք չեն կարող հանգեցնել մեղադրյալի (կասկածյալի)՝ արդար դատաքննության իրավունքի չեզոքացմանը: Ուստի, խնդրո առարկա հարցի կապակցությամբ հանրային և մասնավոր իրավաչափ շահերը պետք է այնպես հավասարակշռվեն, որ մեղադրյալը չզրկվի հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքից և արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ցուցմունք տալուց հրաժարվելու՝ մեղադրյալի սահմանադրական իրավունքի իրացումն ինքնին չի բացառում առերեսման (հակընդդեմ հարցման) հնարավորությունը: Այն դեպքում, երբ վկան մեղադրական բովանդակությամբ ցուցմունք է տալիս որևէ անձի դեմ, իսկ վերջինս օգտվում է իր լռելու իրավունքից, ապա վարույթն իրականացնող մարմինն այս օբյեկտիվ իրավիճակը կարող է գնահատել որպես փաստացի տրված երկու ցուցմունք, որոնց միջև առկա է էական հակասություն և այդ ընկալումն արձանագրել առերեսում անցկացնելու մասին որոշմամբ՝ իրական և պատշաճ հնարավորություն տալով պաշտպանության կողմին հարցաքննել վկային և վիճարկել նրա հայտնած փաստական տվյալների ճշմարտացիությունը: Այս պայմաններում անցկացված առերես հարցաքննությունն ինքնին չի հանգեցնի քրեադատավարական օրենքի էական խախտման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով:

29. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նախաքննության մարմինը 2012 թվականի ապրիլի 27-ին Ջ.Մելքոնյանի և Ս.Հարությունյանի միջև առերես հարցաքննություն է իրականացրել, որին մասնակցել է նաև վերջինիս ներկայացուցիչ, փաստաբան Ս.Ջաղիյանը (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 77-79):

Առաջին ատյանի դատարանն իր դատավճռով նշված առերես հարցաքննության արձանագրությունը համարել է անթույլատրելի ապացույց՝ փաստարկելով, որ նախաքննության ժամանակ Ս.Հարությունյանը հրաժարվել է ցուցմունք տալուց, որպիսի պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի պահանջների խախտմամբ իրականացվել է առերեսում:

Վերաքննիչ դատարանն իր հերթին գտել է, որ Ս.Հարությունյանի և Ջ.Մելքոնյանի առերես հարցաքննությունը կատարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ, և այն պետք է համարել թույլատրելի ապացույց, քանի որ թեև բառի բուն իմաստով վերը նշված անձանց ցուցմունքների միջև առկա չի եղել էական հակասություն, սակայն նախաքննության ընթացքում Ս.Հարությունյանը հանդիսացել է մեղադրյալ և իրավունք է ունեցել հարցաքննվել իր դեմ վկայած անձանց հետ: Տվյալ դեպքում առերեսումը եղել է միակ հնարավորությունը, երբ Ս.Հարությունյանը հարցաքննվել է իր դեմ վկայած անձի՝ Ջ.Մելքոնյանի հետ, քանի որ

վերջինիս դատաքննության ընթացքում հնարավոր չի եղել հարցաքննել՝ մահանալու պատճառով (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

30. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 27-28-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննության մարմինն իրավասու է առերես հարցաքննություն կատարել վկայի և մեղադրյալի (կասկածյալի) միջև այն պայմաններում, երբ վերջինս, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, հրաժարվում է ցուցմունք տալուց: Ուստի, սույն գործով Ս.Հարությունյանի և Ջ.Մելքոնյանի միջև առերես հարցաքննություն իրականացնելով՝ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը փաստացի հնարավորություն է տվել Ս.Հարությունյանին վիճարկել իր դեմ տրված ցուցմունքները՝ դրանով իսկ ապահովելով պաշտպանության կողմի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3 (դ) ենթակետով երաշխավորված իրավունքը: Հետևաբար, հիմնագուրկ է Առաջին ատյանի դատարանի եզրահանգումն այն մասին, որ քննարկվող առերես հարցաքննության արձանագրությունն անթույլատրելի ապացույց է, քանի որ նախաքննության ժամանակ Ս.Հարությունյանը հրաժարվել է ցուցմունք տալուց, որպիսի պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի իմաստով առերես հարցաքննություն չէր կարող իրականացվել:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է արտահայտում Վերաքննիչ դատարանի դիրքորոշման հետ այն մասին, որ 2012 թվականի ապրիլի 27-ին Ջ.Մելքոնյանի և Ս.Հարությունյանի միջև առերես հարցաքննությունն իրականացվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ, հետևաբար նշված հարցաքննության արձանագրությունը որպես ապացույց պետք է համարել թույլատրելի:

31. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հիմնագուրկ է համարում պաշտպան Ս.Ջաղինյանի վճռաբեկ բողոքի փաստարկն այն մասին, որ Վերաքննիչ դատարանը, քննարկման առարկա դարձնելով վիճարկվող առերես հարցաքննության արձանագրության թույլատրելիության հարցը, դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը): Վերաքննիչ բողոքների ուսումնասիրությունից հետևում է, որ պաշտպանության կողմը Վերաքննիչ դատարանի առջև փաստարկել է, որ տեղի է ունեցել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3 (դ) ենթակետով երաշխավորված իրավունքի խախտում, քանի որ վարույթի որևէ փուլում պաշտպանության կողմը հնավորություն չի ունեցել հակընդդեմ հարցման ենթարկել մահացած վկա Ջ.Մելքոնյանին (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 2-20 և 34-39): Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա էին բավարար հիմքեր՝ Վերաքննիչ դատարանի կողմից առերես հարցաքննության արձանագրության թույլատրելիության վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու համար:

III. Բողոքաբերների բարձրացրած մյուս հարցերը.

32. Քրեական գործի նյութերի ուսումնասիրությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին աստիճանի դատարանը, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման ենթարկելով գործով ձեռք բերված ապացույցները (վկաներ Լ.Սուքիասյանի, Ա.Մելքոնյանի, Հ.Մանուկյանի, Ա.Թումանյանի, Ա.Սուքիասյանի, Լ.Սարգսյանի, Ռ.Գրիգորյանի, Ջ.Մելքոնյանի, Գ.Հարությունյանի, տուժողի իրավահաջորդ Մ.Կարապետյանի ցուցմունքներ, դատաբժշկական փորձագետների թիվ 387, 115/հձ եզրակացություններ), դրանք իրենց համակցության մեջ գնահատելով՝ հանգել է հիմնավոր հետևության, որ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ Ս.Հարությունյանի մեղավորությունը հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված և հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Մասնավորապես, դատաքննության ժամանակ հետազոտված և դատավճռի հիմքում դրված վերոգրյալ ապացույցներով հաստատված է, որ 2012 թվականի ապրիլի 17-ին՝ ժամը 24-ի սահմաններում, ամբաստանյալ Ս.Հարությունյանի և տուժող Ժ.Կարապետյանի միջև վիճաբանություն է առաջացել, որի ընթացքում նրանք քաշքշել և հայհոյել են միմյանց: Այնուհետև ներկա անձանց միջամտությունից հետո Ս.Հարությունյանը և Ժ.Կարապետյանն առանձնացել են, նրանց հետ որևէ անձ չի եղել, այդ պահին Ժ.Կարապետյանը մարմնական վնասվածքներ չի ունեցել: Ս.Հարությունյանի և Ժ.Կարապետյանի վիճաբանությունը շարունակվել է Ջ.Մելքոնյանի տան դիմաց: Վերջինս, լսելով վիճաբանության ձայներ, դուրս է եկել և ակնատես եղել, թե ինչպես է Ս.Հարությունյանը բռունցքով հարված հասցնում Ժ.Կարապետյանի դեմքին, որից նա ուշագնաց վայր է ընկնում: Դրանից հետո, Ս.Հարությունյանը հեռացել է, իսկ Ժ.Կարապետյանին տեղափոխել են հիվանդանոց, վիրահատել, որտեղ էլ վերջինս գիտակցության չգալով մահացել է:

Համաձայն դատաբժշկական փորձագետների վերոնշյալ եզրակացությունների՝ Ժ.Կարապետյանի մահը վրա է հասել գլխուղեղի կարևորագույն ֆունկցիաների խանգարումից՝ գլխուղեղային փակ, բութ վնասվածք ստանալու հետևանքով: Դիակի վրա առկա են եղել մի շարք մարմնական վնասվածքներ, որոնք պատճառվել են կենդանության օրոք, բութ առարկայի (առարկաների) ներգործությամբ, ունեն կյանքին վտանգ սպառնացող առողջության ծանր վնասի պատճառման չափանիշներ, որոնք էլ տվյալ դեպքում բերել են մահվան: Նշված վնասվածքների առաջացումը վայր ընկնելու հետևանքով հնարավոր չէ, այլ այդպիսիք բնորոշ են բութ առարկայի (առարկաների), այդ թվում՝ բռունցքի կամ երկաթյա խողովակի անմիջական ազդեցության: Վնասվածքներն ունեն կարճ ժամանակահատվածում պատճառվելու հատկանիշներ, ձախ բունքային հատվածում առկա վնասվածքը բնորոշ չէ երկաթյա ամրանի ներգործության: Ժ.Կարապետյանի մահվան հետ պատճառական կապի մեջ են գտնվում երեք վնասվածքներից երկուսը՝ բերանի և ձախ բունքային շրջանում ներդրված ուժերը, որոնք տարանջատել հնարավոր չէ:

Մեջբերված փաստական հանգամանքների առկայության պայմաններում Վճռաբեկ դատարանի համար անհասկանալի է Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը խախտել է անմեղության կանխավարկածի պահանջը, քանի որ լոկ ենթադրության հիման վրա Ս.Հարությունյանին մեղավոր է ճանաչել Ժ.Կարապետյանի առողջությանը ծանր մարմնական վնասվածքներ հասցնելու համար, ինչի վերաբերյալ գործում առկա չէ որևէ ապացույց (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի դատական ակտն օրինական է և հիմնավորված, իսկ Վերաքննիչ դատարանի դատողությունները հիմնագուրկ են և չեն բխում գործի փաստական տվյալներից:

33. Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում նաև Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Առաջին ատյանի դատարանը խախտել է անմեղության կանխավարկածի պահանջները, քանի որ դատավճռում արձանագրել է, թե վկա Ջ.Մելքոնյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ տեսել է, թե ինչպես Ս.Հարությունյանը բռուցքով ուժգին հարված է հասցրել Ժ.Կարապետյանի գլխի ձախ հատվածին՝ ականջի մոտ: Մինչդեռ վկա Ջ.Մելքոնյանը երբևէ իր ցուցմունքներում նման բան չի հայտնել (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ վկա Ջ.Մելքոնյանը նախաքննության ընթացքում տված ցուցմունքներում հայտնել է, որ վիճաբանության ձայներ լսելով՝ դուրս է եկել տնից և անմիջապես տեսել, թե ինչպես է Ս.Հարությունյանը բռուցքով ուժգին հարված հասցնում Ժ.Կարապետյանի դեմքին, որից վերջինս երկու-երեք քայլ հետ է գնացել, տապալվել գետնին ու առանց որևէ բան ասելու, սկսել է թայրտալ (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 74-75, հատոր 2-րդ, թերթ 1, հատոր 3-րդ, թերթ 64):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավճռում վկա Ջ.Մելքոնյանի ցուցմունքներն ամբազրելիս Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված վերոգրյալ անհստակությունը չի կարող հիմք հանդիսանալ ամբաստանյալ Ս.Հարությունյանի անմեղության կանխավարկածի խախտում արձանագրելու համար: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի հետևություններն այս առումով նույնպես չեն բխում քրեական գործի փաստական տվյալներից:

34. Անդրադառնալով պաշտպանի բողոքի փաստարկներին այն մասին, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է իր կողմից ներկայացված խախտումները և անդրադարձել է դրանցից միայն մեկին (տե՛ս սույն որոշման 15-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) *թեև 6-րդ հոդվածի 1-ին կետը դատարաններին պարտավորեցնում է պարճառաբանել իր որոշումները, սակայն այն չի կարող մեկնաբանվել որպես կողմի ներկայացրած յուրաքանչյուր փաստարկին դատարանի կողմից մանրամասն պարասխասն փայլու պահանջ: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել այն միջոցների ամբողջությունը, որոնց կողմը կարող է դիմել դատավարության*

ընթացքում, ինչպես նաև դատարանական վճիռների և որոշումների կայացման և կազմման օրենսդրական, սովորուբային և դոկտրինալ առանձնահատկությունները, որոնք առկա են յուրաքանչյուր Պայմանավորվող Պետությունում: Ահա թե ինչու այն հարցը, թե դատարանն արդյոք կատարել է որոշումը պարտադրանքներով՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածից բխող իր պարտականությունը, կարող է քննարկվել միայն գործի հանգամանքների լույսի ներքո» (տե՛ս, Հելմ ընդդեմ Ֆինլանդիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1997 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 157/1996/776/977, կետ 55, Ռուիզ Տորիջան ընդդեմ Իսպանիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1994 թվականի դեկտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 18390/91, կետ 29, Վան դե Հարքն ընդդեմ Նիդեռլանդների գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1994 թվականի ապրիլի 19-ի վճիռը, գանգատ թիվ 16034/90, կետ 61): Նշված դիրքորոշման հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստարկները մանրակրկիտ կերպով քննարկվել և պատճառաբանվել են, հետևաբար այս առումով պաշտպանի պնդումները հիմնադրել են:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, իր դատական ակտում քննարկման առարկա դարձնելով պաշտպանության կողմի փաստարկները, անհրաժեշտ հիմնավորումներ է բերել այն մասին, որ գործի նախաքննության ընթացքում տեղ գտած քրեադատավարական օրենքի պահանջների խախտումներն ու թերություններն իրենց բնույթով էական չեն, դրանք որևէ կերպ չեն խոչընդոտել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը և չեն ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ուստի քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում թույլ տրված խախտումների վրա համապատասխան պաշտոնատար անձանց ուշադրությունը հրավիրելու և նմանատիպ խախտումները բացառելու նպատակով ընդհանուր իրավասության դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360¹-րդ հոդվածի կարգով կայացրել է լրացուցիչ որոշում (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

35. Հիմք ընդունելով սույն որոշման 19-24-րդ և 33-34-րդ կետերում շարադրված վերլուծությունը և եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը բեկանելու համար: Միևնույն ժամանակ, արդարադատության արդյունավետության շահերից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է ուժ տալ սույն գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 8-ի դատավճիռին:

36. Ինչ վերաբերում է աուժողի իրավահաջորդի փաստարկին այն մասին, որ Վերաքննիչ դատարանի կողմից չի ծանուցվել և ներկա չի գտնվել դատական նիստերին՝ զրկվելով իր տեսակետը և առարկությունները ներկայացնելու հնարավորությունից (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանը դրան չի անդրադառնում՝ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի որոշման բեկանման հետևանքով այդ հարցի իրավական նշանակությունը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պաշտպան Ս.Ջաղինյանի վճռաբեկ բողոքը մերժել, մեղադրող Դ.Կարապետյանի և աուժողի իրավահաջորդ Մ.Կարապետյանի վճռաբեկ բողոքները բավարարել: Ամբաստանյալ Սարիբեկ Վարագրատի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հունվարի 24-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 8-ի դատավճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

20.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԵԿԳ/0182/11/13

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Գործ թիվ ԵԿԳ/0182/11/13

Նախագահող դատավոր՝ Մ.Համբարձումյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դիմող Ա.ՄԱԿԱՐՅԱՆԻ
դատախազ Ա.ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի մարտի 5-ի որոշման դեմ դիմող Արման Վարուժանի Մակարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի ապրիլի 21-ին Երևան քաղաքի Սեբաստիա փողոցի թիվ 29 հասցեի դիմաց Դավիթ Փիլոյանը «Օպել-Վեկտրա» մակնիշի 259 LU 61 պետհամարանիշի ավտոմեքենայով ընդհարվել է Արման Մակարյանի վարած «ԲՄՎ-Մ5» մակնիշի 96 VU 666 պետհամարանիշի ավտոմեքենային, որի հետևանքով երկու վարորդները և Ա.Մակարյանի ավտոմեքենայի ուղևոր Արտակ Մակարյանը ստացել են մարմնական վնասվածքներ և տեղափոխվել «Արմենիա» բժշկական կենտրոն:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնում նախապատրաստվել են նյութեր:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի քննիչ Կ.Գրիգորյանի 2013 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է և Ա.Մակարյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ դիմողի բողոքի բացակայության, իսկ Բ.Փիլոյանի նկատմամբ՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. 2013 թվականի սեպտեմբերի 30-ին դիմող Ա.Մակարյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի դատախազին՝ խնդրելով վերացնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Կ.Գրիգորյանի 2013 թվականի օգոստոսի 1-ի որոշումը:

Երևան քաղաքի դատախազի 2013 թվականի հոկտեմբերի 7-ի որոշմամբ դիմող Ա.Մակարյանի բողոքը մերժվել է:

3. 2013 թվականի նոյեմբերի 8-ին Ա.Մակարյանը և նրա ներկայացուցիչ Ս.Ոսկանյանը բողոք են ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչ Կ.Գրիգորյանի 2013 թվականի օգոստոսի 1-ի որոշումը և բողոքը մերժելու մասին դատախազի 2013 թվականի հոկտեմբերի 7-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ դիմող Ա.Մակարյանի և նրա ներկայացուցիչ Ս.Ոսկանյանի բողոքը մերժվել է:

4. Նույն անձանց վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի մարտի 5-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

5. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 5-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Ա.Մակարյանը:

Վճռաբեկ դատարանը 2014 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

6. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործություն-

ների քննության բաժնի քննիչ Կ.Գրիգորյանի 2013 թվականի օգոստոսի 1-ի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման համաձայն՝ «(...) Ա.Մակարյանի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների 94-րդ կետի խախտման հետևանքով Դ.Փիլոյանի առողջությանը պատճառվել է միջին ծանության վնաս, այսինքն՝ նրա արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, սակայն քանի որ «Օպել-Վեկտրա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը բողոք չի ներկայացրել, ուստի անհրաժեշտ է Արման Մակարյանի վերաբերյալ նյութերով քրեական գործի հարուցումը մերժել՝ դիմողի բողոքի բացակայության պատճառաբանությամբ» (տե՛ս նյութեր, թերթ 8-9):

7. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի որոշման համաձայն՝ «(...) [Դ]ատարանը գտնում է, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշումը, այդ թվում՝ դատախազի քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը հաստատելու մասին որոշումն օրինական և հիմնավոր են, քանի որ վարույթն իրականացնող մարմինը նյութերով քրեական գործի հարուցումը մերժելիս մանրամասն կերպով քննարկման առարկա է դարձրել, ի թիվս այլոց, դեպքի վայրի զննության արձանագրությունը, Դավիթ Փիլոյանից, Արտակ և Արման Մակարյաններից վերցրած բացատրությունները և փորձագետների եզրակացությունները, տվել է դրանց պատշաճ իրավական գնահատական, ղեկավարվել է քրեական դատավարության օրենսգրքի նորմերով, (...) պաշտոնական արդյունավետ քննություն է իրականացվել, որի ընթացքում վարույթն իրականացնող մարմինը՝ քննիչը և դատախազը, դրսևորել են անհրաժեշտ ջանասիրություն, որը, ի թիվս այլոց, արտահայտվել է Դավիթ Փիլոյանից, Արտակ և Արման Մակարյաններից բացատրություններ վերցնելով, ինչպես նաև դատաքիմիական, դատաբժշկական, դատաավտոտեխնիկական փորձաքննություններ նշանակելով: (...) ուստի Դատարանը վիստում է, որ քննիչի և դատախազության գործողություններով չեն խախտվել Արման Վարուժանի Մակարյանի իրավունքները և ազատությունները» (տե՛ս նյութեր, թերթ 42-51):

8. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 5-ի որոշման համաձայն՝ «(...) [Ա]ռաջին ատյանի դատարանը, դիմող Ա.Մակարյանի և վերջինիս ներկայացուցիչ Ս.Ոսկանյանի բողոքը քննության առնելիս գտնելով, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը կայացվել է օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, օրինական և հիմնավորված որոշում է կայացրել բողոքը մերժելու մասին: Ուստի բերված վերաքննիչ բողոքը բավարարելու և առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու հիմքեր չկան» (տե՛ս նյութեր, թերթ 101-109):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձը փաստարկել է, որ ստորադաս դատարանները ճիշտ չեն գնահատել գործով ձեռք բերված տվյալները, ինչի արդյունքում սխալ են կիրառել նյութական և դատավարական իրավունքի նորմերը:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել այն հանգամանքը, որ սույն գործով չեն ձեռնարկվել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար: Մասնավորապես, չեն ներգրավվել բոլոր հնարավոր վկաները, և չի նշանակվել լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ սույն գործով ձեռք բերված տվյալներն իրենց համակցության մեջ ճիշտ չեն գնահատվել և դրանց մի մասին մյուսների նկատմամբ առավել նշանակություն է տրվել, ինչի արդյունքում մի շարք էական հակասությունների առկայության պայմաններում կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ հիմնված «Օպել-Վեկտրա» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Դ.Փիլոյանի բացատրության վրա:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը փաստարկել է, որ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի քննիչ Կ.Գրիգորյանի 2013 թվականի օգոստոսի 1-ի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ խախտվել են իր իրավունքներն ու ազատությունները, քանի որ դրա կայացման արդյունքում որևէ կերպ չի փոխհատուցվել իր առողջությանն ու գույքին պատճառված վնասը: Ուստի, խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 5-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանը քննության է առնում այն հարցը, թե օրինական և հիմնավորված են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ դիմողի բողոքի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելով վարույթն իրականացնող մարմինն Ա.Մակարյանի իրավունքների և ազատությունների խախտում թույլ չի տվել:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կատարված հանցագործության ծանրությունից և բնույթից ելնելով՝ քրեական դատավարությունում հետապնդումն իրականացվում է հանրային և մասնավոր կարգով:

2. Մասնավոր հետապնդման գործեր են համարվում սույն օրենսգրքի 183 հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը:

(...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ «Զրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը են-

քակա է կարճման, եթե սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (...) 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: (...)»:

Մեջբերված իրավադրույթները Վճռարեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Վ.Եղիազարյանի* գործով որոշման մեջ: Նշված որոշմամբ Վճռարեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված քրեական գործի հարուցումը մերժելու, ինչպես նաև հարուցված քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքն ինքնին ենթադրում է, որ մեղսագրվող արարքի կատարումն անվիճելի փաստ է: Այս հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու համար ընդամենը պետք է, որ վարույթն իրականացնող մարմինը քննությամբ ձեռք բերված (փաստական) տվյալների հիման վրա հաստատված համարի, որ անձը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք է կատարել, և միևնույն ժամանակ բացակայում է դիմողի (տուժողի) բողոքը: Նման իրավակարգավորումը թույլ չի տալիս անձին դատական պաշտպանության իրավունքի ուժով վիճարկել իրեն քրեական պատասխանատվության կանչելու փաստը, իր դեմ առաջադրված կասկածների, մեղադրանքի օրինականությունն ու հիմնավորվածությունը, չի նախատեսում անձի իրավունքների վերականգնման կարգ այն պայմաններում, երբ նրա մեղքը դեռ ապացուցված չէ:

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով քրեական գործի հարուցումը մերժելիս կամ քրեական հետապնդումը դադարեցնելիս ենթադրյալ հանցանք կատարած անձի կարծիքը հաշվի առնելու, այդ թվում՝ նրա համաձայնությունը ստանալու օրենսդրական պահանջի բացակայությունը հանդիսանում է անմեղության կանխավարկածի սկզբունքի և արդար դատաքննության իրավունքի խախտում: Վճռարեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրության նման կարգավորման պայմաններում չի ապահովվում անձի իրավունքը դատական կարգով վիճարկելու այն դատավարական փաստաթղթի օրինականությունն ու հիմնավորվածությունը, որում, փաստորեն, քննարկվում է ենթադրյալ հանցանքի մեջ իր մեղավորության հարցը:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է հաշվի առ-

նել ենթադրյալ հանցանք կատարած անձի դիրքորոշումը: Այն դեպքում, երբ մասնավոր հետապնդման գործերով անձն առարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով վարույթի դադարեցման դեմ, անկախ դիմողի (տուժողի) բողոքի բացակայության հանգամանքից, գործի վարույթը պետք է շարունակվի սովորական կարգով՝ հնարավորություն տալով ենթադրյալ հանցանք կատարած անձին արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի առջև ապացուցել իր անմեղությունը:

(...) դիմողի (տուժողի) բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում ստուգման ենթարկելիս դատարանի խնդիրն է ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում պարզել, թե վարույթն իրականացնող մարմինն արդյոք ստուգման է ենթարկել և հաշվի է առել այն հանգամանքները, որոնք կարող էին ազդել քրեական գործի հարուցման հարցը լուծելու վրա կամ հանգեցնել անձի իրավունքների և ազատությունների խախտմանը: Գիմողի (տուժողի) բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելիս դատարանը պետք է պարզի նաև, թե հաշվի առնվել է արդյոք ենթադրյալ հանցանք կատարած անձի դիրքորոշումը: (...)» (տե՛ս Վահագն Լյովայի Եղիազարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՇԳ/0012/11/13 որոշման 17-18-րդ և 20-րդ կետերը):

13. Վերահաստատելով Վ.Եղիազարյանի գործով որոշմամբ ձևավորած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված նորմը կիրառելի է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) վարույթն իրականացնող մարմինը հաստատված է համարել, որ անձը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք է կատարել,

բ) բացակայում է դիմողի (տուժողի) բողոքը,

գ) ենթադրյալ հանցանք կատարած անձը չի առարկում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու կամ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ:

Համապատասխանաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում ստուգման ենթարկելիս դատարանը ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում պետք է պարզի վերոշարադրյալ պայմանների առկայության մասին վարույթն իրականացնող մարմնի հետևությունների հիմնավորվածությունը:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ նյութերի նախապատրաստության փուլում վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել Ա.Մակարյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Նշված որոշումը պատճառաբանելիս վարույթն իրականացնող մարմինը նշել է, որ Ա.Մակարյանի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման հետևանքով Գ.Փիլոյանի առողջությանը պատճառվել է միջին ծանոթյան վնաս, այսինքն՝ նրա արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, սակայն քանի որ Գ.Փիլոյանն Ա.Մակարյանի դեմ բողոք չունի, անհրաժեշտ է վերջինիս վերաբերյալ նյութերով քրեական գործի հարուցումը մերժել՝ դիմողի բողոքի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 1-ին և 6-րդ կետերը):

Դիմող Ա.Մակարյանի և նրա ներկայացուցիչ Ս.Ոսկանյանի բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ վարույթն իրականացնող մարմինը դրսևորել է անհրաժեշտ ջանասիրություն, և ղեկավարվելով քրեական դատավարության օրենսգրքի նորմերով՝ քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներից պատշաճ իրավական գնահատական է տվել, ուստի Ա.Մակարյանի իրավունքները և ազատությունները չեն խախտվել: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի դեկտեմբերի 13-ին որոշում է կայացրել Ա.Մակարյանի և նրա ներկայացուցիչ Ս.Ոսկանյանի բողոքը մերժելու մասին (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին, գտնելով, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը կայացվել է օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, 2014 թվականի մարտի 5-ին որոշում է կայացրել բերված վերաքննիչ բողոքը մերժելու և Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին (տե՛ս սույն որոշման 4-րդ և 8-րդ կետերը):

15. Սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն որոշման 14-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ

ա) վարույթն իրականացնող մարմնի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման մեջ առկա չէ որևէ հիշատակում ենթադրյալ հանցանք կատարած անձի՝ Ա.Մակարյանի դիրքորոշման վերաբերյալ,

բ) Ա.Մակարյանը, իր հետագա դատավարական գործողություններով, մասնավորապես նշված որոշումը օրենքով սահմանված կարգով վերադաս դատախազին, իսկ այնուհետև նաև դատարան բողոքարկելով, արտահայտել է իր անհամաձայնությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ

հողվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով իր նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժելու դեմ (տե՛ս սույն որոշման 2-4-րդ կետերը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դիմողի բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելիս ստորադաս դատարանները քննարկման առարկա չեն դարձրել այն հարցը, թե վարույթն իրականացնող մարմինը որոշում կայացնելիս հաշվի առել է արդյոք ենթադրյալ հանցանք կատարած անձի դիրքորոշումը:

Հետևաբար, ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ դիմողի բողոքի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելով վարույթն իրականացնող մարմինն Ա.Մակարյանի իրավունքների և ազատությունների խախտում թույլ չի տվել, օրինական և հիմնավորված չեն:

16. Սույն որոշման 12-15-րդ կետերի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 13-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում:

Ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա՝ սույն գործով Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքաբերի այն փաստարկներին, որ սույն գործով չեն ձեռնարկվել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար և ձեռք բերված տվյալներն իրենց համակցության մեջ ճիշտ չեն գնահատվել (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Արման Վարուժանի Մակարյանի և նրա ներկայացուցիչ Ս.Ոսկանյանի վերաքննիչ բողոքը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի մարտի 5-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*սրորագրություն
սրորագրություններ*

21.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԵԿԳ/0118/11/13

վերաքննիչ քրեական դատարանի որոշումներ

Գործ թիվ ԵԿԳ/0118/11/13

Նախագահող դատավոր՝ Մ.Չիչոյան

Գործ թիվ ԵԵԳ/0026/11/13

Նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ
մասնակցությամբ դատախազ	Ս.ԲԱՍԵՆՅՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի հոկտեմբերի 10-ի և 2014 թվականի հունվարի 14-ի որոշումների դեմ դիմող Ռուզաննա Հրաչիկի Նիսազյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի ապրիլի 25-ին՝ ժամը 20⁵⁰-ին ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից (այսուհետ նաև՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ԶԿՀ) ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժին հաղորդում է ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 20²⁵-ին քրեակատարողական հիմնարկի թիվ 5 խցում մահացել է կալանավոր Ժորժիկ Լևոնի Բաղումյանը:

2013 թվականի հունիսի 3-ին Ժ.Բաղդումյանի այրին՝ Ռուզաննա Նիսիանյանը հաղորդում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին՝ խնդրելով 2013 թվականի ապրիլի 25-ին ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում մահացած ամուսնու մահվան փաստով հարուցել քրեական գործ, կատարել նախաքննություն, իրեն ճանաչել տուժողի իրավահաջորդ:

ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ Մ.Բաբայանը 2013 թվականի հունիսի 18-ին գրությամբ Ռ.Նիսիանյանին պատասխանել է, որ նրա դիմումի կապակցությամբ որևէ որոշում չի կայացվել:

2013 թվականի հուլիսի 22-ին Ռ.Նիսիանյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով անօրինական (ոչ իրավաչափ) ճանաչել ՀՀ հատուկ քննչական ծառայության անգործությունը և վերջինիս պարտավորեցնել ներկայացված հաղորդման կապակցությամբ կայացնել քրեական գործ հարուցելու մասին որոշում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ Ռ.Նիսիանյանի բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշման դեմ Ռ.Նիսիանյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել անփոփոխ:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 10-ի որոշման դեմ դիմող Ռ.Նիսիանյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Գելեյանի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2013 թվականի հունիսի 3-ի որոշումը Ռ.Նիսիանյանը բողոքարկել է ՀՀ գլխավոր դատախազին:

Վերոնշյալ բողոքի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության դատախազ Ա.Մուրադյանը 2013 թվականի օգոստոսի 24-ին գրությամբ Ռ.Նիսիանյանին հայտնել է, որ Ժ.Բաղդումյանի մահվան փաստի առթիվ նախապատրասված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2013 թվականի հունիսի 3-ի որոշումն օրինական և հիմնավոր է, այն վերացնելու հիմքերը բացակայում են:

2013 թվականի սեպտեմբերի 27-ին Ռ.Նիսիանյանը բողոք է ներկայացրել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Հ.Գելեյանի 2013 թվականի հունիսի 3-ի որոշումը և Ժ.Բաղդումյանի մահվան փաստով քրեական գործ հա-

րուցելու և նախաքննություն կատարելու համար գործն ուղարկել ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ Ռ.Նիսիյանի բողոքը մերժվել է:

Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշման դեմ Ռ.Նիսիյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 14-ի որոշմամբ մերժվել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Ռ.Նիսիյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանը:

3. 2014 թվականի ապրիլի 23-ին Վճռաբեկ դատարանը որոշել է Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 14-ի թիվ ԵԷԴ/0026/11/13 որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, թիվ ԵԿԴ/0118/11/13 և ԵԷԴ/0026/11/13 գործերը միացնել մեկ վարույթում՝ ԵԿԴ/0118/11/13 համարի տակ՝ նկատի ունենալով, որ այդ երկու գործերը վերաբերում են նույն անձին և նույն հանգամանքներին:

Վճռաբեկ բողոքների վերաբերյալ դատավարության մասնակիցների կողմից պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

4. 2013 թվականի ապրիլի 25-ին ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ԶԿՀ-ի թիվ 5 խցում մահացած կալանավոր Ժ.Բաղումյանի մահվան փաստի առթիվ Էրեբունու քննչական բաժնում նյութեր են նախապատրաստվել, որի ընթացքում պարզվել է, որ 1948 թվականին ծնված Ժ.Բաղումյանը ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ) քննչական վարչության վարույթում քննվող քրեական գործով ներգրավված է եղել որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով: Ժ.Բաղումյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված եղել կալանավորումը, և նա կալանքի տակ է եղել 2012 թվականի հոկտեմբերի 27-ից: 2013 թվականի ապրիլի 25-ին՝ ժամը 20²⁰-ին Ժ.Բաղումյանի առողջական վիճակը կտրուկ վատացել է, նրան առաջին բուժօգնություն է ցույց տվել քրեակատարողական հիմնարկի հերթապահ բուժակ Գ.Մինասյանը՝ միաժամանակ կանչելով շտապօգնություն: Ժամը 20³⁵-ին շտապօգնության բրիգադը ժամանել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ԶԿՀ և արձանագրել Ժ.Բաղումյանի կենսաբանական մահը:

5. Դատաբժշկական փորձագետի թիվ 406 եզրակացության համաձայն՝ «Ժ.Բաղումյանի դիակի դատաբժշկական փորձաքննությամբ մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել: (...) Ժ.Բաղումյանի մահը վրա է հասել սրտի պսակաշի անոթներում արյան շրջանառության սուր խանգարումից, սրտամկանի կրկնակի ինֆարկտից, չափավոր արտահայտված աթերոսկլե-

րոզի, կորոնարոսկլերոզի հետևանքով, որով հանգուցյալը տառապել է կենդանության օրոք և այդպիսիք մահվան հետ գրնվում են պարճառական կապի մեջ: Տվյալ հետևությունը հիմնավորվում է դիակի դատարճշկական փորճաքննությանը հայրնաքերվաճ գլխուղեղի հիմի անոթների, աորտայի կրճքային, որովայնային, գարային, երիկամային հարվաճների և առավելապես սրտի պասկաճ անոթների աքերոսկլերոտիկ փոփոխություններով, սրտամկանի անհավասարաչափ արյունալցմամբ և սրտամկանի ինֆարկտին բնորոճ կազմաբանական և ճևաբանական փոփոխությունների առկայություններով: Ըստ դիակի դատարճշկական փորճաքննության րվյալների՝ կենդանության օրոք Ժ.Բաղումյանը տառապել է աքերոսկլերոզով, կորոնարկարդիոսկլերոզով, հետրինֆարկտային կարդիոսկլերոզով, որոնք մահվան պարճառի հետ գրնվում են պարճառական կապի մեջ» (տե՛ս Էրերունու քննչական բաճնից ստացվաճ նյութեր, քերք 28-31):

6. Էրերունու քննչական բաճնի ավազ քննիչ Հ.Գելեյանը 2013 քվակա-նի հունիսի 3-ին որոշում է կայացրել Ժ.Բաղումյանի մահվան փաստի առքիվ նախապատրաստվաճ նյութերով քրեական գորճի հարուցումը մերճելու մասին՝ պատճառաբանելով, որ «(...) նախապարաստվաճ նյութերով Ժորճիկ Բաղումյանի մահվան մեջ որևէ անճի մեղավորությունը ճի հայրնաքերվել, ինչպես նակ քրեական գորճ ճի կարող հարուցվել և քրեական հետապնդում ճի կարող իրականացվել, իսկ հարուցվաճ քրեական գորճի վարույքը ենքակա է կարճման, երք բացակայում է հանցագորճության դեպքը (...)» (տե՛ս Էրերունու քննչական բաճնից ստացվաճ նյութեր, քերք 33-34):

7. 2013 քվականի հունիսի 3-ին Ռ.Նիազյանը «Հաղորդում հանցագորճության մասին» վերտառությանը դիմում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ճառայության պետին՝ նշելով, որ ամուսինը՝ Ժ.Բաղումյանը, ունեցել է բազում առողջական խնդիրներ և չնայաճ դրան՝ գտնվելով Հայաստանի Հանրապետության հսկողության ներքո գտնվող քրեակատարողական հիմնարկում՝ ճի ստացել պատշաճ և արդյունավետ բճշկական օգնություն: Դրա համար պատասխանատու են տվյալ գորճով անմարդկային և դաճան վերաքերճումը դրսևորաճ քննիչը, դատախազը, դատավորները, ինչպես նակ այն բոլոր անճինք, ովքեր պարտավոր էին ապահովել անազատության մեջ գտնվող անճին պատշաճ բճշկական օգնության ցուցաքերումը և նրան պետք է տեղափոխելին դատապարտյալների հիվանդանոց, ինչը, սակայն, չեն արել՝ խախտելով Ժ.Բաղումյանի կյանքի իրավունքը:

Ռ.Նիազյանը նշել է նակ, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հողվաճների ուճով Հայաստանի Հանրապետությունը կրում է հաղորդման մեջ նկարագրվաճ փաստերի և հանգամանքների լույսի ներքո Ժ.Բաղումյանի նկատմամբ անմարդկային, արճանապատվությունը նվաստացնող վերաքերճումը դրսևորման և դրա հետևանքով կյանքի իրավունքի խախտման փաստի առքիվ պատշաճ, անաչառ և արդյունավետ քննություն կատարելու պարտավորություն՝ մեղավորներին բացահայտելու և պատասխանատվութ-

յան ենթարկելու նպատակով: Հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձը խնդրել է ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին՝ ՀՀ ԱՆ «Նուրարաշեն» ՔԿՀ-ում մահացած Ժ.Բաղումյանի մահվան փաստով հարուցել քրեական գործ և կատարել նախաքննություն, իսկ իրեն ճանաչել տուժողի իրավահաջորդ (տե՛ս թիվ ԵԿԳ/0118/11/13 գործի նյութեր, թերթ 5-11):

8. ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Մ.Բաբայանը 2013 թվականի հունիսի 18-ի թիվ 18-154Ն/դ-13 գրությամբ Ռ.Նիսիվյանին պատասխանել է. «ՀՀ հարուկ քննչական ծառայությունում 2013թ. հունիսի 4-ին սրացվել է Չեր 2013թ. հունիսի 3-ի դիմումը, որը վերնազրեկ եք «Հաղորդում հանցագործության մասին» (...): Չնայած դիմումի վերաբառությամբ՝ բովանդակային առումով այն հանցագործության կատարման մասին հաղորդման բնույթ չունի, չի համապատասխանում նման հաղորդումների համար քրեադատարարական օրենսգրքով սահմանված պահանջներին, ուստի այն քննարկվել է ոչ թե ՀՀ քրեական դատարարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների, այլ ՀՀ հարուկ քննչական ծառայությունում դիմումների քննարկման համար սահմանված գործող կարգի համաձայն:

(...)

(...) [Տ]եղեկացնում եմ, որ (...) ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Էրեբունու քննչական բաժնում նյութեր են նախապատրաստվել 25.04.2013թ. «Նուրարաշեն» ՔԿ հիմնարկի հիվանդանոցային թիվ 5 խցում կալանավոր Ժորժիկ Բաղումյանի մահվան դեպքի առթիվ: Նշանակվել է դատարժչական փորձաքննություն և համաձայն փորձագետի թիվ 306 եզրակացության[՝] Ժ.Բաղումյանի դիակի վրա մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել, նրա մահը վրա է հասել սրտի պսակաչև անոթներում արյան շրջանառության սուր խանգարումից, սրտամկանի կրկնակի ինֆարկտից: Նյութերով չենք բերված փվյալների հիման վրա 03.06.2013թ. որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին[՝] հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

(...)

ՀՀ վճռարեկ դատարանի 2007թ. հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 նախադեպային որոշման համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթները պետք է պարունակեն տեղեկատվություն հանցագործության հարկանիշներ մարմնանշող փվյալների առկայության մասին, միայն այդ դեպքում դրանք կարող են հիմք հանդիսանալ սրտագելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելու համար:

Նկատի ունենալով, որ 2013թ. հունիսի 3-ի Չեր դիմումը կատարված կամ նախապատրաստվող հանցագործության մասին տեղեկատվություն չի պարունակում, ՀՀ հարուկ քննչական ծառայությունում դրա կասկակցությամբ որևէ որոշում չի կայացվել» (տե՛ս թիվ ԵԿԳ/0118/11/13 գործի նյութեր, թերթ 12- 13):

9. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 11-ի որոշման համաձայն՝ «(...) Բնչ վերաբերում է նախաքննական մարմնի կողմից սրուզման արդյունքների ամփոփման դատավարական ձևի պահպանմանը, ապա (...) Դատարանի համոզմամբ նախաքննական մարմինը կարող էր սրուզման արդյունքների մասին բողոքաբեր Ռ. Նիսազյանին պարասխանել նաև գրությամբ (պարզաբանում րրամադրելու) րեքքով, այսինքն՝ առանց քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշման կայացման, ինչը քիում է ավլազ քննիչ Մ.Բաբայանի վկայակոչաժ 2007թ. հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 նախադեպային որոշման մեջ արտահայտվաժ իրավական դիրքորոշումից: (...)» (տե՛ս թիվ ԵԿԳ/0118/11/13 գործի նյութեր, թերթ 37- 43):

10. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 10-ի որոշման համաձայն՝ «(...) Առաջին արյանի դատարանը գործի նյութերում առկա հանգանաքննիչի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հերագորման արդյունքում հանգել է հիմնավորվաժ հերևության և ներկայացվաժ բողոքն իրավացիորեն մերժել է:

Վերաքննիչ դատարանը նույնպես հանգում է հերևության, որ Ռուզաննա Նիսազյանի իրավունքները կամ ազարությունները չեն խախտվել, ՀՀ հարուկ քննչական ժառայության անգործությունն անօրինական ճանաչելու և քրեական գործ հարուցելու հիմքերը բացակայում են: (...)» (տե՛ս թիվ ԵԿԳ/0118/11/13 գործի նյութեր, թերթ 71-74):

11. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի որոշման համաձայն՝ «(...) նյութերի նախապարասարման համար որպես առիթ է հանդիսացել ՀՀ ԱՄ «Նուբարաշեն» ԲԿՀ հաղորդումը ոսրիկանության Էրեբունու բաժնին՝ 25.04.2013թ. ժամը 20.25-ին ԲԿ հիմնարկի 5-րդ հիվանդանոցային խցում կալանավոր Ժորժիկ Լևոնի Բաղումյանի հանկարծամահության վերաբերյալ: (...) [Տ]արաժքային քննչական բաժնի քննիչը մեկնել է դեպքի վայր և փաստի առթիվ նյութեր է նախապարասարել:

Նախապարասարվաժ նյութերով, սակայն, քրեական գործ հարուցելու հիմքեր չեռք չեն բերվել, այսինքն՝ հանցագործության դեպքը չի հիմնավորվել, այդ պարճառով ՀՀ քրեական դատարարության օրենագրքի 35-րդ հոդվաժի 1-ին մասի 1-ին կերի և 185-րդ հոդվաժի 1-ին մասի հիմքով՝ հանցադեպի բացակայության հիմնավորմամբ նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է, քանի որ նշվաժ դեպքում քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հերապնդում չի կարող իրականացվել:

Հերագորելով քննիչի կողմից նախապարասարվաժ նյութերը, դատարանը գրում է, որ նյութերը նախապարասարվել են լրիվ, քննիչի կողմից նյութերով չեռք բերաժ հիմքերը բավարար են եղել հանցադեպի բացակայության պարճառաբանությամբ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու համար:

(...)

Դատարանը գտնում է, որ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ԶԿՀ կալանավոր ժողովակազմի Բաղումյանի հանկարծամահության փաստի առթիվ նախապարտապարտված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին ՀՀ ոստիկանության ԶԳՎ Էրեբունու քննչական բաժնի ավագ քննիչ Հ. Դելեյանի 03.06.2013թ. որոշումը վերացնելու հիմքեր չկան, այդ մասին դիմող Ռուզաննա Նիսիյանի բողոքը ենթակա է մերժման: (...)» (տե՛ս թիվ ԵԷԴ/0026/11/13 գործի նյութեր, թերթ 67-71):

12. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 14-ի որոշման համաձայն՝ «Վերաքննիչ դատարանն արշահագրում է, որ ընդհանուր իրավասության Դատարանը, քննության առնելով Ռուզաննա Նիսիյանի կողմից ներկայացված բողոքը, իրավացիորեն գտել է, որ Էրեբունու քննչական բաժնի ավագ քննիչ Հ. Դելեյանը՝ կատարելով ՀՀ քրեական դատարանության օրենսգրքով նախատեսված անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ, օրենքով սահմանված կարգով կայացրել է որոշում՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին, հետևաբար բողոքարկվող գործողությունները կատարված են օրենքին համապատասխան:

(...) բողոքը քննության առնելիս առաջին աստիճանի դատարանի կողմից բույլ չեն արվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի և հիմք կհանդիսանային Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 04-ի որոշումը քննադատելու համար» (տե՛ս թիվ ԵԷԴ/0026/11/13 գործի նյութեր, թերթ 114-124):

3. Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջները.

13. Վճռաբեկ բողոքների հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 10-ի և 2014 թվականի հունվարի 14-ի որոշումներն անհիմն են և անօրինական, չեն բխում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից ու ՀՀ ազգային օրենսդրությունից:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ պնդումների՝ բողոքաբերը նշել է, որ՝ ա) Ժ.Բաղումյանի կալանքը որևէ իրավաչափ նպատակ չի հետապնդել, այլ նրան պատժելու, ընկճելու և նրա կողմից նախաքննության մարմնի համար ձեռնտու վարքագիծ պարտադրելու նպատակ է ունեցել,

բ) Ժ.Բաղումյանն ունեցել է առողջական լուրջ խնդիրներ, որոնց մասին տեղյակ են եղել նախաքննության մարմինը, դատարանները, քրեակատարողական մարմնի վարչակազմը: Չնայած դրան՝ նրան չի ցուցաբերվել պատշաճ բժշկական օգնություն: Ավելին՝ Ժ.Բաղումյանի առողջական վիճակի վատթարացման և նրա կյանքին սպառնացող վտանգի մասին փաստաթղթերի կողմից ուղղակիորեն նախազգուշացվել են քննիչը և դատարանները,

գ) մահվանը նախորդած 2-3 ամիսներին Ժ.Բաղումյանի ինքնազգացողությունն այնքան է վատթարացել, որ նրա մոտ տեղի է ունեցել տեսողության և

հիշողության վատացում, դանդաղել է խոսքը: Իսկ վերջին երեք օրերին Ժ.Բաղումյանի ինքնազգացողությունն ամեն օր կտրուկ վատացել է և միայն բուժակի կողմից ներարկում կատարելուց հետո է ժամանակավորապես կարգավորվել: Չնայած այս հանգամանքին՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի վարչակազմը որևէ միջոց չի ձեռնարկել նրան ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ կամ այլ մասնագիտացված բուժաստատություն տեղափոխելու համար, որտեղ հնարավոր կլիներ Ժ.Բաղումյանին ցուցաբերել պատշաճ և արդյունավետ բժշկական օգնություն, կանխել նրա մահը:

Բողոքաբերը փաստարկել է, որ Հայաստանի Հանրապետությունը, իր ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան, կրում է վերը նշված փաստերի և հանգամանքների լույսի ներքո Ժ.Բաղումյանի նկատմամբ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորման և դրա հետևանքով կյանքի իրավունքի խախտման փաստի առթիվ պատշաճ, անաչառ և արդյունավետ քննություն կատարելու պարտավորություն՝ մեղավոր պաշտոնատար անձանց բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու նպատակով:

Վճռարեկ բողոքների հեղինակը շեշտել է, որ միայն քրեական գործ հարուցելու և անաչառ ու բազմակողմանի նախաքննության կատարելու արդյունքում հնարավոր կլիներ բացահայտել Ժ.Բաղումյանի նկատմամբ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի համար պատասխանատու պաշտոնատար անձանց շրջանակը: Ընդ որում, իրավասու մարմիններն այդ քննությունը պետք է սկսեին սեփական նախաձեռնությամբ՝ չսպասելով Ժ.Բաղումյանի այրու կողմից հաղորդում ներկայացնելուն:

14. Բողոքաբերը նշել է նաև, որ Ժ.Բաղումյանի այրու կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման մեջ նշված փաստերի և հանգամանքների նկատմամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը ցուցաբերել է ձևական (ֆորմալիստական) մոտեցում, հրաժարվել է քրեական գործ հարուցել ու կատարել նախաքննություն, և նույնիսկ հարկ չի համարել որոշում կայացնել ներկայացված հաղորդման վերաբերյալ, այլ դրան պատասխանել է գրությամբ: Իսկ դատարաններն արդարացրել են այդպիսի գործելաճը՝ գտնելով, որ Ռ.Նիսաբյանի հաղորդմանը գրությամբ պատասխանելն իրավաչափ է:

15. Էրեբունու քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Գելեյանի որոշման առնչությամբ բողոքաբերը փաստարկել է, որ մահվան փաստի առթիվ քննիչի կողմից նշանակված դատաբժշկական փորձաքննությամբ Ժ.Բաղումյանի դիակի վրա մարմնական վնասվածքների հետքեր չհայտնաբերելն ինքնին չի նշանակում, որ պետությունը կատարել է Ժ.Բաղումյանին պատշաճ և արդյունավետ բժշկական օգնություն ցուցաբերելու, նրա կյանքի իրավունքը ապահովելու իր պարտավորությունները: Նյութերի նախապատրաստման ընթացքում բժշկական փաստաթղթերից քննիչին հայտնի է դարձել, որ Ժ.Բաղումյանը տառապել է բազմաթիվ հիվանդություններով, սակայն քննիչը չի փորձել անգամ պարզել, թե արդյոք Ժ.Բաղումյանին ցուցաբերվել է նրա առողջական վիճակի

համար անհրաժեշտ բժշկական օգնություն, արդյոք ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պայմանները հնարավորություն տվել են ցուցաբերելու այդ օգնությունը, եթե ոչ, ապա որն է պատճառը, որ առողջական նման խնդիրներ ունեցող Ժ.Բաղումյանը շարունակել է պահվել «Նուբարաշեն» ՔԿՀ-ում և չի տեղափոխվել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ:

Բողոք բերած անձի պնդմամբ՝ վերը հիշատակված հարցերից ոչ մեկին նյութերի նախապատրաստման ընթացքում քննիչը չի փորձել պատասխանել, իրականացված քննությունը կրել է գուտ ձևական բնույթ և սահմանափակվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի բուժակից բացատրություն ստանալով և դատաբժշկական փորձաքննություն նշանակելով: Բողոքաբերը շեշտել է, որ քննիչը պետք է հարցաքններ Ժ.Բաղումյանի հետ նույն սենյակում բնակվող մյուս կալանավորներին, ովքեր կարող էին կարևոր տեղեկություններ հայտնել Ժ.Բաղումյանի առողջական վիճակի դինամիկայի, ինչպես նաև նրան ցուցաբերված բուժօգնության մասին: Այս կապակցությամբ բողոքաբերն ընդգծել է, որ Էրեբունու քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Դելեյանի կողմից քրեական գործ հարուցելու, այն ըստ քննչական ենթակայության ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկելու և վերջինիս կողմից պատշաճ նախաքննություն իրականացվելու դեպքում կարող էին բացահայտվել Ժ.Բաղումյանի նկատմամբ դրսևորված անմարդկային վերաբերմունքի մասին վկայող հանգամանքներ և փաստեր:

16. Վերոգրյալի հիման վրա՝ վճռաբեկ բողոքների հեղինակը խնդրել է.

ա) բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումը, կայացնել նոր դատական ակտ՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության անգործությունն անօրինական (ոչ իրավաչափ) ճանաչելու և Ռ.Նիսիպյանի կողմից ներկայացված հաղորդման կապակցությամբ քրեական գործ հարուցելուն պարտավորեցնելու վերաբերյալ:

բ) բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 14-ի որոշումը, կայացնել նոր դատական ակտ՝ պարտավորեցնելով իրավասու մարմնին՝ Ժ.Բաղումյանի մահվան փաստի առթիվ հարուցել քրեական գործ և նախաքննություն կատարելու համար գործն ուղարկել ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա է առերևույթ հակասություն սույն գործով կայացված դատական ակտերի և Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումների միջև: Ուստի, օրենքի միատեսակ կիրառության ապահովման համատեքստում անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերոնշյալ ակտերի միջև առկա հակասություններին և նախկինում ընդունված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումների հիման վրա արտահայտել մոտեցումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

I. Հանցագործության մասին հաղորդմանը գրությամբ պատասխանելու իրավաչափությունը.

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից Ռ.Նիսիյանի՝ «Հաղորդում հանցագործության մասին» վերտառությամբ դիմումին գրությամբ պատասխանելը:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելու առիթներն են՝

1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) քրեական գործ հարուցելու մասին.
- 2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին.
- 3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին»:

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Է. Կարասյեպյանի* գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «(...) Հանցագործության մասին հաղորդումը որպես քրեական գործ հարուցելու առիթ իրենից ներկայացնում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի գրավոր կամ բանավոր դիմումը քրեական հետաքննում իրականացնող մարմնին՝ կոնկրետ հանցագործության փաստերի պարունակող նախապարաստիվող կամ կատարված հանցագործության մասին տեղեկատվությամբ:

Առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը լիազորում է իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց մյուսել իրավափաստաբանությունների մեջ, կատարել գործողություններ, որոնք իրենց միասնությամբ ներկայացնում են քրեական դատավարության սկզբնական փուլի գործունեություն:

Քրեական գործի հարուցման առիթները պետք է բովանդակեն տեղեկություն հանցագործության հարկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին: Միայն այս դեպքում դրանք կարող են հիմք հանդիսանալ ստուգելու և քրեական գործ հարուցելու կամ հարուցումը մերժելու որոշում ընդունելու համար: Այսինքն, քրեական գործ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն հանցագործության մասին արված հաղորդումը: (...)» (տե՛ս Էմմա Կարապետյանի գործով Վճարելի դատարանի 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշումը):

20. Վերահաստատելով Է.Կարապետյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ քրեական գործ հարուցելու առիթ ասելով պետք է հասկանալ օրենքով սահմանված այն աղբյուրը, որտեղից իրավասու պաշտոնատար անձը տեղեկություններ է ստանում նախապատրաստվող, կատարվող կամ կատարված հանցագործությունների մասին: Հանցագործության մասին ֆիզիկական անձի հաղորդումը, ուղղված հետաքննության մարմնին, քննիչին կամ դատախազին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի իմաստով քրեական գործ հարուցելու առիթ է, հետևաբար այդպիսի հաղորդման առկայությունն ինքնին առաջ է բերում քրեադատավարական իրավահարաբերություններ՝ կապված գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության հետ:

Միևնույն ժամանակ, հանցագործության մասին հաղորդումը, այդ թվում՝ ֆիզիկական անձի կողմից տրված, չի կարող լինել վերացական կամ ընդհանուր բնույթի: Որպեսզի հաղորդումը հիմք հանդիսանա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը կայացնելու համար, այն պետք է բովանդակի տվյալներ կոնկրետ հանցագործության մասին: Վերոգրյալը սակայն չի նշանակում, որ անձն իր հաղորդման մեջ պետք է ներկայացնի այնպիսի փաստական տվյալներ, որոնք իրենց բնույթով բավարար լինեն հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար: Գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու պարտականությունը քրեական գործի հարուցման փուլում կրում են հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում և հանրային-իրավական պարտավորություններին համապատասխան: Այս փուլում վարույթն իրականացնող մարմինը հաղորդման նախնական ստուգման միջոցով հանցագործության հատկանիշներ մատնանշող բավարար փաստական տվյալներ ձեռք բերելու դեպքում, ինչպես նաև քրեական գործի վարույթը բացառող դատավարական արգելքների բացակայության պայմաններում պարտավոր է հարուցել քրեական գործ, հակառակ դեպքում՝ որոշում կայացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

21. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ռ.Նիսիյանը 2013 թվականի հունիսի 3-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին «Հաղորդում հանցագործության մասին» վերտառությամբ դիմում է ներկայաց-

րել՝ խնդրելով ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ԲԿՀ-ում մահացած ամուսնու՝ Ժ.Բաղումյանի մահվան փաստի առթիվ հարուցել քրեական գործ և կատարել նախաքննություն: Ռ.Նիսիանյանը նշել է, որ ամուսինը ունեցել է առողջական լուրջ խնդիրներ և գտնվելով քրեակատարողական հիմնարկում՝ չի ստացել պատշաճ և արդյունավետ բժշկական օգնություն: Վկայակոչելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները՝ դիմումատուն փաստարկել է, որ Հայաստանի Հանրապետությունը կրում է հաղորդման մեջ նկարագրված հանգամանքների լույսի ներքո Ժ.Բաղումյանի կյանքի իրավունքի խախտման վերաբերյալ պատշաճ, անաչառ և արդյունավետ քննություն կատարելու պարտավորություն՝ մեղավորներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու նպատակով (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Ի պատասխան՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Մ.Բարսեղյանը 2013 թվականի հունիսի 18-ի գրությամբ Ռ.Նիսիանյանին հայտնել է, որ ներկայացված դիմումը բովանդակային առումով հանցագործության մասին հաղորդման բնույթ չունի, չի համապատասխանում նման հաղորդումների համար քրեադատավարական օրենսգրքով սահմանված պահանջներին, ուստի այն քննարկվել է ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների, այլ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում դիմումների քննարկման համար սահմանված գործող կարգի համաձայն (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2013 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ մերժել է Ռ.Նիսիանյանի բողոքը՝ պատճառաբանելով, որ մինչդաստական վարույթն իրականացնող մարմինն իրավասու էր ստուգման արդյունքների մասին բողոքաբերին պատասխանել նաև գրությամբ, պարզաբանում տրամադրելու տեսքով, առանց քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշում կայացնելու, ինչը բխում է *Է. Կարասպետյանի* գործով Վճռաբեկ դատարանի թիվ ՎԲ-133/07 նախադեպային որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումից (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին մերժել է Ռ.Նիսիանյանի վերաքննիչ բողոքը՝ գտնելով, որ Առաջին ատյանի դատարանը գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում հանգել է հիմնավորված հետևության (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

22. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով սույն որոշման 19-20-րդ կետերում և, համապատասխանաբար, *Է. Կարասպետյանի* գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռ.Նիսիանյանի կողմից 2013 թվականի հունիսի 3-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին ներկայացված դիմումը բովանդակում է տեղեկություններ հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին: Հաղորդման մեջ ներկայացված են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք առերևույթ համընկնում

են քրեորեն պատժելի գործողությունների (անգործության) հատկանիշներին: Հետևաբար, Ռ.Նիսիյանի դիմումը հանդիսանում է հանցագործության մասին հաղորդում և քրեական գործ հարուցելու առիթ, որի կապակցությամբ իրավասու մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր էր կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից Ռ.Նիսիյանի՝ «Հաղորդում հանցագործության մասին» վերտառությամբ դիմումին գրությամբ պատասխանելն իրավաչափ չէ: Հանցագործության մասին հաղորդումը որպես այդպիսին չդիտարկելով և այդ հաղորդման վերաբերյալ քրեադատավարական օրենքով նախատեսված որոշում չկայացնելով՝ քննիչը թույլ է տվել անգործություն, որն էլ պատշաճ իրավական գնահատականի չի արժանացել ստորադաս դատարանների կողմից և արդյունքում խախտվել են դիմող Ռ.Նիսիյանի՝ օրենքով երաշխավորված իրավունքները:

II. Քրեակատարողական հիմնարկում մահացած անձի մահվան փաստի առթիվ արդյունավետ քննություն կատարելու պարտականությունը.

23. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Ժ.Բաղումյանի մահվան փաստի առթիվ իրականացվել է արդյոք արդյունավետ քրեադատավարական քննություն:

24. ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: (...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները մեկնաբանել է որպես այդ դրույթների նյութաիրավական կողմերի ենթադրյալ խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականություն սահմանող նորմեր՝ հաշվի առնելով այս իրավունքների հիմնարար բնույթը (տե՛ս *McCann and Others v. The United Kingdom* գործով 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 18984/91, կետեր 157-164, *Ergi v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 23818/94, կետ 82 և *Assenov and Others v. Bulgaria* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, կետեր 101-106):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետը պետություններին պարտավորեցնում է ոչ միայն ձեռնպահ մնալ անձանց կյանքի նկատմամբ դիտավորյալ, անօրինական ոտնձգություններից, այլ նաև սահմանում է, որ պետությունները պետք է իրենց իրավագործության ներքո գտնվող անձանց կյանքի պաշտպանության համար համապատասխան քայլեր ձեռնարկեն (ի թիվս այլոց, տե՛ս *Osman v. the United Kingdom* գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 87/1997/871/1083 կետ 115):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված կյանքի իրավունքի պատշպանությունն անուղղակիորեն պետությունից պահանջում է անձանց մահվան կապակցությամբ պաշտոնապես օբյեկտիվ քննություն իրականացնել: Նման քննություն իրականացնելու պարտականությունը ծագում է բոլոր դեպքերում՝ սպանության կամ կասկած հարուցող մահվան դեպքերում՝ անկախ նրանից, թե հանցանք կատարած անձինք անհատներ են, թե պետական մարմիններ կամ անհայտ անձինք (տե՛ս *Nachova and Others v. Bulgaria* գործով 2005 թվականի հուլիսի 6-ի վճիռը, գանգատներ թիվ 43577/98, 43579/98, կետ 110):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջն է ապահովել անկախ և անաչառ պաշտոնական քննություն, որը բավարարում է արդյունավետության որոշակի նվազագույն չափանիշների: Իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ և պարտավոր են նախաձեռնել քննություն, որն ի վիճակի է նախ որոշակիացնել այն հանգամանքները, որոնցում դեպքը տեղի է ունեցել և կարգավորող համակարգի գործունեության ցանկացած թերություն, երկրորդ՝ բացահայտել դրանում ներգրավված պետական պաշտոնյաներին և մարմիններին: Հասարակական հսկողության պահանջը այս համատեքստում նույնպես կարևոր է (տե՛ս *mutatis mutandis*, *Kats and Others v. Ukraine*, 2008 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռ գանգատ թիվ 29971/04, կետ 116):

Քննությունն արդյունավետ կարող է համարվել այն դեպքում, երբ հնարավոր կլինի քննությամբ ձեռք բերված փաստերը համադրել և հանցանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկել: Իշխանությունները տեղի ունեցած իրադարձությունը բացահայտելու համար պետք է ձեռնարկեն հասանելի, խելամիտ քայլեր՝ վկաների հարցաքննություն, դատարժշկական փորձաքննության նշանակում, ինչպես նաև դիախերձում, ինչը թույլ կտա բացահայտել առկա վնասվածքների ամբողջական և իրական պատկերը, ինչպես նաև մահվան պատճառը (տե՛ս *Tanrikulu v. Turkey* գործով 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 23763/94, կետ 109 և *GUL v. Turkey* գործով 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 22676/93, կետ 89): Քննության եզրակացությունը պետք է հիմնված լինի գործով առկա փաստերի ամբողջական, օբյեկտիվ և անկողմնակալ վերլուծության վրա:

Քննության ընթացքում կիրառման ենթակա միջոցները բացարձակ իրավունք չեն սահմանում մեղադրելու կամ դատապարտելու համար և քննության ընթացքում ցանկացած խախտում կամ հանցանք կատարած անձին չհայտնաբերելը դիտվում է որպես արդյունավետության պահանջի խախտում (տե՛ս *Esat Bayram v. Turkey* գործով 2009 թվականի մայիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 75535/01, կետ 47 և *Ramsahai and Others v. the Netherlands* գործով 2007 թվականի մայիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 52391/99, կետ 321):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս ընդգծել է, որ քննության արդյունավետությունը գնահատելիս կարևոր է հատկապես այն հանգամանքը, թե որքան արագ են իշխանություններն արձագանքում Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների խախտման վերաբերյալ բողոքներին, ինչը նպաստում է հանրության վստահության պահպանմանը օրինականության ամրապնդման և անօրինական գործողությունների նկատմամբ հանդուրժողականության բացառման հարցում (տե՛ս *Hugh Jordan v. United Kingdom* գործով 2001 թվականի մայիսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 24746/94, կետ 108, *Yaşa v. Turkey* գործով 1998 թվականի սեպտեմբերի 2-ի վճիռը, գեկույցներ 1998-IV, էջեր 2439-2440, կետեր 102-104):

Քննությունը պետք է լինի մանրամասն: Դա նշանակում է, որ մարմինները միշտ պետք է կատարեն լուրջ քայլեր, որպեսզի պարզեն՝ ինչ է տեղի ունեցել, և չպետք է հիմնվեն շտապողական կամ թույլ պատճառաբանված հետևությունների վրա, որպեսզի փակեն իրենց քննությունը կամ որպես իրենց որոշումների հիմք ընդունեն: Նրանք պետք է կատարեն իրենց համար հասու բոլոր ողջամիտ քայլերը, որպեսզի ապահովեն դեպքի հետ կապված ապացույցները, ներառյալ, ի թիվս այլոց, ականատեսների հարցաքննությունը և բժշկական ապացույցները: Քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում պատճառված վնասվածքների պատճառները կամ պատասխանատու անձանց պարզելու կարողությունը, վտանգում է այս չափանիշի իրագործումը (տես, ի թիվս այլոց, *Mikheyev v. Russia*, 2006 թվականի հունվարի 26-ի վճիռ, գանգատ թիվ 77617/01, կետ 107):

Քննությունն արդյունավետ համարելու համար այն իրականացնող պատասխանատու մարմիններն օրենքով և գործնականում պետք է անկողմնակալ և անկախ լինեն: Սա նշանակում է, որ ոչ միայն ենթակարգային կապի, այլ պրակտիկ գործունեության մեջ այս մարմինները պետք է անկախ լինեն (տե՛ս *Ramsahai and Others* գործով 2007 թվականի մայիսի 15-ի վճիռը, կետեր 325, 333-346, *Scavuzzo-Hager and Others v. Switzerland* գործով 2006 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 41773/98, կետեր 78, 80-86): Անհրաժեշտ է նաև հասարակության անդամներին ինչպես քննության, այնպես էլ դրա արդյունքների վերաբերյալ համապատասխան տեղեկություններով ապահովել, հասարակության անդամների մոտ վստահություն առաջացնել օրենքի գերակայության նկատմամբ, ինչպես նաև բացառել հանցավոր համագործակցությունը կամ հանցավոր արարքների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերելը: Բոլոր դեպքերում

տուժողները պետք է ներառվեն քննության մեջ՝ վերջիններիս օրինական շահերն ապահովելու նպատակով (տե՛ս *Gulec v. Turkey* գործով 1998 թվականի հուլիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 54/1997/838/1044, կետ 82):

25. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքի խախտման կապակցությամբ իրականացվող քննության արդյունավետության գնահատման հիմնական չափանիշների համաձայն՝

ա) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման վերաբերյալ բողոքներն իրավասու մարմինների կողմից պետք է արժանանան արագ արձագանքի,

բ) իրավասու մարմինները պետք է գործեն պատշաճ ջանասիրությամբ և արագությամբ,

գ) քննության արդյունքում պետք է հստակեցվեն դեպքի հանգամանքները,

դ) պետք է ապահովվի քննության նկատմամբ հասարակական հսկողությունը,

ե) այն իրականացնող պատասխանատու անձինք պետք է անկախ լինեն տվյալ գործում ներգրավված անձանցից,

զ) պետք է կատարվի մանրամասն քննություն, որն անհրաժեշտ է գործով ապացույցներ ձեռք բերելու համար: Վարույթն իրականացնող մարմինները պետք է ձեռնպահ մնան շտապողական կամ թույլ պատճառաբանված հետևություններից, քանի որ քննության ցանկացած թերություն, որը հարցականի տակ է դնում մահվան պատճառները պատասխանատու անձանց կողմից պարզելու կարողությունը, վտանգում է քննության արդյունավետությունը, հետևաբար և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով պետության ստանձնած պարտավորությունների իրագործումը (մահվան փաստի առթիվ արդյունավետ քրեադատավարական քննություն իրականացնելու պարտականության մասին տե՛ս նաև Սուսաննա Անտոնյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշումը):

26. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում արձանագրված չափանիշները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կյանքի իրավունքի ենթադրյալ խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականությունը քրեական գործի հարուցման հարցի լուծման փուլում իրագործել հնարավոր չէ: Քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է քրեական գործի հարուցման հարցը լուծելու համար անհրաժեշտ միասնական և պարտադիր կարգ, որը ենթադրում է, որ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է հանցագործության

մասին հաղորդումը ստուգել և լուծել անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ հաղորդումը ստանալու պահից 10 օրվա ընթացքում: Ընդ որում, պարզելու համար, թե հաղորդման մեջ մատնանշված փաստական տվյալները պարունակում են արդյոք հանցագործության հատկանիշներ, իրավասու մարմինը լիազորված է կատարելու բացառապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանափակ թվով դատավարական և քննչական գործողություններ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցման փուլը, ի համեմատ քրեադատավարական ընթացակարգի մյուս փուլերի, ունի իր խնդիրներով պայմանավորված առանձնահատկությունները: Քրեադատավարական այս փուլի ընթացքում հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազը ժամանակային, ինչպես նաև քննչական և այլ դատավարական գործիքակազմի սահմանափակության պայմաններում պետք է իրականացնեն որոշակի միջոցառումներ, պարզելու համար ներկայացված հաղորդման մեջ տեղ գտած այն տվյալները, որոնք վկայում են հանցագործության հատկանիշների առկայության մասին: Նշված սահմանափակումներով պայմանավորված՝ քրեական գործի հարուցման հարցը լուծելու իրավասությամբ օժտված մարմինը (պաշտոնատար անձը), օբյեկտիվ անհրաժեշտությունից ելնելով, պետք է ընտրություն կատարի, թե որ քննչական կամ այլ դատավարական գործողություններն են առաջնային և իրականացնի դրանք (քրեական գործի հարուցման փուլի առանձնահատկությունների վերաբերյալ տե՛ս Գազիկ Գևորգի Ղևոնդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԳ/0044/11/13 որոշումը):

Ուստի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով պետության ստանձնած պոզիտիվ պարտավորությունների իրագործումը՝ կյանքի իրավունքի ենթադրյալ խախտման փաստի առթիվ մանրամասն և արդյունավետ քրեադատավարական քննության իրականացումը քրեական գործի հարուցման փուլում հնարավոր չէ: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետության իրավագործության ներքո գտնվող անձի կասկածելի մահվան կապակցությամբ գործող քրեադատավարական օրենսդրության պայմաններում օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնել հնարավոր է բացառապես հարուցված քրեական գործի շրջանակներում:

Այլ խոսքով՝ այն դեպքում, երբ պետության վերահսկողության ներքո (ոստիկանությունում, քրեակատարողական հիմնարկում և այլն) գտնվող անձը մահանում է, և պետությունը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի ուժով պարտավորություն է կրում ներկայացնել մահվանը հանգեցրած իրադարձությունների համոզիչ բացատրություն, ապա իրավասու մարմինները (պաշտոնատար անձինք) կասկածելի մահվան փաստի

առթիվ պետք է հարուցեն քրեական գործ և քրեադատավարական ողջ գործիքակազմի ներգրավմամբ իրականացնեն հնարավոր ողջամիտ քայլերը՝ դեպքի հանգամանքները պարզելու համար:

27. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի թիվ 5 խցում մահացած կալանավոր Ժ.Բաղումյանի մահվան փաստի առթիվ Էրեբունու քննչական բաժնում նյութեր են նախապատրաստվել, որի ընթացքում պարզվել է, որ 1948 թվականին ծնված Ժ.Բաղումյանը ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության վարույթում քննվող քրեական գործով ներգրավված է եղել որպես մեղադրյալ և նրա նկատմամբ 2012 թվականի հոկտեմբերի 27-ից որպես խափանման միջոց է ընտրված եղել կալանավորումը: 2013 թվականի ապրիլի 25-ին Ժ.Բաղումյանի առողջական վիճակը կտրուկ վատացել է, նրան առաջին բուժօգնություն է ցույց տվել քրեակատարողական հիմնարկի հերթապահ բուժակ Գ.Մինասյանը՝ միաժամանակ կանչելով շտապօգնություն: Ժամը 20³⁵-ին շտապօգնության բրիգադը ժամանել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ և արձանագրել Ժ.Բաղումյանի կենսաբանական մահը (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը):

Դատաբժշկական փորձագետի թիվ 406 եզրակացության համաձայն՝ Ժ.Բաղումյանի դիակի դատաբժշկական փորձաքննությամբ մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել: Ժ.Բաղումյանի մահը վրա է հասել սրտի պսակաձև անոթներում արյան շրջանառության սուր խանգարումից, սրտամկանի կրկնակի ինֆարկտից: Կենդանության օրոք Ժ.Բաղումյանը տառապել է աթերոսկլերոզով, կորոնարոկարդիոսկլերոզով, հետինֆարկտային կարդիոսկլերոզով, որոնք մահվան հետ գտնվում են պատճառական կապի մեջ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Էրեբունու քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Դելեյանը 2013 թվականի հունիսի 3-ին որոշում է կայացրել Ժ.Բաղումյանի մահվան փաստի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ պատճառաբանելով, որ նախապատրաստված նյութերով Ժ.Բաղումյանի մահվան մեջ որևէ անձի մեղավորությունը չի հայտնաբերվել, բացակայում է հանցագործության դեպքը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

2013 թվականի սեպտեմբերի 27-ին Ռ.Նիսալյանը բողոք է ներկայացրել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խնդրելով վերացնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և Ժ.Բաղումյանի մահվան փաստով քրեական գործ հարուցելու և նախաքննություն կատարելու համար գործն ուղարկել ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ Ռ.Նիսալյանի բողոքը մերժվել է: Դատարանն իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ նյութերը նախապատրաստվել են լրիվ, քննիչի կողմից նյութերով ձեռք բերած հիմքերը բավարար են եղել հանցադեպի

բացակայության պատճառաբանությամբ քրեական գործի հարուցումը մերժելու համար (տե՛ս սույն որոշման 2-րդ և 11-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին Ռ.Նիսիյանի ներկայացուցիչ Մ.Շուշանյանի վերաքննիչ բողոքը մերժել է, իսկ բողոքարկվող դատական ակտը՝ բողոչ օրինական ուժի մեջ՝ պատճառաբանելով, որ առաջին առյուծի դատարանի կողմից թույլ չեն տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի և հիմք կհանդիսանային դատարանի որոշումը բեկանելու համար (տե՛ս սույն որոշման 2-րդ և 12-րդ կետերը):

28. 2013 թվականի հունիսի 3-ին Ռ.Նիսիյանը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին՝ խնդրելով Ժ.Բաղումյանի մահվան փաստով հարուցել քրեական գործ և կատարել նախաքննություն՝ իրեն ճանաչելով տուժողի իրավահաջորդ (տե՛ս սույն որոշման 1-ին, 7-րդ, 21-րդ կետերը):

Վերոնշյալ հաղորդման կապակցությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչը սահմանափակվել է Ժ.Բաղումյանի մահվան փաստի առթիվ էրեբունու քննչական բաժնում նախապատրաստած նյութերը, ինչպես նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչությունում քննվող քրեական գործի նյութերից պատճեններ պահանջելով, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկից պահանջել և նյութերին է կցել Ժ.Բաղումյանի բժշկական քարտի պատճենը: Արդյունքում, Ռ.Նիսիյանի կողմից ներկայացված հաղորդմանն ի պատասխան ուղարկված 2013 թվականի հունիսի 18-ի գրության հիմքում ՀԿԳ ավագ քննիչը դրել է այն հանգամանքը, որ էրեբունու քննչական բաժնում նյութեր են նախապատրաստվել կալանավոր Ժ.Բաղումյանի մահվան դեպքի առթիվ, նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, և համաձայն փորձագետի եզրակացության՝ Ժ.Բաղումյանի դիակի վրա մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել, նրա մահը վրա է հասել սրտի պսակաձև անոթներում արյան շրջանառության սուր խանգարումից, սրտամկանի կրկնակի ինֆարկտից (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

29. Սույն որոշման 27-28-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով 24-26-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ժ.Բաղումյանի մահվան փաստի առթիվ մանրամասն և արդյունավետ քրեադատավարական քննություն չի իրականացվել: Մինչդատական վարույթն իրականացնող մարմինները քրեակատարողական հիմնարկի կալանավոր Ժ.Բաղումյանի մահվան փաստի առթիվ քննությունն իրականացրել են քրեական գործի հարուցման փուլում՝ ժամանակային, ինչպես նաև քննչական և այլ դատավարական գործիքակազմի սահմանափակության պայմաններում: Արդյունքում, Ժ.Բաղումյանի կյանքի իրավունքի ենթադրյալ խախտման կապակցությամբ վերջինիս կնոջ՝ Ռ.Նիսիյանի կողմից ներկայացված հաղորդման մեջ բարձրացված մի շարք հարցեր՝ այն, որ Ժ.Բաղումյանին քրեակատարողական հիմնարկում պատշաճ բժշկական օգնություն չի

ցուցաբերվել, նա արժանացել է անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և այլն, քննության առարկա չեն դարձել, մնացել են անպատասխան:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ արդյունավետ քրեադատավարական քննություն իրականացված չլինելու վերաբերյալ եզրահանգումը վերաբերելի է ինչպես ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնին, այնպես էլ ՀՀ հատուկ քննչական ծառայությանը:

Ոստի, հիմնագուրկ և գործի նյութերից չբխող են ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ նյութերով ձեռք բերած փաստական տվյալները բավարար են եղել հանցագործի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործի հարուցումը մերժելու համար:

30. Հիմք ընդունելով սույն որոշման 22-րդ և 29-րդ կետերում շարադրված եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սույն գործով թույլ են տվել դատական սխալներ՝ դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար:

Ոստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է բեկանել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 11-ի, Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 10-ի և 2014 թվականի հունվարի 14-ի որոշումները, Ժ.Բաղումյանի մահվան փաստի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Գեղեյանի 2013 թվականի հունիսի 3-ի որոշումը վերացնել, իսկ ՀՀ հատուկ քննչական ծառայությանը պարտավորեցնել վերացնելու սույն որոշմամբ արձանագրված Ռ.Նիսիյանի իրավունքների և ազատությունների խախտումները:

31. Մինևույն ժամանակ, սույն գործի փաստական տվյալների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ժ.Բաղումյանի մահվան փաստի առթիվ հարուցվելիք քրեական գործի շրջանակներում արդյունավետ քրեադատավարական քննություն իրականացնելու համար անհրաժեշտ է, ի թիվս այլ հարցերի՝

ա) Պատշաճ արձագանքի արժանացնել ամուսնու նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման և դրա արդյունքում նրա կյանքի իրավունքի խախտման վերաբերյալ Ռ.Նիսիյանի փաստարկները: Իրավասու մարմինը պարտավոր է քայլեր ձեռնարկել հանցագործության մասին հաղորդման մեջ արված այնպիսի հայտարարությունների ստուգման ուղղությամբ, ինչպիսիք են քրեակատարողական հիմնարկի բուժմասում արհեստավարժ

և պատշաճ բուժօգնություն ցուցաբերելու համար նվազագույն պայմանների բացակայությունը, հիվանդին՝ համապատասխան հետազոտություններ անցնելու և հետագա բուժումը կազմակերպելու նպատակով ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ չտեղափոխելը: Այս կապակցությամբ Վճարելի դատարանն ընդգծում է, որ այն հանգամանքը, որ մահվանը նախորդող ժամանակահատվածում Ժ.Բաղումյանը գտնվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի բուժանձնակազմի հսկողության ներքո, դեռևս չի վկայում պատշաճ և արդյունավետ մասնագիտական բժշկական օգնություն ստանալու մասին: Բացի այդ, բուժման արդյունավետության մասին չի վկայում նաև քննիչի այն դիտարկումը, որ ՔԿՀ-ում աշխատում է ոչ թե մեկ բուժակ, այլ քսանմեկ բուժաշխատող: Հարկ է նշել, որ *Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում Սարգոյ իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ այն փաստարկը, որ ՔԿՀ-ի բուժման ունի բավարար անձնակազմ, անտեղի է, եթե հիվանդի համար հատկապես չի ապահովվում արդյունավետ բժշկական օգնություն (տե՛ս Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով 2010 թվականի հունիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 34334/04, կետ 112):

բ) Քայլեր ձեռնարկել պարզելու՝

- արդյո՞ք ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի բժշկական մասում կան բավարար պայմաններ նման հիվանդություններով տառապող անձին անհրաժեշտ բուժօգնություն ցուցաբերելու համար,
- առկա՞ է արդյոք համապատասխան մասնագիտացում ունեցող բուժանձնակազմ,
- առկա՞ են արդյոք կանոնավոր հետազոտություններ իրականացնելու պայմաններ, անհրաժեշտ սարքավորումներ, համապատասխան դեղորայք:

գ) Հարցաքննել Ժ.Բաղումյանի բուժումն իրականացրած ՔԿՀ-ի բժշկական անձնակազմին և այլ անձանց՝ պարզելու, թե ի՞նչ հետազոտություններ են կատարվել և ինչպիսի՞ն են եղել դրանց արդյունքները, ի՞նչ բուժում է ստացել հիվանդը, ի՞նչ ընթացք (դինամիկա) է ունեցել նրա հիվանդությունը քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում: Ընդ որում, էական են ցուցաբերվող բուժօգնության արդյունքները՝ որքանո՞վ են դրանք արդյունավետ եղել, արդյո՞ք ձեռնարկված միջոցները կարգավորել են անձի առողջական վիճակը:

դ) Միջոցներ ձեռնարկել պարզելու, թե ինքնագագացողության կտրուկ վատթարացման պայմաններում ինչո՞ւ Ժ.Բաղումյանը հիվանդանոց կամ այլ մասնագիտացված հաստատություն չի տեղափոխվել և արդյունավետ են եղել արդյոք անձի վիճակը կայունացնելու համար ՔԿՀ-ում ձեռնարկված միջոցառումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասով, 290-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել:

2. Դիմող Ռուզաննա Հրաչիկի Նիսիյանի բողոքը մերժելու վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումը բեկանել և ՀՀ հատուկ քննչական ծառայությանը պարտավորեցնել՝ վերացնելու անձի իրավունքների և ազատությունների խախտումները:

3. Դիմող Ռ.Նիսիյանի բողոքը մերժելու վերաբերյալ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հունվարի 14-ի որոշումը բեկանել, Ժորժիկ Լևոնի Բաղումյանի մահվան փաստի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Դելեյանի 2013 թվականի հունիսի 3-ի որոշումը վերացնել:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

22.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԱՐԱԳ/0059/06/13
Նախագահող դատավոր՝ Գ.Մելիք-Սարգսյան

ԱՐԱԳ/0059/06/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի դեկտեմբերի 25-ի որոշման դեմ մեղադրյալ Արսեն Գերենիկի Հունանյանի պաշտպան Մ.Սարգսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի հոկտեմբերի 14-ին նախաքննության մարմնի կողմից որոշում է կայացվել Արսեն Գերենիկի Հունանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Նույն օրը մեղադրյալ Ա.Հունանյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին որոշում է կայացվել:

2. Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2013 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ բավարարվել է նախաքննության մարմնի

միջնորդությունը և Ա.Հունանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամանակով:

3. Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ մեղադրյալ Ա.Հունանյանի պաշտպան Մ.Սարգսյանի կողմից 2013 թվականի դեկտեմբերի 18-ին բերված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

4. Վերաքննիչ դատարանի որոշման դեմ մեղադրյալ Ա.Հունանյանի պաշտպան Մ.Սարգսյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2014 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Հունանյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը պաշտպանության կողմին հանձնված (պատշաճ ձևով ուղարկված) լինելու վերաբերյալ որևէ ապացույց գործի նյութերում առկա չէ: Գործի նյութերում առկա է միայն հիշյալ դատական ակտը ՀՀ ոստիկանության ՔԳՎ Արագածոտնի մարզային քննչական բաժնի պետին ուղարկելու վերաբերյալ դատավորի ուղեկցական գրության պատճենը (տե՛ս նյութեր, թերթ 52):

Ա.Հունանյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման եզրափակիչ մասում նշված է, որ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ 5-օրյա ժամկետում, սակայն նշված չէ, թե որ պահից է սկսվում բողոքարկման 5-օրյա ժամկետի ընթացքը (տե՛ս նյութեր, թերթ 50-51):

6. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ 2013 թվականի դեկտեմբերի 18-ին բերված վերաքննիչ բողոքում մեղադրյալ Ա.Հունանյանի պաշտպան Մ.Սարգսյանը նշել է, որ բողոքարկվող դատական ակտը պաշտպանության կողմը ստացել է 2013 թվականի դեկտեմբերի 18-ին (տե՛ս նյութեր, թերթ 57-60):

7. Մեղադրյալ Ա.Հունանյանի պաշտպան Մ.Սարգսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի պահանջներով՝ ընդհանուր իրավասության դատարանը 14.10.2013թ. որոշմամբ սահմանել է բողոքարկման հնգօրյա ժամկետ:

Ընդհանուր իրավասության դատարանի կողմից սույն գործի շրջանակներում որոշումը կայացվել է 14.10.2013թ., իսկ պաշտպանը վերաքննիչ բողոք է ներկայացրել 18.12.2013թ.՝ պատճառաբանելով, որ ինքը բողոքարկվող որոշումն ստացել է 18.12.2013թ.: Մեղադրյալի նկատմամբ դեռևս 14.10.2013թ. որոշում է կայացվել հետախուզում հայտարարելու մասին:

Մինչդեռ, վերաքննիչ քրեական դատարանն արձանագրում է, որ պաշտպանը ՀՀ վերաքննիչ քրեական դատարան չի ներկայացրել իր կողմից հիշյալ որոշումը 18.12.2013թ. ստանալը հավաստող որևէ փաստաթուղթ:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381 հոդվածի 2-րդ մասի պահանջների՝ «Այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը (...) ժամկետանց է (...), վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության»:

Վերը նշվածից ելնելով՝ վերաքննիչ դատարանը գտնում է, որ պաշտպանի վերաքննիչ բողոքը՝ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 14.10.2013թ. որոշման դեմ՝ ժամկետանց է, ուստի այն պետք է թողնել առանց քննության» (տե՛ս նյութեր, թերթ 67-68):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

8. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ 2013 թվականի դեկտեմբերի 18-ին բերված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելով՝ վերաքննիչ դատարանը խախտել է Ա.Հունանյանի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ և 47-րդ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ և 17-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Ա.Հունանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը, ի խախտումն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասի, մեղադրյալին չի ուղարկվել: Այս կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ պատշաճ ծանուցման պարտականության իմաստով դատարանը պարտավոր է ոչ միայն կողմերին պատշաճ ձևով հանձնել (ուղարկել) կայացված դատական ակտը, այլև պարզաբանել այդ ակտի բողոքարկման ժամկետներն ու կարգը:

9. Անդրադառնալով իր կողմից Առաջին ատյանի դատարանի դատական ակտը ստանալու ժամկետին՝ բողոք բերած անձը նշել է, որ այն ստացել է մեղադրյալ Ա.Հունանյանի վերաբերյալ քրեական գործով որպես պաշտպան ներգրավվելուց հետո՝ 2013 թվականի դեկտեմբերի 18-ին, և այդ փաստը հիմնավորող ապացույցը գտնվում է քրեական գործի նյութերում: Այս կապակցությամբ բողոքաբերը վկայակոչել է Տ.Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԳ/0066/11/12 որոշումը և նշել, որ եթե վերաքննիչ դատարանը ղեկավարվեր ոչ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, այլ նաև Վճռաբեկ դատարանի՝ վերոնշյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներով, ապա սույն գործով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու հնգօրյա ժամկետը կհաշվեր ոչ թե բողոքարկվող

որոշման հրապարակման, այլ այդ որոշումը բողոքաբերի կողմից ստանալու օրվանից:

10. Վերոշարադրյալ փաստարկների հիման վրա՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը հակասո՞ւմ է արդյոք *Տ.Հովհաննիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0066/11/12 որոշմանը:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Վերաքննիչ բողոք բերվում [է] առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:

Մեջբերված քրեադատավարական դրույթը Վճռաբեկ դատարանը ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի ՍԳՌ-1052 որոշման համատեքստում վերլուծության է ենթարկել *Տ.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում առկա՝ «հրապարակման պահից» բառակապակցությունը պետք է մեկնաբանվի որպես դատական ակտն ստանալու պահը, և ժամկետների հաշվարկման ելակետ պետք է համարել որոշումը շահագրգիռ անձին հանձնելու պահը:

(...) առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի հաշվարկն սկսվում է դատական ակտը շահագրգիռ անձին հանձնելու և ոչ թե այն դատական նիստերի դաիլինում հրապարակելու պահից» (տե՛ս Տիգրան Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0066/11/12 որոշման 23-24-րդ կետերը):

13. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր

են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414²-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե՝

(...)

2) վերանայվող դատական ակտը առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին,

(...)»:

Մեջբերված իրավադրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել *Լ.Բարսյանի* գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «(...) Վճռաբեկ դատարանի որոշումները պարտադիր են ստորադաս դատարանների համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ: Այս ընդհանուր կանոնից բացառություն են այն դեպքերը, երբ ստորադաս դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ Վճռաբեկ դատարանի դատական ակտի հիմնավորումները կիրառելի չեն քննվող գործի փաստական հանգամանքների նկատմամբ (տե՛ս Լուսինե Բարսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԳ/0093/11/11 որոշման 11-րդ կետը):

14. *Ա.Միմոնյանի* գործով որոշման մեջ զարգացնելով *Լ.Բարսյանի* գործով ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշման կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է ղեկավարվի *Ս.Այվազյանի* գործով որոշման 26-րդ կետում ամրագրված չափանիշներով, քանի որ դրանք վերաբերելի են ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, այնպես էլ վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշումների կիրառելիության հարցի լուծման շրջանակներին» (տե՛ս Անահիտ Միմոնյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԳ/0055/11/13 որոշման 15-րդ կետը):

Ս.Այվազյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշման 26-րդ կետի համաձայն՝ «(...) ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզահամադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը՝ եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն» (տե՛ս Մեյրան Այվազյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-17/08 որոշման 26-րդ կետը):

15. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը պաշտպանության կողմին պատշաճ ձևով ուղարկված լինելու վերաբերյալ որևէ ապացույց գործի նյութերում առկա չէ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ 2013 թվականի դեկտեմբերի 18-ին բերված վերաքննիչ բողոքում մեղադրյալ Ա.Հունանյանի պաշտպան Մ.Սարգսյանը նշել է, որ բողոքարկվող դատական ակտը պաշտպանության կողմը ստացել է 2013 թվականի դեկտեմբերի 18-ին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերոնշյալ հանգամանքների առկայության պարագայում, սակայն, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ մեղադրյալ Ա.Հունանյանի պաշտպան Մ.Սարգսյանի կողմից 2013 թվականի դեկտեմբերի 18-ին բերված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

16. Սույն որոշման 15-րդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում շարադրված և, համապատասխանաբար, *Լ.Բարսյանի* և *Ա.Մինոնյանի* գործերով կայացված որոշումներում ձևավորված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը հակասում է *Տ.Հովհաննիսյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԳ/0066/11/12 որոշմանը:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ *Տ.Հովհաննիսյանի* գործով կայացված դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող դրույթը` ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն իր բնույթով առավել ընդհանրական է և դրա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն և *Տ.Հովհաննիսյանի* գործերի փաստական հանգամանքների ընդհանրությունն այն է, որ երկու դեպքում էլ վերաքննիչ դատարանը սխալ է հաշվել առաջին ատյանի դատարանի` գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի սկիզբը և արդյունքում սահմանափակել է անձի դատական պաշտպանության իրավունքը: Նշված փաստական հանգամանքների համընկնումը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս պնդելու, որ *Տ.Հովհաննիսյանի* գործով որոշման հիմնավորումները (այդ թվում` օրենքի մեկնաբանությունները) սույն գործով որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանի համար պարտադիր են եղել: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը, անտեսելով *Տ.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումները, Առաջին ատյանի դատարանի դատական ակտը պաշտպանության կողմին օրենքով սահմանված կարգով հանձնված չլինելու հանգամանքը մեկնաբանել է ի վնաս մեղադրյալի և Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ մեղադրյալ Ա.Հունանյանի պաշտպան Մ.Սարգսյանի կողմից 2013 թվականի դեկտեմբերի 18-ին բերված վերաքննիչ բողոքը, ժամկետանց լինելու պատճառաբանությամբ, թողել է առանց քննության:

17. Անդրադառնալով բողոքի հեղինակի այն փաստարկին, որ պատշաճ ծանուցման պարտականության իմաստով դատարանը պարտավոր է ոչ միայն կողմերին պատշաճ ձևով հանձնել (ուղարկել) կայացված դատական ակտը, այլև պարզաբանել այդ ակտի բողոքարկման ժամկետներն ու կարգը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը)` Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Տ.Հովհաննիսյանի* գործով որոշման համաձայն` «(...) գործն ըստ էության չլուծող դատական ակտ կայացնելիս առաջին ատյանի դատարանը պետք է դրա եզրափակիչ մասում պարզաբանի, թե որ պահից սկսած և ինչ ժամկետում կարող է այդ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերվել: (...) առաջին ատյանի դատարանի կողմից վերոնշյալ պարզաբանումներ չտալը հանգեցնում է անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման, քանի որ զուտ ձևական խոչընդոտներով (օրինակ` անձին դատական ակտի բողոքարկման ժամկետի սկզբի վերաբերյալ չտեղեկացնելով) սահմանափակվում է առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու` անձին

ընձեռված հնարավորությունը» (տե՛ս Տիգրան Հովհաննիսյանի գործով Վճարելի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԿԳ/0066/11/12 որոշման 13-րդ կետը):

Մինչդեռ սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը չի բովանդակում իրազեկում այդ դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու ժամկետի սկզբի վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): Վերաքննիչ դատարանն էլ, իր հերթին, անուշաղբության է մատնել նշված հանգամանքը և պատշաճ գնահատականի չի արժանացրել Առաջին ատյանի դատարանի կողմից Ա.Հունանյանի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման փաստը:

18. Սույն որոշման 12-17-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճարելի դատարանն արձանագրում է, որ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի կողմից առանց քննության թողնելը հանգեցրել է Ա.Հունանյանի արդար դատական քննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների խախտման: Այլ խոսքով՝ խախտվել են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում, որն ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա և հանգեցրել չհիմնավորված որոշման կայացման: Ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա՝ սույն գործով Վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Արսեն Դերենիկի Հունանյանի պաշտպան Մնացական Սարգսյանի վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

23.

ՎԲ-07/13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Մ.ԱՎԱԳՅԱՆԻ

2014 թվականի մայիսի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով նոր հանգամանքի հիմքով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2006 թվականի դեկտեմբերի 27-ի, 2007 թվականի փետրվարի 23-ի, 2007 թվականի մայիսի 14-ի որոշումների, 2007 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճռի, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2008 թվականի մայիսի 4-ի որոշման դեմ Ժիրայր Միմոնի Սեֆիլյանի վճռաբեկ բողոքի հիման վրա նոր հանգամանքի հիմքով հարուցված վարույթով գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2006 թվականի օգոստոսի 15-ի որոշմամբ բավարարվել է Ժիրայր Միմոնի Սեֆիլյանի քաղաքային և բջջային հեռախոսահամարների հեռախոսային խոսակցությունները և այլ հաղորդումները գաղտնալսելու և ձայնագրառելու թույլտվություն ստանալու մասին ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանադրական կարգի պահպանման և սահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչության պետ Զ.Նանյանի միջնորդությունը՝ 6 ամիս ժամկետով:

2. Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ բավարարվել է 2006 թվականի դեկտեմբերի 2-ին Երևանի պարարվեստի ուսումնարանի դահլիճում կայանալիք «Հայ կամավորականների համախմբում» կազմակերպության համաժողովի ընթացքում ելույթներն ու կոչերը գաղտնալսելու և ձայնագրառելու թույլտվություն ստանալու մասին ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանադրական կարգի պահպանման և ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչության պետ Ջ.Նանյանի միջնորդությունը:

3. 2006 թվականի դեկտեմբերի 8-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է թիվ 58211806 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի հատկանիշներով:

Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի որոշումներով բավարարվել են Ժ.Սեֆիլյանի աշխատավայրում և բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական գլխավոր վարչության պետի տեղակալ Ա.Տոնոյանի միջնորդությունները:

2006 թվականի դեկտեմբերի 10-ին Ժիրայր Սեֆիլյանը ձերբակալվել է:

2006 թվականի դեկտեմբերի 12-ին Ժ.Սեֆիլյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ Ժ.Սեֆիլյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը՝ 2 ամիս ժամկետով:

Ժ.Սեֆիլյանի պաշտպաններ Ա.Զաքարյանի, Վ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2006 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի որոշումը՝ թողել անփոփոխ:

Առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունվարի 7-ի որոշմամբ կալանքը գրավով փոխարինելու մասին Ժ.Սեֆիլյանի պաշտպաններ Ա.Զաքարյանի և Վ.Գրիգորյանի միջնորդությունը մերժվել է:

Ժ.Սեֆիլյանի պաշտպաններ Ա.Զաքարյանի, Վ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2007 թվականի հունվարի 22-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2007 թվականի հունվարի 7-ի որոշումը՝ թողել անփոփոխ:

Առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 7-ի որոշմամբ Ժ.Սեֆիլյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 ամսով:

Ժ.Սեֆիլյանի պաշտպաններ Ա.Զաքարյանի, Վ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2007 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ բողոքը

մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2007 թվականի փետրվարի 7-ի որոշումը՝ թողել անփոփոխ:

Առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ Ժ.Սեֆիլյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է ևս 2 ամսով:

Ժ.Սեֆիլյանի պաշտպաններ Ա.Զաքարյանի, Վ.Գրիգորյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2007 թվականի մայիսի 14-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2007 թվականի ապրիլի 4-ի որոշումը՝ թողել անփոփոխ:

2007 թվականի մայիսի 15-ի որոշմամբ Ժ.Սեֆիլյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, և նրան նոր ծավալով մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով և 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2007 թվականի հունիսի 7-ին Ժ.Սեֆիլյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Առաջին ատյանի դատարան:

4. Առաջին ատյանի դատարանը 2007 թվականի հունիսի 22-ին որոշում է կայացրել քրեական գործը դատական քննության նշանակելու մասին և Ժ.Սեֆիլյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը թողել է անփոփոխ:

Առաջին ատյանի դատարանը 2007 թվականի օգոստոսի 6-ի դատավճռով ճանաչել և հռչակել է ամբաստանյալ Ժ.Սեֆիլյանի անմեղությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարման մեջ և ամբաստանյալ Ժ.Սեֆիլյանին այդ մեղադրանքի մասով արդարացրել:

Ամբաստանյալ Ժ.Սեֆիլյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվվել է 2006 թվականի դեկտեմբերի 9-ից:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Վ.Մալխասյանը և Վ.Արոյանը:

5. Ժ.Սեֆիլյանի պաշտպաններ Վ.Գրիգորյանի և Ա.Զաքարյանի, Վ.Մալխասյանի պաշտպան Մ.Շուշանյանի և մեղադրող Ա.Սկրտչյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2007 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճռով Առաջին ատյանի դատարանի 2007 թվականի օգոստոսի 6-ի դատավճիռը Վ.Արոյանի մասով փոփոխել է, Ժ.Սեֆիլյանի, Վ.Մալխասյանի, ինչպես նաև մնացած մասով դատավճիռը թողել է անփոփոխ, իսկ պաշտպանների վերաքննիչ բողոքները՝ առանց բավարարման:

6. Վերաքննիչ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճռի դեմ հավատարմագրված փաստաբանի միջոցով դատապարտյալ Ժ.Սեֆիլյանի պաշտպաններ Ա.Զաքարյանի և Վ.Գրիգորյանի, Վ.Մալխասյանի պաշտպան Մ.Շուշանյանի բերած վճռաբեկ բողոքները Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 4-ի որոշմամբ վերադարձվել են՝ ՀՀ քրեական դատա-

վարության օրենսգրքի 407-րդ հոդվածի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ:

7. Ժ.Սեֆիլյանի գանգատի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) 2012 թվականի հոկտեմբերի 2-ին *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* գործով (գանգատ թիվ 22491/08) վճիռ է կայացրել (այսուհետ նաև՝ *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռ), որով ճանաչել է Ժ.Սեֆիլյանի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) երաշխավորված ազատության և անձնական անձեռնմխելիության, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքների խախտման փաստը:

8. Որպես նոր հանգամանք վկայակոչելով Եվրոպական դատարանի՝ 2012 թվականի հոկտեմբերի 2-ի *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը՝ Ժ.Սեֆիլյանը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի, 2007 թվականի փետրվարի 23-ի, 2007 թվականի մայիսի 14-ի և ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2008 թվականի մայիսի 4-ի որոշումների վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ վճռաբեկ բողոք է ներկայացրել, որի հիման վրա Վճռաբեկ դատարանը 2013 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ հարուցել է ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի, 2007 թվականի փետրվարի 23-ի, 2007 թվականի մայիսի 14-ի և ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2008 թվականի մայիսի 4-ի որոշումների վերանայման վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

9. Նախաքննության մարմնի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի որոշման համաձայն՝ թիվ 58211806 քրեական գործը հարուցվել է «2006 թվականի դեկտեմբերի 2-ին «Հայ կամավորականների համախմբման» անդրանիկ հավաքի ժամանակ պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչերի դեպքի առթիվ» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 1):

10. 2006 թվականի դեկտեմբերի 8-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել Ժ.Սեֆիլյանի աշխատավարձում խուզարկության թույլտվության միջնորդություն հարուցելու մասին՝ նշելով, որ. «2006 թվականի դեկտեմբերի 2-ին, Երևանի պարարվեստի պետական քոլեջի դահլիճում կայացել է «Հայ կամավորականների համախմբման» անդրանիկ հավաքը, որի ժամանակ ներկա են գրվել շուրջ 150 անձինք, ինչպես Երևան քաղաքից, այնպես էլ մարզերից:

Հավաքի ընթացքում տեղի ունեցած էլույթների ժամանակ հնչել են պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված կոչեր:

(...) իշխանությունը բռնությամբ զավթելու գործընթացն իրականացնելու համար հավաքի նախաձեռնող ժիրայր Սեֆիլյանի աշխատավայրում կարող են գրնվել զենք, ռազմամթերք, պլաններ, սխեմաներ, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող այլ առարկաներ, իրեր և փաստաթղթեր (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 77):

Ժ.Սեֆիլյանի աշխատավայրում խուզարկություն կատարելու միջնորդությունը բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի որոշման համաձայն՝ «(...) միջնորդությունը պետք է բավարարել, քանի որ նախաքննությամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ իշխանությունը բռնությամբ զավթելու գործընթացն իրականացնելու համար հավաքի նախաձեռնող ժիրայր Սեֆիլյանի աշխատավայրում կարող են գրնվել զենք, ռազմամթերք, պլաններ, սխեմաներ, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող այլ առարկաներ, իրեր և փաստաթղթեր» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 79):

Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի մեկ այլ որոշմամբ Ժ.Սեֆիլյանի բնակության վայրում խուզարկության թույլտվության նմանատիպ միջնորդությունը բավարարվել է նույնաբովանդակ հիմնավորմամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 135, 137):

11. Նախաքննության մարմնի կողմից Ժ.Սեֆիլյանը որպես մեղադրյալ է ներգրավվել, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով և 235-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ «նա 2006 թվականի դեկտեմբերի 2-ին, Երևանի պարսրվեստի պետական քոլեջի դահլիճում նախաձեռնել է «Հայ կամավորականների համախմբման» անդրանիկ հավաքը, որին ներկա գրնվող շուրջ 150 անչանց ներկայությամբ կարարել է Հայաստանի Հանրապետության պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչեր, այն է՝

«...Այսրեղ պարբերաբար ելույթների ընթացքում հայրնվեց, հայրնեցին, որ ի՞նչ անենք, հերիք ա, եկեք միջոցների մեջ խորականություն չդենք: Ես համաձայն եմ, իրոք չդենք...»

«...Նորից եմ շեշտում, որ մինչև կազմակերպվենք ոչ մի գործ առաջ չի գնալու: «Քոչարյան, Սերժ, հեռացիր» կրկնելով, իրենք չեն հեռանա: Այդ մարդիկ խաղաղ ցույցերով չեն հեռանա: Ես չեմ հավաստիացնում եմ: Գրսի ձնշումով չեն հեռանալու: Եթե մենք կազմակերպվեցինք, երբ կարողացանք որակական լուրջ ուժ սրեղծել, իրենք հեռանալու են...»:

«...Ունենք մեկ խնդիր: Ո՞րն է: Այս իշխանություններից ձերբազարվելը: Այսինքն մենք այնքան պետք է կազմակերպվենք այս մի քանի ամիսը, որ կարողանանք չթողնել այս մարդկանց վերարտադրվել, որովհետև եթե վերարտադրվեն, մեր հեռանկարային գործը իրականացնելու համար լուրջ դժվարություններ ենք ունենալու: Այս հրեշները վերարտադրվելուց հետո շատ ավելի վիրանգավոր են լինելու: Այս մի քանի ամիսը մեզ շատ կարևոր է, որ մենք կազմակերպվենք...»:

Բացի այդ, մասնակցելով Արցախի ազատամարտին և 11.12.2002թ. ավարտելով ծառայությունը և զորացրվելով, Ջինված ուժերի համապատասխան սորոսքաժանմանը չի հանձնել և մինչև 2006 թվականի դեկտեմբերի 9-ը ապօրինի իր մուր պահել ու կրել է ՀՀ Պաշտպանության նախարարի 02.10.1993 թ. թիվ 0397 հրամանով որպես հաշվեցուցակային հրազեն իրեն տրամադրված, հրազեն հանդիսացող «ՊՍ» տեսակի ՊԿ 2291 գործարանային համարով արբճանակը, ռազմամթերք հանդիսացող 9 մմ տրամաչափի 25 փամփուշներով: Ինչպես նաև ապօրինի ձեռք է բերել և իր բնակության վայրում, քաղ. Երևան, Լեփսիուսի փողոց, շենք 17, բն. 42 հասցեով, պահել է ռազմամթերք հանդիսացող՝ 9 մմ տրամաչափի 53 փամփուշներ (նախատեսված «ՊՄ» և «ԱՊՄ» տեսակի արբճանակների համար), 9 մմ տրամաչափի 3 փամփուշներ (նախատեսված «Պարաբելլում», «Բերետրա», «Բրաունինգ», «Գլոկ» և մի շարք այլ արբճանակների համար), 5,45 մմ տրամաչափի 1974 թ. նմուշի 8 փամփուշներ (նախատեսված «ԱԿ-74» տեսակի ինքնաձիգերի, «ՌՊԿ-74» տեսակի ձեռքի զնդացիրների և դրանց մոդիֆիկացիաների համար), 5,6 մմ տրամաչափի օդակավոր բոցավառման հրացանային 2 փամփուշներ (նախատեսված համապատասխան տրամաչափի «Տոգ» մոդելի հրացանների, «ՄԱԲՈԼԻՆ» տեսակի արբճանակների և մի շարք այլ սկոսափող զենքերի համար) և 7,62 մմ տրամաչափի հրացանային 1 փամփուշ (նախատեսված «Մոսին» տեսակի հրացանների, կարաբինների, «ՍԿԴ» տեսակի հրացանների և «ՊԿ» տեսակի զնդացիրների համար), որոնք 2006 թվականի դեկտեմբերի 9-ին և լույս 10-ի զիջերը հայտնաբերվել և առգրավվել են հիշյալ բնակարանում կատարված խուզարկությանը» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 61-62):

12. Մեղադրական եզրակացության համաձայն՝ Ժ.Սեֆիլյանին ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների կատարման մեջ առաջադրված մեղադրանքի հիմքում դրվել են վկաների ցուցմունքները, Ժ.Սեֆիլյանի աշխատավայրում և բնակարանում կատարված խուզարկությունների ժամանակ առգրավված իրեղեն ապացույցները, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 1-ի որոշման հիման վրա կատարված գաղտնալսման արդյունքում 2006 թվականի դեկտեմբերի 2-ին Երևանի պարարվեստի պետական քոլեջի դահլիճում կայացած «Հայ կամավորականների համախմբում» կազմակերպության անդրանիկ հավաքի ժամանակ տեղի ունեցած ելույթների ձայնագրությունը՝ ամրագրված թվով 5 աուդիոժապավեններում, Ժ.Սեֆիլյանի աշխատավայրում կատարված խուզարկությանը առգրավված նույն ելույթների տեսաձայնագրությունները՝ 1 տեսաժապավենով, դատաձգաբանական, դատապալթյունատեսխնիկական, սառը զենքի և դատաքիմիական համալիր փորձաքննության 2006 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 2442 եզրակացությունը, ՀՀ ոստիկանությունից և պաշտպանության նախարարությունից, ԼՂՀ պաշտպանության բանակից և ոստիկանությունից ստացված գրությունները (տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 75-105):

13. Առաջին ատյանի դատարանի 2007 թվականի օգոստոսի 6-ի դատավճռով Ժ.Սեֆիլյանը ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անմեղ և արդարացվել է, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը հիմնավորված է համարվել վերջինիս աշխատավայրում և բնակարանում կատարված խուզարկությունների արձանագրություններով, դատապայթյունատեխնիկական, սառը զենքի և դատաքիմիական համալիր փորձաքննության քիվ 2442 եզրակացությամբ, ՀՀ ոստիկանությունից և պաշտպանության նախարարությունից, ԼՂՀ պաշտպանության բանակից և Ոստիկանությունից ստացված գրություններով (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 397-414):

Նույն ապացույցները դրվել են նաև Ժ.Սեֆիլյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 25-ի որոշման հիմքում (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 110-120):

3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

14. Բողոք բերած անձը փաստարկել է, որ Եվրոպական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի՝ *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* վճռով ճանաչվել է իր՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով երաշխավորված ազատության և անձնական անձեռնմխելիության, 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքների խախտման փաստը:

Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին որոշումը, հարուցված քրեական գործի շրջանակներում Առաջին ատյանի դատարան ներկայացված՝ Ժ.Սեֆիլյանի աշխատավայրում և բնակարանում խուզարկություններ կատարելու համար թույլտվություն ստանալու մասին միջնորդությունները և դրանք բավարարելու մասին որոշումները հիմնավորվել են Եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի 8-րդ հոդվածի պահանջներին հակասող ճանաչված՝ Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի օգոստոսի 15-ի՝ Ժ.Սեֆիլյանի հեռախոսային խոսակցությունների, այլ հաղորդումների և 2006 թվականի դեկտեմբերի 1-ի՝ Երևանի Պարարվեստի ուսումնարանի դահլիճում 2006 թվականի դեկտեմբերի 2-ին կայանալիք «Հայ կամավորականների համախմբում» կազմակերպության համաժողովի ընթացքում ելույթների ու կոչերի գաղտնալսումը և ձայնագրառումը թույլատրելու մասին որոշումների հիման վրա ձեռք բերված տեղեկություններով: Կոնվենցիայի 8-րդ և ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածների պահանջների խախտմամբ ձեռք բերված տեղեկությունների հիման վրա կայացված որոշումներով կատարված խուզարկության արդյունքում զենքի ու ռազ-

մամբերքի հայտնաբերումն էլ հիմք է ծառայել Ժ.Սեֆիլյանին մեղադրանք առաջադրելու և հետագայում դատապարտելու համար:

Ըստ բողոք բերած անձի՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործմամբ քրեական գործ հարուցելու, իր աշխատավայրի և բնակարանի խուզարկություն իրականացնելու հետևանքով ինքը գրկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հնարավորությունից՝ իր տիրապետման տակ գտնվող զենքը կամովին հանձնելով ազատվել քրեական պատասխանատվությունից:

Ելնելով վերագրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է հարուցել դատական ակտերի վերանայման վարույթ, անթույլատրելի ճանաչել իր բնակարանում և աշխատավայրում 2006 թվականի դեկտեմբերի 9-ին կատարված խուզարկությունների արդյունքում կազմված արձանագրությունները, բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճիռը և Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 4-ի որոշումը՝ իրեն մեղավոր ճանաչելու մասով, և այդ մասով կարճել քրեական գործի վարույթը՝ իրեն ազատելով քրեական պատասխանատվությունից, ինչպես նաև բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի, 2007 թվականի փետրվարի 23-ի և 2007 մայիսի 14-ի որոշումները:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

I. Ներպեղական դատական արյանների կողմից կայացված ակտերի վերանայման հիմքը.

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռն արդյո՞ք Վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի, 2007 թվականի փետրվարի 23-ի, 2007 թվականի մայիսի 14-ի որոշումները, 2007 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճիռը և ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2008 թվականի մայիսի 4-ի որոշումը վերանայելու հիմք է:

16. Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագրության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա

(...)»:

Քսերաժն ընդդեմ Ալբանիայի գործով Եվրոպական դատարանը նշում է, որ «(...) Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո իրավունքի գերակայությունը պայմանավորվող պետությունների ընդհանուր նվաճումն է, որի հիմնարար կողմերից է իրավական որոշակիության սկզբունքը, որը պահանջում է, ի թիվս այլնի, որ եթե դատարանները վերջնականապես որոշել են որևէ հարց, նրանց որոշումը չպետք է կասկածի տակ դրվի (տես *Brumărescu v. Romania* [ՄՊ], թիվ 28342/95, § 61, ՄԻԵԴ 1999-VII):

(...) [Բ]րավական որոշակիության պահանջները բացարձակ չեն: Այս սկզբունքից շեղումն արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհատթահարելի բնույթ ունեցող հանգամանքների թելադրանքով (տես *Ryabykh v. Russia*, թիվ 52854/99, § 52, ՄԻԵԿ 2003-IX) կամ եթե լուրջ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ (տես *Bratyakin v. Russia* (որոշում), թիվ 72776/01, 9 մարտի 2006)» (*Xheraj v. Albania* գործով 2008թ. հուլիսի 29-ի վճռի 51-52-րդ կետեր):

Ռադչիկովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանը, վերահաստատելով իրավական որոշակիության սկզբունքի կարևորությունը, նշել է, որ քրեական գործերով վերանայման առանձնահատուկ համատեքստում իրավական որոշակիության սկզբունքի պահանջը բացարձակ չէ և այս սկզբունքից շեղվող ցանկացած որոշում պետք է գնահատվի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետի լույսի ներքո, որն ուղղակիորեն թույլատրում է պետությանը նոր փաստերի կամ նախորդ վարույթում տեղ գտած՝ գործի ելքի վրա ազդող հիմնարար թերության հիմքով նորոգել գործի վարույթը (*Radchikov v. Russia* գործով 2007 թվականի մայիսի 24-ի վճռի 42-րդ կետ):

Վերը մեջբերված իրավական նորմերի և դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ այնպիսի բացառիկ դեպքերում, երբ ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր, կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա, անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակը գերակայում է իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքի և կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (*non bis in idem*) հիմնարար պահանջի (Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին կետ) նկատմամբ:

ՀՀ օրենսդիրը, ելնելով Եվրոպական կոնվենցիայի վերոհիշյալ դրույթներից, դրանցում նշված չափանիշներին և պայմաններին համապատասխան, նախատեսել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ի թիվս այլոց, նոր հանգամանքներով վերանայելու դատավարական ընթացակարգ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ հոդվածի համաձայն՝
«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի

դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերը վերանայվում են հետևյալ դեպքերում.

(...)

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

(...):

2. Սույն հոդվածի առաջին մասի (...) 2-րդ կետ[ով] նախատեսված նոր հանգամանք[ը] հաստատված [է] համարվում (...) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող տվյալ միջազգային դատարանի որոշմամբ դր[ա] ուժի մեջ մտնելու պահից:

(...)»:

Այսպիսով, նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմք է նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի, այդ թվում Եվրոպական դատարանի ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումը, որով հաստատվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը (տե՛ս, *mutatis mutandis*, Արարատ Նարինյանի Մուրադխանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՎԲ/01/13 որոշումը և Գրիշա Յաշայի Վիրաբյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԲ/05/13 որոշումը):

17. Այսպես, *Մեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանն արձանագրել է բողոք բերած անձի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ կետերով և 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքների խախտումներ:

Մասնավորապես, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում արձանագրելու համար հիմք է ծառայել բողոք բերած անձին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով կալանքի տակ պահելը: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանն անդրադարձել է վերոնշյալ հոդվածում առկա այն կարգավորմանը, որի համաձայն՝ քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան, և արդեն իսկ ձևավորված նախադեպային պրակտիկայի վկայակոչմամբ ընդգծել է, որ. «*Երբ հարցը վերաբերում է ազատությունից զրկելուն, սպա հարկապես կարևոր է, որ պահպանվի իրավական որոշակիության ընդհանուր սկզբունքը: Հեղինակը, էսպես*

կարևոր է, որ ներպետական իրավունքով հստակորեն սահմանված լինեն ազատությունից զրկելու պայմանները, իսկ օրենքն էլ կիրառման մեջ ինքնին կանխատեսելի լինի, որպեսզի համապատասխանի Կոնվենցիայով սահմանված «օրինականության» չափանիշին՝ չափանիշ, որով պահանջվում է, որ ցանկացած օրենք լինի բավարար չափով կոնկրետ, որպեսզի ցանկացած ոք, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան խորհրդարկությանը, հնարավորություն ունենա կանխատեսել իր գործողությունների հնարավոր հետևանքները՝ այնքանով, որքանով դա ողջամտորեն հնարավոր է րվյալ իրավիճակում» (տե՛ս Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 75-րդ կետը):

Վերահաստատելով Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով արտահայտած իրավական դիրքորոշումը Եվրոպական դատարանը նշել է, որ. «(...) արդեն քննել է համանման բողոք Հայաստանի դեմ բերված մեկ այլ գործում, որում եկել է եզրահանգման, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, քանզի դիմումատուի նկատմամբ կալանքը չի կիրառվել դատարանի որոշման հիման վրա և, հետևաբար, եղել է անօրինական՝ նշյալ դրույթի իմաստով: Դատարանը չի տեսնում սույն գործով այլ եզրահանգում կատարելու որևէ պարճառ և եզրակացնում է, որ դիմումատուի նկատմամբ՝ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ն ընկած ժամանակահատվածում կիրառված կալանքը՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով եղել է անօրինական» (տե՛ս Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 76-րդ կետը):

18. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի առնչությամբ նախադեպային իրավունքում ձևավորված ընդհանուր սկզբունքները Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով կիրառելու արդյունքում Եվրոպական դատարանը կոնվենցիոնալ պահանջների խախտում է արձանագրել՝ հիմնվելով այն հանգամանքների վրա, որ ներպետական դատարանները դիմումատուին կալանավորելու և կալանքի ժամկետը երկարաձգելու իրենց որոշումներում սահմանափակվել են մեղադրանքի ծանրությամբ և դիմումատուի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և վարույթին խոչընդոտելու վտանգի հիմքերը վերացական և կարծրատիպային ձևով կրկնելով առանց մատնանշելու որևէ պատճառ առ այն, թե ինչու են իրենք հիմնավորված համարել այն ենթադրությունները, թե դիմումատուն կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ խոչընդոտել վարույթի ընթացքին: Եվրոպական դատարանը հիմնավոր, սակայն ոչ բավարար գործոն է համարել Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգը՝ գրավով կալանքից չազատելը հիմնավորելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով սահմանված գործոններից ոչ մեկը, ներառյալ այն փաստերը, որ դիմումատուն 1992 թվականից ի վեր մշտապես բնակվել է Հայաստանում և ունեցել է ընտանիք,

սեփականություն և երկրի հետ ակնհայտորեն ամուր սոցիալական կապեր, և որ նրա անձնագիրը առգրավվել էր, իսկ դա զգալիորեն նվազեցնում էր փախուստի վտանգը: Անդրադառնալով վերաքննիչ դատարանի նույն որոշման մեջ նշված՝ գրավով կալանքից չազատելու մյուս հիմքին, մասնավորապես՝ որ նույն գործով մեղադրվող մեկ այլ անձ նույնպես գտնվում էր կալանքի տակ՝ Եվրոպական դատարանը գտել է, որ այն չի առնչվում դիմումատուի գործի հետ: Վերոգրյալի հիման վրա Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ պատճառաբանությունները, որոնց հիման վրա ընդունվել են դիմումատուի կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման և գրավով ազատելը մերժելու մասին որոշումները, չեն եղել «հիմնավոր և բավարար» (տե՛ս *Սեֆիյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 88-93-րդ կետերը):

19. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման առնչությամբ Եվրոպական դատարանը վերահաստատել է իր այն դիրքորոշումը, որ. «(...) 5-րդ հոդվածի 4-րդ կետը պահանջվում է, որպեսզի կալանքի դեմ բերված բողոքը քննելիս դատարանն ապահովի դատական քննության երաշխիքները: Քննությունը պետք է լինի մրցակցային, և միշտ պետք է ապահովվի «կողմերի հավասարությունը» մեղադրանքի կողմի և կալանավորված անձի միջև: Կողմերի հավասարությունն ապահովված չի համարվում, եթե պաշտպանին մերժում են փրամադրել գործով նախաքննությամբ չեռք բերված այն փաստաթղթերը, որոնք կարևոր են նրա պաշտպանյալին կալանքի փակ պահելու օրինակականությունն արդյունավետորեն վիճարկելու համար (...)» (տե՛ս *Սեֆիյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 103-րդ կետը):

Անդրադառնալով կոնկրետ գործի փաստական հանգամանքներին՝ Եվրոպական դատարանը նշել է, որ. «(...) իր վարահորդին վերաբերող պնդումների հիմքը և նրան կալանքի փակ պահելու օրինակականությունն արդյունավետորեն վիճարկելու նպատակով պաշտպանության կողմին պետք է փրամադրվեն գործին առնչվող առնվազն այն նյութերը, որոնք վերջինիս անհրաժեշտ են դա անելու համար, այդ թվում նաև՝ արդարացնող ապացույցները, որոնք ևս պետք է փրամադրվեն պաշտպանության կողմին: (...) սույն գործի պարագայում դա րեղի չի ունեցել» (տե՛ս *Սեֆիյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի 104-րդ կետը):

Արդյունքում Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ ընդհանուր իրավասության դատարանում կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդության քննության ընթացակարգով չեն երաշխավորվել մրցակցության սկզբունքը և կողմերի հավասարությունը, ուստի և արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

20. Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտմանը, ապա Առաջին ատյանի դատարանի 2006 թվականի օգոստոսի 15-ի որոշման հիման վրա բողոք բերած անձի հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդումների գաղտնալուծումը և ձայնագրառումը նույն հոդվածի 1-ին կետի լույսի ներքո գնահատելով որպես միջամտություն դիմումատուի

իրավունքներին՝ Եվրոպական դատարանը քննարկման առարկա է դարձրել այդ միջամտության՝ նույն հոդվածի 2-րդ կետի իմաստով արդարացված լինելու խնդիրը:

Նախ, Եվրոպական դատարանն ուշադրություն է հրավիրել իր կողմից սահմանված նախադեպային իրավունքին, համաձայն որի՝ «(...) «*օրենքին համապատասխան*» արտահայտությամբ ոչ միայն պահանջվում է, որ վիճարկվող միջոցը որոշակի հիմքեր ունենա ներպետական իրավունքում, այլ նաև այդ արտահայտությունը վերաբերում է խնդրո առարկա օրենքի որակին, այսինքն պահանջվում է, որ այն հասանելի լինի շահագրգիռ անձի համար և կանխարեսելի լինի իր հետևանքների առումով (...)» (տե՛ս Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 121-րդ կետը):

Օրենքի հասանելիության առումով կոնկրետ գործով Եվրոպական դատարանը գտել է, որ դիմումատուի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը ներպետական իրավունքի տեսանկյունից եղել է հիմնավորված և որ օրենքի դրույթների հասանելիության առումով ոչ մի խնդիր չի ծագել (տե՛ս Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 122-րդ կետը):

Անդրադառնալով օրենքի կանխատեսելիության խնդրին՝ Եվրոպական դատարանը ևս մեկ անգամ անդրադարձել է արդեն իսկ ձևավորված նախադեպային իրավունքին՝ նշելով, որ. «*Հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը և վերահսկման այլ ձևերը լուրջ միջամտություն են անձնական կյանքի և հաղորդակցության նկատմամբ և համապատասխանաբար պետք է հիմնված լինեն հարկապես հարակ «օրենքի» վրա: Կարևոր է խնդրի վերաբերյալ ունենալ հարակ և մանրամասն կանոններ, հարկապես երբ կիրառման համար առկա տեխնոլոգիաները շարունակաբար կատարելագործվում են (...):*

Վերահսկման գաղտնի միջոցառումների վերաբերյալ իր նախադեպային իրավունքում Դատարանը մշակել է հետևյալ նվազագույն երաշխիքները, որոնք պետք է սահմանվեն օրենսդրությամբ լիազորությունների շարաշահումներից խուսափելու նպատակով, հանցագործությունների բնույթը, որոնք կարող են վերահսկման մասին որոշում կայացնելու հիմք հանդիսանալ, մարդկանց այն կարեգործիաների սահմանումը, որոնց հեռախոսները կարող են ենթակա լինել գաղտնալսման, հեռախոսների գաղտնալսման ժամանակահատվածը, այն ընթացակարգը, որին պետք է հետևել չեռք բերված փոխյալների ուսումնասիրության, օգրագործման և պահպանման համար, կանխարգելիչ միջոցները, որոնք պետք է ձեռնարկել այդ փոխյալները այլ կողմերին հաղորդելու դեպքում, և այն հանգամանքները, որոնց դեպքում չայնագրությունները կարող են կամ պետք է ջնջվեն կամ ժապավենները՝ ոչնչացվեն (...)» (տե՛ս Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 124-125-րդ կետերը):

Վերոշարադրյալի լույսի ներքո դիտարկելով կոնկրետ գործի հանգամանքները՝ Եվրոպական դատարանը եկել է այն հետևությանը, որ՝ «(...)

ներպետական օրենսդրությամբ կամայական միջամտության դեմ որոշ երաշխիքներ սպահովված էին: Մասնավորապես, ՔԳՕ-ի 281-րդ և 284-րդ հոդվածներով հեռահառաային խոսակցությունների գաղտնալսման համար պահանջվում էր դատարանի թույլտվությունը: Ավելին, վերահսկումը կարող էր թույլատրվել միայն հիմքեր պարունակող գրավոր միջնորդության հիման վրա, որը կարող էր ներկայացվել բացառապես կոնկրետ ծառայությունների ղեկավարների կողմից: Միջնորդության մեջ պետք է մանրամասն նշվեին այն տվյալները, որոնք նախատեսվում էր ստանալ, և հսկողության իրականացման ժամկետը, ինչպես նաև միջնորդությանը պետք է կցվեին բոլոր այն նյութերը, որոնք հիմնավորում էին նման միջոցառման իրականացման անհրաժեշտությունը» (տե՛ս Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 128-րդ կետը):

Այդուհանդերձ Եվրոպական դատարանը գտել է, որ ներպետական օրենքում առկա են համապատասխան թերություններ, մասնավորապես դատարանը նշել է, որ. «(...) օրենքով սահմանված չեն եղել ո՛չ իրավախախտումների տեսակները, ո՛չ էլ այն անչանց շրջանակը, որոնց դեպքում կարելի է թույլատրել գաղտնալսումը: Այն նաև չի մանրամասնել այն հանգամանքները կամ հիմքերը, որոնց առկայության պայմաններում կարելի էր նման միջոցառման իրականացման որոշում կայացնել: Այս առումով հարկ է նշել, որ նման մանրամասնությունների բացակայությունը կարող էր հանգեցնել լուրջ հերևանքների՝ հաշվի առնելով այն, որ սույն միջոցառման իրականացման թույլտվություն կարելի էր տալ որևէ քրեական վարույթի բացակայության պայմաններում:

Օրենքով նաև նախատեսված չէր գաղտնալսման համար հստակ առավելագույն ժամկետ: Այսպիսով, թեպետ գաղտնալսման իրականացում թույլատրող դատական որոշման գործողության ժամկետը սովորաբար սահմանափակվել է վեց ամսով, այդուհանդերձ, դատավորն ազատ է եղել կայացնելու այլ որոշում:

Ավելին, օրենքով նախատեսված չէր միջոցառման իրականացման նկատմամբ պարբերական վերահսկողություն կամ դրա կիրառման նկատմամբ դատական կամ մմանաբնույթ այլ անկախ հսկողություն կամ տվյալներն ուսումնասիրելու, օգտագործելու, պահելու և ոչնչացնելու որևէ կանոն: Ոչ էլ պահանջվում էր գաղտնալսումը դադարեցնելուց հետո ծանուցել այն անձին, ում նկատմամբ այն կիրառվել էր՝ այն դեպքերում, երբ նման ծանուցումն այլևս չէր վրանգի գաղտնալսման նպատակը (...)» (տե՛ս Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռի 130-132-րդ կետերը):

Արդյունքում Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ միջամտությունը «օրենքին համապատասխան» չի եղել՝ նկատի ունենալով, որ տվյալ ժամանակահատվածում հայաստանյան օրենքը չի պարունակել բավականաչափ հստակ և մանրամասն կանոններ ու չի սպահովել չարաշահման դեմ բավականաչափ երաշխիքներ:

21. Հիմք ընդունելով *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի կողմից բողոք բերած անձի՝ Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված համապատասխան իրավունքների խախտման փաստի արձանագրումը և ղեկավարվելով Կոնվենցիոն պահանջներով ու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը Վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի, 2007 թվականի փետրվարի 23-ի, 2007 թվականի մայիսի 14-ի որոշումները, 2007 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճիռը և ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2008 թվականի մայիսի 4-ի որոշումը վերանայելու հիմք է:

II. Ներպետական դատական արյանների կողմից կայացված ակտերի քեկանման ու փոփոխման հիմքերը.

22. ՀՀ վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռն արդյո՞ք ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի, 2007 թվականի փետրվարի 23-ի, 2007 թվականի մայիսի 14-ի որոշումները, 2007 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճիռը և ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2008 թվականի մայիսի 4-ի որոշումը բեկանելու և փոփոխելու հիմք է:

23. Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝

«Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են»:

Սկոցցարին և Ջունտան ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) *վճիռը, որով Դատարանը խախտում է արչանագրում, պարասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անշանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով տրամադրվելիք գումարները, այլ նաև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր և/կամ անհրաժեշտության դեպքում անհատական միջոցներ, որոնք անհրաժեշտ է շեռնարկել ներպետական իրավական համակարգում՝ վերջ տալու համար Դատարանի արչանագրած խախտումներին և հնարավորինս շրկելու դրանց հետևանքները: Բացի այդ, Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ պետությունը ազար է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սրանհետև իր պարտավորությունների կատարման միջոցների ընտրության հարցում՝ պայմանով, որ դրանք համարեղելի են Դատարանի վճռի մեջ տեղ գրած եզրակացությունների հետ:*

Կոնվենցիայի 41-րդ հոդվածի հիման վրա արդարացի փոխհատուցման կարգով գումարների տրամադրման նպատակը բացառապես կրած վնասի

համար հատուցում տալն է այնքանով, որքանով որ այդ վնասը հետևանք է խախտման, որն այլ կերպ վերականգնվել չի կարող» (տե՛ս Scozzari and Giunta v. Italy գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի հուլիսի 13-ի վճիռը, զանգատներ թիվ 39221/98 և 41963/98, կետեր 249-250):

Մելջուկը և Ասկերն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ. «Կոնվենցիայի խախտում արձանագրած Գատարանի վճռով պատասխանող պետության վրա պարտավորություն է դրվում դադարեցնել խախտումը և դրա հետևանքների համար այնպիսի հատուցում տրամադրել, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (restitutio in integrum): Եթե restitutio in integrum-ը գործնականում հնարավոր չէ, ապա պատասխանող պետությունն ազատ է վճիռը կատարելու միջոցների ընտրության հարցում (...))» (տե՛ս Selcuk and Asker v. Turkey գործով Եվրոպական դատարանի 1998 թվականի ապրիլի 24-ի վճիռը, զանգատներ թիվ 23184/94 և 23185/94, կետ 125):

24. Եվրոպական դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով պետություններն ունեն հետևյալ պարտավորությունները.

1. վճարել նշանակված փոխհատուցումը,

2. անհրաժեշտության դեպքում հոգուտ դիմումատուի ձեռնարկել անհատական միջոցառումներ, այն է՝

- դադարեցնել Եվրոպական դատարանի կողմից արձանագրված իրավունքի խախտումը կամ դրա հետևանքների ներգործությունը,

- հնարավորինս վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը (restitutio in integrum), իսկ դրա անհնարինության դեպքում Գատարանի վճռի մեջ տեղ գտած եզրակացությունների հետ համատեղելի այլ միջոցներով ապահովել իր ստանձնած պարտավորությունների կատարումը,

3. ձեռնարկել ընդհանուր բնույթի միջոցառումներ՝ կանխելու համար նմանատիպ խախտումներն ապագայում:

25. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի համաձայն՝

«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով:

2. Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չվիճարկել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա:

(...))»:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու

վերաբերյալ գործով 2013 թվականի մայիսի 31-ին կայացված ՍԳՈ-1099 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ. «(...) իրավաչափ նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողություն դատական ակտն անփոփոխ թողնելու համար, այլ նորմատիվ պարտադրանք՝ նման հնարավոր դեպքերում ծանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու վերաբերյալ: Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պատշաճ մակարդակ և «ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հստակեցում, ինչն օրենսդրի և դատական համարժեք նախադեպ ստեղծելու խնդիրն է: (...) Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անփոփոխ թողնելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին և իրավական պետության հիմնարար արժեքներին»:

ՀՀ սահմանադրական դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումից երևում է, որ վերջինս իրավաչափ է համարում նոր (նոր երևան եկած) հանգամանքի հիմքով հարուցված վարույթով բողոքարկվող դատական ակտի եզրափակիչ մասն անփոփոխ թողնելու օրենսդրական հնարավորությունը՝ պայմանով, որ ներկայացվեն ծանրակշիռ փաստարկներ այն մասին, որ համապատասխան հանգամանքը չի ազդում գործի ելքի վրա: Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ նոր հանգամանքն ըստ էության կասկածի տակ չի կարող դնել գործի ելքը, ուստի դրա հիման վրա գործի կրկին քննությունը չի կարող ծառայել իր *restitutio in integrum* հնարավորինս ապահովելու նպատակին՝ այդպիսին կատարելը կդառնա ինքնանպատակ, ավելին, կհակասի իրավական որոշակիության սկզբունքին:

27. Դատական ակտի վերանայումը կամ գործի նոր քննությունը՝ որպես մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը վերականգնելու անհատական միջոց, նախատեսված է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին 2000 թվականի հունվարի 19-ի հանձնարարականում, որին ՀՀ սահմանադրական դատարանը 2013 թվականի մայիսի 31-ի ՍԳՈ-1099 որոշման մեջ ևս հղում է կատարել:

Վերոնշյալ հանձնարարականի համաձայն՝ անհատական միջոցառումների ձեռնարկումն անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների պարտադիր առկայության պարագայում, այն է՝ ***նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը պետք է իր բնույթով լինի այնպիսին, որ լուրջ կասկած հարուցի ներպետական մարմիններում բողոքարկման առարկա վարույթի ելքի արդյունքների կապակցությամբ և դիմումատուին պետք է շարունակի***

կրել խնդրո առարկա ներպետական որոշման բացասական հետևանքները, որոնք բավարար չափով չեն վերականգնվում արդարացի փոխհատուցմամբ և չեն կարող վերացվել այլ կերպ, քան դատական ակտի վերանայմամբ կամ գործի վերաբացմամբ:

28. Գործի վերաբացումը Եվրոպական դատարանի կողմից ևս գնահատվում է որպես «*restitutio in integrum*»-ը հնարավորինս ապահովելու միջոց: Ընդ որում, Եվրոպական դատարանը, հղում կատարելով Հանձնարարականին և համարելով, որ վարույթի վերսկսումը կարող է տեղի ունենալ «բացառիկ» հիմքերով, այդպիսիք է համարում հատկապես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման դեպքերը, երբ գործի քննությունն իրականացվել է արդար դատաքննության իրավունքի խախտմամբ: Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում շեշտել է, որ այս դեպքում հատուցման ամենապատշաճ ձևը կլինի վարույթի վերաբացումն ու գործի նոր քննությունը՝ արդար դատաքննության բոլոր պահանջների պահպանմամբ: Եվրոպական դատարանի համար կայուն պրակտիկա է դարձել նաև գործերի վերաբացման վերաբերյալ դրույթներն ընդգրկել վճռի մեջ (տե՛ս, ի թիվս այլոց, Gencel v. Turkey գործով Եվրոպական դատարանի 2003 թվականի հոկտեմբերի 23-ի վճիռը, զանգատ թիվ 53431/99, Ceylan v. Turkey գործով Եվրոպական դատարանի 2005 հոկտեմբերի 11-ի վճիռը, զանգատ թիվ 46454/99, Bracci v. Italy գործով Եվրոպական դատարանի 2005 թվականի հոկտեմբերի 13-ի վճիռը, զանգատ թիվ 36822/02, Somogyi v. Italy գործով Եվրոպական դատարանի 2004 թվականի մայիսի 18-ի վճիռը, զանգատ թիվ 67972/01): Անկախ և անկողմնակալ դատարանի կողմից գործի քննության իրավունքի խախտման պարագայում վարույթի վերաբացման՝ որպես մինչև խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնման համարժեք միջոցի մասին դիրքորոշումը *Օջալանն ընդդեմ Թուրքիայի* գործով հաստատվել է նաև Եվրոպական դատարանի Մեծ պալատի կողմից (տե՛ս Ocalan v. Turkey գործով Եվրոպական դատարանի 2005 թվականի մայիսի 12-ի վճիռը, զանգատ թիվ 46221/99):

Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռում Եվրոպական դատարանը նշել է. «(...) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում ճանաչելու դեպքում դիմումատուին որքան հնարավոր է պետք է գրելի այն իրավիճակում, որում նա կլիներ, եթե սույն դրույթի պահանջները չանտեսվեին (տե՛ս, *mutatis mutandis*, Sejdovic v. Italy [ՄՊ], զանգատ թիվ 56581/00, § 127, ՄԻԵԴ 2006 և Yanakiev v. Bulgaria, զանգատ թիվ 40476/98, § 89, 10 օգոստոսի 2006թ.):

Այս առնչությամբ *Դատարանը* (...) այն կարծիքին է, որ այն դեպքում, երբ դատաքննությունն իրականացվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտմամբ, փոխհատուցման ամենապատշաճ ձևը կլինի վարույթի վերաբացումն ու գործի նորից քննումը՝ արդար դատաքննության բոլոր պահանջներին համապատասխան (տե՛ս, *mutatis mutandis*, Lungoci, վերը ցիտրած, § 56)» (տե՛ս *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, զանգատ թիվ 8088/05, կետեր 103-104):

Այսպիսով, Եվրոպական դատարանի որդեգրած մոտեցման համաձայն՝ համապատասխան անհատական միջոցառումների կիրառումը, մասնավորապես գործի վերաբացումը անհրաժեշտ է և ըստ այդմ, մինչև խախտումը եղած իրավիճակի վերականգնումը՝ հնարավոր Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման պարագայում (տե՛ս, *mutatis mutandis*, Արարատ Նարիմանի Մուրադխանյանի և Գրիշա Յաշայի Վիրաբյանի գործերով Վճռաբեկ դատարանի՝ վերը հիշատակված որոշումները):

29. Սույն որոշման 23-28-րդ կետերում շարադրված վերլուծության համատեքստում գնահատելով այն հանգամանքը, որ սույն գործով բողոքարկման առարկա հանդիսացող չէ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի, 2007 թվականի փետրվարի 23-ի, 2007 թվականի մայիսի 14-ի որոշումները վերաբերում են բողոք բերած անձի նախնական կալանքին և կալանքի ժամկետը երկարացնելուն, որոնց առնչությամբ Եվրոպական դատարանը ճանաչել է բողոք բերած անձի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտում և պարտավորեցրել է պետությանը վճարել համապատասխան գումար՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Սույն գործի նյութերի համաձայն՝ բողոք բերած անձը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ստյանի դատարանի 2007 թվականի օգոստոսի 6-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել չէ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքում և դատապարտվել ազատազրկման մեկ տարի վեց ամիս ժամկետով, որը հաշվարկվել է 2006 դեկտեմբերի 9-ից (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը): Այսինքն՝ չէ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոք բերած անձի ազատազրկման ժամկետի մեջ հաշվակցվել է այն ժամանակահատվածը, որի ընթացքում անձը գտնվել է կալանքի տակ:

30. Համանման փաստական հանգամանքներով *Մուրադխանյանի վերաբերյալ գործով* իր որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «*Եվրոպական դատարանի կողմից արձանագրված(...) խախտումներն իրենց բնույթով այնպիսին են, որ չէին կարող ազդել գործի էլքի վրա: Մասնավորապես, որպես խախտումներ Եվրոպական դատարանը նշել է, որ Ա.Մուրադխանյանի՝ 2005 թվականի դեկտեմբերի 14-ից 29-ն ընկած ժամանակահատվածի կալանքը չի համապարասխանել Կոնվենցիայով սահմանված օրինականության պահանջներին, որ Ա.Մուրադխանյանը պահվել է շարունակական կալանքի տակ «ողջամիտ ժամկետի» խախտմամբ: Դրա հետ մեկտեղ, գործի քննությանը չեղք բերված և դատաքննությանը հետազոտված ապացույցներով հաստատվել է Ա.Մուրադխանյանի մեղավորությունը նրան մեղադրվող արարքներում և նա դատապարտվել է ցմահ ազատազրկման: Անցկացված դատաքննության և կայացված դատավճռի օրինականության հետ կապված որևէ խախտում Եվրոպական դատարանը չի արձանագրել, իսկ գործի քննության ընթացքում*

Ա.Մուրադխանյանին կալանքի տակ պահելու գործընթացում թույլ տրված խախտումները կայացված վերջնական դատական ակտի վրա որևէ ներագդեցություն չեն ունեցել» (տե՛ս Արարատ Նարիմանի Մուրադխանյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ վերը հիշատակված որոշումը, կետ 22):

31. Սույն որոշման 29-30-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի վճիռը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի, 2007 թվականի փետրվարի 23-ի, 2007 թվականի մայիսի 14-ի որոշումները բեկանելու և փոփոխելու հիմք չէ:

32. Անդրադառնալով 2007 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճիռը և ՀՀ վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 4-ի որոշումը բեկանելու և փոփոխելու հարցին՝ Վճռաբեկ դատարանը քննարկման է առնում այն հարցը, թե *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի կողմից բողոք բերած անձի՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2006 թվականի օգոստոսի 15-ի որոշման հիման վրա հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդումների գաղտնալսումը (այսուհետ՝ հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդումների գաղտնալսում) Կոնվենցիայի 8-րդ հոդվածի պահանջներին ոչ համապատասխանող ճանաչելն արդյո՞ք Ժ.Սեֆիլյանի բնակարանում և աշխատավայրում կատարված խուզարկությունների արձանագրություններն անթույլատրելի ճանաչելու հիմք է:

33. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝
«1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝

(...)

5) քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական խախտմամբ.

(...):

2. Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա:

(...):»

34. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ժ.Սեֆիլյանի հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդումների գաղտնալսման արդյունքում ձեռք բերված տեղեկություններն ինքնին որպես ապացույց չեն օգտագործվել, վերջինիս նկատմամբ կայացված որևէ դատավարական որոշման կամ կատարված դատավարական

գործողության հիմքում չեն դրվել: Մասնավորապես, թիվ 58211806 քրեական գործը հարուցվել է Երևանի Պարարվեստի ուսումնարանի դահլիճում «Հայ կամավորականների համախմբում» կազմակերպության համաժողովի ընթացքում ելույթների ժամանակ իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված հրապարակային կոչերի դեպքի առթիվ՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 2-ի որոշման հիման վրա այդ ելույթների ու կոչերի գաղտնալսման և ձայնագրառման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Նույն տեղեկությունները հիմք են ծառայել նաև Ժ.Մեֆիլյանի բնակարանում և աշխատասենյակում խուզարկություն կատարելու համար թույլտվություն ստանալու մասին քննիչի կողմից միջնորդություն հարուցելու և Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից դրանք բավարարելու մասին համապատասխան որոշումներ կայացնելու համար (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Վերոշարադրյալ հանգամանքների ուսումնասիրությունից երևում է, որ Եվրոպական կոմսիտեի 8-րդ հոդվածի պահանջներին հակասող ճանաչված միջամտության, այն է՝ Ժ.Մեֆիլյանի հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդումների գաղտնալսման արդյունքում ձեռք բերված տեղեկությունները ո՛չ քրեական գործ հարուցելու մասին որոշման և ո՛չ խուզարկություն կատարելու համար թույլտվություն ստանալու միջնորդությունների և դրանք բավարարելու մասին որոշումների հիմքում չեն դրվել: Այսինքն՝ քննարկվող դատավարական որոշումները կայացվել են այնպիսի տեղեկությունների հիման վրա, որոնք ստացվել են Կոմսիտեի պահանջներին չհամապատասխանող գործողություններից անկախ՝ դրանց հետ առնչություն չունեցող աղբյուրից, իսկ Ժ.Մեֆիլյանի բնակարանում և աշխատավայրում խուզարկություններն իրականացվել և դրանց արձանագրությունները կազմվել են օրենքով սահմանված կարգի պահպանմամբ:

35. Վճռաբեկ դատարանն ընդգծում է նաև, որ անգամ անօրինական ճանապարհով ստացված տվյալի վրա ամբողջությամբ հիմնված (դրանից բխած) ապացույցն անթույլատրելի ճանաչելու համար անհրաժեշտ է, որ բացակայի ողջամիտ ջանքերով այդ ապացույցը ստանալու հնարավորությունը: Այլ կերպ՝ բխելու չափանիշի հետ մեկտեղ առկա է նաև «պատճառական կապի բացակայություն» չափանիշը, որի էությունը հետևյալն է՝ ապացույցը կարող է ճանաչվել թույլատրելի, եթե պետությունը կարող էր ողջամիտ ջանքերով ձեռք բերել այդ տվյալը:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ իրավասու մարմիններին հայտնի է եղել 2006 թվականի դեկտեմբերի 2-ի ժողովի անցկացման տեղը և ժամանակը: Այս կապակցությամբ կարևոր է ընդգծել, որ՝

1) ժողովին ներկա են եղել մի քանի տասնյակ անձինք, այսինքն՝ ժողովի ընթացքում հնչած կոչերը ընկալել են մեծ թվով անձինք,

2) ժողովն անցկացվել է ոչ թե մասնավոր տարածքում, այլ հանրային սեփականություն հանդիսացող տարածքում, մասնավորապես՝ Երևանի պարարվեստի պետական քոլեջի դահլիճում:

Նշված փաստերը Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս եզրահանգել, որ իրավասու մարմինները կարող էին ողջամիտ ջանքերով ձեռք բերել վիճարկվող ապացույցների նախահիմք հանդիսացած տվյալները:

36. *Խանն ընդդեմ Միացյալ Թագավորության և Փի. Ջի.-ն և Ջեի. Էյջ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործերով* Եվրոպական դատարանի ձևավորած իրավական դիրքորոշման համաձայն՝ «(...) *Դատարանի խնդիրը չէ որոշել ապացույցների որոշակի տեսակների, օրինակ, ներպետական օրենսդրության խախտմամբ չեռք բերված ապացույցների օգտագործման քույրարելիությունը, կամ որոշել արդյոք դիմումատուն իրականում մեղավոր է, թե՛ ոչ: Պատասխան ակնկալող հարցն այն է, թե արդյոք քննությունը, որպես ամբողջություն, ներառյալ եղանակը, որի միջոցով չեռք է բերվել ապացույցը, եղել է արդար: Սա ներառում է վիճարկվող «անօրինականության» սրուգումը և եթե խոսքը գնում է Կոնվենցիայով սահմանված այլ իրավունքի խախտման մասին, վերջինիս բնույթի պարզումը» (տե՛ս Khan v. the United Kingdom գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի մայիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 35394/97, կետ 34, P.G. and J.H. v. the United Kingdom գործով Եվրոպական դատարանի 2001 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 44787/98, կետ 76):*

Վերոնշյալ գործերով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ գաղտնի ձայնագրող սարքի օգտագործումը եղել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, քանի որ նման միջոցի օգտագործումը չի ունեցել իրավական հիմքեր ներպետական օրենսդրության մեջ, և դիմումատուի՝ անձնական կյանքը հարգելու իրավունքին միջամտությունը նախատեսված չի եղել օրենքով, միևնույն ժամանակ այդ գործերի հանգամանքներում նման ճանապարհով ստացված տեղեկատվությունը որպես ապացույց օգտագործելը Եվրոպական դատարանը չի դիտել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդարության պահանջներին հակասող (տե՛ս Khan v. the United Kingdom գործով վերը հիշատակված վճիռը, կետեր 25-28, P.G. and J.H. v. the United Kingdom գործով վերը հիշատակված վճիռը, կետեր 37-38): Նշված գործերով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման բացակայության մասին եզրահանգման համար, ի թիվս այլոց, հիմք է ծառայել այն, որ ձայնագրող սարքի օգտագործումը ներպետական օրենսդրության տեսանկյունից եղել է օրինական (տե՛ս Khan v. the United Kingdom գործով վերը հիշատակված վճիռը, կետ 36, P.G. and J.H. v. the United Kingdom գործով վերը հիշատակված վճիռը, կետ 78): Բացի այդ, *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռում Եվրոպական դատարանը ևս հստակ նշել է, որ դիմումատուի հեռախոսային խոսակցությունների գաղտնալուծումը ներպետական իրավունքի տեսանկյունից եղել է հիմնավորված (տե՛ս սույն որոշման 20-րդ կետը):

Եվրոպական դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումների վերլուծությունից երևում է, որ այն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության պահանջներին հակասող չի համարում ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռքբերված ապացույցների օգտագործումը, թեև ուզել ներպետական օրենսդրությունը չի բավարարել Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված չափանիշներին: Եթե ինքնին նշված ապացույցների օգտագործումը չի դիտարկվում որպես անձի արդար դատաքննության հիմնարար իրավունքի խախտում, հետևաբար իրավաչափ չեն այդ ապացույցների հետ առնչություն չունեցող դատավարական գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալների՝ որպես ապացույցի հնարավոր անթույլատրելիության և դրանք ապացուցողական զանգվածից հանելու վերաբերյալ փաստարկները:

37. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով առկա են ծանրակշիռ փաստարկներ առ այն, որ Եվրոպական դատարանի կողմից բողոք բերած անձի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտումը որևէ կերպ չի ազդել գործով ապացուցողական զանգվածի, հետևաբար նաև գործի ելքի վրա: Ուստի, *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի կողմից բողոք բերած անձի՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2006 թվականի օգոստոսի 15-ի որոշման հիման վրա հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդումների գաղտնալսումը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի պահանջներին ոչ համապատասխանող ճանաչելը Ժ.Սեֆիլյանի բնակարանում և աշխատավայրում կատարված խուզարկությունների արձանագրություններն անթույլատրելի ճանաչելու հիմք չէ:

38. Հիմք ընդունելով սույն որոշման 15-37-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, որով արձանագրվել են դիմումատուի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով, 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտումներ, սույն գործով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի, 2007 թվականի փետրվարի 23-ի, 2007 թվականի մայիսի 14-ի որոշումները, 2007 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճիռը և ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2008 թվականի մայիսի 4-ի որոշումները բեկանելու հիմք չէ:

Հետևաբար, ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի, 2007 թվականի փետրվարի 23-ի, 2007 թվականի մայիսի 14-ի և ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2008 թվականի մայիսի 4-ի որոշումների վերանայման արդյունքում Ժ.Սեֆիլյանի բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության

քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 418-419-րդ, 422-424-րդ, 426.1-րդ, 426.2-րդ, 426.4-րդ 426.7-րդ և 426.9-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ժիրայր Սիմոնի Սեֆիլյանի բողոքի հիման վրա ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի, 2007 թվականի փետրվարի 23-ի, 2007 թվականի մայիսի 14-ի որոշումները, 2007 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճիռը և ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2008 թվականի մայիսի 4-ի որոշումը վերանայել:

2. Վերանայման արդյունքում վճռաբեկ բողոքը մերժել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

24.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԱՐԴ/0089/01/12
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ԱՐԴ/0089/01/12
Նախագահող դատավոր՝ Ե.Գարբինյան
Դատավորներ՝ Գ.Ավետիսյան
Ս.Չիչոյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի օգոստոսի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սիլվա Ռոբիկի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի փետրվարի 12-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արմավիրի մարզի քննչական բաժնում 2011 թվականի սեպտեմբերի 16-ին հարուցվել է թիվ 48116311 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2012 թվականի հուլիսի 9-ի որոշմամբ Սիլվա Խաչատրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Նույն օրը որոշում է կայացվել Ս.Խաչատրյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին:

2012 թվականի հուլիսի 13-ին քրեական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև Ս.Խաչատրյանին հայտնաբերելը:

2012 թվականի հուլիսի 19-ին Ս.Խաչատրյանը հայտնաբերվել է, և քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է: Նույն օրը Ս.Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2012 թվականի օգոստոսի 7-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է ամբաստանյալ Ս.Խաչատրյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ:

Նույն դատավճռով տուժողի ներկայացուցիչ Վ.Խեչյանի քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության, և նրան իրավունք է վերապահվել քաղաքացիական դատավարության կարգով դիմել դատարան:

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 12-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմինը Ս.Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ նա. «(...) 2005թ.-ից հանդիսանալով ֆիզիկական անձ, բանավոր պայմանավորվածության համաձայն, մինչև 06.05.2009թ. իրականացրել է «ՄԱՊ» ՓԲ ընկերության կողմից արտադրված և իրեն վստահված տարբեր տեսակի գինիների, կոնյակների և պահածոների առաքում ԼՂՀ-ի տարածքում: Իսկ 11.05.2009թ. արդեն Ա/Չ Ս.Խաչատրյանի և ընկերության միջև կնքվել է սպրանքների մատակարարման պայմանագիր և

համապատասխան հաշիվ-սպրանքագրերով իրեն վստահված սպրանքները մինչև 31.12.2011թ. Ս.Խաչատրյանը կրկին վաճառել է ԼՂՀ-ի տարածքում: Նշված ժամանակահատվածում Ս.Խաչատրյանն ընկերության գույքը շարունակաբար հափշտակելու դիրավորությամբ վաճառքից ստացված սպրանքների՝ առանձնապես խոշոր չափի հասնող 32.935.1 հազ. ՀՀ դրամ գումարը չի մուտքագրել դրամարկղ, այլ ՓԲԸ-ին ցույց է տվել որպես չվաճառված սպրանք և նշված գումարը վարկելու եղանակով հափշտակելով՝ ծախսել է իր անձնական կարիքների համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 201-210):

6. Առաջին ատյանի դատարանում դատական վիճաբանությունների փուլում մեղադրողը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 9-րդ կետով, հրաժարվել է Ս.Խաչատրյանին առաջադրված մեղադրանքից՝ Ս.Խաչատրյանի արարքում հանցակազմի բացակայության հիմնավորմամբ (տե՛ս քրեական գործ, հատոր 9, դատական նիստի արձանագրման համառոտագրում և լազերային սկավառակ, թերթ 199-200 և 205):

7. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի դատավճռի համաձայն՝ «(...) դատարանը (...) գտնում է, որ «ՄԱՊ» ՓԲԸ-ի և ՄՁ Սիլվա Խաչատրյանի միջև առկա վեճն ենթակա է լուծման քաղաքացիական իրավունքի նորմերին համապատասխան և քաղաքացիական դատավարության կարգով, ուստի ՄՁ Սիլվա Խաչատրյանի արարքին քրեաիրավական գնահատական տալիս, նախաքննական մարմինը հանգել է սխալ հետևության այն մասին, որ ՄՁ Սիլվա Խաչատրյանի արարքում առկա է յուրացնելու կամ վարկելու հանցակազմ:

Դատական վիճաբանությունների փուլում մեղադրող Գոռ Ալոյանը ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 4-րդ մասով և 54 հոդվածով՝ հայտարարեց, որ հրաժարվում է Սիլվա Ռոբիկի Խաչատրյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366 հոդվածի 4-րդ մասի համաձայն դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը մեղադրանքի այդ մասով կայացնում է արդարացնող դատավճիռ:

Վերը շարադրվածից ելնելով՝ դատարանը գտնում է, որ ՄՁ Սիլվա Խաչատրյանի վերաբերյալ պետք է կայացվի արդարացման դատավճիռ՝ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու հիմքով» (տե՛ս քրեական գործ, հատոր 9, թերթ 207-215):

8. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 25-ի որոշման համաձայն՝ «Գործի նյութերով հիմնավորվել է, որ մեղադրողը դատական վիճաբանությունների փուլում իր ճառում հայտնել է, որ Դատարանում հետազոտված սպացույցներից պարզ է դարձել, որ Ս.Խաչատրյանի

արարքում բացակայում է յուրացման հանցակազմը և հետո միայն հրաժարվել է Ս.Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքից, փաստորեն մեղադրողը Ս.Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքից հրաժարվել է վերջինիս գործողություններում հանցակազմի բացակայության պարճառաբանությամբ, ուստի Առաջին արյանի դատարանի կողմից Ս.Խաչատրյանի վերաբերյալ կայացրած արդարացման դատավճիռը հիմնավորված է և օրինական և այն քիտում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջից:

(...) [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ մասը] քրեադատավարական մյուս նորմերի նկատմամբ՝ այդ թվում նաև ընդհանուր մասում զերեդրված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի նկատմամբ, կիրառման առումով, ունի զերակայություն: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածն այսպեղ իմպերատիվ պահանջ է դնում Գալարանի առջև՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախարենսված հիմքերից որևէ մեկի առկայության, ինչպես նաև դատախազի՝ մեղադրանքից հրաժարվելու դեպքում, կայացնել արդարացման դատավճիռ:

Վերաքննիչ դատարանը գրնում է, որ սույն քրեական գործով արդարացման դատավճիռ կայացնելու համար առկա են եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի՝ թե 2-րդ, և թե 4-րդ մասերով նախարենսված հիմքերը, ուստի Առաջին արյանի դատարանը ցանկացած դեպքում պարտավոր էր կայացնելու արդարացման դատավճիռ:

(...) Ըսկ ինչ վերաբերում է բողոքի այն պարճառաբանությանը, որ Գալարանը որպես արդարացման դատավճիռ կայացնելու հիմք դատավճիռի եզրափակիչ մասում նշել է մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելը, ապա Վերաքննիչ դատարանն արչանագրում է, որ մեղադրողը մեղադրանքից հրաժարվել է արդարացնող՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով և նման հետևության է հանգել նաև Առաջին արյանի դատարանը (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 9, թերթ 266-274):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոք քերած անձը փաստարկել է, որ սույն գործով ստորադաս դատարանները թույլ են տվել դատավարական իրավունքի նորմերի խախտումներ: Մասնավորապես, խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին, 7-րդ, 23-24-րդ, 35-րդ, 66-րդ, 306-րդ, 353-354-րդ, 366-րդ, 398-րդ հոդվածների պահանջները:

Համակարգային վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Վարույթն առաջին ատյանի դատարանում» վերտառությամբ

9-րդ բաժնում ամրագրված նորմերը՝ բողոքաբերը եզրահանգել է, որ դատավճիռ կայացնելու համար դատարանը պետք է սպառնի օրենքով նախատեսված դատական քննության բոլոր փուլերը, այսինքն՝ քրեական գործը պետք է անցնի դատական քննության բոլոր կառուցվածքային մասերով: Եթե դատարանը չի անցել այդ մասերը, ապա բացակայում են դատավճիռ կայացնելու պարտադիր նախադրյալները, ուստի այդ պայմաններում կայացված դատավճիռը ենթակա է բեկանման: Իսկ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանն իրավունք չունի շարունակելու վարույթը՝ ապահովելու համար դատավճիռ կայացնելու նախապայմանները (մասնավորապես ամբաստանյալի մասնակցությունը դատական վիճաբանություններին, նրա վերջին խոսքի իրավունքը): Դատական քննության առարկան դատախազի կողմից դատարան ներկայացված մեղադրանքի օրինականությունը, հիմնավորվածությունն ու ապացուցվածությունը ստուգելն է: Այն դեպքում, երբ դատախազը հրաժարվում է մեղադրանքից, ապա դատարանը չի կարող վարույթը շարունակել և պարտավոր է կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը:

10. Դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ մեղադրանքից հրաժարվելը բացառում է դատավճիռ կայացնելը՝ բողոքաբերը նաև կարծիք է հայտնել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները վերաբերում են միայն մեղադրանքից մի ծավալով հրաժարվելու դեպքերին: Մի մասով մեղադրանքից հրաժարվելը մյուս մասով դատավարությունը շարունակելու խոչընդոտ չի հանդիսանում, ուստի դատարանը սպառում է դատավճիռ կայացնելու պատշաճ ընթացակարգը և կայացնում է մեղադրական դատավճիռ, որը մասամբ համարվում է արդարացման:

11. Բողոքաբերը վերլուծել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 66-րդ, 366-րդ հոդվածները և փաստել, որ ստորադաս դատարանները Ս.Խաչատրյանի նկատմամբ արդարացման դատավճիռ են կայացրել մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու հիմքով՝ դրանով իսկ թույլ տալով դատավարական իրավունքի կոպիտ խախտում և օրենքի կամայական մեկնաբանություն: Այս կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ արդարացման հիմքերը չորսն են, որոնց շարքում դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելը նշված չէ, քանի որ դա դատավարական գործողություն է, այլ ոչ թե արդարացման հիմք:

12. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 12-ի որոշումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով՝ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու պատճառաբանությամբ կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը:

4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Մույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ մեղադրողի կողմից դատական վիճաբանությունների

փուլում մեղադրանքից հրաժարվելու պայմաններում Առաջին ատյանի դատարանը Ս.Խաչատրյանի նկատմամբ պարտավոր էր կայացնել արդարացման դատավճիռ, թե քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 306-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Մեղադրանքից դատախազի հրաժարվելու դեպքում դատարանը կարճում է քրեական գործով վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը, (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը մեղադրանքի այդ մասով կայացնում է արդարացնող դատավճիռ»:

Մեջբերված քրեադատավարական նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ դրանք մեղադրողի մեղադրանքից հրաժարվելու դեպքում տարբեր իրավական հետևանքներ են նախատեսում համապատասխան դատական ակտ կայացնելու տեսանկյունից: Նշված անհատակությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Կ.Սյրեփանյանի և Մ.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ՝ ելնելով դատական քննության փուլի առջև դրված խնդիրներից և դատավճռի՝ որպես արդարադատության իրականացման կարևորագույն ակտի նշանակությունից և արձանագրել է, որ «(...) դատական քննության միջոցով դատարանն իրականացնում է արդարադատություն, որը նրա բացառիկ սահմանադրական իրավագործությունն է: Հերևարար, դատական քննությունն արդարադատության իրականացման յուրահարույկ դատավարական ձև է, որի առարկան իրավական վեճն է պետության (պուժոդի) և ամբաստանյալի միջև: Դատական քննությունը միտված է վերոնշյալ վեճի, ինչպես նաև դատական քննության խնդիրների լուծմանը և ավարտվում է դատավճռի կայացմամբ: Ընդ որում, դատավճիռ կայացնելով՝ դատարանը լուծում է ոչ միայն բուն դատական քննության առջև ծառայած անմիջական խնդիրները, այլև քրեական դատավարության և արդարադատության այլ խնդիրներ (կանխարգելիչ, դաստիարակչական և այլն):

Դատավճիռն արդարադատության իրականացման հիմնական ակտն է, որն իրենից ներկայացնում է կոնկրետ իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի նորմի կիրառում: Սակայն, ի տարբերություն իրավակիրառման մյուս ակտերի, միայն դատավճռով է հնարավոր ամբաստանյալին մեղավոր ճանաչել և նրա նկատմամբ սահմանել պատիժ: Մյուս կողմից, եթե դատաքննության արդյունքում չի հաստատվում ամբաստանյալի մեղավորությունը, ապա դատարանը պարտավոր է կայացնել արդարացման դատավճիռ՝ ճանաչելով և հռչակելով հանցանքի կատարման մեջ ամբաստանյալի անմեղությունը՝ այն մեղադրանքով, որով նա ներգրավվել է որպես մեղադրյալ: Այլ խոսքով՝ արդարացման դատավճիռը ոչ այլ ինչ է, քան դատավարական գործունեության արդյունք, որով դատարանը փաստում է անչին ներկայացված մեղադրանքի անհիմն լինելը:

Արդարացման հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դատարանի իրավասությունը, անշուշտ, անհրաժեշտ քրեադատավարական ինստիտուտ է, որը հնարավորություն է տալիս գերծ մնալ քրեական գործերն անտեղի դատաքննության փուլ տեղափոխելուց: Մինչդեռ, նշված հիմքով քրեական հետապնդման դադարեցումն արդեն իսկ սկսված դատաքննության պայմաններում, երբ հանցագործության փաստական հանգամանքները պարզելու նպատակով ուսումնասիրվում են ապացույցներ, արդարացված չէ և կարող է հանգեցնել ամբաստանյալի դատավարական երաշխիքների չեզոքացմանն ի համեմատ այն իրավիճակի, երբ նրա նկատմամբ կայացվել արդարացման դատավճիռ: Խոսքը վերաբերում է օրինական ուժի մեջ մտած դատավճիռի (այդ թվում՝ արդարացման) նախադարձի նշանակությանը, ինչը ենթադրում է, որ դատարանի կողմից գործով հաստատված փաստերի մասին դատավճռում արված եզրահանգումները պարտադիր են նույն հանգամանքների առկայությամբ քաղաքացիական կամ վարչական դատավարության կարգով գործեր քննող դատարանների և իրավակիրառ այլ մարմինների համար: Ավելին՝ քրեադատավարական օրենսդրությամբ առանձնակի կարգավորում է ստացել քաղաքացիական հայցով դատավճռի նշանակության խնդիրը, ըստ որի՝ նույն քաղաքացիական հայցով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը, որով հայցը մերժվել է, բացառում է քաղաքացիական հայցի հարուցումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մաս): Մինչդեռ, քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը նման հատկանիշներով օժտված չէ:

Վերոգրյալից բացի, միայն արդարացման դատավճիռը կարող է ամբողջապես ռեաբիլիտացնել ամբաստանյալին հասարակության աչքերում: Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, թեկուզև արդարացնող հիմքով, հասարակության մտք կարող է նույնացվել անչի մեղքի «ապացուցված չլինելու» հետ, մինչդեռ դատական նիստում կայացված արդարացման դատավճիռը դատարանի հետևությունն է ամբաստանյալի անմեղության և ներկայացված մեղադրանքի հիմնագուրի լինելու վերաբերյալ: Ուստի, Վճարելի դատարանը զգրնում է, որ գործի դատաքննությունն սկսելուց հետո դատարանն ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցի լուծումը կարող է տալ բացառապես դատավճռով:

(...) [Մ]եղադրանքից հրաժարվել դատախազը կարող է միայն այն դեպքում, երբ դատարանում հետազոտված փաստական փյուռների գնահատման արդյունքում գալիս է համոզման, որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով կամ 2-րդ մասով նախատեսված որևէ հիմք: Ընդ որում, քրեադատավարական օրենսդրությունը չի սահմանափակում մեղադրանքից հրաժարվելու դատախազի իրավասությունը դատական քննության փուլով, և մեղադրողը կարող է հրաժարվել մեղադրանքից ինչպես դատաքննությունն սկսելուց

հեյրո, այնպես էլ նախքան այդ (նման իրավիճակ հնարավոր է այն դեպքում, երբ, օրինակ՝ տեղի է ունեցել արարքի ապաքրեականացում):

(...) [Կ]ախված այն հանգամանքից, թե դատական քննության հատկապես որ փուլում է դատախազն արտահայտում մեղադրանքից հրաժարվելու իր կամահայրնությունը, դրա իրավական հետևանքները պետք է տարբեր լինեն: Մասնավորապես,

ա) այն դեպքում, երբ դատախազը մեղադրանքից հրաժարվում է նախքան դատաքննությունն սկսելը, դատարանը պետք է կայացնի քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում: Վճռաբեկ դատարանի վերոգրյալ դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատավճիռը՝ որպես դատավարական գործունեության արդյունք, չի կարող կայացվել դատական նիստի նախապարտադրական փուլում:

բ) այն դեպքում, երբ դատախազը մեղադրանքից հրաժարվում է դատաքննությունն սկսելուց հետո, դատարանը պետք է կայացնի արդարացման դատավճիռ, քանի որ դրա կայացումը հնարավոր է բացառապես քրեական գործն ըստ էության քննելու արդյունքում, իսկ գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում դատարանում քրեական գործի ըստ էության քննությունն սկսվում է դատաքննության փուլով» (տես Կարեն Արարատի Ստեփանյանի և Սկրտիչ Աշոտի Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՏԳ-2/0030/01/13 որոշման 20-23-րդ կետերը):

15. Վերահաստատելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված և համապատասխանաբար Կ.Սյրեփանյանի և Մ.Հովհաննիսյանի գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով կամ 2-րդ մասով նախատեսված որևէ հիմքով մեղադրողի մեղադրանքից հրաժարվելը դատարանում գործի հետագա վարույթը բացառող հանգամանք է: Իսկ առաջին ատյանի դատարանում վարույթը, որպես կանոն, կարող է ավարտվել դատավճիռ կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելով: Ընդ որում, այդ դատական ակտերի իրավական բնույթով պայմանավորված՝ դրանցից յուրաքանչյուրը կարող է կայացվել դատական քննության որոշակի փուլում: Ըստ այդմ, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կամ արդարացման դատավճիռ կայացնելու համար կանխորոշող է մաս այն փաստը, թե դատական քննության հատկապես որ փուլում է մեղադրողը հրաժարվում մեղադրանքից: Այն դեպքում, երբ դատախազը մեղադրանքից հրաժարվում է նախքան դատաքննությունն սկսելը, դատարանը պետք է կայացնի քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում: Մինչդեռ, եթե դատախազը մեղադրանքից հրաժարվել է դատաքննությունն սկսելուց հետո, այդ թվում՝ դատական վիճաբանությունների փուլում, դատարանը պարտավոր է կայացնել արդարացման դատավճիռ:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում բողոքաբերի այն եզրահանգմանը, որ դատավճիռ կայացնելու համար դատարանը պետք է սպառի օրենքով նախատեսված դատական քննության բոլոր փուլերը, իսկ մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ դատախազի հայտարարությունը բացառում է գործի վարույթը շարունակելը, հետևաբար նաև դատավճիռ կայացնելը (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): *Կ.Սյրեհանյանի և Մ.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ. «Դատաքննությունն իր ամբողջության մեջ դատավարական (դատական) գործողությունների կատարման և որոշումների կայացման բարդ համակարգ է, որն իրականացվում է քրեադատավարական օրենքով ամրագրված իրավական կանոններին համապատասխան՝ նպատակ ունենալով պարզել ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի հիմնավորվածությունը: Այն դեպքում, երբ դատաքննության ընթացքում ի հայտ են գալիս ամբաստանյալի անմեղության մասին վկայող անհերքելի հանգամանքներ, որպիսին է նաև դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելը, դատական քննության հետագա փուլերը դառնում են առարկայազուրկ, հետևաբար դատարանը պետք է ավարտի գործի քննությունը՝ կայացնելով արդարացման դատավճիռ: Այլ խոսքով՝ արդարացման դատավճիռ կայացնելու համար դատարանը պարտավոր չէ սպառել օրենքով նախատեսված դատական քննության բոլոր փուլերը, ինչն ուղղակիորեն բխում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ մասի այն պահանջից, որ «Դատարանը պարտավոր է սույն օրենսգրքի 35-րդ հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում րվյալ դատական նիստում կայացնել արդարացման դատավճիռ»» (տե՛ս նույն որոշման 24-րդ կետը):

16. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասը վերաբերում է բացառապես մեղադրանքից մի մասով հրաժարվելու դեպքերին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ հաստատում է *Կ.Սյրեհանյանի և Մ.Հովհաննիսյանի* գործով որոշման մեջ արտահայտած այն իրավական դիրքորոշումը, որ. «(...) նշված քրեադատավարական նորմը չի նախատեսում, որ դատարանը կարող է արդարացման դատավճիռ կայացնել բացառապես այն դեպքում, երբ դատախազը մասնակիորեն է հրաժարվում մեղադրանքից, այլ ամրագրում է, որ դատախազի մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը մեղադրանքի այդ մասով կայացնում է արդարացման դատավճիռ: Այս դեպքում «մեղադրանքի այդ մասով» ձևակերպումը պետք է հասկանալ որպես ամբաստանյալին վերագրվող այն հանցավոր արարքը, որը դատախազի կարծիքով չի հաստատվել դատական քննության ընթացքում, որը կարող է լինել ինչպես ամբողջ մեղադրանքը, այնպես էլ դրա մի մասը» (տե՛ս նույն որոշման 24-րդ կետը):

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ նախաքննության մարմնի կողմից Ս.Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել

ՀՀ քրեական օրենսգրքի 179-դ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (տե՛ս սույն որոշման 1-ին և 5-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանում՝ դատական վիճաբանությունների փուլում, մեղադրողը հայտարարել է, որ հրաժարվում է Ս.Խաչատրյանին առաջադրված մեղադրանքից՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով մեղադրանքից հրաժարվելու մասին մեղադրողի դիրքորոշումը, 2013 թվականի դեկտեմբերի 4-ին կայացրել է դատավճիռ, որով Ս.Խաչատրյանը ՀՀ քրեական օրենսգրքի 179-դ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքում արդարացվել է (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ դատարանը, արդարացման դատավճիռ կայացնելով, դատավարական իրավունքի նորմերի խախտում թույլ չի տվել, 2014 թվականի փետրվարի 12-ին որոշում է կայացրել դատախազի բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին (տե՛ս սույն որոշման 3-րդ և 8-րդ կետերը):

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-16-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրողի կողմից դատական վիճաբանությունների փուլում մեղադրանքից հրաժարվելու պայմաններում Առաջին ատյանի դատարանը Ս.Խաչատրյանի նկատմամբ պարտավոր էր կայացնել արդարացման դատավճիռ և ոչ թե քրեական գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում:

Անդրադառնալով բողոքաբերի այն փաստարկին, որ ստորադաս դատարանները Ս.Խաչատրյանի արդարացման դատավճռի հիմքում դրել են քրեադատավարական օրենքով չնախատեսված հիմք, այն է՝ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելը (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով մեղադրողը պատճառաբանված հրաժարվել է մեղադրանքից՝ արաքքում հանցակազմի բացակայության հիմքով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում հստակ նշել է, որ Ս.Խաչատրյանի արաքքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 179-դ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմը: Այս հանգամանքն ընդգծել է նաև Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում (տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը): Իսկ ինչ վերաբերում է դատավճռում տեղ գտած այն ձևակերպմանը, որ *«Միլվա Խաչատրյանի վերաբերյալ պետք է կայացվի արդարացման դատավճիռ՝ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու հիմքով»*, ապա Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ արդարացման դատավճիռը (...) չի կարող բեկանվել քրեադատավարական օրենքի էական խախտման շարժառիթով, եթե արդարացվածի անմեղությունը կասկած չի

հարուցում, գտնում է, որ քրեադատավարական օրենքի այս խախտումը չի կարող հիմք ծառայել արդարացման՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատավճիռը բեկանելու համար:

19. Այսպիսով, հիմք ընդունելով վերը շարադրված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական են և հիմնավորված, հետևաբար բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Միվա Ռոբիկի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի փետրվարի 12-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

25.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ԵԿԴ/0096/01/13
Նախագահող դատավոր՝ Մ.Արղամանյան
Դատավորներ՝ Ա.Դանիելյան
Մ.Պետրոսյան

ԵԿԴ/0096/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Հ.ԱՍՏՏԻՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի օգոստոսի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արտակ Ալֆրեդի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի փետրվարի 28-ի որոշման դեմ մեղադրող Ա.Հակոբյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ Ա.Գասպարյանի 2013 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ հարուցվել է թիվ 62203813 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-312-րդ հոդվածի 2-րդ մասի և 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2013 թվականի մայիսի 22-ի որոշմամբ Արտակ Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2013 թվականի հունիսի 10-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2013 թվականի դեկտեմբերի 16-ի դատավճռով Ա. Հովհաննիսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ Ա. Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Նույն դատավճռով Մ. Հունանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտվել է ազատազրկման՝ 4 (չորս) տարի ժամկետով:

3. Մեղադրող Ա. Հակոբյանի և ամբաստանյալ Մ. Հունանյանի պաշտպան Գ. Հակոբյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ բողոքները մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի դատավճիռը՝ բողոք օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 28-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Ա. Հակոբյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 5-ի որոշմամբ մեղադրողի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Գատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ա. Հովհաննիսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա. «(...) աշխատելով ՀՀ ոստիկանության ՊՊԳ վարչության Վարդենիսի պահպանության բաժանմունքի դասակի ջոկի հրամանատար, ունենալով ոստիկանության ենթասպայի կոչում, 2012թ. հոկտեմբերի սկզբին մորեղբոր՝ Մարտիրոս Մարտիրոսյանի միջոցով ծանոթացել է և նրա միջնորդությամբ համաձայնության է եկել Մեսրոպ Հունանյանի հետ՝ նրա միջոցով իրեն սպայական կոչում շնորհելու համար այդ լուծելու լիազորությամբ օժտված ՀՀ ոստիկանության համապատասխան պաշտոնատար անձանց 3.253.040 ՀՀ դրամին համարժեք 8000 ԱՄՆ դոլար կաշառք տալու հարցում:

2012թ. հոկտեմբերի 27-ին Արյուսկ Հովհաննիսյանը պաշտոնատար անձանց Մեսրոպ Հունանյանի միջնորդությամբ՝ որպես կաշառք տալու

համար, վերջինիս է փոխանցել առանձնապես խոշոր չափի՝ 1.621.200 ՀՀ դրամին համարժեք 4000 ԱՄՆ դոլար գումար՝ խոստանալով գործընթացն ավարտելուց հետո տալ նաև խոստացված գումարի մի մասը» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 105):

6. Առաջին ատյանի դատարանն իր դատավճիռը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) Ամբաստանյալների նկատմամբ պարիժ նշանակելիս՝ պարիժների չափը որոշելիս, դատարանը հաշվի է առնում ինչպես նրանց կատարած արարքների բնույթը և հանրության համար վրանգավորության աստիճանը, այնպես էլ արագացված կարգով անցկացված դատական քննության ընթացքում ուսումնասիրված՝ նրանց անչք բնութագրող տվյալներն ու պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները:

(...)

Որպես ամբաստանյալ Արթակ Հովհաննիսյանի պատասխանատվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքներ՝ դատարանը հաշվի է առնում, որ նա նախկինում արատավորված ու դատված չի եղել, խոստովանական ցուցմունքներով աջակցել է հանցագործությունը բացահայտելուն և հանցագործության մյուս մասնակիցներին մերկացնելուն, համաչափվեց մեղադրանքի հետ, անկեղծորեն զղջաց կատարած հանցանքի համար, նրա խնամքին գտնվում են մինչև 14 տարեկան՝ 2-ամյա, 4-ամյա և 6-ամյա երեխաները:

Որպես ամբաստանյալ Ա Հովհաննիսյանի անչք բնութագրող տվյալ՝ դատարանը հաշվի է առնում, որ նա բնակության և աշխատանքի վայրերում բնութագրվում է դրական:

Դատարանը, նկատի ունենալով ամբաստանյալ Ա Հովհաննիսյանի անչք բնութագրող տվյալները, նրա պատասխանատվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքները, էլենելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված արդարության, պատասխանատվության անհատականացման ու պարիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից, հանգում է հետևության, որ ամբաստանյալ Ա Հովհաննիսյանի ուղղվելը հնարավոր է առանց պարիժը կրելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պարիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով, ինչն անհրաժեշտ ու քավարար է նաև սոցիալական արդարությունը վերականգնելու և նրա կողմից նոր հանցագործությունների կատարումը կանխելու համար: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 105-106):

7. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, գտել է, որ. «Արթակ Հովհաննիսյանի նկատմամբ պարիժ նշանակելիս, պարիժի տեսակը և չափը որոշելիս, ինչպես նաև նշանակված պարիժը կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս, առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով ամրագրված պարիժ նշանակելու ընդհանուր

սկզբունքներով և հաշվի առնելով ինչպես նրա կողմից կատարված արարքի բնույթն ու հասարակական վրանգավորության աստիճանը, այնպես էլ պատասխանավորությունն ու պատիժը մեղմացնող և ամբաստանյալի անչք բնութագրող հանգամանքները, այդպիսիք ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ հանգել է ճիշտ հետևության, որ Արարակ Հովհաննիսյանի ուղղվելը հնարավոր է առանց ազատագրկման ձևով պատիժը կրելու» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, քերթեր 44-45):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոք բերած անձը նշել է, որ ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական և հիմնավոր չեն, դրանցով թույլ են տրվել նյութական իրավունքի նորմերի, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-62-րդ և 70-րդ հոդվածների պահանջների խախտումներ:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը վկայակոչել է Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, որից հետո եզրահանգել է, որ ստորադաս դատարաններն անտեսել են Ա.Հովհաննիսյանի կատարած հանցանքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը, ինչը բացառում է նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը: Բողոքաբերի պնդմամբ ստորադաս դատարանների մատնանշած պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները (իրեն մեղավոր ճանաչելը, կատարածի համար զղջալը, խոստովանական ցուցմունքներով հանցագործության բացահայտմանը և հանցագործության մյուս մասնակիցներին մերկացնելուն աջակցելը, խնամքին երեք անչափահաս երեխաների առկայությունը, դրական բնութագրվելը, ինչպես նաև նախկինում դատապարտված և արատավորված չլինելը) չեն նվազեցնում Ա.Հովհաննիսյանի կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը և նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու օբյեկտիվ հիմք չեն: Ա.Հովհաննիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառելիս ստորադաս դատարանները սխալ հետևության են հանգել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին հասնելու հանրավորության մասին:

9. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է Առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի դատավճիռը և այն ավտոմոլո բողոքելու մասին Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 28-ի որոշումը պատժի մասով բեկանել և փոփոխել, վերացնել Ա.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված 3 տարի ժամկետով ազատագրկումը պայմանականորեն չկիրառելը և պատիժը բողոքել ռեալ կրելու:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածով նախատեսված հանցագործության (կաշառք տալը) համար պատիժ նշանակելիս և պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը քննարկելիս արարքի հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի գնահատման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով ճիշտ դատական պրակտիկայի ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Ա.Հովհաննիսյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անչի նկատմամբ կիրառվող պարիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անչնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պարժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարժի ենթարկված անչին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անչի նկատմամբ նշանակվում է արդարացի պարիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պարժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անչը բնութագրող փոխալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով: (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարարկում պահելու շեղով պարիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատարարության ուղղվելը հնարավոր է առանց պարիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պարիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատրիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անչը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատրիժ մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: (...)»:

Մեջբերված իրավական նորմերը Վճարելի դատարանը վերլուծել և դրանց վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է հայտնել թիվ ՎԲ-50/07, ՎԲ-124/07, ՎԲ-142/07, ՎԲ-192/07, ՎԲ-201/07, ԵՇԳ/0029/01/08, ԱՎԳ-2/0059/01/08, ԵԱԲԳ/0078/01/09 ԵԿԳ/0042/01/11, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում: Նշված որոշումներում Վճարելի դատարանի ձևավորած կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործության և քրեաիրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Պատիժն արդարացի է, եթե համաչափ է կատարված հանցագործությանը, ինչպես նաև բավարար պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից: Պատժի արդարության պահանջներից նահանջելը կարող է հանգեցնել չափազանց մեղմ կամ չափազանց խիստ պատժի նշանակման: Քրեական օրենքը համընդհանուր բնույթ ունի, իսկ արարքը և այն կատարող անձը կոնկրետ են: Հետևաբար կոնկրետ գործով պատիժ նշանակելիս դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի, այն կատարող անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա: Նշված հանգամանքների գնահատման ժամանակ դատարանը պետք է ելնի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից:

Անդրադառնալով նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցին՝ Թ:Տեր-Գրիգորյանի գործով որոշման մեջ Վճարելի դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Պատրիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատրիժ մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Հանցակազմի սահմաններից դուրս գրնվելով, դրանք բնութագրում են ինչպես կատարված հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անչնավորությունը, հնարավորություն են տալիս պարկերացում կազմել հանցավորի անչնավորության և հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով այն: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել՝ ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

(...) նշանակված պատրիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անչի, պատասխանատվությունը և պատրիժը

մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պարտի նպատակների իրագործման հնարավորությունը» (տե՛ս Թամարա Տեր-Գրիգորյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-192/07 որոշումը):

Գ. Հովհաննիսյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Չնայած պարտի լի պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անչանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, սակայն դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պարտի նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պարտի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պարտի պետք է համապատասխանի հանցագործության վրանգավորության աստիճանին ու բնույթին:

Պարտի պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վրանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը» (տե՛ս Դավիթ Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԸԳ/0078/01/09 որոշման 12-րդ կետը):

13. Հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժ նշանակելիս, ինչպես նաև պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան հետևության հանգելիս դատարանը, ի թիվս այլոց, պետք է հաշվի առնի արարքի հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը: Հանցագործության այս հատկանիշներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Գ. Մադաթյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ «Արարքի հանրային վրանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ:

Արարքի հանրային վրանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է քացահայրի կատարված հանցագործությամբ պարտավորված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (տե՛ս Գարուշ Մադաթյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի ԵՇԳ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

Չարգացնելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Վ.Բեգյանի գործով որոշման մեջ արձանագրել է, որ «(...) պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի լուծման ժամանակ դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնի՝

- ա) կատարված հանցագործության նպատակն ու շարժառիթը,
- բ) քրեական օրենսդրությանը պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակությունը,
- գ) կատարված հանցագործությանը պատճառված վնասի չափը,
- դ) հանցագործության կատարման եղանակը,
- ե) հանցավոր մտադրության իրականացման աստիճանը,
- զ) հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը (...)» (տե՛ս Վանյա Բեգյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՏԳ/0018/01/13 որոշման 14-րդ կետը):

14. Անդրադառնալով Ա.Հովհաննիսյանին վերագրվող արարքի հանրային վտանգավորությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածը կաշառք տալը բնորոշում է որպես պաշտոնատար անձին անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ իր կամ իր ներկայացրած անձանց օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորության կամ թողտվության համար: Կաշառք տալը (ինչպես և կաշառք ստանալը) պետական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն է, որի օբյեկտը պետական ապարատի (կառավարման հանրային ապարատի) նորմալ գործունեությունն է: Օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերությունների կարևորության տեսանկյունից վերլուծելով կաշառք տալու հանրային վտանգավորությունը՝ հարկ է նշել, որ այն ոչ միայն խաբարում է պետաիշխանական և կառավարչական կառույցների բնականոն գործունեությունը, վնասում է նրանց հեղինակությանը, այլև պետական ապարատում կոռուպացվածության դրսևորման անհրաժեշտ նախադրյալ է: Պաշտոնատար անձին իր լիազորությունների սահմաններում գործելու համար նյութական միջոցների փոխանցումը կամ ծառայությունների մատուցումն էական վնաս է պատճառում հասարակական հարաբերություններին:

Կաշառք տալու հանրային վտանգավորության բարձր աստիճանի մասին է վկայում նաև այն, որ այս արարքը ձևական հանցակազմով է նկարագրված: Այսինքն՝ հանցանքն ավարտված է համարվում կաշառք տալու օբյեկտիվ կողմը կազմող գործողություններից որևէ մեկը կատարելու պահից՝ անկախ հանրորեն վտանգավոր հետևանքները վրա հասնելու հանգամանքից: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ քրեական

պատասխանատվությունը կաշառք տալու համար վրա է հասնում ոչ միայն կաշառքի առարկան հասցեատիրոջը տրամադրելու, այլև որոշակի նյութական բարիք կամ առավելություն խոստանալու կամ առաջարկելու պահից: Ընդ որում, որոշակի բարիք կամ առավելություն խոստանալու կամ առաջարկելը՝ որպես կաշառք տալու հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշ, նախատեսվել են «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ՀՕ-256-Ն օրենքով: Մինչ այդ գործող խմբագրությամբ քրեորեն պատժելի էր միայն կաշառքը փաստացի տալը, այսինքն՝ հանցագործության առարկան հասցեատիրոջը փոխանցելը, և կաշառք տալու խոստումը կամ առաջարկը, քանի դեռ կաշառք տվողը կաշառքի առարկան պաշտոնատար անձին հանձնելու փորձ չէր կատարել, չէր կարող որակվել որպես ավարտված հանցագործություն: Կատարված փոփոխություններից հետո գործող օրենսդրական կարգավորմամբ կաշառք տալու խոստումը կամ առաջարկն ինքնին ավարտված հանցագործություն է: Դա վկայում է այս արարքի բարձր հանրային վտանգավորությունն ընդգծելու օրենսդրի կամքի մասին: Այս առումով հարկ է նշել, որ կաշառք ստանալու հանցակազմում նմանատիպ փոփոխություն կատարվել է ավելի ուշ՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և կրացումներ կատարելու մասին» 2012 թվականի փետրվարի 9-ին ընդունված թիվ ՀՕ-18-Ն օրենքով:

Սուբյեկտիվ կողմից քննարկվող հանցակազմը բնութագրվում է բացառապես ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ կաշառք տվողը գիտակցում է, որ ինքն ապօրինի վարձատրություն է խոստանում, առաջարկում կամ տրամադրում պաշտոնատար անձին և ցանկանում է դա անել:

15. Կաշառք տալու բարձր հանրային վտանգավորության և կոռուպցիոն այս երևույթի դեմ պայքարելու անհրաժեշտության մասին են վկայում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները: Եվրոպայի խորհրդի և Միացյալ ազգերի կազմակերպության կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարին վերաբերող մի շարք կոնվենցիաները վավերացնելով՝ Հայաստանի Հանրապետությունը միջազգային հանրության առջև պարտավորություն է ստանձնել հավասարապես պայքարելու և՛ կաշառք ստանալու, և՛ կաշառք տալու դեմ:

Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան կոռուպցիա հասկացության մեջ հավասարապես ներառում է թե կաշառք տալը և թե կաշառք ստանալը: Այսպես, նշված կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ «(...) «կոռուպցիա» նշանակում է՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կաշառք կամ որևէ անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում պահանջելը, առաջարկելը, տալը կամ ընդունելը, որը խախտում է կաշառք, անհիմն օգուտ կամ այդպիսի օգուտի խոստում սրացողի կողմից ցանկացած պարտականության պարզան կատարումը կամ պահանջվող վարքագիծը»:

Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի «Ակտիվ կաշառակերությունը» վերտառությամբ 2-րդ հոդվածի

համաձայն՝ «Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են, իր ներպետական իրավունքին համապատասխան, քրեականացնելու դիտարկությանը որևէ պետական պաշտոնյայի ուղղակիորեն կամ անուղղակիորեն անհիմն օգուտ խուսափելը, առաջարկելը կամ փայլ նրա կամ ուրիշ որևէ մեկի համար, որպեսզի այդ պաշտոնյան իր իրավասության շրջանակներում որևէ գործողություն կատարի կամ դրա կատարումից ձեռնպահ մնա»:

ՄԱԿ-ի՝ Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել քրեական իրավախախտում սահմանելու համար, երբ դրանք կատարվում են միտումնավոր:

ա) պաշտոնատար անձին ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ անչափ պաշտոնատար անձի կամ այլ ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի համար որևէ ոչ իրավաչափ առավելություն խուսափելը, առաջարկելը կամ փրամադրելը նրա համար, որ այդ պաշտոնատար անձը կատարի որևէ գործողություն կամ չկատարի որևէ գործողություն իր պաշտոնական պարտականությունները կատարելիս. (...)»:

Մեջբերված կոնվենցիոն դրույթների վերլուծությունից հետևում է, որ միջազգային հանրությունը թե՛ կաշառք ստանալը և թե՛ կաշառք տալը դիտարկում է որպես հավասարապես վտանգավոր կոռուպցիոն երևույթներ: Դեռ ավելին, Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայում կաշառք ստանալը բնորոշվում է որպես կաշառակերության պասիվ, իսկ կաշառք տալը՝ ակտիվ ձև: Կաշառք տալը և կաշառք ստանալը երկու փոխկապակցված հանցավոր արարքներ են: Ընդ որում, կաշառք տալը կաշառք ստանալու անհրաժեշտ նախապայման է, հետևաբար կաշառակերության (կոռուպցիայի) դեմ պայքարը պետք է կենտրոնացնել նաև կաշառք տալու հանցակազմի վրա: Քննարկվող կոռուպցիոն երևույթի դեմ արդյունավետ պայքարը պահանջում է այս ոլորտում համապատասխան քրեական, այդ թվում՝ պատժողական քաղաքականության իրականացում: Իսկ դա իր հերթին ենթադրում է ոչ միայն համապատասխան օրենսդրական հիմքերի առկայություն (կաշառք տալու հանցակազմի համակողմանի օրենսդրական կանոնակարգում), այլև դրանց գործնական կիրառման հնարավորության ապահովում:

16. Մույն գործի նյութերից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Ա.Հովհաննիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով դատապարտել է այն բանի համար, որ նա, աշխատելով ՀՀ ոստիկանության ՊՊԳ վարչության Վարդենիսի պահպանության բաժանմունքի դասակի ջոկի հրամանատար, ունենալով ոստիկանության ենթասպայի կոչում, 2012 թվականի հոկտեմբերի սկզբին ծանոթացել և համաձայնության է եկել Մ.Հունանյանի հետ՝ նրա միջոցով իրեն սպայական կոչում շնորհելու հարցը լուծելու լիազորությամբ օժտված ՀՀ ոստիկանության համապատասխան պաշտոնատար անձանց 3.253.040 ՀՀ դրամին համարժեք

8000 ԱՄՆ դոլար կաշառք տալու հարցում: 2012 թվականի հոկտեմբերի 27-ին Ա.Հովհաննիսյանը պաշտոնատար անձանց կաշառք տալու համար Մ.Հունանյանին է փոխանցել առանձնապես խոշոր չափի՝ 1.621.200 ՀՀ դրամին համարժեք 4000 ԱՄՆ դոլար գումար՝ խոստանալով գործընթացն ավարտելուց հետո տալ նաև խոստացված գումարի մնացած մասը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը վերոգրյալ արարքի համար Ա. Հովհաննիսյանի նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկման ձևով՝ 3 տարի ժամկետով, և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան՝ 2 տարի ժամկետով: Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ իր որոշումն Առաջին ատյանի դատարանը պատճառաբանել է նրանով, որ Ա.Հովհաննիսյանը նախկինում դատված չի եղել, խոստովանական ցուցմունքներով աջակցել է հանցագործությունը բացահայտելուն և հանցագործության մյուս մասնակիցներին մերկացնելուն, զղջացել է կատարածի համար, խնամքին ունի մինչև 14 տարեկան երեք երեխա, բնութագրվում է դրականորեն: Ա.Հովհաննիսյանի անձը բնութագրող և պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող նշված հանգամանքների գնահատմամբ դատարանը գտել է, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքը և Առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել օրինական ուժի մեջ: Վերաքննիչ դատարանը գտել է, որ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը ղեկավարվել է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով և հաշվի առնելով կատարված արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ հանգել է ճիշտ հետևության, որ Ա.Հովհաննիսյանի ուղղվելը հնարավոր է առանց ազատազրկման ձևով պատիժը կրելու (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-15-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել Ա.Հովհաննիսյանի կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը: Մասնավորապես, ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ Ա.Հովհաննիսյանը աշխատել է ՀՀ ոստիկանության ՊՊԳ վարչության Վարդենիսի պահպանության բաժանմունքի դասակի ջոկի հրամանատար: Այսինքն, լինելով ոստիկանության համակարգի աշխատակից,

ունենալով ոստիկանության ենթասպայի կոչում՝ Ա.Հովհաննիսյանն ինքն ուղղակիորեն օրենքի ուժով պարտականություն է կրել պայքարելու հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ («Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված): Այնինչ, անտեսելով օրինականության (իրավակարգի) ապահովման իր պարտականությունը՝ Ա.Հովհաննիսյանը կատարել է պետական ծառայության կարգի դեմ ուղղված, հանրային բարձր վտանգավորությամբ օժտված հանցագործություն:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների կողմից հաշվի առնված ամբաստանյալի անձր բնութագրող և պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները չեն վկայում այն հանրային վտանգավորության բացակայության մասին, որը բնորոշ է Ա.Հովհաննիսյանի կատարած հանցագործությանը: Դրանք չեն նվազեցնում ամբաստանյալի կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և Ա.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու օբյեկտիվ հիմք չեն:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված չեն Ա.Հովհաննիսյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

18. Հիմք ընդունելով սույն որոշման 12-17-րդ կետերում շարադրված դատողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել սույն գործի բոլոր փաստական հանգամանքները և անհիմն կիրառել են ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը: Այսինքն՝ կիրառվել է քրեական օրենսգրքի հոդված, որը ենթակա չէր կիրառման, դրա արդյունքում թույլ է տրվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում: Այսպիսով, ստորադաս դատարանները, Ա.Հովհաննիսյանի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելով, սխալ են կիրառել քրեական օրենքը:

Մինևս ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական օրենքի նշված ոչ ճիշտ կիրառումը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, անօրինական, չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտերի կայացմանը, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատժի կրման անհրաժեշտության մասով գործով ճիշտ

որոշում կայացնելու վրա, Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

19. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արտակ Ալֆրեդի Հովհաննիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի փետրվարի 28-ի որոշումը բեկանել, գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող՝
Դատավորներ՝*

*ստորագրություն
ստորագրություններ*

26.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԵԿԳ/0223/07/14
Նախագահող դատավոր՝ Ա.Գանիելյան

ԵԿԳ/0223/07/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի օգոստոսի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու և առգրավում կատարելու վերաբերյալ միջնորդությունը մասնակի բավարարելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի ապրիլի 9-ի որոշման դեմ դատախազ Պ.Գյուլումյանի բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի սեպտեմբերի 21-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Վայոց ձորի մարզի քննչական բաժնում հարուցվել է թիվ 21102813 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի հատկանիշներով՝ Երևան քաղաքի բնակիչ Կարեն Աշոտի Հարությունյանի կողմից 2013 թվականի օգոստոսի 30-ին «ԱՐՄԻՆ ԴԵԿՈՐ» ՍՊ ընկերության կնիքի ու վկայականի օգտագործմամբ, խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով Վայք քաղաքի բնակիչ Մխիթար Ռազմիկի Արսենյանից խարդախությամբ խոշոր չափի՝ 1.218.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 300 կգ մեղր հափշտակելու դեպքի առթիվ:

Թիվ 21102813 քրեական գործին են միացվել այլ անձանց՝ Արմինե Ավագյանի, Անահիտ Սկրտչյանի, Նաիրա Կիրակոսյանի, Լևոն Թամանյանի և գործով դեռևս չպարզված անձանց կողմից նույն եղանակով՝ «ԱՐՄԻՆ ԴԵԿՈՐ», «ԱՆՈՒՇԿԱ» և «ԴԻԼՋՐՊԵՏՇԻՆ» ՍՊ ընկերությունների կնիքների և վկայականների օգտագործմամբ, գումարը բանկային փոխանցմամբ վճարելու սուտ խոստումով, խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի հափշտակության դեպքերի առթիվ Երևանի Նոր Նորքի քննչական բաժնում հարուցված թիվ 17803013, 17807113, 17809013, 17809113, Կոտայքի մարզի քննչական բաժնում հարուցված թիվ 20127613, Լոռու մարզի քննչական բաժնում հարուցված թիվ 33102613, Արարատի մարզի քննչական բաժնում հարուցված թիվ 27122313 և Երևանի Մալաթիայի քննչական բաժնում հարուցված թիվ 16809213 քրեական գործերը:

2014 թվականի փետրվարի 4-ին թիվ 21102813 քրեական գործը նախաքննությունը շարունակելու նպատակով ուղարկվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչություն:

2014 թվականի մարտի 20-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչության ավագ քննիչ Բ.Չիլինգարյանը որոշում է կայացրել բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու և առգրավում կատարելու միջնորդություն հարուցել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին աստիճանի դատարան):

2. Առաջին աստիճանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշմամբ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչության ավագ քննիչ Բ.Չիլինգարյանի միջնորդությունը բավարարվել է մասնակի՝ թույլատրելով ՀՀ կենտրոնական բանկից ստանալ սպառիչ տեղեկատվություն՝ ՀՀ տարածքում գործող բանկերում մեղադրյալներ Կ.Հարությունյանի, Ա.Սկրտչյանի, Ն.Կիրակոսյանի,

Ա.Ավագյանի, Լ.Թամանյանի անվամբ բանկային հաշիվների առկայության վերաբերյալ, իսկ առկայության դեպքում առգրավել դրանց հաշվարկային, տարադրամային հաշիվներով գործունեության ողջ ընթացքում կատարված գործարքների ու գործառնական կողմերի վերաբերյալ բանկային, ինչպես նաև իրավաբանական գործերի փաստաթղթերը:

3. Գատախազ Պ.Գյուլումյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետև նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին աստիճանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի ապրիլի 9-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազ Պ.Գյուլումյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հունիսի 6-ի որոշմամբ դատախազ Պ.Գյուլումյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նախաքննության մարմնի 2014 թվականի մարտի 20-ի՝ բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու և առգրավում կատարելու միջնորդություն հարուցելու մասին որոշման համաձայն՝ «Քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ Արմինե Նորիկի Ավագյանը խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի խոշոր չափերի գույքը հափշտակելու շուրջ նախնական համաձայնության գալով գործով դեռևս չպարզված անչի հետ, «Գոլդեն Գոուօ» ՍՊ ընկերության փնտրեն Խաչիկ Մարտիրոսյանից պանիր ձեռք բերելու և դրա դիմաց 15 օր անց բանկային փոխանցմամբ վճարելու սույր խոստումով, 2013 թվականի հունիսի 11-ին վերջինիս հետ իր փնտրիչությամբ գործող «Անուշկա» ՍՊ ընկերության անվամբ ձևականորեն կնքել է 720 կգ ընդհանուր քաշով փարբեր փեսակի պանիր ձեռք բերելու վերաբերյալ պայմանագիր և հաշիվ սպրանքագիր, սրացել ու հափշտակել է ընկերության խոշոր չափերի՝ 1.225.986 ՀՀ դրամի արժողությամբ գույքը:

Բացի այդ, գործով ինքնությունը դեռևս չպարզված անչը հափշտակություն կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով Արմինե Ավագյանի հետ, խաբեությամբ ներկայանալով որպես «Հովիտ» հանգստյան փան փնտրեն, հետվճարային պայմանով պանիր ձեռք բերելու վերաբերյալ 2013 թվականի հուլիսի 1-ին հեռախոսով պայմանավորվածություն է ձեռք բերել անհայր ձեռնարկավոր Սուսան Ղազարյանի ամուսնու՝ Հենրիկ Վարդումյանի հետ, որից հետո՝ 2013 թվականի հուլիսի 4-ին Արմինե Ավագյանը, ներկայանալով որպես նույն հանգստյան փան փոխափնտրեն, վերջիններիս հետ «Անուշկա» ՍՊ ընկերության անվամբ ձևականորեն ստորագրել ու կնքել է 668 կգ ընդհանուր քաշով փարբեր փեսակի պանիր ձեռք բերելու վերաբերյալ կազմված ելքի

սպրանքագիր, ինչի հիման վրա սրացել ու հասիշտակել է Սուսաննա Ղազարյանի խոշոր չափերի՝ 1.066.000 ՀՀ դրամ արժողությամբ գույքը:

Վերոգրյալ արարքների կատարման համար Արմինե Ավագյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով (...):

Պարզվել է նաև, որ Կարեն Աշոֆի Հարությունյանը խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով առանձնապես խոշոր չափերի հասիշտակություն կատարելու դիրավորությամբ, նախնական համաձայնության գալով գործով չպարզված ունի «Տիգրան Սահակյան» մրացածին անուն-ազգանվամբ անչի, իսկ մեկ դեպքով նաև՝ մեղադրյալ Անահիտ Մկրտչյանի հետ, խաբեությամբ ներկայանալով որպես Կարեն Պետրոսյանի անվամբ իր կողմից հիմնադրված «ԴԻԼՋՐՊԵՏՇԻՆ», ինչպես նաև գործով մյուս մեղադրյալ Արմինե Ավագյանի ամուսնու մոր՝ Անուշ Ղարախանյանի անվամբ հիմնադրված «Արմին Դեկոր» ՍՊ ընկերությունների աշխատակից՝ «Արամ», և «Արյոյոմ» անուններով, հետվճարային պայմանով սպրանքներ չեռք բերելու պատրվակով 2013 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում հիշյալ ընկերությունների անվամբ ձևականորեն կնքված պայմանագրերով Մխիթար Արսենյանից, Լևոն Հակոբյանից և Յուրա Աբրահամյանից սրացել և հասիշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ 4.558.720 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ փարբեր փեսակի սպրանքներ:

Բացի այդ, Անահիտ Մկրտչյանը խարդախության և վստահությունը չարաշահելու եղանակով առանձնապես խոշոր չափերի հասիշտակություն կատարելու դիրավորությամբ, նախնական համաձայնության գալով գործով չպարզված ունի «Արթուր», «Տիգրան Սահակյան» մրացածին անուն-ազգանվամբ անչանց, իսկ մեկ դեպքով նաև՝ մեղադրյալ Կարեն Հարությունյանի հետ, խաբեությամբ ներկայանալով որպես «Արմին Դեկոր» և «ԴԻԼՋՐՊԵՏՇԻՆ» ՍՊ ընկերությունների հաշվապահ՝ «Ալլա Սարգսյան» անուն ազգանվամբ, հետվճարային պայմանով սպրանքներ չեռք բերելու պատրվակով 2013 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում հիշյալ ընկերությունների անվամբ ձևականորեն կնքված պայմանագրերով Միքայել Գրիգորյանից, Արմեն Խաչատրյանից, Նորայր Սարգսյանից և Յուրա Աբրահամյանից հասիշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ 6.677.911 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ փարբեր փեսակի սպրանքներ:

Վերոգրյալ արարքների կատարման համար Կարեն Հարությունյանին և Անահիտ Մկրտչյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (...):

Նախաքննությամբ պարզվել է, որ Նսիրա Արշակի Կիրակոսյանը խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի խոշոր չափերի գույքը հասիշտակելու շուրջ նախնական համաձայնության գալով Լևոն Թամամյանի և գործով դեռևս չպարզված անչի հետ, «Գլանժ Ալկո» ՍՊ ընկերությունից ալկոհոլային խմիչքներ չեռք բերելու և դրա արժեքը 3

օր անց բանկային փոխանցմամբ վճարելու սուր խտրումով, խաբեության անրկայանալով որպես «Արմին Դեկոր» ՍՊ ընկերության հաշվապահ՝ «Ալվարդ» անունով, 2013 թվականի օգոստոսի 21-ին «Գլանժ Ալկո» ՍՊ ընկերության վաճառքի գծով փնտրեն Նելլի Ասարյանի հետ չհասկանորեն կնքել է 1.016.000 ՀՀ դրամ արժողությամբ փարբեր փեսակի օդու և կոնյակի մատակարարման պայմանագիր, որի հիման վրա սրացել ու հաիշտակել է դրանք:

Վերը նշված արարքների կատարման համար Նաիրա Կիրակոսյանին և Լևոն Թամամյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով (...):

Քրեական գործի նախաքննությամբ հիմնավորվել է, որ վերը նկարագրված բոլոր դրվագներով չեռք բերված ապրանքների արժեքը կազմող գումարների վճարումը պետք է իրականացվեր բանկային փոխանցման եղանակով, ուստի հիշյալ, ինչպես նաև մեղադրյալների կողմից խաբեության և վարսառությունը չարաշահելու եղանակով գույք հաիշտակելու հանգամանքները քննության առարկա դարձնելու համար անհրաժեշտություն է առաջացել ՀՀ կենտրոնական բանկից սրանալ սպառիչ փեղեկատվություն՝ ՀՀ տարածքում գործող բանկերում Արմինե Ավագյանի, Կարեն Հարությունյանի, Անահիտ Մկրտչյանի, Նաիրա Կիրակոսյանի և Լևոն Թամամյանի, նրանց կողմից հիմնադրված և փաստացի փնտրիված «ԱՆՈՒՇԿԱ», «ԱՐՄԻՆ ԴԵԿՈՐ» և «ԴԻԼՋՐՊԵՏՇԵՆ» ՍՊ ընկերությունների անվամբ բանկային հաշիվների առկայության վերաբերյալ, իսկ առկայության դեպքում դրանց հաշվարկային, փարադրամային հաշիվներով գործունեության ողջ ընթացքում կատարված գործարքների ու գործառնական կողմերի վերաբերյալ բանկային, ինչպես նաև իրավաբանական գործերի փաստաթղթերը:

(...)» (տե՛ս նյութեր, թերթեր 2-4):

6. Առաջին ատյանի դատարանը 2014 թվականի մարտի 21-ի որոշմամբ նախաքննության մարմնի 2014 թվականի մարտի 20-ի միջնորդությունը բավարարել է մասնակի հետևյալ պատճառաբանությամբ. «(...) խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա կարող է չեռք բերվել բացառապես ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձի վերաբերյալ բանկային գաղտնիքը: Փաստորեն անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող փեղեկությունը կարող է տրամադրվել քրեական վարույթն իրականացնող մարմնին, եթե անձը ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ և առկա է բանկային գաղտնիք կազմող փեղեկությունների սրացման նպատակով խուզարկություն կամ առգրավում կատարելու թույլտվություն տալու վերաբերյալ դատարանի որոշումը:

(...) Տվյալ դեպքում Կարեն Աշոտի Հարությունյանը, Անահիտ Խաչիկի Ավագյանը, Նաիրա Արշակի Կիրակոսյանը, Արմինե Նորիկի Ավագյանը,

Լևոն Տիգրանի Թամամյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, հետևաբար միջնորդությունը այդ մասով ենթակա է քավարարման:

(...) Անդրադառնալով «ԱՆՈՒՇԿԱ», «ԱՐՄԻՆ ԴԵԿՈՐ» և «ԴԻԼՋԻՊԵՏՇԻՆ» ՍՊ ընկերությունների մասով ներկայացված միջնորդությանը՝ դատարանը գրնում է, որ միջնորդությունը այդ մասով ենթակա է մերժման:

(...)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կազմակերպությունները չեն կարող ներգրավվել որպես կասկածյալ կամ մեղադրյալ, հետևաբար կազմակերպությունների մասով միջնորդությունը պետք է մերժել:

(...)»:

Առաջին ատյանի դատարանն իր որոշումը հիմնավորելիս հենվել է նաև Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0015/07/13 որոշման վրա (տե՛ս նյութեր, թերթեր 70-74):

7. Նույն հիմնավորմամբ Վերքննիչ դատարանը 2014 թվականի ապրիլի 9-ի որոշման մեջ նշել է, որ. «*ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված միջնորդությունը մասնակի քավարարելու հարցում հանգել է ճիշտ եզրակացության, հետևաբար՝ վիճարկվող դատական ակտը բեկանելու և փոփոխելու հիմքեր չկան: (...)*» (տե՛ս նյութեր, թերթեր 84-100):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ բողոքելու մասին Վերաքննիչ դատարանի 2014 թվականի ապրիլի 9-ի որոշումն անհիմն են, ենթակա են բեկանման և փոփոխման:

9. Վերոհիշյալ փաստարկը հիմնավորելու համար բողոք բերած անձը նշել է, որ նախաքննությամբ հիմնավորվել է, որ սույն գործով որպես մեղադրյալ ներգրավված անձինք խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի հափշտակություններ կատարելու նպատակով հիմնադրել են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ: Բողոքաբերը փաստարկել է, որ մեղադրյալ Արմինե Ավագյանը 2013 թվականի հունվարի 23-ին հիմնադրել է «ԱՆՈՒՇԿԱ» ՍՊ ընկերությունը: Մեղադրյալ Կարեն Հարությունյանը, չարաշահելով Արուսյան քաղաքի բնակիչ Կարեն Պետրոսյանի վստահությունը, վերջինիս համար վարորդական իրավունքի վկայական ձեռք բերելու պատրվակով նրանից վերցրել է անձնագիրը, որի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում 2013 թվականի սեպտեմբերի 4-ին ձևակերպել ու ստացել է «ԴԻԼՋԻՊԵՏՇԻՆ» ՍՊ

ընկերության գրանցման վկայականը, կանոնադրությունը՝ հիմնադիր Կարեն Պետրոսյանի անուն-ազգանվամբ: Մեղադրյալ Արմինե Ավագյանի անունով՝ Վարդան Մաթևոսյանի մոր՝ Անուշ Դարախանյանի անվամբ 2013 թվականի ապրիլ ամսին հիմնադրվել է «Արմին Դեկոր» ՍՊ ընկերությունը:

10. Բողոքաբերի պնդմամբ՝ հիմնավորվել է նաև, որ նշված ընկերությունները ստեղծվել են ուրիշի գույքին խաբեությամբ տիրանալու նպատակով, այդ ընկերություններով որևէ տնտեսական գործունեություն չի իրականացվել, ընկերությունները գործունեության վայր, գրանցված աշխատողներ չեն ունեցել: Նշված ՍՊ ընկերությունները փաստացի կառավարվել և ղեկավարվել են մեղադրյալների կողմից: Վերջիններս հափշտակություններ կատարելու ընթացքում տուժողներին են ներկայացրել ընկերության գրանցման վկայականները և կանոնադրությունները, անձամբ կնքել են ձևական պայմանագրերը, ստորագրել հաշիվ-ապրանքագրերը: Նրանք, ներկայանալով որպես ընկերության տնօրեն, հաշվապահ, առաքիչ և այլ աշխատակից, վստահություն են ձեռք բերել տուժողների մոտ՝ վերջիններիս հետ կնքելով ձևական պայմանագրերը, ձեռք բերված ապրանքների դիմաց պարտավորվել են կատարել վճարումներ բանկային փոխանցումների միջոցով, սակայն խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել են տուժողների գույքը՝ բազմաթիվ ընկերությունների պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

11. Բողոքաբերն իր անհամաձայնությունն է արտահայտել ստորադաս դատարանների այն դիրքորոշմանը, որ վարույթն իրականացնող մարմնին կարող են տրամադրվել միայն կասկածյալի կամ մեղադրյալի, սակայն ոչ հանցագործություններ կատարելու համար վերջիններիս կողմից հիմնադրված կամ ղեկավարվող կազմակերպությունների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները: Արդյունքում, բողոք բերած անձը եզրահանգել է, որ կարող է ստեղծվել իրավիճակ, որպիսին առկա է նաև սույն գործով, որ կասկածյալները կամ մեղադրյալները, օգտագործելով իրենց կողմից հիմնադրված կամ փաստացի վերահսկվող կազմակերպությունները կամ դրանց հաշիվները, կատարեն հանցագործություններ, սակայն դրանք չբացահայտվեն՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ չտրամադրելու պատճառով:

12. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է բողոքն ընդունել վարույթ, բեկանել և փոփոխել Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2014 թվականի ապրիլի 9-ի որոշումը՝ «ԱՆՈՒՇԿԱ», «ԱՐՄԻՆ ԴԵԿՈՐ» և «ԳԻԼՋՐՊԵՏՇԻՆ» ՍՊ ընկերությունների մասով և թույլատրել ՀՀ կենտրոնական բանկից ստանալ սպառիչ տեղեկատվություն՝ ՀՀ տարածքում գործող բանկերում «ԱՆՈՒՇԿԱ», «ԱՐՄԻՆ ԴԵԿՈՐ» և «ԳԻԼՋՐՊԵՏՇԻՆ» ՍՊ ընկերությունների անվամբ բանկային հաշիվների առկայության վերաբերյալ, իսկ առկայության դեպքում առգրավել նաև դրանց հաշվարկային, տարադրամային հաշիվներով գործունեության ողջ ընթացքում կատարված

գործարքների ու գործառնական կողմերի վերաբերյալ բանկային, ինչպես նաև իրավաբանական գործերի փաստաթղթերը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր կասկածյալին կամ մեղադրյալին մեղազգրվող հանցավոր արարք(ներ)ին անմիջականորեն առնչվող իրավաբանական անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալը թույլատրելու հարցի կապակցությամբ: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մասն գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու և առգրավում կատարելու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը «ԱՆՈՒՇԿԱ», «ԱՐՄԻՆ ԴԵԿՈՐ» և «ԴԻԼՋԻՊԵՏՇԻՆ» ՍՊ ընկերությունների մասով ենթակա է մերժման:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի համաձայն՝ *«Քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները կարող են սրանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա»:*

«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բանկերը քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրում են միայն դատարանի որոշման հիման վրա՝ սույն օրենքին և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան: (...)»:

16. Վերոհիշյալ քրեադատավարական նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն օրենսդիրն ընդգրկել է սահմանափակ մատչելի տեղեկությունների շարքում՝ նախատեսելով դրանց պահպանության որոշակի իրավական ռեժիմ: Նշված իրավական ռեժիմի կարևորագույն բաղկացուցիչ մասն են կազմում դրանց բացահայտման հնարավորությունը նախատեսող իրավական նորմերը:

17. ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:

Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

(...):»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23[-րդ] (...) [հոդվածով] (...) ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պարվի և բարի համբավի պաշտպանության համար:

(...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 8-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

18. Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում մեկնաբանելով «անձնական կյանք» եզրույթը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) արձանագրել է, որ այն լայն հասկացություն է և ենթակա չէ սպառիչ սահմանման: Եվրոպական դատարանը գտել է, որ անձնական կյանքի ոլորտն ընդգրկում է մարդու առողջությունը, ֆիզիկական և հոգեկան ամբողջականությունը: Անձնական կյանքի իրավունքը ներառում է նաև անհատական զարգացումը, այլոց և ընդհանրապես արտաքին աշխարհի հետ հարաբերություններ հաստատելը և զարգացնելը (տե՛ս NADA v. SWITZERLAND գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 12-ի վճիռը, զանգատ թիվ 10593/08, կետ 151):

Վճռաբեկ դատարանը թիվ ԱՎԳ/0015/07/13 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. ««Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը մեկնաբանելով ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի և դրա վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սպասարկման կամ այլ գործառնությունների կապակցությամբ բանկի և անչի միջև հասարակած հարաբերությունները՝ որպես արտաքին աշխարհի հետ անչի հարաբերությունների փարատեսակ, հանդիսանում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ մարդու անչնական կյանքի մաս: Հետևաբար, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված փեղեկությունները՝ որպես մարդու անչնական կյանքի մաս, անչեռնմիտելի են և դրանց արացման վրա փարածվում են ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված սահմանափակումները» (տե՛ս Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԳ/0015/07/13 որոշումը, կետ 16):

19. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության իրավական կանոնակարգումը պետք է իրականացնել այն հաշվով, որ բացառվի դրա երաշխավորման պահանջից ցանկացած կամայական նահանջ՝ հիմք ընդունելով ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, իրավական և ժողովրդավարական պետության սահմանադրական սկզբունքները, մասնավորապես տնտեսական զործունեության ազատությունը և ազատ տնտեսական մրցակցությունը, ինչպես նաև մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Հնարավոր սահմանափակումները կարող են իրավաչափ դիտարկվել և արդարացվել միայն սահմանադրական կարգի հիմունքների, հանրության առողջության և բարոյականության, այլոց իրավունքների և ազատությունների, հասարակական կարգի պահպանության անհրաժեշտության առկայության տեսանկյունից:

20. Փաստորեն, բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պետական մարմիններին և պաշտոնատար անձանց կարող են տրամադրվել միայն այն սահմաններում և միայն այն չափով, որքանով դա անհրաժեշտ է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված նպատակների, այդ թվում՝ հանրային շահի ապահովման համար՝ պայմանով, որ նախատեսված են մասնավոր անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործուն երաշխիքներ:

21. Այսպիսով, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների բացահայտման խնդիրը սերտորեն առնչվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության ապահովման քրեական դատավարության հիմնաքարային խնդրին: Հիմք ընդունելով քրեական դատավարության այս կարևորագույն խնդրի ապահովման անհրաժեշտությունը՝ բանկային գաղտնիքի պահպանության իրավական ռեժիմը կանոնակարգելիս իբրև ուղենիշ մախև առաջ պետք է ընդունել անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության սահմանադրական պահանջը: Ըստ այդմ, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները բացահայտելու օրենսդրական կանոնակարգերը պետք է մախատեսեն համապատասխան երաշխիքներ՝ բացառելու համար նաև պետական մարմինների և պաշտոնատար անձանց հնարավոր կամայական վարքագիծը:

22. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, գործող օրենսդրական կարգավորման համաձայն, կարող են ստացվել առգրավման կամ խուզարկության քննչական գործողությունների կատարման արդյունքում: Ընդ որում, չափազանց կարևոր է քննչական այս գործողությունների կատարման կարգի հստակ օրենսդրական կանոնակարգման առկայությունը, որը պարունակում է անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման գործուն երաշխիքներ: Այսպես՝

1) օրենսդրորեն սահմանված է այն անձանց սպառնիչ շրջանակը, ում վերաբերյալ կարող են պահանջվել բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ: Այդ անձանց խիստ սահմանափակ շրջանակն ընդգրկում է միայն կասկածյալին և մեղադրյալին: Այսինքն՝ քրեական գործով վարույթի ընթացքում կարող են բացահայտվել ոչ թե ցանկացած անձի, այլ բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ (տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԳ/0015/07/13 որոշումը): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի, 64-րդ հոդվածի 1-ին մասի և 202-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում առկա կարգավորումները մախատեսում են այն անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ձեռք բերելու օրենսդրական հնարավորություն, որոնց վերաբերյալ քրեական գործով ձեռք բերված ապացույցներով նվազագույնը հիմնավոր կասկածի մակարդակով հիմնավորվել է, որ նրանք, հնարավոր է, հանրորեն վտանգավոր արարք կատարած լինեն:

2) Հստակ սահմանված է այն տեղեկությունների շրջանակը, որոնք կարող են պահանջվել: Բանկային գաղտնիքի հասկացությունը հստակ տրված է «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում, որի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ Կրվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի*

հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հոգուր հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուրի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ»:

3) Նախատեսված է անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման այնպիսի կարևորագույն երաշխիք, ինչպիսին նախնական դատական վերահսկողությունն է քննչական այս գործողությունների կատարման նկատմամբ: Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս կամ այն միջամտության՝ կոնվենցիոնալ պահանջներին համապատասխանությունը գնահատելիս դատական (նախնական դատական) վերահսկողության առկայությունը դիտարկվում է որպես անձի իրավունքների ապահովման և հնարավոր կամայականությունների և չարաշահումների կանխման գործուն երաշխիք (տե՛ս *Wieser and bicos beteiligungen GmbH v. Austria*, Եվրոպական դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 16-ի վճիռը, զանգատ թիվ 74336/01, կետ 57, *Robathin v. Austria*, Եվրոպական դատարանի 2012 թվականի հուլիսի 3-ի վճիռ, զանգատ թիվ 30457/06, կետ 44):

23. Այսպիսով, սույն որոշման 22-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումից բխում է, որ ՀՀ ներպետական օրենսդրությամբ նախատեսված են բանկային գաղտնիքի պահպանության իրավական ռեժիմի սահմանափակման իրավաչափության և մասնավոր անձանց իրավունքների և օրինական շահերի ապահովման գործուն երաշխիքներ:

24. Սակայն հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության կարևորագույն սկզբունքը ենթադրում է, որ մարդու իրավունքներն ու ազատությունները բացարձակ չեն, և դրանց իրացումը պետք է հակակշռվի ավելի լայն հանրային շահով: Ինչպես արդեն նշվել է, թե Եվրոպական կոնվենցիան և թե ՀՀ Սահմանադրությունն իրավաչափ են համարում անձի համապատասխան իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումը ժողովրդավարական հասարակության կարևորագույն արժեքների պաշտպանության համար: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ Եվրոպական դատարանը խախտում չի արձանագրել բոլոր այն դեպքերում, երբ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված իրավունքները սահմանափակվել են նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավաչափ նպատակների ապահովման համար (տե՛ս, ի թիվս այլոց, *I.S. v. Germany* գործով Եվրոպական դատարանի 2014 թվականի հունիսի 5-ի վճիռը, զանգատ թիվ 31021/08):

25. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման

համատեքստում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում ամրագրված դրույթի այն մեկնաբանությունը, որ դատարանի որոշման հիման վրա կարող են ստացվել բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ բանկային հաշիվների վերաբերյալ տվյալները, օրենսդրական այս դրույթի բովանդակության և կիրառման շրջանակների անհարկի նեղացում է: Նման մեկնաբանությունը չի համապատասխանում քննարկվող դատավարական (քննչական) գործողությունների առջև դրված խնդիրներին, էականորեն սահմանափակում է դրանց՝ քրեական գործով վարույթի համար ունեցած դերն ու նշանակությունը: Արդյունքում, մասնավոր շահը չարդարացված գերակայում է հանցագործությունների բացահայտման (հանցավորության դեմ պայքարի) հանրային շահի նկատմամբ:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասում տեղ գտած «քրեական գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ» հասկացության վերլուծությունը վկայում է, որ խոսքը ոչ թե սուկ կասկածյալի կամ մեղադրյալի անվամբ, այլև նրան մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին անմիջականորեն առնչվող իրավաբանական անձին վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների մասին է, եթե առկա է հիմնավոր ենթադրություն, որ այդ իրավաբանական անձի գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից:

27. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանում վարույթն սկսելու հիմք է ծառայում հեղաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի պարճառաբանված որոշման մեջ պարունակվող միջնորդությունը՝ համապատասխան գործողություններ կատարելու մասին թույլտվություն ստանալու համար:

2. Որոշման պարճառաբանական մասում պետք է նշվեն տվյալներ այն հանցագործության մասին, որի առիթով մտադրություն կա կատարել համապատասխան քննչական գործողություն, ինչպիսի տվյալներ պետք է ստացվեն քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ կապված այդպիսի գործողությունների արդյունքում, (...) ինչպես նաև այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են դատարանին օրինական և հիմնավորված որոշում ընդունելու համար: Եթե այդ նյութերը բավարար չեն, դատավորն իրավունք ունի պահանջել՝ լրացնել դրանք»:

28. Ելնելով վերոգրյալից և զարգացնելով սույն որոշման 26-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումը Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցներով (փաստական տվյալներով) հիմնավորի, որ համապատասխան քննչական գործողության արդյունքում ձեռք են բերվելու կասկածյալին կամ մեղադրյալին մեղսագրվող հանցավոր արարք(ներ)ին անմիջականորեն առնչվող և այն իրավաբանական անձին

վերաբերող բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, որի գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից: Նման մեկնաբանության համար հիմք է ծառայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի և 282-րդ հոդվածի համակարգային վերլուծությունը: Այսինքն՝ վարույթն իրականացնող մարմինը բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու համար առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին միջնորդությամբ պետք է ներկայացնի անհրաժեշտ և բավարար փաստեր, որոնք դատարանին հիմք կտան ողջամտորեն ենթադրել, որ տվյալները, որոնք ակնկալվում է ստանալ համապատասխան քննչական գործողության կատարման արդյունքում, անմիջականորեն առնչվում են կասկածյալին կամ մեղադրյալին մեղաագրվող հանցավոր արարք(ներ)ին և վերաբերում են նրա կողմից ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվող, վերահսկվող կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվող իրավաբանական անձին:

29. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ քրեական հետապնդումն իրականացնող մարմինը բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու և առգրավում կատարելու միջնորդություն է ներկայացրել Առաջին ատյանի դատարան: Վարույթն իրականացնող մարմինն իր միջնորդությունը հիմնավորել է նրանով, որ նախաքննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալներով հաստատվել է, որ սույն գործով մեղադրյալները ենթադրյալ հափշտակությունները կատարելու նպատակով անձամբ հիմնադրել են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, որոնք որևէ տնտեսական գործունեություն չեն իրականացրել, գործունեության վայր և գրանցված աշխատողներ չեն ունեցել: Ըստ վարույթն իրականացնող մարմնի՝ պարզվել է, որ այդ ընկերությունները փաստացի կառավարվել են մեղադրյալների կողմից, և որ վերջիններս, ներկայանալով որպես ընկերության տնօրեն, հաշվապահ, առաքիչ և այլ աշխատակից, ներկայացնելով ընկերության գրանցման վկայականները և կանոնադրությունները, վստահություն են ձեռք բերել տուժողների մոտ, անձամբ կնքել են պայմանագրերը, ստորագրել հաշիվ-ապրանքագրերը և պարտավորվել են ձեռք բերված ապրանքների դիմաց կատարել վճարումներ բանկային փոխանցումների միջոցով:

Վերոհիշյալ փաստերը հիմնավորելու համար վարույթն իրականացնող մարմինը միջնորդությանը կցել է «ԳԻԼՋՐՊԵՏՇԻՆ» և «ԱՐՄԻՆ ԴԵԿՈՐ» ՍՊԸ-ների գրանցման վկայականները (տե՛ս նյութեր, թերթեր 5-6), ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տրամադրած տվյալները «ԱՆՈՒՇԿԱ» ՍՊԸ-ի և դրա հիմնադիր Արմինե Ավագյանի վերաբերյալ (տե՛ս նյութեր, թերթեր 7, 11-13), Էլեկտրոնային ռեգիստրի քաղվածքները՝ «ԱՐՄԻՆ ԴԵԿՈՐ», «ԱՆՈՒՇԿԱ» և «ԳԻԼՋՐՊԵՏՇԻՆ» ՍՊԸ-ների և դրանց հիմնադիրների վերաբերյալ (տե՛ս նյութեր, թերթեր 8-16), Արմինե Ավագյանի՝ որպես «ԱՆՈՒՇԿԱ» ՍՊԸ-ի

տնօրեն, «Ալլիան» ՍՊԸ-ի հետ կնքած մատակարարման պայմանագրի և հաշիվ-ապրանքագրի պատճենները (տե՛ս նյութեր, թերթեր 20 և 21) Արմինե Ավագյանի՝ որպես «ԱՆՈՒՇԿԱ» ՍՊԸ-ի տնօրեն, «Գոլդեն Գոուք» ՍՊԸ-ի հետ կնքած մատակարարման պայմանագրի պատճենը (տե՛ս քրեական գործի նյութեր, թերթեր 24-25), ելքի ապրանքագրի պատճենը (տե՛ս նյութեր, թերթ 27), տուժող Յուրա Աբրահամյանի լրացուցիչ հարցաքննության արձանագրությունը (տե՛ս նյութեր, թերթեր 39-43), վկա Կարեն Պետրոսյանի լրացուցիչ հարցաքննության արձանագրությունը (տե՛ս նյութեր, թերթեր 44-48), մեղադրյալ Արմինե Ավագյանի լրացուցիչ հարցաքննությունների արձանագրությունները (տե՛ս նյութեր, թերթեր 49-65):

30. Փաստորեն, վարույթն իրականացնող մարմինը ներկայացրել է փաստական տվյալներ, որոնք օբյեկտիվորեն կարող են վկայել, որ միջնորդության մեջ նշված համապատասխան ընկերությունները կառավարվել, վերահսկվել կամ փաստացի ուղղորդվել են որպես մեղադրյալ ներգրավված անձանց կողմից, ինչպես նաև, որ նրանց վերագրվող ենթադրյալ հանցավոր արարքները կատարվել են նշված ընկերությունները հիմնադրելու, դրանց անունից պայմանագրեր կնքելու միջոցով:

Մինչդեռ, ստորադաս դատարանները, իրենց տրամադրության տակ ունենալով վերոհիշյալ փաստական տվյալները, դրանք չեն հետազոտել և միջնորդության հիմնավորվածության ստուգման ուղղությամբ պատշաճ քննություն չեն կատարել, ինչի արդյունքում հնարավոր է հաստատվել, որ տվյալները, որոնք ակնկալվում է ստանալ համապատասխան քննչական գործողության կատարման արդյունքում, վերաբերում են մեղադրյալներին:

31. Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում նաև նախաքննության մարմնի միջնորդությունը մասամբ մերժելու հիմքում դրված՝ ստորադաս դատարանների դատական ակտերում առկա այն հիմնավորմանը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կազմակերպությունների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պահանջվել չեն կարող, քանի որ այդպիսիք չեն կարող ներգրավվել որպես կասկածյալ կամ մեղադրյալ: Իրավաչափ դիտարկումն առ այն, որ կազմակերպությունները չեն կարող ներգրավվել որպես կասկածյալ կամ մեղադրյալ, սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի չէ, քանի որ ըստ նախաքննական մարմնի՝ համապատասխան միջնորդության առարկա են կազմել որպես մեղադրյալ ներգրավված ֆիզիկական անձանց վերաբերող՝ նրանց մեղազրվող հանցավոր արարքներին անմիջականորեն առնչվող և նրանց հիմնադրած, նրանց կողմից կառավարվող, վերահսկվող կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվող ընկերությունների բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

32. Անդրադառնալով այն հանգամանքին, որ Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում վկայակոչել է Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0015/07/13 որոշմամբ արտահայտված այն իրավական դիրքորոշումը, որ. «(...) կոնկրետ քրեական գործի շրջանակներում

մինչդարևական վարույթն իրականացնող մարմինը դատարանի որոշման հիման վրա կարող է սրանալ բանկի այն հաճախորդի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ: Այլ խոսքով՝ քրեական գործի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները չեն կարող տրամադրվել հետաքննության կամ նախաքննության մարմիններին: (...)», Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեջբերված իրավական դիրքորոշումը չէր կարող դրվել միջնորդությունը մասնակիորեն բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի եզրահանգման հիմքում: Մասնավորապես, վերը հիշատակված գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը վերաբերում էր կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձանց անորոշ շրջանակի կողմից որոշակի ժամանակահատվածում կատարված գործարքների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու անթույլատրելիությանը: Տվյալ գործով Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վարույթն իրականացնող մարմնին կարող են տրամադրվել միայն կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ: Այդ դիրքորոշումը վերահաստատվում է նաև սույն որոշման շրջանակներում (տես սույն որոշման 22-րդ կետը): Մինչդեռ սույն գործով նախաքննության մարմնի միջնորդությունը վերաբերում է որպես մեղադրյալ ներգրավված կոնկրետ անձանց:

33. Սույն որոշման 15-28-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելով սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանների հետևությունն այն մասին, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու և առգրավում կատարելու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը «ԱՆՈՒՇԿԱ», «ԱՐՄԻՆ ԴԵԿՈՐ» և «ԴԻԼՋԻՊԵՏՇԻՆ» ՍՊ ընկերությունների մասով ենթակա է մերժման, իրավաչափ չէ:

34. Սույն որոշման 15-33-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի էական խախտումներ, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չհիմնավորված որոշման կայացմանը: Թույլ տրված խախտումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու և առգրավում կատարելու վերաբերյալ միջնորդությունը մասնակի բավարարելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի

դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի ապրիլի 9-ի որոշումը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու և առգրավում կատարելու վերաբերյալ միջնորդությունը մասնակի բավարարելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի ապրիլի 9-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

27.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԵԿԳ/0002/01/13

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Քրեական գործ թիվ ԵԿԳ/0002/01/13

Նախագահող դատավոր՝ Լ.Թադևոսյան

Դատավորներ՝ Ա.Խաչատրյան

Ա.Գանիեյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ պաշտպան

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Կ.ՀԱԿՈԲՅԱՆ

2014 թվականի օգոստոսի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Էդուարդ Աշոտի Չաքարյանի, Գևորգ Ավետիսի Գևորգյանի և Վաղինակ Վահագնի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի մարտի 25-ի որոշման դեմ մեղադրող Ա.Երիցյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2012 թվականի դեկտեմբերի 13-ին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 62210612 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2012 թվականի դեկտեմբերի 15-ի որոշումներով Էդուարդ Չաքարյանը, Գևորգ Գևորգյանը, Վաղինակ Վարդանյանը

ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով: Էդ.Ջաքարյանի, Գ.Գևորգյանի և Վ.Վարդանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը:

2012 թվականի դեկտեմբերի 18-ին Գևորգ Մարտիրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին մասով: Գ.Մարտիրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2012 թվականի դեկտեմբերի 17-ին նախաքննության մարմինը որոշում է կայացրել քրեական հետապնդում չիրականացնել Գ.Եղիգարյանի նկատմամբ ապօրինաբար թմրամիջոց ձեռք բերելու և գործածելու դրվագով՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, իսկ Խ.Մանուկյանի և Գ.Եղիգարյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ կաշառք տալու մասին իրավապահներին կամավոր հայտնելու, ինչպես նաև նրանց նկատմամբ կաշառքի շորթում տեղի ունենալու պատճառաբանությամբ:

2012 թվականի դեկտեմբերի 27-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի օգոստոսի 20-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-18-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում կատարված լրացման ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշումը:

2013 թվականի նոյեմբերի 22-ին քրեական գործի վարույթը վերսկսվել է՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2013 թվականի նոյեմբերի 19-ի թիվ ՍԴՌ-1124 որոշումը ստանալու և կասեցման հիմք ծառայած հանգամանքը վերանալու պատճառաբանությամբ:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ ամբաստանյալ Գ.Մարտիրոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 29-ի դատավճռով Վ.Վարդանյանը, Գ.Գևորգյանը, Էդ.Ջաքարյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով, և նրանց նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել մեղադրող Վ.Մուրադյանը, ամբաստանյալ Վ.Վարդանյանի

պաշտպան Կ.Հակոբյանը, ամբաստանյալ Գ.Գևորգյանի պաշտպան Վ.Էլբակյանը և ամբաստանյալ Էդ.Ջաքարյանի պաշտպան Ա.Կարապետյանը:

Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 25-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժվել են, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 29-ի դատավճիռը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 25-ի որոշման դեմ վճարելի բողոքներ են ներկայացրել մեղադրող Ա.Երիցյանը, ամբաստանյալ Վ.Վարդանյանի պաշտպան Կ.Հակոբյանը և ամբաստանյալ Գ.Գևորգյանի պաշտպան Վ.Էլբակյանը: Մեղադրողի բողոքը Վճարելի դատարանի 2014 թվականի մայիսի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, իսկ պաշտպանների բողոքները նույն օրվա մեկ այլ որոշմամբ վերադարձվել են:

Վճարելի բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Վ.Վարդանյանի պաշտպան Կ.Հակոբյանը՝ խնդրելով մեղադրողի վճարելի բողոքը մերժել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալներ Էդ.Ջաքարյանին, Գ.Գևորգյանին և Վ.Վարդանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք նախնական համաձայնությամբ, շորթմամբ պահանջել են առանձնապես խոշոր չափերի կաշառք: Այսպես՝ Էդ.Ջաքարյանը, աշխատելով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի 3-րդ բաժանմունքի ավագ օպերիվագորի պաշտոնում, իսկ Գ.Գևորգյանը՝ նույն բաժանմունքում օպերիվագորի պաշտոնում և հանդիսանալով պաշտոնատար անձ, 2012 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 11-ի սահմաններում, քնրանյութ օգտագործելու կասկածանքով Երևան քաղաքի Ֆուչիկի 19 հասցեից բերման են ենթարկել Արտաշատ քաղաքի բնակիչ Դ.Եղիզարյանին:

Էդ.Ջաքարյանը և Գ.Գևորգյանը, շորթմամբ, առանձնապես խոշոր չափերի կաշառք ստանալու շուրջ նախնական համաձայնության գալով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի 3-րդ բաժանմունքի պետ Վ.Վարդանյանի հետ, իրենց պաշտոնական լիազորությունների շրջանակում Դ.Եղիզարյանին պատասխանատվության չենթարկելու, վերջինիս տոքսիկոլոգիական փորձաքննության չներկայացնելու նպատակով և նրա համար այլ անբարենպաստ հետևանքներ չառաջացնելու սպառնալիքով 2012 թվականի դեկտեմբերի 12-ին Երևան քաղաքի վարչության վարչական շենքի մոտ միջնորդի՝ Գ.Մարտիրոսյանի միջոցով Դ.Եղիզարյանից ու վերջինիս բարեկամ Խ.Մանուկյանից պահանջել են 1.217.940 ՀՀ դրամին համարժեք 3.000 ԱՄՆ դոլար առանձնապես խոշոր չափերի կաշառք (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 221-223):

6. Գ.Մարտիրոսյանի նախաքննական, այդ թվում՝ Էդ.Ջաքարյանի հետ

առերես ցուցմունքների համաձայն՝ 2012 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, Էդ.Չաքարյանն իրեն հայտնել է, որ Գ.Եղիզարյանը կասկածվում է թմրանյութ օգտագործելու մեջ, նրան պետք է տանեն նարկոլոգիական հետազոտության, և եթե հաստատվի այդ հանգամանքը, ապա նա կգրկվի բժշկական գործունեություն ծավալելու իրավունքից, իսկ խնդիրներ չունենալու համար պետք է վճարեն 3.000 ԱՄՆ դոլար կաշառք: Էդ.Չաքարյանն առաջարկել է պահանջվող գումարը հայթայթելու նպատակով հանդիպել Գ.Եղիզարյանի ընկերներին ու ծանոթներին, իսկ ժամը 23:00-ի սահմաններում զանգահարել և հետաքրքրվել է՝ արդյո՞ք կարողացել են ձեռք բերել անհրաժեշտ գումարը: Ինքը պատասխանել է, որ մի մասը ձեռք են բերել: Որոշ ժամանակ անց Խ.Մանուկյանն ու Գ.Եղիզարյանը վերադարձել են և հայտնել, որ ընդամենը 300.000 ՀՀ դրամ ունեն: Ինքն այդ մասին տեղեկացրել է Էդ.Չաքարյանին, ով ասել է, թե գումարը քիչ է, և առաջարկել է ավելացնել: 2012 թվականի դեկտեմբերի 13-ին՝ ժամը 16-ի սահմաններում, Գ.Մարտիրոսյանը զանգահարել է Էդ.Չաքարյանին և հայտնել, որ իրենց մոտ 400.000 ՀՀ դրամ է, վերջինս էլ ասել է՝ երեկոյան կասի, թե ինչ անել այն (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 44-45):

Դատարանում հարցաքննվելիս Գ.Մարտիրոսյանը նշել է, որ օպեր-լիազոր Էդ.Չաքարյանը Գ.Եղիզարյանի փորձաքննության պատաս-խանները «մաքուր» տալու համար 2.000-3.000 ԱՄՆ դոլար է պահանջել: Գ.Մարտիրոսյանի ցուցմունքների վերոնշյալ հակասությունների կապակ-ցությամբ նախաքննական ցուցմունքների հրապարակումից հետո վերջինս պնդել է իր նախաքննական ցուցմունքները, այդ թվում՝ 3.000 ԱՄՆ դոլար պահանջելու վերաբերյալ (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 66):

7. Նախաքննության ընթացքում վկա Խ.Մանուկյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Գ.Մարտիրոսյանը հայտնել է, որ իր ծանոթ ոստիկաններից մեկը Գ.Եղիզարյանի «գործը փակելու» համար պահանջել է 3.000 ԱՄՆ դոլար: Իր խնդրանքով Գ.Մարտիրոսյանը զանգահարել ու հանդիպման է հրավիրել Էդ.Չաքարյանին: Վերջինս հայտնել է, որ Գ.Եղիզարյանի «գործը փակելու» համար անհրաժեշտ է մեկ ժամվա ընթացքում նրան տալ 3.000 ԱՄՆ դոլար: Խ.Մանուկյանն ասել է, որ պահանջվող գումարը շատ է, նման գումար չեն կարող ձեռք բերել, Գ.Եղիզարյանին օգնելու նպատակով առաջարկել է դիմել իր ծանոթ ոստիկանին, սակայն Էդ.Չաքարյանը խորհուրդ է տվել նման քայլի չդիմել, քանի որ գործն ավելի կքարդանա, դրան կտրվի օրինական ընթացք, և Գ.Եղիզարյանը լուրջ խնդիրներ կունենա: Այնուհետև, «Հինգ Աստղ» սրճարանում հանդիպել է Գ.Մարտիրոսյանին և Գ.Եղիզարյանին: Վերջինս ասել է, որ օպերլիազորներ Էդ.Չաքարյանը և Գ.Գևորգյանը նրան ազատ են արձակել պայմանով, որ հաջորդ օրը նրանց տա 2.000 ԱՄՆ դոլար: Դատարանում հրապարակվել է Խ.Մանուկյանի նախաքննական ցուցմունքները (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 46-47, 67):

8. Տուժող Գ.Եղիզարյանի հանցագործության մասին 2012 թվականի դեկտեմբերի 12-ին տրված հաղորդման համաձայն՝ թմրամիջոցի օգտագործման

կասկածանքով բերման է ենթարկվել վարչություն: Թմրամիջոց օգտագործելու հանգամանքը փորձաքննությանը ի հայտ չբերելու և դրա համար իրեն պատասխանատվության չենթարկելու համար օպերիվագոր Էդ.Չաքարյանն իրենից պահանջել է 3.000 ԱՄՆ դոլար, ինչին չի համաձայնել: Քիչ անց ոստիկանության Երևան քաղաքի վարչություն է եկել ատամնաբուժարանի աշխատակից Գ.Մարտիրոսյանը, ով առանձին զրուցել է Էդ.Չաքարյանի հետ, որից հետո իրեն հայտնել, որ 2.000 ԱՄՆ դոլար ոստիկաններին վճարելու դեպքում իր հարցերը կկարգավորվեն: Ըստ պայմանավորվածության՝ 2012 թվականի դեկտեմբերի 12-ին պետք է վճարեր 300.000 ՀՀ դրամ՝ մնացած գումարը 2012 թվականի դեկտեմբերի 13-ին վճարելու պայմանով (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 61):

Տուժող Գ.Եղիգարյանի նախաքննական, այդ թվում՝ Էդ.Չաքարյանի հետ առերես ցուցմունքների համաձայն՝ Էդ.Չաքարյանն իրեն հայտնել է, որ մնանատիպ գործերը, որպես կանոն, «փակվում» են 5.000 ԱՄՆ դոլար կաշառքի դիմաց, սակայն հաշվի առնելով Գ.Մարտիրոսյանի ծանոթության հանգամանքը՝ իր հարցը «կլուծեն» 3.000 ԱՄՆ դոլարով: Այն բանից հետո, երբ Խ.Մանուկյանն իրեն հայտնել է, որ մնացած գումար անհնար է հայթայթել, ինքը դիմել է Էդ.Չաքարյանին և խնդրել կաշառքի գումարի չափն իջեցնել, սակայն վերջինս չի համաձայնվել՝ նշելով, որ դա իրենից կախված չէ: Չրույցներից մեկի ժամանակ Էդ.Չաքարյանին ասել է, որ ընկերներն ընդամենը 300.000 դրամ են հայթայթել, խնդրել է բավարարվել դրանով, սակայն նա կրկին չի համաձայնվել: Ժամը 18:00-ի սահմաններում Էդ.Չաքարյանն ու Գ. Գևորգյանն իրեն տարել են ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրո, այնուհետև նույն ավտոմեքենայով տեղափոխել մինչև «Արարատյան զանգված» կոչվող թաղամաս, որտեղ էլ բաց են թողել: Ճանապարհին Էդ.Չաքարյանը հայտնել է, որ ազատ արձակելու դիմաց ինքը պարտավոր է հաջորդ օրը նրանց տալ 2.000 ԱՄՆ դոլար: Հասկացել է, որ պահանջված գումարի չափը նվազեցվել է Գ.Մարտիրոսյանի օգնությամբ: Այդ պահին օպերիվագոր Գ.Գևորգյանն Էդ.Չաքարյանին հարցրել է, թե մնացած 1.000 ԱՄՆ դոլարը երբ է տալու, սակայն Էդ.Չաքարյանը պատասխանել է, որ այդ 1.000 ԱՄՆ դոլարը զիջել են՝ չմանրամասնելով, թե ով է զիջել: Խոսակցությունից հասկացել է նաև, որ օպերիվագոր Գ.Գևորգյանն ի սկզբանե տեղյակ է եղել իրենից կաշառք պահանջելու, ինչպես նաև դրա չափի մասին (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 45-46):

Գ.Եղիգարյանի դատաքննական ցուցմունքների համաձայն՝ Էդ.Չաքարյանը մոտ 2.000-3.000 ԱՄՆ դոլարի չափով կաշառք է պահանջել հարցը լուծելու համար: Ժամը 18:00-ի սահմաններում իրեն ուղեկցել են փորձաքննության, որտեղից ազատ են արձակել, սակայն նախքան այդ՝ մեքենայից իրեն իջեցնելու պահին, Էդ.Չաքարյանն ասել է՝ «դուխդ չզգես, 2.000-ով կլուծեմ այդ հարցը», որի ժամանակ մեքենայի մեջ գտնվող Գ.Գևորգյանը հետաքրքրվել է 1.000 ԱՄՆ դոլարի ճակատագրով: Էդ.Չաքարյանը նրան պատասխանել է, որ

սակարկությունների արդյունքում այդ չափով գումարը նվազեցրել է:

2013 թվականի հունիսի 27-ին դատարանում լրացուցիչ հարցաքննվելիս Գ.Եղիզարյանը հայտնել է, որ, ընդհանուր առմամբ, նախաքննական ցուցմունքները ճիշտ են, սակայն պնդել է, որ գումարային նախնական խոսակցությունը սկսվել է ոչ թե 3.000 ԱՄՆ դոլարից, այլ 2.000-3.000 ԱՄՆ դոլարից (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 60-61):

9. Ամբաստանյալ Էդ.Չաքարյանի դատաքննական ցուցմունքների համաձայն՝ Երևան քաղաքի վարչությունում Գ.Եղիզարյանի հետ մոտ մեկ ժամ խոսելուց հետո ինքը զանգել է Գ.Մարտիրոսյանին և կանչել վարչության վարչական շենքի մոտ՝ խոսելու: Նրան տեղեկացրել է, որ Գ.Եղիզարյանին տանելու են դատաքննիչական փորձաքննության, և եթե թմրամիջոցի գործածման փաստը հաստատվի, բացասաբար կանդրադառնա Գ.Եղիզարյանի վրա: Նրան հայտնել է նաև, որ 5.000 ԱՄՆ դոլարով կարող է այնպես անել, որ փորձաքննության պատասխանը «մաքուր գա», այսինքն՝ թմրամիջոցի գործածման փաստը չհաստատվի: Նշել է նաև, որ այդ հարցը թեև լուծվում է նաև 4.000-3.000-ով, բայց տվյալ դեպքում, նրա գործունը հաշվի առնելով՝ կլուծվի 2.000 ԱՄՆ դոլարով (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 58):

10. Վկա Ա.Հարությունյանի նախաքննական ցուցմունքների համաձայն՝ 2012 թվականի դեկտեմբերի 13-ին Գ.Մարտիրոսյանն իրեն հայտնել է, որ Էդ.Չաքարյանը խոստացել է «փակել» Գ.Եղիզարյանի գործը 3.000 ԱՄՆ դոլար կաշառքի դիմաց, սակայն հետագայում նրանք սակարկել ու պայմանավորվել են Էդ.Չաքարյանին տալ 400.000 ՀՀ դրամ (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 47-48):

Ա.Հարությունյանը դատարանում հայտնել է, որ Գ.Մարտիրոսյանից տեղեկացել է, որ Էդ.Չաքարյանը խոստացել է մոտ 2.000-3.000 ԱՄՆ դոլարով «փակել» Գ.Եղիզարյանի գործը, սակայն սակարկությունների արդյունքում նա համաձայնել էր ստանալ 400.000 ՀՀ դրամ գումար (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 64):

11. Վկա Կ.Ղազանչյանի նախաքննական ցուցմունքների համաձայն՝ Գ.Մարտիրոսյանը պատմել է, որ Գ.Եղիզարյանին քրեական պատասխանատվության չենթարկելու համար Էդ.Չաքարյանը պահանջել է 3.000 ԱՄՆ դոլար, սակայն սակարկել և պայմանավորվել են նրան տալ 600.000 ՀՀ դրամ: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 13-ին, Ա.Հարությունյանին հարցրել է, թե ինչ ավարտ է ունեցել Գ.Եղիզարյանի հետ կատարված պատմությունը և տեղեկացել, որ Գ.Մարտիրոսյանի միջնորդությամբ պայմանավորվել են վճարել 400.000 ՀՀ դրամ կաշառք՝ Գ.Եղիզարյանին քրեական պատասխանատվության չենթարկելու համար (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 48):

Կ.Ղազանչյանը դատարանում հայտնել է, որ 2012 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, «Հինգ աստղ» կոչվող սրճարանում Գ.Մարտիրոսյանը պատմել է, որ թմրանյութ օգտագործելու կասկածանքով ոստիկանության վարչություն բերման ենթարկված ատամնաբույժ Գ.Եղիզար-

յանին ազատ արձակելու համար Էդ.Չաքարյանը գումար է պահանջել (չափը դժվարացել է վերհիշել): Նշել է նաև, որ պահանջած սկզբնական գումարը սակարկվել էր, և կանգ էին առել 600.000 ՀՀ դրամի վրա:

Կ.Ղազանչյանի ցուցմունքների վերոնշյալ հակասությունների կապակցությամբ նախաքննական ցուցմունքների հրապարակումից հետո վերջինս պնդել է իր նախաքննական ցուցմունքները (տե՛ս քրեական գործ, հատոր 7-րդ, քերթ 64):

12. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «(...) Դատարաննությամբ հետազոտված ապացույցներով պարզվել է, որ գործով փուժող Դավիթ Եղիզարյանի նախաշեռնած խոսակցության ընթացքում ամբաստանյալ Էդուարդ Չաքարյանը նրա հետ սակարկել է հնարավոր պարասխասնարվությունից նրան գերծ պահելու համար անհրաժեշտ կաշառքի գումարի չափը՝ նշելով, որ, որպես կանոն, նման հարցը կարգավորվում է 5.000 ԱՄՆ դոլար կաշառքով, սակայն րվյալ դեպքում, հաշվի առնելով ընդհանուր ծանոթի՝ Գևորգ Մարտիրոսյանի առկայությունը, կարող է լուծվել 2-3.000 ԱՄՆ դոլարով: Նույն զրույցի ընթացքում փուժող Դ.Եղիզարյանը գումարի առավելագույն չափի հետ չի համաչայնել, առաջարկել է ոչ ավել, քան 2.000 ԱՄՆ դոլար՝ պարճառարանելով նման գումարի բացակայությունը: Դրանից հետո գործով փուժող Դ.Եղիզարյանին ազատ արձակելու, պարասխասնարվությունից գերծ պահելու նույն նպատակով ամբաստանյալ Էդ.Չաքարյանը 3.000 ԱՄՆ դոլար գումարի պահանջ է ներկայացրել նրա խնդրով հետաքրքրվող անձի՝ Գևորգ Մարտիրոսյանի միջոցով Դ.Եղիզարյանին, ինչպես նաև վերջինիս քրոջ նշանած, գործով վկա Խաչատուր Մանուկյանին: Վերջինս պարսավորվել է 1-2 ժամվա ընթացքում հայթայթել այդ գումարը, սակայն մինչ հաջորդ օրն ընկած ժամանակահատվածում նրան և Դ.Եղիզարյանին հաջողվել է հավաքել միայն 400.000 ՀՀ դրամ գումար, ինչի մասին րեղեկացած ամբաստանյալ Էդ.Չաքարյանը, նախապես իրազեկելով օպերյիագոր Գ.Գևորգյանին և բաժանմունքի պետ Վ.Վարդանյանին, համաչայնել է որպես կաշառք ընդունել նաև այդ գումարը: Տվյալ իրավիճակում ամբաստանյալ Էդ.Չաքարյանի և վերջինիս հետ նախնական համաչայնությամբ գործած մյուսների մեղադրանքի հիմքում դրվել է 2012թ. դեկտեմբերի 12-ին Երևան քաղաքի վարչության վարչական շենքի մոտ միջնորդի՝ Գևորգ Մարտիրոսյանի միջոցով Դավիթ Եղիզարյանից ու վերջինիս բարեկամ Խաչատուր Մանուկյանից շորթմամբ 1.217.940 ՀՀ դրամին համարժեք 3.000 ԱՄՆ դոլար պահանջելը (ինչն առանձնապես խոշոր չափի կաշառք է), այն դեպքում, երբ փուժող Դ.Եղիզարյանին պարասխասնարվությունից ազատելու նպատակով սկզբնական սակարկությունը վերջինիս հետ սկսվել է 5.000 ԱՄՆ դոլարից, ապա՝ նրա և Խ.Մանուկյանի հետ ամբաստանյալ Էդ.Չաքարյանի սակարկությունների հետևանքով հասել է 3.000-ի, հետո՝ 2.000-ի, այնուհետև՝ 600.000 ՀՀ դրամի, իսկ ամենավերջում՝ կանգ առել 400.000 ՀՀ դրամ գումարի վրա: Նշված սակարկությունները րեղե են մոտ 1 օր, սակայն այդպես էլ 400.000 ՀՀ դրամ գումարն ամբաստանյալ Էդ.

Չաքարյանին, նրա հանցակիցներին չի փոխանցվել՝ վերջիններիս կամքից անկախ պայմաններով:

Անբասարանյանի Էդ.Չաքարյանին, Գ.Գևորգյանին և Վ.Վարդանյանին որպես մեղադրյալ ներգրավելու որոշումներից և մեղադրական եզրակացության վերլուծությունից ակնհայտ է, որ նախաքննական մարմինն ու մեղադրող կողմը կաշառքի չափի վերաբերյալ հիմնավորված են համարել, Էդ.Չաքարյանի և նրա հետ խմբի կազմում գործած անչանց մեղադրանքներում որպես հիմք ընդունել 3.000 ԱՄՆ դոլար գումարը, այսինքն՝ Էդ.Չաքարյանի պահանջած առավել խոշոր գումարը, իսկ մեղադրանքի որոշումներից և մեղադրական եզրակացության եզրափակիչ մասից դուրս են մնացել գումարային սակարկությունների վերաբերյալ նշումները, կողմերի միջև կաշառքի առարկայի չափի վերաբերյալ չեռք բերված ընթացիկ, առավել ևս՝ վերջնական համաձայնությունը: Մինչդեռ, դատաքննությամբ հետազոտված սպացույցների գնահատման արդյունքներով պարզվեց, որ՝

ա. սակարկությունները նախաձեռնել է կաշառքի պահանջ ներկայացրած Էդ.Չաքարյանը՝ նշելով, որ նման հարցերը, որպես կանոն, լուծվում են 5.000 ԱՄՆ դոլարով, սակայն փոխյալ դեպքում կարող է լուծվել 2-3.000 ԱՄՆ դոլարով (ըստ Խ.Մանուկյանի և Գ.Մարտիրոսյանի ցուցմունքների՝ 3.000 ԱՄՆ դոլարով),

բ. գումարային վերոնշյալ սակարկություններն ընթացել են կաշառք փոխողի օգտին պաշտոնապարտ անչանց կողմից իրենց լիազորությունների շրջանակներում միևնույն գործողությունները չկատարելու, այն է՝ Գ.Եղիզարյանին վարչությունից ազատ արձակելու, հնարավոր պարասիտանարվության հարցը չբարձրացնելու և այդ կերպ պարասիտանարվությունից զերծ պահելու նպատակով.

գ. սակարկություններն ընթացել են միևնույն անչանց՝ կաշառք փոխողներ Գ.Եղիզարյանի և Խ.Մանուկյանի - միջնորդ Գ.Մարտիրոսյանի - կաշառքը պահանջողներից Էդ.Չաքարյանի միջև,

դ. սակարկությունները սկսել են Գ.Եղիզարյանի հետ Էդ.Չաքարյանի գրույցից, սպա սկզբնական գումարային պահանջը Գ.Մարտիրոսյանին և Խ.Մանուկյանին անմիջապես ներկայացնելու պահից և շարունակվել են հարաբերականորեն կարճատև ժամանակահատվածում (1 օր), որոնց արդյունքում կողմերը միջնորդ Գ.Մարտիրոսյանի աջակցությամբ կաշառքի չափի՝ 400.000 ՀՀ դրամի վերաբերյալ չեռք են բերել վերջնական համաձայնություն(...):

(...) Դատարանը փաստում է, որ Էդ.Չաքարյանի կողմից ներկայացված 3.000 ԱՄՆ դոլար կաշառքի պահանջը պետք է լիներ իրական, մինչդեռ իրավիճակի վերլուծությունից ակնհայտ է, որ այն ներկայացվել է բուժողների վճարունակությունը (անվճարունակության վերաբերյալ Գ.Եղիզարյանի խոսքերը սրուգելու) պարզելու և հնարավորինս մեծ գումար սրանալու դիտարկությամբ: 3.000 ԱՄՆ դոլարի պահանջ ներկայացվելու առաջին իսկ պահից այդ գումարը մյուս կողմը սակարկել է, այդ սակարկությունները

չարունակվել են մինչև կաշառքի չափի վերաբերյալ վերջնական համա-
չայնություն չեռք բերելը, այսինքն՝ սկզբնական պահանջն ի սկզբանե չի եղել
ընդունելի և վերջնական, ներկայացվելու եղանակով հիմքեր է տվել
սակարկությունների համար:

Դատարանի համոզմամբ ամբաստանյալներին որպես մեղադրյալ
ներգրավելու որոշումներում և մեղադրական եզրակացության եզրափակիչ
մասում նախաքննությամբ չեռք բերված ապացույցներով հաստատված՝
սակարկությունների վերաբերյալ փաստական տվյալները չարացուցելու
հերքանքով, կաշառք սրանալու չեղանակ հանցակազմի պայմաններում,
կաշառքի առարկայի չափի վերաբերյալ ընտրովիության սկզբունքով
մեղադրող կողմի չեղանակությունը (ամբաստանյալներին առավելագույն խոշոր
գումարի՝ 3.000 ԱՄՆ դոլարի մեղսագրումը) ըստ էության «կանխորոշում» է ոչ
միայն դատական քննության սահմանները, այլև որոշակիորեն նաև արդյունքը:
Մեղադրանքների նման չեղանակությունը թեև առերևույթ չի խախտել գործով
ամբաստանյալների իրավունքները, սակայն իրականում Դատարանի
համոզմամբ հանգեցրել է նախաքննության փուլում դատավարության
մրցակցային բնույթի և մրցակցության սկզբունքի, արդար դատաքննության
(հատկապես՝ արդարության և կողմերի հավասարության) սահմանադրական
սկզբունքի խախտմանը և իրական հնարավորություն չի տվել պաշտպանական
կողմին տվյալ դեպքում ամբաստանյալ Էդ. Չաքարյանին և մյուսներին դեռևս
մինչդատական վարույթից ընկալելու կաշառքի առանձնապես խոշոր չափի
վերաբերյալ նրանց ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը,
օբյեկտիվությունը և իրավաչափությունը: Մինչդեռ մեղադրանքների որոշման
մեջ և մեղադրական եզրակացության եզրափակիչ մասում նույն խնդրով
սակարկությունների վերաբերյալ փաստական տվյալների հիշատակումը
կնպաստեր ամբաստանյալներին մեղսագրված արարքի միջոց որակմանը,
կապահովեր ՀՀ Սահմանադրության 19-րդ, 14.1-րդ, ինչպես նաև 5-րդ
հոդվածներով երաշխավորված իրավունքները, մասնավորապես՝ նրանց
ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար
հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահ-
պանմամբ, ... իրենց գործի հրապարակային քննության իրավունքը (...):» (տե՛ս
քրեական գործ, հատոր 7-րդ, թերթ 71-73):

13. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Առաջին արյանի
դատարանը, *ex officio* կատարելով ապացույցների բազմակողմանի, լրիվ և
օբյեկտիվ հետազոտություն և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-
րդ հոդվածի կարգով, գործով չեռք բերված յուրաքանչյուր ապացույց
գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապա-
ցույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար քավարարության
տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, հանգել է
իրավաչափ հերքության այն մասին, որ առանձնապես խոշոր չափերի կաշառք
պահանջելու մասով ամբաստանյալներ Էդուարդ Չաքարյանին, Գևորգ
Գևորգյանին և Վաղինակ Վարդանյանին առաջադրված մեղադրանքը հիմ-

նավորված չէ, վերջիններս քրեական պատասխանատվության ենթակա են նախնական համաձայնության գալով, շորթմամբ խոշոր չափերի կաշառք պահանջելու համար, և արդյունքում պահպանելով նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածով ամրագրված պահանջներն ու դատավարական ընթացակարգը՝ ամբաստանյալների արարքներին տրվել է քրեաիրավական ճիշտ գնահատական և այդպիսիք ճիշտ է որակել՝ արդյունքում ճիշտ կիրառելով քրեական օրենքը (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթ 103):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

14. Բողոքի հեղինակի պնդմամբ դատարանների կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջները:

Ըստ բողոքաբերի՝ նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցներով հաստատվել է, որ Էդ.Չաքարյանն ի սկզբանե ներկայացրել է 3.000 ԱՄՆ դոլարի պահանջ: Վերոնշյալ հանգամանքն ապացուցվել է ինչպես Դ.Եղիգարյանի, Խ.Մանուկյանի և Գ.Մարտիրոսյանի ցուցմունքներով և գործով ձեռք բերված այլ ապացույցներով, այնպես էլ դատարանի կողմից հաստատված այն հանգամանքով, որ Էդ.Չաքարյանը բազմիցս մերժել է 3.000 ԱՄՆ դոլարից քիչ գումար տալու վերաբերյալ խնդրանքները, գումարային խնդրի լուծմանը ներգրավվել են Դ.Եղիգարյանի ծանոթներն ու ընկերները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմը ձևական է՝ բողոք բերած անձը եզրահանգել է, որ Էդ.Չաքարյանի կողմից 3.000 ԱՄՆ դոլար պահանջելու գործողությամբ արդեն իսկ հանցագործությունն ավարտվել է, հետևաբար վերջինս, ինչպես նաև Վ.Վարդանյանն ու Գ.Գևորգյանը ենթակա են քրեական պատասխանատվության վերոնշյալ նորմով: Մինչդեռ, Էդ.Չաքարյանին, Վ.Վարդանյանին և Գ.Գևորգյանին պատասխանատվության ենթարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով՝ ստորադաս դատարանները խախտել են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները, իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոխվի դրա իմաստը:

Բողոք բերած անձը գտել է, որ Առաջին ատյանի դատարանի տրամաբանությամբ շարժվելու պարագայում ստացվում է, որ եթե կաշառքի

պահանջ ներկայացրած անձը սակարկության արդյունքում հայտնի, որ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կկատարի առանց գումարի՝ այսպես ասած «լավության կարգով», ապա նրա գործողություններում կբացակայի կաշառք պահանջելու հանցակազմը, ինչն անթույլատրելի է և հակաօրինական:

Բողոքաբերի կարծիքով Վերաքննիչ դատարանն իր հերթին որևէ հիմնավոր պատճառաբանություն չի բերել վերաքննիչ բողոքում նշված փաստարկները հերքելու ուղղությամբ, ավելին, անտեսվել են Էդ.Ջաքարյանին, Վ.Վարդանյանին և Գ.Գևորգյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքը հիմնավորող, գործում առկա և վերաքննիչ բողոքում նշված բազմաթիվ ապացույցները, ինչը հիմք է տալիս պնդելու, որ Վերաքննիչ դատարանի կողմից կայացվել է անօրինական որոշում:

15. Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի այն դիրքորոշմանը, ըստ որի՝ կաշառքի գումարի չափի վերաբերյալ նախաքննությանը ձեռք բերված և դատաքննությանը հետագոտված ապացույցները բավարար չեն հանգելու հետևության, որ ամբաստանյալներ Վ.Վարդանյանը և Գ.Գևորգյանը նախապես իրազեկված և համաձայն են եղել Էդ.Ջաքարյանի կողմից առանձնապես խոշոր չափի՝ 3.000 ԱՄՆ դոլար կաշառք պահանջելու մասին՝ բողոքաբերն այն անհիմն է համարել հետևյալ պատճառաբանությամբ.

ա) 2012 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, փորձագիտական կենտրոնից Գ.Գևորգյանի հետ Դ.Եղիզարյանին Արարատյան զանգված տեղափոխելիս Էդ.Ջաքարյանը հայտնել է կաշառքի գումարը մինչև 2.000 ԱՄՆ դոլար նվազեցնելու մասին: Ջրույցին միջամտել է Գ.Գևորգյանը և հետաքրքրվել մնացած 1.000 ԱՄՆ դոլարի մասին, ինչը վկայում է, որ նա ի սկզբանե տեղյակ է եղել Դ.Եղիզարյանից 3.000 ԱՄՆ դոլար կաշառք պահանջելու վերաբերյալ:

բ) Էդ.Ջաքարյանի և Գ.Գևորգյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արձանագրության համաձայն՝ Գ.Գևորգյանը, տեղեկանալով Գ.Մարտիրոսյանի մոտ 400.000 ՀՀ դրամ կաշառքը գտնվելու մասին, ակնարկել է, որ տեղյակ է կաշառքի գումարի նախորդ չափի վերաբերյալ:

գ) Վ.Վարդանյանի և Էդ.Ջաքարյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արձանագրության համաձայն՝ Վ.Վարդանյանը, տեղեկանալով Գ.Մարտիրոսյանի մոտ 400.000 ՀՀ դրամ կաշառքը գտնվելու մասին, ակնարկել է կաշառքի գումարի նախորդ չափի վերաբերյալ, ինչը վկայում է, որ նա ի սկզբանե տեղեկացված է եղել Դ.Եղիզարյանին 3.000 ԱՄՆ դոլարի պահանջ ներկայացված լինելու մասին:

16. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 29-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 25-ի որոշումը և գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ Էդ.Ջաքարյանին,

Վ.Վարդանյանին և Գ.Գևորգյանին ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով դատապարտելու համար:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

17. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ կաշառք պահանջելու հանցակազմի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ առանձնապես խոշոր չափերով կաշառքի վերաբերյալ ամբաստանյալների ներկայացրած պահանջն իրական չի եղել:

19. «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ պետական պաշտոնյայի պասիվ կաշառակերությունը ներառում է՝

«(...) դիպրավորությամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ նրա կամ ուրիշ որևէ մեկի համար անհիմն որևէ օգուտ պահանջելը կամ ստանալը կամ նման օգուտի առաջարկ կամ խոսքում ընդունելը, որպեսզի այդ պաշտոնյան իր իրավասության շրջանակներում որևէ գործողություն կատարի կամ դրա կատարումից չենճպահ մնա»:

«Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է չեղմարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել քրեական իրավախախտում սահմանելու համար, երբ դրանք կատարվում են միտումնավոր»:

(...) շորթումը կամ պաշտոնատար անձի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ անչափ պաշտոնատար անձի կամ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար որևէ ոչ իրավաչափ առավելություն ընդունելը նրա համար, որ այդ պաշտոնատար անձը կատարի որևէ գործողություն կամ չկատարի որևէ գործողություն իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս»:

Մինչև 2012 թվականի փետրվարի 9-ի՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-18-Ն օրենքի ընդունումը, ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն էր նախատեսում պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալու, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի

միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալու՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար:

2012 թվականի փետրվարի 9-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-18-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալու, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալու կամ պահանջելու կամ ստանալու խոստման կամ առաջարկն ընդունելու՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար:

Մեջբերված դրույթներին ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է 2013 թվականի նոյեմբերի 19-ի ՄԴՈ-1124 որոշմամբ՝ արձանագրելով. «Հայաստանի Հանրապետությունը, լինելով Եվրոպայի խորհրդի անդամ, միջազգային պարտավորություններ է սրանչնել ընդունել համարժեք օրենսդրական ակտեր թե՛ ակտիվ և թե՛ պասիվ կաշառակերության դեմ անհրաժեշտ պայքար ծավալելու ուղղությամբ՝ դրանց համար սահմանելով համապատասխան քրեական պատիժ (...):

Ելնելով հարցի կարևորությունից, իրավական պետության կայացման հրամայականներից՝ ՀՀ Սահմանադրական դատարանը ոչ միայն առաջարկվող իրավակարգավորումը համարել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, այլև 2004 թ. մարտի 30-ի ՄԴՈ-483 որոշման մեջ շեշտել է, որ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան կնպաստի ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածում հռչակված ժողովրդավարական և իրավական պետության ամրապնդմանը, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը:

(...)

Նույնպիսի իրավակարգավորման անհրաժեշտությամբ է առաջնորդվել նաև Հայաստանի Հանրապետությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասում որպես կաշառքը բնորոշող հարկանիշ նախատեսելով ոչ միայն «սրանալը», այլև «պահանջելը կամ սրանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը»: Նման փոփոխությունը Հայաստանի Հանրապետության կողմից սրանչնած միջազգային պարտավորությունների պարզաձև կատարման, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական

դիրքորոշման անմիջական իրացման արդյունք է (...):

20. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2012 թվականի փետրվարի 9-ին ընդունված օրենքով ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններն ու լրացումները պայմանավորված էին Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններով և կաշառակերության դեմ արդյունավետ միջոցներով պայքարելու անհրաժեշտությամբ: Վերոնշյալ փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածը համապատասխանեցվել է կոռուպցիայի վերաբերյալ միջազգային կոնվենցիաների պահանջներին:

Կաշառք ստանալու բարձր հանրային վտանգավորությամբ պայմանավորված՝ հանցագործության ավարտման պահը տեղափոխվել է ավելի վաղ փուլ՝ քրեական պատասխանատվություն նախատեսելով ոչ միայն կաշառքի առարկան փաստացի ստանալու համար: Այսպես՝ ներկայումս օբյեկտիվ կողմից քննարկվող հանցագործությունը դրսևորվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ՝ դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն

- ա) ստանալով կամ,
- բ) պահանջելով կամ,
- գ) ստանալու խոստմամբ կամ,
- դ) առաջարկն ընդունելով:

21. Անդրադառնալով կաշառք պահանջելու հանցակազմին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է պաշտոնատար անձի կողմից պահանջ ներկայացնելով, որը հանդիսանում է կաշառք տվողի օգտին որոշակի գործողություն կատարելու կամ չկատարելու անվերապահ պայման: Պահանջը կարող է արտահայտվել հրամանի, կարգադրության, համոզելու, շահագրգռելու, անձի զիտակցության և կամքի վրա ներազդելու այլ եղանակներով, որը, սակայն, կապված չէ անձի նկատմամբ սպառնալիք գործադրելու հետ:

Քննարկվող հանցագործությունը ձևական է և ավարտված է համարվում պահանջ ներկայացնելու պահից՝ անկախ կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության ձեռքբերման, կաշառքի առարկան հետագայում ստանալու կամ չստանալու, պաշտոնատար անձի կողմից կաշառք տվողի օգտին պայմանավորված գործողությունները կատարելու կամ չկատարելու հանգամանքից: Պաշտոնատար անձը կաշառք կարող է պահանջել անձամբ կամ միջնորդի միջոցով, գրավոր կամ բանավոր, հեռախոսով, էլեկտրոնային փոստով, այլ հաղորդումներով կամ այլ եղանակով, որոնք, սակայն, արարքի որակման համար որևէ նշանակություն չունեն:

22. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ պաշտոնատար անձի կողմից ներկայացված ցանկացած պահանջ չէ, որը կարող է վկայել կաշառք ստանալու հանցակազմի հատկանիշների առկայության մասին: Մասնավորապես, հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է, որպեսզի ներկայացվող

պահանջը լինի կոնկրետ, առկա և իրական, իսկ այս չափանիշներին չհամապատասխանող, զուտ անձի դիտավորությունը բացահայտող պահանջ ներկայացնելը չի կարող հանցագործություն համարվել: Կաշառք տալու միայն կոնկրետ և իրական պահանջի դեպքում է խոսք գնում հանրորեն վտանգավոր, հակաիրավական, գիտակցված և կամային այնպիսի արարքի (գործողության) կատարման մասին, որն ուղղված է կոնկրետ օբյեկտի՝ պետական ապարատի բնականոն գործունեության դեմ, այդ հարաբերություններում առաջացնում է բացասական փոփոխություններ, հեղինակագրկում է պետական իշխանությունը, վտանգում դրա նորմալ գործունեությունը:

Այսպիսով, պահանջն առկա է, եթե այն ներկայացված, ձևակերպված է եղել: Ընդ որում, կարևոր է պարզել՝ ում կողմից, երբ, որտեղ, ում մասնակցությամբ և ինչ հանգամանքներում է այն ներկայացվել:

Պահանջի կոնկրետությունը ենթադրում է հստակություն պաշտոնատար անձի կողմից պահանջվող կաշառքի առարկայի և դրա չափերի հարցում: Մասնավորապես, հանցավորի ներկայացրած պահանջը դրամի, գույքի, գույքի նկատմամբ իրավունքի և կաշառքի այլ առարկաների ու դրանց չափերի վերաբերյալ պետք է լինի կոնկրետ և հստակ, կաշառք տվողի համար ակնհայտ, մասնավորապես, վկայի, թե հանցավորը որպես կաշառք ինչ է պահանջում և ինչ չափով է պահանջում: Վերոնշյալ հանգամանքը հատկապես կարևոր է այն առումով, որ կաշառքի առարկան հանդիսանում է հանցակազմի պարտադիր հատկանիշ և կախված դրա չափերից՝ ազդում արարքի որակման վրա:

Պահանջի իրական լինելը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել գործի բոլոր փաստական հանգամանքները՝ պահանջի ներկայացման եղանակը, ինտենսիվությունը (օրինակ՝ ներկայացված պահանջը կրկին վերահաստատելը), իրադրությունը, տեղը, ժամանակը և այլն: Մասնավորապես, պահանջի արտահայտման եղանակից, ինտենսիվությունից և այլ օբյեկտիվ հանգամանքներից կախված՝ կաշառք տվողը պետք է բավարար հիմքեր ունենա կարծելու, որ պաշտոնատար անձն իր կամ այլ անձի օգտին համապատասխան արարքը կատարելու է միայն ներկայացված պահանջն ի կատար ածելու դեպքում: Ինչ վերաբերվում է կաշառք պահանջող պաշտոնատար անձին, ապա վերջինս ներկայացված պահանջը կատարելու դեպքում պետք է իրական մտադրություն ունենա իր լիազորությունները կամ պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ որոշակի գործողություն կատարել կամ չկատարել կաշառք տվողի օգտին և գիտակցի, որ կաշառքն իրեն տրվում է հենց դրա համար: Ամեն դեպքում պահանջի իրական լինելու հարցը պետք է լուծվի՝ գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ կաշառք տվողի և ստացողի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով:

23. Սույն որոշման նախորդ կետում շարադրված դատողությունների լույսի ներքո գնահատելով սույն որոշման 20-րդ կետում վերլուծված կաշառք ստանալու հանցակազմի ավարտման պահը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե կաշառք տալու վերաբերյալ ներկայացված պահանջն իրական չի եղել, կաշառք տվողի օգտին որոշակի գործողություն կատարելու

կամ չկատարելու համար պարտադիր պայման չի հանդիսացել, այլ կրել է ձևական բնույթ, այն կաշառք ստանալու հանցակազմի իմաստով չի կարող պահանջ համարվել և վկայել քննարկվող հանցագործության առկայության մասին:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ սույն որոշման 21-րդ կետում շարադրված չափանիշներին համապատասխանող պահանջի առկայությունն արդեն իսկ իրենից ներկայացնում է ավարտված հանցագործություն: Ընդ որում, քննարկվող հանցագործության համար որևէ նշանակություն չունի, որ ի սկզբանե ներկայացված կոնկրետ և իրական պահանջը հանցավորի կամքից անկախ հանգամանքներում կամ սակարկությունների արդյունքում հետագայում կարող է փոփոխվել:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կաշառք պահանջելու հանցակազմն ավարտված է համարվում ոչ թե կաշառքի չափերի վերաբերյալ վերջնական համաձայնության ձեռքբերման պահից, այլ այն պահից, երբ հանցավորը ներկայացնում է կոնկրետ և իրական պահանջ:

Վերոնշյալ դիրքորոշումը բխում է նաև «Երավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներից, որոնց համաձայն՝

«1. Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

2. Եթե իրավական ակտն ընդունվել է ի կատարումն կամ համաձայն նույն կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, սակայն ակտը մեկնաբանվում է՝ առաջին հերթին հիմք ընդունելով ավելի բարձր իրավական ուժ ունեցող ակտի դրույթներն ու սկզբունքները»:

Մասնավորապես, 2012 թվականի փետրվարի 9-ի՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-18-Ն օրենքն ընդունվել է ի կատարումն ՀՀ կողմից վավերացրած միջազգային կոնվենցիաների, ինչպես նաև Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի («GRECO»-ի) առջև ստանձնած պարտավորությունների, որոնց բովանդակությունից բխում է, որ զուտ կաշառք պահանջելը՝ անկախ այն կատարելու կամ չկատարելու հանգամանքից, վկայում է անձի արարքում հանցակազմի առկայության մասին:

24. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կաշառք պահանջելու և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված շորքմամբ կաշառք ստանալու հանցակազմերի տարբերակման անհրաժեշտությանը:

Սույն որոշման 20-րդ կետում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ պահանջը զուգորդվում է սպառնալիքով, մասնավորապես՝ կաշառք չտալու դեպքում անձի իրավունքներն ու օրինական շահերը ոտնահարելու վերաբերյալ կամ անձին

այնպիսի պայմանների մեջ դնելով, որ վերջինս հարկադրված լինի կաշառք տալ՝ իր իրավունքներին և օրենքով պաշտպանվող շահերին սպառնացող հնարավոր վտանգը կանխելու համար, արարքը պետք է որակել որպես շորթմամբ կաշառք պահանջել: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «պահանջի» և ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված «շորթման» սահմանազատման հիմքում պետք է դրվի սպառնալիքի առկայության հանգամանքը:

Կաշառք տալու պահանջը և շորթման սահմանազատումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն հանցավորի արարքը ճիշտ որակելու, այլև կաշառք տվողին քրեական պատասխանատվությունից ազատելու հարցի լուծման համար, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, և այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն:

Միևնույն ժամանակ, Վճարելի դատարանն ընդգծում է, որ քննարկվող ծանրացնող հանգամանքն առկա է, եթե կաշառք տվողը օրինական շահեր է ունեցել, հակառակ դեպքում սպառնալիքով զուգորդված պահանջը պետք է որակվի 311-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով:

25. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալներ Էդ.Ջաքարյանին, Գ.Գևորգյանին և Վ.Վարդանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով՝ նախնական համաձայնությամբ, շորթմամբ, առանձնապես խոշոր չափերով՝ 3.000 ԱՄՆ դոլար կաշառք պահանջելու համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը դատավճռում արձանագրել է, որ 3.000 ԱՄՆ դոլարի վերաբերյալ ներկայացված պահանջն իրական չի եղել, հետևաբար, առանձնապես խոշոր չափերով կաշառք պահանջելու մասով առաջադրված մեղադրանքը հիմնավորված չէ, և ամբաստանյալներին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը՝ գտնելով, որ ամբաստանյալների արարքներին տրվել է քրեաիրավական ճիշտ գնահատական (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

26. Վճարելի դատարանն արձանագրում է, որ կաշառքի չափի վերաբերյալ ստորադաս դատարանները հանգել են սխալ հետևության հետևյալ պատճառաբանությամբ.

ա) սույն գործի փաստական հանգամանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ Էդ.Ջաքարյանը, նախնական համաձայնության գալով

Գ.Գևորգյանի և Վ.Վարդանյանի հետ, Գ.Եղիգարյանին քրեական պատասխանատվության չենթարկելու նպատակով կաշառք տալու պահանջ է ներկայացրել սկզբում Գ.Մարտիրոսյանին, այնուհետև՝ Խ.Մանուկյանին: Պահանջը ներկայացվել է 2012 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում: Էդ.Ջաքարյանը նրանց առաջարկել է համապատասխան գումարը ձեռք բերելու համար հանդիպել Գ.Եղիգարյանի ընկերներին ու ծանոթներին, խորհուրդ է տվել չդիմել ուրիշ ոստիկանի, քանի որ գործին կտրվի օրինական ընթացք, և Գ.Եղիգարյանը լուրջ խնդիրներ կունենա: Այնուհետև, կրկին զանգահարել և հետաքրքրվել է գումարի վերաբերյալ: Տեղեկանալով, որ ընդամենը 300.000 ՀՀ դրամ է հավաքվել՝ պնդել է, որ գումարը քիչ է, և առաջարկել է ավելացնել (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը):

բ) Գ.Եղիգարյանը թեև նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ Էդ.Ջաքարյանը հայտնել է, որ մնանատիպ գործերը որպես կանոն «փակվում» են 5.000 ԱՄՆ դոլարով, սակայն իր հարցը կլուծի 3.000 ԱՄՆ դոլարով, դատաքննության ընթացքում պնդել է, որ գումարային խոսակցությունները սկսվել են ոչ թե 3.000, այլ 2.000-3.000 ԱՄՆ դոլարից: Սակայն թե՛ նախաքննության, թե՛ դատաքննության ընթացքում Գ.Եղիգարյանը պնդել է, որ մույն օրը՝ ժամը 18:00-ի սահմաններում, Էդ.Ջաքարյանն իրեն հայտնել է, որ գումարի չափը նվազեցվել է մինչև 2.000 ԱՄՆ դոլար, իսկ Գ.Գևորգյանը հետաքրքրվել է մնացած 1.000 ԱՄՆ դոլարով (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

27. Սույն որոշման 25-26-րդ կետերում մեջբերված փաստական հանգամանքները զնահատելով սույն որոշման 19-24-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ 3.000 ԱՄՆ դոլար կաշառք վճարելու վերաբերյալ ներկայացված պահանջը եղել է կոնկրետ և առկա:

Այսպես՝ այն ներկայացվել է ինչպես Գ.Մարտիրոսյանին, այնպես էլ Խ.Մանուկյանին և Գ.Եղիգարյանին, կաշառքի առարկայի և չափի վերաբերյալ ներկայացված պահանջը եղել է հստակ և կոնկրետ՝ 3.000 ԱՄՆ դոլար, հետապնդել է կոնկրետ նպատակներ, որոնք ակնհայտ են եղել ինչպես հանցավորների, այնպես էլ տուժողի համար, այն է՝ պաշտոնական լիազորությունների շրջանակում Գ.Եղիգարյանին պատասխանատվության չենթարկելու, վերջինիս տոբսիկոքիմիական փորձաքննության չներկայացնելու նպատակով և նրա համար այլ անբարենպաստ հետևանքներ չառաջացնելու սպառնալիքով: Վերոնշյալի հետ կապված՝ Վճարելի դատարանը հարկ է համարում նշել, որ սկզբում արված 5.000 ԱՄՆ դոլարի պահանջը իրավացիորեն ամբաստանյալներին չի մեղսագրվել, քանի որ այն կաշառք ստանալու հանցակազմի առումով պահանջ չի հանդիսացել, կրել է ձևական բնույթ և հետագայում իրենց համար ցանկալի գումարը ստանալու նախապայման է եղել:

Վերը նշված հանգամանքները հաստատվել են Գ.Մարտիրոսյանի, Խ.Մանուկյանի Գ.Եղիգարյանի, Ա.Հարությունյանի, Կ.Ղազանչյանի նա-

խաքննական և դատաքննական ցուցմունքներով (տե՛ս սույն որոշման 6-8-րդ, 10-11-րդ կետերը):

Կաշառքի պահանջը եղել է նաև իրական, մասնավորապես, արտահայտվել է այնպիսի եղանակով, որ տուժողի մոտ կասկած չի առաջացել, որ պաշտոնատար անձն իր կամ այլ անձի օգտին կարող է համապատասխան գործողությունը (անգործությունը) կատարել միայն ներկայացված պահանջն ի կատար ածելու դեպքում, ներկայացված պահանջը մի քանի անգամ վերահաստատվել է, ինչը վկայում է դրա նպատակաուղղվածության և ինտենսիվության մասին: Այսպես՝ տեղեկանալով Գ.Եղիգարյանի անվճարունակության մասին՝ Էդ.Ջաքարյանն առաջարկել է գումարը հայթայթելու նպատակով դիմել վերջինիս ընկերներին և ծանոթներին, այնուհետև նույնը պահանջել է նաև Խ.Մանուկյանից, սպառնացել, որ պահանջված գումարը չվճարելու դեպքում գործին կտրվի օրինական ընթացք, և Գ.Եղիգարյանը լուրջ խնդիրներ կունենա, անընդմեջ զանգահարել և հետաքրքրվել է ընթացքի վերաբերյալ, չի համաձայնվել 300.000 ՀՀ դրամ վճարելու առաջարկությանը և կրկին վերահաստատել է իր պահանջը:

28. Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ 3.000 ԱՄՆ դոլար կաշառք պահանջելու հանգամանքը հաստատվել է նաև տուժող Գ.Եղիգարյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքներով առ այն, որ Էդ.Ջաքարյանը մոտավորապես ժամը 18:00-ի սահմաններում է սկզբնական ներկայացված պահանջը նվազեցրել մինչև 2.000 ԱՄՆ դոլար, իսկ Գ.Գևորգյանն ակնարկել է մնացած 1.000 ԱՄՆ դոլարի մասին: Վերոնշյալը ևս մեկ անգամ վկայում է, որ կաշառքի սկզբնական չափը եղել է 3.000 ԱՄՆ դոլար և միայն ժամը 18:00-ի սահմաններում է այն նվազեցվել՝ Գ.Մարտիրոսյանի միջամտությամբ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

29. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ առանձնապես խոշոր չափերով կաշառքի վերաբերյալ ամբաստանյալների ներկայացրած պահանջն իրական չի եղել, հիմնավորված չեն: Դատարանները, իրավացիորեն հիմնավորված համարելով կաշառքի շորթման փաստը, սխալ հետևության են հանգել պահանջվող գումարի չափի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը սույն որոշման նախորդ կետում նշված փաստական տվյալները պատշաճ գնահատականի չեն արժանացրել, այլ ապացույցների բավարար համակցությամբ չեն հերքել դրանք և այդ պայմաններում հաստատված են համարել Էդ.Ջաքարյանի, Գ.Գևորգյանի և Վ.Վարդանյանի կողմից խոշոր չափերով՝ 2.000 ԱՄՆ դոլարի վերաբերյալ ներկայացրած պահանջը:

30. Հետևաբար, ամբաստանյալներ Էդ.Ջաքարյանի, Գ.Գևորգյանի և Վ.Վարդանյանի արարքները ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետից 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով վերաորակելու մասին որոշում կայացնելիս Առաջին ատյանի դատարանը, իսկ նշված դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշում

կայացնելիս նաև Վերաքննիչ դատարանը պատշաճ չեն գնահատել սույն գործի փաստական հանգամանքները: Արդյունքում՝ չի կիրառվել քրեական օրենսգրքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման, և կիրառվել է այն հոդվածը, որը ենթակա չէր կիրառման, այսինքն՝ տեղի է ունեցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

31. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալներ Էդուարդ Աշոտի Ջաքարյանի, Գևորգ Ավետիքի Գևորգյանի և Վաղինակ Վահագնի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 29-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի մարտի 25-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

28.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԱՎԴ4/0004/11/13
Նախագահող դատավոր՝ Գ.Մելիք-Սարգսյան

ԱՎԴ4/0004/11/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՐՅԱՆԻ Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի օգոստոսի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի մարտի 5-ի որոշման դեմ Վայոց ձորի մարզի դատախազության դատախազ Գ.Խաչիկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի հունիսի 3-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, Երևան-Մեղրի ավտոճանապարհի 126-րդ կիլոմետրում իրար են բախվել Սուրեն Հայրիյանի և Ազատ Ջալոյանի ավտոմեքենաները:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Վայոց ձորի մարզի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Աղամյանի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ Ա.Ջալոյանի արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. 2013 թվականի նոյեմբերի 28-ին Ա.Ջալոյանի ներկայացուցիչ Ռ.Բալոյանը բողոք է ներկայացրել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Ա.Աղամյանի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը և վերացնել Ա.Ջալոյանի իրավունքների խախտումները:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ ներկայացված բողոքը մերժվել է:

3. Գիմող Ա.Ջալոյանի ներկայացուցիչներ Ռ.Բալոյանի և Ջ.Վարդանյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի մարտի 5-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումը վերացնելու մասին:

Վերաքննիչ դատարանը վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել է վերացնել որոշման մեջ շարադրված և վերաքննիչ բողոքով առաջ քաշված Ա.Ջալոյանի իրավունքների և ազատությունների խախտումները:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 5-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Վայոց ձորի մարզի դատախազության դատախազ Գ.Խաչիկյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 8-ի որոշմամբ դատախազ Գ.Խաչիկյանի վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Ա.Ջալոյանի ներկայացուցիչներ Ռ.Բալոյանը և Ջ.Վարդանյանը՝ փաստարկելով, որ ներկայացված վճռաբեկ բողոքն անհիմն է և պետք է ամբողջությամբ մերժվի:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Ա.Աղամյանի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի որոշման համաձայն՝ «(...) Նկարի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով հանցագործություն է համարվում փրանսպորտային միջոցը վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անգոյությունը պատճառել է միջին ծանրության կամ ծանր վնաս, մինչդեռ «Միցուբիշի Պաջերո» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Ազար Ջալոյանի գործողությունների հետևանքով որևէ մեկի առողջությանը միջին ծանրության կամ ծանր վնաս չի պատճառվել, ուստի նրա արարքում բացակայում է նշված հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի հարկանիշները:

Նյութերի նախապարասարմամբ հիմնավորվել է, որ «Միցուբիշի Պաջերո» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Ազար Ջալոյանը և «Աուդի

Քյու 7» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Սուրեն Հայրիյանը թույլ են փվել վարչական իրավախախտում, ինչի համար ենթակա են վարչական պատասխանատվության (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 13):

6. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի իրավակարգավորումից, մասնավորապես, քրեական գործի հարուցելը մերժելու մասին որոշումը նախքան դատարան բողոքարկելը դատախազին բողոքարկելու օրենսդրական պահանջի բացակայությունից, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի իրավակարգավորման, հետևում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դատական վերահսկողության առարկա հանդիսանալու համար դատախազական հսկողությամբ անցնելը պարտադիր պայման չէ կամ այլ կերպ՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը կարող է միանգամից բողոքարկվել դատարան՝ առանց նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին բողոքարկելու:

(...) [Մ]ենն դեպքում քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումն անօրինական է այն դեպքում, երբ քրեական գործ հարուցելու առիթի և հանցագործության հարկանիշների մասին բավարար փյալյների առկայության պայմաններում վարույթն իրականացնող մարմինը կայացնում է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում:

Տվյալ դեպքում, արչանագրված ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով նշված ավտոմեքենաների վարորդներից և ուղևորներից որևէ մեկի առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս չի պատճառվել, այդ առումով նախապարտաված նյութերով հիմնավորվել է, որ առկա չէ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանրորեն վրանգավոր արարք կատարելու մասին վկայող հանցակազմի տարրերի բոլոր հարկանիշների բավարար ամբողջություն: (...)» (տե՛ս նյութեր, հատոր 1, թերթ 61):

7. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին, 290-րդ հոդվածները՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ] [ք]ննարկվող դեպքում խախտվել են բողոքաբեր Ա.Ջալոյանի իրավունքներն այն առումով, որ նա չի ծանոթացել նշված համալիր փորձաքննության եզրակացությանը և չի կարողացել ներկայացնել իր առարկությունները կամ միջնորդություններն այդ եզրակացության կապակցությամբ, որի վերաբերյալ հղել է մի շարք դիմում-բողոքներ, որոնք սակայն անհիմն մերժվել են:

(...) [Մ]յս և բողոքներում բարձրացված հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ է վերացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշումը, հնարավորություն տալ բողոքաբերին ծանոթանալու համալիր փորձաքննության եզրակացությանը և հիմնավոր միջնորդությունների ու ելակերպային փյալյների առկայության դեպքում նշանակել նոր համալիր

փորձաքննություն, որից հետո նոր միայն լուծել նյութերի վերջնական ընթացքը»:

8. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտի եզրափակիչ մասը շարադրել է հետևյալ կերպ. «(...) [Մ]ռաջին արյանի դատարանի 24.12.2013թ. որոշումը վերացնել:

Սույն որոշման պարձեններն ուղարկել ՀՀ ոստիկանության ՔԳՎ Վայոց շորի մարզի քննչական բաժին և մարզի դատախազին՝ պարտավորեցնելով վերացնել սույն որոշման մեջ շարադրված և վերաքննիչ բողոքով առաջ քաշված Ա.Ջալոյանի իրավունքների և ազատությունների խախտումները: (...)» (տե՛ս նյութեր, հատոր 2, թերթ 84-85):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, դատարանի հետևությունն այն մասին, որ Ա.Ջալոյանի իրավունքները խախտվել են, քանի որ վերջինս չի ծանոթացել համալիր փորձաքննության եզրակացությանը և չի կարողացել ներկայացնել իր առարկություններն ու միջնորդությունները, իրավաչափ չէ: Բողոքաբերը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածը, եզրակացրել է, որ քրեական գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելու անհրաժեշտությունը ստուգելու նպատակով նյութերի նախապատրաստման ընթացքում նշանակված փորձաքննության եզրակացությունը կողմերին ծանոթացնելու ընթացակարգ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված չէ: Հետևաբար, այդ առումով վարույթն իրականացնող մարմինն անգործություն չի դրսևորել, հատկապես, որ քննիչը փարձաքննության եզրակացությունը ստանալուց հետո այդ մասին տեղյակ է պահել Ա.Ջալոյանին, սակայն վերջինս չի ներկայացել և չի ծանոթացել:

Բացի այդ, բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով եզրահանգել է, որ Ա.Ջալոյանը դատական ակտում թվարկված հարցադրումներով խնդրել է նոր փորձաքննություն նշանակել, մինչդեռ վերջինս ինչպես դատախազին, այնպես էլ քննիչին կոնկրետ հարցադրումներով նոր փորձաքննություն նշանակելու միջնորդություն չի ներկայացրել: Ա.Ջալոյանի կողմից ներկայացվել է ընդամենը երկու դիմում, որոնք վերաբերել են փաստաթղթեր տրամադրելուն և ծանոթանալու հնարավորություն ընձեռելուն, ինչը վարույթն իրականացնող մարմնի կողմից ապահովվել է:

Ավելին, Ա.Ջալոյանի և նրա ներկայացուցչի կողմից քննիչի որոշումը բողոքարկվել է Առաջին ատյանի դատարան, իսկ դատախազին այն չի բողոքարկվել:

10. Բողոքաբերն ընդգծել է, որ նյութերի նախապատրաստման ընթացքում համալիր փորձաքննությունը նշանակվել է հենց Ա.Ջալոյանի և նրա ներկայացուցչի միջնորդությամբ, վերջիններս հարցեր են առաջադրել, մասնակցել փորձաքննության կատարմանը, իսկ փորձաքննության եզրակացությունը տրվել է այն ելակետային տվյալների հիման վրա, որոնց նրանք մինչև փորձաքննություն նշանակելը ծանոթ են եղել: Հետևաբար, նրանց պնդումներն այն մասին, որ ելակետային տվյալներն աղավաղվել են, անհիմն են:

Իսկ ինչ վերաբերում է նոր փորձաքննություն նշանակելու միջնորդությանը, եթե այն նույնիսկ ներկայացված լիներ, չէր կարող ենթադրել դրա պարտադիր բավարարում և նոր փորձաքննության նշանակում: Տվյալ դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավորված չէ անպայման բավարարել նոր փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունը: Հետևաբար, այն չբավարարելու պայմաններում չի կարող արձանագրվել վարույթն իրականացնող մարմնի կողմից Ա.Ջալոյանի իրավունքների խախտման փաստ:

11. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ իրավաչափ չէ նաև Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ անհրաժեշտ է վերացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշումը, նշանակել նոր համալիր փորձաքննություն, այնուհետև նոր միայն լուծել նյութերի վերջնական ընթացքը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ և 185-րդ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը թե՛ դատարանի, թե՛ դատախազի կողմից վերացվելու դեպքում քրեական գործի հարուցումը պարտադիր է:

Ըստ բողոքաբերի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն անօրինական է, եթե քրեական գործ հարուցելու առիթի և հանցագործության հատկանիշների մասին վկայող բավարար տվյալների առկայության պայմաններում վարույթն իրականացնող մարմինը կայացնում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում: Մինչդեռ, տվյալ դեպքում նախապատրաստված նյութերով պարզվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունն առկա չէ, քանի որ որևէ մեկի առողջությանը միջին ծանրության կամ ծանր վնաս չի պատճառվել:

12. Վերաքննիչ դատարանը բողոքարկվող դատական ակտը կայացրել է՝ ղեկավարվելով ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ, այնպես էլ 290-րդ հոդվածներով, մինչդեռ արձանագրելով, որ քննիչի որոշումը ենթակա է վերացման՝ դատարանը պետք է ղեկավարվեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով և իր որոշմամբ վերացնեք քննիչի որոշումը: Բողոքի հեղինակը, ի հավաստումն իր դիրքորոշման, հիշատակել է Վճարելի դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշումը և եզրահանգել, որ Վերաքննիչ դատարանը, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու անհրաժեշտության վերաբերյալ հետևություն կատարելով ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 290-րդ հոդվածի շրջանակներում, թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում:

13. Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 5-ի որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին աստիճանի դատարանի դատական ակտին:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափի է արդյոք Ա.Ջալոյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության սահմանման մասին Վերաքննիչ դատարանի որոշումը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն սրուզելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց արագման պահից 10 օրվա ընթացքում:

2. Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացառություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անչնական խուզարկության ենթարկվել անչինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկվում է համապատասխան դատախազին:

2. Որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին:

(...)

4. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա վերադաս դատախազը այն ստանալու պահից 7 օրվա ընթացքում վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար այն ուղարկում է քննիչին կամ հաստատում է քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը:

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն:

Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության նկատմամբ իրականացվող հետագա դատական վերահսկողության սահմաններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Գ. Ղևոնդյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ «(...) [Բ]րեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության ընթացքում դատարանը վերահսկողություն չի իրականացնում նախնական քննության ընթացքի նկատմամբ: Դատարանը չի միջամտում քրեական դատավարության ընթացքին, չի անդրադառնում բողոքարկվող որոշման կայացման համար հիմք հանդիսացած քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությանը կամ նպատակահարմարությանը: Այս հարցերը գրնվում են նյութերի նախապարաստությունն իրականացնող մարմինների բացառիկ լիազորությունների սահմաններում, իսկ քրեական գործի հարուցման հարցը լուծելու համար անհրաժեշտ տվյալների լրիվությունն ապահովելու նպատակով հետաքննության մարմնին կամ քննիչին դեկլարացիոն ցուցումներ և հանձնարարություններ կարող է տալ միայն դատախազը: (...):

Դատարանի խնդիրն այս դեպքում կայանում է նրանում, որպեսզի պարզվի, թե վիճարկվող որոշումը կայացվել է արդյոք նյութական և դատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան և բիտում է արդյոք նյութերի նախապարաստության արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներից:

(...)

Վճռաբեկ դատարանը գրնում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման արդյունքում իրականացվող դատական վերահսկողության վերոգրյալ առանձնահատկություններով է պայմանավորված քրեադատավարական օրենսդրության մեջ առկա այն տարբերակված մոտեցումը, որը վերաբերում է գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման և մինչդեռ պատկան վարույթի ընթացքում կայացվող այլ որոշումների կամ իրականացվող գործողությունների (անգործության) բողոքարկման արդյունքում կայացվող դատական ակտերին: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը, որը սահմանում է մինչդեռ պատկան վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության ընդհանուր կարգը, ամրագրում է, որ եթե բողոքը ճանաչվում է հիմնավորված, ապա դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին (տես Ատուրա Գարեգինի Չարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 որոշման 13-րդ կետը):

Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը բովանդակում է հստակ նորմ, որը հստակ կարգավորում է քրեական գործի

հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը, ինչպես նաև ընդունված որոշումների հետևանքները: Մասնավորապես, հիշարակված իրավանորմը սահմանում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Ընդ որում, բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից քրեական գործի հարուցումը: Այսինքն՝ քննարկվող իրավանորմը սահմանում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման ինքնավար ընթացակարգ:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդեռ պարական վարույթի նկատմամբ հետագա վերահսկողության շրջանակներում դատական սրուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, դատարանը պետք է պարզի, թե հաղորդման մեջ նշված հանգամանքների կապակցությամբ իրականացված նախնական սրուգման արդյունքում չեռք բերված փաստական փյախյունները բավարար են արդյոք հավաստելու, որ քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը բացակայում են: Բացի այդ, դատարանի խնդիրն է պարզել, թե քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) կողմից նյութական և դատավարական օրենսդրության պահանջները չպահպանելու հետևանքով խախտվել են արդյոք անձի իրավունքները և ազատությունները:

Ի թիվս այլոց, պարզաբանման ենթակա են հետևյալ հարցերը՝

1) պահպանվե՞լ է արդյոք հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով նախատեսված կարգը,

2) առկա՞ են արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված օրինական հիմքերը,

3) պահպանվե՞լ են արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված պահանջները:

Գտնելով, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումն օրինական և հիմնավորված չէ՝ դատարանը, դեկլարավելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասով, որոշում է կայացնում փնտրվող որոշումը վերացնելու մասին, որի դեպքում դատախազի կողմից քրեական գործի հարուցումը պարտադիր է: Հակառակ դեպքում դատարանը մերժում է ներկայացված բողոքը՝ հաստատելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը: (...)» (տե՛ս Գագիկ Գևորգի Ղևոնդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշման 16-18-րդ կետերը):

16. Վերահաստատելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված և համապատասխանաբար, Գ. Ղևոնդյանի գործով որոշման մեջ արտահայտած

իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցման փուլի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում դատարանն իրավասու է ստուգման ենթարկել միայն քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը: Մասնավորապես, դատարանը պետք է պարզի՝ արդյոք հանցագործության հատկանիշների բացակայության վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի հետևությունները բխում են նախնական ստուգման ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների բովանդակությունից, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը կայացնելիս պահպանվել են արդյոք քրեադատավարական օրենսդրության պահանջները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 180-րդ և 185-րդ հոդվածները), եթե ոչ, ապա դրանց չպահպանման հետևանքով խախտվել են արդյոք անձի իրավունքներն ու ազատությունները: Այս փուլում դատարանն իրավասու չէ միջամտել քրեական դատավարության ընթացքին, անդրադառնալ բողոքարկվող որոշման կայացման համար հիմք հանդիսացած քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությանը կամ նպատակահարմարությանը:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցման և նախաքննության փուլերում իրականացվող հետագա դատական վերահսկողության սահմանները, դրանց արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը, ինչպես նաև ընդունված որոշումների հետևանքները տարբեր են: Քրեական գործի հարուցումից հետո ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշման (գործողության, անգործության) օրինականության և հիմնավորվածության ստուգման սահմանները, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը, ինչպես նաև ընդունված որոշումների հետևանքները կարգավորող նորմերը վերաբերելի չեն քրեական գործ հարուցելու փուլի նկատմամբ իրականացվող հետագա դատական վերահսկողությանը՝ պայմանավորված այդ փուլի առանձնահատկություններով (տե՛ս *mutatis mutandis* Համբարձում Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 որոշումը): Քրեական գործ հարուցելու փուլի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատարանի լիազորությունների շրջանակը սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով: Մասնավորապես, քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման արդյունքում դատարանը լիազորված է՝

- ա) վերացնել բողոքարկվող որոշումը կամ
- բ) հաստատել այն:

Քննարկվող վարույթի շրջանակներում դատարանը, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով իրականացվող վարույթի, իրավասու չէ սահմանել վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշակի գործողություններ կատարելու պարտականություն:

Այլ խոսքով՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման բողոքարկման արդյունքում դատարանի լիազորությունների շրջանակը, ինչպես նաև ընդունված որոշումների հետևանքները սահմանված են հատուկ նորմով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով: Հետևաբար, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հարաբերությունները կարգավորող ընդհանուր նորմի՝ 290-րդ հոդվածի կարգավորումները դատարանի լիազորությունների շրջանակի, ինչպես նաև ընդունված որոշումների հետևանքների մասով կիրառելի չեն քննարկվող վարույթի նկատմամբ:

17. Անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ 2013 թվականի հունիսի 3-ին՝ ժամը 16-ի սահմաններում, Երևան-Մեղրի ավտոճանապարհի 126-րդ կիլոմետրում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի փաստով Վայոց ձորի մարզի քննչական բաժնում նյութեր են նախապատրաստվել, նշանակվել է դատաավտոտեխնիկական, դատատեսաձայնագրային, դատահետքաբանական համալիր փորձաքննություն և դատաբժշկական փորձաքննություն: Քննիչ Ա.Ադամյանի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ Ա.Ջալոյանի արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 1-ին և 5-րդ կետերը):

Դիմող Ա.Ջալոյանի ներկայացուցիչ Ռ.Բալոյանի բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Առաջին ատյանի դատարանը ներկայացված բողոքը մերժել է (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Դիմող Ա.Ջալոյանի ներկայացուցիչների վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով, ի թիվս այլնի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածը, գտել է, որ Ա.Ջալոյանի իրավունքները խախտվել են այն առումով, որ նա չի ծանոթացել համալիր փորձաքննության եզրակացությանը և չի կարողացել ներկայացնել իր առարկությունները կամ միջնորդություններն այդ եզրակացության կապակցությամբ: Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ այս և բողոքում բարձրացված այլ հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ է վերացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշումը, հնարավորություն տալ բողոքաբերին ծանոթանալու համալիր փորձաքննության եզրակացությանը և հիմնավոր միջնորդությունների ու ելակետային տվյալների առկայության դեպքում նշանակել նոր համալիր փորձաքննություն, որից հետո միայն լուծել նյութերի վերջնական ընթացքը: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը որոշել է վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնել վերացնել Ա.Ջալոյանի իրավունքների և ազատությունների խախտումները (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-8-րդ կետերը):

18. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-16-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, նյութերի նախապատրաստության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների բավարարության, ինչպես նաև նյութական և դատավարական օրենսդրության պահանջների պահպանման տեսանկյունից քրեական գործի հարուցումը մերժելու մասին վիճարկվող որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը գնահատելու փոխարեն, իր դատական ակտով անդրադարձել է հարցերի այնպիսի շրջանակի, որոնք գտնվում են բացառապես նախնական քննության մարմնի իրավասության ներքո:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ դիմողի ներկայացուցիչների բողոքը ենթակա է բավարարման, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու փոխարեն, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, որոշում է կայացրել դիմող Ա.Ջալոյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտավորություն սահմանելու մասին:

Այլ խոսքով՝ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության կապակցությամբ իրականացվող դատական վերահսկողության սահմաններից՝ թույլ տալով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով նախատեսված օրինականության սկզբունքի խախտում: Հետևաբար, Վճարելի դատարանը գտնում է, որ Ա.Ջալոյանի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության սահմանման մասին Վերաքննիչ դատարանի որոշումն իրավաչափ չէ:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...):»:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

20. Միևնույն ժամանակ, *Ա.Գրիգորյանի* գործով որոշմամբ անդրադառնալով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման

դատավարական կարգին՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը չի կարող հանդիսանալ մինչդարական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա, եթե քրեական դատավարության մասնակցի կամ այլ շահագրգիռ անձի կողմից չի պահպանվել նշված որոշումը վիճարկելու արտադատական (տվյալ դեպքում՝ դատախազին բողոքարկելու) կարգը» (տե՛ս Արմեն Գրիգորյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԿԳ/0125/11/13 որոշման 21-րդ կետը):

Սույն գործով վճռաբեկ բողոքի հեղինակը փաստարկել է, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը դիմող Ա.Ջալոյանը չի բողոքարկել դատախազին, այլ բողոքարկել է Առաջին ատյանի դատարան (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Ներկայացված նյութերում բացակայում է որևէ փաստական տվյալ առ այն, որ դիմողի կողմից պահպանվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վիճարկելու արտադատական կարգը, և այն բողոքարկվել է դատախազին: Այս պայմաններում Առաջին ատյանի դատարանը, փաստարկելով, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը կարող է միանգամից բողոքարկվել դատարան՝ առանց դատախազին բողոքարկվելու, քննության առարկա է դարձրել դիմող Ա.Ջալոյանի ներկայացուցչի բողոքի փաստարկները: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը մերժել է բողոքը՝ գտնելով, որ ճանապարհատրանսպորտային պատահարի կապակցությամբ իրականացված նախնական ստուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները բավարար են փաստելու, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները բացակայում են (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Փաստորեն, Առաջին ատյանի դատարանը, անտեսելով այն, որ դիմողը չի պահպանել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում բողոքարկելու դատավարական կարգը, քննության է առել Ա.Ջալոյանի ներկայացուցչի բողոքը և մերժել այն: Այլ խոսքով՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործը ճիշտ լուծող դատական ակտ, սակայն սխալ է պատճառաբանել այն: Այս պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

21. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Ազատ Հովհաննեսի Ջալոյանի ներկայացուցիչներ Ռուբեն Բալոյանի և Ջարուհի Վարդանյանի վերաքննիչ բողոքը բավարարելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի մարտի 5-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

29.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ՇԳ/0097/01/13

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Քրեական գործ թիվ ՇԳ/0097/01/13

Նախագահող դատավոր՝ Լ.Թադևոսյան

Դատավորներ՝ Ա.Խաչատրյան

Ա.Գանիբեկյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Ա.ՊՈԴՈՍՅԱՆԻ

Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ տուժողի
ներկայացուցիչ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի օգոստոսի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Կարեն Գրիգորի Վլսկրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի փետրվարի 24-ի որոշման դեմ մեղադրող Ա.Պողոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

1. 2013 թվականի փետրվարի 21-ին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 18106713 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2013 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ Կարեն Գրիգորի Վիսկրյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, 244-րդ հոդվածով:

2013 թվականի սեպտեմբերի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 23-ի դատավճռով Կ.Վիսկրյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով: ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով Կ.Վիսկրյանը դատապարտվել է ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով՝ զրկվելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով դատապարտվել է ազատազրկման՝ 6 (վեց) ամիս ժամկետով՝ զրկվելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 1 (մեկ) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Կ.Վիսկրյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի 3 (երեք) ամիս ժամկետով՝ զրկելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 2 (երկու) տարի ժամկետով:

Տուժողի իրավահաջորդ Գ.Հովսեփյանի քաղաքացիական հայցը քավարարվել է մասնակիորեն, ամբաստանյալ Կ.Վիսկրյանից հօգուտ տուժողի իրավահաջորդի բռնագանձվել է 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ՝ որպես հուղարկավորության հետ կապված անհրաժեշտ ծախսեր: Մնացած մասով քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության՝ տուժողի իրավահաջորդ Գ.Հովսեփյանին, ինչպես նաև տուժող Ն.Ուղուրյանին իրավունք վերապահելով քաղաքացիական դատավարության կարգով դիմել դատարան:

3. Ամբաստանյալ Կ.Վիսկրյանի պաշտպան Թ.Յայլոյանի, մեղադրող Ա.Պողոսյանի և տուժողի իրավահաջորդ Գ.Հովսեփյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 23-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 24-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել մեղադրող Ա.Պողոսյանը:

Վճարելի դատարանի 2014 թվականի հունիսի 2-ի որոշմամբ մեղադրող Ա.Պողոսյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Կ.Վիկրյանին մեղադրանք է առաջադրվել այն քանի համար, որ «(...) նա, 2013 թվականի փետրվարի 17-ին՝ ժամը 19-ի սահմաններում, ոգելից խմիչք օգտագործած վիճակում, վարելով իրեն պատկանող «BMW 525» մակնիշի 29 ՍՕ 063 պ/հ ավտոմեքենան և ընթանալով Գյումրու Գորկու անվան զբոսայգու կողմից Անի քաղամասի ուղղությամբ, տեխնիկական տեսակետից սրեղծել է վթարային իրադրություն ու թույլ տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի և ԾԵԿ-ի 65, 66 կետերի պահանջներին հակասող գործողություններ, նախապես հաշվի չառնելով առկա ձանապարհային պայմանները, մասնավորապես՝ ձանապարհային ծածկույթի վիճակը և չընտրելով երթևեկության համապատասխան անվտանգ ու սահուն ճեժիւ, իրականացրել է իր վարած ավտոմեքիլի ընթացքի ոչ պատշաճ կառավարում, որի արդյունքում ավտոմեքիլը, դառնալով անկառավարելի, Գյումրու Շիրակացի փողոցի 66ա շենքի դիմացի հատվածում դուրս է եկել հանդիպակաց ուղեմասի հարակից մայթ և այնտեղ վրատրթի ենթարկել հետիոտներ Թերեզա Գազիկի Ուղուրյանին ու Նաիրի Պերճի Ուղուրյանին և քախվել ձանապարհին կայանված «Mercedes Benc» մակնիշի 90 LS 770 պ/հ ավտոմեքիլին, որն էլ քախվել է Շիրակացի փողոցի 66/1 հասցեում գրկվող անվաղողների վերանորոգման կետին: (...) Դրանից անմիջապես հետո, իջնելով ավտոմեքիլից, լքել է դեպքի վայրը, դիմել փախուստի և դեպքից 3-4 ժամ անց ներկայացել է ոստիկանություն ու հաղորդում տվել տեղի ունեցածի վերաբերյալ: Վրատրթի արդյունքում Թերեզա և Նաիրի Ուղուրյաններին մարմնական վնասվածքներով տեղափոխել են «Գյումրու» բժշկական կենտրոն, որտեղ 21.02.2013թ. Թերեզա Գազիկի Ուղուրյանը, վրատրթից ստացած մարմնական վնասվածքներից մահացել է: Վրատրթի հետևանքով Նաիրի Պերճի Ուղուրյանի առողջությանը պարճառվել է ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 95):

6. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 23-ի դատավճռի համաձայն՝ «Դատարանությամբ չեռք բերված ապացույցները զնահատելով՝ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Կարեն Գրիգորի Վիկրյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված է, այն համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 2-րդ մասի և 244 հոդվածի հարկանիշներին (...):

Պարիժ սահմանելիս դատարանը հաշվի է առնում կատարված հանցագործության բնույթը, որ այն համարվում է անզգույշ հանցագործություն, ինչպես նաև ամբաստանյալի անչը, որ նա նախկինում դատված չի եղել, առաջին անգամն է, ինամքին ունի 14.03.2005թ. ծնված երկու անչափահաս երեխաներ, հարևանների կողմից բնութագրվել է դրական, ինքն իր կատարած արարքի համար զղջացել է: Տուժողի իրավահաջորդի ներկայացրած 4.667.000

ՀՀ դրամի քաղ. հայցի դեմ առարկել է, հայտարարելով, որ քաղ. հայցը ընդունում է մասնակի՝ 1.500.000 ՀՀ դրամի չափով» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 98):

7. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 24-ի որոշման համաձայն՝ «(...) ամբաստանյալ Կարեն Վիկրյանի նկատմամբ նշանակվող պարժի տեսակը և չափը որոշելիս, Առաջին արյանի դատարանը, ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով ամրագրված պարիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի է առել ամբաստանյալին վերագրվող արարքների բնույթն ու հասարակական վրանգավորության աստիճանը, ինչպես նաև ամբաստանյալի անչք բնութագրող հանգամանքները և արդյունքում նշանակել է վերջնական արդարացի ու համաչափ պարիժ, որը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված արդարության և պարասխասնավորության անհարակատար սկզբունքից՝ համապարասխանում է կատարված հանցանքների ծանրությանն ու դրանք կատարելու հանգամանքներին, հանցավորի անչնավորությանը, անհրաժեշտ ու բավարար է նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար և կարող է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պարժի նպատակների իրագործումը, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարժի ենթարկված անչին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալին վերագրվող հանցանքներն ալկոհոլի ազդեցության տակ կատարելու հանգամանքի առկայությանը պաշտպանության կողմը փաստարկ է ներկայացրել այն մասին, որ ամբաստանյալ Կ. Վիկրյանն ալկոհոլն օգտագործել է դեպքից հետո՝ ոստիկանություն դիմելուց առաջ, որպիսի հանգամանքը հերքող որևէ ապացույց ինչպես քրեական գործի նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում չենք չի բերվել, (...):

Վերաքննիչ դատարանը սույն որոշման պարժառաքանական մասում շարադրված հիմնավորումներով Առաջին արյանի դատարանի դատական ակտը համարում է ճիշտ (...) և գրնում է, որ ամբաստանյալ Կարեն Գրիգորի Վիկրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով Առաջին արյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 23-ի դատավճիռն, ինչպես արարքի որակման, այնպես էլ պարժի նշանակման առումով օրինական է, հիմնավորված ու պարժառաքանված, այն բեկանելու կամ փոփոխելու, ինչպես նաև ամբաստանյալի նկատմամբ արդարացման դատական ակտ կայացնելու հիմքեր չկան» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 122-123):

3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես, խախտել են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների պահանջները: Բացի այդ, սույն գործով կայացված դատական ակտերը հակասում են Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին: Ըստ բողոքաբերի՝ դատարաններն ամբաստանյալ Կ.Վլխկրյանի նկատմամբ նշանակել են ակնհայտ մեղմ պատիժ, որը չի բխում արդարության և պատասխանատվության անհատականացման, ինչպես նաև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից և չի կարող նպաստել պատժի նպատակների իրականացմանը:

Ի հիմնավորում իր փաստարկների՝ բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել Կ.Վլխկրյանին վերագրվող արարքների հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, հանցանքը կատարելուց հետո նրա դրսևորած վարքագիծը: Ստորադաս դատարանները Կ.Վլխկրյանի նկատմամբ պատիժ նշանակելիս, ի թիվս այլ հանգամանքների, չեն պարզել, թե ինչու է նա թողել ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը և արդյոք դրանով փորձել է խուսափել պատահարի փաստով պայմանավորված իր պարտավորությունների կատարումից, պատշաճ չեն գնահատել ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը, Կ.Վլխկրյանի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը թույլ տված խախտման և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ: Մասնավորապես, դատարանները հաշվի չեն առել, որ կոնկրետ իրադրությունում ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը Կ.Վլխկրյանի համար եղել է հավանական, իսկ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման և դրա արդյունքում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հավանականությունը՝ ակնհայտ:

Ամբաստանյալ Կ.Վլխկրյանը հանցանքը կատարել է՝ գտնվելով ակտիվային հարբածության վիճակում, վրաերթից հետո որևէ միջոց չի ձեռնարկել տուժողներին համապատասխան բուժօգնություն ցուցաբերելու համար, պատճառված նյութական վնասը հարթելուն ուղղված որևէ գործողություն չի կատարել: Նախաքննության ընթացքում Կ.Վլխկրյանը, նպատակ ունենալով դժվարին դարձնել դեպքի հանգամանքների բացահայտմանն ուղղված աշխատանքները և դրանով իսկ խուսափել քրեական պատասխանատվությունից ու պատժից, տվել է հակասական, իրարամերժ, ոչ արժանահավատ ցուցմունքներ, որոնք ամբողջությամբ հերքվել են նախաքննությամբ ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված սպացույցներով, որպիսի պայմաններում ամբաստանյալն իր դրսևորած վարքագծով փորձել է խուսափել նաև կատարված արարքի և դրա հետևանքների հետ կապված հանգամանքների բացահայտմանն աջակցելուց:

10. Բողոքաբերը նշել է, որ Առաջին աստիճանի դատարանը հաստատված է համարել Կ.Վլխկրյանի կողմից հանցանքն ակտիվի ազդեցության տակ

կատարելու հանգամանքը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ այդ փաստական տվյալի ապացուցվածության առումով առկա է չփարատված կասկած, որը պետք է մեկնաբանել հոգուտ ամբաստանյալի: Վերաքննիչ դատարանը, սակայն, որևէ պատճառաբանություն չի նշել այդ հանգամանքը հաստատելիս Առաջին ատյանի դատարանի կողմից ակնհայտ սխալ թույլ տարու առումով, որի պայմաններում Վերաքննիչ դատարանն ըստ էության դուրս է եկել վերաքննիչ դատարանում գործի քննության սահմաններից:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է պատժի մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 23-ի դատավճիռը, Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 24-ի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալ Կ.Վխկրյանի նկատմամբ նշանակված պատիժը բխո՞ւմ է արդյոք արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեահրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անչք բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

(...)»:

Մեջբերված իրավական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել թիվ ՎԲ-142/07, ՎԲ-192/07, ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ԵՇԳ/0029/01/08, ԵԿԳ/0042/01/11, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում: Նշված որոշումներում Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ պատժի արդարությունը

դրսևորվում է հանցագործության և քրեախրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Պատիժն արդարացի է, եթե համաչափ է կատարված հանցագործությանը, ինչպես նաև բավարար պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից: Պատժի արդարության պահանջներից նահանջելը կարող է հանգեցնել չափազանց մեղմ կամ չափազանց խիստ պատժի նշանակման: Քրեական օրենքը համընդհանուր բնույթ ունի, իսկ արարքը և հանցավորի անձը կոնկրետ են: Հետևաբար կոնկրետ գործով պատիժ նշանակելիս դատարանի ներքին համոզումները ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի, հանցավորի անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա: Նշված հանգամանքների գնահատման ժամանակ դատարանը պետք է ելնի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարած անձանց նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելու ընթացքում դատարանի կողմից հաշվի առնվող հանգամանքներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է մի շարք որոշումներում: Մասնավորապես, *Ա Սահակյանի* գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի վերաբերյալ գործերով պատժի տեսակ և չափ ընտրելիս դատարանները պետք է հաշվի առնեն հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները, հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, հանցանքը կատարելուն նպաստող պայմանները, ինչպես նաև հանցանքի կատարումից հետո հանցավորի դրսևորած վարքագիծը:

(...) վերոնշյալ գործերով դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն տրանսպորտային միջոցը վարողի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթին, որի արդյունքում տեղի է ունեցել հանցագործությունը: Նշված հանգամանքի կարևորումը պայմանավորված է նրանով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ գլխով նախատեսված՝ ճանապարհային երթևեկության կանոնների առավել կոպիտ խախտումները (լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը, սահմանված արագությունը գերազանցելը, տրանսպորտային միջոցը ոչ սքափ վիճակում վարելը, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելը և այլն) վրանգ են առաջացնում ճանապարհային երթևեկության մասնակիցների համար և առավել հավանական դարձնում հանրության համար վրանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տրանսպորտային միջոցը վարողի կողմից թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը կարևոր նշանակություն

ուևի նաև հանցավորի անչնավորության և հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանի մասին ճիշտ պարկերացում կազմելու համար:

(...) Վճռաբեկ դատարանը կարևորում է հանցագործության կատարումից անմիջապես հետո հանցանք կատարած անչի վարքագիծը, ինչպես նաև նրա վարքագիծը հետագայում հարուցված քրեական գործի քննության ընթացքում: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գրնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարած անչի նկատմամբ պատիժ նշանակելիս և պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանը պետք է գնահատի այն հանգամանքը, թե հանցագործության կատարումից անմիջապես հետո ամբաստանյալն արդյոք անհրաժեշտ օգնություն է ցուցաբերել րուժողին, թե, թողնելով դեպքի վայրը, դիմել է փախուստի: Հետագա վարքագծի գնահատման համար դատարանը պետք է ուշադրության արժանացնի նաև այն, թե քրեական գործի քննության ընթացքում ամբաստանյալն արդյոք ինքնակամ ներկայացել է վարույթն իրականացնող մարմնին, դեպքի վերաբերյալ րվել ճշմարտացի, ինքնախոստովանական ցուցմունքներ, արդյոք որոշակի քայլեր է շեռնարկել րուժողի կամ նրա հարազատների հետ հաշտվելու ուղղությամբ կամ ինքնակամ հարուցել է հանցագործության արդյունքում րուժողի բուժման կամ հուղարկավորության ծախսերը: (...)» (տե՛ս Արամ Սերյոժայի Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԳԳ-1/0003/01/10 որոշման 20-րդ, 22-րդ կետերը):

Չարգացնելով Ա.Սահակյանի գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն է. Ասատրյանի գործով որոշման մեջ շեշտել է, որ «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ քրեաիրավական ներգործության համաչափ միջոց կիրառելու համար դատարանները հարուկ ուշադրություն պետք է դարչնեն այն հանգամանքին, թե րանապորտային միջոցի վարորդը ճանապարհային երթևեկության կանոնների խախտումն արդյոք գիրակցաբար է թույլ րվել: Բացի այդ, դատարանները պետք է գնահատեն, թե րվյալ խախտման արդյունքում, ինչպես ընդհանուր առմամբ, այնպես էլ կոնկրետ իրադրությունում որքանով էր հավանական ճանապարհային երթևեկության մասնակիցների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հնարավորությունը և որքանով էր ակնհայտ րանապորտային միջոցը վարողի համար իր կողմից թույլ րված խախտման և հանրորեն վրանգավոր հերևանքների առաջացման միջև պատճառական կապի զարգացման հավանականությունը: Այլ խոսքով՝ համապատասխան գնահատականի պետք է արժանացվի կատարված հանրորեն վրանգավոր արարքի և դրա հերևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը: (...)» (տե՛ս Էդմոն Գարասիմի Ասատրյանի գործով

Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0201/01/11 որոշման 18-րդ կետը):

ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարած անձանց նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելու ընթացքում դատարանի կողմից հաշվի առնվող հանգամանքներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ա Առաքելյանի* գործով կայացված որոշմամբ, որի համաձայն՝ «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածը նպատակ է հետապնդում պարթել ճանապարհային երթևեկության կանոնների խախտում բույլ րված այն անձանց, ովքեր, թողնելով դեպքի վայրը, խուսափել են ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով րուժած անձանց օգնություն ցուցաբերելուց, չեն ցանկացել ճանապարհատրանսպորտային պատահարի մասին տեղեկացնել իրավապահ մարմիններին և աջակցել կատարված արարքի, դրա հետևանքների հետ կապված հանգամանքների բացահայտմանը:

(...)

Հանցավորի անձի և նրա կատարած արարքի հանրային վրանգավորության մասին ճիշտ պարկերացում կազմելու համար դեռևս բավարար չէ այն հանգամանքի պարզաբանումը, որ տրանսպորտային միջոց վարող անձն առանց ծայրահեղ անհրաժեշտության թողել է ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը: Նման իրավիճակներում անձի նկատմամբ համարժեք քրեաիրավական ներգործության միջոց կիրառելու համար անհրաժեշտ է պարզել և համապատասխան գնահատականի արժանացնել այն, թե արդյոք հանցավորը, դեպքի վայրը թողնելով, փորձել է խուսափել՝

ա) ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով րուժած անձանց օգնություն ցուցաբերելուց,

բ) ճանապարհատրանսպորտային պատահարի մասին իրավապահ մարմիններին տեղեկացնելուց,

գ) կատարված արարքի և դրա հետևանքների հետ կապված հանգամանքների բացահայտմանն աջակցելուց:

ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարած անձը, ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելով, կարող է փորձել թաքցնել հանցագործության կատարման փաստը, խուսափել իր պարտավորությունների կատարումից, և հակառակ դրան՝ հանցավորը կարող է նման նպատակներ չհետապնդել, միջոցներ չեռնարկել րուժած անձանց օգնություն ցույց տալու, պատահարի մասին իրավապահ մարմիններին տեղեկացնելու ուղղությամբ, սակայն ինչ-ինչ պատճառներով լքել ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված երկու իրավիճակները, ելնելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, տարբեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վրանգավորության աստիճանը, հետևաբար պետք է իրենց արտացոլումը գտնեն քրեաիրավական ներգործության միջոցի ընտրության

ժամանակ, այլապես կհասիրվեն արդարության և պարասխանարվության անհատականացման սկզբունքները» (տե՛ս Արթուր Սերգեյի Առաքելյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱՆԳ/0122/01/12 որոշման 18-րդ-19-րդ կետերը):

15. Վերահաստատելով սույն որոշման նախորդ կետում վկայակոչված որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ և 244-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելիս դատարանները, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնեն՝

ա) թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը,

բ) հանցագործության կատարման եղանակը և հանգամանքները,

գ) հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը,

դ) հանցագործությունը կատարելուն նպաստող պայմանները,

ե) հանցագործության կատարումից անմիջապես հետո, ինչպես նաև հետագայում հարուցված քրեական գործի քննության ընթացքում հանցավորի դրսևորած վարքագիծը,

զ) կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը,

է) ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը հանցավորի կողմից թողնելու նպատակը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ճանապարհատրանսպորտային հանցագործությունների վերաբերյալ գործերով առանց վերոգրյալ հանգամանքները պարզելու և օբյեկտիվորեն հաշվի առնելու հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին: Հետևաբար, նշված հանգամանքներից որևէ մեկն անտեսելու արդյունքում նշանակված պատիժը չի համապատասխանի արդարության և պատասխանատվության անհատականացման, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին և չի ապահովի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատժի նպատակների իրականացումը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Կ.Վլսկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ոգելից խմիչք օգտագործած վիճակում վարելով իրեն պատկանող ավտոմեքենան և ընթանալով Գյումրու Գորկու անվան զբոսայգու կողմից Անի թաղամասի ուղղությամբ, տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն ու թույլ տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի և ՃԵԿ-ի 65-րդ, 66-րդ կետերի պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ նախապես հաշվի չառնելով

առկա ճանապարհանին պայմանները, մասնավորապես՝ ճանապարհային ծածկույթի վիճակը և չընտրելով երթևեկության համապատասխան անվտանգ ու սահուն ռեժիմ, իրականացրել է իր վարած ավտոմեքենայի ընթացքի ոչ պատշաճ կառավարում, որի արդյունքում ավտոմեքենան, դառնալով անկառավարելի, Գյումրու Շիրակացի փողոցի 66ա շենքի դիմացի հատվածում դուրս է եկել հանդիպակաց ուղեմասի հարակից մայր և այնտեղ վրաերթի ենթարկել հետիոտներ Թ.Ուղուրյանին, Ն.Ուղուրյանին և բախվել ճանապարհին կայանված այլ ավտոմեքենայի, որն էլ բախվել է Շիրակացի փողոցի 66/1 հասցեում գտնվող անվադողերի վերանորոգման կետին: Դեպքից անմիջապես հետո Կ.Վլխկրյանը լքել է ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը, դիմել փախուստի և միայն 3-4 ժամ անց ներկայացել է ոստիկանության բաժին: Վրաերթի արդյունքում Թ.Ուղուրյանը մահացել է, իսկ Ն.Ուղուրյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Կ.Վլխկրյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, 244-րդ հոդվածով և նրա նկատմամբ հանցանքների համակցությանը պատիժ է նշանակել ազատազրկում՝ 2 տարի 3 ամիս ժամկետով՝ զրկելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 2 տարի ժամկետով: Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է, որ դատաքննությանը ձեռք բերված ապացույցները գնահատելով՝ գտնում է, որ Կ.Վլխկրյանին առաջադրված մեղադրանքը հիմնավորված է: Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առել այն, որ կատարված հանցագործությունը համարվում է անզգույշ, ամբաստանյալը նախկինում դատված չի եղել, առաջին անգամն է, խնամքին ունի երկու անչափահաս երեխա, բնութագրվում է դրականորեն, կատարած արարքի համար զղջացել է (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Կ.Վլխկրյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի է առել ամբաստանյալին վերագրվող արարքների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, ինչպես նաև հանցավորի անձը բնութագրող հանգամանքները և արդյունքում նշանակել է համաչափ պատիժ, որը բխում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից, համապատասխանում է կատարված հանցանքների ծանրությանն ու դրանք կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար է նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն ամբաստանյալ Կ.Վլխկրյանի նկատմամբ նշանակված պատժի առումով օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, հետևաբար այն բեկանելու կամ փոփոխելու հիմքեր չկան (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով 13-15-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների

լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հաստատված համարելով ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով նախատեսված արարքներ կատարելու մեջ ամբաստանյալ Կ.Վլխկրյանի մեղքը՝ Առաջին ատյանի դատարանը, նրա նկատմամբ պատիժ նշանակելիս գնահատման չի ենթարկել թույլ տրված ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթը, հանցագործության կատարման մեջ ամբաստանյալի մեղավորության աստիճանը, կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ Կ.Վլխկրյանի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը, դեպքից հետո հանցավորի դրսևորած վարքագիծը, ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու նպատակը:

Վերոգրյալի փոխարեն Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Կ.Վլխկրյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առել մի շարք հանգամանքներ, որոնք չեն բխում գործի փաստական տվյալներից կամ չեն կարող որպես այդպիսին հաշվի առնվել: Մասնավորապես, դատարանը հաշվի է առել այն, որ կատարված հանցագործությունը համարվում է անզգույշ, մինչդեռ Կ.Վլխկրյանին վերագրվող արարքներից միայն ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվածն է անզգույշ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածով նախատեսված արարքը բնութագրվում է բացառապես մեղքի դիտավորյալ ձևով:

Առաջին ատյանի դատարանը Կ.Վլխկրյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առել նաև այն, որ վերջինս կատարած արարքի համար գղջացել է, մինչդեռ քրեական գործի նյութերում բացակայում է որևէ փաստական տվյալ, որը հիմք կտար եզրահանգելու, թե հատկապես ինչու է արտահայտվել հանցավորի գղջալը:

Վերաքննիչ դատարանն իր հերթին, անտեսելով պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված վերոգրյալ խախտումները, իր դատական ակտում ընդհանրական ձևակերպումներով շեշտել է, որ դատարանը ղեկավարվել է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի է առել ամբաստանյալին վերագրվող արարքների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, ինչպես նաև հանցավորի անձը բնութագրող հանգամանքները և արդյունքում նշանակել է համաչափ պատիժ:

18. Հիմք ընդունելով սույն որոշման 13-17-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Կ.Վլխկրյանի նկատմամբ նշանակված պատիժը չի բխում արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից: Ստորադաս դատարաններն ամբաստանյալ Կ.Վլխկրյանի նկատմամբ պատիժ են նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման, ինչպես նաև պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտմամբ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի

պահանջներին չհամապատասխանող, անօրինական և չիմնավորված դատական ակտերի կայացմանը:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները, որոնք ազդել են պատժի մատով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, հիմք են Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 24-ի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

19. Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ գործը պետք է ուղարկվի Վերաքննիչ դատարան՝ նոր քննության, Վճռաբեկ դատարանը նպատակահարմար չի համարում անդրադառնալ վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանների խախտման վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Կարեն Գրիգորի Վլսկոյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի փետրվարի 24-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

30.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ՍԳ/0204/01/13

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Քրեական գործ թիվ ՍԳ/0204/01/13

Նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան

Դատավորներ՝ Ա.Դանիելյան

Լ.Թադևոսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի օգոստոսի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արամայիս Արտավազդի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի մարտի 31-ի որոշման դեմ մեղադրող Ա.Մարուխյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2012 թվականի նոյեմբերի 5-ին ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 41109912 քրեական գործը՝ Արամայիս Հարությունյանի կողմից Անժելա և Անուշ Սագիյաններին ծեծելու փաստի առթիվ:

2012 թվականի դեկտեմբերի 11-ին ՀՀ քրեական օրենսգրքի 132.2-րդ

հողվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 19122412 քրեական գործը՝ Ա.Հարությունյանի կողմից 18 տարին չլրացած Անուշ Սագիյանին շահագործելու փաստի առթիվ:

2012 թվականի դեկտեմբերի 25-ին թիվ 41109912 և թիվ 19122412 քրեական գործերը միացվել են, և գործի քննությունը շարունակվել է թիվ 19122412 համարով:

Նախաքննության մարմնի 2013 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ Ա.Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 6-րդ կետերով, այնուհետև Ա.Հարությունյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով:

2013 թվականի հոկտեմբերի 10-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետև նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ Ա.Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճռով Ա.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Ա.Սագիյանը և Ս.Քոչինյանը:

3. Ամբաստանյալ Ա.Հարությունյանի, ամբաստանյալ Ա.Սագիյանի և նրա պաշտպան Ռ.Ղազարյանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի մարտի 31-ի որոշմամբ Ա.Սագիյանի և նրա պաշտպանի վերաքննիչ բողոքները մերժել է, իսկ Ա.Հարությունյանի վերաքննիչ բողոքը բավարարել, պատժի մասով բեկանել և փոփոխել է Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճիռը: Ա.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով և դատապարտվել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա՝ Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 31-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Ա.Մարությանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ մեղադրողի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Ա.Հարությունյանին ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով մեղադրանք է առաջադրվել և նա դատավարավել է այն բանի համար, որ «*նա, հանդիսանալով Սյունիքի մարզի Կապան քաղաքում գրևվող «Կապանի ավտոդպրոց» ՍՊ ընկերության տնօրեն, երկու և ավելի անձանց պոռնկությանը զբաղվելուն նպաստելու դիրավորությանը, ավտոդպրոցի տարածքում գրևվող՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, բնակության համար անհրաժեշտ կահավորանքով սպահովված ավտոտնակը, 2008 թվականից մինչև 2012 թվականի հոկտեմբերի 13-ը որպես կացարան պարբերաբար տրամադրել է Լոռու մարզի Վանաչոր քաղաքի բնակիչներ՝ Անժելա Արմենակի Սազիյանին, Սիրուն Էդիկի Քոչինյանին, Հեղինե Սերյոժայի Օդարաշյանին և Մարիամ Ալեքսու Ծափուրյանին, ովքեր վարչատրոսության դիմաց պարբերաբար սեռական հարաբերություն են ունեցել նույն ավտոդպրոցի ավտոկայանատեղիում հանգրվանած՝ ԻԻՀ-ից ժամանած ազգությանը պարսիկ բեռնատար ավտոմեքենաների վարորդների հետ: (...)*» (տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 89):

6. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 15-ի թիվ ԼԳ/0297/01/11 դատավճռով Ա.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով և դատապարտվել տուգանքի՝ 250.000 ՀՀ դրամի չափով, այն բանի համար, որ նա, հանդիսանալով 18 տարին լրացած անձ, հաստատապես տեղյակ լինելով Անուշ Սազիյանի 16 տարին չլրանալու հանգամանքի մասին, 2009 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2011 թվականի օգոստոսի 12-ն ընկած ժամանակահատվածում, Կապան քաղաքի ավտոդպրոցի տարածքում տեղադրված տնակում, «Վանատուր» կոչվող հյուրանոցում և Վանաձոր քաղաքի Տարոն 2, ԲՇՀ 3, 12/15 բնակարանում, պարբերաբար փոխադարձ համաձայնությամբ սեռական հարաբերություններ է ունեցել 1995 թվականի հոկտեմբերի 14 ծնված Անուշ Սազիյանի հետ (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 6):

7. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճռի համաձայն՝ «*Ամբաստանյալ Արամայիս Հարությունյանի պատասխանատվությունը և պարիժը ծանրացնող հանգամանք է հանցանքը կատարելու ռեցիդիվը:*

Պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող հանգամանք է կատարած հանցագործությունների համար իրեն լիովին մեղավոր ճանաչելն ու անկեղծորեն գղջալը:

Արամայիս Հարությունյանը բնութագրվում է դրականորեն, վարառողջ է՝ 2-րդ խմբի հաշմանդամ: Մասնակցել է ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության

համար մղված մարտական գործողություններին, ՀՀ և ԼՂՀ նախագահներին ու պաշտպանության նախարարներին հրամաններով պարզևարվել է մի շարք մեղավորներով, կրծքանշանով: Պարզևարվել է բազմաթիվ պատվոգրերով և շնորհակալագրերով:

Վերլուծելով և գնահատելով գործի վերը նշված փյույակները, հաշվի առնելով (...) Արամայիս Հարությունյանի կատարած հանցագործությամբ վրանգավորության աստիճանն ու բնույթը, ինչպես նաև ելնելով քրեական օրենսդրության սկզբունքներից, պարծի նպատակների իրականացման անհրաժեշտությունից, դատարանը գտնում է, որ [նրա] ուղղվելը հնարավոր է նշանակված պարիսխով կրելու պայմաններում» (տես քրեական գործ, հատոր 6-րդ, թերթ 102-103):

8. Վերաքննիչ դատարանի 2014թվականի մարտի 31-ի որոշման համաձայն. «(...) Վերաքննիչ դատարանը վերլուծելով գործի նյութերը, գտնում է, որ որպես ամբաստանյալ Արամայիս Հարությունյանի պատասխանատվությունն ու պարիսխը ծանրացնող հանգամանք՝ հանցագործության ռեցիդիվը սույն քրեական գործի շրջանակներում առկա չէ՝ հետևյալ պարամառաքանությամբ:

(...) [Ն]ախքան ՀՀ Լոռու մարզի բնդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԳ/0297/01/11 քրեական գործով դատավճիռ կայացնելը, ամբաստանյալ Արամայիս Հարությունյանը կատարել է սույն գործով իրեն վերագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն, ու դատապարտվելուց հետո այն շարունակել է մինչև 2012 թվականի հոկտեմբերի 13-ը, իսկ հոկտեմբերի 13-ին կատարել է մեկ այլ հանցագործություն, որի պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Արամայիս Հարությունյանի գործողություններում առկա է հանցանքների համակցություն և վերջինիս նկատմամբ պարիսխ պետք է նշանակել ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ և 68-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով, որ ՀՀ Լոռու մարզի բնդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԳ/0297/01/11 դատավճռով արտգանքի ձևով նշանակված պարիսխը ամբաստանյալն արդեն իսկ կրել է:

Անդրադառնալով ամբաստանյալ Արամայիս Հարությունյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառելիության հարցին՝ (...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

(...) Վերաքննիչ դատարան է սրացվել ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդակցական Մ.Սարգսյանի միջնորդությունը (...), ՀՀ ԵԿՄ վարչության նախագահ Մ.Գրիգորյանի 27.02.2014 թվականի թիվ 02/11 գրությունը (...), Կապանի զինվորական կոմիսար Լ.Գրիգորյանի միջնորդությունը (...), ՀՀ Կապան քաղաքային համայնքի ղեկավար Ա.Հայրապետյանի միջնորդությունը (...):

Վերը նշված հանգամանքները, Վերաքննիչ դատարանը դիտում է որպես ամբաստանյալ Արամայիս Հարությունյանի պատասխանատվությունն ու պարիսխը մեղմացնող հանգամանք, քանի որ դրանք իրական են, և էականորեն

նվազեցնում են ամբաստանյալի անչի հասարակական վրանգավորության աստիճանը:

(...)

Վերաքննիչ դատարանը հաշվի առնելով ամբաստանյալ Արամայիս Հարությունյանի կողմից կատարված հանցագործությունների բնույթն ու վրանգավորության աստիճանը, նրա անչը բնութագրող տվյալները, պատասխանարվությունն ու պայրիժը մեղմացնող սույն որոշման մեջ արձանագրված հանգամանքները, վերջինիս պատասխանարվությունը և պայրիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում, հանգում է այն հետևության, որ սույն քրեական գործի շրջանակներում ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը կիրառելի է, և դրանով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պայրիժի նպատակահարմարին, (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 159-164):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, մասնավորապես, սխալ է կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, որի արդյունքում անհիմն որոշում է կայացրել Ա. Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ ամբաստանյալի հանրային վտանգավորության բարձր աստիճանի մասին է վկայում ծանր հանցագործության կատարման հանգամանքը: Ա. Հարությունյանը երկու և ավելի անձանց պռնկությանը զբաղվելուն նպաստելու դիտավորությամբ, սեփականության իրավունքով իրեն պատկանող, բնակության համար անհրաժեշտ կահավորանքով ապահովված ավտոտնակը, 2008 թվականից մինչև 2012 թվականի հոկտեմբերի 13-ը որպես կացարան տրամադրել է Ա. Սազիյանին, Ս. Քոչինյանին, Հ. Օղաբաշյանին և Մ. Ծատուրյանին: Վերջիններս վարձատրության դիմաց պարբերաբար սեռական հարաբերություններ են ունեցել ԻԻՀ-ից ժամանած բեռնատար ավտոմեքենաների վարորդների հետ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատականի չի արժանացրել այն հանգամանքը, որ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով մեղավոր ճանաչվելով և ազատագրված հետ չկապված պատիժ՝ տուգանքի դատապարտվելով՝ Ա. Հարությունյանը չի ուղղվել, այլ հակառակը, շարունակել է իր հանցավոր գործունեությունը:

Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով բացառապես ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդականի միջնոր-

դուքյունը և դրանում նշված հանգամանքները, Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել, ինչն արդարացի չէ և չի համապատասխանում նրա կատարած հանցագործության ծանրությանը և ամբաստանյալի անձին:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է Ա.Հարությունյանի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 31-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքների առկայությունը հաստատված համարելու դատավարական կարգի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյոք Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պարիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անչնամոռությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Պարժի պետակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անչը բնութագրող րվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով: (...)*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարարկում պահելու շեղով պարիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատարարայալի ուղղվելը հնարավոր է առանց պարիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պարիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատրիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անչը բնութագրող փոխյակները, պատասխանատվությունը և պատրիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: (...)»:

Մեջբերված իրավական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել և դրանց վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է հայտնել թիվ ՎԲ-50/07, ՎԲ-124/07, ՎԲ-142/07, ՎԲ-192/07, ՎԲ-201/07, ԵՇԳ/0029/01/08, ԱՎԳ2/0059/01/08, ԵԱԲԳ/0078/01/09 ԵԿԳ/0042/01/11, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում: Մասնավորապես, Թ.Տեր-Գրիգորյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Պատրիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատրիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Հանցակազմի սահմաններից դուրս գրվելով, դրանք բնութագրում են ինչպես կատարված հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անչնավորությունը, հնարավորություն են տալիս պարկերացում կազմել հանցավորի անչնավորության և հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով այն: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել՝ ինչպես պարժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

(...) նշանակված պատրիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անչի, պատասխանատվությունը և պատրիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պարժի նպատակների իրագործման հնարավորությունը» (տե՛ս Թամարա Տեր-Գրիգորյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-192/07 որոշումը):

Դ. Հովհաննիսյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Չնայած պատրիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անչանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, սակայն դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատրիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պարժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատրիժը պետք է համապատասխանի հանցագործության վրանգավորության աստիճանին ու բնույթին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի չեւ, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վրանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը» (տե՛ս Դավիթ Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԳ/0078/01/09 որոշման 12-րդ կետը):

14. Այսպիսով, պատիժ նշանակելիս, ինչպես նաև պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան հետևության հանգելիս դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնի հանցավորի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող, ինչպես նաև ծանրացնող հանգամանքները:

Դատարանների կողմից պատիժ նշանակելիս հաշվի առնվող մեղմացնող հանգամանքների չափանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել Պ.Բայրամյանի գործով որոշման մեջ, որի համաձայն՝ «(...) Դատարանի լայն հայեցողության շրջանակներում է (...) սնչի պատրաստարվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը, քանի որ համաչայն ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն նույն հոդվածի առաջին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով չեւք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը,

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի սնչի կամ նրա կատարած արարքի հանրային վրանգավորությունը,

գ) այն հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատարակական կանոնները. հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի կթույլատրելի լինեն, դրանք պետք է հետազոտված լինեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև պետք է պահպանվեն ապացույցների ստուգման և գնահատման օրենսդրական պահանջները» (տե՛ս Պարույր Բայրամյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 որոշումը):

Վերահաստատելով և զարգացնելով Պ.Բայրամյանի գործով որոշման արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքը հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատարակական կանոնները, մասավորապես՝

- հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի կ թույլատրելի լինեն,

- դրանք պետք է հետազոտված լինեն դատաքննության ընթացքում,
- պետք է պահպանվեն ապացույցների ստուգման և գնահատման օրենսդրական պահանջները:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ոչ միայն թվարկում է ապացույցների տեսակները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդված), այլև սահմանում է, թե դրանք ինչպես են ձևավորվում և ում կողմից են ձեռք բերվում: Մասնավորապես, քրեական դատավարության ընթացքում ապացույց ձեռք բերելու իրավասությամբ օժտված են բացառապես քրեական վարույթն իրականացնող մարմինները և պաշտոնատար անձինք: Օրենքով նախատեսված մարմիններից և պաշտոնատար անձանցից բացի որևէ այլ անձ կամ պետական մարմին քրեական գործով ապացույց ձեռք բերելու իրավասությամբ օժտված չէ, իսկ այդպիսի նյութերը որպես ապացույց չեն կարող օգտագործվել (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ):

15. Մինևույն ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ դատավարության մասնակիցներն իրավունք ունեն քրեական գործի ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու կամ հերքելու նպատակով քրեական գործին կցելու և հետազոտելու համար ձեռք բերել և վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել նյութեր, իրեր, փաստաթղթեր: Այդպիսի իրավունքով օժտված են, մասնավորապես, տուժողը (տուժողի իրավահաջորդը), քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը (ամբաստանյալը), նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ, 61-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, 63-րդ հոդվածի 2-իդ մասի 10-րդ կետ, 65-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետ, 73-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ, 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ, 77-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ, 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ): Ընդ որում, հիշյալ տուբյեկտների ներկայացրած նյութերը, փաստաթղթերը քրեական գործով որպես ապացույց օգտագործելու համար պետք է վարույթն իրականացնող մարմնի կողմից ստուգվեն և գնահատվեն քրեադատավարական օրենքով սահմանված կարգով: Այս տուբյեկտներից զատ որևէ այլ անձ կամ մարմին իրավունք չունի վարույթ իրականացնող մարմնին ներկայացնել նյութեր կամ փաստաթղթեր քրեական գործին կցելու և հետազոտելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական քննության փուլում քրեական գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները, մասնավորապես ամբաստանյալի քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները հաստատելու կամ հերքելու նպատակով ապացուցողական նշանակություն ունեցող տվյալներ կարող է ձեռք բերել վարույթ իրականացնող մարմինը կամ ներկայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով այդպիսի

իրավունքով օժտված դատավարության մասնակիցը: Այլ ճանապարհով ստացված նյութերը չեն կարող օգտագործվել գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքը հաստատելիս կամ հերքելիս՝ անթույլատրելի լինելու հիմքով:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով կատարված հանցագործության բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը, ինչպես նաև այն, որ Ա.Հարությունյանն իրեն մեղավոր է ճանաչել և զղջացել է կատարածի համար, բնութագրվում է դրականորեն, 2-րդ խմբի հաշմանդամ է, մասնակցել է ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության համար մղված մարտական գործողություններին, պարզևատրվել է մի շարք մեղավներով, կրծքանշանով, նրա նկատմամբ նշանակել է ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ՝ 3 տարի ժամկետով ազատազրկում (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը փոփոխել է Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, ազատազրկման ձևով նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չի կիրառել: Որպես Ա.Հարությունյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք Վերաքննիչ դատարանը հաշվի է առել ամբաստանյալի կողմից ներկայացված՝ ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական Մ.Սարգսյանի, ՀՀ ԵԿՄ վարչության նախագահ Մ.Գրիգորյանի, Կապանի զինվորական կոմիսար Լ.Գրիգորյանի, Կապան համայնքի ղեկավար Ա.Հայրապետյանի գրությունները (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

17. Սույն որոշման 13-15-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիշատակված գրությունները որպես ապացույց օգտագործվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների խախտմամբ: Մասնավորապես, այդ փաստաթղթերի բովանդակությունը կազմող փաստական տվյալները Վերաքննիչ դատարանի կողմից չեն ստուգվել, չեն հաստատվել կամ հերքվել դատական քննության փուլում: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը՝ որևէ հիմնավորում չի նշել հիշատակված գրությունների և ամբաստանյալի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության միջև կապի առկայության վերաբերյալ: Ավելին, հաշվի առնելով Ա.Հարությունյանին վերագրվող արարքի բնույթը (պռնկությանը զբաղվելուն նպաստելը), այն կատարելու հանգամանքները և նշված գրությունների բովանդակությունը (ամբաստանյալի մարտական գործունեության վերաբերյալ տեղեկությունները)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք չեն կարող ողջամտորեն նվազեցնել Ա.Հարությունյանի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից որպես հանցավորի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող

հանգամանքներ հաշվի առնված ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական Մ.Սարգսյանի, ՀՀ ԵԿՄ վարչության նախագահ Մ.Գրիգորյանի, Կապանի զինվորական կոմիսար Լ.Գրիգորյանի, Կապան համայնքի ղեկավար Ա.Հայրապետյանի գրությունները, ինչպես նաև դրանցում ամրագրված փաստական տվյալները չեն համապատասխանում *Պ.Բայրամյանի* գործով Վճռաբեկ դատարանի որոշման մեջ սահմանված և սույն որոշման 14-15-րդ կետերում զարգացրած չափանիշներին: Հետևաբար, հիշատակված գրությունները չեն կարող հանդիսանալ Ա.Հարությունյանի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ:

18. Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում բողոքաբերի այն փաստարկի հետ, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատականի չի արժանացրել այն, որ Ա.Հարությունյանը դատված լինելով ազատագրկման հետ չկապված պատժի, չի ուղղվել և շարունակել է իր հանցավոր գործունեությունը (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Դատվածությունը, սույն օրենսգրքին համապատասխան, հաշվի է առնվում հանցագործությունների ռեցիդիվի ղեկքում և պարիժ նշանակելիս»:*

Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Ա.Հարությունյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող, բնակության համար անհրաժեշտ կահավորանքով ապահովված ավտոտնակը պռոնկությամբ զբաղվելու համար պարբերաբար տրամադրել է 2008 թվականից մինչև 2012 թվականի հոկտեմբերի 13-ը: Այդ հանցագործության իրականացման ընթացքում Ա.Հարությունյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով նախատեսված դիտավորյալ հանցագործություն և Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 15-ի դատավճռով դատապարտվել դրա համար (տե՛ս սույն որոշման 5-6-րդ կետերը):

Փաստորեն, Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի փետրվարի 15-ի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո Ա.Հարությունյանը շարունակել է իր հանցավոր գործունեությունը, ինչը Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ գնահատականի չի արժանացվել պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը լուծելիս:

19. Հիմք ընդունելով սույն որոշման 17-18-րդ կետերում շարադրված եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս Վերաքննիչ դատարանը որպես ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող է համարել այնպիսի հանգամանքներ, որոնք որպես այդպիսին չեն կարող գնահատվել, ինչպես նաև Ա.Հարությունյանին վերագրվող հանցագործության

կատարման առանձնահատկությունների համատեքստում հաշվի չի առել այլ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար դատապարտված լինելու հանգամանքը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունն իրավաչափ չէ:

20. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել սույն գործի բոլոր փաստական հանգամանքները և անհիմն կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով՝ կիրառվել է քրեական օրենսգրքի հոդված, որը ենթակա չէր կիրառման, ինչի արդյունքում քույլ է տվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ օրինականության, արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում: Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, Ա.Հարությունյանի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելով, սխալ է կիրառել քրեական օրենքը:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական օրենքի նշված ոչ ճիշտ կիրառումը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, անօրինական, չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտի կայացմանը, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են պատժի կրման անհրաժեշտության մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

21. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության

քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արամայիս Արտավազդի Հարությունյանի մասով ՀՀ քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի մարտի 31-ի որոշումը բեկանել և այդ մասով գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

31.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԵԿԳ/0199/11/13
Նախագահող դատավոր՝ Կ.Ղազարյան

ԵԿԳ/0199/11/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դիմող	Ռ.ԱԽԱՅԱՆԻ

2014 թվականի օգոստոսի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի ապրիլի 22-ի որոշման դեմ դատախազ Վ.Պողոսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի սեպտեմբերի 17-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում ստացվել է Ռուզաննա Ախայանի դիմումն այն մասին, որ 2006 թվականի մարտի 28-ին իր նախկին ամուսին Հ.Խաչատրյանը նոր բնակարան գնելու պատրվակով 34.650.000 ՀՀ դրամով վաճառել է իրենց համատեղ սեփականությունը հանդիսացող Երևանի Թումանյան 9 շենքի թիվ 53 բնակարանը, սակայն խաբեությամբ բնակարան չի գնել և, տիրանալով նշված գումարին, մեկնել է Ռուսաստանի Դաշնություն:

ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի ավագ հետաքննիչ Լ.Կարապետյանի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի որոշմամբ Ռ.Ախալանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է և ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով Հ.Խաչատրյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ արարքուն հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին ավագ հետաքննիչ Լ.Կարապետյանի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման դեմ դիմող Ռ.Ախալանը բողոք է ներկայացրել ՀՀ դատախազություն:

Երևան քաղաքի դատախազի տեղակալ Կ.Բատիկյանը 2013 թվականի նոյեմբերի 27-ին գրությամբ Ռ.Ախալանին հայտնել է, որ նա բաց է թողել որոշման բողոքարկման յոթնօրյա ժամկետը, բացի այդ, քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2013 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումն օրինական է, և այն վերացնելու հիմքեր չկան:

3. 2013 թվականի դեկտեմբերի 11-ին դիմող Ռ.Ախալանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել իր իրավունքներն ու ազատությունները խախտող որոշումը:

Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշմամբ դիմող Ռ.Ախալանի բողոքը ճանաչվել է հիմնավորված, վերացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին ավագ հետաքննիչ Լ.Կարապետյանի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը, և ճանաչվել է հաղորդում տված անձի խախտված իրավունքները վերականգնելու քրեական հետապնդման մարմնի պարտականությունը:

4. Դատախազ Վ.Պողոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշումը:

5. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի ապրիլի 22-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազ Վ.Պողոսյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հունիսի 10-ի որոշմամբ դատախազի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դիմող Ռ.Ախալանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել վճռաբեկ բողոքը:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2013 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման համաձայն՝ «(...) Հ.Խաչատրյանի արարքուն բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված

հանցակազմի հատկանիշները, իսկ ինչ վերաբերում է Հ.Խաչատրյանի և Ռ.Ախայանի համարելոջ ամուսնության ընթացքում չեռք բերված գույքի շուրջ ծագած վիճելի հարցերին, սալա այն կրում է քաղաքացիաիրավական բնույթ, որը ենթակա է լուծման միայն դատական կարգով» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 45):

7. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) հեղափոխիչ չեղմանը կապակցված միջոցառումները բավարար չեն եղել քրեական գործի հարուցման հիմքերի բացակայության վերաբերյալ եզրահանգումների համար (...): Դատարանն արձանագրում է, որ սույն գործով քրեական գործի հարուցման առիթն արդեն իսկ առկա է, իսկ հիմքերի առկայությունը փաստելու համար անհրաժեշտ է կատարել անհրաժեշտ ու բավարար պատշաճ քննություն:

Մասնավորապես, հեղափոխիչ բացատրություն փալու համար չի հրավիրել Հ.Խաչատրյանին, բողոքաբերի բացատրություններում առկա փաստերը ճշտելու համար, իսկ նման քրեադատարարական գործողություններ կարող էր կատարել միայն քրեական գործ հարուցելու առկայության պայմաններում, նրան հարցաքննելու, առերես հարցաքննություններ կատարելու միջոցով:

Բողոքի քննությամբ պարզվեց նաև, որ Հակոբ Խաչատրյանը մինչև բնակարանի վաճառելը, փաստացի ամուսնական կապերի մեջ է եղել Ռ.Դ-ում բնակվող մեկ այլ կնոջ հետ, որպիսի փաստը նույնպես չի ստուգվել:

(...)

Փաստորեն, խարդախության օբյեկտը համարվում է ոչ միայն պետական և կորպորատիվ սեփականությունը, այլև քաղաքացուն պարկանող անչնական սեփականությունը, իսկ գործով կարևոր է այն հանգամանքը, որ Հ.Խաչատրյանը համոզել է Ռ.Ախայանին նրան փոխանցել իր գույքը՝ բազմիցս խոստանալով, որ հաջորդ օրն ևեթ կգրադվի իրենց ընդամենի համար նոր բնակարան գնելու խնդրով:

Վերը նշվածից ակնհայտ է, որ վարույթն իրականացնող մարմնի կայացված որոշմամբ և Երևան քաղաքի դատախազի պատասխանով թույլ է տրվել Ռուզաննա Ախայանի իրավունքների և ազատությունների խախտում» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 67-69):

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) [Առաջին ատյանի դատարանի] դատական ակտը հիմնավոր է և բողոքում նշված պարճառաբանությունները չեն կարող հիմք հանդիսանալ այն բեկանելու համար, հեղափոխար վերաքննիչ բողոքը պեղք է մերժել» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 49):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ, 182-րդ, 185-րդ հոդվածների

պահանջները: Բացի այդ, կայացված դատական ակտերն առերևույթ հակասում են Վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված թիվ ԵԿԳ/0044/11/13 գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմանը:

Ի հիմնավորումն իր վաստարկի՝ բողոք բերած անձը նշել է, որ վարույթն իրականացնող մարմինը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ նախապատրաստել է նյութեր՝ քրեական գործի հարուցման հիմքի, այն է՝ որևէ հանցագործության հատկանիշների առկայությունը ստուգելու նպատակով: Նյութերի նախապատրաստման արդյունքում որևէ հանցագործության հատկանիշ չի հայտնաբերվել և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ, 185-րդ հոդվածներով սահմանված կարգով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները որպես քրեական գործ հարուցելու հիմք դիտել են որոշակի գործողություններ կատարելու անհրաժեշտությունը, մասնավորապես՝ Հ.Խաչատրյանին հայտնաբերելը, նրան հարցաքննելը, առերես հարցաքննություններ կատարելը, ինչն ինքնին քրեական գործ հարուցելու հիմք չի կարող հանդիսանալ:

10. Բողոքաբերը նշել է նաև, որ թե՛ Առաջին ատյանի դատարանը, և թե՛ Վերաքննիչ դատարանը միջամտել են քրեական դատավարության ընթացքին՝ արձանագրելով որոշակի քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտություն: Դրանով իսկ ստորադաս դատարանները դուրս են եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու իրենց լիազորությունների սահմաններից:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի, Վերաքննիչ դատարանի 2014 թվականի ապրիլի 22-ի որոշումները և ուժի մեջ թողնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2013 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերը հակասո՞ւմ են արդյոք Գ.Ղևոնդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմանը:

13. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական արյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի

կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն ԿԵԴ-ի փաստական հանգամանքների նկատմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն ԿԵԴ-ի փաստական հանգամանքների նկատմամբ»:

Մեջբերված իրավադրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Լ.Բաբայանի* գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «(...) Վճռաբեկ դատարանի որոշումները պարտադիր են սրտրադաս դատարանների համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ: Այս ընդհանուր կանոնից բացառություն են այն դեպքերը, երբ սրտրադաս դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ Վճռաբեկ դատարանի դատական ակտի հիմնավորումները կիրառելի չեն քննվող գործի փաստական հանգամանքների նկատմամբ» (տե՛ս Լուսինե Բաբայանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0093/11/11 որոշման 11-րդ կետը):

Ս.Այվազյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե ԿԵԴ-ի դատական ակտի հիմնավորման բովան-

դակտորությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը՝ եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն» (տե՛ս Սեյրան Այվազյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-17/08 որոշման 26-րդ կետը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշման կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է ղեկավարվի *Ս.Այվազյանի* գործով որոշման մեջ ամրագրված վերոգրյալ չափանիշներով, քանի որ դրանք վերաբերելի են ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, այնպես էլ վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշումների կիրառելիության հարցի լուծման շրջանակներին (տե՛ս Անահիտ Միմոնյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԳ/0055/11/13 որոշման 15-րդ կետը):

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

2. Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անջնական խուզարկության ենթարկվել անշինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկվում է համապատասխան դատախազին:

(...)

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն:

Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

Մեջբերված քրեադատավարական դրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Գ.Ղևոնդյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «(...) քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության ընթացքում դատարանը վերահսկողություն չի իրականացնում նախնական քննության ընթացքի նկատմամբ: Դատարանը չի միջամտում քրեական դատավարության ընթացքին, չի անդրադառնում բողոքարկվող որոշման կայացման համար հիմք հանդիսացած քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությանը կամ նպատակահարմարությանը: Այս հարցերը գրնվում են նյութերի նախապարաստությունն իրականացնող մարմինների բացառիկ լիազորությունների սահմաններում, իսկ քրեական գործի հարուցման հարցը լուծելու համար անհրաժեշտ տվյալների լրիվությունն ապահովելու նպատակով հետաքննության մարմնին կամ քննիչին ղեկավար ցուցումներ և հանձնարարություններ կարող է տալ միայն դատախազը: (...)

Դատարանի խնդիրն այս դեպքում կայանում է նրանում, որպեսզի պարզվի, թե վիճարկվող որոշումը կայացվել է արդյոք նյութական և դատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան և բիում է արդյոք նյութերի նախապարաստության արդյունքում չեռք բերված փաստական տվյալներից:

(...) մինչդարձ վարույթի նկատմամբ հետագա վերահսկողության շրջանակներում դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, դատարանը պետք է պարզի, թե հաղորդման մեջ նշված հանգամանքների կապակցությամբ իրականացված նախնական ստուգման արդյունքում չեռք բերված փաստական տվյալները բավարար են արդյոք հավաստելու, որ քրեական գործ հարուցելու օրինական հիմքերը բացակայում են: Բացի այդ, դատարանի խնդիրն է պարզել, թե քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) կողմից նյութական և դատավարական օրենսդրության պահանջները չպահպանելու հերքանքով խախտվել են արդյոք անձի իրավունքները և ազատությունները:

Ի թիվս այլոց, պարզաբանման ենթակա են հետևյալ հարցերը՝

1) պահպանվե՞լ է արդյոք հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով նախատեսված կարգը,

2) առկա՞ են արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված օրինական հիմքերը,

3) պահպանվե՞լ են արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված պահանջները: (...)» (տե՛ս Գազիկ Ղևոնդյանի գործով Վճռաբեկ դատարանի

2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշման 16-րդ և 18-րդ կետերը):

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դիմող Ռ.Ախալյանը հաղորդում է ներկայացրել այն մասին, որ 2006 թվականի մարտի 28-ին իր նախկին ամուսին Հ.Խաչատրյանը նոր բնակարան գնելու պատրվակով 34.650.000 ՀՀ դրամով վաճառել է իրենց համատեղ սեփականությունը հանդիսացող Երևանի Թումանյան 9 շենքի թիվ 53 բնակարանը, սակայն խաբեությամբ բնակարան չի գնել և, տիրանալով նշված գումարին, մեկնել է Ռուսաստանի Դաշնություն (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Դիմող Ռ.Ախալյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի ավագ հետաքննիչ Լ.Կարապետյանը 2013 թվականի հոկտեմբերի 9-ին որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու և Հ.Խաչատրյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին: Հետաքննիչն իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ Հ.Խաչատրյանի արարքում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները, իսկ վերջինիս և Ռ.Ախալյանի համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի շուրջ ծագած վիճելի հարցերը կրում են քաղաքացիաիրավական բնույթ, որոնք ենթակա են լուծման դատական կարգով (տե՛ս սույն որոշման 1-ին և 6-րդ կետերը):

Դիմող Ռ.Ախալյանի բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ հետաքննիչի ձեռնարկած միջոցառումները բավարար չեն եղել քրեական գործի հարուցման հիմքերի բացակայության վերաբերյալ համապատասխան եզրահանգման գալու համար: Մասնավորապես, բողոքաբերի հայտնած փաստերը ճշտելու նպատակով հետաքննիչը բացատրություն տալու համար չի հրավիրել Հ.Խաչատրյանին, իսկ նման քրեադատավարական գործողություններ կարող էր կատարել միայն քրեական գործ հարուցելու դեպքում՝ նրան հարցաքննելու, առերես հարցաքննություններ կատարելու միջոցով: Մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից չի ստուգվել նաև այն փաստը, որ Հ.Խաչատրյանը մինչև բնակարանը վաճառելը, փաստացի ամուսնական կապերի մեջ է եղել Ռ.Դ-ում բնակվող մեկ այլ կնոջ հետ: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը վերացրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին ավագ հետաքննիչ Լ.Կարապետյանի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի որոշումը և ճանաչել է Ռ.Ախալյանի խախտված իրավունքները վերականգնելու քրեական հետապնդման մարմնի պարտականությունը (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

Դատախազ Վ.Պողոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը բողոքը մերժել է, իսկ Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել օրինական ուժի մեջ՝ արձանագրելով, որ դատական ակտը

հիմնավոր է և այն բեկանելու հիմքեր չկան (տե՛ս սույն որոշման 4-րդ և 8-րդ կետերը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, դիմող Ռ.Ախայանի բողոքը ճանաչելով հիմնավորված, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացրել է այն հիմքով, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն իրականացվել անհրաժեշտ ու բավարար գործողություններ քրեական գործ հարուցելու հիմքերի առկայությունը ստուգելու համար: Ընդ որում, Առաջին ատյանի դատարանը, վկայակոչելով քրեական գործ հարուցելու հիմքերի առկայությունը ստուգելու համար կատարման ենթակա որոշ դատավարական գործողություններ, շեշտել է նաև, որ այդ գործողությունները կարող են իրականացվել միայն հարուցված քրեական գործի շրջանակներում: Մինչդեռ, քրեական գործ կարող է հարուցվել համապատասխան հիմքերի առկայության դեպքում, այլ ոչ թե դրանց առկայությունը ստուգելու համար: Վերաքննիչ դատարանն, իր հերթին, գտել է, որ Առաջին ատյանի դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված է:

16. Նախորդ կետում շարադրված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լուսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերը հակասում են *Գ. Ղևոնդյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ *Գ. Ղևոնդյանի* գործով կայացված դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող և սույն որոշման 14-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումներն իրենց բնույթով առավել ընդհանրական են և դրանց կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքերի առավել փոքր ընդհանրություն: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն և *Գ. Ղևոնդյանի* գործերի փաստական հանգամանքների ընդհանրությունն այն է, որ երկու դեպքում էլ դատարանները մինչդատական վարույթի, մասնավորապես, քրեական գործ հարուցելու փուլի նկատմամբ դատական վերահսկողություն են իրականացրել և դատական ստուգման են ենթարկել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը: Նշված փաստական հանգամանքների համընկումը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս պնդելու, որ *Գ. Ղևոնդյանի* գործով որոշման հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) սույն գործով որոշում կայացնելիս ստորադաս դատարանների համար պարտադիր են եղել:

Մինչդեռ, ստորադաս դատարանները, անտեսելով *Գ. Ղևոնդյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության ընթացքում անդրադարձել են դատավարական

գործողությունների կատարման նպատակահարմարությամբ: Վիճարկվող որոշման նյութական և դատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան կայացված լինելու և նյութերի նախապատրաստության արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներից բխելու հարցերը պարզելու փոխարեն ստորադաս դատարաններն արձանագրել են, որ քրեական գործ հարուցելու հիմքերի առկայությունը ստուգելու համար անհրաժեշտ է կատարել մի շարք քննչական և այլ դատավարական գործողություններ, որոնք կարող են իրականացվել միայն հարուցված քրեական գործի շրջանակներում:

17. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ, Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, քանի որ սույն գործի քննության ժամանակ անտեսել են *Գ. Ղևոնդյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման հիմնավորումները, որոնք նրանց համար պարտադիր են եղել: Ստորադաս դատարանները ոչ միայն չեն կիրառել կիրառման ենթակա՝ Վճռաբեկ դատարանի նախկինում կայացված որոշումը, այլև որևէ ծանրակշիռ փաստարկի մատնանշմամբ չեն հիմնավորել, որ այն կիրառելի չէ տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Արդյունքում՝ ստորադաս դատարանները դուրս են եկել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության կապակցությամբ իրականացվող դատական վերահսկողության սահմաններից՝ թույլ տալով նաև ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով նախատեսված օրինականության սկզբունքի խախտում:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեատարավարական օրենքի էական խախտումներ են դարսկան քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անչանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...):»*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սույն գործով դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

19. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը

և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Ռուզաննա Ախայանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի ապրիլի 22-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

32.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԱՐԱԴ/0021/06/14

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Գործ թիվ ԱՐԱԴ/0021/06/14

Նախագահող դատավոր՝ Ս.Չիչոյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ պաշտպան

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Գ.ՀԱԿՈԲՅԱՆԻ

2014 թվականի օգոստոսի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Արտակ Ավետիքի Դիլանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի ապրիլի 26-ի որոշման դեմ դատախազ Ա.Նաղդալյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի նոյեմբերի 1-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արագածոտնի մարզի քննչական բաժնում հարուցվել է թիվ 54106313 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2014 թվականի ապրիլի 7-ին Արտակ Դիլանյանը ձերբակալվել է:

Նախաքննության մարմնի 2014 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ Ա.Դիլանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով:

2. Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2014 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ Ա.Գիլանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով: Նույն որոշմամբ մերժվել է Ա.Գիլանյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու մասին պաշտպանների միջնորդությունը:

3. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի ապրիլի 26-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 10-ի որոշումը փոփոխելու մասին: Մեղադրյալ Ա.Գիլանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է այլընտրանքային խափանման միջոց գրավով, և գրավի չափ է սահմանվել 2.000.000 ՀՀ դրամը:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի ապրիլի 26-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազ Ա.Նաղդալյանը:

2014 թվականի հունիսի 9-ին մեղադրյալ Ա.Գիլանյանի պաշտպան Գ.Հակոբյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել դատախազի վճռաբեկ բողոքը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հունիսի 26-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Գիլանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ « (...) նա, 2013 թվականի հոկտեմբերի 31-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, իր վարած «Մերսեդես G-500» մակնիշի 35T0382 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով երթևեկելով Գյումրի-Երևան ավտոճանապարհով՝ Երևան քաղաքի ուղղությամբ, հասնելով ճանապարհի 84.5-րդ կմ հարվածին, թույլ է տվել ԾԵԿ-ի 2-րդ, 65-րդ, 66-րդ կետերի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ նախապես հաշվի չի առել առկա ճանապարհային պայմանները՝ մասնավորապես ճանապարհի աջ շրջադարձի հանգամանքը, և չի ընկրել տվյալ ճանապարհահարվածի համար սահմանված առավելագույն 90 կմ/ժ արագություն, ավտոմեքենան վարել է թույլատրելի առավելագույն 90 կմ/ժ արագությունը գերազանցող 120-122 կմ/ժ արագությամբ, ճանապարհի աջ շրջադարձային հարվածում հարելով ճանապարհի առանցքային հոծ գիծը, իր վարած ավտոմեքենան դուրս է բերել հանդիպակաց՝ Գյումրի տանող ուղեմաս, որտեղ բախվել է նույն պահին տվյալ ճանապարհահարվածով Գյումրի քաղաքի ուղղությամբ ընթացող Հարություն Մանվելի Սիմոնյանի վարած «ԲՄՎ» մակնիշի 25ՕՍ662 հաշվառման համարանիշի ավտոմեքենային, որի հետևանքով «ԲՄՎ»

մակնիշի ավտոմեքենայի վարորդ Հարություն Մանվելի Միմոնյանին և նույն ավտոմեքենայի ուղևոր Արթուր Վարուժանի Կարճիկյանին անզգուշությամբ պատճառել է մահ» (տե՛ս նյութեր, թերթ 2-3):

6. Մեղադրյալ Ա.Գիլանյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ « (...) Դատարանը, (...) գտնում է, որ առկա է հիմնավոր կասկած, որ հանցանքը հնարավոր է կատարած լինի Արտակ Ավերիքի Դիլանյանը:

Դատարանը, նկատի ունենալով, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները բավարար են մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընդհատելու համար, միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղի ունեցած ավտովթարի հետևանքով «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայի վարորդին և ուղևորին անզգուշությամբ պատճառել է մահ, և մեղադրյալին առաջադրվող հողվածով նախարեսված է չորսից տասը տարի ժամկետով ազատազրկում, ինչը մեծացնում է հավանականությունը, որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, կարող է խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց, խոչընդոտել մինչդարական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելով, գտնում է, որ միջնորդությունը ենթակա է բավարարման, իսկ մեղադրյալի պաշտպանների ներկայացրած՝ գրավ կիրառելու միջնորդությունը՝ մերժման» (տե՛ս նյութեր, թերթ 51-53):

7. Վերաքննիչ դատարանի դատական ակտի համաձայն՝ « (...) Վերաքննիչ դատարանը, հետազոտելով դատական վարույթի նյութերը, հանգում է հետևության, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներով նախարեսված անձի օրինական կալանավորումը թույլատրող իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունները պատշաճ չեն պատճառաբանվել:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ անձին ազատությունից զրկելու համար անհրաժեշտ հիմքերը պետք է հիմնավորված լինեն կոնկրետ փաստացի նյութերով, տվյալներով:

Գործի նյութերում առկա վկա Արմեն Ղանդիլյանի ցուցմունքի համաձայն՝ վերջինս ընդհատելու պահը չի տեսել, «ԲՄՎ»-ի դիմաց մեքենա չի տեսել:

Դատաավտոտեխնիկական փորձաքննության 20.02.2014թ. թիվ 45211308 եզրակացության համաձայն՝ «Մերսեդես-Բենց G-500» մակնիշի 35 TO 382 հաշվառման համարանիշի ավտոմոբիլի վարորդի գործողությունների տեխնիկական վերլուծություն կատարել հնարավոր չէ: (...) ՃԵԿ-ի տեսանկյունից «Մերսեդես-Բենց G-500» մակնիշի ավտոմոբիլի վարորդի գործողությունները գնահատելու և փորձաքննությանն առաջադրված 1-ին և 2-րդ հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ է փորձաքննությանն առաջադրել «Մերսեդես-Բենց G-500» մակնիշի ավտոմոբիլի վարորդի

կողմից կատարված այնպիսի գործողություններ և ելակերպային այնպիսի պայմաններ, որոնք առնվազն կգրավեն րվյալ ճանապարհատրանսպորտային պատահարի մեխանիզմին համապատասխանող հանգամանքների և րվյալների շրջանակներում:

Նույն փորձաքննության եզրակացության համաձայն՝ «ԲՄՎ-316» և «Մերսեդես-Բենց G-500» մակնիշի ավտոմոբիլների ընդհարման պահին ունեցած ընթացքի արագությունների իրական ճշգրիտ արագությունները րվյալ կոնկրետ դեպքում որոշել տեխնիկական տեսակետից հնարավոր չէ:

«Մերսեդես-Բենց G-500» մակնիշի ավտոմոբիլի ընթացքի արագությունը հաշվարկվել է նուրավոր՝ վկա Արմեն Ղանդիլյանի ցուցմունքներից ելնելով:

Նշված փորձաքննության եզրակացությամբ «Մերսեդես-Բենց G-500» մակնիշի ավտոմոբիլի վարորդի կողմից ՃԵԿ-ի 2-րդ, 65-րդ, 66-րդ կետերի խախտում, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին հակասող գործողություններ թույլ տալու վերաբերյալ հետևություններ չեն արձանագրվել: Մինչդեռ Արտակ Դիլանյանին առաջադրված մեղադրանքում նշվել են վերոգրյալ խախտումները:

Վերաքննիչ դատարանում պաշտպանության կողմը հայտնեց, որ կարող են տրամադրել փաստական րվյալներ այն մասին, որ վթարից տուժածներին մեքենայից դուրս հանելիս մեքենաները տեղաշարժվել են, և դրանից հետո է կատարվել դեպքի վայրի զննությունը: Այդ ուղղությամբ քննություն չի կատարվել:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով մեղադրյալին վերագրվող արարքի քննության ու վտանգավորության աստիճանը և վերաքննիչ դատարանում դատախազի, քննիչի պարձառաքանությունները՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին արյանի դատարանի որոշումը քննիչի միջնորդությունը բավարարելու մասով պետք է թողնել օրինական ուժի մեջ:

(...)

Վերաքննիչ դատարանը միաժամանակ արձանագրում է նաև, որ բացակայում են Արտակ Դիլանյանի նկատմամբ կալանավորումը գրավով փոխարինելն անթույլատրելի ճանաչելու հիմքերը:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Արտակ Դիլանյանի նկատմամբ կալանավորման այլընտրանքային խափանման միջոց գրավի կիրառումը կարող է ապահովել քրեական գործով վարույթի ընթացքում պատշաճ վարքագիծ դրսևորելու հնարավորությունը, քիչ է ռիսկը, որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, կիտուսափի քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց, կխոչընդոտի մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը:

(...) Քննության ընթացքում մեղադրյալ Արտակ Դիլանյանի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, քննությանը խոչընդոտելու հանգամանքը հիմնավորող նյութ քրեական հետապնդման մարմինը չի ներկայացրել:

(...) Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևություն, որ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավարումը գրավով փոխարինելն անթույլատրելի ճանաչելու մասին Առաջին աստիճանի դատարանի որոշումն օրինական ու հիմնավորված չէ, իսկ ներկայացված նյութերի արվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ գրավի կիրառումը կարող է բավարար երաշխիք լինել քրեական գործի հետագա քննության ընթացքում մեղադրյալի պարտան վարքագիծն ապահովելու համար (...)» (տե՛ս նյութեր, քերթ 84-89):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ մեղադրյալ Ա.Դիլանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է և չպատճառաբանված:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը մատնանշել է մի շարք հանգամանքներ, որոնք Վերաքննիչ դատարանի կողմից գրավի կիրառումը բույլատրելի ճանաչելիս հաշվի չեն առնվել: Մասնավորապես, բողոքաբերը, վերլուծելով վկա Ա.Ղանդիլյանի ցուցմունքները, համադրելով դատաավտոտեխնիկական փորձաքննության եզրակացությամբ հաստատված ճանապարհատրանսպորտային պատահարի մեխանիզմն Ա.Դիլանյանի ու նրա ուղևորների ցուցմունքների հետ, եկել է այն եզրահանգման, որ մեղադրյալի և նրա ուղևորների ցուցմունքներն անարժանահավատ են, իսկ մեղադրյալի կողմից հանցագործություն կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի հետևությունները՝ պատշաճ պատճառաբանված:

Բացի այդ, բողոք բերած անձը վկայակոչել է նախաքննության ընթացքում Ա.Դիլանյանի ընկերների՝ վկաներ Է.Ավետիսյանի և Ա.Գրիգորյանի վարքագիծը, մասնավորապես՝ Է.Ավետիսյանի իրարամերժ ցուցմունքներն ու ցուցմունք տալուց հրաժարվելը, Ա.Գրիգորյանի կողմից հարցաքննության չներկայանալը, որպիսի հանգամանքերը, ըստ բողոքաբերի, հիմք են տալիս ենթադրելու վերջիններիս վրա մեղադրյալի անօրինական ազդեցության մասին:

Բողոքաբերն անհիմն է համարել նաև Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ քննության ընթացքում Ա.Դիլանյանի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, քննությանը խոչընդոտելու վերաբերյալ որևէ հանգամանք գործի նյութերում առկա չէ, և հիշատակել է 2014 թվականի մարտի 3-ի հարցաքննության ժամանակ վկայի կարգավիճակ ունեցող Ա.Դիլանյանի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնի հարցերին պատասխանելուց հրաժարվելու փաստը:

9. Վերոնշյալ հանգամանքների գնահատմամբ բողոքի հեղինակը եզրակացրել է, որ օբյեկտիվ հիմքեր չկան մեղադրյալ Ա.Դիլանյանի նկատմամբ գրավ կիրառելու համար, ուստի խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի ապրիլի 26-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 10-ի որոշմանը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ օրինական և հիմնավորված են արդյոք մեղադրյալ Ա.Դիլանյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «(...) *Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «*Կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը (...)*»:

Վերը նշված նորմերի վերլուծությունից երևում է, որ գրավը՝ որպես այլընտրանքային խափանման միջոց, կարող է կիրառվել միայն այն ժամանակ, երբ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված է կալանավորումը:

12. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անչնական ազատության և անչեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝*

(...)

4) *առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անչի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով. (...)*»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անչնական անչեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(...)

գ) *անչի օրինական կալանավորումը կամ շերքակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում*

նրան իրավաւոր օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար. (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Միայն սպացույցների հիման վրա են հաստատվում կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը (...) խափանման միջոց կարող է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով չեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պարճառների չներկայանալու կամ այլ ձանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պարասխանավորությունից և նշանակված պարիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

13. Նախորդ կետում մեջբերված դրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծել է Գ. Միքայելյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ «(...) [Ա]նչին կալանավորելու միջնորդությունը կարող է բավարարվել այն դեպքում, երբ միջնորդությունը ներկայացրած քրեական հետապնդման մարմնին հաջողվի դատարանի համար համոզիչ հիմնավորել.

ա) անչին մեղսագրվող հանցագործությանը նրա առնչությունը (տվյալ հանցագործության կատարման մեջ հիմնավոր կասկածը) և

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը: (...)» (տե՛ս Գագիկ Միքայելյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԳ-Գ/0085/06/09 որոշման 32-րդ կետը):

Վ. Գևորգյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանը զարգացրել է վերոնշյալ իրավական դիրքորոշումը և արձանագրել, որ «(...) [Կ]ալանքը որպես խափանման միջոց ընդդրելիս դատարանը պարտավոր է անդրադարձնալ կալանավորման պայմանների և հիմքերի առկայությանը: Կալանավորման պայմանը փաստական տվյալներով հաստատված հանգամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը: Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անչի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր

կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադարձնալ կալանավորման հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անչի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում քվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է:

(...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման արդյունքներով դատարանը՝

ա) պետք է արձանագրի հիմնավոր կասկածի առկայությունը կամ բացակայությունը,

բ) պետք է պարզի կալանավորման մյուս պայմանների առկայությունը,

գ) այն դեպքում, երբ դատարանը կհանգի այն հետևության, որ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած նյութերը բավարար են արձանագրելու, որ առկա է անչի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, և միաժամանակ կալանավորման մյուս պայմանները նույնպես առկա են, ապա պետք է կայացնի հիմնավորված և պարճառաբանված որոշում այն մասին, թե արդյոք առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկը կամ մի քանիսը:

(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անչը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական փյվյալների վրա, որոնք պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պարճառաբանված» (տե՛ս Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0678/06/10 որոշման 19-րդ, 22-23-րդ կետերը):

14. Սույն որոշման 11-12-րդ կետերում մեջբերված իրավաճորդները համադրելով սույն որոշման 13-րդ կետում և համապատասխանաբար, Գ.Միքայելյանի և Վ.Գևորգյանի գործերով որոշումներում շարադրված դիրքորոշումների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կարող է ընտրվել կալանավորման պարտադիր պայմաններից մեկի, այն է՝ հանցագործություն կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության դեպքում: Այլ խոսքով՝ եթե առկա չէ հիմնավոր կասկած այն մասին, որ անձը հանցանք է կատարել, նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց չի կարող կիրառվել, հետևաբար չի կարող քննարկման առարկա դառնալ նաև գրա-

վի՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի կիրառման թույլատրելիության հարցը:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Ա.Դիլանյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին որոշմամբ փաստել է, որ առկա է հիմնավոր կասկած, որ հանցանքը հնարավոր է կատարած լինի Ա.Դիլանյանը: Բացի այդ, նկատի ունենալով, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները բավարար են մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու համար, միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղի ունեցած ավտովթարի հետևանքով երկու անձի անգոյությունը պատճառվել է մահ, և Ա.Դիլանյանին առաջադրվող հողվածով նախատեսված է չորսից տասը տարի ժամկետով ազատազրկում, ինչը մեծացնում է հավանականությունը, որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, կարող է խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց, խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելով, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ նախաքննության մարմնի միջնորդությունը ենթակա է բավարարման, իսկ Ա.Դիլանյանի պաշտպանների ներկայացրած՝ գրավ կիրառելու միջնորդությունը՝ մերժման (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը փոփոխել է Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ մեղադրյալ Ա.Դիլանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը փոխարինելով գրավով: Վերաքննիչ դատարանը գտել է, որ անձի օրինական կալանավորումը թույլատրող իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի հետևությունները պատշաճ չեն պատճառաբանվել, և արձանագրել է, որ անձին ազատությունից զրկելու համար անհրաժեշտ հիմքերը պետք է հիմնավորված լինեն կոնկրետ փաստացի նյութերով, տվյալներով: Այնուհետև, Վերաքննիչ դատարանը վերլուծել է գործի նյութերում առկա փաստական հանգամանքները, այդ թվում՝ դատավտոտեխնիկական փորձագետի եզրակացությունը և փաստել, որ դրանով «Մերսեդես-Բենց G-500» մակնիշի ավտոմեքենայի վարորդի կողմից ԴԵԿ-ի 2-րդ, 65-66-րդ կետերի խախտում, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին հակասող գործողություններ թույլ տալու վերաբերյալ հետևություններ չեն արձանագրվել: Մինչդեռ Ա.Դիլանյանին առաջադրված մեղադրանքում նշվել են վերոգրյալ խախտումները:

Ամփոփելով՝ Վերաքննիչ դատարանը եկել է այն եզրահանգման, որ այնուամենայնիվ, հաշվի առնելով մեղադրյալին վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, ինչպես նաև քննիչի և դատախազի պատճառաբանությունները, խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը պետք է թողնել օրինական

ուժի մեջ: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ բացակայում են Ա.Գիլանյանի նկատմամբ կալանավորումը գրավով փոխարինելն անթույլատրելի ճանաչելու հիմքերը: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը կարող է ապահովել քրեական գործով վարույթի ընթացքում պատշաճ վարքագիծ դրսևորելու հնարավորությունը, քիչ է ռիսկը, որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, կխուսափի քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց, կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

16. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 11-14-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով ձեռք բերված փաստական տվյալների հետազոտման արդյունքում ըստ էության փաստել է, որ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած նյութերը բավարար չեն արձանագրելու, որ առկա է Ա.Գիլանյանի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած: Նման պայմաններում, անտեսելով այն հանգամանքը, որ հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը կալանավորման պայման է, որի բացակայությունը բացառում է տվյալ խափանման միջոցի կիրառումը, Վերաքննիչ դատարանը մեղադրյալ Ա.Գիլանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը թողել է անփոփոխ՝ հաշվի առնելով վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, ինչպես նաև քննիչի և դատախազի պատճառաբանությունները, որից հետո կալանավորումը փոխարինել է այլընտրանքային խափանման միջոց գրավով: Մինչդեռ, հանցանք կատարած լինելու վերաբերյալ հիմնավոր կասկածի բացակայության պայմաններում անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կարող կիրառվել, հետևաբար չի կարող քննարկման առարկա դառնալ նաև գրավ կիրառելու թույլատրելիության հարցը:

Հետևաբար, մեղադրյալ Ա.Գիլանյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևություններն օրինական և հիմնավորված չեն:

17. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Գիլանյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ և 137-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների իմաստով հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

18. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում պետք է հետազոտի վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված

փաստական տվյալները և դրանց հիման վրա պատճառաբանված հետևության գա Ա.Գիլանյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Համապատասխան եզրահանգման գալուց հետո միայն Վերաքննիչ դատարանն իրավասու է քննարկման առարկա դարձնել մեղադրյալ Ա.Գիլանյանի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց գրավի թույլատրելիության հարցը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Ա.Գիլանյանի նկատմամբ գրավ կիրառելու հնարավորության հարցը քննարկելու դեպքում Վերաքննիչ դատարանը պատշաճ ուշադրություն պետք է դարձնի նաև մեղադրյալին վերագրվող արարքի բնույթին և վտանգավորության աստիճանին: Հանցագործության նշված հատկանիշներն էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս, ինչպես նաև գրավի թույլատրելիության հարցը լուծելիս: Դրանք հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին (տե՛ս *mutatis mutandis* Վահագն Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ-1/0062/06/12 որոշումը):

Բացի այդ, դատախազն իր վճռաբեկ բողոքում փաստարկել է, որ նախաքննության ընթացքում դեպքին ակնհաստես մեղադրյալի ընկերները՝ վկաներ Է.Ավետիսյանը և Ա.Գրիգորյանը, հակասական ցուցմունքներ են տվել, ոչ իրավաչափորեն հրաժարվել են ցուցմունք տալուց, խուսափել են հարցաքննությանը ներկայանալուց, ինչը հիմք է տալիս ենթադրելու վերջիններիս վրա Ա.Գիլանյանի անօրինական ազդեցության մասին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Ա.Գիլանյանի նկատմամբ գրավի թույլատրելիության հարցը լուծելիս Վերաքննիչ դատարանը պետք է քննության առարկա դարձնի նաև դատախազի վերոգրյալ փաստարկները, քանի որ դրանց պարզաբանումն էական նշանակություն կարող է ունենալ մեղադրյալի հետագա վարքագծի կապակցությամբ հիմնավորված ենթադրություն կատարելու առումով:

19. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մեղադրյալ Արտակ Ավետիքի Դիլանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի ապրիլի 26-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

Դատավորներ՝

սրորագրություն

սրորագրություններ

33.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ԵՇԳ/0143/01/13
Նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան
Դատավորներ՝ Ա.Գանիեյան
Լ.Թադևոսյան

ԵՇԳ/0143/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ Հ.ԱՍՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ մեղադրող պաշտպան	Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
ամբաստանյալ	Հ.ԱՆԱՆՅԱՆԻ Ա.ՇԱՀԲԱԶՅԱՆԻ

2014 թվականի օգոստոսի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Արմեն Սուրիկի Շահբազյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի մարտի 13-ի որոշման դեմ մեղադրող Ա.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2012 թվականի հոկտեմբերի 24-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի

հատկանիշներով հարուցվել է թիվ 11136812 քրեական գործը՝ անհայտ անձի կողմից Կարեն Պրուտյանի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու փաստի առթիվ:

Նախաքննության մարմնի 2012 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ Արմեն Շահբազյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրն Ա.Շահբազյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ Ա.Շահբազյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2013 թվականի նոյեմբերի 6-ին Ա.Շահբազյանն ինքնակամ ներկայացել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժին, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով:

2013 թվականի դեկտեմբերի 13-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2014 թվականի հունվարի 15-ի դատավճռով Ա.Շահբազյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ Ա.Շահբազյանն ազատվել է պատժի կրումից:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի մարտի 13-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունվարի 15-ի դատավճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 13-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Ա.Գրիգորյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հունիսի 9-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

2014 թվականի հուլիսի 15-ին ամբաստանյալ Ա.Շահբազյանի պաշտպան Հ.Անանյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան խնդրելով մերժել վճռաբեկ բողոքը և Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 13-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Շահբազյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2012 թվականի հոկտեմբերի 23-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Երևանի Արարատյան փողոցի 62/2 շենքի բակում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ իր մոտ եղած կտրող-ծակող գործիքով հարվածներ է հասցրել Կարեն Պրուտյանին և նրա առողջությանը դիտավորությամբ պատճառել կյանքի համար վտանգավոր ծանր վնաս (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ180-185):

6. Գատաբժշկական փորձագետի թիվ 1550 եզրակացության համաձայն՝ «(...) Կ. Պրուտյանի սրացած մարմնական վնասվածքները՝ կրծքավանդակի աջ կեսի ծակած-կտրած բափանցող թորակոսաբղոմիևալ վերքի, 6-րդ կողի, սրտձանու, լյարդի վնասումով, հեմոթորաքսով, շախից գորկային շրջանի ծակած-կտրած չբափանցող վերքի, աջ բազկի շրջանի կտրած վերքի ձևով, պատճառված են ծակող-կտրող գործիքով, այդ թվում՝ դանակով, հարվածներն ուղղված են եղել համապատասխան շրջաններին, հնարավոր է՝ գործի հանգամանքներում նշված ժամանակին և պատճառվել է առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վրնասզ սպառնացող: (...) Կրծքավանդակի աջ կեսի ծակած-կտրած բափանցող թորակոսաբղոմիևալ վերքը՝ 6-րդ կողի, սրտձանու, լյարդի վնասումով, հեմոթորաքսով, առանձին վերցրած առաջացրել է առողջությանը ծանր վնաս, կյանքին վրանգ սպառնացող: Չախից գորկային շրջանի ծակած-կտրած չբափանցող վերքն առանձին վերցրած պատճառել է առողջությանը միջին ծանրության վնաս՝ առողջության փակաս քայքայումով (...): Աջ բազկի շրջանի կտրած վերքն առանձին վերցված առաջացրել է առողջությանը թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով (...):» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին,թերթ 67-68):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է. «(...) Որպես սմբաստանյալ Արմեն Շահբազյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի է առնում այն, որ նրա խնամքի րակ են գտնվում հինգ և րասներկու րարեկան երեխաները, սմբաստանյալը ներկայացել է մեղայականով, անկեղծորեն զղջացել է կատարված արարքի համար, նախաքննության ժամանակ րվել է խոստովանական ցուցմունքներ, որոնցով սկրիվորեն աջակցել է հանցագործությունը բացահայրելուն, հարուցել է րուժողի բուժման ծախսերը, րուժողը հաշրվել է սմբաստանյալի հեր և խնդրել է վերջինիս նկատմամբ նշանակել մեղմ պատիժ:

(...) Հաշվի առնելով Արմեն Շահբազյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող վերը թվարկված հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև այն, որ սմբաստանյալի կողմից հասցված միայն մեկ հարվածն է րուժողի առողջությանը պատճառել ծանր վնաս, դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և

հանցագործությունների կանխմանը, կարելի է հասնել ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախարեսված նվազագույն պարիժը նշանակելու միջոցով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 224-225):

8. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) [Հ]աշվի առնելով, որ մինչ ամբաստանյալ Արմեն Շահբազյանի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնին ինքնակամ ներկայանալը, գործի քննության ընթացքում ըստ էության արդեն իսկ պարզված են եղել փուժող Կարեն Պրոսպյանին ծանր մարմնական վնասվածք պատճառելու փաստական հանգամանքները, և բացահայտված է եղել այն կատարած անչը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ կոնկրետ դեպքում բացակայում է ամբաստանյալ Արմեն Շահբազյանի պարասխանարկությունն ու պարիժը մեղմացնող և ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով ամրագրված հանգամանքը՝ մեղայականով ներկայանալը և հանցագործության բացահայտմանն ակտիվորեն աջակցելը:

Վերաքննիչ դատարանը միևնույն ժամանակ որպես ամբաստանյալ Արմեն Շահբազյանի պարիժն ու պարասխանարկությունը մեղմացնող հանգամանք ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով դիտում է քրեական վարույթն իրականացնող մարմնին ինքնակամ ներկայանալու հանգամանքը, քանի որ այն իրական է և էականորեն նվազեցնում է ամբաստանյալի անչի հանրության համար վրանգավորության աստիճանը:

(...) Վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրահանգման, որ դատարանը, ամբաստանյալ Ա. Շահբազյանի նկատմամբ պարիժ նշանակելիս բավարար չափով հաշվի առնելով վերջինիս կողմից կատարված հանցագործության բնույթն ու վրանգավորության աստիճանը, ամբաստանյալի անչը բնութագրող դրական փոխյակները, նրա պարասխանարկությունն ու պարիժը մեղմացնող մյուս հանգամանքները, վերջինիս պարասխանարկությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում, ամբաստանյալ Արմեն Շահբազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայի շրջանակներում նշանակել է արդարացի և համաչափ պարիժ, ուստի դատական ակտը պետք է թողնել օրինական ուժի մեջ» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 28-37):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը գտնում է, որ ստորադաս դատարանների դատական ակտերն անհիմն են, դրանցով թույլ են տրվել նյութական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, դատարանների կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը վերլուծել է վերոգրյալ օրենսդրական դրույթները, մեջբերել Վճռաբեկ դատարանի քիվԵՇԳ/0029/01/08 գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և եկել այն եզրահանգման, որ Ա.Շահբազյանին մեղսագրվող արարքը մարդու առողջության դեմ ուղղված հանցագործություններից առավել վտանգավորն է, ունի հանրային վտանգավորության բարձր աստիճան, որն արտահայտվում է առողջությանը պատճառված վնասի՝ կյանքի համար վտանգավոր լինելու հանգամանքով: Հետևաբար, Ա.Շահբազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելն արդարացի չէ, չի համապատասխանում նրա կատարած հանցանքի բնույթին, անհրաժեշտ և բավարար չի կարող լինել սոցիալական արդարությունը վերականգնելու, նրան ուղղելու, ինչպես նաև նմանատիպ հանցագործությունները կանխելու համար:

Բացի այդ, բողոքի հեղինակն իր անհամաձայնությունն է հայտնել ստորադաս դատարանների այն դիրքորոշմանը, որ տուժողի առողջությանը միայն մեկ հարվածով ծանր վնաս պատճառելու փաստը դրականորեն է բնութագրում Ա.Շահբազյանին: Քրեական գործով հաստատված է ամբաստանյալի կողմից մի քանի հարվածներ հասցնելու հանգամանքը, ինչն էլ վկայում է կատարված արարքի առավել բարձր հանրային վտանգավորության մասին:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 13-ի որոշումը, Ա.Շահբազյանի նկատմամբ նշանակել համաչափ պատիժ և վերացնել ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառումը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործության (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը) համար պատիժ նշանակելիս արարքի հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի գնահատման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնացած գործերով ճիշտ դատական պրակտիկայի ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության

անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Ա.Շահբազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անչի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեափրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անչնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անչին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անչի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անչը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

(...)»:

Մեջբերված իրավական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել և դրանց վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է հայտնել թիվ ՎԲ-142/07, ՎԲ-192/07, ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ԵՇԴ/0029/01/08, ԵԿԴ/0042/01/11, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում: Նշված որոշումներում Վճռաբեկ դատարանի ձևավորած կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործության և քրեափրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Պատիժն արդարացի է, եթե համաչափ է կատարված հանցագործությանը, ինչպես նաև բավարար պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից: Պատժի արդարության պահանջներից նահանջելը կարող է հանգեցնել չափազանց մեղմ կամ չափազանց խիստ պատժի նշանակման: Քրեական օրենքը համընդհանուր բնույթ ունի, իսկ արարքը և հանցավորի անձը կոնկրետ են: Հետևաբար կոնկրետ գործով պատիժ նշանակելիս դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի, հանցավորի անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա: Նշված հանգամանքների գնահատման ժամանակ դատարանը

պետք է ելնի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից:

Այսպիսով, պատիժ նշանակելիս դատարանը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնի արարքի հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը: Հանցագործության այս հատկանիշներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Գ. Մադաթյանի* գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ «Արարքի հանրային վրանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական փոփոխությունների ամբողջությամբ:

Արարքի հանրային վրանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը» (տե՛ս Գարուշ Մադաթյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԳ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

14. Վերահաստատելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանի կողմից արարքի հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի բացահայտումը սերտորեն կապված է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների հետ՝ թե՛ արդարացի պատիժ նշանակելու և թե՛ պատժի անհատականացման համատեքստում: Հանցագործության հանրային վտանգավորության տիպային բնութագիրն արտացոլվում է օրենսդրի կողմից սահմանված սանկցիայում, իսկ յուրաքանչյուր կոնկրետ գործով արարքի հանրային վտանգավորության աստիճանի գնահատականը տրվում է դատարանի կողմից՝ հանցագործության կատարման հանգամանքների, հանցավորի անձնավորության, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների հիման վրա, և արտահայտվում է կոնկրետ պատժի տեսքով (տե՛ս *mutatis mutandis* Նարեկ Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԳ/0042/01/11 որոշման 16-17-րդ կետերը): Հանցագործության կատարման եղանակի, գործիքների, միջոցների, պատճառված վնասի չափի և բնույթի (հանրորեն վտանգավոր հետևանքների), հանցավորի մտադրության իրականացման աստիճանի, շարժառիթների, նպատակների բացահայտումը մեծապես ազդում է պատժի տեսակի ընտրության, ինչպես նաև դրա՝ առավել կամ նվազ խիստ լինելու վրա:

Հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վրա ազդող վերը նշված գործոնների հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանը

կարևորում է հանցավորի մեղքի ձևը: Այսպես՝ մեղքի դիտավորյալ ձևով կատարվող հանցագործությունների ժամանակ առավել բարձր հանրային վտանգավորություն ունեն ուղղակի դիտավորությամբ կատարվող արարքները, որոնք ենթադրում են հանցավորի կողմից հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիության կամ իրական հնարավորության նախատեսում: Ընդ որում, արարքի վտանգավոր հետևանքների առաջացումը նախատեսելն ընդգրկում է ոչ միայն ապագայում սպասվելիք փոփոխությունների փաստական բովանդակության գիտակցումը, այլև այդ փոփոխությունների սոցիալական նշանակության (հանրային վտանգավորության) գիտակցումը: Բոլոր այն դեպքերում, երբ հանցանք կատարած անձի կողմից հստակ գիտակցվում է արարքի և վտանգավոր հետևանքների միջև առկա միանշանակ պատճառական կապը և դրա զարգացումը, այսինքն՝ առկա է վտանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիության նախատեսումը, օրյեկտիվորեն բարձրանում է նաև արարքի հանրային վտանգավորության աստիճանը: Այս դեպքում հանցագործության սուբյեկտի պատրաստվածությունը, հանցանքի կատարման եղանակը, իրադրությունը, օգտագործվող գործիքները, միջոցներն իրենց ամբողջության մեջ անկանխելի են դարձնում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը՝ հանցավորի մոտ միանշանակ վստահություն առաջացնելով իր նպատակների անխուսափելի իրագործման մեջ:

15. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշման 14-րդ կետում արված դատողությունները կիրառելի են մարդու առողջության դեմ ուղղված դիտավորյալ հանցագործությունների դեպքում ընդհանրապես և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված) դեպքում՝ մասնավորապես: Նշված դիրքորոշման համար հիմք է հանդիսանում մարդու առողջության՝ որպես պետության կողմից առանձնահատուկ պահպանվող արժեքի կարևորությունը: Քննարկվող հանրորեն վտանգավոր արարքների դեմ արդյունավետ պայքարը պահանջում է այս ոլորտում համապատասխան քրեական, այդ թվում՝ պատժողական քաղաքականության իրականացում: Իսկ դա իր հերթին ենթադրում է ոչ միայն համապատասխան օրենսդրական հիմքերի առկայություն, այլև դրանց գործնական կիրառման հնարավորության ապահովում:

ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մարդու առողջության դեմ ուղղված հանցագործություններից ամենավտանգավորի՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար: Քննարկվող հանցագործության հանրային առավել բարձր վտանգավորությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ համապատասխան հակաիրավական արարքի արդյունքում մարդուն պատճառվում է վնաս, որը խիստ բացասական է անդրադառնում նրա առողջական վիճակի վրա, այլև նրանով, որ կարող է առաջ բերել ավելի ծանր հետևանքներ՝ ընդհուպ մինչև տուժողի մահ: Այս հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի

(առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու հանցակազմի հատկանիշների վերաբերյալ տե՛ս Արարատ Բաղդասարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0168/01/10 որոշման 15-րդ կետը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքը կարող է կատարվել տարբեր եղանակներով: Մասնավորապես, հանցավորը տուժողի առողջությանը ծանր վնաս կարող է պատճառել՝ իր ֆիզիկական հնարավորությունները գործադրելով (ձեռքով կամ ոտքով հարվածելով, հրել-վայր գցելով, մարմնի որևէ մաս ջարդելով և այլն), տարբեր գործիքներ, իրեր կամ առարկաներ (ղանակ, կացին, մուրճ, մետաղյա ձող, քար և այլն) օգտագործելով, զանազան մեխանիզմներ, միջոցներ կամ նյութեր (հրագեն, թույն, թմրանյութ և այլն) կիրառելով, տարերային աղետի իրադրությունը կամ առավել վտանգի աղբյուրն օգտագործելով և այլն: Քննարկվող հանցագործության կատարման նշված եղանակները, ելնելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, տարբեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության աստիճանը: Այսպես՝ տուժողի կենսական կարևոր օրգանների շրջանում դանակով հարված հասցնելիս հանցավորը ոչ միայն նախատեսում է հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիությունը, այլև գիտակցում է կամ առնվազն պարտավոր է գիտակցել, որ իր գործողություններով տուժողին պատճառում է առողջության ծանր վնաս, որը վտանգավոր է կյանքի համար և անգամ կարող է հանգեցնել մահվան: Այլ խոսքով՝ հանցավորը գործում է ուղղակի դիտավորությամբ և հստակ նախատեսում է իր արարքի և վտանգավոր հետևանքների միջև առկա միանշանակ պատճառական կապը և դրա զարգացումը, այդ թվում՝ գիտակցում է կամ պարտավոր է գիտակցել, որ տուժողին կարող է պատճառել մահ, սակայն ինքնավստահությամբ կամ անփութությամբ հույս է ունենում, որ նշված ծանր հետևանքը չի առաջանա: Վերոգրյալն ինքնին վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին, ուստի օբյեկտիվորեն պետք է գնահատվի և հաշվի առնվի դատարանների կողմից պատիժ նշանակելիս:

16. Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ քրեաիրավական ներգործության համաչափ միջոց կիրառելու համար դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն արարքի կատարման եղանակին, օգտագործված գործիքներին, միջոցներին, մարմնական վնասվածքների քանակին, բնույթին ու տեղակայմանը: Համապատասխան գնահատականի պետք է արժանացվի նաև կատարված հանրորեն

վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը:

Ոստի, Վճարելի դատարանը գտնում է, որ առանց նշված հանգամանքների գնահատման առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու վերաբերյալ գործերով հնարավոր չէ ճիշտ պատկերացում կազմել հանցավորի անճանալորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին: Հետևաբար, նշանակված պատժով չի ապահովվի կատարված արարքի և կիրառված քրեաիրավական ներգործության միջոցի համաչափությունը, ինչպես նաև կխաթարվեն պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները:

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Շահբազյանը 2012 թվականի հոկտեմբերի 23-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Երևանի Արարատյան փողոցի 62/2 շենքի բակում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ իր մոտ եղած կտրող-ծակող գործիքով հարվածներ է հասցրել Կ.Պրոտյանին և նրա առողջությանը դիտավորությամբ պատճառել կյանքի համար վտանգավոր ծանր վնաս: Հարվածների հետևանքով տուժողի կրծքավանդակի աջ կեսի ծակած-կտրած քափանցող վերքը՝ 6-րդ կողի, ստոծանու, լյարդի վնասումով, հեմոթորաքսով, առանձին վերցրած, առաջացրել է առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող, ձախից գոտկային շրջանի ծակած-կտրած չքափանցող վերքը, առանձին վերցրած, պատճառել է առողջությանը միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով, աջ բազկի շրջանի կտրած վերքը, առանձին վերցրած, առաջացրել է առողջությանը թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով (տե՛ս սույն որոշման 5-րդ և 6-րդ կետերը):

Պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել այն, որ Ա.Շահբազյանի խնամքին են գտնվում մինչև տասնչորս տարեկան երկու երեխա, ամբաստանյալը ներկայացել է մեղայականով, անկեղծորեն զղջացել է կատարած արարքի համար, ակտիվորեն աջակցել է հանցագործության բացահայտմանը, հատուցել է տուժողի բուժման ծախսերը, տուժողը խնդրել է վերջինիս նկատմամբ նշանակել մեղմ պատիժ: Հաշվի առնելով ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող վերոգրյալ հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև այն, որ Ա.Շահբազյանի հասցրած միայն մեկ հարվածն է տուժողի առողջությանը պատճառել ծանր վնաս՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը կարելի է հասնել ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժը նշանակելու միջոցով (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ գործի օբյեկտիվ տվյալներից չի բխում Ա.Շահբազյանի պատասխանատվությունն

ու պատիժը մեղմացնող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված հանգամանքը, այն է՝ մեղայականով ներկայանալը և հանցագործության բացահայտմանն ակտիվորեն աջակցելը: Այդուհանդերձ, Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում եզրահանգել է, որ Առաջին աստիճանի դատարանը, բավարար չափով հաշվի առնելով ամբաստանյալի կատարած հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, նրա անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող մյուս հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, Ա.Շահբազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայի շրջանակներում նշանակել է արդարացի և համաչափ պատիժ (տե՛ս սույն որոշման 3-րդ և 8-րդ կետերը):

18. Սույն որոշման 13-16-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին աստիճանի և Վերաքննիչ դատարանները Ա.Շահբազյանի նկատմամբ պատիժ նշանակելիս օբյեկտիվորեն հաշվի չեն առել կատարված հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը, ինչի հետևանքով ամբաստանյալի նկատմամբ նշանակվել է ակնհայտ մեղմ պատիժ: Ինչպես երևում է գործի նյութերից՝ Ա.Շահբազյանը կտրող-ծակող գործիքով երեք հարված է հասցրել Կ.Պրոտյանի մարմնի տարբեր մասերին, այդ թվում՝ կենսականորեն կարևոր օրգանների շրջանում՝ տուժողի առողջությանը պատճառելով, ի թիվս այլնի, կյանքի համար վտանգավոր ծանր վնաս: Ամբաստանյալին վերագրվող հանցագործության բարձր հանրային վտանգավորությունը կանխորոշում են արարքը կտրող-ծակող գործիքով կատարելը, ինչպես նաև դրանով տուժողի մարմնի տարբեր մասերին մի քանի հարված հասցնելը:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ քրեաիրավական ներգործության համաչափ միջոց կիրառելու համար ստորադաս դատարանները պատշաճ ուշադրություն չեն դարձրել արարքի կատարման եղանակին, օգտագործված գործիքին, մարմնական վնասվածքների քանակին, բնույթին ու տեղակայմանը: Համապատասխան գնահատականի չի արժանացվել նաև կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը:

Վճռաբեկ դատարանի համար անհասկանալի է նաև ստորադաս դատարանների դատողություններն առ այն, որ Ա.Շահբազյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առնվում, որ նրա հասցրած միայն մեկ հարվածն է տուժողի առողջությանը պատճառել ծանր վնաս: Այս հանգամանքը չի նվազեցնում Ա.Շահբազյանի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը և չի կարող ՀՀ քրեական օրենսգրքի 112-

րդ հողվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատժի նշանակման օբյեկտիվ հիմք հանդիսանալ:

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված չեն Ա.Շահբազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հողվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

Ուստի Վերաքննիչ դատարանը, սույն գործով կայացված դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ և 61-րդ հողվածներով սահմանված օրինականության, արդարության և պատասխանատվության անհատականացման, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հողվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է: Միևնույն ժամանակ Վճարելի դատարանն արձանագրում է, որ քրեական օրենքի նշված ոչ ճիշտ կիրառումը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հողվածի պահանջներին չհամապատասխանող, անօրինական, չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտերի կայացմանը, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հողվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է:

Վերը նշված խախտումները, որոնք ազդել են պատժի նշանակման մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, Վճարելի դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հողվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

20. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հողվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճարելի բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճարելի դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հողվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հողվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արմեն Սուրիկի Շահբազյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի մարտի 13-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

34.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԳԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ԵՇԳ/0144/01/13
Նախագահող դատավոր՝ Գ.Ավետիսյան
Գատավորներ՝ Ե.Գարբիևյան
Ս.Չիչոյան

ԵՇԳ/0144/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ մասնակցությամբ դատավորներ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ մասնակցությամբ պաշտպան	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ Վ.ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻ

2014 թվականի օգոստոսի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Վարդան Գազիկի Մանասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի մարտի 11-ի որոշման դեմ մեղադրող Ռ.Էլիզբարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի հունիսի 10-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11130713 քրեական գործը՝ անհայտ անձի կողմից Վիգեն Հարությունյանի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու փաստի առթիվ:

Նախաքննության մարմնի 2013 թվականի հունիսի 21-ի որոշմամբ Վարդան Մանասյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով: Վ.Մանասյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2013 թվականի դեկտեմբերի 17-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2014 թվականի հունվարի 15-ի դատավճռով Վ.Մանասյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ՝ Վ.Մանասյանն ազատվել է պատժի կրումից:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի մարտի 11-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունվարի 15-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 11-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել մեղադրող Ռ.Էլիզբարյանը:

2014 թվականի մայիսի 20-ին ամբաստանյալ Վ.Մանասյանի պաշտպան Վ.Մնացականյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով վճռաբեկ բողոքը թողնել առանց բավարարման, իսկ Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 11-ի որոշումը՝ օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հունիսի 9-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Վ.Մանասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2013 թվականի հունիսի

9-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, Երևանի Մասիսի փողոցի 3-րդ հասցեում գտնվող արտադրամասի տարածքում մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ սուր կտրող-ծակող գործիքով հարվածել է Վիգեն Մուրադի Հարությունյանին և վերջինիս պարանոցի շրջանի կտրած-ծակած վերքի ձևով՝ աջ լծային երակի, աջ ներքին և արտաքին քնային զարկերակների վնասումով, պատճառել է ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 269-275):

6. Դատաբժշկական փորձագետի թիվ 968/հ եզրակացության համաձայն՝ «(...) Վ.Հարությունյանի մարմնական վնասվածքները՝ պարանոցի շրջանի ծակած-կտրած վերքի ձևով՝ աջ լծային երակի, աջ ներքին և արտաքին քնային զարկերակների վնասումով, պայրճառվել են սուր ծակող-կտրող գործիքի կամ սուր ծայր ունեցող գործիքի ներգործությամբ, (...) որոնք պայրճառել են ծանր վնաս՝ կյանքին վրանգ սպառնացող» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 165-166):

7. Լրացուցիչ դատաբժշկական փորձաքննության թիվ 13-2264 եզրակացության համաձայն՝ «(...) Վ.Հարությունյանի պարանոցի շրջանի արտաքին և ներքին վնասվածքներ[ը] (...) պայրճառվել են ըստ խորաթափանցման մակարդակի համապատասխան կառուցվածքային րվյալներ ունեցող ծակող-կտրող առարկայի կամ գործիքի, հնարավոր է՝ դանակի մեկ հարվածային ներգործությամբ, որի ներթափանցող ներգործությունը րեղակայվել է Վ.Հարությունյանի ենթակզակային շրջանում՝ գրեթե միջին գծով՝ ներթափանցելով պարանոց՝ նրա մարմնի նկատմամբ առջևից հետ, չափից աջ, քիչ վարից վեր ուղղությամբ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 7-10):

8. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում նշել է. «(...) Որպես ամբաստանյալ Վարդան Մանասյանի պատասխանատվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի է առնում այն, որ նա ներկայացել է մեղայականով, անկեղծորեն զղջացել է կատարած արարքի համար, ամբողջությամբ հստակացել է րոժողի բուժման ծախսերը, րոժողը հաշտվել է ամբաստանյալի հետ և խնդրել է վերջինիս նկատմամբ նշանակել մեղմ պարիժ:

(...) Հաշվի առնելով Վարդան Մանասյանի պատասխանատվությունն ու պարիժը մեղմացնող վերը թվարկված հանգամանքները, ինչպես նաև ծանրացնող հանգամանքների բացակայությունը, դատարանը գրկում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պարժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պարժի ենթարկված անչի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը, կարելի է հասնել ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պարիժը նշանակելու միջոցով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 310-311):

9. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվող

ամբաստանյալ Վ.Մանասյանի նկատմամբ պատժի տեսակն ու չափը որոշելիս Առաջին արյանի դատարանը ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, ըստ էության բազմակողմանի սրուգման ու օբյեկտիվ գնահատության է ենթարկել ամբաստանյալ Վ.Մանասյանի կատարած հանցանքի՝ հանրության համար վրանգավորության աստիճանն ու բնույթը, դա կատարելու հանգամանքները, անչը բնութագրող տվյալները, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, մասնավորապես այն, որ նա ներկայացել է մեղայականով, հանցանքը կատարում է առաջին անգամ, ընդունել է կատարած հանցանքն ու անկեղծորեն զղջացել դրա համար, ամբողջությամբ հարուցել է տուժողի բուժման ծախսերը, տուժողը հաշտվել է ամբաստանյալի հետ և խնդրել վերջինիս նկատմամբ նշանակել մեղմ պատիժ, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ վերջինիս նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ:

(...)

Վերոհիշյալ հիմնավորմամբ Վերաքննիչ դատարանն անհիմն է համարում վերաքննիչ բողոքի պարճառաբանությունը, որ Վ.Մանասյանի նկատմամբ քրեաիրավական նորմի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելու միջոցով համաներման սկիզբը կիրառելը և պատժից ազատելն արդարացի չէ, չի համապատասխանում կատարած հանցանքի բնույթին, նրա անչին, անհրաժեշտ և բավարար չէ սոցիալական արդարությունը վերականգնելու, նրան ուղղելու, նմանատիպ հանցագործությունները կանխելու համար:

(...)

Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում Առաջին արյանի դատարանի կողմից և վերաքննիչ բողոքի պատասխանում բերած փաստարկները՝ նաև այն, որ ամբաստանյալ Վ.Մանասյանն ունի բարձրագույն կրթություն, ֆիզիկապես վարատող է, արագացված դատաքննության պայմաններում առավելագույն պատիժը, որը կարող էր նշանակվել ամբաստանյալ Վ.Մանասյանի նկատմամբ չէր կարող գերազանցել չորս տարի ութ ամիս ժամկետով ազատազրկում պատիժը: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության և ամբաստանյալ Վ.Մանասյանի անչը դրական բնութագրող, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների առկայության պայմաններում Առաջին արյանի դատարանը Վ.Մանասյանի նկատմամբ հիմնավոր կերպով է կիրառել նվազ խիստ պատիժը» (տես քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 36-45):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, դրանով թույլ է տրվել նյութական իրավունքի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա: Մասնավորապես, ստորադաս դատարանի կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 62-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը վերլուծել է վերոգրյալ օրենսդրական դրույթները, մեջ բերել Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԳ-0029/01/08 գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և եկել այն եզրահանգման, որ Վ.Մանասյանին մեղազարկող արարքն ունի հանրային վտանգավորության բարձր աստիճան, որն արտահայտվում է առողջությանը պատճառված վնասի՝ կյանքի համար վտանգավոր լինելու հանգամանքով: Հետևաբար, Վ.Մանասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելն արդարացի չէ, չի համապատասխանում նրա կատարած հանցանքի բնույթին, անհրաժեշտ և բավարար չի կարող լինել սոցիալական արդարությունը վերականգնելու, նրան ուղղելու, ինչպես նաև նմանատիպ հանցագործությունները կանխելու համար:

11. Բողոքի հեղինակը գտել է, որ անհիմն են ստորադաս դատարանների դատողությունները Վ.Մանասյանի անձը դրական բնութագրող, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների առկայության մասին: Ըստ բողոքաբերի՝ ամբաստանյալը չի կարող դրականորեն բնութագրվել, քանի որ օրինապահ չէ և ունի հանցավոր հակումներ, մասնավորապես՝ ազատության մեջ գտնվելու ընթացքում իր վերաբերյալ գործի քննությանը միջամտելու բազմաթիվ փորձեր և հանրորեն վտանգավոր նոր արարքներ է կատարել:

Բացի այդ, բողոքի հեղինակը, համադրելով Վճռաբեկ դատարանի թիվ ՎԲ-84/07, ԵԱՆԳ-091/01/09 որոշումների իրավական դիրքորոշումները սույն գործի փաստական հանգամանքների հետ, եկել է այն եզրահանգման, որ Վ.Մանասյանի մեղայականով ներկայանալու հանգամանքը սույն գործով չի կարող կիրառվել որպես ամբաստանյալի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է պատժի մասով բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 11-ի որոշումը, և Վ.Մանասյանի նկատմամբ նշանակել համաչափ պատիժ՝ ազատագրելու՝ 4 տարի 6 ամիս ժամկետով:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Վ.Մանասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելու հիմնավորվածության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անչի նկատմամբ կիրառվող պարիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անչնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պարժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարժի ենթարկված անչին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անչի նկատմամբ նշանակվում է արդարացի պարիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պարժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անչը բնութագրող փոխալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

(...)»:

Մեջբերված իրավական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Ա Շահբազյանի գործով որոշման մեջ և իրավական դիրքորոշումներ հայտնել առայն, որ «(...) [Դ]ատարանի կողմից արարքի հանրային վրանգավորության աստիճանի և բնույթի բացահայտումը սերտորեն կապված է պարիժի նշանակելու և թե՛ պարժի անհատականացման համարեքստում: Հանցագործության հանրային վրանգավորության փոխալին բնութագիրն արտացոլվում է օրենսդրի կողմից սահմանված սանկցիայում, իսկ յուրաքանչյուր կոնկրետ գործով արարքի հանրային վրանգավորության աստիճանի գնահատականը փոխվում է դատարանի կողմից՝ հանցագործության կատարման հանգամանքների, հանցավորի անչնավորության, պատասխանատվությունն ու պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների հիման վրա, և արտահայտվում է կոնկրետ պարժի տեսքով (...): Հանցագործության կատարման եղանակի, գործիքների, միջոցների, պարժառված վնասի չափի և բնույթի (հանրորեն վրանգավոր հետևանքների), հանցավորի մտադրության իրականացման աստիճանի, շարժառիթների, նպատակների բացահայտումը մեծապես ազդում է պարժի տեսակի բնորոշության, ինչպես նաև դրա՝ առավել կամ նվազ խիստ լինելու վրա:

Հանցագործության հանրային վրանգավորության աստիճանի և բնույթի վրա ազդող վերը նշված գործոնների հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանը կարևորում է հանցավորի մեղքի չևր: Այսպես՝ մեղքի դիտարկող չևով կատարվող հանցագործությունների ժամանակ առավել քարչր հանրային վրանգավորություն ունեն ուղղակի դիտարկությանը կատարվող արարք-

ները, որոնք ենթադրում են հանցավորի կողմից հանրորեն վրանգավոր հեղինակների առաջացման անխուսափելիության կամ իրական հնարավորության նախատեսում: Ընդ որում, արարքի վրանգավոր հեղինակների առաջացումը նախատեսելն ընդգրկում է ոչ միայն սպազայում սպասվելիք փոփոխությունների փաստական բովանդակության գիրակցումը, այլև այդ փոփոխությունների սոցիալական նշանակության (հանրային վրանգավորության) գիրակցումը: Բոլոր այն դեպքերում, երբ հանցանք կատարած անձի կողմից հստակ գիրակցվում է արարքի և վրանգավոր հեղինակների միջև առկա միանշանակ պարճառական կապը և դրա զարգացումը, այսինքն՝ առկա է վրանգավոր հեղինակների առաջացման անխուսափելիության նախատեսումը, օբյեկտիվորեն բարձրանում է նաև արարքի հանրային վրանգավորության աստիճանը: Այս դեպքում հանցագործության սուբյեկտի պատրաստվածությունը, հանցանքի կատարման եղանակը, իրադրությունը, օգտագործվող գործիքները, միջոցներն իրենց ամբողջության մեջ անկանխելի են դարձնում հանրորեն վրանգավոր հեղինակների առաջացումը՝ հանցավորի մոտ միանշանակ վարահություն առաջացնելով իր նպատակների անխուսափելի իրագործման մեջ» (տե՛ս Արմեն Շահբազյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԳ/0143/01/13 որոշման 14-րդ կետը):

15. Ա Շահբազյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև մարդու առողջության դեմ ուղղված դիտավորյալ հանցագործությունների, մասնավորապես՝ դիտավորյալ առողջությանը ծանր վնաս պատճառելու հանրային վտանգավորության աստիճանի որոշման վրա ազդող գործոններին և արձանագրել հետևյալը. «ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածը պատրաստանալություն է նախատեսում մարդու առողջության դեմ ուղղված հանցագործություններից ամենավրանգավորի՝ դիտավորյալ առողջությանը ծանր վնաս պարճառելու համար: Քննարկվող հանցագործության հանրային առավել բարձր վրանգավորությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ համապատասխան հակաիրավական արարքի արդյունքում մարդուն պարճառվում է վնաս, որը խիստ բացասական է անդրադառնում նրա առողջական վիճակի վրա, այլև նրանով, որ կարող է առաջ բերել ավելի ծանր հեղինակներ՝ ընդհուպ մինչև րուժողի մահ: Այս հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորյալ, որը կարող է լինել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանրորեն վրանգավոր արարքը կարող է կատարվել տարբեր եղանակներով: Մասնավորապես, հանցավորը րուժողի առողջությանը ծանր վնաս կարող է պարճառել՝ իր ֆիզիկական հնարավորությունները գործադրելով (չեռքով կամ ոտքով հարվածելով, հրել-վայր գցելով, մարմնի որևէ մաս ջարդելով և այլն), տարբեր գործիքներ, իրեր կամ առարկաներ (դանակ, կացին, մուրճ, մետաղյա չոփ, քար և այլն) օգտագործելով, զանազան մեխանիզմներ, միջոցներ կամ նյութեր

(հրագեն, թույն, թմրանյութ և այլն) կիրառելով, փարերային աղետի իրադրությունը կամ առավել վրանգի աղբյուրն օգտագործելով և այլն: Քննարկվող հանցագործության կատարման նշված եղանակները, ելնելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, փարեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վրանգավորության աստիճանը: Այսպես՝ փուժողի կենսական կարևոր օրգանների շրջանում դանակով հարված հասցնելիս հանցավորը ոչ միայն նախարեսում է հանրորեն վրանգավոր հերևանքների առաջացման անհուսափելիությունը, այլև գիտակցում է կամ առնվազն պարտավոր է գիտակցել, որ իր գործողություններով փուժողին պարճառում է առողջության ծանր վնաս, որը վրանգավոր է կյանքի համար և անգամ կարող է հանգեցնել մահվան: Այլ խոսքով՝ հանցավորը գործում է ուղղակի դիտավորությամբ և հարակ նախարեսում է իր արարքի և վրանգավոր հերևանքների միջև առկա միանշանակ պարճառական կապը և դրա զարգացումը, այդ թվում՝ գիտակցում է կամ պարտավոր է գիտակցել, որ փուժողին կարող է պարճառել մահ, սակայն ինքնավարահուրթյամբ կամ անփութությամբ հույս է ունենում, որ նշված ծանր հերևանքը չի առաջանա: Վերոգրյալն ինքնին վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վրանգավորության առավել բարճր աստիճանի մասին, ուստի օբյեկտիվորեն պերք է գնահատվի և հաշվի առնվի դատարանների կողմից պարիժ նշանակելիս:

(...) Վճռաբեկ դատարանը գրնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախարեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով հանցագործության հանրային վրանգավորության աստիճանը միշտ գնահարելու և որպես արդյունք հանցավորի նկարմամբ քրեաիրավական ներգործության համաչափ միջոց կիրառելու համար դատարանները հարուկ ուշադրություն պերք է դարչնեն արարքի կատարման եղանակին, օգտագործված գործիքներին, միջոցներին, մարմնական վնասվածքների քանակին, բնուրթին ու րեղակայմանը: Համապարասիսան գնահարականի պերք է արժանացվի նաև կատարված հանրորեն վրանգավոր արարքի և դրա հերևանքների նկարմամբ հանցավորի դրսևորած հոգերանակական վերաբերմունքը:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գրնում է, որ առանց նշված հանգամանքների գնահարման՝ առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պարճառելու վերաբերյալ գործերով հնարավոր չէ միշտ պարկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանի մասին: Հերևաբար, նշանակված պարճով չի ապահովվի կատարված արարքի և կիրառված քրեաիրավական ներգործության միջոցի համաչափությունը, ինչպես նաև կիսաբարվեն պարճի նշանակման ընդհանուր սկզբունքները» (տե՛ս Արմեն Շահրազյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԳ/0143/01/13 որոշման 15-16-րդ կետերը):

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վ.Մանասյանը 2013 թվականի հունիսի 9-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, Երևանի Մասիսի փողոցի 3-րդ հասցեում գտնվող արտադրամասի տարածքում մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ սուր կտրող-ծակող գործիքով հարված է հասցրել Վ.Հարությունյանին ենթակզակային շրջանում՝ ներթափանցելով պարանոց, և վերջինիս առողջությանը պարանոցի շրջանի կտրած-ծակած վերքի ձևով՝ աջ լծային երակի, աջ ներքին և արտաքին քնային զարկերակների վնասումով, պատճառել է ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող (տե՛ս սույն որոշման 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերը):

Պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել այն, որ Վ.Մանասյանը ներկայացել է մեղայականով, անկեղծորեն զղջացել է կատարած արարքի համար, ամբողջությամբ հատուցել է տուժողի բուժման ծախսերը, տուժողը հաշտվել է ամբաստանյալի հետ և խնդրել է վերջինիս նկատմամբ նշանակել մեղմ պատիժ: Հաշվի առնելով ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող վերոգրյալ հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին կարելի է հասնել ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժը նշանակելու միջոցով (տե՛ս սույն որոշման 2-րդ և 8-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ ամբաստանյալ Վ.Մանասյանի նկատմամբ պատժի տեսակն ու չափը որոշելիս Առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, ըստ էության բազմակողմանի ստուգման ու օբյեկտիվ գնահատության է ենթարկել Վ.Մանասյանի կատարած հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, դա կատարելու հանգամանքները, անձը բնութագրող տվյալները, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռով նշանակված պատիժը համապատասխանում է Վ.Մանասյանին մեղսագրված հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, նրա անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար է նրան ուղղելու ու նոր հանցագործությունները կանխելու համար ու կարող է ապահովել պատժի նպատակները:

Վերաքննիչ դատարանը գտել է նաև, որ պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության և ամբաստանյալ Վ.Մանասյանի անձը դրական բնութագրող, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների առկայության պայմաններում Առաջին ատյանի դատարանը Վ.Մանասյանի նկատմամբ հիմնավոր կերպով է կիրառել նվազ խիստ պատիժը (տե՛ս սույն որոշման 3-րդ և 9-րդ կետերը)

17. Սույն որոշման 14-15-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները Վ.Մանասյանի նկատմամբ պատիժ նշանակելիս օբյեկտիվորեն հաշվի չեն առել կատարված հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը, ինչի հետևանքով ամբաստանյալի նկատմամբ նշանակվել է ակնհայտ մեղմ պատիժ: Ինչպես երևում է գործի նյութերից՝ Վ.Մանասյանը կտրող-ծակող գործիքով հարված է հասցրել Վ.Հարությունյանի պարանոցի շրջանում՝ վնասելով աջ լծային երակը, աջ ներքին և արտաքին քնային զարկերակները և այդպիսով տուժողի առողջությանը պատճառել կյանքի համար վտանգավոր ծանր վնաս: Ամբաստանյալին վերագրվող հանցագործության բարձր հանրային վտանգավորությունը կանխորոշում են արարքը կտրող-ծակող գործիքով կատարելը, ինչպես նաև դրանով տուժողի մարմնի կենսականորեն կարևոր օրգաններին հարվածելը:

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը ճիշտ գնահատելու և որպես արդյունք հանցավորի նկատմամբ քրեաիրավական ներգործության համաչափ միջոց կիրառելու համար ստորադաս դատարանները պատշաճ ուշադրություն չեն դարձրել արարքի կատարման եղանակին, օգտագործված գործիքին, մարմնական վնասվածքների բնույթին ու տեղակայմանը: Համապատասխան գնահատականի չի արժանացվել նաև կատարված հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած հոգեբանական վերաբերմունքը:

18. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված չեն Վ.Մանասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

Ուստի, Վերաքննիչ դատարանը, սույն գործով կայացված դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված օրինականության, արդարության և պատասխանատվության անհատականացման, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է: Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական օրենքի նշված ոչ ճիշտ կիրառումը հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, անօրինական, չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտերի կայացմանը, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է:

Վերը նշված խախտումները, որոնք ազդել են պատժի նշանակման մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

19. Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ գործը պետք է ուղարկվի նոր քննության՝ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքաբերի այն փաստարկներին, որ ստորադաս դատարանները սխալ եզրահանգման են եկել Վ.Մանասյանի անձը դրականորեն բնութագրող տվյալների, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքի առկայության մասին (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Վարդան Գազիկի Մանասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի մարտի 11-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

35.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ԵԿԴ/0087/01/12
Նախագահող դատավոր՝ Ա. Խաչատրյան
Դատավորներ՝ Ա. Դանիելյան
Լ. Թադևոսյան

ԵԿԴ/0087/01/12

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՏՐՅԱՆԻ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ
մասնակցությամբ պաշտպան

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ա.ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆԻ

2014 թվականի օգոստոսի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2013 թվականի մարտի 25-ի որոշման դեմ դատապարտյալ Վաժա Վախթանգի Ազարիաշվիլու պաշտպան Ա.Փարսադանյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2011 թվականի դեկտեմբերի 27-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերի, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 15141911 քրեական գործը՝ Վաժա Ազարիաշվիլու,

Երվանդ Ղամբարյանի, Դավիթ Ղամբարյանի, Վարդան Եղիազարյանի, Կարեն Հովհաննիսյանի կողմից գողություն և գողության փորձ կատարելու դեպքերի առթիվ:

Նախաքննության մարմնի 2011 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ Վաթա Ազարիաշվիլին ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2011 թվականի դեկտեմբերի 29-ին Դավիթ Ղամբարյանը, Վարդան Եղիազարյանը և Կարեն Հովհաննիսյանը ներգրավվել են որպես մեղադրյալ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2012 թվականի մայիսի 10-ին Դ.Ղամբարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2012 թվականի մայիսի 23-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճռով Վ.Ազարիաշվիլին մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Վ.Ազարիաշվիլին դատապարտվել է ազատազրկման 6 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 5 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 5 տարի ժամկետով՝ գույքի կեսի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի 5.600.000 ՀՀ դրամից:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Վ.Ազարիաշվիլու նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 տարի ժամկետով՝ գույքի կեսի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի 5.600.000 ՀՀ դրամից:

Դ.Ղամբարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման՝ 4 տարի 6 ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Վ.Եղիազարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման՝ 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Կ.Հովհաննիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման՝ 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Նույն դատավճռով դատապարտվել են նաև Երվանդ Ղամբարյանը, Հասմիկ Դուրգարյանը և Աբգար Հովսեփյանը:

3. Կ.Հովհաննիսյանի, Վ.Ազարիաշվիլու պաշտպան Ա.Փարսադանյանի, Գ.Ղամբարյանի պաշտպան Է.Աղաջանյանի, Վ.Եղիազարյանի պաշտպան Վ.Գևորգյանի և մեղադրողի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2013 թվականի մարտի 25-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել Գ.Ղամբարյանի պաշտպան Է.Աղաջանյանը, Վ.Եղիազարյանի պաշտպան Վ.Գևորգյանը, Կ.Հովհաննիսյանը և նրա պաշտպան Ս.Սաֆարյանը: Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 25-ի որոշման դեմ Վ.Ազարիաշվիլին վճռաբեկ բողոք չի ներկայացրել, և նրա մասով դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ վճռաբեկ բողոքները բավարարվել են մասնակիորեն: Գ.Ղամբարյանի, Վ.Եղիազարյանի և Կ.Հովհաննիսյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 25-ի որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

5. Նոր քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հունվարի 10-ին որոշում է կայացրել Գ.Ղամբարյանի, Վ.Եղիազարյանի և Կ.Հովհաննիսյանի մասով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճիռը բեկանելու և փոփոխելու մասին:

Գ.Ղամբարյանին մեղսագրված արարքը վերաորակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-35-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Վ.Եղիազարյանին մեղսագրված արարքը վերաորակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 35-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Կ.Հովհաննիսյանին մեղսագրված արարքը վերաորակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 35-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետի կիրառմամբ Կ.Հովհաննիսյանն ազատվել է պատժի կրումից: Դատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

6. 2014 թվականի ապրիլի 22-ին դատապարտյալ Վ.Ազարիաշվիլու պաշտպան Ա.Փարսադանյանը վճռաբեկ բողոք է բերել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 25-ի որոշման դեմ:

Վճարելի դատարանի 2014 թվականի հունիսի 5-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Վ.Ազարիաշվիլին դատապարտվել է հետևյալ արարքների համար.

2010 թվականի հուլիսին Վ.Ազարիաշվիլին, Երևանի Տերյան փողոցի թիվ 72 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գրապահոց ապօրինի մուտք գործելով, առանձնապես խոշոր չափերով գրքերի գողություն կատարելու վերաբերյալ նախնական համաձայնության է եկել այդ շենքի պահպանությունն իրականացնող ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ ՀԶՊ գնդի ոստիկան Ե.Ղամբարյանի և մեկ այլ անձի հետ: 2010 թվականի հուլիսից մինչև 2011 թվականի նոյեմբերն ընկած ժամանակահատվածում Վ.Ազարիաշվիլին և մեկ այլ անձը ծառայություն իրականացնող Ե.Ղամբարյանի թողտվությամբ զիջերային ժամերին, պարբերաբար, ապօրինի մուտք են գործել «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի շենք, ապա գրապահոցների դռների վրայից դանակով առանձնացրել են պլաստիլինե դրոշմակնիքները, հարմարեցված բանալիներով բացել են դռները և գրապահոցներում ընտրել, առանձնացրել են առավել արժեքավոր գրքերը: Այնուհետև նրանք Ե.Ղամբարյանի մոտ թողել են իրենց հետ բերած դատարկ պայուսակներ, որոնցով վերջինս գրքերը գաղտնի դուրս է բերել գրադարանի շենքից և հանձնել է Վ.Ազարիաշվիլուն: Նշված եղանակով Վ.Ազարիաշվիլին, Ե.Ղամբարյանը և մեկ այլ անձը, 2010 թվականի հուլիսից մինչև 2011 թվականի նոյեմբերն ընկած ժամանակահատվածում «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի գրապահոց ապօրինի մուտք գործելով, գաղտնի հափշտակել են առանձնապես խոշոր չափերի՝ 7.500.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության, 1800-1900-ական թվականների հրատարակության, մատենագիտական նշանակություն ունեցող 150 միավոր ռուսերեն տարբեր գրքեր: Կատարած գործողությունների համար Վ.Ազարիաշվիլին Ե.Ղամբարյանին տվել է 20.000 ԱՄՆ դոլար ընդհանուր գումար, իսկ հափշտակած գրքերի մի մասը մեկ այլ անձի հետ իրացրել է քննությամբ չպարզված հանգամանքներում և անձանց:

Բացի այդ, Վ.Ազարիաշվիլին 2010-2011 թվականների ընթացքում պարբերաբար այցելել է Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանի հնատիպ, հազվագյուտ և արվեստի գրականության բաժին, որտեղ աշխատակիցներին ներկայացել է որպես պատմության թեմայով ուսումնասիրություններ կատարող գիտաշխատող: Այդ ընթացքում նա մտերմացել է բաժնի վարիչ Հ.Գուրգարյանի հետ և նրա թողտվությամբ ուսումնասիրել է իրեն հետաքրքրող ռուսերեն գրքերը: Հետագայում Հ.Գուրգարյանին հափշտակություն կատարելուն

դրդելու նպատակով Վ.Ազարիաշվիլին 2011 թվականի սեպտեմբերին նրան ի պահ է տվել 9.000 ԱՄՆ դոլար՝ այդ խոշոր գումարն իր մոտ պահելու հնարավորություն չունենալու մտացածին պատրվակով: Այդ եղանակով նա Հ.Դուրգարյանին զցել է նյութական կախվածության մեջ, ապա համոզելու և նյութապես շահագրգռելու եղանակով դրդել է նրան պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ կատարել առանձնապես խոշոր չափերով գրքերի հափշտակություն՝ յուրացման եղանակով:

Հ.Դուրգարյանը, հանդիսանալով պետական մարմնում կազմակերպական-տնօրինչական ու վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, իր պաշտոնեական դիրքն օգտագործելով, 2011 թվականի հոկտեմբերի կեսերին՝ գործով չպարզված օրը, Երևանում յուրացման եղանակով հափշտակել է Երևանի պետական համալսարանի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանին պատկանող, ռուս ժողովրդի 1700-1800-ական թվականների հրատարակության, մատենագիտական և աղբյուրագիտական նշանակություն ունեցող, իրեն վստահված, առանձնապես խոշոր չափերի՝ 5.627.400 ՀՀ դրամ ընդհանուր արժողության 17 միավոր ռուսերեն տարբեր գրքեր, որոնք նույն օրը հանձնել է Վ.Ազարիաշվիլուն և դրանց դիմաց նրանից ստացել է ևս 6.000 ԱՄՆ դոլար:

Բացի այդ, 2011 թվականի դեկտեմբերի կեսերին Վ.Ազարիաշվիլին նախնական համաձայնության է եկել Կ.Հովհաննիսյանի և Վ.Եղիազարյանի հետ՝ «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի գրապահոցներ ապօրինի մուտք գործելով՝ առանձնապես խոշոր չափերով գրքերի գողություն կատարելու վերաբերյալ: Հափշտակության կատարման վայրը և այնտեղ գտնվող գրքերը նախապես ուսումնասիրելու նպատակով նրանք ստացել են նույն շենքի պահպանությունն իրականացնող, ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ ՀԶՊ գնդի ոստիկան Դ.Ղամբարյանի՝ իրենց օժանդակելու վերաբերյալ համաձայնությունը: 2011 թվականի դեկտեմբերի 25-ի առավոտյան՝ ժամը 8-ի սահմաններում, առանձնապես խոշոր չափերի գրքերի գողության գործում Վ.Ազարիաշվիլուն և մյուսներին օժանդակելու նպատակով Դ.Ղամբարյանը բացել է «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի վարչական շենքի կենտրոնական մուտքի դուռը և ներս է թողել Վ.Ազարիաշվիլուն և Կ.Հովհաննիսյանին: Վերջիններս գրապահոցների դռների վրայից դանակով առանձնացրել են պլաստիկինե դրոշմակնիքները, հարմարեցված բանալիներով բացել են դռները և գրապահոցներում ուսումնասիրել են այնտեղ առկա գրքերը, դրանց տեղաբաշխումը, ինչպես նաև վերացրել են «Թամանյանական» մասնաճյուղի շենքի մուտքի դռան մոտ գտնվող խոչընդոտները՝ տեղահանելով դրսից դուռը բացելուն խոչընդոտող արգելաձողերը:

2011 թվականի դեկտեմբերի 26-ին՝ ժամը 3-ի սահմաններում, Վ.Ազարիաշվիլին, Կ.Հովհաննիսյանը և Վ.Եղիազարյանը, իրենց հետ վերցնելով հանցագործության կատարումը հեշտացնելու համար նախատեսված երկու լապտեր, դանակ, լինգ, սպորտային տասներկու պայուսակ, գրապահոցների դռների փականներին հարմարեցված բանալիների տրցակ, Վ.Եղիազարյանին պատկանող ավտոմեքենայով զնացել են Երևան քաղաքի Տերյան փողոց,

ապօրինի մուտք գործելու և առանձնապես խոշոր չափերով գողություն կատարելու նպատակով մոտեցել են «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի «Թամանյանական» մասնաճյուղի շենքի մուտքի դռանը, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով չեն կարողացել ավարտին հասցնել հանցագործությունը, քանի որ ոստիկանության աշխատակիցները նրանց բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժին (տե՛ս քրեական գործ, հատոր 11, թերթ 51-74):

8. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է. «(...) [Դ]ատարանը գրնում է, որ ամբաստանյալ Վաժա Վախթանգի Ազարիաշվիլու կողմից, նրա մեղավորությամբ, առանձնապես խոշոր չափերով գողություն կատարելիս ապացուցված է, նրա արարքը ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

Ապացուցված է նաև ամբաստանյալ Վաժա Վախթանգի Ազարիաշվիլու կողմից, նրա մեղավորությամբ առանձնապես խոշոր չափերով գողության փորձ կատարելը, նրա այդ արարքը նույնպես ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

Ապացուցված է նաև ամբաստանյալ Վաժա Վախթանգի Ազարիաշվիլու կողմից, նրա մեղավորությամբ առանձնապես խոշոր չափերով յուրացում կատարելուն դրդելը, նրա այդ արարքը նույնպես ճիշտ է որակված և համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 11, թերթ 51-74):

9. Վերաքննիչ դատարանն իր 2013 թվականի մարտի 25-ի որոշման մեջ նշել է. «(...) Վերաքննիչ դատարանը, վերլուծության և գնահատության ենթարկելով քրեական գործով ձեռք բերված ապացույցներն իրենց համակցությամբ, հանգում է այն հետևության, որ (...) Վաժա Ազարիաշվիլու (...) արարքներին տրվել է ճիշտ քրեախրավական գնահատական, և կիրառվել է քրեական այն օրենքը, որը ենթակա է եղել կիրառման (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթ 19-71):

3. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Ըստ բողոքի հեղինակի՝ ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում կայացված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Բողոքաբերը նշել է, որ Վ.Ազարիաշվիլուն ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքի նկարա-

գրությունը հանդիսանում է հանցագործության նախապատրաստություն, այլ ոչ թե հանցավոր՝ Վ.Ազարիաշվիլուն առաջադրված մեղադրանքի բովանդակությունից ակնհայտ է, որ հանցանք կատարելուն անմիջականորեն ուղղված որևէ գործողություն նա չի կատարել: Նրան մեղսագրվել են գործողություններ, որոնք ուղղված են հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելուն կամ հարմարեցնելուն, ինչպես նաև դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելուն: Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը վկայակոչել է սույն գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի և Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 10-ի որոշումները, որոնցով Վ.Ազարիաշվիլու հանցակիցների՝ Կ.Հովհաննիսյանի, Վ.Եղիազարյանի և Գ.Ղամբարյանի արարքներն առանձնապես խոշոր չափերով գողության փորձից վերադրակվել են որպես նախապատրաստություն:

Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ քրեական գործի նյութերում բացակայում է որևէ ապացույց, որը հիմք կտար եզրահանգելու, թե Վ.Ազարիաշվիլու և նրա հանցակիցների դիտավորությունը հատկապես ուղղված է եղել առանձնապես խոշոր, այլ ոչ թե խոշոր կամ զգալի չափերի գողություն կատարելուն:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը կարծիք է հայտնել, որ ստորադաս դատարանները Վ.Ազարիաշվիլու արարքին տվել են սխալ քրեաիրավական գնահատական, ճիշտ չեն կիրառել քրեական օրենքը, մասնավորապես, կիրառել են ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, որը ենթակա չէր կիրառման և չեն կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 35-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, որի հատկանիշներին համապատասխանում է Վ.Ազարիաշվիլու կատարած արարքը:

11. Բացի այդ, շարադրելով և վերլուծելով Վ.Ազարիաշվիլուն ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքները՝ բողոքաբերը կարծիք է հայտնել, որ դատական քննության ընթացքում հետազոտված ապացույցներով հերքվում է, որ Վ.Ազարիաշվիլին կատարել է գողության հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող որևէ գործողություն կամ Հ.Դուրգարյանին դրդել է կատարել առանձնապես խոշոր չափերի յուրացում:

Հետևաբար, Վ.Ազարիաշվիլու նկատմամբ ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերն օրինական և հիմնավոր չեն, քանի որ գործով ձեռք բերված ապացույցները բավարար չեն մեղադրանքը հաստատված համարելու համար:

12. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 25-ի որոշումը, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Վ.Ազարիաշվիլուն արդարացնել, ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը վերադրակել 35-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը վերադրակել 216-րդ հոդվածով և

նրա նկատմամբ այդ հողվածներով նշանակել մեղմ պատիժ, ինչպես նաև Վ.Ազարիաշվիլուն վերադարձնել վերջինիս պատկանող և Հ.Գուրգարյանի կողմից քննությանը ներկայացված 9.000 ԱՄՆ դոլարը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. Վ.Ազարիաշվիլու հանցակիցների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի և Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 10-ի որոշումների առկայության պայմաններում հիմնավոր՞ են արդյոք դատապարտյալ Վ.Ազարիաշվիլու արարքում առանձնապես խոշոր չափերով գողության հանցավորձի հատկանիշների առկայության և հանցագործության նախապատրաստության հատկանիշների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 25-ի դատական ակտի հետևությունները:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ *«Հանցավոր չ է համարվում ուղղակի դիտավորությանը կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անչի կամքից անկախ հանգամանքներով»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *«Հանցագործության նախապատրաստություն է համարվում ուղղակի դիտավորությանը հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելը կամ հարմարեցնելը, ինչպես նաև դիտավորությանը այլ պայմաններ ստեղծելը, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել այդ անչի կամքից անկախ հանգամանքներով»:*

Օրենքի միատեսակ կիրառության ապահովման իր սահմանադրական գործառույթն իրացնելով՝ սույն գործով Գ.Ղամբարյանի, Վ.Եղիազարյանի, Կ.Հովհաննիսյանի մասով կայացված որոշման մեջ Վճռաբեկ դատարանն արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ՝ նպատակ ունենալով հանցավորձի (ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդված) և հանցագործության նախապատրաստության (ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդված) սահմանազատման առումով ապահովել միասնական դատական պրակտիկա: Նշված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ *«(...) Վ.Ազարիաշվիլին, Կ.Հովհաննիսյանը և Վ.Եղիազարյանը, նախնական համաշայնության գալով առանձնապես խոշոր չափերով գրքերի համալրակություն կատարելու վերաբերյալ, իրենց հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով կատարել են որոշակի գործողություններ: Մասնավորապես, Վ.Ազարիաշվիլին և Կ.Հովհաննիսյանը Գ.Ղամբարյանի օժանդակությանը նախապես մուտք են գործել գրադարանի փրակով, որտեղ գրապահոցների դռների վրայից դանակով առանձնացրել են պլաստիկին դրոշմակնիքները, հարմարեցված բանալիներով բացել*

են դռները և գրասպահոցներում ուսումնասիրել են այնպեղ առկա գրքերը և դրանց տեղաբաշխումը, ինչպես նաև վերացրել են շենքի մուտքի դռան մուր գտնվող խոչընդոտները՝ տեղահանելով դրսից դուռը բացելուն խոչընդոտող արգելաչոյղերը: Հաջորդ օրը Վ. Ազարիաշվիլին, Կ. Հովհաննիսյանը և Վ. Եղիազարյանը, իրենց հետ վերցնելով հանցագործության կատարման համար նախատեսված գործիքներ և միջոցներ, ավտոմեքենայով մուտեցել են գողության կատարման վայրին՝ գրադարանի շենքին, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով չեն կարողացել մուտք գործել գրադարան և իրենց հանցավոր մտադրությունն իրականացնել:

Վ. Ազարիաշվիլու, Կ. Հովհաննիսյանի և Վ. Եղիազարյանի վերոնշյալ գործողություններն ինչպես նախաքննության մարմինը, այնպես էլ դատարանները որակել են որպես հանցափորձ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը պատշաճ հետազոտման և զնահատման չի ենթարկել քրեական գործում առկա բոլոր ապացույցները, ինչի արդյունքում չի պարզել, թե հարկապես որ փուլում է ընդհատվել Վ. Ազարիաշվիլու, Կ. Հովհաննիսյանի և Վ. Եղիազարյանի՝ հանցավոր մտադրության իրագործմանն ուղղված գործունեությունը: Վերը նշված խախտումը, որը կարող էր ազդել ամբաստանյալների արարքների որակման մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա քեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի մարտի 25-ի որոշումը:

Վճռաբեկ դատարանը գրնում է, որ սույն գործը պետք է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության, որը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի պահանջներով, պետք է պատշաճ հետազոտման և զնահատման ենթարկի գործում առկա ապացույցները, որից հետո միայն սույն որոշման 26-31-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գա համապատասխան եզրահանգման այն մասին, թե արդյոք մինչև ոստիկանության աշխատակիցների կողմից Վ. Ազարիաշվիլու, Կ. Հովհաննիսյանի և Վ. Եղիազարյանի գործողությունների խախտումը վերջիններս հասցրել են կատարել որևէ գործողություն, որով անմիջականորեն ուրնչգել են քրեատիրավական պաշտպանության ներքո գտնվող օբյեկտի դեմ, թե նրանց փաստացի կատարած արարքները սահմանափակվել են միայն պայմանների ստեղծմամբ, որոնք անմիջականորեն ուղղված են եղել հանցավոր մտադրության իրականացմանը:

Վերոգրյալ հանգամանքի պարզաբանումից հետո միայն հնարավոր կլինի իրավական զնահատական տալ ամբաստանյալներ Դ. Ղամբարյանի, Վ. Եղիազարյանի և Կ. Հովհաննիսյանի արարքներին և համապատասխան եզրահանգման գալ նրանց գործողություններում հանցափորձի կամ հանցագործության նախապատրաստության հարկանիշների առկայության վերաբերյալ (...)» (տե՛ս Դավիթ Ղամբարյանի, Վարդան Եղիազարյանի և Կարեն Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի

սեպտեմբերի 13-ի թիվ ԵԿԳ/0087/01/12 որոշման 32-33-րդ կետերը):

Այսպիսով, Վ.Ազարիաշվիլու հանցակիցների և նրանց պաշտպանների բողոքների քննության արդյունքում Վճռաբեկ դատարանը դեռևս 2013 թվականի սեպտեմբերի 13-ին կայացված որոշման մեջ անդրադարձել է Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 25-ի որոշման օրինականությանն ու հիմնավորվածությանը և արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը պատշաճ հետազոտման և գնահատման չի ենթարկել քրեական գործում առկա բոլոր ապացույցները, ինչի արդյունքում չի պարզել, թե հատկապես որ փուլում է ընդհատվել Վ.Ազարիաշվիլու, Կ.Հովհաննիսյանի և Վ.Եղիազարյանի՝ հանցավոր մտադրության իրագործմանն ուղղված գործունեությունը:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Եթե գործով դատապարտված են մի քանի անձ, իսկ բողոքը բերված է դատապարտյալներից միայն մեկի կամ մի քանիսի նկատմամբ, դատարանը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում պարտավոր է գործն սրուզել միայն Կ.Հովհաննիսյանի վերաբերյալ»:*

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 25-ի որոշման դեմ օրենքով սահմանված ժամկետում վճռաբեկ բողոքներ բերել են միայն Գ.Ղամբարյանի պաշտպան Է.Աղաջանյանը, Վ.Եղիազարյանի պաշտպան Վ.Գևորգյանը, Կ.Հովհաննիսյանը և նրա պաշտպան Ս.Սաֆարյանը: Վ.Ազարիաշվիլին վճռաբեկ բողոք չի ներկայացրել, հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վճռաբեկ դատարանն իրավասու չի եղել գործը ստուգման ենթարկել նաև նրա մասով:

Արդյունքում Վճռաբեկ դատարանը 2013 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 25-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության՝ միայն Գ.Ղամբարյանի, Վ.Եղիազարյանի և Կ.Հովհաննիսյանի մասով (տե՛ս սույն որոշման 4-րդ կետը), իսկ Վ.Ազարիաշվիլու մասով Վերաքննիչ դատարանի դատական ակտը թողնվել է անփոփոխ:

Նոր քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հունվարի 10-ին որոշում է կայացրել Գ.Ղամբարյանի, Վ.Եղիազարյանի և Կ.Հովհաննիսյանի մասով Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի դատավճիռը բեկանելու և փոփոխելու մասին: Նշված անձանց մեղադրանքներն առանձնապես խոշոր չափերով գողության հանցավորձից վերադրակվել են հանցագործության նախապատրաստության (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

16. Հիմք ընդունելով Գ.Ղամբարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև սույն որոշման 15-րդ կետում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատապարտյալ Վ.Ազարիաշվիլու արարքում առանձնապես խոշոր չափերով գողության հանցավորձի հատկանիշների առկայության և հանցագործության նախապատրաստության հատկանիշների

բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 25-ի դատական ակտի հետևությունները (տե՛ս սույն որոշման 8-9-րդ կետերը) հիմնավոր չեն:

Վերոգրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա Վ.Ազարիաշվիլու մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 25-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

17. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բեկանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերաքննիչ դատարանում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

18. Մինևույն ժամանակ, նկատի ունենալով, որ գործը պետք է ուղարկվի ստորադաս դատարան՝ նոր քննության, Վճռաբեկ դատարանը նպատակահարմար չի համարում անդրադառնալ բողոքաբերի մյուս փաստարկներին (տե՛ս սույն որոշման 10-11-րդ կետերը):

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դատապարտյալ Վաթա Վախթանգի Ազարիաշվիլու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի մարտի 25-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

36.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԵԿԳ/0163/01/13

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Քրեական գործ թիվ ԵԿԳ/0163/01/13

Նախագահող դատավոր՝ Ե.Գարբինյան

Դատավորներ՝ Գ.Ավետիսյան

Ս.Չիչոյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի օգոստոսի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արտաշ Իլյայի Շաքարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հունվարի 16-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Շաքարյանի պաշտպան Հ.Գավթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի ապրիլի 14-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 13144113 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2013 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ Արտաշ Շաքարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով:

2013 թվականի հունիսի 5-ին Ա.Շաքարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2013 թվականի հունիսի 5-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 15117313 քրեական գործը:

2013 թվականի հունիսի 6-ին Ա.Շաքարյանը ձերբակալվել է:

2013 թվականի հունիսի 7-ին թիվ 13144113 քրեական գործը միացվել է թիվ 15117313 քրեական գործին:

Նախաքննության մարմնի 2013 թվականի հունիսի 7-ի որոշմամբ Ա.Շաքարյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 112-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրն Ա.Շաքարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2013 թվականի օգոստոսի 24-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, 2013 թվականի նոյեմբերի 5-ի դատավճռով Ա.Շաքարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 112-րդ հոդվածի 1-ին մասով: Ամբաստանյալ Ա.Շաքարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 2 (երկու) տարի ժամկետով, իսկ 112-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն զումարելու միջոցով, Ա.Շաքարյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով:

3. Ամբաստանյալ Ա.Շաքարյանի և նրա պաշտպան Ա.Ավագյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հունվարի 16-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 5-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 16-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Շաքարյանի պաշտպան Հ.Գավթյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 12-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Ա.Շաքարյանը դատապարտվել է այն բանի համար, որ նա «(...) գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությունը 2013թ. սպրիլի 13-ի գիշերը՝ ժամը 03:00-ի սահմաններում, որդու՝ Գոռ Շաքարյանի օժանդակությամբ, վերջինիս կողմից վարվող «Օպել» մակնիշի ավտոմեքենայով գնացել են Երևան քաղաքի Արմենակյան փողոցի թիվ 2/4 հասցեում գրվելով՝ «Ավալոն» սահմանափակ պարտախանավարությանը ընկերության կողմից իրականացվող շինարարական փորձեր, որտեղ Ա.Շաքարյանն ապամոնտաժել և գաղտնի հափշտակել է ընկերությանը պատկանող գզալի չափի՝ 324.000 ՀՀ դրամ արժողության, աշխարակային կռունկի էլեկտրասնուցման 54 մետր էլեկտրական մալուխները:

Այնուհետև, 2013թ. հունիսի 5-ին Արտաշ և Գոռ Շաքարյանների մասնակցությամբ կատարված քննչական փորձարարության ավարտից հետո՝ ժամը 18:46-ին, «Ավալոն» սահմանափակ պարտախանավարությանը ընկերության պահակ Արթիկ Բաբայանն Արմենակյան փողոցի թիվ 2/4 հասցեի մուրակայքում մտնելից է Արտաշ և Գոռ Շաքարյաններին և կատարված հանցագործության համար նախարել վերջիններին: Այդ կապակցությամբ Արտաշ և Գոռ Շաքարյանների ու Արթիկ Բաբայանի միջև վիճարանություն և ծեծկռտուք է սկսվել, որի ընթացքում Ա.Շաքարյանը գերակից վերցրած քարով հարվածել է Ա.Բաբայանի գլխի շրջանին և նրա առողջությանը դիտարկությունը պարձառել ծանր վնաս» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 72-73):

6. ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տեղեկանքի համաձայն՝ Ա.Շաքարյանը Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2004 թվականի հուլիսի 7-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել տուգանք (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 174):

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռի ներածական մասում արձանագրված է, որ Ա.Շաքարյանը հանդիսանում է դատվածություն չունեցող անձ: Նույն դատավճռի պատճառաբանական մասում նշված է հետևյալը. «(...) Ամբաստանյալների նկատմամբ պարիժ նշանակելիս՝ պարիժների տեսակն ու չափը որոշելիս, դատարանը հաշվի է առնում ինչպես նրանց կատարած հանցագործությունների քնույթը, հանրության համար վրանգավորության աստիճանը և հետևանքները, այնպես էլ արագացված կարգով անցկացված դատական քննության ընթացքում ուսումնասիրված՝ նրանց անչը քնութագրող տվյալներն ու պարտախանավորությունը և պարիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները:

Որպես ամբաստանյալ Ա.Շաքարյանի պարասխանարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանքներ՝ դատարանը հաշվի է առնում, որ նա ինքնակամ ներկայացել է ոստիկանության բաժին, համաչայնվեց մեղադրանքի հետ և զղջաց կատարած հանցանքների համար:

Որպես ամբաստանյալի անչը բնութագրող փոխյալ՝ դատարանը հաշվի է առնում, որ նա բնութագրվում է դրական և որ նախկինում նույնպես կատարել է հանցագործություն:

Միաժամանակ, հաշվի առնելով ամբաստանյալ Ա.Շաքարյանի անչը բնութագրող փոխյալները, դատարանը գրնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով որակված՝ նրա կատարած հանցագործության համար նախատեսված նվազ խիստ պարժարեսակը չի կարող սպահովել պարժի նպարակները, և նա պետք է դարսպարվի ազարագրկման, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նրա նկարմամք պարիժ նշանակելիս՝ որպես պարասխանարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանք, հաշվի է առնում րոժողի վարքագժի հակաօրինականությունը, այսինքն՝ այն, որ նախահարչակ է եղել րոժողն ու դրանով է պայմանավորվել ամբաստանյալ Ա.Շաքարյանի կատարած հանցագործությունը:

Այսպիսով, դատարանը գրնում է, որ ամբաստանյալ Ա.Շաքարյանի նկարմամք՝ որպես պարիժ պետք է նշանակվի ազարագրկում, որը նա պետք է կրի, ինչն անհրաժեշտ ու քավարար է նակ սոցիալական արդարությունը վերականգնելու և նրա կողմից նոր հանցագործությունների կատարումը կանխելու համար: (...)» (տե՛ս քրեական գորժ, հատոր 3, քերք 72-73):

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաժայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը գրնում է, որ Առաջին արյանի դատարանը քավարար չափով սրուզման և գնահարության է ենթարկել կատարած հանցանքների հանրության համար վրանգավորության սարիժանն ու բնույթը, քրեական օրենսդրությանք պահպանվող կոնկրետ հասարակական հարաբերության սոցիալական նշանակությունը, կյանքի և առողջության ու սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի ոլորրում պետության քրեական քաղաքականության ուղղվածությունը, ամբաստանյալ Ա.Շաքարյանի անչը բնութագրող փոխյալները (նախկինում նույնպես կատարել է հանցագործություն)՝ ամբաստանյալի նկարմամք նշանակելով պարիժ ազարագրկման չեով:

(...)

Որպես ամբաստանյալի անչը բնութագրող փոխյալ՝ դատարանը հաշվի է առել, որ նա բնութագրվում է դրական և որ նախկինում նույնպես կատարել է հանցագործություն:

Դատարանը ամբաստանյալ Ա.Շաքարյանի նկարմամք ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով պարիժ նշանակելիս՝ որպես պարասխանարվությունն ու պարիժը մեղմացնող հանգամանք, հաշվի է առել րոժողի վարքագժի հակաօրինականությունը:

Վերը նշված բոլոր հանգամանքներն էլ հաշվի առնելով՝ Դատարանն իրավացիորեն գտել է, որ ամբաստանյալ Ա.Շաքարյանն իր նկատմամբ նշանակված պատիժը պետք է կրի: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 120-123):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես, խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ և 61-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ և 360-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները դատական ակտեր կայացնելիս որպես ամբաստանյալի անձը բացասաբար բնութագրող տվյալ են համարել նրա մարված դատվածությունը, և արագացված դատաքննության պայմաններում Ա.Շաքարյանի նկատմամբ նշանակել են ակնհայտ խիստ պատիժ:

Ստորադաս դատարանները որպես Ա.Շաքարյանի պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ չեն գնահատել այն, որ վերջինս իրեն վերագրվող գողությունը կատարել է կյանքի ծանրահանգամանքների զուգորդման հետևանքով՝ ընտանիքի համար գոյատևման միջոց հայթհայթելու նպատակով: Բացի այդ, հափշտակված գույքը հետագայում վերադարձվել է տիրոջը: Ինչ վերաբերում է Ա.Բաբայանի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելուն, ապա վեճը տեղի է ունեցել տուժողի անօրինական գործողությունների պատճառով՝ նա է նախահարձակ եղել և ծեծի ենթարկել քննչական փորձարարությանը մասնակցելու նպատակով շինարարական հրապարակ եկած հայր և որդի Շաքարյաններին՝ կոտրելով Ա.Շաքարյանի քթոսկրը: Միայն դրանից հետո է Ա.Շաքարյանը գետնից վերցրած քարով հարվածել Ա.Բաբայանի գլխին՝ որդուն և իրեն պաշտպանելու նպատակով: Ա.Շաքարյանն ամբողջությամբ ընդունել է իր մեղքը, տվել խոստովանական ցուցմունքներ, հատուցել է տուժողի բուժման ծախսերը:

Վերոնշյալ հանգամանքների վկայակոչմամբ՝ բողոքաբերը կարծիք է հայտնել, որ մալուխ գողանալու համար Ա.Շաքարյանի նկատմամբ նշանակված 2 տարի ժամկետով ազատազրկումն ակնհայտ խիստ պատիժ է, նկատի ունենալով, որ նրան մեղսագրված արարքի համար օրենքով նախատեսված է նաև տուգանքի ձևով պատիժ: Չնայած դրան՝ ստորադաս դատարանները չեն հիմնավորել հոդվածի սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատժատեսակը չկիրառելը, ինչպես նաև Ա.Շաքարյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիությունը:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է պատժի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունվարի 16-ի որոշումը և Ա.Շաքարյանի նկատմամբ նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված նվազ խիստ պատժատեսակ՝ տուգանք, կամ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել, երկու մեղադրանքների համակցությամբ մեղմ պատիժ սահմանել և Ա.Շաքարյանի նկատմամբ կիրառել «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-րդ որոշումը:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մարված կամ հանված դատվածությունը պատիժ նշանակելիս հաշվի առնելու անթույլատրելիության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյո՞ք նախկինում հանցանք կատարած լինելը որպես հանցավորի անձնավորությունը բնութագրող հանգամանք դիտելու մասին ստորադաս դատարանների հետևություններն այն պայմաններում, երբ տվյալ հանցագործության համար Ա.Շաքարյանի դատվածությունը մարված է:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և քախարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող փյվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:*

Պատիժ նշանակելիս հանցավորի անձնավորությունը հաշվի առնելու անհրաժեշտության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է

Ս.Սարգսյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ «(...) «հանցավորի անչնավորություն» եզրույթն ի փարբերություն «հանցագործության սուբյեկտ» եզրույթի, ավելի ընդարձակ է, և օժտված է սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական բնութագրերով: ՀՀ գործող քրեական օրենսդրության իմաստով «հանցավորի անչնավորություն» եզրույթը դիտարկվում է որպես քրեական պատասխանատվության և պարժի անհատականացման հիմք, հանցավորի անչը բնութագրող առանձին հատկանիշները և վարքագիծը օրենքում նախատեսված են որպես պատասխանատվությունը և պարժի մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ, ինչպես նաև դատապարտյալին պարժից ազատելու նախապայման:

Հիմք ընդունելով (...) ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված դրույթն այն մասին, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են (հոդված 3), մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների և ազատությունների անբաժանելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից (հոդված 14)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարժի անհատականացման ժամանակ հանցավորի անչը բնութագրող տվյալները հաշվի առնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես պարժի նպատակների իրականացման, այնպես էլ անչի արժանապատվության հարգման սահմանադրական պահանջի առկայությամբ» (տե՛ս Սերոբ Ֆրունզիկի Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԳ/0109/01/12 որոշման 36-37-րդ կետերը):

Վերահաստատելով Ս.Սարգսյանի գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն կատարված հանցագործության բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի, այլև հանցավորի անձը բնութագրող տվյալների՝ նրա սոցիալ-հոգեբանական, քրեաիրավական և մի շարք այլ հատկանիշների համակցության ճիշտ գնահատումը: Հանցավորի անձը բնութագրող տվյալներն էական նշանակություն ունեն քրեաիրավական ներգործության այս կամ այն միջոցի ընտրության համար, հետևաբար պատիժ նշանակելիս դատարանը պարտավոր է բացահայտել և օբյեկտիվորեն հաշվի առնել նրա ֆիզիոլոգիական և սոցիալական առանձնահատկությունները: Դատարանի նշված պարտականությունն ուղղակիորեն բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի տրամաբանությունից, որի համաձայն՝ պատժի նպատակը, սոցիալական արդարությունը վերականգնելուց բացի, դատապարտյալի ուղղումն է և նոր հանցագործությունների կանխումը:

Հանցավորի անձնավորությունը, նրա սոցիալապես էական նշանակություն ունեցող հատկանիշները բացահայտվում են վերջինիս վարքի, հասարակության մեջ նրա իրականացրած գործունեության միջոցով: Հետևաբար, պատասխանատվության անհատականացման համար

անհրաժեշտ է իմանալ ոչ միայն այն պայմանները, որոնցում ձևավորվել է հանցավորի անձը, այլև նրա բարոյահոգեբանական և քրեաիրավական բնութագրերը, որոնք իրենց արտացոլումն են գտել արարքի, մասնավորապես, հանցագործության կատարման մեջ: Այս առումով, նախկինում հանցանք կատարած լինելն անշուշտ հանցավորի անձը բացասաբար բնութագրող հանգամանք է, ինչը սակայն չի նշանակում, որ անձի նախկին հանցավոր գործունեությունը յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվի նրա նկատմամբ նոր հանցագործության համար պատիժ սահմանելիս:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտարկությանը հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտարկությանը կատարված հանցանքի համար:

(...)

4. Այն հանցանքի համար դատվածությունը, որը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև այն հանցանքները, որոնք կատարվել են մինչև անձի փաստաբար փարիս լրանալը, ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում»:

ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործությունների ռեցիդիվի, վրանգավոր և առանձնապես վրանգավոր ռեցիդիվի դեպքում պարիժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված հանցագործությունների քանակը, բնույթը և ծանրությունը, այն հանգամանքները, որոնց հետևանքով նախկին պարիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար, ինչպես նաև նոր հանցագործության բնույթը, ծանրությունը և հետևանքները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անչը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը:

2. Դատվածությունը, սույն օրենսգրքին համապատասխան, հաշվի է առնվում հանցագործության ռեցիդիվի դեպքում և պարիժ նշանակելիս:

(...)

8. Դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: (...):»:

Վճռաբեկ դատարանը Ս.Աղախանյանի գործով որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) [ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի] վերլուծությունից հետևում է, որ դատվածությունը բնորոշվում է որպես անձի հանրային բարձր վրանգավորության մասին վկայող հանգամանք, հետևաբար դատվածություն ունեցող անձի համար նոր հանցագործություն կատարելու դեպքում ծագում են քրեաիրավական բնույթի բացասական հետևանքներ: Միևնույն ժամանակ, նախկինում դատվածություն ունենալը չի նշանակում, որն անձն իր ամբողջ կյանքի ընթացքում համարվում է հանրային բարձր վրանգավորություն ունեցող: Քրեական օրենքը նախատեսում է

դատվածությունը հանելու կամ մարելու հնարավորություն, որի դեպքում անչը օրենքի տեսանկյունից համարվում է որևէ հանցանք չկատարած, ուստի և նրա դատվածությունը չի կարող առաջացնել քրեախրավական բնույթի բացասական հետևանքներ, այդ թվում՝ չի կարող հաշվի առնվել նոր հանցագործության համար պատիժ նշանակելիս» (տե՛ս Սեյրան Կառլենի Ադախանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԳ/0082/01/12 որոշման 21-22-րդ կետերը):

Վերահաստատելով և զարգացնելով Ս. Ադախանյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատվածությունն անձի յուրահատուկ իրավական դրությունն է, որն առաջանում է մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից և տևում է մինչև դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը: Գիտավորյալ հանցագործության համար դատվածություն ունեցող անձի կողմից նոր դիտավորյալ հանցագործություն կատարելու դեպքում ծագում են քրեախրավական բնույթի բացասական հետևանքներ, այդ թվում՝ պատիժ նշանակելիս դատարանը, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից բացի, ղեկավարվում է նաև հատուկ դրույթներով, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով: Հիշատակված քրեախրավական նորմը նախատեսում է հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կարգ, որով օրենսդիրն արդեն իսկ հաշվի է առել անձի կողմից նախկինում հանցանք կատարած լինելու հանգամանքը և հանցավորի համար նախատեսել է բացասական քրեախրավական հետևանքներ:

Մյուս կողմից, քրեական օրենքը նախատեսում է դատվածությունը հանելու և մարելու կարգ, որի դեպքում վերացվում են դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: Օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված դատվածությունը ռեցիդիվը գնահատելիս հաշվի չի առնվում, ինչպես նաև չի կարող հաշվի առնվել անձի նկատմամբ նոր հանցագործության համար պատիժ նշանակելիս: Այսինքն՝ եթե պատիժը կրելուց հետո անձը դրսևորել է անբասիր վարքագիծ, և նրա դատվածությունը մարվել է կամ դատարանի համապատասխան որոշմամբ հանվել է, ապա նա քրեական օրենքի տեսանկյունից համարվում է նախկինում հանցագործություն չկատարած:

15. Սույն որոշման 13-րդ և 14-րդ կետերում շարադրված իրավանորմերը և իրավական դիրքորոշումները համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մարված կամ հանված դատվածության պայմաններում անձի կողմից նախկինում հանցանք կատարած լինելը որպես նրա անձը բացասաբար բնութագրող հանգամանք հաշվի առնելն անթույլատրելի է: Նախկինում հանցանք կատարած լինելը դիտելով որպես հանցավորի բարոյահոգեբանական և քրեախրավական բնութագիր՝ դատարանը պարտավոր է այն ուղակիորեն արտացոլել պատժի և պատասխանատվության անհատականացման ժամանակ: Մինչդեռ, մարված կամ հանված դատվածության պայմաններում անձը քրեական օրենքի իմաստով համարվում է հանցագործություն չկատարած, և նրա նախկին դատվածությունը քրեախրավական հետևանք առաջաց-

նել չի կարող, այդ թվում՝ չի կարող անդրադառնալ նոր հանցագործության համար նշանակվելիք պատժի վրա:

Ուստի, մարված կամ հանված դատվածության պայմաններում նախկինում հանցանք կատարած լինելը դիտելով որպես հանցավորի անձնավորությունը բացասաբար բնութագրող հանգամանք՝ դատարանը ոչ միայն կիմաստագրկի դատվածությունը հանելու, մարելու քրեախրավական կառուցակարգերը, այլև կարող է խախտել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները:

16. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Շաքարյանը 2004 թվականի հուլիսի 7-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և դատապարտվել տուգանքի (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է, որ Ա.Շաքարյանի դատվածությունը մարված է: Միևնույն ժամանակ, որպես Ա.Շաքարյանի անձը բնութագրող հանգամանք դատարանը հաշվի է առել այն, որ ամբաստանյալը նախկինում կատարել է հանցագործություն: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ ամբաստանյալ Ա.Շաքարյանի նկատմամբ պետք է նշանակել ազատագրկման ձևով պատիժ, որը նա պետք է կրի, ինչն անհրաժեշտ ու բավարար է սոցիալական արդարությունը վերականգնելու և նրա կողմից նոր հանցագործությունների կատարումը կանխելու համար (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանը բավարար չափով ստուգման և գնահատման է ենթարկել կատարված հանցագործությունների հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը, ինչպես նաև ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, մասնավորապես այն, որ նա նախկինում մույնպես կատարել է հանցագործություն, ինչի արդյունքում Ա.Շաքարյանի նկատմամբ նշանակել է ազատագրկման ձևով համաչափ պատիժ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Փաստորեն, Ա.Շաքարյանը նախկինում դատապարտված է եղել, և դատվածությունն օրենքով սահմանված կարգով մարվել է: Չնայած այդ հանգամանքին՝ Ա.Շաքարյանի նկատմամբ պատիժ նշանակելիս որպես նրա անձը բացասաբար բնութագրող տվյալ Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել այն, որ նա նախկինում հանցագործություն է կատարել, իսկ Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարել դա:

17. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-15-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախկինում հանցանք կատարած լինելը որպես հանցավորի անձնավորությունը բնութագրող հանգամանք դիտելու մասին ստորադաս դատարանների հետևություններն այն պայմաններում, երբ տվյալ հանցագործության համար Ա.Շաքարյանի դատվածությունը մարված է, իրավաչափ չեն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Շաքարյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանը որպես հանցավորի անձը բնութագրող հանգամանք է դիտել այնպիսի փաստական տվյալ, որը որպես այդպիսին չէր կարող գնահատվել: Վերաքննիչ դատարանն իր հերթին իրավաչափ է համարել վերոգրյալը՝ դրանով իսկ խախտելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 61-րդ և 84-րդ հոդվածների պահանջները, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի իմաստով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է և հանգեցրել է նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտի կայացմանը:

Վերը նշված նյութական իրավունքի խախտումները, որոնք կարող էին ազդել պատժի մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

18. Ինչ վերաբերում է ամբաստանյալ Ա.Շաքարյանի նկատմամբ ակնհայտ խիստ պատիժ նշանակված լինելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հարցին հնարավոր է անդրադառնալ միայն սույն որոշման մեջ արձանագրված խախտումը վերացնելուց հետո:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արտաշ Իլյայի Շաքարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հունվարի 16-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

37.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԳԴ/0038/01/13
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ԳԴ/0038/01/13
Նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան
Դատավորներ՝ Ա.Գանիելյան
Լ.Թադևոսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈԴՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան	Լ.ԱՎԱԳՅԱՆԻ

2014 թվականի օգոստոսի 15-ին

բ.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վանիկ Խաչիկի Շահինյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի ապրիլի 10-ի որոշման դեմ ամբաստանյալ Վ.Շահինյանի պաշտպան Լ.Ավագյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2005 թվականի հունվարի 3-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 40100105 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2005 թվականի հունվարի 18-ի որոշմամբ Վանիկ Շահինյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավվել է որպես մեղադրյալ:

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2005 թվականի հունվարի 18-ի որոշմամբ Վ.Շահինյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2005 թվականի հունվարի 19-ին Վ.Շահինյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, իսկ նույն թվականի մարտի 3-ին քրեական գործի վարույթը կասեցվել է՝ Վ.Շահինյանի գտնվելու վայրն անհայտ լինելու պատճառաբանությամբ:

2013 թվականի հունիսի 21-ին Վ.Շահինյանը հայտնաբերվել և արգելանքի է վերցվել ՌԴ իրավապահ մարմինների կողմից:

2013 թվականի նոյեմբերի 9-ին Վ.Շահինյանը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն: Նույն օրը թիվ 40100105 քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ վերահաստատվել է Վ.Շահինյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նույն դատարանի 2005 թվականի հունվարի 18-ի որոշումը՝ կալանքի սկիզբը հաշվելով 2013 թվականի նոյեմբերի 9-ից:

2013 թվականի դեկտեմբերի 9-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունվարի 24-ի դատավճռով Վ.Շահինյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետի կիրառմամբ՝ Վ.Շահինյանն ազատվել է նշանակված պատիժը կրելուց: Ամբաստանյալ Վ.Շահինյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերացվել է, և նա ազատ է արձակվել դատական նիստի դահլիճում:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի ապրիլի 10-ին որոշում է կայացրել բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունվարի 24-ի դատավճիռը պատժի մասով բեկանելու և փոփոխելու մասին: Վ.Շահինյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կարգով՝ Վ.Շահինյանի նկատմամբ նշանակված պատժին հաշվակցվել է նրա

անազատության մեջ գտնվելու 2 ամիս 15 օրը, և վերջնական թողնվել է կրելու ազատագրելու՝ 3 տարի 9 ամիս 15 օր ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է Վ.Շահինյանին արգելանքի վերցնելու օրվանից:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի ապրիլի 10-ի որոշման դեմ ամբաստանյալ Վ.Շահինյանի պաշտպան Լ.Ավագյանը բերել է վճարելի բողոք, որը վճարելի դատարանի 2014 թվականի հունիսի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Վ.Շահինյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ «(...) 2004 թվականի դեկտեմբերի 29-ին՝ ժամը 18-ի սահմաններում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Ազատության 47-րդ շենքի բակում, անհիմն վիճաբանության մեջ է մտնել Պարթիկ Ղազարյանի հետ և իր մոտ եղած դանակով դիտավորությամբ հարվածներ է հասցրել Պարթիկ Ղազարյանի դեմքին, գլխին ու որովայնին՝ նրա առողջությանը պարտադրելով ծանր վնաս՝ կյանքին վրանգ սպառնացող» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 75-76):

6. ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի բաժնի պետի 2013 թվականի հունիսի 21-ի թիվ 52/2073 գրության համաձայն՝ հետախուզվող Վ.Շահինյանը 2013 թվականի հունիսի 21-ին հայտնաբերվել է ձերբակալվել է ՌԴ իրավապահ մարմինների կողմից (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 100):

ՌԴ Ուֆա քաղաքի Կիրովի շրջանի դատարանի 2013 թվականի հունիսի 22-ի որոշմամբ Վ.Շահինյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով:

ՌԴ Ուֆա քաղաքի Կիրովի շրջանի դատարանի 2013 թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ Վ.Շահինյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 21-ը (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 109):

7. ՌԴ գլխավոր դատախազի տեղակալի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի գրության համաձայն՝ ՌԴ գլխավոր դատախազության կողմից բավարարվել է ՀՀ գլխավոր դատախազության հարցումը՝ Վ.Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու համար հանձնելու մասին, և ՌԴ իրավասու մարմինն հանձնարարվել է իրականացնել Վ.Շահինյանի հանձնումը ՀՀ իրավասու մարմիններին (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 117):

ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի բաժնի պետի 2013 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 52/3760 գրության համաձայն՝

հետախուզվող Վ.Շահինյանը 2013 թվականի նոյեմբերի 9-ին «Զվարթնոց» օդանավակայանից տարվել է ոստիկանության Գավառի բաժին (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 118):

8. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է հետևյալը. «Դատարանն ամբաստանյալ Վանիկ Շահինյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առնում ինչպես նրա կատարած հանցագործության բնույթն ու հասարակական վրանգավորության աստիճանը, այնպես էլ նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող այն հանգամանքները, որ գոչում է կատարածի համար, բնութագրվում է դրական, ինձամքին ունի երեք անձ, այդ թվում՝ մինչև տասնչորս տարեկան երկու երեխա՝ 27.06.2004 թվականին ծնված Կարինա Անյոնովային և 17.01.2013 թվականին ծնված Մարիա Վանիկի Անյոնովային, հաշտվել է տուժողի հետ, վերջինս որևէ պահանջ, բողոք չներկայացրեց:

Ամբաստանյալ Վանիկ Շահինյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ դատարանը չի արձանագրում:

Նկատի ունենալով, որ ամբաստանյալի նկատմամբ համաներում կիրառելու սահմանափակումներ չկան, դատարանը գրնում է, որ Վանիկ Շահինյանի նկատմամբ պետք է կիրառել ՀՀ ԱԺ «ՀՀ Անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 2013 թվականի հոկտեմբերի 03-ի որոշումը և այդ որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա՝ Վանիկ Շահինյանին պետք է ազատել դատավճռով նշանակված պատիժից: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 75-76):

9. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) [Ամբաստանյալ Վանիկ Շահինյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սանկցիայի շրջանակներում պատիժ նշանակելիս, դատարանը, թեև իր դատական ակտով արձանագրել է, որ պատիժ նշանակելիս հաշվի է առնում կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վրանգավորության աստիճանը, սակայն իրականում այդպիսիք բավարար չափով ստուգման ու գնահատման չի ենթարկել, չի բացահայտել կատարված կոնկրետ հանցանքի առանձնահատուկ հատկանիշները, որոնք ազդել են ամբաստանյալին վերագրվող արարքի հանրության համար վրանգավորության աստիճանի վրա (հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, դեպքի պահին, ամբաստանյալի կողմից նախապես վերցված դանակով տուժողին հասցված հարվածների քանակը, մարմնական վնասվածքների պարճառման մեխանիզմն ու դրանց տեղակայումը, ըստ դատարժեկական փորձագետի 07.01.2005 թվականի թիվ 7 եզրակացության հերևությունների՝ քաղ. Պարբիկ Նորիկի Ղազարյանի վնասվածքները գլխի մազածածկ մասի, դեմքի շրջանի գծային քերծվածքների, որովայնի կրթածծակած քափանցող վերքերի, փայծախի վնասումով և փայծախի տրավմատիկ հեռացումով, հասցվել են սուր կրթող-ծակող գործիքով, ինչպիսին կարող է լինել դանակը, նշված ժամկետում, որոնք առաջացրել են առողջությանը

ծանր վնաս, կյանքին վրանգ սպառնացող), այն, որ դեպքից անմիջապես հետո ամբաստանյալը բաքնվել է քննությունից և շուրջ ութ տարի գտնվել է հետախուզման մեջ և հայրնաքերվել Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից: Վերը նշված հանգամանքներն իրենց համակցության մեջ, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, ակնհայտորեն բարձրացնում են ինչպես հանցավորի անչի, այնպես էլ նրա կողմից կատարված արարքի հանրային վրանգավորության աստիճանն ու բնույթը: Վերը քվարկված հանգամանքների անկրեամամբ՝ դատարանն ամբաստանյալի նկատմամբ նշանակել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պարիժ, որն անարդարացի է՝ ակնհայտ մեղմ լինելու պարճառով և չի համապատասխանում ամբաստանյալին վերագրվող հանցագործության բնույթին ու հասարակական վրանգավորության աստիճանին, այն կատարելու հանգամանքներին, հանցավորի անչին և դրանով հնարավոր չէ հասնել պարժի նպատակների իրագործմանը: (...)

Միևնույն ժամանակ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ամբաստանյալ Վանիկ Շահինյանը չեքրակալվել է 2013 թվականի նոյեմբերի 09-ին, իսկ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, որը վիճարկվող դատական ակտով՝ դատարանի 2014 թվականի հունվարի 24-ի դատավճռով վերացվել է և նա ազատ է արձակվել դատական նիստի դադարից, այսինքն մինչև դատարանի կողմից սույն գործով դատավճիռ կայացնելը, ամբաստանյալ Վանիկ Շահինյանը 2 ամիս և 15 օր գտնվել է փաստացի անազատության մեջ (...), ուստի ամբաստանյալ Վանիկ Շահինյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակվող պարժին պետք է հաշվակցել ամբաստանյալի՝ կալանքի տակ գտնվելու 2 /երկու/ ամիս և 15 /տասնհինգ/ օր ժամկետը՝ սահմանելով վերջնական պարիժ: (...)

Անդրադառնալով ամբաստանյալ Վանիկ Շահինյանի նկատմամբ Համաներման ակտի կիրառման հարցին, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

(...) [Ք]րեական գործում առկա է 29.10.2013 թվականին փրված I-AP № 618873 հայրությունը ճանաչելու մասին վկայականը, ըստ որի՝ Վանիկ Խաչիկի Շահինյանը ճանաչվել է 17.01.2013 թվականին ծնված Մարինա Իվանի Անտոնովայի հայրը:

Այս պայմաններում, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Վանիկ Շահինյանի նկատմամբ Համաներման ակտի 2-րդ կետի 4-րդ ենթակետը կիրառելի չէ, քանի որ Համաներման ակտի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ վերջինս մինչև երեք տարեկան երեխա չի ունեցել» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 47-57):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտում, մասնավորապես, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 10-րդ, 61-րդ, 62-րդ, 69-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ և 385-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ քրեական գործի նյութերում բացակայում են Վ.Շահինյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքները, նրա անձը բնութագրվում է բացառապես դրականորեն, նախկինում արատավորված չի եղել, խնամքին ունի անչափահաս երեխա, հաշտվել է տուժողի հետ, վերջինս որևէ պարտք ու պահանջ չունի, խնդրել է ամբաստանյալի նկատմամբ նշանակել ազատագրկման հետ կապ չունեցող պատիժ: Վերոգրյալ հանգամանքների գնահատմամբ՝ Առաջին ատյանի դատարանն արդարացիորեն Վ.Շահինյանի նկատմամբ նշանակել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժը, մինչդեռ Վերաքննիչ դատարանն անհիմն եզրահանգման է եկել առ այն, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ մեղմ է, և սույն գործի փաստական հանգամանքների պայմաններում արդարացի պատիժ կարող է համարվել 4 տարի ժամկետով ազատագրկումը:

11. Բողոք բերած անձն իր անհամաձայնությունն է հայտնել նաև «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետի կիրառելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունների հետ: Այս կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ քրեական գործի նյութերում առկա է երեխայի ծննդյան վկայականը, որտեղ հստակ արձանագրված է, որ Մարիա Անտոնովան ծնվել է մինչև հիշատակված համաներման ակտի ընդունումը՝ 2013 թվականի հունվարի 17-ին: Իսկ այն հանգամանքը, որ Վ.Շահինյանը հայրություն է ճանաչել ավելի ուշ՝ 2013 թվականի հոկտեմբերի 29-ին, տվյալ դեպքում որևէ նշանակություն չի կարող ունենալ, քանի որ դա ընդամենը ծնողների համատեղ դիմումի հիման վրա կատարված իրավունքի գրանցում է:

Բացի այդ, բողոքաբերը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը, քննարկման առարկա դարձնելով «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետի կիրառելիության հարցը, դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, քանի որ մեղադրողն իր բողոքում մնան հարց չի բարձրացրել:

12. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վ.Շահինյանը, գտնվելով հետախուզման մեջ, 2013 թվականի հունիսի 21-ին հայտնաբերվել և արգելանքի է վերցվել ՌԳ իրավապահ մարմինների կողմից, որից հետո մինչև 2014 թվականի հունվարի 24-ն անընդմեջ գտնվել է անազատության մեջ, նախ Ռուսաստանում՝ ՀՀ իրավապահ մարմինների պահանջի հիման վրա, իսկ 2013

թվականի նոյեմբերի 9-ից՝ Հայաստանում: Այս պայմաններում Վերաքննիչ դատարանը, խախտելով պատիժը հաշվակցելու կարգը, իր դատական ակտում արձանագրել է, որ Վ.Շահինյանն անազատության մեջ է գտնվել ընդամենը 2 ամիս 15 օր՝ անտեսելով Ռուսաստանում Վ.Շահինյանի անազատության մեջ եղած ամբողջ ժամանակահատվածը:

13. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի ապրիլի 10-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունվարի 24-ի դատավճռին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օտարերկրյա պետությունում արգելանքի վերցված և Հայաստանի Հանրապետությանը հանձնված անձի նկատմամբ նշանակված պատժին այլ պետությունում անազատության մեջ եղած ժամանակահատվածը հաշվակցելու անհրաժեշտության վերաբերյալ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

1. Մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելն անչի անազատության մեջ եղած ժամկետն ազատագրվեան չևով նշանակված պատժին հաշվակցելը.

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է համարում նախևառաջ անդրադառնալ բողոքաբերի բարձրացրած հետևյալ իրավական հարցին. իր դատական ակտում հաստատված համարելով, որ Վ.Շահինյանը փաստացի անազատության մեջ է եղել 2 ամիս 15 օր, և այդ ժամկետը հաշվակցելով նրա նկատմամբ ազատագրվեան ձևով նշանակված պատժին՝ Վերաքննիչ դատարանը խախտել է արդյոք պատիժը հաշվակցելու կարգը:

16. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անչնական ազատության և անչեռնմիտելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: (...)»:

«Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Միսկի կոնվենցիայի 61.2-րդ հոդվածի համաձայն՝ «Սույն Կոնվենցիայի 60 [Հանչնման համար հերախուզումը և կալանքի վերցնելը], 61 [Կալանքի վերցնելը կամ չերախալումը՝ նախքան հանչնելու մասին պահանջն ստանալը] և 61¹ [Անչի հերախուզումը մինչև հանչնման մասին պահանջի ստացումը] հոդվածների

դրույթներին համապատասխան կալանքի վերցված անչի՝ կալանքի տակ պահելու ժամանակը, նրան հանձնելու դեպքում, հաշվառվում է կալանքի տակ պահելու ամբողջ ժամկետի մեջ, որը նախատեսված է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որին այդ անչը հանձնվել է»:

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է ազատագրվման, կարգապահական գումարարկում պահելու ձևով նշանակված պարժի՝ մեկ օրը հաշվելով մեկ օրվա դիմաց (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն՝ արգելանքի վերցնելը գործողություն է, որն սկսվում է անձին ազատությունից փաստացի հարկադրական գրկելու պահից՝ ձերբակալելիս, կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս, ազատագրվման ձևով դատավճիռն ի կատար ածելիս:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 38-րդ կետի համաձայն՝ անազատության մեջ պահելը անձին ազատությունից հարկադրաբար գրկելն է, ինչ պատճառներով էլ որ դա իրականացված լինի:

Մեջբերված դրույթները, ինչպես նաև խափանման միջոց կալանավորման ժամկետների հաշվարկման կարգն ու պայմանները սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածը Վճռաբեկ դատարանը համադրված վերլուծության է ենթարկել *Ա Պետրոսյանի* գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ «(...) [Այն դեպքում, երբ անչը չի գտնվում ՀՀ իրավասու մարմինների տրամադրության տակ, նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանք ընդդրելու մասին դատարանի որոշումը չի կարող կատարված համարվել և, հերևաբար, խոսք չի կարող լինել դատարանի որոշմամբ ընդդրված խափանման միջոց կալանավորման ժամկետի ընթացքն սկսված լինելու և, համապատասխանաբար նաև՝ այդ ժամկետի հաշվարկի մասին: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ խափանման միջոց կալանավորման ժամկետն սկսում է հոսել ՀՀ իրավասու մարմինների տրամադրության տակ անչի հայրնվելու, այլ խոսքով՝ անչին Հայաստանի Հանրապետությանը հանձնելու պահից:

Վերոգրյալի հետ մեկտեղ, սակայն, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանձնման նպատակով կալանավորման ժամկետը, խափանման միջոց կալանավորման ժամկետի հետ մեկտեղ, պետք է հաշվակցվի անչի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտով նշանակված ազատագրվման հետ կապված պարժի ժամկետի մեջ» (տե՛ս Արմեն Աշոտի Պետրոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԷԴ/0024/06/11 որոշման 18-րդ կետը):

17. Սույն որոշման 16-րդ կետում, և համապատասխանաբար, *Ա Պետրոսյանի* գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման լույսի ներքո մեկնաբանելով պատիժը հաշվակցելու կարգը սահմանող մեջբերված քրեաիրավական նորմը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորման

ժամկետի ընթացքը սկսում է հոսել այն պահից, երբ վերջինս հայտնվում է վարույթն իրականացնող մարմնի իրավասության ներքո: Այլ խոսքով՝ հանձնման նպատակով օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից անձին անազատության մեջ պահելու ժամանակահատվածը նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորման ժամկետի մեջ չի ներառվում: Մյուս կողմից, սակայն, հանձնման նպատակով օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից անձին անազատության մեջ պահելու ամբողջ ժամանակահատվածը, խափանման միջոց կալանավորման ժամկետի հետ մեկտեղ, պետք է հաշվակցվի նրա նկատմամբ դատավճռով նշանակված ազատությունից զրկելու հետ կապված պատժին:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված «մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ պահելու ժամկետ» եզրույթը պետք է հասկանալ որպես «մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելն անձի փաստացի անազատության մեջ գտնվելու ժամկետ»: Պատիժը հաշվակցելու կարգը սահմանող քրեաիրավական նորմի նման մեկնաբանության և կիրառության դեպքում հնարավոր է դառնում հանձնման նպատակով արգելանքի վերցված անձի անազատության մեջ գտնվելու ողջ ժամանակահատվածը հաշվակցել նրա նկատմամբ նշանակված՝ ազատությունից զրկելու հետ կապված պատժին: Հակառակ դեպքում ոչ իրավաչափորեն սահմանափակվում է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային-իրավական փաստաթղթերով երաշխավորված՝ մարդու անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը:

18. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ իրավասու մարմինների կողմից հետախուզման մեջ գտնվող Վ.Շահինյանին 2013 թվականի հունիսի 21-ին հայտնաբերել և արգելանքի են վերցրել ՌԴ իրավապահ մարմինները:

ՌԴ Ուֆա քաղաքի Կիրովի շրջանի դատարանի 2013 թվականի հունիսի 22-ի որոշմամբ Վ.Շահինյանի նկատմամբ հանձնման նպատակով որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով: Նույն դատարանի 2013 թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ Վ.Շահինյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 4 ամսով՝ մինչև 2013 թվականի դեկտեմբերի 21-ը (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

2013 թվականի հոկտեմբերի 3-ին ՌԴ գլխավոր դատախազության կողմից քավարարվել է ՀՀ գլխավոր դատախազության հարցումը՝ Վ.Շահինյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու համար Հայաստանի Հանրապետությանը հանձնելու մասին, և ՌԴ իրավասու մարմնին հանձնարարվել է իրականացնել Վ.Շահինյանի հանձնումը ՀՀ իրավասու մարմիններին:

2013 թվականի նոյեմբերի 9-ին Վ.Շահինյանը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն և տարվել ոստիկանության Գավառի բաժին (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ վերահաստատվել է Վ.Շահինյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նույն դատարանի 2005 թվականի հունվարի 18-ի որոշումը՝ կալանքի սկիզբը հաշվելով 2013 թվականի նոյեմբերի 9-ից (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունվարի 24-ի դատավճռով Վ.Շահինյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 3 տարի ժամկետով: Համաներման ակտի կիրառմամբ Վ.Շահինյանն ազատվել է նշանակված պատժից և նրա նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերացվել է (տե՛ս սույն որոշման 2-րդ և 8-րդ կետերը):

Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի ապրիլի 10-ին որոշում է կայացրել Առաջին ատյանի դատարանի դատավճիռը պատժի մասով բեկանելու և փոփոխելու մասին: Վ.Շահինյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման 4 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կարգով՝ Վ.Շահինյանի նկատմամբ նշանակված պատժին հաշվակցվել է նրա անազատության մեջ գտնվելու 2 ամիս 15 օր ժամկետը, և վերջնական թողնվել է կրելու ազատազրկում՝ 3 տարի 9 ամիս 15 օր ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է Վ.Շահինյանին արգելանքի վերցնելու օրվանից (տե՛ս սույն որոշման 3-րդ և 9-րդ կետերը):

19. Նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 16-17-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Վ.Շահինյանը սույն գործի առնչությամբ անընդմեջ անազատության մեջ է գտնվել 2013 թվականի հունիսի 21-ից, նախ՝ հանձնման նպատակով կալանք կիրառելու մասին ՌԳ՝ դատարանների որոշումների հիման վրա, ապա՝ Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելուց հետո, խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին ՀՀ դատարանների դատական ակտերի հիման վրա: Վ.Շահինյանի փաստացի անազատությունը տևել է մինչև 2014 թվականի հունվարի 24-ը, երբ Առաջին ատյանի դատարանը դատավճռով վերացրել է նրա նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը և նրան ազատ արձակել դատական նիստի դադարում:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, պատժի խստացման առումով բեկանելով և փոփոխելով ստորադաս դատարանի դատական ակտը, իր որոշման մեջ արձանագրել է, որ Վ.Շահինյանն անազատության մեջ է գտնվել 2 ամիս 15 օր՝ Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելու օրվանից՝ 2013 թվականի նոյեմբերի 9-ից, մինչև Առաջին ատյանի դատարանի դատավճռով խափանման միջոց կալանավորումը վերացնելու օրը՝ 2014 թվականի հունվարի 24-ը: Փաստորեն, Վերաքննիչ դատարանն անտեսել է ՌԳ՝ իրավասու

մարմինների կողմից հանձնման նպատակով Վ.Շահինյանին անազատության մեջ պահելու ամբողջ ժամանակահատվածը՝ 2013 թվականի հունիսի 21-ից մինչև 2013 թվականի նոյեմբերի 9-ը, և նշված ժամկետը Վ.Շահինյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատժին չի հաշվակցել:

20. Հիմք ընդունելով սույն որոշման 16-19-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իր դատական ակտում հաստատված համարելով, որ Վ.Շահինյանը փաստացի անազատության մեջ է եղել 2 ամիս 15 օր, և այդ ժամկետը հաշվակցելով նրա նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատժին՝ Վերաքննիչ դատարանը խախտել է անազատության մեջ գտնվելու ժամանակը նշանակված պատժին հաշվակցելու կարգը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել քրեական օրենքի սխալ մեկնաբանում, որը չի համապատասխանում դրա իսկական իմաստին: Նշված նյութական իրավունքի խախտումն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործի ելքի վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 406-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

II. Բողոքարկի բարձրացրած մյուս իրավական հարցերը.

21. Անդրադառնալով բողոքի հեղինակի այն փաստարկին, որ Վ.Շահինյանի նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ խիստ է (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտում առկա են պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից համապատասխան, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ, Վ.Շահինյանի նկատմամբ արդարացի պատիժ նշանակելու վերաբերյալ անհրաժեշտ հիմնավորումներ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Մասնավորապես, Վերաքննիչ դատարանն իրավացիորեն փաստել է, որ Առաջին ատյանի դատարանը Վ.Շահինյանի նկատմամբ պատիժ նշանակելիս բավարար չափով ստուգման և գնահատման չի ենթարկել ամբաստանյալին վերագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի մասին տե՛ս Արմեն Շահբազյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԳ/0143/01/13 որոշման 14-16-րդ կետերը): Ինչ վերաբերում է ամբաստանյալի անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներին, ապա դրանք օբյեկտիվորեն հաշվի են առնվել նրա նկատմամբ պատիժ նշանակելիս, և բավարար չեն հանգելու այն հետևության, որ Վ.Շահինյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված նվազագույն պատիժ նշանակելու դեպքում կապահովվեն պատժի նպատակները:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս առումով Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական է, հիմնավոր և պատճառաբանված, իսկ բողոքաբերի փաստարկները բավարար չեն Վ.Շահինյանի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացման առումով փոփոխելու համար:

22. Վճռաբեկ դատարանը հիմնագուրկ է համարում նաև բողոքաբերի փաստարկն առ այն, որ ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետի կիրառելիության վերաբերյալ Վերաքննիչ դատարանը հանգել է սխալ հետևության (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

Այսպես, հիշատակված համաներման ակտի 2-րդ կետի 4-րդ ենթակետը նախատեսում է պատժից ազատել այն անձանց, որոնց նկատմամբ առավելագույնը հինգ տարի ժամկետով ազատազրկում է նշանակվել և որոնք համաներման որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մինչև երեք տարեկան երեխա ունեն: Քրեական գործի նյութերից հետևում է, որ Մարիա Իվանի Անտոնովան ծնվել է 2013 թվականի հունվարի 17-ին: 2013 թվականի հունիսի 21-ին Վ.Շահինյանը հայտնաբերվել և արգելանքի է վերցվել Ռ-Գ իրավապահ մարմինների կողմից: 2013 թվականի հոկտեմբերի 3-ին ընդունվել է հիշատակված համաներման ակտը և դրանից հետո միայն 2013 թվականի հոկտեմբերի 29-ին, Ռ-Գ Ուֆա քաղաքի Սովետական շրջանի ՔԿԱԳ բաժնի կողմից Վ.Շահինյանին տրվել է Մ.Անտոնովայի հայրությունը ճանաչելու մասին վկայական:

Այս պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետը Վ.Շահինյանի նկատմամբ կիրառելի չէ, քանի որ նա համաներման որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մինչև երեք տարեկան երեխա չի ունեցել:

23. Ինչ վերաբերում է բողոքի հեղինակի այն պնդմանը, որ Վերաքննիչ դատարանը, քննարկման առարկա դարձնելով համաներման ակտի կիրառելիության հարցը, դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն այս փաստարկը ևս անհիմն է համարում: Վերաքննիչ դատարանի դատական ակտի ուսումնասիրությունից հետևում է, որ դատարանը, վերաքննիչ բողոքի շրջանակներում օբյեկտիվ ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը պատժի մասով, քրեական գործի փաստական հանգամանքների հիման վրա կայացրել է պատճառաբանված որոշում Վ.Շահինյանի նկատմամբ նշանակված պատիժը խստացման առումով փոփոխելու մասին: Այս պայմաններում Վերաքննիչ դատարանը պարտավոր էր անդրադառնալ ամբաստանյալի նկատմամբ համաներման ակտի կիրառելիությանը, անկախ նրանից, նման պահանջ վերաքննիչ բողոքում եղել է, թե ոչ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկները նույնպես իրենց հաստատումը քրեական գործի նյութերում չեն գտնում:

24. Սույն որոշման 20-23-րդ կետերում շարադրված հետևությունների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Վանիկ Խաչիկի Շահինյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի ապրիլի 10-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

38.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ԱՎԳ-4/0044/01/13
Նախագահող դատավոր՝ Կ.Ղազարյան
Դատավորներ՝ Գ.Սելիք-Մարգարյան
Հ.Տեր-Աղամյան

ԱՎԳ-4/0044/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ տուժող Խ.ՏԱՏՈՅԱՆԻ

2014 թվականի օգոստոսի 15-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վազգեն Գևորգի Քոչարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի փետրվարի 25-ի որոշման դեմ ամբաստանյալ Վ.Քոչարյանի պաշտպան Վ.Զուռնայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի հոկտեմբերի 29-ին ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 8-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է թիվ 91158613 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2013 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ Վազգեն Քոչարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք

է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրը որոշում է կայացվել Վ.Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել հրամանատարության հսկողության հանձնելը:

2013 թվականի նոյեմբերի 13-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, 2013 թվականի դեկտեմբերի 17-ի դատավճռով Վ.Քոչարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով, և նրա նկատմամբ նշանակել է պատիժ՝ կարգապահական գումարտակում պահելու ձևով՝ 6 (վեց) ամիս ժամկետով: Ամբաստանյալ Վ.Քոչարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը փոխարինվել է կալանավորմամբ, և նա արգելանքի է վերցվել դատական նիստերի դահլիճում: Պատժի սկիզբը հաշվվել է 2013 թվականի դեկտեմբերի 17-ից:

3. Ամբաստանյալի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի փետրվարի 25-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 25-ի որոշման դեմ ամբաստանյալ Վ.Քոչարյանի պաշտպան Վ.Զուռնայանը բերել է վճարել բողոք, որը Վճարել դատարանի 2014 թվականի հունիսի 30-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարել բողոքի պատասխան չեն ներկայացրել:

2. Գործի փաստական հանգամանքները և վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Վ.Քոչարյանը դատապարտվել է այն բանի համար, որ «(...) նա 2013թ. հունիսի 22-ից 2013թ. հոկտեմբերի 29-ը զբաղեցնելով ՀՀ ՊՆ 70179 գործառնախ 4-րդ հրաչգային գումարտակի հետախույզական դասակի 1-ին ջոկի հետախույզ-գնդացրորդի հաստիքը, կոչումով՝ շարքային, 2013թ. հոկտեմբերի 22-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ երեկոյան զբոսանքին չմասնակցելու և շարք չիջնելու համար անձնակազմի մյուս անդամներին շարահրապարակում պահելու պարճառով վիրավորանք է հասցրել իր նկատմամբ պետ հանդիսացող, նույն գումարտակի հրամանատարի հրերանու գծով օգնական, օրվա պարասիսանարու սպա, կապիտան Խաչատրուր Հրայրի Տարոյանին, այն է՝ նշված ժամանակ գնացել է շարահրապարակ և այնպեղ գրվող անձնակազմի ներկայությամբ սեռական բնույթի հայիոյանք րվել Խ.Տարոյանի մոր հասցեին, դրանով անպարկեշտ ձևով ստորացրել վերջինիս

պատրիվն ու արժանապատվությունը» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 150-152):

6. Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճռով Վ.Քոչարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել կալանք՝ 1 ամիս ժամկետով: Վ.Քոչարյանի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 135-139):

7. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի դատավճռի ներածական մասում արձանագրված է, որ Վ.Քոչարյանը հանդիսանում է նախկինում դատված և դատվածություն չունեցող: Իսկ դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասի համաձայն. «(...) Դատարանն ապացուցված է համարում, որ բացակայում են ամբաստանյալի պատասխանատվությունը և պատրիժն ինչպես ծանրացնող, այնպես էլ մեղմացնող հանգամանքները:

Որպես անչը բնութագրող տվյալներ՝ ամբաստանյալ Վազգեն Քոչարյանը կարարել է դիրավորյալ հանցագործություն, կարարածի համար զոջացել է, Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է կալանքի և նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվելով փորձաշրջան մեկ տարի ժամանակով, «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 03-ի որոշման /այսուհետև՝ Համաներման ակտ/ 1-ին կետի 1-ին ենթակետի հիմքով 2013 թվականի դեկտեմբերի 17-ի Դատարանի որոշմամբ ազատվել է մեկ ամիս ժամկետով կալանքի ձեռով նշանակված պատժից, դատվածությունը մարված, միջնակարգ կրթությամբ, ամուրի, ֆիզիկապես առողջ, հրամանատարության կողմից բնութագրվել է բացասական՝ որպես անկարգապահ զինծառայող (...):

Տուժող Խ.Տարոյանը խնդրել է ամբաստանյալի նկարմամբ նշանակել արարքին համարժեք օրենքով սահմանված պատիժ: (...)

Չնայած այն հանգամանքին, որ ամբաստանյալ Վազգեն Քոչարյանն իրեն մեղադրվող ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը կարարել է գրնվելով փորձաշրջանի մեջ, սակայն Դատարանը գրնում է, որ Համաներման ակտի կիրառմամբ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի հունիսի 18-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտված և նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառված՝ փորձաշրջանի մեջ գրնվող դատապարտյալ Վազգեն Քոչարյանին Դատարանի 17.12.2013թ. որոշմամբ պատժից ազատելու արդյունքում նաև

նրա նկատմամբ սահմանված փորձաշրջանի վերացման պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաչայն, ամբաստանյալի դատվածությունը համարվում է մարված, և բացակայում է հանցագործությունների ռեցիդիվը:

ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան նախատեսում է չորս հիմնական պարժարեսակ՝ զինվորական ծառայության մեջ սահմանափակման չևով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կալանքի չևով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարարկում պահելու չևով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատագրվման չևով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

(...)

Դատարանը փաստում է, որ ժամկետային զինվորական ծառայության մեջ գրվելով ամբաստանյալ Վազգեն Քոչարյանի կողմից արդեն իսկ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով հանցագործություն կատարելու համար վերջինիս նկատմամբ դատվածով կալանքի չևով նշանակված պարիժը չի սպահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պարժի նպատակները, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ամբաստանյալը կրկին կատարել է համասեռ հանցագործություն, և Դատարանի համոզմամբ ամբաստանյալի նկատմամբ անհրաժեշտ է նշանակել մեղսագրվող արարքի համար նախատեսված կալանքից խիստ պարժարեսակ:

Միևնույն ժամանակ, Դատարանը հաշվի առնելով ամբաստանյալի անչք բնութագրող վերը նշված փյույակները, կատարած արարքի հանրային վրանգավորության աստիճանը, ելնելով պարասխանարվության անհատականացման և պարիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից, գրնում է, որ ամբաստանյալին մեղսագրված արարքի համար նախատեսված պարիժներից կարգապահական գումարարկում պահելու չևով պարիժ նշանակելու պայմաններում կարող է սպահովվել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պարժի նպատակները, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարժի ենթարկված անչին և կանխել հանցագործությունները» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, քերթ 150-152):

8. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ նշել է հետևյալը. «(...) [Առաջին արյանի դատարանն] իրավացիորեն փաստել է, որ ժամկետային զինվորական ծառայության մեջ գրվելով ամբաստանյալ Վազգեն Քոչարյանի կողմից արդեն իսկ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին մասով հանցագործություն կատարելու համար վերջինիս նկատմամբ դատվածով կալանքի չևով նշանակված պարիժը չի սպահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48 հոդվածով սահմանված պարժի նպատակները՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ամբաստանյալը կրկին կատարել է համասեռ հանցագործություն, և Դատարանի համոզմամբ ամբաստանյալի նկատմամբ անհրաժեշտ է նշանակել մեղսագրվող արարքի

համար նախատեսված կալանքից խիստ պարժարեսակ» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, քերթ 48-52):

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձը փաստարկել է, որ ինչպես Առաջին աստիճանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը սխալ են կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-63-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն վերոգրյալ փաստարկի՝ բողոքաբերը շարադրել և Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումների լույսի ներքո վերլուծել է հիշատակված քրեաիրավական դրույթները, որից հետո եզրակացություն է արել այն մասին, որ ստորադաս դատարանները չեն պատճառաբանել, թե ինչու Վ.Քոչարյանին վերագրվող հանցագործության համար նախատեսված պատիժներից նվազ խիստ տեսակը չէր կարող ապահովել պատժի նպատակների իրագործումը: Ըստ բողոքաբերի՝ ամբաստանյալի նկատմամբ պատժի տեսակը և չափն ընտրելիս դատարանները հաշվի չեն առել Վ.Քոչարյանի անձը դրականորեն բնութագրող մի շարք փաստական տվյալներ, նրա ընտանեկան դրությունը, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը:

Բողոքի հեղինակը հիմնագուրկ է համարել նաև ստորադաս դատարանների այն դատողությունը, որ ամբաստանյալի նկատմամբ պետք է նշանակել մեղսագրվող արարքի համար նախատեսված՝ կալանքից ավելի խիստ պատժատեսակը, քանի որ Վ.Քոչարյանն արդեն իսկ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն է կատարել և նրա նկատմամբ նշանակվել է կալանքի ձևով պատիժ, որը չի ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակները: Այս կապակցությամբ բողոքաբերը շեշտել է, որ Վ.Քոչարյանի նախկին դատվածությունը մարվել է, հետևաբար չէր կարող հաշվի առնվել սույն գործով նրա նկատմամբ պատիժ նշանակելիս:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 25-ի որոշումը, Վ.Քոչարյանի նկատմամբ նշանակել պատիժ կարգապահական գումարտակում պահելու ձևով՝ 3 ամիս ժամկետով:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ Վ.Քոչարյանի նկատմամբ պատիժ պետք է նշանակել կարգապահական գումարտակում պահելու ձևով, քանի որ նա նախկինում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործության համար արդեն իսկ դատապարտվել է կալանքի:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անչի նկատմամբ կիրառվող պարիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անչնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պարժի րեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անչը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝

«1. Անչը դատվածությունն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը:

2. Դատվածությունը, սույն օրենսգրքին համապատասխան, հաշվի է առնվում հանցագործության ռեցիդիվի դեպքում և պարիժ նշանակելիս:

(...)

8. Դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: (...)»:

13. Վճռաբեկ դատարանը Ս.Ադախանյանի գործով որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) [ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի] վերլուծությունից հետևում է, որ դատվածությունը բնորոշվում է որպես անչի հանրային բարձր վրանգավորության մասին վկայող հանգամանք, հետևաբար դատվածությունն ունեցող անչի համար նոր հանցագործություն կատարելու դեպքում ծագում են քրեաիրավական բնույթի բացասական հետևանքներ: Միևնույն ժամանակ, նախկինում դատվածություն ունենալը չի նշանակում, որն անչն իր ամբողջ կյանքի ընթացքում համարվում է հանրային բարձր վրանգավորություն ունեցող: Քրեական օրենքը նախատեսում է դատվածությունը հանելու կամ մարելու հնարավորություն, որի դեպքում անչը օրենքի տեսանկյունից համարվում է որևէ հանցանք չկատարած, ուստի և նրա դատվածությունը չի կարող առաջացնել քրեաիրավական բնույթի բացասական հետևանքներ, այդ թվում՝ չի կարող հաշվի առնվել նոր հանցագործության համար պարիժ նշանակելիս» (տե՛ս Սեյրան Կառլենի Ադախանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԳ/0082/01/12 որոշման 21-22-րդ կետերը):

Վերահաստատելով և զարգացնելով Ս.Ադախանյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Ա.Շաքարյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը շեշտել է, որ «(...) մարված կամ հանված դատվածության պայմաններում անչի կողմից նախկինում հանցանք կատարած լինելը որպես նրա անչը բացասաբար բնութագրող հանգամանք

հաշվի առնելն անթույլատրելի է: Նախկինում հանցանք կատարած լինելը դիտելով որպես հանցավորի բարոյահոգեբանական և քրեաիրավական բնութագիր՝ դատարանը պարտավոր է այն ուղղակիորեն արտացոլել պատժի և պարասխանարվության անհատականացման ժամանակ: Մինչդեռ, մարված կամ հանված դարվածության պայմաններում անչք քրեական օրենքի իմաստով համարվում է հանցագործություն չկատարած և նրա նախկին դարվածությունը քրեաիրավական հետևանք առաջացնել չի կարող, այդ բովում՝ չի կարող անդրադառնալ նոր հանցագործության համար նշանակվելիք պատժի վրա:

Ուարի, մարված կամ հանված դարվածության պայմաններում նախկինում հանցանք կատարած լինելը դիտելով որպես հանցավորի անչնավորությունը բացասաբար բնութագրող հանգամանք՝ դատարանը ոչ միայն կիմաստագրելի դարվածությունը հանելու, մարելու քրեաիրավական կառուցակարգերը, այլև կարող է խախտել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները» (տե՛ս Արտաշ Իլյայի Շաքարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԳ/0163/01/13 որոշման 15-րդ կետը):

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վ.Քոչարյանը 2013 թվականի հունիսի 18-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել կալանք՝ 1 ամիս ժամկետով: Նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն իր 2013 թվականի դեկտեմբերի 17-ի դատավճռում արձանագրել է, որ Վ.Քոչարյանի դատվածությունը մարված է: Մինևույն ժամանակ դատարանն արձանագրել է, որ ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելով՝ Վ.Քոչարյանն արդեն իսկ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն է կատարել և նրա նկատմամբ կալանքի ձևով պատիժ է նշանակվել, որը չի ապահովել պատժի նպատակները, և ամբաստանյալը կրկին կատարել է համասեռ հանցագործություն: Ուստի դատարանը գտել է, որ ամբաստանյալ Վ.Քոչարյանի նկատմամբ անհրաժեշտ է նշանակել կալանքից խիստ պատժատեսակ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն փաստել է, որ Վ.Քոչարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության համար կալանքի ձևով նշանակված պատիժը չի ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակները, ուստի ամբաստանյալի նկատմամբ անհրաժեշտ է նշանակել մեղսագրվող արարքի համար նախատեսված կալանքից խիստ պատժատեսակ (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Փաստորեն, Վ.Քոչարյանը նախկինում դատապարտված է եղել և ստորադաս դատարաններն այդ դատվածությունը համարել են մարված: Չնայած այդ հանգամանքին՝ Վ.Քոչարյանի նկատմամբ պատժատեսակ ընտրելիս Առաջին ատյանի դատարանը հաշվի է առել այն, որ նա նախկինում հանցագործություն է կատարել, նրա նկատմամբ նշանակվել է կալանքի ձևով պատիժ, որը չի ապահովել պատժի նպատակները, իսկ Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարել դա:

15. Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-րդ կետում, և համապատասխանաբար, Ս.Աղախանյանի և Ա.Շաքարյանի գործերով որոշումներում առկա իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Քոչարյանի նախկին դատվածությունը ստորադաս դատարանների կողմից համարվել է մարված, որպիսի պայմաններում նրա նախկին դատվածությունը քրեաիրավական հետևանք առաջացնել չէր կարող, այդ թվում՝ չէր կարող անդրադառնալ նոր հանցագործության համար նշանակվելիք պատժի վրա:

16. Մինևույն ժամանակ, սույն գործի փաստական տվյալները հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Քոչարյանին վերագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը կատարվել է 2013 թվականի հոկտեմբերի 22-ին: Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի հիմքով Վ.Քոչարյանը նախորդ դատավճռով նշանակված պատժից ազատվել է, և նրա նկատմամբ սահմանված փորձաշրջանը վերացվել է 2013 թվականի դեկտեմբերի 17-ին: Նույն օրը Վ.Քոչարյանի նկատմամբ սույն գործով կայացվել է մեղադրական դատավճիռ (տե՛ս սույն որոշման 5-րդ և 7-րդ կետերը):

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Դատվածությունը մարվում է՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում՝ փորձաշրջանն անցնելուց հետո»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *«Եթե անչը մինչև դատվածությունը մարվելը նոր հանցանք է կատարում, սպա դատվածության մարման ժամկետն ընդհատվում է: Առաջին հանցագործության համար դատվածությունը մարվելու ժամկետը հաշվարկվում է վերստին վերջին հանցագործության համար պատիժը (հիմնական և լրացուցիչ) փաստորեն կրելուց հետո: Այդ դեպքում անչը երկու հանցագործությունների համար էլ դատված է համարվում մինչև դրանցից առավել ծանր հանցագործության համար դատվածությունը մարվելու ժամկետը լրանալը»:*

«Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 9-րդ կետի 9-րդ ենթակետը նախատեսում է *«Համաներումը չկիրառել այն անչանց*

նկատմամբ, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և որոնք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են փորձաշրջանի ընթացքում կրկին դիտարկորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են փորձաշրջանի ընթացքում կրկին դիտարկորյալ հանցագործություն կատարելու համար»:

Ինչպես հետևում է սույն գործի փաստական տվյալներից՝ ամբաստանյալ Վ.Քոչարյանն իրեն մեղսագրվող դիտարկորյալ հանցագործությունը կատարել է գտնվելով փորձաշրջանի մեջ, երբ նրա նախորդ դատվածությունը մարված չի եղել: Հետևաբար, Վ.Քոչարյանի առաջին դատվածության մարման ժամկետն ընդհատվել է, որպիսի պայմաններում ամբաստանյալի դատվածության մարված լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ չեն:

17. Վերոգրյալով հանդերձ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի (...) դատական ակտերը՝ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:

Սույն գործով կայացված դատական ակտերը վճռաբեկ վերանայման են ենթարկվում ամբաստանյալի պաշտպանի բողոքի հիման վրա, որով վերջինս խնդրել է Վ.Քոչարյանի նկատմամբ նշանակված պատիժը մեղմացման առումով փոփոխել: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն իրավասու չէ իրավական հետևանք տալ սույն որոշման 16-րդ կետում արձանագրված խախտմանը:

18. Հիմք ընդունելով սույն որոշման 14-17-րդ կետերում շարադրված վերլուծությունը և եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը հիմնագուրկ է համարում բողոքաբերի այն փաստարկը, որ ամբաստանյալ Վ.Քոչարյանի նկատմամբ նշանակվել է ակնհայտ խիստ պատիժ, որը չի բխում ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամբագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Այդ առումով բողոքաբերի փաստարկները չեն բխում գործի փաստական տվյալներից և չեն կարող հիմք հանդիսանալ սույն գործով կայացված դատական ակտերը բեկանելու և փոփոխելու համար:

Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Վ.Քոչարյանի պաշտպան Վ.Ջուռնայանի վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Առաջին ստյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի դատավճիռը և Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 25-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանությունները:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Վազգեն Գևորգի Քոչարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի փետրվարի 25-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

39.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԵԿԴ/0252/01/13

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Քրեական գործ թիվ ԵԿԴ/0252/01/13

Նախագահող դատավոր՝ Գ.Մելիք-Սարգսյանի

Դատավորներ՝ Հ.Տեր-Աղամյան

Մ.Արղամյանյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ
մասնակցությամբ դատավորներ

Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի հոկտեմբերի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արարատ Ավագի Ավագյանի և Վահան Սերյոժայի Սահակյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հուլիսի 8-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Ավագյանի պաշտպան Կ.Քամալյանի և ամբաստանյալ Վ.Սահակյանի պաշտպան Ա.Մկրտչյանի վճռաբեկ բողոքները,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի հոկտեմբերի 25-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում հարուցվել է թիվ 13828513 քրեական գործը՝ ՀՀ քրեական

օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասի և 268-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2013 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ Վահան Սահակյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2013 թվականի հոկտեմբերի 25-ին Արարատ Ավագյանը ձերբակալվել է:

2013 թվականի հոկտեմբերի 26-ին Ա.Ավագյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ մեղադրյալ Ա.Ավագյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2013 թվականի նոյեմբերի 1-ին Վ.Սահակյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով:

2013 թվականի դեկտեմբերի 24-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 25-ի դատավճռով Ա.Ավագյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 3 (երեք) տարի ժամկետով: Ա.Ավագյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, պատժի սկիզբը հաշվվել է 2013 թվականի հոկտեմբերի 25-ից:

Վ.Սահակյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով: Վ.Սահակյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, պատժի սկիզբը հաշվվել է նրան փաստացի արգելանքի վերցնելու պահից:

Վճռվել է նաև քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված, փորձաքննությունից հետո առկա 0.45 գրամ հաստատուն քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոցն ուղարկել ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնի թիվ 15803613 քրեական գործին կցելու և օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը լուծելու համար, իսկ ապացույց ճանաչված «Դ-Տելեկոմ» ՓԲԸ-ից ստացված վերծանումները պահել քրեական գործի հետ միասին:

3. Ամբաստանյալ Ա.Ավագյանի պաշտպան Կ.Քամայանի և ամբաստանյալ Վ.Սահակյանի պաշտպան Ա.Մկրտչյանի վերաքննիչ բողոքների քննության

արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հուլիսի 8-ի որոշմամբ բողոքները մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 25-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հուլիսի 8-ի որոշման դեմ վճռաբեկ բողոքներ են բերել ամբաստանյալ Ա.Ավագյանի պաշտպան Կ.Քամայանը և ամբաստանյալ Վ.Սահակյանի պաշտպան Ա.Սկրտչյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ:

Մեղադրող Ա.Մանուկյանի կողմից ներկայացվել է Վ.Սահակյանի պաշտպան Ա.Սկրտչյանի վճռաբեկ բողոքի պատասխան: Մեղադրողը, գտնելով, որ Վ.Սահակյանի նկատմամբ Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի դատական ակտերը հիմնավոր են և օրինական, նշանակված պատիժը համաչափ է կատարված արարքի ծանրությանն ու ամբաստանյալի անձին, նյութական և դատավարական իրավունքի նորմեր խախտված չեն, խնդրել է վճռաբեկ բողոքը մերժել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ա.Ավագյանին և Վ.Սահակյանին մեղադրանք է առաջադրվել, և ստորադաս դատարանների դատական ակտերով նրանք մեղավոր են ճանաչվել հետևյալ արարքների համար.

Արագածոտնի մարզի Աշնակ գյուղի 18-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 4 տան բնակիչ Ա.Ավագյանը և Կոտայքի մարզի Նոր Հաճն քաղաքի Չարենցի փողոցի 25-րդ շենքի թիվ 34 բնակարանի բնակիչ Վ.Սահակյանը 2006 թվականից ճանաչել են միմյանց և գտնվել ընկերական հարաբերությունների մեջ:

Վ.Սահակյանը 2012 թվականի սկզբներից առողջական խնդիրների պատճառով օգտագործել է «մարիխուանա» տեսակի թմրամիջոց:

Ա.Ավագյանը 2013 թվականի հոկտեմբերի 20-ից Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտայում գտնվող կենդանաբանական այգու մոտի տներից մեկում կատարել է վերանորոգման աշխատանքներ:

Վ.Սահակյանը 2013 թվականի հոկտեմբերի 24-ին ցանկացել է թմրամիջոց օգտագործել, սակայն իր մոտ չի եղել: Մի քանի օր առաջ տեղեկանալով, որ ամբաստանյալ Ա.Ավագյանն աշխատում է Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտայում գտնվող կենդանաբանական այգու հարևանությամբ գտնվող տներից մեկում՝ Վ.Սահակյանը ժամը 14:00-ի սահմաններում հանդիպել է Ա.Ավագյանին: Վ.Սահակյանը թմրամիջոց ձեռք բերելու առաջարկ է արել Ա.Ավագյանին, ինչից հետո վերջինս Վ.Սահակյանին ապօրինի իրացրել է զգալի չափի՝ 0.55 գրամ քաշով «չորացված մարիխուանա» տեսակի թմրամիջոց: Վ.Սահակյանը, ապօրինի ձեռք բերելով թմրամիջոցը, այն պահել է իր կողմից վարվող «Մերսեդես Ե 200» մակնիշի 08 LS 848 հաշվառման պետհամարանիշի ավտոմեքենայի մեջ և գնացել Երևան քաղաքի Մ.Խորենացի

փողոցի վրա գործող «Ոսկու աշխարհ» տոնավաճառ: Նույն օրը՝ ժամը 18:50-ի սահմաններում, Երևան քաղաքի Վ.Սարգսյան փողոցում Վ.Սահակյանին են մոտեցել ՀՀ ոստիկանության աշխատակիցները և բերման ենթարկել կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն, որտեղ էլ վերջինիս ավտոմեքենայի զննությամբ նշված թմրամիջոցը հայտնաբերվել է:

6. «Մերսեդես մակնիշի ավտոմեքենան զննության ենթարկելու մասին» 2013 թվականի հոկտեմբերի 24-ի արձանագրության համաձայն՝ նույն օրը՝ ժամը 18:50-ին, ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության շենքի բակում Վ.Սահակյանին պատկանող «Մերսեդես Ե 200» մակնիշի 08 LS 848 հաշվառման համարանիշի ավտոմեքենան ենթարկվել է զննության: Չննության ժամանակ վարորդի նստատեղի աջ կողքից հայտնաբերվել է մոտ 0,6 գրամ քաշով սպիտակ թղթի մեջ փաթաթված դեղնականաչավուն զանգված: Վ.Սահակյանը հայտարարել է, որ այն կանեփի թփերից չորացված զանգված է, որը հյուրասիրել է իր ընկերը, և այն պահում է օգտագործելու համար: Չննությամբ ավտոմեքենայից հայտնաբերվել է նաև մոխրի հետքերով ջրի դատարկ շիշ, որի վերաբերյալ Վ.Սահակյանը հայտարարել է, որ այն կանեփի տերևները ծխելու հարմարանքի միջոց է (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթ 5):

7. Կասկածյալի պաշտպանության և պաշտպան ունենալու իրավունքը բացատրելու 2013 թվականի հոկտեմբերի 24-ի արձանագրության համաձայն՝ Վ.Սահակյանին բացատրվել է պաշտպան ունենալու իրավունքը, իսկ վերջինս հայտնել է, որ պաշտպան ունենալ չի ցանկանում (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթ 29):

8. Կասկածյալի հարցաքննության 2013 թվականի հոկտեմբերի 25-ի արձանագրության համաձայն՝ Վ.Սահակյանը ցուցմունք է տվել, որ իր ավտոմեքենայի միջից հայտնաբերված թմրամիջոցը 2013 թվականի հոկտեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, կենդանաբանական այգու մոտ գտնվող տներից մեկի մոտ իր խնդրանքով իրեն է տվել Ա.Ավագյանը: Տվյալ հարցաքննությանը պաշտպան չի մասնակցել (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 31-32):

Կասկածյալի հարցաքննության 2013 թվականի հոկտեմբերի 25-ի արձանագրության համաձայն՝ Ա.Ավագյանը ցուցմունք է տվել, որ 2013 թվականի հոկտեմբերի 24-ին Վ.Սահակյանի հետ հանդիպել են՝ անվաղողերի հարցով, սակայն ժխտել է նրան թմրամիջոց տալու հանգամանքը (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 40-41):

Վ.Սահակյանի և Ա.Ավագյանի միջև առերես հարցաքննություն կատարելու 2013 թվականի հոկտեմբերի 25-ի արձանագրության համաձայն՝ Վ.Սահակյանը ցուցմունք է տվել, որ թմրամիջոցն իրեն է տվել Ա.Ավագյանը, իսկ Ա.Ավագյանը ցուցմունք է տվել, որ Վ.Սահակյանի հետ գրուցել են անվաղողերի հարցի շուրջ և նրան թմրամիջոց չի տվել (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթ 44):

Մեղադրյալի հարցաքննության 2013 թվականի հոկտեմբերի 26-ի արձանագրության համաձայն՝ Ա.Ավագյանը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել, և նշել է, որ նման արարք չի կատարել (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթ 51):

9. 2013 թվականի հոկտեմբերի 30-ին կասկածյալ Վ.Սահակյանը դիմում է գրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանի դատախազին՝ հայտնելով, որ 2013 թվականի հոկտեմբերի 25-ին ճիշտ ցուցմունք չի տվել, հայտնած տեղեկությունը իրականությանը չի համապատասխանում, և ցանկություն է հայտնել լրացուցիչ ցուցմունք տալ դեպքի իրական հանգամանքների մասին (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթ 80):

2013 թվականի հոկտեմբերի 30-ին կասկածյալ Վ.Սահակյանը դիմում է գրել նաև քննիչին՝ ցանկություն հայտնելով, որ իր շահերը պաշտպանի փաստաբան Վ.Էլրակյանը (տե՛ս քրեական գործի նյութերը, հատոր 1-ին, թերթ 81):

2013 թվականի հոկտեմբերի 31-ին մեղադրյալ Ա.Ավագյանը դիմում է գրել քննիչին՝ ցանկություն հայտնելով, որ իր շահերը պաշտպանի փաստաբան Կ.Քամալյանը (տե՛ս քրեական գործի նյութերը, հատոր 1-ին, թերթ 95):

10. Կասկածյալի լրացուցիչ հարցաքննության 2013 թվականի հոկտեմբերի 31-ի արձանագրության համաձայն՝ Վ.Սահակյանը պաշտպանի ներկայությամբ ցուցմունք է տվել, որ իր նախկին ցուցմունքն այն մասին, որ թմրամիջոցն իրեն է տվել Ա.Ավագյանը, իրականությանը չի համապատասխանում: Հայտնել է նաև, որ իրականում թմրամիջոցը 5.000 ՀՀ դրամով ձեռք է բերել 2013 թվականի հոկտեմբերի 20-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում, Երևանի Նուբարաշեն վարչական շրջանում գործող ավտոշուկայում՝ անձանոթ երկու անձանցից: Նախկինում տրված ցուցմունքում Ա.Ավագյանի անունը հիշատակել է այն պատճառաբանությամբ, որ համոզված է եղել, որ հանցագործություն է համարվում թմրամիջոցի առուվաճառքը միայն, հետևաբար հայտնել է՝ իբր թմրամիջոցն իրեն է հյուրասիրել ընկերը՝ Ա.Ավագյանը՝ հույս ունենալով, որ այդ դեպքում իրենց վարչական կարգով կտուգանեն և բաց կթողնեն (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 85-87):

Մեղադրյալի հարցաքննության 2013 թվականի նոյեմբերի 1-ի արձանագրության համաձայն՝ Վ.Սահակյանը պաշտպանի ներկայությամբ ցուցմունք է տվել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչում՝ նշելով, որ Ա.Ավագյանն իրեն թմրամիջոց չի տվել, իրականությունն այն է, ինչ հայտնել է 2013 թվականի հոկտեմբերի 31-ին տված ցուցմունքի մեջ, իսկ թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու և պահելու մեջ իրեն մեղավոր է ճանաչում (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթ 91):

11. Փորձագետի 2013 թվականի հոկտեմբերի 30-ի հմ. 0916 եզրակացության համաձայն՝ Վ.Սահակյանի մեզի և մազի փորձանմուշներում հայտնաբերվել

են կանաքինոդոների խմբի թմրամիջոցների թմրակալալիդներ (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթ 132):

Փորձագետի 2013 թվականի հոկտեմբերի 31-ի հմ. 0919 եզրակացության համաձայն՝ Ա.Ավագյանի մեզի և մազի փորձանմուշներում հայտնաբերվել են կանաքինոդոների խմբի թմրամիջոցների թմրակալալիդներ (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթ 131):

12. ՀՀ ոստիկանության Կենտրոնականի քննչական բաժնի պետ Վ.Մեսրոպյանի կողմից ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի պետին հասցեագրված 2013 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 7/4-13536 գրության համաձայն. «(...) Որպես կասկածյալ լրացուցիչ հարցաքննվելիս և որպես մեղադրյալ հարցաքննվելիս Վահան Սահակյանը ցուցմունք է տվել այն մասին, որ իրականում իր մեքենայի միջից հայտնաբերված թմրամիջոցը Ա.Ավագյանը չի տվել իրեն, այն 5.000 ՀՀ դրամ գումարով գնել է 2013թ. հոկտեմբերի 20-ին, Երևան քաղաքի Նուբարաշեն թաղամասում գրևվող ավտոշուկայից:

Հայտնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է հանձնարարել համապատասխան աշխատակիցներին ձեռնարկել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ պարզելու համար.

- դեպքի մասին տեղեկություններ ունեցող անձանց, վերջիններիս ներկայացնել քննչական բաժին:
- ստուգել Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի ցուցմունքների արժանահավաստությունը:
- պարզել Ա.Ավագյանի կողմից թմրամիջոցի ձեռք բերման աղբյուրը, վերջինս այլ անձանց թմրամիջոց իրացրել է, թե ոչ:
- պարզել դեպքի իրական հանգամանքները:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքների մասին հայտնել Կենտրոնականի քննչական բաժին» (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 128-129):

13. Մեղադրյալի լրացուցիչ հարցաքննության 2013 թվականի դեկտեմբերի 18-ի արձանագրությունների համաձայն՝ Ա.Ավագյանը և Վ.Սահակյանը պաշտպանների ներկայությամբ ցուցմունք են տվել 2013 թվականի հոկտեմբերի 24-ին միմյանց հանդիպելու և անվաղողերի հարցի շուրջ գրուցելու հանգամանքների մասին (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 158, 160):

14. Ավագ քննիչ Է.Ավագյանի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի որոշման համաձայն. «Նկատի ունենալով, որ թիվ 13828513 քրեական գործի նախաքննության ընթացքում հայտնաբերվել է նոր՝ անհայտ անձի կողմից Արարատ Ավագյանին զգալի չափի՝ 0,55 գրամ քաշով «չորացված մարիխուանա» տեսակի թմրամիջոց ապօրինի իրացնելու դեպք (...) որոշեցի (...) անհայտ անձի կողմից Արարատ Ավագյանին զգալի չափի՝ 0,55 գրամ քաշով «չորացված մարիխուանա» տեսակի թմրամիջոց ապօրինի իրացնելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 1-ին մասով հարուցել թիվ 15803613 քրեական գործը, այն առանձնացնել առանձին վարույթ և առանձին

շարունակել նախաքննությունը» (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթ 161):

15. «ԱՐԹՄԵՂ բժշկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ի 2013 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 16/13 գրության համաձայն՝ Վ.Սահակյանը 2005 թվականի մայիսի 13-ին դիմել է «ԱՐԹՄԵՂ» ԲՎԿ, ախտորոշվել է «դեպրեսիվ-պարանոիդ համախտանիշ» (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 2-րդ, թերթ 173-177):

16. Ամբաստանյալ Վ.Սահակյանի հարցաքննության 2014 թվականի փետրվարի 28-ի արձանագրության համաձայն՝ Վ.Սահակյանը դատաքննության ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչել վերապահումով և ցուցմունք է տվել, որ իր մեքենայից հայտնաբերված թմրամիջոցը, օրը կոնկրետ չի հիշում, 5.000 ՀՀ դրամով ձեռք է բերել Երևանի Նուբարաշեն վարչական շրջանում գործող ավտոշուկայում անձանոթ անձանցից (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 45-47, դատական նիստի ձայնագրման կրիչը):

Ամբաստանյալ Ա.Ավագյանի հարցաքննության 2014 թվականի մարտի 13-ի արձանագրության համաձայն՝ Ա.Ավագյանը դատաքննության ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել, որ 2013 թվականի հոկտեմբերի 24-ին Վ.Սահակյանի հետ հանդիպել և զրուցել են վերջինիս կողմից ավտոմեքենան վաճառելու դեպքում անվադրողերն իրեն տալու մասին, սակայն նրան թմրամիջոց չի իրացրել (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 52-53, դատական նիստի ձայնագրման կրիչը):

17. Վկայի հարցաքննության 2013 թվականի դեկտեմբերի 16-ի և 2014 թվականի փետրվարի 7-ի արձանագրությունների համաձայն՝ վկա Սուրեն Միկոյանը նախաքննության և դատաքննության ընթացքում ցուցմունք է տվել, որ որպես ընթերակա մասնակցել է Վ.Սահակյանի ավտոմեքենայի զննությանը: Չննության ժամանակ ավտոմեքենայից հայտնաբերվել է մոտ 0,6 գրամ քաշով, սպիտակ թղթի մեջ փաթաթված դեղնականաչավուն զանգված: Ավտոմեքենայի տերը հայտնել է, որ դա թմրամիջոց է, որն իրեն է տվել իր ընկերը (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 155-156, հատոր 2-րդ, թերթեր 35-36, դատական նիստի ձայնագրման կրիչը):

Վկայի հարցաքննության 2013 թվականի դեկտեմբերի 17-ի և 2014 թվականի փետրվարի 28-ի արձանագրությունների համաձայն՝ վկա Ալեն Ավետիսյանը ցուցմունք է տվել, որ որպես ընթերակա մասնակցել է Վ.Սահակյանի ավտոմեքենայի զննությանը: Չննության ժամանակ ավտոմեքենայից հայտնաբերվել է մոտ 0,6 գրամ քաշով, սպիտակ թղթի մեջ փաթաթված դեղնականաչավուն զանգված: Ավտոմեքենայի տերը հայտնել է, որ դա պատկանում է իրեն և տվել է իր ընկերը (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 1-ին թերթեր 150-151, հատոր 2-րդ, թերթեր 43-45, դատական նիստի ձայնագրման կրիչը):

18. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն. «Դատարանը վերլուծելով և գնահատման ենթարկելով դատաքննությանը ուսումնասիրված՝ Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի ցուցմունքները, դրանք համարում է սուբյեկտիվ և անարժանահավասար և զրկում, որ այդպիսիք նպատակ են հետապնդում Արարատ Ավագյանի դեպքում՝ նրան ազատել քրեական պարասխանարվությունից և սպասվող խիստ պարծից, իսկ Վահան Սահակյանի դեպքում՝ վերականգնել իր՝ ընկերոջ և նրա շրջապատի մոտ ունեցած անուննուբարի համբավը, փորձելով նախկինում Կրկնված դատարանի մոտ ավելի արժանահավասար դիրքակցված ցուցմունքները ներկայացնել որպես իրենից խաբեության արդյունքում կորզված սպացույցներ» (տե՛ս քրեական գործի նյութեր, հատոր 2-րդ, թերթ 82):

Առաջին ատյանի դատարանը, Ա.Ավագյանին և Վ.Սահակյանին առաջադրված մեղադրանքներում մեղավոր ճանաչելով, նրանց մեղադրանքի հիմքում դրել է Վ.Սահակյանի 2013 թվականի հոկտեմբերի 25-ի ցուցմունքները, որպես վկա հարցաքննված ընթերականեր Ս.Միկոյանի և Ա.Ավետիսյանի ցուցմունքները, մեքենայի զննության մասին արձանագրությունը, դատաքինիական և տոքսիկոքինիական փորձաքննությունների եզրակացությունները, իրենց և ապացույց ճանաչված 0,55 գրամ քաշով «չորացված մարիխուանա» տեսակի թմրամիջոցը և ապացույց ճանաչված այլ փաստաթուղթ հանդիսացող՝ Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի կողմից օգտագործվող հեռախոսներից կատարված հեռախոսազանգերի վերծանումները (տե՛ս քրեական գործի նյութերը, հատոր 2-րդ, թերթեր 79-88):

19. Առաջին ատյանի դատարանի դատավճռով նաև արձանագրված է. «Որպես Վահան Սահակյանի անչը բնութագրող դրական հանգամանք դատարանը հաշվի է առնում Կուրայքի մարզի Նոր Հանն քաղաքի «Հանն 3» համարիչության նախագահ Վ.Մեսրոպյանի կողմից Կրկնված բնութագիրը, համաձայն որի՝ «Վահան Մերյոժայի Սահակյանը՝ ծնված 16.05.1968թ. հաշվառված և բնակվում է (...), ամուսնացած է ինամքին ունի երկու երեխա: Շուրջ 14 տարի է Վ.Սահակյանը բնակվում է վերը նշված հասցեում մոր, կնոջ և երկու երեխաների հետ: Ընտանիքում Վ.Սահակյանը սիրված և հարգված զավակ է, ամուսին և հայր: Միշտ բողի է խելացի, ազնիվ, համեստ և հավասարակշռված անհատություն և փոքրիկություն: Վայելում է հարևանների հարգանքը: Ընկերասեր է:

(...)

Դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբասարանյալ Վահան Սահակյանի արարքում նրա պարասխանարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանք է դիտարկում այն, որ նրա խնամքին է զրկվում մեկ անչափահաս երեխան՝ Մերգեյ Վահանի Սահակյանը, ծնված 16.05.1997թ.-ին: Բացի այդ, դատարանը նրա պարիժը մեղմացնող հանգամանք է դիտարկում այն, որ նա փառասպում է «Դեպրեսիվ պարանոիդ համախտանիշ» հիվանդությամբ:

(...)

Գալարարանը գրնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի համաչայն՝ ամբաստանյալ Վահան Սահակյանի արարքում նրա պարասխասնարվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Ելնելով գործի հանգամանքներից, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը (...), ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը (...) և 61-րդ հոդվածը (...), դարարանը գրնում է, որ ամբաստանյալներ Արարար Ավագյանի և Վահան Սահակյանի կողմից կատարված հանցավոր արարքների համար նրանց նկարմամբ պերք է պարիժներ նշանակվեն ազարագրկման չևով, որպիսի պարիժները նրանք պերք է կրեն» (տե՛ս քրեական գործի նյութերը, հատոր 2-րդ, թերթեր 86-87):

20. Վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հուլիսի 8-ի որոշման համաձայն. «(...) [Վ]երաքննիչ դարարանը վերլուծության ու գնահարության ենթարկելով գործով չևերք բերված ապացույցները, դրանցից յուրաքանչյուրը գնահարելով վերաբերելիության, թույլարելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության րեսանկյունից, հանգում է այն հերևության, որ ամբաստանյալ Ա.Ավագյանին առաջարկված մեղարանքը հիմնավորված և հարարված է գործին վերաբերվող փոխկարակցված, հավարի ապացույցների բավարար ամբողջությամբ, քրեական գործի ինչպես նախաքննությանբ, այնպես էլ դարաքննության ընթացքում քրեարարարական օրենքի էական իսարումներ, որոնք գործին մասնակցող անչանց օրենքով երաչարարված իրավունքներից գրկելու կամ դրանցում սահմանարիակելու կամ այլ ճանարարիով խոչընդորել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հերագորմանը, ագղել են կամ կարող են ագղել գործով ճիշտ որոշում կարացնելու վրա, թույլ չեն րովել և գործի փարակական հանգամանքների մասին դարարանի դարավճում շարարված հերևությունները բիտում են քրեական գործով չևերք բերված ապացույցներից, հերևարար ընդհանուր իրավասության դարարանի դարավճիքը բեկանելու, ամբաստանյալ Ա.Ավագյանին արդարացնելու կամ արարքը որպես թմրամիջոց պահելու օժանդակություն վերատրակելու հիմքեր չկան» (տե՛ս քրեական գործի նյութերը, հատոր 3-րդ, թերթեր 93-94):

21. Վ.Սահակյանի նկատմամբ նշանակված պատժի մասով Վերաքննիչ դատարանն արձանագրել է. «Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից ակնհար է դառնում, որ Երևան քաղաքի Կենրրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դարարանը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով մեղարկվող ամբաստանյալ Վահան Սերյոժայի Սահակյանի նկարմամբ պարժի րեսակն ու չարի որոշելիս դեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պարիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, և բավարար չարիով սրուգ-

ման ու պարշաճ գնահատության է ենթարկել ամբաստանյալ Վ.Սահակյանի կողմից կատարված հանցանքի հանրության համար վրանգավորության աստիճանն ու բնույթը, անչը բնութագրող տվյալները (...):

Ընդհանուր իրավասության դատարանը, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ամբաստանյալ Վահան Սահակյանի արարքում նրա պարասխանարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանք է դիտել այն, որ նրա խնամքին է գրկվում մեկ անչափահաս երեխան՝ Սերգեյ Վահանի Սահակյանը, ծնված 16.05.1997թ.-ին: Բացի այդ, դատարանը նրա պարիժը մեղմացնող հանգամանք է դիտել այն, որ նա տառասպում է «Դեպրեսիվ պարանոիդ համախտանիշ» հիվանդությամբ:

Վահան Սահակյանի արարքում նրա պարասխանարվությունն ու պարիժը ծանրացնող հանգամանքներ չեն արձանագրվել:

Նման պայմաններում ընդհանուր իրավասության դատարանը նրա նկարմամբ նշանակել է արդարացի պարիժ, ինչը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված արդարության և պարասխանարվության անհատականացման սկզբունքից՝ համապարասխանում է կատարված հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անչնափորությանը, անհրաժեշտ ու քավարար է նրան ուղղելու և նոր հանցագործություններ կանխելու համար և կարող է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պարժի նպատակները, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարժի ենթարկված անչին:

Վերոգրյալ հիմքերով վերաքննիչ դատարանը գալիս է համոզման, որ ամբաստանյալի ուղղվելը և դատարանական իրավունքի հնարավոր չէ առանց նշանակված պարիժը կրելու, նրա նկարմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պարիժ նշանակելու կամ նշանակված պարիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառելու հիմքեր չկան և դատարանի կողմից կայացված դատական ակտը՝ որպես օրինական ու հիմնավորված, պետք է թողնել օրինական ուժի մեջ» (տե՛ս քրեական գործի նյութերը, հատոր 3-րդ, թերթեր 88-89):

Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջները.

Վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

22. Ամբաստանյալ Ա.Ավագյանի պաշտպան Կ.Քամայանի պնդմամբ՝ սույն գործով ստորադաս դատարանների դատական ակտերը կայացվել են նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով: Մասնավորապես, ստորադաս դատարաններն իրենց դատական ակտերի հիմքում որպես միակ մեղադրող ուղղակի ապացույց դրել են գործով մյուս ամբաստանյալ Վ.Սահակյանի նախաքննական սկզբնական ցուցմունքները, որոնք ձեռք են բերվել ինչպես ներպետական օրենսդրության, այնպես էլ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության

մասին» եվրոպական կոնվենցիայով նախատեսված պահանջների ոտնահարմամբ:

Այսպես, բողոք բերած անձը փաստարկել է, որ ստորադաս դատարանները պետք է անթույլատրելի ապացույցներ ճանաչեին և մեղադրական դատավճռի հիմքում չդնեին Վ.Սահակյանի որպես կասկածյալ տված ցուցմունքը, Ա.Ավագյանի հետ առերես հարցաքննության ժամանակ տված ցուցմունքները, քանի որ Վ.Սահակյանը դրանք տվել է թմրամիջոց օգտագործած վիճակում, և նշված քննչական գործողություններին փաստաբան չի մասնակցել: Ուստի, բողոքաբերը գտնում է, որ վերոշարադրյալ փաստական տվյալները ձեռք են բերվել Վ.Սահակյանի պաշտպանության իրավունքի խախտմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով: Վերոշարադրյալ փաստարկները հիմնավորելու համար բողոքաբերը նշել է, որ բողոքարկվող դատական ակտերը հակասում են Վճռաբեկ դատարանի նախկինում՝ Ա.Սարգսյանի գործով 2009 թվականի սեպտեմբերի 16-ին ընդունված թիվ ԵՔԲԴ/0295/01/08 և Ն.Պողոսյանի գործով 2010 թվականի մարտի 26-ին ընդունված թիվ ՀՅՔԲԴ 2/0153/01/08 որոշումներին:

Ինչ վերաբերում է պաշտպանի մասնակցությամբ ամբաստանյալ Վ.Սահակյանի ցուցմունքներին, որոնք հերքում են Ա.Ավագյանի կողմից Վ.Սահակյանին թմրամիջոց իրացնելու հանգամանքը, ապա բողոքաբերի պնդմամբ՝ ստորադաս դատարաններն առանց որևէ հստակ հիմնավորման դրանք գնահատել են որպես Ա.Ավագյանի կողմից քրեական պատասխանատվությունից և խիստ պատժից խուսափելու միտում, իսկ Վ.Սահակյանի կողմից՝ իր ընկերոջ և շրջապատի մոտ ունեցած անվան ու քարի համբավի վերականգնում:

Բողոք բերած անձը նշել է նաև, որ դատաքննության ընթացքում պաշտպանության կողմը դատարանին ներկայացրել է ապացույցներ ամբաստանյալ Վ.Սահակյանի՝ հոգեկան հիվանդությամբ տառապելու և համապատասխան բուժում անցած լինելու վերաբերյալ: Հետևաբար, ստորադաս դատարանները պետք է նշանակեին դատահոգեբուժական-դատահոգեբանական և նարկոլոգիական փորձաքննություն՝ պարզելու Վ.Սահակյանի մեղսունակության հարցը, և թե արդյոք թմրամիջոցների ազդեցության տակ գտնվելու ժամանակ Վ.Սահակյանը կարող էր իրականությանը համապատասխանող ցուցմունքներ տալ:

Անդրադառնալով մեղադրական դատավճռի հիմքում դրված ապացույցներին, մասնավորապես՝ վկաներ Ս.Միկոյանի և Ա.Ավետիսյանի ցուցմունքներին՝ բողոքաբերը փաստարկել է, որ դրանք չեն վերաբերում Ա.Ավագյանին առաջադրված մեղադրանքին և չեն հաստատում այն:

23. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 25-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հուլիսի

8-ի որոշումը, ամբաստանյալ Ա.Ավագյանին ճանաչել անպարտ և նրան առաջադրված մեղադրանքում արդարացնել:

24. Ամբաստանյալ Վ.Սահակյանի պաշտպան Ա.Սկրտչյանը փաստարկել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ: Մասնավորապես, խախտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 62-րդ, 70-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ, 360-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը, թեև իր դատական ակտում ամբազրել է, որ Վ.Սահակյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի է առնում նրա կատարած հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող մի շարք հանգամանքներ, սակայն իրականում այդպիսիք հաշվի չի առել: Դատարանն անտեսել է, որ Վ.Սահակյանը նախկինում դատապարտված կամ որևէ կերպ արատավորված չի եղել, առաջին անգամ կատարել է ոչ մեծ ծանրության հանցագործություն, բնութագրվում է դրականորեն, վատառողջ է, խնամքին են գտնվում անչափահաս երեխան, վատառողջ մայրը, դուստրը սովորում է վճարովի հիմունքներով, ընտանիքի միակ կերակրողն է, պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքները բացակայում են: Բացի այդ, ամբաստանյալն անկեղծորեն զոջացել է և գիտակցել իր կատարածի հետևանքները, ինչի մասին է վկայում նաև նրա դրսևորած վարքագիծը, մասնավորապես այն, որ լինելով ազատության մեջ Վ.Սահակյանը որևէ խոչընդոտ չի ստեղծել վարույթն իրականացնող մարմնի համար, առաջին իսկ կանչով ներկայացել է քննությանը: Այս պայմաններում Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում որևէ հիմնավորում չի բերել, թե ինչի հիման վրա է Վ.Սահակյանի նկատմամբ 6 ամիս ժամկետով ազատազրկման ձևով պատիժ նշանակում, մեկուսացնում հասարակությունից, և ինչու ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը նրա նկատմամբ կիրառելի չէ:

Բողոքաբերը կարծիք է հայտնել, որ Վ.Սահակյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով և փորձաշրջան նշանակելով հնարավոր է հասնել պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և նոր հանցագործությունների կանխմանը, ինչպես նաև ապահովել արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները:

25. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել ստորադաս դատարանների դատական ակտերը, ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով Վ.Սահակյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել և սահմանել փորձաշրջան:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

26. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության, մասնավորապես՝ իրավունքի զարգացման գործառույթի իրացման ապահովումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատելիս ապացույցների բավարարության, ինչպես նաև պատիժ նշանակելու մասով դատական ակտի պատճառաբանվածության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

I. *Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատելիս ապացույցների բավարարությունը.*

27. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. ամբաստանյալ Ա.Ավագյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչելիս ստորադաս դատարանները պահպանե՞լ են արդյոք գործի լուծման համար բավարարության տեսանկյունից ապացույցները գնահատելու օրենսդրական պահանջը:

28. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 3. *Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:*

4. *Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարսրվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պարզան հրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի: (...):»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն՝ «Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).

2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին.

3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.

4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ.

5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խտրացնող հանգամանքները.

6) այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր սպացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ սպացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության փեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, սպացույցները գնահատում են սպացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն սպացուցված է դատական քննության ընթացքում: Հանցանքը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունը կարող է համարվել սպացուցված, եթե դատարանը, ղեկավարվելով անմեղության կանխավարկածով, հիմնվելով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատական քննության ընթացքում գործի հանգամանքների հետազոտման արդյունքների վրա, դատաքննության ժամանակ հետազոտված հավաստի սպացույցների հիման վրա, ամբաստանյալի մեղավորության մասին չհարարվող բոլոր կասկածները նրա օգտին մեկնաբանելով, սույն օրենսգրքի 360 հոդվածի առաջին մասի 1-4-րդ կետերում նշված հարցերին փայլիս է հաստատող պատասխաններ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն՝ «Դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում ցույց է տրվում (...) 3) այն սպացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, ինչպես նաև այս կամ այն սպացույցն անարժանահավասար համարելու փաստարկները»:

«Ապացույցների բավարարություն» հասկացության էությունը, սպացույցների բավարարությունը որոշելու ընդհանուր չափանիշները, դրանցից յուրաքանչյուրի բնութագիրը Վճռաբեկ դատարանը քննարկել և վերլուծել է Ս.Սաքանյանի վերաբերյալ գործով կայացրած որոշման շրջանակներում:

Մասնավորապես, վկայակոչված որոշման մեջ Վճռաբեկ դատարանը, համեմատական վերլուծության ենթարկելով «սպացուցման առարկա» և «սպացույցների բավարարություն» հասկացությունները, նշել է. «(...) եթե սպացուցման առարկան ցույց է փայլիս, թե ինչ է անհրաժեշտ պարզել յուրաքանչյուր քրեական գործով, սպա սպացույցների բավարարությունը կապված է այն սպացուցողական նյութի հետ, որը վերաբերում է

ապացուցման առարկային և թույլ է տալիս այդ հանգամանքների մասին գալ արժանահավատ հետևություն: Որոշելով ապացույցների բավարարությունը՝ վարույթն իրականացնող մարմինները լուծում են քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների հետազոտման խորության աստիճանի հետ կապված հարցերը, մասնավորապես այն, թե ի՞նչ աստիճանի պեղք է մանրացվի յուրաքանչյուր հանգամանքը, և ի՞նչ ծավալի ապացույցներ են անհրաժեշտ այդ հանգամանքները հավաստի պարզելու և դրա հիման վրա այս կամ այն դատավարական որոշումը կայացնելու համար:

Այսպիսով, ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պարճառաբանվածությունը:

Ի տարբերություն ապացուցման առարկայի, ապացույցների բավարարություն հասկացության բովանդակությունը քրեական դատավարության օրենսդրությամբ բացահայտված չէ, այսինքն՝ օրենքում հստակ նշում չկա այն մասին, թե մինչև ե՞րբ պեղք է հավաքվեն և հետազոտվեն ապացույցները, որպեսզի յուրաքանչյուր գործով պարզվի ապացուցման առարկան ամբողջությամբ կամ նրա տարրերն առանձին վերցրած: Բացի այդ, օրենքում սահմանված չէ միասնական չափանիշ առ այն, թե ե՞րբ են ի հայտ գալիս յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման առարկան բացահայտված համարելու հիմքերը:

Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծության հիման վրա արձանագրում է ապացույցների բավարարությունը որոշելու հետևյալ ընդհանուր չափանիշները՝

- 1) վարույթն իրականացնող մարմիններին ներքին համոզմունք,
- 2) դատավարական որոշումների հիմնավորվածություն և պարճառաբանվածություն,

3) անմեղության կանխավարկած» (տե՛ս Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 14-15-րդ կետերը, իսկ վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքի, դատավարական որոշումների հիմնավորվածության և պատճառաբանվածության, անմեղության կանխավարկածի մասին մանրամասն տե՛ս նույն որոշման 16-19-րդ կետերը):

29. Վերահաստատելով և զարգացնելով նախորդ կետում մեջբերված գործով արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «ապացույցների բավարարությունը» որոշելու չափանիշներն են.

- 1) անմեղության կանխավարկածը,
- 2) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը,

3) դատավարական որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը:

30. Անդրադառնալով անմեղության կանխավարկածի սկզբունքին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ քրեական դատավարությունում կանխավարկածը օրենքով կամ նախադեպային իրավունքով հաստատված այն կանոնն է, որի համաձայն՝ որոշակի հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը: Մարդու անմեղությունը քրեական դատավարության կարևորագույն կանխավարկածներից է, որն ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենքներով, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով: Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Մինևույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղության:

Հարկ է նշել նաև, որ անմեղության կանխավարկածն ամրագրող նորմերը, ինչպես նաև նախադեպային իրավունքը սահմանում են ոչ միայն այդ սկզբունքի բուն էությունը, այլև՝ դրա հաղթահարման, նույնն է, թե անձի մեղավորության հաստատման համար անհրաժեշտ դատավարական չափորոշիչները: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը *Մ. Հակոբյանի* գործով որոշման մեջ շեշտել է. «(...) *ապացույցների կամայական զնահատման արգելքը դատարաններին պարտավորեցնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածում թվարկված՝ ապացուցման ենթակա հանգամանքների, այդ թվում՝ կոնկրետ հանցանքի հատկանիշների և այդ հանցանքի մեջ անձի մեղավորության վերաբերյալ իր հետևությունները հիմնավորել վերաբերելի, փոխկապակցված, հավասարի ապացույցներով և ոչ թե ենթադրություններով: Այլ խոսքով՝ հանցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի վերաբերյալ՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կապակցությամբ դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի ոչ թե զնահատողական դատողությունների, կանխարեհսումների կամ կարծիքների, այլ կոնկրետ գործով օրենքով սահմանված կարգով չեռք բերված փաստական փյույվների վրա: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ մեղսագրվող հանցագործության և դրա հատկանիշների ապացուցման բեռը կրում է մեղադրանքի կողմը, իսկ չփարսաված կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ մեղադրյալի: Դրանից հետևում է, որ մեղադրանքի կողմը կրում է անձի մեղքը հաստատելու համար բավարար ապացույցներ ներկայացնելու պարտականությունը (...)*» (տե՛ս Մարգար Հակոբյանի վերաբերյալ 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0168/01/12 որոշման 13-րդ կետը): Անմեղության կանխավարկածի

սկզբունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել և իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի գործով որոշման մեջ (տե՛ս Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 14-րդ կետը):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետով երաշխավորված անմեղության կանխավարկածի սկզբունքը, ի թիվս այլոց, ենթադրում է մեղադրանքի կողմի պարտականությունը ներկայացնելու անձին դատապարտելու համար բավարար ապացույցներ (տե՛ս, ի թիվս այլոց, Barbera Messegue and Jabardo v. Spain, գանգատ թիվ 10590/83, 1988 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռ, 77-րդ կետ, Janosevic v. Sweden, գանգատ թիվ 34619/97, 2002 թվականի հունիսի 23-ի վճիռ, 97-րդ կետ):

Այսպիսով, անմեղության կանխավարկածի սկզբունքը ենթադրում է ապացույցների այնպիսի ամբողջության առկայություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու, այլ ոչ թե անձի մեղավորության մասին ենթադրություններ անելու համար:

31. Ապացույցների բավարարությունը որոշելու մյուս չափանիշին՝ ներքին համոզմունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Մ.Հովհաննիսյանի և Ա.Մարտիրոսյանի վերաբերյալ որոշման մեջ և դիրքորոշում ձևավորել այն մասին, որ «(...) Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն, մի կողմից, պետք է բիսի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիրքորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:

Ապացույցները, որոնք հավաքվել և ստուգվել են օրենքին համապատասխան, կազմում են ներքին համոզմունքի այն օբյեկտիվ հիմքը, որն իր դրսևորումն է գտնում ընդունվող որոշումներում: Թեպետ ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, այն չի կարող լինել կամայական: Դրա հիմքում պետք է դրված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և քաղաքականի քննությունը: (...)» (տե՛ս Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԲԲԴ/0632/01/08 որոշման 14-րդ կետը):

Այսպիսով, «ներքին համոզմունքը» սուբյեկտիվ-օբյեկտիվ կատեգորիա է: Այն ապացույցների գնահատումն իրականացնող սուբյեկտի գիտակցված և ողջամիտ համոզվածությունն է իր իսկ կողմից կայացված որոշման հիմնավորվածության մեջ (սուբյեկտիվ բնույթ): Այդպիսի համոզվածությունը պետք է ձևավորված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և

բազմակողմանի քննության արդյունքում և հիմնվի թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցությամբ հաստատված փաստերի վրա, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ ողջամտորեն կձևավորեն նույն համոզվածությունը (օբյեկտիվ բնույթ):

Ելնելով այն հանգամանքից, որ ներքին համոզմունքն ունի օբյեկտիվ հիմքեր, անհրաժեշտ է այն տարբերակել ինտուիցիայից, ենթադրություններից և այլ անհաշվետու զգացմունքներից: Ի տարբերություն դրանց, ներքին համոզմունքը չի կարող ձևավորվել առանց օբյեկտիվ հիմքի և հիմնվել անթույլատրելի, ոչ վերաբերելի, անարժանահավատ ապացույցների վրա: Այլ խոսքով, ներքին համոզմունքը հիմնվում է ողջամիտ կարծիքի, գիտելիքի վրա, այլ ոչ թե ենթադրությունների, երևակայության, համակրանքի, հակակրանքի կամ կանխակալ կարծիքի վրա:

Ներքին համոզմունքի՝ որպես ապացույցների գնահատման արդյունքի օբյեկտիվ հիմքը քրեական գործով ձեռք բերված, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտված ապացույցների բավարար համակցությունն է: Այս առումով անհրաժեշտ է վերլուծել ապացույցների թույլատրելիության, վերաբերելիության և արժանահավատության հատկանիշները, որոնց տեսանկյունից ապացույցները ենթակա են գնահատման:

31.1. Ապացույցների թույլատրելիության հատկանիշը վերաբերում է դրանց ձևական կողմին: Դրա էությունը կազմում է ապացույցները ձեռք բերելիս օրենքով նախատեսված դատավարական պահանջների պահպանվածությունը և ենթադրում է.

- աղբյուրի օրինականություն՝ ապացույցը պետք է ձեռք բերվի միայն օրենքով սահմանված աղբյուրներից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մաս),
- ձեռքբերման միջոցների օրինականություն՝ պետք է պահպանված լինեն ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ կատարելուն օրենքով առաջադրված պահանջները,
- դատավարական ձևակերպում՝ ապացույցը, դրա ձեռքբերման գործընթացը պետք է օրենքով սահմանված կարգով ենթարկվեն դատավարական ձևակերպման,
- լիազորված սուբյեկտ՝ այն պետք է ստացված լինի ապացույց ձեռք բերելու լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից:

Ապացույցն անթույլատրելի ճանաչելու հիմքերը հստակ սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածով:

31.2. Վերաբերելիությունն ապացույցի կարողությունն է իր բովանդակությամբ ծառայելու ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքները, գործի քննության և լուծման համար նշանակություն ունեցող այլ տվյալները բացահայտելուն և հաստատելուն: Այլ խոսքով՝ ապացույցի վերաբերելիության հատկանիշն արտացոլում է ապացույցի և գործի քննության ու լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների միջև կապը: Ապացույցը

կհամարվի վերաբերելի, եթե տեղեկություններ պարունակի գործի համար որևէ նշանակություն ունեցող փաստի մասին:

31.3. Ապացույցի արժանահավատության հատկանիշը նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

ա) ապացույցի աղբյուրի հատկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռն-հասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հատկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հատկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մտապահելու, վերարտադրելու գործընթացի վրա),

բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

գ) ապացուցողական տեղեկությունը ձեռք բերելու միջոցը,

դ) ապացույցի բովանդակությունը կազմող տեղեկությունը հաստատող կամ հերքող հանգամանքների առկայությունը,

ե) նույն տեղեկության ստացումն այլ աղբյուրից:

Յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների ստացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում՝ դրա պատճառները:

Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա:

32. Ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օբյեկտիվացվում ապացույցների բավարարությունը որոշելու մյուս՝ դատավարական որոշումների հիմնավորման և պատճառաբանման չափանիշի միջոցով (սույն չափանիշի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների մասին տե՛ս նաև Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 18-րդ կետը): Ապացույցների կամայական գնահատման արգելքը

ենթադրում է ապացույցները բարեխիղճ վերլուծության ենթարկելու պարտականություն:

Վերջին դիրքորոշումը բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից, որի համաձայն՝ «Դատարանի դատավճիռը պետք է լինի պարճառաբանված: Պարճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները»:

Դատական ակտի պատճառաբանվածության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Ֆ. Գալստյանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Դատական ակտի պարճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է դեկլարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

(...) Պարճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ակտի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպարճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:

(...) Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում՝ ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպարճառաբանվածությունը կամ ոչ բավարար պարճառաբանվածությունը դիտել [է] «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անչի արդար դատական քննության իրավունքի խախտում (տե՛ս Սալովն ընդդեմ Ուկրաինայի (*Salov v. Ukraine*) 06.09.2005 թվականի որոշումը, զանգապ թիվ 65518/01, Բորդեան ընդդեմ Ռումինիայի (*Boldea v. Romania*) 15.02.2007 թվականի որոշումը, զանգապ թիվ 19997/02, Գրադինարն ընդդեմ Մոլդովայի (*Gradinar v. Moldova*) 08.04.2008 թվականի որոշումը, զանգապ թիվ 7170/02)» (տե՛ս Ֆրունզիկ Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԳ/0058/11/09 որոշման 18-20-րդ կետերը):

Վերահաստատելով *Ֆ. Գալստյանի* գործով որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը պարտավոր է իր դատական ակտում ամրագրել և թույլատրելիության, վերաբերելիության ու արժանահավատության տեսանկյունից գնահատման ենթարկել այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի

հետևությունները, ինչպես նաև նշել այս կամ այն ապացույցն անարժանահավատ համարելու փաստարկները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 3-րդ կետ): Հակառակ դեպքում ապացույցների գնահատումը, դրա արդյունքում դատարանի համապատասխան ներքին համոզումների ձևավորումը կկրեն սուբյեկտիվ բնույթ, կհանգեցնեն կամայականության և անձի արդար դատաքննության իրավունքի խախտման՝ սահմանափակելով նաև դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելու վերադաս դատարանի հնարավորությունը:

33. Սույն որոշման 29-32-րդ կետերում կատարված իրավական վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի լուծման համար ապացույցների բավարարությունը որոշելու չափանիշները սերտորեն փոխկապակցված են և փոխադարձաբար պայմանավորում են միմյանց: Գործի լուծման համար բավարար ապացույցներ ասելով՝ պետք է հասկանալ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր համոզվածություն անձի մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն կտա կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում:

Ս.Սաքանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է. «Ապացույցների բավարարությունը չի կարող որոշվել թվաքանակական ցուցանիշով (...): Ակնհայտ է, որ ապացույցները բավարար չեն, եթե՝

1) գործում բացակայում է որևէ ապացույց գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզման համար,

2) եղած ապացույցը թույլ չի տալիս պարզել այդ հանգամանքը անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ,

3) այդ հանգամանքի ապացուցվածությունը կասկած է հարուցում:» (տե՛ս Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԳ/0058/01/10 որոշման 17-րդ կետը):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը **բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը**: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (լսիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ **ցանկացած ողջամիտ կասկած**:

34. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Ավագյանը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել և բոլոր ցուցմունքներում՝ թե՛ նախաքննական, թե՛ դատաքննական, հերքել է Վ.Սահակյանին թմրամիջոց իրացնելու հանգամանքը (տե՛ս սույն որոշման 8-րդ, 13-րդ և 16-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը դատավճռում պատճառաբանել է. «Դատարանը վերլուծելով և գնահատման ենթարկելով դատաքննությանը ուսումնասիրված՝ Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի ցուցմունքները, դրանք համարում է սուբյեկտիվ և անարժանահավասար և գտնում, որ այդպիսիք նպատակ են հետապնդում Արարատ Ավագյանի դեպքում՝ նրան ազատել քրեական պատասխանատվությունից և սպասվող խիստ պարտից, իսկ Վահան Սահակյանի դեպքում՝ վերականգնել իր՝ ընկերոջ և նրա շրջապատի մոտ ունեցած անունն ու բարի համբավը, փորձելով նախկինում տրված և դատարանի մոտ ավելի արժանահավասար դիրարկված ցուցմունքները ներկայացնել որպես իրենից խաբեության արդյունքում կորզված սպացույցներ» (տե՛ս սույն որոշման 18-րդ կետը):

Մեջբերված փաստերը վերլուծելով սույն որոշման 31.3-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, գնահատելով Վ.Սահակյանի սկզբնական նախաքննական ցուցմունքները, ինչպես նաև հետագա նախաքննական և դատաքննական ցուցմունքների արժանահավատության հարցը, որևէ վերլուծություն և հիմնավորում չեն նշել համապատասխան ցուցմունքները տալու հանգամանքների, Վ.Սահակյանի հոգեբանական կամ ֆիզիոլոգիական վիճակի վերաբերյալ, ստացված տեղեկությունները չեն վերլուծել իրենց ամբողջության մեջ, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում՝ դրա պատճառները:

Մինչդեռ, գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- գործի նյութերում առկա են փաստական տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր է ողջամիտ հետևություն անել այն մասին, որ Վ.Սահակյանը բերման ենթարկվելու օրը եղել է թմրամիջոց օգտագործած վիճակում: Վերջին դիրքորոշման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում փորձագետի 2013 թվականի հոկտեմբերի 30-ի հմ. 0916 եզրակացությունը, որի համաձայն Վ.Սահակյանի մեզի և մազի փորձանմուշներում հայտնաբերվել են կանաքինոիդների խմբի թմրամիջոցների թմրակալառիդներ, և «Մերսեդես մակնիշի ավտոմեքենան զննության ենթարկելու մասին» 2013 թվականի հոկտեմբերի 24-ի արձանագրությունը, որի համաձայն՝ մեքենայից հայտնաբերվել է նաև մոխրի հետքերով ջրի դատարկ շիշ, որի վերաբերյալ Վ.Սահակյանը հայտարարել է, որ այն կանեփի տերևները ծխելու հարմարանք է, ինչպես նաև բողոքաբերի փաստարկները,

- ստորադաս դատարանների կողմից արժանահավատ գնահատված ցուցմունքները տրվել են 2013 թվականի հոկտեմբերի 25-ին, այսինքն՝ Վ.Սահակյանին բերման ենթարկելու օրվան՝ 2013 թվականի հոկտեմբերի 24-ին, հաջորդող օրը,
- Առաջին ատյանի դատարանի դատավճռով հաստատված է համարվել, որ Վ.Սահակյանը տառապում է «գեպրեսիվ - պարանոիդ համախտանիշ» հիվանդությամբ,
- կասկածյալ Վ.Սահակյանի 2013 թվականի հոկտեմբերի 25-ի հարցաքննությանը և Ա.Ավագյանի հետ առերեսմանը պաշտպան չի մասնակցել:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վ.Սահակյանի սկզբնական ցուցմունքների արժանահավատությունը գնահատելիս ստորադաս դատարաններն անտեսել են և հաշվի չեն առել նրա անձին և ցուցմունք տալու հանգամանքներին վերաբերող վերոհիշյալ հանգամանքները:

Գործի նյութերից երևում է նաև, որ Ա.Ավագյանը գործի քննության ողջ ընթացքում չի ընդունել Վ.Սահակյանին թմրամիջոց իրացնելու փաստը: 2013 թվականի հոկտեմբերի 25-ին ցուցմունք տալուց և Ա.Ավագյանի հետ առերես հարցաքննվելուց հինգ օր անց Վ.Սահակյանը դիմում է ներկայացրել՝ հայտնելով, որ ճիշտ ցուցմունք չի տվել և հայտնած տեղեկությունը իրականությանը չհամապատասխանելու պատճառաբանությամբ ցանկանում է լրացուցիչ ցուցմունք տալ դեպքի իրական հանգամանքների մասին: Հետագա թե՛ նախաքննական, թե՛ դատաքննական բոլոր ցուցմունքներում, որոնք տրվել են պաշտպանի ներկայությամբ, Վ.Սահակյանը հերքել է Ա.Ավագյանի մասնակցությունը հանցագործությանը:

Վերոնշյալ հանգամանքների համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը հիմնավորված չի համարում ստորադաս դատական ատյանների այն հետևությունը, որ Վ.Սահակյանի 2013 թվականի հոկտեմբերի 25-ին տված ցուցմունքներն արժանահավատ են, իսկ դրանից հետո տրված ցուցմունքները՝ անարժանահավատ:

Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի այն պատճառաբանությանը, որ Վ.Սահակյանի հետագա նախաքննական և դատաքննական ցուցմունքները «սուրյեկտիվ և անարժանահավատ» են, քանի որ նպատակ են հետապնդում «վերականգնել իր՝ ընկերոջ և նրա շրջապատի մոտ ունեցած անունն ու բարի համբավը, փորձելով նախկինում տրված և դատարանի մոտ ավելի արժանահավատ դիրարկված ցուցմունքները ներկայացնել որպես իրենից խաբեության արդյունքում կորզված սպացույցներ»՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

«Անունն ու բարի համբավը» (հեղինակությունը) բարոյական բնույթ ունեցող հասկացություն են և իրենցից ներկայացնում են հանրորեն արժեքավորվող որակների գնահատման հիման վրա անձի մասին ձևավորված կարծիք: Սույն դեպքում դատարանը գտել է, որ արդարադատություն իրա-

կանացնող մարմնի առջև սուտ ցուցմունք տալը կարող է գնահատվել որպես անձի հեղինակությունը վերականգնելու միջոց, մինչդեռ սուտ ցուցմունք տալը, առավել ևս այլ անձանց կողմից հանցանք կատարելու վերաբերյալ, չի կարող համարվել հանրորեն արժեքավորվող որակ: Հետևաբար դատարանի կողմից Վ.Սահակյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքներն անարժանահավատ գնահատելու վերաբերյալ պատճառաբանությունը հիմնավորված չէ, չի բխում գործի փաստական տվյալներից կամ իրավունքի հանրաճանաչ սկզբունքներից:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ ստորադաս դատական ատյանները, Վ.Սահակյանի 2013 թվականի հոկտեմբերի 25-ին տված ցուցմունքներն արժանահավատ, իսկ դրանից հետո տրված ցուցմունքները՝ անարժանահավատ ապացույցներ գնահատելով, խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները:

34.1. Ա.Ավագյանին և Վ.Սահակյանին առաջադրված մեղադրանքներում մեղավոր ճանաչելով՝ Առաջին ատյանի դատարանը նրանց մեղադրանքի հիմքում դրել է՝ Վ.Սահակյանի 2013 թվականի հոկտեմբերի 25-ի ցուցմունքները, որպես վկա հարցաքննված ընթերականեր Ս.Միկոյանի և Ա.Ավետիսյանի ցուցմունքները, մեքենայի զննության մասին արձանագրությունը, դատաքիմիական և տոքսիկոքիմիական փորձաքննությունների եզրակացությունները, իրեն նաև ապացույց ճանաչված 0,55 գրամ քաշով «չորացված մարիխուանա» տեսակի թմրամիջոցը և ապացույց ճանաչված այլ փաստաթուղթ հանդիսացող՝ Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի կողմից օգտագործվող հեռախոսներից կատարված հեռախոսազանգերի վերձանույնները (տե՛ս սույն որոշման 18-րդ կետը): Ընդ որում, նշված բոլոր ապացույցները թվարկվել են Ա.Ավագյանին և Վ.Սահակյանին մեղսագրված արարքները նկարագրելուց հետո, առանց սահմանազատելու, թե դրանցից որն է հիմնավորում Ա.Ավագյանի մեղքը նրան վերագրվող արարքի կատարման մեջ, որը՝ Վ.Սահակյանի:

Ստորադաս դատարանների կողմից վկայակոչված Վ.Սահակյանի մեղքը հաստատող ապացույցների վերլուծությունից երևում է, որ դրանցից միայն Վ.Սահակյանի նախաքննական սկզբնական երկու՝ 2013 թվականի հոկտեմբերի 25-ին տված և նույն օրն առերեսման ժամանակ պնդած ցուցմունքներն են վերաբերում Ա.Ավագյանի կողմից Վ.Սահակյանին թմրամիջոց իրացնելու հանգամանքին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), որոնցից դեռևս նախաքննության ընթացքում Վ.Սահակյանը հրաժարվել է: Ինչպես արդեն նշվել է, Վ.Սահակյանը ցուցմունք տալուց հինգ օր անց՝ 2013 թվականի հոկտեմբերի 30-ին, դիմում է գրել դատախազին՝ հայտնելով, որ 2013 թվականի հոկտեմբերի 25-ին ճիշտ ցուցմունք չի տվել և ցանկանում է լրացուցիչ ցուցմունք տալ դեպքի իրական հանգամանքների մասին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Դրանից հետո տրված ցուցմունքով Վ.Սահակյանը ժխտել է Ա.Ավագյանի կողմից իրեն թմրամիջոց տալու փաստը և ցուցմունք է տվել

այն մասին, որ թմրամիջոցը ձեռք է բերել Երևանի Նուբարաշեն վարչական շրջանում գործող ավտոշուկայում անձանոթ անձանցից (տե՛ս սույն որոշման 10-րդ և 16-րդ կետերը): Վ.Սահակյանի 2013 թվականի հոկտեմբերի 25-ին տված ցուցմունքներն արժանահավատ գնահատելու վերաբերյալ ստորադաս դատարանների եզրահանգումները հիմնավորված չեն (տե՛ս սույն որոշման 34-րդ կետը):

Ինչ վերաբերում է մեղադրական դատավճռում նշված մնացած ապացույցներին՝ ապա նշված ապացույցներից.

- Ս.Միկոյանի և Ա.Ավետիսյանի ցուցմունքները պարզապես վերարտադրում են Վ.Սահակյանի սկզբնական հայտարարությունն այն մասին, որ վերջինին թմրամիջոց իրացրել է իր ընկերը, որի անունը, սակայն, չի նշվել,
- տոբսիկոքիմիական փորձաքննության թիվ 0916 և թիվ 0919 եզրակացություններով հաստատվում է Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի կողմից թմրամիջոց գործածելու փաստը,
- Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի կողմից օգտագործվող հեռախոսներից կատարված հեռախոսազանգերի վերծանումները հաստատում են, որ Ա.Ավագյանը և Վ.Սահակյանը 2013 թվականի հոկտեմբերի 24-ին որոշակի ժամերի գտնվել են Երևանի կենդանաբանական այգու մոտակայքում, որպիսի հանգամանքը երկուսն էլ չեն հերքել:

Վերոշարադրյալ ապացույցների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ինչպես առանձին, այնպես էլ համակցությամբ չեն հաստատում կոնկրետ գործով ապացուցման առարկան կազմող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ Ա.Ավագյանի առնչությունը դեպքին և նրա մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված և նրան մեղսագրված արարքը կատարելու մեջ:

Ավելին, քրեական գործի ուսումնասիրությունից երևում է, որ թմրամիջոցն իրեն Երևանի ավտոշուկայում անձանոթ անձանց կողմից իրացնելու մասին Վ.Սահակյանի ցուցմունքների առնչությամբ նախաքննության մարմինը դեռևս 2013 թվականի դեկտեմբերի 6-ին համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարություն է տվել ոստիկանությանը՝ Ա.Ավագյանի և Վ.Սահակյանի ցուցմունքների արժանահավատությունը ստուգելու, դեպքի մասին տեղեկություններ ունեցող անձանց և դեպքի իրական հանգամանքները պարզելու նպատակով (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը): Սակայն տրված հանձնարարությանը հետամուտ չլինելով, այդ ուղղությամբ քննությունը մինչև վերջ չհասցնելով՝ նախաքննության մարմինը չի պահպանել գործով լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ մասի 3-րդ կետի պահանջը և գործն ուղարկել է դատարան:

Ավելին, նախաքննության մարմինը որևէ նոր փաստական տվյալ ձեռք չբերելու պայմաններում 2013 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ անհայտ անձի կողմից Ա.Ավագյանին զգալի չափի՝ 0,55 գրամ քաշով «չորացված

մարիխուանա» տեսակի թմրամիջոց ապօրինի իրացնելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նոր քրեական գործ է հարուցել (տե՛ս սույն որոշման 14-րդ կետը):

35. Սույն որոշման 34-34.1-րդ կետերում շարադրված փաստերը գնահատելով 28-33-րդ կետերում կատարված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա ապացույցների համակցությունը բավարար չէ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատված համարելու, որ Ա.Ավագյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարք, այն է՝ զգալի չափի թմրամիջոց է իրացրել Վ.Սահակյանին: Մեղադրական դատավճռի հիմքում դրված ապացույցների համակցությունը բավարար չէ Ա.Ավագյանին մեղսագրվող հանցավոր արարքի փաստական հանգամանքները հաստատված համարելու այն ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Ավագյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչելիս ստորադաս դատարանները չեն պահպանել ապացույցները գործի լուծման համար բավարարության տեսանկյունից գնահատելու օրենսդրական պահանջը՝ խախտելով անմեղության կանխավարկածի, ապացույցները գնահատելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ, 25-րդ, 127-րդ, 365-րդ հոդվածների պահանջները:

II. *Ամբաստանյալ Վ.Սահակյանի նկատմամբ նշանակված պարօժի համաչափությունը*

36. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Վ.Սահակյանի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակելու և այդ պատիժը նրա կողմից կրելու անհրաժեշտության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

37. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պարօժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անչնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պարօժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պարօժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անչի նկատմամբ նշանակվում է արդարացի պարիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պարծի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անչը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

3. Հանցագործության համար նախատեսված պարիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պարծի նպատակները»:

Մեջբերված իրավական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել և դրանց վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է հայտնել թիվ ՎԲ-50/07, ՎԲ-142/07, ՎԲ-192/07, ՎԲ-201/07, ԵՇԴ/0029/01/08, ԵԿԴ/0042/01/11, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում: Նշված որոշումներում Վճռաբեկ դատարանի ձևավորած կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործության և քրեաիրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Պատիժն արդարացի է, եթե համաչափ է կատարված հանցագործությանը, ինչպես նաև բավարար պատժի նպատակներին հասնելու տեսանկյունից: Պատժի արդարության պահանջներից նահանջելը կարող է հանգեցնել չափազանց մեղմ կամ չափազանց խիստ պատժի նշանակման: Քրեական օրենքը համընդհանուր բնույթ ունի, իսկ արարքը և հանցավորի անձը կոնկրետ են: Հետևաբար կոնկրետ գործով պատիժ նշանակելիս դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի, հանցավորի անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա: Նշված հանգամանքների գնահատման ժամանակ դատարանը պետք է ելնի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից:

38. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրիման կամ կարգապահական գումարարկում պահելու չեղով պարիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պարիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պարիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պարիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անչը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: (...)»:

Մեջբերված քրեաիրավական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել թիվ ՎԲ-50/07, ՎԲ-139/07, ՎԲ-195/07, ՎԲ-01/08,

ԵԿԴ/0034/01/08, ԱՎԴ-2/0059/01/08, ԵԱԶԴ/0078/01/09, ԼԴ-2/0019/01/09, ՍԳ/0226/01/09, ԳԴ-1/0003/01/10, ՍԳ/0085/01/10, ԵԿԴ/0126/01/10, ԵԷԴ/0201/01/11, ԵԱԴԴ-0034/01/12, ԼԴ/0093/01/12, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում:

Վերոնշյալ որոշումներում Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունը, որ ամբաստանյալի ուղղումը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, սակայն դատարանը, կոնկրետ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատման հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը, անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պարտավոր է հաշվի առնել՝

ա) հանցավորի անձը բնութագրող տվյալները,

բ) պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և (կամ) ծանրացնող հանգամանքները,

գ) հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը,

դ) հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները,

ե) հանցանք կատարած անձի մեղքի ձևը,

զ) հանցանք կատարած անձի կողմից հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը և այլն:

39. Այսպիսով, նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության հանրային վտանգավորության աստիճանին և բնույթին (*հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանի և բնույթի հարցերի վերաբերյալ մանրամասն տեսն Գարուշ Մաղաթյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի ԵՇԴ/0029/01/08 որոշման 14-րդ կետը*):

Հանցագործության հանրային վտանգավորության տիպային բնութագիրն արտացոլվում է օրենսդրի կողմից սահմանված սանկցիայում, իսկ յուրաքանչյուր կոնկրետ գործով արարքի հանրային վտանգավորության գնահատ-

ականը դատարանի կողմից կարող է որոշվել կոնկրետ հանցագործության տարրերի առանձնահատկությունների, դրա կատարման հանգամանքների, հանցավորի անձնավորության, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների հիման վրա:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում, ի թիվս այլնի, առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելու կամ պահելու համար:

Նշված նորմի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ հանցագործության վերաբերյալ գործերով պատժի անհատականացման սկզբունքի տեսանկյունից արարքի հանրային վտանգավորությունը որոշելիս դատարանը, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնի.

- թմրանյութի տեսակը (վտանգավորության աստիճանը, անձի օրգանիզմի վրա ազդեցության աստիճանը),
- դրա չափը («Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը» սահմանող` ՀՀ քրեական օրենսգրքի թիվ 1 հավելվածում նշված կոնկրետ չափի նվազագույն կամ առավելագույն սահմանին մոտ լինելը),
- արարքի կատարման նպատակն ու շարժառիթը (օրինակ` հիվանդությանը պայմանավորված ցավերը թեթևացնելու համար կատարելը):

Վկայակոչված հանգամանքները, այլ հանգամանքների հետ համակցությամբ ազդում են արարքի հանրային վտանգավորության վրա և պետք է իրենց համապատասխան գնահատականը ստանան յուրաքանչյուր գործով պատիժ նշանակելիս:

Պատժի անհատականացման սկզբունքի բովանդակության հիմնական մասն է կազմում նաև հանցավորի անձը բնութագրող տվյալների գնահատումը, որոնք իրենց ամբողջության մեջ հնարավորություն են տալիս անձին դիտել ոչ միայն որպես հանցանք կատարող, որը պետք է պատասխանատվություն կրի, այլ նաև որպես կոնկրետ անձ` իր անհատական հատկանիշներով: Ընդ որում` անձի այն հատկանիշները, որոնք գտնվում են հանցակազմից դուրս, նշանակություն են ունենում դատարանի կողմից պատժի տեսակը և չափը որոշելիս: Որպես հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ` գնահատվում են նրա սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական հատկությունները` վարքագիծն ընտանիքում և կենցաղում, աշխատանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը, կրթությունը, առողջական վիճակը, տարիքը, ծառայությունը պետության և հասարակության առջև և այլն:

40. Հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը պարտավոր է գործի նյութերում առկա փաստական տվյալների հիման վրա պատճառաբանել ինչպես պատժի տեսակի և չափի ընտրության, այնպես էլ ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելու անհրաժեշտության վերաբերյալ իր որոշումը: Դատական որոշման որակը մեծապես կախված է դրա պատճառաբանական մասից,

հետևաբար դատական որոշումները սկզբունքորեն պետք է պատճառաբանված լինեն: Պատժի տեսակի և չափի ընտրության, ինչպես նաև պատիժը կրելու անհրաժեշտության վերաբերյալ դատարանի եզրահանգումները հիմնավորող պատճառների մատնանշումը ոչ միայն ավելի հասկանալի և ընդունելի է դարձնում դատավճիռը վարույթի մասնակիցների համար, այլև՝ բացառում է կամայականությունը: Նախևառաջ, դա նշանակում է, որ դատավորը պարտավորված է լինում արձագանքել կողմերի ներկայացրած փաստարկներին և մատնանշել տվյալ որոշումը հիմնավորող և իրավաչափ դարձնող փաստարկները: Եվ երկրորդ՝ պատշաճ պատճառաբանությունը հասարակությանը թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես է գործում դատական համակարգը հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժ սահմանելիս:

Բացի այդ, դատական ակտի չպատճառաբանված կամ ոչ բավարար չափով պատճառաբանված լինելը հանգեցնում է նաև քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ արդար դատական քննության իրավունքի խախտման, քանի որ օբյեկտիվորեն սահմանափակվում է վերադաս դատական ստյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը (տե՛ս Ֆրունզիկ Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-19-րդ կետերը):

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջները պահպանված լինելու առումով ընդունելի չի կարող համարվել ոչ միայն այն դատական ակտը, որտեղ պատժի վերաբերյալ դատարանի հետևությունները հիմնված չեն դատական քննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա, այլև այնպիսին, որում բացակայում են պատժատեսակի, պատժաչափի կամ պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի եզրահանգումները հիմնավորող հետևողական, հստակ և ոչ հակասական պատճառաբանությունները:

41. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Սահակյանը առողջական խնդիրների պատճառով օգտագործել է «մարիխուանա» տեսակի թմրամիջոց: 2013 թվականի հոկտեմբերի 24-ին՝ ժամը 18:50-ի սահմաններում, ՀՀ ոստիկանության աշխատակիցները Երևան քաղաքի Վ.Սարգսյան փողոցից կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն են բերման ենթարկել Վ.Սահակյանին, որտեղ էլ վերջինիս ավտոմեքենայի զննությամբ հայտնաբերվել է 0.55 գրամ քաշով «չորացված մարիխուանա» տեսակի թմրամիջոց (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Քրեական գործի նյութերից երևում է նաև, որ Վ.Սահակյանը նախկինում դատապարտված կամ որևէ կերպ արատավորված չի եղել, վատառողջ է, տառապում է «Դեպրեսիվ պարանոիդ համախտանիշ» հիվանդությամբ, անկեղծորեն խոստովանել և ընդունել է հանցանքը, զոջացել կատարածի համար, բնութագրվում է բացառապես դրականորեն: Վ.Սահակյանն ամուսնացած է, բնակվում է մոր, կնոջ և երկու երեխայի հետ, որոնցից մեկն

անչափահաս է:

Առաջին ատյանի դատարանը Վ.Սահակյանի նկատմամբ պատիժ նշանակելիս նշել է, որ հաշվի է առնում կատարված հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, գործի հանգամանքները, հանցավորի անձը դրականորեն բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները: Առաջին ատյանի դատարանը Վ.Սահակյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ չի արձանագրել և այդ պայմաններում գտել է, որ նրա նկատմամբ պետք է նշանակվի ազատազրկման ձևով պատիժ, որը նա պետք է կրի (տե՛ս սույն որոշման 19-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորության և ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցերը, հանգել է հետևության, որ տվյալ դեպքում Վ.Սահակյանի նկատմամբ հոդվածի սանկցիայի սահմաններում նշանակվել է համաչափ պատիժ, և որ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը չի կարող ապահովել պատժի նպատակները (տե՛ս սույն որոշման 21-րդ կետը):

42. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերից հետևում է, որ Վ.Սահակյանի նկատմամբ պատիժ նշանակելիս ստորադաս դատարանները լրիվ և բազմակողմանի գնահատման չեն ենթարկել նրան մեղսագրված արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը: Մասնավորապես դատարանները հաշվի չեն առել այն, որ

- ամբաստանյալին մեղսագրված հանցագործության առարկան «չորացված մարիխուանա» տեսակի թմրամիջոց է, որը, դատելով ՀՀ քրեական օրենսգրքի թիվ 1 հավելվածից, համեմատաբար նվազ վտանգավորություն ունեցող թմրամիջոցի տեսակ է, քանի որ հարաբերականորեն ավելի մեծ քաշն է պատժելի համարվում,
- թմրամիջոցի քաշը 0.55 գրամ է, որն առավել մոտ է ՀՀ քրեական օրենսգրքի թիվ 1 հավելվածի 86-րդ կետով թմրամիջոցի այդ տեսակի համար սահմանված զգալի չափի (0.5-5 գրամ) նվազագույն սահմանին:

Ավելին՝ հաստատված համարելով, որ Վ.Սահակյանը տառապում է «դեպրեսիվ պարանոիդ համախտանիշ» հիվանդությամբ, որի պատճառով էլ գործածման նպատակով ձեռք է բերել և պահել «մարիխուանա» տեսակի թմրամիջոցը՝ Առաջին ատյանի դատարանն այդ հանգամանքը պատշաճ գնահատման չի ենթարկել պատիժ նշանակելիս:

42.1. Բացի այդ, Վ.Սահակյանին վերագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը դատվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին, որի սանկցիան երկրորդ աստիճանի է. նշված արարքի համար որպես պատիժ է նախատեսված կալանքը՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով և ազատազրկումը՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: Առաջին ատյանի դատարանը, իր դատական ակտում նշելով, որ հաշվի է առնում կատարված հանցագործության հանրային վտանգավորության աստիճանն ու

բնույթը, ինչպես նաև հանցավորի անձը դրականորեն բնութագրող տվյալները, նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, այնուհետև եզրահանգել է, որ Վ.Սահակյանի նկատմամբ պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով, որը նա պետք է կրի:

Գատարանը որևէ հիմնավորում չի նշել, թե ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված պատիժներից նվազ խիստ տեսակը՝ կալանքը ինչո՞ւ չի կարող ապահովել պատժի նպատակները: Գատարանն ակտուս բացակայում է նաև որևէ պատճառաբանություն, որը կոչված կլիներ հիմնավորելու ազատազրկման ձևով նշանակված պատիժը Վ.Սահակյանի կողմից կրելու անհրաժեշտության վերաբերյալ դատարանի որոշումը:

Վերաքննիչ դատարանն իր հերթին Վ.Սահակյանի նկատմամբ նշանակված պատժի արդարացիության հարցը քննարկելիս հիմք է ընդունել Առաջին ատյանի դատարանի հետևությունները, որոնք ուղղակի վերարտադրել է իր որոշման մեջ՝ առանց անդրադառնալու այն հարցին, թե ամբաստանյալի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակելու և այդ պատիժը կրելու անհրաժեշտության մասին հետևությունները համապատասխանում են արդյոք գործի փաստական հանգամանքներին, արդարության և պատասխանատվության անհատականացման քրեաիրավական սկզբունքներին:

43. Սույն որոշման 42-42.1-րդ կետերում շարադրված փաստական վերլուծությունը գնահատելով 37-41-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Վ.Սահակյանի նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելիս, ինչպես նաև նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս բազմակողմանի գնահատման չեն ենթարկել կատարված հանցագործության առանձնահատկությունները, հանցավորի անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները՝ թույլ տալով արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքները, պատժի նպատակները, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները և պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջների խախտում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, ինչպես նաև այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը չեն համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված՝ դատական ակտին ներկայացվող օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջներին: Ստորադաս դատարանների դատական ակտերում Վ.Սահակյանի նկատմամբ նշանակված պատժի տեսակի և չափի, ինչպես նաև պատիժը կրելու նպատակահարմարության

վերաբերյալ արված հետևությունները հիմնված չեն դատական քննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա:

44. Միևնույն ժամանակ, հաշվի առնելով կատարված հանցագործության բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը (տե՛ս սույն որոշման 42-42.1-րդ կետերը), Վ.Սահակյանի անձը բնութագրող վերը նշված տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ամբաստանյալի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժ նշանակելու հիմքեր չկան: Տվյալ դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված պատիժներից նվազ խիստ տեսակը՝ կալանքը կարող է ապահովել պատժի նպատակները:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով վկայակոչված հանգամանքները, գտնում է նաև, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ուստի նրա նկատմամբ նշանակվող պատիժը պայմանականորեն չպետք է կիրառել: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Վ.Սահակյանի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկված անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը: Տվյալ դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը բխում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության և պատասխանատվության անհատականացման, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից:

45. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված չեն Վ.Սահակյանի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժ նշանակելու և այդ պատիժը նրա կողմից կրելու անհրաժեշտության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

46. Ամփոփելով սույն որոշման I և II մասերում շարադրված վերլուծություններն ու եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները

ա) Ա.Ավագյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում մեղավոր ճանաչելու որոշում կայացնելով, թույլ են տվել գործի արդարացի քննության, անմեղության կանխավարկածի սկզբունքների խախտում, ինչը նույն օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում է,

բ) Վ.Սահակյանի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժ նշանակելու և այդ պատիժը պայմանականորեն չկիրառելն անթույլատրելի ճանաչելու մասին որոշում կայացնելով՝ թույլ են տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է:

Բացի այդ, դատարանները կայացրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտեր:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են ամբաստանյալներ Ա.Ավագյանի մեղավորության հարցը որոշելու և Վ.Սահակյանի նկատմամբ արդարացի պատիժ նշանակելու և այն կրելու մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու հիմք են: Ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա բեկանել և փոփոխել դրանք, քանի որ դատարանների կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնել նման ակտ, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

47. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Ավագյանի վերաբերյալ կայացված դատական ակտերը ենթակա են բեկանման, քրեական հետապնդումը՝ դադարեցման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով: Ամբաստանյալ Ա.Ավագյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը պետք է վերացնել:

Նկատի ունենալով, որ ամբաստանյալ Ա.Ավագյանի նկատմամբ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում սույն որոշման 22-րդ կետում շարադրված բողոքաբերի մնացած փաստարկներին:

48. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վ.Սահակյանի վերաբերյալ կայացված դատական ակտերը պատժի մասով ենթակա են բեկանման և փոփոխման: Ամբաստանյալ Վ.Սահակյանի նկատմամբ պատիժ պետք է նշանակել կալանքի ձևով և նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան: Ամբաստանյալ Վ.Սահակյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, պետք է վերացնել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Արարատ Ավագի Ավագյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և Վահան Սերյոժայի Սահակյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 25-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հուլիսի 8-ի որոշումը բեկանել և փոփոխել:

2. Արարատ Ավագի Ավագյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնել և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ կատարված հանցագործությանը նրա մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

Արարատ Ավագի Ավագյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը վերացնել և նրան անհապաղ ազատել կալանքից:

3. Վահան Սերյոժայի Սահակյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով պատիժ նշանակել կալանք՝ 2 (երկու) ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 1 (մեկ) տարի ժամկետով: Նրա վարքի նկատմամբ վերահսկողությունը դնել բնակության վայրի այլընտրանքային պատիժների կատարման բաժնի համապատասխան ստորաբաժանման վրա:

Վահան Սերյոժայի Սահակյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, վերացնել:

4. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 25-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հուլիսի 8-ի որոշումը մնացած մասերով թողնել օրինական ուժի մեջ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

40.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԱՎԴ4/0003/01/14

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Քրեական գործ թիվ ԱՎԴ4/0003/01/14

Նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան

Դատավորներ՝ Ս.Համբարձումյան

Ա.Պետրոսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի հոկտեմբերի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սկրտիչ Պողոսի Հաջիպողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի ապրիլի 8-ի որոշման դեմ ամբաստանյալ Մ.Հաջիպողոսյանի պաշտպան Հ.Գավթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի սեպտեմբերի 4-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Վայոց ձորի մարզի քննչական բաժնում հարուցվել է թիվ 37104013 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2013 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ Սկրտիչ Հաջիպողոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Նախաքննության ընթացքում որպես մեղադրյալ է ներգրավվել նաև Աբգար Հակոբյանը, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով, 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով:

2014 թվականի հունվարի 8-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, դատական քննության արագացված կարգով քննելով գործը, 2014 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ կիրառել է ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) 5-րդ կետի 3-րդ ենթակետը, Մ.Հաջիպողոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցրել է և նրա մասով քրեական գործի վարույթը կարճել:

Առաջին ատյանի դատարանի նույն օրվա դատավճռով Ա.Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով, 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և Համաներման ակտի 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ ազատվել է ազատագրկման ձևով նշանակված պատժի կրումից:

3. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ բողոքը բավարարել է: Մ.Հաջիպողոսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 1-ի որոշումը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի ապրիլի 8-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Մ.Հաջիպողոսյանի պաշտպան Հ.Դավթյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հունիսի 18-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Մ.Հաջիպողոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «*նա 2013 թվականի օգոստոսի 30-ին, ժամը 01.³⁰-ի սահմաններում ընկերոջ՝ Աբգար Հակոբյանի*

հետ միասին, իսբի կազմում, Արշալույս և Գագիկ Ղարախանյանների նկատմամբ բռնություն գործադրելու հետ զուգորդված, զուգորդված հասարակական կարգի խախտումը խափանող անչին դիմադրություն ցույց տալով, որպես զենք օգտագործվող առարկայի գործադրման սպառնալիքով՝ կատարել է խուլիգանություն:

Այսպես՝

2013թ. օգոստոսի 30-ին, ժամը 01.²⁷-ին Սկրյուիչ Հաջիպողոսյանն իր անչնական օգտագործման «ԲՄՎ» մակնիշի, 35 UD 129 համարանիշի ավտոմեքենայով ընկերոջ, Արարատ քաղաքի բնակիչ Արգար Հակոբյանի, կնոջ՝ Թեհմինե Խալիլովայի և ինքնությունը չպարզված երկրորդ կնոջ հետ միասին զնացել է Վայոց ձորի մարզի Արենի գյուղի վարչական տարածքում գտնվող, Երևան-Մեղրի ավտոճանապարհի վրա տեղակայված շուրջօրյա գործող «Արենի» կոչվող շուկա, մտրեցել է շուկայում գործող Գոհար Ղազարյանի վաճառակետի ներսում ընթրող Արտուրիկ Առաքելյանին, առանց որևէ առիթի, իր անչի առավելությունը նրա նկատմամբ ընդգծելու դիտավորությանը, այսինքն՝ խուլիգանական մղումներով, վիճաբանության մեջ է մտել Ա.Առաքելյանի հետ, ցուցաբերելով քաղաքացիների մեջ իրենց իրավունքների ու շահերի պաշտպանության կապակցությամբ տրված ստանդարտները գործողություններ, մարդկային համակեցության կանոնների բացահայտ զանցառում, բարոյական վարքի կանոնների ցուցադրական անտեսում, իր անչը հակադրելով հասարակությանը, շրջապատին և իր գործողություններին տալով հրապարակային բնույթ, հասարակությունում մարդկանց միջև գոյություն ունեցող փոխադարձ հարգանքի, պատվի, արժանապատվության, ազատության, անչնական անչեռնմիտելիության և այլ արժեքների դեմ արտահայտելով բացահայտ արհամարհանք, այսինքն՝ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք արտահայտելով հասարակության նկատմամբ, շուրջ 15-20 քաղաքացիների ներկայությամբ տվել է խուլիգանական բնույթի հայտյանքներ, Արտուրիկ Առաքելյանի առջև՝ սեղանի վրա դրված մեղադրյալ տապակի վերցրել և այն որպես զենք օգտագործելով՝ վերջինիս նկատմամբ տվել է բռնություն գործադրելու սպառնալիքներ և տապակայով փորձել է հարվածել նրան: Սակայն, Գոհար Ղազարյանը, այնուհետև շուկայում գտնվող Արշալույս և Գագիկ Ղարախանյանները, միջամտել են, կանխել են տապակայով հարվածը:

Այնուհետև, Մ.Հաջիպողոսյանն ընկերոջ՝ Ա.Հակոբյանի հետ միասին՝ իսբով, շարունակել են բացահայտ անհարգալից վերաբերմունք արտահայտել հասարակության նկատմամբ և կոպիտ կերպով խախտել հասարակական կարգը, այն է՝ Ա.Հակոբյանի հետ միասին խուլիգանական մղումներով կռվի մեջ են մտել Գագիկ և Արշալույս Ղարախանյանների հետ, տվել են խուլիգանական բնույթի հայտյանքներ, դիտավորությանը հարվածել են Գագիկ և Արշալույս Ղարախանյաններին, այդ կերպ բռնություն գործադրելով նրանց նկատմամբ՝ վերջիններին տապառնել է մարմնական վնասվածքներ,

որոնք առողջության թեթև վնասի հարկանիշներ չեն պարունակում: Իսկ երբ շուկայում գրանվող անհատ-չեռնարկատեր Գայանե Մանուկյանը և վերջինիս որդին՝ Վիգեն Մանուկյանը, փորձել են խափանել Մ.Հաջիպողոսյանի կողմից հասարակական կարգի խախտումը, վերջինս չի ենթարկվել խուլիգանական գործողությունները դադարեցնելու մասին նրանց օրինական պահանջներին, դիմադրություն է ցույց տվել նրանց և շարունակել է իր խուլիգանական գործողությունները:

Մ.Հաջիպողոսյանը և Ա.Հակոբյանն իրենց խուլիգանական գործողությունները դադարեցրել են և ավտոմեքենայով փախել են դեպքի վայրից միայն այն ժամանակ, երբ իմացել են, որ սհազանգով ոստիկանության աշխատակիցները ժամանում են դեպքի վայր:

Մ.Հաջիպողոսյանի և Ա.Հակոբյանի գործողությունների հետևանքով 15 բուսե տնտեսությանը դիտարկությանը կոպիտ կերպով խախտվել է հասարակական կարգը, որի ընթացքում «Արենի» կոչվող շուկայում աշխատողները և շուկայում գրանվող հաճախորդները լուրջ անհանգստացել են, վախեցել և էականորեն խաթարվել են շուկայի բնականոն աշխատանքները:

Այսպիսով, որպես զենք օգտագործվող առարկայի գործադրման սպառնալիքով Մ.Հաջիպողոսյանը բռնություն գործադրելու և հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալու հետ գուցորդված՝ կատարել է խուլիգանություն» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 135-136):

6. Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 1-ի որոշման համաձայն՝ «Մ.Հաջիպողոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման համար, որի սանկցիան նախատեսում է պարիժ բացառապես ազատագրկման ձևով՝ չորսից յոթ տարի ժամկետով, որը տվյալ դեպքում՝ դատական քննության արագացված կարգի կիրառման պարագայում, չի կարող գերազանցել յոթ տարի ժամկետով ազատագրկման երկու երրորդը, այն է՝ չորս տարի ութ ամիս ժամկետով ազատագրկումը:

Արդյունքում, Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետում ձևակերպված՝ «սույն որոշման 2-րդ կետի 1-6-րդ ենթակետերում թվարկված անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պարիժ՝ ոչ ավելի, քան հինգ տարի ժամկետով ազատագրկում» եզրույթի իմաստով, Մ.Հաջիպողոսյանին մեղաազրվող արարքի համար նախատեսված առավելագույն պարիժը կազմում է չորս տարի ութ ամիս ժամկետով ազատագրկումը, որը չի գերազանցում նշված կետով սահմանված առավելագույնը հինգ տարի ժամկետով ազատագրկման ձևով նախատեսվող պարիժը:

Անդրադառնալով Համաներման ակտի 5-րդ կետում ամրագրված բացառություններին՝ Դատարանն արձանագրում է, որ նույն ակտի 8-րդ կետի

4-6-րդ ենթակետերում՝ օրենսդրի կողմից ամրագրվել են այն դեպքերը, որոնց պարագայում անչանց համար սահմանվում է միայն պատժաչափի չկրած մասի կրճատում:

Տվյալ դեպքում՝ այդպիսիք բացակայում են և նշված դրույթները Մ.Հաջիպոսոյանին վերաբերելի չեն:

(...)

Միևնույն ժամանակ, Մ.Հաջիպոսոյանի վերաբերյալ քրեական գործի նյութերում բացակայում են (...) Համաներման ակտի 9-րդ կետի (...) ենթակետերով նախատեսված սահմանափակումները, որոնք կարող են արգելք հանդիսանալ նրա նկատմամբ Համաներման ակտի կիրառման համար:

Սույն որոշման մեջ շարադրված իրավադրույթներն ու դրանց վերլուծության արդյունքում չկավորված դատողությունները կիրառելով և շարադրված փաստական փոխաներն ու փոփոխությունները հետազոտելով՝ Դատարանը հանգում է այն հետևություն, որ Մ.Հաջիպոսոյանի նկատմամբ կիրառելի է համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետը [2-րդ խմբի հաշմանդամ է] ու այդ հիմքով պետք է դադարեցնել նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով հարուցված քրեական հետապնդումը, իսկ քրեական գործով նրա վերաբերյալ վարույթի մասը՝ կարճել, ինչին չի առարկել նաև ամբաստանյալը» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթեր 160-161):

7. Վերաքննիչ դատարանը գտել է, որ Մ.Հաջիպոսոյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը նրա մասով կարճելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական և հիմնավորված չէ, Համաներման ակտը ճիշտ չի կիրառվել, ինչն իր հերթին հանգեցրել է օրինականության սկզբունքի խախտման: Իր այդ հետևությունը Վերաքննիչ դատարանը հիմնավորել է հետևյալ կերպ. «Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի տառացի մեկնաբանության հիման վրա Վերաքննիչ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ կարճման են ենթակա այն քրեական գործերը, որոնցով Համաներման ակտի 2-րդ կետի 1-6-րդ ենթակետերում թվարկված անչինք մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի սանկցիայով որպես պարիժ է նախատեսվում պարիժ՝ ոչ ավելի, քան հինգ տարի ժամկետով ազատազրկում:

Ինչ վերաբերվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս պարժի նշանակման կարգին, որի համաչայն՝ պարիժը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պարժի երկու երրորդը, ապա այն կարող է կիրառվել միայն քրեական գործի դատական քննության փուլում, երբ դատարանը համապատասխան հիմքերի առկայության պայմաններում որոշում է կայացնում դատական քննությունն անցկացնել արագացված կարգով, իսկ համաներման ակտը որևէ ուղղակի

հղում չի պարունակում օրենքով նախատեսված առավել խիստ պարզից ավելի մեղմ պարիժներ նշանակելու առանձին դեպքերի վերաբերյալ:

(...) [Մ]ույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ Դատարանը ոչ թե պետք է որոշում կայացնել Մկրտիչ Հաջիպողոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով նրա վերաբերյալ վարույթի մասը կարճելու մասին, այլ մեղադրական դատավճիռ կայացնելուց և վերջինիս նկատմամբ պարիժ նշանակելուց հետո պետք է Համաներման ակտի հիման վրա նրան ազատել պարզից» (տե՛ս քրեական գործ, հատոր 6, քերթեր 41-42):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոքարեթի պնդմամբ՝ սույն գործով դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի մի շարք նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքի հեղինակը նշել է, որ Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ կարճման ենթակա են այն գործերը, որոնցով 2-րդ խմբի հաշմանդամ անձինք մեղադրվում են այնպիսի հանցագործություն կատարելու մեջ, որի համար նախատեսված է պատիժ ոչ ավելի քան հինգ տարի ժամկետով ազատազրկում, իսկ 18-րդ կետը սահմանում է, որ համաներմամբ կիրառվում է արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձանց վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո:

Ըստ բողոքարեթի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մասը պատիժը մեղմացնող, անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք է, քանի որ դրա կիրառման արդյունքում Մ.Հաջիպողոսյանին մեղսագրված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի սանկցիայով նախատեսված առավելագույն յոթ տարի ժամկետով ազատազրկման փոխարեն կարող է նշանակվել ազատազրկում՝ առավելագույնը չորս տարի ութ ամիս ժամկետով: Հետևաբար, Համաներման ակտը պետք է կիրառվեր այդ օրենքը կիրառելուց հետո: Այսպիսով, Մ.Հաջիպողոսյանին սպառնացող առավելագույն պատիժը չէր գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը, ինչն էլ հաշվի առնելով՝ Առաջին ատյանի դատարանը կարճել է գործի վարույթը:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի հետևություններին՝ բողոքարեթը նշել է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը, որ Համաներման ակտը որևէ ուղղակի հղում չի պարունակում օրենքով նախատեսված առավել խիստ պարզից ավելի մեղմ պարիժ նշանակելու առանձին դեպքերի վերաբերյալ, անհիմն է և հերքվում է Համաներման ակտի 18-րդ կետի առկայությամբ:

9. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի ապրիլի 8-ի որոշումը և օրինական ուժ տալ Մ.Հաջիպողոսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և նրա մասով գործի վարույթը կարճելու մասին Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 1-ի որոշմանը:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Մույն գործով Վճարելի դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. գործը դատական քննության արագացված կարգով քննելիս պատիժ նշանակելու կանոնները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մաս) կիրառելու պայմաններում արդյո՞ք Մ.Հաջիպողոսյանի նկատմամբ տարածվում է Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետը:

11. ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «*Հանցանք կատարած անչն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազարվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազարվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պարժից, կամ պարժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պարժարեսակով, կամ կարող է վերացվել դատապարտությունը*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ «*Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե ընդունվել է համաներման ակտ*»:

Համաներման ակտի կիրառման առանձնահատկություններին Վճարելի դատարանն անդրադարձել է Վ.Ավետիսյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «(...) Համաներման ակտի կիրառումը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում: Ընդ որում, համաներման կիրառման սահմանափակումները նախարեսված են համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պետք է պահպանվեն համաներման ակտում նախարեսված այն կանոնները, որոնք սահմանում են անչանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներմումը կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անչինք ինչ չափով պետք է օգրվեն համաներմումից՝ պետք է ազարվեն քրեական պատասխանատվությունից կամ պարժից, կամ կարող է մեղմացվել պարժը, կամ վերացվել դատապարտությունը: Այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախարեսված համաներման չկիրառումը կամ նախարեսվածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության, առաջացնել օրենքի ոչ միարեսակ կիրառություն» (տե՛ս Վարուժան Գազիկի Ավետիսյանի գործով Վճարելի դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԳ-3/0013/01/11 որոշման 16-րդ կետը):

12. Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետը նախատեսում է «Քրեական հետապնդում չհարուցել և քրեական հետապնդում չիրականացնել, ինչպես նաև կարճել մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը կատարած հանցագործությունների վերաբերյալ (...) դատարանների վարույթում գրվող քրեական գործերը, (...), որոնցով՝ սույն որոշման 2-րդ կետի 1-6-րդ ենթակետերում քվարկված անչինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պարիժ՝ ոչ ավելի, քան հինգ փարի ժամկետով ազատագրելու»:

Համաներման ակտի 18-րդ կետի համաձայն՝ «Սույն որոշումը կիրառվում է արարքի հանցավորությունը վերացնող, պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անչի փնձակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Գատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պարիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պարժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պարժի երկու երրորդը փոքր է քվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պարժից՝ ապա առավել մեղմ պարիժը»:

Գործը դատական քննության արագացված կարգով քննելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մասի և Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառման հարցերին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Գ. Մինասյանի գործով կայացված որոշմամբ: Այդ որոշմամբ վերլուծության ենթարկելով դատական քննության արագացված կարգը սահմանող նորմերը, դրանց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները (տե՛ս *mutatis mutandis* Շողակաթ Ժուլվերնի Ամիրխանյանի և Գառնիկ Մարտինի Ֆարմանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0209/01/10, Անդրանիկ Գարիկի Առուստամյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ՏԴ/0145/01/11 որոշումները, ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ՄԳ-Ո-931 որոշումը), Համաներման ակտը՝ Վճռաբեկ դատարանն արածանագրել է, որ. «(...) համապատասխան պայմանների առկայության պարագայում դատարանի կողմից դատական քննության արագացված կարգի կիրառումն օրենսդրի պարտադիր պահանջն է, իսկ դատավարական այս մեխանիզմի գործադրման անխուսափելի արդյունքը մեղադրական դատավճիռ կայացնելու դեպքում այնպիսի պարիժ նշանակելն է, որը չի կարող գերազանցել անչին մեղսագրվող հանցագործության համար նախատեսված առավել խիստ պարժի երկու երրորդը, կամ եթե այն փոքր է քվյալ հանցագործության համար օրենքով նախատեսված առավել մեղմ պարժից, ապա՝ առավել մեղմ պարիժը»:

(...)

Համաներման ակտի 18-րդ կետն անհրաժեշտ է մեկնաբանել փաստացի՝ անվերապահորեն պահպանելով դրանում նախատեսված կանոնն այն մասին, որ անչի նկատմամբ Համաներման ակտի կիրառումը, ի թիվս այլ պայմանների, հնարավոր է անչի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո:

(...)

[Ա]նչի նկատմամբ Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառելիության հարցը լուծելիս անհրաժեշտ է պարզել, թե առկա չէ արդյոք արարքի հանցավորությունը վերացնող, պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անչի վիճակն այլ կերպ բարելավող օրենք, որը ենթակա է կիրառման նախքան Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառումը: Անչի վիճակն այլ կերպ բարելավող է այն օրենքը, որը քրեական պարասխասարվության և պարժի նշանակման, քրեական պարասխասարվությունից կամ պարժից ազատելու կարգի ու պայմանների հետ կապված առավել նպաստավոր պայմաններ է սրելծում հանցանք կատարած անչի համար:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մասի իմաստով դատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պարիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պարժի երկու երրորդը: Այլ խոսքով՝ արագացված դատական քննության արդյունքում անչի նկատմամբ նշանակվող պարժի առավելագույն ժամկետը ավելի մեղմ է, քան ընդհանուր կարգով գործի քննության արդյունքում նշանակվող պարիժը, ինչը նշանակում է, որ արագացված դատական քննության արդյունքում կիրառվող պարժի նշանակման կանոնները, ի համեմատ ընդհանուր կարգով գործի քննության արդյունքում կիրառվող պարժի նշանակման կանոնների, առավել նպաստավոր պայմաններ են սրելծում հանցանք կատարած անչի համար:

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արագացված դատական քննության արդյունքում պարիժ նշանակելու կարգը Համաներման ակտի 18-րդ կետի իմաստով հանդիսանում է անչի վիճակն այլ կերպ բարելավող օրենք:

(...)

[Բ]ոլոր այն դեպքերում, երբ անչին մեղաագրվում է այնպիսի հանցագործություն, որի համար օրենքով նախատեսված պարիժն ի սկզբանե չի գերազանցում հիմն փարի ժամկետով ազատագրվումը, վարույթն իրականացնող մարմինն իրավասու է Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ քրեական գործով վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել: Իսկ ինչ վերաբերում է դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում Համաներման ակտի վերը հիշատակված դրույթի կիրառմանը, սպա դա նշված որոշման գործողության

տրակ ընկնելու լրացուցիչ հնարավորություն է այն անշանց համար, ովքեր ներկայացրել են դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին միջնորդություն, որը համապատասխան հիմքերի և պայմանների առկայության շնորհիվ բավարարվել է, և ինչի արդյունքում օրենքի իմպլերատիվ դրույթի ուժով վերջիններիս վերագրվող հանցագործության համար օրենքով նախատեսված պատժի վերին սահմանը երկու երրորդով կրճատվելու արդյունքում իջեցվել է՝ բավարարելով հինգ տարի ժամկետով ազատազրկումը չգերազանցելու չափանիշին կամ պատժի վերին սահման է դարձել տվյալ հանցագործության համար օրենքով նախատեսված առավել մեղմ պատիժը, որը դարձյալ չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը: Իսկ Համաներման ակտի քննարկվող դրույթի բովանդակային մեկնաբանությունը նշված լրացուցիչ երաշխիքն անձին ընչեռելու որևէ արգելք չի պարունակում» (տե՛ս Գագիկ Հայկի Սինասյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԿԳ-0029/01/13 որոշման 19-21-րդ կետերը):

13. Վերահաստատելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված և Գ.Մինասյանի գործով որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախատեսված համաներման չկիրառումը կամ նախատեսվածից դուրս համաներման կիրառումը հանգեցնում են օրինականության սկզբունքի խախտման: Համաներման ակտը կիրառելու պայմաններ են սահմանված Համաներման ակտի 18-րդ կետով, որոնցից է՝ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո Համաներման ակտը կիրառելու վերաբերյալ պահանջը: Հետևաբար, Համաներման ակտի, մասնավորապես դրա 5-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառելիության հարցը լուծելիս դատարանը նախևառաջ պետք է պարզի, ի թիվս այլնի, հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի առկայությունը կամ բացակայությունը, որից հետո միայն անդրադառնա Համաներման ակտը կիրառելու հարցին:

Դատական քննության արագացված կարգ կիրառելու դեպքում անձի նկատմամբ նշանակվող հնարավոր պատժի առավելագույն ժամկետը հստակ ամրագրված է օրենքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մաս), փոփոխության ենթակա չէ և ավելի մեղմ է, քան ընդհանուր կարգով գործի քննության արդյունքում պատիժ նշանակելու դեպքում: Հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մասը Համաներման ակտի 18-րդ կետի իմաստով հանդիսանում է անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենք:

Ըստ այդմ, եթե օրենքով սահմանված հիմքերի և պայմանների առկայության դեպքում, օրենքով սահմանված դատավարական կարգի պահպանմամբ դատարանը որոշում է կայացնում դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին և պարզում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մասի կանոններով պատիժ նշանակելու արդյունքում նշանակվելիք առավել խիստ պատիժը չի գերազանցում 5 տարի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև առկա են Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ

ենթակետի կիրառման մյուս հիմքերն ու պայմանները, ապա հիշատակված նորմի կիրառմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցվի, իսկ գործի վարույթը՝ կարճվի:

14. Սույն գործի նյութերից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը, դատական քննության արագացված կարգով քննելով գործը, 2014 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ ամբաստանյալ Մ.Հաջիպողոսյանի նկատմամբ կիրառել է ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 5-րդ կետի 3-րդ ենթակետը, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցրել է և նրա վերաբերյալ քրեական գործի վարույթի մասը կարճել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ Մ.Հաջիպողոսյանի նկատմամբ Համաներման ակտը ճիշտ չի կիրառվել, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու փոխարեն Առաջին ատյանի դատարանը պետք է կայացներ մեղադրական դատավճիռ, նշանակեր պատիժ, որից հետո Համաներման ակտի հիման վրա նրան ազատեր պատժից: Իր այդ հետևությունը Վերաքննիչ դատարանը հիմնավորել է նրանով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս պատիժ նշանակելու կարգը կարող է կիրառվել միայն քրեական գործի դատական քննության փուլում, երբ դատարանը համապատասխան հիմքերի առկայության պայմաններում որոշում է կայացնում դատական քննությունն անցկացնել արագացված կարգով, իսկ Համաներման ակտը որևէ ուղղակի հղում չի պարունակում օրենքով նախատեսված առավել խիստ պատժից ավելի մեղմ պատիժ նշանակելու առանձին դեպքերի վերաբերյալ:

Այդ պատճառաբանությամբ Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 1-ի որոշումը և քրեական գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

15. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով 11-13-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական քննության արագացված կարգի դեպքում պատիժ նշանակելու կանոններ սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մասը Համաներման ակտի 18-րդ կետի իմաստով Մ.Հաջիպողոսյանի վիճակն այլ կերպ բարելավող օրենք է, հետևաբար Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի կիրառելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մասը կիրառելուց հետո:

Վերոգրյալից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով, որ դատական քննության արագացված կարգի կիրառման

պարագայում Մ.Հաջիպողոսյանին մեղսագրվող արարքի համար նախատեսված առավելագույն պատիժը կազմում է չորս տարի ութ ամիս ժամկետով ազատազրկում, որը չի գերազանցում Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված առավելագույնը հինգ տարի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսվող պատիժը, իրավացիորեն կիրառելի է համարել Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետը և այդ հիմքով դադարեցրել նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով հարուցված քրեական հետապնդումը:

Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ Մ.Հաջիպողոսյանի նկատմամբ դատական քննության արագացված կարգ կիրառելու պայմաններում Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու և նրա վերաբերյալ քրեական գործի վարույթի մասը կարճելու մասին որոշում չէր կարող կայացվել, այլ պետք է կայացվեր մեղադրական դատավճիռ, նշանակվեր պատիժ, այնուհետև Համաներման ակտի կիրառմամբ վերջինս ազատվեր պատժից, հիմնավորված չէ: Այս առումով Վերաքննիչ դատարանի դատական ակտը հակասում է Վճռաբեկ դատարանի՝ *Գ.Մինասյանի* գործով ընդունված և սույն որոշման 12-րդ կետում վկայակոչված որոշմանը:

Ինչ վերաբերում է Համաներման ակտը կիրառելի չհամարելու Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ «*արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս պարտի նշանակման [կարգը] կարող է կիրառվել միայն քրեական գործի դատական քննության փուլում, երբ դատարանը համապատասխան հիմքերի առկայության պայմաններում որոշում է կայացնում դատական քննությունն անցկացնել արագացված կարգով, իսկ համաներման ակտը որևէ ուղղակի հղում չի պարունակում օրենքով նախատեսված առավել խիստ պարտից ավելի մեղմ պարտիժներ նշանակելու առանձին դեպքերի վերաբերյալ*», Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ այն հանգամանքը, որ արագացված կարգի կիրառումը սահմանափակված է դատավարության որոշակի փուլով (դատական քննություն), ինչպես նաև կարող է կիրառվել օրենքով սահմանված որոշակի հիմքերի առկայության դեպքում, չի կարող բացառել կամ սահմանափակել դրա կիրառման հետ կապված այն անձանց իրավունքներն ու արտոնությունները (այդ թվում համաներման ակտով նախատեսված), ում վերաբերյալ գործով առկա է արագացված կարգ կիրառելու մասին դատարանի որոշում:

16. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը բողոք բերած անձի փաստարկները հիմնավորված է համարում և արձանագրում է, որ գործը դատական քննության արագացված կարգով քննելիս պատիժ նշանակելու կանոնները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի 6-րդ մաս) կիրառելու պայմաններում Մ.Հաջիպողոսյանի նկատմամբ տարածվում է Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն որոշման 7-րդ կետում շարադրված հիմնավորմամբ բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել Համաներման ակտի 5-րդ կետի 3-րդ ենթակետի, 18-րդ կետի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375³-րդ հոդվածի պահանջների խախտում:

17. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նյութական և դատավարական իրավունքի վերոնշյալ խախտումները, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող՝ չհիմնավորված որոշման կայացմանը և ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 406-րդ հոդվածների հիման վրա Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են: Ուստի վճռաբեկ բողոքը պետք է բավարարել, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա՝ Մ.Հաջիպողոսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի ապրիլի 8-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 1-ի որոշմանը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի ապրիլի 8-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Սկրտիչ Պողոսի Հաջիպողոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու և նրա վերաբերյալ քրեական գործի վարույթի մասը կարճելու մասին Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 1-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

41.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԵԷԳ/0119/01/13

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Քրեական գործ թիվ ԵԷԳ/0119/01/13

Նախագահող դատավոր՝ Կ.Ղազարյան

Դատավորներ՝ Գ.Մելիք-Սարգսյան

Հ.Տեր-Աղամյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ մեղադրող	Տ.ՈՒԶՈՅԱՆԻ

2014 թվականի հոկտեմբերի 31-ին

Երևան քաղաքում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գարսևան Ասատուրի Ոսկանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի մարտի 25-ի որոշման դեմ մեղադրող Տ.Ուզոյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի հետաքննիչ Հ.Բելիչկովի 2013 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերի և 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 86150513 քրեական գործը:

2013 թվականի մայիսի 30-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնում թիվ 86150513 քրեական գործից ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով մասն առանձնացվել է առանձին վարույթում, և շնորհիվ էլ թիվ 12121713 համարը:

2013 թվականի հուլիսի 25-ին Գարսևան Ոսկանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով: Գ.Ոսկանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2. 2013 թվականի հուլիսի 31-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

Մեղադրողի 2014 թվականի հունվարի 29-ի որոշմամբ դատաքննության ընթացքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309¹-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով Գ.Ոսկանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերով առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268-րդ հոդվածի 1-ին մասով և 38-34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Առաջին ատյանի դատարանը 2014 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ, սպացուցված համարելով, որ Գ.Ոսկանյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարք, կիրառել է ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետը և քրեական գործի վարույթը կարճել, իսկ Գ.Ոսկանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական հետապնդումը՝ դադարեցրել:

3. Առաջին ատյանի դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել մեղադրող Տ.Ուզոյանը:

Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 25-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 3-ի որոշումը՝ թողնվել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել մեղադրող Տ.Ուզոյանը, որը Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Մեղադրողի որոշմամբ Գ.Ոսկանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268-րդ հոդվածի 1-ին մասով, 38-34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ 2012 թվականի դեկտեմբերի 20-ին եղբոր՝ Ա.Ոսկանյանի հեռախոսազանգից հետո իրենց տան մոտակայքում գտնվող աղբարկղի մոտից վերցրել է քննությամբ չչարզված անձի կողմից բողմված ծխախոտի տուփը, որի մեջ եղել է զգալի չափի՝ 4.2 գրամ, «չորացրած մարիխուանա» և խոշոր չափի՝ 0.0426 գրամ, «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց, և դրանք եղբորը փոխանցելու նպատակով նույն օրը տարել է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ: Գ.Ոսկանյանին չի հաջողվել թմրամիջոցը հանձնել եղբորը, քանի որ հիմնարկի հսկիչ-անցագրային կետում այն զննությամբ հայտնաբերվել և առգրավվել է (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 88-89):

6. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ամբաստանյալ Գարսևան Ոսկանյանը մեկ միասնական դիտարկությամբ առանց իրացնելու նպատակի չեռք է բերել և պահել է խոշոր չափի՝ 0.0426 գրամ քաշով «բուպրենորֆին» տեսակի և զգալի չափի՝ 4.2 գրամ քաշով «չորացրած մարիխուանա» տեսակի թմրամիջոց՝ հետագայում իր եղբորը՝ Արթակ Ոսկանյանին փոխանցելու համար: Ըստ գործի փյուլյակների՝ Գ.Ոսկանյանը հետապնդել է մեկ միասնական նպատակ:

Նման պայմաններում առանց իրացնելու նպատակի խոշոր չափի և զգալի չափի թմրանյութ ապօրինի չեռք բերելու և պահելու համար դրանցից յուրաքանչյուրին առանձին քրեահրավական գնահատական տալը և յուրաքանչյուրի համար առանձին անձին դատապարտելը արհեստականորեն կարող է վատթարացնել ամբաստանյալի վիճակը:

Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանքի առկայության պայմաններում մեկ այլ մեղադրանքով՝ զգալի չափով «չորացրած մարիխուանա» տեսակի թմրամիջոց ապօրինի չեռք բերելուն օժանդակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268 հոդվածի 1-ին մասով առանձին որակելը տեսական և իրավական առումով ճիշտ չէ, ուստի նշված մեղադրանքը ենթակա է ընդգրկման ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանքի ծավալում (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 101-102):

7. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) Դատարանի 03.02.2014թ. որոշումն օրինական [է] ու հիմնավորված, Դատարանի հետևությունները համապատասխանում են գործի փաստական հանգամանքներին, դատարանի կողմից թույլ չի տրվել այնպիսի դատական սխալ, որն ազդել է գործի արդյունքի վրա, (...) որպիսի պայմաններում դատական ակտը բեկանելու, նոր քննության ուղարկելու առումով բերված վերաքննիչ բողոքը բավարարելու օբյեկտիվ հիմքեր առկա չեն:

Քրեական գործի քննության նախորդ փուլում թույլ չեն փրվել նյութական և դատարարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք կհանգեցնեին դատական սխալի (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 56):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

8. Բողոք բերած անձի պնդմամբ՝ ստորադաս դատարանների դատական ակտերը կայացվել են նյութական իրավունքի նորմերի խախտմամբ:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ թմրանյութերի կամ հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն սահմանելով՝ օրենսդիրը սահմանել է նյութերի տեսակները, որոնցից յուրաքանչյուրի ապօրինի շրջանառությունն առանձին վերցրած արդեն իսկ համարվում է հանցագործություն, եթե քաշը համապատասխանում է օրենքով նախատեսված քրեական պատասխանատվություն առաջացնող չափին: Մինչդեռ Առաջին ատյանի դատարանը, երկու ինքնուրույն քրեական պատասխանատվություն առաջացնող թմրամիջոցի հայտնաբերումը որակելով որպես մեկ հանցագործություն, կիրառել է կլանման կանոնը: Արդյունքում փաստացի նշանակություն չի տրվել զգալի չափի թմրամիջոցին այն դեպքում, երբ միայն այդ թմրամիջոցը հայտաբերվելու դեպքում էլ անձը կենթակվեր քրեական պատասխանատվության:

Առաջին ատյանի դատարանի տրամաբանությամբ այս դեպքում առկա է քրեաիրավական նորմերի մրցակցություն: Մինչդեռ տարբեր չափերի և տեսակների թմրամիջոցները չեն կարող մեկը մյուսին գումարվել կամ մեկը մյուսով կլանվել, քանի որ դրանցից յուրաքանչյուրն արդեն իսկ ինքնուրույն քրեական պատասխանատվություն առաջացնող արարք է, իսկ ՀՀ քրեական օրենսգրքով նման իրավական հնարավորություն նախատեսված չէ: Հետևաբար, ըստ բողոքաբերի, ՀՀ քրեական օրենսգրքի կանոնակարգումների պայմաններում առավել տրամաբանական է անձի արարքը որակել ըստ թմրամիջոցի տեսակի, այսինքն՝ ըստ հանցագործության առարկայի: Մասնավորապես, եթե անձի մոտ միաժամանակ հայտնաբերվում է 2 տեսակի տարբեր քաշերով թմրամիջոց, ապա դրանք չպետք է գումարել կամ մեկը մյուսով կլանել, այլ պետք է որակել յուրաքանչյուրն առանձին՝ հանցագործությունների համակցության կանոններով:

Նշվածի հիման վրա բողոք բերած անձը եզրահանգել է, որ ամբաստնյալի արարքն այս դեպքում իրենից ներկայացնում է իդեալական համակցություն, իսկ Առաջին ատյանի դատարանն առանց բավարար հիմքերի նրան ազատել է քրեական պատասխանատվությունից:

9. Բողոքի հեղինակը, անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի այն պատճառաբանությանը, թե անձի բոլոր գործողություններն ունեն մեկ միասնական դիտավորություն և ուղղված են եղել առանց իրացնելու նպատա-

կի ապօրինաբար խոշոր չափի թմրամիջոցի ձեռքբերմանն օժանդակելուն, նշել է, որ այն անհիմն է, քանի որ այս դեպքում դիտավորությունը միասնական է զուտ թմրամիջոցի ձեռքբերման փորձին օժանդակելուն, սակայն ոչ տեսակի և չափի մասով: Ըստ գործի տվյալների՝ Գ.Ոսկանյանը չէր կարող իմանալ և չի իմացել, թե ինչ քաշի և տեսակի թմրամիջոցներ են լինելու ծխախոտի տուփի մեջ, այլ միայն այն բացելուց հետո է տեսել փաթեթները, հետևաբար, խոսք չի կարող լինել մեկ միասնական դիտավորությամբ խոշոր չափի թմրամիջոց ձեռք բերելու մասին:

Բողոք բերած անձի պնդմամբ անհիմն է նաև դատարանի այն հետևությունը, թե «*առանց իրացնելու նպատակի խոշոր չափի և զգալի չափի թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու և պահելու համար դրանցից յուրաքանչյուրին առանձին քրեաիրավական գնահատական տալը և յուրաքանչյուրի համար առաջին-առանձին դատապարտելն արհեստականորեն կարող է վատթարացնել ամբաստանյալի վիճակը, ինչը տեսական և իրավական առումով ճիշտ չէ*», քանի որ դատարանը որևէ փաստարկ չի բերել իր հետևությունը տեսական և իրավական առումով հիմնավորելու համար: Իսկ Գ.Ոսկանյանի հանցավոր արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալը չի կարող գնահատվել որպես նրա վիճակի վատթարացում:

10. Բողոքաբերը նշել է նաև, որ ամբաստանյալ Գ.Ոսկանյանի արարքներին քրեաիրավական գնահատական տալու նկատմամբ կիրառելի է Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՔԲԳ/0063/01/08 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը:

11. Վերոգրյալի հիման վրա՝ բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 3-ի որոշումը, այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 25-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության, մասնավորապես, իրավունքի զարգացման գործառույթի իրացման ապահովումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործությունների համակցության (ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդված) տեսակները միմյանցից, ինչպես նաև եզակի (մեկ) հանցագործությունից տարանջատելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք Գ.Ոսկանյանին մեղսա-

գրված արարքը հանցագործությունների համակցության կանոններով որակելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործությունների համակցություն է համարվում՝

1) սույն օրենսգրքով (տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածով կամ հոդվածի միևնույն կամ տարբեր մասերով կամ կետերով) նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անչք դատապարտված չի եղել.

2) այնպիսի մեկ գործողությունը (անգործությունը), որը պարունակում է սույն օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ»:

Մեջբերված քրեաիրավական նորմը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Ա.Արծրունու գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ «(...) հանցագործությունների համակցությունը բնութագրվում է՝

1) քանակական հատկանիշով (երկու կամ ավելի հանցանք կատարելը),

2) որակական հատկանիշներով, որոնք են՝

ա) տարաբնույթ, նույնական կամ համանման հանցանք կատարելը,

բ) համակցություն կազմող հանցանքների համար դատված չլինելը,

գ) համակցություն կազմող առնվազն երկու հանցանքների կատարումից հետո դրանց քրեաիրավական նշանակություն ունեցող հետևանքների, օրինակ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների պահպանումը, (...)» (տես Արսեն Արայի Արծրունու գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԷԴ/0126/13/11 որոշման 22-րդ կետը):

15. Վերահաստատելով և զարգացնելով Ա.Արծրունու գործով որոշմամբ արտահայտած և վերը մեջբերված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործությունների համակցությունը բազմակիության տեսակներից մեկն է (հանցագործությունների ռեցիդիվի հետ միասին), հետևաբար բնութագրվում է բազմակիությանը բնորոշ ընդհանուր հատկանիշներով: Այսպես, համակցության պարտադիր հատկանիշը միևնույն անձի կողմից երկու կամ ավելի ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքի կամ արարքների կատարումն է (նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի միևնույն կամ տարբեր հոդվածներով), որոնց նկատմամբ պահպանված են քրեաիրավական նշանակություն ունեցող հետևանքները:

ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ էության, առանձնացվում են համակցության երկու ինքնուրույն տեսակ՝

1) առանձին արարքներով կատարված, ՀՀ քրեական օրենսգրքի միևնույն կամ տարբեր հոդվածներով նախատեսված երկու և ավելի հանցագործություններ (իրական համակցություն),

2) մեկ արարքով կատարված, ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված երկու և ավելի հանցագործություններ (իդեալական համակցություն):

Համակցության վերոնշյալ տեսակները տարբերվում են հանցավոր արարքների քանակով:

Այսպես, իրական համակցության դեպքում մեկից ավելի արարքներով կատարվում են երկու կամ ավելի հանցագործություններ, որոնցից յուրաքանչյուրին տրվում է ինքնուրույն քրեաիրավական գնահատական: ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ իրական համակցություն կազմող երկու կամ ավելի հանցանքները կարող են նախատեսված լինել ՀՀ քրեական օրենսգրքի՝

ա) տարբեր հոդվածներով,

բ) միևնույն հոդվածով,

գ) հոդվածի միևնույն կամ տարբեր մասերով կամ կետերով:

Մինչդեռ իդեալական համակցության դեպքում կատարվում է մեկ արարք, որն իր մեջ պարունակում է երկու կամ ավելի տարբեր հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշներ: Ընդ որում, հանցավոր արարքի անմիջական օբյեկտները չպետք է հարաբերվեն ինչպես ամբողջը և մասը, այլ պետք է լինեն տարբեր, ինքնուրույն իրավական հարաբերություններ:

Այսպիսով, եթե իրական համակցություն կարող են կազմել ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր հոդվածներով նախատեսված հանցանքները, ապա իդեալական համակցություն կարող են կազմել միայն տարբեր հոդվածներով նախատեսված հանցագործությունները: Այլ խոսքով՝ իդեալական համակցությունն առկա է, երբ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված հանցագործությունները կատարվում են մեկ արարքով: Ասվածը, սակայն, չի վերաբերում այն բացառիկ դեպքերին, երբ մեկ արարքով կատարվում են նույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված արարքներ, որոնք ոչ թե միևնույն հանցակազմի հասարակ և ծանրացնող հանգամանքներով տեսակներն են, այլ տարբեր հանցագործություններ են: Վերոնշյալ դեպքերը պայմանավորված են հանցակազմների կառուցման օրենսդրական տեխնիկայի առանձնահատկություններով, երբ օրենսդիրը նպատակահարմար է գտել երկու ինքնուրույն հանցանքները նախատեսել մեկ հոդվածի տարբեր մասերով (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 235-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը և այլն):

16. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրական համակցությունն առկա է, եթե

ա) կատարվել են միմյանց հետ միասնական դիտավորությամբ չկապված մեկից ավելի հանցավոր արարքներ,

բ) հանցավոր արարքները նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր կամ միևնույն հոդվածներով,

գ) կատարված հանցագործությունների նկատմամբ պահպանված են քրեաիրավական նշանակություն ունեցող հետևանքները:

Իդեալական համակցությունն առկա է, եթե՝

ա) կատարվել է մեկ հանցավոր արարք,

բ) արարքը պարունակում է երկու կամ ավելի տարբեր հողվածներով նախատեսված, ինքնուրույն հանցակազմեր պարունակող հանցագործությունների հատկանիշներ,

գ) կատարված հանցագործությունների նկատմամբ պահպանված են քրեաիրավական նշանակություն ունեցող հետևանքները:

17. Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ յուրաքանչյուր դեպքում, ելնելով գործի փաստական հանգամանքներից, անհրաժեշտ է հանցագործությունների համակցության տեսակները սահմանազատել ինչպես միմյանցից, այնպես էլ եզակի (մեկ) հանցագործությունից: Այսպես, եզակի հանցագործությունը կատարվում է մեկ կամ մի քանի փոխկապակցված արարքներով, ոսնձգում է մեկ հիմնական օբյեկտի դեմ, պարունակում մեկ հանցակազմ և որակվում է քրեական օրենսգրքի հատուկ մասի մեկ հողվածով կամ հողվածի մասով: Հանցագործությունները որակելիս հատկապես դժվարություններ են առաջանում եզակի հանցագործություններն իդեալական համակցությունից տարանջատելու հարցում, քանի որ երկու դեպքում էլ կատարվում է մեկ արարք:

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իդեալական համակցությունը եզակի (մեկ) հանցագործությունից տարանջատելու հիմնական չափանիշն օրենսդրորեն ամրագրված այն պարտադիր պահանջն է, ըստ որի՝ իդեալական համակցություն կարող են կազմել միայն ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հողվածներով նախատեսված երկու կամ ավելի հանցանքները: Այսինքն՝ եթե կատարված արարքը պարունակում է միևնույն հողվածի տարբեր մասերով նախատեսված հանցագործության հատկանիշներ, ապա իդեալական համակցությունը բացակայում է, քանի որ վերջինիս դեպքում արարքը չի կարող որակվել մեկ քրեաիրավական նորմով:

Անձի մեկ արարքում միևնույն հողվածի տարբեր մասերով նախատեսված հանցագործությունների հատկանիշների առկայության դեպքում (հիմնական, ծանրացնող և (կամ) առավել ծանրացնող) համապատասխան նորմերը միմյանց հետ սերտ կապի մեջ են գտնվում և իրենց հիմնական հատկանիշներով համընկնում են: Գրանցից յուրաքանչյուրն իր ծավալով և բովանդակությամբ համապատասխանում է մյուսին, սակայն առանձնացվում է օբյեկտիվ կամ սուբյեկտիվ որևէ հատկանիշի առանձնահատկությամբ: Այս դեպքում արարքը որակվում է միայն այն նորմով, որն առավել ամբողջական է պարունակում կատարված հանցանքի բոլոր հատկանիշները: Այլ խոսքով՝ եթե անձի կատարած մեկ արարքում միաժամանակ առկա են հիմնական և ծանրացնող կամ ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքներով հանցակազմերի հատկանիշներ, ապա արարքը գնահատվում է որպես մեկ հանցագործություն և որակվում միայն ծանրացնող (կամ առավել ծանրացնող) հանգամանքը նախատեսող մասով:

Այս առումով Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հիմնական և ծանրացնող հանգամանքով հանցակազմերի մրցակցության դեպքում արարքը

ծանրացնող հանգամանքով որակելը, ինչպես նաև ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքներով հանցակազմերի մրցակցության դեպքում արարքը առավել ծանրացնող հանցակազմով որակելը չի նշանակում, որ անձի արարքում առկա մյուս ծանրացնող հանգամանքներն անտեսվում են: Նախաքննական մարմինն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման և մեղադրական եզրակացության մեջ, իսկ դատարանը դատավճռի նկարագրական հատվածում պարտավոր են արտացոլել արարքում առկա բոլոր ծանրացնող հանգամանքները, ինչը թույլ է տալիս ամբողջությամբ գնահատել հանցագործության հանրային վտանգավորությունը և մեկից ավելի ծանրացնող հանգամանքների առկայությունը հաշվի առնել պատիժ նշանակելիս:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերևում շարադրվածը չի վերաբերում այն դեպքերին, երբ անձի կողմից առանձին արարքներով կատարվում են միևնույն հողվածի միևնույն կամ տարբեր մասերով՝ հիմնական, ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանքներով նախատեսված հանցագործություններ, քանի որ տվյալ դեպքերում ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն առկա է իրական համակցություն, այլ ոչ թե եզակի հանցագործություն (օրինակ՝ եթե անձն առանց իրացնելու նպատակի զգալի, խոշոր կամ առանձնապես խոշոր չափի թմրամիջոցներ է ձեռք բերում մեկ գործողությամբ, այսինքն՝ կատարում է մեկ միասնական հանցագործություն, որն իր մեջ պարունակում է միևնույն հողվածի տարբեր մասերով նախատեսված որակյալ հատկանիշներ, սպա արարքը չի կարող համարվել իդեալական (բացակայում են տարբեր հողվածները) կամ իրական համակցություն (բացակայում են մեկից ավելի հանցավոր արարքները) և ենթակա է որակման որպես մեկ հանցագործություն: Միևնույն ժամանակ, եթե առանց իրացնելու նպատակի անձը ձեռք է բերում զգալի չափերով թմրամիջոցներ, այնուհետև նույն կամ այլ աղբյուրներից ձեռք է բերում խոշոր կամ առանձնապես խոշոր չափի թմրամիջոցներ, արարքները կորակվեն հանցագործությունների իրական համակցության կանոններով, քանի որ դրանք թեև նախատեսված են միևնույն հողվածի տարբեր մասերով, սակայն արդյունք են տարբեր, միմյանց հետ չկապված գործողությունների):

18. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի կողմից երկու և ավելի հանցագործությունների կատարումը վկայում է ինչպես հանցավորի անձի, այնպես էլ կատարված արարքի հանրային վտանգավորության բարձր աստիճանի մասին: Վերոնշյալ հանգամանքով պայմանավորված՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսվում է հանցագործությունների համակցության կանոններով պատիժ նշանակելու հատուկ կարգ, որն առաջ է բերում հանցավորի համար անբարենպաստ հետևանքներ: Մինչդեռ, ի տարբերություն հանցագործությունների համակցության, եզակի հանցագործության դեպքում կատարվում է մեկ հանցագործություն, հետևաբար այն պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի մեկ հողվածով կամ հողվածի մասով: Հակառակ պարագայում

արհեստականորեն կատեղծվեն հանցագործությունների բազմակիության հատկանիշներ, և հանցավորի քրեական պատասխանատվությունն անհիմն կիստացվի:

Այդպիսի մոտեցումը կհակասի ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածում ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման, ինչպես նաև նույն հանցագործության համար անձին կրկին անգամ դատապարտելու անթույլատրելիության (non bis in idem) սկզբունքին (նույն արարքի համար կրկնակի դատապարտման անթույլատրելիության սկզբունքի մասին *mutatis mutandis* տե՛ս Գավիթ Բորիսի Բաբայանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԴ-1/0043/01/11 որոշումը):

Այս դեպքում «նույն արարք»-ի առկայության մասին վկայում են հիմնական, ծանրացնող և առավել ծանրացնող հանցակազմերի շարադրման օրենսդրական տեխնիկայի առանձնահատկությունները: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում հանցակազմի որակյալ տեսակները շարադրված են հետևյալ կերպ՝ «Նույն արարքը, որը կատարվել է (...) [խոշոր կամ առանձնապես խոշոր չափերով]»: Վերոշարադրյալից հետևում է, որ «նույն արարք» եզրույթը վերաբերում է համապատասխան հոդվածի առաջին մասում նկարագրված (հիմնական) հանցագործությանը, որն ամբողջությամբ արտացոլվում է նաև հոդվածի ծանրացնող (առավել ծանրացնող) հանգամանքներում, սակայն առանձնանում է լրացուցիչ հանգամանքի առկայությամբ, ինչը հիմնական հանցակազմը վեր է ածում որակյալի: Օրենսդիրը, նախատեսելով նույն արարքի վտանգավոր տեսակը և դրա համար ավելի խիստ պատիժ սահմանելով, արդեն իսկ դրանում հաշվի է առել և արտացոլել այդ արարքի վտանգավորությունը: Հետևաբար, անթույլատրելի է արարքը որակել հոդվածի բոլոր մասերով՝ հանցագործությունների համակցության կանոններով, այլ նախապատվությունը պետք է տալ ծանրացնող այն հանգամանքներով հանցակազմին, որն առավել ամբողջական է արտացոլում կատարված հանցագործության բոլոր հատկանիշները:

19. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ.Ոսկանյանը 2012 թվականի դեկտեմբերի 20-ին եղբոր խնդրանքով իրենց տան մոտակայքում գտնվող աղբարկղի մոտից վերցրել է քննությանը չպարզված անձի կողմից թողնված ծխախոտի մեկ տուփ: Նրան չի հաջողվել տուփը փոխանցել եղբորը, քանի որ այն հիմնարկի հսկիչ-անցագրային կետում զննությանը հայտնաբերվել և առգրավվել է: Տուփի մեջ եղել է զգալի չափի՝ 4.2 գրամ «չորացված մարիխուանա» և խոշոր չափի՝ 0.0426 գրամ «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ առանց իրացնելու նպատակի խոշոր չափի և զգալի չափի թմրանյութ ապօրինի ձեռք բերելու և պահելու դեպքում դրանցից յուրաքանչյուրին առանձին քրեաիրավական զնահատական տալը և յուրաքանչյուրի համար առանձին անձին դատա-

պարտելն արհեստականորեն վատթարացնում է ամբաստանյալի վիճակը: Բացի այդ, դատարանն ընդգծել է, որ անձի արարքում արդեն իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ծանրացնող հանգամանքի առկայության պայմաններում արարքը հանցագործությունների համակցության կանոններով որակելը տեսական և իրավական առումով հիմնավորված չէ: Հանցագործության սուբյեկտիվ կողմին անդրադառնալիս Առաջին ատյանի դատարանը նշել է, որ Գ.Ոսկանյանը մեկ միասնական դիտավորությամբ ձեռք է բերել խոշոր չափի և զգալի չափի թմրամիջոց (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, հիմնավորված համարելով Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունները, անփոփոխ է թողել դատական ակտը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Մեջբերված փաստերից հետևում է, որ Գ.Ոսկանյանը զգալի և խոշոր չափերի տարբեր տեսակի թմրամիջոցները ձեռք է բերել մեկ արարքով (գործողությամբ): Այսինքն՝ նրա մեկ արարքում առկա են միևնույն հոդվածի (ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդված) տարբեր մասերով (1-ին և 2-րդ) նախատեսված հանցագործության հատկանիշներ:

20. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստական տվյալները գնահատելով 14-19-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ.Ոսկանյանի գործողություններում հանցագործությունների համակցությունը բացակայում է, քանի որ Գ.Ոսկանյանի փաստացի կատարած մեկ արարքում առկա է միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված՝ հիմնական և ծանրացնող հանգամանքներով հանցակազմի հատկանիշներ: Այսինքն՝ նրա արարքը պետք է որակվի ծանրացնող հանգամանքի համար պատասխանատվություն նախատեսող նորմով: Այլ խոսքով՝ Գ.Ոսկանյանի արարքի որակումը ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ամբողջությամբ ընդգրկում է հանցակազմի ինչպես հիմնական, այնպես էլ ծանրացնող հատկանիշները, հետևաբար հանցագործությունների որակման ընդհանուր սկզբունքների տեսանկյունից իրական և իդեալական համակցության կանոնների կիրառումն իրավաչափ չէ:

21. Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Ոսկանյանին մեղսագրված արարքը հանցագործությունների համակցության կանոններով որակելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ են:

22. Այսպիսով, ամբաստանյալ Գ.Ոսկանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որակելու անհրաժեշտության վերաբերյալ ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական են և հիմնավոր, հետևաբար անհիմն է բողոքաբերի փաստարկն այն մասին, որ թույլ է տրվել նյութական իրավունքի խախտում (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ Գ.Ոսկանյանը մեկ արարքով կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի նույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված երկու հանցագործություն, հետևաբար կատարված արարքն իրենից ներկայացնում է իդեալական համակցություն (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը), ապա նշված եզրահանգումը հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հանցագործությունների իդեալական համակցության հասկացությանը, ըստ որի՝ իդեալական համակցություն կարող են կազմել միայն տարբեր հոդվածներով նախատեսված հանցագործությունները:

Միևնույն ժամանակ, Վճարելի դատարանը հարկ է համարում նշել, որ Առաջին ատյանի դատարանը, ըստ էության ճիշտ որակելով Գ.Ոսկանյանի կատարած հանցագործությունը, սխալ է մեկնաբանել հանցանքի սուբյեկտիվ կողմը: Մասնավորապես, դատարանը նշել է, որ հանցավորը խոշոր չափի թմրամիջոց ձեռք բերելու նկատմամբ դրսևորել է ուղղակի դիտավորություն, մինչդեռ գործի հանգամանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուղղակի դիտավորություն հանցավորը դրսևորել է զուտ թմրամիջոց ձեռք բերելու փաստի նկատմամբ, մինչդեռ դրանց տեսակների և չափերի մասին պատկերացում չի ունեցել՝ գործել է չկոնկրետացված դիտավորությամբ: Սակայն վերոնշյալ հանգամանքն արարքի որակման վրա որևէ ազդեցություն չունի, քանի որ չկոնկրետացված դիտավորության դեպքում արարքը որակվում է ըստ փաստացի առաջացած հետևանքի:

Վճարելի դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում բողոքի հեղինակի նաև այն դիրքորոշմանը, որ ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումների պայմաններում առավել տրամաբանական է անձի արարքը որակել ըստ թմրամիջոցի տեսակի, այսինքն՝ յուրաքանչյուրն առանձին՝ հանցագործությունների համակցության կանոններով (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Վերոնշյալի կապակցությամբ Վճարելի դատարանն արձանագրում է, որ թեև քննարկվող հանցագործության պարտադիր հատկանիշ է հանցագործության առարկան (թմրամիջոցները կամ հոգեներգործուն նյութերը), այնուամենայնիվ ծանրացնող հանգամանքների առանձնացման հիմքում դրված են դրանց չափերը, այլ ոչ թե կոնկրետ տեսակները: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսդրությունը չի նախատեսում տարբեր տեսակների թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի քաշերը միմյանց գումարելու որևէ կարգ:

23. Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 3-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մարտի 25-ի որոշումը հակասում են Վճարելի դատարանի նախկինում՝ *Կ.Հովհաննիսյանի և մյուսների* վերաբերյալ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԶԲԴ/0063/01/08 գործով կայացված որոշմանը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը), Վճարելի դատարանն արձանագրում է, որ այն ևս հիմնագուրկ է:

Այսպես, վկայակոչված որոշման փաստական հանգամանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կ.Հովհաննիսյանը տարբեր ժամանակահատվածներում, առանձին արարքներով կատարել է երկուսից ավելի ինքնուրույն հանցակազմ պարունակող հանցագործություններ, մասնավորապես 2005-2007 թվականների ընթացքում տարբեր աղբյուրներից իրացնելու նպատակով ձեռք է բերել և պահել տարբեր տեսակի ու չափերի թմրամիջոցներ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Կ.Հովհաննիսյանը կատարել է երկուսից ավելի ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքներ՝ մի մասը նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ, իսկ մյուս մասը՝ 3-րդ մասով, ինչը բացառում է նրա կատարած արարքների որակումը միայն ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասով (տե՛ս Կ.Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ Ե.ԶԲԴ/0063/01/08 որոշման 5-րդ և 38-րդ կետերը): Մինչդեռ սույն գործով Գ.Ոսկանյանը մեկ արարքով է ձեռք բերել տարբեր տեսակի ու չափերի թմրանյութեր:

Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկայակոչված որոշման փաստական հանգամանքներն էապես տարբերվում են սույն գործի փաստական հանգամանքներից:

24. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ամբաստանյալ Գարսևան Ասատուրի Ոսկանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-268 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի մարտի 25-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

սրորագրություն

Դատավորներ՝

սրորագրություններ

365-րդ հոդվածի 1-ին մասով: Նույն օրն Ա.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել թիվ 36534 գորամասի հրամանատարության հսկողությանը հանձնելը:

Որպես մեղադրյալ է ներգրավվել նաև Վազգեն Մանասյանը, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասով:

2012 թվականի օգոստոսի 28-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 7-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է, և Ա.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել՝ նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության հիմքով:

Առաջին ատյանի դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ քրեական գործի վարույթը կարճվել է ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է նաև Վ.Մանասյանի նկատմամբ՝ նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության հիմքով:

3. Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումների դեմ վերաքննիչ բողոքներ է բերել դատախազ Ս.Խաչատրյանը:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 31-ի որոշումներով վերաքննիչ բողոքները մերժվել են:

4. Վ.Մանասյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատախազ Ս.Խաչատրյանը: Ա.Հակոբյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք չի ներկայացվել և որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն, Վ.Մանասյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճելու և այդ մեղադրանքով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մայիսի 7-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 31-ի որոշումները բեկանվել են և գործն ուղարկվել է Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

5. 2014 թվականի փետրվարի 12-ին դատախազ Ս.Խաչատրյանը միջնորդություն է ներկայացրել Վերաքննիչ դատարան՝ խնդրելով վերականգնել Ա.Հակոբյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 31-ի որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ բաց թողնված ժամկետը:

Վերաքննիչ դատարանի 2014 թվականի փետրվարի 26-ի որոշմամբ դատախազ Ս.Խաչատրյանի միջնորդությունը բավարարվել է:

6. 2014 թվականի մարտի 24-ին դատախազ Ա.Խաչատրյանը վճարելի բողոք է բերել Ա.Հակոբյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հուլիսի 31-ի որոշման դեմ, որը Վճարելի դատարանի 2014 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Ա.Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Հ]անդիսանալով ՊԲՔ-ի 36534 գորամասի 4-րդ ՀԳՄ-ի ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, խախտելով մարտական հերթապահության կանոնները, 2012թ. մարտի 6-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, առանց քույրվորության թիվ 165 մարտական դիրքից գնացել է թիվ 167 մարտական դիրք, որտեղ մնացել է մի քանի ժամ, այդ ընթացքում չի կատարել իրենց դիրքի գրաֆիկով նախատեսված դիտորդի պարտականությունները, դրանով ՀՀ անվտանգության սպահովմանն ուղղված վնաս պատճառելու սպառնալիք ստեղծել: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 97):

8. Համաձայն 2012 թվականի մարտի 8-ի Ստեփանակերտի ռազմական ոստիկանության բաժնի (այսուհետ նաև՝ Ստեփանակերտի ՌՌ բաժին) կողմից տրված մեկուսացման գրության՝ Ա.Հակոբյանը զինվորական կանոնադրերի խախտման համար մեկուսարան ընդունվել է 2012 թվականի մարտի 8-ին, ազատվել՝ 2012 թվականի մարտի 18-ին (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 189):

9. 2012 թվականի մարտի 8-ի թիվ 36534 գորամասի հրամանատարի թիվ 68 հրամանի քաղվածքում արձանագրվել է հետևյալը. «Համարել կալանված Սյրեփանակերտի ՌՌ բաժին կալանատարանը 10 (տասը) օր ժամկետով ներքոհիշյալ ժամկետային զինծառայողները և հանել կաթասյական բավարարումից. (...)

2. 12իվ 3իդ 3իզ ՊՆ գնդացրորդ շարքային Արման Արտակի Հակոբյանին (2/2010 գորակոչ, Արթիկի ՁԿ) (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 191):

10. Առաջին ատյանի դատարանն իր որոշման մեջ արձանագրել է հետևյալը. « (...) մեղադրյալ Արման Արտակի Հակոբյանը ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջին ծանրության հանցագործություն կատարելու համար, համաձայն թիվ 36534 գորամասի հրամանատարի թիվ 68 հրամանի, ենթարկվել է կարգապահական տրույթի՝ կալանք 10 (տասը) օր ժամկետով, որը համաձայն Սյրեփանակերտի ՌՌ բաժնի կողմից տրված մեկուսացման գրության՝ կրել է 08.03.2012թ-ից մինչև 18.03.2012թ-ը, այսինքն՝ Ա.Հակոբյանը կատարած հանցանքի համար, ելնելով ՀՀ վճարելի դատարանի (...) որոշման պահանջներից, փաստացի ենթարկվել է քրեական պատասխանատվության և չի կարող կրկին անգամ նույն արար-

քի համար դատվել, ուսրի դատարանը գտնում է, որ վերջինիս նկատմամբ քրեական գործի վարույթը պետք է կարճել, այդ մեղադրանքով քրեական հետապնդումը դադարեցնել՝ նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության պատճառաբանությամբ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթ 17-19):

11. Վերաքննիչ դատարանն իր որոշման պատճառաբանական մասում արձանագրել է. «(...) Վերոգրյալ հիմքերի առկայության պայմաններում վերաքննիչ դատարանը եկավ հետևության, որ կայացված որոշումը օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, ուսրի այն բեկանելու և մեղադրական դատական ակտ կայացնելու հիմքեր չկան (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթ 91):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

12. Բողոք բերած անձի պնդմամբ Ա.Հակոբյանի կրկնակի դատապարտման վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն անհիմն են:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ սույն գործով զորամաս կատարված հարցմամբ պարզվել է, որ Ա.Հակոբյանը զորամասի հրամանատարության կողմից մեկուսացվել է առանց ծառայողական քննություն անցկացնելու և կատարվածը պարզելու: Թիվ 68 հրամանում գրված է, որ Ա.Հակոբյանը մեկուսացվել է մարտական հերթապահության անվտանգության կանոնների խախտման համար: Բացի այդ, Ստեփանակերտի Ռ-Ո բաժնից ստացված մեկուսացման գրությունների վրա «Խախտման պատճառը» տողի առջև նշված է «ԶԿԽ», այսինքն՝ զինվորական կանոնագրի խախտում:

Բողոք բերած անձը նշել է, որ դատարանը հաշվի չի առել, որ Ա.Հակոբյանը 2012 թվականի մարտի 8-ի մեկուսացման գրությամբ Ստեփանակերտի Ռ-Ո բաժնի կարգապահական մեկուսարանում մեկուսացվել է ոչ թե մարտական հերթապահության կանոնները խախտելու համար, այլ զինվորական կանոնագրի խախտման պատճառով:

13. Վերոգրյալից բողոքաբերը հետևություն է արել այն մասին, որ Ա.Հակոբյանին Ստեփանակերտի Ռ-Ո բաժնում 10 օր տևողությամբ մեկուսացնելը որևէ կապ չունի ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով նրան մեղաազրվող արարքի հետ, և Ա.Հակոբյանն առանց բավարար հիմքերի ազատվել է քրեական պատասխանատվությունից: Ուստի, խնդրել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը, փոփոխել և կայացնել նոր դատական ակտ. այն է՝ Ա.Հակոբյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 6 (վեց) ամիս ժամկետով: Նրա նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 1 (մեկ) տարի ժամկետով:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության պատճառաբանությամբ քրեական գործի վարույթը կարճելու և Ա.Հակոբյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս ստորադաս դատարանները պատշաճ գնահատե՞լ են արդյոք գործում առկա փաստական տվյալները:

15. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան»:*

«Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *«Ոչ ոք չպետք է կրկին անգամ դատվի կամ պատժվի այն հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել յուրաքանչյուր երկրի օրենքին և քրեական դատավարության իրավունքին համապատասխան»:*

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Արգելվում է անձին երկրորդ անգամ դատապարտել նույն հանցագործության համար»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար»:*

Մեջբերված իրավադրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *Դ.Բաբայանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(...) նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (non bis in idem) սկզբունքը հիմնարար տեղ է զբաղեցնում ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված պաշտպանության համակարգում, որի հիմքում ընկած է մեղքը քաված լինելու կանխավարկածը, և այն իրենից ներկայացնում է նույն արարքի համար նույն անձին կրկին քրեական հետապնդման չենթարկելու, չդատապարտելու, չպատժելու երաշխիք: Ընդ որում, «նույն արարքի համար» չհակերպումը նշանակում է, որ կրկնակի դատապարտման անթույլատրելիության առարկան պետք է ընկալվի ոչ թե հանցանքի իրավական որակման, այլ փաստական նկարագրության իմաստով:*

(...) «նույն արարքի համար» չհակերպումը ճիշտ կիրառելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում տեղ գրած «քրեական մեղադրանք» եզրույթի մեկնաբանմանը՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով իրավախախտումը որպես «քրեական» որակելու չափորոշիչներն են՝ ա) իրավախախտման դասակարգումն ըստ ազգային օրենսդրության, բ) իրավախախտման բնույթը, գ) նշանակված կամ հնարավոր պարժի խստության աստիճանը: Ընդ որում, իրավախախտումը «քրեական» որակելու համար բավարար է այդ չափորոշիչներից միայն մեկի, այլ ոչ թե բոլորի պարտադիր առկայությունը» (տե՛ս Դավիթ Բորիսի Բաբայանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԴ-1/0043/01/11 որոշման 22-24-րդ կետերը):

16. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1996 թվականի օգոստոսի 12-ի թիվ N 247 որոշման 1-ին կետով հաստատված կանոնադրության 51-րդ կետի համաձայն՝ «Ձինվորական կարգապահության կամ հասարակական կարգի խախտման համար զինժառայողն անչափ կրում է կարգապահական պատասխանատվություն:

Ձինժառայողի կողմից զինվորական կարգապահության կամ հասարակական կարգի խախտման դեպքում հրամանատարը (պետր) կարող է (...) կարգապահական տույժ փայ: Ընդ որում, նա պետք է հաշվի առնի, որ տույժը (...) պետք է համապատասխանի զանցանքի ծանրությանը և մեղքի աստիճանին, որը քննությանը որոշում է հրամանատարը (պետր)»:

Նույն որոշման 54-րդ կետի համաձայն՝ «Ձինվորներին կարող են տրվել հետևյալ տույժերը՝
(...)

ե) ժամկետային ծառայության զինվորների մեկուսացում և պահում կարգապահական մեկուսարանում՝ մինչև փասն օր, իսկ պայմանագրով զինվորական ծառայության ընդունված զինվորներին՝ մինչև յոթ օր»:

Նույն որոշման 91-րդ կետի համաձայն՝ «Հրամանատարի (պետրի) կողմից ենթակային կարգապահական տույժ փայլու որոշմանը պետք է նախորդի քննությունը, որը կատարվում է մեղավորներին հայտնաբերելու և զանցանքի կատարմանը նպաստող պարճառներն ու պայմանները բացահայտելու նպատակով:

Քննության ընթացքում հրամանատարը (պետր) պարզում է, թե կատարվել է արդյոք զանցանք՝ երբ, որտեղ, ինչ պարագաներում, ինչ զանցանք է՝ մեղքի առկայությունը կոնկրետ անձանց գործողություններում կամ անգործության մեջ, յուրաքանչյուրի մեղքի աստիճանը (...):»:

Նույն որոշման 92-րդ կետի համաձայն՝ «Մեղքի աստիճանը և կարգապահական տույժի միջոցը որոշելիս հաշվի են առնվում զանցանքի բնույթը, դրա կատարման հանգամանքները, հետևանքները, մեղավորի նախկին վարքը, ինչպես նաև նրա զինվորական ծառայության տևողությունն ու ծառայության անցկացման կարգի -իմացության աստիճանը (...):»:

Ա.Հակոբյանին վերագրվող արարքի կատարման պահին գործող «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի թիվ

14 հավելվածի 1-ին կետի համաձայն՝ «Կայագորային կարգապահական մեկուսարանը նախատեսված է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնադրության հիման վրա կարգապահական փուլի կարգով մեկուսացված, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի հիման վրա շերքակալված կամ կալանավորված, դատարանի կողմից դատապարտված զինծառայողներին պահելու համար»:

Մեջբերված դրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Վ.Մանասյանի գործով որոշման մեջ՝ արձանագրելով, որ «(...) զինված ուժերի կարգապահական կանոնադրության համաձայն՝ զինծառայողների նկատմամբ որպես կարգապահական փուլի փեսակ կիրառվում էր մինչև 7 կամ 10 օր ժամկետով կարգապահական մեկուսարանում պահելը: Ընդ որում, նույն մեկուսարանում են պահվել նաև քրեական վարույթի շրջանակներում շերքակալված կամ կալանավորված, ինչպես նաև դատապարտված զինծառայողները: Կարգապահական մեկուսարանում պահվող զինծառայողների համար սահմանված են եղել նույնպիսի իրավունքներ և պարտականություններ, ինչպիսիք ունեցել են շերքակալվածները, կալանավորվածները կամ դատապարտվածները: Այլ խոսքով՝ կարգապահական պարասխանավորության ենթարկված անչանց ազատությունը սահմանափակվել է, և նրանք պահվել են մեկուսացման նույն պայմաններում, ինչ որ շերքակալված, կալանավորված և դատապարտված անչինք» (տե՛ս Վարդգես Ալեքսեյի Մանասյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՍԴ-3/0080/01/12 որոշման 14-րդ կետը):

17. Վերահաստատելով համապատասխանաբար Դ.Բարսյանի և Վ.Մանասյանի գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ արձանագրում է, որ կրկին անգամ դատապարտվելու անթույլատրելիության հիմքով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար անհրաժեշտ է հավաստել, որ կատարվածը նույն արարքն է, և անձը դրա համար դատապարտվում է կրկնակի: Ընդ որում, կատարվածի նույնության մասին վկայում է ոչ այնքան արարքին տրված իրավական որակումը, որքան անձի դատապարտման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում (որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն, կարգապահական տույժի ենթակելու մասին հրաման և այլն) արարքի փաստական հանգամանքների նկարագրության նույնականությունը, մասնավորապես, հանցակազմի հատկանիշները բնութագրող բոլոր փաստական տվյալների համընկումը (հանցագործության կամ զանցանքի տեսակը, դրա կատարման տեղը, ժամանակը, իրադրությունը և այլ հանգամանքները):

18. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Ա.Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը): 2012 թվականի մարտի 8-ին Ստեփանակերտի Ռ-Ռ բաժնի կողմից տրված մեկուսացման գրության համաձայն՝ Ա.Հակոբյանը զինվորական կանոնադրքերի խախտման համար

մեկուսարան ընդունվել է 2012 թվականի մարտի 8-ին, ազատվել է 2012 թվականի մարտի 18-ին (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Թիվ 36534 գորամասի հրամանատարի թիվ 68 հրամանի քաղվածքում արձանագրվել է, որ կրտսեր սերժանտ Ա.Հակոբյանը կալանավորված է (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից երևում է, որ Ա.Հակոբյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ կալանքի ձևով, իսկ կալանավորման հիմքի մասին նշումը ընդհանրական բնույթի է՝ «ՁԿԽ», այսինքն՝ զինվորական կանոնադրքերի խախտում: Ինչ վերաբերում է թիվ 36534 գորամասի հրամանատարի 2012 թվականի մարտի 8-ի թիվ 68 հրամանին, ապա դրանում հստակ նշված չէ, թե Ա.Հակոբյանն ինչի համար է ենթարկվել կարգապահական տույժի՝ կալանքի 10 (տասը) օր ժամկետով՝ սույն գործով վերջինիս վերագրվող արարքի՞ (ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մաս), թե՞ այլ իրավախախտում թույլ տալու համար: Գործի նյութերից չի երևում նաև, թե հրամանատարի կողմից ենթակային կարգապահական տույժ տալու որոշմանը նախորդե՞լ է արդյոք քննություն, որի ընթացքում հրամանատարը պետք է պարզեր, թե երբ, որտեղ, ինչ պարագաներում, ինչ զանցանք է կատարվել և այլն:

Մինչդեռ Առաջին ատյանի դատարանը, առանց վերոնշյալ հանգամանքները պարզելու, արձանագրել է, որ դատաքննության ընթացքում հիմնավորված ապացույցներով պարզվեց, որ մեղադրանքում նշված հանցագործությունները կատարելու համար թիվ 36534 գորամասի հրամանատարի թիվ 68 հրամանի համաձայն՝ Ա.Հակոբյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ կալանքի 10 օր ժամկետով, որը համաձայն Ստեփանակերտի Ռ-Ռ բաժնի պետի մեկուսացման գրության՝ փաստացի կրել է: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Ա.Հակոբյանը կատարած հանցանքի համար փաստացի ենթարկվել է քրեական պատասխանատվության և չի կարող կրկին անգամ նույն արարքի համար դատվել (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը (տե՛ս սույն որոշման 11-րդ կետը):

19. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով 15-17-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանները պատշաճ չեն գնահատել սույն գործի փաստական հանգամանքները, ինչի արդյունքում սխալ են մեկնաբանել ինչպես Վճռաբեկ դատարանի կողմից *Դ.Բարսայանի* գործով կայացված որոշումը, այնպես էլ քրեական օրենքը և միջազգային պայմանագիրը: Մասնավորապես, դատարանները նախքան Ա.Հակոբյանին կրկնակի դատապարտման ենթարկելու վերաբերյալ եզրահանգում անելը չեն պարզել, թե նա ինչի համար է ենթարկվել կարգապահական տույժի:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության պատճառաբանությամբ քրեական գործի վարույթը կարճելու և Ա.Հակոբյանի նկատմամբ քրեական

հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել գործում առկա փաստական տվյալները: Այս առումով ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի («Ապացույցների ստուգումը») խախտում, քանի որ վերլուծության, այլ ապացույցների հետ համադրելու և նոր ապացույցներ հավաքելու միջոցով բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման չեն ենթարկել Ա.Հակոբյանի կարգապահական պատասխանատվության հիմքի վերաբերյալ ապացույցները:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անչանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:*

Վերոնշյալ դատավարական իրավունքի խախտումը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում անհրաժեշտ է պարզել, թե Ա.Հակոբյանն ինչի համար է ենթարկվել կարգապահական տույժի, որից հետո միայն եզրակացություն անել նրան կրկնակի դատապարտման ենթարկելու վերաբերյալ:

21. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Արման Արտակի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործի վարույթը կարճելու և այդ մեղադրանքով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի մայիսի 7-ի և այն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հուլիսի 31-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական ցիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

43.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԵԷԴ/0030/01/12

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Քրեական գործ թիվ ԵԷԴ/0030/01/12

Նախագահող դատավոր՝ Կ.Ղազարյան

Դատավորներ՝ Գ.Մելիք-Մարգարյան

Հ.Տեր-Աղամյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան	Կ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

2014 թվականի հոկտեմբերի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ Գևորգ Մերոբի Խնուսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2011 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 90278811 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի որոշումներով Հարություն Կառլենի Պետրոսյանը, Վահե Վարուժանի Պարանյանը, Նարեկ Արկադիի Սահակյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց

մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2011 թվականի հոկտեմբերի 24-ի որոշումներով Սերգո Արմենի Մելիքբեկյանը, Տիգրան Ռուբենի Կոստանդյանը և Գևորգ Սերոբի Խնուսյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, և նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2012 թվականի մարտի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճռով Վ.Պետրոսյանը, Վ.Պարանյանը, Ն.Սահակյանը, Ս.Մելիքբեկյանը, Տ.Կոստանդյանը և Գ.Խնուսյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, և նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք են բերել Ն.Սահակյանի, Վ.Պարանյանի պաշտպան Ժ.Վարոսյանը, Գ.Խնուսյանի պաշտպաններ Կ.Գրիգորյանը և Վ.Բաբայանը:

Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 11-ի որոշմամբ Վ.Պարանյանի մասով պաշտպան Ժ.Վարոսյանի վերաքննիչ բողոքով և 2012 թվականի հոկտեմբերի 23-ի որոշմամբ Գ.Խնուսյանի պաշտպաններ Կ.Գրիգորյանի և Վ.Բաբայանի վերաքննիչ բողոքով վերաքննիչ վարույթները կարճվել են՝ իրենց դիմումների հիման վրա, իսկ Վերաքննիչ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ Ն.Սահակյանի մասով պաշտպան Ժ.Վարոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, բեկանվել է Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը, գործի վարույթը կարճվել է, իսկ քրեական հետապնդումը դադարեցվել:

4. Գ.Խնուսյանի պաշտպաններ Կ.Գրիգորյանի և Վ.Բաբայանի, Վ.Պարանյանի պաշտպան Ժ.Վարոսյանի, Տ.Կոստանդյանի պաշտպան Գ.Մադոյանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի մարտի 19-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը, գործի վարույթը Գ.Խնուսյանի, Վ.Պարանյանի, Տ.Կոստանդյանի մասով կարճել է, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցրել:

Հ.Պետրոսյանի պաշտպան Ղ.Պապոյանի, Ս.Մելիքբեկյանի պաշտպան Ա.Քալաշյանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի

դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը, Հ.Պետրոսյանին, Ս.Մելիքբեկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացրել, և նրանց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել՝ կարճելով քրեական գործի վարույթը:

Դատավարության մասնակիցները Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի, 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումները վճարելիության կարգով չեն բողոքարկել, և դրանք մտել են օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի որոշման դեմ Գ.Խնուսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի, Տ.Կոստանոյանի և Վերաքննիչ դատարանի 2013 թվականի ապրիլի 29-ի որոշման դեմ մեղադրող Տ.Հարությունյանի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի հիմքով բերվել են վճարելի բողոքներ:

Վճարելի դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ վճարելի բողոքները մասնակիորեն բավարարվել են, ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի որոշումը Գ.Խնուսյանի, Տ.Կոստանոյանի մասով և նույն դատարանի 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումը Հ.Պետրոսյանի, Ս.Մելիքբեկյանի վերաբերյալ բեկանվել են, գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

6. Նոր քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի մայիսի 6-ի որոշմամբ պաշտպաններ Ա.Քալաշյանի, Ղ.Պապոյանի, Գ.Մադոյանի վերաքննիչ բողոքները բավարարել է ամբողջությամբ, իսկ պաշտպաններ Կ.Գրիգորյանի, Վ.Բաբայանի բողոքները՝ մասնակիորեն, այն է՝ Գ.Խնուսյանի, Հ.Պետրոսյանի, Տ.Կոստանոյանի և Ս.Մելիքբեկյանի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճիռը բեկանել է և նրանց նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել ու քրեական հետապնդումը դադարեցրել:

7. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել Գ.Խնուսյանի պաշտպան Կ.Գրիգորյանը:

Վճարելի դատարանի 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ Գ.Խնուսյանի պաշտպան Կ.Գրիգորյանի վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

8. Հ.Պետրոսյանին, Վ.Պարանյանին, Ս.Մելիքբեկյանին, Տ.Կոստանոյանին և Գ.Խնուսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, հանդիսանալով ՀՀ ՊՆ 54574 զորամասի ժամկետային զինծառայողներ, կոչումով կրտսեր սերժանտներ, 2011 թվականի հոկտեմբերի 14-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, ստորադասության հարաբերությունների

բացակայության պայմաններում, խախտելով ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ հոդվածով սահմանված զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները, զորամասի հրետանային դիվիզիոնի զորանոցում, առանց որևէ պատճառի շուրջ 7-ից 10 րոպե տևողությամբ ծաղրուծանակի են ենթարկել, ստորացրել պատիվն ու արժանապատվությունը և բռնություն են գործադրել նույն զորամասի ժամկետային զինծառայող՝ կրտսեր սերժանտ Սամվել Արսենի Պապիկյանի նկատմամբ, այն է՝ ձեռքերով և ոտքերով անկանոն հարվածներ են հասցրել նրա գլխին ու մարմնի տարբեր մասերին, ինչպես նաև սեռական բնույթի հայտնաբերված հնչեցրել նրա հասցեին (տես քրեական գործ, հատոր 5-րդ, թերթ 14):

9. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի որոշման համաձայն՝ «(...) գործի նյութերով հաստատված է, որ սույն գործով մեղադրանքի փաստական կողմը կազմող գործողությունները կատարելու համար Գևորգ Խնուսյանի, Վահե Պարանյանի և Տիգրան Կոստանդյանի նկատմամբ ՀՀ ՊՆ 54574 գորամասի հրամանատարի 15.10.2011թ. թիվ 237 հրամանով նշանակվել է կարգապահական փուլ՝ 10-ական օր ժամանակով:

Նույն օրը Գևորգ Խնուսյանը, Վահե Պարանյանը և Տիգրան Կոստանդյանը տեղափոխվել են ՀՀ ՊՆ Երևանի կայսզորի Ռազմական Ոստիկանության կարգապահական մեկուսարան: Գևորգ Խնուսյանը և Տիգրան Կոստանդյանը կարգապահական մեկուսարանում գրվել են 15.10.2011թ.-ից մինչև 25.10.2011թ., երբ 15.10.2011թ. հարուցված սույն քրեական գործի շրջանակներում նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընդգրկվել կալանքը և մեղադրյալները տեղափոխվել են կալանավորվածներին պահելու վայր:

Իսկ Վահե Պարանյանը կարգապահական մեկուսարանում գրվել է 15.10.2011թ.-ից մինչև 22.10.2011թ.: Այսինքն՝ ամբաստանյալներ Գևորգ Խնուսյանը և Տիգրան Կոստանդյանը կարգապահական մեկուսարանում անազատության մեջ պահվել են 10 (տասը) օր, իսկ Վահե Պարանյանը՝ 7 (յոթ) օր: Վերաքննիչ դատարանը գրնում է, որ (...) Գևորգ Խնուսյանի և Տիգրան Կոստանդյանի նկատմամբ կիրառված 10 (տասը) օր, իսկ Վահե Պարանյանի նկատմամբ կիրառված՝ 7 (յոթ) օր կարգապահական կալանքն իր բնույթով և տևողությամբ հանդիսացել է քրեական պատիժ:

(...)

Վերոգրյալի հիման վրա՝ վերաքննիչ դատարանը գրնում է, որ Գևորգ Խնուսյանի, Վահե Պարանյանի և Տիգրան Կոստանդյանի կողմից կարգապահական կալանքը կրելուց հետո նույն արարքի համար նրանց դատապարտումը խախտել է կրկին դարվելու անթույլատրելիության սկզբունքը: Այսինքն՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2012 թվականի օգոստոսի 23-ի դատավճռով Գևորգ Խնուսյանը, Վահե Պարանյանը

և Տիգրան Կոստանյանը կրկին անգամ դատվել են նույն արարքի համար» (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 141-142):

10. Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման համաձայն՝ «(...) քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի և 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումներն օրինական, հիմնավորված և պարճառաբանված չեն, քանի որ դրանցում նշված չէ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմք:

Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմք չմատչանշելով՝ Վերաքննիչ դատարանը սահմանափակել է Գ.Խնուսյանի, Տ.Կոստանյանի, Հ.Պեպրոսյանի և Ս.Մելիքբեկյանի իրավունքները՝ թույլ տալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտում:

(...)

[Վերոհիշյալ] դատավարական իրավունքի խախտումը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի և 2013 թվականի ապրիլի 29-ի դատական ակտերը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի 2013 թվականի մարտի 19-ի և 2013 թվականի ապրիլի 29-ի որոշումներում առկա հակասությունը և իր որոշման մեջ հստակեցնի, թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված որ հիմքով է կարճում քրեական գործի վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը» (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթ 133-135):

11. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշման համաձայն՝ «(...) գործի քննության արդյունքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են դատական սխալի, հետևաբար Գատարանի 23.08.2012թ. դատավճիռը՝ քրեական գործով ըստ մեղադրանքի՝ Գևորգ Մերոբի Խնուսյանի, Հարություն Կառլենի Պեպրոսյանի, Տիգրան Ռուբենի Կոստանյանի և Մերգո Արմենի Մելիքբեկյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, պետք է բեկանել և նրանց նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով՝ կրկին դատապարտվելու անթույլատրելիության պարճառաբանությամբ»:

Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշման եզրափակիչ մասը շարադրվել է հետևյալ կերպ. «Պաշտպաններ Կ. Գրիգորյանի և Վ. Բաբայանի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն: Պաշտպաններ Ա. Բալաշյանի, Ղ. Պապոյանի և Գ. Մադոյանի վերաքննիչ բողոքները բավարարել: Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.08.2012թ. դատավճիռը՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Գևորգ Մերոքի Խնուսյանի, Հարություն Կառլենի Պեյրոսյանի, Տիգրան Ռուբենի Կոստանդյանի և Սերգո Արմենի Մելիքբեկյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, բեկանել ու նրանց նկատմամբ քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 10-րդ, թերթ 137-138):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

12. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի, «Բաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ մասի, ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջների խախտում:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը շարադրել է վկայակոչված իրավանորմերը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի մի շարք դատական ակտեր, որից հետո եզրահանգել է, որ սույն գործով Գ.Խնուսյանի նկատմամբ կիրառված 10 օր կարգապահական կալանքն իր բնույթով և տևողությամբ հանդիսացել է քրեական պատիժ, ու թեև Գ.Խնուսյանին կարգապահական մեկուսարանում պահելը հանդիսացել է կարգապահական տույժ, սակայն հաշվի առնելով արարքի ու դրա համար կիրառված պատժի բնույթը, Եվրոպական կոնվենցիայի իմաստով այն հավասարազոր է անձին քրեական մեղադրանքի համար դատապարտելուն:

Բողոք բերած անձը գտել է, որ այս պայմաններում Գ.Խնուսյանի նկատմամբ քրեական գործի վարույթը կարճելով և քրեական հետապնդումը դադարեցնելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նույն արարքի համար կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտում:

13. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը և Գ.Խնուսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով առաջադրված մեղադրանքում արդարացնել:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների համար վճռաբեկ դատարանի որոշման պարտադիր բնույթի, ինչպես նաև նույն արարքի համար կրկին դատվելու անթույլատրելիության պատճառաբանությամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս անձին արդարացվածի կարգավիճակ տալու անհրաժեշտության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

1. Մտորադաս դատարանների համար վճռաբեկ դատարանի որոշման պարտադիր բնույթը.

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանը նախևառաջ պետք է պատասխանի հետևյալ հարցին. իրավաչափ է արդյոք քրեական գործի վարույթը կարճելու և Գ.Խնուսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշումն այն դեպքում, երբ դրանում նշված չէ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմք:

16. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական արյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը՝

(...)

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ:

Չրեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ.

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի (...) դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն արվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանի որոշումների օրինականությունը, հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունն ստուգելու բացառիկ իրավասությամբ օժտված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը՝ վճռաբեկ դատարանը: Նշված գործառույթն իրականացնելիս վճռաբեկ դատարանն իրավասու է ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել ստորադաս դատարանի դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ: Այս դեպքում ստորադաս դատարանում գործի նոր քննության սահմանները կանխորոշվում են վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներով և դրանով սահմանված նոր քննության ծավալով, ինչը բխում է արդարադատության արդյունավետության սպասելիքից, մասնավորապես դատական ակտերի բողոքարկման և կրկին բեկանման շրջապատյուց խուսափելու անհրաժեշտությունից: Բացի այդ, նման կարգավորումն անհրաժեշտ նախապայման է վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի արդյունավետ իրականացման համար: Միասնական դատական պրակտիկայի ձևավորումը հնարավոր է միայն ստորադաս դատարանի համար պարտադիր և ուղղորդող նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումների մշակմամբ:

17. Բողոքարկված դատական ակտը բեկանելու, գործը նոր քննության ուղարկելու և նոր քննության ծավալ սահմանելու վերաքննիչ դատարանի իրավասությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հ.Մակարյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) վերաքննիչ դատարանն իրավասու է բեկանել բողոքարկված դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը՝ նպատակ ունենալով՝

ա) լրացնել վերաքննության փուլում գործն ամբողջ ծավալով քննելու իրավագործության բացակայությունը,

բ) կանխել վերաքննիչ դատարանի կողմից որպես առաջին արյանի դատարան հանդես գալու հնարավորությունը,

գ) ապահովել դատական արյանների միջև գործառութային կապերի փրամաքսնական բնույթը,

դ) երաշխավորել ամբաստանյալի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը՝ նոր քննության արդյունքում առաջին արյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի հետ անհամաչայնության դեպքում վերաքննության կարգով բողոք ներկայացնելու տեսանկյունից: Վճռաբեկ դատարանը գրնում է, որ այս դեպքում վերաքննիչ բողոքի առարկայի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ եթե վերաքննիչ դատարանը նախկինում քեկանել է առաջին արյանի դատարանի դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը, ապա նոր քննության արդյունքում կայացված դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության ընթացքում վերաքննիչ դատարանն ստուգում է նաև նախկինում իր կողմից սահմանված նոր քննության ծավալը պահպանված լինելու հանգամանքը:

(...) [Այն դեպքում, երբ առաջին արյանի դատարանը չի կատարել առաջին արյանի դատարանի որոշումը քեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումը, որով վերջինս նոր քննության ծավալ է սահմանել, վերաքննիչ դատարանը պետք է քեկանի առաջին արյանի դատարանի կողմից նոր քննության արդյունքում կայացված դատական ակտը: (...)]» (տե՛ս Հրաչ Մակարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԳ-3/0019/01/11 որոշման 19-րդ և 21-րդ կետերը):

18. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանի կողմից գործը նոր քննության ուղարկելու և նոր քննության ծավալ սահմանելու վերաբերյալ որոշման կատարման պարտադիրության վերոշարադրյալ պահանջները վերաբերելի են նաև վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտին: Այլ խոսքով՝ ընհանուր կանոնի համաձայն ստորադաս դատարանն իրավասու չէ դուրս գալ վճռաբեկ դատարանի որոշմամբ սահմանված գործի նոր քննության ծավալներից և, միևնույն ժամանակ, պարտավոր է կատարել գործի նոր քննության ծավալով սահմանված անհրաժեշտ դատավարական գործողությունները: Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և դրանով սահմանված նոր քննության ծավալը պարտադիր են ստորադաս դատարանի համար, ուղղորդում են գործի նոր քննությունը, սակայն չեն կանխորոշում դրա արդյունքը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ Վճռաբեկ դատարանը բացառիկ դեպքերում, երբ առկա է նախկինում ձևավորված դիրքորոշման վերանայման օբյեկտիվ անհրաժեշտություն, կարող է զարգացնել կամ փոփոխել իր նախկին դիրքորոշումը: Դա պայմանավորված է Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացման անհրաժեշտությամբ և յուրաքանչյուր դեպքում պետք է բխի օրենքի միատեսակ կիրառության ապահովման բովանդակությունից: Մասնավորապես, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովվում է մեկնաբանման տարբեր հնարքների գործադրմամբ օրենքի իմաստի բացահայտման միջոցով, հետևաբար, օրենքի յուրաքանչյուր փոփոխություն,

որը հանգեցնում է օրենքի իմաստի փոփոխության, ենթադրում է նաև օրենքի միատեսակ կիրառության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման փոփոխություն: Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների փոփոխության համար հիմք կարող են հանդիսանալ նաև իրավունքի զարգացումը, մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորումը, Հայաստանի Հանրապետության համար պարտադիր միջազգային-իրավական ակտերի և ՀՀ Սահմանադրության պահանջների ներդրումը իրավակիրառ պրակտիկա, դրանց նորմերի և սկզբունքների անմիջական գործողությունն ապահովելը և այլն (տե՛ս Լուսինե Բաբայանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԳ/0093/11/11 որոշման 13-14-րդ կետերը):

Բացի այդ Վճռաբեկ դատարանի որոշմամբ սահմանված նոր քննության ծավալը ստորադաս դատարանի կողմից չպահպանելու համար որպես բացառիկ հանգամանք կարող է հանդիսանալ գործի նոր քննության ընթացքում առաջացած այնպիսի հանգամանքը, որը չի կարող հանգեցնել Վճռաբեկ դատարանի դիրքորոշման փոփոխությանը, սակայն պայմանավորում է տվյալ գործի ելքը (օրինակ՝ համաներման ակտի ընդունումը, արարքի ապաքրեականացումը, քրեական գործի վարույթը բացառող այլ հանգամանքի ի հայտ գալը և այլն):

Վերոգրյալով պայմանավորված օրենսդիրը նախատեսել է Վճռաբեկ դատարանի որոշման պարտադիրության ընդհանուր կանոնից բացառություն: Դատական ակտ կայացնելիս ստորադաս դատարանը կարող է չկատարել Վճռաբեկ դատարանի որոշման պահանջները, որի դեպքում սակայն ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ պետք է հիմնավորի այնպիսի բացառիկ հանգամանքի առկայությունը, որի պայմաններում Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտած դիրքորոշումը կիրառելի չէ տվյալ գործով կամ նոր քննությունը չի կարող կատարվել սահմանված ծավալով:

Այսպիսով, վճռաբեկ դատարանի՝ որպես բարձրագույն դատական ատյանի կարգավիճակը ենթադրում է, որ

ա) վճռաբեկ դատարանը՝ իրականացնելով դատական վերանայում, ունի դատական սխալներն ուղղելու իրավասություն,

բ) վճռաբեկ դատարանն անմիջականորեն կամ միջնորդավորված եղանակով ուղղահայաց հարաբերվում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների հետ,

գ) վճռաբեկ դատարանի որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումները պարտադիր են ստորադաս դատարանների համար,

դ) վճռաբեկ դատարանի՝ քննության նոր ծավալ սահմանելու վերաբերյալ որոշման կատարումն ստորադաս դատարանների կողմից կրում է պարտադիր բնույթ, բացառությամբ առանձին դեպքերի:

19. Մույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վերաքննիչ դատարանը 2013 թվականի մարտի 19-ին որոշում է կայացրել Գ.Խնուսյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճելու, նրանց նկատմամբ

քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ պատճառաբանելով, որ կարգապահական կալանք կրելուց հետո նույն արարքի համար Գ.Խնուսյանին և մյուսներին դատապարտելով՝ Առաջին ատյանի դատարանը խախտել է կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը (տե՛ս սույն որոշման 2-րդ, 4-րդ և 9-րդ կետերը):

Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի որոշումը բեկանվել է գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության: Նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մարտի 19-ի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված չէ, քանի որ դրանում նշված չէ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմք: Հետևաբար, նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի 2013 թվականի մարտի 19-ի որոշմամբ թույլ տրված խախտումը և հստակեցնի, թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված որ հիմքով է կարճում քրեական գործի վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը (տե՛ս սույն որոշման 5-րդ և 10-րդ կետերը):

Նոր քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի մայիսի 6-ին կրկին որոշում է կայացրել Գ.Խնուսյանի և մյուսների վերաբերյալ քրեական գործի վարույթը կարճելու ու քրեական հետապնդումը դադարեցնելու մասին առանց հստակեցնելու, թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի հատկապես որ կետով է ղեկավարվում: Իր դատական ակտում Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ քրեական գործի վարույթը պետք է կարճվի և քրեական հետապնդումը դադարեցվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով՝ կրկին դատապարտվելու անթույլատրելիության պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 6-րդ և 11-12-րդ կետերը):

20. Սույն որոշման 16-18-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և դրանով սահմանված նոր քննության ծավալն իր համար պարտադիր բնույթ ունեն: Վերաքննիչ դատարանը, չկատարելով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման պահանջը, ղեկավարվելով ընդհանրական բնույթ ունեցող ու քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք չհանդիսացող իրավական նորմով, իր դատական ակտում չի մատնանշել քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմք, ինչպես նաև որևէ ծանրակշիռ

փաստարկի մատնանշմամբ չի հիմնավորել այնպիսի բացառիկ հանգամանքի առկայությունը, որի պայմաններում Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ արտահայտած դիրքորոշումը կիրառելի չէ տվյալ գործով կամ նոր քննությունը չի կարող կատարվել սահմանված ծավալով:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը ոչ միայն խախտել է սույն որոշման 16-րդ կետում մեջբերված իրավանորմերի պահանջները, այլև սահմանափակել է Գ.Խնուսյանի իրավունքները՝ թույլ տալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտում:

21. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործի վարույթը կարճելու և Գ.Խնուսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշումն իրավաչափ չէ, քանի որ դրանում նշված չէ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմք:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անչանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...)*»:

Արձանագրված դատավարական իրավունքի խախտումն ինքնին բավարար է, որպեսզի Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանվի և գործն ուղարկվի նույն դատարան՝ նոր քննության:

Այդուհանդերձ, օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է համարում սույն գործով անդրադառնալ նույն արարքի համար կրկին դատվելու անթույլատրելիության պատճառաբանությամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված համապատասխան հիմքը գործադրելու անհրաժեշտության հարցին:

II. Նույն արարքի համար կրկին դատվելու անթույլատրելիության պատճառաբանությամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս անչին արդարացվածի կարգավիճակ տալու անհրաժեշտությունը.

22. ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոք չպետք է միևնույն պեղծության իրավագործության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պեղծության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան»:*

«Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ *«Ոչ ոք չպետք է կրկին անգամ դատվի կամ պատժվի այն հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել յուրաքանչյուր երկրի օրենքին և քրեական դատավարության իրավունքին համապատասխան»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատապարտվել նույն արարքի համար»:*

Մեջբերված նորմերով ամրագրված է կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (non bis in idem) սկզբունքը: Նշված սկզբունքի բովանդակությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Դ.Բաբայանի* գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«[Կ]րկին անգամ դատվելու անթույլատրելիության (non bis in idem) սկզբունքը հիմնարար տեղ է զբաղեցնում ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված պաշտպանության համակարգում, որի հիմքում ընկած է մեղքը քաված լինելու կանխավարկածը, և այն իրենից ներկայացնում է նույն արարքի համար նույն անչին կրկին քրեական հետապնդման չենթարկելու, չդատապարտելու, չպատժելու երաշխիք: Ընդ որում՝ «նույն արարքի համար» չևակերպումը նշանակում է, որ կրկնակի դատապարտման անթույլատրելիության առարկան պետք է ընկալվի ոչ թե հանցանքի իրավական որակման, այլ փաստական նկարագրության իմաստով»* (տե՛ս Դավիթ Բաբայանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԴ-1/0043/01/11 որոշման 22-րդ կետը):

23. Վերահաստատելով *Դ.Բաբայանի* գործով արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը ենթադրում է անձի և պետության միջև որոշակի արարքի կապակցությամբ ծագած քրեական և քրեադատավարական իրավահարաբերությունների վերջնական դատարան: Ընդ որում, քրեադատավարական տեսանկյունից այն հիմնվում է քրեական հետապնդման սպառնալիքի ավարտված լինելու գաղափարի վրա: Այլ խոսքով՝ կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքը ենթադրում է, որ բացակայում է հանցավոր արարքը, քանի որ քրեական մեղադրանքի բովանդակությունը կազմող արարքի կապակցությամբ անձի և պետության միջև համապատասխան իրավահարաբերությունները ծագել

և վերջնականապես դադարել են, այսինքն՝ իրավական առումով «հանցավոր արարք» գոյություն չունի:

24. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր կայուն նախադեպային պրակտիկայում ձևավորել է հետևյալ սկզբունքները.

(ա) ելնելով օժանդակության սկզբունքից՝ առաջին հերթին ներպետական մարմինների խնդիրն է Կոնվենցիայի ենթադրյալ խախտումների դիմաց հատուցում տրամադրելը: Այս կապակցությամբ այն հարցը, թե արդյոք դիմողը կարող է հավակնել ենթադրյալ խախտման «տուժողի» կարգավիճակի՝ վերաբերում է Կոնվենցիայի հիման վրա վարույթի բոլոր փուլերին,

(բ) դիմողի համար բարենպաստ որոշումը կամ միջոցառումն սկզբունքորեն բավարար չէ նրան «տուժողի» կարգավիճակից զրկելու համար, քանի դեռ ներպետական մարմիններն ակնհայտորեն կամ ըստ էության չեն ընդունել Կոնվենցիայի խախտումը և հետագայում տրամադրել հատուցում,

(գ) դիմողի՝ «տուժողի» կարգավիճակ ունենալու հնարավորությունը կախված է այն հատուցումից, որը ներպետական պաշտպանության միջոցները տրամադրել են նրան,

(դ) օժանդակության սկզբունքը չի նշանակում հրաժարվել ներպետական պաշտպանության միջոցներն օգտագործելու միջոցով ձեռք բերված արդյունքի նկատմամբ վերահսկողությունից, այլապես Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները կզրկվեն իրենց էությունից: Այդ կապակցությամբ պետք է կրկնել, որ Կոնվենցիայի նպատակն է երաշխավորել ոչ թե տեսական կամ պատրանքային, այլ գործնական և արդյունավետ իրավունքներ (տե՛ս *mutatis mutandis* Nikolova and Velichkova v. Bulgaria գործով Մեծ պալատի 2008 թվականի մարտի 20-ի վճիռ, գանգատ թիվ 7888/03, կետ 49):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ մի շարք գործերում արտահայտած իրավական դիրքորոշումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ անձը կորցնում է Կոնվենցիայի իմաստով՝ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի խախտման հետևանքով «տուժողի» կարգավիճակը, երբ պետությունը ճանաչում է կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտման փաստը, դադարեցնում է երկրորդ հետապնդումը և վերացնում խախտման հետևանքները՝ անձին առաջարկելով համարժեք հատուցում (տե՛ս *Zigarella v. Italy* գործով 2002 թվականի հոկտեմբերի 3-ի որոշում, գանգատ թիվ 48154/99, *Falkner v. Austria* գործով 2004 թվականի սեպտեմբերի 30-ի որոշում, գանգատ թիվ 6072/02, *Sergey Zolotukhin v. Russia* գործով 2009 թվականի փետրվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 14939/03, կետեր 113-115):

25. Այսպիսով, հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտումը կհամարվի վերացված այն դեպքում, երբ՝

- ընդունվի կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտում թույլ տալու փաստը,
- դադարեցվի այդ խախտումը,
- վերացվի խախտման հետևանքները՝ անձին տրամադրելով համարժեք հատուցում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված են կրկին անգամ դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտման փաստը ճանաչելուն և այդ խախտումը դադարեցնելուն ուղղված նորմեր, որոնք սահմանում են քննարկվող սկզբունքի խախտման դեպքում քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հիմքեր (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մաս) և դրանց հիման վրա կայացված որոշումների պատճառաբանվածության պահանջ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ, 358-րդ հոդվածներ):

26. Ինչ վերաբերում է կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտումը վերացնելու երրորդ պայմանին՝ անձին համարժեք հատուցում առաջարկելու եղանակով խախտման հետևանքները վերացնելուն՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Արդարացված է այն անձը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական գործով վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված որևէ հիմքով, կամ որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Արդարացվածն իր իրավունքների վերականգնման, այդ թվում՝ քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից իրեն պատճառված նյութական վնասի հատուցման իրավունք ունի»:*

Մեջբերված նորմերի, ինչպես նաև քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համադրված վերլուծությունից երևում է, որ նշված հիմքերը դասակարգվում են երկու խմբի՝

ա) քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու «արդարացնող» («ռեաբիլիտացիոն») հիմքեր, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով:

բ) քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու «ոչ արդարացնող» («ոչ ռեաբիլիտացիոն») հիմքեր, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերով (տե՛ս mutatis mutandis Արմեն Բաղդասարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԳ/0009/11/13 որոշման 15-րդ կետը):

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը կասկածյալի կամ մեղադրյալի վնասների հատուցում պահանջելու իրավունքը պայմանավորում է բացառապես արդարացվածի կարգավիճակ ստանալու փաստով:

27. Կասկածյալի կամ մեղադրյալի վնասների հատուցում պահանջելու իրավունքի ծագման վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանը թիվ ՄԳՈ-871 որոշմամբ, որի համաձայն. «(...) Մինչդարևական վարույթում անչն արդարացվածի կարգավիճակ չեռք է բերում քր. դատ. օր-ի՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով նախատեսված հիմքերով քրեական հետապնդման դադարեցման դեպքում, իսկ դարևական քննության փուլում՝ օրինական ուժի մեջ մտած արդարացման դարավճռի դեպքում (ՀՀ Քրեական դարավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մաս): Մինչ այդ, կասկածյալին կամ մեղադրյալին պարճառված վնասի հարուցման պահանջի իրավունք գոյություն չունի, որովհետև դեռևս նա արդարացված չէ: Անչը կարող է ՀՀ Քրեական դարավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա հարուցման պահանջով դարարան դիմել միայն դրանում նշված հիմքերով արդարացվածի կարգավիճակ չեռք բերելուց հետո: (...)» (տե՛ս քաղաքացիներ Արամ Մարգսյանի և Կարապետ Ռուբինյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի և 67-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի թիվ ՄԳՈ-871 որոշման 9-րդ կետը):

28. Հիմք ընդունելով սույն որոշման 22-27-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արճանագրում է, որ նույն արարքի համար կրկին դատվելու անթույլատրելիության պատճառարանությամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս անճին պետք է տրվի արդարացվածի կարգավիճակ:

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ արճանագրում է, որ կրկնակի դատապարտման անթույլատրելիության (non bis in idem) սկզբունքի հիմքում ընկած է մեղքը քաված լինելու կանխավարկածը, ինչը ենթադրում է, որ քրեական մեղադրանքի բովանդակությունը կազմող արարքի կապակցությամբ անճի և պետության միջև համապատասխան իրավահարաբերությունները վերջնականապես դադարել են, և իրավական առումով «հանցավոր արարք» գոյություն չունի:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արճանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ նույն արարքի համար կարգապահական կամ վարչական պատասխանատվությանը հաջորդած քրեական դատապարտումը կամ քրեական հետապնդումը գնահատվի որպես նույն արարքի համար կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտում, իրավակիրառողները քրեական հետապնդումը դադարեցնելիս պետք է ղեկավարվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

(բացակայում է հանցագործության դեպքը), ինչն իր բնույթով արդարացնող (ռեաբիլիտացիոն) հիմք է: Արդյունքում անձը ձեռք կրերի արդարացվածի կարգավիճակ, հետևաբար կդադարեցվի նաև խախտումը և նրան կտրամադրվի համարժեք հատուցում:

30. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Գևորգ Մերոբի Խնուսյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի մայիսի 6-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարից հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

44.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԼԳ/0178/01/12

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Քրեական գործ թիվ ԼԳ/0178/01/12

Նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան

Դատավորներ՝ Ա.Գանիեյան

Լ.Թադևոսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
ՀԱՍՏՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի հոկտեմբերի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արմեն Մարտիրոսի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի մայիսի 15-ի որոշման դեմ Ա.Աբրահամյանի պաշտպան Ս.Մխիթարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2012 թվականի օգոստոսի 10-ին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 90453712 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2012 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ Արմեն Աբրահամյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով, 361-րդ հոդվածի 3-րդ մասով:

2012 թվականի սեպտեմբերի 26-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ մաս՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 6-ի դատավճռով ճանաչվել և հռչակվել է Ա.Աբրահամյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով: Ա.Աբրահամյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայատարարելու մասին» 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ՝ Ա.Աբրահամյանն ազատվել է նշանակված պատժի կրումից:

3. ՀՀ զինվորական դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2013 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 6-ի դատավճիռը և այդ մասով գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

4. Առաջին ատյանի դատարանը 2014 թվականի մարտի 21-ին որոշում է կայացրել Ա.Աբրահամյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով կարճելու մասին:

5. Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի մայիսի 15-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

6. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 15-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Ա.Աբրահամյանի պաշտպան Ս.Մխիթարյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ պաշտպանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Մեղադրողը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ խնդրելով մերժել պաշտպան Ս.Մխիթարյանի վճռաբեկ բողոքը:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Ամբաստանյալ Ա.Աբրահամյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ 63853 զորամասի 1-ին հրաշգպային գումարդակի կապի դասակի հրամանատար, կոչումով ավագ լեյտենանտ, 18.06.2012 թվականին Վանաշորի կայազորային զինհոսպիտալի կողմից ուղեգրվել է Երևանի կենտրոնական զինհոսպիտալ՝ «Երկկողմանի խառը տրիպի ծանրախոտություն» ախտորոշմամբ՝ հեղադրվելու և բուժումներ սրանալու նպատակով, սակայն Երևանի կենտրոնական

զինհոսպիտալում համապատասխան սարքավորումներ չլինելու պատճառով, ավագ լեյտենանտ Արմեն Աբրահամյանը հետազոտվելու համար ուղարկվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ վերջինս անցել է համապատասխան հետազոտություն և 29.06.2012 թվականին՝ ժամը 16.00-ի սահմաններում գնացել է տուն: Նույն օրը, ավագ լեյտենանտ Արմեն Աբրահամյանը հանվել է Երևանի կենտրոնական զինհոսպիտալի հիվանդների շարքից, և առանց հարգելի պատճառների ծառայության չի ներկայացել, իսկ 29.07.2012 թվականին՝ ժամը 8.00-ի սահմաններում Արմավիրի կայազորի ռազմական ուսրիկանության աշխատակիցների կողմից հայրնաբերվել և քերման է ենթարկվել ՌՈՒ քաժին՝ ծառայությունից բացակայելով երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ:

Դրանից հետո, ավագ լեյտենանտ Արմեն Աբրահամյանը քրեական պատասխանարվությունից ազատվելու նպատակով, «Էրեբունի» բժշկական կենտրոնից վերցրած պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող տեղեկանքում, անչամբ կեղծ գրառումներ է կատարել՝ 29.06.2012 թվական ամիս, ամսաթիվը կեղծել, դարչրել է 27.07.2012 թվական, թե իբր «Էրեբունի» բժշկական կենտրոնում 28.06.2012 թվականից մինչև 27.07.2012 թվականը բուժումներ է սրացել, և 30.07.2012 թվականին նշված փաստաթղթի պատճենն օգտագործել է, այն ներկայացնելով ՀՀ ՊՆ 63853 գործամասի հրամանարարությանը» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 27):

8. Առաջին առյանի դատարանի 2013 թվականի մարտի 6-ի դատավճռի համաձայն՝ «Դատարանի փնտրանությունների փուլում մեղադրողը (...) հայրնեց, որ Արմեն Աբրահամյանը ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության սուբյեկտ չի հանդիսանում և նրա նկատմամբ այդ հոդվածով քրեական հետապնդում չի կարող իրականացվել, քանի որ նա պիտանի չէ զինծառայության խաղաղ ժամանակ, հիվանդ է, և հիվանդությունը սրացել է զինծառայության ընթացքում:

Մեղադրողը հայտարարեց, որ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասով, հրաժարվում է Արմեն Աբրահամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով քրեական հետապնդում իրականացնելուց, քանի որ նրա արարքում բացակայում է հանցակազմը:

(...)

Ղեկավարվելով վերը նշված նորմերով՝ դատարանը եկավ այն եզրահանգման, որ Արմեն Մարտիրոսի Աբրահամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով պետք է կայացնել արդարացնող դատավճիռ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 252):

9. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 3-ի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Լոռու մարզի

ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը, Արմեն Մարտիրոսի Աբրահամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքում անմեղ ճանաչելով, թույլ է տվել դատական սխալ՝ նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Արդյունքում ընդհանուր իրավասության դատարանը թույլ է տվել խախտումներ, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ և 398-րդ հոդվածների համաձայն, բավարար են Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 06.03.2013թ. դատավճիռն Արմեն Աբրահամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով արդարացնելու մասով բեկանելու և քրեական գործը նույն դատարան՝ նոր կազմով նոր քննության ուղարկելու համար՝ պարզելու դատախազի վերաքննիչ բողոքում առաջ քաշված հարցերը, մասնավորապես այն, թե կոնկրետ ինչ հիմնադրություններով է տառապել Արմեն Աբրահամյանը, երբ են այդ հիմնադրություններն առաջացել, ինչ բժշկական փաստաթղթերով է դա հաստատվել, իրավախախտումը կատարելու պահին նա ազատված եղել է հետագա ծառայությունից, թե՛ ոչ և ինչ փաստաթղթերի հիման վրա և երբ է գորացրվել: Նշված հարցերը պարզելուց հետո, ըստ չեռք բերված փյվյալների, նոր կարելի է լուծել գործի օրինական և վերջնական ընթացքը» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 75-76):

10. Առաջին աստիճանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշման համաձայն՝ «(...) Արմեն Աբրահամյանի վերաբերյալ քրեական գործը դատական քննության չի կարող նշանակվել, գործի վարույթը պետք է կարճվի, քանի որ առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք, այն է քրեական գործի վարույթի ներկայիս փուլում առկա չէ մեղադրանք, որի սահմաններում կարող է դատարանում կատարվել գործի քննություն Արմեն Աբրահամյանի նկատմամբ, քանի որ սույն գործով մեղադրողը դատական վիճարանությունների փուլում հրաժարվել է մեղադրանքից:

Չնայած ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որոշել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի մարտի 6-ին կայացրած դատավճիռը՝ Արմեն Մարտիրոսի Աբրահամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով արդարացնելու մասով բեկանել և այդ մասով գործն ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան (...), սակայն (...) կան ծանրակշիռ փաստարկներ գործը դատաքննության չնշանակելու և գործի վարույթը կարճելու համար, այն է՝ առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելը և քրեական պատասխանատվության ենթակա անձի բացակայությունը» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 130-131):

11. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 15-ի որոշման համաձայն՝ «(...) [Առաջին աստիճանի] դատարանի (...) հետևություններն

անհիմն են և չեն կարող սույն քրեական գործի շրջանակներում բավարար հիմք հանդիսանալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի, 292-րդ և 294-րդ հոդվածների կիրառմամբ՝ ամբաստանյալ Արմեն Աբրահամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար:

(...) Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ դատարանում նախորդող դատաքննության ընթացքում մեղադրող դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելու հանգամանքը, որի արդյունքում կայացված դատական ակտը Վերաքննիչ քրեական դատարանի կողմից բեկանվել է, ինքնին չի կարող հիմք հանդիսանալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի, 292-րդ և 294-րդ հոդվածների կիրառմամբ ամբաստանյալ Արմեն Աբրահամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու համար, նկատի ունենալով այն, որ Վերաքննիչ դատարանը բեկանել է քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ դատարանի դատական ակտն ու գործն ուղարկել ստորադաս դատարան նոր քննության՝ բավարարելով վերադաս դատախազի վերաքննիչ բողոքը, որով վերջինս խնդրել է բեկանել դատարանի դատական ակտը, *inter alia* նկատի ունենալով նաև այն, որ գործով մեղադրողի՝ մեղադրանքից հրաժարումը իրավաչափ չէ, իսկ դրա արդյունքում դատարանի կողմից կայացված քրեական գործով վարույթը կարճելու վերաբերյալ որոշումն՝ անհիմն:

Բավարարելով դատախազի բողոքն ու բեկանելով դատարանի՝ քրեական գործով վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը, Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ, որն օրինական ուժ է ստացել, *ex officio* սահմանել է նոր քննության ծավալ, որը սակայն, դատարանի կողմից անտեսվել է և սահմանված ծավալով ու շրջանակներում դատաքննություն չի իրականացվել՝ պարճառաբանելով մեղադրանքի, ինչպես նաև քրեական պատասխանատվության ենթական անձի բացակայությունը: (...) [Գ]ատարանն անտեսել է այն հանգամանքը, որ նախորդ դատաքննությունների ընթացքում Արմեն Աբրահամյանն արդեն իսկ չեռք է բերել ամբաստանյալի կարգավիճակ, իսկ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու և դրա արդյունքում կայացված ու մեղադրանքի բացակայության հանգամանքը հաստատող դատական ակտը վերադաս դատարանի կողմից բեկանվել է:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը գրնում է, որ դատարանն անտեսելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 03.12.2012 թվականի որոշման պահանջները, թույլ է տվել քրեադատավարական օրենքի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ և 398-րդ հոդվածների պահանջների խախտում, (...):

Նոր դատաքննությամբ անհրաժեշտ է պարզանք քրեադատավարական ընթացակարգի պահպանմամբ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետա-

գուրման, վերլուծության և գնահատման ենթարկել սույն որոշման պատճառաբանական մասում շարադրված հիմնավորումներն ու պատճառաբանությունները, կատարել ՀՀ վերաքննիչ դատարանի 03.12.2013 թվականի որոշման պահանջները, որից հետո նոր միայն հանգել վերջնական հիմնավոր հերկության՝ ամբաստանյալ Արմեն Աբրահամյանին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցում» (տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթ 33-35):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

12. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, մասնավորապես, խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 20-րդ կետի, 21-րդ հոդվածի 3-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 35-րդ հոդվածի 4-րդ մասի, 292-րդ, 294-րդ հոդվածների և 309-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոք բերած անձը վկայակոչել է հիշատակված իրավանորմերը և եզրահանգել, որ Առաջին ատյանի դատարանն Ա.Աբրահամյանի վերաբերյալ քրեական գործը դատական քննության չէր կարող նշանակել և այն պետք է կարճեր, քանի որ գործի նախորդ քննության ընթացքում՝ դատական վիճաբանության փուլում, մեղադրողը ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով հրաժարվել է մեղադրանքից:

Ըստ բողոքաբերի՝ Առաջին ատյանի դատարանը, քրեական գործի վարույթը կարճելով, կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշում, քանի որ առկա չի եղել մեղադրանք, որի սահմաններում պետք է կատարվեր գործի քննություն: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում չի հիմնավորել և չի պատճառաբանել, թե նյութական կամ դատավարական իրավունքի ինչպիսի հիմնարար խախտումներ է թույլ տվել Առաջին ատյանի դատարանը, և մեղադրանք չլինելու պայմաններում քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով՝ ինչպես է խաթարել արդարադատության բուն էությունը:

13. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 15-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ մեղադրողի հայտարարությունից հետո դատական քննությունը

շարունակելու անթույլատրելիության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

15. Սույն գործով վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավասու էր արդյոք Առաջին ատյանի դատարանն Ա.Արրահամյանի վերաբերյալ քրեական գործը նշանակել դատական քննության և իրականացնել վերաքննիչ դատարանի որոշմամբ սահմանված նոր քննության ծավալն այն դեպքում, երբ նախորդ դատական քննության ընթացքում մեղադրողը հրաժարվել է մեղադրանքից:

16. Բողոքարկված դատական ակտը բեկանելու, գործը նոր քննության ուղարկելու և նոր քննության ծավալ սահմանելու վերաքննիչ դատարանի իրավասությանը վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հ.Մակարյանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) վերաքննիչ դատարանն իրավասու է բեկանել բողոքարկված դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության սահմանելով նոր քննության ծավալը՝ նպատակ ունենալով՝

ա) լրացնել վերաքննության փուլում գործն ամբողջ ծավալով քննելու իրավագործության բացակայությունը,

բ) կանխել վերաքննիչ դատարանի կողմից որպես առաջին ատյանի դատարան հանդես գալու հնարավորությունը,

գ) ապահովել դատական արյանների միջև գործառութային կապերի փրամաքսնական բնույթը,

դ) երաշխավորել ամբաստանյալի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը՝ նոր քննության արդյունքում առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի հետ անհամաձայնության դեպքում վերաքննության կարգով բողոք ներկայացնելու տեսանկյունից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս դեպքում վերաքննիչ բողոքի առարկայի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ եթե վերաքննիչ դատարանը նախկինում բեկանել է առաջին ատյանի դատարանի դատական ակտը և գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը, ապա նոր քննության արդյունքում կայացված դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության ընթացքում վերաքննիչ դատարանն ստուգում է նաև նախկինում իր կողմից սահմանված նոր քննության ծավալը պահպանված լինելու հանգամանքը:

(...) [Այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանը չի կատարել առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության ուղարկելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումը, որով վերջինս նոր քննության ծավալ է սահմանել, վերաքննիչ դատարանը պետք է բեկանի առաջին ատյանի դատարանի կողմից նոր քննության արդյունքում կայացված դատական ակտը: (...)

[Վ]երաքննիչ դատարանի՝ որպես առաջին արյանի դատարանի որոշումների օրինականությունը, հիմնավորվածությունը և պարճառաքանվածությունն սրուզելու իրավասության օժտված դատարանի որոշումները պարտադիր են ստորադաս դատարանի համար: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ առաջին արյանի դատարանի համար վերաքննիչ դատարանի որոշման պարտադիր բնույթը քիտում է ՀՀ Սահմանադրությանը և քրեադատավարական օրենսդրությանը նախատեսված՝ դատական ակտերի վերանայման ինստիտուտի էությունից: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ առաջին արյանի դատարանի համար վերաքննիչ դատարանի դատական ակտի պարտադիր լինելը չի կարող ազդել առաջին արյանի դատարանի անկախության վրա, քանի որ կատարելով վերադաս դատարանի՝ օրենքի պահանջների կատարման վերաբերյալ ցուցումը՝ դատական ակտի բեկանված մասով գործի նոր քննություն իրականացնելիս առաջին արյանի դատարանը ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությանը և օրենքներով» (տե՛ս Հրաչ Մակարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՄԳ-3/0019/01/11 որոշման 19-րդ, 21-րդ և 24-րդ կետերը):

Վերահաստատելով Հ. Մակարյանի վերաբերյալ որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ առաջին ատյանի դատարանի համար վերաքննիչ դատարանի դատական ակտի պարտադիր լինելը չի կարող ազդել առաջին ատյանի դատարանի անկախության վրա, քանի որ դատական ակտի բեկանված մասով գործի նոր քննություն իրականացնելիս դատարանը պարտավոր է ղեկավարվել ՀՀ Սահմանադրությանը և օրենքներով: Վերաքննիչ դատարանի որոշմամբ սահմանված նոր քննության ծավալը ստորադաս դատարանի կողմից չպահպանելու համար որպես բացառիկ հանգամանք կարող է հանդիսանալ գործի քննության ընթացքում առաջացած այնպիսի հանգամանքը, որը կանխորոշում է տվյալ գործի ելքը (օրինակ՝ համաներման ակտի ընդունումը, արարքի ապաքրեականացումը, քրեական գործի վարույթը բացառող այլ հանգամանքի ի հայտ գալը և այլն):

Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտ կայացնելիս ստորադաս դատարանը կարող է չկատարել վերաքննիչ դատարանի որոշման պահանջները, որի դեպքում սակայն ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ պետք է հիմնավորի այնպիսի բացառիկ հանգամանքի առկայությունը, որի պայմաններում վերադաս դատարանի որոշմամբ արտահայտած դիրքորոշումը կիրառելի չէ տվյալ գործով կամ նոր քննությունը չի կարող կատարվել սահմանված ծավալով:

17. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի (...) իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: (...)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա սրեղծված անկասի ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա:

2. Քրեական հետապնդումը, պաշտպանությունը և գործի լուծումը փարանշարված են. դրանք իրականացնում են փարբեր մարմիններ և անչիւնք:

3. Դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է միայն իրավունքի շահերը: (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը մեղադրանքի այդ մասով կայացնում է արդարացնող դատավճիռ»:

18. Մեղադրանքից հրաժարվելու դատախազի լիազորության բնութագրին, ինչպես նաև դրա իրավական հետևանքներին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Կ.Սյրեփանյանի և Մ.Հովհաննիսյանի գործով որոշման մեջ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) համապատասխան հիմքերի առկայության դեպքում (...) դատախազի՝ որպես պետության անունից քրեական հետապնդում իրականացնող անչի դիրքորոշումը պարտադիր է դատավարության մյուս սուբյեկտների, այդ թվում՝ դատարանի համար: Մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ դատախազի կամահայտությունը հավասարազոր է մեղադրանքի (մեղավորության մասին վեճի) բացակայության, որպիսի պայմաններում քրեական դատավարությունը չի կարող շարունակվել, և դատարանը պարտավոր է ավարտել գործի վարույթն արդարացման հիմքով:

(...) Վճռաբեկ դատարանն արշանագրում է, որ ինչպես մեղադրանքի, այնպես էլ դրա պաշտպանության ծավալների վերաբերյալ մեղադրողի՝ որպես պետության անունից քրեական հետապնդում իրականացնող անչի դիրքորոշումը պարտադիր չի կարող շարունակվել, և դատարանը պարտավոր է ավարտել գործի վարույթն արդարացման հիմքով՝

անկախ նրանից, թե համաձայն է մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ դատախազի հայտարարության հիմքում ընկած դատողությունների հետ, կամ դրա դեմ առարկում են դատավարության այլ մասնակիցները, թե ոչ» (տե՛ս Կարեն Ստեփանյանի և Մկրտիչ Հովհաննիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՏԳ-2/0030/01/13 որոշման 16-17-րդ կետերը):

Վերահաստատելով Կ.Սյրեփանյանի և Մ.Հովհաննիսյանի գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը պարտավորեցնում է քրեական գործով մեղադրանքը պաշտպանող դատախազին հրաժարվել մեղադրանքից, եթե դատական քննության ընթացքում հետազոտված փաստական տվյալների զնահատման արդյունքում պարզում է, որ բացակայում է հանցադեպը, հանցակազմը, կամ վնաս պատճառած արարքն օրենքով համարվում է իրավաչափ կամ կատարված հանցագործությանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չէ, և սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները: Նշված հիմքերից ցանկացածով մեղադրանքից հրաժարվելու մասին դատախազի հայտարարությունը քրեական գործի վարույթը բացառող անվերապահ հանգամանք է և պետք է հանգեցնի քրեական հետապնդումն արդարացման հիմքով դադարեցնելու մասին որոշման կամ արդարացման դատավճռի կայացմանը՝ կախված այն հանգամանքից, թե դատական քննության հատկապես որ փուլում է մեղադրողը հրաժարվել մեղադրանքից: Այլ խոսքով՝ մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ դատախազի կամահայտնությունը քրեական վարույթի ընթացքը կանխորոշող հանգամանք է, որն առանց բացառությունների պետք է հանգեցնի արդարացման հիմքով գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացմանը՝ անկախ նրանից, հիմնավորված է այդ հայտարարությունը, կամ դրա հետ համաձայն են դատավարության սուբյեկտները, այդ թվում՝ դատարանը, թե՛ ոչ:

19. Սույն որոշման նախորդ կետում շարադրված Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատական քննությունը, լինելով քրեական դատավարության փուլային համակարգի վճռորոշ փուլ, միտված է մեղադրանքի հիմքում դրված ապացույցների հետազոտման արդյունքում պատասխան տալ ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցին: Այլ խոսքով՝ դատական քննության առարկան իրավական վեճն է պետության (տուժողի) և ամբաստանյալի միջև, որը պետք է լուծվի քրեական դատավարության մի շարք սկզբունքների, այդ թվում՝ մրցակցության սկզբունքի պահպանմամբ: Մրցակցային դատավարությունը նախևառաջ ենթադրում է, որ մեղադրանքի և պաշտպանության գործառույթները տարանջատված և սահմանազատված են գործի լուծման գործառույթից: Քրեական գործը պետք է լուծվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից, որը չի կարող հանդես գալ մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը (մրցակցության սկզբունքի

վերաբերյալ տե՛ս Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 որոշման 13-րդ կետը):

ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով պետության քրեական քաղաքականությունն իրականացնող և դրա համար պատասխանատու պաշտոնատար անձը դատախազն է, որին վերապահված է դատարանում քրեական մեղադրանքը պաշտպանելու, փոփոխելու, ինչպես նաև՝ դրանից հրաժարվելու բացառիկ իրավասություն: Առաջին ատյանի դատարանում՝ դատական քննության ցանկացած փուլում (մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը), դատախազը կարող է հրաժարվել մեղադրանքից, ինչն ըստ էության հավասարազոր է մեղադրանքի (մեղավորության մասին վեճի) բացակայության: Այդ պայմաններում դատական քննությունը շարունակելու, այդ թվում՝ մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ դատախազի հայտարարության իրավաչափությունը պարզելու նպատակով դատավարական գործողություններ իրականացնելու դեպքում, դատարանը կստանձնի քրեական հետապնդումն իրականացնող մարմնի գործառույթ՝ դուրս գալով մրցակցային դատավարության սկզբունքի շրջանակներից:

20. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործ քննող դատարանի խնդիրն անձին (անձանց) ներկայացված մեղադրանքի օրինականության և հիմնավորվածության ստուգումն է: Գործի քննությունը դատարանում իրականացվում է մեղադրանքի հիման վրա և դրա հիմքում դրված ապացույցների շուրջ, հետևաբար, մեղադրանքի բացակայության պայմաններում գործի քննություն չի կարող իրականացվել, իսկ քրեական դատավարությունը չի կարող շարունակվել: Ուստի, մեղադրանքի բացակայության պայմաններում դատական քննությունը շարունակելով՝ դատարանը կիրականացնի արդարադատության գործառույթի հետ անհամատեղելի գործողություններ՝ կասկածի տակ դնելով իր անկողմնակալությունն ու օբյեկտիվությունը, ինչն էլ վերջին հաշվով կհանգեցնի մրցակցության սկզբունքի և արդար դատական քննության հիմնարար իրավունքի բովանդակագրկմանը:

Այս առումով Վճռաբեկ դատարանն անթույլատրելի է համարում նաև այն իրավիճակը, երբ մեղադրողի կողմից դատական քննության ընթացքում մեղադրանքից հրաժարվելուց հետո վերադաս դատախազը վերաքննիչ բողոք է բերում առաջին ատյանի դատարանի արդարացման դատական ակտի դեմ՝ փաստարկելով, որ մեղադրանքից հրաժարվելը եղել է ոչ իրավաչափ, դատարանը չի պարզել մեղադրանքից հրաժարվելու հիմքում ընկած փաստական տվյալների հավաստիությունը, ինչի արդյունքում կայացրել է անհիմն որոշում: Նման հիմնավորմամբ վերաքննիչ բողոքը բավարարելու, դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու դեպքում վերաքննիչ դատարանը ոչ միայն կիմաստագրկի ամբաստանյալի պաշտպանության իրավունքը (պաշտպանության իրավունքի վերաբերյալ տե՛ս Արթուր Սերո-

բյանի գործով 2007 մարտի 30-ի թիվ ՎԲ-46/07 որոշումը), այլև առաջին ատյանի դատարանի համար կասեցմանի իր իրավասության սահմաններից դուրս գործողություններ կատարելու պարտավորություն: Գատարանը որևէ դեպքում իրավասու չէ գնահատել մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ դատախազի որոշման իրավաչափությունը կամ ազդել այդ որոշման վրա: Նման իրավիճակը ոչ այլ ինչ է, քան մինչև գործի ըստ էության լուծումը տվյալ վարույթի հանգուցային հարցի վերաբերյալ դատարանի սուբյեկտիվ դիրքորոշման արտահայտում, ինչը հիմք կտա ամբաստանյալին պնդելու, որ իր նկատմամբ որոշակի նախատրամադրվածություն է եղել:

21. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը 2013 թվականի մարտի 6-ի դատավճռով ճանաչել և հռչակել է Ա.Աբրահամյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով՝ հանցակազմի բացակայության հիմքով: Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտի հիմքում դրել է այն հանգամանքը, որ դատական վիճաբանությունների փուլում մեղադրողը հրաժարվել է մեղադրանքից՝ պատճառաբանելով, թե Ա.Աբրահամյանը զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ չի հանդիսանում, քանի որ պիտանի չէ զինծառայության խաղաղ ժամանակ, հիվանդ է և հիվանդությունը ստացել է զինծառայության ընթացքում (տե՛ս սույն որոշման 2-րդ և 8-րդ կետերը):

ՀՀ զինվորական դատախազի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2013 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի մարտի 6-ի դատավճիռը և այդ մասով գործն ուղարկել նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ: Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է, որ նոր քննության ընթացքում դատարանը պարտավոր է պարզել դատախազի վերաքննիչ բողոքում առաջ քաշված հարցերը, մասնավորապես այն, թե կոնկրետ ինչ հիվանդություններով է տառապել Ա.Աբրահամյանը, երբ են այդ հիվանդություններն առաջացել, ինչ բժշկական փաստաթղթերով է դա հաստատվել, իրավախախտումը կատարելու պահին նա ազատված եղել է հետագա ծառայությունից, թե՛ ոչ, ինչ փաստաթղթերի հիման վրա և երբ է գորացրվել (տե՛ս սույն որոշման 3-րդ և 9-րդ կետերը):

Առաջին ատյանի դատարանը 2014 թվականի մարտի 21-ին որոշում է կայացրել Ա.Աբրահամյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով կարճելու մասին՝ պատճառաբանելով, որ քրեական գործը դատական քննության չի կարող նշանակվել, քանի որ առկա չէ մեղադրանք, որի սահմաններում կարող է դատարանում կատարվել գործի քննություն (տե՛ս սույն որոշման 4-րդ և 10-րդ կետերը):

Մեղադրողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի մայիսի 15-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը

բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ սույն գործով կայացված արդարացման դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքով վերադաս դատախազը խնդրել է բեկանել այն, քանի որ մեղադրողը ոչ իրավաչափորեն է հրաժարվել մեղադրանքից: Բավարարելով դատախազի բողոքը և բեկանելով դատավճիռը՝ վերաքննիչ դատարանն իր որոշմամբ սահմանել է նոր քննության ծավալ, որը սակայն, դատարանի կողմից անտեսվել է և սահմանված ծավալով ու շրջանակներում դատաքննություն չի իրականացվել (տե՛ս սույն որոշման 5-րդ և 11-րդ կետերը):

22. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով 17-20-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, անտեսելով այն, որ մեղադրանքից հրաժարվելու վերաբերյալ դատախազի որոշումը դատական քննությունը բացառող հանգամանք է, 2013 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ ստորադաս դատարանի համար սահմանել է այնպիսի դատավարական գործողություններ կատարելու պարտավորություն, որոնք դուրս են դատարանի իրավասության սահմաններից և անհամատեղելի են արդարադատության գործառույթի հետ: Հետևաբար, նոր քննության ծավալ սահմանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշման պահանջները կատարելու դեպքում Առաջին ատյանի դատարանը թույլ կտար օրինականության սկզբունքի խախտում, ինչպես նաև կասկածի տակ կղմեր իր օբյեկտիվությունն ու անաչառությունը, ինչն ի վերջո կհանգեցներ արդար դատական քննության հիմնարար իրավունքի բովանդակազրկման:

23. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր Ա.Աբրահամյանի վերաբերյալ քրեական գործը նշանակել դատական քննության և իրականացնել Վերաքննիչ դատարանի որոշմամբ սահմանված նոր քննության ծավալն այն դեպքում, երբ նախորդ դատական քննության ընթացքում մեղադրողը հրաժարվել է մեղադրանքից:

24. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...):»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործի վարույթը կարճելու մասին Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշումը

բեկանելով և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելով, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի մայիսի 15-ի որոշումը բեկանելու համար:

25. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը վերահաստատում է իր նախադեպային իրավունքի շրջանակներում արտահայտված այն իրավական դիրքորոշումը, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվող որոշման մեջ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքի հստակ ամրագրման պահանջն անհրաժեշտ նախապայման է դատական ակտի որոշակիության, արդարադատության մատչելիության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներին համարժեք՝ անձանց սահմանադրական իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար (տե՛ս Գևորգ Խնուսյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԳ/0030/01/12 որոշման 17-րդ կետը):

Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրողը պատճառաբանված հրաժարվել է Ա.Աբրահամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքից՝ հանցակազմի բացակայության հիմքով, ինչը հստակ արձանագրել է նաև Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Այս պայմաններում, նկատի ունենալով նաև, որ Ա.Աբրահամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով արդարացնող դատավճիռը Վերաքննիչ դատարանի որոշմամբ բեկանվել էր, քրեական գործի վարույթը ենթակա էր կարճման, իսկ Ա.Աբրահամյանի նկատմամբ քրեական հետապնդումը՝ դադարեցման՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Մինչդեռ, Առաջին ատյանի դատարանն իր 2014 թվականի մարտի 21-ի որոշման եզրափակիչ մասը շարադրել է հետևյալ կերպ. «*Արմեն Մարտիրոսի Աբրահամյանի վերաբերյալ քրեական գործի վարույթը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով, կարճել*»՝ առանց քրեական հետապնդումը դադարեցնելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմք մատնանշելու:

Այդուհանդերձ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Արդարացման դատավճիռը, գործը կարճելու մասին կամ մեղադրյալի օգտին կայացրած այլ որոշումը չի կարող բեկանվել քրեադատավարական օրենքի էական խախտման շարժառիթով, եթե արդարացվածի անմեղությունը կասկած չի հարուցում*»:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն որոշման մեջ շարադրված հիմնավորումների պայմաններում Ա.Աբրահամյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով կասկած չի հարուցում,

հետևաբար արձանագրված քրեադատավարական օրենքի խախտումն արդարացման դատական ակտը բեկանելու հիմք հանդիսանալ չի կարող:

Ուստի հիմք ընդունելով արդարադատության արդյունավետության շահը, այդ թվում՝ քրեական գործերի քննությունն ողջամիտ ժամկետում ավարտելու անհրաժեշտությունը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում օրինական ուժ տալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշմանը՝ հիմք ընունելով սույն որոշման պատճառաբանությունները:

26. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Արմեն Մարտիրոսի Աբրահամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի մայիսի 15-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 21-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

45.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԵԱԶԳ/0056/06/14

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Գործ թիվ ԵԱԶԳ/0056/06/14

Նախագահող դատավոր՝ Գ.Մելիք-Սարգսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան Ե.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2014 թվականի հոկտեմբերի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Դավիթ Կարենի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հուլիսի 15-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Բաղայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի մարտի 21-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում հարուցվել է թիվ 14124814 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի հատկանիշներով:

2014 թվականի ապրիլի 18-ին վարույթն իրականացնող մարմինը սույն գործով կասկածյալ Դավիթ Վարդանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի 2014 թվականի ապրիլի 24-ի որոշմամբ Դ.Վարդանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ վերացվել է Դ.Վարդանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը, և միջնորդություն է հարուցվել Երևանի Արարկիր և Զանաքեռ-Չեթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ մեղադրյալ Դ.Վարդանյանի նկատմամբ որպես խափանման միջոց 2 ամիս ժամկետով կալանավորում կիրառելու մասին:

2. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ Դ.Վարդանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով:

3. 2014 թվականի հունիսի 13-ին նախաքննության մարմնի կողմից միջնորդություն է հարուցվել Առաջին ատյանի դատարան՝ մեղադրյալ Դ.Վարդանյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամսով երկարացնելու մասին:

Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 23-ի որոշմամբ Դ.Վարդանյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է երկու ամսով: Նույն որոշմամբ մերժվել է մեղադրյալին կալանքից գրավով ազատելը բույլատրելի ճանաչելու մասին պաշտպանի միջնորդությունը:

4. Պաշտպանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հուլիսի 15-ին որոշում է կայացրել բողոքը մասնակիորեն բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 23-ի որոշումը փոփոխելու մասին: Մեղադրյալ Դ.Վարդանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է այլընտրանքային խափանման միջոց գրավով, և գրավի չափ է սահմանվել 1.500.000 ՀՀ դրամը:

5. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հուլիսի 15-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Բադալյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ է ընդունվել:

2014 թվականի հոկտեմբերի 27-ին մեղադրյալ Դ.Վարդանյանի պաշտպան Ե.Սարգսյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ փաստարկելով, որ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է ու հիմնավորված, իսկ դրա դեմ բերված վճռաբեկ բողոքը, ինչպես նաև Առաջին ատյանի դատարանի որոշումն անհիմն են: Ուստի, խնդրել է մերժել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Գ.Վարդանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «*ևս 2014թ. մարտի 15-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, գործով չպարզված երկու անձանց հետ, խմբով, Երևան քաղաքի Արաբկիր 41 փողոցում ծեծի են ենթարկել Անանիա Նորիկի Գրիգորյանին և դիրավորությանը վերջինիս առողջությանը պատճառել ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող, այն է՝ քթի, մեջքի, ճակատի միջին մասի քերծվածքներ, գլխի շախ և շախ քունքային շրջանների սայջարդ վերքերի, գանգուղեղային բաց բուք վնասվածքի՝ շախից քունքոսկրի կոտրվածքի, գլխուղեղի շախ քունքային շրջանի թիթեղանման արյունազեղման ձևով մարմնական վնասվածքներ» (տե՛ս նյութեր, 1-ին հատոր, թերթ 6-8):*

7. Մեղադրյալ Գ.Վարդանյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 25-ի որոշման համաձայն՝ «(...) Դատարանը, նկատի ունենալով, որ առկա է հիմնավոր կասկած իրեն մեղաազրվող արարքին մեղադրյալի առնչության վերաբերյալ, որը հաստատվում է փուժող Ա.Գրիգորյանի, վկաներ Ն.Նազարյանի, Ա.Խաչատրյանի ցուցմունքներով, փուժողին ճանաչման ներկայացնելու արձանագրությանը, ինչպես նաև հաշվի առնելով մեղադրյալ Գ.Վարդանյանին մեղաազրվող արարքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, այն, որ մեղադրյալ Գ.Վարդանյանն իր նկատմամբ որպես խափանման միջոց ստորագրություն չենոսանալու մասին ընդրելուց հետո այցելել է փուժողի բնակարան և խնդրել փոխել ցուցմունքը, դրանով արդեն իսկ ցանկացել խոչընդոտել մինչդատարանական վարույթում գործի քննությանը, գտնում է, որ միջնորդությունը հիմնավոր է և ենթակա քավարարման» (տե՛ս նյութեր, 1-ին հատոր, թերթ 67-68):

8. Մեղադրյալ Գ.Վարդանյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման ժամկետը երկարացնելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) Դատարանը, (...), նկատի ունենալով, որ քրեական գործով կան հիմնավոր կասկածներ, որ մեղադրյալն առնչվում է իրեն մեղաազրվող արարքին, որ Դավիթ Վարդանյանը, ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել մինչդատարանական վարույթում գործի քննությանը, քրեական գործով դեռևս պետք է կատարվեն մի շարք քննչական և դատավարական գործողություններ, որ չեն վերացել Դավիթ Վարդանյանին կալանքի տակ պահելու հիմքերը, իսկ Դավիթ Վարդանյանի կալանքի տակ պահելու ժամկետը լրանում է 2014թ. հունիսի 25-ին, ուստի գտնում է, որ Արաբկիրի քննչական բաժնի ավագ քննիչ, ոստիկանության կապիտան Ա.Բաղդասարյանի միջնորդությունը՝ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ, ենթակա է քավարարման:

Դատարանը, անդրադառնալով պաշտպանի՝ մեղադրյալի նկարմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքը գրավով փոխարինելու միջնորդությանը, գրնում է, որ այն ենթակա է մերժման վերը նշված պարճառաբանություններով (...):» (տե՛ս նյութեր, 2-րդ հատոր, թերթ 15-17):

9. Վերաքննիչ դատարանի դատական ակտի համաճայն՝ «(...) Մեղադրյալի նկարմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկերը երկարացնելու և այն գրավով փոխարինելն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ նյութերից երևում է, որ [Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության] դատարանը, քննության առնելով քննիչի միջնորդությունը, լսելով կողմերին, գրել է, որ Արաբկիրի քննչական բաժնի ավագ քննիչ, ոստիկանության կապիտան Ա. Բաղդասարյանի միջնորդությունը՝ կալանքի տակ պահելու ժամկերը երկարացնելու վերաբերյալ, ենթակա է բավարարման, իսկ կալանքը գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունն առանց պարճառաբանության մերժել է:

(...) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից չի պարճառաբանվել գրավի կիրառման անթույլատրելիությունը, այլ միայն նշվել է, որ ենթակա է մերժման վերը նշված պարճառաբանություններով:

Մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածը սահմանում է գրավի կիրառման հիմքերը:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը հաշվի է առնում մեղադրյալին վերագրվող արարքի բնույթն ու վրանգավորության աստիճանը, Դավիթ Վարդանյանի կողմից վարույթն իրականացնող մարմնից բաքնվելու ու քննությանը խոչընդոտելու, քրեական օրենսգրքով նախատեսված նոր արարք կատարելու առումով բավարար հիմնավորումներ առկա չլինելը, հիմնավորված է համարում, որ մեղադրյալի անչը պարզված է, նախկինում դատված, արարավորված չի եղել, ունի մշտական բնակության վայր և աշխատանք, ունի բարչրագույն կրթություն, բնութագրվում է դրականորեն, մեծ հարգանք և հեղինակություն է վայելում իր բնակության վայրում, հանդիսացել է Երևան քաղաքի ավագանու անդամ: Ընդհանուր իրավասության դատարանն իր որոշմամբ չի արչանագրել այնպիսի տվյալներ, որոնցով կհաստատվեր կալանքը գրավով փոխարինելն անթույլատրելի ճանաչելու անհրաժեշտությունը, ինչը հիմք է ընդհանուր իրավասության դատարանի դատական ակտը բեկանելու և մեղադրյալի նկարմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու համար, որը, որպես երաշխիք, տվյալ դեպքում կարող է ապահովել մեղադրյալի պարչաճ վարքագիծը (...):» (տե՛ս նյութեր, 2-րդ հատոր, թերթ 57-64):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ խախտվել են ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 7-րդ, 135-րդ, 136-րդ, 137-րդ, 143-րդ և 288-րդ հոդվածների պահանջները:

Ի հիմնավորումն իր վերոշարադրյալ փաստարկի՝ բողոքի հեղինակը մատնանշել է մի շարք հանգամանքներ, որոնք Վերաքննիչ դատարանի կողմից գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելիս հաշվի չեն առնվել: Մասնավորապես այն, որ նախաքննության սկզբնական փուլում, երբ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը, Գ.Վարդանյանը, գտնվելով ազատության մեջ, այցելել է տուժող Ա.Գրիգորյանի բնակարան և առաջարկել է փոխել իր դեմ տրված ցուցմունքները՝ նրա բուժման ծախսերը փոխհատուցելու պայմանով: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի կողմից մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը գրավով փոխարինելուց հետո՝ 2014 թվականի հուլիսի 24-ին, տուժող Ա.Գրիգորյանը լրացուցիչ ցուցմունք է տվել առ այն, որ ինքը մեղադրյալին ճանաչել է և նրա դեմ մեղադրող ցուցմունքներ է տվել ոստիկանության աշխատակիցների ուղղորդմամբ:

Նշված հանգամանքները բողոքաբերին հիմք են տվել եզրահանգելու, որ մեղադրյալ Գ.Վարդանյանը, մնալով ազատության մեջ, քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով կշարունակի խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը և գործով ճշմարտության բացահայտմանը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի՝ *Ասյան Ավետիսյանի* գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ բողոքի հեղինակը գտել է, որ անհիմն են Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ Առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ չի արձանագրել այնպիսի տվյալներ, որոնցով կհաստատվեր կալանքը գրավով փոխարինելն անթույլատրելի ճանաչելու անհրաժեշտությունը:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պնդումներին, թե մեղադրյալի նախկինում դատված չլինելը, մշտական բնակության վայր, աշխատանք, բարձրագույն կրթություն ունենալը, դրական բնութագրվելը և նախկինում Երևանի ավագանու անդամ լինելը հանդիսանում են Գ.Վարդանյանի նկատմամբ գրավ կիրառելու թույլատրելիության մասին փաստող հանգամանքներ, բողոքաբերը նշել է, որ դրանք բնութագրում են մեղադրյալի անձը և գործով ճշմարտությունը բացահայտելու ընթացքին միջամտելու վտանգի մասին վկայող տվյալների առկայության պայմաններում բավարար հիմք չեն կարող հանդիսանալ Գ.Վարդանյանի նկատմամբ գրավ կիրառելու և քրեական գործով հետագա վարույթի ընթացքում նրա կողմից պատշաճ վարքագիծ դրսևորելու մասին հետևության գալու համար:

11. Հիմք ընդունելով վերոշարադրյալ փաստարկները՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հուլիսի 15-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 23-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցագործության համար մեղադրվող անձի նկատմամբ գրավի թույլատրելիության հարցը լուծելու չափորոշիչների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավոր՞ են արդյոք Դ.Վարդանյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը (...) խափանման միջոց կարող է կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով չեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝*

1) *թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.*

2) *խոչընդոտել մինչդատարանական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.*

3) *կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.*

4) *խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.*

5) *խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի է առնվում վերագրվող արարքի բնույթը և վրանգավորության աստիճանը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչել անթույլատրելի առանձին դեպքերում, մասնավորապես, եթե հայրնի չէ մեղադրյալի անչք, նա չունի մշտական բնակության վայր կամ փորձել է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից»:*

Կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի՝ գրավի կիրառելիության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ա.Ավերիսյանի

գործով որոշմամբ՝ իրավական դիրքորոշում հայտնելով առ այն, որ «(...) անչին կալանքի տակ պահելու անհրաժեշտության հիմնավորումը կարող է դրվել գրավի կիրառումը մերժելու պատճառաբանության հիմքում՝ պայմանով, որ այդ պատճառաբանությունը հիմնված լինի գործով առկա փաստական փոխանցման վրա (...):

(...) Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի վերաբերյալ արված իրավական մեկնաբանություններում չի արգելվում չնշված առանձին դեպքերում անչին երաշխիքով ազատ արձակելը ճանաչել անթույլատրելի. մասնավորապես, երբ առկա է անչի կողմից թաքնվելու կամ գործով ճշմարտությունը քացահայտելու ընթացքին միջամտելու վտանգ, կամ երբ դա անհրաժեշտ է հանցագործությունը կանխելու կամ հասարակական կարգի պահպանությունն իրականացնելու համար:

(...) Եվրոպական կոնվենցիային չի հակասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասի այն դրույթը, որ դատարանը, համապատասխան շարժառիթները շարադրելով, իրավունք ունի մեղադրյալին կալանքից գրավով ազատելը առանձին դեպքերում ճանաչել անթույլատրելի: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն օգտագործել է «մասնավորապես» բառը, որն արտահայտում է կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումների հարույժ ամրագրման և ոչ թե կալանքից գրավով ազատելու իրավական հիմքերի սպառնիչ քվարկման նշանակություն: Մեղադրյալի անչը հայտնի չլինելը, մշտական բնակության վայր չունենալը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձը կալանքից գրավով ազատելու կոնկրետ դրսևորումներ են, որոնք քվարկված են ոչ սպառնիչ:

Ոստիկանական զորքում է, որ գրավի կիրառման անթույլատրելիության հարցը պետք է քննարկվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համարեքստում, որտեղ նշված են խափանման միջոց կիրառելու այլ հիմքեր, այդ թվում նաև միջնադարական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու հիմքը» (տե՛ս Ասլան Հովհաննեսի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ-0022/06/08 որոշման 34-36-րդ կետերը):

Կալանքը գրավով փոխարինելու հարցը լուծելիս անձին մեղաագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը պատշաճ գնահատման ենթարկելու անհրաժեշտության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ս.Մարգարյանի գործով որոշման մեջ և իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) գրավի թույլատրելիության հարցի լուծման ժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված՝ մեղադրյալին վերագրվող արարքի հանրային վտանգավորության աստիճանն ու բնույթը գնահատելիս դատարանը պետք է գործով ներկայացված փոխանցման հիման վրա պարզի մեղադրյալին վերագրվող հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, իսկ հանցակցության

դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը: Այլ խոսքով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքների կատարման հավանականությունը գնահատելիս և, հետևաբար, դրա հիման վրա մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելիս դատարանը, ի թիվս այլոց, պետք է պատշաճ գնահատման ենթարկի մեղսագրվող արարքի կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և արարքի հանրային վրանգավորության աստիճանն ու բնույթը բնութագրող այլ հանգամանքները:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերոնշյալ հանգամանքներն էական նշանակություն ունեն մեղադրյալի անչի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար: Ուստի, առանց դրանք գործի նյութերից բխող մյուս տվյալների հետ համադրված վերլուծության և գնահատման ենթարկելու հնարավոր չէ հիմնավորված ենթադրություն անել մեղադրյալի հետագա վարքագծի վերաբերյալ, հետևաբար հնարավոր չէ նաև օրինական, հիմնավորված և պարճառաբանված որոշում կայացնել անչի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ (...):» (տե՛ս Սամվել Գազիկի Մարգարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԷԳ/0138/06/13 որոշման 14-րդ կետը):

15. Վերահաստատելով սույն որոշման նախորդ կետում, և համապատասխանաբար *Ա.Ավետիսյանի*, *Ս.Մարգարյանի* գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելը չի ենթադրում դրա իրականացումը բացառապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասում շարադրված դեպքերում: Դատարանը կարող է մերժել այլընտրանքային խափանման միջոցի կիրառումը նաև այլ դեպքերում՝ ելնելով մեղադրյալի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված գործողությունների կատարումը կանխելու անհրաժեշտությունից: Ընդ որում, մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության հիմնավորումները կարող են դրվել նաև գրավի կիրառումը մերժելու պատճառաբանության հիմքում՝ պայմանով, որ դրանք հիմնված լինեն գործով առկա փաստական տվյալների վրա:

Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը էական նշանակություն ունեն գրավի թույլատրելիության հարցը լուծելիս: Մեղսագրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ

անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին (տե՛ս Վահագն Հակոբի Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ-1/0062/06/12 որոշման 13-րդ կետը): Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր կայուն նախադեպային իրավունքի շրջանակներում բազմիցս շեշտել է, որ անձին վերագրվող արարքի ծանրությունը, գործի նյութերից բխող մյուս փաստական տվյալների հետ միասին, կարևոր նշանակություն ունի մեղադրյալի հետագա վարքագծի վերաբերյալ հիմնավորված ենթադրություն անելու համար (ի թիվս այլոց տես Mamedova v. Russia, 2006 թվականի հունիսի 1-ի վճիռը, գանգատ թիվ 7064/05, կետ 74, Panchenko v. Russia 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 45100/98, կետ 102, Iljkov v. Bulgaria, 2001 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 33977/96, կետ 81):

16. Չարգացնելով գրավի թույլատրելիության վերաբերյալ իր նախադեպային իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել նաև, որ մեղադրյալին կալանքից գրավով ազատելու հարցը քննարկելիս դատարանները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն հանգամանքին, թե մեղադրյալի նկատմամբ ինչ հիմքով է կալանավորումը կիրառվել որպես խափանման միջոց, և արդյոք տվյալ դեպքում գրավը՝ որպես կալանավորման այլընտրանք, կարող է գործունե երաշխիք հանդիսանալ տվյալ հիմքի չեզոքացման համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ Եվրոպական դատարանը մշակել է հանցագործության համար մեղադրվող անձին մինչև դատավճիռը կալանքի տակ պահելու համար ընդունելի չորս հիմնական հիմքեր. մեղադրյալի՝ դատաքննությանը չներկայանալու վտանգը (տե՛ս Stogmuller v. Austria, 1969 թվականի նոյեմբերի 10, § 15), վտանգը, որ մեղադրյալն ազատ արձակվելու դեպքում կխոչընդոտի արդարադատության իրականացմանը (տե՛ս Wemhoff v. Germany, 1968 թվականի հունիսի 27, § 14) կամ կկատարի նոր հանցանքներ (տե՛ս Matznetter v Austria, 1969 թվականի նոյեմբերի 10, § 9) կամ կկատարի հասարակական անկարգություններ (տե՛ս Letellier v. France, 1991 թվականի հունիսի 26, § 51): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում ըստ էության նախատեսված են նշված հիմքերը, որոնցից յուրաքանչյուրի առկայությունը կալանավորման պայմանների հետ միասին ինքնին հիմք է անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար:

Միևնույն ժամանակ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավանորմի ուսումնասիրությունից հետևում է, որ անձի կալանավորման հարցը լուծելիս իրավասու դատարանները լիազորված են քննարկել դատաքննությանը մեղադրյալի ներկայանալը երաշխավորող այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա այդպիսի

միջոց է գրավը: Նշված նորմը, մասնավորապես, ամրագրում է, որ «Գրավը (...) հանցագործության համար մեղադրվողին կալանքից ազատելու համար դրամի, արժեթղթերի, այլ արժեքների ձևով դատարանի ղեկոգիտ մեկ կամ մի քանի անձանց կատարած ներդրումն է՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով»:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գրավը քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու վտանգը չեզոքացնելու երաշխիք է, և համապատասխան հիմքերի առկայության դեպքում իրավասու դատարանի կողմից կարող է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով:

17. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ.Վարդանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, գործով չչարզված երկու անձանց հետ, խմբով, փողոցում ծեծի են ենթարկել Ա.Գրիգորյանին և դիտավորությամբ վերջինիս առողջությանը պատճառել ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող, այն է՝ քթի, մեջքի, ճակատի միջին մասի քերծվածքներ, գլխի ձախ և ձախ քունքային շրջանների սալջարդ վերքերի, զանգուղեղային բաց բուրբ վնասվածքի՝ ձախից քունքոսկրի կոտրվածքի, գլխուղեղի ձախ քունքային շրջանի թիթեղանման արյունազեղման ձևով մարմնական վնասվածքներ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2014 թվականի ապրիլի 25-ին որոշում է կայացրել Գ.Վարդանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին: Դատարանն իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ առկա է հիմնավոր կասկած մեղսագրվող արարքին մեղադրյալի առնչության վերաբերյալ: Բացի այդ, դատարանը նշել է, որ հաշվի է առնում մեղադրյալին վերագրվող արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, ինչպես նաև այն, որ Գ.Վարդանյանի նկատմամբ չհեռանալու մասին ստորագրությունը որպես խափանման միջոց ընտրելուց հետո նա այցելել է տուժողի բնակարան և խնդրել փոխել իր ցուցմունքը՝ դրանով իսկ փորձելով խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

2014 թվականի հունիսի 23-ին Առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել Գ.Վարդանյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Դատարանն իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ առկա են հիմնավոր կասկածներ, որ մեղադրյալն առնչվում է իրեն մեղսագրվող արարքին և ազատության մեջ հայտնվելու դեպքում կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը, քրեական գործով դեռևս պետք է կատարվեն մի

շարք քննչական և դատավարական գործողություններ, իսկ Գ.Վարդանյանին կալանքի տակ պահելու հիմքերը դեռ չեն վերացել: Նույն հիմնավորմամբ Առաջին ատյանի դատարանը մերժել է մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ փոփոխել է Առաջին ատյանի դատարանի որոշումը և մեղադրյալ Գ.Վարդանյանի նկատմամբ թույլատրելի է ճանաչել գրավի կիրառումը՝ գալով այն եզրակացության, որ դատարանն իր որոշմամբ չի արձանագրել այնպիսի տվյալներ, որոնցով կհաստատվեր կալանքը գրավով փոխարինելն անթույլատրելի ճանաչելու անհրաժեշտությունը: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ հաշվի է առնում Գ.Վարդանյանին մեղազրկող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու ու քննությանը խոչընդոտելու, քրեական օրենսգրքով նախատեսված նոր արարք կատարելու առումով բավարար հիմնավորումների բացակայությունը, հիմնավորված է համարում, որ մեղադրյալի անձը պարզված է, նախկինում դատված, արատավորված չի եղել, ունի մշտական բնակության վայր և աշխատանք, ունի բարձրագույն կրթություն, բնութագրվում է դրականորեն, մեծ հարգանք և հեղինակություն է վայելում իր բնակության վայրում, հանդիսացել է Երևան քաղաքի ավագանու անդամ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

18. Սույն որոշման 14-16-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Գ.Վարդանյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելիս, ինչպես նաև նրա նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելիս Առաջին ատյանի դատարանը մատնանշել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքը՝ մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հանգամանքը, որի հավանականությունը հիմնավորվում է գործի նյութերում առկա փաստական տվյալներով: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի դատողություններն առ այն, որ Առաջին ատյանի դատարանի կողմից գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու անհրաժեշտության վերաբերյալ տվյալներ չեն արձանագրվել, հիմնագուրկ են, ինչպես նաև դուրս են *Ա.Ավետիսյանի* գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների տրամաբանությունից:

Բացի այդ, մեղադրյալի նկատմամբ գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելիս Վերաքննիչ դատարանը չի պահպանել *Ս.Մարգարյանի* գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի պահանջները՝ անտեսել է Գ.Վարդանյանին վերազրկող արարքի բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը: Մասնավորապես, պատշաճ գնահատման չի ենթարկվել՝

ա) մեղսագրվող արարքի կատարման եղանակը, մասնավորապես այն, որ Դ.Վարդանյանը գործով չպարզված երկու անձանց հետ փողոցում ենթադրաբար ծեծի է ենթարկել Ա.Գրիգորյանին,

բ) հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, այն, որ Դ.Վարդանյանի և նրա հանցակիցների ենթադրյալ գործողությունների արդյունքում տուժողի առողջությանը կյանքի համար վտանգավոր ծանր վնաս է պատճառվել, այն է՝ քթի, մեջքի, ճակատի միջին մասի քերծվածքներ, գլխի ձախ և ձախ քունքային շրջանների սալջարդ վերքեր, գանգուղեղային բաց բութ վնասվածք՝ ձախից քունքոսկրի կոտրվածք, գլխուղեղի ձախ քունքային շրջանի քիթեղանման արյունազեղման ձևով վնասվածք:

Վերը նշված հանգամանքները պատշաճ գնահատման չենթարկելու հետևանքով Վերաքննիչ դատարանը գրկված է եղել Դ.Վարդանյանի անձի մասին ճիշտ պատկերացում կազմելու և նրա հետագա վարքագծի վերաբերյալ հիմնավորված ենթադրություն անելու հնարավորությունից:

19. Անդրադառնալով վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու, քրեական օրենսգրքով նախատեսված նոր արարք կատարելու առումով բավարար հիմնավորումների բացակայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դատողություններից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք հիմնագուրկ են: Դ.Վարդանյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու և գրավի միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման պատճառաբանական մասից հետևում է, որ դատարանը մեղադրյալին անազատության մեջ պահելու անհրաժեշտության մասին իր եզրահանգումները չի հիմնավորել վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ քրեական օրենսգրքով նախատեսված նոր արարք կատարելու հավանականության մասին դատողություններով: Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Դ.Վարդանյանի կալանքի ժամկետը երկարացնելու մասին իր որոշումը հիմնավորել է միայն այն հանգամանքով, որ ազատության մեջ հայտնվելու դեպքում մեղադրյալը կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ տուժողի վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով: Ընդ որում, տվյալ դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վերոգրյալ հանգամանքն իրական է և բխում է գործի փաստական տվյալներից:

Այս պայմաններում, անտեսելով այն հանգամանքը, որ գրավը կարող է կիրառվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ մեղադրյալի գտնվելն ապահովելու նպատակով և մեղադրյալի կողմից դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով վարույթի պատշաճ ընթացքին խոչընդոտելու վտանգի չեզոքացման գործուն երաշխիք չի կարող հանդիսանալ՝ Վերաքննիչ դատարանը փոփոխել է Առաջին ատյանի դատարանի որոշումը և Դ.Վարդանյանի նկատմամբ գրավի կիրառումը ճանաչել թույլատրելի:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի մատնանշած այն հանգամանքներին, որ Դ.Վարդանյանը նախկինում դատված, արատավորված

չի եղել, ունի մշտական բնակության վայր, աշխատանք, բարձրագույն կրթություն, բնութագրվում է դրականորեն, ապա դրանք համապատասխան հիմքերի առկայության պայմաններում չեն կարող բավարար լինել մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու համար: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանի համար անհասկանալի է նաև Վերաքննիչ դատարանի կողմից արձանագրված այն փաստը, որ Դ.Վարդանյանը «մեծ հարգանք և հեղինակություն է վայելում իր բնակության վայրում»: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներկայացված նյութերում բացակայում է որևէ փաստական տվյալ, որը հիմք կտար նման դատողություն անել:

20. Ամփոփելով սույն որոշման 18-19-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դ.Վարդանյանին կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը բեկանելու համար: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Դ.Վարդանյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու և գրավ կիրառելու միջնորդությունը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված: Ուստի արդարադատության արդյունավետության շահերից ելնելով՝ անհրաժեշտ է օրինական ուժ տալ սույն գործով Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 23-ի որոշմանը:

Այս պայմաններում մեղադրյալ Դ.Վարդանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց գրավը ենթակա է վերացման, իսկ որպես գրավ մուծված 1.500.000 ՀՀ դրամը ենթակա է վերադարձման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Մեղադրյալ Գավիթ Կարենի Վարդանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հուլիսի 15-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 23-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Գալստավորներ՝

ստորագրություններ

46.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԵԿԳ/0005/11/14

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Գործ թիվ ԵԿԳ/0005/11/14

Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ. ԱՍՏՏՐՅԱՆԻ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս. ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դիմող	
դիմողի ներկայացուցիչ	Գ. ԿԼԵԿՉՅԱՆԻ Մ. ՎԱՐԳԱՆՅԱՆԻ

2014 թվականի հոկտեմբերի 31-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հունիսի 9-ի որոշման դեմ դիմող Գևորգ Արամի Կլեկչյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Չ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի հոկտեմբերի 9-ին Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղում թիվ 126 էլեկտրասյան դիմաց միմյանց են բախվել Ջոհրաբ Ղազարյանի վարած «Ռենջ Ռովեր» մակնիշի 06 ՍՕ 600 պետհամարանիշի, Գևորգ Կլեկչյանի վարած «Լեքսուս» մակնիշի 34 ՄՏ 995 պետհամարանիշի, Ռուբիկ Թադևոսյանի վարած «Գազ-31015» մակնիշի 02 ՄՍ 602 պետհամարանիշի, Կարեն Գալստյանի վարած «Մերսեդես-Բենց» մակնիշի 19 ՕԼ 872

պետհամարանիշի ավտոմեքենաները, որի հետևանքով «Մերսեդես-Բենց» մակնիշի ավտոմեքենայի ուղևորներ Ս.Չոբանյանը, Մ.Գալստյանը, «Գագ-31015» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Ռ.Թադևոսյանը, ուղևոր Ա.Համբարձումյանը և «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենայի վարորդ Գ.Կլեկչյանը ստացել են մարմնական վնասվածքներ:

Գեաքի առթիվ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնում նախապատրաստվել են նյութեր:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի քննիչ Կ.Գրիգորյանի 2013 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է, և Գ.Կլեկչյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ Մ.Գալստյանին, Ա.Համբարձումյանին պատճառված մարմնական վնասվածքների մասով՝ հանցակազմի բացակայության, իսկ Ռ.Թադևոսյանին, Ս.Չոբանյանին պատճառված մարմնական վնասվածքների մասով՝ դիմողների բողոքի բացակայության պատճառաբանությամբ: Ավտովարորդներ Չ.Ղազարյանի, Ռ.Թադևոսյանի և Կ.Գալստյանի վերաբերյալ նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է, և նրանց նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. 2013 թվականի նոյեմբերի 27-ին Գ.Կլեկչյանը բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով վերացնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Կ.Գրիգորյանի 2013 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը:

Երևան քաղաքի դատախազի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ դիմող Գ.Կլեկչյանի բողոքը մերժվել է:

3. 2014 թվականի հունվարի 10-ին դիմող Գ.Կլեկչյանը բողոք է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Կ.Գրիգորյանի 2013 թվականի նոյեմբերի 21-ի որոշումը և բողոքը մերժելու մասին դատախազի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ դիմող Գ.Կլեկչյանի բողոքը մերժվել է:

4. Նույն անձի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հունիսի 9-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 18-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

5. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունիսի 9-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դիմող Գ.Կլեկչյանը:

Վճարելի դատարանը 2014 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ վճարելի բողոքը վարույթ է ընդունել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի քննիչ Կ.Գրիգորյանի 2013 թվականի նոյեմբերի 21-ի՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման համաձայն՝ «(...) Մ.Գալստյանին, Ա.Համբարձումյանին պատճառված մարմնական վնասվածքների մասով՝ Գ.Կրեկչյանի արարքում բացակայում է ՀՀ քր. օր-ի 242-րդ հոդ. 1-ին մասի հանցակազմի հատկանիշները, իսկ Ռ.Թադևոսյանին և Ս.Չոբանյանին պատճառված մարմնական վնասվածքների մասով՝ նրա արարքում առկա է ՀՀ քր. օր-ի 242-րդ հոդ. հանցակազմի հատկանիշներ, սակայն նկատվում է ունենալով, որ համաձայն ՀՀ քր. դատ. օր-ի 183 հոդ. 1-ին մասի, վերը նշված հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան դիմողների բողոքի հիման վրա, որը նյութերով բացակայում է, ուստի (...) նյութերով քրեական գործի հարուցումը մերժել և ավարտարոք Գևորգ Արամի Կրեկչյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել՝ (...) հանցակազմի (...) [և] դիմողների բողոքի բացակայության պատճառաբանությամբ» (տե՛ս նյութեր, թերթ 10-15):

7. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 18-ի որոշման համաձայն՝ «(...) Նյութերի նախապարասպրաման ընթացքում նշանակված դատաբժշկական փորձաքննությունների արդյունքում պարզվել է, որ ավտովթարի հետևանքով Ռուբիկ Խոսրովի Թադևոսյանին և Սուսաննա Սլավիկի Չոբանյանին պատճառվել է առողջության փակական քայքայումով միջին ծանրության մարմնական վնասվածքներ, իսկ Մերի Կարենի Գալստյանին, Գևորգ Արամի Կրեկչյանին և Ասրղիկ Անուշավանի Համբարձումյանին՝ քրեահրավական հետևանք չառաջացնող մարմնական վնասվածքներ: Ռուբիկ Խոսրովի Թադևոսյանը և Սուսաննա Սլավիկի Չոբանյանը գրավոր տեղեկացրել են քննիչին այն մասին, որ բողոք չեն ներկայացնում: Փաստորեն բացակայել է փուժողների բողոքը, որի արդյունքում քրեական գործ հարուցվել չէր կարող: Բողոքաբերի կարծիքը՝ վիճարկվող որոշումներն անհիմն կայացված լինելու, վարույթն իրականացնող մարմնի կողմից թերի, միակողմանի, կանխակալ և կողմնակալ քննություն իրականացնելու, նյութերի նախապարասպրաման ընթացքում քննիչի կողմից բացահայտ շահագրգռվածություն դրսևորելու մասին, առանց հիմնավոր պատճառաբանությունների՝ քավարար չեն քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայությունը փաստելու համար: Բողոքաբերի պատճառա-

բանությունն այն մասին, որ քրեական գործի հարուցումն անհրաժեշտ է՝ վթարի ակնապարեսներին ու մասնակիցներին ակնհայտ սուր ցուցմունք տալու համար սահմանված պարասխանարվության մասին նախագծու շարժումները նպատակով, նույնպես անհիմն է և քրեական գործի հարուցման հիմք չի հանդիսանում: Այսպիսով, որևէ հիմնավոր փաստարկ կամ ապացույց դատարանին չներկայացվեց՝ (...) Գևորգ Կլեկյանի իրավունքների կամ ազատությունների խախտումների առկայության, ինչպես նաև վերոհիշյալ որոշումներն անհիմն կերպով կայացված լինելու վերաբերյալ, ուստի բողոքն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման» (տե՛ս նյութեր, քերթ 47-50):

8. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման համաձայն՝ «(...) Առաջին արյանի դատարանը, քննության առնելով Գ. Կլեկյանի բողոքը, պարզաձև իրավական ընթացակարգի շրջանակներում կայացրել է ճիշտ որոշում, որում առկա են անհրաժեշտ հիմնավորումներ այն մասին, որ քննիչը չեռնարկել է օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, արդյունքում քննիչի և դատախազի կողմից կայացվել են օրինական և պարճառաբանված որոշումներ: (...) Առաջին արյանի դատարանը կայացրել է օրինական և պարճառաբանված որոշում, որի արդյունքում Գ. Կլեկյանի իրավունքները և ազատությունները չեն խախտվել, ուստի, նման պայմաններում Առաջին արյանի դատարանի որոշումը բեկանելու հիմքերը բացակայում են» (տե՛ս նյութեր, քերթ 99-115):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձը փաստարկել է, որ ստորադաս դատարանները ճիշտ չեն գնահատել գործով ձեռք բերված փաստական տվյալները, ինչի արդյունքում խախտվել են իր իրավունքներն ու օրինական շահերը:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ սույն գործով չեն ձեռնարկվել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար: Մասնավորապես, քրեական գործ հարուցված չլինելու պարագայում որևէ կարգավիճակ չունենալու պատճառով ինքը զրկված է եղել իր շահերը պաշտպանելու, ապացույցներ ներկայացնելու համար միջնորդություններ կատարելու, փորձաքննությանը մասնակցելու, փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը և փորձաքննության եզրակացությանը ծանոթանալու, հարցեր առաջադրելու, դրանց դեմ առարկելու և բողոքարկելու հնարավորությունից: Միևնույն ժամանակ, քրեական գործ հարուցված չլինելու հետևանքով բացատրություն տված անձինք չեն նախագծու շարժումներ սուտ ցուցմունք տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին, որի պատճառով տվել են իրականությանը չհամապատասխանող ցուցմունքներ:

Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ ստորադաս դատարանների կողմից խախտվել են ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներով, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածներով սահմանված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը: Ստորադաս դատարանների դատական ակտերի տրամաբանությունից ստացվում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին նախաքննության մարմնի որոշումը շահագրգիռ անձի կողմից կարող է բողոքարկվել միայն հանրային մեղադրանքի գործերով: Մինչդեռ այն դեպքում, երբ առկա է մասնավոր հետապնդման գործ, և միևնույն ժամանակ բացակայում է տուժողի բողոքը, ապա քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը բողոքարկելն անիմաստ է: Հետևաբար, բողոքաբերը եզրահանգել է, որ եթե ստորադաս դատարանների դատական ակտերն օրինական են, ապա գործող իրավական համակարգը չի ապահովում իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ և պատշաճ միջոցը:

10. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը փաստարկել է, որ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչ Կ.Գրիգորյանի 2013 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ խախտվել են իր իրավունքներն ու ազատությունները, քանի որ դրա արդյունքում ինքը ստիպված է լինելու հատուցել ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակիցներին պատճառված գույքային վնասը: Ուստի, խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունիսի 9-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ կամ նյութերն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. օրինական և հիմնավորված՞ են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ դիմողի բողոքի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելով՝ վարույթն իրականացնող մարմինը Գ.Կլեկչյանի իրավունքների և ազատությունների խախտում թույլ չի տվել:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կատարված հանցագործության ծանրությունից և բնույթից ելնելով՝ քրեական դատավարությունում հետապնդումն իրականացվում է հանրային և մասնավոր կարգով:

2. Մասնավոր հետապնդման գործեր են համարվում սույն օրենսգրքի 183 հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ *«Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի*

վարույթը ենթակա է կարճման, եթե սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (...) 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: (...)»:

Մեջբերված իրավադրույթները Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել Վ.Եղիազարյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում ձևավորելով այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված քրեական գործի հարուցումը մերժելու, ինչպես նաև հարուցված քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքն ինքնին ենթադրում է, որ մեղսագրվող արարքի կատարումն անվիճելի փաստ է: Այս հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու համար ընդամենը պետք է, որ վարույթն իրականացնող մարմինը քննությանը չենք բերված (փաստական) փյույվների հիման վրա հաստատված համարի, որ անչք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք է կատարել, և միևնույն ժամանակ բացակայում է դիմողի (տուժողի) բողոքը: Նման իրավակարգավորումը թույլ չի տալիս անչին դատական պաշտպանության իրավունքի ուժով վիճարկել իրեն քրեական պատասխանատվության կանչելու փաստը, իր դեմ առաջադրված կասկածների, մեղադրանքի օրինականությունն ու հիմնավորվածությունը, չի նախատեսում անչի իրավունքների վերականգնման կարգ այն պայմաններում, երբ նրա մեղքը դեռ ապացուցված չէ:

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով քրեական գործի հարուցումը մերժելիս կամ քրեական հետապնդումը դադարեցնելիս ենթադրյալ հանցանք կատարած անչի կարծիքը հաշվի առնելու, այդ թվում՝ նրա համաձայնությունը սրանալու օրենսդրական պահանջի բացակայությունը հանդիսանում է անմեղության կանխավարկածի սկզբունքի և արդար դատաքննության իրավունքի խախտում: Վճռաբեկ դատարանը գրնում է, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրության նման կարգավորման պայմաններում չի ապահովվում անչի իրավունքը դատական կարգով վիճարկելու այն դատավարական փաստաթղթի օրինականությունն ու հիմնավորվածությունը, որում, փաստորեն, քննարկվում է ենթադրյալ հանցանքի մեջ իր մեղավորության հարցը:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու և գործի վարույթը կարճելու հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը պարտավոր

է հաշվի առնել ենթադրյալ հանցանք կատարած անձի դիրքորոշումը: Այն դեպքում, երբ մասնավոր հետապնդման գործերով անձն առարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով վարույթի դադարեցման դեմ, անկախ դիմողի (տուժողի) բողոքի բացակայության հանգամանքից, գործի վարույթը պետք է շարունակվի սովորական կարգով՝ հնարավորություն տալով ենթադրյալ հանցանք կատարած անձին արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի առջև սպացուցել իր անմեղությունը:

(...) [Դ]իմողի (տուժողի) բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատարանական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում ստուգման ենթարկելիս դատարանի խնդիրն է ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում պարզել, թե վարույթն իրականացնող մարմինն արդյոք ստուգման է ենթարկել և հաշվի է առել այն հանգամանքները, որոնք կարող էին ազդել քրեական գործի հարուցման հարցը լուծելու վրա կամ հանգեցնել անձի իրավունքների և ազատությունների խախտմանը: Դիմողի (տուժողի) բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելիս դատարանը պետք է պարզի նաև, թե հաշվի առնվել է արդյոք ենթադրյալ հանցանք կատարած անձի դիրքորոշումը: (...)» (տե՛ս Վահագն Լյովայի Եղիազարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՇԴ/0012/11/13 որոշման 17-18-րդ, 20-րդ կետերը):

13. Վերահաստատելով Վ.Եղիազարյանի գործով որոշմամբ ձևավորած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված նորմը կիրառելի է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) վարույթն իրականացնող մարմինը հաստատված է համարել, որ անձը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք է կատարել,

բ) բացակայում է դիմողի (տուժողի) բողոքը,

գ) ենթադրյալ հանցանք կատարած անձը չի առարկում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու կամ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ:

Համապատասխանաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատարանական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության շրջանակներում ստուգման ենթարկելիս դատարանը ներկայացված բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում պետք է պարզի վերոշարադրյալ պայմանների առկայության մասին վարույթն իրականացնող մարմնի հետևությունների հիմնավորվա-

ծուրթյունը (տե՛ս *mutatis mutandis* Արման Մակարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԳ/0182/11/13 որոշման 13-րդ կետը):

14. Սույն գործի ուսումնասիրությունից երևում է, որ նյութերի նախապատրաստության փուլում վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել Գ.Կլեկյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Նշված որոշումը պատճառաբանելիս վարույթն իրականացնող մարմինը նշել է, որ Գ.Կլեկյանի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման հետևանքով Ռ.Թադևոսյանի և Ս.Չոբանյանի առողջությանը պատճառվել է միջին ծանության վնաս, այսինքն՝ նրա արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, սակայն քանի որ Ռ.Թադևոսյանն ու Ս.Չոբանյանը Գ.Կլեկյանի դեմ բողոք չունեն, անհրաժեշտ է վերջինիս վերաբերյալ նյութերով քրեական գործի հարուցումը մերժել՝ դիմողների բողոքի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 1-ին և 6-րդ կետերը):

Դիմող Գ.Կլեկյանի բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ որևէ հիմնավոր փաստարկ կամ ապացույց չի ներկայացվել Գ.Կլեկյանի իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության վերաբերյալ: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը 2014 թվականի փետրվարի 18-ին որոշում է կայացրել դիմող Գ.Կլեկյանի բողոքը մերժելու մասին (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին, գտնելով, որ Առաջին ատյանի դատարանը կայացրել է օրինական և պատճառաբանված որոշում, որի արդյունքում Գ.Կլեկյանի իրավունքները և ազատությունները խախտված չեն, 2014 թվականի հունիսի 9-ին որոշում է կայացրել բերված վերաքննիչ բողոքը մերժելու և Առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին (տե՛ս սույն որոշման 4-րդ և 8-րդ կետերը):

15. Սույն որոշման 12-13-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել այն, որ՝

ա) վարույթն իրականացնող մարմնի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման մեջ առկա չէ որևէ հիշատակում ենթադրյալ հանցանք կատարած անձի՝ Գ.Կլեկյանի դիրքորոշման վերաբերյալ:

բ) Գ.Կլեկյանն իր հետագա դատավարական գործողություններով, մասնավորապես նշված որոշումը օրենքով սահմանված կարգով վերադաս

դատախազին, իսկ այնուհետև նաև դատարան բողոքարկելով, արտահայտել է իր անհամաձայնությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով իր նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժելու դեմ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դիմողի բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելիս ստորադաս դատարանները քննարկման առարկա չեն դարձրել այն հարցը, թե վարույթն իրականացնող մարմինը որոշում կայացնելիս հաշվի առել է արդյոք ենթադրյալ հանցանք կատարած անձի դիրքորոշումը:

Հետևաբար, ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ դիմողի բողոքի բացակայության պատճառաբանությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելով վարույթն իրականացնող մարմինը Գ.Կլեկչյանի իրավունքների և ազատությունների խախտում թույլ չի տվել, օրինական և հիմնավորված չեն:

16. Սույն որոշման 12-15-րդ կետերի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 18-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելով՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում:

Ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա՝ սույն գործով Վերաքննիչ դատարանի դատական ակտը պետք է բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

17. Նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտը ենթակա է բեկանման՝ Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքաբերի այն փաստարկներին, որ սույն գործով չեն ձեռնարկվել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, և ձեռք բերված տվյալներն իրենց համակցության մեջ ճիշտ չեն գնահատվել (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

18. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Գևորգ Արամի Կլեկչյանի վերաքննիչ բողոքը մերժելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հունիսի 9-ի որոշումը բեկանել և նյութերն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

47.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԿԴ-1/0059/15/13

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Գործ թիվ ԿԴ-1/0059/15/13

Նախագահող դատավոր՝ Մ.Արդամանյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ՕՀԱՆՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի հոկտեմբերի 31-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սամվել Գրիգորի Բալյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի ապրիլի 1-ի որոշման դեմ դատախազ Ա.Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկի (այսուհետ նաև՝ ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ) պետը որոշում է կայացրել դատապարտյալ Սամվել Բալյանի նկատմամբ ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) չկիրառելու վերաբերյալ:

2. 2013 թվականի դեկտեմբերի 20-ին դատապարտյալ Ս.Բալյանը դիմել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ-ի պետի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը և իր նկատմամբ կիրառել Համայնքային ակտը:

Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ դատապարտյալ Ս.Բալյանի դիմումը մերժվել է:

3. Կոտայքի մարզի դատախազության դատախազ Ա.Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի ապրիլի 1-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 18-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի ապրիլի 1-ի որոշման դեմ դատախազ Ա.Հովհաննիսյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հունիսի 2-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. 2013 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ-ի պետը կայացրել է որոշում՝ դատապարտյալ Ս.Բալյանի նկատմամբ ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշումը չկիրառելու վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ դատապարտյալ Ս.Բալյանը նախկինում երկու անգամ դատապարտված է եղել ծանր և երկու անգամ միջին ծանրության հանցագործությունների համար, որոնք մարված չեն, և դա հանդիսանում է առանձնապես վտանգավոր ռեցիդիվ, ուստի Համայնքային ակտի 9-րդ կետի 5-րդ ենթակետի հիման վրա՝ դատապարտյալ Սամվել Բալյանի նկատմամբ համաներումը կիրառելի չէ (տե՛ս նյութեր, թերթ 4):

6. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 18-ի որոշման համաձայն՝ «Դատարանը, ուսումնասիրելով դատապարտյալ Սամվել Բալյանի վերաբերյալ ինֆորմացիոն կենտրոնի կողմից փոխանցված դատվածության վերաբերյալ պահանջագիրը և գնահատելով նրա կողմից կատարված հանցանքների ռեցիդիվը, արձանագրում է, որ Սամվել Բալյանը կատարել է միջին ծանրության, իսկ նախկինում դատապարտված է եղել մեկ անգամ ծանր, երեք անգամ միջին ծանրության և մեկ անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություններ կատարելու համար:

Դատարանն արձանագրում է, որ դատապարտյալ Սամվել Բալյանի արարքում առկա է հանցագործությունների առանձնապես վրանգավոր ռեցիդիվ:

(...)

[Ու]ստի Գալարանը գրնում է, որ տվյալ դեպքում նրա նկատմամբ կիրառելի չէ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013թ. հոկտեմբերի 03-ին ընդունված «ՀՀ Անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայրարարելու մասին» որոշումը:

(...) ՀՀ ԱՆ «Սևան» ԶԿՀ վարչակազմի 2013թ. դեկտեմբերի 18-ի որոշումը կայացվել է օրենքով սահմանված կարգով: (...)» (տե՛ս նյութեր, թերթ 15-18):

7. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի ապրիլի 1-ի որոշման համաձայն՝ «(...) Սամվել Բալյանը նախկինում մեկ անգամ կարարել է ծանր, երեք անգամ միջին ծանրության և մեկ անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություններ, իսկ վերջին անգամ դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ ազատազրկման 5 տարի ժամկետով, որը համարվում է միջին ծանրության հանցագործություն:

(...)

Տվյալ դեպքում օրենսդրի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում «ցանկացած հաջորդականության» բառակապակցության օգտագործումը վկայում է այն մասին, որ առանձնապես վրանգավոր ռեցիդիվի առկայության համար ոչ թե պարտադիր է միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության միաժամանակյա առկայություն, այլ երեք անգամից ոչ պակաս դրանց ցանկացած հաջորդականություն, ինչը Սամվել Բալյանի դեպքում առկա է:

Վերաքննիչ քրեական դատարանը գրնում է, որ վերոնշյալ փաստական հանգամանքների պայմաններում հանցագործությունների ռեցիդիվն առանձնապես վրանգավոր գնահատելիս Կոբայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը թույլ չի տվել նյութական իրավունքի խախտում, դատարանի 18.02.2014թ-ի որոշումը օրինական ու հիմնավորված է և այն բեկանելու հիմքեր առկա չեն, ուստի դատախազի վերաքննիչ բողոքը ենթակա է մերժման» (տե՛ս նյութեր, թերթ 75-81):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

8. Վճռաբեկ բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը սխալ է գնահատել Ս.Բալյանի արաքքում առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայության փաստը՝ խախտելով ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջը:

Բողոքաբերը փաստարկել է, որ առանձնապես վտանգավոր ռեցիդիվն առկա է, երբ դիտավորությամբ հանցանք կատարած անձը նախկինում երեք անգամից ոչ պակաս կատարել է միջին, ծանր և առանձնապես ծանր հանցագործություն: Այսինքն՝ ռեցիդիվը գնահատելիս վերը նշված երեք հանցագործությունները պետք է միաժամանակ առկա լինեն, և այդ հանցագործությունների համար անձը նախկինում դատապարտված լինի:

Բողոքաբերը նշել է, որ օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում «ցանկացած հաջորդականություն» հաս-

կացությունն օգտագործել է՝ ելնելով այն տրամաբանությունից, որ անձը կարող է նախկինում երեք անգամից ոչ պակաս, ըստ տեսակների՝ ցանկացած հաջորդականությամբ (հերթականությամբ) ազատագրված դատապարտված լինի, օրինակ՝ դատապարտված լինի առանձնապես ծանր, ծանր և միջին ծանրության հանցագործությունների համար: Այսինքն՝ տվյալ պարագայում հանցագործության տեսակային հաջորդականությունը (հերթականությունը) որևէ նշանակություն չի կարող ունենալ, այլ միայն բավարար է, որ ցանկացած հաջորդականությամբ վերը նշված երեք տեսակի հանցագործություններն էլ առկա լինեն:

Բողոքաբերը փաստարկել է նաև, որ հողվածի ձևակերպման տրամաբանությունից ելնելով՝ կարելի է հասկանալ, որ օրենսդիրը «ցանկացած հաջորդականություն» բառակապակցությունը շարադրել է հանցագործությունների երեք տեսակները թվարկելուց առաջ, այսինքն՝ հաջորդականությունը բխում է հանցագործությունների տարբեր տեսակների միմյանց հաջորդումից, այլ ոչ թե նույնատեսակ հանցագործությունների հաջորդումից: Հակառակ մտտեցման պարագայում «ցանկացած հաջորդականություն» եզրույթը ձևական բնույթ կկրի:

9. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 18-ի և Վերաքննիչ դատարանի 2014 թվականի ապրիլի 1-ի որոշումներն ու գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, կամ կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայությունը որոշելու հարցի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ դատապարտյալ Ս.Բալյանի նկատմամբ Համաներման ակտը կիրառելի չէ, քանի որ նրա արարքում առկա է հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվ:

12. ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ

դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պարժից, կամ պարժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պարժարեսակով, կամ կարող է վերացվել դատապարտությունը»:

Համաներման ակտը կիրառելու առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Վ. Ավերիսյանի գործով կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Համաներման ակտի կիրառումը հնարավոր է դատապարտության ցանկացած փուլում: Ընդ որում, համաներման կիրառման սահմանափակումները նախարեսակած են համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պետք է պահպանվեն համաներման ակտում նախարեսակած այն կանոնները, որոնք սահմանում են անչանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներումը կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անչինք ինչ չափով պետք է օգտվեն համաներումից՝ պետք է ազատվեն քրեական պարասխանաբարձությունից կամ պարժից, կամ կարող է մեղմացվել պարժիժը, կամ վերացվել դատապարտությունը: Այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախարեսակած համաներման չկիրառումը կամ նախարեսակածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության, առաջացնել օրենքի ոչ միարեսակ կիրառություն» (տե՛ս Վարուժան Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԳ-3/0013/01/11 որոշման 16-րդ կետը):

13. Համաներման ակտի 9-րդ կետի 5-րդ ենթակետը նախատեսում է համաներումը չկիրառել հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում:

ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտարկությանը հանցանք կատարելն այն անչի կողմից, ով դատապարտություն ունի նախկինում դիտարկությանը կատարված հանցանքի համար:

(...)

3. Հանցագործությունների ռեցիդիվն առանձնապես վրանգավոր է համարվում անչի կողմից՝

1) դիտարկությանը այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որի համար նա դատապարտվում է ազատազրկման, եթե անչը նախկինում երեք անգամից ոչ պակաս ցանկացած հաջորդականությանը ազատազրկման է դատապարտվել միջին ծանրության դիտարկության հանցագործության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար.

2) այնպիսի ծանր հանցանք կատարելու դեպքում, որի համար նա դատապարտվում է ազատազրկման, եթե անչը նախկինում երկու անգամ ազատազրկման է դատապարտվել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար.

3) առանձնապես ծանր հանցանք կատարելու դեպքում, եթե անչք նախկինում դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար:

4. Այն հանցանքների համար դատվածությունը, որը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև այն հանցանքները, որոնք կատարվել են մինչև անչի տասնութ տարին լրանալը, ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում»:

ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ հանցագործությունների ռեցիդիվը բնութագրվում է.

1) քանակական հատկանիշով (երկու կամ ավելի հանցանք կատարելը),

2) որակական հատկանիշներով, որոնք են՝

ա) միայն դիտավորությամբ հանցանքներ (տարաբնույթ, նույնական կամ համանման) կատարելը,

բ) այդ հանցագործությունները հաջորդաբար և ժամանակային ընդմիջմամբ կատարելը,

գ) նախկինում կատարված հանցանքի (հանցանքների) համար չհանված կամ չմարված դատվածության առկայությունը, պայմանով, որ այդ հանցանքը (հանցանքները) կատարվել է (են) անձի տասնութ տարին լրանալուց հետո: Ընդ որում՝ մինչև տասնութ տարին լրանալը անձի կողմից կատարած հանցանքները ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում:

Հոդվածի բովանդակությունից հետևում է նաև, որ օրենսդիրն առանձնացրել է ռեցիդիվի հետևյալ տեսակները՝ հասարակ, վտանգավոր և առանձնապես վտանգավոր: Այդպիսի տարանջատման հիմքում ընկած են նախկինում, ինչպես նաև նոր կատարված հանցագործությունների տեսակները, նախկինում կատարված հանցագործությունների քանակը, հանցագործության համար նշանակված պատժի տեսակը և այլն:

14. Ռեցիդիվի տեսակները բնութագրվում են նույն հատկանիշներով, ինչ որ ռեցիդիվն ընդհանրապես: Միևնույն ժամանակ դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները:

Մասնավորապես, առանձնապես վտանգավոր ռեցիդիվը նույնպես ենթադրում է նախկինում կատարված հանցագործության համար անձի դատապարտված լինելը: Դրա հետ մեկտեղ այն ունի մի շարք լրացուցիչ հատկանիշներ, որոնք են.

- այդ հասկացությունը կազմող հանցագործությունների բարձր հանրային վտանգավորությունը,
- նոր հանցագործության տեսակը,
- դրանով պայմանավորված նախկինում կատարված հանցագործությունների որոշակի քանակը,
- ինչպես նոր կատարված, այնպես էլ նախկինում կատարված հանցագործությունների համար նշանակված պատժի տեսակը:

Ընդ որում, ինչքան ծանր է հանցագործությունը, այնքան քիչ քանակի դատվածություն է անհրաժեշտ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայության համար:

15. ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով նախատեսված են առանձնապես վտանգավոր ռեցիդիվի ենթատեսակները: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված առանձնապես վտանգավոր ռեցիդիվի տեսակն առկա է այն դեպքում, երբ

ա) անձը կատարել է ցանկացած տեսակի դիտավորյալ հանցանք,

բ) նախկինում երեք կամ ավելի անգամ կատարել է հանցագործություն,

գ) նախկինում կատարված հանցագործությունների կազմում պետք է լինեն միջին ծանրության դիտավորյալ, ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ,

դ) ինչպես նոր, այնպես էլ նախկինում կատարած հանցագործությունների համար անձը դատապարտվել է ազատազրկման:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի այս տեսակի առկայության համար նախկինում կատարած միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների տեսակային հաջորդականությունը որևէ նշանակություն չունի, բավարար է, որ ցանկացած հաջորդականությամբ վերը նշված երեք տեսակի հանցագործություններն էլ առկա լինեն: Նշված դիրքորոշման համար հիմք է հանդիսանում այն, որ օրենսդիրը «ցանկացած հաջորդականություն» բառակապակցությունը շարադրել է հանցագործությունների երեք տեսակները թվարկելուց առաջ: Այսինքն՝ հաջորդականության վերաբերյալ օրենսդրի պահանջը վերաբերում է հանցագործությունների տարբեր տեսակներին, քանի որ նույնատեսակ հանցագործությունների հաջորդականության մասին օրենսդրական կարգավորում նախատեսելը որևէ իրավական նպատակ չի կարող հետապնդել:

Հակառակ մեկնաբանության դեպքում, եթե առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայության համար ոչ թե միջին, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների միաժամանակյա առկայությունը, այլ երեք անգամից ոչ պակաս դրանցից ցանկացածի առկայությունը բավարար համարվի, կատարված հանցագործությունների վտանգավորության բնույթի և աստիճանի գնահատման առումով անձանց համար անհավասար պայմաններ կստեղծեն, ինչով էլ կխախտվեն արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքները:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հանցագործությունների ռեցիդիվը վտանգավոր է համարվում ծանր հանցանք կատարելու դեպքում, եթե անձը նախկինում ազատազրկման է դատապարտվել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար: Դրանից հետևում է, որ եթե անձը նախկինում դատապարտվել է ազատազրկման առանձնապես ծանր հանցագործության համար և հետո կատարել է ծանր հանցանք, ապա այդ դեպքում առկա է վտանգավոր ռեցիդիվը: Իսկ եթե անձը նախկինում երեք անգամ ազատազրկման է դատապարտվել միջին ծանրության հանցագործությունների համար և հետո կատարել է ոչ մեծ ծանրության հանցանք, ապա դա պետք է դիտվի

որպես առանձնապես վտանգավոր ռեցիդիվ: Ստացվում է, որ կատարված հանցագործությունների տեսակի, մասնավորապես՝ վտանգավորության բնույթի և աստիճանի գնահատման առումով անհավասար պայմաններ են ստեղծվում:

Օրենքի այդպիսի մեկնաբանությունը կարող է հանգեցնել մեկ այլ անբույլատրելի իրավիճակի, երբ նախկինում երեք անգամ միջին ծանրության հանցանք կատարած անձը և նախկինում երեք անգամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձը ռեցիդիվի գնահատման տեսանկյունից դիտարկվեն նույն հարթության վրա և արժանանան միևնույն իրավական գնահատականի:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ 2013 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ-ի պետը կայացրել է դատապարտյալ Ս.Բալյանի նկատմամբ համաճեղում չկիրառելու վերաբերյալ որոշում՝ պատճառաբանելով, որ դատապարտյալ Ս.Բալյանի արարքում առկա է առանձնապես վտանգավոր ռեցիդիվ, ուստի Համաճեղման ակտի 9-րդ կետի 5-րդ ենթակետի հիման վրա՝ նրա նկատմամբ համաճեղումը կիրառելի չէ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Դատապարտյալ Ս.Բալյանը դիմում է ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ-ի պետի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի որոշումը և իր նկատմամբ կիրառել Համաճեղման ակտը:

Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի փետրվարի 18-ի որոշմամբ դիմումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ դատապարտյալ Ս.Բալյանը կատարել է միջին ծանրության հանցագործություն, իսկ նախկինում դատապարտված է եղել մեկ անգամ ծանր, երեք անգամ միջին ծանրության և մեկ անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություններ կատարելու համար, այսինքն՝ նրա արարքում առկա է հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվ, հետևաբար նրա նկատմամբ Համաճեղման ակտը կիրառելի չէ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Իր հերքին, Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում առկա «ցանկացած հաջորդականությամբ» հասկացությունը վկայում է այն մասին, որ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայության համար ոչ թե պարտադիր է միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության միաժամանակյա առկայությունը, այլ երեք անգամից ոչ պակաս դրանց ցանկացած հաջորդականություն, ինչն առկա է Ս.Բալյանի պարագայում (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով 12-15-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները դատապարտյալ Ս.Բալյանի արարքում առանձնապես վտանգավոր ռեցիդիվը գնահատելիս վկայակոչել են նաև նրա կողմից նախկինում ոչ մեծ ծանրության հանցանք կատարելը, մինչդեռ

առանձնապես վտանգավոր ռեցիդիվի առկայությունը գնահատելիս հաշվի առնվող նախկինում կատարված հանցագործությունների տեսակները հստակ սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով, որոնց կազմում ոչ մեծ ծանրության հանցագործության տեսակն ընդգրկված չէ: Հետևաբար, նախկինում այդպիսի հանցագործության կատարումը դատապարտյալ Ս.Բայանի արարքում առանձնապես վտանգավոր ռեցիդիվի գնահատման հարցում որևէ իրավական նշանակություն չի կարող ունենալ:

Ինչ վերաբերում է Ս.Բայանի կողմից նախկինում երեք անգամ միջին ծանրության, մեկ անգամ ծանր հանցագործություն կատարելուն, իսկ վերջին կատարածը ոչ մեծ ծանրության հանցագործություն լինելուն, ապա նրա կողմից նախկինում նաև առանձնապես ծանր հանցագործություն կատարված չլինելու պայմաններում հանցագործությունների այդ համակցությունը ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով չի կարող հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվ գնահատվել:

18. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավորված չեն ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ դատապարտյալ Ս.Բայանի նկատմամբ Համաներման ակտը կիրառելի չէ, քանի որ նրա արարքում առկա է հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվ: Այդ առումով ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածը, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է:

Հիմք ընդունելով վերը շարադրված եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով թույլ է տրվել նյութական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Նշված հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի հիման վրա հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

19. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Գատապարտյալ Սամվել Գրիգորի Բալյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի ապրիլի 1-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

48.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԵԷԴ/0048/01/14

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Քրեական գործ թիվ ԵԷԴ/0048/01/14

Նախագահող դատավոր՝ Ա.Խաչատրյան

Դատավորներ՝ Ա.Դանիելյան

Լ.Թադևոսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ	Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ	Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ մեղադրող	Տ.ՈՒԶՈՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 16-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Էդվարդ Գրիգորի Ադամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի հուլիսի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի փետրվարի 1-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 12105814 քրեական գործը:

2014 թվականի մարտի 5-ին Էդվարդ Ադամյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

2014 թվականի մարտի 12-ին Էդ.Ադամյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2014 թվականի ապրիլի 17-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը, կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2014 թվականի հունիսի 3-ի դատավճռով Էդ.Ադամյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտել տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3. Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների մեղադրող դատախազության ավագ դատախազ Տ.Ուզոյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 3-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հուլիսի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը, որը Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Էդ.Ադամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [Ն]ա 2014 թվականի հունվարի 24-ին՝ ժամը 13:50-ի սահմաններում, իրեն պարկանոդ «Լադա Պրիորա» մակնիշի 41 DQ 111 պերիամարանիշի ավտոմեքենայով անցնելով «Էրեբունի» բժշկական կենտրոնի ծննդատան բակում կայանած Արայիկ Հայրապետյանին պարկանոդ «Օպել Տիգրա» մակնիշի 33 ՕՕ 944 պերիամարանիշի ավտոմեքենայի կողքով, որի դուռը գրկով է բաց վիճակում, նկատել է, որ աջ նստարեղին դրված է պայուսակ և նպարակադրվել է գաղտնի հափշտակել այն: Հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով ավտոմեքենան կայանել է ծննդատան բակում, իջել ավտոմեքենայից, մոտեցել է «Օպել Տիգրա» ավտոմեքենայի առջևի աջ դռանը, բացել այն և ավտոմեքենայի սրահից գաղտնի հափշտակել է Հրանուշ

Ավերիսյանին պարկանոց 4000 ՀՀ դրամ արժողության պայուսակը, որի մեջ եղել է 1.572.648 ՀՀ դրամին համարժեք 3850 ԱՄՆ դոլար և 10.000 ՀՀ դրամ գումար, նստել իր ավտոմեքենան ու դիմել փախուստի՝ Հ.Ավերիսյանին պարճառելով խոշոր չափերի հասնող՝ 1.586.648 ՀՀ դրամ գույքային վնաս:

Այսպիսով, Էդվարդ Ադամյանը Հրանուշ Ավերիսյանին պարկանոց խոշոր չափերի գույքը գաղտնի հափշտակելով՝ կատարել է հանցանք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կերպով» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 174-176, 212-217):

6. Վկա Ռազմիկ Ներսիսյանի ցուցմունքների համաձայն՝ «(...) նկատել է, որ (...) «Օպել Տիգրա» ավտոմեքենայի վարորդի մյուս կողմի աջ հարվածի դռան մուր շուրջ 30 րարեկան մի րդա հեռախոսով է խոսել և կողպեքները նայել, նույն ավտոմեքենայից փակվելու ջայն է լսել, ուշադրություն է դարձրել դուռը փակողին, որը (...) անմիջապես նստել է սև գույնի «Լադա Պրիորա» մակնիշի 41 DQ 111 պերիամարանիշի ավտոմեքենայի վարորդի կողքի նստարեղին ու վայրկյաններ անց հեռացել (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 215):

7. Վկա Գևորգ Գևորգյանի ցուցմունքների համաձայն՝ «(...) իրեն մոտեցել է Ռազմիկը և հայրնել, որ սկանստես է եղել կատարվածին (...): Այդ ընթացքում ցածր արագությամբ հիվանդանոցի կողմից դեպի ծանդարան բակի կողմ է եկել սև գույնի «Լադա Պրիորա» մակնիշի 41 DQ 111 պերիամարանիշի ավտոմեքենան, որը մարմանը չէր Ռազմիկը հայրնել է, որ գողը նշված ավտոմեքենայով է հեռացել: (...) ինքը մեքենայի վարորդից պահանջել է, որ կանգ առնի, սակայն վերջինս չի ենթարկվել և բարձր արագությամբ վարելով մեքենան՝ հեռացել է» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 215):

8. Որպես կասկածյալ հարցաքննվելիս՝ Էդ.Ադամյանը ցուցմունք է տվել այն մասին, որ իմացել է ոստիկանների կողմից իր անձը բացահայտելու հանգամանքի մասին և այդ պատճառով զնացել է Գորիս քաղաք և այնտեղ քաքնվել մեկ ամսից ավել ժամկետով՝ ծախսելով գումարի մի մասը: Սակայն արդյունքում հասկացել է, որ երկար չի կարող թաքնվել ու որոշել է ներկայանալ ոստիկանություն:

Վերոնշյալ ցուցմունքները Էդ.Ադամյանը պնդել է նաև որպես մեղադրյալ հարցաքննվելիս (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 121, 123, 178):

9. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) [Ամբաստանյալ Էդվարդ Ադամյանի անչը բնութագրող տվյալների ուսումնասիրությունից հետևում է, որ վերջինիս նախկին դատվածություններն օրենքով սահմանված կարգով մարված են: Այլ կերպ՝ Էդ.Ադամյանը համարվում է դատվածություն չունեցող անչ, հետևաբար սույն քրեական գործի շրջանակներում նրա նախկին դատվածությունները որևէ իրավական հետևանք չեն կարող առաջացնել:

(...)

Դատարանը հաշվի է առնում, որ ամբաստանյալ Էդվարդ Ադամյանը կատարած արարքի համար իրեն լիովին մեղավոր է ճանաչել և զղջացել է, ինչը դրսևկորվել է նաև նրանով, որ վերջինս մեղայականով ներկայացել է նախաքննություն իրականացնող մարմին, տվել է ինքնախոսարովանական ցուցմունքներ, վերադարձրել է հափշտակած զուտարը, քնութագրվում է դրականորեն: Դատարանը հաշվի է առնում նաև տուժողի դրական քնութագիրն ու վերաբերմունքն ամբաստանյալի անչի նկատմամբ, ինչը զնահատում է, որպես գործած արարքում անկեղծորեն զղջալու մասին: Բացի այդ, ամբաստանյալին մեղսագրվում է միջին ծանրության հանցագործություն, ինամքին ունի երկու մանկահասակ երեխա և կենսաթոշակառու հայր, ընտանիքի միակ կերակրողն է: Որպես այլ հանգամանք, դատարանը հաշվի է առնում նաև ամբաստանյալի ընտանեկան այն իրավիճակը, որ մայրը, երիտասարդ քույրն ու եղբայրը մահացել են և կենսաթոշակառու հոր միակ ստուխնքն ընտանիքի միակ անդամը հանդիսացող ամբաստանյալն է: Գործով բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները:

(...)

Հաշվի առնելով վերոգրյալները և քննարկելով ամբաստանյալ Էդվարդ Գրիգորի Ադամյանի նկատմամբ նշանակվող պատիժի հարցը դատարանը գրնում է, որ (...) ՀՀ Քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կերի սանկցիայով նախատեսված տուգանքի ձևով պատիժ նշանակելը լիովին բավարար է ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատիժի նպատակների իրագործմանը հասնելու համար» (տես քրեական գործ, հատոր 2, թերթ 62-64):

10. Վերաքննիչ դատարանն իր որոշման պատճառաբանական մասում արձանագրել է. «(...) [Դ]ատարանն ամբաստանյալ Էդվարդ Ադամյանի նկատմամբ պատիժ նշանակելիս բավարար չափով հաշվի առնելով ամբաստանյալի կողմից կատարված հանցագործության բնույթն ու վրանգավորության աստիճանը, նրա անչը քնութագրող տվյալները, վերջինիս պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում՝ պահպանելով պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կերի սանկցիայի շրջանակներում նշանակել է արդարացի և համաչափ պատիժ, որը կարող է սպաստովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատիժի նպատակները:

(...)

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ սույն քրեական գործի շրջանակներում դատարանի կողմից կայացվել է գործն ըար էության միշտ լուծող դատականակտ, այն օրինական է, հիմնավորված և պարճառաբանված,

ուստի պետք է թողնել օրինական ուժի մեջ» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 113-114):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոք բերած անձի պնդմամբ՝ Առաջին աստիճանի դատարանը Էդ.Ադամյանի նկատմամբ ազատագրկման հետ չկապված պատիժ նշանակելով, իսկ Վերաքննիչ դատարանը նշանակված պատիժն անփոփոխ թողնելով՝ թույլ են տվել դատական սխալ՝ ամբաստանյալի նկատմամբ նշանակել են անարդարացի, ակնհայտ մեղմ պատիժ, ինչը հիմք է դատական ակտը բեկանելու համար:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանները հաշվի չեն առել կատարված հանցանքի հանրային վտանգավորությունը, դրա կատարման արդյունքում վնասված հասարակական հարաբերությունների կարևորությունը, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների աճն ու տարածվածությունը: Որպես տուգանքի դատապարտման հիմնավորում՝ նշվել են Էդ.Ադամյանի նախկինում դատապարտված չլինելը, անկեղծորեն զոջալը, մեղայականով ներկայանալը, ընտանիքի միակ կերակրողը լինելը, խնամքին մինչև 14 տարեկան երկու երեխա ունենալը, դրականորեն բնութագրվելը:

12. Բողոքի հեղինակը, անդրադառնալով ամբաստանյալի դատվածություններին, նշել է, որ դրանց մարվելու հանգամանքն ամենևին էլ չի վկայում, որ հանցավորը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց: Ընդհակառակը, նախկինում կատարված հանցանքների համար Էդ.Ադամյանի նկատմամբ մեղմ պատիժներ նշանակելը, համաներում կիրառելը, երկու անգամ պայմանական վաղաժամկետ պատժի կրումից ազատելը չեն նպաստել ամբաստանյալի ուղղմանն ու նրա կողմից նոր հանցանքների կատարման կանխմանը:

Ըստ բողոքաբերի՝ անհիմն է նաև Էդ.Ադամյանի մեղայականով ներկայանալը դիտել որպես նրա պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք, քանի որ փախուստի դիմելու պահին նա նկատվել է ակնաատես վկայի կողմից, իսկ քիչ անց ոստիկանության աշխատակիցը հիվանդանոցի տարածքում փորձել է կանգնեցնել նրան, սակայն վերջինս փախուստի է դիմել: Նույն օրը ճշտվել է վարորդի ինքնությունը, ձեռնարկվել են միջոցառումներ նրան հայտնաբերելու ուղղությամբ, որոնք ժամանակավորապես արդյունք չեն տվել: Գիտակցելով, որ հայտնի է դարձել ինչպես իր կողմից գողություն կատարելու հանգամանքը, այնպես էլ իր անձը՝ Էդ.Ադամյանը ներկայացել է իրավապահ մարմիններին, որպիսի պայմաններում խոսք չի կարող լինել մեղայականով ներկայանալու մասին:

Ինչ վերաբերում է դատարանի այն հիմնավորումներին, որ Էդ.Ադամյանը դրականորեն է բնութագրվում, ընտանիքի միակ կերակրողն է, խնամքին ունի

2 անչափահաս երեխա, հարազատները մահացել են, տուժողը դրականորեն է վերաբերվում ամբաստանյալի անձին, ապա բողոք բերած անձը նշել է, որ Էդ.Ադամյանը չի աշխատել, իրականում ընտանիքը գտնվել է նրա հոր խնամքին (ինչի մասին վկայում է նաև այն, որ Էդ.Ադամյանը հանցագործությունը կատարելուց հետո 1 ամիս 10 օր մնացել է Գորիս քաղաքում, գողացված զումարի մի մասը ծախսել է և այդ ընթացքում որևէ կերպ հոգ չի տարել իր ընտանիքի մասին): Հետևաբար նախկինում հանցանքներ կատարելը, չաշխատելը խիստ կասկածի տակ են դնում Էդ.Ադամյանի դրական բնութագրվելու հանգամանքը, իսկ երկու երեխաների առկայության և հարազատների մահվան հանգամանքը չեն նվազեցնում կատարված հանցանքի և այն կատարած անձի հանրային վտանգավորության աստիճանը, բավարար չեն եզրահանգելու, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց ազատագրկման ձևով պատիժ նշանակելու:

13. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է պատժի մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հուլիսի 25-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության, մասնավորապես, իրավունքի զարգացման գործառույթի իրացման ապահովումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղայականով ներկայանալը որպես անձի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք դիտարկելու կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ են արդյոք Էդ.Ադամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի շրջանակներում տուգանք պատժատեսակ նշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

16. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «*Գողությունը, որը կատարվել է՝*

(...)

2) խոշոր չափերով,

(...)

պատժվում է փուզանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատագրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անչը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատժի մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով»:

Պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել Ա Ավերիայանի գործով որոշման մեջ՝ արձանագրելով, որ «(...) պատասխանատվությունն ու պատժի մեղմացնող և ծանրացնող հանգամանքները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցագործության՝ հանրության համար վրանգավորության աստիճանի և բնույթի, հանցավորի անչնավորության մասին և յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատականացնել պատժի: Պատժի մեղմացնող և ծանրացնող հանգամանքների ցանկի վերլուծությունը ցույց է տալիս, որ քննարկվող հանգամանքները վերաբերում են ինչպես հանցագործությանը, այնպես էլ հանցավորի անչնավորությանը կամ միաժամանակ բնութագրում են հանցագործությունն ու հանցավորի անչնավորությունը: Այդ պատճառով էլ պատժի մեղմացնող և ծանրացնող հանգամանքները պետք է դիրարկել որպես հանցակազմի սահմաններից դուրս հանգամանքներ, որոնք ուղղակի կամ անուղղակի վերաբերում են հանցագործությանը կամ հանցավորի անչնավորությանը, բարձրացնում կամ իջեցնում են հասարակական վրանգավորության աստիճանը և ազդում պատժի վրա: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել՝ ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս (...)» (տե՛ս Անդրանիկ Մեսրոպի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԱՆԳ/0091/01/09 որոշման 20-րդ կետը):

17. Վերահաստատելով և զարգացնելով նախորդ կետում վկայակոչված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն համապատասխան քրեաիրավական սանկցիաները, որոնք կրում են հարաբերականորեն որոշակի (պատիժ են նախատեսում որոշակի սահմաններում) կամ այլընտրանքային բնույթ (նախատեսում են պատժի մի քանի տեսակներ): Ընդ որում, այլընտրանքային սանկցիաները հանցավորի պատասխանատվության անհատականացման ավելի լայն սահմաններ են նախատեսում:

ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան այլընտրանքային է, այսինքն՝ թույլ է տալիս դատարանին իր հայեցողության շրջանակներում երկու հնարավոր պատժատեսակներից (տուգանք և ազատազրկում) ընտրել այնպիսին, որը համաչափ է հանցագործության

ծանրությանը, հանցավորի անձին, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներին՝ ապահովելով պատժի նպատակների իրագործումը:

Հողվածի սանկցիայի շրջանակներում կոնկրետ պատժատեսակ և պատժաչափ ընտրելիս դատարանը թեև օժտված է իր ներքին համոզմունքին և իրավագիտակցությանը համապատասխան որոշակի հայեցողություն դրսևորելու ազատությամբ, սակայն այն չի կարող բացարձակ և կամայական բնույթ կրել:

Պատիժ նշանակելիս դատարանի հայեցողությունը սահմանափակվում է օրենքով կանխորոշված որոշակի շրջանակներով՝ հանցավոր արարքի հանրային վտանգավորության բնույթով և աստիճանով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներով, որոնք դատարանն անպայման պետք է հաշվի առնի պատժի արդարացիության ապահովման համար (պատիժ նշանակելիս դատարանի հայեցողության սահմանների վերաբերյալ *mutatis mutandis* տե՛ս Նարեկ Գևորգի Սարգսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԳ/0042/01/11 որոշումը):

18. ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ «Պարասխանարվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքներ են՝ (...) մեղայականով ներկայանալը (...):»:

Մեջբերված քրեաիրավական նորմը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Ա.Ավերիսյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ «Մեղայականով ներկայանալը նշանակում է, որ անչը կամավոր ներկայանում է իրավապահ մարմիններին (նստիկանություն, դատարասագություն և այլն) և հայրնում է իր կողմից միանշանկ կամ այլ անչի հետ կարարած հանցագործության մասին: Այլ կերպ՝ մեղայականով ներկայացած անչը կամավոր, անկեղծ խոստովանություն է անում, քրեական հետապնդում իրականացնող մարմնին բանավոր կամ գրավոր կերպով հայրնում իր կողմից կամ իր մասնակցությամբ կարարված հանցագործության մասին: Հնարավոր են իրավիճակներ, երբ հանցագործություն կարարած անչը չի կարող անչամբ ներկայանալ և հայրնել հանցագործության մասին, և Վճռաբեկ դատարանն արչանագրում է, որ նման դեպքերում հեռախոսով կամ փոստով հաղորդումները ևս պերք է դիրվեն որպես մեղայականով ներկայանալ:

Շարադրված վերլուծության լույսի ներքո մեկնաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կերը՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ եթե կարարված հանցագործության փաստով հարուցված քրեական գործով այդ հանցանքը կարարած անչը պարզված չէ, ապա հանցանք կարարած անչի կողմից դրա մասին իրավապահ մարմիններին կամավոր հայրնելը ևս պերք է դիրվի որպես մեղայականով ներկայանալ (...):» (տե՛ս Անդրանիկ Մեսրոպի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԱՆԳ/0091/01/09 որոշման 23-րդ կետը):

19. Վերահաստատելով և զարգացնելով *Ա.Ավերիսյանի* գործով որոշմամբ արտահայտված և վերը մեջբերված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղայականով ներկայանալու ինստիտուտը կարևոր նշանակություն ունի թե՛ հանցանք կատարած անձի և թե՛ վարույթն իրականացնող մարմնի համար: Դա պայմանավորված է նրանով, որ այն մի կողմից հանգեցնում է հողվածի սանկցիայի շրջանակներում համեմատաբար մեղմ պատժի նշանակման՝ խրախուսելով անձի հետհանցավոր դրական վարքագիծը, իսկ մյուս կողմից հեշտացնում է հանցագործությունների բացահայտումը և գործով քննության իրականացումը: Բացի այդ, օրենքով նախատեսված որոշակի պայմանների առկայության դեպքում մեղայականով ներկայանալը կարող է հիմք հանդիսանալ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար (գործուն գոջա):

Մեղայականով ներկայանալու էությունը կայանում է նրանում, որ հանցագործությունը կամ այն կատարող անձը (անձինք) անհայտ լինելու պայմաններում հանցավորը կամովին և մեղայականով ներկայանում է համապատասխան մարմիններ և հայտնում իր կողմից միանձնյա կամ այլ անձանց հետ համատեղ կատարած հանցանքի մասին, անում է անկեղծ խոստովանություն, քրեական հետապնդման մարմիններին բանավոր կամ գրավոր հայտնում հանցագործության հանգամանքները: Ընդ որում, քննարկվող մեղմացնող հանգամանքը հաշվի առնելու համար որևէ նշանակություն չունի՝ ինչքան ժամանակ է անցել հանցանք կատարելուց հետո, ինչպես նաև որոնք են ներկայանալու շարժառիթները (գոջում, պատասխանատվության ենթարկվելու վախ, ամոթ և այլն):

20. Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ վարույթ իրականացնող մարմին ներկայանալու ոչ բոլոր դեպքերն են իրենց բնույթով և հատկանիշներով համարվում մեղայականով ներկայանալ և հանգեցնում պատասխանատվության ու պատժի պարտադիր մեղմացման: Հարկ է նկատել, որ թեև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը պարունակում է միայն մեղայականով ներկայանալու եզրույթը, այնուամենայնիվ, յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է պարզել՝ արդյոք այն եղել է նաև կամովին և հակառակը՝ կամովին ներկայանալու դեպքերը արդյոք պարունակում են մեղայականով ներկայանալուն բնորոշ հատկանիշները:

Այսպես, ներկայանալը կարող է համարվել կամովին այն դեպքում, երբ անձն ինքնակամ, սեփական կամահայտնությամբ դիմում է համապատասխան մարմիններին՝ զիտակցելով քննությունից թաքնվելու հնարավորությունը: Ընդ որում, ներկայանալու նախաձեռնությունը կարող է բխել ինչպես հանցավորից, այնպես էլ այլ անձանցից (օրինակ՝ մերձավորների կողմից համոզելու, հորդորելու, խորհուրդներ տալու և այլ դեպքերում): Տվյալ պարագայում սկզբունքայինն անձի նկատմամբ հոգեկան կամ ֆիզիկական հարկադրանքի բացակայությունն է:

Միաժամանակ կամովին ներկայանալը կհամարվի մեղայականով ներկայանալ, եթե հանցավորն ընդունի իր մեղքը հանցանքի կատարման կամ դրան հանցակցելու մեջ, անկեղծորեն զոջա կատարվածի համար և տա ճշմարտացի ցուցմունքներ գործին վերաբերող իրեն հայտնի բոլոր հանգամանքների վերաբերյալ:

Միայն վերոնշյալ հատկանիշների միաժամանակյա առկայությունն է վկայում հանցավորի անկեղծ զոջալու, հանցագործության բացահայտմանն աջակցելու պատրաստակամության և, հետևաբար, նրա հանրային վտանգավորության աստիճանի էական նվազման մասին, ինչն էլ հիմք է նրա նկատմամբ համապատասխան հողվածի սանկցիայի շրջանակներում մեղմ պատիժ նշանակելու համար:

21. Սույն որոշման նախորդ կետում շարադրված դատողությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցավորի կողմից իրավապահ մարմին ներկայանալը և իր կամ իր մասնակցությամբ կատարված հանցագործության մասին հայտնելը չի կարող դիտվել որպես մեղայականով ներկայանալ և, հետևաբար, հանդիսանալ պատասխանատվության ու պատժի պարտադիր մեղմացման պայման, եթե հանցավորը նախապես իմացել է իր ներկայացման մասին: Այսինքն՝ եթե հանցանք կատարած անձը ներկայանում է իրավապահ մարմին՝ նախապես իմանալով, որ հայտնի է հանցանքն իր կողմից կատարելու փաստը, և գիտակցելով քննությունից երկար քաքնվելու հնարավորության բացակայությունը, ապա խոսք չի կարող լինել ներկայանալու կամովին բնույթի և կատարվածի համար անկեղծորեն զոջալու մասին:

22. Վերոշարադրյալ եզրահանգումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի իմաստով մեղայականով համապատասխան մարմիններ ներկայանալը դիտվում է որպես անձի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք, եթե՝

1) հայտնի չէ հանցագործության դեպքը ու այն կատարած անձը, և նա կատարվածի վերաբերյալ կամովին հաղորդում է ներկայացնում իրավապահ մարմիններ (այս դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մեղայականով ներկայանալը հանդիսանում է քրեական գործ հարուցելու առիթ),

2) հայտնի է հանցագործության դեպքը, սակայն հայտնի չէ հանցավորի անձը, և վերջինս կամովին ներկայանում է համապատասխան մարմիններ,

3) հայտնի է ինչպես հանցագործության դեպքը, այնպես էլ այն կատարած անձը, և հանցավորը կամովին ներկայանում է՝ չգիտակցելով, որ ինքն արդեն իսկ մերկացված է հանցագործության կատարման մեջ (օրինակ՝ անձը գտնվում է հետախուզման մեջ, սակայն չգիտի այդ մասին և համոզված է, որ իրավապահ մարմիններին հայտնի չէ հանցագործության կամ այն իր կողմից կատարելու հանգամանքը և այլն),

4) հանցանք կատարելու մեջ կասկածվող անձը ձերբակալվելուց հետո կամովին հայտնում է իր կողմից կատարված այլ հանցանքի մասին այն պարագայում, երբ մինչ այդ իրավապահ մարմինները չեն տիրապետել բավարար տվյալներ, որոնք կվկայեին նրա առնչությունն այդ դեպքին:

Հարկ է նշել, սակայն, որ Վճռաբեկ դատարանը չի բացառում, որ որոշ դեպքերում վարույթ իրականացնող մարմին հանցանք կատարած անձի գուտ ներկայանալու փաստը, որը չի ենթադրում մեղայականով ներկայանալ, դատարանը կարող է ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով գնահատել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող այլ հանգամանք՝ հաշվի առնելով հանցավորի փաստացի ներկայանալու նշանակությունը հանցագործության արագ բացահայտման և գործի քննության համար:

23. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Էդ.Ադամյանը 2014 թվականի հունվարի 24-ին «Էրեբունի» բժշկական կենտրոնի ծննդատան բակում կայանած Ա.Հայրապետյանին պատկանող «Օպել Տիգրա» մակնիշի ավտոմեքենայի սրահից գաղտնի հափշտակել է Հ.Ավետիսյանին պատկանող 4.000 ՀՀ դրամ արժողությամբ պայուսակը, որի մեջ եղել է 1.572.648 ՀՀ դրամին համարժեք 3850 ԱՄՆ դոլար և 10.000 ՀՀ դրամ գումար, ու դիմել փախուստի՝ Հ.Ավետիսյանին պատճառելով խոշոր չափերի հասնող՝ 1.586.648 ՀՀ դրամի գույքային վնաս (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Գեպքի վայրից հեռանալու պահին ամբաստանյալ Էդ.Ադամյանը նկատվել է ակնատես վկայի կողմից, իսկ քիչ անց ոստիկանության աշխատակիցը հիվանդանոցի տարածքում փորձել է կանգնեցնել նրան, սակայն վերջինս փախուստի է դիմել: Այնուհետև ճշտվել է վարորդի ինքնությունը, ձեռնարկվել են միջոցառումներ նրան հայտնաբերելու ուղղությամբ (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը):

Էդ.Ադամյանի նախաքննական ցուցմունքների համաձայն՝ ինքն իմացել է ոստիկանների կողմից իր անձը բացահայտելու հանգամանքի մասին և այդ պատճառով գնացել է Գորիս քաղաք ու այնտեղ թաքնվել մեկ ամսից ավել ժամկետով, սակայն հասկացել է, որ երկար չի կարող թաքնված մնալ ու որոշել է ներկայանալ ոստիկանություն (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Էդ.Ադամյանի նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելիս արձանագրել է, որ նա համարվում է դատվածություն չունեցող անձ, քանի որ նախկին դատվածություններն օրենքով սահմանված կարգով մարված են: Դատարանը որպես հանցավորի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք, ի թիվս այլնի, հաշվի է առել վարույթն իրականացնող մարմնին մեղայականով ներկայանալը, իրեն մեղավոր ճանաչելը և զղջալը: Դատարանը հաշվի է առել նաև այն, որ Էդ.Ադամյանի մայրը, երիտասարդ քույրն ու եղբայրը մահացած են: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ ՀՀ քրեական

օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի սանկցիայով նախատեսված տուգանքի ձևով պատիժ նշանակելը լիովին բավարար է նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների իրագործմանը հասնելու համար (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը, հիմնավորված համարելով Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունները, անփոփոխ է թողել դատական ակտը (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

24. Սույն որոշման նախորդ կետում շարադրված փաստական տվյալները գնահատելով 16-22-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Էդ.Ադամյանի գործողություններում բացակայում են մեղայականով ներկայանալու հատկանիշները:

Այսպես, գործի փաստական հանգամանքների վերլուծությունը վկայում է, որ մինչ իրավապահ մարմին ներկայանալը Էդ.Ադամյանին հայտնի է եղել կատարված հանցագործության մեջ իր մերկացման հանգամանքը: Էդ.Ադամյանը հանցագործությունը կատարելուց հետո շուրջ մեկ ամիս տաս օր գտնվել է փախուստի մեջ, ծախսել է հափշտակված գումարի մի մասը, իսկ իրավապահ մարմիններ ներկայացել է միայն իր դեմ վկայող բավարար տվյալների ճնշման պատճառով՝ գիտակցելով այլևս թաքնված մնալու հնարավորության բացակայությունը: Այս պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ամբաստանյալի ներկայանալը պայմանավորված է եղել ոչ թե կատարվածի համար զղջալու, մեղքն ընդունելու ցանկությամբ, այլ իր դեմ վկայող բավարար փաստերի ճնշմամբ, այսինքն՝ այն եղել է ոչ թե կամովին, այլ հարկադրված, ուստի խոսք չի կարող լինել ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված մեղայականով ներկայանալու մասին:

25. Բացի այդ, Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ փաստում է, որ այլընտրանքային սանկցիաների միջև ընտրություն կատարելիս պատժի արդարացիության սկզբունքի ապահովման հիմնական երաշխիքը դատարանների կողմից յուրաքանչյուր գործի քննության ժամանակ այնպիսի հանգամանքների բացահայտումն է, որոնք ազդում են անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա: Սույն գործով ստորադաս դատարաններն ամբաստանյալի նկատմամբ մեղմ պատժատեսակ նշանակելու վերաբերյալ իրենց որոշումը հիմնավորել են նաև նրանով, որ Էդ.Ադամյանի մայրը, երիտասարդ քույրն ու եղբայրը մահացած են: Մինչդեռ նշված հանգամանքը չի կարող ողջամտորեն նվազեցնել հանցավորի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը, ուստի և չի կարող հաշվի առնվել նրա նկատմամբ պատիժ նշանակելիս:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում բողոքաբերի այն փաստարկի հետ, որ նախկինում ունեցած դատվածությունները մարվելու հանգամանքն ամենևին էլ չի նշանակում, որ

Էդ.Ադամյանը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց (տե՛ս սույն որոշման 12-րդ կետը): Մարված կամ հանված դատվածության պայմաններում անձը քրեական օրենքի իմաստով համարվում է հանցագործություն չկատարած և նրա նախկին դատվածությունը քրեաիրավական հետևանք առաջացնել չի կարող, այդ թվում՝ չի կարող անդրադառնալ նոր հանցագործության համար նշանակվելիք պատժի վրա (տե՛ս Սեյրան Աղախանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0082/01/12 որոշման 21-րդ կետը, Արտաշ Շաքարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵԿԴ/0163/01/13 որոշման 15-րդ կետը):

26. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ամբաստանյալ Էդ.Ադամյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի շրջանակներում տուգանք պատժատեսակն ընտրելիս ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել գործի փաստական հանգամանքները: Մասնավորապես, անտեսելով այն, որ հանցանքը կատարելուց շուրջ մեկ ամիս տասը օր հետո վարույթն իրականացնող մարմին ամբաստանյալի ներկայանալը պայմանավորված է եղել ոչ թե կատարվածի համար գղջալու, մեղքն ընդունելու ցանկությամբ, այլ իր դեմ վկայող բավարար փաստերի ճնշմամբ՝ ստորադաս դատարանները որպես Էդ.Ադամյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք են գնահատել վարույթն իրականացնող մարմնին մեղայականով ներկայանալը: Բացի այդ, դատարաններն ամբաստանյալ Էդ.Ադամյանի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առել այնպիսի հանգամանքներ, որոնք որևէ կերպ չեն ազդում անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության վրա, ուստի չեն կարող հաշվի առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Էդ.Ադամյանի նկատմամբ պատիժ նշանակելիս ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայի շրջանակներում տուգանք պատժատեսակ նշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ չեն:

27. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ստյանի դատարանի դատավճիռը, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի նորմերով, մասնավորապես՝ 5-րդ, 10-րդ և 61-րդ հոդվածներով սահմանված սկզբունքների խախտումներ, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է: Նշված հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ,

397-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Էդվարդ Գրիգորի Ադամյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հուլիսի 25-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

49.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԵԷԳ/0122/01/13

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Քրեական գործ թիվ ԵԷԳ/0122/01/13

Նախագահող դատավոր՝ Մ.Չիչոյան

Դատավորներ՝ Ե.Գարբիդյան

Գ.Ավետիսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ՝ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԱՍՏՐՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ մեղադրող՝ Տ.ՈՒԶՈՅԱՆԻ
Ա.ԹՈՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 16-ի

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ամբաստանյալ Դավիթ Ալբերտի Սիմիդյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 238-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2013 թվականի մարտի 31-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 12112413 քրեական գործը:

2013 թվականի ապրիլի 03-ին Գ.Սիմիոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2013 թվականի ապրիլի 03-ին որոշում է կայացվել Գ.Սիմիոյանին նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու մասին:

2013 թվականի ապրիլի 08-ին Գ.Սիմիոյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2013 թվականի օգոստոսի 08-ին Գ.Սիմիոյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել, և նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2013 թվականի օգոստոսի 16-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մայիսի 12-ի դատավճռով Գ.Սիմիոյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով նա դատապարտվել է ազատազրկման՝ 3 (երեք) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ ազատազրկման՝ 2 (երկու) տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա հանցանքների համակցությամբ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Գ.Սիմիոյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման՝ 3 (երեք) տարի 6 (վեց) ամիս ժամկետով:

3. Ամբաստանյալ Գ.Սիմիոյանի պաշտպան Ա.Թորոսյանի և մեղադրող Տ.Ուզոյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մայիսի 12-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել ամբաստանյալ Գ.Սիմիոյանի պաշտպան Ա.Թորոսյանը՝ խնդրելով վճռաբեկ բողոքը մերժել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ամբաստանյալ Գ.Սիմիոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) *յրևական ժամանակ հաճախելով Երևան քաղաքի Նուբարաշենի խճուղու 7 հասցեում գրկավող «Որսորդ» սահմանափակ պա-*

յրասխանաարվությամբ ընկերության հրաչգարանին կից հյուրանոցային համալիր և նախապես տեղեկացված լինելով հրաչգարանի ճաշարանում որսորդական հրացանների պահելու մասին, զենք հափշտակելու դիտարկությամբ՝ 2013 թվականի մարտի 31-ին ժամը 00:15-ից 08:30-ն ընկած ժամանակահատվածում, իր կողմից վարվող «ՎԱԶ-2107» մակնիշի 14 ԼՍ 726 համարանիշի ավտոմեքենայով մուտք է գործել համալիրի տարածք, տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել է ճաշարանի մուտքի Եվրոպական արտադրության դուռը, սպորինի մուտք է գործել ճաշարան և զադրնի հափշտակել ՍՊԸ-ի փոխընթացի Վահան Գրիգորյանին պարկանոց, 160.000 ՀՀ դրամ արժողության ակոսափող հրազեն հանդիսացող 7,62 մմ տրամաչափի «ՕՊ ՄԿՍ» մոդելի «1216304292 Վ» համարի որսորդական ինքնալից կարաբինը, 110.000 դրամ արժողության ակոսափող հրազեն հանդիսացող 5,6 տրամաչափի «ՏՕԶ-8-01» մոդելի «ՈՒ 9213» համարի որսորդական-սպորտային ակոսափող հրացանը և Հարություն Գրիգորյանին պարկանոց՝ 280.000 դրամ արժողության 12 տրամաչափի «ՏՕԶ 34Ռ» մոդելի «ՇՌ 2857» համարի որսորդական երկփողանի հրացանը Վ. Գրիգորյանին պարձարելով 270.000 դրամի վնաս, Հ. Գրիգորյանին 280.000 դրամի վնաս՝ ընդհանուրը՝ 550.000 դրամի:

(...)

Այսպիսով, Դավիթ Միմիդյանը կատարել է հանցավոր արարք[]՝ նախարեսված ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 352-361):

6. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մայիսի 12-ի դատավճռի համաձայն՝ «Գնահատելով դատարանությանը հետազոտված բոլոր ապացույցները, (...) դատարանն ապացուցված համարեց ամբաստանյալ Դավիթ Ալբերտի Միմիդյանի կողմից հրազենների հափշտակելու և շինություն մուտք գործելու եղանակով զգալի չափի գույքի զադրնի հափշտակություն կատարելու հանգամանքները, սակայն գտնում է, որ արարքի որակման հարցում նախաքննական մարմինը իրավական սխալ եզրահանգման է եկել, որն էլ հիմք է հանդիսացել վերջինիս ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով անհիմն մեղադրանք առաջադրելու համար:

(...) ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում ամրագրված «հափշտակություն» հասկացությունը նախաքննական մարմինը սխալ է ընկալել և ամբաստանյալ Դ.Միմիդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով, այն է խոշոր չափերով հափշտակություն կատարելու համար մեղադրանք առաջադրելիս, հիմք է ընդունել հափշտակության համար ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ գլխում սահմանված գումարի չափերը, որը դատարանն անընդունելի է համարում:

(...)

Նախաքննական մարմինը Դ.Միմիդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով մեղադրանք առաջադրելիս հափշտակության չափերի հետ կապված կիրառել է անալոգիա, որն անթույլատրելի է:

Միաժամանակ, դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 23-րդ գլխում տեղ գտած «խոշոր չափ» հասկացության վերաբերյալ նշված գլխում չկա օրենսդրական կարգավորում, այն է՝ իրավական որոշակիություն [:] (...)

Դատարանը ցանկանում է անդրադառնալ նաև նախաքննական մարմնի կողմից ամբաստանյալ Գ.Միմիդյանին առաջադրված մեղադրանքի ծավալում տեղ գտած երեք հատ հրազեն հափշտակելու հանցանքին:

(...)

Համաձայն իրավաբանական գրականության մեջ տեղ գտած հասկացությունների, ինչպես նաև քրեական օրենսգրքով սահմանված նորմի, ողորկափող որսորդական հրացանը հրազեն չի հանդիսանում և ներառված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի դիսպոզիցիայում: Բնականաբար, այն չի կարող հանդիսանալ նաև ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առարկա:

Համաձայն գործում առկա փյույվների, ինչպես նաև դատաբանական փորձաքննության 02.04.2013թվ. թիվ 665 եզրակացության, տուժող Հարություն Գրիգորյանին պարկանոց «SO2 34Ռ» մոդելի «ՇՌ2857» համարի որսորդական հրացանը համարվում է ողորկափող երկփողանի հրացան, որը չի կարող դիտվել որպես հրազենի հափշտակության առարկա: Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գ.Միմիդյանի մեղադրանքի ծավալում պետք է ներառել երկու հատ փարբեր տեսակի հրազենների հափշտակության փաստը, որն այդ առումով անգամ կրկին չի կարող դիտվել որպես խոշոր չափի հափշտակություն:

(...) դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գ.Միմիդյանի կատարած արարք[ը] համապատասխանում [է] ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով (...) նախատեսված հանցագործության հատկանիշներին: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 134-135):

7. Վերաքննիչ դատարանն 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Զննության առնելով մեղադրողի վերաքննիչ բողոքի պարձառաքանություններն առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքում բացահայտված չէ, թե նույն օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում նախատեսված հանցագործության դեպքում իրավակիրառողը ինչպես պետք է որոշի զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի հափշտակության կամ շորթման դեպքում խոշոր չափը և այն որոշելն օրենսդիրը, ըստ էության, բողել է իրավակիրառողի գնահատմանը, վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին արյանի դատարանն իրավացիորեն փաստել է, որ օրենսդիրը հափշտակության գումարի չափերը նախատեսել է կոնկրետ չՀ քրեական օրենսգրքի 21-րդ գլխում նախատեսված հանցագործությունների համար՝ բացառություն կատարելով ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի համար, և եթե ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետն ընդգրկված լիներ հափշտակության չափերի

հասկացության մեջ, ապա այն նույնպես ներառված կլիներ օրենսգրքի 21-րդ գլխի բացառություններում:

Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի համարում նաև մեղադրողի վերաքննիչ բողոքի փաստարկն այն մասին, որ մեկից ավելի հրազենների հափշտակությունը չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով, այլ պետք է որակվի նույն հոդվածի 3-րդ մասով՝ որպես խոշոր չափ:

Անդրադառնալով մեղադրողի վերաքննիչ բողոքի պատճառաբանությանն առ այն, որ իրավական անորոշություն առկա է նաև «ՏՈՁ 34Ռ» մոդելի որսորդական ողորկափող հրազենը որպես ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, թե ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առարկա դիտարկելու դեպքերում, վերաքննիչ դատարանն արձանագրում է հետևյալը.

(...)

ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասում առկա բացառության փառացի մեկնաբանությունից վերաքննիչ դատարանը եզրակացնում է, որ այն հնարավորություն չի ընձեռում անձին քրեական պարասխանաարվության ենթարկել ողորկափող հրազեն ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար, հետևաբար «ՏՈՁ 34Ռ» մոդելի որսորդական հրացանը, հանդիսանալով ողորկափող երկփողանի հրացան, հնարավորություն չի ընձեռում անձին քրեական պարասխանաարվության ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածով նախատեսված հրազենի հափշտակելու համար:

Այսպիսով, վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքի պատճառաբանությունները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ դատավճիռը բեկանելու և Դավիթ Միմիդյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով վերաորակելու համար: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 3, թերթ 210-212):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոք բերած անձի պնդմամբ ինչպես Առաջին ատյանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանները թույլ են տվել դատական սխալ, այն է՝ սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը: Արդյունքում մեղադրյալի փաստացի կատարած արարքը վերաորակվել է այն հոդվածով, որով չպետք է որակվեր, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոքաբերը նշել է, որ թեև ՀՀ քրեական օրենսգիրքը հրազեն, դրան համալրող դետալներ, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շրթելու դեպքում չի սահմանում, թե որն է համարվում «խոշոր չափ», սակայն դա չի նշանակում,

որ հրազենի «խոշոր չափով» հափշտակություն լինել չի կարող: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ ՀՀ քրեական օրենսգիրքը, թեև որոշ դեպքերում բացահայտում է կոնկրետ հասկացությունների իմաստն ու բովանդակությունը (ինչպես օրինակ հափշտակությունների չափը (հոդված 175)), այնուամենայնիվ պարունակում է նաև գնահատողական կատեգորիաներ, հասկացություններ, որոնք որոշվում են իրավակիրառողի կողմից՝ գործի բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ հետազոտելու արդյունքում (օրինակ՝ խոշոր վնաս (հոդված 241) կամ ծանր հետևանքներ (հոդված 239)):

Ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները հաշվի չեն առել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առարկայի առանձնահատկությունը, մասնավորապես այն, որ հրազենի ապօրինի շրջանառությունն ունի առավել բարձր հասարակական վտանգավորություն, վտանգում է հասարակական անվտանգությանն ուղղված հարաբերություններն ու պետության ներքին անվտանգությունը և կարող է նպաստել նոր հանցագործությունների կատարմանը:

10. Անդրադառնալով «ՏՈՁ 34Ռ» մոդելի որսորդական ողորկափող հրազենը Դ.Սիմիդյանի մեղադրանքի ծավալից հանելու հանգամանքին՝ բողոքաբերը նշել է, որ Առաջին ատյանի դատարանը սխալ է մեկնաբանել քրեական օրենքը՝ ըստ էության կիրառելով օրենքի անալոգիա, որն անթույլատրելի է: Այսպես, Առաջին ատյանի դատարանը «ՏՈՁ 34Ռ» մոդելի որսորդական ողորկափող հրազենն ամբաստանյալ Դ.Սիմիդյանի մեղադրանքի ծավալից հանել է այն հիմնավորմամբ, որ այն ներառված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի դիսպոզիցիայում և հրազեն չի հանդիսանում, հետևաբար, չի կարող հանդիսանալ նաև ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առարկա: Մինչդեռ ոչ միայն դոկտրինալ աղբյուրներում, այլև դատական ակտերով հիմնավորվել է, որ ողորկափող հրազեն պահելու համար պատասխանատվությունից ազատելու նորմը դրանց հափշտակության դեպքերում կիրառելի չէ:

11. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է Դ.Սիմիդյանին առաջադրված մեղադրանքը ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետից և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետից 238-րդ հոդվածի 1-ին մասով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով վերադարձվելու մասով Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մայիսի 12-ի դատավճիռը, այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս

առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ զենք հափշտակելու (ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդված) հանցակազմի առարկայի, ինչպես նաև դրա չափերի մեկնաբանման կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու խնդիր: Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

1. Չենք հափշտակելու հանցակազմի առարկայի չափը՝ որպես հանցակազմը որակյալ դարձնող հանգամանք.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է՝ արդյո՞ք ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի իմաստով զենք հափշտակելու չափերը օրենքով սահմանված չլինելու պայմաններում ամբաստանյալ Գ.Սիմիդյանին մեղսագրված արարքը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետ) կարող է որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում ի թիվս այլնի հրազեն հափշտակելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանված է 1-ին մասով նախատեսված հանցակազմի ծանրացնող հանգամանք՝ խոշոր չափերով, իսկ 4-րդ մասի 3-րդ կետով՝ առավել ծանրացնող հանգամանք՝ առանձնապես խոշոր չափերով կատարելը:

Մեջբերված նորմերի բովանդակությունից հետևում է, որ հանցագործության առարկայի չափը նախատեսված է որպես հանցակազմը ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանք՝ հանդիսանալով դրանց օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ: Մինչդեռ վկայակոչված հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի ամբողջական բովանդակությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի իմաստով «խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» հասկացությունները բացահայտված չեն: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ գլխում առկա հափշտակության չափերի կարգավորումներին՝ դրանք կիրառելի չեն ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի նկատմամբ, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ հափշտակությունների խոշոր և առանձնապես խոշոր չափերը վերաբերում են նույն օրենսգրքի 21-րդ գլխին և 216-րդ հոդվածին:

Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված չէ, թե հրազեն հափշտակելու որ չափն է համարվում խոշոր, իսկ որը՝ առանձնապես խոշոր:

15. Այս առումով անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել: (...)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, հանցագործություն չի համարվել: (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով:

2. Քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է»:

ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով: (...)»:

Մեջբերված նորմերով սահմանված է օրինականության սկզբունքը, որի անբաժանելի տարրն է «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (*nullum crimen, nulla poena sine lege*) կանոնը: Վերջինս իր արտացոլումն է գտել ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան), այնպես էլ Վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկայում:

15.1. Այսպես, *Ս.Ռ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության և Ս.Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործերով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածում ամրագրված երաշխիքները, լինելով օրենքի գերակայության էական տարրեր, Կոնվենցիայի պաշտպանության համակարգում կայուն տեղ ունեն, և դա հատկապես ընդգծվում է այն փաստով, որ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն՝ անգամ պատերազմի կամ արտակարգ դրության ժամանակ 7-րդ հոդվածից որևէ շեղում չի թույլատրվում: Վերջինս, ելնելով իր առարկայից և նպատակից, պետք է այնպես մեկնաբանվի ու կիրառվի, որպեսզի նախատեսի կամայական մեղադրման, դատապարտման և պատժման դեմ ուղղված արդյունավետ երաշխիքներ (տե՛ս Ս.Ռ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով (C.R. v. THE UNITED KINGDOM), 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռը, զանգաստ թիվ 20190/92, կետ 32, Ս.Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով (S.W. v. THE UNITED KINGDOM), 1995 թվականի նոյեմբերի 22-ի վճիռը, զանգաստ թիվ 20166/92, կետ 34):

Կոկլինակիսն ընդդեմ Հունաստանի գործով վճռում Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսված չէ միայն նրա համար, որ ի վնաս մեղադրյալի հետադարձության կարգով քրեական օրենքի կիրառումն արգելվի: Այն ընդհանուր առմամբ ամրագրում է նաև այն սկզբունքը, որ միայն օրենքը

կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը (nullum crimen, nulla poena sine lege), ինչպես նաև այն սկզբունքը, որ քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի տարածական մեկնաբանության ենթարկվի, օրինակ՝ այն չպետք է կիրառվի անալոգիայով (տե՛ս Կոկկինակիս ընդդեմ Հունաստանի գործով (KOKKINAKIS v. GREECE), 1993 թվականի մայիսի 25-ի վճիռը, զանգատ թիվ 14307/88, կետ 52):

15.2. Քննարկվող կանոնն իր արտացոլումն է գտնել նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկայում: Մասնավորապես Վարուժան Ավերիսյանի գործով որոշմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) [Վ]նչին հանցագործություն (հանցագործություններ) կատարելու մեջ մեղավոր ճանաչելու և այդ հանցագործության (հանցագործությունների) համար պատիժ նշանակելու միակ հիմքն է կատարման պահին նրա արարքն օրենքով հանցագործություն համարվելը և այդ հանցագործության համար պատիժ նախատեսված լինելը: Ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանարվության և պատժի այլ կերպ, քան օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, կարգով և չափով: Անչք չի կարող ենթարկվել պատասխանարվության այնպիսի արարքի համար, որն իրավական որոշակիության չափանիշին բավարարող եղանակով նախատեսված չէ գործող օրենքով: Անչք չի կարող ենթարկվել նաև այնպիսի պատժի, որը նախատեսված չէ գործող օրենքով:

(...)«[Չ]կահանցագործություննպատիժ, եթեայնսահմանվածչէօրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն փայր: Այն բացարձակ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում, հետևաբար նշված սկզբունքից որևէ շեղում անթույլատրելի է» (տե՛ս Վարուժան Գազիկի Ավետիսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԳ-3/0013/01/11 որոշման 13-րդ կետը: Nullum crimen, nulla poena sine lege սկզբունքին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև Երվանդ Մելքոնյանի վերաբերյալ 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵՇԳ-0090/01/10 որոշման 14-16-րդ կետերում):

16. Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի վերը մեջբերված դիրքորոշումներից հետևում է բացարձակ կանոնն այն մասին, որ միայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը, ինչպես նաև այն, որ քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի տարածական մեկնաբանության ենթարկվի: Արարքի հանցավորությունն ու պատժելիությունը պետք է նախատեսված լինեն իրավական որոշակիության չափանիշին բավարարող օրենքով: Այս առումով Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է «օրենք» հասկացությանն առաջադրվող այնպիսի որակական չափանիշներ, ինչպիսիք են հասանելիությունը և կանխատեսելիությունը (ի թիվս այլ աղբյուրների, տե՛ս, Կանտոնին ընդդեմ Ֆրանսիայի (CANTONI v. FRANCE) գործով Եվրոպական դատարանի 1996 թվականի նոյեմբերի 15-ի վճիռ, զանգատ թիվ 17862/91, կետ 29; Է.Կ.-ն

ընդդեմ Թուրքիայի (E.K. v. TURKEY) գործով 2002 թվականի փետրվարի 7-ի վճիռ, զանգատ թիվ 28496/95, կետ 51): Որակական այս պահանջները պետք է ապահովվեն ինչպես հանցագործության, այնպես էլ դրա համար պատժի նշանակման ժամանակ (տե՛ս վերը՝ Աշորն ընդդեմ Ֆրանսիայի (ACHOUR v. FRANCE) Մեծ պալատի 2006 թվականի մարտի 29-ի որոշում, զանգատ թիվ 67335/01, կետ 41): Անձը համապատասխան դրույթի տառացի ընկալումից և, անհրաժեշտության դեպքում, դրա կապակցությամբ դատարանների տված մեկնաբանությունից պետք է հասկանա, թե որ գործողությունների և անգործության համար է քրեական պատասխանատվություն նախատեսվում և ինչ պատիժ կնշանակվի այդ գործողությունների կատարման և/կամ անգործության համար (ի թիվս այլ աղբյուրների, տե՛ս վերը վկայակոչված՝ Կանտոնի գործով որոշման 29-րդ կետը):

Միևնույն ժամանակ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածը չի կարող ընկալվել որպես դատական մեկնաբանման միջոցով քրեական պատասխանատվության կանոնների աստիճանական հստակեցման բացառում, պայմանով, եթե հետևող զարգացումը համապատասխանում է արարքի էությանը և կարող է ողջամտորեն կանխատեսելի լինել (տե՛ս, ի թիվս այլ աղբյուրների, Ստերլեցը, Կոսլերը և Կրենզն ընդդեմ Գերմանիայի (Streletz, Kessler and Krenz v. Germany) գործով 2011 թվականի մարտի 22-ի վճիռը, զանգատ թիվ 34044/96 35532/97 44801/98, կետ 50): Մատչելի և ողջամտորեն կանխատեսելի դատական մեկնաբանության բացակայությունը նույնիսկ կարող է հանգեցնել ամբաստանյալի Կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսված իրավունքի խախտում արձանագրելուն (տե՛ս Պեսսինոն ընդդեմ Ֆրանսիայի (PESSINO v. FRANCE) գործով 2006 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, զանգատ թիվ 40403/02, կետեր 35-36):

17. Վերոնշյալ դիրքորոշումներից հետևում է, որ օրենքի՝ իրավական որոշակիության չափանիշին բավարարելն առաջին հերթին օրենսդրական կարգավորման խնդիր է, իսկ դատական մեկնաբանումը լրացնող դերակատարություն ունի: Օրենսդրի խնդիրն է հնարավորինս հստակ և որոշակի սահմանել հանցավոր համարվող արարքը և դրա համար պատիժը, իսկ դատարանների խնդիրն է՝ օրենսդրի կողմից սահմանված արարքի էությանը համապատասխան մեկնաբանել նորմերը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը զարգացող հասարակական հարաբերություններին:

17.1. Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի անբաժանելի մասն են կազմում ընդհանրական և գնահատողական հասկացությունները, սակայն այդպիսի հասկացությունների կիրառումը պետք է պայմանավորված լինի առավել որոշակի հասկացությունների օգտագործման անհնարինությամբ, հակառակ դեպքում կխախտվի օրինականության սկզբունքը: Վերջինս կարող է հետևանք լինել օրենսդրի կողմից զարգացող հասարակական հարաբերություններին համապատասխան բոլոր հնարավոր իրավիճակները սահմանելու անհնարինությամբ: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքով որոշակի հանցակազմերի պարտադիր հատկանիշները բնու-

քաղաքում են «էական վնաս» (182-րդ հոդվածի 1-ին մաս, 199.1-րդ հոդվածի 2-րդ մաս, 214-րդ հոդվածի 2-րդ մաս, 276-րդ հոդված, 284-րդ հոդվածի 1-ին մաս, 287-րդ հոդվածի 1-ին մաս և այլն), «ծանր հետևանքներ» (127-րդ հոդվածի 3-րդ մաս, 128-րդ հոդվածի 3-րդ մաս, 131-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, 132-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, 132.2-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, 133-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ և մի շարք այլ հոդվածներ) հասկացություններով, որոնք իրենց բնույթով գնահատողական են, իսկ դրանց բովանդակությունը հնարավոր չէ վերացարկված սահմանել՝ պայմանավորված համապատասխան հանցագործությունների բնույթով: Նշված և այլ գնահատողական հասկացությունների բովանդակությունը ողջամտորեն կարող է որոշվել և որոշվում է դատարանի կողմից՝ կոնկրետ գործի հանգամանքների գնահատմամբ:

17.2. Արարքի հանցավորությունը սահմանող նորմերի դատական մեկնաբանման շրջանակների առումով անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նաև օրենսդրական բացի առկայության դեպքերը:

Այսպես, անդրադառնալով օրենսդրական բացի առկայության հարցին՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է. «(...) *Օրենսդրական բացը չի կարող մեխանիկորեն նույնացվել սուկ այս կամ այն եզրույթի օրենսդրորեն ամրագրված սահմանման բացակայության հետ: Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն սպահովող փարբի բացակայության կամ այդ փարբի քերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը: (...)*» (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի ապրիլի 8-ի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով թիվ ՍԳՌ-1143 որոշման, 6-րդ կետը):

ՀՀ քրեական օրենսգրքի որևէ նորմում առկա օրենսդրական բացը չի կարող վերացվել, հաղթահարվել կամ լրացվել դատական մեկնաբանման միջոցով, քանի որ օրինականության սկզբունքի անքակտելի տարրն է քրեական օրենքը տարածական մեկնաբանելու և անալոգիայով կիրառելու արգելքը: Հետևաբար նման իրավիճակն օրենսդրական կարգավորման խնդիր է:

18. Վերը շարադրված իրավական վերլուծությունից հետևում է, որ դատական մեկնաբանման շրջանակները սահմանափակված են օրինականության սկզբունքով: Այդպիսի մեկնաբանումը հնարավոր է այն դեպքում, երբ իրականացվում է օրենսդրի կողմից սահմանված իրավակարգավորման շրջանակներում, բխում է դրա էությունից և բացառում քրեական օրենքի տարածական մեկնաբանումը կամ անալոգիայով կիրառումը: Վերոգրյալից հետևում է, որ այն դեպքում, երբ հանցակազմի պարտադիր հատկանիշը սահմանող հասկացության բովանդակության բացահայտումը կախված չէ գործի կոնկրետ հանգամանքներից, կարող է սահմանվել դրանցից

վերացարկված, սակայն սահմանված չէ օրենքով, դատարանը, չունենալով գնահատման օբյեկտիվ չափանիշներ, գրկված է դրանք մեկնաբանելու հնարավորությունից: Նման դեպքերում օրենքը չի համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին, հետևաբար դրա հիման վրա անձին դատապարտելը կհանգեցնի «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնի խախտման:

19. «խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» հասկացություններն ինքնին ենթադրում են չափելի երևույթներ: Դրանք, օգտագործվելով քանակի, կշռի կամ արժեքի հատկանիշներով օժտված առարկաները բնութագրելիս, պայմանավորված չեն գործի կոնկրետ հանգամանքներով և օբյեկտիվորեն կարող են սահմանվել (և սահմանվում են) դրանցից վերացարկված: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի մի շարք նորմերում (ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդված, 158-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ, գլուխ 21 և այլն) օգտագործելով «խոշոր չափ» և/ կամ «առանձնապես խոշոր չափ» եզրույթները օրենսդիրը միաժամանակ հստակ սահմանել է, թե կոնկրետ առարկայի որ չափն է համարվում խոշոր, որը՝ առանձնապես խոշոր: Հակառակ դեպքում իրավակիրառ մարմնի կողմից քննարկվող հասկացությունների կիրառումը կհանգեցնի կամայական մեղադրման, դատապարտման և պատժման, քանի որ գործի հանգամանքներով պայմանավորված չլինելու դեպքում բացակայում են իրավակիրառ մարմնի, այդ թվում՝ դատարանի կողմից այդ հասկացությունների բովանդակությունը որոշելու օբյեկտիվ չափանիշները:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքում նույն օրենսգրքի 238-րդ հոդվածի իմաստով «խոշոր չափ» և «առանձնապես խոշոր չափ» հասկացությունների բովանդակությունը սահմանված չլինելը օրենսդրական բաց է, որի հետևանքով ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը և 4-րդ մասի 3-րդ կետը չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին (բավարար չափով կանխատեսելի չեն): Արդյունքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը կամ 4-րդ մասի 3-րդ կետը չեն կարող հանդիսանալ անձին դատապարտելու հիմք:

20. Մույն գործի փաստերից հետևում է, որ Գ.Միմիդյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով այն բանի համար, որ նա, տևական ժամանակ հաճախելով Երևան քաղաքի Նուբարաշենի խճուղու 7 հասցեում գտնվող «Որսորդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հրաձգարանին կից հյուրանոցային համալիր և նախապես տեղեկացված լինելով հրաձգարանի ճաշարանում որսորդական հրացանների պահելու մասին, գեներ հափշտակելու դիտավորությամբ՝ 2013 թվականի մարտի 31-ին՝ ժամը 00:15-ից 08:30-ն ընկած ժամանակահատվածում, իր կողմից վարվող «ՎԱՁ-2107» մակնիշի 14 LU 726 համարանիշի ավտոմեքենայով մուտք է գործել համալիրի տարածք, տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել է ճաշարանի մուտքի

Եվրոպական արտադրության դուռը, ապօրինի մուտք է գործել ճաշարան և գաղտնի հափշտակել ՄՊԸ-ի փոխսնտրեն Վահան Գրիգորյանին պատկանող, 160.000 ՀՀ դրամ արժողության ակոսավող հրազեն հանդիսացող 7,62 մմ տրամաչափի «ՕՊ ՄԿՍ» մոդելի «1216304292 Վ» համարի որսորդական ինքնալից կարաբինը, 110.000 դրամ արժողության ակոսավող հրազեն հանդիսացող 5,6 տրամաչափի «ՏՕԶ-8-01» մոդելի «ՈՒ 9213» համարի որսորդական-սպորտային ակոսավող հրացանը և Հարություն Գրիգորյանին պատկանող՝ 280.000 դրամ արժողության 12 տրամաչափի «ՏՕԶ 34Ո» մոդելի «ՇՈ- 2857» համարի որսորդական երկփողանի հրազեն՝ Վ.Գրիգորյանին պատճառելով 270.000 դրամի վնաս, Հ.Գրիգորյանին 280.000 դրամի վնաս՝ ընդհանուրը՝ 550.000 դրամի (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանը գտել է, որ արարքի որակման հարցում նախաքննական մարմինը իրավական սխալ եզրահանգման է եկել, որն էլ հիմք է հանդիսացել վերջինիս ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով անհիմն մեղադրանք առաջադրելու համար: Մասնավորապես նշել է, որ նախաքննական մարմինը Գ.Սիմիդյանին ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով մեղադրանք առաջադրելիս հափշտակության չափերի հետ կապված կիրառել է անալոգիա, որն անթույլատրելի է: Դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 23-րդ գլխում տեղ գտած «խոշոր չափ» հասկացության վերաբերյալ նշված գլխում չկա օրենսդրական կարգավորում, այն է՝ իրավական որոշակիություն (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն փաստել է, որ օրենսդիրը հափշտակության գումարի չափերը նախատեսել է կոնկրետ ՀՀ քրեական օրենսգրքի 21-րդ գլխում նախատեսված հանցագործությունների համար՝ բացառություն կատարելով ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի համար, և եթե ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետն ընդգրկված լիներ հափշտակության չափերի հասկացության մեջ, ապա այն նույնպես ներառված կլիներ օրենսգրքի 21-րդ գլխի բացառություններում: Այսպիսով, վերաքննիչ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոքի պատճառաբանությունները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ դատավճիռը բեկանելու և Դավիթ Սիմիդյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով վերաորակելու համար (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

21. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով 14-19-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի իմաստով զենք հափշտակելու չափերը օրենքով սահմանված չլինելու պայմաններում ամբաստանյալ Գ.Սիմիդյանին մեղսագրված արարքը (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը) չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով:

Հետևաբար ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ Գ.Միմիդյանին մեղսագրված արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով հիմնավորված են:

II. Հրագենը՝ որպես ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առարկա.

22. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է՝ արդյո՞ք «ՏՕՁ 34Ռ» մոդելի որսորդական հրագենը չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առարկա:

23. ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հրագեն, դրան համալրող դետալներ, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելը կամ շորթելը՝ պատժվում է (...):»:

Մեջբերված նորմի վերլուծությունից հետևում է, որ դրանով նախատեսված հանցակազմի անմիջական օբյեկտը հրագենի և հոդվածում նշված այլ առարկաների շրջանառության համար սահմանված կարգը խախտելու հետ կապված՝ անձի և հասարակության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Լրացուցիչ օբյեկտ են հանդիսանում սեփականության հարաբերությունները:

Հանցակազմի առարկա են հրագենը, ինչպես նաև հոդվածում նշված մյուս առարկաները (հրագենին համալրող դետալները, ռազմամթերքը, պայթուցիկ նյութերը կամ պայթուցիկ սարքերը):

24. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Իրավական ակտում պետք է կիրառվեն նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրաժանոք հասկացություններ կամ տերմիններ: (...):»:

Հրագենի հասկացությունը սահմանված է «Ձենքի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես դրա 1-ին հոդվածի բ) կետի համաձայն՝ «հրագեն[ը]՝ վառողի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին՝ նպատակաուղղված շարժում ստացած զնդակի միջոցով տարածության վրա գտնվող նշանակետի մեխանիկական խոցման համար նախատեսված զենք[ն է], որի հիմնական բաղկացուցիչ մասերն են՝ փողը, փակադակը, թմբուկը, իրանը, փողի պահպանակը...»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»:

25. Վերը մեջբերված նորմերի բովանդակությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առարկա է հանդիսանում, ի թիվս այլնի, վառողի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին՝ նպատակաուղղված շարժում ստացած զնդակի միջոցով տարածության վրա գտնվող նշանակետի մեխանիկական խոցման

համար նախատեսված ցանկացած զենք, որի հիմնական բաղկացուցիչ մասերն են՝ փողը, փակադակը, քմբուկը, իրանը, փողի պահպանակը: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առարկա է ցանկացած տեսակի հրազեն, առանց որևէ բացառության:

26. Սույն գործի փաստերից հետևում է, որ ամբաստանյալ Գ.Միմիդյանին մեղադրանք է առաջադրվել ակոսափող հրազեն հանդիսացող 7,62 մմ տրամաչափի «ՕՊ ՍԿՍ» մոդելի «1216304292 Վ» համարի որսորդական ինքնալից կարաբին, ակոսափող հրազեն հանդիսացող 5,6 տրամաչափի «ՏՕՁ-8-01» մոդելի «ՌԻ 9213» համարի որսորդական-սպորտային ակոսափող հրացան, «ՏՕՁ 34Ռ» մոդելի «ՇՌ- 2857» համարի որսորդական երկփողանի հրազեն հափշտակելու համար (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է, որ «(...) Համաչայն իրավաբանական գրականության մեջ տեղ գտած հասկացությունների, ինչպես նաև քրեական օրենսգրքով սահմանված նորմի, ողորկափող որսորդական հրացանը հրազեն չի հանդիսանում և ներառված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի դիսպոզիցիայում: Բնականաբար, այն չի կարող հանդիսանալ նաև ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առարկա:

Համաչայն գործում առկա տվյալների, ինչպես նաև դատաբանական փորձաքննության 02.04.2013թվ. քիվ 665 եզրակացության, տուժող Հարություն Գրիգորյանին պարկանող «ՏՕՁ 34Ռ» մոդելի «ՇՌ-2857» համարի որսորդական հրացանը համարվում է ողորկափող երկփողանի հրացան, որը չի կարող դիտվել որպես հրազենի հափշտակության առարկա: Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գ.Միմիդյանի մեղադրանքի ծավալում պետք է ներառել երկու հատ տարբեր տեսակի հրազենների հափշտակության փաստը, որն այդ առումով անգամ կրկին չի կարող դիտվել որպես խոշոր չափի հափշտակություն» (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է. «(...) ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասում առկա բացառության փառացի մեկնաբանությունից վերաքննիչ դատարանը եզրակացնում է, որ այն հնարավորություն չի ընձեռում անչին քրեական պարասխանավորության ենթարկել ողորկափող հրազեն շեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար, հետևաբար «ՏՕՁ 34Ռ» մոդելի որսորդական հրացանը, հանդիսանալով ողորկափող երկփողանի հրացան, հնարավորություն չի ընձեռում անչին քրեական պարասխանավորության ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածով նախատեսված հրազեն հափշտակելու համար: (...)» (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

27. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերը վերլուծելով 23-25-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների

հետևություններն այն մասին, որ «ՏՕՁ 34Ո» մոդելի որսորդական հրազենը չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առարկա, հիմնավորված չեն, քանի որ «ՏՕՁ 34Ո» մոդելի որսորդական հրազենը հրազենի տեսակ է, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով հրազենի տեսակի առումով որևէ բացառություն նախատեսված չէ: Հետևաբար «ՏՕՁ 34Ո» մոդելի որսորդական հրազենը հանդիսանում է ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առարկա:

27.1. Ինչ վերաբերում է ստորադաս դատարանների այն պատճառաբանությանը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասը հնարավորություն չի ընձեռում անձին քրեական պատասխանատվության ենթարկել ողորկափող հրազեն ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար, հետևաբար «ՏՕՁ 34Ո» մոդելի որսորդական հրացանը, հանդիսանալով ողորկափող երկփողանի հրացան, հնարավորություն չի ընձեռում անձին քրեական պատասխանատվության ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածով նախատեսված հրազեն հափշտակելու համար՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ և 238-րդ հոդվածներով նախատեսված են առանձին ինքնուրույն հանցակազմեր, որոնցից յուրաքանչյուրը սահմանում է իր առարկան, որոնք չեն նույնանում և չեն պայմանավորում միմյանց: ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով բացառություն է նախատեսված ողորկափող հրազենի տեսակի համար, որպիսի բացառությունը բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածում (ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության առարկայի մեկնաբանության մասին տե՛ս, *mutatis mutandis*, Երվանդ Մելքոնյանի վերաբերյալ 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵՇԴ/0090/01/10 որոշումը): Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առարկաների շրջանակի մեջ ներառված են հրազենի բոլոր տեսակները, բացի ողորկափող հրազենից: Քննարկվող հանցագործության առարկաների մեջ ողորկափող հրազենը չի մտնում օրենքի ուղղակի մատնանշման ուժով: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի մնացած հոդվածները (236-239-րդ) նույնպես այդպիսի բացառություն չեն նախատեսում: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը մեկ անգամ ևս ընդգծում է, որ քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է (տե՛ս սույն որոշման 14-16-րդ կետը):

28. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման հիման վրա ողորկափող հրազենի հափշտակությունը մեկնաբանելով որպես ոչ հանցավոր, քրեական օրենքը կիրառել են անալոգիայով: Արդյունքում՝ ստորադաս դատարանները, խախտելով օրինականության սկզբունքը, սխալ են մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 238-րդ հոդվածները:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս

դատարանները սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ են տվել նյութական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է գործի ելքի վրա: Նշված խախտումը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Գավիթ Ալբերտի Միմիդյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասով և 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մայիսի 12-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

50.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ԵԱԶԳ/0031/11/14
Նախագահող դատավոր՝ Ա.Պետրոսյան

ԵԱԶԳ/0031/11/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈԳՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ՝ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 16-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Բադալյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի մարտի 13-ին «Էքսպերտ Լաբորատորիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Լ.Ավագյանը դիմում է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն՝ խնդրելով Վարուժան Չիթչյանին ենթարկել քրեական պատասխանատվության սուտ մատնություն կատարելու համար:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթուն բաժնի հետաքննիչի պաշտոնակատար Հ.Հակոբյանի 2014 թվականի մարտի 29-ի որոշմամբ դիմող Լ.Ավագյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է Վ.Չիթչյանի արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2. Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննիչի պաշտոնակատար Հ.Հակոբյանի 2014 թվականի մարտի 29-ի որոշման դեմ դիմող Լ.Ավագյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի դատախազություն:

Երևան քաղաքի դատախազի տեղակալ Ս.Առաքելյանը 2014 թվականի մայիսի 5-ի գրությամբ Լ.Ավագյանին հայտնել է, որ նա բաց է թողել որոշման բողոքարկման յոթնօրյա ժամկետը:

3. 2014 թվականի հունիսի 6-ին դիմող Լ.Ավագյանը բողոք է ներկայացրել Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2014 թվականի մարտի 29-ի որոշումը:

Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 19-ի որոշմամբ դիմող Լ.Ավագյանի բողոքը մերժվել է:

4. Դիմող Լ.Ավագյանի ներկայացուցիչ Ա.Մնացականյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, բեկանել է Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 19-ի որոշումը և վերացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2014 թվականի մարտի 29-ի որոշումը:

5. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Բադալյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի նոյեմբերի 6-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2014 թվականի մարտի 29-ի որոշման համաձայն՝ «(...) նախապարտադրված նյութերով պարզվել և հիմնավորվել է, որ Վ.Չիթչյանի և վերը նշված կազմակերպության միջև առկա վեճը դատական փորձեր արյանների կողմից բազմիցս ենթարկվել է քննության: Բացի նշված փաստը, Վ.Չիթչյանի կողմից մարտնչական փորձագետի թիվ 100209 եզրակացության կեղծ լինելու հանգամանքի, ինչպես նաև «Էքսպերտ Լաբորատորիա» ՍՊԸ-ի աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումների խսկությունը ստուգվել է ոստիկանության Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժնում հարուցված թիվ 09123810 քր. գործով կատարված նախաքննությամբ, որի վերաբերյալ առկա է 08.06.2011թ-ին կայացված քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին չվերացված որոշում:

Ինչ վերաբերում է Վ.Չիթչյանի կողմից «Իրավունք» օրաթերթին և «Արմլուր» լրատվական կայքին փոխանցված, իրականությանը չհամա-

պատրաստված տեղեկություններին (...), սպա Վ.Չիթչյանը նման կերպ փորձել է փարսածել իր դժգոհությունը, իսկ գործող քր. օր-ի 333-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմն առկա է այն դեպքում, երբ երևակայական հանցագործության կամ հանցագործի մասին տեղեկությունները հաղորդվում են այն պետական մարմիններին, որոնք պարտավոր են հանցագործության մասին իրենց հայրենի դարձած փաստը հանձնել քրեական գործի հարուցման իրավունք ունեցող մարմիններին: Այլ մարմիններին նույնաբովանդակ տեղեկություններ հաղորդելը քննարկվող հանցակազմը չի առաջացնում և համապատասխան հատկանիշների առկայության դեպքում որակվում է որպես գրապարտություն, որը ՀՀ գործող քր. օր-ով նախատեսված հանցագործություն չի համարվում» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 8):

7. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2014 թվականի մարտի 29-ի որոշման դեմ դիմող Լ.Ավագյանի բողոքի կապակցությամբ Երևան քաղաքի դատախազի տեղակալը 2014 թվականի մայիսի 5-ի գրությամբ վերջինիս հայտնել է. «(...) Չեր բողոքի քննարկման արդյունքում համապատասխան որոշում չի կայացվել, քանի որ Դուք բաց եք թողել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերադաս դատախազին բողոքարկելու ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված 7-օրյա ժամկետը, քանի որ որոշումը սրացել էր 04.04.2014թ., սակայն այն բողոքարկել էր 28.04.2014թ.» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 12):

8. Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վ.Չիթչյանի՝ «Էքսպերտ Լաբորատորիա» ՍՊԸ-ի կողմից կեղծ եզրակացություն փախու հանգամանքի վերաբերյալ հաղորդման հիման վրա հարուցված քրեական գործը կարճվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով, այսինքն՝ հերքվել է «Էքսպերտ Լաբորատորիա» ՍՊԸ-ի կողմից կեղծ եզրակացություն փախու հանգամանքը:

Ինչ վերաբերում է Վ.Չիթչյանի կողմից սույր մատնություն կատարելու մասին Լ.Ավագյանի հաղորդմանը, սպա դատարանը գրնում է, որ նախապարտապարտված նյութերով չի հիմնավորվել Վարուժան Չիթչյանի կողմից սույր մատնություն կատարելու հանգամանքը, ինչի վերաբերյալ հետաքննության մարմինը կայացրել է պարճառաբանված որոշում» (տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 29):

9. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ «(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ թեև քրեական վարույթն իրականացնող մարմինը հաղորդման առթիվ հարուցված քրեական գործի վարույթը կարճել է՝ «Էքսպերտ Լաբորատորիա» ՍՊ ընկերության աշխատակիցների արարքում հանցակազմի բացակայության պարճառաբանությամբ, սակայն քննության առարկա չի դարձրել Վ.Չիթչյանի կողմից ակնհայտ սույր մատնություն կատարելու հարցը, այն դեպքում, երբ ակնառու է եղել այն փաստը, որ «Էքսպերտ Լաբորատորիա» ՍՊ ընկերության կողմից տրված

շինարարապրեհինիկական փորձաքննության եզրակացությունը տարբեր դատական արյանների կողմից ակնհայտ կեղծ ճանաչելու մասով կարճվել է:

(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ առերևույթ հանցագործության մասին քրեական գործի հարուցման իրավունք ունեցող մարմնին Վ.Չիթչյանի կողմից հաղորդում ներկայացվելու փաստի առկայության պայմաններում առաջին արյանի դատարանը հանգել է սխալ հետևության, գրնելով, որ հետաքննիչի պաշտոնակատար Հ.Հակոբյանի 29.03.2014թ. որոշումն օրինական է և հիմնավոր» (տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթ 38-39):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

10. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների և սկզբունքների պահանջները: Բացի այդ, բողոքարկվող դատական ակտն առերևույթ հակասում է Վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված թիվ ԵԿԳ/0081/11/09, ԳԳ.5/0022/01/10 ԵԿԳ/0044/11/13, ԵԿԳ/0503/06/10 որոշումներին:

Բողոքի հեղինակը փաստարկել է, որ քրեական գործ հարուցելու պարտականություն սահմանելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումն ակնհայտ անհիմն է և ապօրինի: Վերաքննիչ դատարանը, քննարկելով Վ.Չիթչյանի կողմից դեռևս 2010 թվականին հաղորդում տալու դեպքով հանցակազմի առկայության հարցը և վարույթն իրականացնող մարմնի համար սահմանելով քրեական գործ հարուցելու պարտականություն, հաշվի չի առել այն հանգամանքը, որ տվյալ գործով վաղեմության ժամկետն անցել է:

Բողոքաբերը կարծում է նաև, որ «Էքսպերտ Լաբորատորիա» ընկերության կողմից կեղծ եզրակացություն տալու մասին տեղեկությունները լրատվական կայքերին տրամադրելու վերաբերյալ հաղորդման հիման վրա կայացված դատավարական որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունն ստուգելիս Վերաքննիչ դատարանն իրավասու չէր անդրադառնալ Վ.Չիտչյանի կողմից 2010 թվականին նույն դեպքի վերաբերյալ ՀՀ ոստիկանության համապատասխան բաժնում հաղորդում տալու փաստին:

11. Բողոք բերած անձը նշել է, որ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակներից՝ դրանով իսկ խախտելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, քանի որ չի գործել որպես «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»:

12. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը հանգել է այն եզրահանգման, որ քրեական գործի վարույթը բացառող հանգամանքների առկայության պայմաններում քրեական վարույթ կամ քրեական հետապնդում իրականացնելու պարտականություն սահմանելու մասին դատական ակտն ենթակա է անվերապահ բեկանման: Ուստի խնդրել է բեկանել Վերաքննիչ

դատարանի 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 19-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. դիմող Լ.Ավագյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելով՝ Վերաքննիչ դատարանը դո՞ւրս է եկել արդյոք իր լիազորությունների շրջանակից:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

(...)

3. Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով որոշման պարճենն սրանալու պահից 7 օրվա ընթացքում:

4. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա վերադաս դատախազը այն սրանալու պահից 7 օրվա ընթացքում վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար այն ուղարկում է քննիչին կամ հաստատում է քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը:

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավորված չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, փուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

15. Մեջբերված քրեադատավարական նորմերը Վճռաբեկ դատարանը համադրված վերլուծության է ենթարկել Ա Գրիգորյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում հայտնելով այն մասին, որ «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը, սահմանելով հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դատական բողոքարկման կարգը, ի թիվս

դատարան դիմելու այլ պայմանների, իրավաչափորեն ներառում է նաև իրավունքների պաշտպանության արտադարական միջոցն սպառելու պայման: Մինչդարակալական վարույթն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականությունը վիճարկելու փոխառ կարգը՝ որպես ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրացման միջոց, հստակ սահմանված է օրենքով, որևէ բացառություն չի նախատեսում և նպատակ է հետապնդում քրեական դատավարության մասնակիցների և շահագրգիռ այլ անչանց համար առավել արդյունավետ ձևով սպահովել դատական պաշտպանության իրավունքի անխափան իրականացումը:

(...) Վճռաբեկ դատարանը գրնում է, որ որպես մինչդարակալական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կառուցակարգի գործադրման նախապայման դատախազական հսկողության սահմանումը պայմանավորված է անձի իրավունքների և ազատությունների անօրինական կամ անհամաչափ սահմանափակումները հնարավորինս կարճ ժամանակահատվածում և արդյունավետ վերացնելու օրենսդրի կամքով: Բացի այդ, մինչդարակալական վարույթի օրինականության երաշխավորմանն ուղղված հսկողական և վերահսկողական փոխառ միջոցների զուգակցումը հետապնդում է մեկ այլ իրավաչափ նպատակ. անչանց շահերի քրեաիրավական պաշտպանությունն իրականացնելով արտադարական կառուցակարգի գործադրմամբ՝ հնարավորինս սահմանափակել դատական գործիքակազմի ներգրավումը և զերծ մնալ ավելորդ հանրային-իրավական միջոցների վատնումից:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը չի բովանդակում պահանջ առ այն, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչև դատական կարգով բողոքարկելը պետք է բողոքարկվի դատախազին, սպա Վճռաբեկ դատարանն արչանագրում է, որ վերոնշյալ նորմի բովանդակության բացահայտման համար անհրաժեշտ է հաշվի առնել քրեական դատավարության օրենսգրքի կոնկրետ գլխում կարգավորվող հասարակական հարաբերությունների ուղղվածությունը: Այսպես՝ «Քրեական գործ հարուցելը» վերաբառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխով (որտեղ զեպրեղված է 185-րդ հոդվածը) կարգավորվում է քրեական գործ հարուցելու դատավարական կարգը և առավելապես ուղղված է քրեական գործ հարուցելու պարպականություն ունեցող սուբյեկտներին՝ հետաքննության մարմնին, քննիչին և դատախազին, մինչդեռ «Դատական վերահսկողությունը մինչդարակալական վարույթի նկատմամբ» վերաբառությամբ 39-րդ գլխով կարգավորվում է մինչդարակալական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրականացման դատավարական կարգը, որի իրականացման միակ սուբյեկտը դատարանն է: Հենց այս գլխում էլ զեպրեղված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը, որն առանց բացառության նախատեսում է, որ մինչդարակալական վարույթն իրականացնող

մարմինների որոշումների և գործողությունների օրինական և հիմնավորված չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել դատախազին բողոքարկվելու և ներկայացված բողոքին վերջինիս կողմից բավարարում չտրվելու դեպքում միայն: Իր հերթին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ «քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով»:

(...)

Հիմք ընդունելով (...) շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը չի կարող հանդիսանալ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա, եթե քրեական դատավարության մասնակցի կամ այլ շահագրգիռ անձի կողմից չի պահպանվել նշված որոշումը վիճարկելու արտադատական (տրվյալ դեպքում՝ դատախազին բողոքարկելու) կարգը» (տե՛ս Արմեն Գրիգորյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԿԳ/0125/11/13 որոշման 18-21-րդ կետերը):

16. Վերահաստատելով Ա. Գրիգորյանի գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը նախևառաջ պետք է պարզի, թե բողոքաբերի կողմից պահպանվել են արդյոք այդ որոշման կամ գործողության բողոքարկման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական ընթացակարգերը: Վերոնշյալ հանգամանքները պարզելուց հետո միայն դատարանը կարող է անդրադառնալ ներկայացված բողոքի հիմքերին, այն է՝ օրենքով նախատեսված համապատասխան դրույթներով հիմնավորված բողոքաբերի փաստարկներին: Ուստի, եթե դատարանը պարզում է, որ բողոք բերած անձի կողմից չեն պահպանվել քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգային պահանջները, ապա, առանց անդրադառնալու բողոքի հիմքերին, պետք է մերժի այն:

Այսպիսով, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական բողոքարկման առարկա անմիջականորեն կարող են հանդիսանալ քրեական հետապնդման մարմինների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները, եթե դրանք չեն բավարարվել դատախազի կողմից՝ անկախ նրանից, թե բողոքարկման արդյունքում դատախազի կողմից քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված ակտեր են կայացվել, թե դրսևորվել է անգործություն: Ըստ այդմ, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը չի կարող հանդիսանալ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա, եթե այդ որոշումը չի վիճարկվել արտադատական կարգով, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված 7-օրյա ժամկետում չի բողոքարկվել

դատախազին (տե՛ս Արմեն Գրիգորյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԿԳ/0125/11/13 որոշման 15-րդ կետը):

17. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթուն բաժնի հետաքննիչի պաշտոնակատար Հ.Հակոբյանի 2014 թվականի մարտի 29-ի որոշմամբ դիմող Լ.Ավագյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է Վ.Չիթչյանի արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (տե՛ս սույն որոշման 1-ին և 6-րդ կետերը):

Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ դիմող Լ.Ավագյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի դատախազություն: Երևան քաղաքի դատախազի տեղակալը 2014 թվականի մայիսի 5-ի գրությամբ դիմող Լ.Ավագյանին հայտնել է, որ բողոքի քննարկման արդյունքում համապատասխան որոշում չի կայացվել, քանի որ բաց է թողնվել վիճարկվող որոշումը վերադաս դատախազին բողոքարկելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված յոթնօրյա ժամկետը, այն է՝ Լ.Ավագյանը որոշումը ստացել է 2014 թվականի ապրիլի 4-ին, սակայն այն բողոքարկել է 2014 թվականի ապրիլի 28-ին (տե՛ս սույն որոշման 2-րդ և 7-րդ կետերը):

Դիմող Լ.Ավագյանի բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ Առաջին ատյանի դատարանը մերժել է բողոքը՝ արձանագրելով, որ նախապատրաստված նյութերով չի հիմնավորվել Վ.Չիթչյանի կողմից սուտ մատնություն կատարելու հանգամանքը, ինչի վերաբերյալ հետաքննության մարմինը կայացրել է պատճառաբանված որոշում (տե՛ս սույն որոշման 3-րդ և 8-րդ կետերը):

Դիմողի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը բեկանել է Առաջին ատյանի դատարանի որոշումը և վերացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննիչի որոշումը: Վերաքննիչ դատարանն իր դատական ակտը հիմնավորել է նրանով, որ քրեական գործի հարուցման իրավունք ունեցող մարմնին Վ.Չիթչյանի կողմից հաղորդում ներկայացվելու փաստի առկայության պայմաններում առաջին ատյանի դատարանը հանգել է սխալ հետևության՝ գտնելով, որ հետաքննիչի որոշումն օրինական է և հիմնավոր (տե՛ս սույն որոշման 4-րդ և 9-րդ կետերը):

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-16-րդ կետերում շարադրված նորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դիմող Լ.Ավագյանի կողմից չի պահպանվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը բողոքարկելու արտադատական կարգը: Մասնավորապես, վիճարկվող որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված 7-օրյա ժամկետի խախտմամբ է բողոքարկվել դատախազին: Այս պայմաններում քրեական գործի հարուցումը

մերժելու մասին որոշումը չէր կարող հանդիսանալ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա, իսկ ստորադաս դատարանները պարտավոր էին մերժել դրա դեմ բերված բողոքը՝ առանց անդրադառնալու դրա հիմքերին: Մինչդեռ ինչպես Առաջին ատյանի դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանն ըստ էության քննության են առել դիմող Լ.Ավագյանի բողոքը, քննարկման առարկա դարձրել բողոքաբերի փաստարկները՝ դուրս գալով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից:

19. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դիմող Լ.Ավագյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելով՝ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից: Արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով նախատեսված օրինականության սկզբունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատարանական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անչաևս՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...)»:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է ճիշտ որոշում կայացնելու վրա, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ, 406-րդ և 419-րդ հոդվածների հիման վրա հիմք է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշումը բեկանելու համար:

20. Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, անտեսելով այն, որ դիմողը չի պահպանել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում բողոքարկելու դատավարական կարգը, քննության է առել Լ.Ավագյանի բողոքը և մերժել այն: Այլ խոսքով՝ Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործը ճիշտ լուծող դատական ակտ, սակայն սխալ է պատճառաբանել այն:

Ուստի հաշվի առնելով արդարադատության արդյունավետության շահը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է օրինական ուժի մեջ թողնել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 19-ի որոշումը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

21. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հնարավոր չի համարում անդրադառնալ վճռաբեկ բողոքի հեղինակի կողմից բարձրացված մյուս հարցերին (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող «Էքսպերտ Լաբորատորիա» ՍՊԸ-ի տնօրեն Լ.Ավագյանի բողոքի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի օգոստոսի 14-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 19-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

51.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության

ԵՄԳ/0027/01/14

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Քրեական գործ թիվ ԵՄԳ/0027/01/14

Նախագահող դատավոր՝ Մ.Արղամանյան

ատավորներ՝ Կ.Ղազարյան

Գ.Սելիք-Սարգսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
պաշտպան Ա.ԾԱՏԻՆՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 16-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Գառնիկ Սեյրանի Գալստյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշման դեմ ամբաստանյալ Գ.Գալստյանի պաշտպան Ա.Ծատինյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը

1. 2014 թվականի հունվարի 24-ին ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62201414 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2014 թվականի փետրվարի 12-ի որոշմամբ Գառնիկ Սեյրանի Գալստյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով:

2014 թվականի մարտի 24-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետև նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 13-ի դատավճռով Գ. Գալստյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 9 (ինը) ամիս ժամկետով:

3. Ամբաստանյալ Գ. Գալստյանի պաշտպան Ա. Ծատինյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի հունիսի 13-ի դատավճիռը:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Գ. Գալստյանի պաշտպան Ա. Ծատինյանը:

Վճարելի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ վճարելի բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

5. Ամբաստանյալ Գ. Գալստյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «(...) [նա], ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնում սովորելու ընթացքում, կրելով ոստիկանության կրպակներ սերժանտի կոչում, քննությանը չպարզված հանգամանքներում ապօրինի ձեռք է բերել և իր ժամանակավոր բնակության վայրում՝ Երևան քաղաքի Ծ. Բասկովի պողոտայի 24/1 հասցեում տեղակայված վազոն-տրակում ապօրինի պահել է ինքնաշեն եղանակով պատրաստված ակոսափող հրազեն հանդիսացող արթնանակ (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 83-84):

6. 2014 թվականի հունվարի 13-ի թիվ 16-14-0040 օպերատիվ հաղորդագրության քարտի համաձայն՝ «(...) հունվարի 12-ին ժ. 17.30-ին իրացնելով սրացված օպերատիվ տվյալները [ոստիկանության Մալաթիայի բաժնի աշխատակիցների] պահանջով Ծ. Բասկովի պողոտայի թիվ 24/1 հասցեում գտնվող վազոն-տրակում ժամանակավոր բնակվող Գալստյանը (...) ոստիկանության ծառայողների մատնանշած նույն վազոն-տրակի փայտե միջնաստիկի վերևի հարվածից ներկայացրել է առանց գործարանային համարի և գրառման, վարդագույն սրբիչի մեջ փաթաթված, իր կողմից ապօրինի պահվող անհայտ տիպի արթնանակ՝ դատարկ պահուսակով: Վերջինս հայտարարել է, որ նշված զենքն ինքը բերել է Լոռու մարզի

Ալավերդի քաղաքի Չորսավար Անդրանիկի փողոցի թիվ 32/2 տան նկուղից, որտեղ բնակվում է իր պապը: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 4)

7. Առաջին առյուծի դատարանի 2014 թվականի հունիսի 13-ի դատավճռի համաձայն՝ « (...) դատարանը, հետազոտելով դատաքննության ընթացքում չենք բերված ապացույցները, վերլուծելով և գնահատելով դրանք իրենց համակցությամբ, ապացուցված է համարում, որ ամբաստանյալ Գառնիկ Սեյրանի Գալստյանը բնությունը չպարզված հանգամանքներում ապօրինի չենք է բերել և իր ժամանակավոր բնակության վայրում՝ Երևան քաղաքի Ծ.Բասկովի պողոտայի 24/1 հասցեում տեղակայված վազոն-տնակում ապօրինի պահել է ինքնաշեն եղանակով պատրաստված, ակոսափող հրագեն հանդիսացող արթնանակ, որը 2014 թվականի հունվարի 12-ին հայրնաբերվել է ուրիկանության աշխատակիցների կողմից:

(...) Որպես ամբաստանյալի պատասխանատվությունը և պարիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի է առնում այն, որ վերջինս երիտասարդ է, նախկինում դատապարտված չի եղել և բնութագրվում է դրական:

Ամբաստանյալի պատասխանատվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքներ չկան:

Կատարած արարքի համար ամբաստանյալ Գառնիկ Սեյրանի Գալստյանն ենթակա է պարժի: Պարիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում ինչպես ամբաստանյալի կողմից կատարված հանցագործության բնույթն և հասարակական վրանգավորության աստիճանը, պատասխանատվությունը և պարիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, այնպես էլ նրա անչը:

(...)

Վերը նշված հանգամանքները հաշվի առնելով՝ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Գառնիկ Սեյրանի Գալստյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով պետք է պարիժ նշանակել ազատագրկման շեղով» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 88-89):

8. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշման համաձայն՝ « (...) Համաձայն 12.01.2014 թվականին կազմված արչանագրության, Գառնիկ Գալստյանի կողմից ուրիկանության աշխատակիցներին արթնանակ ներկայացնելը կամովին չի եղել, նրան մի քանի անգամ առաջարկվել է հանձնել արթնանակը, սակայն սկզբից այն չի ներկայացրել՝ ստելով, թե արթնանակ չունի, հետո հայրնել է, թե իբր այն ներել է Երևանյան լիճը և արթնանակը ներկայացրել է միայն այն ժամանակ, երբ ուրիկաններն ասել են, որ գիտեն, թե որտեղ է այն պահվում:

(...)

Այսպիսով, դատաքննությամբ և գործով չենք բերված ապացույցներով վերաքննիչ դատարանը հաստատված է համարում, որ Գառնիկ Գալստյանը ապօրինաբար չենք է բերել և պահել է ինքնաշեն եղանակով պատրաստված,

ակուսափող հրազեն հանդիսացող արքանակ, այսինքն՝ նրա արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ճիշտ է որակված, իսկ պաշտպան Ա.Ծարինյանի կողմից վերաքննիչ բողոքում բերված պարճառարանությունները հերքվում են նաև հետևյալով:

- Ոստիկանության աշխատակիցների կողմից հանցագործության որևէ ստորաբաժնի կատարվել, նրանց գործողությունները ուղղված են եղել հանցագործության բացահայտմանը և սկսվել են այն ժամանակ, երբ Գառնիկ Գալստյանը արդեն իսկ սպորինի ձեռք է բերել և պահել հրազեն հանդիսացող արքանակը (...):

- Ամբաստանյալ Գառնիկ Գալստյանին մեղաազրված արարքի որակման և ապացուցվածության առումով էական նշանակություն չի կարող ունենալ ոստիկանության կողմից օպերատիվ փվյալ ստանալու և այն իրացնելու ժամանակահատվածը:

- Գործը քննելիս և լուծելիս Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից պահպանվել են ինչպես ներպետական, այնպես էլ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական Կոնվենցիայի պահանջները, իսկ նախաքննական մարմնի կողմից թույլ չեն փրվել այնպիսի խախտումներ, որոնք ամբաստանյալ Գ. Գալստյանի օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ հետազոտմանը, ազդել կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

(...)

Հաշվի առնելով արարքի բնույթն ու վրանգավորության աստիճանը, ամբաստանյալի անչք, գործի կոնկրետ հանգամանքները, վերաքննիչ դատարանը գտնում է, որ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը Գառնիկ Գալստյանի նկատմամբ պարիժ նշանակելիս, պարժի տեսակը և չափը որոշելիս պահպանել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով նախատեսված պարժի անհատականացման, 61-րդ հոդվածով նախատեսված պարիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներն ու նրա նկատմամբ նշանակել համաչափ պարիժ, որի միջոցով հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պարժի նպատակներին և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն դատապարտելու բավարար հիմքեր առկա չեն, բացակայում է դատարանի համոզվածությունը, որ ամբաստանյալ Գալստյանի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պարիժը կրելու: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 130-131):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, այն է՝ սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասը, չի կիրառել նույն հոդվածի 5-րդ մասը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ, 15-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատարավարության օրենսգրքի 29-րդ, 35-րդ, 177-րդ, 180-րդ, 358-րդ հոդվածների պահանջները:

Ըստ բողոքարեթի՝ մինչև գեների հայտնաբերման պահը վարույթ իրականացնող մարմնի կողմից որևէ արձանագրություն չի կազմվել, հետևաբար դրա հետևանքով ձեռք բերված ապացույցները չեն կարող դրվել մեղադրանքի հիմքում և առաջացնել քրեական պատասխանատվություն: Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան)՝ Բաննիկովան ընդդեմ Ռուսաստանի և Ռամանատուկասան ընդդեմ Լիտվայի գործերով կայացված որոշումները՝ բողոքի հեղինակը նշել է, որ տեղի է ունեցել հանցագործության սադրանք, մասնավորապես՝ գործի նյութերից երևում է, որ իրավապահ մարմիններն ատրճանակի մասին իմացել են առնվազն 2014 թվականի հունվարի 11-ին, երբ ատրճանակը գտնվել է Նիհե Եսայանի մոտ, սակայն օրենքով նախատեսված գործողություններ չեն իրականացրել նշված օրը, այլ դրանք կատարել են 2014 թվականի հունվարի 12-ին, երբ այն արդեն գտնվել է Գ.Գալստյանի մոտ: Այսինքն՝ Մանե Բաբայանի, Նինա Եսայանի և ոստիկանության աշխատակիցների կողմից համաձայնեցված և անօրինական գործողությունների կատարման արդյունքում է ատրճանակը հայտնաբերվել Գ.Գալստյանի մոտ: Մինչդեռ ստորադաս դատարանները հանցագործության սադրանքի առկայությունը կամ բացակայությունը պարզելու ուղղությամբ չեն իրականացրել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ բավարարվելով անհիմն ու անօրինական պատճառաբանություններով:

10. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ, 70-րդ հոդվածների պահանջները, սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածը:

Բողոքարեթը նշել է, որ դատարանի կողմից ազատագրվման ձևով պատիժ նշանակելը չի բխում պատժի նպատակներից և չի համապատասխանում նման բնութագրիչ հատկանիշներով արարքի կատարմանը: Սույն գործով առկա են Գ.Գալստյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող մի շարք հանգամանքներ, բացակայում են ծանրացնող հանգամանքները, ամբաստանյալը, գտնվելով ազատության մեջ, վարույթի ողջ ընթացքում չի խոչընդոտել գործի քննությանը և վարույթն իրականացնող մարմնի կանչով պատշաճ ներկայացել է, ինչն էլ վկայում է, որ նրա ուղղվելը հնարավոր է առանց նրա նկատմամբ նշանակված պատիժը կրելու:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ու փոփոխել Առաջին աստիճանի դատարանի 2014 թվականի հունիսի 13-ի դատավճիռը, Վերաքննիչ դատարանի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշումը և Գ.Գալստյանին ճանաչել անպարտ ու արդարացնել կամ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա Գ.Գալստյանի նկատմամբ նշանակ-

ված պատիժը պայմանականորեն չկիրառել կամ նրա նկատմամբ նշանակել ավելի մեղմ պատիժ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի իրացումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «հանցագործության սադրանք» հասկացության և դրա չափանիշների, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվող անձի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի առնվող հանգամանքների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

I. «Հանցագործության սադրանք» հասկացությունը և դրա չափանիշները.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավորվա՞ծ են արդյոք Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ Գ.Գալստյանն իրեն մեղազրվող արարքը հանցագործության սադրանքի արդյունքում չի կատարել:

14. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք [իրեն] ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) արդարացի (...) դատաքննության իրավունք: (...)»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի (...) իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ (...) իր գործի (...) քննության իրավունք: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ (...) իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային պրակտիկայում դատաքննության արդարացիության (Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդված) համատեքստում սահմանել և մեկնաբանել է «հանցագործության սադրանք» հասկացությունը՝ անբույլատրելի համարելով սադրանքի արդյունքում ձեռքբերված ապացույցներն անձին դատապարտելու համար օգտագործելը:

Այսպես, *Բաննիկովայի* գործով կայացված որոշմամբ Եվրոպական դատարանը նշել է, որ «(...) հանդիպելով սադրանքի վերաբերյալ բողոքի՝

Դատարանը պետք է փորձի առաջին հերթին պարզել՝ կատարարվե՞ր արդյոք հանցանքն առանց իշխանությունների միջամտության: Դատարանի կողմից Ռամանասուսկասի գործով րրված սադրանքի սահմանման համաձայն՝ ոստիկանության կողմից հանցագործության սադրանքն առկա է այն դեպքում, երբ ներգրավված ոստիկանները, լինեն անվրանգության ուժերի անդամներ կամ նրանց հրահանգմամբ գործող անձինք, չեն սահմանափակվում հանցավոր գործունեությունը զգալիորեն պասիվ ձևով քննելով, այլ այնպիսի ազդեցություն են գործադրում օբյեկտի վրա, որով հրահրում են հանցագործության կատարում, որը հակառակ դեպքում չէր կատարվի, որպեսզի հնարավոր դարձնեն հանցագործության հասարարումը, այն է՝ սպառնալից սպառնույթներ և հարուցեն քրեական հետապնդում [րե՛ս Ramanauskas v. Lithuania, Մեծ պալատի 2008 թվականի փետրվարի 5-ի վճիռ, զանգար թիվ 74420/01, կեր 55]:

Քննությունը «զգալիորեն պասիվ» կատարված լինելու հարցը որոշելիս՝ Դատարանը պետք է քննի զաղրնի միջոցառում իրականացնելու հիմքում ընկած պարճառները և այն իրականացնող մարմինների վարքագիծը: Դատարանը պետք է հիմք ընդունի այն, թե արդյոք եղել են օբյեկտիվ կասկածներ այն մասին, որ Դիմումարուն ներգրավված էր հանցավոր գործունեության մեջ կամ նախարարամարված էր հանցագործություն կատարել: (...)

Օբյեկտիվ կասկածների չափանիշի հետ սերտորեն կապված է այն հարցը, թե որ պահից են իշխանության մարմինները սկսել զաղրնի միջոցառման իրականացումը, այսինքն՝ արդյո՞ք զաղրնի գործակալներն ուղղակի «միացել» են հանցավոր արարքին, թե՛ հրահրել այն: (...)

Այս չափանիշը կիրառվել է մի շարք գործերով, որոնցով ոստիկանները ներգրավվել էին մասնավոր անձի (ոչ ոստիկանության հետ համագործակցողի կամ իրազեկիչի) կողմից նրանց այնպիսի րեդեկտրամբ դիմելուց հետո, որ Դիմումարուն արդեն իսկ նախաձեռնել է հանցավոր արարքը: (...)

[Մի շարք գործերով] Դատարանը, հանդիպելով իրավիճակների, որոնցում ներգրավված էին երրորդ անձինք, հասարարել է իր մտրեցումը և նույնպես գրել, որ սադրանք րեդի չի ունեցել: (...)

Գաղրնի գործակալի կողմից օրինական ներքափանցման և սադրանքի սահմանազարում կատարելիս Դատարանը պետք է պարզի՝ արդյոք Դիմումարուի վրա ճնշում է գործարրվել, որպեսզի նա կատարի հանցագործություն: (...)

Վերոգրյալ չափանիշները կիրառելիս Դատարանը սպառնույթման բեռը դնում է իշխանության մարմինների վրա: Այս կապակցությամբ Դատարանը նշել է, որ սադրանքի բացակայությունն սպառնուցելու պարրականությունը դրված է հետապնդման մարմինների վրա՝ պայմանով, որ ամբասարանյալի պնդումներն ամբողջապես անհավանական չեն (...)

» (տե՛ս Bannikova v. Russia գործով Մեծ պալատի 2010 թվականի նոյեմբերի 4-ի վճիռը, զանգատ թիվ 18757/06, կետեր 37-38, 43-45, 47-48):

15. Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծության հիման վրա Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործության սադրանքն առկա է այն դեպքում, երբ անձի մոտ հանցագործություն կատարելու նախաձեռնությունն ի սկզբանե բացակայել է և ձևավորվել բացառապես իշխանության մարմինների, նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց գործողությունների հետևանքով: Հետևաբար, հանցագործության սադրանքի առկայության հարցը կարող է քննարկվել այն դեպքում, երբ իշխանության մարմինների կողմից իրականացվել են գործողություններ, որոնք օբյեկտիվորեն կարող էին այս կամ այն կերպ ազդել անձի կողմից հանցագործություն կատարելու նախաձեռնության ձևավորման վրա: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ «հանցագործության սադրանք» հասկացության շրջանակներում չեն ընդգրկվում այն գործողությունները, որոնք իրականացվել են իշխանության ներկայացուցիչ չհանդիսացող, ինչպես նաև նրանց հետ չհամագործակցող կամ նրանց հրահանգմամբ չգործող անձանց կողմից:

Միևնույն ժամանակ իշխանության ներկայացուցիչների, ինչպես նաև նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց կողմից իրականացված գործողությունները հանցագործության սադրանք կարող են գնահատվել այն դեպքում, երբ դրանք չեն համապատասխանի «զգալիորեն պասիվ ձևով քննություն» չափանիշին: Իրականացված գործողությունների՝ «զգալիորեն պասիվ ձևով քննություն» չափանիշին համապատասխանելու հարցը որոշելիս պետք է հիմք ընդունել.

- գործողություն իրականացնելու հիմքում ընկած պատճառները: Մասնավորապես, պետք է պարզել՝ արդյո՞ք եղել են օբյեկտիվ կասկածներ այն մասին, որ անձը ներգրավված էր հանցավոր գործունեության մեջ կամ նախատրամադրված էր հանցագործություն կատարել:
- այն իրականացնող մարմինների վարքագիծը: Այս առումով պետք է պարզել՝ արդյո՞ք քննություն իրականացնող մարմինների գործողությունները հրահրել են անձին հանցանք կատարել:

Այսինքն՝ իրականացված գործողությունները չեն համապատասխանում «զգալիորեն պասիվ ձևով քննություն» չափանիշին, եթե այդ գործողություններն իրականացվել են առանց օբյեկտիվ կասկածներ ունենալու, որ անձը ներգրավված էր հանցավոր գործունեության մեջ կամ նախատրամադրված էր հանցագործություն կատարել, ինչպես նաև դրանք հրահրել են անձին հանցանք կատարել:

Այլ խոսքով՝ հանցագործության սադրանքն իրենից ներկայացնում է իշխանության ներկայացուցիչների (նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց) կողմից իրականացված գործողություններ, որոնք դուրս են գալիս զգալիորեն պասիվ ձևով քննության շրջանակներից՝ պայմանավորելով անձի կողմից հանցագործություն կատարելու նախաձեռնության ձևավորումը, որպեսզի հնարավոր դարձնեն հանցագործության

հաստատումը, այն է՝ ապահովեն ապացույցներ և հարուցեն քրեական հետապնդում:

16. Գործի նյութերում առկա թիվ 16-14-0040 օպերատիվ հաղորդագրության քարտի (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը), ինչպես նաև ամբաստանյալ Գ.Գալստյանի, վկաներ Ա.Նազարյանի, Ն.Եսայանի, Մ.Բաբայանի ցուցմունքների (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 84-88) վերլուծությունը վկայում է, որ.

- Գ.Գալստյանն ատրճանակը գտել է 2013 թվականի դեկտեմբերին իր պապի տան նկուղում,
- 2014 թվականի հունվարի սկզբին Գ.Գալստյանը եկել է Երևան և իր հետ բերել ատրճանակը,
- 2014 թվականի հունվարի 8-ին Գ.Գալստյանի մոտ է եկել Ն.Եսայանը և պահանջել իրեն հանձնել ատրճանակը, իսկ Գ.Գալստյանը տվել է,
- այնուհետև Գ.Գալստյանը մի քանի անգամ խնդրել է վերադարձնել ատրճանակը, սակայն Ն.Եսայանը մերժել է,
- 014 թվականի հունվարի 12-ին՝ ժամը 16-ի սահմաններում, Գ.Գալստյանի մոտ է եկել Ն.Եսայանն իր թոռնուհու հետ և վերադարձրել ատրճանակը,

Վկա Մ.Բաբայանը նաև ցուցմունք է տվել այն մասին, որ 2014 թվականի հունվարի 11-ին իր ծանոթ Մալաթիայի բաժնի ոստիկանության աշխատակցի հետ գրույցի ժամանակ նրան պատմել է Գ.Գալստյանի մոտ եղած ատրճանակի մասին:

Գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունից հետևում է, որ դրանցում առկա չէ որևէ ապացույց կամ տվյալ այն մասին, որ ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացվել է օպերատիվ-հետախուզական որևէ միջոցառում (գաղտնի գործողություն), որի արդյունքում ամբաստանյալն ապօրինի ձեռք է բերել զենք: Որևէ տեղեկություն առկա չէ նաև Ն.Եսայանի կամ Մ.Բաբայանի կողմից ոստիկանության Մալաթիայի բաժնի աշխատակիցների հետ համագործակցելու կամ նրանց հրահանգմամբ գործելու մասին:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով հանցագործության սադրանքի առկայության վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին եզրահանգել է, որ ոստիկանության աշխատակիցների կողմից հանցագործության որևէ սադրանք չի կատարվել (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով 14-15-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նյութերում ոստիկանության աշխատակիցների կողմից գաղտնի գործողություններ իրականացված լինելու, Ն.Եսայանի և Մ.Բաբայանի կողմից ոստիկանության հրահանգմամբ գործելու վերաբերյալ տվյալների բացակայության պայմաններում հանցագործության սադրանքի առկայության հարց չի կարող քննարկվել:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ բողոքաբերը փաստարկել է, որ մինչև զենքի հայտնաբերման պահը վարույթն իրականացնող մարմնի կողմից որևէ արձանագրություն չի կազմվել, իսկ հանցագործության սաղրանքի բացակայությունը ապացուցելու պարտականությունը կրում է պետությունը՝ Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարում հատկապես ընդգծել, որ բողոքաբերը չի վիճարկում փաստերն այն մասին, որ ամբաստանյալն ատրճանակը գտել է և իր մոտ պահել դեռևս 2013 թվականի դեկտեմբերին, այնուհետև՝ 2014 թվականի հունվարի սկզբին իր հետ տեղափոխել է Երևան և միայն նույն թվականի հունվարի 8-ին՝ Ն.Եսայանի պահանջով է հանձնել նրան: Ավելին՝ Ն.Եսայանին հանձնելուց հետո փորձեր է կատարել այն վերադարձնել: Նշված փաստերից ակնհայտ է, որ զենքը ձեռք բերելու և պահելու նախաձեռնությունն ի սկզբանե եղել է Գ.Գալստյանինը: Վերոնշյալի հիման վրա Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ ոստիկանության կողմից գաղտնի գործողություններ իրականացված լինելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկները հիմնավորված գնահատելու դեպքում անգամ հանցագործության սաղրանքի վերաբերյալ խոսք չի կարող լինել:

18. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ ամբաստանյալ Գ.Գալստյանն իրեն մեղսագրվող արարքը հանցագործության սաղրանքի արդյունքում չի կատարել, հիմնավորված են:

II. ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվող անչի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի առնվող հանգամանքները.

19. Սույն գործով Վճռարեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Գ.Գալստյանի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակելու և այդ պատիժը նրա կողմից կրելու անհրաժեշտության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

20. ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Հանցանք կատարած անչի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անչնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անչին, ինչպես նաև կանխել հանցագործությունները*»:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անչի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հարուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները*»:

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության` հանրության համար վրանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անչը բնութագրող տվյալներով, այդ թվում` պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

3. Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները»:

Մեջբերված իրավական նորմերը Վճռաբեկ դատարանը վերլուծել և դրանց վերաբերյալ իրավական դիրքորոշումներ է հայտնել թիվ ՎԲ-50/07, ՎԲ-142/07, ՎԲ-192/07, ՎԲ-201/07, ԵՇԳ/0029/01/08, ԵԿԳ/0042/01/11, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում: Նշված որոշումներում Վճռաբեկ դատարանի ձևավորած կայուն նախադեպային իրավունքի համաձայն` պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործության և քրեաիրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Քրեական օրենքը համընդհանուր բնույթ ունի, իսկ արարքը և հանցավորի անձը կոնկրետ են: Հետևաբար կոնկրետ գործով պատիժ նշանակելիս դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի, հանցավորի անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա: Նշված հանգամանքների գնահատման ժամանակ դատարանը պետք է ելնի ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից:

21. ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն` «1. Եթե դատարանը, կալանքի, ազատագրկյման կամ կարգապահական գումարարկում պահելու չևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատարարության ռուղովելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անչը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: (...)»:

Մեջբերված քրեաիրավական դրույթը Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել թիվ ՎԲ-50/07, ՎԲ-139/07, ՎԲ-195/07, ՎԲ-01/08, ԵԿԳ/0034/01/08, ԱՎԳ2/0059/01/08, ԵԱԲԳ/0078/01/09, ինչպես նաև մի շարք այլ գործերով կայացված որոշումներում: Վերոնշյալ որոշումներում Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը, վստահությունը, որ ամբաստանյալի ուղղումը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին: Այս կապակցությամբ Վճռաբեկ

դատարանը փաստել է, որ չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգիրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, սակայն դատարանը, կոնկրետ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատման հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը, անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս պարտավոր է հաշվի առնել՝

ա) հանցավորի անձը բնութագրող տվյալները,

բ) պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և (կամ) ծանրացնող հանգամանքները,

գ) հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը,

դ) հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները,

ե) հանցանք կատարած անձի մեղքի ձևը,

զ) հանցանք կատարած անձի կողմից հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը,

է) հանցակցության ղեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը և այլն:

22. Այսպիսով, նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջներից է այն, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության հանրային վտանգավորության աստիճանին և բնույթին (հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի վերաբերյալ մանրամասն տե՛ս Գարուշ Մադաթյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի փետրվարի 17-ի ԵՇԳ/0029/01/08 որոշման 14-րդ կետը):

Հանցագործության հանրային վտանգավորության տիպային բնութագիրն արտացոլվում է օրենսդրի կողմից սահմանված սանկցիայում, իսկ յուրաքանչյուր կոնկրետ գործով արարքի հանրային վտանգավորության գնահատականը դատարանի կողմից կարող է որոշվել կոնկրետ հանցագործության տարրերի առանձնահատկությունների, դրա կատարման հանգամանքների, հանցավորի անձնավորության, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների հիման վրա:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկավող հրազենից և դրա փամփուշտներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար:

Նշված նորմի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ հանցագործության վերաբերյալ գործերով պա-

տժի անհատականացման սկզբունքի տեսանկյունից արարքի հանրային վտանգավորության աստիճանն որոշելիս դատարանը, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնի.

- հանցագործության առարկաները ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու նպատակը և շարժառիթները,
- ձեռքբերման աղբյուրը, ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու միջոցները, հանգամանքները,
- առարկայի տեսակը, քանակը, հատկությունները:

Վկայակոչված հանգամանքներն այլ հանգամանքների հետ համակցությամբ ազդում են արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա և պետք է իրենց համապատասխան գնահատականը ստանան յուրաքանչյուր գործով պատիժ նշանակելիս:

23. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը պարտավոր է գործի նյութերում առկա փաստական տվյալների հիման վրա պատճառաբանել ինչպես պատժի տեսակի և չափի ընտրության, այնպես էլ ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելու անհրաժեշտության վերաբերյալ իր որոշումը: Դատական որոշման որակը մեծապես կախված է դրա պատճառաբանական մասից, հետևաբար դատական որոշումներն սկզբունքորեն պետք է պատճառաբանված լինեն: Պատժի տեսակի և չափի ընտրության, ինչպես նաև պատիժը կրելու անհրաժեշտության վերաբերյալ դատարանի եզրահանգումները հիմնավորող պատճառների մատնանշումն ոչ միայն ավելի հասկանալի և ընդունելի է դարձնում դատավճիռը վարույթի մասնակիցների համար, այլև բացառում է կամայականությունը: Նախևառաջ, դա նշանակում է, որ դատարանը պարտավորված է լինում արձագանքել կողմերի ներկայացրած փաստարկներին և մատնանշել տվյալ որոշումը հիմնավորող և իրավաչափ դարձնող փաստարկները: Եվ երկրորդ՝ պատշաճ պատճառաբանությունը հասարակությանը թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես է գործում դատական համակարգը հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժ սահմանելիս: Բացի այդ, դատական ակտի չպատճառաբանված կամ ոչ բավարար չափով պատճառաբանված լինելը հանգեցնում է նաև քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ արդար դատական քննության իրավունքի խախտման, քանի որ օբյեկտիվորեն սահմանափակվում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը (տես Ֆրունզիկի Գալստյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի ԵԿԴ/0058/11/09 որոշման 18-19-րդ կետերը):

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջները պահպանված լինելու առումով ընդունելի չի կարող համարվել ոչ միայն այն դատական ակտը, որտեղ պատժի վերաբերյալ դատարանի հետևությունները հիմնված չեն դատական քննության ժամանակ հետա-

գտված ապացույցների վրա, այլև այնպիսին, որում բացակայում են պատժատեսակի, պատժաչափի կամ պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի եզրահանգումները հիմնավորող հետևողական, հստակ և ոչ հակասական պատճառաբանությունները (*տե՛ս Արարար Ավագյանի և Վահան Մահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի ԵԿԴ/0252/01/13 որոշման 40-րդ կետը*):

24. Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Գ.Գալստյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնում սովորելու ընթացքում, կրելով ոստիկանության կրտսեր սերժանտի կոչում, քննությամբ չպարզված հանգամանքներում ապօրինի ձեռք է բերել և իր ժամանակավոր բնակության վայրում ապօրինի պահել ինքնաշեն եղանակով պատրաստված ակոսավող հրազեն հանդիսացող ատրճանակ (տե՛ս սույն որոշման 5-րդ կետը):

Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Գ.Գալստյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 9 ամիս ժամկետով: Պատիժ նշանակելիս դատարանը որպես իր կողմից հաշվի առնված հանգամանքներ վկայակոչել է կատարված հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև այն, որ ամբաստանյալը երիտասարդ է, նախկինում դատապարտված չի եղել և բնութագրվում է դրականորեն (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Գ.Գալստյանի նկատմամբ պատիժ նշանակելիս Առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի է առել ամբաստանյալին վերագրվող արարքի բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, ինչպես նաև հանցավորի անձը բնութագրող հանգամանքները և արդյունքում նշանակել համաչափ պատիժ, որը բխում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից, համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանն ու դրա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար է նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի հիման վրա նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքեր առկա չեն: Արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռն ամբաստանյալ Գ.Գալստյանի նկատմամբ նշանակված պատժի առումով օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, հետևաբար այն բեկանելու կամ փոփոխելու հիմքեր չկան (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

25. Նախորդ կետում մեջբերված փաստերը գնահատելով 20-23-րդ կետերում կատարված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գ.Գալստյանի նկատմամբ պատիժ նշանակելիս

Առաջին ատյանի դատարանը լրիվ և բազմակողմանի գնահատման չի ենթարկել նրան մեղսագրված արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանը չի վկայակոչել և ամբաստանյալի անձը բնութագրող տվյալների, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների առկայության, ծանրացնող հանգամանքների բացակայության հետ համակցությամբ գնահատման չի ենթարկել Գ.Գալստյանի կողմից զենքը ձեռք բերելու աղբյուրը, միջոցները, հանգամանքները, զենքի տեսակը և հատկությունները: Վերջիններս ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանրային վտանգավորության բնութագրիչներից են և այդ հանցագործության վերաբերյալ յուրաքանչյուր գործով պետք է գնահատման ենթարկվեն՝ ի ապահովում պատժի անհատականացման սկզբունքի:

Բացի այդ, Գ.Գալստյանին վերագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը դասվում է միջին ծանրության հանցագործությունների շարքին, որի սանկցիան երկընտրելի է. նշված արարքի համար որպես պատիժ է նախատեսված կալանքը՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով և ազատագրվում՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Մինչդեռ Առաջին ատյանի դատարանն որևէ հիմնավորում չի նշել, թե ամբաստանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված պատիժներից նվազ խիստ տեսակը՝ կալանքը, ինչո՞ւ չի կարող ապահովել պատժի նպատակները (ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մաս): Դատական ակտում բացակայում է նաև որևէ պատճառաբանություն, որը կոչված կլիներ հիմնավորելու ազատագրվման ձևով նշանակված պատիժը Գ.Գալստյանի կողմից կրելու անհրաժեշտության վերաբերյալ դատարանի որոշումը (*Վճռաբեկ դատարանը նմանաբովանդակ դիրքորոշում է արդարափաստել նաև Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի ԵԿԳ/0252/01/13 որոշմամբ (42-րդ կետ)*):

Վերաքննիչ դատարանն իր հերթին Գ.Գալստյանի նկատմամբ նշանակված պատժի արդարացիության հարցը քննարկելիս հիմք է ընդունել Առաջին ատյանի դատարանի հետևությունները, որոնք ուղղակի վերարտադրել է իր որոշման մեջ՝ առանց անդրադառնալու այն հարցին, թե ամբաստանյալի նկատմամբ ազատագրվման ձևով պատիժ նշանակելու և այդ պատիժը կրելու անհրաժեշտության մասին հետևությունները համապատասխանում են արդյոք գործի փաստական հանգամանքներին, արդարության և պատասխանատվության անհատականացման քրեաիրավական սկզբունքներին:

26. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Գ.Գալստյանի նկատմամբ պատժի տեսակ և չափ ընտրելիս, ինչպես նաև նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս բազմակողմանի գնահատման չեն ենթարկել արարքի հանրային վտանգավորության աստիճանը բնութագրող՝ սույն որոշմամբ արձանագրված հանգամանքները՝ թույլ տալով արդարութ-

յան և պատասխանատվության անհատականացման սկզբունքները, պատժի նպատակները, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները և պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջների խախտում:

Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի դատավճիռում, ինչպես նաև այն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշման մեջ Գ.Գալստյանի նկատմամբ նշանակված պատժի տեսակի և չափի, ինչպես նաև պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ արված հետևությունները հիմնավորված չեն գործի փաստերով: Արդյունքում՝ Ստորադաս դատարանների դատական ակտերը չեն համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված՝ դատական ակտին ներկայացվող օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջներին:

27. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ հիմնավորված և պատճառաբանված չեն Գ.Գալստյանի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժ նշանակելու և այդ պատիժը նրա կողմից կրելու անհրաժեշտության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

Ամբաստանյալ Գ.Գալստյանի նկատմամբ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ, 70-րդ հոդվածների պահանջների խախտում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում է: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը կայացրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող դատական ակտ:

Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք կարող էին ազդել ամբաստանյալ Գ.Գալստյանի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժ նշանակելու և այդ պատիժը նրա կողմից կրելու անհրաժեշտության կապակցությամբ գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ և 406-րդ հոդվածների հիման վրա, բողոքարկվող դատական ակտը բեկանելու հիմք են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Գառնիկ Սեյրանի Գալստյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի օգոստոսի 4-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

52.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ՇԴ/0051/01/11
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ՇԴ/0051/01/11
Նախագահող դատավոր՝ Կ.Գազարյան
Դատավորներ՝ Հ.Տեր-Ադամյան
Գ.Սելիք-Սարգսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԳԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան Լ.ՄԻՄՆՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 16-ին ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Սերգեյ Սամվելի Մխիթարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2012 թվականի հունիսի 14-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2009 թվականի ապրիլի 28-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շիրակի մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 14-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 18114109 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2009 թվականի մայիսի 13-ի որոշմամբ Սերգեյ Մխիթարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի

112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 14-րդ կետերով: Նույն օրը Ս.Մխիթարյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մայիսի 13-ի որոշմամբ Ս.Մխիթարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2. 2010 թվականի փետրվարի 16-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Շիրակի մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 18106010 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2010 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ թիվ 18106010 քրեական գործը միացվել է թիվ 18114109 քրեական գործին՝ համատեղ քննություն կատարելու համար:

2010 թվականի փետրվարի 27-ին վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ Ս.Մխիթարյանի մեղադրանքը փոփոխվել է, և նա ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 14-րդ կետերով և 327-րդ հոդվածի 1-ին մասով:

2010 թվականի նոյեմբերի 26-ին Ս.Մխիթարյանն արգելանքի է վերցվել, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 14-րդ կետերով և 327-րդ հոդվածի 1-ին մասով:

2011 թվականի ապրիլի 11-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

3. Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 13-ի դատավճռով Ս.Մխիթարյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 14-րդ կետերով և 327-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 14-րդ կետերով Ս.Մխիթարյանը դատապարտվել է ազատազրկման՝ 6 տարի ժամկետով, 327-րդ հոդվածի 1-ին կետով՝ ազատազրկման՝ 2 տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով՝ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Ս.Մխիթարյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 7 տարի ժամկետով:

4. Ս.Մխիթարյանի և նրա պաշտպան Լ.Սիմոնյանի վերաքննիչ բողոքների հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2012 թվականի հունիսի 14-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 13-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

5. Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 14-ի որոշման դեմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով վճարելի բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամազյանը:

Վճարելի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ վճարելի բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Ս.Մխիթարյանին մեղադրանք է առաջադրվել, և նա դատապարտվել է այն բանի համար, որ «(...) 2009 թվականի ապրիլի 15-ին՝ ժամը 17-ի սահմաններում, Գյումրու Պ.Սևակ փողոցի 14 շենքի շքամուտքի մոտ ընկերների՝ Գյումրի քաղաքի բնակիչներ Սամվել Սարգսյանի, Վալերի Աբրահամյանի, Էդգար Նազարյանի հետ, կենցաղային հարցով՝ ընկերոջ՝ Սամվել Սարգսյանի հետ մտերմական հարաբերությունների մեջ գտնվող Լիդա Եղիզարյանին ինտերնետ ցանցի միջոցով վիրավորելու պատճառով, վիճարանել է Գյումրի քաղաքի Աճեյան փողոցի 47 տան բնակիչ՝ անչափահաս, 09.10.1991թ.-ին ծնված Տիգրան Թադևոսյանի հետ, որի ընթացքում Ս.Մխիթարյանը, նախապես հանցավոր համաչայնության գալով ընկերների՝ Վ.Աբրահամյանի, Է.Նազարյանի և Ս.Սարգսյանի հետ, ծանր մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ, չեռքերով, ոտքերով հարվածել է Տ.Թադևոսյանի մարմնի տարբեր մասերին, գլխին, պատճառել մարմնական վնասվածքներ, ապա չորսով հետապնդել են վազելով հեռացող Տ.Թադևոսյանին, Գյումրու Պ.Սևակ փողոց 13/3 հասցեում գտնվող «Լիլիա» զեղեցկության սրահի դիմաց հասնելով վերջինիս, մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ, Ս.Մխիթարյանը 3 ընկերների հետ միասին չեռքերով, ոտքերով հարվածել է Տ.Թադևոսյանի մարմնի տարբեր մասերին, գլխին, վերջինիս պատճառել ծանր մարմնական վնասվածքներ և դեպի վայրից դիմել փախուստի: Տ.Թադևոսյանը ստացած մարմնական վնասվածքներից գիտակցության չգալով՝ 26.04.2009թ.-ին Երևան քաղաքի Միքայելյանի անվան վիրաբուժական հիվանդանոցում մահացել է:

Բացի այդ, 19.08.1991թ.-ին ծնված Ս.Մխիթարյանը, լինելով գորակոչային տարիքի, 2009 թվականի աշնանային գորակոչին Գյումրու զինվորական կոմիսարիատ չի ներկայացել և խուսափել է ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական գորակոչից, այդ ծառայությունից ազատվելու՝ «ՀՅ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայությամբ» (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթ 313-333, հատոր 11, թերթ 48-61):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում արձանագրել է. «(...) Դատարանը չեռք բերված ասպացույցները գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության տեսանկյունից, դրանց համակցությամբ, հաստատված է համարում, որ ամբաստանյալ Սերգեյ Սամվելի Մխիթարյանը կատարել է (...) ՀՀ քր. օր-ի 327 հոդվածի 1-ին մասով նախատեսված [արարք, որով] էլ նա պետք է քրեական պատասխանատվություն կրի (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 11, թերթ 48-61):

8. Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ նշել է. «(...) քննության առնելով քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցությունը, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ ամբաստանյալի (...) կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի (...) 327 հոդվածի 1-ին մասով նախատեսված [հանցանք] կատարելը և նրա մեղքը հաստատված է, իսկ [վերաքննիչ բողոքի] պատճառաբանությունները հերքված են քրեական գործով պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ձեռք բերված և [Առաջին աստիճանի դատարանում] հերազուրված (...) ապացույցներով (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 12, քերթ 85-99):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքարեբի պնդմամբ՝ ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում կայացված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը: Մասնավորապես, դատարանների կողմից խախտվել է միջազգային իրավական ակտերով երաշխավորված՝ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն նախատեսված չէ օրենքով» սկզբունքը, և սխալ է կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասը:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոք բերած անձը սույն գործի փաստական հանգամանքները վերլուծել է կոնվենցիոն և օրենսդրական դրույթների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերի, ինչպես նաև՝ Վճռաբեկ դատարանի թիվ Գ-Գ1/0013/01/11 գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո և եկել այն եզրահանգման, որ Ս.Մխիթարյանը «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով չի հանդիսացել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտ: Հետևաբար բողոքարեբերը գտել է, որ Ս.Մխիթարյանը ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է արարքում հանցակազմի բացակայության պայմաններում:

10. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքի հեղինակը խնդրել է Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունիսի 14-ի որոշումը ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության, մասնավորապես՝ իրավունքի զարգացման գործառույթի

իրացման ապահովումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու (ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդված) հանցակազմի քրեաիրավական բնութագրի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մնացած գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Ս.Մխիթարյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք:

13. ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վրանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում *«Ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորավարժանքից խուսափելու համար»՝ այդ ծառայությունից ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում (...):*

Մեջբերված հանցակազմը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Ս.Աբրահամյանի գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում հայտնելով այն մասին, որ *«(...) ՀՀ քրեական օրենսգրքում [327-րդ հոդվածն] ամրագրված է բլանկետային դիսպոզիցիայի միջոցով: Այսպես՝ անչք ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորավարժանքից խուսափելու համար քրեական պատասխանատվության ենթակա է միայն այն դեպքում, երբ բացակայում են նրան ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից ազատելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերը: Բլանկետային դիսպոզիցիայի առկայությունը նշանակում է, որ անչի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը պայմանավորված է զինվորական կամ այլընտրանքային ծառայության զորակոչի, վարժական հավաքի կամ զորավարժանքի հիմքերը, կարգը և պայմանները սահմանող համապատասխան իրավական ակտերում ամրագրված նորմերի բովանդակությամբ և ծավալով: (...) Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը պարզելու նպատակով անհրա-*

ժեշտ է դիմել «Ձինապարտության մասին» և «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքներում ամրագրված դրույթներին և դրանց վերլուծության հիման վրա պարզել, թե կոնկրետ դեպքում առկա² են արդյոք ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից ազատելու համապատասխան հիմք(եր)ը և, հետևաբար, կոնկրետ անձի արարքում առկա³ են արդյոք զինվորական ծառայությունից կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու հատկանիշները» (տե՛ս Սամվել Աբրահամյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԿԴ-1/0053/01/12 որոշման 12-րդ կետը):

14. Վերահաստատելով և զարգացնելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված և *Ս.Աբրահամյանի* գործով որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը դասվում է կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների շարքին և բնութագրվում որպես հանցավոր արարք, որը ոտնձգում է ՀՀ զինված ուժերի, զինվորական ծառայության շահերի և պետության պաշտպանունակության դեմ: Ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու օբյեկտ են հանդիսանում ՀՀ զինված ուժերի համալրման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է, ի թիվս այլնի, ժամկետային զինվորական ծառայության հերթական գորակոչից խուսափելու ձևով՝ այդ ծառայությունից ազատվելու օրենքով սահմանված հիմքերի բացակայության դեպքում: Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը կատարվում է անգործությամբ (ծանրացնող հանգամանքներում հանցանքը կարող է կատարվել նաև ակտիվ գործողություններով): Մասնավորապես ժամկետային զինվորական ծառայության ենթակա անձը այդ ծառայությանը գորակոչվելուց խուսափելու նպատակով, առանց հարգելի պատճառների չի ներկայանում իր հաշվառման (փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ: Հանցանքն ավարտված է համարվում օրենքով սահմանված կարգով հայտարարված հերթական գորակոչի ժամկետն անցնելու պահին:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի առկայությունը հավաստելու համար բավարար չէ միայն ժամկետային զինվորական ծառայության հերթական գորակոչին զինվորական կոմիսարիատ չներկայանալու փաստի հաստատումը: Անձին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով քրեական պատասխանատվության ենթարկելու կարևոր պայման է զինվորական ծառայությունից ազատվելու (տարկետման) օրենքով սահմանված հիմքերի բացակայությունը: Ձինապարտության մասին օրենսդրությամբ հստակ սահմանված են պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու, ընտանեկան դրության, առողջական վիճակի պատճառով, ուսումը շարունակելու նպատակով, ինչպես նաև այլ պատճառներով գորակոչից տար-

կետում ստանալու հիմքերը («Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի 3¹-րդ, 11-16-րդ հոդվածներ): Օրենքով նախատեսված վերոգրյալ հիմքերից ցանկացածի առկայությունն ինքնին բացառում է անձի գործողություններում քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի առկայությունը՝ անկախ նրանից, թե նա ներկայացել է ժամկետային զինվորական ծառայության հերթական զորակոչին, թե՛ ոչ:

15. Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, հանցավորը գիտակցում է, որ իր գործողություններով (անգործությամբ) խուսափում է ժամկետային զինվորական ծառայության հերթական զորակոչից և ցանկանում է դա: Հանցագործության սուբյեկտ կարող է լինել բացառապես ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ենթակա անձը:

Այսպես, «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան (...) արական սեռի զորակոչիկները և մինչև 35 տարեկան առաջին խմբի պահեստագործի սպաները, ովքեր առողջական վիճակի պարզառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում:

2. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ենթակա չեն այն անչինք, որոնց նկատմամբ կատարվում է հետաքննություն (նախաքննություն, դատաքննություն) կամ ովքեր նախկինում դատապարտվել են ազատազրկման՝ ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար և ազատազրկման վայրում պարիժը կրել են 3 տարուց ոչ պակաս, ինչպես նաև, եթե կատարել են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության դատախազության հաստատված ցանկում նշված հանցագործություն:

(...)»:

Մեջբերված իրավական նորմի վերլուծությամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քննարկվող հանցագործության սուբյեկտ են հանդիսանում, ի թիվս այլնի, 18-ից 27 տարեկան արական սեռի զորակոչիկները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում: Միևնույն ժամանակ, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ենթակա չեն, հետևաբար նաև ժամկետային զինվորական ծառայության հերթական զորակոչից խուսափելու հանցակազմի սուբյեկտ չեն հանդիսանում՝

ա) անձինք, որոնց նկատմամբ կատարվում է հետաքննություն (նախաքննություն, դատաքննություն),

բ) անձինք, ովքեր նախկինում դատապարտվել են ազատազրկման՝ ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար և ազատազրկման վայրում պատիժը կրել են 3 տարուց ոչ պակաս,

գ) անձինք, ովքեր կատարել են ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ դատախազության հաստատված ցանկում նշված հանցագործություն:

16. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ 18114109 քրեական գործի շրջանակներում դեռևս 2009 թվականի մայիսի 13-ին Ս.Մխիթարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 14-րդ կետերով: Նույն օրը Ս.Մխիթարյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Նախաքննության մարմնի 2010 թվականի փետրվարի 27-ի որոշմամբ Ս.Մխիթարյանի մեղադրանքը լրացվել է, և նա ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 14-րդ կետերով և 327-րդ հոդվածի 1-ին մասով (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Ս.Մխիթարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով մեղաազգրվել է այն, որ նա, լինելով գորակոչային տարիքի, 2009 թվականի աշնանային գորակոչին Գյումրու զինվորական կոմիսարիատ չի ներկայացել և խուսափել է ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական գորակոչից, այդ ծառայությունից ազատվելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայությամբ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Քրեական գործի դատական քննության արդյունքում Առաջին աստիճանի դատարանը, իսկ այնուհետև նաև Վերաքննիչ դատարանը հաստատված են համարել, որ Ս.Մխիթարյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք, որի համար պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության (տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը):

17. Մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-15-րդ կետերում շարադրված վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ս.Մխիթարյանի նկատմամբ 2009 թվականի մայիսից ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 14-րդ կետերի հատկանիշներով իրականացվել է նախաքննություն: Հետևաբար 2009 թվականի աշնանային գորակոչին Ս.Մխիթարյանը, «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու ենթակա չի եղել: Այլ խոսքով՝ Ս.Մխիթարյանը չի ներկայացել ժամկետային զինվորական ծառայության 2009 թվականի աշնանային գորակոչին՝ իր նկատմամբ կատարվող նախաքննության պայմաններում, ինչից հետևում է, որ նա ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության սուբյեկտ չի հանդիսացել, ինչպես նաև նրա գործողություններում բացակայել է նշված հանցագործության օբյեկտիվ կողմը:

Ուստի Ս.Մխիթարյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետային զինվորական ծառայության հերթական գորակոչից խուսափելու հանցակազմը բացակայում է:

18. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Ս.Մխիթարյանը

կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք, հիմնավորված չեն:

Ս.Մխիթարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրական դատավճիռ կայացնելիս Առաջին աստիճանի դատարանը, իսկ նշված դատական ակտն օրինական ուժի մեջ բողոքելիս նաև Վերաքննիչ դատարանը պատշաճ չեն գնահատել սույն գործի փաստական հանգամանքները: Արդյունքում տեղի է ունեցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառություն, ինչը հանգեցրել է նաև նույն օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, անօրինական և չիմնավորված դատական ակտերի կայացմանը:

19. Վերը նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա բեկանելու և փոփոխելու Ս.Մխիթարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով կայացված ստորադաս դատարանների դատական ակտերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե արարքի մեջ հանցակազմ չկա»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 366-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը պարզավոր է սույն օրենսգրքի 35 հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով և երկրորդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում րվյալ դատական նիստում կայացնել արդարացման դատավճիռ»:*

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ս.Մխիթարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում պետք է արդարացնել և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

20. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բեկանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ստորադաս դատարանները թույլ են տվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտում, որի արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում են սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Սերգեյ Սամվելի Մխիթարյանի վերաբերյալ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 13-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունիսի 14-ի որոշումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով, բեկանել և փոփոխել:

2. Սերգեյ Մխիթարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում արդարացնել և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

3. Սերգեյ Մխիթարյանին թողնել կրելու ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 14-րդ կետերով նշանակված 6 (վեց) տարի ժամկետով ազատազրկումը:

4. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի ապրիլի 13-ի դատավճիռը և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հունիսի 14-ի որոշումը մնացած մասով թողնել անփոփոխ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

53.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ԵԱԲԳ/0161/01/13
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան
Դատավորներ՝ Ս. Համբարձումյան
Ս. Պետրոսյան

ԵԱԲԳ/0161/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ
Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ս. ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ պաշտպան Ա. ԱՂԱՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 16-ին

ք. Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Վահրամ Հակոբի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի հունիսի 6-ի որոշման դեմ ամբաստանյալ Վ. Ավետիսյանի պաշտպան Ա. Ջուվանովայի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2006 թվականի հունվարի 30-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 14101306 քրեական գործը:

Նախաքննության մարմնի 2006 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ քրեական գործի վարույթը կասեցվել է հանցագործություն կատարած անձի ինքնությունը պարզված չլինելու պատճառաբանությամբ:

2006 թվականի մայիսի 16-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 13112306 քրեական գործը:

2006 թվականի հունիսի 12-ին Վահրամ Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածով: Վ.Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը և հայտարարվել է հետախուզում:

2007 թվականի մարտի 22-ին թիվ 13112306 քրեական գործը միացվել է թիվ 14101306 քրեական գործին:

Նախաքննության մարմնի 2007 թվականի մարտի 23-ի որոշմամբ Վ.Ավետիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 271-րդ հոդվածով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2007 թվականի մարտի 23-ի որոշմամբ Վ.Ավետիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Ռուսաստանի Գաշնության Միտիշ քաղաքի ժողովրդական դատարանի 2008 թվականի հուլիսի 22-ի դատավճռով Վ.Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՌԴ քրեական օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման՝ 4 տարի ժամկետով:

2. Նախաքննության մարմնի 2011 թվականի հունիսի 1-ի որոշմամբ Վ.Ավետիսյանի մեղադրանքը փոփոխվել է, և նա ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 268-րդ հոդվածի 1-ին մասով:

2012 թվականի մայիսի 26-ին Վ.Ավետիսյանն ամբողջությամբ կրել է ՌԴ Միտիշ քաղաքի ժողովրդական դատարանի 2008 թվականի հուլիսի 22-ի դատավճռով նշանակված պատիժը:

2013 թվականի սեպտեմբերի 26-ին Վ.Ավետիսյանը հանձնվել է Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին:

2013 թվականի սեպտեմբերի 27-ին թիվ 14101306 քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

Նախաքննության մարմնի 2013 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ Վ.Ավետիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2013 թվականի նոյեմբերի 13-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Արաբկիր և Զանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

3. Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 24-ի դատավճռով Վ.Ավետիսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման՝ 12 տարի ժամկետով:

4. Պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հունիսի 6-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 24-ի դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

5. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունիսի 6-ի որոշման դեմ վճարելի բողոք է բերել ամբաստանյալ Վ.Ավետիսյանի պաշտպան Ա.Ջուվանովան:

Վճարելի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 4-ի որոշմամբ վճարելի բողոքը վարույթ է ընդունվել:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Վ.Ավետիսյանը դատապարտվել է այն բանի համար, որ իր ծանոթներ Արմեն Պողոսյանի և այլ անձի հետ միասին ավազակային հարձակում կատարելու վերաբերյալ նախնական համաձայնությամբ 2006 թվականի հունվարի 30-ին՝ ժամը 10-ի սահմաններում, Ա.Պողոսյանի անձնական օգտագործման ՎԱԶ 21010 մակնիշի ավտոմեքենայով գնացել են Երևանի Հր.Քոչար փողոցի 16/1 շենքի բակ, որտեղ Ա.Պողոսյանը սպասել է ավտոմեքենայի մեջ, իսկ Վ.Ավետիսյանն այլ անձի հետ միասին ապօրինի մուտք է գործել նշված շենքի 6-րդ հարկում գտնվող Արայոն Սարգսյանին պատկանող թիվ 17 բնակարան: Ատրճանակի գործադրմամբ վերջինիս մոր՝ Հասմիկ Աբրահամյանի և կնոջ՝ Գայանե Մանուկյանի կյանքի ու առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով, կաչուն ժապավենով կապել են նրանց և հարձակմամբ հափշտակել «Սոնի» մակնիշի տեսախցիկ, շախմատ ու այլ իրեր, ինչպես նաև չիրկիզվող պահարան, որում եղել են 33.000 ԱՄՆ դոլար, 10.000 եվրո և ոսկյա զարդեր՝ Ա.Սարգսյանին ընդհանուր առմամբ պատճառելով առանձնապես խոշոր չափի՝ 25.000.000 ՀՀ դրամի գույքային վնաս (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 61-70):

7. Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում հաստատված է համարել, որ «(...) Ռուսաստանի Դաշնության Միտիչ քաղաքի ժողովրդական դատարանի 22.07.2008թ.-ի դատավճռով Ավետիսյան Վոլոդյայի Սարգսյանը /նույն ինքը Վահրամ Հակոբի Ավետիսյանը/ մեղավոր է ճանաչվել Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 4 /չորս/ տարի ժամկետով, պարիժը լրիվ կրելով Ռուսաստանի Դաշնության Բաշկորտոստանի Հանրապետությունում 26.05.2012թ. ազատվել է պարիժից, դատավճռությունը չմարված (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթ 61-70):

8. Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է. «(...) Անդրադառնալով վերաքննիչ բողոքի հեղինակի այն պատճառաբանությանը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Վ.Ավետիսյանի նկատմամբ պետք է նշանակել ավելի մեղմ պարիժ և դրանից հաշվակցել ՌԳ Միտիչ քաղաքի ժողովրդական դատարանի՝ 22.07.2008թ.-ի դատավճռով նշանակված և ամբողջությամբ կրած 4 /չորս/ տարի ազատազրկման չևով պարիժը, այս Վերաքննիչ դատարանը գրնում է, որ այն անհիմն է, [քանի որ] օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը կարող է հաշվի առնվել բացառապես այն դեպքում, երբ այն ճանաչվել է Հայաստանի Հանրապետությունում:

Ինչպես երևում է սույն քրեական գործի նյութերից՝ Վ.Ավետիսյանի վերաբերյալ օտարերկրյա պետության դատարանի՝ տվյալ դեպքում ՌԳ Միտիչ քաղաքի ժողովրդական դատարանի 22.07.2008թ.-ի դատավճռի ճանաչման վերաբերյալ իրավասու ՀՀ դատարանները համապատասխան որոշում չեն կայացրել:

Հեղևաբար, Վերաքննիչ դատարանն իրավասու չէ հաշվակցել ՌԳ Միտիչ քաղաքի ժողովրդական դատարանի 22.07.2008թ.-ի դատավճռով նշանակված 4 /չորս/ տարի ազատազրկման չևով նշանակված պարիժը (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 9-րդ, թերթ 33-56):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

9. Բողոքի հեղինակը գտնում է, որ ստորադաս դատարանների դատական ակտերն անհիմն են, դրանցով թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը կարծիք է հայտնել, որ ստորադաս դատարանների դատական ակտերում շարադրված ապացույցներն ու հետևությունները բավարար չեն Վ.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածով մեղավոր ճանաչելու համար: Այս կապակցությամբ բողոքի հեղինակը վերլուծել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներ, սույն գործի փաստական հանգամանքները և նշել, որ գործում առկա ապացույցների ամբողջ զանգվածի գնահատման արդյունքում հնարավոր չէ եզրահանգել, որ Վ.Ավետիսյանի կողմից կատարվել է իրեն մեղազրկող արարքը:

Բացի այդ, բողոք բերած անձի պնդմամբ՝ ստորադաս դատարանների կողմից չեն պահպանվել ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի պահանջները: Մասնավորապես, Վ.Ավետիսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանները ձևականորեն նշել են, որ հաշվի են առնում հանցավորի անձը դրականորեն բնութագրող տվյալները, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, ծանրացնող հան-

զամանքների բացակայությունը: Այս պայմաններում անհասկանալի է, թե ինչու են ստորադաս դատարանները Վ.Ավետիսյանի նկատմամբ նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույնից չորս տարի ավելի ժամկետով պատիժ:

10. Բողոքաբերը վերլուծել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Օտարերկրյա պետությունների դատարանների և միջազգային դատարանների դատավճիռների ճանաչումը ՀՀ տարածքում և դրա իրավական հետևանքները» վերտառությամբ գլխի հոդվածների դրույթները, ինչպես նաև մեջբերել է ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի վերաբերյալ Վճարելի դատարանի թիվ ԵԷԴ/0124/01/09 գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները և եկել այն եզրահանգման, որ Վ.Ավետիսյանի նկատմամբ պատիժ նշանակելիս վերջնական պատժի ժամկետին պետք է հաշվակցվեր ՌԴ Միտիչ քաղաքի ժողովրդական դատարանի 2008 թվականի հուլիսի 22-ի դատավճռով նշանակված և ամբողջությամբ կրած 4 տարի ազատազրկման ձևով պատիժը, ինչը չի արվել:

Այս կապակցությամբ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Վ.Ավետիսյանի նկատմամբ հանցանքների համակցությամբ պատիժ չի կարող նշանակվել, քանի որ օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը ՀՀ իրավասու դատարանի կողմից չի ճանաչվել, բողոքի հեղինակը նշել է, որ այս դեպքում խոսքը գնում է արդեն իսկ կատարված դատական ակտի մասին, որը ճանաչման ենթակա չէ: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասի կանոններով պատիժ նշանակելու համար օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը ճանաչելու ընթացակարգ չի նախատեսվում և բավարար է միայն դատական ակտի, ինչպես նաև նշանակված պատժի կրած կամ չկրած լինելու վերաբերյալ իրավասու մարմինների տեղեկանքների պատշաճ օրինակների առկայությունը:

11. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վ.Ավետիսյանի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունիսի 6-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության ապահովման, մասնավորապես, իրավունքի զարգացման գործառույթի իրացումն է: Այս առումով Վճարելի դատարանը գտնում է, որ օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը ճանաչելու իրավական հիմքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

1. Օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը ճանաչելու իրավական հիմքը.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է համարում նախևառաջ անդրադառնալ բողոքարեքի բարձրացրած հետևյալ իրավական հարցին. իրավաչափ է արդյոք Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն այն մասին, որ Վ.Ավետիսյանի նկատմամբ հանցանքների համակցությամբ պատիժ չի կարող նշանակվել, քանի որ Ռ-Դ Սիտիչ քաղաքի ժողովրդական դատարանի 2008 թվականի հուլիսի 22-ի դատավճիռը ՀՀ իրավասու դատարանի կողմից չի ճանաչվել:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցանքների համակցությամբ յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պարիժ (հիմնական և լրացուցիչ) նշանակելով՝ դատարանը վերջնական պարիժը որոշում է նշանակված պարիժները լրիվ կամ մասնակիորեն զումարելու միջոցով:

(...)

6. Պարիժը նշանակվում է սույն հոդվածի կանոններով, եթե դատավճիռ կայացնելուց հետո պարզվի, որ դատապարտյալը մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը: Այս դեպքում վերջնական պարիժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պարիժի կրած մասը»:

Մեջբերված քրեաիրավական նորմը սահմանում է պատիժ նշանակելու այն կանոնները, որոնք վերաբերում են հանցանքների համակցությանը: Ի թիվս ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում զետեղված պատիժ նշանակելու այլ կանոնների՝ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու կանոններն ունեն իմպերատիվ բնույթ և առանց դրանք հաշվի առնելու հնարավոր չէ ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի պահանջների կատարումը, այն է՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ արդարացի պատիժ սահմանելը:

Հանցանքների համակցության կանոններով է պատիժ նշանակվում նաև այն իրավիճակում, երբ դատավճռի կայացումից հետո պարզվում է, որ դատապարտյալը մեղավոր է մեկ այլ հանցանքի համար, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը: Նման դեպքերում, դատարանը վերջնական պատիժ պետք է սահմանի յուրաքանչյուր հանցագործության համար առանձին նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն զումարելու միջոցով: Դրանից հետո նշանակված պատիժից պետք է հանվի առաջին դատավճռով նշանակված պատիժի կրած մասը՝ պատիժի սկիզբը հաշվելով վերջին դատական ակտը կայացնելու օրվանից, կամ եթե դատապարտյալն անընդմեջ գտնվել է անազատության մեջ, պատիժի սկիզբը պետք է հաշվի առաջին դատավճռով սահմանված ժամկետից (տե՛ս Էդուարդ Ներսիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԷԴ/0124/01/09 որոշման 17-18-րդ կետերը):

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499⁸-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռները ենթակա են ճանաչման Հայաստանի Հանրապետությունում:

2. Օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու հիմքերը, ճանաչման ենթակա դատավճիռների (որոշումների) տեսակները սահմանվում են տվյալ պետության հետ կնքված կամ նրա մասնակցությամբ գործող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով:

(...)»:

Մեջբերված քրեադատավարական նորմը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների (որոշումների) ճանաչման իրավական ընթացակարգը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499⁸-րդ հոդվածը, մասնավորապես, նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռները ենթակա են ճանաչման միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում: Օտարերկրյա պետության հետ կնքված կամ նրա մասնակցությամբ գործող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով են նախատեսվում դատավճիռների ճանաչման հիմքերը, ճանաչման ենթակա դատական ակտերի տեսակները:

16. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև, ի թիվս այլնի, դատական ակտերի ճանաչման և կատարման վերաբերյալ երկկողմ իրավահարաբերությունները կարգավորվում են 1993 թվականի հունվարի 22-ին Սինսկում կնքված «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիայով (այսուհետ՝ Սինսկի կոնվենցիա):

Սինսկի կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Պայմանավորվող կողմերը միմյանց իրավական օգնություն են ցույց տալիս դատավարական և այլ գործողություններ կատարելու միջոցով, որոնք նախատեսված են Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, այդ թվում՝ (...) քաղաքացիական գործերով դատական որոշումների և դատավճիռների քաղաքացիական հայցի մասի, կատարողական մակագրությունների ճանաչման և կատարման (...) միջոցով»:

Սինսկի կոնվենցիայի 76¹-րդ հոդվածի համաձայն՝ «Անչին առանձնապես վրանգավոր ռեցիդիվիստ ճանաչելու, հանցագործության կրկնակի կատարման և պայմանական դատապարտման, դատավճռի կատարման հետաձգման կամ պայմանական վաղախեղ ազատման հետ կապված պարտականությունների խախտման փաստերը պարզելու մասին հարցերը լուծելիս՝ Պայմանավորվող կողմերի արդարադատության մարմինները կա-

բող են ճանաչել և հաշվի առնել այն դատավճիռները, որոնք կայացրել են (...)
Պայմանավորվող կողմերի դատարանները»:

Մեջբերված կոնվենցիոն դրույթների վերլուծությունից ակնհայտ է, որ Մինսկի կոնվենցիան նախատեսում է բացառապես դատական ակտերի քաղաքացիական հայցի մասը ճանաչելու և կատարելու, ինչպես նաև առանձնապես վտանգավոր ռեցիդիվի, հանցագործության կրկնակի կատարման և պայմանական դատապարտման, դատավճռի կատարման հետաձգման կամ պայմանական վաղալետ ազատման հետ կապված պարտականությունների խախտման փաստերը պարզելու մասին հարցերը լուծելու նպատակով դատավճիռների ճանաչման հնարավորություն:

17. Սույն որոշման 15-րդ և 16-րդ կետերում կատարված վերլուծությունը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև գործող միջազգային պայմանագրով չի նախատեսվում հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու նպատակով միմյանց դատավճիռները ճանաչելու իրավական հնարավորություն: Իր հերթին ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է, որ օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու հիմքերը սահմանվում են տվյալ պետության հետ կնքված միջազգային պայմանագրով: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության իրավագործության ներքո քրեական պատասխանատվության կանչվող անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրված կանոնների գործադրմամբ պատիժ նշանակելու հարցը քննարկելիս Ռուսաստանի Դաշնության համապատասխան դատավճիռը ճանաչելու իրավական հիմքը բացակայում է:

18. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն իր դատավճռում հաստատված է համարել, որ Վ.Ավետիսյանը ՌԴ Միտիչ քաղաքի ժողովրդական դատարանի 2008 թվականի հուլիսի 22-ի դատավճռով ՌԴ քրեական օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտվել է ազատազրկման՝ 4 տարի ժամկետով: Պատիժն ամբողջությամբ կրելով ՌԴ Բաշկորտոստանի Հանրապետությունում՝ Վ.Ավետիսյանը 2012 թվականի մայիսի 26-ին ազատվել է (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը):

Վերաքննիչ դատարանը մերժել է պաշտպանի վերաքննիչ բողոքը, իսկ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ: Ի թիվս այլնի՝ Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ բողոքաբերի փաստարկն առ այն, թե Վ.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատժին պետք է հաշվակցվի ՌԴ Միտիչ քաղաքի ժողովրդական դատարանի դատավճռով նշանակված և ամբողջությամբ կրած 4 տարի ազատազրկման ձևով պատիժը, հիմնագուրկ է: Այս կապակցությամբ Վերաքննիչ դատարանը նշել է, որ օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը կարող է հաշվի առնվել բացառապես այն դեպքում, երբ այն ճանաչվել է Հայաստանի Հանրապետությունում: Մինչդեռ տվյալ դեպքում Վ.Ավետիսյանի նկատմամբ

կայացված ՌԳ Միտիշ քաղաքի ժողովրդական դատարանի դատավճռի ճանաչման վերաբերյալ ՀՀ իրավասու դատարանները համապատասխան որոշում չեն կայացրել (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

19. Սույն որոշման 14-17-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն այն մասին, որ Վ.Ավետիսյանի նկատմամբ հանցանքների համակցությամբ պատիժ չի կարող նշանակվել, քանի որ ՌԳ Միտիշ քաղաքի ժողովրդական դատարանի 2008 թվականի հուլիսի 22-ի դատավճիռը ՀՀ իրավասու դատարանի կողմից չի ճանաչվել, իրավաչափ չէ: Նշված հիմնավորմամբ հրաժարվելով Վ.Ավետիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կանոններով պատիժ նշանակելուց՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված միջազգային պայմանագիրը հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու նպատակով դատավճիռների ճանաչման իրավական ընթացակարգ չի նախատեսում, իսկ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունն ամրագրում է, որ օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու հիմքերը սահմանվում են տվյալ պետության հետ կնքված միջազգային պայմանագրով:

20. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը խախտել է օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների ճանաչման կարգը սահմանող նորմի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499⁸-րդ հոդվածի պահանջները, ինչը նույն օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով քրեադատավարական օրենքի էական խախտում է, քանի որ կարող էր ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Վերը նշված խախտումը, որը կարող էր ազդել պատժի նշանակման մասով գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, Վճարելի դատարանին հիմք է տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

21. Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածը նախատեսում է, որ «1. Օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը կարող է հաշվի առնվել, եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացին, օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անչը դատապարտվել է Հայաստանի Հանրապետության փարսածքից դուրս կատարած հանցանքի համար և կրկին հանցանք է կատարել Հայաստանի Հանրապետության փարսածքում:

2. Սույն հոդվածի առաջին մասին համապատասխան հանցագործությունների ռեցիդիվը, չկրած պատիժը կամ օտարերկրյա պետության դատարանի դատավճռի այլ իրավական հետևանքները հաշվի են

առնվում նոր հանցանքը որակելիս, պատիժ նշանակելիս, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելիս»:

ՀՀ քրեական օրենսգրքում բացակայում է որևէ նորմ, որը կպարտավորեցներ դատարանին անձի նկատմամբ հանցանքների համակցությամբ (ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մաս) պատիժ նշանակելու հարցը լուծելիս հաշվի առնել օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորմանը՝ այն վերաբերում է նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերին, որոնցում ներառված չէ մինչև օտարերկրյա պետությունում դատապարտվելը Հայաստանի Հանրապետությունում կատարած հանցանքի համար անձին դատապարտելու դեպքը: Անձի նկատմամբ հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու հարցը լուծելիս օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը հաշվի առնելու վերաբերյալ նորմ բացակայում է նաև Ռուսաստանի Դաշնության մասնակցությամբ գործող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրում՝ Մինսկի կոնվենցիայում:

Այս պայմաններում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի այն հարցը, թե արդյոք սույն գործով ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասը կիրառման ենթակա է ընդհանրապես:

II. Բողոքաբերի բարձրագրած մյուս հարցերը.

22. Անդրադառնալով ամբաստանյալի անմեղության վերաբերյալ բողոքաբերի փաստարկներին (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը)՝ Վճռաբեկ դատարանը քրեական գործի նյութերի ուսումնասիրությամբ եզրահանգում է, որ ստորադաս դատարանները, պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ստուգման ենթարկելով քրեական գործի հիմքում դրված ապացույցների ձեռքբերման աղբյուրները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով թույլատրելիության, վերաբերելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, ղեկավարվելով օրենքով, ներքին համոզմամբ, Վ.Ավետիսյանի մեղավորության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության:

Ամբաստանյալ Վ.Ավետիսյանի մեղքը ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղսագրված արարքում հաստատված է, իսկ բողոքաբերի պատճառաբանությունները հերքված են Ա.Մարգարյանի, Հ.Աբրահամյանի, Գ.Մանուկյանի, Ա.Պողոսյանի, Ա.Բազդյանի, Գ.Տոնոյանի, Ա.Մարտիրոսյանի ցուցմունքներով, հեռախոսահամարների մուտքային և ելքային զանգերի վերծանումներով, անձին ճանաչման ներկայացնելու, խուզարկություն, ազդարկում կատարելու, առարկաները ճանաչման ներկայացնելու, դեպքի վայրի զննության մասին արձանագրություններով, իրեղեն ապացույցներով, քրեակատարողական հիմնարկի՝ ապացույց ճանաչված գրություններով:

Այսպիսով, Վ.Ավետիսյանի կատարած հանցանքն ապացուցված և նրա մեղավորությունը հաստատված է գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, այդ առումով ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված ու պատճառաբանված են, իսկ գործի փաստական հանգամանքների մասին դատարանների հետևությունները հետագոտված ապացույցներին չհամապատասխանելու և ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը հիմնավորված չլինելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկները գործի նյութերում իրենց հաստատումը չեն գտնում, հետևաբար չեն կարող հիմք հանդիսանալ Վերաքննիչ դատարանի դատական ակտը քեկանելու համար:

23. Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ առանց սույն որոշման 20-րդ կետում արձանագրված խախտումը վերացնելու հնարավոր չէ քննության առնել բողոքաբերի կողմից բարձրացված հաջորդ հարցը, այն է՝ ամբաստանյալ Վ.Ավետիսյանի նկատմամբ նշանակված պատժի արդարացիությունը (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Ուստի սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն այդ հարցին չի անդրադառնում:

24. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Ամբաստանյալ Վահրամ Հակոբի Ավետիսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հունիսի 6-ի որոշումը քեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

54.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Քրեական գործ թիվ ԱՐԳ/0038/01/13
Նախագահող դատավոր՝ Մ.Պետրոսյան
Դատավորներ՝ Ս.Համբարձումյան
Ա.Պետրոսյան

ԱՐԳ/0038/01/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 16-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դատապարտյալ Վահան Գասպարի Գևորգյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2013 թվականի նոյեմբերի 22-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արմավիրի մարզի քննչական բաժնի քննիչ Գ.Մանուկյանը 2012 թվականի հուլիսի 24-ին որոշում է կայացրել Վահան Գասպարի Գևորգյանի կողմից Անդրանիկ Կարապետի Կարապետյանի առողջությանը թեթև վնաս պատճառելու վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու և Վ.Գևորգյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին: Քննիչն իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ Վ.Գևորգյանի

արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածի հատկանիշներին, Վ.Գևորգյանն առաջին անգամ կատարել է ոչ մեծ ծանրության հանցանք, նրա խնամքին են երեք անչափահաս երեխաները, բնութագրվում է դրականորեն, զղջացել է կատարած արարքի համար, և այդ հանգամանքները ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի հիման վրա թույլ են տալիս Վ.Գևորգյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել:

Նույն օրը քննիչ Գ.Մանուկյանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի հիման վրա միջնորդագիր է ներկայացրել Ռ.Գ. սահմանապահ գորքերի թիվ 2037 գործմասի հրամանատար Ա.Զլոբինին՝ խնդրելով այն քննարկել գործմասի հրամանատարական կազմի հետ և ակտիվացնել գործմասի զինծառայողների շրջանում դաստիարակչական բնույթի աշխատանքները՝ անցագրային կետերից ուղեկալների տարածք մուտք գործող բնակչության հանդեպ ավելի հարգալից և պատշաճ վերաբերմունք ցուցաբերելու ուղղությամբ:

Նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2012 թվականի հուլիսի 24-ի որոշման դեմ Ռ.Գ. սահմանապահ գորքերի թիվ 2037 գործմասի հրամանատար Ա.Զլոբինը բերել է բողոք, որը Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի նոյեմբերի 19-ի որոշմամբ բավարարվել է և քննիչ Գ.Մանուկյանի որոշումը՝ վերացվել:

2. Արմավիրի մարզի դատախազի տեղակալ Ա.Դուլինյանի 2012 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 48202312 քրեական գործը:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արմավիրի մարզի քննչական բաժնի քննիչ Գ.Մանուկյանը 2012 թվականի դեկտեմբերի 19-ին որոշում է կայացրել իր վարությամբ գտնվող թիվ 48202312 քրեական գործն ըստ քննչական ենթակայության ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայություն (այսուհետ նաև՝ ՀՀ ՊՆ քննչական ծառայություն) ուղարկելու մասին:

ՀՀ ՊՆ քննչական ծառայության 4-րդ կայագրային քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Նալբանդյանը 2013 թվականի հունվարի 15-ին որոշում է կայացրել թիվ 48202312 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Ավագ քննիչ Մ.Նալբանդյանի 2013 թվականի փետրվարի 26-ի որոշմամբ Վ.Գևորգյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Վ.Գևորգյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

3. Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) ստացվել է 2013 թվականի ապրիլի 12-ին:

Առաջին ատյանի դատարանը, դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, 2013 թվականի հունիսի 12-ի դատավճռով Վ.Գևորգյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա

նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով: Վ.Գևորգյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

4. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 12-ի դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել Վ.Գևորգյանի պաշտպան Ա.Գրիգորյանը:

Վերաքննիչ դատարանը 2013 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, իսկ բողոքարկված դատական ակտը՝ թողել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 22-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճռաբեկ բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Մեղադրական եզրակացության համաձայն՝ Վահան Գասպարի Գևորգյանը մեղադրվում է այն բանի համար, որ «30.06.2012թ. ժամը 17-ի սահմաններում, կնոջ՝ Քաղցրիկ Հունանի Մելքոնյանի հետ իր ԳԱԶ 3110 մակնիշի ավտոմեքենայով գնացել են ՌԴ սահմանապահ զորքերի թիվ 2037 զորամասի 9-րդ ուղեկալի փարածքում գրնվող իրենց հողամասում հողագործական աշխատանքներ կատարելու: Ուղեմասի անցագրային կետի դարպասների մոտ վերակարգի մեջ ընդգրկված և որպես կրպսեր վերակարգ ծառայություն իրականացնող ՌԴ սահմանապահ զորքերի թիվ 2037 զորամասի ժամկետային զինծառայող, կրպսեր սերժանտ Անդրանիկ Կարապետի Կարապետյանը դարպասների մոտ Վ.Գևորգյանից պահանջել է ներկայացնել անչնագիր և անցագիր՝ ուղեկալի փարածք անցնելու թույլտվություն ստանալու համար: Վ.Գևորգյանը ներկայացրել է մեկ անչնագիր, սակայն դրա մեջ՝ լուսանկարում պատկերված է եղել մի ինչ-որ փարեց կին: Ա.Կարապետյանը հարցրել է, թե ում է պատկանում անչնագիրը, և Վ.Գևորգյանը պատասխանել է, որ դա իր կնոջ անչնագիրն է: Քանի որ լուսանկարի վրայի կինն եղել է փարեց, Ա.Կարապետյանը Վ.Գևորգյանին ասել է, որ դա իր կինը չէ, և որ նա սրտում է: Դրանից հետո Վ.Գևորգյանը սկսել է քաշքշել փակված, քայց չկողպված դարպասները ու նրա փեղկը բացելով՝ մտել է ներս և մեկ անգամ բռունցքով հարվածել է Ա.Կարապետյանի դեմքին՝ վերջինիս առողջությանը պարճառելով թեթև վնաս՝ առողջության կարճապահ քայքայումով: Ա.Կարապետյանը հրելով դուրս է հանել Վ.Գևորգյանին ուղեկալի փարածքից, ու նա, նստելով մեքենան, հեռացել է Բերքաշար գյուղի կողմը» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 132-135):

7. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն՝ «Դատարանը, հիմք ընդունելով մեղադրանքի հիմքում դրված նախաքննությանը չեղք քերված ապացույցները (...), ինչպես նաև գործի մյուս տվյալները, գրնում է, որ ամբաստանյալ Վահան Գասպարի Գևորգյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 2-րդ մասով կատարած հանցանքը հիմնավորված է, մեղաագրվող արարքի նկատմամբ քրեական օրենքի կիրառումը՝ ճիշտ:

Առաջադրված մեղադրանքն ամբաստանյալ Վահան Գասպարի Գևորգյանի կողմից ընդունելու և դատական քննության արագացված կարգ կիրառելու պայմաններում՝ դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ Վահան Գասպարի Գևորգյանը կատարել է հանցանք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 2-րդ մասով, որի համարել էլ վերջինս պետք է պարասխանատվություն կրի: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, քերք 188-189):

8. Վերաքննիչ դատարանի դատական ակտում արձանագրված է հետևյալը. «(...) Իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս հասցնելու դեպքում արարքը որակվում է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

Զննարկվող հանցակազմի համար անչափ կարևոր է այն հանգամանքը, որ իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնությունը կամ դրա գործադրման սպառնալիքը պետք է կապված լինեն այդ իշխանության ներկայացուցչի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ: Այդպիսի կապն առկա է այն դեպքերում, երբ հանցավորը, իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն կամ բռնության սպառնալիք գործադրելով, ցանկանում է դադարեցնել իշխանության ներկայացուցչի ծառայողական գործունեությունը կամ էլ վրեժ լուծել նրանից այդ գործունեության համար: Իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալը դրսևորվում է նրանում, որ հանցավորը, բռնություն գործադրելով, հակադրում է իշխանության ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը կամ էլ հարկադրում է նրան հրաժարվելու իր լիազորությունների իրականացումից:

Զննարկվող հանցակազմի բնութագրման համար կարևոր նշանակություն ունի իշխանության ներկայացուցչի գործողությունների իրավաչափությունը:

Իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ բռնությունը կամ դրա գործադրման սպառնալիքը կարող են համարվել կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություն և որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով միայն այն դեպքում, երբ այդ գործողությունները կատարվում են ի պարասխան իշխանության ներկայացուցչի իրավաչափ, օրինական գործողությունների:

Զննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիմադրությամբ: Հանցավորը գիտակցում է, որ բռնություն կամ

բռնության սպառնալիք է գործադրում իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավորի նկատմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հանցակազմի վերը նշված վերլուծությունը համադրելով սույն գործի հանգամանքների հետ, ամբաստանյալ Վ.Գևորգյանի կողմից Ընդհանուր իրավասության դատարանում իր մեղքն ընդունած լինելու պայմաններում, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Վահան Գասպարի [Գևորգյանի] կողմից կատարված արարքը (...) նույնանուն է ՀՀ քր. օր.-ի 316 հդ.-ի 2-րդ մասի հարկանիշներին: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 17-31):

9. Գատաբժշկական փորձագետի թիվ 128 եզրակացության համաձայն՝ Անդրանիկ Կարապետյանի առողջությանը պատճառվել է թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 33-34):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Վճռաբեկ բողոքի հեղինակի պնդմամբ՝ ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի հիմնարար խախտումներ:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքաբերը նշել է, որ Վ.Գևորգյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով, մինչդեռ վերջինիս արարքում առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը:

Վճռաբեկ բողոքի հեղինակը փաստարկել է, որ Վ.Գևորգյանի հակա-իրավական գործողությունների շարժառիթն ու նպատակը ուղղված չեն եղել իշխանության ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը խոչ-ընդոտելուն: Կրտսեր սերժանտ Ա.Կարապետյանն ուղեկալի անցազրային կետի դարպասների մոտ կանգնեցրել է հողագործական աշխատանքներ կատարելու նպատակով սեփական հողամաս ուղևորվող Վ.Գևորգյանին և նրա կնոջն ու պահանջել ներկայացնել անձնագիր և անցագիր՝ ուղեկալի տարածք անցնելու թույլտվություն ստանալու համար: Վ.Գևորգյանը, ենթարկվելով իշխանության ներկայացուցչի հանդիսացող Ա.Կարապետյանի՝ օրենքով սահմանված կարգով ներկայացրած պահանջներին, ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը: Ա.Կարապետյանը, ուսումնասիրելով Վ.Գևորգյանի կնոջ անձնագիրը, մի քանի անգամ ուշադիր նայել է անձնագրում պատկերված նկարին, ինչը դուր չի եկել Վ.Գևորգյանին, և վերջինս հարցրել է, թե ինչու է այդքան նայում անձնագրում պատկերված նկարին: Ի պատասխան՝ Ա.Կարապետյանն ասել է, որ հնարավոր է՝ այդ կինն իրեն ծանոթ է: Այնուհետև Վ.Գևորգյանի և Ա.Կարապետյանի միջև տեղի է ունեցել կենցաղային բնույթի խոսակցություն, ինչը կապված չի եղել

իշխանության ներկայացուցչի կողմից իր լիազորությունների կատարման հետ: Ա.Կարապետյանը, դուրս գալով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով կարգավորվող իրավահարաբերությունից, զազրախոսել է Վ.Գևորգյանի հետ: Առաջացած միջանձնային հարաբերությունների ընթացքում, խանդի շարժառիթով, լինելով վիրավորված, իր պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու նպատակով, չունենալով նպատակ խոչընդոտելու իշխանության ներկայացուցչի հանդիսացող Ա.Կարապետյանի գործունեությանը, վերջինիս կողմից իր՝ ծառայողական պարտականությունները կատարելու հետ չկապված, Վ.Գևորգյանը մեկ անգամ բռունցքով հարվածել է նրա դեմքին և, ունենալով իրական հնարավորություն սահմանված կարգի խախտմամբ, առանց համապատասխան թույլտվության մուտք գործել ուղեկալի տարածք՝ մուտք չի գործել և հեռացել է:

11. Գտնելով, որ կայացված դատական ակտերը օրինական, հիմնավոր և պատճառաբանված չեն, դրանցով խախտվել են օրինականության և արդարության սկզբունքները, ինչի արդյունքում ընդունված դատական ակտերը խաթարում են արդարադատության բուն էությունը, խախտում սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը՝ վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի հունիսի 12-ի դատավճիռն ու Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 22-ի որոշումը և գործն ուղարկել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակն օրենքի միատեսակ կիրառության, մասնավորապես՝ իրավունքի զարգացման գործառույթի իրացման ապահովումն է: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու հանցակազմի (ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդված) բովանդակության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Ուստի, անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ մասն գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Վ.Գևորգյանին մեղազարկված արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներին:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի համաձայն՝

«1. Իշխանության ներկայացուցչի կամ նրա ներշնչվոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վիրանգավոր բռնություն

գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝ պատժվում է (...):

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անչանց նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը՝ կապված նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ՝ պատժվում է (...):»:

Մեջբերված նորմով նախատեսված հանցակազմի անմիջական օբյեկտը կառավարման բնականոն գործունեության, ինչպես նաև իշխանության ներկայացուցիչների կողմից կառավարման հետ կապված իրենց լիազորությունների իրականացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ հանդես են գալիս իշխանության ներկայացուցիչների (նրանց մերձավորների) կյանքը, առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով՝ կապված իշխանության ներկայացուցչի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ:

Կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն է համարվում այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ուղղված են անձի առողջությանը ցանկացած ծանրության (թեթև, միջին կամ ծանր) վնաս պատճառելուն կամ սպանելուն: Ընդ որում, արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով որակելու համար պարտադիր է, որ իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելը կապված լինի իշխանության ներկայացուցչի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ: Այդպիսի կապն առկա է այն դեպքերում, երբ հանցավորը, իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելով, ցանկանում է դադարեցնել իշխանության ներկայացուցչի ծառայողական գործունեությունը կամ վրեժ լուծել նրանից այդ գործունեության համար:

15. Իշխանության ներկայացուցչի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելը ենթադրում է, որ իշխանության ներկայացուցիչը գործում է օրենքով և այլ իրավական ակտերով նրան վերապահված լիազորությունների շրջանակում: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որպեսզի իշխանության ներկայացուցչի գործողությունները լինեն իրավաչափ, հակառակ դեպքում արարքը չի կարող գնահատվել որպես կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություն:

Այն դեպքում, երբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելը կապված չէ իշխանության ներկայացուցչի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, ինչպես նաև՝

որպես իշխանության ներկայացուցիչ հանդես եկող անձի գործողություններն ապօրինի են, նրա կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելը կարող է որակվել որպես անձի կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործություն (համապատասխան հանցակազմերի մնացած հատկանիշների առկայության դեպքում):

Սուբյեկտիվ կողմից հիշյալ հանցագործությունը կատարվում է ուղղակի դիտավորությամբ՝ արարք կատարած անձը գիտակցում է, որ իշխանության ներկայացուցիչ կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն է գործադրում կամ բռնության սպառնալիք է տալիս: Ընդ որում, սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանցանք կատարած անձի նպատակը՝ խոչընդոտել իշխանության ներկայացուցիչ ծառայողական գործունեությանը կամ դադարեցնել այն, կամ էլ շարժառիթը՝ վրեժ լուծել իշխանության ներկայացուցիչ նրա գործունեության համար:

16. Սույն գործի նյութերից հետևում է, որ գործի քննությունն Առաջին ատյանի դատարանում իրականացվել է արագացված կարգով: Հետևաբար, Վ.Գևորգյանի կատարած արարքի քրեաիրավական որակման հիմնավորվածության հարցը քննարկելիս Վճռաբեկ դատարանը որպես հիմք պետք է ընդունի Վ.Գևորգյանին մեղսագրված արարքի՝ մեղադրական եզրակացությունում արտացոլված և ստորադաս դատարանների կողմից հիմք ընդունված փաստերի նկարագրությունը:

Այսպես, սույն գործով մինչդատական վարույթն իրականացնող մարմինը և Առաջին ատյանի դատարանը հաստատված են համարել, որ 2012 թվականի հունիսի 30-ին՝ ժամը 17-ի սահմաններում, Վ.Գևորգյանը կնոջ՝ Բ.Մելքոնյանի հետ իր ավտոմեքենայով գնացել են Ռ-Դ-ի սահմանապահ զորքերի թիվ 2037 զորամասի 9-րդ ուղեկալի տարածքում գտնվող իրենց հողամաս՝ հողագործական աշխատանքներ կատարելու: Ուղեմասի անցագրային կետի դարպասների մոտ վերակարգի մեջ ընդգրկված և որպես կրտսեր վերակարգ ծառայություն իրականացնող Ռ-Դ սահմանապահ զորքերի ժամկետային զին-ծառայող, կրտսեր սերժանտ Ա.Կարապետյանը Վ.Գևորգյանից պահանջել է ներկայացնել անձնագիր և անցագիր՝ ուղեկալի տարածք անցնելու թույլտվություն ստանալու համար: Վ.Գևորգյանը ներկայացրել է մեկ անձնագիր, որի լուսանկարում պատկերված է եղել տարեց կին: Ա.Կարապետյանը հարցրել է, թե ում է պատկանում անձնագիրը, Վ.Գևորգյանը պատասխանել է, որ դա իր կնոջ անձնագիրն է: Քանի որ լուսանկարում պատկերված կինն եղել է տարեց, Ա.Կարապետյանը Վ.Գևորգյանին ասել է, որ դա իր կինը չէ, և որ նա ստում է: Դրանից հետո Վ.Գևորգյանը սկսել է քաշքշել փակված, բայց չկողպված դարպասներն ու նրա փեղկը բացելով՝ մտել է ներս ու մեկ անգամ բռունցքով հարվածել է Ա.Կարապետյանի դեմքին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով: Ա.Կարապետյանը հրելով դուրս է հանել Վ.Գևորգյանին ուղեկալի տարածքից ու նա, նստելով

մեքենան, հեռացել է Բերքաշատ գյուղի կողմը (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետերը):

Վերաքննիչ դատարանը, վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածը, իրավացիորեն նշել է, որ իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնությունը կամ դրա գործադրման սպառնալիքը պետք է կապված լինեն իշխանության ներկայացուցչի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, արձանագրել է նաև, որ այդպիսի կապն առկա է այն դեպքերում, երբ հանցավորը, իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիք տալով ցանկանում է դադարեցնել իշխանության ներկայացուցչի ծառայողական գործունեությունը կամ էլ վրեժ լուծել նրանից այդ գործունեության համար: Վերաքննիչ դատարանը շեշտել է իշխանության ներկայացուցչի գործողությունների իրավաչափության կարևոր նշանակությունը և արձանագրել, որ իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ բռնությունը կամ դրա գործադրման սպառնալիքը կարող են համարվել կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություն և որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով միայն այն դեպքում, երբ այդ գործողությունները կատարվում են ի պատասխան իշխանության ներկայացուցչի իրավաչափ, օրինական գործողությունների: Այս պայմաններում Վերաքննիչ դատարանը, առանց վերլուծելու Վ.Գևորգյանին մեղսագրվող հանցանքի փաստական կողմը, եզրահանգել է, որ նրա կատարած արարքը նույնանում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներին (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Մինչդեռ, Վ.Գևորգյանին մեղսագրված արարքի՝ վերը մեջբերված փաստերի նկարագրությունից երևում է, որ Վ.Գևորգյանը, ենթարկվելով կրտսեր սերժանտ Ա.Կարապետյանի օրինական պահանջին, ուղեկալի տարածքում գտնվող հողամաս անցնելու նպատակով ներկայացրել է կնոջ՝ Ք.Մելքոնյանի անձնագիրը: Դրանից հետո Ա.Կարապետյանը Վ.Գևորգյանին առանց հիմքի մեղադրել է ստախտության մեջ, նշելով, որ դա իր կնոջ անձնագիրը չէ: Առաջացած միջանձնային հարաբերությունների ընթացքում, լինելով վիրավորված, Վ.Գևորգյանը մեկ անգամ բռունցքով հարվածել է Ա.Կարապետյանի դեմքին և, ունենալով իրական հնարավորություն սահմանված կարգի խախտմամբ, առանց համապատասխան թույլտվության մուտք գործել ուղեկալի տարածք՝ մուտք չի գործել և հեռացել է: Նշվածից հետևում է, որ Վ.Գևորգյանի կողմից գործադրված՝ սուստի առողջության համար վտանգավոր բռնությունը կապված չի եղել Ա.Կարապետյանի՝ որպես իշխանության ներկայացուցչի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, ուղղված չի եղել այդ պարտականությունները կատարելուն խոչընդոտելուն կամ դրանք կատարելու համար նրանից վրեժ լուծելուն:

Ինչ վերաբերում է դատախազի վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ ուսումնասիրելով անձնագիրը՝ Ա.Կարապետյանը մի քանի անգամ ուշադիր նայել է անձնագրում պատկերված նկարին, ինչը դուր չի եկել Վ.Գևորգյանին

և վերջինս հարցրել է, թե ինչու է այդքան նայում անձնագրում պատկերված նկարին, ինչին ի պատասխան Ա.Կարապետյանն ասել է, որ հնարավոր է, որ այդ կինն իրեն ծանոթ է (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը), ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական քննության արագացված կարգի կիրառմամբ քննված գործերով դատարանն իրավասու չէ դուրս գալ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից հաստատված փաստական հանգամանքների շրջանակներից: Տվյալ դեպքում, սույն գործի նախաքննությունն իրականացնող մարմինը մնան փաստական հանգամանքներ հաստատված չի համարել, հետևաբար Վճռաբեկ դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնել դրանք:

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստերը գնահատելով 14-15-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վ.Գևորգյանին մեղսագրված արարքը չի պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, քանի որ բացակայում են օբյեկտիվ կողմի (իշխանության ներկայացուցչի ծառայողական պարտականությունների հետ կապվածությունը) և սուբյեկտիվ կողմի (նպատակը) պարտադիր հատկանիշները:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավորված չեն ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Վ.Գևորգյանին մեղսագրված արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներին:

Անդրադառնալով ստորադաս դատարանների այն փաստարկին, որ Վ.Գևորգյանը դատարանում իրեն մեղավոր է ճանաչել առաջադրված մեղադրանքում և միջնորդել գործը քննել արագացված կարգով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընգծել, որ ամբաստանյալի կողմից իրեն առաջադրված մեղադրանքի փաստական հանգամանքներն ընդունելը և առաջադրված մեղադրանքին համաձայնելը դատարանին չի ազատում կատարված հանրորեն վտանգավոր արարքը իրավաբանորեն ճիշտ որակելու, այն է՝ քրեական օրենքը ճիշտ կիրառելու պարտականությունից (տե՛ս Վարդան Ալիխանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ՀՅԶԲԴ/0046/01/08 որոշման 11-13-րդ կետերը):

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի ոչ ձիշտ կիրառումը քրեական օրենքի կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի այն հոդվածի կամ հոդվածի այն մասի կիրառումն է, որը ենթակա չէր կիրառման, կամ այն հոդվածի կամ հոդվածի այն մասի չկիրառումն է, որը ենթակա էր կիրառման, կամ քրեական օրենքի կամ միջազգային պայմանագրի սխալ մեկնաբանումն է, որը չի համապատասխանում դրա իսկական իմաստին»:*

Այսպիսով, ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում՝ կիրառել են քրեական օրենքի այն հոդվածը, որը ենթակա չէր կիրառման և չեն կիրառել քրեական օրենքի այն հոդվածը, որը ենթակա էր կիրառման: Սույն գործով թույլ է տրվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով նախատեսված քրեադատավարական օրենքի էական խախտում, քանի որ խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածում ամրագրված՝ դատավճռի օրինական լինելու մասին ընդհանուր պահանջը: Նշված նյութական և դատավարական իրավունքի խախտումները, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու հիմք են:

19. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը բեկանելը պայմանավորված է նրանով, որ ստորադաս դատարաններում գործի դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք համապատասխանում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին: Սույն գործով քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառումը հանգեցրել է դատական սխալի, որի արդյունքում կայացված դատական ակտերը չեն համապատասխանում արդարության պահանջներին:

Նշված դատական սխալը, որն ազդել է գործի արդյունքի վրա, խաթարում է արդարադատության բուն էությունը, դատարանի որոշման՝ որպես արդարադատության ակտի իմաստը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը: Ուստի անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա բեկանել և փոփոխել ստորադաս դատարանների դատական ակտերը, քանի որ դրանցով հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնել նման ակտ, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

20. Սույն գործի ուսումնասիրությունից երևում է, որ Վ.Գևորգյանը մեկ անգամ ձեռքով հարվածել է Ա.Կարապետյանին՝ վերջինիս առողջությանը պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով (տես սույն որոշման 9-րդ կետը), որը, ինչպես վերը նշվեց, առնչություն չունի իշխանության ներկայացուցչի կողմից իր լիազորությունների կատարման հետ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վ.Գևորգյանի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, որի համաձայն՝

«Դիպրավորությանը մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելը, որն առաջացրել է առողջության կարճատև քայքայում կամ ընդհանուր աշխարունակության աննշան կայուն կորուստ»

պայրժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով»:

ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման (այսուհետ նաև՝ Համաներման ակտ) 5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ «Քրեական հետապնդում չհարուցել և քրեական հետապնդում չիրականացնել, ինչպես նաև կարճել մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը կատարած հանցագործությունների վերաբերյալ հետաքննության մարմինների, նախաքննության մարմինների կամ դատարանների վարույթում գրեթե քրեական գործերը, բացառությամբ սույն որոշման 8-րդ կետի 4-6-րդ ենթակետերով և 9-րդ կետով նախատեսված դեպքերի, որոնցով՝

(...)

2) անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով ազատազրկում.

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

(...)

13) ընդունվել է համաներման ակտ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, հայրնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածի սանկցիան նախատեսում է պատիժ տուգանքի, ինչպես նաև առավելագույնը երկու ամիս ժամկետով կալանքի ձևով, իսկ Համաներման ակտի 5-րդ կետի 2-րդ ենթակետը նախատեսում է կարճել մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ը կատարած հանցագործությունների վերաբերյալ քրեական այն գործերը, (բացառությամբ որոշման 8-րդ կետի 4-6-րդ ենթակետերով և 9-րդ կետով նախատեսված դեպքերի), որոնցով անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով ազատազրկում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Համաներման ակտի 5-րդ կետի 2-րդ ենթակետը կիրառելի է դատապարտյալ Վ.Գևորգյանի նկատմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ քրեական գործի նյութերում բացակայում է Համաներման ակտը Վ.Գևորգյանի նկատմամբ

կիրառելուն խոչընդոտող որևէ հանգամանք: Համաներման ակտի կիրառմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով Վ.Գևորգյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նաև այն, որ վերջինս արդեն հնարավորություն ունեցել է դատական բոլոր ստյաններում վիճարկել իրեն առաջադրված մեղադրանքը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և նույն հոդվածի 5-րդ մասի հիման վրա Վ.Գևորգյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով քրեական գործի վարույթը պետք է կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ, 92-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ, 35-րդ, 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դատապարտյալ Վահան Գասպարի Գևորգյանի վերաբերյալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի 2013 թվականի հունիսի 12-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի նոյեմբերի 22-ի որոշումը բեկանել և փոփոխել:

2. Վահան Գասպարի Գևորգյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հանցանքի մեջ և «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի հիման վրա նրա վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

55.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ՇԳ-2/0007/15/13
Նախագահող դատավոր՝ Լ.Թադևոսյան

ՇԳ-2/0007/15/13

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
Հ.ԱՍՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 16-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով դատապարտյալ Բաբկեն Ռազմիկի Միսակյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի մայիսի 30-ի որոշման դեմ դատախազ Կ.Գաբրիելյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Ղազախատանի Հանրապետության Կոստանայի մարզային դատարանի 2006 թվականի մայիսի 29-ի դատավճռով Բաբկեն Ռազմիկի Միսակյանը մեղավոր է ճանաչվել Ղազախատանի Հանրապետության քրեական օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետով և 103-րդ հոդվածի 1-ին մասով: ՂՀ քրեական օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետով Բ.Միսակյանի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 15 (տասնհինգ) տարի

ժամկետով, իսկ 103-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով: ՂՀ քրեական օրենսգրքի 58-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ՝ հանցանքների համակցությամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով, Բ.Միսակյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 17 (տասնյոթ) տարի ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2005 թվականի սեպտեմբերի 8-ից՝ պատժի մեջ հաշվակցելով 2004 թվականի օգոստոսի 23-ից մինչև 2005 թվականի սեպտեմբերի 8-ը Ռուսաստանի Դաշնությունում հանձնման (էքստրադիցիա) նպատակով Բ.Միսակյանի կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը:

Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազությունների երկկողմ համաձայնությամբ, հետագա պատիժը Հայաստանի Հանրապետությունում կրելու համար Բ.Միսակյանը 2009 թվականի ապրիլի 30-ին հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը:

2009 թվականի հունիսի 18-ին ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչությունը դիմել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ Բ.Միսակյանի վերաբերյալ Ղազախստանի Հանրապետության Կոստանայի մարզային դատարանի 2006 թվականի մայիսի 29-ի դատավճիռը ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու միջնորդությամբ:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության միջնորդությունը բավարարվել է. Ղազախստանի Հանրապետության Կոստանայի մարզային դատարանի 2006 թվականի մայիսի 29-ի դատավճռով ՂՀ քրեական օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասով Բ.Միսակյանին մեղսագրված արարքի քրեաիրավական որակումը համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասին և դատավճռով նշանակված պատիժը թողնվել է անփոփոխ՝ ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով: ՂՀ քրեական օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետով Բ.Միսակյանին մեղսագրված արարքի քրեաիրավական որակումը համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետին և պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 12 (տասներկու) տարի ժամկետով: 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ՝ հանցագործությունների համակցությամբ Բ.Միսակյանի նկատմամբ պատիժ է սահմանվել ազատազրկում՝ 12 (տասներկու) տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ՝ նշանակված պատժի մեջ հաշվակցվել է 2004 թվականի օգոստոսի 23-ից մինչև 2005 թվականի սեպտեմբերի 8-ը Ռուսաստանի Դաշնությունում հանձնման (էքստրադիցիա) նպատակով

Բ.Միսակյանի կալանքի տակ գտնվելու 1 (մեկ) տարի 15 (տասնհինգ) օր ժամկետը և վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի 11 (տասնմեկ) ամիս 15 (տասնհինգ) օր ժամկետով՝ պատժի սկիզբը հաշվելով 2005 թվականի սեպտեմբերի 8-ից:

2. ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող դատապարտյալ Բ.Միսակյանը 2013 թվականի նոյեմբերի 25-ին դիմել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով իր նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի պահանջները, այն է՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ եղած ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց հաշվակցել իր նկատմամբ նշանակված պատժին:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ դատապարտյալ Բ.Միսակյանի դիմումը մերժվել է:

3. Դատապարտյալ Բ.Միսակյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի մայիսի 30-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը բավարարելու, Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 3-ի որոշումը բեկանելու մասին: ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածների կիրառմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի (նախկին՝ 18.04.2003թ. խմբագրությամբ գործող) 69-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված կանոնների համաձայն՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը դատապարտյալ Բ.Միսակյանին նախնական կալանքի տակ պահելու ժամկետը՝ 2004 թվականի օգոստոսի 23-ից մինչև 2006 թվականի օգոստոսի 9-ը, որը կազմում է 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս 17 (տասնյոթ) օր, հաշվակցվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ Բ.Միսակյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով մեկուկես օրվա դիմաց:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 30-ի որոշման դեմ Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ Կ.Գաբրիելյանը բերել է վճարելի բողոք, որը Վճարելի դատարանի 2014 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցները վճարելի բողոքի պատասխան չեն ներկայացրել:

Գործի փաստական հանգամանքները և վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. Ղազախստանի Հանրապետության Կոստանայի մարզային դատարանի 2006 թվականի մայիսի 29-ի դատավճռով Բ.Միսակյանը դատապարտվել է հետևյալ արարքների համար.

2000 թվականի հոկտեմբերի 7-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, Բ.Միսակյանը, Ս.Սկրտչյանի և հետախուզման մեջ գտնվող երրորդ անձանց

հետ միասին գտնվելով Ղազախստանի Կոստանայ քաղաքի Կաիրբեկովի փողոցի թիվ 345 հասցեում գտնվող «Իվա» սրճարանի առանձնացված խցիկներից մեկում, գրուցել և ոգելից խմիչքներ են օգտագործել: Չրույցի ընթացքում ծագած վիճարանության ընթացքում Բ.Միսակյանն ու վերոհիշյալ երրորդ անձինք ծեծի են ենթարկել Ս.Սկրտչյանին՝ նրա առողջությանը դիտավորությամբ պատճառելով թեթև, միջին և ծանր աստիճանի տարբեր մարմնական վնասվածքներ: Այլ քաղաքացիների միջամտությամբ ծեծկոտուքը դադարել է, որից հետո բոլորը դուրս են եկել սրճարանի ընդհանուր սրահ, որտեղ Բ.Միսակյանը, Ս.Սկրտչյանին սպանելու դիտավորությամբ, առջևից դանակով հարվածել է նրա կրծքավանդակին և առողջությանը պատճառել կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս: Նույն պահին Ս.Սկրտչյանին թիկունքից դանակով հարվածել է Բ.Միսակյանի հետ սրճարան եկած անձանցից մեկը՝ դարձյալ Ս.Սկրտչյանի առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս: Դրանից հետո Բ.Միսակյանը և վերոհիշյալ երրորդ անձինք, օգտվելով խառնաշփոթից, թաքնվել են դեպքի վայրից: Ստացած մարմնական վնասվածքների հետևանքով Ս.Սկրտչյանը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է:

6. Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 3-ի որոշման մեջ արձանագրված է հետևյալը. «Համաչայն ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի թիվ ԵԷԴ/0033/15/09 18.04.2013թ. որոշման ի թիվս այլ հարցերի (...) ՀՀ Վճռաբեկ դատարանը արչանագրել է, որ հանցանք կատարելու պահին գործող օրենքով ղեկավարվելու պահանջը կիրառելի է բացառապես քրեական հետապնդման հարցը լուծելիս, իսկ պատժի կատարման պայմանները սպառնալից նպատակով իրականացվող համապատասխանեցման ընթացքում դատարանը իրավասու չէ կիրառել այն, քանզի նշված պահանջի հիման վրա օտարերկրյա պետության դատարանի կողմից նշանակված պատժը փոփոխելու արդյունքում տեղի կունենա Հայաստանի Հանրապետության կողմից սրանհետև միջազգային պարզավորությունների խախտում:

Հինք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գրել է, որ պատժի կատարման (հետագա կրման) նպատակով Հայաստանի Հանրապետությանը հանձնված անչի նկատմամբ օտարերկրյա պետության դատարանի կողմից կայացված դատավճիռը ճանաչելու և ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանի իրավագործությունը սահմանափակված է փոխանցման պահին գործող քրեական օրենքով: Այլ խոսքով՝ պատժի պայմանները կատարելու նպատակով ՀՀ-ին հանձնված անչի նկատմամբ օտարերկրյա պետության դատարանի կողմից կայացված դատավճիռը, այդ թվում՝ նշանակված պատժի մասով պետք է համապատասխանեցվի դատապարտյալի փոխանցման պահին գործող ՀՀ քր. օր-ի համապատասխան դրույթներով:

18.04.2003թ. ընդունված ՀՀ քր. օր-ի 69 հոդվածի 3-րդ մասով նախատեսված դրույթները, որ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը

նախնական կալանքի փակ գրկվելու մեկ օրը պետք է հաշվել մեկ ու կես օրով, գործել է մինչև 09.06.2004թ. ընդունված «ՀՀ քր. օր-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-97-Ն ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը, մինչդեռ դատապարտյալ Բ.Միսակյանը նախնական կալանքի փակ է գրկվել 23.08.2004թ-ից:

(...) Այսպիսով, դատարանը գտնում է, որ դիմումով քերված միջնորդությունն անհիմն է և ենթակա է մերժման» (տե՛ս նյութեր, քերք 22-23):

7. Վերաքննիչ դատարանը, հիշատակելով Վճռաբեկ դատարանի՝ Գ.Պողոսյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳՂ-1/0013/01/11 և Վ.Գալոյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0008/15/13 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ «(...) դատապարտյալ Բ.Միսակյանն իրեն մեղսագրված հանցավոր արարքները կատարել է մինչև 2004 թվականի հուլիսի 24-ը, հետևաբար Բ.Միսակյանի նախնական կալանքի փակ եղած ժամկետը՝ 2004 թվականի օգոստոսի 23-ից մինչև 2006 թվականի օգոստոսի 9-ը, որը կազմում է 1 (մեկ) փարի 11 (փասանեկ) ամիս և 17 (փասանոթ) օր, ենթակա է հաշվակցման նրա նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով մեկուկես օրվա դիմաց:

(...) Վերոշարադրյալի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատապարտյալ Բ.Միսակյանի դիմումի հիման վրա քննարկելով կալանքի ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց նշանակված պատժի ժամկետին հաշվակցելու հարցը, Առաջին աստիճանի դատարանը դրասանթույլատրելիության վերաբերյալ եկել է սխալ եզրահանգման ու դատապարտյալ Բ.Միսակյանի վիճակն այլ կերպ բարելավող քրեական օրենքին հետադարձ ուժ չբաշխված անպետք է ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածներով ամրագրված օրենսդրական պահանջը, ինչպես նաև այդ կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ սույն որոշման պարճառաբանական մասում վկայակոչված իրավական դիրքորոշումը, արդյունքում թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում, ինչը վիճարկվող դատական ակտը բեկանելու բավարար հիմք է, հետևաբար դատապարտյալ Բ.Միսակյանի վերաքննիչ բողոքը պետք է բավարարել, բեկանել «Դիմումը մերժելու մասին» Առաջին աստիճանի դատարանի որոշումը՝ բավարարելով կալանքի ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց նշանակված պատժի ժամկետին հաշվակցելու վերաբերյալ դատապարտյալ Բ.Միսակյանի դիմումը: (...)» (տե՛ս նյութեր, քերք 66-80):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

8. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավորված չէ, այն հակասում է Վճռաբեկ դատարանի 2013 թվականի ապրիլի 18-ի թիվ ԵԷԴ/0033/15/09 որոշմանը:

Ի հիմնավորումն իր փաստարկի՝ բողոքարեղը, հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/0033/15/09 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, շեշտել է, որ պատժի կատարման պայմաններն ապահովելու նպատակով իրականացվող համապատասխանեցման ընթացքում դատարանն իրավասու չէ կիրառել հանցանքը կատարելու պահին գործող օրենքը, քանզի նշված պահանջի հիման վրա օտարերկրյա պետության դատարանի կողմից նշանակված պատիժը փոփոխելու արդյունքում տեղի կունենա ՀՀ միջազգային պարտավորությունների խախտում:

Պատժի կատարման նպատակով հանձնված անձի նկատմամբ օտարերկրյա պետության դատարանի կողմից կայացված դատավճիռը ճանաչելու և ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանի իրավագործությունը սահմանափակված է փոխանցման պահին գործող քրեական օրենքով:

9. Բողոքի հեղինակն ընդգծել է, որ հիշատակված որոշմամբ Վճռաբեկ դատարանը շեշտել է, որ պատժի պայմանները կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետությանը հանձնված անձի նկատմամբ օտարերկրյա պետության դատարանի կողմից կայացված դատավճիռը, այդ թվում՝ նշանակված պատժի մասով, պետք է համապատասխանեցվի դատապարտյալի փոխանցման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներին:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել առ այն, որ Առաջին ատյանի դատարանի կողմից անտեսվել են ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ, 13-րդ հոդվածների պահանջները և անձի վիճակը բարելավող օրենքը դատապարտյալ Բ.Միսակյանի նկատմամբ հետադարձ ուժ չի ստացել:

10. Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 30-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 30-ի որոշումը հակասո՞ւմ է արդյոք *Գ.Հովսեփյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի ապրիլի 18-ի թիվ ԵԷԴ/0033/15/09 որոշմանը:

12. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատարանն արյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:*

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի*

կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն րվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն րվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

13. Մեջբերված իրավադրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել *ԱՄինոնյանի* գործով որոշման մեջ՝ արձանագրելով, որ «(...) ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշման կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է ղեկավարվի *Ս.Այվազյանի* գործով որոշման 26-րդ կետում ամրագրված չափանիշներով, քանի որ դրանք վերաբերելի են ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, այնպես էլ վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշումների կիրառելիության հարցի լուծման շրջանակներին» (տե՛ս Անահիտ Միմոնյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԴ/0055/11/13 որոշման 15-րդ կետը):

Ս.Այվազյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշման 26-րդ կետի համաձայն՝ «(...) ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների փարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների փարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի

առնի նաև այն, թե Կրվյալ դատարանի ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը՝ եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն» (տե՛ս Սեյրան Այվազյանի գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-17/08 որոշման 26-րդ կետը):

Վերահաստատելով Ա.Միմոնյանի և Ս.Այվազյանի գործերով որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանի որոշումները պարտադիր են ստորադաս դատարանների համար նույնաման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ: Ընդ որում, նկատի ունենալով, որ յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, Վճռաբեկ դատարանի որոշման կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է պարզի, թե դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, թե կոնկրետ: Այն դեպքում, երբ դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն: Մինչդեռ, եթե Վճռաբեկ դատարանի որոշման հիմնավորման բովանդակությունը կազմող դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա տվյալ դատական ակտի հիմնավորումների կիրառության համար բավարար է նաև կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրությունը:

Այս ընդհանուր կանոնից բացառություն են միայն այն դեպքերը, երբ ստորադաս դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ տվյալ դատական ակտի հիմնավորումները կիրառելի չեն քննվող գործի փաստական հանգամանքների նկատմամբ:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499⁸-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օրարերկրյա պետությունների դատարանների դատավճիռները ենթակա են ճանաչման Հայաստանի Հանրապետությունում:

2. Օրարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու հիմքերը, ճանաչման ենթակա դատավճիռների (որոշումների) տեսակները սահմանվում են Կրվյալ պետության հետ կնքված կամ նրա մասնակցությամբ գործող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով: (...):»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև պատժի կատարման (հետագա կրման) նպատակով դատապարտյալների փոխանցման վերաբերյալ երկկողմ իրավահարաբերությունները կարգավորվում են 1998 թվականի մարտի 6-ին

Մոսկվայում կնքված «Պատժի հետագա կրման համար ազատագրվածան դատապարտվածներին փոխանցելու մասին» կոնվենցիայով (այսուհետ՝ Մոսկվայի կոնվենցիա):

Մոսկվայի կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի քաղաքացիները, ինչպես նաև նրա փարածքում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք ազատագրվածան են դատապարտվել մյուս Պայմանավորվող կողմում, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան պարիժը կրելու համար կարող են փոխանցվել այն Պայմանավորվող կողմին, որի քաղաքացիներն են նրանք հանդիսանում կամ որի փարածքում մշտապես բնակվում են (եթե քաղաքացիություն չունեցող անձ են հանդիսանում)»:

Մոսկվայի կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Վճռի կատարման պետությունը ապահովում է պարժի կրման շարունակությունն իր օրենսդրությանը համապատասխան՝ չվարժարացնելով դատապարտյալի վիճակը: (...): Գաղապարտյալը նշանակված պարիժը կրում է վճռի կայացման պետության դատարանի վճռի հիման վրա: (...): Վճռի կատարման պետության դատարանը, ելնելով կայացված վճռից, որոշում է ընդունում դրա կատարման մասին՝ համաձայն իր պետության օրենքի սահմանելով ազատագրվածան այնպիսի ժամկետ, ինչպիսին նշանակվել է վճռով: (...):»:

Մեջբերված նորմերը, ինչպես նաև 1983 թվականի մարտի 21-ին Ստրասբուրգում կնքված «Գատապարտյալների փոխանցման մասին» կոնվենցիայի համապատասխան դրույթները և ՀՀ քրեական օրենսգրքի 12-15-րդ հոդվածները Վճռաբեկ դատարանը համադրված վերլուծության է ենթարկել Գ.Հովսեփյանի գործով որոշման մեջ՝ հայտնելով հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես Ստրասբուրգի կոնվենցիան, այնպես էլ Մոսկվայի կոնվենցիան, նախարեսելով պայմանագրի կողմ հանդիսացող պետության փարածքում դատապարտված անձին պարժի կատարման (հետագա կրման) նպատակով կողմ հանդիսացող մեկ այլ պետությանը փոխանցելու հնարավորություն, սահմանում են նաև դատավճռի կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտ դատավարական գործողությունների իրականացման (տվյալ դեպքում՝ դատավճիռը Կատարող պետության օրենսդրությանը համապատասխանեցնելու) ընթացքում իրավասու մարմինների իրավագործության սահմանները, այդ թվում՝ դատավճռով նշանակված պարիժը փոխելու առումով: (...):»

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շարադրված կոնվենցիոն դրույթները չեն կարող մեկնաբանվել այնպես, որ դատավճռի համապատասխանեցման հարցի անհրաժեշտությունը քննելիս Կատարող պետության իրավասու մարմինները ղեկավարվեն հանցավորի կողմից արարքի փաստացի կատարման ժամանակ գործող օրենսդրությամբ: Ինչպես Ստրասբուրգի, այնպես էլ Մոսկվայի կոնվենցիաները նման իրավական պահանջ չեն բովանդակում և խոսքն այսպես գնում է դատապարտյալի փոխանցման պահին

Կատարող պետության փարածքում գործող օրենսդրության մասին:

(...)

[ՀՀ քրեական օրենսգրքի 12-15-րդ հոդվածների] համադրված վերլուծությունից սկսեալով է, որ օրենսդիրն արարքի հանցավորությունը և պարտեզությունը պայմանավորում է այն պետության օրենսդրությանը, որի փարածքում կատարվել է ուրնչգությունը, իսկ ՀՀ քրեական օրենքի գործողությունը, այդ թվում՝ հանցանքի կատարման պահին գործող օրենքով ղեկավարվելու պահանջը, փարածում է միայն այն անչանց նկատմանը, որննց քրեական պարասխասնարվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության փարածքում: Պարժի կատարման (հերագա կրման) նպարակով հանչնված անչի նկատմանը օրարերկրյա պետության դարարանի դարավմիռը ճանաչելու և համապարասխասնեցնելու նպարակով իրականացվող դարավարական գործողությունները որևէ կերպ չեն կարող նույնացվել անչին քրեական պարասխասնարվության ենթարկելու գործընթացի հեր, հերհարար Վճռաբեկ դարարանը փարում է, որ ՀՀ ներպերական օրենսդրությունը չի պարավորեցնում իրավասու մարմիններին համապարասխասնեցում կարարելիս ղեկավարվել հանցանքի կատարման պահին գործող քրեական օրենքով:

Վճռաբեկ դարարանը փարում է, որ ինչպես (...) պարժի կատարման (հերագա կրման) նպարակով դարապարայունների փոխանցման վերաբերյալ երկկողմ իրավահարաբերությունները կարգավորող կոնվենցիաները, այնպես էլ ՀՀ ներպերական օրենսդրությունը չեն բովանդակում իրավական պահանջ առ այն, որ կարարումն ապահովելու նպարակով անհրաժեշտ դարավարական գործողությունների իրականացման ընթացքում իրավասու մարմինները (դարարանները) պերք է ղեկավարվեն հանցանքը կարարելու պահին գործող քրեական օրենքով:

Վճռաբեկ դարարանն արչանագրում է նաև, որ հանցանքը կարարելու պահին գործող օրենքով ղեկավարվելու պահանջը կիրառելի է բացառապես քրեական հերապնդման հարցը լուծելիս, իսկ պարժի կատարման պայմաններն ապահովելու նպարակով իրականացվող համապարասխասնեցման ընթացքում դարարանն իրավասու չէ կիրառել այն, քանզի նշված պահանջի հիման վրա օրարերկրյա պետության դարարանի կողմից նշանակված պարիժը փոփոխելու արդյունքում րեղի կունենա Հայաստանի Հանրապետության կողմից սրանչնած միջագային պարավորությունների իսխարում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դարարանը գրնում է, որ պարժի կատարման (հերագա կրման) նպարակով Հայաստանի Հանրապետությանը հանչնված անչի նկատմանը օրարերկրյա պետության դարարանի կողմից կայացված դարավմիռը ճանաչելու և ՀՀ օրենսդրությանը համապարասխասնեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դարարանի իրավագորությունը սահմանափակված է փոխանցման պահին գործող քրեական օրենքով: Այլ իոսքով՝ պարժի պայմանները կարարելու նպար-

յրակով Հայաստանի Հանրապետությանը հանձնված անչի նկատմամբ օտարերկրյա պետության դատարանի կողմից կայացված դատավճիռը, այդ թվում՝ նշանակված պատժի մասով, պետք է համապատասխանեցվի դատապարտչայի փոխանցման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներին» (տե՛ս Գարեգին Հովսեփյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի ապրիլի 18-ի թիվ ԵԷԳ/0033/15/09 որոշման 13-15-րդ կետերը):

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ Ղազախստանի Հանրապետության Կոստանայի մարզային դատարանի 2006 թվականի մայիսի 29-ի դատավճռով Բ.Միսակյանը մեղավոր է ճանաչվել ՂՀ քրեական օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետով, 103-րդ հոդվածի 1-ին մասով և հանցանքների համակցությամբ Բ.Միսակյանի նկատմամբ պատժ է նշանակվել ազատազրկում՝ 17 տարի ժամկետով: Պատժի սկիզբը հաշվվել է 2005 թվականի սեպտեմբերի 8-ից՝ պատժի մեջ հաշվակցելով 2004 թվականի օգոստոսի 23-ից մինչև 2005 թվականի սեպտեմբերի 8-ը Ռուսաստանի Գաշնությունում հանձնման (էքստրադիցիա) նպատակով Բ.Միսակյանի կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը:

Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազությունների երկկողմ համաձայնությամբ, հետագա պատժը Հայաստանի Հանրապետությունում կրելու համար Բ.Միսակյանը 2009 թվականի ապրիլի 30-ին հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2009 թվականի հուլիսի 6-ին որոշում է կայացրել Բ.Միսակյանի վերաբերյալ Ղազախստանի Հանրապետության Կոստանայի մարզային դատարանի 2006 թվականի մայիսի 29-ի դատավճիռը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու մասին (տե՛ս սույն որոշման 1-ին կետը):

Դատապարտյալ Բ.Միսակյանը 2013 թվականի նոյեմբերի 25-ին դիմել է Առաջին ատյանի դատարան՝ խնդրելով իր նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի պահանջները, այն է՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ եղած ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց հաշվակցել իր նկատմամբ նշանակված պատժին:

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ դատապարտյալ Բ.Միսակյանի դիմումը մերժվել է: Դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է նրանով, որ Գ. Հովսեփյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ պատժի պայմանները կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետությանը հանձնված անձի նկատմամբ օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը պետք է համապատասխանեցվի դատապարտչայի փոխանցման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներին (տե՛ս սույն որոշման 2-րդ և 6-րդ կետերը):

Դատապարտյալի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ Բ.Միսակյանի նախնական կալանքի ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց նշանակված պատժի ժամկետին հաշվակցելու անթույլատրելիության վերաբերյալ Առաջին ատյանի դատարանը եկել է սխալ եզրահանգման: Դատապարտյալ Բ.Միսակյանի վիճակն այլ կերպ բարելավող քրեական օրենքին հետադարձ ուժ չտալով՝ դատարանն անտեսել է ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածներով ամրագրված օրենսդրական պահանջը՝ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառում: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել Առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու մասին: ՀՀ քրեական օրենսգրքի (նախկին՝ 18.04.2003թ. խմբագրությամբ գործող) 69-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված կանոնների համաձայն՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը դատապարտյալ Բ.Միսակյանին նախնական կալանքի տակ պահելու ժամկետը՝ 2004 թվականի օգոստոսի 23-ից մինչև 2006 թվականի օգոստոսի 9-ը հաշվակցվել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի հուլիսի 6-ի որոշմամբ Բ.Միսակյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատժին՝ մեկ օրը հաշվելով մեկուկես օրվա դիմաց (տե՛ս սույն որոշման 3-րդ և 7-րդ կետերը):

Մեջբերված հանգամանքների վերլուծությունից երևում է, որ Առաջին ատյանի դատարանը՝ նախկին խմբագրությամբ գործող քրեական օրենսգրքի համապատասխան դրույթը կիրառելու վերաբերյալ դատապարտյալի դիմումը մերժել է՝ պատճառաբանելով, որ *Գ.Հովսեփյանի* գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պատժի պայմանները կատարելու նպատակով հանձնված անձի նկատմամբ օտարերկրյա պետության դատարանի դատավճիռը պետք է համապատասխանեցվի փոխանցման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներին: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, առանց անդրադառնալու *Գ.Հովսեփյանի* գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներին, գտել է, որ Առաջին ատյանի դատարանը, անձի վիճակը բարելավող քրեական օրենքին հետադարձ ուժ չտալով, թույլ է տվել քրեական օրենքի ոչ ճիշտ կիրառություն:

16. Սույն որոշման 15-րդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 30-ի որոշումը հակասում է *Գ.Հովսեփյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի ապրիլի 18-ի թիվ ԵԷԴ/0033/15/09 որոշմանը:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ *Գ.Հովսեփյանի* գործով կայացված դատական ակտի

հիմնավորման բովանդակությունը կազմող դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է և դրա կիրառության համար պահանջվում է փաստական հանգամանքերի առավել փոքր ընդհանրություն: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն և *Գ. Հովսեփյանի* գործերի փաստական հանգամանքների ընդհանրությունն այն է, որ երկու դեպքում էլ օտարերկրյա պետության դատարանի կողմից դատապարտված անձը միջպետական պայմանագրի հիման վրա փոխանցվել է Հայաստանի Հանրապետությանը՝ դատավճռով նշանակված հետագա պատիժը կրելու համար: Պատժի կատարումն ապահովելու նպատակով երկու դեպքում էլ ՀՀ իրավասու դատարանները որոշում են կայացրել օտարերկրյա պետության դատարանի դատավճիռները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու մասին: Նշված փաստական հանգամանքների համընկնումը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս պնդելու, որ *Գ. Հովսեփյանի* գործով որոշման հիմնավորումները (այդ թվում՝ միջազգային պայմանագրի և օրենքի մեկնաբանությունները) սույն գործով որոշում կայացնելիս ստորադաս դատարանների համար պարտադիր են եղել:

17. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի) պահանջները, քանի որ սույն գործի քննության ժամանակ անտեսել է *Գ. Հովսեփյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի ապրիլի 18-ի որոշման հիմնավորումները, որոնք նրա համար պարտադիր են եղել: Վերաքննիչ դատարանը ոչ միայն չի կիրառել կիրառման ենթակա՝ վերադաս դատարանի նախկինում կայացված որոշումը, այլև որևէ ծանրակշիռ փաստարկի մատնանշմամբ չի հիմնավորել, որ այն կիրառելի չէ տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ այն դեպքում, երբ Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտում հստակ արձանագրել է, որ դատապարտյալի դիմումը մերժում է՝ ղեկավարվելով Վճռաբեկ դատարանի հիշատակված որոշման պահանջներով:

Արդյունքում, պատժի կատարման պայմաններն ապահովելու նպատակով օտարերկրյա պետության դատավճռի համապատասխանեցման հարցի քննության ժամանակ փոխանցման պահին գործող օրենսդրությամբ ղեկավարվելու փոխարեն, սխալ մեկնաբանելով ժամանակի և տարածության մեջ քրեական օրենքի գործողության կանոնները սահմանող քրեաիրավական նորմերը՝ Վերաքննիչ դատարանը ոչ իրավաչափորեն կիրառել է մինչև 2004 թվականի հուլիսի 24-ը գործող ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը և դատապարտյալ Բ.Միսակյանի նախնական կալանքի ժամկետը մեկ օրը մեկուկես օրվա դիմաց հաշվակցել է նրա նկատմամբ նշանակված պատժի ժամկետին: Վերոգրյալի հետևանքով խախտվել են նաև դատապարտյալ Բ.Միսակյանի հանձնման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները:

18. Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, քանի որ ազդել են գործի ելքի վրա և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ, 398-րդ, 406-րդ հոդվածների համաձայն՝ հիմք են Վերաքննիչ դատարանի 2014 թվականի մայիսի 30-ի դատական ակտը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս Առաջին ատյանի դատարանը դատական սխալ թույլ չի տվել, կայացված որոշումն օրինական է, հիմնավորված ու պատճառաբանված, ուստի պետք է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմանը:

19. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դատապարտյալ Բարկեն Ռազմիկի Միսակյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի մայիսի 30-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

56.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Գործ թիվ ՇԳ/0005/11/14
Նախագահող դատավոր՝ Ե.Գարբինյան

ՇԳ/0005/11/14

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ
քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 16-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի հուլիսի 25-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Բաղայանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. 2014 թվականի փետրվարի 22-ին՝ ժամը 18:50-ի սահմաններում, Գյումրի քաղաքի Մուշ 2 թաղամասի 46 շենքի հարակից խաչմերուկում միմյանց են բախվել Դավիթ Վարոսյանի՝ «Շեվրոլե-նիվա» մակնիշի 45 ՊՕ 001 պետհամարանիշի և Կարեն Ամիրխանյանի՝ «Միցուրիշի-պաջերո» մակնիշի 24 ՍՍ 592 պետհամարանիշի մեքենաները, որի հետևանքով «Շեվրոլե-նիվա» մակնիշի ավտոմեքենայի ուղևոր Ռուզաննա Ալեքսանյանը տեղափոխվել է Գյումրու բժշկական կենտրոն:

Դեպքի առթիվ Շիրակի մարզի քննչական բաժնի Գյումրի քաղաքի Մուշի քննչական բաժանմունքում նախապատրաստվել են նյութեր:

Շիրակի մարզի քննչական բաժնի Գյումրի քաղաքի Մուշի քննչական բաժանմունքի քննիչ Ս.Մինասյանի (այսուհետ նաև՝ Քննիչ) 2014 թվականի մարտի 4-ի որոշմամբ նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է, և Գ. Վարոսյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

2. 2014 թվականի մարտի 10-ին Գ.Վարոսյանը բողոք է ներկայացրել Շիրակի մարզի դատախազություն և խնդրել չհաստատել Քննիչի 2014 թվականի մարտի 4-ի՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը:

Շիրակի մարզի դատախազ Բ.Ասլանյանի (այսուհետ նաև՝ Դատախազ) 2014 թվականի մարտի 17-ի որոշմամբ Գ.Վարոսյանի բողոքը մերժվել է, և հաստատվել քրեական գործ հարուցելը մերժելու որոշման օրինականությունը:

3. 2014 թվականի մարտի 28-ին Գ.Վարոսյանը դիմել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել Քննիչի 2014 թվականի մարտի 4-ի և Դատախազի 2014 թվականի մարտի 17-ի որոշումները:

Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ Գ.Վարոսյանի բողոքը բավարարվել է՝ Քննիչի 2014 թվականի մարտի 4-ի և Դատախազի 2014 թվականի մարտի 17-ի որոշումները վերացվել են:

4. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2014 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 28-ի որոշումը՝ թողել օրինական ուժի մեջ:

5. Վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հուլիսի 25-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Բադալյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 30-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

6. Նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2014 թվականի մարտի 14-ի որոշման համաձայն՝ «*[Ն]յութերի նախապարաստման ընթացքում հիմնավորվել է, որ 2014թ. փետրվարի 22-ին ժամը 18-ի սահմաններում «Շելրոյլե-նիվա» մակնիշի (...) ավտոմեքենայի վարորդ Գ. Վարոսյանը, երթևեկելով Գյումրու Մուշ 2 թաղամասի թիվ 46 շենքի մոտով՝ իր համար նախատեսված երթևեկելի գոտիով, հասնելով հավասարագոր իաչմերուկին, տեսնելով իաչմերուկին աջ կողմից մուրեցող «Միցուրիչի-պաջերո» մակնիշի (...) ավտոմեքենան, իսխարելով «Ճանապարհային երթևեկության կանոնների» 98 կետի պահանջը, ճանապարհը չի զիջել աջ*

կողմից մուրեցող ավտոմեքենային, ընթանալով դեպի խաչմերուկ՝ դիմացի աջ մասով բախվել է «Միցուբիշի-պաջերո» մակնիշի (...) ավտոմեքենայի դիմացի շախ մասին, ինչի հետևանքով «Շելվրոլե-նիվա» մակնիշի (...) մեքենայի ուղևոր Ռուզաննա Հայկի Ալեքսանյանը և «Միցուբիշի-պաջերո» մակնիշի (...) ավտոմեքենայի վարորդ Կարեն Վարազդարի Ամիրխանյանը սրացել են առողջության թեթև վնասի հարկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում քրանսպորտային միջոցի շահագործման կանոնները խախտելու համար, որն անզուրուքյանք առաջացրել է մարդու առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս, իսկ տվյալ դեպքում տուժողները սրացել են թեթև վնասի հարկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ, ուստի «Շելվրոլե-նիվա» մակնիշի (...) մեքենայի վարորդ Դավիթ Վարոսյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը»:

Արդյունքում Քննիչը որոշել է. «1. Դավիթ Արտուշի Վարոսյանի կողմից «Ճանապարհային երթևեկության կանոնների» 98 կետի պահանջը խախտելու հետևանքով ավտովթար կատարելու փաստի առթիվ նախապարաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժել և վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

(...)

3. Որոշման մեկ օրինակն ուղարկել ՃՈՒ Դավիթ Վարոսյանին վարչական պատասխանատվության ենթարկելու: (...)» (տե՛ս նյութեր, թերթ 6-7):

7. Առաջին ատյանի դատարանն իր 2014 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ պատճառաբանել է. «Ինչ վերաբերում է դատախազի այն պնդմանը, որ ի սկզբանե տվյալ ավտովթարը ՀՀ քր. օր-ի 242 հոդվածի հանցակազմ չի առաջացրել, ապա որոշմամբ հիմնավորված է համարվել, որ ավտովթարը տեղի է ունեցել դիմողի կողմից թույլ տրված ՃԵԿ-ի կանոնների խախտման պատճառով, որի հետևանքով դիմողը կրում է նյութական պատասխանատվություն, պատճառված վնասի հարուցման հարցում, որով էլ խախտվում է նրա շահերը:

Մինչդեռ առանց տեղի ունեցած ավտովթարի համապարասխանելիակերային տվյալներով, ավտոմեքենաների բախման պատճառ հանդիսացող, թույլ տրված ՃԵԿ-ի կանոնների խախտումը օրյեկտիվ պարզելու համար դատաավտոտեխնիկական փորձաքննություն նշանակելու, որից հետո կատարվածը որակելու փոխարեն, քննիչը հիմք ընդունելով ոչ համապարասխան մասնագետի կողմից կազմված մասնագիտական ակտը հիմնավորված է համարել, որ խախտումը թույլ է տրվել «Շելվրոլե-նիվա» մակնիշի 45 ՉՉ 001 պ/հ մեքենայի վարորդ՝ Դավիթ Վարոսյանի կողմից, որով խախտվել է ՀՀ քր. դատ. օր-ի պահանջներով նախատեսված դիմողի

իրավունքներն ու օրինական շահերը որպիսի պարճառաբանությամբ էլ դիմումը ենթակա է բավարարման» (տե՛ս նյութեր, քերթ 38-39):

8. Վերաքննիչ դատարանն իր 2014 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ արձանագրել է. «(...) Առաջին արյանի դատարանը, պահպանելով քրեադատավարական նորմերի պահանջները, հիմնավորապես պարճառաբանելով, իրավացիորեն բավարարել է Դ.Վարոսյանի բողոքը և որոշում կայացրել վերացնել Շիրակի մարզի քննչական բաժնի Գյումրու Մուշի քննչական բաժանմունքի քննիչի նյութերով Դավիթ Վարոսյանի կողմից ավտովբար կատարելու փաստի առթիվ նախապարտադրված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին 04.03.2014թ. որոշումը և Շիրակի մարզի դատախազի բողոքը մերժելու և քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը հաստատելու մասին 17.03.2014թ. որոշումը՝ գրնելով որ այդ որոշումներով խախտվել են Դ.Վարոսյանի իրավունքներն ու օրինական շահերը: (...)» (տե՛ս նյութեր, քերթ 97):

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

9. Բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի բնույթից, հակասում է ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 175-րդ և 185-րդ հոդվածների պահանջներին:

Ի հիմնավորումն վերոնշյալի՝ բողոք բերած անձը փաստարկել է, որ քննիչի համար դեռևս նյութերի նախապատրաստման սկզբնական փուլում ակնհայտ է եղել ճանապարհատրանսպորտային պատահարի առթիվ քրեական գործ հարուցելու հիմքերի բացակայությունը, այնուամենայնիվ, օգտվելով քրեադատավարական օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունից, նյութերով ներգրավել է մասնագետ, իսկ դատավտոտեխնիկական փորճաքննություն չի նշանակել: Սակայն Քննիչի որոշման հիմքում դրվել է ոչ թե մասնագիտական ակտը, այլ պատահարի մասնակիցների բացատրությունները և դատաբժշկական փորճաքննության եզրակացությունը: Ինչ վերաբերում է մասնագիտական ակտին, ապա այն հիմք է հանդիսացել հետազայում Դ.Վարոսյանին վարչական պատասխանատվության ենթարկելու համար, հետևաբար մասնագիտական ակտը և վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը ենթակա են բողոքարկման վարչական դատավարության ընթացակարգով: Տվյալ իրավահարաբերությունները քրեական դատավարությանը և, հատկապես, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը վերաբերելի չեն:

Բացի այդ, բողոք բերած անձը նշել է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման վերացումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաճայն, պարտադիր է դարճնում դատախազի կողմից քրեական գործի հարուցումը, ինչը տվյալ պարագայում անհնարին է և

հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 175-րդ, 182-րդ հոդվածների պահանջներին: Նույն պատճառաբանությամբ անհնար է նաև անձի իրավունքների ենթադրյալ խախտումը վերացնելը, եթե նույնիսկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով վարույթն իրականացնող մարմնի համար այդպիսի պարտականություն սահմաներ:

10. Բողոքաբերը նաև փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանը, քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելով, ղեկավարվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված լիազորությամբ, մինչդեռ նշված որոշումը վերացնելու դատարանի լիազորությունը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասով, իսկ Վերաքննիչ դատարանն այդ հանգամանքին չի անդրադարձել: Ավելին՝ Առաջին ատյանի դատարանը վերացրել է նաև դատախազի որոշումը, ինչը չի բխում ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ, այնպես էլ 185-րդ հոդվածներից:

Բացի այդ, ստորադաս դատարաններն իրենց որոշումների հիմքում դրել են այն հանգամանքը, որ վարույթն իրականացնող մարմինը դատավտոտեխնիկական փորձաքննություն չի նշանակել, մինչդեռ դատարանը իրավասու չէ քննարկել քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությունը կամ նպատակահարմարությունը: Բողոքաբերի պնդմամբ բողոքարկվող դատական ակտը քննարկվող հարցերի առումով հակասում է Գ.Ղևոնդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԳ/0044/11/13 որոշման և մի շարք այլ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին:

11. Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Քննիչի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին և Դատախազի՝ բողոքը մերժելու և քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը հաստատելու մասին որոշումներին:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերի կողմից փաստարկված՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դատական ստուգման սահմանների կապակցությամբ առկա է առերևույթ հակասություն Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտերի և Վճռաբեկ դատարանի՝ Գազիկ Դևոնդյանի գործով կայացված որոշման միջև (տե՛ս սույն որոշման 10-րդ կետը): Ուստի, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր գործառույթի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նախևառաջ անդրադառնալ վերոնշյալ դատական ակտերի միջև առկա հակասություններին:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դատական ստուգման շրջանակներում անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու կապակցությամբ նույնպես առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

1. Մտորադաս դատարանների դատական ակտերի և Վճռաբեկ դատարանի նախկինում կայացված որոշման միջև հակասության վերաբերյալ.

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերը հակասո՞ւմ են արդյոք *Գ. Ղևոնդյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմանը:

14. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական արյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով»:

ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մարմանը մամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն Կրիստի Կրիստի փաստական հանգամանքների նկատմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները, այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները, պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մարմանը մամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն Կրիստի Կրիստի փաստական հանգամանքների նկատմամբ»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի) հիման վրա վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշումը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել

կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունների պարզ համադրմամբ: Յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եզակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ պարագայում ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում) ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի:

Դրա հետ մեկտեղ, վճռաբեկ դատարանի՝ նախկինում կայացված որոշման կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը՝ եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն (Վճռաբեկ դատարանը նույնաբովանդակ դիրքորոշում է արտահայտել Անահիտ Սիմոնյանի գործով 2013 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԴ/0055/11/13 որոշման 14-15-րդ կետերում):

15. Վճռաբեկ դատարանը *Գ. Ղևոնդյանի* գործով որոշմամբ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության ընթացքում դատարանը վերահսկողություն չի իրականացնում նախնական քննության ընթացքի նկատմամբ: Դատարանը չի միջամտում քրեական դատավարության ընթացքին, չի անդրադառնում բողոքարկվող որոշման կայացման համար հիմք հանդիսացած քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությանը կամ նպատակահարմարությանը: Այս հարցերը գտնվում են նյութերի նախապարաստությունն իրականացնող մարմինների բացառիկ լիազորությունների սահմաններում, իսկ քրեական գործի հարուցման հարցը լուծելու համար անհրաժեշտ տվյալների լրիվությունն ապահովելու նպատակով հետաքննության մարմինն կամ քննիչին ղեկավար ցուցումներ և հանձնարարություններ կարող է տալ միայն դատարանը: (...)

Դատարանի խնդիրն այս դեպքում կայանում է նրանում, որպեսզի պարզվի, թե վիճարկվող որոշումը կայացվել է արդյոք նյութական և դատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան և բխում է արդյոք նյութերի նախապարաստության արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներից: (...)» (տե՛ս Գագիկ Ղևոնդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշման 16-րդ կետը):

16. Մույն գործի փաստերից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը, դիմող Գ.Վարոսյանի բողոքը ճանաչելով հիմնավորված, քրեական գործի

հարուցումը մերժելու մասին որոշումը վերացրել է այն հիմքով, որ մինչդասական վարույթն իրականացնող մարմինն առանց դատաավտոտեխնիկական փորձաքննությունն նշանակելու, ոչ համապատասխան մասնագետի կողմից կազմված մասնագիտական ակտի հիման վրա հիմնավորված է համարել, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտումը թույլ է տրվել Դավիթ Վարոսյանի կողմից, որով խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներով նախատեսված դիմողի իրավունքներն ու օրինական շահերը: Վերաքննիչ դատարանն իր հերթին գտել է, որ Առաջին աստիճանի դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված է (տե՛ս սույն որոշման 7-8-րդ կետերը):

17. Նախորդ կետում վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 15-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կայացրած դատական ակտերը հակասում են *Գ. Ղևոնդյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմանը:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ *Գ. Ղևոնդյանի* գործով կայացված դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող և սույն որոշման 15-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումներն իրենց բնույթով առավել ընդհանրական են և դրանց կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքերի առավել փոքր ընդհանրություն: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն և *Գ. Ղևոնդյանի* գործերի փաստական հանգամանքների ընդհանրությունն այն է, որ երկու դեպքում էլ դատարանները դատական ստուգման են ենթարկել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը և անդրադարձել են վարույթ իրականացնող մարմնի կողմից քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու նպատակահարմարությանը: Նշված փաստական հանգամանքների համընկնումը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս պնդելու, որ *Գ. Ղևոնդյանի* գործով որոշման հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) սույն գործով որոշում կայացնելիս ստորադաս դատարանների համար պարտադիր են եղել:

Մինչդեռ ստորադաս դատարանները, անտեսելով *Գ. Ղևոնդյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության ընթացքում անդրադարձել են դատավարական գործողությունների կատարման նպատակահարմարությանը: Վիճարկվող որոշման նյութական և դատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան կայացված լինելու և նյութերի նախապատրաստության արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներից բխելու հարցերը պարզելու փոխարեն ստորադաս դատարաններն ըստ էության արձանագրել

են, որ ճանապարհային երթևեկության կանոնների խախտումը օրյեկտիվ պարզելու համար դատաավտոտեխնիկական փորձաքննություն չնշանակելով և Դ.Վարոսյանի կողմից այն կատարված լինելու փաստը հաստատելով՝ վարույթ իրականացնող մարմինը խախտել է Դ.Վարոսյանի իրավունքներն ու օրինական շահերը:

18. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ, Առաջին ստյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, քանի որ սույն գործի քննության ժամանակ անտեսել են Գ. Ղևոնդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշման հիմնավորումները, որոնք նրանց համար պարտադիր են եղել: Ստորադաս դատարանները ոչ միայն չեն կիրառել կիրառման ենթակա՝ Վճռաբեկ դատարանի նախկինում կայացված որոշումը, այլև որևէ ծանրակշիռ փաստարկի մատնանշմամբ չեն հիմնավորել, որ այն կիրառելի չէ տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Արդյունքում՝ ստորադաս դատարանները դուրս են եկել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի քննության կապակցությամբ իրականացվող դատական վերահսկողության սահմաններից՝ բույլ տալով նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածով նախատեսված օրինականության սկզբունքի խախտում:

II. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դատական ստուգման շրջանակներում անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը.

19. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հաջորդ իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք դատարանն իրավասու էր վերացնել քրեական գործ հարուցելը մերժելու մասին Քննիչի որոշումն այն դեպքում, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված գործի վարույթը բացառող հանգամանքը Դ.Վարոսյանը չի վիճարկել:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի

բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

2. Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

(...)

4. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա վերադաս դատախազը այն ստանալու պահից 7 օրվա ընթացքում վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար այն ուղարկում է քննիչին կամ հաստատում է քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը:

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

Քրեական գործ հարուցելու փուլի կարգավորմանն ուղղված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մեջբերված նորմերը Վճարելի դատարանը վերլուծության է ենթարկել *Գ. Ղևոնդյանի* վերաբերյալ որոշման մեջ, նշելով, որ. «(...) *Քրեական գործ հարուցելու մասին օրինական, հիմնավորված և ժամանակին կայացված որոշումն անհրաժեշտ նախապայման է հանցագործությունների արագ և ամբողջական բացահայտման, ինչպես նաև կանխարգելման համար: Միևնույն ժամանակ, քրեական գործի չհիմնավորված հարուցմամբ սահմանափակվում են անչանց իրավունքներն ու ազատությունները, նրանց վնաս է պատճառվում: Այլ խոսքով՝ ինչպես քրեական գործի անհիմն հարուցումը, այնպես էլ հարուցման անհիմն մերժումը օրինականության կոպիտ խախտումներ են և զգալի վնաս են պատճառում անչին, հասարակությանն ու պետությանը:*

(...)

[Քրեական գործ հարուցելու] փուլում վարույթն իրականացնող մարմինը հաղորդման նախնական սրուգման միջոցով հանցագործության հարկանիշներ մատնանշող բավարար փաստական փյույակներ չեռք բերելու դեպքում, ինչպես նաև քրեական գործի վարույթը բացառող դատավարական արգելքների բացակայության պայմաններում պարտավոր է հարուցել քրեական գործ, որից հետո միայն իրականացնել քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված բազմակողմանի և լրիվ քննություն: Հակա-

ռակ դրան, եթե նյութերի նախապարաստության ընթացքում այնպիսի փաստական փոփոխություններ են ձեռք բերվել, որոնք հերքում են հանցագործության հատկանիշների առկայությունը, վկայում են քաղաքացիական, վարչական կամ այլ իրավահարաբերություններից բխող գործողությունների առկայության մասին, ինչպես նաև առկա են գործի վարույթը բացառող դատավարական արգելքներ, ապա վարույթն իրականացնող մարմինը պետք է որոշում կայացնի քրեական գործի հարուցումը մերժելու մասին» (տե՛ս Գագիկ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԳ/0044/11/13 որոշման 14-15-րդ կետերը):

21. Քրեական գործի վարույթը բացառող հանգամանքները նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով: Թեև վկայակոչված հոդվածով սահմանված հիմքերն իրենց բովանդակությամբ, կիրառման իրավական հետևանքներով տարբեր են, այնուամենայնիվ, բոլորն էլ կրում են իմպերատիվ բնույթ, և դրանցից որևէ մեկի առկայությունն արդեն իսկ բացառում է քրեական գործի վարույթը քրեական դատավարության ցանկացած փուլում:

Վերոգրյալից հետևում է, որ քրեական գործ հարուցելու փուլում վարույթ իրականացնող մարմնի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով նախատեսված քրեական գործի վարույթը բացառող հանգամանքի հայտնաբերումն ինքնին բացառում է քրեական վարույթի հետագա ընթացքը, հետևաբար նաև՝ գործ հարուցելու իրավական հնարավորությունը:

Այս առումով անհրաժեշտ է նշել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասը, սահմանելով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման արդյունքում դատարանի լիազորությունները (վերացնել բողոքարկվող որոշումը կամ հաստատել այն) միևնույն ժամանակ սահմանում է, որ բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը: Այլ խոսքով՝ քննարկող վարույթի շրջանակներում դատարանը, ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով իրականացվող վարույթի, իրավասու չէ որոշում կայացնել անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին, իսկ բողոքարկվող որոշման վերացումն ինքնին հանգեցնում է քրեական վարույթը շարունակելուն:

Այս պայմաններում անհրաժեշտ է քննարկել այն իրավիճակը, երբ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշմամբ թույլ է տրվել անձի իրավունքների և օրինական շահերի խախտում, սակայն այդ որոշման հիմքը՝ քրեական գործով վարույթը բացառող հանգամանքը, չի վիճարկվում:

22. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնային տեղ է

գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պաշտպանության ապահովումը,
- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառնությունների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով քույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները: (տե՛ս տուժողի իրավահաջորդ Ներսես Միսակյանի և նրա ներկայացուցիչ Ս.Սաֆարյանի բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանի կողմից 2009 թվականի ապրիլի 10-ին կայացված թիվ ԱԲԳ-1/0003/11/08 որոշումը, կետ 12):

Քրեական գործ հարուցելու փուլի նկատմամբ դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության բաղկացուցիչ մասն է, հետևաբար այն ունի նույն ընդհանուր նպատակը և խնդիրները, ինչ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը: Այս առումով քրեական գործով վարույթը բացառող անվիճելի հանգամանքի առկայության պայմաններում անգամ անձի իրավունքների և օրինական շահերի խախտման հարցը չի կարող դուրս մնալ քրեական գործ հարուցելու նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներից: Հակառակ դեպքում կխախտվի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը

23. Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցման փուլի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում դատարանը պետք է պարզի՝

ա) քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը կայացնելիս պահպանվել են արդյոք քրեադատավարական օրենսդրության պահանջները, եթե ոչ, ապա

բ) դրանց չպահպանման հետևանքով խախտվել են արդյոք անձի իրավունքներն ու ազատությունները:

Այլ խոսքով՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դատական ստուգման ընթացքում դատարանը պետք է պարզի՝ արդյո՞ք առկա է քրեադատավարական օրենսդրության պահանջների խախտում, իսկ այդպիսի խախտում հայտնաբերելու դեպքում՝ արդյո՞ք այն հանգեցրել է անձի իրավունքների և օրինական շահերի խախտման: Քրեադատավարական օրենսդրության պահանջների, ինչպես նաև անձի իրավունքների և օրինական շահերի խախտման փաստ հայտնաբերելիս դատարանն իրավասու չէ վերացնել բողոքարկվող որոշումն այն դեպքում, երբ քրեական վարույթը բացառող հանգամանքն անվիճելի է, քանի որ այդպիսի հանգամանքի առկայության դեպքում քրեական գործ չի կարող հարուցվել: Միևնույն ժամանակ դատարանը պարտավոր է արձանագրել քրեադատավարական օրենսդրության պահանջների, անձի իրավունքների և օրինական շահերի խախտման փաստերը: Վերջինս իրավական հնարավորություն կտա անձին իրավունքի պաշտպանության այլ եղանակներով վերականգնել իր խախտված իրավունքներն ու օրինական շահերը:

24. Սույն գործի փաստերից հետևում է, որ Քննիչը Դավիթ Վարոսյանի կողմից «Ճանապարհային երթևեկության կանոնների» 98 կետի պահանջը խախտելու հետևանքով ավտովթար կատարելու փաստի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժել է և վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացրել՝ նրա արարքում հանցակազմի բացակայության հիմքով (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Քննիչի որոշման դեմ Դ.Վարոսյանը բողոք է ներկայացրել դատախազություն, որը Դատախազի 2014 թվականի մարտի 17-ի որոշմամբ մերժվել է, և հաստատվել քրեական գործ հարուցելը մերժելու որոշման օրինականությունը (տե՛ս սույն որոշման 2-րդ կետը):

Դ.Վարոսյանը դատական կարգով բողոքարկել է Քննիչի և Դատախազի որոշումներն այն հիմքով, որ դրանցով հաստատված է համարվել իր մեղավորությունը վթարի կատարման մեջ, ինչի արդյունքում իր համար առաջացել են և կարող են առաջանալ նյութական անբարենպաստ հետևանքներ (տե՛ս նյութեր, թերթ 1-3):

Առաջին ատյանի դատարանը վերացրել է Քննիչի և Դատախազի որոշումները՝ Դ.Վարոսյանի իրավունքների և օրինական շահերի խախտում թույլ տրված լինելու պատճառաբանությամբ, իսկ Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի որոշումը (տե՛ս սույն որոշման 3-4-րդ կետերը)՝ անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործի վարույթը բացառող հանգամանքի առկայությունը:

25. Սույն որոշման նախորդ կետում վերլուծված փաստերը գնահատելով 20-23-րդ կետերում շարադրված իրավական նորմերի և դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանն իրավասու չէր վերացնել քրեական գործ հարուցելը մերժելու մասին Քննիչի որոշումն այն դեպքում, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով

նախատեսված գործի վարույթը բացառող հանգամանքը Գ.Վարոսյանը չի վիճարկել:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում բողոքաբերի այն փաստարկին, որ Առաջին ատյանի դատարանն իրավասու չէր *վերացնելու* դատախազական հսկողության արդյունքում կայացված որոշումը: Վճռաբեկ դատարանի վերջին դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված լիազորությունը վերաբերում է քրեական գործ հարուցելը մերժելու որոշման դատական ստուգման արդյունքում դատարանի կողմից կայացվող որոշումներին, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը չի նախատեսում մինչդատական վարույթ իրականացնող մարմնի որոշումը վերացնելու լիազորություն:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 185-րդ, 290-րդ հոդվածների խախտում:

26. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեադատարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա (...):»*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սույն գործով դատական ակտեր կայացնելիս թույլ են տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է ճիշտ որոշում կայացնելու վրա, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ և 406-րդ հոդվածների համաձայն՝ հիմք է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նույն դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Սույն որոշման 9-րդ կետում շարադրված բողոքաբերի փաստարկների և 20-23-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է քննարկման առարկա դարձնի՝

- քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը կայացնելիս քրեադատարական օրենսդրության պահանջների խախտման առկայությունը: Մասնավորապես պետք է քննարկի՝ արդյո՞ք Քննիչն իրավասու էր հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշմամբ հաստատել ճանապարհային երթևեկության կանոնների խախտում թույլ տալու մեջ անձի մեղավորությունը:

- քրեադատավարական օրենսդրության պահանջների խախտման առկայության դեպքում՝ Գ.Վարոսյանի իրավունքների և օրինական շահերի խախտման առկայությունը: Վերջին հանգամանքը գնահատելիս Վերաքննիչ դատարանը պետք է հաշվի առնի ճանապարհային երթևեկության կանոնների խախտման կապակցությամբ իրականացվող վարչական վարույթի վրա քրեական գործ հարուցելը մերժելու մասին քննիչի որոշմամբ հաստատված փաստերի իրավական ազդեցությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ, 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դիմող Դավիթ Վարոսյանի բողոքը բավարարելու վերաբերյալ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի ապրիլի 28-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հուլիսի 25-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ

57.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԵԿԳ/0199/01/13

վերաքննիչ քրեական դատարանի որոշում

Քրեական գործ թիվ ԵԿԳ/0199/01/13

Նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան

Դատավորներ՝ Ա.Պետրոսյան

Մ.Պետրոսյան

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Գ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԱՍՍՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

քարտուղարությամբ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ տուժող Ռ.ԴՈՆՅԱՆԻ
տուժողի ներկայացուցիչ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

2014 թվականի դեկտեմբերի 16-ին

ք.Երևանում

դռնբաց դատական նիստում քննության առնելով Ռուդիկ Լազրի Բալասանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ վերաքննիչ դատարան) 2014 թվականի հունիսի 5-ի որոշման դեմ ամբաստանյալ Ռ.Բալասանյանի պաշտպան Ա.Գազարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում 2013 թվականի ապրիլի 4-ին հարուցվել է թիվ 13139213 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2013 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ

Ռ.Բալասանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նախաքննության մարմնի 2013 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ Ռ.Բալասանյանի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

Քրեական գործը 2013 թվականի հոկտեմբերի 14-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը 2014 թվականի մարտի 31-ի դատավճռով Ռ.Բալասանյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ և նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ ազատազրկում՝ 5 (հինգ) տարի ժամկետով: ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» թիվ ԱԺՈ-080-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառմամբ Ռ.Բալասանյանին ազատվել է նշանակված պատժից:

3. Ամբաստանյալ Ռ.Բալասանյանի պաշտպան Ա.Ղազարյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանը 2014 թվականի հունիսի 5-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 31-ի դատավճիռը՝ թողել օրինական ուժի մեջ:

4. Վերաքննիչ դատարանի 2014 թվականի հունիսի 5-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ռ.Բալասանյանի պաշտպան Ա.Ղազարյանը:

Վճռաբեկ դատարանի 2014 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Տուժողներ Ռ.Ղոնյանի և Հ.Ալոյանի ներկայացուցիչ Վ.Գևորգյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան, որտեղ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ Ռ.Բալասանյանի արարքում խարդախության հանցակազմի առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հաստատված են ապացույցների բավարար համակցությամբ և խնդրել ամբողջությամբ մերժել վճռաբեկ բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով Վերաքննիչ դատարանի որոշումը:

Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

5. 2008 թվականի ապրիլի 12-ի ստացականի (այսուհետ նաև՝ Ստացական) համաձայն՝ «Համլետր Գառնիկի Ալոյանի և Ռոյանդ Սուրենի Ղոնյանի պարտքը Ռուդիկ Լազրի Բալասանյանին 12.04.2008 դրությամբ կազմում է 214.800 (երկու հարյուր տասնչորս հազար ութ հարյուր) ԱՄՆ դոլար:

12.04.08թ. ես՝ Ռուդիկ Բալասանյանս Համլետ Ալոյանից (...) և Ռոյանո Սուրենի Ղոնյանից (...) սրացա 114.800 (հարյուր տասնչորս հազար ութ հարյուր) ԱՄՆ դոլար:

Համլետ Ալոյանը և Ռոյանո Ղոնյանը մնում են ինչ պարտք 100.000 (հարյուր հազար) ԱՄՆ դոլար» (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 21):

Քրեական գործի նյութերում առկա է նաև Ռ.Ղոնյանի և Հ.Ալոյանի կողմից 2008 թվականի ապրիլի 12-ին կազմված գրավոր պարտավորագիր (այսուհետ նաև՝ Պարտավորագիր) այն մասին, որ նրանք Ռ.Բալասանյանին պարտք են 100.000 (հարյուր հազար) ԱՄՆ դոլար, որը պարտավորվում են վերադարձնել 2008 թվականի նոյեմբերի 10-ին (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 20):

6. 2011 թվականի սեպտեմբերի 7-ին Ռ.Բալասանյանն իր լիազոր ներկայացուցչի՝ փաստաբան Սարգիս Խաչատրյանի միջոցով հայցադիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ պահանջելով Ռ.Ղոնյանից և Հ.Ալոյանից հոգուտ իրեն բռնազանձել 151.500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որից՝ 100.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը՝ որպես 2008 թվականի ապրիլի 12-ի պարտավորագրում նշված պարտքի մայր գումար, իսկ 51.500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը՝ որպես մայր գումարի նկատմամբ կետանց յուրաքանչյուր օրվա համար հաշվարկված տույժի գումար (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 221-225):

Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հուլիսի 2-ի՝ թիվ ԵԿԴ/2087/02/11 քաղաքացիական գործով վճռով Ռ.Բալասանյանի հայցը մերժվել է (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 114-126):

Ռ.Բալասանյանի և նրա ներկայացուցիչ Նուրնե Աճեմյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակի, բեկանել և փոփոխել է առաջին ատյանի դատարանի դատական ակտը և հայցը բավարարել մասնակիորեն՝ որոշելով պատասխանողներ Ռ.Ղոնյանից և Հ.Ալոյանից հոգուտ հայցվոր Ռ.Բալասանյանի բռնազանձել 100.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար, և 100.000 ԱՄՆ դոլարի նկատմամբ 2008 թվականի նոյեմբերի 11-ից սկսած մինչև պարտավորության փաստացի կատարումը հաշվարկել տոկոսներ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի համաձայն: Առաջին ատյանի դատարանի վճիռը՝ տույժի գումարի մերժման մասով, թողնվել է օրինական ուժի մեջ: Ընդ որում, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, քննարկելով նաև պարտավորությունը կատարմամբ դադարած լինելու վերաբերյալ պատասխանողների փաստարկները, հաստատված չի համարել դրանք (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 128-134):

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի վերոգրյալ որոշման դեմ Հ.Ալոյանի, Ռ.Ղոնյանի և նրանց ներկայացուցիչ Սեդրակ Ասատրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի հունվարի 23-ի

որոշմամբ վերադարձվել է (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթեր 236-240):

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտի հիման վրա տրվել է կատարողական թերթ: 2013 թվականի մարտի 1-ին հարուցվել է կատարողական վարույթ (տե՛ս քրեական գործ, հատոր 1, թերթ 252):

2013 թվականի մայիսի 8-ին Ռ.Ղոնյանի և Հ.Ալոյանի ներկայացուցիչ Հ.Օսեփյանը հայցադիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ սեփականության իրավունքի խախտումը վերացնելու, Ռ.Ղոնյանին և Հ.Ալոյանին սեփականության իրավունքով պատկանող գույքն արգելանքից հանելու պահանջի մասին: Նշված հայցադիմումն ընդունվել է վարույթ, և դրա հիմքով Ռ.Ղոնյանի և Հ.Ալոյանի գույքի վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ կատարողական վարույթները 2013 թվականի մայիսի 20-ին կասեցվել են (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթեր 168-169):

7. 2013 թվականի օգոստոսի 26-ին Ռ.Բալասանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն բանի համար, որ նա «(...) լիազորված անձ Սարգիս Խաչատրուրի Խաչատրյանի միջոցով 2011թ. սեպտեմբերի 7-ին իրականությանը չհամապատասխանող տվյալներ ներկայացնելով՝ 151.500 ԱՄՆ դոլարին համարժեք 56.165.565 ՀՀ դրամ գումարի չափով բռնագանձման պահանջի մասին հայց է ներկայացրել (...) Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ խարդախության եղանակով փորձելով հափշտակել Ռոլանդ Սուրենի Ղոնյանին և Համլեդ Գառնիկի Ալոյանին պատկանող առանձնապես խոշոր չափի գույքը:

Այսպես, Ռոդիկ Լազրի Բալասանյանը Սյունիքի մարզի Գյարդ-Աջիբաջ-Գեղիի ՋՄԿ խմելու ջրի ջրատարի վրա «Լեռ-ԷՔՍ-ՀԷԿ-2», «Լեռ-ԷՔՍ-ՀԷԿ-4», «Լեռ-ԷՔՍ-ՀԷԿ-6» ՀԷԿ-երի համարել կառուցման և շահագործման նպատակով Ռոլանդ Սուրենի Ղոնյանին և նրա դստեր ամուսնուն՝ Համլեդ Գառնիկի Ալոյանին, կանխիկ տրվել է համապատասխանաբար՝ 2005թ. հոկտեմբերի 20-ին՝ 20.000 ԱՄՆ դոլար, 2005թ. նոյեմբերի 15-ին՝ 16.200 ԱՄՆ դոլար, 2006թ. ապրիլի 18-ին՝ 30.000 ԱՄՆ դոլար գումար: Ընդհանուր առմամբ Ռոդիկ Բալասանյանի կողմից Ռոլանդ Ղոնյանին և Համլեդ Ալոյանին կանխիկ տրված 81.200 ԱՄՆ դոլարի վերաբերյալ 2006թ. ապրիլի 26-ին կազմվել է համապատասխան սրացական, որը հաստատվել է Ռոլանդ Ղոնյանի և Համլեդ Ալոյանի ստորագրություններով: Հեղափոխում Ռոդիկ Բալասանյանը որոշել է շարունակել համարել գործունեությունը և պահանջել է վերադարձնել իր տրված գումարը հավելավճարով: Ռոլանդ Ղոնյանին ու Համլեդ Ալոյանին կանխիկ տրված 81.200 ԱՄՆ դոլարի դիմաց մինչև 2008թ. ապրիլի 12-ն ընկած ժամանակահատվածում վերջիններից մասմաս ստանալով 196.000 ԱՄՆ դոլար կանխիկ գումար, 2008թ. ապրիլի 12-ին նրանցից գրություն է վերցրել ևս 100.000 ԱՄՆ դոլար իրեն պարտք մնալու մասին՝ հակառակ դեպքում չհամաձայնվելով սրացական գրել 196.000

ԱՄՆ դոլարը սրանալու մասին: 2008թ. դեկտեմբերին Համլեր Ալոյանից իր դարեր ամուսնու՝ Թորոս Թորոսյանի միջոցով 10.000 ԱՄՆ դոլար, իսկ 2010թ. զարնանը պայմանավորվածության համաձայն Ռոլանդ Ղոնյանից և Համլեր Ալոյանից սրանալով ևս 60.000 ԱՄՆ դոլար կանխիկ գումար՝ որպես 2008թ. ապրիլի 12-ի սրանհանած պարտավորության ողջ մարում, Ռոլանդ Ղոնյանին և Համլեր Ալոյանին չվերադարձնելով 2008թ. ապրիլի 12-ի ամսաթվով գրությունը՝ լիազորված անհ Սարգիս Խաչատրյուրի Խաչատրյանի միջոցով 2011թ. սեպտեմբերի 7-ին իրականությանը չհամապատասխանող փվյալներ ներկայացնելով 151.000 ԱՄՆ դոլարին համարժեք 56.165.595 ՀՀ դրամ գումարի չափով բռնագանձման պահանջի մասին հայց է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան, որում նշվել է, որ պարտասխանողները չեն կատարել 2008թ. ապրիլի 12-ի պարտավորագրով սրանհանած իրենց պարտավորությունները, այդ կերպ վստահությունը չարաշահելու եղանակով փորձել է հափշտակել Ռոլանդ Ղոնյանին և Համլեր Ալոյանին պարտականող առանձնապես խոշոր չափերի գույքը, սակայն իր կամքից անկախ պարճառներով հանցագործությունն ավարտին չի հասցրել, քանի որ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը թիվ ԵԿԴ/2087/02/11 քաղաքացիական գործով 2012թ. հուլիսի 2-ին վճիռ է կայացրել Ռուդիկ Լազրի Բալասանյանի հայցն ընդդեմ Ռոլանդ Սուրենի Ղոնյանի և Համլեր Գառնիկի Ալոյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին մերժելու վերաբերյալ, իսկ Ռուդիկ Բալասանյանի, որպես հայցվորի ներկայացուցչի՝ Նունե Աճեմյանի կողմից թիվ ԵԿԴ/2087/02/11 քաղաքացիական գործի վերաբերյալ բերված վերաքննիչ բողոքի հիման վրա թեև ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2012թ. հոկտեմբերի 19-ի որոշմամբ մասնակի բեկանել և փոփոխել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2012թ. հուլիսի 2-ի վճիռը՝ որոշելով Ռոլանդ Ղոնյանից և Համլեր Ալոյանից համապարտությամբ հոգուր Ռուդիկ Բալասանյանի բռնագանձել 100.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար, 100.000 ԱՄՆ դոլարի նկատմամբ սկսած 2008թ. նոյեմբերի 11-ից մինչև պարտավորության փաստացի կատարումը հաշվարկել տոկոսներ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածի համաձայն՝ ՀՀ կենտրոնական քանկի սահմանած քանկային տոկոսներին համապատասխան, սակայն 2013թ. մայիսի 8-ին Ռոլանդ Ղոնյանի և Համլեր Ալոյանի ներկայացուցիչ Հայկ Օսեփյանը հայցադիմում է ներկայացրել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ սեփականության իրավունքի իսխությունը վերացնելու, Ռոլանդ Ղոնյանին և Համլեր Ասոյանին սեփականության իրավունքով պարտականող գույքն արգելանքից հանելու պահանջի մասին, որն ընդունվել է վարույթ և որի հիմքով ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի վարույթում գրանվող և Ռոլանդ Ղոնյանի ու Համլեր Ալոյանի

գույքի վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ թիվ 01/02-1304/13 և թիվ 01/02-1303/13 կատարողական վարույթները 2013թ. մայիսի 20-ին կասեցվել են: (...)» (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 289-303):

8. Դատաքննության արդյունքներով դատարանը հաստատված է համարել, որ. «(...) ամբաստանյալ Ռուդիկ Բալասանյանը տուժողներ Ռուսլան Գոնյանի և Համլետ Ալոյանի վարահությունը չարաշահելու եղանակով խարդախության սեփականության և այն հարկադրաբար պահանջելու իրավունք է ձեռք բերել վերջիններիս առանձնապես խոշոր չափի գույքի՝ 151.500 ԱՄՆ դոլարին համարժեք 56.165.595 ՀՀ դրամ գումարի նկատմամբ: (...)

Դատարանի համոզմամբ ամբաստանյալ Ռ.Բալասանյանի արարքն համապատասխանում է խարդախության հանցակազմի ավարտված տեսակին, այսինքն՝ պետք է որակվեր ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, քանի որ թեև տուժողների գումարն ամբաստանյալ Ռ.Բալասանյանի տիրապետման տակ փաստացի չի անցել, սակայն վերջինիս, այնուամենայնիվ, հաջողվել է ավարտին հասցնել իր հանցավոր դիտարկությունը, այն է՝ իրավունք ձեռք բերել տուժողների գույքի՝ պարտավորագրում նշված գումարի և դրա տոկոսների չափով առանձնապես խոշոր չափի այլ գումարի նկատմամբ՝ հաշվի առնելով այն, որ այդ գույքի նկատմամբ Ռ.Բալասանյանի սեփականության և այն հարկադրաբար պահանջելու իրավունքը հաստատվել է դատական իշխանության մարմնի՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով: Դատարանը նաև արձանագրում է, որ (...) իրավասու չէ իր նախաձեռնությամբ անդրադառնալ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի փոփոխմանը, քանի որ այդ պարագայում ևս դուրս կգա դատական քննության սահմաններից, ինչն անհուուսափելիորեն կհանգեցնի ամբաստանյալ Ռ.Բալասանյանի վիճակի վարքարարմանը և վերջինիս պաշտպանության իրավունքի խախտման:

Դատարանը փաստում է, որ վերոնշյալ պայմաններում ամբաստանյալ Ռ.Բալասանյանը քրեական պարասխանարկության և պարժի ենթակա է ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

(...)

Դատարանը փաստում է, որ՝

- ամբաստանյալ Ռ.Բալասանյանը մինչ մեղաազրվող արարքի կատարումը՝ տուժողներ Ռ.Գոնյանի և Հ.Ալոյանի հետ ընդհանուր համարեղ շեղնարկարիքական գործունեություն նախաձեռնելու և տեսական ժամանակ գործակցելու, առանց փաստաթղթային չեղարկման կամ այդպիսի չեղարկմամբ վերջիններիս առջևն գումարներ տրամադրելու և եր արանալու ուժով ձեռք է բերել բարեխիղճ և վարահելի գործընկերոջ համբավ և վայելել տուժողներ Ռ.Գոնյանի և Հ.Ալոյանի վարահությունը: (...) Տուժող Ռ.Գոնյանի և ամբաստանյալ Ռ.Բալասանյանի փոխադարձ վարահության վերոնշյալ հարաբերությունների բնույթն հաշվի առնելով՝ Դատարանը

փաստում է, որ 60.000 ԱՄՆ դոլար գումարը ևս տուժող Ռ.Ղոնյանը կարող էր Ռ.Բալասանյանին հանձնել (ըստ դատաքննությանը հետազոտված ապացույցների զնահատման արդյունքների՝ հանձնել է) առանց պարտքը մարելու վերաբերյալ որևէ փաստաթուղթ, այդ թվում՝ վերջինիս 2008թ. ապրիլի 12-ին տված պարտավորագրի բնօրինակը եր սրանալու՝ ավելի ուշ այն Ռ.Բալասանյանից ևս սրանալու ակնկալիքով:

(...)

- Տուժողների 151.500 ԱՄՆ դոլար գումարի նկատմամբ սեփականության և այն հարկադրաբար պահանջելու իրավունք չեռք բերելուց առաջ ամբաստանյալ Ռ.Բաղդասարյանի մոտ արդեն իսկ չհավորվել և առկա էր շահադիտականնպատակը, քանի որ վերջինս գիրակցում էր տուժողների 40.000 պարտքը ներելու նախապայանով 60.000 ԱՄՆ դոլարն առջեռն, ինչպես նաև բանկային փոխանցմամբ սրացված 20.000.000 ՀՀ դրամին համարժեք 50.000 ԱՄՆ դոլար գումարները սրանալու, 2010թ. ապրիլի 12-ի պարտավորագրով տուժողների սրանչնած 100.000 ԱՄՆ դոլարի պարտավորությունը պատշաճ և ամբողջությամբ կատարվելու հիմքով փոխառության պայմանագրի դադարեցման, հետևաբար՝ վերոնշյալ պարտավորագրում նշված գումարի և տույժերի չափով տուժողների այլ գույքի նկատմամբ իրավունք չեռք բերելու իր հավակնությունների և այն պահանջելու ակնհայտ անհիմն (կրկնակի) լինելու բնույթը, սակայն սկսել և տրամաբանական ավարտին է հասցրել խարդախությանը տուժողների գույքի՝ ևս 151.500 ԱՄՆ դոլար գումարի նկատմամբ սեփականության և այն հարկադրաբար պահանջելու իրավունք չեռք բերելուն ուղղված իր հանցավոր գործողությունները:

[Փ]աստացի դադարած փոխառության պայմանագրի պայմաններում մարված վերոնշյալ պարտավորագրի օգտագործմամբ՝ Ռ.Բալասանյանը չարաշահել է տուժողներ Ռ.Ղոնյանի և Հ.Ալոյանի վստահությունը, որը պայմանավորված էր՝

- վերջիններիս կողմից գումարն ու փոխհատուցումն ամբողջությամբ վերադարձնելու, դրանով իսկ Ռ.Բալասանյանի հետ գումարային պարտքուպահանջի հարցը հանգուցալուծվելու (պարտավորության պատշաճ կատարմամբ փոխառության պայմանագրի դադարման փաստը գիրակցելու) փաստով, ինչպես նաև

- այդ գումարները սրացած և առջեռն Ռ.Բալասանյանին փոխանցած վերջինիս լիազորած անձ Վարդան Կարապետյանի բանավոր երաշխիքներով, ով շարունակաբար վստահեցրել է, որ 100.000 ԱՄՆ դոլարի պարտավորագիրը չի կարող վերադարձնել Ռ.Բալասանյանի՝ ՌԳ-ում գրկնվելու պատճառով, պարտավորվել է այն վերադարձնել ավելի ուշ, միաժամանակ, Ռ.Բալասանյանի ներագդեցությամբ անչամբ հայտնվելով բարեխիղճ մոլորության մեջ, տուժողներին հավաստեցրել է, որ հետագայում էլ գումարային որևէ ինդիք Ռ.Բալասանյանի հետ չի կարող առաջանալ:

- Նույն ժամանակահատվածում 20.000.000 ՀՀ դրամի պարտքը մարելու վերաբերյալ գրավոր փաստաթուղթը՝ փոխադարձ պայմանա-

վորվածությունների մասին 2010թ. ապրիլի 28-ի ակտը, ևս տուժողներին էր տրվել վերջիններիս կողմից Ռ.Բալասանյանի պարտքի վերոնշյալ մասը փաստացի մարելուց հետո, դարձյալ Վ.Կարապետյանի միջոցով:

Դատարանը փաստում է, որ վերոնշյալ հանգամանքները տուժողներին ողջամտորեն հիմքեր են տվել վստահել ամբաստանյալ Ռ.Բալասանյանին և պարտքն ամբողջությամբ մարելուց հետո անհրաժեշտ հետևողականություն չցուցաբերել 100.000 ԱՄՆ դոլարի վերաբերյալ պարտավորագիրը պարտքի մարման պահին նրանից հետ պահանջելու և սրանալու կամ նոր սրացական վերցնելու խնդրով:

(...) Դատարանը փաստում է, որ տուժողների գույքի նկատմամբ իրավունքին խարդախությամբ տիրանալու շահադիտական նպատակը և դիտավորությունը, պայմանավորված հափշտակության առարկայի՝ գույքի նկատմամբ իրավունք չեռք բերելու առանձնահատկությամբ, ամբաստանյալ Ռ.Բալասանյանի մոտ ծագել է ոչ թե վերոնշյալ պարտավորագիրը պահանջելուց և սրանալուց առաջ, այլ պարտավորության պատշաճ կատարմամբ փոխառության պայմանագրի դադարումից հետո ըստ էության ամբողջությամբ մարված նույն պարտավորագիրն անհիմն պատրվակով գործով տուժողներին չվերադարձնելու պահից, քանի որ Ռ.Բալասանյանն այն չի վերադարձրել շահադիտական նպատակով, մարված այդ պարտավորագրի օգտագործմամբ տուժողների հավելյալ գույքին խարդախությամբ տիրանալու դիտավորությամբ: (...)

Ամբաստանյալ Ռ.Բալասանյանի շահադիտական նպատակի, հետևաբար՝ նաև խարդախություն կատարելու ուղղակի դիտավորության առկայության մասին է վկայում նաև այն փաստը, որ վերջինս առաջին ատյան ներկայացված հայցադիմումում, ինչպես նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննության ընթացքում պահանջել է պարտավորագրում նշված ողջ գումարը՝ 100.000 ԱՄՆ դոլարը և դրա տույժերը՝ թաքցնելով ոչ միայն պարտավորագրում նշված գումարից 40.000 ԱՄՆ դոլարի պարտքը ներելու, 60.000 ԱՄՆ դոլարն իրեն վերադարձվելու փաստերը, այլև պարտավորության ծագման իրական նախապայմանությունը:

(...)

- տուժողներ Ռ.Ղոնյանը և Հ.Ալոյսանը որոշակի ուշացմամբ, սակայն ըստ էության ամբողջությամբ կատարել են այդ պարտավորագրով սրանչնած պարտավորությունները, այն է՝ գործով ամբաստանյալ Ռ.Բալասանյանի հետ չեռք բերած փոխադարձ համաձայնության շրջանակներում 2010թ. ապրիլ-մայիս ամիսների դրությամբ 40.000 ԱՄՆ դոլար պարտքի ներման պայմանով տուժողները Վ.Կարապետյանի միջնորդությամբ անչամբ Ռ.Բալասանյանին կամ նրա կնոջ հայր Ա.Քոչարյանի միջոցով հանձնել են ընդհանուր 60.000 ԱՄՆ դոլար գումար:

Տվյալ պայմաններում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ և 431-րդ հոդվածների համաձայն, պարտավորությունը համարվում է դադարած, և

սպացույց ճանաչված՝ «Ռուդմետ» և «ԼԵՌ-ԷԶՍ» ՍՊԸ-ների («ԼԵՌ-ԷԶՍ-ԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ), Ռ.Բալասանյանի, Ռ.Ղոնյանի, Հ.Ալոյանի, Վ.Կարապետյանի միջև կնքված քաղաքացիաիրավական գործարքները, ինչպես նաև սույն որոշման 6-րդ կետում հիշատակված՝ քաղաքացիական գործով կայացված դատական ակտերը (տե՛ս քրեական գործ, հատոր 5, թերթ 67-80):

10. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր 2014 թվականի հունիսի 5-ի որոշմամբ մերժել է Ռ.Բալասանյանի և նրա պաշտպան Ա.Ղազարյանի վերաքննիչ բողոքը և Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 31-ի դատավճիռը թողել օրինական ուժի մեջ՝ ըստ էության կրկնելով Առաջին ատյանի դատարանի հիմնավորումները (տե՛ս քրեական գործ, հատոր 6, թերթ 63-95):

Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի ու հիմնավորումների սահմաններում.

11. Բողոք բերած անձը փաստարկել է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի, մասնավորապես՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, ՀՀ Սահմանադրության 19-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 358-րդ, 360-րդ, 365-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ, 9-րդ և 178-րդ հոդվածների խախտումներ:

Վերոշարադրյալ փաստարկները բողոք բերած անձը հիմնավորել է նրանով, որ ստորադաս դատարանը պատշաճ գնահատականի չի արժանացրել ամբաստանյալ Ռ.Բալասանյանի՝ դատաքննության ընթացքում տված ցուցմունքները՝ առանց որևէ օբյեկտիվ պատճառաբանության համարելով դրանք ոչ արժանահավատ, չի համադրել դրանք գործով հետազոտված մյուս սպացույցների հետ:

12. Բողոքաբերն իր անհամաձայնությունն է հայտնել նաև Ռ.Բալասանյանի արարքի քրեաիրավական որակմանը: Մասնավորապես, վկայակոչելով խարդախության հանցակազմի քրեաիրավական վերլուծությանը վերաբերող Լ.Ավետիսյանի գործով Վճարելի դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշման 22-32-րդ կետերը՝ բողոքաբերը եզրահանգել է, որ Ռ.Բալասանյանի և աուժողների միջև առկա են քաղաքացիական իրավահարաբերություններ, որոնք արդեն իսկ լուծում են ստացել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով: Բողոք բերած անձը, մասնավորապես, փաստարկել է, որ ստորադաս դատարաններն անտեսել են Վճարելի դատարանի՝ վերը հիշատակված գործով արտահայտած այն դիրքորոշումը, որ արարքը խարդախություն որակելու համար քրեական գործով ձեռք բերված սպացույցների ամբողջ զանգվածի գնահատմամբ պետք է հիմնավորվի, որ անձը նպատակադրված չի եղել իրականացնելու իր վրա վերցված

քաղաքացիաիրավական պարտավորությունները և ցանկացել է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակել ուրիշին պատկանող գույքը: Ընդ որում, եթե ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հաստատվում վերոգրյալը, ապա անձի արարքում բացակայում է խարդախության հանցակազմը, հետևաբար նրան պատասխանատվության ենթարկելու հարցը պետք է լուծվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով:

Արդյունքում բողոքաբերը եզրահանգել է, որ Ռ.Բալասանյանի մեղքն իրեն մեղադրվող հանցանքի կատարման մեջ ապացուցված չէ, և հիմնավոր չեն ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ վերջինս կատարել է խարդախություն:

13. Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հունիսի 5-ի որոշումը, քրեական գործի վարույթը կարճել և Ռ.Բալասանյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

14. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելու նպատակը օրենքի միատեսակ կիրառության ապահովման շրջանակներում քրեաիրավական և քաղաքացիաիրավական հարաբերությունների սահմանազատման խնդրի պարզաբանումն է: Ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

15. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է՝ հիմնավորված և պատճառաբանված են արդյոք ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Ռ.Բալասանյանի արարքում առկա են առանձնապես խոշոր չափերով խարդախության փորձի (ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ) հանցակազմի հատկանիշներ:

16. ՀՀ Մահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա

քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...)»:

16.1. Դատական պաշտպանության իրավունքն իրավունքների պաշտպանության միջոցների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ իրականացվում է իշխանությունների տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Այն անձի անօտարելի իրավունքներից է և միաժամանակ հանդիսանում է այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց ու երաշխիք: Որպես այդպիսին՝ դատական պաշտպանության իրավունքը ճանաչվում և երաշխավորվում է միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով և նորմերով, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ուժով արդար դատաքննությունն իրականացվում է անկախ, անաչառ և **օրենքի հիման վրա ստեղծված իրավասու դատարանի** կողմից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» արտահայտությունն ընդգրկում է ոչ միայն ինքնին դատարանի գոյության իրավական հիմքը, այլ նաև դատարանի կողմից իր կառավարման որոշակի կանոնների պահպանումը (տե՛ս *Sokurenko and Strygun v. Ukraine* գործով Եվրոպական դատարանի 2006 թվականի հուլիսի 20-ի վճիռը, գանգատներ թիվ 29458/04 և 29456/04, կետ 24): *Ջենդի* գործով Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) դիրքորոշում է արտահայտել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» եզրույթը ենթադրում է դատարանների կազմակերպական ամբողջ կառուցվածքը՝ ներառյալ որոշակի տեսակի դատարանների իրավասության շրջանակներում ընդգրկվող հարցերի շրջանակը (տե՛ս *Zand v. Austria*, գանգատ թիվ 7360/76, Հանձնաժողովի 1978 թվականի հոկտեմբերի 12-ի զեկույցը):

16.2. Արդարադատության իրականացման սկզբունքները տարածվում են դատավարության բոլոր տեսակների, այդ թվում՝ քրեական և քաղաքացիական դատավարությունների վրա՝ անկախ այն նյութական իրավահարաբերությունների բնույթից և առանձնահատկություններից, որոնք կանխորոշում են յուրաքանչյուր դատավարության առարկան: Միևնույն ժամանակ այդ առանձնահատկություններով, ինչպես նաև քննվող գործերի բնույթով, կիրառվող սանկցիաների էությամբ և մշանակությամբ, դրանց իրավական հետևանքներով պայմանավորվում է դատավարության և գործերի առանձին տեսակների համար կիրառելի դատական պաշտպանության միջոցների և գործընթացների նախատեսումը:

Դատավարության յուրաքանչյուր տեսակի քննության առարկայի առանձնահատկություններից ելնելով էլ որոշվում է իրավասու դատարանը,

ինչպես նաև համապատասխան գործերով ապացուցման դատավարական կանոնների առանձնահատկությունը՝ ներառյալ ապացույցներ ներկայացնելու և դրանք հետազոտելու կարգը:

Մասնավորապես, քրեաիրավական բնույթի հարաբերությունների վերաբերյալ գործերը քննվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ դատարանը քրեական հետապնդման մարմին չէ, հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում (6-րդ հոդվածի 22-րդ կետ, 23-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր), իսկ մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը (18-րդ հոդվածի 2-րդ մաս): Միևնույն ժամանակ մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել նույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի (18-րդ հոդվածի 4-րդ մաս):

Քաղաքացիաիրավական բնույթի հարաբերությունների վերաբերյալ գործերը քննվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Քաղաքացիադատավարական օրենսդրությունն իր հերթին ելնում է այն սկզբունքից, որ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մաս): Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 6-րդ մաս):

Քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական և քրեաիրավական ու քրեադատավարական հարաբերությունների հարաբերակցության հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Լիա Ավետիսյանի* գործով որոշմամբ՝ դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ. «(...) եթե քաղաքացիաիրավական հարաբերության հենքը վերաբերում է կարգավորիչ գործառույթ իրականացնող իրավունքի ճյուղին, ապա քրեական իրավունքը և դատավարությունը, մարմնավորելով իրավունքի պահպանիչ գործառույթը, իրենց բնույթով ածանցյալ են իրավունքի տվյալ ճյուղերից, մասնավորապես քաղաքացիական իրավունքից և դատավարությունից: Այլ կերպ՝ ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսին լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխարեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ» (տե՛ս Լիա Արսյունի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշման 30-րդ կետը):

17. Վերահաստատելով և 16-16.1-րդ կետերում շարադրված իրավական նորմերի և վերլուծությունների լույսի ներքո զարգացնելով *Լիա Ավերիսյանի* գործով արտահայտած և նախորդ կետում մեջբերված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործերի քննության շրջանակներում դատարանն իրավասու չէ քրեական դատավարության կարգով քննություն իրականացնել քաղաքացիական բնույթի իրավահարաբերությունները (վեճը) պարզելու ուղղությամբ և հաստատել այդպիսի վեճի առարկան կազմող իրավաբանական փաստեր: Վճռաբեկ դատարանի վերջին դիրքորոշումը հիմնավորվում է համապատասխան փաստերը հաստատելու քաղաքացիադատավարական կանոնների՝ քրեադատավարական կանոններից սկզբունքային տարբերությամբ և դրանք մեկը մյուսով փոխարինելու անթույլատրելիությամբ: Հակառակ դեպքում քրեական վարույթ իրականացնող դատարանը դուրս կգա իր իրավասության սահմաններից, արդյունքում կխաթարվի քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը: Այս առումով անհրաժեշտ է նաև նշել, որ իր իրավասությունների սահմանազանցում թույլ տված դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի կարող հանդիսանալ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» վիճարկվող դատավարության առնչությամբ (տե՛ս *Sokurenko and Strygun v. Ukraine* գործով Եվրոպական դատարանի 2006 թվականի հուլիսի 20-ի վճիռը, գանգատներ թիվ 29458/04 և 29456/04, կետ 28): Արդյունքում կխախտվի անձի արդար դատաքննության իրավունքը:

Ավելին, կարող է առաջանալ իրավիճակ, երբ նույն փաստի վերաբերյալ առկա լինեն քաղաքացիական դատավարության կարգով և քրեական դատավարության կարգով կայացված օրինական ուժի մեջ մտած իրար հակասող դատական ակտեր: Վերջին իրավիճակն անթույլատրելի է իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից, ինչը, հանդիսանալով իրավունքի գերակայության հիմնարար տարրերից մեկը, պահանջում է, ի թիվս այլնի, որ եթե դատարանները վերջնականապես որոշել են որևէ հարց, նրանց որոշումը չպետք է կասկածի տակ դրվի (տե՛ս *Brumărescu v. Romania* գործով Մեծ պալատի 1999 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ, գանգատ թիվ 28342/95, 61-րդ կետը):

18. Վերոգրյալի լույսի ներքո Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ խարդախության վերաբերյալ գործերով քրեական դատավարության կարգով քաղաքացիաիրավական բնույթի հարաբերությունների (վեճի) պարզման ուղղությամբ քննություն իրականացնելու դատարանի իրավասությանը:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում խարդախության, այն է՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակության կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որպես հանցակազմի

ծանրացնող հանգամանք է նախատեսված խարդախությունն առանձնապես խոշոր չափերով կատարելը:

Խարդախության հանցակազմի իրավական վերլուծությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Լ.Ավետիսյանի* և *Վ.Մաթևոսյանի* գործերով կայացրած որոշումներում:

Մասնավորապես, Լ.Ավետիսյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) Թեև խարդախության պարագայում առկա է գույքի սեփականատիրոջ կողմից հանցագործին գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու կամային ակտ, սակայն գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները փոխանցելու ակտի կամային բնույթը սեփականատիրոջ գիտակցության և կամքի վրա հանցագործի ունեցած ներգործության հետևանք է:

(...) ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի իմաստով վերոնշյալ հանցավոր ներգործությունն իրականացվում է խաբեությանը կամ վստահությունը չարաշահելով: Ասինքն՝ օբյեկտիվ կողմից խարդախության հանցակազմը դրսևորվում է կատարման հարուկ եղանակով՝ խաբեությանը կամ վստահությունը չարաշահելով:

(...) Խաբեությունը գույքի սեփականատիրոջը կամ գույքը տիրապետողին մոլորության մեջ գցելու նպատակով իրական, ճշմարիտ փաստերի դիտարկումը խեղաթյուրումն է կամ ճշմարտության մասին լռելը: Այսպիսով, խաբեությունը դրսևորվում է հետևյալ երկու եղանակով՝

- ա) իրական, ճշմարիտ փաստերի դիտարկումը խեղաթյուրում,
- բ) ճշմարտության մասին լռել:

(...)

Վստահությունը չարաշահելն ուրիշի գույքին տիրանալու կամ դրա նկատմամբ իրավունք չեռք բերելու նպատակով հանցավորի կողմից, նրա և գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետողի միջև չեղանկարված վստահության հարաբերությունների օգտագործումն է: Արարքը խարդախություն որակելու համար բավարար չէ, որ անձն իր արարքներով կամ որոշակի հանգամանքների բերումով արուժողի մոտ վստահություն վայելի, այլ անհրաժեշտ է, որպեսզի վերջինս համոզի արուժողին իրեն փոխանցել գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները:

Հանցագործի նկատմամբ արուժողի վստահությունը կարող է ինչպես իրավական, այնպես էլ փաստական հիմքեր ունենալ: Այլ կերպ՝ հանցավորի և արուժողի միջև առկա՝ վստահության վրա հիմնված հարաբերությունները կարող են բիտել ինչպես նրանց միջև առկա պայմանագրից, լիազորագրից և այլն, այնպես էլ առաջանալ հանցավորի և գույքը հանձնողի անձնական հարաբերություններից, հանցավորի կողմից նախկինում դրսևորած վարքագծից, հանցավորի անձնավորությունից և այլն:

(...) օբյեկտիվ կողմից խարդախությունը կատարվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, ինչի արդյունքում մոլորության մեջ ընկած սեփականատիրոջը կամ իրավասու այլ անձը կամավոր կերպով գույքը

կամ գույքի նկատմամբ իրավունքները հանձնում է հանցագործին կամ այլ անձի կամ անձանց կամ չի խոչընդոտում վերջիններիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքները վերցնելուն:

(...) Սուբյեկտիվ կողմից խարդախությունը բնութագրվում է ուղղակի դիտավորության և շահադիտական նպատակով:

(...) Խարդախությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորության մեղքի շեղով. հանցավորը պետք է գիտակցի, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև պետք է նախատեսի և ցանկանա դա:

(...) Խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև շահադիտական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքը վերցնելը կամ գույքին փորձանալը հանցավորն ի սկզբանե նպատակ է ունենում հափշտակելու այն, չվերադարձնելու գույքը, չկատարելու խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները:

Հակառակ դեպքում, երբ գույքը չվերադարձնելու խոստումը կամ պարտավորությունները չկատարելու դիտավորությունն առաջանում է գույքը վերցնելուց հետո (անկախ շարժառիթից), խարդախության հանցակազմը բացակայում է:

(...) խարդախությունը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պարզաճ կատարման դեպքերից տարանջատելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

ա) խարդախության դեպքում տուժողին խաբելու կամ նրա վստահությունը չարաշահելու մտադրությունն անձի մոտ ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ չեղք բերելը:

բ) խարդախության դեպքում անձի մոտ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած պարտավորությունները (գույքը փոխանցել, կատարել վարկային պարտավորությունը, պարտքը վերադարձնել և այլն) չկատարելու դիտավորությունը ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ չեղք բերելը» (տե՛ս Լիա Արտյունի Ավետիսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԳ/0176/01/09 որոշման 22-26.2.-րդ և 29-րդ կետերը):

Վ.Մաթևոսյանի վերաբերյալ գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) խարդախությունը և քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտումն օբյեկտիվ կողմի հատկանիշներով հաճախ համընկնում են: Հետևաբար, այսպես պետք է նկատի ունենալ, որ խարդախությունը՝ որպես հանցագործություն, քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտման դեպքերից տարբերվում է սուբյեկտիվ կողմով: Մասնավորապես՝ խարդախությունը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, ինչը ենթադրում է, որ հանցավորը գիտակցում է, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով հափշտակում է ուրիշի գույքը, ինչպես նաև նախատեսում և ցանկանում է դա:

Միևնույն ժամանակ խարդախության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է շահադիպական նպատակի առկայությամբ, այսինքն՝ մինչև գույքին կամ գույքային իրավունքին փորձանայր հանցավորը նպատակ է ունենում հափշտակել այն, չվերադարձնել գույքը, չկատարել խոստումը կամ պայմանագրային պարտավորությունները: Մինչդեռ քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտման դեպքում անչքր անան նպատակ չի ունենում:

(...) խարդախության մեղադրանքով անչին քրեական պատասխանարվության ենթարկելու համար անհրաժեշտ է ապացույցների բավարար ամբողջությամբ հիմնավորել, որ հանցավորը դիրավորություն է ունեցել խաբեության կամ վարահությունը չարաշահելու եղանակով հափշտակել ուրիշին պարկանող գույքը:

Այն դեպքում, երբ առկա է մասնավոր-իրավական պայմանագրի կամ այլ տեսակի քաղաքացիաիրավական պարտավորության խախտում, ապա նշվածը որպես խարդախություն որակելու համար անհրաժեշտ է հաստատված համարել, որ անչն ի սկզբանե նպատակ չի ունեցել իրականացնելու գույքի կամ դրահ նկատմամբ իրավունքի փոխանցման հետ կապված իր վրահ վերցրած պարտավորությունները:

(...) Անչի կողմից խարդախություն կատարելու դիրավորության առկայության մասին, մասնավորապես, կարող են վկայել պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական կամ տեխնիկական միջոցների, համապատասխան արտոնագրերի բացակայությունը, հանցավորի կողմից կեղծ փաստաթղթերի, երաշխավորագրերի օգտագործումը, ունեցած ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունները քաբցնելը, կեղծ շեռնարկություն սրեղծելը, որը հանդես է եկել որպես պայմանագրի կողմ և այլն:

(...) վերը նշված փաստական հանգամանքների հետ մեկտեղ յուրաքանչյուր դեպքում, գործով շեռք բերված ապացույցների ամբողջ զանգվածի գնահատմամբ, պետք է հիմնավորվի, որ անչը նպատակադրված չի եղել իրականացնելու իր վրահ վերցված քաղաքացիաիրավական պարտավորությունները և ցանկացել է խաբեության կամ վարահությունը չարաշահելու եղանակով հափշտակել ուրիշին պարկանող գույքը:

Ընդ որում, եթե ապացույցների բավարար համակցությամբ և հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հաստատվում վերոգրյալը, ապա անչի արարքում բացակայում է խարդախության հանցակազմը, հետևաբար նրան պատասխանարվության ենթարկելու հարցը պետք է լուծվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիաիրավարական միջոցներով» (տես Վարդան Մարատի Մաքևոյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵՇԳ-0037/01/11 որոշման 25-27-րդ կետերը):

19. Վերահաստատելով խարդախության հանցակազմի մեկնաբանման կապակցությամբ նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները

և սույն որոշման 17-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշման լույսի ներքո զարգացնելով դրանք՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ խարդախության հանցակազմի օբյեկտիվ կողմն արտահայտվում է մասնավոր-իրավական պայմանագրի կամ այլ տեսակի քաղաքացիաիրավական պարտավորության խախտմամբ, քրեական գործի շրջանակներում դատարանն իրավասու չէ քննարկել և լուծել քաղաքացիաիրավական պարտավորության առկայության կամ բացակայության վերաբերյալ վեճ: Զննարկվող գործերով մասնավոր-իրավական պայմանագրի կամ այլ տեսակի քաղաքացիաիրավական պարտավորության խախտման առկայության դեպքում դատարանի իրավասությունը սահմանափակված է հանցակազմի մնացած հատկանիշները, այդ թվում՝ օբյեկտիվ կողմի մյուս հատկանիշները՝ հանցագործության կատարման եղանակը (խաբեությունը և վստահությունը չարաշահելը), հետևանքը, պատճառահետևանքային կապն արարքի և հետևանքի միջև, սուբյեկտիվ կողմը (ուղղակի դիտավորություն, շահադիտական նպատակ) բնութագրող հանգամանքները պարզելով: Միևնույն ժամանակ Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վերջին դիրքորոշումը կողմերի միջև քաղաքացիաիրավական վեճի բացակայության դեպքում չի սահմանափակում քրեական գործի շրջանակներում քաղաքացիաիրավական գործարքները որպես գրավոր ապացույցներ գնահատելու վարույթ իրականացնող մարմնի լիազորությունը:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

ա) Ռ.Ղոնյանի հաղորդման հիման վրա 2013 թվականի ապրիլի 4-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով, որի շրջանակներում Ռ.Բալասանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ վերջինս «*լիազորված անձ Ս.Խաչատրյանի միջոցով (...) իրականությանը չհամապատասխանող տվյալներ ներկայացնելով՝ 151.500 ԱՄՆ դոլարին համարժեք 56.165.565 ՀՀ դրամ գումարի չափով բռնագանձման պահանջի մասին հայց է ներկայացրել (...) Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին արյանի դատարան՝ խարդախության եղանակով փորձելով հափշտակել Ռոյանդ Սուրենի Ղոնյանին և Համլեդ Գառնիկի Ալոյանին պարկանող առանձնապես խոշոր չափի գույքը* (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը).

բ) ամբաստանյալի և տուժողների ցուցմունքների համաձայն՝ նրանց միջև առկա է վեճ 2008 թվականի ապրիլի 12-ին կազմված ստացականում նշված 100.000 ԱՄՆ դոլար պարտքը հետագայում վերադարձնելու, մասնավորապես՝ 100.000-ի փոխարեն 60.000 ԱՄՆ դոլար վճարելու պայմանավորվածություն ձեռք բերելու և այդ գումարը Վ.Կարապետյանի միջոցով վերադարձնելու հարցի շուրջ շուրջ (տե՛ս քրեական գործ, հատոր 2, թերթ 289-303):

գ) 2011 թվականի սեպտեմբերի 7-ին Ռ.Բալասանյանն իր լիազոր

ներկայացուցչի միջոցով դիմել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ պահանջելով 100.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պարտավորագրում նշված պարտքի մայր գումար, և ևս 51.500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես մայր գումարի նկատմամբ հաշվարկված տույժի գումար: Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 2-ի վճռով Ռ.Բալասանյանի հայցը մերժվել է: Նշված վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակի, բեկանել և փոփոխել է առաջին ատյանի դատարանի դատական ակտը և հայցը բավարարել մասնակի: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի վերոգրյալ որոշման դեմ Հ.Ալոյանի, Ռ.Ղոնյանի և նրանց ներկայացուցիչ Սեդրակ Ասատրյանի վճարելի բողոքը ՀՀ վճարելի դատարանի 2013 թվականի հունվարի 23-ի որոշմամբ վերադարձվել է: Ընդ որում, Վերաքննիչ դատարանում քննարկման առարկա է դարձվել և ապացուցված չի համարվել նաև սույն գործով տուժողների փաստարկն այն մասին, որ Պարտավորագրով ստանձնած իրենց պարտավորությունը դադարել է կատարմամբ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտի հիման վրա արված կատարողական թերթով 2013 թվականի մարտի 1-ին հարուցվել է կատարողական վարույթ: 2013 թվականի մայիսի 8-ին Ռ.Ղոնյանի և Հ.Ալոյանի ներկայացուցիչ Հ.Օսեփյանը հայցադիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ սեփականության իրավունքի խախտումը վերացնելու, Ռ.Ղոնյանին և Հ.Ալոյանին սեփականության իրավունքով պատկանող գույքն արգելանքից հանելու պահանջի մասին: Նշված հայցադիմումն ընդունվել է վարույթ, և դրա հիմքով Ռ.Ղոնյանի և Հ.Ալոյանի գույքի վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ կատարողական վարույթները 2013 թվականի մայիսի 20-ին կասեցվել են (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

դ) քրեական գործի քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանը և Վերաքննիչ դատարանը հաստատված են համարել 2008 թվականի ապրիլի 12-ի պարտավորագրով 100.000 ԱՄՆ դոլար պարտքից 40.000 ԱՄՆ դոլար պարտքը ներելու, 60.000 ԱՄՆ դոլար վճարելու պայմանավորվածությունն ձեռք բերելու և այդ գումարը տուժողների կողմից Վ.Կարապետյանի միջոցով ամբաստանյալ Ռ.Բալասանյանին վերադարձնելու, դրա հետևանքով գումար վճարելու պարտավորությունը կատարմամբ դադարելու փաստերը և եզրահանգել, որ «ամբաստանյալ Ռ.Բալասանյանը տուժողների վարահոսությունը չարաշահելու եղանակով խարդախությամբ սեփականության և այն հարկադրաբար պահանջելու իրավունք է ձեռք բերել վերջիններիս առանձնապես խոշոր չափի գույքի՝ 151.500 ԱՄՆ դոլարին համարժեք 56.165.595 ՀՀ դրամ գումարի նկատմամբ» (տե՛ս սույն որոշման 8-րդ և 10-րդ կետերը):

Վերոգրյալ փաստերից հետևում է, որ խարդախության հանցակազմի առկայության մասին ստորադաս դատարանների հետևություններն ու դատական ակտերի հիմքում դրված ապացույցների վերլուծությունն առավելապես վերաբերում են 2008 թվականի ապրիլի 12-ի Պարտավորագրում նշված գումարը վերադարձնելու մասին կողմերի միջև առկա վեճին: Ստորադաս դատարանները կողմերի միջև եղած գումարային վեճը փորձել են լուծել և, ըստ այդմ, անձի ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանությունն իրականացրել են քրեաիրավական միջոցներով: Մասնավորապես, դատարանները քննություն են իրականացրել ամբաստանյալի և տուժողների միջև Պարտավորագրի հիման վրա ծագած պարտավորությունների առկայության հարցի կապակցությամբ, հաստատված համարել պարտավորության մի մասը՝ 40.000 ԱՄՆ դոլար գումարը, պարտքը ներելու հիմքով, մնացած մասը՝ 60.000 ԱՄՆ դոլար գումարը, պարտավորությունը կատարելու հիմքով դադարելու, ինչպես նաև տուժողների կողմից ամբաստանյալին պարտքային փաստաթուղթը վերադարձնելու պահանջ ներկայացնելու փաստերը: Ընդ որում, ուշագրավ է, որ քրեադատավարական ընթացակարգով տուժողների և վկաների ցուցմունքների հիման վրա հաստատված համարելով նշված փաստերը՝ դատարանները հղում են կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ և 431-րդ հոդվածներին:

20.1. Նախորդ կետում վերլուծված փաստերը գնահատելով սույն որոշման 17-րդ և 19-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Գատարանի կողմից հաստատված վերոնշյալ իրավաբանական փաստերը քաղաքացիաիրավական բնույթի վեճի առարկան են կազմում, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննարկելու և հաստատելու իրավասությամբ վերջինս օժտված չէր: Այսինքն՝ տուժողների ենթադրյալ խախտված իրավունքները վերականգնելու նպատակով արդեն իսկ գործադրված քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական գործիքակազմը փոխարինվել է քրեաիրավական և քրեադատավարական միջոցներով: Ավելին՝ այդ փաստերի կապակցությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով իրավասու դատարանի կողմից իրականացվել է քննություն և դրանք ապացուցված չեն համարվել օրինական ուժի մեջ մտած և կատարման համար պարտադիր դատական ակտով:

Վերոգրյալից հետևում է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել ՀՀ Սահմանադրության 19-րդ և Կոնվենցիայի 6-րդ հոդվածների խախտում:

21. Անդրադառնալով Ռ.Բավասանյանին մեղսագրվող արարքում խարդախության հանցակազմի օբյեկտիվ կողմի առկայության մասին ստորադաս դատարանների մնացած հետևություններին (տե՛ս սույն որոշման 8-րդ և 11-րդ կետերը)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտերում հանցագործության օբյեկտիվ կողմի նկարագրությունը չի պարունակում հստակ փաստեր առ այն, թե ամբաստանյալի կոնկրետ որ գործողություններն են տուժողներին զցել մոլորության մեջ, որի արդյունքում

նրանք կամավոր կերպով իրենց սեփականությունը հանդիսացող գույքը կամ այդ գույքի նկատմամբ իրավունքները հանձնել են Ռ.Բալասանյանին կամ չեն խոչընդոտել վերջինիս կողմից այդ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը վերցնելուն: Այսինքն՝ պարզ չէ, թե Ռ. Բալասանյանի արարքում խարդախության հանցակազմի օբյեկտիվ կողմը հանդիսացող վստահությունը չարաշահելու եղանակը ինչու է դրսևորվել:

Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ ստորադաս դատարանները հաստատված համարելով, որ Ռ.Բալասանյանը ձեռք է բերել տուժողների վստահությունը, պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել Ռ.Գոնյանի և Հ.Ալոյանի ցուցմունքներն այն մասին, որ նախկինում Ռ.Բալասանյանի և իրենց միջև պարտքը վերադարձնելու մասին փաստաթուղթ գրելու հետ կապված նույնպես խնդիր է առաջացել, որը դրսևորվել է Ռ.Բալասանյանի կողմից մինչ այդ իրեն առձեռն տված գումարը ստանալու մասին ստացական գրելուց հրաժարվելով:

21.1. Անդրադառնալով Ռ.Բալասանյանին մեղսագրվող արարքում խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայության մասին ստորադաս դատարանների հետևություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցակազմի նշված տարրի առկայությունը ստորադաս դատարանները հիմնավորել են հետևյալով. «Դատարանը փաստում է, որ տուժողների գույքի նկատմամբ իրավունքին խարդախությամբ փորձանալու շահադիտական նպատակը և դիտարկությունը, պայմանավորված հափշտակության առարկայի՝ գույքի նկատմամբ իրավունք չենք բերելու առանձնահատկությամբ, ամբաստանյալ Ռ.Բալասանյանի մուր ծագել է ոչ թե վերոնշյալ պարտավորագիրը պահանջելուց և սրանալուց առաջ, այլ պարտավորության պարշաճ կարարմամբ փոխառության պայմանագրի դադարումից հետո ըստ էության ամբողջությամբ մարված նույն պարտավորագիրն անհիմն պարտվակով գործով տուժողներին չվերադարձնելու պահից, քանի որ Ռ.Բալասանյանն այն չի վերադարձրել շահադիտական նպատակով, մարված այդ պարտավորագրի օգտագործմամբ տուժողների հավելյալ գույքին խարդախությամբ փորձանալու դիտարկությամբ» (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Մեջբերված հիմնավորումից հետևում է, որ ստորադաս դատարանները որպես դիտավորության և շահադիտական նպատակի ծագման պահ են ընդունել պարշաճ կարարմամբ փոխառության պայմանագրի դադարումից հետո ըստ էության ամբողջությամբ մարված պարտավորագիրն անհիմն պարտվակով գործով տուժողներին Ռ.Բալասանյանի կողմից չվերադարձնելու պահը:

Մյուս կողմից, Առաջին ատյանի դատարանը եզրահանգել է, որ «(...) պարտավորագրի բնօրինակը կամ նոր սրացականը տուժողներին չտրամադրելու, մարված պարտավորագիրը պահպանելու համար գործով ամբաստանյալ Ռ.Բալասանյանը չի գործել քրեական օրենքով արգելված որևէ արարք և մինչև դատական կարգով այդ պարտավորագրի օգտագործման ուղղությամբ քայլեր չեն նարկելը կողմերի փոխհարաբերություններն

ենթակա էին կարգավորման, ենթադրաբար խախտված իրավունքները՝ վերականգնման, մասնավոր իրավունքի փրկություն՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով» և որ «2011թ. սեպտեմբերի 7-ին Ռ.Բալասանյանը խարդախությամբ փուժողների առանձնապես խոշոր չափի այլ գույքի նկատմամբ սեփականության և այն հարկադրաբար պահանջելու իրավունք չեռք բերելու դիտարկությամբ մարված պարտավորագիրը ներկայացրել է առաջին աստիճանի դատարան, որի փաստով այդ իրավա-հարաբերությունները դուրս են եկել մասնավոր իրավունքի կարգավորման փրկությից, հետևաբար՝ ամբաստանյալ Ռ.Բալասանյանի հանցավոր գործողությունների հետևանքով Ռ.Ղոնյանի և Հ.Ալոյանի խախտված սեփականության իրավունքն ենթակա է վերականգնման արդեն հանրային փրկությամբ՝ քրեական և քրեադատավարական ընթացակարգով» (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Գատարանի նման եզրահանգումից էլ հետևում է, որ մինչև հայցադիմումով դատարան դիմելը Ռ.Բալասանյանը քրեական օրենքով արգելված որևէ արարք չի գործել, տուժողների գույքը հափշտակելու դիտավորություն չի ունեցել, և տուժողների հետ նրա իրավահարաբերությունները ենթակա են եղել կարգավորման զուտ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով:

Վերոնշյալից հետևում է, որ Առաջին աստիճանի դատարանի պատ-ճառաբանությունների միջև առկա է ներքին հակասություն, որի արդյունքում պարզ չէ՝ ի վերջո որ պահից է ծագել տուժողներին խաբելու կամ նրանց վստահությունը չարաշահելու եղանակով նրանց գույքը հափշտակելու կամ դրա նկատմամբ իրավունք ձեռք բերելու ամբաստանյալի դիտավորությունը:

21.2. Սույն որոշման 18-19-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները Ռ.Բալասանյանին մեղսագրվող արարքում խարդախության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի առկայությունը պարզելիս պատշաճ չեն գնահատել գործի բոլոր փաստական հանգամանքները, անտեսել են Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային իրավունքը, որի արդյունքում Ռ.Բալասանյանի կողմից տուժողների առանձնապես խոշոր չափերով գույքը խարդախությամբ հափշտակելու փորձ կատարելու մասին իրենց հետևությունները հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով չեն հիմնավորել:

22. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև արձանագրել, որ նախաքննական մարմինը Ռ.Բալասանյանին մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ նա «*լիազորված անձ Ս.Խաչատրյանի միջոցով (...) իրականությանը չհամապատասխանող փվյալներ ներկայացնելով՝ 151.500 ԱՄՆ դոլարին համարժեք 56.165.565 ՀՀ դրամ գումարի չափով բռնագանձման պահանջի մասին հայց է ներկայացրել (...) դատարան՝ խարդախության եղանակով փորձելով հափշտակել [փուժողներին] պատկանող առանձնապես խոշոր չափի գույքը*» (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը), մինչդեռ ստորադաս դատարանները նրան մեղավոր են ճանաչել այն բանի համար, որ «(...)

յրուժողներ Ռոյանդ Ղոնյանի և Համլետ Ալոյանի վարահոսությունը չարաշահելու եղանակով խարդախությամբ սեփականության և այն հարկադրաբար պահանջելու իրավունք է ձեռք բերել վերջիններիս առանձնապես խոշոր չափի գույքի՝ (...) նկատմամբ» (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը): Այսինքն՝ ստորադաս դատարանները, փոփոխելով մեղադրանքի փաստական կողմի նկարագրությունը, հաստատված են համարել, որ Ռ.Բալասանյանը կատարել է ավարտված խարդախություն: Մինևույն ժամանակ Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով, որ «(...) իրավասու չէ իր նախաձեռնությամբ անդրադառնալ ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի փոփոխմանը, քանի որ այդ պարագայում ևս դուրս կգա դատական քննության սահմաններից, ինչն անհուսափելիորեն կհանգեցնի ամբաստանյալ Ռ.Բալասանյանի վիճակի վարքարացմանը և վերջինիս պաշտպանության իրավունքի խախտման», փաստել է, որ «(...) ամբաստանյալ Ռ.Բալասանյանը քրեական պարասխանարվության և պարժի ենթակա է ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով» (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը):

Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում կրկնել իր նախադեպային որոշումներում ձևավորած և բազմիցս վերահաստատած այն դիրքորոշումը, որ կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի, ինչպես նաև գործի դատական քննության սահմանների առումով «մեղադրանք» հասկացությունը ներառում է նաև արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը: Թե՛ առաջին ատյանի դատարանը, թե՛ վերաքննիչ դատարանը և թե՛ վճռաբեկ դատարանը ամբաստանյալի կամ դատապարտյալի նկատմամբ գործը քննելիս և լուծելիս չեն կարող դուրս գալ նրան առաջադրված մեղադրանքի սահմաններից: Հակառակ դեպքում կխախտվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված սկզբունքը՝ «Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը» (տե՛ս Արթուր Սերոբյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 մարտի 30-ի թիվ ՎԲ-46/07 որոշումը, ի թիվս այլոց Արկադի Պասյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԳ/0115/01/09 որոշման 23-րդ կետը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, փոփոխելով Ռ.Բալասանյանին առաջադրված մեղադրանքի փաստական կողմի նկարագրությունը, մասնավորապես, հաստատված համարելով նրա կողմից ավարտված հանցագործություն կատարելը, դուրս են եկել մեղադրանքի սահմաններից՝ թույլ տալով Ռ.Բալասանյանի պաշտպանության իրավունքի (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդված) խախտում:

24. Սույն որոշման 20.1-րդ, 21.2-րդ և 23-րդ կետերում շարադրված եզրահանգումների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ Ռ.Բալասանյանի արարքում առկա են առանձնապես խոշոր չափերով խարդախության փորձի (ՀՀ

քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ) հանցակազմի հատկանիշներ, հիմնավորված և պատճառաբանված չեն:

25. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները խախտել են ՀՀ Սահմանադրության 19-րդ և Կոնվենցիայի 6-րդ հոդվածները, կայացրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող, չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտեր, ինչը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի համաձայն, քրեադատավարական օրենքի էական խախտում է:

Վերը նշված դատավարական իրավունքի խախտումները, որոնք կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա, Վճռաբեկ դատարանին հիմք են տալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա բեկանել Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Նոր քննության ընթացքում անհրաժեշտ է գործի հանգամանքների բազմակողմանի վերլուծության և գնահատման արդյունքում պարզել սույն որոշմամբ արձանագրված հակասությունները, վերացնել թույլ տրված թերությունները և դրանց արդյունքներով օրենքով սահմանված կարգով հանգել համապատասխան հետևության:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն օրենքի 12-րդ հոդվածը և հաշվի առնելով, որ սույն գործով վճռաբեկ բողոքը բերվել է մինչև 2014 թվականի հուլիսի 3-ը՝ Վճռաբեկ դատարանը ղեկավարվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ մինչև վկայակոչված օրենքի ուժի մեջ մտնելը (2014 թվականի հուլիսի 3-ը) գործող խմբագրությամբ:

Ոստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Ամբաստանյալ Ռուդիկ Լագրի Բալասանյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի մարտի 31-ի դատավճիռը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի հունիսի 5-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

ստորագրություն

Դատավորներ՝

ստորագրություններ



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

